



«МАТЕНАДАРАН»  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ имени МАШТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

МХИТАР ГОШ

# СУДЕБНИК

*Сводный критический текст,  
предисловие и комментарии*

ХОСРОВА ТОРОСЯНА

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»  
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՒԻԹԱՐ ԳՈՇ

ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ

*Աշխատասիրությամբ՝  
ԽՈՍՐՈՎ ԹՈՐՈՍՅԱՆԻ*

Խ Վ Բ ա գ ի ռ ն ե թ՝

Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ, Պ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Երկու խոսք . . . . .	է—ՃԺԸ
2. Առաջարան . . . . .	1—523
3. Քննադրեր . . . . .	1—154
Ա խմբագրություն . . . . .	155—279
Տարբնթերցվածքներ Ա խմբագրության . . . . .	283—416
Գ խմբագրություն . . . . .	417—523
Տարբնթերցվածքներ Գ խմբագրության . . . . .	525—528
4. Հավելված . . . . .	531—608
5. Մանրթագրություններ . . . . .	609
6. Ցանկեր . . . . .	611—612
Համեմատական տախտակ դատաստանադրքի ԱԳ . . . . .	613—627
և Բ խմբագրությունների . . . . .	628—629
Առարկայական . . . . .	630
Անունների . . . . .	631—642
Առաջարանի . . . . .	631—637
Դատաստանադրքի գլուխների . . . . .	637—642
Ա խմբագրության . . . . .	
Գ խմբագրության . . . . .	

## Ե Ր Կ Ա Ւ Խ Ո Ս Ք

Ժամանակակիցներն ու հետագա սերունդները Մխիթար Գոշի անունը նշել են մեծ հարգանքով ու խոր ակնածանքով: Նրան դասել են մերագնյա եռամեծ վարդապետների շարքը, մի մեծարանք, որին արժանացել են շատ էջերը. անվանել են «հռչակավոր», «իմաստուն ու հեզ», «աշխարհալույս» և այլն, որով արժանին են մատուցել արժանավորին: Պատմության գնահատականն է դա, որ հաստատվել է ամեն անգամ, երբ հաջորդ սերունդները արժեքների վերաարժեքավորում են կատարել: Մխիթար Գոշը աշխարհի մեծ օրենսգետներից է, գեղարվեստական արձակի հիմնադիրներից մեկը հայ գրականության մեջ, հասարակական-հաղափական ու հոգևոր-եկեղեցական խոշոր գործիչ, հրմուտ մանկավարժ, կառուցող, կազմակերպող, շինարար:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ Մխիթարի աշակերտի աշակերտը վկայում է, որ մեծ վարդապետը թողել է, որպես հիշատակ և արձան գերեզմանի, իմաստախոհ գրքեր՝ հօգուտ ուսումնասերների: Մխիթար Գոշի հոգևոր ժառանգության մեջ, սակայն, առանձնանում են երկու գործ, որոնք կոթող են դարի համար, նաև՝ որոշ զաղափարների համար, որ այլուր ծագելու էին շատ ավելի ուշ ժամանակներում և որոնք խոր հետք են թողել հայկական հետագա կյանքի ու մտքի վրա: Առակներն են դրանք և, մանավանդ, Դատաստանագիրքը: Սակայն դարի հարթության վրա Մխիթար Գոշը լեռնանում է մեր դեմ ոչ միայն իր գրական-գիտական ծանրակշիռ վաստակով, այլև որպես Հայրենասեր, որպես Քաղափացի և որպես Մարդ: Նա մարտնչել է իր հայրենիքի անկախության ու միասնության համար, պաշտպանել է, անշուշտ, այն կարգերը, որոնց ծնունդն էր ինքը, բայց և պայքարել է այդ կարգերի որոշ երևույթների դեմ՝ մարդու համար, մարդկայինը մարդու մեջ բարձրացնելու համար: Դրա վառ արտահայտությունն ու վկայությունն է Դատաստանագիրքը:

Դատաստանագրքով Մխիթար Գոշը ընդառաջում էր ցանկալի զալիքին և սահմանում հայկական ապագա թագավորության պետա-իրավական հիմունքները: Սակայն Դատաստանագիրքը մեծ նշանակություն ուներ նաև ներկայի համար: Մխիթարի մտահոգության անմիջական առարկան, այնուամենայնիվ, ներկան է: Երազելի թագավորության վերականգնումը իրական հիմքերի վրա դնելու համար նա շնունդ է բարեփոխել շատ կողմերով խաթարված ներկան: Հրահանգում է, որ եկեղեցական դասը հոգևոր գործերով զբաղվի, ծառայի աստծուն և ոչ մամոնային. փառոգում է, որ աշխարհիկ իշխող դասը չմիջամտի հոգևոր գործերին, չռանձգի եկեղեցու ունեցվածքի դեմ. կարգադրում է, որ շինականները հնազանդ լինեն տերերին, անտուտունջ վրձարեն սահմանված տուրքերը: Բայց Մխիթարը միաժամանակ պահանջում է

նակ, որ հոգևոր և աշխարհական տերերը շափից ավելի շնեղեն շինականներին, շվեցնեն ավելի, քան սահմանված է օրենքով ու սովորույթով, «քանզի թագաւորք էւ իշխանք... յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն»: Իր Դատաստանագրքով Մխիթարը ձգտում է իրավական շրջանակների մեջ առնել պաշտօնեության՝ շարաշանումներով լի գործունեությունը. ջանում է օրինական դատարանի ֆենդայամբ փոխարինել ավատական կամայականության անզուսպ փայֆը, «...զի ուր դատաստանք պակաս է, խռովութիւն բազում է, եւ ուր դատաստանք եւ իրաւունք կայցեն՝ խաղաղութիւն բազում է յաշխարհի եւ յեկեղեցիս»: Միտումը գերագույն այն նպատակն է, որը, դարձի հրամայականը լինելով, իր խօր դրոշմն է դրել Մխիթարի՝ զրանով միայն իմաստավորված գործունեության ու ֆաղափական մտածելակերպի վրա. ապահովել երկրի ներսում արդարադատությունն ու խաղաղությունը, կայունացնել հասարակական ներքին անդորրը, կենտրոնացնել երկրի բոլոր ուժերը մի զսպանակի մեջ, որը միայն կկարողանար հարմար պահին հզոր պոռթկումով դեն նետել կաշկանդող արգելիները և վերականգնել «յանուրջս երեսութացող» թագավորությունը: ԺԲ—ԺԳ դարերի միջակա հիսնամյակում հայ ժողովուրդը լարել էր իր հոգևոր-ֆիզիկական բոլոր ուժերը երկրի անկախությունը վերականգնելու համար: Դատաստանագիրքը այդ լարման հոգևոր կողմի արտահայտությունն էր, որը մեծապես նպաստելու էր այդ նպատակի իրականացմանը:

Դատաստանագիրքն, այսպիսով, ոչ միայն Մխիթարի գրական-գիտական նախասիրությունների արդյունք էր, այլև ժամանակի հրամայական պահանջ, գիտակցված անհրաժեշտություն, որով Մխիթարը իր ժողովրդին ավելց ֆաղափական ամենօրյա պայքարի մի ազդու գեներ: Այդ գեները նվազ հատու չէր, քան սուրբ, և գործոն էր ինչպես նպատակը: Դա գեներ էր գոյամարտի համար, գոյամարտում հաղթանակելու համար, հարատևելու համար: Դրա մեջ էր Դատաստանագրքի մեծ խորհուրդը ժամանակի հանդեպ և պատմական իմաստը՝ սերունդներին ավանդած:

## Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺԲ—ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ: ՄԻԽԹԱՐ ԳՈՇԻ  
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԺԲ—ԺԳ դարերի միջակա հիսնամյակը պատմա-քաղաքական մեծ հեղափոխումների ժամանակաշրջան էր Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի կյանքում: Մի դարաշրջան էր դա, որ կարիք ուներ մեծությունների և տվեց զենքի ու մտքի մեծություններ: Դրանցից մեկը Մխիթար Գոշն էր:

Մխիթար Գոշի ծննդյան թվականը հայտնի չէ: Նրա կենսագիրը՝ պատմիչ Կիրակոս Գանձակեցին, հաղորդում է, որ Մխիթարն ապրել է շատ երկար. «Ե՛հաս ի խորին ծերութիւնն... և փոխեցաւ յաստեացս... ալեւորեալ և լի աւուրբք»<sup>1</sup>: Ստույգ է, որ նա մահացել է 1213 թվականին: Կիրակոս Գանձակեցու այս վկայությունների համաձայն Մխիթար Գոշը պետք է ծնված լինի ժԲ դարի 20—30-ական թվականներին, ենթադրելով, որ նա ապրել է 80—90 տարի: Պատմիչը վկայում է. «Հուշակաւորն այն և մեծիմաստն գիտութեամբ՝ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն գրոց սրբոց»<sup>2</sup>: Չափահաս դառնալով Մխիթարը ձեռնադրվում է կուսակրոն քահանա: Ստացած կրթությունը, սակայն, չի բավարարում ուսումնատենչ երիտասարդին, և նա ձգտում է խորացնել այն: Որոնումների ճանապարհին Մխիթարը հանդիպում է Հովհաննես Տավուշեցի վարդապետին, որն այն ժամանակ «երևելի էր գիտութեամբ»<sup>3</sup>: Երկար տարիներ աշակերտելով սրան ու այլոց, ինքը Մխիթարն էլ դառնում է վարդապետ, այսինքն՝ արժանանում է ժամանակի ամենաբարձր դիտական կոչմանը: Բայց «և այնու ոչ շատացաւ», դրանով էլ չբավարարվեց, ասում է Կիրակոսը<sup>4</sup>: Իր գիտելիքները առավել հարստացնելու ձգտմամբ Մխիթարը գնում է Կիլիկիա, Սև լեռան հուշակավոր վանքերը և թաքցնելով, որ ինքը վարդապետ է, տեղի համբավավոր վարդապետների ղեկավարությամբ ավելի ևս խորանում է աստվածաբանության ու գիտության այլևայլ բնազավառներում: Ուսումնառության վերջում Մխիթարը վարդապետական քննություններ է հանձնում և երկրորդ

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 219—220:

<sup>2</sup> Անդ, էջ 207:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Անդ, էջ 208:

անգամ ստանալով վարդապետի կոչում, վերադառնում է հայրենիք: Վերադարձի ճանապարհին, Կարին քաղաքում, նա ծանոթանում է հայազգի Քուրդ իշխանի՝ Կայեն գավառի տիրոջ հետ, և «սիրեցաւ ի նմանէ իբրև զհայր»<sup>5</sup>: Հայրենիքում նրա ու Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հարաբերութիւնները շուտով լարվում են. վերջինս սկսում է հալածել Մխիթարին: Հավանաբար խորն ու սկզբունքային էին տարաձայնութիւնն պատճառները և անզիջում՝ դիրքերը, որովհետև Մխիթարին հալածելու համար Ստեփանոս կաթողիկոսը չի բավարարվում իր հնարավորութիւններով և առանց խորշելու դիմում է նույնիսկ մահամեղական իշխողների օգնութեանը: «Եւ բազում հնչեաց ի վերայ մեր փորձութիւնք, ներքոյ և արտաքոյ», — դառնութեամբ գրում է Մխիթար Գոշր հետագայում՝ 1187 թ., Երեմիայի մեկնութեան հիշատակարանում<sup>6</sup>: Մխիթարը ստիպված տեղափոխվում է Հաթիւրքի իշխան Վախթանգի ու նրա մերձավորների մոտ, «որք բազում պատուով պատուեցին զնա»<sup>7</sup>: Սակայն այստեղ էլ երկար չի մնում նա: Իմանալով, որ Քուրդ իշխանը վերահաստատվել է իշխանութեան մեջ ու վերադարձել իր տիրույթները, Մխիթարը սեղափոխվում է Կայեն գավառ (այժմ ՀՍՍՀ Իշխանի և Ադրբեջանական ՍՍՀ Դաղախի շրջանները) և հաստատվում Գետիկ վանքում:

Որք երկրաշարժի հետևանքով կործանվում է Գետիկը, Մխիթարը հիմնադրում է Նոր Գետիկ վանքը, որ և բնակվում է մինչև իր կյանքի վերջը: Նոր Գետիկի կառուցման գործում նրան մեծապես օգնում են Զաքարիան, Իվանեն, Վախթանգը, Քուրդը և այլք:

Հայրենիք վերադառնալուց հետո շուտով տարածվում է «համբաւ իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհս. և բազումք աշակերտէին նմա յուսումն վարդապետութեան»<sup>8</sup>, հաղորդում է պատմիչը:

Աստիճանաբար աճում է Մխիթարի հեղինակութիւնը նաև որպես հոգևոր-քաղաքական գործչի: Նրա ազդեցիկ քաղաքական դիրքի և բարձր հեղինակութեան վկայութիւնն է, անշուշտ, որ նա մեծազոր Զաքարիայի՝ Հյուսիսային Հայաստանի ինքնիշխան տիրակալի խոստովանահայրն էր: Զաքարիան որոշ հարցերում Մխիթարի կարծիքը ավելի կարևոր էր համարում, քան եկեղեցական մի ամբողջ ժողովի կարծիքը:

Այդպստովոր է եղել Մխիթարի գրիչը: Պատմիչը վկայում է. «Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի զիրս իմաստախոհս յօգուտ ուսումնասիրաց»<sup>9</sup>: Ասացինք արդեն Դատաստանագրքի ու առակների մասին: Այլևայլ ձեռագրերում Մխիթարի անվամբ հանդիպում են նաև աղոթքներ, ճառեր, քարոզներ, մեկնութիւններ, թղթեր, ժամանակագրութիւն և այլն:

Դարն իր կնիքը դնում է բոլորի վրա. բոլորից վեր բարձրացողը բարձրանում է հենց նրանով, որ նաև իր կնիքն է դնում դարի վրա: Վերջինը, սակայն, պայմանավորված է այն խորքով ու լայնքով, որով ըմբռնվում է դարի պահանջը, և այն ճշտութեամբ ու ուժով, որով արտահայտվում է դարի հրամայականը: Ուրեմն, նախ դարի մասին:

ԺԱ դարի առաջին կեսի վերջերին, ներքին ու արտաքին մի շարք անբա-

<sup>5</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 208:

<sup>6</sup> Գաբեզիճ Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց. Կ. Ա., Անթիլիաս, 1951, էջ 521. տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի..., էջ 209, Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 408:

<sup>7</sup> Կիրակոս Գանձակեցի..., էջ 209:

<sup>8</sup> Անդ:

<sup>9</sup> Անդ, էջ 221:

րենպաստ հանպամանքների հետևանքով, ժողովրդի համառ ու հերոսական դիմադրությունից հետո, Բյուզանդիան գրավեց Անին. ընկավ Բագրատունյաց հարստությունը, և հայ ժողովուրդը կորցրեց իր պետականությունը: Սակայն շուտով Բյուզանդիան իր տեղը զիջեց Ասիայի տափաստաններից հուժկու հորձանքով Անդրկովկաս ու Փոքր Ասիա խուժած սելջուկ-թուրքերին: 1047—48 թթ. առաջին արշավանքից հետո կարճ ժամանակում սելջուկները գրավեցին Անդրկովկասը, այնուհետև մի շարք երկրներ ու հիմնեցին իրենց աշխարհակալությունը՝ Զինաստանից մինչև Եգիպտոս: Հայ ժողովրդի քաղաքական, հասարակական, տնտեսական ու մշակութային զարգացման ընթացքը նորից կասեցվեց, իսկ որոշ բնագավառներում ավելի ետ մղվեց, քան ձեռք բերված մակարդակն էր: Սուլթան Մելիքշահի օրով (1072—1092 թթ.) արդեն երկրի ներքին կյանքն սկսեց աշխուժանալ: «Մելնելով իր պետության շահերից, — գրում է ակադ. Հ. Մանանդյանը, — Մելիքշահը հնարավորություն տվեց նվաճված երկրների ժողովուրդներին մասամբ վերականգնելու իրենց քայքայված երկրներն ու տնտեսությունները»<sup>10</sup>:

Հայաստանի ու Անդրկովկասի քաղաքական աշխուժացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին, մասնավանդ, Մելիքշահի մահից հետո, երբ սելջուկյան պետությունը, գահակալական կոիվների հետևանքով, մասնատվեց մի շարք ավելի մանր պետական միավորների<sup>11</sup>: Այդուհանդերձ, օտար բռնատիրությունը դեռ շատ ծանր ուժով իշխում էր Անդրկովկասում: Սելջուկյան տիրապետությունը խիստ ղժգոհություն էր առաջացրել հայկական հասարակության բոլոր խավերում. ուսմիկ-շինականության մեջ՝ հարկերի ծանրության, որը հաճախ վերածվում էր ավարառության, կրկնակի (բնիկ և օտար) շահագործման, անապահով կյանքի ու նման այլ պատճառներով, իշխող աշխարհիկ դասի մեջ՝ նրանց իրավունքներից զրկելու, սահմանափակելու, հալածանքների և այլ պատճառներով: Դժգոհ էր նաև հոգևորականությունը: Ծիշտ է, Եկեղեցին օտար տիրապետությունների ժամանակ էլ պահպանել է իր իշխող դիրքը երկրի ներսում, բայց զգալիորեն արդեն սահմանափակ ձևով: Բացի դրանից, կար կրոնական հալածանքը և հալածանքը հոգևորականների նկատմամբ:

Սելջուկյան պետության թուլացումը մի կողմից, հայ (նաև անդրկովկասյան) հասարակության բոլոր խավերի ղժգոհությունը սելջուկյան լծից՝ մյուս կողմից, միասնաբար նպաստավոր հող էին ստեղծել քաղաքական-ազատագրական բաղձանքներ սնելու համար: Սակայն քաղաքական բաղձանքներից քաղաքական-ազատագրական շարժման անցնելու համար պետք էին այլ բաղադրիչներ ևս: Ծիշտ է, Սելջուկյան պետությունը, մասնատման հետևանքով, զգալիորեն թուլացել էր, բայց տեղերում, մասնավորապես Անդրը-

<sup>10</sup> «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հ. 9, Երևան, 1952, էջ 66—67:

<sup>11</sup> Դեպքերին ժամանակակից Հովհաննես Իմաստասերը աչպես է ներկայացնում քաղաքական վիճակը Մելիքշահի մահից հետո. «Եւ յետ մահուան նորա անպատմելի եղև իրողութիւն ամենայն ազգաց՝ զամս Գ. զի եղբայր նորա Դրղուշն և որդի նորա Թեքթարուլն զայսոսիկ զամս մարտի պատերազմաց զբարեխարմարութիւն զամենայն ի բաց կտրեցին, վասն զի ոչ ընդ փոյթ միոյ ի նոցանէ տիրելոյ՝ հոսմունս արեանց իրրև զուղիսից լինէր, ոչ միայն զինակիր նահատակացն, այլև առհասարակ ազանց և դաւառաց և նեղութիւնք վշտաց՝ սովու և գերութեան, և այսպէս բարիքն ի բաց վճարեցան ընդ խզման կենաց թազարոքին»։ Սամուէլի քահանայի Անեցույ Հոտաբմունք ի վրոց ոլատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 119:

կովկասում, այն դեռ բավարարչափ ուժեղ էր, և ո՛չ Հայաստանը ինքյամբ, ո՛չ էլ Վրաստանը առանձին չէին կարող իրականացնել քաղաքական-ազատագրական իրենց ձգտումները: Անդրկովկասի մտավոր-քաղաքական իշխող առաջադեմ շրջանակներում ծնվում և հետզհետե սմբապնդվում է սելջուկյան բռնատիրութեանը անդրկովկասյան ժողովուրդների միասնական ճակատ հակադրելու դադափարը: Մի կերպ իր գոյութունը պահող վրաց թագավորութունն ու հայ իշխանական տները, դատը փորձից խրատված, միացան՝ համատեղ ջանքերով վերջ տալու օտարատիրութեանը: Ստեղծվեց հայ-վիրական գինակցութունը, որն, իրոք, մեծ հաջողութուններ բերեց թե՛ Հայաստանին և թե՛ Վրաստանին:

Արտաքին ռազմա-քաղաքական միասնական ճակատ ստեղծելու հետ միասին ու, թերևս, դրանից էլ առաջ, Հայաստանն ու Վրաստանը առանձին-առանձին պետք է հասնեին նաև ներքին ուժերի համախմբման, ցրված կամ անջատողական միտումներով համակված ավատական ուժերի ռազմա-քաղաքական միավորման ընդհանուր համակարգի մեջ և այս վերջինին խստորեն ենթարկված: Վրաստանում ներքին ուժերի համախմբման գործը, բնականաբար, զլխավորեց թագավորը, որովհետև թագավոր կար: Հայաստանում նույն այդ դերը, իրերի բերումով, կատարեցին Զաքարյանները:

ԺԹ դարի վերջին քառորդից սկսած հայ ժողովուրդը թևակոխում է ազգային-պետական վերականգնման մի նոր շրջան, որն անխզելիորեն կապված է Հայաստանի հարավ-արևմուտքում Ռուսիայան, հյուսիս-արևելքում՝ Զաքարյան իշխանական տների հետ: Արևմուտքում պայմաններն, ըստ երևույթին, ավելի բարենպաստ էին և Ռուսիայան հայկական իշխանութունը շուտով պսակվեց արքայական թագով (1198 թ.), իսկ Զաքարյանները զեռ պայքարելու էին: «Զաքարյանների տոհմի նախահայրերը,— գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— որ Կյուրիկյան Բագրատունիների ժամանակ հաստատվել էին Ձորադեղում՝ խնամխանալով իշխանական հայ տոհմերի և, հավանաբար, նաև Բագրատունիների հետ՝ հետզհետե զորեղացան և ձեռք բերին Լոռում և Վրաստանում բացառիկ դիրք ու հեղինակություն»<sup>12</sup>: Զաքարյանների բուռն վերելքը սկսվում է ԺԹ դարի 80-ական թվականներից, և հենց այս ժամանակներում էր, որ Մխիթար Գոշը սկսեց մտածել դատաստանադիրք կազմելու մասին ու կազմեց այն. մի ղուգադիպություն, որը դժվար կլինի պատահական համարել: Այն ժամանակ ներքին ուժերի համախմբումը առանցքային նպատակի համար, ցրված-կազմալուծված ղինական ուժերի միավորումից, ավատական անջատողական կամ ինքնագրուխ ներտումների սանձումից բացի, անպայման ենթադրում էր նաև միջդասակարգային հակամարտութունների եթե ոչ վերացում, ապա զոռնե կասեցում, ինչպես և ներդասակարգային հարաբերութունների կայունացում և այդ բոլորը գոյութուն ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգի սահմաններում, իրերի ավանդաբար սրբագործված շրջանակներում: Անշուշտ, այս խնդրի լուծման գործում ևս առաջին տեղը պատկանում էր հարկադրանքի ամբողջ մեքենային, մասնավորապես ազդեցութեան գինական-ոստիկանական միջոցներին, սակայն նվազ արդյունավետ շպետք է համարել նաև հոգևոր-գաղափարական ազդեցութեան միջոցները: Այս պարագան գիտակցում էին և՛ իշխող քաղաքական խավերը, և՛ առաջադեմ մտավորականութունը: Սուրն ու գրիչը պետք է միանային և, իրոք, միացան հանուն այն նպատակի, որ գերազույնն է որևէ ժողովրդի համար բոլոր մյուս

<sup>12</sup> «Փննական տեսութուն...», հ. Գ, էջ 126:

նպատակներից և որին սկսեք է ենթարկվեն մյուս բոլոր շահերը: Խոսքը վերաբերում է անգլային ազատագրութեանն ու պետականութեան վերականգնումը:

Նախ սրի մասին: Մխիթար Գոշը՝ գեայքերի ժամանակակիցն ու ականատեար, Խոսրով Գանձակեցու վկայաբանութեան մեջ այսպես է ներկայացնում Հյուսիս-արևելյան Հայաստանը ԺԲ դարի 60—70-ական թվականներին. «Ի ժամանակս բռնակալութեանն Ղեմացուց՝ յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց ի սպառ-սպառ, և անտերուշք շրջէին մնացորդք իշխանաց՝ որ ընդ բնաւ աշխարհս վարատեալք՝ ոչ հնազանդելով միմեանց, մանաւանդ այնորիկ՝ որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ,....», իշխանները «լաւ համարէին ի ստրկութեան կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան: Վասն այսորիկ ներեցան և տառապեցան յանօրէն և յամբարիշտ ազգաց, յորդոց Քստուրայ և Իմասելի և յՆդեմացուց, ուրոց առաւել ծանր էր քան ղերկաթ լուծ անրոյ նոցա ի վերայ ջրիստովնէից.... որ վասն առաւել հարկապահանջութեանն վաճառէին զորդիս իւրեանց և տային ի գինս փրկանաց անձանց. և բազում էր ամպրոպ խոռովութեան ամենայն ուստեք յամենայն տեղիս: Քանզի զաստուածաշէն եկեղեցիս, որ փոխանակ դրախտին տուան մեզ, տապալէին, զվանորայս ի հիմանց քակէին, զմատրուսս վկայիցն անասնոց տեղի պատրաստէին, զպատուական արս անարգէին և իմաստունք յոշին: Համարեալ լինէին...»<sup>13</sup>: Մխիթար Գոշը ընդգծում է, և դա, անշուշտ, գիտակցում էին ժամանակի առաջադեմ մտավոր և ռազմա-քաղաքական գործիչները, որ Հայաստանի նման վիճակի հիմնական պատճառներից մեկը երկրի գինական ուժերի ցրվածութունն է, իշխանների ներխուժումը իրենց զավառների կամ ամրոցների անձուկ շրջանակներում, որոնք թեև պայքարում էին օտար բռնակալութեան դեմ, բայց պայքարում էին անկաղմակերպ, առանձնական, ուստի և առանց ընդհանուր շոշափելի արդյունքի: Հաջողութեան երաշխիքը միավորվելու մեջ էր: Զաքարյանները, իրենց ռազմական հաջողութուններին զուգընթաց, աստիճանաբար կարողացան իրենց շուրջը համախմբել երկրի ցրված ու անջատ ուժերը: ԺԲ դարի 80-ական թվականների երկրորդ կեսից արդեն Զաքարյանները գլխավորում էին հայ ժողովրդի ազատագրական պայքարը, որը, ռազմական տեսակետից, հզոր ու կազմակերպված ուժ էր: Քանհինգ տարի տեւած գրեթե անընդհատ ու միշտ հաղթական պատերազմների շնորհիվ հայկական բանակը, Զաքարյաններին առաջնորդութեամբ, ազատադրեց երկրի գալի մասը սելջուկյան տիրապետութունից: Ստեփանոս Օրբելյանի վկայութեամբ, Զարարյանները «բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցնեքքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ: Առին Ղլարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուլբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառնի, զԻվին մայրաքաղաք, զԳարգման, զԳանձակ, զՉարէք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտու, զՉարաբերդ: Առին ի 660 թուին զՍիւնիս, զՈրոտան, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ: Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան, սակայն զհասարակն սոքա առին և որդիքն իւրեանց. և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»<sup>14</sup>: Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ հենց Զաքարյաններն

<sup>13</sup> «Հայոց նոր վկաները», աշխատութեամբ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 23—24:

<sup>14</sup> «Պատմութիւն նահանգին Սխական», Թիֆլիս, 1910, ԿԶ, էջ 391—392:

ու հայկական զորքերն են ազատագրել երկիրը սելջուկ նվաճողներից: Նույն փաստը ընդգծում է նաև դեպքերին ժամանակակից պատմիչը՝ Կիրակոս Գանձակեցին. «Զաքարյանները «բազում մարտս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհս հայոց, գոր ունէին պարսիկք և տաճկունք, առին ի նոցանէ յինքնանս... ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց»<sup>15</sup>: Նույնն են վիճաբերել նաև իրենք Զաքարյանները Հաղարծնի իրենց արձանագրութեամբ<sup>16</sup>:

Զաքարյանների իշխանությունը տարածվում էր ոչ միայն նրանց ազատական տիրույթներում՝ Լոռի, Չորագետ և այլն, որ ինքնին հասկանալի է, այլև վերանվաճված ամբողջ Հայաստանի վրա: Արձանագրություններում կարդում ենք. «Ի ՈՒՆԷ (=1198) թիս ես Մխիթար... զԱկանաց ջուրն... մեծ ծախիւք... ածի ի Հոռոմոսի վանս... Եդեւ աչս... ի տէրութեան քաղաքիս եւ բոլոր երկրիս Մեծ Հայոց... Զաքարէի եւ Իւանէի»<sup>17</sup>, կամ՝ «Ի տէրութեան բոլոր երկրիս Մեծ Հայոց, Քրիստոսի մեծ զաւրականացս Զաքարէի եւ Իւանէի»<sup>18</sup> և այլն և այլն:

Այսպիսով, կազմակերպելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ սելջուկ նվաճողների, Զաքարյանները, պատմական կարճ ժամանակահատվածում, վերականգնեցին հայկական պետականությունը մի տարածքի վրա, որը, թերևս ավելի մեծ էր, քան Բագրատունյաց Հայաստանը: Թագավորության վերականգնումը Արեւելյան Հայաստանում օրակարգի մեջ էր և օրվա հարց: Զաքարյանները հասել էին դրան. նրանք հավակնում էին դահի, ազատական մյուս ուժերն ու ժողովուրդը ընդունում էին նրանց հավակնությունը և համարում ոչ միայն բնական, այլև ցանկալի: Հավակնության հիմքը, ամենից առաջ, Զաքարյանների իշխանության ուժն ու ծախալն էր: Հայաստանում նրանց իշխանությունը լիիրավ էր ու ինքնակա և վեր երկրի ներսում եղած ամեն մի այլ իշխանությունից: Ժամանակակիցները այդպես են ընկալել նրանց իշխանության բնույթն ու ծավալը, ընդունել են այն ու արձանագրել. «Ի թուին ՈՍԵ (=1206) յաշխարհակալ տէրութեան Զաքարէին եւ Իւանէի»<sup>19</sup>, կամ՝ «Թուին ՈՍԸ (=1209) յաշխարհակալութեան մեծն շահնշահաց Զաքարէի եւ Իւանէի»<sup>20</sup>, կամ՝ «ՈՍԹ... ի պետական իշխանութեան շահնշահաց<sup>21</sup> Զաքարիաի...»<sup>22</sup>: Զաքարյան եղբայրներին կոչել են նաև թագավոր, որի մասին վկայում է, օրինակ, Անիի Աղշկաբերդ եկեղեցու 1187 թ. արձանագրությունը. «Սուրբ մեղսաքաիչ պատարագ, որ ի սմա կատարի, Սահա-

<sup>15</sup> «Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 163:

<sup>16</sup> Տե՛ս Ս. Զալալյան, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տիֆլիս, 1842, էջ 131—132:

<sup>17</sup> «Վիճակն տարեկիր. Տուցակ ժողովածոց արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 39:

<sup>18</sup> Անդ, էջ 42:

<sup>19</sup> Անդ, էջ 47:

<sup>20</sup> Անդ, էջ 50:

<sup>21</sup> Վիճակն տարեկիրում «շահնշահ» բառը հրատարակված է մեծատառով, որով այն պետք է ընկալվի որպես հատուկ անուն և կարող է թվալ, թե խոսքը Զաքարիայի որդու մասին է, որի անունը Շահնշահ էր: Մինչդեռ «շահնշահ» այստեղ հասարակ անուն է, որպես տիտղոս Զաքարիայի, թեկուզ այն պատճառով, որ արձանագրությունը գրված է ի կենդանության Զաքարիայի: Այդպես է նաև նախորդ արձանագրությունում, որտեղ Զաքարիան ու Իվանեն անվանված են շահնշահներ:

<sup>22</sup> Անդ, էջ 50, № 1210. տե՛ս նաև էջ 44, 57 և այլուր:

կադիստոյ է, ծնողի Զաքարիայի և Յիւանէ, թագաւորաց Հայոց»<sup>23</sup>: Եթե մեկին, որը պաշտօնապես օժտած չէ թագավոր, կոչում են թագավոր և, նույնիսկ, շահնշահ, ապա այդ փաստը վկայում է գոնե այն մասին, որ նրա իշխանութունը, իրականում, բոստ էութեան շի տարբերվել թագավորականից: Ընդհանրապես միջնադարյան, մասնավորապես հայկական միջնադարյան իրավաբանական միտքը մշակել է իշխանութեան գերակայութեան (սուվերենիտետ) իր բմբռնումը: Մխիթար Գոշը, որ արտահայտել է ժամանակի բմբռնումը այդ մասին, այսպես է բնութագրում իշխանութեան գերակայութունը, որը, բնականաբար, պատկերացվում էր թագավորական իշխանութեան ձևով. «Թագաւորք այնոքիկ անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն համանգամայն եւ յայոց հարկս առնուն յազգաց, եւ եթէ ոչ՝ ոչ հարկիցին» (Ռատաստանագիրք, հոդվ. 2=Բ, II, Ա): Իշխանութունը գերակա է, եթե այն կրողը «համանգամայն» տիրում է իր ժողովրդին, իր ազգին և ուրիշներից էլ հարկ է վերցնում, իսկ եթե ուրիշներից հարկ չի վերցնում, ապա ինքը, գոնե, հարկ չի տալիս: Գիտենք, որ Զաքարյանները ոչ ոքի հարկ չէին տալիս: Ժամանակի բմբռնումների համաձայն, այդքանը արդեն բավական էր նրանց իշխանութունը գերակա համարելու: Սակայն, բմբռնումը խորանում է, երբ հայտնի է դառնում, որ Զաքարյանները ոչ միայն հարկ չէին տալիս որևէ մեկին, այլ հենց իրենք էին հարկ վերցնում ուրիշներից: Վկայում է դարաշրջանի պատմիչը. Զաքարիան և Իվանեն «հարկատուս արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին»<sup>24</sup>: նույն պատմիչը շարունակելով խոսքը, դարձյալ գրում է. «Եւ այսպէս յաջողեցաւ նոցա ի վերուստ յաղթութիւն նոցա, գի համբաւ քաջութեան նոցա եւ ընդ բազում գաւառս, և բազում ազգք հարկէին նոցա՝ որ սիրոյ աղագաւ և որ յերկիւղէ»<sup>25</sup>:

Միով բանիվ, դարի հրամայականը ժողովրդի ազատագրումն էր օտար լծից և պետականութեան վերականգնումը: ԺՐ դարի վերջերից հայ ժողովուրդը լարել էր իր հոգևոր-ֆիզիկական բոլոր կարողութունները այդ նպատակին հասնելու համար և հասավ դրան: Ռատաստանագիրքը այդ լարման հոգևոր կողմի արտահայտութունն էր: Սուրն ու գրիչը գործում էին միասնաբար ու պայմանավորում հաջողութունը փոխադարձաբար:

## ՊԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ՍՏԵՆԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Այժմ գրչի մասին: Այստեղ, սակայն, զուգորդվում են երկու հարց. ինչպե՞ս արձագանքեց Մխիթար Գոշը, ամենից առաջ իր Ռատաստանագրքով, դարի գլխավոր պահանջին և այս ճանապարհին առանձին ի՞նչ հարցերի լուծման էր ձգտում, որով նպաստելու էր գլխավոր խնդրի իրականացմանը, և ո՞րչափ իրական դարձավ ենթադրականը: Ինքը Մխիթար Գոշը արդեն նախագրութեան Բ գլխում դատաստանագիրք գրելու անհրաժեշտութունը բացատրում է տասներկու պատճառով.

Առաջին, մեզ՝ հայերիս բազում անգամ պարսավել են թե՛ այլադավանները և թե՛ քրիստոնյաները, որ մենք գրավոր դատաստան-դատաստանագիրք չունենք:

<sup>23</sup> Անդ, էջ 41:

<sup>24</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 163:

<sup>25</sup> Անդ, էջ 163—164:

Երկրորդ, շարությունը մարդկանց մեջ, շարն ընդհանրապես դորացել է և նա հանգցրել է «զբնատրականն ի մեզ արէնս» կամ «զգիտութիւնն, որ ի բնութենէ ունէաք»։ Նույն այդ շարը, որ վերածվել է հոգու անկատարության, վերացրել է կատարելությունը և վշտակցության, սիրո փոխարեն դրել ատելությունը։ Դատաստանագիրքը պետք է նպաստի վերականգնելու բնական օրենքի զգացողությունը, կատարելությունը, և ատելությունը միմյանց նկատմամբ փոխարինի վշտակցությամբ ու սիրով։

Երրորդ, ծովության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներին, հետեապես նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի «կամեցաք գրով դատաստանիս զնոսա իբրեւ ի քնոյ զարթուցանել»։

Չորրորդ, Մովսիսական օրենքը, մարգարեների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն տրված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած. մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր է և փոփոխվում է ըստ ժամանակի, ըստ ժողովրդի և ըստ երկրի։ Նշված օրենքները այդ հանգամանքը հաշվի չեն առել։ Դատաստանագիրք է պետք և այնպիսին, որը նկատի ունենա այդ շատ կարևոր հանգամանքը<sup>26</sup>։

Հինգերորդ, առաջ սուրբ հոգին, ասել է թե քրիստոնեական կրոնը, ներգործում էր և նպաստում ճշմարիտ դատաստան կատարելուն, կրոնը հենց օրենք էր՝ գրված մարդկանց սրտի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիքը չկար։ Այժմ սուրբ հոգին այլևս այն ազգացությունը չունի մարդկանց վրա, «վրիպել ենք» քրիստոնեական եղբայրասիրությունից, ուղղամտությունից և այլն, «վասն այնր պատճառի հարկեցաք գրել»։

Վեցերորդ, դատական գործերը վճռվում են նաև երգմամբ, բայց աճել է շարությունը մարդկանց մեջ, և նրանք, չնայած որ երգումն արգելել է Աստված, տեղի ու անտեղի երգվում են և հաճախ սուտ։ Խախտված այս կարգը կանոնավորելու նպատակով է նաև, որ գրվում է դատաստանագիրքը։

Յոթերորդ, դատաստանագիրքը գրվում է, որպեսզի հայերը այն չունենալու պատճառով չդիմեն այլազգիների, որ մինևույն է թե, մահմեդական դատարաններին։

Ութերորդ և ամենակարևոր պատճառներից մեկը. «Տեսանեմք այժմ,— գրում է Մխիթար Գոշը,— զի բազումք յեպիսկոպոսաց, եւ ի վարդապետաց, եւ ի քահանայից, եւ ի զլխաւոր աշխարհականաց աշառանաւք եւ կաշառաւք բազում անգամ եւ տգիտութեամբ թիրեն գուղիղ դատաստան։ Սակա որոյ յուղղութիւն եւ յանդիմանութիւն սակաւուք այնոցիկ զգիրս զորոշմեցաք դատաստանի»։ Ուշագրավ են նաև մյուս պատճառները։

Եվ այսպես, օտարազգիները պարսավում են հայերին, որ նրանք չունեն դատաստանագիրք, հայերը զգում են դատաստանագրքի պակասը և, այդ պատճառով, իրավացի են համարում հանդիմանությունը։ Իրավական առօրյայի բավարարման համար դատաստանագիրքը անհրաժեշտություն էր դարձել։ Վկայում է նաև Ներսես Լամբրոնացին՝ Տարսնի եպիսկոպոսը. «Յամս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի, որ երրորդ էր նախնեացն իւրոց ի Հոռմկլայն, յաջորդ աթոռոյն, թուին Ոեթ (=1193—ն. թ.), յութեւտաներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղև առ նոյն սրբազանն ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝ քաղաքական արինացն. զի որք Իսմայելացոց էին

<sup>26</sup> Դատաստանագրքի Բ խմբագրության մեջ այդ կետը սահմանված է այլ կերպ։

իշխանք ի քաղաքս և դատաւորք, գոգատ հայաստանեայցս ոչ դատէին. այլ զինդրոզան իրտւանց՝ առ իւրեանց արէնս առաքէին. զի այս էր ի նախդլուս մեկիբացն հրաման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց արինացն դատ թողուլ զնոսին: Եւ եկեալ ոսոխք յեկեղեցին՝ հարցանէին արէնս ի քահանայից և ի քահանայապետաց. ոչ ունէին զիրս, որով ընտրեսցեն զիրաւունս. զոր և այլոց աղղաց տեսանէին՝ քրիստոնէից և մսլիմաց. այսինքն հոռմայեցոց, հելլենացոց, ասորոց, եգիպտացոց, արաբացոց, պարսից և այժմու իշխողացս թուրքաց: Ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ արթունք, կղերիկոսք և աշխարհականք. խեթկեալք յայլոց ազգաց և նախանձեալք զքարուղծն, և խուզեալ ընդ նա մեր յարկեզս դրոց կսթուղիկըստարանին՝ ոչ գտաք արէն. բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարցն ժողովելոց էլ զրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ: Իսկ քաղաքի արէնս ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս»<sup>27</sup>: Տեսնում ենք, որ ժԲ զարի վերջերին դատաստանագիրք ունենալու կարիքը Հայաստանում խիստ հասունացել էր. դրա պահանջը զգում էին թե՛ վերինները, թե՛ վարինները: Այն պետք է ստեղծվեր, և մտքի ու զրշի ժամանակի երկու մեծերը՝ Ներսես Լամբրոնացին հայաշխարհի արևմուտքում, Մխիթար Գոշը՝ արևելքում, զրեթե միաժամանակ գործի անցան բավարարելու ժամանակի պահանջը: Սակայն Լամբրոնացու ստեղծածը համարյա չունեցավ կյանք, առավելապես մնաց ձեռագրերում ու դուրս չեկավ վանքերից. Մխիթար Գոշի ստեղծածը ձեռագրից անցավ կյանք, մտավ իր ժողովրդի մեջ ու, նույնիսկ, քայլից նրա հետ: Պատճառը այն մեկնակետն էր, որից ելնում էին հեղինակները, և այն վերջնակետը, որին ձգտում էին հասնել նրանք: Ամեն օրենսգիրք, ստեղծվելով իրավական առօրյայի կարիքները բավարարելու համար, այդ անում է ղեկավարվելով իրավական որոշ փիլիսոփայությամբ, գրավելով սոցիալդասակարգային նկատելի դիրք և հլնելով իրավա-քաղաքական որևէ տեսությունից հետամտում է քաղաքական որոշակի նպատակներ: Այս ամենը կարող է ուղղակիորեն ասված չլինել օրենսգրքում, ինչպես Լամբրոնացու մոտ է, կամ ասված լինել մասամբ, ինչպես է Մխիթար Գոշի Գատաստանագրքում, սակայն այն անպայման կա, և երևան է հանում գործն իր ամբողջությամբ: Այս տեսակետից նշանակելի տարրերություն կա Ներսես Լամբրոնացու և Մխիթար Գոշի միջև, թեև կա նաև ընդհանրություն: Ընդհանուրն այն է, որ երկուսն էլ տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ են ու երկուսն էլ կանգնած են նրա դիրքերում, ձգտում են ամրապնդել տիրող հարաբերությունները և այլն. մի խոսքով, երկուսն էլ ելնում են ժամանակի պահանջից, փորձում են պատասխանել զարի առաջադրած կարևոր հարցերին. ու թեև նույնն է այս վերջինների՝ նրանց ըմբռնումը, բայց սկզբունքորեն տարբեր են այն ուղիները, որոնցով ընթանում են ղեպի այդ հարցերի պատասխանը: Դա առավել նկատելի է Ներսեսի ու Մխիթարի պատասխաններից այն հարցերին, որոնք պատկանում են իրավա-քաղաքական տեսության բնագավառին և գործնական նպատակներ հետապնդելով, էական էին հաջ ժողովրդի քաղաքական հեռանկարի տեսակետից: Ժամանակի մտածողները տարբեր ուղիներ էին տեսնում թագավորության վերականգնման և, մանավանդ, վերականգնածը պահպանելու համար: Պետականության վերականգնման միևնույն վիճակն

<sup>27</sup> Գ. Զարբնաճալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 754—755:

ադրող մեր հատվածյալ հայրենիքի երկու ծայրերում միաժամանակ մեր գեմ լեռնացող ներսես կամբրոնացին ու Մխիթար Գոշր լավագույնս ցուցադրում են պետականության վերստեղծման ու պահպանման ուղիների տարրնթաց որոնումները: Տարսոնի եպիսկոպոսը գիմորոշված է գեպի լատին արևմուտքն ու Բյուզանդիոնը: Խոսքը, ամենից առաջ, չի վերաբերում ծիսական-գավանարանական այն գիշումներին արևմուտքին, որով արտաքուստ պայմանավորվում էր հայ ժողովրդի գերագույն շահի ապահովումը: Խոսքն այն մասին է, որ գերագանցապես արտաքին ուժերի միակողմանի հաշվարկման վրա կառուցված այդ գիրքորոշումը անտեսում էր արտաքին մյուս գործոնները և, մանավանդ, թերազնահատում ժողովրդի ներքին ուժերի համախմբման ու ամրապնդման հանգամանքը, որը միայն կարող կլիներ թագավորության վերականգնման ու պահպանման համար առավել նպատակալացության մբ օգտվել արտաքին ազգակից, միաժամանակ զսպելով «բարեկամների» հեռու միտող ձգտումները: Տեսականորեն անընդունելի էր և գործնականում վնասակար նաև քրիստոնեական աշխարհաքաղաքացու ներսխայան ուսմունքը, հենց թեկուզ այն պատճառով, որ նա ծիսական-գավանաբանական ընդհանրություն էր ուզում ստեղծել ոչ թե հավասար փոխգիշումների ճանապարհով, այլ հայկականը հունա-լատինականին ենթարկելու սահուն թեքություն վրա<sup>28</sup>: Այսպիսով, հունա-լատինական կղերի կողմից առաջ քաշվող ու եռանդով պաշտպանվող ընդհանուր եկեղեցու գաղափարի մեջ սքողված էր քաղաքական ներկլանման գաղափարը<sup>29</sup>, և կամբրոնացին օրենսդրական իր գործունեության մբ, կամա թե ակամա, տուրք տվեց այդ գաղափարին: Քաղաքական ընդհանուր իր կողմնորոշմանն էլ համապատասխան, կամբրոնացին ոչ թե փորձեց ազգային օրենսդիրք ստեղծել, այլ հայերենի թարգմանեց հունական օրենքները: Սակայն օրենքն այն ժամանակ նաև կրոն էր, իսկ այս վերջինը ոչ միայն ծես էր ու հավատք, այլև քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանության հատու գեներ: Հունական օրենքների թարգմանությունը կամբրոնացու արևմտյան կողմնորոշման արտահայտություններից մեկն էր ու դրսևորումը նաև, որով նա փորձում էր ժողովրդայնացնել, ուրեմն և, ընդհանուր ուժ տալ այդ կողմնորոշմանը: Ծիշտ է, այդ օրենքներով նա նպաստում էր հայ իշխող խավերի գասակարգային գիրքերի ամրապնդմանը երկրի ներսում, սակայն չէր սատարում ընդհանուր համազգային շահերին՝ հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանման գործին: Պատմությունը ցույց տվեց, որ կամբրոնացին ճիշտ չէր: Այդ պատճառով կամբրոնացու թարգմանած օրենքները կյանքի կայուն ուղեղիր շատացան ու մնացին իբրև առավելապես մատենագրական գործ, և եթե գործել են, ապա սահմանափակ կիրառմամբ միայն:

Այլ ուղիներ է ուրվագծում Մխիթարի հեռատես ու խորագնաց միտքը: Նա չի անտեսում արտաքին գործոնները, բայց շեշտը գնում է ներքին ուժերի համախմբման ու գորեղացման ճշմարիտ գաղափարի վրա: Դատաստա-

<sup>28</sup> Տե՛ս «Մբրոն ներսէսի կամբրոնացու խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցուց եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին», Վենետիկ, 1847, էջ 168—192 և այլուր. Տեսոն ներսեսի կամբրոնացու Ատենաբանութիւն, Եւյնի՝ Քուղթ առ քրիստոսագօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լեւոն, ի գիրս Տն. ներսեսի կամբրոնացու Ատենաբանութիւն և Քուղթ և ճառք, Վենետիկ, 1865:

<sup>29</sup> Տե՛ս նաև Ա. Հովհաննէսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, առաջին գիրք, Երևան, 1957, էջ 279 և այլուր:

նագիրքը կազմելուց շուրջ մեկ տասնամյակ առաջ դեռ, Մխիթարը նշավակում է հայ իշխաններին, որոնք ավատական անջատամտության հեցած՝ «լուհամարէին ի ստրկութեան կալամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան»<sup>30</sup>։ Սանձել ավատական կենտրոնախույս մղումները, համախմբել ներքին ուժերը, կենտրոնացնել երկրի բոլոր հնարավորությունները մի գապանակի մեջ, որը միայն կկարողանար հարմար պահին հզոր պոսթկոմունով դեն յարտել կաշկանդող արգելքները և ստեղծել «յանուրջս երեսութացող» թագավորութունը։ Ահա Մխիթարի նշած ուղին, նրա քաղաքական կողմնորոշումը։ Պատմությունն ու կյանքը հաստատեցին Մխիթարի ճշմարտացիությունը։ Քաղաքական ընդհանուր իր կողմնորոշմանն էլ համապատասխան, Մխիթար Գոշը ոչ թե օտար օրենքները թարգմանեց հայերենի, այլ ձեռնամուխ եղավ ստեղծելու ազգային օրենսգիրք։ Սեփական դատաստանագրքի ստեղծումը Մխիթարի ազգային կողմնորոշման արտահայտությունն էր ու դրսևորումը նաև, որով նա ձգտում էր ժողովրդայնացնել, ուրեմն և, ընդհանուր ուժ տալ այդ կողմնորոշմանը։ Իր Գատաստանագրքով նա ամրապնդում էր հայ իշխող խավերի դասակարգային դիրքերը երկրի ներսում, բայց և մեծապես սատարում ընդհանուր համազգային շահերին՝ հայ ժողովրդի ինքնապահպանման ու քաղաքական ինքնորոշման գործին։ Հենց այդ պատճառով էլ Գատաստանագիրքը ոչ միայն հոգևոր մեծագույն արժեք դարձավ իբրև մատենագրական գործ, այլև կյանքի կայուն ուղեգիր ստացավ որպես ամենօրյա կիրառության ուղեցույց և որպես իրավա-քաղաքական ծրագիր։

Մխիթար Գոշն ունի պետա-իրավական իր տեսությունը, որը նրա ընդհանուր քաղաքական տեսության մասն է կազմում։ Գատաստանագիրքը նա կազմել է իր այդ տեսության հիման վրա։

Ներկա կյանքի դիտումների ու անցյալ փորձի ընդհանրացմամբ նա հանգում է այն եզրակացության, որ պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմնական սյուները, որոնք պահում են հասարակության ամբողջ շենքը որպես քաղաքական Կրողություն։ Այդ երկու սյուների ուժը գումարն է այն գործոնների, որոնք ի հայտ են գալիս հարաբերությունների մեջ-պետության՝ առ եկեղեցին, առ իշխանս, առ ռամիկս. եկեղեցուն՝ առ պետությունը, առ իշխանս, առ ռամիկս. այդպես նաև ավատատերերի ու ռամիկների գծով առանձին-առանձին։ Գումարը մեծացնելու համար Մխիթարը ձգում է ուժեղացնել գումարելիները կամ, գեթ, դրանց մի մասը։ Գատաստանագրքի ամբողջ նյութը հիմնականում ընտրված է այդ հենքին համապատասխան ու հյուսված է այդ հենքի վրա։ Ու նա սկսում է պետությունից, որը պատկերացվում է թագավորության ձևով։ Իր Գատաստանագրքով Մխիթար Գոշը ընդառաջում է ցանկալի գալիքին ու սահմանում ապագա թագավորության պետա-իրավական հիմունքները։ Թագավորության նպատակահարմար կառուցվածքը կենտրոնացված իշխանությունն է՝ միապետի գլխավորությամբ։ Մխիթարը քաջատեղյակ է մեր պատմությանը. անցյալը սոսկ պատմություն չէ, այլև դաս ապագայի համար, ու նա պաշտպանում է Արշակունիների չիրականացած ձգտումը, չկրկնելու համար Բագրատունիների դառը փորձը։ Այստեղ առաջնակարգ նշանակություն է ստանում գահի ժառանգման հարցը։ Մխիթարը գիտի, որ կենտրոնացված կայուն իշխանությունը ենթադրում է գահի ժառանգման կա-

<sup>30</sup> «Հայոց նոր վկաները», էջ 24։

յուն կարգ: Նա սահմանում է գահի փոխանցում ուղիղ գծով՝ հորից որդուն: Մխիթարը, սակայն, քարացած չի համարում այս սկզբունքը: Քանի որ պետական մեքենայի մեջ թագավորը կենտրոնական լծակն է, ուստի նա ճկունություն է տալիս այդ սկզբունքին և պահանջում, որ գահը անցնի ոչ թե անպայման անդրանիկ որդուն, այլ որդիներից «անկաւորին», այսինքն նրան, որն առավելագույնս համապատասխանում է այդ բարձր դերին: Մի այլ առիթով Մխիթարը սահմանում է, որ գահը կարող է անցնել թագավորի եղբորը, շրջանցելով նրա որդիներին: Քվում է, որ սա նրբացումն է գլխավոր սկզբունքին տրված այն ճկունության, որի հիմնական նպատակն է ապահովել գահի անցումը «անկաւորին», եթե հարկադիր տուրքը չէ պետական կյանքի նախորդ շրջանի փորձին: Սակայն, թվում է, թե պետք էր նկատի ունենալ, որ Զաքարիայի կողքին կար նաև Իվանեն:

Թագավորը կարգվում է աստծուց և միայն աստված է կարող նրան փոխել: Մխիթարը հայտարարում է թագավորի անձը սրբազան ու անձեռնմխելի: Կենտրոնացված ու խիստ ուժեղ թագավորական իշխանության մեջ է տեսնում Մխիթարը ռադմա-քաղաքական ուժեղ ու կենսունակ պետության զրավականը: Կենտրոնացված ուժեղ թագավորական իշխանության Մխիթարի տեսությունը իր մեջ պարունակում է արդեն ներքին զարգացման այն հակումը, որը պետք է տաներ դեպի բացարձակ միապետության գաղափարը: Գիտենք, որ բացարձակ միապետությունների առաջացումը Եվրոպայում առաջադեմ երևույթ էր, և դրան ձգտում էին բոլոր առաջադեմ ուժերը: Որքան ավելի առաջադիմական կլինեի նույն իրողության հաստատումը Հայաստանում Մխիթարի ժամանակ: Գիտենք նաև, որ այդ բանը Հայաստանում տեղի չունեցավ և չէր էլ կարող տեղի ունենալ այն ժամանակ, որովհետև երկիրը ներքուստ հասունացած չէր դրա համար և որովհետև կար արտաքին խանգարիչ ուժը: Բայց դրանից Մխիթարի տեսության արժեքը չի նսեմանում, որովհետև այն վկայում է քաղաքական հասուն մտքի ու ճիշտ կողմնորոշման մասին: Զափագանցություն չի լինի ասել, որ Մխիթարը գիտակցում է ներքին տնտեսական ընդհանրության անհրաժեշտությունը, որպես ժողովրդի համախմբման էական գործոն ու նախապայման: Սակայն մարմնապես զգալի էր ու առարկայորեն տեսանելի արտաքին ուժը: Եվ հենց սրան հակակշիռ ուժ որոնելու ուղիներում է, որ Մխիթարը հասնում է տեսությանը կենտրոնացված գորեղ թագավորական իշխանության, որը միայն կարող է, ըստ նրա, ապահովել երկրի արտաքին անվտանգությունը: Թերևս կարիք կա նշելու, որ Մխիթարի իրավա-քաղաքական այդ տեսությունը և դրան ենթարկված նրա զրական ու գործնական քայլերը արտահայտում էին հայ ժողովրդի ընդհանուր կենսական շահերը, ճիշտ էին կողմնորոշում նրան գոյամարտի ասպարեզում և հենց այդ պատճառով խորապես առաջադիմական էին:

Մխիթար Գոշը նպատակահարմար առաջարկներ է անում նաև այն բնագավառում, որն արտահայտում է թագավորական իշխանության վերաբերումը երկրի դասային-դասակարգային ու սոցիալ-տնտեսական մյուս ուժերին:

Սակայն այս բոլորը վերաբերում է ապագային, ի դեպ այն իրողության, երբ կստեղծվի թագավորական իշխանությունը: Մինչդեռ, Մխիթարի բուն նրպատակը պետականության վերականգնումն է և ձգտումը՝ ստատարել այն ուժերին, որոնք կարող են ապահովել այդ իշխանության ստեղծումը: Այստեղ առաջնակարգ նշանակություն է ստանում եկեղեցին: Վերջինս, իհարկե, նախ

կրողն էր ծեսի ու կրոնի, որով, անշուշտ, մեծապես նպաստում էր ազգային ինքնապահպանման գործին: Սակայն ազգային ինքնապահպանումը որքան էլ անհրաժեշտ պայման լինի ազգային-քաղաքական կեցութեան համար, այնուամենայնիվ, ինքյամբ ղեռ չի ստեղծում այդ կեցութիւնը և մնում է, թեկուզ և շատ կարևոր, բայց միայն պայման: Սակայն եկեղեցին ծեսի ու հավատամքի կրողը լինելուց բացի նաև կազմակերպութիւն էր: Հայաստանի քաղաքականապես կոտորակված պայմաններում եկեղեցին միակ հաստատութիւնն էր, որ ներքին կապով իրար էր միացնում Հայաստանի բոլոր մասերը, ում և ինչ իշխանութեան տակ էլ նրանք լինեին, և միավորում էր ամբողջ հայ ժողովրդին մի կենտրոնի շուրջ: Համահայկական միակ կենտրոնացված կազմակերպութիւնը լինելով, եկեղեցին մեծ հնարավորութիւն ունեւր հայ ժողովրդին քաղաքական որոշ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելու գործում: Բայց զրա համար պետք էր, որ եկեղեցին ազգային լիներ: Հոգևոր-եկեղեցական իր ամբողջ գործունեութեամբ Մխիթար Գոշր հաստատում էր ազգային եկեղեցին և իր Դատաստանագրքով պաշտպանում էր եկեղեցու ազգայնութիւնը: Հավատացյալի իր նվիրումով քրիստոնեական աստծուն, որ մեկն է բոլորի համար, և հոգևոր-եկեղեցական բարձրադիրք գործչի իր կոչումով, որ ապրում է ընդհանրապես եկեղեցու ներկայով և մտահոգված է նրա ապագայով, Մխիթարը համոզված կողմնակիցն է ընդհանուր եկեղեցու՝ Անօրենները, որ քրիստոնեայի լեզվով նշանակում է այլակրոն, օրավուր գորանում են ու մեծագույն սպառնալիք դառնում ընդհանրապես քրիստոնեական կրոնի ու եկեղեցու բուն իսկ գոյութեան համար: Մխիթարը գիտակցում է, որ մահմեդականութեան հարաճուն ճնշմանը դիմագրավելու իսկական միջոցը քրիստոնեութեան միավորումն է միասնական ճակատի մեջ, որի լավագույն ու ճիշտ ձևը քրիստոնեական բոլոր ազգային եկեղեցիների միավորումն է մեկ ընդհանուր եկեղեցու մեջ, ինչպես էր քրիստոնեութեան առաջին դարերում: Ընդհանուր եկեղեցին, սակայն, Մխիթարը պատկերացնում է հենց առաջին դարերի եկեղեցու նման, երբ ընդհանրութեան գաղափարը հատկանշում էր նաև եկեղեցիների հավասարութիւնը, ուստի չէր հետապնդում որևէ եկեղեցու ազգային-պետական շահ: Հակակա կազմակերպութեան վիճակից բարձրանալով տիրապետող կազմակերպութեան աստիճանին, եկեղեցին, բընականաբար, զարձակ տիրապետող զասակարգի կազմակերպութիւն, ուրեմն և պետական գաղափարախոսութեան կրող ու հաստատութիւն: Ուրպես այդպիսին, եկեղեցին արդեն պետական մեքենայի անիվներից մեկն էր, ըստ որում գլխավոր անիվներից մեկը, և, բնականաբար, նրա պտույտը չէր կարող ունենալ ուրիշ ուղղութիւն, քան ընթացքն էր պետական ամբողջ մեքենայի: Եվ եթե պետութիւնը վարում էր աշխարհակալական, նվաճողական քաղաքականութիւն, նրա հետ քայլում էր նաև եկեղեցին, որը կամ սրբագործում էր այդ քաղաքականութիւնը կրոնի դիրքերից, եթե սլաքն ուղղված էր այլակրոնների

<sup>31</sup> «Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրան լինէր», — գրում է Մխիթարը տե՛ս «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գօշն կոչիւր», «Աբարատ», 1900, էջ 497. կամ՝ «Յազգս այնորիկ Քրիստոս՝ սկիզբն բարեաց հաւատացելոց, զիստեարհոթիւնն ետ երանութեամբ, և անտարանան արար մի հաւտ և մի հովիւ, զցրուեալ գորդիսն Աստուծոյ ժողովէ ի մի եկեղեցի», անդ, էջ 498. կամ՝ «Եւ որպէս ցուցաք յառաջագոյն՝ այն էր Աստուծոյ հաճոյ և Քրիստոսի կամբ, զի ամենայն ազգ քրիստոնէից միակրան էին լեալ», անդ, 1901, էջ 126—127 և այլուր:

դեմ, և կամ քողարկում էր այն նույն այդ կրոնի շղարշով, եթե բանակաները շարժվում էին կլանելու քրիստոնյա մի երկիր: Այս պայմաններում նվաճվող երկրները նվաճողին դիմագրավելով զինական ուժով, հակադրվում էին նաև կրոնապես, եկեղեցիներով, առավել ևս երբ շկար զինական հակադրությունը, որովհետև նման դեպքում կրոնն ու եկեղեցին էին դառնում ժողովրդի ինքնապահպանման գլխավոր պատվարը: Մի խոսքով, քրիստոնեությունը պետական կրոն դառնալուց հետո եկեղեցին ևս դարձավ պետական և հետամտում էր ազգային-պետական շահեր: Ընդհանուր եկեղեցին տրոհվել էր գրեթե նույնքան միավորների, որքան պետություն կամ ժողովուրդ էր ներկայացնում քրիստոնեական աշխարհը: Որչափ ընդհանուր եկեղեցին տրոհող պատճառները, ազգային-քաղաքական լինելով, տեականորեն գործող ու կայուն պատճառներ էին, նույնչափ դրանք կայուն արգելքներ էին ընդհանուր եկեղեցու վերականգնման համար: Նախկին ընդհանուր եկեղեցու վերականգնումն, ուստի, ենթադրում էր վերականգնող ուժ, որը կարող էր միայն ազգային լինել: Հենց այդ պատճառով ընդհանրությունը կարող էր լինել միայն այնպիսին, ինչպիսի բնույթ կտար դրան վերականգնող ուժը: Վերականգնվող ընդհանուրը պետք է ենթարկվեր վերականգնող մասնավորին, վերջինիս պետական շահերին: Միխիթարի ժամանակ ընդհանուր եկեղեցու վերականգնման դրոշակակիրները երկուսն էին՝ լատին արևմուտքն ու ուղղափառ Բյուզանդիոնը, մեկը ներկայացված պապով, մյուսը՝ Կ. Պոլսի պատրիարքով: Սրանց զրոշի վրա նույնպես գրված էր ի Քրիստոս եղբայրության ու հավասարության կոչը ու թեև եկեղեցիների միությունը քարոզվում էր հանուն Քրիստոսի, բայց կատարվում էր հօգուտ կամ Բյուզանդիայի, կամ լատինական աշխարհի<sup>32</sup>: Թե Արևմուտքը, որ ներկայացնում էր պապը, և թե Բյուզանդիան, որ ներկայանում էր պատրիարքով, միանման կլանիլ ուժ էին ու հավասարապես վտանգավոր փոքր ժողովուրդների համար. մեկը տանում էր դեպի լատինացում, մյուսը՝ հունացում, երկու դեպքում էլ վտանգվում էր կամ վերացվում նշված ժողովուրդների մշակութային ինքնությունը, այն նպատակով, որպեսզի վերացվեր նաև նրանց քաղաքական ինքնությունը կամ հող պատրաստվեր դրա համար: Բյուզանդիան իր օրինակով քիչ դաս չէր տվել հայ ժողովրդին գեթ նկատելու, որ ղավանաբանական-աստվածաբանական վեճերը հաճախ սոսկ քաղաքական վեճերի այլընթացումներն են եղել ու ավելի սրվել են հենց այն ժամանակ, երբ առավել լարվել են քաղաքական հարաբերությունները: Ու այն ժամանակ դավանաբանական-աստվածաբանական վեճերը Քրիստոսի մեկ թե երկու բնության շուրջ ստացել են իրենց իսկական տեսքը՝ հույների հետ ու հույների մեջ, թե հույներից առանձին, և վանքի խցերից փոխադրվելով ռազմադաշտ, լուծվել են ոչ թե պատրիարքին ենթակա վանականների գրշով, այլ կայսեր հնազանդ զորականների նիզակով: Մի խոսքով, եկեղեցիների միության քաղաքականությունը նրբահյուս մի շղարշ էր, որով քողարկվում էր հայ ժողովրդին քաղաքականապես կլանելու գործնական նպատակագրումը: Հենց այս պատճառով Միխիթար Գոշը մերժում է ընդհանուր եկեղեցու գաղափարը<sup>33</sup> և կանգնում ազգային եկեղեցիների սկզբունքի պաշտպանու-

<sup>32</sup> «Քի լոյն զինքն կարծէ ճշմարիտ և հոռոմն զինքն», «և ամենքեան խորհին զայս լինքեան դարձուցանել, այլ ոչ զընտրութիւն ճշմարտութեան կամին և զմիաբանութիւն հաճութեամբ», տե՛ս «Թուղթ Միխիթար վարդապետին, որ Գօշն կոչուր», «Արարատ», 1900, էջ 503:

<sup>33</sup> «Եւ վասն այն անհնարին տեսանեմք զգալն ի միաբանութիւն», անդ, 1901, էջ 122. կամ՝ «ոչ է միաբանելոյ հնար», անդ, 1900, էջ 498 և այլուր:

թյան գիրքերում: Հայ ժողովրդի նկատմամբ ընդհանուր եկեղեցու գաղափարն ու քաղաքականությունը նույնքան թշնամական էր, որքան և իսլամը. առաջինը, թերևս, ավելի վտանգավոր էր, որովհետև թշնամությունը բողոքոված էր բարեկամության հրապուրիչ շղարշով: Այդպիսի «բարեկամությունից» ազատվելը պահանջում էր նույնքան ուժ ու շանք, որքան և բացահայտ թշնամիներից պաշտպանվելը: Եվ Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով ձրգտում է ամրապնդել հայ եկեղեցին որպես հուսալի պատվար թե՛ ընդդեմ եղբայրների ի Քրիստոս և թե՛ ընդդեմ թշնամիների առ Քրիստոս: Ի տարբերություն Քրիստոսի երկու բնության հավատամքի մարտնչող ներկայացուցիչների, Մխիթարը գեմ է դավանաբանական տարբերությունները ժողովուրդների հարաբերությունների լարման առիթ գարծնելուն ու կոչով գիմում է մյուս ազգերի հոգևորականներին, որպեսզի սրանք զսպեն իրենց և համապատասխան ձևով էլ ներգործեն իրենց ժողովուրդների վրա. «Թէև ոչ է միաբանելոյ հնար, այլ հնար է զհայհոյութիւնն բառնալ»<sup>34</sup>: Եկեղեցիների միության անհնարինությունը, առավել ևս, չի կարող ու չպետք է վերածվի ժողովուրդների թշնամության. «Այլ թէ ասացեալ հինգ ազգդ (հոռեացիները, հույները, հայերը, ասորիները, վրացիները—Ն. Թ.) ոչ կարեն միաբանել, բայց կարող են թշնամիք միմեանց շիւնել»<sup>35</sup>: Մխիթար Գոշը ժողովուրդների բարեկամության ջերմ կողմնակիցն է ու համոզված քարոզիչը:

Եկեղեցիների հակամարտության պայմաններում, որ դավանաբանական տարածայնությունների արդյունք լինելով իր հետնախորքում ուներ քաղաքական ոչ պակաս ծանրակշիռ զրգապատճառներ, դարի գլխավոր հարցադրումներից մեկը, որը երկար ժամանակ հուզել էր ու Մխիթարի օրերում էլ շարունակում էր հուզել քրիստոնեական աշխարհը, որոնումն էր այն ուղիների, որոնք ելք էին նշելու ճգնաժամից: Մխիթարը ևս զննում է այդ հարցը. «Արդ, ցուցից թէ որպէս հնար է միաբանել, և կամ որոց ազգաց և զինչ է, որոց ոչ լինի միաբանութիւն և քէ ոչ լինի՝ զինչ առնելի է»<sup>36</sup>: Հարցը կար, այն գրել էր կյանքը, ուստի կարևորը գրան տրվող պատասխանն էր: Ուրույն դավանանք ներկայացնող բոլոր եկեղեցիները կամ նրանց վարդապետները տվել են դրա պատասխանը. հույնը ճշմարիտ է համարում իր դավանանքը, լատինադավանր՝ իրենը, «նմանապէս և ազգ ամենայն», սակայն մեկ է աստված և մեկ է ճշմարտությունը, ու Մխիթարը հետևելով Ավետարանին ասում է. «Արդ, եղիցի Աստուած ճշմարիտ և ամենայն մարդ սուտ: Թէ այնպիսի ունէաք կամք, որ զբարին յամենայն ազգաց ժողովէաք և զխոտանն ի բաց ընկուաք, Աստուած գործակից լինէր և ուղղէր կարգ եկեղեցույ. զի չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի և խոտան»<sup>37</sup>: Բոլոր ազգերն էլ ունեն բարի, լավ և ոչ-լավ «կարգեր»: Ժողովուրդները պետք է ձգտեն վերցնել իրարից լավը և մերժել սեփական վատը, բայց այդպես չեն վարվում ժողովուրդներին ուղղություն տվող ուժերը: Այս և մի շարք այլ պատճառներով կամավոր միաբանությունը հնարավոր չէ: Առավել ևս սխալ է բռնի միաբանության ճանապարհը, որով ընթանում են հունա-և լատինադավան եկեղեցիները, որովհետև զբանով ոչ ճշմարտությունն է պարզվում և ոչ խաղաղություն ու բարեկամություն հաստատվում ժողո-

<sup>34</sup> Թուղթ Մխիթար վարդապետին..., «Արարատ», 1900, էջ 498:

<sup>35</sup> Անդ, 1901, էջ 122:

<sup>36</sup> Անդ, 1900, էջ 562:

<sup>37</sup> Անդ, էջ 503—504:

վորդների միջև: Ուղին, որ նշում է Մխիթարը, միակ ճշմարիտն է. «Արդ, այլ ինչ հեաւ բառեայոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ միմեանց հաւանելն և կալ յիւրաքանչիւր կարգի ամենայն ազգ»<sup>38</sup>: Ազգերը պետք է հարգեն իրար, հարգեն միմյանց «կարգերը» և թողնեն, որ չուրաքանչիւր ազգ ապրի այն «կարգով», որ ընտրել է ինքը: Մեծերը, հավանաբար, մեծ են նրանով, որ երբ էլ ապրած լինեն, նրանց խոսքն ու զործը միշտ այժմեական է հնչում: Որքան հարազատորեն են արձագանքում դարերի խորքից եկող այս խոսքերը մեր օրերին և դրանով իսկ պատիվ բերում հայ վարդապետին, որը դեռ այն ժամանակ ճշակել է ժողովուրդների խաղաղ գոյակցութեան սկզբունքը և ձգտել, որ այն ոչ միայն կոչ լինի, այլև գործողութեան ծրագիր, լինի ժողովուրդների հարաբերութիւնները որոշող միակ կանոնը:

Եկեղեցին հայ ժողովրդի պաշտոնական գաղափարախոսութեան կրողն ու համահայկական կազմակերպութիւնը լինելուց բացի նաև ավատական հաստատութիւն էր: Ավատատերերի հավաքական շահը հաստատող ու պաշտպանող Մխիթար Գոշը, բնականաբար, չէր կարող անտեսել եկեղեցու ավատական շահերը, և դա նաև այնու, որ ինքը հենց՝ այդ եկեղեցու մեծ ներկայացուցիչն էր: Եկեղեցին իր տնտեսական կարողութեամբ ավելի հզոր էր ու հարուստ, քան առանձին որևէ ավատատեր, իշխան կամ նախարար, նույնիսկ ավելի, քան սրանցից մի քանիսը միասին վերցրած: Բայց եկեղեցու հզորութեան հիմք հանդիսացող տնտեսական մեծ կարողութիւնը՝ հողային ընդարձակ տարածութիւնները, ոսկեղեն, արծաթեղեն մեծաքանակ զանձր և այլն, միաժամանակ նաև խայծ էր, որ ձգում էր դեպի ինքը ընշաքաղց տարրերին, պատճառ՝ լուրջ ոտնձգութիւնների, որ կատարում էին կամ փորձում էին կատարել իշխաններն ու նախարարները, և հիմք, որ իրավացի դժգոհութիւն էր առաջացնում աշխատավոր զանգվածների մեջ և տեղիք տալիս, նույնիսկ, ընդվզումների, որովհետև այդ ամենը կուտակված էր նաև ծանր շահագործման ու հարստահարումների միջոցով: Եվ Մխիթար Գոշն անում է իրենից կախված ամեն բան՝ պաշտպանելու եկեղեցին նաև այդ կողմից և ամբարայնելու նրա դիրքերը նաև այդ բնագավառում: Դատաստանագրքում քիչ չեն հողավածները, որ վերաբերում են եկեղեցու սեփականատիրական իրավունքներին ընդհանրապես, եկեղեցու ունեցվածքի պաշտպանութեանը՝ մասնավորապես: Դատաստանագրքի հողավածները մեկ հորդոր են, խրատ ու քարոզ, այն բարոյախոսութեամբ, որ սրբազան ու անձեռնմխելի է եկեղեցու ունեցվածքը, մեկ սպառնալիք ծանր ու խիստ պատիժներով նրանց հասցնելին, ովքեր կհանդգնեն ոտնձգել եկեղեցու ունեցվածքի դեմ, և այդ բոլորը մի մտահոգութեամբ՝ պաշտպանել եղածը, ապահովել նորի ձեռքբերումը: Նույնիսկ այն դեպքում, երբ հիվանդը, ենթադրելով, որ մոտենում է առաստված երթալու ժամը, կտակ է կազմել և որոշ փոխանցում կատարել եկեղեցու օգտին, հարկավ, անցազրի հուսալիութեանն ապահովելու համար, առողջանալիս նրան իրավունք է տրվել փոփոխութիւններ մտցնել կտակի մեջ կամ, նույնիսկ, կազմել նոր կտակ, բայց նախկին կտակով եկեղեցուն խոստացածը նա ոչ միայն չէր կարող չեղալ համարել, այլև իրավունք չունէր նվազեցնել: Դատաստանագիրքը թույլ է տալիս միայն ավելացնել:

Շայ ժողովրդի ինքնուրույնութիւնը՝ թագավորութեան ձևով պատկերաց-

<sup>38</sup> Անդ, 1901, էջ 125:

վող պետականութիւնը վերականգնելու և, մանաւանդ, վերականգնվողը ամուր հիմքերի վրա պահելու գործում եկեղեցին, որքան էլ կարևոր, այդուհանդերձ, միակ դործոնը չէր: Հավասարապես կարևոր գործոններ էին նաև ավատական ուժերը մի կողմից և ռամիկ-շինականութիւնը՝ մյուս կողմից: Սրանց հարաբերութիւնները միմյանց և հասարակութեան մյուս ուժերի նկատմամբ որքան էլ էական նշանակութիւն ունենային ապագայում՝ կայուն պետական կյանքի ու վերջինիս քաղաքական գորութեան համար, առավել ևս կարևոր էին ու որոշող ներկայում՝ հենց այդ ապագան նախապատրաստելու համար: Մխիթար Գոշի մտահոգութեան անմիջական առարկան, այնուամենայնիվ, ներկան է: Ապագան երևակվում է Դատաստանագրքում միայն որպես նրանում շոշափված հարցերի հանրագումար, ամեն առանձին դեպքում այդ հարցերը բխում են ներկայից և ուղղված են ներկային: Վերջինս իր բազմաթիվ ու բազմազան բաղադրիչներով հանդերձ ամբողջութիւնն էր երկու հիմնական միակցութեան՝ արտաքին-քաղաքական և ներքին սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների: Առաջինի մասին ասացինք, այժմ մի քանի խոսք երկրորդի մասին:

Ինչպես Մխիթարից առաջ ու երկար ժամանակ էլ դեռ նրանից հետո, այնպես էլ Մխիթարի դարում, ամենուր (նաև Հայաստանում) ներքին կյանքի հիմնական զսպանակը դասակարգային, սոցիալ-տնտեսական հարաբերութիւններն էին: Ինչպես նկատել է Ֆր. էնզելսը, ավատականութեան դեմ հեղափոխական հակադրութիւնը անցնում է ամբողջ միջնադարով: Ժամանակի պայմաններին համապատասխան այն հանդես է գալիս կամ խորհրդապաշտութեան ձևով, կամ բացահայտ աղանդի տեսքով և կամ զինված ապստամբութեամբ<sup>39</sup>: Հայաստանում եղել է թե մեկը, թե մյուսը և թե երրորդը: Մխիթարից առաջ հրեթացս մի քանի դարի ավատականութիւնը Հայաստան աշխարհում ցնցվել էր նախ՝ պավլիկյանների, ապա՝ թոնդրակեցիների հզոր շարժումից:

Հայաստան աշխարհի ավատականութիւնը ցնցող հայ ուժերը մասնակից եղան նաև աշխարհի ավատականութիւնը ցնցող ուժերի գրոհին, անցնելով Բյուզանդիա, ապա Բուլղարիա ու, նույնիսկ, Ֆրանսիա և բողոքականներին ու ալբիգոյցիներին տվեցին թե իրենց դրոշը և թե կոչը: Սակայն, մինչ աշխարհի ընչազուրկների միացումը՝ դեռ դարեր էին անցնելու, այնինչ աշխարհի ընչատերերը միացած էին արդեն դարեր առաջ և նրանք միացյալ ջանքերով խեղդեցին այդ շարժումները թե Հայաստանում և թե Բուլղարիայում ու Ֆրանսիայում: Մխիթարի ժամանակ թոնդրակյան շարժման թույլ արձագանքներ էին միայն մնացել: Ընթացվել էր շարժումը, բայց մնացել էին այն ծնող պատճառները, որոնց հետևանքով դասակարգային հարաբերութիւնները Հայաստանում բավական լարված էին: Մխիթարը չի խուսափում սուր անկյուններից և անդրադառնում է դասակարգային հարաբերութիւնները շիկացնող թե պատճառներին և թե հետևանքներին:

«Ազատ յԱրարչէն եղև մարդայինս բնութիւն,— գրում է Մխիթարը Դատաստանագրքի 21-րդ (=Բ, 11, 3) հոդվածում,— այլ ծառայել տերանց յազգս պիտայից եղև հողոյ և ջրոյ»: Մինչ Մխիթար Գոշը և փրիխտփաները, և աստվածա աններ, և իրավաբանները նույնպես արձանագրել են, որ աստրծու կողմից, ասել է թե բնութիւնից, մարդ ազատ է ծնվում, անա-

<sup>39</sup> Փ. Էնգելս, Крестьянская война в Германии, М., 1952, էջ 84.

զատութիւնը առաջանում է հետո. փնտրել են նաև այս վերջինի պատճառը: Ոմանք դա համարել են պատերազմը, որը գերի է բերում և գերեվարվածներին դարձնում անազատ, մյուսները դրա մեջ տեսել են աստծու պատիժը մարդու նախածին մեղքի համար և այլն: Մեծն Արիստոտելը նույնիսկ բնական կարգ էր համարում, որ մարդկանց մի մասը ծնվում է ազատ, մյուսը՝ ստրուկ: Բոլոր դեպքերում անազատութեան հիմքը գտել են արտաքին պատճառների մեջ և չեն փորձել այն որոնել հասարակութեան ներքին կյանքում, այն իրական հարաբերութիւնների մեջ, որ պայմանավորում է այդ կյանքը իր բոլոր կողմերով: Մարդկային մտքի սլատմութեան մեջ մինչև ԺԳ դարը Մխիթար Գոշր մեկն է առաջիններից ու եզակիներից, եթե ոչ միակը, որ անազատութեան հիմքը փնտրել է հասարակութեան ներքին կյանքում ու գտել սոցիալ-տնտեսական պատճառների մեջ: Անազատութեան, ուրիշներին ծառայելու պատճառը հողն ու ջուրն է, երբ հարաբերութիւնները մարդկանց միջև այնպես են դասավորվում, որ դրանից ոմանք զրկվում են, իսկ մյուսները իրենց ձեռքը կենտրոնացնում այն: Շինականի վիճակը ավելի ծանրացել էր, որովհետև ավելի ուժեղացել էր շահագործումը: Հայաստանում, Մխիթարի դարում, որոշ ուժգնութեամբ տեղի էր ունենում սոցիալ-տնտեսական վիճակի բեկոնացում՝ մի կողմից հողային և այլ կարողութեան կենտրոնացում հասարակութեան փոքրամասնութեան ձեռքում, մյուս կողմից՝ շինականութեան որոշ մասի հողազրկում, որ արդյունք էր շահագործման ուժեղացման, առևտրա-վաշխատական կապիտալի աշխույժ գործունեութեան ու ներթափանցման հողային հարաբերութիւնների բնագավառը և այլն: Պատահական չէ, որ Գատաստանագրքում մի շարք հողավածներ կան վարձկանների վերաբերյալ, և դա լավագույն ապացույցն է, որ վարձկանութունը գանգվածային երևույթ էր դարձել: «Յայտ է դի յաղագս աղքատութեան եզու վարձկան եւ ատուրն պիտոյից»,—գրում է Մխիթարը Գատաստանագրքի 126(=Բ, II, 83)-րդ հոդվածում: Հողազրկված շինականը աղքատանում էր և օրվա հացը հողալու համար հարկադրված դառնում վարձկան: Բարվոք չէր նաև վիճակը շինականութեան այն մասի, որ դեռ ուներ իր հողակտորը: Մանրանում էին եղած հարկերը, ավելանում նորերը, քիչ չէին հին ու նոր տուրքերը հօգուտ եկեղեցու, իշխանի, հողատերի, հարկահանի, ոստիկանի և այլն և այլն: Պատկերը կամբողջանա, եթե այս ամենին ավելացնենք նաև շարաշահումները, կամայականութիւնները շինականութեան նկատմամբ, նույնիսկ բացահայտ հափշտակումները, որ նույնպես լինում էին: Բնական է, որ այս ամենը ժայրահեղ դժգոհութիւն էր առաջացնելու շինականութեան մեջ տիրող կարգերի նկատմամբ և սրելու դասակարգային հարաբերութիւնները:

Շինականութեան դժգոհութեան պատճառները բացահայտելով, Մխիթար Գոշր ցույց է տալիս նաև, թե ինչ հետևանքների կարող են հանգեցնել դրանք: Մրա մասին նա շատ պատկերավոր ձևով խոսում է իր առականից մեկում. «Զբոյն մրջեան արջ փորէր, և լեզուաւ ժողովէր և ուտէր: Եւ հնարի մրջին սատակել զնա. երթեալ առ պիծակ և զոռեխ և մժեխ և շնաճանճ և բրէտ և առ նմանք նոցին, և աղաչէ օգնել իբր ազգայինք: Յաւակցեն՝ հարկանեն զաշս և զլսեիս արջուն, և հարկանէ գլուխ գքարի, և նեխի և որդունք ևս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց՝ գբերան բացեալ գոչէր. և նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անշափ ի ներքս մտեալ՝ հեղձանի:

Զօրութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք գտկարս արճամարճեն, և ոչ երկնչին. սակայն իմաստովեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստովիւն է՝ ի փոքունց իբրև ի մեծամեծաց երկնչել»<sup>40</sup>: Ակնհայտ է Մխիթարի միտքը. մրջյունները, ասել է թե փոքրերը, տկարները, երբ ծայր աստիճանի հասնի նրանց համբերությունը, կարող են միավորվել և այս դեպքում նրանք այնպիսի ուժ կդառնան, որ կկարողանան վերջ տալ նաև շատ հզօրին և, նույնիսկ, նրանց բոլորին միասին վերցրած: Ակնհայտ է նաև հզօրներին հասցեագրված Մխիթարի հանձնարարականը նրանց սոցիալ-քաղաքական վարքագծի վերաբերյալ տկարների՝ շինականների նկատմամբ. ավատատերերի հավաքականության ընդհանուր շահի տեսակետից անթույլատրելի է, երբ նրանք ավերում են բույնը՝ բնչագրկում և աղքատության աստիճանի հասցնում շինականին: Ավատատերերից յուրաքանչյուրը հետամտում է իր անձնական օգուտը, անդիտանալով իրենց ընդհանուր շահը, որի հենց հիմքերին ծանր սպառնալիք է ստեղծվում այս դեպքում՝ երկու ձևով, երկուսն էլ հավասարապես անցանկալի ու վտանգավոր. նվազում կամ մարում է այն աղբյուրը, որը նրանց գոյության հիմքն է, և վտանգվում է նրանց բուն դասակարգային կեցությունը: Ավատատերերը չպետք է ծայրահեղ վիճակի հասցրնեն մրջյունների նման օրն ի բուն վաստակող աշխատավորներին, սրանց վաստակից պետք է օգտվեն ինչ-որ բանական ու բնական սահմաններում: Իրավա-քաղաքական իր այս առողջ մտածողության համաձայն էլ Մխիթար Գոշը նորմեր է սահմանում իր Դատաստանագրքում, որով ձգտում է հարթել սուր անկյունները և, դրանով իսկ, զեթ մեղմել դասակարգային հակամարտության բողբոջվող կրակը: Եվ հենց այս իմաստով ու այս շարիտով էլ նա պաշտպանում է շինականին ու զսպում ավատատիրոջը: Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով սահմանում է հարկերի ու տուրքերի կայուն ու որոշակի չափ, հանդիմանում է վաշխատուններին ու արգելում վաշխը, սաստում է պաշտոնյաներին ու պատիժ սահմանում շարաշահումների համար և այլն. այս հօգուտ շինականի: Նա սահմանում է նաև, որ շինականները հնազանդ լինեն, անտրտունջ վճարեն օրենքով սահմանված հարկերն ու տուրքերը և այլն. այս հօգուտ ավատատիրոջ: Մխիթարը դա է համարում արդար, դեկավարվելով արդարության մասին իր պատկերացումներով, որոնք խաբսխված լինելով բնական իրավունքի տեսության վրա, բնական են համարում տիրող կարգերը և բացարձակ արդարություն՝ այդ կարգերի ծայրահեղություններից գերծ վիճակը: «Աստուած ի սկզբանէ ի բնութիւն մարդոյն սահմանեաց ընտրել զիրաւացին», — գրում է Մխիթարը Դատաստանագրքի Նախագրության արդեն առաջին գլխում: Մխիթար Գոշը ևս բնութել է իր «իրավացին», արդարության իր գաղափարն ու շարժանիշը: Սակայն առանձին մտքերում ձևավորված արդարության գաղափարը վերջնականապես խմբագրում է տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունների գորեղ գրիչը և այս վերջինից է կախված՝ կանցնի՞՞ այդ գաղափարը կյանքի տիրող բնագրի մեջ, թե կտարվի տողատակ, սոսկ որպես այլընթեքում: Արդարության մխիթարյան գաղափարը տարբնթերցվածքների բաժնից չի վերցված, այլ՝ բնագրից և, ուրեմն, ուրիշ բան չէ, բան ավատական դասակարգի բմբուսումներով կաղապարված արդարություն: Ըստ Մխիթարի արդար է, որ բերքի մեկ հինգերորդը շինականը տա ավատա-

<sup>40</sup> Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 114, առակ ՃԾԳ:

տիրոջը, արդար է, որ շինականը «շաբաթ ի յեւթնէն մին գործիցէ իշխանի եւ տէրունի», արդար է, որ շինականը «ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ եւ յաւուրս տանից» (Գատաստանագիրք, հոգված 2-րդ=Բ, II, 1): Անարդար միայն այն է, երբ հարկ են գանձում «աւելի, քան զառաջնոցն սովորութիւնս», անարդար այն է միայն, երբ տերերը ստիպում են շինականին աշխատել ավելի, քան մեկ օրը յոթից, անարդար միայն այն է, երբ նոր տարվա կամ այլ տոների կապակցութեամբ տերերը պահանջում են շինականներից ավելի, քան նրանք տալիս են կամավորաբար: Մխիթարը միայն այս անարդարութեան դեմ, միայն այն վերացնելու համար է պայքարում: Մխիթարյան բացարձակ արգարութեան գաղափարն, այսպիսով, հավելյալ անարդարութեան վերացման մտքին է հանգում և դրանով սահմանափակվում: Նա պաշտպանում է շինականին և զսպում ավատատիրոջը, բայց շինականութունը զսպելու և ավատականութունը պաշտպանելու համար: Այդուհանդերձ, դա չի նսեմացնում Մխիթարի տեսութեան և դրան համապատասխան նրա ձեռնարկած գործնական քայլերի դրական մեծ նշանակութունը իր ժամանակի համար, որովհետեւ ինքնահաճ շարաշահումներին նա հակադրում է կարգն ու կանոնը, սանձարձակ կամայականութեանը՝ կայուն օրինականութունը:

Երագելի թագավորութեան վերականգնումը իրական հիմքերի վրա դնելու համար Մխիթարը իր Գատաստանագրքով ջանում է բարեփոխել շատ կողմերով խաթարված ներկան: Մխիթարը եկեղեցական դասին հրահանգում է, որ նա հոգևոր գործերով զբաղվի, ծառայի աստծուն և ոչ մամոնային, որը թեև աստված էր նույնպես, բայց ոչ երկնքի, այլ երկրի: Աշխարհիկ իշխող դասին խրատում է չմիջամտել հոգևոր գործերին, եկեղեցու ունեցվածքի դեմ չտոնձգել: Ավատատերերի դասակարգին խրատում է չափից ավելի շինել շինականներին. «դի (տերերը—ն. Թ.) յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն» (հոգված երկրորդ): Շինականներին կարգադրում է, որ հնազանդ լինեն տերերին, անտրտունջ վճարեն օրենքով սահմանվածը: Իր Գատաստանագրքով նա ձգտում է իրավական շրջանակների մէջ առնել պաշտոնեութեան՝ շարաշահումներով լի գործունեութունը և օրինական դատարանի քննութեամբ փոխարինել ավատական ինքնիրավ կամայականութեան անզուսպ քմայքը. «գի ուր դատաստանք պակաս է—խոռովութիւն բազում է, եւ ուր դատաստանք եւ իրաւունք կայցեն—խաղաղութիւն բազում է յաշխարհի եւ յեկեղեցիս»,—գրում է Մխիթարը (Նախադրութիւն, հոգված Գ): Նրա ցանկութունն ու գլխավոր նպատակներից մեկն էր՝ ապահովել իր աշխարհի ներքին խաղաղութունը, որի համար և ձգտում է մեղմել դասակարգային հակամարտութունը, վերացնել կամ կասեցնել դասակարգային բախումները, որպիսզի դրանով իսկ հնարավորութուն ստեղծվի կենտրոնացնելու իր ժողովրդի բոլոր ուժերը ընդդեմ արտաքին թշնամու, հանուն գերազույն նպատակի՝ սլետականութեան վերականգնման:

Երկրի ներսում խաղաղութեան ապահովման հարցը հիմնականում կախված էր, անշուշտ, միջդասակարգային հարաբերութունների լարվածութեան աստիճանից, սակայն երկրորդական չէր նաև ներդասակարգային՝ իշխող դասակարգի երկու հիմնական՝ հոգևոր և աշխարհիկ դասերի հարաբերութեան նշանակութունը: Գիտենք, որ եկեղեցին շատ խոշոր ավատատեր էր և նրա տնտեսական կարողութեան բազմացմանը մեծապես նպաստում էին աշխարհիկ ավատատերերը իրենց փոքր ու մեծ նվիրաբերումներով: Մյուս կող-

մից հենց իրենք՝ ավատատերերը, թվում է՝ առափելապես մանր ազնվականները, պաշարում էին եկեղեցու տնտեսական ուռճացման դեմ և ոտնձգություններ կատարում նրա սեփականության նկատմամբ: Իր տնտեսական կարողությամբ եկեղեցին վտանգավոր էր դառնում նույնիսկ պետության համար և վերջինս երբեմն քայլերի էր դիմում այդ կապակցությամբ. հիշենք Հայր Մարգարեի մտադրությունը և Պասլի վճռական միջոցառումները: Ինչևէ, այդ հողի վրա երկու դասերի հարաբերությունները երբեմն լարվում էին: Տեսանք, որ Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով պաշտպան էր կանգնում եկեղեցու սեփականության և այդ առիթով երկու դասերի հարաբերությունները կարգավորող նորմեր սահմանում: Բայց երկու դասերի բախման համար կար այլ հիմք ևս: Եկեղեցին սկզբից ևեթ Հայաստանում քաղաքացիական իշխանություն ուներ: Իր տնտեսական զորության առաջընթացին համեմատ աճում էր նաև եկեղեցու հովակնությունը քաղաքական իշխանության նկատմամբ: Երկրի քաղաքական իշխանության մեջ պետության և եկեղեցու տեսակարար կշիռը հաստատապես որոշված կայուն մեծություն չէր երբեք և միշտ վտիպիսվում էր նրանց ուժերի իրական հարաբերության համեմատ: Դա անդրադառնում էր նաև երկրի ընդհանուր վարչակարգում աշխարհիկ և հոգևոր մարմինների իրավասության շրջանակներին: Կառավարման որոշ բնագավառներ միշտ էլ եղել են եկեղեցու իրավասության ներքո, բայց որոշակի այդ բնագավառներից դուրս աշխարհիկ և հոգևոր մարմինների քաղաքացիական իրավասության սահմանները դարձյալ հեղհեղուկ են եղել: Ընդհատ է, Մխիթարի ժամանակ Զաքարյան Հայաստանում եկեղեցին քաղաքական իշխանությունը իրեն ստորադրելու հովակնություն չուներ. ուժեղ էր Զաքարյանների պետությունը, բացի դրանից կաթողիկոսությունը գտնվում էր Կիլիկիայի մոտերքում և եթե կար այդպիսի հովակնություն, այն կարող էր ուղղված լինել Ռուբինյաններին: Բայց աշխարհիկ և հոգևոր մարմինների բախումները իրավասության շրջանակների համար ներքին վարչության համակարգում կային նաև Զաքարյան Հայաստանում, որովհետև իրերի վիճակը տվյալ ժամանակաշրջանում ևս այնպիսին էր, ինչպես էր և անցյալում: Կար մի էական տարբերություն նախորդ մեկուկես դարի համեմատությամբ: Հայկական ավատականությունն ընդհանրապես և իշխող աշխարհիկ դասը՝ մասնավորապես, մի նոր դարգացում ու վերելք էր ապրում: Հայ ավատատերերը բնաշխարհում ու նրանից դուրս վենքի փայլուն հաղթանակներ էին տանում: Դա չէր կարող շանդրադառնալ նրանց դիրքերի վրա երկրի ներսում: Իշխող դասակարգի երկու դասերի ուժերի հարաբերությունը փոխվել էր և փոխվել էր հօգուտ աշխարհիկ դասի: Աշխարհական մարմինները ոչ միայն վերականգնում էին քաղաքացիական իշխանության իրենց իրավասությունը, այլև անցնում էին կամ փորձում էին անցնել եկեղեցու բուն մենաշնորհը հանդիսացող բնագավառը: Մի խոսքով, իշխող դասակարգի երկու դասերի բախումների համար այս ասպարեզում բավական հող կար և այն ստեղծողը նաև իրավասության սահմանների անորոշությունն էր: Որքան էլ այս դեպքում որոշողը լիներ ուժի օրենքը, այնուամենայնիվ ազդեցիկ գործոն էր նաև օրենքի ուժը, մասնավանդ վերականգնվող պետականության ակնկալիք ներքին բարեկարգ վարչության պայմաններում: Եվ Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով լուրջ փորձ է անում որոշելու այդ սահմանը: Նա ուրվագծում է կառավարման թե կենտրոնական և թե տեղական մարմինների իրավասության

չըջանակները: Վերջին դեպքում առանձին նշանակություն ունեւ հոգևոր և աշխարհական դատական ատյանների իրավասության հարցը: Բանն այն է, որ միջնադարում դատավորի գործունեության բնագավառը շատ ավելի լայն էր և չէր սահմանափակվում միայն քրեական և քաղաքացիական դործերով արդարադատության իրականացմամբ, այդ պատճառով այս ասպարեգում էլ ավելի լայն էր երկու ատյանների միջև իրավասության սահմանային վեճերի հնարավորությունը: Մխիթար Գոշր իր Դատաստանագրքում բավական մանրամասն որոշում է նաև հոգևոր և աշխարհիկ ատյաններից յուրաքանչյուրին ընդդատյա գործերի շրջանակը: Որքան թույլ էին տալիս պայմանները կամ որքան կարող էր ինքը, որոշելով իշխանության կամ կառավարման հոգևոր և աշխարհիկ մարմինների իրավասության սահմանները, Մխիթար Գոշը դրանով իսկ իր զգալի ավանդն էր բերում երկու դասերի շահերի շփման եզրերը հարթեցնելու, ներդասակարգային հարաբերությունները կայուն ու ներդաշնակ հունի մեջ դնելու գործին, որով ոչ միայն ապագա պետական կյանքի ներքին վարչության նպատակահարմար հատակագիծն էր տալիս, այլև լրջորեն նպաստում էր իր ժողովրդի ուժերի համախմբմանը ներկայում, հենց այդ ապագայի համար:

Արտաքին այդ համախմբմանը ավելի կայուն ու տևական բնույթ տալու համար Մխիթար Գոշը ձգտում է դրան տալ նաև ներքին միասնականություն, որին նա փորձում է հասնել միասնականություն ստեղծելով մի կողմից պարտիկուլյար իրավունքի, մյուս կողմից՝ ավատական անջրպետներով մասնատված ներքին շուկայի մեջ: Ենթադրվում է, որ համալուսային դատաստանագիրքը լավագույն միջոցներից մեկն է դրան հասնելու համար, և Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով հակադրում է տեղական իրավունքին՝ ընդհանուր օրենքը, ավատական-գավառական խոչընդոտներով արգելակվող ներքին առևտրին՝ այդ արգելքներից զերծ շուկան:

Դեռևս հոռմեացի իրավաբաններն էին գրում. «Արժանավորապես պահպանվում է և այն, որ ժողովուրդը առանց որևէ գրառման արտահայտում է իր կամքը իրականում և փաստերով»<sup>41</sup>: Առանց գրառման, իրականում և փաստերով արտահայտված ժողովրդի այդ կամքը սովորույթն է: Առանձին գործերով ու փաստերով արտահայտվող ժողովրդի կամքի դրսևորման եղակի երևույթները, առանց որևէ գրառման դրոշմվելու համար, բնական մի եղանակ էր մնում՝ նույն երևույթների պարբերական կրկնությունը: Այդպիսով, որևէ դեպքի կապակցությամբ արտահայտված վարվելակերպը տևական կրկնության հետևանքով դառնում է սովորույթ և վերածվում վարքագծի ընդհանուր նորմի: Սակայն միևնույն վարվելակերպի տևական կրկնությունը անպայման ենթադրում է այդ վարվելակերպը պայմանավորող հասարակական հարաբերությունների տևական նույնություն: Հասարակական հարաբերությունների պարզ վերարտադրությունը տևականորեն կրկնվող ինքնահավասարությամբ, ամրապնդում-քարացնում է մի անգամ արդեն յուրացված վարքագիծը և դրանով իսկ հայտնի չափով ավելորդ դարձնում նույն վարքագծի ամրապնդումը գրավոր օրենքով: Եվ եթե մինչև Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Հայաստանում չի եղել ընդհանուր օրենսգիրք, ապա պատճառը պետք է փնտրել վերոհիշյալ իրողության մեջ: Օրենքի և սովորութեան իրա-

<sup>41</sup> „Римское частное право“, М., 1948, էջ 28:

վունքի տեսակարար կշիռը միջնադարյան իրավունքում, որպես կա՛ռն, համեմատական է ուժերի այն հարաբերությանը, որ պատմականորեն դրսևորվում է յուրաքանչյուր պատմաշրջանում տնտեսական-քաղաքական կենտրոնաձիգ և կենտրոնախույս գործոնների միջև: Առաջինի դարդացման համեմատում է օրենքի տեսակարար կշիռը: Հայկական ավատական հասարակարգի տնտեսական ներփակվածությունը բնական պատենդներով գծագրվող սահմաններում պահպանում էր եղած տեղայնությունն ու ամրապնդում այն: Տնտեսական տարանջատ կացությունը, սակայն, բնականից ավելի զորեղ այն պատենդն էր, որ դիմակայում էր միասնական իրավակեցությունը: Նման պայմաններում, դեպի այս մղող գործոն ուժը կարող էր լինել կենտրոնական զորեղ իշխանությունը, իշխանության նույնքան զորեղ կենտրոնացվածությունը: Սակայն միասնական իրավակեցությունը անպայման ենթադրում է նաև ներքին միասնական առևտուր՝ կարգավորող ընդհանուր շահանիշներով ամբողջ երկրի տարածքով մեկ: Եվ Մխիթարը իր Գատաստանագրքում ձևակերպում է նորմեր, որոնք ներքին առևտրի միասնական շահանիշներ են սահմանում ամբողջ երկրի համար. նա արգելում է ավատական սահմաններում գանձվող մաքսը, սահմանում է միասնական շափ ու կշիռ, սննդամթերքների գների որոշումը հայտարարում է կենտրոնական իշխանության մենաշնորհ և այլն: Միշտ չէ, որ Մխիթարը տեղական սովորության իրավունքը փոխարինում է ընդհանուր օրենքով, օրինակ. «Եւ հովիւք եւ անդէրդք բստ սովորութեան գատոաց զանազանին ի վարձս, սակայն ի ճշմարտութիւնն, որպէս կարգեալ եղեն, պահեսցի ի նոսա» (հողված ՄԼԸ) և այլն: Բայց սրանք բացառություններ են միայն, որ զարձայլ հաստատում են նրա ընդհանուր ճշգրտումը, որի իրականացման երաշխիքը նա տեսնում է կենտրոնացված ուժեղ իշխանության մեջ: Եվ սա մեկն է հիմնական այն պատճառներից, որը Մխիթարին դարձնում է կենտրոնացված ուժեղ իշխանության համոզված կողմնակից ու ջերմ պաշտպան: Ասացինք, որ Մխիթարը ձգտում է նաև իր ժողովրդի ներքին միասնականության. դեպի այն տանող մի շարք միջոցներից մեկը նա համարում է տեղական իրավունքի փոխարեն ընդհանուր օրենքի կիրառությունը: Ծիշտ է, այս ընդհանուր օրենքը նա ձևում է տեղական, սովորութական իրավունքից, բայց դրանից էությունը չի փոխվում, որովհետև երբ տեղական իրավունքի տարբերակներից մեկը բարձրացվում է օրենքի աստիճան, այն դադարում է տեղական լինելուց և դառնում է ընդհանուր: Այս հատվածում քննարկվող երկու միջոցներից մյուսը, որի օգնությամբ նույնպես ակնկալվում է ժողովրդի ներքին միասնականության իրականացում, Մխիթարը համարում է ներքին ազատ շուկան: Թե մեկի և թե մյուսի պահովումը Մխիթարը կապում է կենտրոնացված իշխանության հետ: Իհարկե, հարց է, թե որքան կարող է քաղաքական իշխանությունը, թեկուզ և ուժեղ ու կենտրոնացված, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ստեղծվում են ամենից առաջ տնտեսական աշխարհի առարկայական օրենքների թելադրմամբ, բայց ներկա դեպքում ընդգծելին հարցի մյուս կողմն է: Հայտնի է, որ ավատականությունը կործանած երրորդ դասը ձևավորվել էր Բաստիլիան գրոհելուց դեռ շատ առաջ: Ինչպես նկատվում, այնպես էլ Հայաստանում այն սկիզբ է առնում ժԹ—ԺԳ դարերից: Գիտենք նաև, որ ավատական հասարակության այն ուժերը, որոնք պայքարում էին տեղայնության, քաղաքական անջատողականության ու տնտեսական ներփակվածության դեմ, պայքարում էին հանուն քաղաքական ու տնտեսական

միասնականութիւն, հանուն ավատական արգելքներից գերծ ներքին աղատ շուկայի և այլն, պատմականորեն առաջադեմ ուժեր էին, ինքը՝ բնապատմական այդ պրոցեսը պատմականորեն առաջադիմական էր, որովհետև հեռանկարում տանում էր դեպի մի ավելի բարձր հասարակարգ: Ինքնին հասկանալի է, որ առարկայապես, պատմականորեն յարգութեան առաջընթացի դիրքերն էր անցնում ամեն ոք, ով կանգնում էր այս ուժերի կողմը, սատարում էր դրանց: Ընդգծելի է, որ Մխիթար Գոշր իր ժամանակի Հայաստանի ներքին կյանքի զարգացման բարդ, խճողված ու միահյուսված միտումների մեջ նկատում է հենց պատմականորեն առաջադեմ կողմը և իր Դատաստանագրքով կանգնում է դրա պաշտպանութեան դիրքերում:

Կային Դատաստանագիրքը գրելու այլ պատճառներ ևս, որոնց այստեղ անդրադառնալ չենք կարող, ինչպես օրինակ, քաղաքների աճը, քաղաքային կյանքի աշխուժացումը, առևտրի, վաշխառութեան, արհեստների զարգացումը և դրանց հետ կապված իրավահարաբերութիւնների կարգավորումը, որոնց զգալի տեղ է հատկացված Դատաստանագրքում և այլն: Սակայն հարկ ենք համարում մի քանի խոսք ասել ևս մի հարցի մասին:

Դատաստանագիրքը գրվում էր մի ժամանակ, երբ Անդրկովկասի քրիստոնեական ուժերը ընդհանրապես և հայկական բանակները՝ մասնավորապես լայն ճակատով հարձակման էին անցել մահմեդական զինական ուժերի դեմ և ազատագրում էին երկիրը օտար բռնակալութիւնից: Ու թեև ջախջախվում ու երկրից դուրս էին քշվում մահմեդական զինական ուժերը, բայց երկրում մնում էր մահմեդական խաղաղ բնակչութիւն, աշխատող ու շահագործվող այնպիսի մի տարր, ինչպիսին էին հենց հայ ժողովրդի ստորին խավերը: Դատաստանագիրքը գրվում էր, մանավանդ, ի գործադրութիւն այնպիսի հանգամանքներում, երբ հայկական գալիսոնի առկ լինելու էին ոչ միայն հայ ու քրիստոնյա ուրիշ հպատակներ, այլև հպատակ մահմեդականներ: Պետք էր որոշել հայկական պետութեան մահմեդական հպատակների իրավական ստատուսը: Հարցը իր ժամանակի համար շատ կարևոր էր ու այժմեական՝ կապված, մանավանդ, մահմեդական պետութիւններում քրիստոնյա հպատակների, մասնավորապես հայերի իրավական վիճակի հետ: Այնտեղ դաժան շահագործումը, կողոպուտի հասնող ծանր հարկերը և սլաբբերաբար տեղի ունեցող թալանը ուղղակի իմաստով մի կողմից, կրոնական անհանդուրժողականութիւնը, նույնիսկ մարդկային արժանապատիւթեան սոսկալի ոտնահարումը և այլն՝ մյուս կողմից, քրիստոնյային զրեթե իջեցրել էին իրավազուրկ ստրուկի աստիճանի: Բացի դրանից, ազատագրված հայկական տարածքներում նախկին իրավազուրկ հպատակները՝ հայերը դառնում էին երկրի տեր, իսկ նախկին տերերը՝ հպատակներ: Այս պայմաններում արժեքների վերաբերմբավորումը, թվում է, պետք է կատարվեր նույն դրամով, որ ենթադրել է տալիս, թե հայոց Դատաստանագիրքը հայկական պետութեան մուսուլման հպատակներին պետք է դներ նույն վիճակի մեջ, ինչ վիճակի մեջ որ էին մահմեդական պետութեան հայ հպատակները: Սակայն բոլորովին այլ ու սկզբունքորեն տարբեր է մեր Դատաստանագրքի վերաբերմունքը: Մեր Դատաստանագիրքը հայկական պետութեան հպատակ մահմեդականին չի դնում ստորացված այն վիճակի մեջ, որի մեջ գտնվում էին մահմեդական պետութեան հպատակ քրիստոնյաները: Ընդհակառակը, բայց մեր Դատաստանագրքի հպատակ մահմեդականը դրվում է հպատակ հային հավասար վիճակի մեջ:

ձիշտ է, որոշ սահմանափակումներ կան, բայց, նախ, հարցի լայն դրվածքի դեպքում դրանք կարելի է երկրորդական համարել և, նույնիսկ, անտեսել, որովհետև դրանք վերաբերում են միայն և միայն հանցագործություն կատարած մահմեդականին և չեն վերաբերում սովորական քաղաքացուն, երկրորդ՝ այդ սահմանափակումները միայն և միայն պատասխան միջոցառումներ են: Կրկնություններից խուսափելու համար, այս սահմանափակումների մասին ավելի հանգամանալի խոսք կասվի քիչ հետո:

Ըստ հայոց Դատաստանագրքի մահմեդականի նկատմամբ կրոնական անհանդուրժողականության վերաբերմունք չկա, նրա մարդկային արժանապատվությունը չի ոտնահարվում, մահմեդականը, հենց միայն այն բանի համար, որ մահմեդական է, չլրացուցիչ հարկ ու տուրք չի վճարում, մահմեդականը հայի նկատմամբ նվաստացած դրություն մեջ չի դրվում և այլն: Ընդհակառակը, մահմեդականը վճարում է նույն հարկերը, ինչ և հայը, նրա անձը, կյանքը, գույքը պաշտպանվում են օրենքով և իրավունքով և այլն: Իհարկե, Մխիթար Գոշր որպես քրիստոնյա և բարձրաստիճան հոգևորական չի հանդուրժում մահմեդականությունը որպես կրոն, բայց այս անհանդուրժողականությունը նա չի վերածում անհանդուրժողականության մահմեդականի նկատմամբ, չի վերածում իրավական խտրականության. Մխիթարը հանդես է գալիս մարդու, մարդկայնության դիրքերից և նրա համար մարդ են հավասարապես և՛ քրիստոնյան, և՛ մահմեդականը: Մարդու և անձի պրոբլեմի ոլորտում կրոնական նեղմիտ ելակետին հակադրելով մարդասիրության լայնախոհ գիտակետը, Մխիթար Գոշր կրոնական-քաղաքական հակառակորդներին հակադրում էր ավելի մեծ ու վսեմ գաղափարաբանություն, զինական թշնամիների իրավա-քաղաքական խտրական համակարգին՝ անխտրելի համակեցության մարդամեծար ծրագիրը:

Ահա հիմնականում ու զխավոր գծերով մի քանիսը այն էական պատճառներից, որոնց թելադրմամբ Մխիթար Գոշր գրեց Դատաստանագիրքը, և այն նպատակները, որոնց իրականացմանը ձգտում էր նա սատարել իր Դատաստանագիրքով:

## ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դատաստանագիրքը զգալիորեն նպաստեց այն նպատակների իրագործմանը, որոնց համար ստեղծվել էր: Այս դիտումը իր հաստատումն է գտնում թեկուզ այն փաստի մեջ, որ Դատաստանագիրքը իր ստեղծումից հետո շուտով կյանք մտավ և գործադրվում էր դատական ատյաններում գրեթե մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Հայագիտության մեջ, սակայն, կարծիք է եղել, թե Դատաստանագիրքը գործնական կիրառություն երբեք չի ունեցել և միշտ մնացել է որպես գիտական հետազոտություն: Այս կարծիքը, թվում է, արդեն կորցնում է իր ուժը՝ տեղը գիշերվով այն ճիշտ կարծիքին, որ Դատաստանագիրքը եղել է գործող օրենսգիրք:

Դատաստանագրքի գործնական կիրառության մասին բացասական կարծիքը հիմնված է, ամենից առաջ, արտաքուստ շատ ծանրակշիռ հետևյալ փաստի վրա. Դատաստանագիրքը չի բխել լիազոր իշխանության կողմից, այն

մասնավոր մարդու նախաձեռնության արդյունք է, իսկ այսպիսի աղբյուրից բխող օրենսգիրքը, բնականաբար, չէր կարող ընդհանուր պարտավորիչ ուժ ունենալ: Այս հանգամանքը, անշուշտ, կարելի կլիներ անտեսել, եթե Պատաստանագիրքը հետագայում հաստատվեր ու վավերացվեր ազգային լիազոր իշխանությունների կողմից, մի բան որ չի եղել: Ան այս պետք է դիտել տալ հետևյալը: Պատաստանագրի հեղինակին արդեն մտահոգել է իր օրենսդրի պարտավորիչ ուժի հարցը: Մխիթար Գոշր քաջ զիտակցել է, որ մասնավոր անձից բխող օրենսգիրքը կարող է և շունենալ ընդհանուր ուժ, և միջոցներ է որոնել Պատաստանագրի այդ ուժը հաղորդելու համար. «Եւ քանզի արժանավայելուչ այն իսկ էր, զի ընդ բազումս քննելով յայտասիկ ձեռնարկէաք, զսոյն զայս բաղձանաւք հայցէի, բայց սակայն ոչ պատահեաց ըստ բազում պատճառի: Զի թէ դատաւորաց երկուց եւ երից ի միասին լինել ի դատելն իրաւունս համարեցաք, որչա՞փ եւ աստ ի դէպ էր լինել բազմաց ի միասին դատել զիրաւացին իրս եւ ապա զրով դռոջմել» (Նախադրութիւն, Ժ. Բ խմբագրութիւնում ձեակերպված է շատ ավելի հստակ. «բայց վայելուչ հղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա. զոր եւ ես ախորժելով խնդրէի, բայց ոչ պատահեաց այս, վասն բազում պատճառի...»),— գրում է Մխիթարը: Այսպիսով, Մխիթար Գոշր «բաղձանքով հայցել» ու «ախորժելով խնդրել» է, այսինքն՝ ճիգ ու ջանք է գործադրել, որ ազգային ժողով զումարվի և այդ ժողովը հաստատի ու վավերացնի իր Պատաստանագիրքը, որով այն, բնականաբար, կատանար ընդհանուր պարտավորիչ ուժ: Սակայն, ինչ-ինչ պատճառներով այդ ժողովը չի զումարվել: Այսպիսով, իրեն իսկ հեղինակի խոստովանութիւնից էլ իմանում ենք, որ նրա ժամանակ Պատաստանագիրքը օրենսդրական մեքենայի բովով չի անցել: Սակայն որքան էլ տարօրինակ թվա, անվերապահ բացասական այս փաստից չի բխում նույնքան բացասական այն հզրակացութիւնը, թե Պատաստանագիրքը չէր կարող գործնական կիրառութիւն մեջ լինել: Պատկերացումը, թե Պատաստանագիրքը չէր կարող պարտավորիչ ուժով գործնական կիրառման մեջ լինել, բխում է նոր ժամանակների ու այսօրվա մեր իրավաբանութեանից, ըստ որի չէ թե որևէ օրենսգիրք, այլ, նույնիսկ, մեկ օրենք էլ չի կարող պարտավորիչ ուժով ընդհանուր կիրառութիւն զտնել: Եթե չի բխում իշխանութիւն համապատասխան լիազոր մարմնից: Սակայն այսօրվա մեր իրավաբանութեանները չի կարելի տարածել անցյալի վրա և այն ժամանակվա իրողութիւնները արտարբերել ըստ այսօրվա մեր ըմբռնումների. ըստ այսմ հին աշխարհի ու միջնադարի իրավաբանութեանները նույնական են դառնում մերի հետ, որով խախտվում է պատմականութիւն սկզբունքը: Իհարկե, տարբեր դարաշրջանների, սոցիալ-տնտեսական տարբեր տիպերի արդյունք հանդիսացող որոշ ըմբռնումներ, մասնավորապես իրավաբանութեաններ զեթ արտաբուստ կարող են նման և, նույնիսկ, նույնակա՞ն լինել, սակայն նույնութիւնը ըստ էութեան՝ պետք է հաստատվի ամեն առանձին դեպքում և նոր միայն դարձվի հզրակացութիւն հիմք: Մեթոդական այսօրինակ ոչ-ճիշտ կողմնորոշումն էլ դարձել է պատճառ ոչ-ճիշտ եզրակացութեան: Շոշափովող հարցի տեսանկյունից արմատապես տարբեր են հին աշխարհի ու միջնադարի և մեր իրավաբանութեանները: Հայտնի է, որ հին Հռոմում իրավաբանները օրենսդրական որևէ իշխանութիւն չունեին: Սակայն իրավագետները, մասնավորապես նրանցից առավել աչքի ընկածները, շատ մեծ հեղինակութիւն ունեին (auctoritas iurisprudentium),

որով գործոն մասնակցություն ունին իրավաստեղծման բնագավառում և դրանով իսկ իրավունքի աղբյուր էին: Առաջին դարի իրավաբաններից մեկը՝ Պոմպոնիուսը հանրապետության դարաշրջանի իրավաբաններ էլիոս Պետուս Կատուսի, Մարկուս Մանիլիուսի, Յունիոս Բրուտուսի և Պուբլիուս Մուկիուս Սկեվոլայի մասին ասում է, որ նրանք հիմնադրեցին, ստեղծեցին մասնավոր իրավունքը<sup>42</sup>: Բայց սա հենց այն իրավունքն է, որ գործում էր թե հանրապետական, թե կայսերական շոտում: Հռոմեական իրավաբանների հեղինակությունը պաշտոնապես ճանաչում գտավ միայն Օգոստոսից սկսած: Վերջինս որոշ իրավաբանների տվեց *ius publice respondendi*: Այս արտոնություն համաձայն, իրավաբանի հայտնած կարծիքը տվյալ գործի կապակցությամբ համարվում էր որպես որոշում՝ տված կայսեր կողմից: Իսկ 426 թ. որոշում ընդունվեց, որով օրենքի ուժ էր տրվում դասական շրջանի հինգ իրավաբանների կարծիքներին: Օրինականների թիվը հռոմեա-բյուզանդական դարաշրջանից կարելի է շարունակել, ներառնելով նաև եկեղեցու իրավասութայն բնագավառը, որտեղ նույնպես դատական աստիճաններում կիրառվում էին մասնավոր անձանց կողմից կազմված և լիազոր իշխանությունների կողմից չհաստատված ժողովածուներ՝ օրենսգրքեր ու կանոնագրքեր (նոմոկանոններ): Ի դեպ նշենք, որ մինչև Հովհանն Օմեյեցու կազմած Հայոց Կանոնագիրքը, արտաքին եկեղեցին ունեցել է կանոնական որոշումների բազմաթիվ ժողովածուներ, որոնց մեջ առանձնանում են Գիոնիսիոս Փոքրի և Հովհան Սքոլաստիկոսի ժողովածուները, 14 տիտղոսից բաղկացած Սինտագման և 50 տիտղոսից կազմված նոմոկանոնը: Այս բոլոր ժողովածուները կազմվել են մասնավոր անձանց կողմից ու թեև կիրառվել են գործնականում, բայց չեն բխել իրավազոր իշխանությունից: Գիոնիսիոս Փոքրի ժողովածուն, լրացված պապերի դեկրետալներով, 774 թ. Ադրիանոս առաջին պապը նվիրեց թագավորին, ապագա կայսր Կառլոս Մեծին: Միայն 802 թ. Ախենի կայսերական հավաքում այդ ժողովածուն հաստատվեց որպես Ֆրանկյան եկեղեցու պաշտոնական կանոնագիրք: Ինչ վերաբերում է Հովհան Սքոլաստիկոսի ժողովածուին, ապա վերջինս կազմվել է այն ժամանակ, երբ պատրիարքը Անտիոքի եկեղեցու երեցն էր Ուստի, մեր կանոնագիրքը որպես ժողովածու, առաջինն է, որ բխում էր անմիջականորեն լիազոր իշխանությունից, հետևապես առաջին պաշտոնական կանոնագիրքն է քրիստոնեական աշխարհում:

Միջնադարում ևս իրավաբանները, մասնավորապես առանձնապես աչքի ընկած գիտնական իրավաբանները, շատ մեծ հեղինակություն ունեին օրենսդրության ու դատական առօրյայի բնագավառում և պատճառներից մեկն էլ դա էր, որ դատավորները հաշվի էին առնում նրանց կարծիքը վճիռ կայացնելիս, նրանց կազմած իրավական ժողովածուները օրենքի ուժ էին ստանում և նրանց իրավադիտական գործերը (տրակտատ), նույնիսկ, տեղ էին գրավում դատավորների սեղանների վրա, օրենսգրքերի կողքին: Հենց Միխիթար Գոշի դարաշրջանին պատկանող բազմաթիվ փաստերից նշենք մի քանիսը: Գիտությունը հայտնի է ժժ դարի կեսերին կազմված *Lo codi ժողովածուն*, որ գործում էր Ֆրանսիայի հարավում: Գլոսատորների դպրոցի վերջին խոշոր ներկայացուցիչը՝ Ակկուրսիուսը շուրջ 1250 թ. հրատարակեց *Glossa ordinaria*, որը ամբողջ դպրոցի կազմած գլոսաներն էին *Corpus juris*-ի վերաբերյալ և որը կիրառվում էր դատարաններում: Պոստգլոսատորներից Բարտոլուսի (1314—

<sup>42</sup> D. 1. 2. 39. *ius civile fundaverunt*.

1357 թթ.) մեկնությունները մեծ հեղինակություն ունեին դատարաններում և նրանցով էին ղեկավարվում իսպանական դատարանները: Մխիթարին ժամանակակից էր անգլիացի Հենրի Բրակտոնը (+1268), որը ոչ ուշ քան 1256 թ. գրել է մի գործ՝ «Անգլիայի օրենքների ու սովորույթների մասին»: Բրակտոնը դատավոր էր և իր գործը գրել է որպես մասնավոր անձ, շնայած դրան այն լայնորեն կիրառվում էր անգլիական դատարաններում: Նույնը կարելի է ասել նաև Մխիթարի ու Բրակտոնի մի այլ ժամանակակիցի՝ էյկե Ֆոն Ռեպպաուի ու նրա կազմած ժողովածուի՝ «Սաքսոնյան հայելու» մասին: Օրինակների թիվը կարելի է շարունակել, ընդգրկելով միջնադարյան Եվրոպայի բոլոր երկրները, բայց բավականանա՞նք հիշատակվածով: Կարող ենք եզրակացնել, նորից հաստատելով վաղուց հայտնի ու հաստատված ճշմարտությունը. միջնադարում մասնավոր անձի կողմից կազմված օրենսգիրքը կարող էր դատարաններում գործնական կիրառություն գտնել առանց համապատասխան մարմինների կողմից հանրային-իրավական վավերացման կամ հաստատման. այս բանը կատարվում էր լեռնային, իշխանութային մարմինների կողմից ամենօրյա գործնական կիրառման փաստի ուժով, մանավանդ, եթե օրենսգիրք կազմողը ընդհանուր ճանաչման արժանացած ու մեծ հեղինակություն վայելող անձ էր: Տեսանք, որ Մխիթարի ժամանակ օրենսգրքի պակասը խիստ զգալի էր, այն ստիպողաբար պահանջվում էր: Գիտենք նաև, որ այդ օրենսգիրքը կազմեց Հայաստանում լայն ճանաչման արժանացած և, իրոք, մեծ հեղինակություն վայելող մի անձ: Այսքանն էլ արդեն բավական էր, որպեսզի Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Դասնո անապատի առանձնական խցից անցնելու դատավորի հանրային ատենատեղին:

Ասացինք, որ Մխիթարի դարաշրջանում դատաստանագիրքը անհրաժեշտություն էր, նրա կարիքը զգում էին և՛ վերինները, և՛ վարինները, և այս պայմաններում Մխիթար Գոշը գրեց մի դատաստանագիրք, որ բավարարում էր և՛ վերիններին, և՛ վարիններին: Հայ հասարակության բոլոր խավերի համար ընդհանուր, համազգային շահի վճռական պաշտպանության դիրքորոշմամբ հանդերձ, Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով ընդառաջում էր նաև այդ խավերից յուրաքանչյուրի դասային-դասակարգային շահերին, հարկավ, գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների թուլատարած սահմաններում: Իր Դատաստանագրքով Մխիթար Գոշը ազդեցիկ մի գեներ էր տալիս իշխող դասակարգին՝ քաղաքական իր դիրքերն ամրապնդելու և սեփական իշխանությունը հաստատելու համար, եկեղեցուն՝ կրոնա-գավառաբանական պայքարում իր կացությունը անվթար պահելու, ազգային ինքնությունը պահպանելու, նվիրապեսությունը սրբազործելու և հոգևորականությանը՝ դասային իր արտոնությունները պահպանելու համար, ավատատերերին՝ իրենց կեցութային հիմքերն ամրապնդելու և սոցիալ-տնտեսական գերիշխող դիրքը անսասան պահելու համար, շինականներին՝ ավատական կամայականություններից, գերկեղեքումից, պաշտոնական շարաշահումներից պաշտպանվելու համար:

Դատաստանագիրքը մեզ է հասել բազմաթիվ գրչագրերով, որոնք թվագրվում են սկսած Մխիթարի կենդանության ժամանակից և ներառյալ հետագա բոլոր դարերը: Միայն Մաշտոցի անվան մատենադարանում Դատաստանագրքի գրչագրերի թիվը հասնում է շուրջ 40-ի: Իրավացիորեն նկատել են արգեն, որ Դատաստանագրքի մեզ հասած ձեռագրերի բազմաթվությունը նույն-

պես ապացույց է, որ այն գործող օրենսգիրք է եղել: Դատաստանագրքի բովանդակությունը ոչ ժողանքի նյութ է և ոչ էլ հոգեփրկիչ ընթերցանություն, և եթե այն բազմացրել են, ապա պիտի մտածել, որ դա արել են գործնական պահանջմունքին բավարարություն տալու համար:

Դատաստանագրքի խմբագրությունների մասին մանրամասն խոսք կլինի հետագայում, այստեղ նշենք միայն, որ Մխիթարի գործը մեզ է հասել երեք խմբագրությամբ՝ Ա, Բ և Գ: Ինչպես կտեսնենք ստորև, Գ խմբագրությունը զգալիորեն համառոտված է: Համառոտումն իրականացվել է, առաջին հերթին, նորմատիվ նյութը կրոնական հավելումներից թոթափելու հաշվին: Բացի դրանից, Ա խմբագրությունը, որը Դատաստանագրքի բուն հեղինակային օրինակն է, գործող իրավունքը արձանագրելուց բացի, պարունակում է նաև նորմեր, որոնք անցել են հեղինակի հայացքների խառնարանով և որոշ երանգ ստացել: Գ խմբագրությունը, որ ստեղծվել է հետագայում, գրեթե ղերծ է դրանցից: Այստեղ աշխատել են առավելապես հարազատ մնալ գործող իրավունքին: Դատավորին պետք էին ոչ թե այս կամ այն նորմը հաստատող աստվածաշնչային օրինակներ, և ոչ էլ բարոյախոսական խրատ ու քարոզ, այլ կոնկրետ իրավանորմ, որով պետք է կարգավորվեր կոնկրետ իրավահարաբերություն՝ քաղաքացիական վեճ, քրեական գործ: Նկատելի է, որ Դատաստանագրքի հեղինակային սկզբնօրինակը Գ-ում խմբագրվել է հենց այդ տեսանկյունով: Բայց դա մի միջամտություն է, որ գործնական նպատակադրում է հուշում ու կիրառական խնդիրներ հետամտում: Պատահական չէ բնավ, որ Դատաստանագրքի ձեռագրերի ընդհանուր թվի մեջ մեծագույն մասը ընկնում է Գ խմբագրությանը: Մեր Մատենադարանում եղած շուրջ քառասուն ձեռագրերից մոտ կեսը բաժին է ընկնում Ա և Բ խմբագրություններին միասին վերցրած, իսկ կեսը Գ խմբագրության գրչագրերն են: Դատելով ձեռագրացուցակներից, այդպես է իրերի վիճակը նաև Միլյուտքի Մատենադարաններում, այնտեղ էլ Դատաստանագրքի ձեռագրերի մեծագույն մասը ներկայացնում է Գ խմբագրությունը: Պատճառը, թվում է, պարզ է. ամենից շատ բազմացրել են հենց այն գործերը, որ ամենից շատ են օգտագործել, և եթե Դատաստանագրքի խմբագրություններից ամենից շատ բազմացել է Գ խմբագրությունը, նշանակում է գործածության մեջ եղել է առավելապես հենց այդ խմբագրությունը: Հասկանալի է, որ Դատաստանագրքի գործածությունը, ամենից առաջ, դատական գործածություն է նշանակում: Իր տեղին թողնելով հանգամանալի փաստարկումը, այստեղ պարզապես ասենք, որ Գ խմբագրության գոյությունը ուղղակի ապացույց է, որ Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել:

Հայտնի է, որ 1265 թ. Կիլիկիայում Մմբատ Սպարապետը գրեց իր Դատաստանագիրքը՝ Կիլիկյան հայկական պետության պաշտոնական օրենսգիրքը: Ցարդ կասկած չի եղել և չի էլ կարող լինել այն մասին, որ Մմբատի Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել, որովհետև բխում էր բարձրագույն լիազոր իշխանությունից: Բայց Մմբատ Սպարապետի Դատաստանագիրքը այլ բան չէ, քան Մխիթար Գոշի Դատաստանագիրքը որոշ փոփոխություններով ու լրացումներով, որ կատարել է Մմբատը տեղի պայմաններին համապատասխան: Մի կողմից, եթե Մխիթար Գոշի Դատաստանագիրքը լայնորեն տարածված ու գործող օրենսգիրք չլիներ, հավիվ թե հենց այդ Դատաստանագիրքը դրվեր Մմբատի օրենսդրության հիմքում, մյուս կողմից՝ Մմբատ Սպարապետի Դատաստանագրքի միջոցով Մխիթար Գոշի Դատաստանագիրքը,

արտաբուստ թեև անուղղակի, բայց ըստ էության ուղղակի հաստատվել է ազգային լիազոր իշխանություն կողմից: Այս փաստը իր հերթին ավելի ևս բարձրացնելու էր Մխիթար Գոշի Դատաստանագրքի հեղինակությունը մայր հայրենիքում: Եվ եթե, այնուամենայնիվ, կարող է կասկած լինել Մխիթարի Դատաստանագրքի գործադրության մասին, ապա դա կարող է վերաբերվել առավելագույնը մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածին, դրանից հետո այդ թերահավատությունը արդեն միանգամայն անհիմն է դառնում, եթե, իհարկե, հիմնավորված համարվի կասկածը նախորդ ժամանակահատվածի վերաբերյալ:

Նույնն է հաստատում նաև լեհահայոց Դատաստանագրքի գոյության փաստը: Երբ լեհահայ գաղութի՝ ներքին ինքնավարության համար մղված երկարատև պայքարից հետո, հարցն հասավ նրան, որ կառավարությունն արդեն պիտի տար դատական ինքնավարություն, գաղութին առաջարկվեց կառավարության հաստատմանը ներկայացնել իրենց օրենքները: 1518 թ. գաղութը, հայերենից լատիններեն թարգմանած, կառավարությանը ներկայացրեց իր ազգային օրենքների հավաքը: Կառավարությունը հաստատեց այն, որից հետո լեհահայ գաղութը ղեկավարվում էր իր ազգային՝ հայկական օրենքներով: Բայց լեհահայոց Դատաստանագիրքը այլ բան չէր, քան Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որը, բնական է, համապատասխան փոփոխությունների էր ենթարկվել: Արդ, հայերի հետ Լեհաստան գաղթած Դատաստանագիրքը պետք է որ հայերի մեջ մայր հայրենիքում տարածված, ընդունված ու իրավական կյանքում արմատացած լիներ, հակառակ պարագային դժվար է պատկերացնել, որ այդքան պատասխանատու ու շափազանց կարևոր մի գործի համար, ինչպիսին էր ինքնավարությունը, հայերը կարող էին կառավարությանը ներկայացնել իրենց անձանոթ, կյանքում չփորձված մի օրենսգիրք: Ահնհայտ է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայերի համար կյանքում փորձված, իրավական առօրյայում ստուգված օրենսգիրք էր: Աներկբա է, որ Դատաստանագրքի նկատմամբ այդ փորձը չէր կարող ձեռք բերված լինել Լեհաստանում, ուրեմն, այն գալիս էր մայր հայրենիքից:

Նույնարժեք փաստ է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը, որը ԺԸ դարի սկզբներից գործում էր Վրաստանում վրացական օրենսգրքի հետ միասին ու դրան հավասար ուժով:

Նշենք մի փաստ ևս հօգուտ այն իրողության, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը գործող օրենսգիրք է եղել: Ընդհանրապես՝ Դատաստանագրքի և մասնավորապես՝ նրա աղբյուրների մասին հանգամանալից խոսքը սույն առաջաբանի նպատակներից դուրս է, և վերջինիս ծավալն էլ այդ թույլ չի տալիս: Նշված հարցերը մանրամասն կրկնարկվեն Դատաստանագրքին նվիրված մեր հատուկ և ընդարձակ ուսումնասիրության մեջ, որը հետևելու է սույն հրատարակությանը, այստեղ նշենք միայն հետևյալը: Դատաստանագրքի աղբյուրներն են Աստվածաշունչը (Մովսիսական իրավունք), Կանոնագիրքը (կանոնական իրավունք) և սովորութական իրավունքը: Վաղուց նշված ու հաստատված փաստ է, մենք էլ ընդգծենք, որ այս աղբյուրներից յուրաքանչյուրը առանձին, դարեր շարունակ մինչև Մխիթարը և Մխիթարի ժամանակ էլ, Հայաստանում գործող ու կիրառվող իրավունք էր: Բնական է, որ գործող իրավունքի աղբյուրներից կազմված օրենսգիրքը նույնպես գործող էր լինելու, որովհետև «ի մի տփի» հավաքվելով այդ աղբյուրները շէին կարող

կորցնել իրենց ուժը, այնքան որքան դրանցից յուրաքանչյուրի աղբյուրը անկախ էր Գատաստանագրքի հեղինակից, վեր նրանից ու հզոր, և վերջապես գումարելիների տեղափոխութունից գումարը չի փոխվում:

Քվարկվածներով շին վերջանում այս կարգի փաստերը, ուստի շարունակենք: Գատաստանագրքի հորինման պատմությանը ծանոթանալու համար ընթերցողին դարձյալ հղելով մեր ուսումնասիրությանը, այստեղ սույն առիթով ու համառոտակի նշենք միայն հետևյալը: Նախադրության Բ գլխից դիտենք, որ Հայաղվանքի Ստեփանոս կաթողիկոսը զգալիորեն նպաստել է Գատաստանագրքի երևան գալուն. «Հանդիպեցաք առաջի տեառն Ստեփաննոսի՝ շնորհիւ Տեառն Յիսուսի Աղուանից կաթողիկոսի,—գրում է Մխիթարը,—եւ նոյն իրի (խոսքը Գատաստանագրքի մասին է—Խ. Ք.) վերստին չիշատակ եղեւ: Եւ նա յորդորեալ փութացոյց զմեզ ասելով, եթէ շնորհ յոյժ ունիմ իրիդ կատարման: Առաջի եւ մեք զմերս եղաք անկարութիւն, որպէս վերագոչնն: Սակայն չերկրորդելն եւ ի քաջալերելն խորհուրդ իմն ի մեզ եղեւ, եթէ արժան է հոգեւոր հրամանի անսալ»: Սակայն պատմությունը միայն Ստեփանոս կաթողիկոսով չի վերջանում: Մխիթարը հարցը բարձրացրել է ավելի վեր, մինչև Ամենայն Հայոց կաթողիկոսը: Այս մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Գատաստանագրքի Ա խմբագրության պատկանող մեր Մատենադարանի № 2775 ձեռագրում. Գատաստանագրքի նախադրությանը կցված Մխիթարի հիշատակարանի «ձեռնատուութեամբ հար Յովսեփայ եւ եղբար Պապուսի յորդորմամբ յառաջարկութիւնս» բառերից հետո ձեռագրում շարունակվում է. «զոր ի խնդրո կաթողիկոսին Աղուանից հրաւիրեցաք ի ձեռնարկութիւնս գրոց դատաստանիս եւ յորդորմամբ ի ձեռն թղտո տեառն Գրիգորիսի հաոց կաթողիկոսի՝ ձեռնարկի եւ սկսա ես՝ տառապեալս Մխիթար, որ եւ Գոշ եւ յետին ի գիտնականս, մտահանալով յաւժընդակութիւն աղաւթից սուրբ հայրապետացն եւ ամենայն սիրողաց Քրիստոսի Աստուծոյ»: Ուրեմն, Մխիթար Գոշը Գատաստանագիրք ստեղծելու իր մտադրության և դրա հետ կապված իր մտորումների մասին նախապես տեղյակ է պահել նաև Հայոց կաթողիկոսին և Ամենայն Հայոց կաթողիկոսը հատուկ թղթով «հորդորել», այսինքն՝ համոզել, քաջալերել, թերևս և առաջարկել-կարգադրել է, որ Մխիթարը գրի դատաստանադիրք: Բերված տեղեկությունը թե ինչպես է հայտնվել № 2775 ձեռագրում, ուրիշ հարց է և ներկա դեպքում կարևոր էլ չէ, կարևորը այն հարցն է, թե հավաստի է, արդյոք, այդ տեղեկությունը: Պատասխանը դրական է, որովհետև այն արձագանքում է մի այլ փաստաթղթի: Խոսքը վերաբերում է Մխիթար Գոշի նամակին, հասցեագրված Ամենայն Հայոց կաթողիկոսին. «Ջսուրք և զաստուածարեալ գլխոյդ եկեղեցեացս Հայաստանեաց... զհարկ հոգեւոր հրամանի նուստոս յամենայնի ամենայնի Մխիթար ընկալալ, զոր վասն գրոցս էր դատաստանի, ի ձեռն եղբար եկիւոց ի ձէնջ... Սակայն իրաւացի կարծեցի յապաղել յայս հրաման մնալ և գրոյ, զի մի ցոյց ինչ կարծիցիմ դիմս առնել վաստակաւ սակաւ, այլ փութացայ և անվեհեր կատարել զայս գործ հոգեւոր ըստ իմում կարի, խոշոր նիւթով և գրով... Ընդ միտ ածելով և զայս, թէ հաճելի ձեզ լիցի՝ դիւրին է փոխել ի նիւթ մագաղաթեայ գրչաւ ճարտարաւ, ապա թէ ոչ՝ բաւական է և մեզ յաշխատութիւնս սնտոսիս և այս կորուստ նիւթոյ: Աղաչեմ պարապմամբ և մտադիր ընթերցմամբ քննել զախտաժէտ մտաց իմոց զեկսդ, զի և ես միշտ ընդ կարծիւք քամահանաց լինելով և հալածեալ ի խնդրողէն զդատաստանացդ գիրք՝ փութով և

տառապանաւք գծեալ յանգեցի.... Եւ արդ, եթէ ինչ գտցի հաճելի ձեզ, Տեան շնորհ.... իսկ եթէ ոչ՝ այն մերոյ տգիտութեան է.... Եւ եթէ բնաւին անապուտ յեկեղեցի իցէ և պատճառ գայթակղութեանն, հրոյ տացես ճարակ և հրամայիցես և որ առ մեզ է արիւնակ զնոյն առնել և անխաւիան ձերդ կացցէ հրաման, թէպէտ և մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալան....»։ Այս նամակը պահպանվել է Դատաստանագրքի հնագույն ձեռագրերից մեկում, որն այժմ պահվում է Զմամոսի կաթողիկէ հայոց վանքի մատենադարանում։ Նամակը հաշորդում է Դատաստանագրքի վերջին հոդվածին։ Դատաստանագրքի ստեղծման պատմության համար արժեքավոր այս նամակից ընդգծենք խնդրո առարկա հարցին վերաբերող մասը միայն։ Նամակից նույնպես իմանում ենք, որ Դատաստանագիրք գրելու իր մտադրության մասին Մխիթարը նախապես հայտնել է կաթողիկոսին։ Վերջինս հատուկ մարդու միջոցով թուղթ է ուղարկել Մխիթարին, հոգևոր հրաման՝ գրել Դատաստանագիրք։ Մխիթարը շտապել է կատարել կաթողիկոսի հրամանը և գրելով Դատաստանագիրքը, մի օրինակ, սույն նամակի հետ միասին, ուղարկել է նրան ի քննություն, ի հավանություն և ի կարգադրություն առ ի կիրառում։ Ընդդեմ է նաև, որ կաթողիկոսին ուղարկելու ժամանակ Դատաստանագրքից ընդամենը երկու օրինակ կար, մեկը Մխիթարի օրինակը, մյուսը՝ դրանից արտագրվածը՝ կաթողիկոսի համար, այսինքն՝ Դատաստանագրքի ամբողջ «տպաքանակը» հավասար էր երկուսի։ Մխիթարը խնդրում է, որ կաթողիկոսը հանգիստ և ուշադիր կարդա Դատաստանագիրքը և այնպես վճիռ կայացնի։ Եվ եթե կաթողիկոսը կհանգի այն եզրակացության, որ «անօգուտ» գործ է կատարված, Մխիթարը խնդրում է այրել ուղարկված օրինակը և հրամայել, որ ինքն էլ նույն ձևով վարվի իր օրինակի հետ, որով Դատաստանագիրքը ոչնչանալու էր, իբր բնավ չէր գրվել։ Գիտենք, որ կաթողիկոսը շայնք իրեն ուղարկված օրինակը (դա Զմամոսի ձեռագիրն է կամ նույնությամբ կամ ընդօրինակությամբ), նաև՝ որ Մխիթարի օրինակն էլ բազմացավ ու տարածվեց։ Արդ, չի՞ նշանակում այդ, որ կաթողիկոսը հավանել ու ընդունել է Դատաստանագիրքը և իր բարձր ու լիազոր իշխանությամբ հանձնարարել գործադրության։ Եթե սույնպես է, ապա մենք ուղղակի փաստ ունենք այն մասին, որ Դատաստանագիրքը պաշտոնապես հաստատվել է ազգային բարձր իշխանության կողմից։

Սակայն, անկախ վերը բերված նկատումից, ուշագրավ է նաև հետևյալ փաստը։ Նամակից իմանում ենք, որ արևելյան վարդապետները կարդացել են ու հավանություն տվել Դատաստանագրքին («մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալան»)։

Բացի դրանից, Դատաստանագրքի անդրանիկ օրինակներից մեկը (վենետիկյան հնագույն գրչագիրը) նվիրվել է Վախթանգին, հետևյալ մակագրությամբ. «Տէր Աստուած վայելել տացէ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ՝ որդւոյ Հասանա ի կամս իւր գգիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել գպատուիրան սորին» (նույն ձեռագիր, թ. 100դ)։ Վախթանգը Արևելյան Հայաստանի հզոր իշխաններից մեկն էր, Վերին Խաչենի տերը, Մխիթարի հովանավորն ու բարեկամը։ Ինքնին ծագում է ենթադրությունը, որ Վախթանգը, բարեկամի հանգամանքով, նախապես պետք է իմանար Դատաստանագրքի ինչ-րնչոցը, դրական վերաբերմունք ունենար դրա նկատմամբ, որպեսզի հեղինակը կարողանար նման մի հանձնարարականով («անսխալ ուղղութեամբ վարել գպատուիրան սորին») Դատաստանա-

գիրք նվիրել նրան: Մեր ասելիքն այն է, որ թեև չի հաջողվել Դատաստանագիրքը Ազգային ժողովի քննարկման առարկա դարձնել, այնուամենայնիվ ժողովրդի տերերն ու մեծերը՝ կաթողիկոսները, վարդապետները, իշխանները, նրանք, ովքեր հենց կիրառողներն էին օրենքների, հավանել և ընդունել են Դատաստանագիրքը: Այդքանն արդեն լիուլի բավական է անկասկած համարելու, որ Դատաստանագիրքը ընդունվեց ի գործադրություն և գործադրվեց իրականում:

Բերենք ևս երկու փաստ, որոնք արդեն ուղղակի հաստատում են վերնաստծու Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ փոխանակ արտաքին գործեաց՝ ունի և դատաւորն և առաջնորդն գիրս ուսուցութեան դատաստանի և քննութեան կանոնաց և օրինաց»<sup>43</sup>: Մեր մատենագրության մեջ «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի» կոչվում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը (բերված վկայությունը գայթակղում է հասկանալ այն այնպես, որ դատավորը ուներ գիրք դատաստանի ուսուցութեան և կանոնների ու օրենքների (մովսիսական) քննության գիրք, այլ կերպ՝ իրավունքի դասագիրք, ձեռնարկ, որ շատ երևելի փաստ կլինէր հայ իրավագիտության պատմության համար): Ինչպես տեսնում ենք, Տաթևացին ասում է, որ դատավորը և առաջնորդը (հավանաբար պետք է հասկանալ թեմակալ առաջնորդի իմաստով, որը սովորաբար եպիսկոպոս էր) ղեկավարվում են դատաստանի գրով: Նույն միտքը շատ ավելի պարզ ձևով արտահայտված է քարոզի շարունակության մեջ. «Այլ շորս ինչ պիտանի է մարդոյն (դատավորին—ե. Թ.), նախ՝ խոնարհութիւն, զի լսիցէ զգանկատն, երկրորդ՝ հեղութիւն, զի մի բարկասցի. երրորդ՝ համբերութիւն, զի մի շուտափոյթ լիցի. չորրորդ՝ զի զօրութեամբ տացէ զպատիւն և զպատիժն դատախազացն: Իսկ գառաջինն պարտ է ստանալ զիմաստութիւնն: Նախ՝ կրթել և վարժիլ ուսմամբ զգիր դատաստանացն և զկանոնացն և զհոմոսացն թագաւորաց և զՄովսէսին, եւ ապա առնել դատաստան»<sup>44</sup>: Վերջապես, Տաթևացին հանդիմանում է դատավորին, որը «ոչ ընթեռնու զգիրս դատաստանի»<sup>45</sup>: Ինչպես տեսնում ենք, դատավոր դառնալու առաջին պայմանը համարվել է Դատաստանագրքի (և գործող այլ օրենքների) իմացությունը, որպեսզի՝ նրանով «առնեն դատաստան», այսինքն՝ վճիռ կայացնեն:

Վերջապես, մի շատ կարևոր փաստ էլ հրապարակել է պրոֆ. Լ. Խաչիկյանը: Խոսքը վերաբերում է Գրիգոր Մերենց Խլաթեցու (մ.հ. 1425 թ.) մի նամակին, որի մեջ, ի պատասխան հարցումի, ասված է. «Մեր օրէնքս այս է, թէ հարսին զարդերքն ու բաժինքն է, թէ փեսային, թէ տղայ եղեալ է ի միջին՝ այն ամենայն տղային է, և թէ տղայ չէ եղեալ ի մէջ՝ ուրան է զայն՝ գնացելոյ հոգին հոգան: Եւ թէ այլ մնայ՝ փեսային հօր տուածն յիւր տէրն դառնայ և աղջկայ հօր տուածն՝ յիւր տէրն դառնայ, ապա կերածն ու մաշածն չգայ յիշումն: Մեր առաջնորդաց հրամանքն այս է, և որ ռազի չլինի՝ մասն ու բաժին ընդ անհաւատսն դիցէ և դուք ողջ լերուք ի տէր Աստուծով»: Հրապարակելով նամակը, Լ. Խաչիկյանը գրում է. «Այս կարևոր նամակը... հնարավորություն է տալիս պարզելու, որ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» իրոք գործածության մեջ է եղել միջնադարյան Հայաստանում»<sup>46</sup>: Ի հաստատումն, ուսում-

<sup>43</sup> «Գիրք քարոզութեան որ կոչի Ամառան հատոր», Կ. Պոլիս, 1741, էջ 458:

<sup>44</sup> Անդ, էջ 458—459:

<sup>45</sup> Անդ, էջ 459:

<sup>46</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երկրորդ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, Առաջաբան, էջ LXXXIV:

նասիրողը վկայակոչում է Դատաստանագրքի՝ Վ. Բատամյանցի հրատարակության առաջին մասի ՃԻԱ հոդվածը, որին և, իրոք, վերաբերում է Նլաթեցու՝ «մեր առաջնորդաց հրամանքն այս է» ակնարկը: Այս հոդվածում նշված է, որ կնոջ մահուան դեպքում «թէ մնայցէ զաւակ՝ հոգասցի հոգոյ նորա պէտք և մնացեալն զաւակին լիցին: Իսկ եթէ զաւակ չիցէ մնացեալ... դարձցի անդրէն բաժինն ի ձեռս ծնողացն կամ եղբարցն նորա. և րստ նորին պատուիրելոյ հոգասցին զհոգի գիտութեամբն աննն, և որ սակաւ մնայ, նոցա լիցի» (տե՛ս նաև սույն հրատարակության հհ. ՃԳ, ՃՁԴ և այլն):

Այսպիսով, թվում է, այլևս կասկած չի կարող, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքը միջնադարյան Հայաստանում գործող ու կիրառվող օրենսգրք է եղել: Այս ասելով, նախ, մենք նկատի ունենք Դատաստանագրքն ընդհանրապես, իր ամբողջութիւն մեջ և ոչ այնպէս արձանագրված ամեն մի տառն առանձին: Երկրորդ՝ բնավ չենք պնդում, թէ Մխիթար Գոշի Դատաստանագրքը եղել է միջնադարյան Հայաստանում գործող միակ օրենսգրքը: Միջնադարում դատավորները ընդհանրապես կաշկանդված չէին հրապարակի վրա եղած օրենքների ու օրենսգրքերի՝ ի ղեկավարութիւն ընտրութիւն հարցում:

Ավելորդ չենք համարում մեջ բերել ևս մի տեղեկութիւն Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործադրութիւն մասին արդեն մեր օրերում. «1930-ական թուականներուն հայ փաստաբան մը (Վ. Խրլագեան) գրողիս դիմեց Հալէպ՝ որ իրեն փոխ տամ Մխիթար Գօշի Դատաստանագիրքը, յայտնելով թէ՛ Հնդկաստանի Կալիպա քաղաքին մէջ հանգուցեալ հարուստ հայ մը իր կտակին մէջ լիշած էր, որ իր՝ թողած ժառանգութիւնը բաժնուի Մխիթար Գօշի Դատաստանագրքին օրէնքներուն տրամադրութեամբ: Որոշ երաշխաւորութեամբ յանձնեցի Դատաստանագիրքը փաստաբանին: Վեց ամիս վերջ Գիրքը վերադարձուց Պր. Խրլագեան, յայտնելով որ՝ Հնդկաստանի անգլիական իշխանութիւնները յարգած էին կտակարարին կամքը և դատավարութիւնը տեղի ունեցած էր Մխիթար Գօշի Դատաստանագրքին տրամադրած օրէնքներու համաձայն»<sup>47</sup>:

Հայկական որոշ գաղթօջախներում Մխիթար Գոշի Դատաստանագրքը գործում է նաև այժմ: Սուրանի հայկական գաղութի վարչական ժողովի առաջին նախագահ Սարգիս Իզմիրլյանի (պաշտոնավարել է 1917—1949 թթ.) ջանքերով գաղութը ճանաչվել է պետութիւն կողմից և ստացել մի արտոնութիւն ևս, որով հայկական համայնքի անդամների՝ ժառանգական իրավունքի բնագավառի դործերը քննելիս Սուրանի դատարանները ղեկավարվում են Մխիթար Գոշի Դատաստանագրքով<sup>48</sup>:

\* \* \*

Մխիթար Գոշի Դատաստանագրքը մեր մատենագրութիւնի եզակի հուշարձաններից է: Որպես միջնադարյան սկզբնաղբյուր նա հարուստ նյութ է

<sup>47</sup> Նշան Պ. Սաքեան, Մխիթար Գօշ Գանձակեցի, «Զարթօնք» օրաթերթ, 9 նոյեմբեր, 1963 թ., № 39:

<sup>48</sup> Տե՛ս Սարգիս Իզմիրլյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխութիւնի մասին (անձնական հուշերու ընդմեջէն), Պելրութ, 1962, էջ 11 (սուրանաբնակ Տիրան Հարութիւնյանի առաջաբանը) և Ռ. Մարտիրոսյան, Սուրանի հայ գաղութը, «Հայրենիքի ձայն», 1970, 9 սեպտեմբերի, № 36:

պարունակում գիտութեան բազմաթիւ բնագավառների համար: Հայտնի է, որ մէր մատենագրութիւնը հարուստ չէ հայ ժողովրդի ներքին կյանքին՝ սոցիալ-տնտեսական հարաբերութիւններին, հասարակական տարբեր խավերի իրավական դրութեանը և նման այլ հարցերի վերաբերող տեղեկութիւններով: Այս տեսակետից Մխիթար Գոշի Դատաստանագիրքը բացառիկ նշանակութիւն ունի, որովհետեւ առատ նյութ է պարունակում մեր ժողովրդի ներքին կյանքի նշված բնագավառների ուսումնասիրութեան համար, ավելի, քան իր ժամանակի մեր ամբողջ մատենագրութիւնը:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, սակայն, ամենից առաջ իրավական հուշարձան է և որպէս այդպիսին այն նույնպէս առաջնակարգ տեղ է զբաղում աշխարհի նույնանման հուշարձանների շարքում: Դատաստանագրքի, որպէս ժամանակի գործող իրավունքի և, մանավանդ, որպէս իրավական մտքի հուշարձանի կուլտուր-պատմական արժեքի լրիւ բացահայտումը հնարավոր է միայն նրանում ներկայացված իրավունքի ճշուդերից յուրաքանչյուրի առանձին ուսումնասիրութեամբ, մի բան, որն այստեղ անել չենք կարող: Նշենք միայն, որ Դատաստանագիրքը տիրող սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների ամրապնդման, շահագործողական դասակարգի գիրքերի պահպանման ու պաշտպանման գործոն գենք լինելով, պարունակում է նաև իր ժամանակի համար խորապէս առաջադիմական մի շարք գաղափարներ ու մտքեր: Այս բնագավառի փաստերից են հանցանքի ու պատժի համամասնութեան, պատժին ոչ թէ վրեժի ու տանջանքի, այլ դաստիարակիչ դեր վերագրելու, բնական ու դրական իրավունքների հարաբերութեան, մարդու ու անձի պրոբլեմի տեսական լուծման, մարդասիրութեան գաղափարները և մի շարք այլ մտքեր:

Իրավունքի պատմութեան մեջ մինչև Մխիթարը և հենց Մխիթարի ժամանակ էլ օրենքը պաշտպանում էր ոչ թէ մարդուն, այլ անձին, որոշակի մարդուն, կապված նրա սոցիալական դիրքի հետ: Այդպէս էր իրականութիւնը ամենուր, անշուշտ, նաև Հայաստանում, որովհետեւ մարդու և անձի հակադրութիւնը հասարակութեան՝ հակադիր դասակարգերի բաժանվելու արդյունք էր և հարատեւելու էր այնքան ժամանակ, քանի դեռ հասարակութիւնը շարունակելու էր մնալ երկփեղկված հակադիր դասակարգերի: Շահագործողական միեւնոյն հասարակարգի ներքին զարգացմանը զուգընթաց և նոր հասարակարգի առաջացմամբ այդ հակադրութիւնը անպայման ենթարկվում է որոշ փոփոխութիւնների, ստանում է նոր երանգ, նոր ձև, բայց ըստ էութեան չի լուծվում և չի կարող լուծվել, քանի դեռ չի վերանում այն տնտեսակարգը, որը հնարավորութիւն է ստեղծում մարդը մարդուն շահագործելու համար:

Միջնադարում (և ընդհանրապէս) մարդու և անձի հակադրութիւնը չէր կարող վերացնել որևէ անհատ, որքան էլ հանձարեղ ու առաջադիմական լիներ նա: Այդ հնարավոր էր միայն աշխատավոր լայն զանգվածների հեղափոխական ելուժի միջոցով և այն դեպքում միայն, երբ հասարակարգը իր ներքին զարգացմամբ արդեն հասունացած լիներ զրա համար, ինչպէս և եղավ 1789 թ.: Այս տեսակետից ու այս թվականի համեմատութեամբ Մխիթարի ժամանակի դեռ խոր միջնադար է, թեև զարգացած ավատատիրութեան զարգացման է ընդգրկում: Բայց, որոշակի արժեք է ներկայացնում նաև այս դարաշրջանում առանձին անհատների արտահայտած վերաբերմունքը մարդու և անձի հակադրութեան հարցին. ներկայացնում է ոչ միայն իրավաբանական մտքի պատմութեան ու դրանում այդ անհատների տեղն ու դիրքը որոշելու

համար, այլև գալիքը նախապատրաստող պատմական հեռանկարի տեսակետից: Մարդու և անձի հակադրության հարցերն ընդգրկող բնագավառում արտահայտված առաջադիմական գաղափարներն են նաև, որ աստիճանական կուտակմամբ տիրապետելով լայն զանգվածներին, հետագայում դառնալու էին նյութական այն հզոր ուժը, որն ընդհանրապես վերացնելու էր մարդու և անձի հակադրությունը:

Գիտենք, որ Մխիթարից դեռ շատ առաջ և՛ փիլիսոփաները, և՛ իրավաբաններն ու աստվածաբանները արձանագրել են, որ ըստ բնական իրավունքի բոլոր մարդիկ հավասար են: Գիտենք նաև, որ նրանք, ըստ բնական իրավունքի, մարդկանց հավասարության գաղափարից եզրակացություն չեն արել նրանց հավասարության մասին նաև ըստ դրական իրավունքի, այդ գաղափարը առաջին իրավունքի մարդից չեն փոխադրել երկրորդ իրավունքի համակարգը:

Մխիթար Գոշի ելակետը նույնպես հավասարությունն է ըստ բնական իրավունքի: Սակայն, ըստ բնական իրավունքի մարդկանց հավասարության գաղափարից Մխիթար Գոշը եզրակացություն է հանում նաև նրանց հավասարության վերաբերյալ ըստ դրական իրավունքի, և մարդկանց հավասարության գաղափարը բնական իրավունքից փոխադրելով դրական իրավունքի համակարգը, սահմանում է մի շարք նորմեր, որոնցով, իրոք, հավասարեցնում է մարդն ու անձը դրական իրավունքում: Անշուշտ, սա չի նշանակում, թե Մխիթար Գոշը վերացնում է մարդու և անձի հակադրությունը ընդհանրապես, թե բոլոր կետերում հավասարեցնում է նրանց, դա անհնար էր և առարկայապես, որովհետև հասարակարգը ներքուստ հասունացած չէր դրա համար և ընդհանրապես դա անհատի գործ չէ, և ենթակայապես, որովհետև ինքը՝ Մխիթար Գոշը ավատական կարգերի ներկայացուցիչն էր ու չերմ պաշտպանը, ավատական մտածելակերպի տիպիկ օրինակը: Այլ հասարակարգ, քան ավատականը, Մխիթարը չի պատկերացնում և չէր էլ կարող պատկերացնել: Սակայն սա նրա թերությունը չէ և ոչ էլ որևէ հիմք կա հանդիմանելու Մխիթարին դրա համար: Ուստի, ստրուկն ու ճորտը նրա համար հենց այդպիսին են: Սակայն, ընդգծելին այն է, որ Մխիթար Գոշը ամբողջովին չի ձուլվում իր հասարակարգի սեղմիչ կաղապարներին և հաղթահարելով դրանց դիմադրական ուժը, վեր է բարձրանում դրանցից, որով վեր է բարձրանում և իր դարից և կանգնելով մարդու պաշտպանության դիրքերում, դարի ամենամեծ հակասությունը բնական ու դրական իրավունքներում լուծում է հօգուտ առաջինի: Մարդու և անձի հակադրության վերացման բնագավառում պատմականորեն առաջին քայլը պիտի լիներ խտրականության վերացումը մարդու և անձի կյանքի հանրային-իրավական պաշտպանության բնագավառից և Մխիթար Գոշը արել է պատմական այդ մեծ քայլը և իրավունքի պատմության մեջ, թերևս, առաջինն է եղել, որ արել է այդ քայլը: Այս կետում է, որ նա վերացրել է մարդու և անձի հակադրությունը և հավասարեցրել նրանց: Սա հսկայական մի առաջընթաց է իր դարի համար: Գործե՞լ են այս նորմերը, ունեցե՞լ են իրական ուժ, թե ոչ, այլ հարց է: Սակայն անկախ դրանից, չի կարելի չընդունել, որ մարդու կյանքը, մանավանդ աշխատանքի ընթացքում նրա կյանքի անվտանգությունը պաշտպանող Մխիթարադիր օրենքները, բխելով աշխատավոր լայն զանգվածների կենսական շահերից, տիրապետելու էին նրանց մտքերին և դրանով իսկ բարոյական մեծ ազդեցություն էին ձեռք

բերելու Անշուշտ, Մխիթար Գոշր չէր կարող անել ավելին, քան թույլ էին տալիս դարի հնարավորութիւններն ու իր ծառայական դիրքը տիրապետող կարգերի նկատմամբ, բայց և այն, ինչ վերցրել է Մխիթարն իր դարից ու տվել մարդուն, մեծ է իր դարի համար համաշխարհի չափանիշով:

Մխիթարի՝ իրավունքի փիլիսոփայութեան ելակետը հանդիսացող մարդասիրութիւնն է, որ անցնելով նաև Դատաստանագրքի մեջ, դարձել է այս վերջինս առինքնող ուժերից մեկը և մեկը այն գործոններից, որոնք պայմանավորել են Դատաստանագրքի կիրառումը դարերի ընթացքում ու աշխարհագրական լայն տարածքներում:

## ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԱՏԵՂՄԱՆ ԹՎԱԿԱՆՈՂ

Մխիթար Գոշր Դատաստանագրքի հորինման թվականի շուրջ հայագիտութեան մեջ տարակարծութիւն է եղել: Գոյութիւնն է. ունեցել երկու տեսակետ. ա) Դատաստանագիրքը գրվել է 1184 թ. և բ) 1184 թ. Մխիթար Գոշր միայն սկսել է գրել իր Դատաստանագիրքը և անավարտ թողել: Որպես կանոն, առաջին տեսակետը ներկայացնում են Մխիթարյան ուսումնասիրողները:

Նոր ժամանակի հետազոտողներից առաջինը Միքայել Զամչյանն է, որ անդրադառնում է այս հարցին և գրում. Մխիթար Գոշր «արար և զգատաստանագիրքն՝ խոհական մտօք ի թուին հայոց ՈՂԳ»<sup>49</sup>: Նույնն է գրում նաև Հ. Մատթեոս վ. Մաղաթ-Քեոփիլյանցը 1839 թ.<sup>50</sup>, Այնուհետև, Ղևոնդ Ալիշանը երկու-երեք հոդված<sup>51</sup> նվիրեց Վենետիկի մատենադարանի № 1237 ձեռագրին, որը Մխիթար Գոշր Դատաստանագրքի հնագույն գրչագրերից մեկն է, և փորձում էր հաստատել, որ այդ ձեռագիրը անձամբ Մխիթար Գոշրի ձեռքով գրված բուն օրինակն է: Այս տեսակետը հերքեցին, նախ Վ. Բաստամյանցը<sup>52</sup>, ապա Հ. Ոսկյանը<sup>53</sup>, Վ. Հացունին<sup>54</sup> և այլք: Սակայն սխառ է նշել, որ մինչև Վ. Բաստամյանցը ոչ ոք հատկապես չի քննել Դատաստանագրքի ստեղծման թվականի հարցը և չի հաստատել իր տեսակետը: Առաջին տեսակետի հիմքը, հավանաբար, Դատաստանագրքի նախագրովից Մխիթարի կցած հիշատակարանի հետևյալ հատվածն է. «Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղև ի թուականութեանն Հայոց ՈՂԳ» (=1184 — ի. թ.): Բայց, ինչպես կտեսնենք ստորև, նույն այս վկայութիւնից Վ. Բաստամյանցը և ուրիշներ այլ եզրակացութեան են հանգել: Վ. Բաստամյանցը Դատաստանագրքի իր հրատարակութեանը կցած ընդարձակ ու արժեքավոր առաջաբանում այս հարցի մա-

<sup>49</sup> «Պատմութիւն Հայոց», հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 96:

<sup>50</sup> «Կենսագրութիւն երեւելի արանց», հ. Ա, Վենետիկ, 1839, էջ 815:

<sup>51</sup> «Մարաշու վանքին Դատաստանագիրքը», «Բազմավէպ», 1848, էջ 40—44. «Յաղագս իսկագիր և նախագաղափար օրինակի գրոցն Դատաստանի Մխիթարայ Գոշր», անդ, էջ 117—122. «Ձեռագիր Մխիթարայ Գոշր», անդ, էջ 154—155:

<sup>52</sup> Տե՛ս Դատաստանագրքի «Յառաջաբանութիւն», էջ 111—112:

<sup>53</sup> Մխիթար Գոշ, «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 548—564, 1926, էջ 25—35, 129—137, կա նույնի առանձին հրատարակութիւնը:

<sup>54</sup> «Դատաստանագիրք Մխիթար Գոշրի և հնագույն օրինակները» «Բազմավէպ», 1942, էջ 4—9: Սփյուռքահայ վերջին հեղինակը, որ անդրադարձել է այս հարցին, որքան մեզ հայտնի է, հ. Վ. Հովհաննիսյանն է. տե՛ս «Մխիթար Գոշր Ս. Ղազարու թիվ 1237 ձեռագիրը և 225 կանոնը», «Բազմավէպ», 1960, էջ 266—273:

սին գրում է. Մխիթարը «որոշապէս ասում է թէ սկսել է իւր մեծ գործը հայկական Ուր (633) թուականին որ հաւասար է 1184 թ.: Այդ ժամանակ նա աւարտել է միայն Նախադրութիւնը, և շիմանալով թէ ե՞րբ կ'յաջողի աւարտել բոլոր Դատաստանագիրքը՝ նա ասում է. «Բայց գծագրութիւն յիշատակիս (Յիշատակարան) ի Նախադրութիւնս գրոցս դատաստանի եղեւ, զի կատարած սորա ի ձեռս մեր միանգամայն ոչ է... Եւ արդ՝ որքան է կար ի գործ անկանիմք հիւսել զկնի գիրս դատաստանի»: Այս խոսքերից պարզ երևում է որ Մխիթարը գրել է իւր Դատաստանագիրքը ոչ թէ կանխապէս ժողովելով և պատրաստելով բոլոր աղբիւրները և նիւթերը և ապա ամբողջութիւն տալով նոցա միանգամից, այլ որոշելով յօրինել մի դատաստանագիրք՝ նա գրել է նախ իւր Նախադրութիւնը ամբողջապէս, իսկ Դատաստանագիրքը կազմել է յետոյ՝ ժողովելով հետզհետէ ձեռքին ընկած նիւթերը: Այս հաստատվում է և նորանով որ՝ մինչդեռ Նախադրութիւնը ունի կանոնաւոր շարայարութիւն և ամփոփութիւն, Դատաստանագիրքը թէպէտ և բաժանուած է երկու գլխաւոր մասի՝ Եկեղեցական և Աշխարհական, բայց շունչ կանոնաւոր դասաւորութիւն... Իսկ գալով թուականին թէ երբ աւարտեց Գօշը իւր Դատաստանագիրքը՝ այդ չէ երևում ոչ Յիշատակարանից և ոչ Դատաստանագրքից, բայց որովհետեւ հաստատ կերպով յայտնի է որ՝ նա վախճանուեցաւ 1213 թուին, ուրեմն այդ միջոցներին նա պէտք է աւարտած լինէր իւր աշխատասիրութիւնը: Սակայն՝ նաչելով Դատաստանագրքի ներկայ դրութեան վերայ, որոյ մէջ ոչ Առաջին մասն և ոչ Երկրորդ մասն չունին մի ամփոփ ամբողջութիւն և վերջաւորութիւն, ես կարծում եմ որ՝ այդ Դատաստանագիրքը չէ բոլորովին վերջացրած, և Մխիթարը հարստացնում էր նորան մինչև իւր մահը գրեթէ 25—30 տարու ընթացքում» (էջ 100—101, տե՛ս նաև էջ 111—112): Վ. Բաստամյանցի այս տեսակետը, որ թեև ճիշտ չէ, ինչպէս կտեսնենք ստորև, ընդունվեց ուսումնասիրողների կողմից<sup>55</sup>, հավանաբար այն պատճառով, որ արտաքուստ համոզիչ են թվում նրա փաստարկները:

Դատաստանագրքի հորինման թվականի վերաբերյալ Դատաստանագրքի տվյալները բաժանվում են երկու խմբի: Մի խմբի տվյալները վկայում են, որ Դատաստանագրքի շարադրանքը սկսվել է 1184 թ., տվյալների մյուս խումբը հաստատում է, որ Մխիթար Գոշը նույն թվականին էլ ավարտել է իր շարադրանքը: Վ. Բաստամյանցը և նրան հետևողները ուշադրութիւն են դարձրել միայն առաջին խմբի տվյալների վրա և չեն նկատել կամ անտեսել են տրվյալների երկրորդ խումբը: Որ Դատաստանագրքի շարադրանքը սկսվել է 1184 թ., ստույգ է և անվիճելի, ուստի այս խմբի փաստերի մեջբերումը ավելորդ է թվում: Ավելի ուշագրավ են երկրորդ խմբի փաստերը, որոնցից կվկայակոչենք երկու-երեք վկայութիւն միայն<sup>56</sup>: Նախադրութիւն մեջ Մխիթար Գոշը մի քանի անգամ գրում է. «Բայց գիտելի է, զի ոչ միանգամայն պարու-

<sup>55</sup> Տե՛ս Աս. Նահնգաբոյանց, Զաքարյան Երկայնաբազուկ տոհմի ծագումը, Շողակաթ, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 82: Խ. Սամուելյան, Հին հայոց իրավունքի պատմութիւն, հ. 1, Երևան, 1939, էջ 76: Մ. Արեղյան, Հայոց հին գրականութիւնի պատմութիւն, հ. 11, Երևան, 1946, էջ 150: Զ. Անտոյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 7, Երևան, 1946, էջ 370 (հենվում է «Շողակաթի» վրա): Ս. Պողոսյան, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. 2, Երևան, 1965, էջ 170 և այլն:

<sup>56</sup> Տե՛ս Խ. Բոռոսյան, Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ կապված մի քանի հարցերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4, էջ 149—170:

նակեալ այժմ բաւանդակի գիրքս դատաստանի, զի կանոնական ունի գաւրութիւն, որպէս ասացեալ է յառաջագոյն» (նույնը Բ խմբագրութիւնում. «Բայց պարտ է գիտել, զի ոչ թէ այս միայն է զիրս դատաստանի զոր այժմս գրեմք»), կամ՝ «զի այժմ սկիզբն սորա եղև» (Բ խմբագրութիւն. «զի այժմ ի մէնջ սկիզբն սորա եղև»), կամ՝ «բայ ցուցելոցս յնգանակի լիցի եւ այս ձեռնարկութիւն տառի, եթէ ի մէնջ եւ ոչ ի միում ժամանակի, եթէ ի բազմաց եւ յայլ եւ այլ եւս ժամանակս...» (Բ խմբագրութիւն. «Ըստ սմին օրինակի այս գիրք որ ի մէնջ սկսեալ եղև...»): Վերջապես, Նախագրութիւնը կցած իր հիշատակարանում Մխիթարը գրում է. «Բայց գծագրութիւն յիշատակիս ի Նախագրութիւն գրոցս դատաստանի եղև, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն: Եւ արդ, որքան է կար ի գործ անկանիմք հիսել զկնի գիրս դատաստանի»: Մխիթարի այս վկայութիւնները իմաստը ճիշտ չի բնկալվել կամ ճիշտ չի բացատրվել: Վ. Բաստամյանցը (Յառաջաբանութիւն, էջ 101) և նրան հետևողները, բերված քաղվածքներից և, մանավանդ, վերջին մեջբերումից եզրակացնում են, թէ 1184 թ. Մխիթարը գրել էր միայն Նախագրութիւնը և այդ թվականին Դատաստանագրքի ավարտի մասին խոսք լինել չի կարող, որովհետև հեգինակն էլ չգիտեր, թէ երբ է ավարտելու Դատաստանագիրքը: Մխիթարը ոչ թէ չգիտեր, թէ երբ է ավարտելու Դատաստանագիրքը, այլ հաստատ գիտեր, որ երբեք չի ավարտելու այն ոչ ինքը և ոչ էլ իրենից հետո որեւէ մեկը, որովհետև ըստ նրա՝ Դատաստանագիրքն առհասարակ ավարտվող գործ չէ. կյանքի զարգացմանը, դատական փորձի հարստացմանը զուգարնթաց, ըստ մեր իրավագետի, այն անընդհատ պետք է հարստանա և լրացվի: Բայց սա բնավ ապացույց չէ այն բանի, որ Դատաստանագիրքը տվյալ ժամանակում՝ 1184 թ. մի ամփոփ ամբողջութիւն չէր, ավարտված չէր (պայմանականորեն): Մխիթարը գրում է. «Բայց գիտելի է, զի ոչ միանգամայն պարունակեալ այժմ բաւանդակի գիրքս դատաստանի, զի կանոնական ունի դաւրութիւն, որպէս ասացեալ է յառաջագոյն: Զի զոր արիւնակ ոչ միանգամ եղաւ կանոնք, եւ ոչ ի միում ժամանակի, եւ ոչ ի միողէ, այլ առ սակաւ սակաւ, եւ ի բազում ժամանակս, եւ ի բազմաց: Զի նախ առաքելականն եղաւ, եւ ապա ի Նիկիայ, եւ նախ քան ղնա այլք, և ապա յայլսն ժողով, եւ ի զանազան ժամանակս, եւ ի բազում հարց: Այսպէս ի դէպ է լինել գրոցս դատաստանի: Զի այժմ սկիզբն սորա եղև եւ առ սակաւ սակաւ ի դէպ է աճել ի զանազան ժամանակս եւ այլ եւս կարգել ի բազմաց, եւ այդպէս գալ ի կատարումն ամենատես գիտութեամբ: Քանզի հրաման է կանոնական՝ երկիցս ի տարւոջն ժողով լինել եւ զիրս պատահման սխալանաց աշխարհի քննել եւ կարգել կանոնս եւ ապաշխարութիւնս: Ըստ այսմ պատշաճ է լինել եւ դատաստանիս իրաց, զի որքան նորոգ պատահի իրս, զայն եւս քննել եւ կարգել ի գիրս դատաստանի, զկնի զիրաւունս առնելոյ եւ տեսանելոյ: Եթէ որ միտ գիցէ՝ գտցէ զամենայն իսկ զմատենաս առ սակաւ սակաւ եկեալ ի կատարումն եւ յայլ եւ այլ ժամանակս, եթէ ի միողէ և եթէ ի բազմաց, որպէս Գիրք Արարածոցն ի Մովսիսէ ոչ ի միասին զրեցան եւ ոչ ի միում ժամանակի: Նոյնպէս եւ այլ մարգարէութիւնքն... Ըստ այսմ արիւնակի եւ Աւետարանքն գրեցան ի շորից աւետարանչացն եւ յայլ եւ այլ ժամանակս. նմանապէս շորեքտասան թուղթքն առաքելոյն Պաւղոսի, բազում եւ այլ եւս մատենք ի վարդապետաց եւ ի հարց: Ըստ ցուցելոցս յնգանակի լիցի եւ այս ձեռնարկութիւն տառի, եթէ ի մէնջ եւ ոչ ի միում ժամանակի, եթէ ի բազմաց

եւ յայլ եւ այլ եւս ժամանակս...» (Նախադրութիւն, Ժ): Մխիթարի պատկերացմամբ, ուրեմն, դատաստանագիրք զրելլը մի երկարատե, շարունակական, բայց և շավարտվող ու անվախճան պրոցես է: Այդ պրոցեսի սկիզբը ոչ թե Դատաստանագրքի սկիզբն է, այլ Դատաստանագիրքն ամբողջութիւնամբ է սկիզբ: Այդ պրոցեսն սկսվում է ոչ թե Դատաստանագիրք զրելլու ձեռնարկումով, այլ Դատաստանագիրքն ինչ-որ մի կետում պայմանականորեն ավարտի հասցնելուց հետո: Քանի դեռ Դատաստանագիրքը պայմանականորեն ավարտված չէ, քանի դեռ տվյալ ժամանակահատվածում հեղինակը չի արել այն ամենը, ինչ հնարավոր է համարել և, հետևապէս, Դատաստանագիրքը դեռ շրջանառութիւն մեջ չէ, այդ պրոցեսը չի կարող սկսվել: Մխիթարի խոսքերը վկայում են, որ այդ պրոցեսն է սկսվել: Կանոնագրքի և այլ գրքերի հետ Մխիթարի կատարած համեմատութիւններն էլ այդ են հաստատում և միայն այդ կերպ են իմաստավորվում: Կանոնագրքի սկիզբը զրվեց ոչ թե առաջին կանոնախմբի առաջին կանոնը զրվելիս, այլ առաջին կանոնախումբը կամ կանոնախմբերը զրվելուց հետո: «Զի այժմ ի մէնջ սկիզբն սորա եղև» չի նշանակում, թե Դատաստանագիրքը գրել սկսվեց, նախադրութիւն կամ Դատաստանագրքի առաջին հոդվածի սկիզբը զրվեց, այլ նշանակում է, որ Դատաստանագրքի, որպէս ամբողջութիւն, օրենսդիրք ունենալու սկիզբը զրվեց: Եվ որովհետեւ Մխիթարի համոզմամբ Դատաստանագիրքը ավարտվող գործ չէ, այն անընդհատ պետք է աճի, լրացվի, շարունակվի, հենց այդ պատճառով է, որ նա իր հայտնի հիշատակարանը կցել է Նախադրութիւնը («Բայց գծագրութիւն յիշատակիս ի նախադրութիւն զրոցս Դատաստանի եղև, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է») և ոչ Դատաստանագրքի վերջին, ինչպէս պետք է լիներ ըստ սովորութիւն, որպէսզի «չփակի» Դատաստանագիրքը, հնարավորութիւն տա լրացնելու «այլոց, որք կամին զրել և յաւելու»:

Վերը վկայակոչեցինք Մխիթարի նամակը ուղղված Գրիգոր Տղային<sup>57</sup>, Այժմ ուշադրութիւն դարձնենք այդ նամակի վրա սույն հարցի տեսանկյունից: Մխիթարը գրում է. «...զհարկ հոգևոր հրամանի նուաստս յամենայնի ամենայնի Մխիթար ընկալայ, զոր վասն զրոցս էր դատաստանի ի ձեռն եղբար եկելոյ ի ձէնջ... Այլ փութացայ և անվեհեր կատարել զայս գործ հոգևոր ըստ իմում կարի խոշոր նիւթով և գրով... ընդ միտ ածելով և զայս, թէ հաճելի ձեզ լիցի՝ դիրին է փոխել ի նիւթ մագաղաթեայ զըշաւ ճարտարաւ, ասլա թէ ոչ՝ բաւական է և մեզ յաշխատութիւնս սնուտիս և այս կորուստ նիւթոյ: Աղաչեմ պարապմամբ և մտադիր ընթերցմամբ քննել զախտսժէտ մտաց իմոց զերկսդ, զի և ես միշտ ընդ կարծիք քամահանաց լինելով և հալածեալ ի խնդրողէն զդատաստանացդ զիրք՝ փութով և տառապանաւք գծեալ յանգեցի... Եւ եթէ... անաւզուտ յեկեղեցի իցէ... հրոյ տացես ճարակ... թէպէտ և մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալան»: Նամակից ակնհայտ է, որ այն գրելու պահին Մխիթարը Դատաստանագրքից մի օրինակ ուներ իր համար, մի օրինակ էլ դրանից արտագրելով ուղարկում է կաթողիկոսին: Արդ, ե՞րբ է գրվել նամակը: Գրիգոր Տղան մահացել է 1193 թ., ուրեմն, նամակը գրվել է ամենաուշը 1193 թ.: Նշանակում է, ամենաուշը 1193 թ. Դատաստանագիրքն արդեն ավարտված էր: Միայն այս փաստն արդեն բավական է, որ հերքվի

<sup>57</sup> Հ. Ոսկյանի կարծիքով նամակն ուղղված էր Աղվանից Ստեփանոս կաթողիկոսին. տե՛ս «Մատենագրական քննութիւններ», Վիեննա, 1926, էջ 147, 148, 154, ծնթղթ. 2:

Վ. Բաստամյանցի տեսակետը: Սակայն նամակից երևում է նաև, որ 1193 թ. առաջ արդեն Դատաստանագիրքը ավարտված էր, որովհետև վարդապետները այն կարգացել ու հավանել էին, որի համար, անշուշտ, ժամանակ էր պետք: Բացի դրանից, շարադրանքն սկսելուց հետո Մխիթարը շուտով վերջացրել է այն («զգատաստանացո գիրք փութով և տառապանաւք գծեալ յանդեցի»):

Այս բոլորից բացի կա Մխիթարի ուղղակի վկայութիւնն այն մասին, որ Դատաստանագրքի շարադրանքն ավարտվել է 1184 թ.: Ահա այն. «Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հաւր եւ Հոգւոյն, որ ետ զգաղարումն աստանոր տալ գրոցս դատաստանի, զի թէև յառաջագոյն ասացաք, գրելով գոսկաւ յիշատակարան, եթէ աւարտումն սորա ոչ է, սակայն այժմ մեք հանգուցանել կամեցաք գրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց, որք կամին գրել եւ յաւելու: Եւ թէպէտ յամի, յորում սկսաք, գրեցաք զեղեալ շափս դատաստանի, սակայն յաղագս հալածանաց, որ եհաս մեզ, ընտանի և ոչ աւտար, յապաղեաց գրել զյիշատակս զայստօրիկ»: Այս հիշատակարանը պահպանվել է Վենետիկի և Զմմառի ձեռագրերում և զրված է Դատաստանագրքի վերջում, հետևապէս «զեղեալ շափս դատաստանի» խոսքերը վերաբերում են Դատաստանագրքի այն տեսքին ու ծավալին, որ ներկայացնում են այդ ձեռագրերը: Նշված ձեռագրերում Դատաստանագիրքը կազմված է նախագրութիւնից և Պ51 հոդվածից (Ա խմբագրութիւն): Նշանակում է՝ Դատաստանագիրքը այդ ծավալով 1184 թ. ավարտված էր<sup>58</sup>: Այդ են հաստատում նաև մատենագիտական որոշ ցանկերի վկայութիւնները:

<sup>58</sup> Այս հիշատակարանի հիման վրա Ալիշանը ևս գրում է. «Կարծածէն՝ շուտ հեղինակն Դատաստանագիրքը գրել կամ շինել սկսած տարին՝ կրքցեր է և աւարտել և ի վերջն յարել այս Յիշատակարանս» (Հայաստանում, Վենետիկ, 1901, էջ 408, մտքոր. 1): Վենետիկյան Մխիթարյանները, այդ թվում և Ալիշանը, իրենց № 1237 ձեռագիրը Մխիթար Գոշի ինքնագիր համարելիս, ինչպէս վկայում է Վ. Բաստամյանցը (Յառաջաբանութիւն, էջ 111—112), հիմնվել են նաև այս հիշատակարանի վրա: Սակայն Վ. Բաստամյանցը ընդհանրապես կասկածի տակ է առնում այդ հիշատակարանի վավերականութիւնը. «Բայց նախ՝ մի այսպէսի Յիշատակարան չկայ ոչ էջիսմանի և ոչ Վիեննայի օրինակների մեջ, երկրորդ՝ դժուար է անորոշ խօսքերս՝ քէպէտ յամի յորում սկսաք գրեցաք զեղեալ շափս դատաստանի վերաբերել ամբողջ Դատաստանագրքի աւարտման, մանաւանդ հետևել տողերի մէջ ակնարկած հալածանքները պիտի համարենք այն նեղութիւնները, որը կրեց նա մասնատակարանից Գանձակում, ինչպէս յիշում է Կիրակոսը, իսկ դոքա պատահեցան Դատաստանագիրքը սկսելուց առաջ. և երրորդը՝ այդ Յիշատակարանը շուտի թուական, ուստի յայտնի չէ թէ՛ ե՞րբ է գրել այդ տողերը Մխիթարը» (Յառաջաբանութիւն, էջ 112): Նախ, որ այս հիշատակարանը չկա էջմիածնի (= Բաստամյանցի հրատարակած ձեռագրին, մեր Մատենագրարանի № 488) և Վիեննայի (= էջմիածնի ձեռագրին) օրինակներում, ոչ զարմանալի է և ոչ էլ փաստ հօգուտ գրա անվավերականութիւն: Վ. Բաստամյանցի նշած ձեռագրերը ներկայացնում են Բ խմբագրութիւնը. Դատաստանագրքի բովանդակութեան, էութեան համար այդ հիշատակարանը որևէ նշանակութիւն չունի և խմբագիրը կամ խմբագիրները կարող էին դուրս թողնել: Հիշատակարանը չկա Ա խմբագրութեան մյուս ձեռագրերում ևս (ունեն միայն Վենետիկի և Զմմառի ձեռագրերը), դարձյալ զարմանալու չէ, որովհետև այն պատկանել է հեղինակային օրինակին և մյուսներից կարող էր դուրս մնալ, թերևս, հեղինակի իսկ ցանկութեամբ և այլն: Վերջապէս, մեր ձեռագրերի աշխարհում շատ ու շատ են զեպքերը, երբ գրիչները բաց են թողել հեղինակային այս կարգի հիշատակարանները: Արևիկը, ձեպէպէտ յամի յորում սկսաք գրեցաք զեղեալ շափս դատաստանի» խոսքերը, շատ պարզ են և միայն զարմանալ կարելի է, որ Վ. Բաստամյանցը դրանք համարում է անորոշ և դժվար վերաբերելի ամբողջ Դատաստանագրքի ավարտման: Ավելի որոշ ու պարզ դժվար թե կարելի լիներ ասել այն, ինչ ասել է Մխիթարը. թեպետ այն տարում, երբ (որում) սկսեցինք, գրեցինք Դատաստանագիրքը ներկա (զրված-տրված) շափով... Դատաստանագրքի զրված-տրված շափը, բնականաբար այն ծավալն է, որ ունի Դատաստանագիրքը մինչև հիշատակա-

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը ցարդ ունեցել է մի հրատարակութիւն, որը լույս է տեսել 1880 թ.<sup>59</sup> Վահան Բատամյանցի շանքերով: Հրատարակիչը ընդարին կցել է ընդարձակ ու արժեքավոր առաջաբան և իրավա-

բանը՝ այն է նախադրութիւնը և 251 հոդված, ուստի Դատաստանագիրքը այս շափով ու ծավալով 1184 թ. կար, բայց դա Դատաստանագրքի հենց այն շափն ու ծավալն է, որով հասել է մեկ ու հայտնի է մեզ: Բացի դրանից, Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հայածանքները Մխիթարի նկատմամբ սկսվել են ոչ թե Դատաստանագրքի սկիզբուց առաջ, այլ հետո, ինչպես ակնհայտ է այս հիշատակարանից և, մանավանդ, Մխիթարի նամակից հայոց կաթողիկոսին. «և հալածեալ ի խնդրողէն զգատաստանաց գիրք՝ փութով և տառապանաւք դժեալ յանգեցի»: Համաձայն իր այն համոզման, որ Դատաստանագրքին ընդհանրապես ավարտվող գործ չէ, Մխիթարը մտադրութիւն է ունեցել, 1184 թ. առկա ծավալին հասնելուց հետո էլ, շարունակաբար լրացնել Դատաստանագիրքը, սակայն հալածանքների պատճառով վերջակետ է դրել: Վերջապես երրորդ, հիշատակարանն, իրոք, շունի թվական, բայց կարևորը այն չէ, թե երբ է գրել Մխիթարն այդ տողերը, այլ այն, թե ինչ է գրել այդ տողերում: Քանի որ այդ տողերը կան Ջմմատի ձեռագրում, ուստի կարող ենք ստուգապես սասել, որ գրվել են 1193 թ. առաջ: Սակայն, երբ էլ գրված լինեն այդ տողերը, Մխիթարը, բնական է գիտեր, թե երբ է ավարտվել իր Դատաստանագիրքը, և եթե նա ասում է, որ Դատաստանագրքի սկիզբն ու ավարտը եղել են նույն տարում, ապա ոչ մի հիմք չկա շճավատալու հեղինակին: Մխիթարի այս հիշատակարանի հարազատութիւնն ու վավերականութիւնը ոչ մի կասկած չին հարուցում, որովհետև լիովին համապատասխանում ու հաստատվում են մի շարք այլ տվյալներով՝ Դատաստանագրքում եղած Մխիթարի հիշատակարաններով ու այլ վկայութիւններով, նրա նամակով հայոց կաթողիկոսին, Մխիթարի հիշատակարանով, որ կցված է Երեմիայի մարգարեութան նրա մեկնութեանը, Կիրակոս Գանձակեցու վկայութիւններով և այլն: Վ. Բատամյանցի թերահավատութիւնը հետվանք է, թերևս, նրա այն համոզման, որ 1184 թ. գրվել է միայն նախադրութիւնը, իսկ Դատաստանագիրքը՝ աստիճանաբար մինչև հեղինակի մահը: Տեսանք, որ այդպես չէ: Սակայն, անկախ գրանից, իրոք, կարող է շատ էլ հավանական շթվալ, որ ծավալով այդքան մեծ, արժեքով այդքան բարձր, ըստ էութեան այդքան բարդ ու պատասխանատու, գործնական-գիտական-քաղաքական մեծամեծ դժվարութիւնների հաղթահարման հետ կապված մի գործ, ինչպիսին մեր Դատաստանագիրքն է, գրվեր-ավարտվեր մեկ տարում: Սակայն, այս տարակուսանքն ևս վերանում է մի շարք տվյալներով հաստատվող այն պարզ իրողութեամբ, որ Դատաստանագիրքը կազմելու համար անհրաժեշտ նախապատրաստական ամբողջ աշխատանքը Մխիթարը կատարել է մինչև 1184 թ. և այդ թվականին միայն ի մի է քերել ու թղթին հանձնել կուտակված նյութը:

Քննվող հիշատակարանը կասկածի տակ է առել նաև Հ. Ոսկյանը: Վերը գրվածը ամբողջովին ուժի մեջ թողնելով նաև Հ. Ոսկյանի կասկածի կապակցութեամբ, հատկապես այդ առիթով նշենք հետևյալը. «Փառք Փրկչին մերոյ» բառերով սկսվող Մխիթարի հիշատակարանը, ինչպես նշել ենք, կա միայն Վենետիկի և Ջմմատի ձեռագրերում, ըստ որում վերջին ձեռագրում կա նաև հայոց կաթողիկոսին ուղղված Մխիթարի նամակը, որը հիշատակարանի անմիջական յարժանակութիւնն է և որը չկա Վենետիկի ձեռագրում: Արդ, Վենետիկի ձեռագրի մասին խոսելիս Հ. Ոսկյանը գրում է. «Այս յիշատակարանին հարազատութիւնն երկբայական կը թուի» (Մատենադարանի քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 142): Իսկ Ջմմատի ձեռագրի մասին խոսելիս, բերելով հիշատակարանն ու նամակը ամբողջապես, նա գրում է. «Հարազատութեան անհերքելի կնիք մը ունին» (անդ, էջ 154):

Կարտը նշված հիշատակարանը ու շրջանի կեղծիք (Machwerk) է համարում, որի միտումն է եղել, իբր, որքան հնարավոր է, հին ցույց տալ Վենետիկի ձեռագիրը (Grundriß der Geschichte des armenischen Rechtes, Sonderabdruck aus der Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX-Band, Stuttgart, 1906, էջ 57): Բողոքովին անհիմն է և՛ կասկածը, և՛ զիտտարկը, որովհետև առանց այդ հիշատակարանի էլ ստույգ է ու բոլորի կողմից ընդունված, որ ձեռագիրը շատ հին է:

<sup>59</sup> Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, իրաւարանական հետազոտութիւնք հանդերձ ծանոթութեամբք, Վահան ծ. վարդապետի Բատամյանց, միաբանի սրբոյ էջմիածնի ևս վանա-

գիտական, պատմա-բանասիրական ու բնագրագիտական բազմաթիվ հմտա-  
լից ժանրագրություններ: Ժամանակի հայկական, ռուսական ու եվրոպական  
մամուլն ու գիտական շրջանակները<sup>60</sup> շատ բարձր են գնահատել Վ. Բաստամ-  
յանցի գործը, որն իր արժեքը չի կորցրել նաև այսօր: Բավական է նշել, որ  
հայ իրավունքի պատմագիտության հիմքը դրել է Վ. Բաստամյանցը և դրել է  
Մխիթար Գոշի Դատաստանագրքի բնագրի հրատարակությունը: Վ. Բաստամ-  
յանցի գործը ժամանակին միակն էր իր տեսակի մեջ և եզակիներից է նաև  
այսօր: Հայկական միջնադարյան բնագրերի հրատարակությունները մինչև  
Վ. Բաստամյանցը դժվար թե կարելի լինի համարել գիտական մեր օրերի շա-  
փանիշներով: Հրատարակիչները, որպես կանոն, բնագիրը հրատարակել են մեկ  
ձեռագրի հիման վրա և եթե իրենց տրամադրության տակ ունեցել են նաև այլ  
ձեռագրեր ու բնագրի մեջ փոփոխություն են մտցրել, ապա սովորաբար չեն  
նշել համարը և այլն այն ձեռագրի, որի ընթերցումը վերցրել են, և այլն: Իրա-  
վամբ կարելի է ասել, որ Վ. Բաստամյանցի հրատարակած Մխիթար Գոշի  
Դատաստանագիրքը միջնադարյան հայկական որևէ բնագրի առաջին գիտա-  
կան համահավաք հրատարակությունն է: Վ. Բաստամյանցը իր գործը կատա-  
րել է պատասխանատվության բարձր զգացումով, մեծ բարեխղճությամբ ու  
զովելի բժախնդրությամբ: Եվ, որպես արդյունք, Վ. Բաստամյանցի գործը մտել  
է հայագիտական մնայուն հրատարակությունների գանձարանը: Վ. Բաստամ-  
յանցի բնագրագիտական աշխատանքում համարյա չկան թերություններ,  
եղածները երկրորդական են, որոնց այստեղ չարժե իսկ անդրադառնալ (դրան-  
ցից յուրաքանչյուրը հիշատակված է իր տեղում): Սակայն կա սկզբունքային  
վրիպում հիմնական ու գլխավոր մի հարցում, որի քննությանը և նվիրված  
են հետագա էջերը:

Բնագիրը կազմելու հանգամանքների մասին Վ. Բաստամյանցը գրում է.  
«Մեր մայր Աթոռոյ ... Մատենադարանում ես գտայ ձեռագիր հինգ օրինակ  
Գօշ Մխիթարի Դատաստանագրքի հետևյալ համարներով— № № 488, 489,  
490, 492 և 749. բացի սորանից՝ էջմիածնի Սինօղում գործածվում է ի վաղուց  
անտի... մի... կանոնագիրք, որոյ մէջ կայ և Մխիթարի Դատաստանագիրքը:  
Բաղդաստելով այս բոլոր օրինակներն՝ ես տեսայ որ սոցա մէջ ընտրելագոյնն  
էր № 492. սորա... յիշատակարանից... պարզ երևում է որ սոյն օրինակը  
զրված է Հայոց ՉԽԴ (744) թուին, այսինքն Փրկչականի 1295 թուին, ուրեմն

հօր ս. Գայիսիայ վանուց, ի Վաղարշապատ, ի տպարանի սրբոյ կաթողիկէ էջմիածնի,  
1880—ՌՅԼ. Գրքի տիտղոսաթերթում թեև նշված է 1880 թվականը, բայց իրականում այն լույս-  
է տեսել 1884 թ., ինչպես հաղորդում է ժամանակի մամուլը. տե՛ս, օրինակ. «Юридическое  
обозрение», т. XI, 1884, № 187. էջ 213—217. «К этому изданию Бастамянц приступил  
в 1880 г., но его смерть приостановила издание. Только летом текущего года вышел в  
свет...», նաև նշված հրատարակություն, էջ 27, ծանոթություն տպարանի. «Տպագրութիւն Յա-  
սազարանութեանս սկսեալ յայսմ թերթէ, որպէս եւ տպագրութիւն բնագրին Դատաստանագրոց  
Գօշ Մխիթարայ սկսեալ ի 25-րդ թերթէ, լինելով յետ մահուանն Վահան վարդապետի Բաստա-  
մանց...»: Վերջապես, ինքը՝ Վ. Բաստամյանցը, ղեկ 1881 թ. ապրիլին, գրում է. «Մենք ար-  
դեն սկսեցինք Դատաստանագրքի տպագրութիւնը... որ յոյս ունինք աւարտել մինչև 1881 թ.  
այսիս ամիսը» — «Փորձ», 1881, № 4, էջ 62, ծանոթգր. № 2:

<sup>60</sup> Տե՛ս, օրինակ, «Юридическое обозрение», т: XI, 1884, № 187, № 191, 1885,  
№ 226 և այլն. Քրիզդիի Մյունլիների գրախոսականը ի Wiener Zeitschrift für die Kunde  
des Morgenlandes, 5. Band, Wien, 1891, էջ 52—58. Josef Karst, Grundriß der Ges-  
chichte des armenischen Rechtes, I. und 2., Sonderabdruck aus der Zeitschrift für  
vergleichende Rechtswissenschaft, XIX Band, Stuttgart, 1906, XX Band, Stuttgart,  
1907, մասնավորապես առաջին մասի էջ 56-62, և այլն:

ԽԹ

111 տարի Ռատաստանագրքը սկսելուց յետոյ և միայն 82 տարի Մխիթարի մահից յետոյ... Այս օրինակը գուցէ ամենահին օրինակներից մէկն է կամ զոնեա հնագոյն օրինակից ընդօրինակած ...Միւս օրինակները... շունին յիշատակարաններ, ուստի չէ կարելի որոշել նոցա գրութեան թուականը, բայց սոքա ևս պէտք է բաւականին հին լինին, մանաւանդ № 488, որը շատ տեղ ցեցր ծակծկոտել է... Այս բոլոր ձեռագիր օրինակները կարելի է բաժանել երկու դասակարգի: № № 488, 489, 749 և Սինօզի օրինակները գրեթէ բոլորովին նման են միմեանց, իսկ № № 490 և 492 օրինակները՝ միմեանց, բայց այս երկու իմբի մեջ մեծ տարբերութիւն կայ բառերի և ոճի կողմից, թէպէտ իմաստը գրեթէ միշտ միևնոյն է: Բաց ի սորանից՝ № № 490, 492 և 749 օրինակների մէջ Ռատաստանագրքի յօդուածները բաժանուած են երկու մասն՝ Եկեղեցական և Աշխարհական, իսկ № № 488 և 489 օրինակների մէջ բոլոր յօդուածները խառնած են միասին, և այն շատ անկանոն կերպով: Այլ և № 489 օրինակը շունի ամենեկին Մխիթարի նախադրութիւնը... Ահա այս բոլոր օրինակներից ևս ընտրեցի տպագրութեան համար իբրև լաւագոյն № 492 օրինակը<sup>61</sup>: Եարունակութեան մեջ Վ. Բաստամյանցը հայտնում է, որ № 492 ձեռագիրը էջմիածնի մյուս շրջան ձեռագրերի հետ բաղդատելուց բացի, 1876—1877 թթ. Եվրոպայում ճանապարհորդելիս, Փարիզի Ազգային մանենագարանում, իր օրինակը համեմատել է ևս շրջան ձեռագրի հետ, իսկ վերագարծին դարձյալ երկու ձեռագրի հետ, որոնք այդ միջոցին մուտք էին գործել էջմիածնի մատենադարան, այն է՝ Կարապետ եպիսկոպոսի և Սարգիս Զալալյանցի օրինակների հետ: Փարիզի Ազգային մատենադարանի շրջան ձեռագրից երեքը՝ № 104, № 55 և № 111, ինչպես վկայում է Վ. Բաստամյանցը<sup>62</sup>, ընդօրինակված են Բառնաբաս Սալյանի, էզվարդ Դյուլորիեի և էվարիստ Պրյուզոմի կողմից 1857—1861 թթ.: Սալյանը ընդօրինակել է Վենետիկի № 1237 հայտնի ձեռագրից, իսկ մյուսները՝ Սալյանի ընդօրինակութիւնից: Այնպես որ, այս երեք ձեռագրերը կարելի է համարել մեկ ձեռագիր: Իսկ չորրորդ ձեռագիրը Փարիզի մատենադարանին է նվիրել Լազարյան ճեմարանի հայոց լեզվի ուսուցիչ Ոսկան Հովհաննիսյանը: Ինչպես հաղորդում է Վ. Բաստամյանցը, «այս օրինակը շատ թերի է և նման է էջմիածնի մատենադարանի № 488 օրինակին»<sup>63</sup>: Բացի սրանցից, Վ. Բաստամյանցը օգտվել է նաև Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի մի ձեռագրից, որը «ոչ միայն բառ առ բառ, այլ գրեթէ կէտ առ կէտ»<sup>64</sup> նման է եղել իր № 492 օրինակին և որից լրացրել է № 492 ձեռագրի պակաս տեղերը: Այսպիսով, օգտագործելով տասնմեկ ձեռագիր, ինչպես գրում է աշխատասիրողը. «ես վերականգնեցի, որչափ այդ հնարաւոր էր, մի կատարեալ օրինակ Մխիթարի Ռատաստանագրքի»<sup>65</sup>:

<sup>61</sup> «Յառաջաբանութիւն», էջ 109—110:

<sup>62</sup> Անդ, էջ 111:

<sup>63</sup> Անդ:

<sup>64</sup> Անդ, էջ 112:

<sup>65</sup> Անդ, էջ 114: Այս կապակցութեամբ ն. Սամուելյանը գրում է. «Այդ Ռատաստանագրքի գիտական հրատարակութեան ընդլայնումը որոշ շահով հնացել է և չի կարող բավարարել արդէ գիտական պահանջներին»:

Բանն այն է, որ Վ. Բաստամյանը հրատարակութեան համար վերցրել է իրոք միայն մի ձեռագիր, իր կարծիքով համեմատաբար լրիվ օրինակը, կցելով իբրև ծանոթութիւններ մի քանի այլ ձեռագրերի տարբերութիւնները. մինչդեռ գիտական արժեք կարող է ունենալ այն հրատարակութիւնը, որ կազմվում և խմբագրվում է բոլոր ձեռագրերի համեմատութեամբ— Հին հայ իրավունքի պատմութիւն, հ. 1, Երևան, 1939 թ., էջ 17:

Շփոթութիւն ստեղծելու առիթից խուսափելու համար հարկ ենք համարում այստեղ տալ Վ. Բաստամյանցի օգտագործած ձեռագրերի համարները, ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի համարակալութեան.

հիեր	նորը
488	485
489	209
490	486
492	488
749	657

Կարապետ եպսօ. օրինակ 2593

Բոլոր ձեռագրերը, ինչպես տեսանք, Վ. Բաստամյանցը բաժանել է երկու խմբի՝ № 209<sup>66</sup>, 485, 657<sup>67</sup> և № 486 ու № 488. առաջին երեք ձեռագրերի խմբին միացնելով «Վենետիկ» անվանված Փարիզի ձեռագրերը, Սինոդի և Կարապետ եպիսկոպոսի օրինակները, իսկ վերջին երկուսին՝ Վիեննայի գրչագիրը: Վ. Բաստամյանցի իսկ վկայութեամբ, որ լիովին համապատասխանում է իրականութեան, «այս երկու խմբերի մէջ մեծ տարբերութիւն կա բառերի և ոճի կողմից» և բացի դրանից, մի խմբում Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի՝ եկեղեցական և աշխարհական, իսկ մյուս խմբում հոգևածները «խառնված են իրար և այն շատ անկանոն կերպով»: Մասերի բաժանված խմբում Դատաստանագիրքն ունի ևս երեք հոգևած, որոնք չկան միահար համարակալում. ունեցող խմբում: Ինչպես տեսնում ենք, թեկուզ բնութագրման արտաքին հատկանիշների կողմից, զգալի, նույնիսկ, սկզբունքային տարբերութիւն կա այս երկու խմբերի միջև:

Այս հանգամանքներում, թվում է, բնականորեն հարց պիտի ծագեր՝ ձեռագրախմբերով ներկայացված երկու բնագրերից որն է սկզբնականը, որն է ստեղծվել ավելի առաջ, որը հետո, որն է հեղինակայինը, երկուսն էլ, թե միայն մեկը: Այս հարցերը շատ կարևոր են և որևէ բնագիր հրատարակելիս ամենաառաջնահերթ ու էական հարցերից էլ առաջ դրանք պետք է լուծվեն, խուսափելու համար այնպիսի տհաճ թշուրիմացութիւններից, երբ որևէ հեղինակի գործ վերագրվում է մի ուրիշի և կամ որևէ հեղինակ հանրավի գրկվում է հեղինակային իր արդար իրավունքից: Այդ հարցերը, ցավոք, Վ. Բաստամյանցի առաջ չեն ծագել, իսկ եթե ծագել են, ապա նա լռելյայն լուծել է հօգուտ այն ձեռագրախմբի, ըստ որի Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի: Հրատարակելով երկու մասի բաժանված բնագիրը, Վ. Բաստամյանցը դրանով իսկ սկզբնական ու հեղինակային է համարել հենց այդ բնագիրը:

Հաջորդ հեղինակը, որ հատկապես անդրադարձել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերի ու նրանց խմբավորման հարցին, Հովսեփի (Յոզեֆ) Կարստն է: Դատելով նրա աշխատութեան այն էջերից, որ նվիրված են այս

<sup>66</sup> Այս ձեռագրի մասին Վ. Բաստամյանցը ասում է, թե «չունի ամենևին նախագրութիւնը»: Ձեռագրում նախադրութիւնը կա, սակայն գտնվում է ոչ թե Դատաստանագրքի սկզբում, այլ՝ ձեռագրի տե՛ս թ. 3ա—17բ:

<sup>67</sup> № 657 ձեռագրում Դատաստանագիրքը բաժանված չէ մասերի:

հարցին<sup>68</sup>, Կարստը ձեռագրերը չի տեսել և զրանց փաստական կողմին վերաբերող բոլոր տվյալները, որ հաղորդում է նա, քաղել է Վ. Բաստամյանցից<sup>69</sup>: Այդուհանդերձ, Ն. Կարստը Վ. Բաստամյանցից մի քայլ առաջ է անցել և ձեռագրերի նրա կատարած դասդասումը ավելի խորն է, քան Վ. Բաստամյանցի խմբավորումը: Ն. Կարստը ևս ձեռագրերը բաժանում է երկու գլխավոր խմբի. առաջին գլխավոր խումբ՝ ձեռագրեր № № 486 և 488, որպես բնագրի գլխավոր ներկայացուցիչներ, և երկրորդ գլխավոր խումբ, որն ընդգրկում է մնացած բոլոր ձեռագրերը: Ն. Կարստը գրում է. «Երկու գլխավոր խմբերի բաժանման հիմքը ամենից առաջ ձևական է, հողվածների շարակարգին վերաբերող. առաջին գլխավոր խմբի ձեռագրերում բնագիրը բաժանվում է երկու մասերի կամ գրքերի — առաջին՝ կանոնական կամ եկեղեցախրավական և երկրորդ՝ աշխարհական կամ քաղաքացիական-իրավական, որոնցից յուրաքանչյուրը իր սեփական դիսակարգությունն ունի: Այս խմբում ներկայացված բնագիրը (Version) քննադրվում է (ընդգծումը մերն է — Խ. Ք.), այնքան, որքան, մասնավորապես առարկայական համակարգման ոչ մի հետք դեռ չկա. ընդհակառակը, երկու գլխավոր մասերի ներսում գլուխների շարակարգին ուղղություն տվողը բացառապես այն աղբյուրներն են, որ դրվել են հիմքում անհրաժեշտության չափով: Նյութը վերամշակված ու շարված է իրար հետևից ճիշտ նույն հաջորդականությամբ, որ աստիճանաբար ստացվում է աղբյուրագրություններում եղած հերթականությունից: Կանոնական և աշխարհիկ իրավունքի բաժանման մաքուր ձևական այս հիմքը երկրորդ գլխավոր խմբում բացակայում է: Հակառակ առաջին վերսիայի երկմասնությունը, երկրորդում բնագիրը միմասնյա է, գլուխների անընդհատ շարակարգով: Առաջինի զուտ արտաքին ձևական բաժանման փոխարեն այստեղ հանդես է գալիս, թեկուզ և փորձի ձևով ու իր մոտեցմամբ, իրավական նյութի ներքին առարկայական համակարգումը: Եվ որպես հետևանք այս ձգտման, որով առարկայապես իրար պատկանող հատվածները միավորված են մի ամբողջության մեջ, առաջին վերսիայի գլուխների հերթակարգը այս խմբում լիովին տեղաշարժված է: Դրանով երկրորդ վերսիան առաջինի համեմատությամբ մատնում է պարզորեն իր կրտսերությունը և արդեն խիստ հիշեցնում Սմբատի Դատաստանագիրքը»: Այնուհետև Ն. Կարստը գրում է. «Երկրորդ գլխավոր խումբը դարձյալ բաժանվում է երկու ենթախմբի.

1. Վենետիկի և 209 ձեռագրերի ենթախումբը,

2. 485 (Կարապետ) և Սինոգի ձեռագրերի ենթախումբը...

486—88-ում ներկայացված վերսիայի համեմատությամբ, որը մենք նշանակում ենք A-ով, առաջին ենթախմբի (խմբագրություն B) և երկրորդ ենթախմբի (խմբագրություն C) խմբագրությունները ներկայացնում են հետագայի վերամշակումներ: Վերջին երկուսից հնագույն խմբագրությանը ամենից մոտ կանգնած է B ...»<sup>70</sup>: Այս հարցին նվիրված գլուխը Ն. Կարստը, ի վերջո, եզրափակում է այսպես. «Բանասիրորեն-բնագրագիտորեն (philologisch-

<sup>68</sup> Grundriß, էջ 56-62:

<sup>69</sup> Դա հաստատվում է թեկուզ նրանով, որ Ն. Կարստը ևս կրկնում է ձեռագրերի նկարագրին վերաբերող այն անճշտությունները, որ հաղորդում է Վ. Բաստամյանցը: Այսպես Վ. Բաստամյանցը գրում է, որ Վենետիկի № 1237 ձեռագիրը մագաղաթյա է, նույն է գրում և Ն. Կարստը: Բաստամյանցը գրում է, որ № 209 ձեռագիրը շունի նախադրությունը և որ 749 ձեռագրում Դատաստանագիրքը բաժանված է երկու մասի, նույնը կրկնում է նաև Ն. Կարստը:

<sup>70</sup> Grundriß, էջ 58-60:

textkritisch) նախապատմութիւնը (Vorzug) պետք է տալ A-ին և ճիշտ է վարվել Բաստամյանցը, որ Դատաստանագրքի բնագիրը ըստ այս վերսիայի հրատարակելով, հիմքում դրել է 488 ձեռագիրը»<sup>71</sup>:

Այսպիսով, Ն. Կարստը Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձեռագրերը բաժանում է երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մի վերսիա-խմբագրութիւն: Սա առաջինթաց է Վ. Բաստամյանցի համեմատութեամբ, որովհետև ավելի ճիշտ է արտահայտում իրերի վիճակը: Այս երեք խմբագրութիւն-վերսիայից, ըստ Կարստի, հնագույնը մասերի բաժանվածն է, մյուսները «կրտսեր» են, այսինքն՝ հետագայի վերափոխում-վերամշակում մասերի բաժանված խմբագրութեան: Ըստ Կարստի, ուրեմն, Դատաստանագրքի սկզբնական հեղինակային բնագիրը մասերի բաժանված խմբագրութիւնն է:

Հաջորդ հեղինակը, որ անպայման պետք է նշվի քննվող հարցերի կապակցութեամբ, Ն. Վ. Հացունին է, որի հոդվածը<sup>72</sup> փոքրագույն չափի մեջ մեծ տարողութիւն ապահովելու փայլուն օրինակ է: «Փառք Փրկչին մերոյ...» հիշատակարանի հիման վրա Վ. Հացունին, նախ, հաստատում է, որ Դատաստանագիրը գրվել-ավարտվել է 1184 թ., համոզիչ փաստարկներով ցույց է տալիս, որ Մխիթարի նամակը հասցեագրված է Գրիգոր Տղային, շոշափում է և այլ կարևոր հարցեր, որոնցից յուրաքանչյուրի մասին իր տեղում, այստեղ անդրադառնանք մեզ հետաքրքրող գլխավոր հարցին, որը գլխավոր է նաև Վ. Հացունու հոդվածի համար:

Վ. Հացունին ևս Դատաստանագրքի ձեռագրերը բաժանում է երկու խմբի — խմբագրութեան, զանց առնելով երրորդը՝ համառոտը, որը նրան չի հետաքրքրում: «Ծրկու կարեւոր խմբագրութիւն ունի Մխիթարայ գործը: Առաջնոյն մէջ եկեղեցական և քաղաքական խնդրոց վերաբերեալ կանոնները խառն կը գտնուին... Իսկ երկրորդին մէջ երկու օրէնքները գատուած են իրարմէ... Առաջին խմբագրութիւնն անտիպ կը մնայ, և երկրորդն ի լոյս բնծայեց Վահան Վ. Բաստամեանց՝ 1880-ին: Գօշի վաստակն է այս երկրորդն ալ՝ թէ օտարի, պիտի հետեւեցնենք օրինակաց քննութենէն: Իսկ հրատարակիչը նկատելով հանդերձ այդ երկուութիւնը զանազան օրինակաց մէջ... շուտեց խօսիլ անոնց մէկ կամ երկու ձեռքերէ լինելու մասին»<sup>73</sup>: Նշելով Դատաստանագրքի երեք հնագույն ձեռագրերը՝ Զմմաոփ, Վենետիկի (№ 1237) և մեր Մատենադարանի № 488, Վ. Հացունին գրում է. «Առաջին երկուքը կը ներկայացնեն նախկին խմբագրութիւնները, և վերջինն՝ երկրորդը: Ո՞րն է օրինակացս մէջ երիցագոյնը, և կրնա՞յ մին կամ միւսն հեղինակին սկզբնագիրը լինել»<sup>74</sup>: Վ. Հացունին սկզբնական հեղինակային է համարում Վենետիկ-Զմմաոփ ձեռագրերով ներկայացված խմբագրութիւնը, իսկ երկու մասի բաժանված խմբագրութիւնը՝ հետագայի գործ, թեև ենթադրաբար՝ դարձյալ Մխիթարի: Հացունու բերած ապացույցը վերը նշված հնագույն ձեռագրերի ծագման ժամանակագրական հաջորդականութիւնն է: Ուշագրավ փաստարկ է, որը, սակայն, համոզիչ չի թվացել հետագա ուսումնասիրողներից ոմանց, որովհետև հենց

<sup>71</sup> Անդ, էջ 61:

<sup>72</sup> «Դատաստանագիրք Մխիթար Գոշի և հնագույն օրինակները» «Քաղմավէպ», 1942, էջ 4-9:

<sup>73</sup> Անդ, էջ 4:

<sup>74</sup> Անդ:

վերջերս եռանդուն փորձ արվեց հաստատելու, որ սկզբնական հեղինակայինը երկու մասի բաժանված խմբագրությունն է:

Այսպիսին է, ընդհանուր առմամբ, հարցի պատմությունը, որն արձանագրում է երկու կարծիք, երկու իրարամերժ տեսակետներ.

ա) սկզբնական հեղինակային խմբագրությունը մասերի բաժանված բնագիրն է, մյուսները ստեղծվել են հետագայում,

բ) սկզբնականը մասերի շբաժանված, Վենետիկ-Ջեմառյան ձեռագրերով ներկայացված խմբագրությունն է, մասերի բաժանվածն է ստեղծվել հետագայում:

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենության հանձնարարությամբ, 1961 թ. ձեռնամուխ լինելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի գիտական-բնական բնագիրը հրատարակության պատրաստելու գործին, այս պարագաներում, ի շարս առաջնահերթ լուծում պահանջող այլևայլ հարցերի, նախ պետք է որոշվեր նաև խմբագրությունների ժամանակագրական հաշորդակառության և հեղինակային պատկանելության հարցը: Եվ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկրորդ տեսակետը, ճիշտ իրականում, բայց նվազ հիմնավորված ըստ էության և, մանավանդ, շատ ուշ արտահայտված լինելով, մնացել է որպես Դատաստանագրքի խմբագրությունների հեղինակային հարցի պատմության փաստ, այնինչ առաջին տեսակետը, ոչ-ճիշտ իրականում և շատ ավելի նվազ հիմնավորված ըստ էության, դարձել է կյանքի փաստ, այնու, որ Մխիթար Գոշի անունով հրատարակվել է հենց այդ խմբագրությունը, և ընթերցող հասարակության շրջանակներում վերջինիս շուրջ հարյուրամյա շրջանառությունը նաև ավանդույթամբ արդեն իրական փաստի ուժ է տվել այդ տեսակետին. սակայն, ըստ կարգի:

Էջմիածնի, ապա Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուի հարստացման հետևանքով, Վ. Բաստամյանցի օգտագործած տասներմեկ ձեռագրի փոխարեն մեր տրամագրության տակ կար արդեն շուրջ 45 ձեռագիր: Այս ձեռագրերի մանրակրկիտ համեմատությունը նորից ցույց տվեց ու հաստատեց, որ Մխիթար Գոշի Դատաստանագրքի գրչագրերը բաժանվում են երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը առանձին խմբագրություն է ներկայացնում: Դատաստանագրքի ձեռագրերի դասդասման հատկանիշները կարող են տարբեր լինել ու բազմաթիվ, բայց դրանք բոլորը դարձյալ միավորվում են երկու խմբի մեջ՝ արտաքին-ձևական հատկանիշներ և ներքին-էական հատկանիշներ: Դատաստանագրքի գրչագրերի ստորաբաժանումը ցարդ կատարվել է միայն արտաքին հատկանիշներով և անտեսվել են ներքին հատկանիշները: Քնավ շանտեսելով արտաքին-ձևական հատկանիշները, շեշտը պետք է դնել ներքին-էական հատկանիշների վրա, որովհետև դրանցով է պայմանավորված խմբագրությունների առկայությունը, և արտաքին հատկանիշները, հիմնական կետում, առաջացել են միայն որպես հետևանք ներքին, ըստ էության տարբերակող հատկանիշների: Դատաստանագրքի խմբագրությունների առկայությունը նախ և առաջ դասային տարբեր շահերի արտահայտման արդյունք է և հետո միայն ձևական հատկանիշներով տարբերակվող փաստ: Յուրաքանչյուր օրենսգիրք անպայման արտահայտում, ամրապնդում ու պաշտպանում է այն հասարակական հարաբերությունները, որոնց ծնունդն է, այն պետա-իրավական կարգը, որ սահմանել է իշխող դասակարգը, որովհետև իրավունքը այլ բան չէ, քան իշխող դասակարգի կամքը բարձրացված

օրենքի աստիճանին: Բայց շահագործողական հասարակարգում, այդ թվում և ավատատիրական կարգերում, իշխող դասակարգը երբեք միատարր, միասեռ չի եղել: Ավատատիրական կարգերում իշխող դասակարգը կազմված էր դանազան դասերից, տարբեր խմբերից, որոնք, ընդհանուր դասակարգային շահերից բացի, ունեին նաև իրենց նեղ դասային, խմբային շահերը: Պատմության մեջ միշտ էլ դիտված երևույթ է իշխող դասակարգի տարբեր դասերի, խմբերի պայքարը հանուն իրենց դասային, խմբային շահերի: Եվ այդ պայքարը, դասային այդ տարբեր շահերը արտացոլվել, արտահայտվել են իրավական միևնույն հուշարձանում: Այլ կերպ նույնիսկ դժվար է պատկերացնել: Բախվող շահերի արդյունքը կարող է լինել մի իրավական փաստաթուղթ, որի մեջ այդ տարբեր շահերը արտահայտվում են ըստ դրանք կրողների ուժերի իրական հարաբերության: Իսկ որ Մխիթար Գոշի ժամանակ հայկական հասարակության իշխող դասակարգի երկու դասերի շահերը ինչ-որ կետերում հակադրվում էին, այդ տեսանք վերը և կտեսնենք ստորև: Ուստի խմբագրությունները բաժանող հիմնական, գլխավոր հատկանիշը ամենից առաջ այն տարբերություններն են, որոնցով բնորոշվում է միևնույն իրավահարաբերության կարգավորումը տարբեր ձևագրախմբերում: Այս կարևոր հանգամանքի անտեսումը նախորդ ուսումնասիրողների կողմից, հավանաբար, ոչ այնքան աշատու վերաբերմունքի հետևանք է, որքան ինքնին արդյունք աշխարհայացքի սահմանափակության:

Ասացինք, որ Դատաստանագրքի ձևագրերը բաժանվում են երեք խմբի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին խմբագրություն: Այս խմբագրությունները պայմանականորեն նշանակում ենք Ա, Բ և Գ տառերով: Վերջինը կարելի է կոչել նաև համառոտ խմբագրություն: Արդ, ինչ տարբերություններ կան այս ձևագրախմբերի մեջ, որ թույլ է տալիս դրանք առանձին խմբագրություն անվանելու, և ինչով են բնութագրվում խմբագրությունները:

Ա. խմբագրություն—ձևագրական գլխավոր ներկայացուցիչներն են Զըմմառի հնագույն օրինակը՝ կաթողիկոսին ուղարկվածը կամ սրանից կատարված մի ընդօրինակություն, Վենետիկի № 1237 և № 1738 ձևագրերը: Առաջինը Ալիշանի և այլոց կողմից Մխիթարի ինքնագիր օրինակ համարվածն է, երկրորդը ընդօրինակվել է 1238 թ.<sup>75</sup>: Պետք է նշել նաև մեր Մատենադարանի մի քանի ձևագրեր, որոնք ավելի ուշ շրջանի ընդօրինակություններ են:

Բ խմբագրություն—ձևագրական գլխավոր ներկայացուցիչներն են Մաշտոցի անվան Մատենադարանի № 488 գրչագիրը: Այս խմբի ձևագրերի մեջ թվակիր հնագույն ձևագիրն է, ընդօրինակված 1295 թ.: Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 205 ձևագիրը<sup>76</sup>, որը Վ. Բաստամյանցի վկայությամբ՝ տառ առ տառ համապատասխանում է № 488 ձևագրին: Վ. Բաստամյանցի հրատարակությունը այս ձևագրերն են: Մաշտոցի անվան Մատենադարանում այժմ կան այս խմբին պատկանող մի շարք այլ ձևագրեր ևս, որոնք ուշ շրջանի գրչագրեր են և որոնց մի մասը ընդօրինակված է № 488 ձևագրից:

<sup>75</sup> Տե՛ս Գաբեզի՛ն Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձևագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 930—932:

<sup>76</sup> Տե՛ս հ. Յակովբոս վ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձևագրաց Մատենադարանին Մխիթարանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 257—258: .

Գ խմբագրություն—բաժանվում է ենթախմբերի. ձեռագրերի քանակով ամենամեծ խումբն է. գլխավոր ձեռագրերն են մեր Մատենադարանի № № 485, 657, 2593, 2776, 3291 և այլ ձեռագրեր. թվակիր ամենահին ձեռագիրը, որ հայտնի է ինձ, № 2593-ն է, ընդօրինակված 1303 թ. (Կարապետ Եպիսկոպոսի օրինակը):

Խմբագրությունները բնօրոշոգ արտափին-ձևական հատկանիշներ.

Ա խմբագրություն—կաղմված է նախադրությունից և բուն Դատաստանագրքից<sup>77</sup>. վերջինս ունի 251 հոդված, թվական շարքի անբնորոշատ ու սովորական հաջորդականությամբ: Գիտակ բանասերների կարծիքները լեզվի ու ոճի մասին տարբեր են. բնութագրումների եզրերն են՝ ընտիր և հմուտ—ոչ-կանոնավոր և աղավաղ:

Բ խմբագրություն—կաղմված է նախադրությունից և Դատաստանագրքից, որը բաժանված է երկու մասի՝ Եկեղեցական և Աշխարհական, առաջինը 124, երկրորդը՝ 130 հոդվածով, ընդամենը 254 հոդված. ճշգրիտը, սակայն, 253 թիվն է: Եկեղեցական մասի 124-րդ հոդվածի մասին (Յաղագս դատաստանաց արբեցութեան) Վ. Բաստամյանցը գրում է. «Սոյն ՃԻԴ կանոնը թէպէտ չկայ մեր № 492 և 490 օրինակների մեջ, բայց որովհետև դայ կայ № 488, 489, Սինօդի, Կարապետ եպս. Վենետիկի (ՄԻԴ համարով) օրինակների մէջ, մէնք եւս մէջ բերինք այստեղ» (Դատաստանագիրք, էջ 293, ծանոթգր. 642): Բ խմբագրությունն, ուրեմն, այս հոդվածը չի ունեցել, իսկ Ա-ն չունի այս խմբագրության Եկեղեցական մասի 121—123 հոդվածները: Ուշագրավ է, որ Բ խմբագրության երկու ձեռագրերում նախ Աշխարհական մասն է, հետո Եկեղեցականը: Ա խմբագրության լեզվի ու ոճի մասին ասվածը ընդհանուր առմամբ ուժի մեջ է մնում նաև այս խմբագրության համար, սակայն, այստեղ նկատելի է պարզեցման ձգտումը:

Գ խմբագրություն—նույնանում է Ա-ի հետ. տարբերվում է լեզվով, համառոտությամբ և այլ հատկանիշներով, որոնց մասին ստորև, Եթե նկատի առնվեն միայն արտաքին տարբերությունները, ապա Գ խմբագրությունը կարող է դիտվել որպես ենթախումբ Ա խմբագրության: Այնինչ, Գ-ն զատվում է որպես առանձին խմբագրություն այն պատճառով, որ Ա-ից (նաև Բ-ից) տարբերվում է բառ էություն:

Խմբագրություններ բնօրոշոգ ներփին-էական հատկանիշներ.

Խմբագրությունների միջև եղած քիչ թե շատ էական բոլոր տարբերությունները, յուրաքանչյուր հոդվածի դեպքում, բերված են ծանոթագրություններում, ուստի այստեղ բավականանաք մի քանի օրինակով միայն:

<sup>77</sup> Նախադրությունը և մյուս օրենքները իրարից անշատելը ճիշտ չէ, որովհետև նախադրությունը Դատաստանագրքի բաղկացուցիչ, օրգանական մասն է, այդ երկուսը միասին են կաղմում Դատաստանագիրքը. ուստի այդպես ենք գրում միայն պայմանականորեն, միայն և միայն խոսքի հարմարության համար:

Այլ քանզի առ մեզ ապականեալ է այսպիսի կարգ, աւանդելի է գիրս եւ զգիրս (Գ՝ շիճ եւ զգիրս) դատաստանի ի ձեռս եպիսկոպոսաց, զի ոչ ոք է ի մեզ (Գ՝ առ մեզ) ըստ արտաքնոցն վարժեալ իմաստութեամբ յաշխարհականաց կամ ըստ Իսրայելի դպիր: Եւ զի այժմ նոցա է (Գ՝ եպիսկոպոսաց է) յանձն (Գ՝ յանձին) հոգք եկեղեցեաց (Գ՝ եկեղեցոյ) եւ աշխարհականաց (Գ՝ աշխարհաց), եւ ըստ պատահմանն (Գ՝ և յետ եպիսկոպոսաց) եղիցի իշխանաց (Գ՝ + ըստ պատահմանն) եւ զլիաւորաց ժողովրդեանն, հմտագունից քահանայից (Գ՝ այլև քահանայից իմաստնոց) եւ վարդապետաց, սակայն աւանդապահ՝ այսմ իրի եպիսկոպոսունք (Գ՝ եպիսկոպոսք) եղիցին:

Մի դեպքում դատական ամբողջ իրավասութիւնը տրված է հոգևոր իշխանութիւնը, մյուս դեպքում այն բաժանված է հոգևոր և աշխարհական իշխանութիւնների միջև: Ինչպես կտեսնենք ստորև, Ա (Գ) և Բ խմբագրութիւնների արտաքին հիմնական տարբերութիւնը (մասերի բաժանվածութիւնը) արդյունք է նաև այս ներքին-էական տարբերութիւնը:

Հոգված Ա (=Բ, I, 1)

Ձի եթէ ի սեփական վիճակի (կաթողիկոսի) իցէ վախճանեալն անժառանգ, հայրապետին եղիցի ժառանգութիւնն, եւ եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ՝ յերիս բաժանեացի՝ հայրապետին, եւ եպիսկոպոսին, եւ քահանայից ժողովրդեանն: Եւ եթէ վարդապետ ոք ի նահանգին իցէ եւ զնոյն աշխատութիւն կրէ դատաստանի, մասն լիցի նմա (Բ՝ եւ նմա), նովին շահով (Բ՝ շահեկով) այլոցն:

Ձի եթէ ի կաթողիկոսի վիճակ եղիցի անժառանգ վախճանեալն, կաթողիկոսին եղիցի ինչքն, եւ եթէ յեպիսկոպոսի՝ եպիսկոպոսն երեք բաժին առնէ զինչս մեռելոյն և զմինն իւրն առցէ, և զմիւսն կաթողիկոսին տացէ, և զմիւսն այլ քահանայիցն: Եւ եթէ թիմին վարդապետ կայ, ի վից բաժնն, զմինն նմա տան և զայլսն ապա երեք բաժին արասցեն:

Ըստ ԱԲ խմբագրութիւնների վարդապետը ոչ միայն ստանում է մյուսների հավասար բաժին, այլև գույքի բաժանման շահիանիշը նրա ստացած մասն է. վարդապետի դերն ու նշանակութիւնը ընդգծված է: Ըստ Գ խմբագրութիւն վարդապետի դերը ավելի նսեմացած է. նա պարզապես ստանում է գույքի 1/6-ը ԱԲ-ի 1/4-ի դիմաց: Սակայն, այդ տարբերութիւնը, գուցե, պայմանավորված է նրանով, թե վարդապետը անձամբ մասնակցել է առյանին թե ոչ, որովհետև ԱԲ խմբագրութիւնները շեշտում են այդ հանգամանքը, իսկ Գ՝ ոչ: Բայց այս դեպքում էլ այն հետևութիւնն է բխում, որ ըստ ԱԲ-ի վարդապետը մաս էր ստանում, եթե մասնակցում էր առյանին, իսկ ըստ Գ-ի անկախ դրանից: Բոլոր դեպքերում կարգավորման տարբերութիւնը խմբագրութիւններում առկա է:

Հողված Թ (= Բ, I, 8)

Ա Ք

Գ

Իսկ եթէ ի կնոջէն իցէ մեկնիւն անպատ-  
ճատ, յերիցն գմին մասն լիւրոց ընչիցն առն  
թողցէ:

Եթէ ի կնոջէն է պատճառն, զկէս ընչիցն  
կնոջն տուգանք տացեն յայրն:

Մեկնաբանութիւններն ավելորդ են:

Հողված ԻԱ (= Բ, II, 3)

Ա Ք

Գ

Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնու-  
թիւն, այլ ծառայել տերանց յաղաղս պիտո-  
յից եղև հողոյ և ջրոյ: Եւ գայս պատշաճ  
կարծեմ զատաստան. զի թողեալ զտէրունիսն  
ազատ է որ եւ կամեսցի կաշ: Ապա թէ այ-  
սըմ ոչ ներէ ոք ի տերանցն եւ բռնադատէ  
գգնացեալսն անդրէն դառնալ, գինի մահտան  
հարն ազատ են որդիքն ծնեալք այլուր և ոչ  
անդ:

Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւ-  
նըս, այլ ծառայել տերանց յաղաղս պիտոյից  
եղև հողոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր և  
հող, ազատ է ուր և կամեսցի գնասցէ և բնա-  
կեսցէ, և ոչ է իրաւունք թագաւորաց և իշ-  
խանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ  
ի մի երկիր:

Սա Դատաստանագրքի հռչակված հողվածներից մեկն է, եթե ոչ ամե-  
նահռչակվածը. այդ մասին գրվել է շատ, իսկ խոսվել՝ ավելի շատ, որովհետև  
իրավա-քաղաքական ու հասարակական-սոցիալական մեծ խորքի ու մեծ հրն-  
չեղութեան հողված է, բայց այժմ ընդգծենք մի կետ միայն, որը վերաբերում  
է քննվող հարցին: Ըստ ԱՔ խմբագրութիւններին տերն իրավունք ունի վե-  
րադարձնելու հեռացած շինականին (կախալ գլուղացուն և այլն), նույնիսկ  
վաղեմութեան ժամկետ չի սահմանված, հետեապես տերը դա կարող է անել  
երբ կամենա, քանի տարի էլ անցած լինի: Ըստ Գ խմբագրութեան շինականը  
ազատ է և ոչ ոք իրավունք չունի հարկադրելու նրան բնակվել որոշակի վայ-  
րում:

Մի օրինակ ևս.

Հողված ԼԱ (= Բ, II, 10)<sup>78</sup>

Ա Ք

Գ

Այլ գետք, յորոց հասին սահմանաց՝ ոչ է,  
բայց առ որ հասանեն:

Այլ գետք, ուստի ակն եւանէ՝ նոցա է, և  
ոչ առ ուր հասանեն:

Հայտնի է, թե Հայաստանում հողադործութեան համար ինչ նշանակութիւն  
ունեն ջուրը, ուստի ջրի կարգավորման հարցը բացառիկ կարևորութիւն  
ունեն: Եվ ահա, միևնույն հարցը սկզբունքորեն հակառակ ձևով է կարգավորվում:

Ինչպես տեսնում ենք, Դատաստանագրքի ձեռագրախմբերի միջև կան  
ներքին-էական տարբերութիւններ, որոնք վերաբերում են նյութի ոչ թե կամ  
ոչ միայն ձևին, այլ բովանդակութեանը, որովհետև միևնույն իրավահարաբե-  
րութիւնը տարբեր ձեռագրախմբերում կարգավորվում է տարբեր կերպ. դա-  
սային-դասակարգային տարբեր դիրքերից: Հենց այս տարբերութիւններն են,  
որ առաջին հերթին պետք է նկատի առնվեն ձեռագրերը դասդասելիս և նաև  
դրանք են, որ թույլ են տալիս ձեռագրախմբերը առանձնացնել որպես ուրույն  
խմբագրութիւններ: Ընթերցողը, անշուշտ կնկատի, որ վերը բերված օրինակ-

<sup>78</sup> Տե՛ս մեթոդ., № 65:

ներում միայն մի դեպքում կա տարբերություն մի կողմից ԱԳ և մյուս կողմից՝ Բ խմբագրությունների միջև, մյուս բոլոր դեպքերում հակադրելիները միշտ ԱԲ և Գ-ն են: Սակայն, այս չի նշանակում, թե Ա-ի ու Բ-ի տարբերությունները բոլոր բովանդակության սպառվում են աչդ մի օրինակով. կան ուրիշ տարբերություններ ևս, որոնք ամեն անգամ նշված են ծանոթագրություններում: Ինչպես նաև քիչ չեն դեպքերը, երբ համեմատելիները դառնում են մի կողմից Ա, մյուս կողմից ԲԳ խմբագրությունները: Այդուհանդերձ չի կարելի շնկատել, որ հիմնականում համեմատելիները մի կողմից ԱԲ և մյուս կողմից Գ խմբագրություններն են, որովհետև Գ խմբագրությունը մյուսներից տարբերվում է մի շարք այլ հատկանիշներով ևս:

Գ խմբագրությունում Գատաստանագրքի հողվածների զգալի մասը, ներառյալ Նախադրությունը, այս կամ այն շափով, իսկ երբեմն խիստ, համառոտված են: Այն դեպքերում, երբ բուն հողվածները համառոտված չեն, դրանց վերնագրերը, գրեթե, միշտ համառոտված են: Այս վերջին հանգամանքը նկատի ունենալով, կարելի է ասել, որ Գ խմբագրությունում գրեթե բոլոր հողվածները համառոտված են:

Օրինակ.

Հողված ԺԳ (= Բ, I, 12)

Ա Բ

Գ

Յադագս դատաստանաց, թէ ատելութեան պատճառաւ զմիմեանս թողցեն այր եւ կին եւ այլում զուգիցին, եւ պատահի մեռանել ընդ որ զուզեցաւ, եւ առ միմեանս դարձցին:

Եթէ կին ատելութեամբ յառնէն մեկնեսցի եւ այլում լիցի, եւ պատահի մեռանել զոր էառն եւ հարկատրաբար յառաջինն դարձցի, իբր զի չիցէ առեալ այրն այլ կին, կայցէ զնա զղջացեալ, զոր շէր արժան լինել առն այլում եւ եղև, թէպէտ եւ իշխան է շառնուլ, զի ի կնոջն իցէ պատճառն մեկնելոյ, սակայն շահելոյ աղագաւ զոգի նորա՝ առցէ: Սոչնպէս, թէ առն պատահի առնուլ այլ կին եւ մեռցի զոր էառն եւ զղջացեալ դարձցի յառաջինն, իբր զի այլում չիցէ լեալ կին, առցէ, եւ հաւանեսցի նմա կին յաղաղս զղջմանն եւ ապաշխարութեանն արիեակի երկուցն:

Իսկ եթէ զկնի մեկնելոյն ի միմեանց այրն կին առցէ եւ կինն՝ այր, եւ մեռանիցի կին առն եւ այր կնոջն զոր առին, եւ զի այլ պսակ ոչ է նոցա, հարկատրեալք դառնան առ միմեանս, որ պատճառ մեկնելոյն եղև՝ զապաշխարութիւն նմա տալով միաւորեսցին:

Եւ եթէ այր կնոջն մեռանիցի եւ կին առն կենդանի իցէ, եւ կինն իցէ պատճառ մեկնելոյն, եւ հարկատրաբար զղջացեալ զայրն խնդրէ, շէ արժան առնուլ զնա առնն ըստ իրաւանց, մանաւանդ թէ մանկուք իցեն, եւ այլ այր ոչ հասանիցէ կնոջն, ապա եթէ հասանիցէ՝ իշխան լիցի այր զհարկի վղջացեալ կինն առնուլ եւ կամ ոչ: Նմանապէս, եթէ կին առն մեռանիցի:

Վասն ատելութեան պատճառաւ զմիմեանս թողուլ այր եւ կին:

Այր և կինն, եթէ ատելութեամբ զիրար թողցեն, և պատահի մեռանել զոր էառն, և այրն, զոր թողեալն էր, անայր կայր, պարտ է առնուլ զայն, քանզի այլ պսակ ոչ հասանի նոցա. այլ ոչ բնութեամբ, այլ կամօք վասն Աստուծոյ:

Հատկանշական է, որ Գ խմբագրութիւնում համառոտելու աշխատանքը կատարվել է ոչ թե իրավաբանական միտքը, իրավաբանական բովանդակութիւնը կրճատելու հաշվին, այլ իրավաբանական բովանդակութիւնը կրճատելու տարրերից մասամբ զտելու ուղղութիւնով: Ծիշտ է, Դատաստանագիրքը իր ամբողջ ծավալով չէ, որ Գ խմբագրութիւնում ենթարկվել է մշակման այս դիտակետից, սակայն այդ միտումն առկա է:

Օրինակ.

Նախագրութիւն, է

Ա Բ

...Եւ թէ ընդէ՞ր երկուք կամ երեք ընտրին, ասելի է:

Երկուքն եւ երեքն ոչ վասն առաւելութեան խափանման է, այլ յաղագս զի մի պակաս իցէ. եթէ բազումք իցեն, բարիոք է եւ թէ ոչ՝ մի նուագիցի: Ըստ որում ասէ առաքեալն՝ զերիցունէ շարախաւութիւն մի ընդունիցիս ի միոյէ, բայց եթէ երկու կամ երեք վկայիք: Զի դիւրին է միոյն ախտի ինչ շարախաւել, եւ երկուց վկայից ի վեր քան զպատրանս եւ զկաշառս լինել՝ երեքն: Եւ զի ուսցի դատաւորն, եթէ երկուց վկայիցն նման միմեանց իցեն բանքն եւ երիցն ոչ՝ անհաստատ է, որպէս Տեառն վկայիցն աննմանք միմեանց, զոր եւ Պիղատոս երկբայի, սակայն երկուցն հաստատի: Եւ եթէ խարդախանաք բազումք եղեալ վկայ ի պլուխ վարն տարան վճիռ, որպէս Նաբէովթայն եւ սուրբ Նախավկային, այդոքիկ դաւաճանութիւնք դատախազաց են, եւ միշտ զպատրուակեալ շարութիւնն ծածկել ոչ կարեն, այլ ճշմարիտ է երկուքն եւ երեքն ըստ կարգի իրականց, վասն որոյ ամենայն ուրեք այլքան ընտրին: Զի արիւնացն տուչութեան Մովսիսի՝ Ովր, եւ Ահարովն, եւ Յեսու վկային. եւ Աստուծոյ՝ փողքն, եւ ամպն, եւ մէգն, եւ հուր վկային. եւ ծննդեան Տեառն՝ հրեշտակք, եւ հովիւք, եւ մոզք վկային, եւ դարձեալ՝ Յովսէփ, եւ Մարիամ, եւ մարտիրոսն. եւ ի տաճարն՝ Միմէոն, եւ Աննա, եւ դուռնն. եւ յՍփարայիտ՝ հրեշտակքն, եւ ձեռագործքն, եւ նշանքն որ անդ. եւ դարձեալ ի տաճարն՝ Մարիամ, եւ Յովսէփ եւ քահանայքն. եւ մկրտութեանն՝ Ղայր, եւ Հողին, եւ Յովհաննէս: Իսկ ի Քաբովր երկուքն եւ երեքն միանգամայն ի միասին վկային, զի երկու են մարգարէքն եւ երեք՝ առաքեալքն: Ի նշանսն՝ մարմնոցն բժշկութիւնք, եւ դիւացն հալածումն, եւ մեռելոցն յարութիւն. եւ դարձեալ՝ ի ծովու զնալըն, եւ ընդ աղս ընթանալ, եւ հացի կերակրել. եւ շարարանացն եւ մահուն՝ խաւարումն արեղականն, եւ շարժումն երկրի, եւ պատա-

Գ

...Եւ եթէ ընդէ՞ր երկու կամ երեք ընտրեն.

ոչ եթէ գալ շատն խոտեմք, այլ զի մի պակաս իցէ, քան գալս, որպէս եւ դրեալ է.

Եթէ յերկուց եւ յերեք վկայից հաստատի ամենայն բան: Զի դիւրին է մին վկային ախտի սուտ վկայել, իսկ երկու եւ երեքն՝ ոչ: Եւ զի ուսցի դատաւորն, եթէ երկուց վկայիցն նման լիցի բանքն եւ անտի ճշմարտեացի:

ոումն վիմաց, եւ դարձեալ՝ արիւնն, եւ շուրն, եւ վարագոյրն, եւ մեռեալքն. եւ յարութեանն՝ հրեշտակքն, եւ վէճն, եւ պատանքն, եւ վարչամակն, եւ դարձեալ՝ կանայքն, եւ առաքեալքն, եւ պահապանքն. եւ ամբարձմանն՝ առաքեալքն, եւ հրեշտակքն, եւ կանխաւ՝ մարգարէքն:

Եւ թէպէտ եւ միոյ վկայի հաւատարմի ճշմարիտ է վկայութիւնն, սակայն ոչ հաստատի, բայտ Տեառն՝ դուք առաքեցէք առ Յովհաննէս, եւ վկայեաց ճշմարտութեանն, եւ զի ոչ հաւատացին, ասաց՝ այլ հս ունիմ վկայութիւն մեծ քան զՅովհաննէսն՝ զգործն, եւ դարձեալ՝ ես եմ, որ վկայեմ վասն իմ եւ է Հայր, որ վկայէ. եւ յարէնսն իսկ ձեր գրեալ է, եթէ երկուց մարդոց վկայութիւնն ճշմարիտ է եւ միոյ վասն իւր վկայելն անվանք է, բայտ ասիւոյն հրէիցն Տեառն՝ դու վասն անձին քո վկայես: Եւ թէպէտ տիրապէս ճշմարիտ, սակայն ասացին՝ եւ չէ ճշմարիտ, յաղազս այնորիկ զՀայր եւ զՅովհաննէս կոչէ վկայ: Եւ դարձեալ դառաքեալսն կոչէ վկայ՝ եղիշէք, ասէ, ինձ վկայք յԵրուսաղէմ, եւ ի Սամարիա, եւ մինչեւ ի ծագս երկրի: Ըստ այսմ եւ Պետրոս վկայէ, լուեալ զձայնն եկեալ ի մեծ վայելչութիւնէ փառաց անտի, թէ զա է որդի իմ սիրելի, սակայն ընդ իւր առնու գրանն մարգարէական: Ինքն իսկ ճշմարիտ վկայէ Յովհաննէս, սակայն եւ ասէ՝ երեք են, որ վկայեն՝ արիւնն, եւ շուր, եւ հոգին: Յայսմանէ առեալ կանոնքն հրամայէ վկայիք ձեռնադրել եպիսկոպոսաց, եւ առաքելոցն ընծայական թղթովք շրջէին աշակերտք նոցա: Ըստ այսմ եւ առաքեալն Քաղէոս ի կողմանս քնաց Հայոց նամակաւ թագաւորին Արգարու:

Բայց սակայն երկու լինել արիւնիակ վկայութեանն՝ կամ զի տեսանէ կամ զի լսէ, զոր եւ յոյժ ճշգրտելի է վկայից, զի մի այլ ընդ այլոյ տեսեալն իցէ եւ կամ լուեալն. այլ ճշմարիտ տեսանելն, քան զըսելն է, զոր եւ դատաւորաց ստուգելի է ի ժամ դատին զվկայսն, զի ըստ զրեցելոյն՝ մի ի կարծս դատիցի:

Բայց պարտ է վկայիցն տեսանել և լսել և սպա վկայել, զի լաւ է տեսանելն, քան զըլսելն, և վկայել ճշմարիտ առաջի մարդկան, և յԱստուծոյ առջեմ զպարգևն:

Գ Խմբագրութիւնում վերացված են ԱԲ Խմբագրութիւնի իրավական մի շարք անորոշ սահմանումները:

Հոդված Գ (=Բ, II, 12)

Ա Բ

Եթէ կողմիցին արք եւ մին պատահի անկատար լինել եւ լանդզնեալ փետտիցէ զմորտա կատարելոյն, դատաստան լիցի. կրկին մասամբ զհերան հատանել եւ զանիւ բստ արժանւոյն կակծեցոցանել, մասաւանդ զի զպատուար անարգեաց:

Գ

Եթէ կողմին արք երկու եւ մինն մալազ լինի եւ մինն կատարեալ, և ձգէ մալազն և փետէ զմորտուք կատարելոյն, դատաստան լիցի, որ կտրեն զմալազին մազն երկու տարպայ, քանզի զկատարելոյն մորտուքն քարչեաց և հհան, և եւթն փայտ ի վերայ թիկանցն տան:

Գ խմբագրութիւնը տարբերվում է ԱԲ-ից նաև մի շատ կարևոր ու էական հատկանիշով. բուն հայկական ազգային իրավունքը, սովորութեական իրավունքը, մյուս խմբագրութիւնների համեմատությամբ ավելի լայն է ներկայացված Գ խմբագրութիւնում, որի հողվածների որոշ մասը զերծ է Մխիթարի հայացքների երանգավորող խառնուրդից: Այս փաստարկումն այստեղ մեզ շատ հետու կտաններ, ուստի բնթերցողին հղենք մեր ուսումնասիրութեանը, որտեղ ցույց են տրված այդ տարբերութիւնները:

Նշենք, ի վերջո, մի հատկանիշ ևս, որով Գ խմբագրութիւնը տարբերվում է ԱԲ-ից: Ականավոր հայագետ ու հայկաբան Հ. Կարստը վկայում է, որ Գ խմբագրութիւնում Դատաստանագրքի լեզուն փոխել են ու դարձրել ռամկորեն<sup>79</sup>: Ճիշտ է, Դատաստանագիրքը իր ամբողջ ծավալով չէ, որ ենթարկվել է այդ փոփոխության և ոչ էլ այդ խմբագրութեան բոլոր ձեռագիրների մասին է խոսքը, բայց և այնպես այդպիսի աշխատանք արվել է: Վերը բերված ԼԳ հողվածը օրինակ է նաև այս առումով, բայց բերենք մի նմուշ ևս.

#### Նախագրութիւն, Ա

Ա Բ

...Եւ զի ինքեանք զայթակղեալք զբազումս զայթակղեցուցանեն սոքաք ի պարզամտացն, որոց եւ զայս նախ ասասցուք....

Գ

... Եւ այս անյարմար մարդոց բանք են, որ ոչ գիրք են կարդացեալ և ոչ ուսեալ: Ապա պարտ է մեզ ասել ըզորդ և գրել.... զայնցեղ մարդն սպաննել արժան է, հայնց պինտ է ու ալլքն...

Ինչպես տեսնում ենք, առկա է Մխիթար Գոշի Դատաստանագրքի երեք խմբագրութիւն: Արդ, այս խմբագրութիւններից ո՞րն է սկզբնականը, հեղինակայինը, այն խմբագրութիւնը, որը Մխիթար Գոշը գրել-ավարտել է 1184 թ., ե՞րբ են առաջացել մյուս խմբագրութիւնները, ո՞վ է դրանց հեղինակը, և, մանավանդ, ինչ պատճառներով են կյանքի կոչվել մյուս խմբագրութիւնները: Անցնենք այս կարևոր հարցերի քննութեանը:

Ուսումնասիրութիւնները ցույց տվեցին, որ այն եզանակը, որով Մխիթար Գոշն օգտվել է իր գրավոր աղբյուրներից, առաջնակարգ, վճռական նշանակութիւն ունի Դատաստանագրքի խմբագրութիւնների հաջորդականութիւնը որոշելու համար:

Դատաստանագրքի տպագիր բնագիրը՝ Բ խմբագրութիւնը նկատի ունենալով, հետազոտողներն արդեն նշել են<sup>80</sup>, որ հողվածների հաջորդականութիւնը Դատաստանագրքում համապատասխանում է օգտագործած աղբյուրներում դրանց ունեցած հաջորդականութեանը: Սակայն Դատաստանագրքի Բ խմբագրութիւնում կան այս սկզբունքից զգալի շեղումներ, որոնց վրա հարկ չեն համարել ուշադրութիւն դարձնել նշված ուսումնասիրողները: Սակայն հենց այս շեղումները վճռական ապացույց են դառնում հօգուտ մասերի շրջանված խմբագրութեան սկզբնականութեան: Ակնառու դարձնելու համար ցուցադրենք մեր ասածը համեմատական մի տախտակով, սյունակների հետեւյալ նշանակութեամբ:

<sup>79</sup> Grundriß, I, էջ 60—61:

<sup>80</sup> J. Karst, Grundriß, I, էջ 58-62. С. Тигранян, „Судебная книга“ Мхитара и „Книга канонов“, „Известия Кавказского историко-археологического института“, т. III, Тифлис, 1925, էջ 61—72:

1. Դատաստանագրքի հոդվածները ըստ Բ խմբագրություն (Վ. Բաստամյանցի հրատարակություն, առաջին մաս),
2. Կանոնագրքի կանոնախմբերի հաջորդականությունը Դատաստանագրքում,
3. Կանոնագիրք հայոց<sup>81</sup> (հ. Ա, Երևան, 1964),
4. Կանոնախմբերի հաջորդականությունը Կանոնագրքում,
5. Կանոնագրքի կանոնախմբերի կանոնները,
6. Դատաստանագրքի հոդվածները ըստ Ա (Գ) խմբագրություն:

Բ խմբագրություն, I մաս		Կանոնագիրք հայոց			Ա (Գ) խմբագրություն
1	2	3	4	5	6
22	1	Ա. Առաքելական	1	ԻԴ	36
23	2	Կղեմի	2	ԼԸ	39
24		"		ԼԹ	40
25		"		ՄԴ	41
26		"		ԿԱ	42
27		"		ԿԴ	43
28		"		ԿԵ	44
29		"		ԿԸ	45
30		"		ԿԹ	46
31		"		Հ	47
32		"		ՀԵ	48
33	3	Հարանց հետևողաց	3	Ա	51
34		"		ԺԵ	53
—		"			—
44		"		ԺԸ	133
45		"		ԻԵ	134
46	4	Նիկիայի	4	Դ	135
47		"		Ե	136
48		"		Զ, Է	137
49		"		ԺԵ	138
50		"		ԺԸ	139
51	5	Անկյուրիայի	5	ԺԲ	140
52		"		ԺԵ	141
53		"		ԺԸ	142
54		"		Ի	143
55	6	Ն. Կեսարիայի	7	Զ	144
56		"		ԺԱ	145
57		"		ԺԲ	146
58		"		ԺԳ	147
59		"		ԺԴ-ԺԵ	148
60		"		ԺԸ	149
61		"		ԺԷ	150
62		"		ԺԸ	151
63		"		ԺԹ	152
64	7	Գանգրայի	8	Է	153
65		"		ԻԱ	156
66	8	Անտիոքի	9	Թ	157
67		"		ԺԲ	158
68		"		ԺԳ	159
69		"		ԺԴ	160
70	9	Նիկիական II	34	Զ	161
71		"		Ղ	162
72	10	Հաղկիկիայի	10	Ժ	163
73	2	Կղեմի	2	ԶԳ	164
74	11	Աթանասի	15	ԺԱ	165
75		"		ԺԲ	166
76		"		ԻԱ	167
77		"		ԻԳ	168
78		"		ԻԶ	169

<sup>81</sup> Կանոնագրքի Լրկու հատորների ցանկը՝ համակարգը տե՛ս Ա հատորի էջ 3—4:

1	2	3	4	5	6
79		Աթանասի		ԼԲ	170
80		"		ԼԴ	171
81		"		ՄԲ	172
82		"		ՀԲ	173
83	12	Բարսեղի	16	ԽԴ	176
84		"		ՁԴ	177
86		Բարսեղի		ՄԵ	187
87		"		ՄԸ	188
88		"		ՄԹ	189
90		Բարսեղի		ՄԺ	191
91		"		ՄժԸ	192
92	13	Թադևոսի	26	ԼԱ	193
93	14	Շահապետյանի	18	Դ	195
94		"		Ե	196
95		"		Չ	197
96		"		Է	198
97	15	Դվինի II	20	Ժ	199
98		"		ժԳ	200
99		"		ժԴ	201
101	16	Պարտավի	25	ժԸ	203
102		"		ժԹ	204
103		"		ԻԱ-ԻԲ	205
104	17	Դվինի V	38	Է	206
105		"		Ը	207
106		"		Թ	208
107		"		Ժ	209

Բ. խմբադր. II մաս	Կանոնադիրք հայոց	Ա(Գ) խմբադրու- թյուն
15	Ա. Առաքելական	ԻԵ
16	"	ԻԶ
17	Կղեմի	ՀԶ
18	"	ՀԸ
19	Հարանց Կեռնողաց	Դ
89	"	ժԵ
90	Գանգրայի	ժԵ
91	"	ժԶ
92	Բարսեղի	Ը
93	"	ԻԵ
94	"	ՁԸ
95	"	ՃԵ
100	Բարսեղի	Մ
101	"	ՄԱ
102	Թադևոսի	ԼԳ
103	Դվինի	ժԱ
104	"	ժԲ

Ինչպես երևում է համեմատական տախտակից, Դատաստանագրքում կանոնախմբերի հաջորդականությունը գրեթե նույնն է, ինչ և Կանոնագրքում, բացառելով այն կանոնախմբերը, որոնցից Մխիթարը չի օգտվել: Սակայն Կանոնագրքի համակարգը ըստ Դատաստանագրքի չի նույնանում Կանոնագրքի համակարգին ըստ հրատարակված բնագրի: Այս շեղումները չեն անդրադառնում ընդհանուր սկզբունքի վրա, այլ կարող են վկայել միայն, որ

Մխիթարի տրամադրությունն տակ եղած Կանոնագրքի ձեռագրում կանոնախմբերը ունեցել են, հավանաբար, փոքր-ինչ այլ դասավորություն: Եվ սա կարող է հաստատվել այն փաստով, որ Կանոնագրքի համակարգը տարբեր է տարբեր ձեռագրերում ու ձեռագրախմբերում, ինչպես արդեն հաստատել են ուսումնասիրողները<sup>82</sup>: Կանոնագրքի համակարգից նկատվող շեղումները առավել ևս կարելի է անտեսել, եթե հաշվի առնենք, որ օգտագործված կանոնախմբերից յուրաքանչյուրի կանոնների հաջորդական կարգը պահպանված է Դատաստանագրքում. ներկա դեպքի համար կարևորը դա է:

Համեմատական տախտակից, ինչպես նաև Դատաստանագրքի Բ խմբագրությունից, հետևում է, սակայն, մի շատ էական խախտում, որն անհարիր է թվում Մխիթարի սկզբունքին, այսինքն՝ այն եզանակին, որով նա օգտվել է իր աղբյուրներից: Քանն այն է, որ Դատաստանագրքի Բ խմբագրությունում որևէ կանոնախմբի ոչ բոլոր կանոններն են կենտրոնացված մի տեղ թվահամարների հաջորդականությամբ, այն շրջանակներում, որով օգտագործվել են: Կանոնախմբերից յուրաքանչյուրի կանոնների հերթականությունը թվահամարների աճող կարգով թեև պահպանված է, բայց ընդհատված՝ կանոնների անմիջականորեն կամ մոտագույնս իրար հաջորդող թվահամարների բացակայությամբ: Բացակայող այդ թվահամարները Բ խմբագրության մեջ տեղաշարժված են և գտնվում են Դատաստանագրքի երկրորդ մասում: Այսպես, Գանգրայի կանոնախմբից Դատաստանագրքում կա չորս կանոն՝ է, ԺԵ, ԺԶ և ԻԱ: Այս կանոններից երկուսը՝ է և ԻԱ գտնվում են Դատաստանագրքի առաջին մասում 64 և 65 հոդվածների ձևով, իսկ մյուս երկուսը՝ ԺԵ, ԺԶ՝ երկրորդ մասում, որպես 90 և 91 հոդվածներ: Ինչպես տեսնում ենք, Դատաստանագրքի առաջին մասում Գանգրայի կանոնների հարաձուռն կարգը, այն սահմաններում, որ օգտվել է Մխիթարը, պահպանված է՝ է-ին հաջորդում է ԻԱ, բայց ընդհատված է կանոնների անմիջականորեն իրար հաջորդող թվահամարներով՝ ԺԵ, ԺԶ, որոնք գտնվում են երկրորդ մասում: Ա Առաքելական կոչված կանոնախմբից Դատաստանագրքում կա երեք կանոն՝ ԻԴ, ԻԵ, ԻԶ: Սրանցից ԻԴ գտնվում է առաջին մասում, որպես 22-րդ հոդված, իսկ ԻԵ՝, ԻԶ՝ երկրորդ մասում 15 և 16 հոդվածների ձևով: Նույնն է նկատվում նաև մյուս կանոնախմբերի և Հնգամատյանի կապակցությամբ: Թվում է, թե սկզբունքը, այսինքն՝ այն եզանակը, որով Մխիթարն օգտվել է իր աղբյուրներից, խախտված է և այնքան հաճախ, որ անկարելի է սկզբունք անվանել: Իրոք, եթե այդպես չէ, ապա միևնույն կանոնախմբի կանոնները, որոնք առկա են Դատաստանագրքում, պետք է կենտրոնացված լինեին մի տեղ իրենց թվահամարների հերթականությամբ: Այս ենթադրությունը հաստատում է Ա (Գ) խմբագրությունը: Նշված սկզբունքի համաձայն Գանգրայի կանոնախմբի ԺԵ, ԺԶ կանոններն արտահայտող Դատաստանագրքի երկրորդ մասի 90 և 91 հոդվածները պետք է լինեին առաջին մասի 64 և 65 հոդվածների միջև: Դիտենք համեմատական տախտակը. Բ խմբագրության առաջին մասի 64-րդ հոդվածին համապա-

<sup>82</sup> С. Тигранян, Древне-армянская книга канонов, I. Описательная часть, Записки Российской Академии наук, VIII серия, по историко-филологическому отделению, т. XIII, Петроград, № 3, 1918. Կանոնագիրք հայոց, Ա, աշխատասիրությունը՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, նախաբան. В. Акопян, „Армянская книга канонов“, и ее редакция; Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван, 1967.

տասխանում է Ա (Գ) խմբագրության 153-րդ հոդվածը և, համապատասխանաբար 65-րդին՝ 156-րդը: Այս մի կողմից, մյուս կողմից՝ Բ խմբագրության երկրորդ մասի 90 և 91 հոդվածներին համապատասխանում են Ա (Գ) խմբագրության 154 և 155 հոդվածները: Բայց, 64 և 65 կամ 153 ու 156 և 90 ու 91 կամ 154 ու 155 հոդվածները արտահայտում են Գանդրայի կանոնախմբի է, ԻԱ և ԺԾ, ԺԶ կանոնները: Սակայն այս կանոնները իրենց թվահամարների բնական հաջորդականությամբ, այն շարքով, որչափ առկա են Դատաստանագրում, ընթանում են Ա (Գ) խմբագրությունում և ոչ Բ-ում: Նույն ձևով էլ Ա Առաքելական կոչված կանոնախմբի ԻԳ, ԻԾ, ԻԶ կանոնները Ա (Գ) խմբագրությունում կենտրոնացված են մի տեղ և հաջորդում են իրար որպես 36, 37, 38-րդ հոդվածներ: Ասածը սոսկ ակնառու դարձնելու համար ցուցադրենք տախտակի ձևով:

Կանոնախումբ	Կանոն	Դատաստանագրքի Ա(Գ) խմբագրության հոդվածներ	Դատաստանագրքի Բ խմբագրության հոդվածներ
Ա. Առաքելական	ԻԳ	36	1,22
	ԻԵ	37	11,15
	ԻԶ	38	11,16
Գանդրայի	է	153	1,64
	ԺԾ	154	11,90
	ԺԶ	155	11,91
	ԻԱ	156	1,65

Ա (Գ) խմբագրությունում ճիշտ նույն ձևով մյուս կանոնախմբերի կանոններն էլ կենտրոնացված են մի տեղ (վերը ցույց տրված մի բացառությամբ) և հաջորդում են իրար թվահամարների աճող հերթականությամբ, այն սահմաններում, որով առկա են Դատաստանագրում: Ստացվում է այսպես. եթե երկու մասի բաժանված Դատաստանագրքի երկուրդ մասից կանոններ պարտադիր հոդվածները փոխադրենք առաջին մաս և տեղադրենք համապատասխան կանոնախմբերի ու դրանց կանոնների հերթականությամբ, ստացվում է Դատաստանագրքի այն համակարգը, որը կա մասերի չբաժանված խմբագրությունում: Նույն օրինաչափությունը դիտվում է նաև Հնգամատյանի կապակցությամբ:

Նշանակում է, Դատաստանագիրքը սկզբում եղել է այն ձևով, ինչ ձևով այն ներկայացված է Ա (Գ) խմբագրությունում: Կանոններ և Մովսիսական օրենքներ արտահայտող հոդվածների ընդհատումները, որ առկա են Բ խմբագրությունում, առաջացել են հետո, երբ Դատաստանագրքի հոդվածների ընդհանուր հաջորդական շարքից որոշ հոդվածներ, հաճախ խմբերով, առանձնացվել են որպես երկրորդ մաս: Նշանակում է, Դատաստանագրքի սկզբնական հեղինակային խմբագրությունը մասերի չբաժանված խմբագրությունն է: Սա հաստատվում է մի շատ կարևոր փաստով ևս. Դատաստանագրքի Բ խմբագրությունից, ճշտության մեծ մոտավորությամբ, կարելի է վերականգնել Ա (Գ) խմբագրության համակարգը, մինչդեռ հակառակն, այնպես, որ ստանայինք Բ խմբագրության ներկա համակարգը, անկարելի է:

Այնուհետև. Բ խմբագրության երկրորդ մասի առաջին հոդվածը սկսվում է այսպես. «Յառաջագոյն գրեցաք զեկեղեցւոյ զատաստան... իսկ երկրորդ նմին կարգեսցուք զատաստան թագաւորի եւ իշխանաց...»: Պարզ է ասված՝

«եկեղեցու դատաստանից» հետո (երկրորդ նմին) գրվել է «թագավորի դատաստանը», այնինչ Բ խմբագրությունում «թագավորաց դատաստանը» դրված է «եկեղեցու դատաստանից» 124 (123) հոդված հետո: Այս հոդվածները կարգը ճիշտ և ճիշտ Մխիթարի ասածի նման է Ա (Գ) խմբագրությունում, որտեղ առաջին հոդվածը «եկեղեցու դատաստանն» է, իսկ երկրորդը՝ «թագավորի»: Նշանակում է՝ Դատաստանագիրքը սկզբում ունեցել է այն համակարգը, որը կա Ա (Գ) խմբագրությունում: Ուստի, Դատաստանագրքի սկզբնական հեղինակային խմբագրությունը մասերի շրջանվածն է, Բ խմբագրությունը՝ մասերի բաժանվածը ստեղծվել է հետո:

Վերը տեսանք, սակայն, որ Դատաստանագրքի երեք խմբագրություններից երկուսում՝ Ա և Գ, բնագիրը բաժանված չէ մասերի: Արդ, այս երկուսից՝ Ա և Գ, ո՞րն է սկզբնականը: Հարցը պարզելուն օգնում է արդեն Հ. Ռսկյանի և, մանավանդ, Վ. Հացունու կողմից հաստատված՝ Դատաստանագրքի հնագույն ձևագրերի ծագման ժամանակագրական հաջորդականությունը, որը նաև բնդհանրապես ապացույց է Ա խմբագրության սկզբնականության: Այստեղ դարձյալ պետք է հիշենք Մխիթարի նամակը Հայոց կաթողիկոսին: Ինչպես տեսանք, Մխիթար Գոշր նամակի հետ միասին կաթողիկոսին է ուղարկել նաև Դատաստանագրքի մի օրինակ: Ուշադրություն դարձնենք նամակի հետևյալ տողերի վրա. «Եւ արդ, եթէ ինչ գտցի հաճելի ձեզ, Տեսն շնորհ... Եւ եթէ բնաւին անազուտ յեկեղեցի իցէ և պատճառ դայթակղութեանն, հրոյ տացես նառակ և հրամայիցես և որ առ մեզ է արիւնակ գնոյն առնել և անխափան ձեռդ կացցէ հրաման»: Եթէ կաթողիկոսը այդքան իր օրինակը և եթէ նույն կերպ վարվեր նաև Մխիթարը, ապա Դատաստանագիրքը ոչնչանալու էր, չբանալու, իբր բնավ չէր եղել: Նշանակում է, ինչպես իրավացիորեն եզրակացրել է Վ. Հացունին, նամակը գրելու ժամանակ Դատաստանագրքից բնդամենք երկու օրինակ կար, Դատաստանագրքի ամբողջ «տպաքանակը» հավասար էր երկուսի՝ Մխիթարի օրինակը և զրանից արտագրված օրինակը կաթողիկոսի համար: Ահա, բուն Մխիթարյան, իրեն՝ Մխիթարի գրչի տակից դուրս եկած անմիջական օրինակից կաթողիկոսի համար արտագրված այդ օրինակը (կամ սրսնից կատարված մի բնդօրինակություն) հասել է մեզ, դա Զմամոսի ձեռագիրն է: Իսկ Զմամոսի ձեռագիրը ներկայացնում է Ա խմբագրությունը: Հետևությունը բխում է ինքն իրեն. սկզբնական, հեղինակային խմբագրությունը Ա-ն է, Բ-ն և Գ-ն կազմվել են հետո: 1184 թ. Մխիթարի կողմից գրված-ավարտված Դատաստանագիրքը Ա խմբագրությունն է: Գ խմբագրության կրտսերությունը հաստատող այլ փաստեր ևս կարող ենք բերել, մասնավորապես այդ են ապացուցում ըստ էության այն տարբերությունները, որ կան Ա-ի և Գ-ի միջև: Այս հարցերի մասին մասամբ գրվել է վերը, իսկ ավելի հանգամանալից խոսք կապի Դատաստանագրքում ներկայացված իրավունքի ճյուղերից յուրաքանչյուրին նվիրված ուսումնասիրության մեջ, ուստի այստեղ թողնենք այդ:

Ե՞րբ, ո՞ւմ կողմից և ինչո՞ւ է կազմվել Դատաստանագրքի Բ խմբագրությունը, մասնավորապես՝ ինչո՞ւ է Դատաստանագիրքը բաժանվել երկու մասի: Բ խմբագրության հեղինակի հարցը պարզելու համար դրական որևէ փաստ չունենք: Անուղղակի որոշ տվյալներից միայն կարող ենք ենթադրել, միանալով Վ. Հացունուն, որ Բ խմբագրության հեղինակը նույնպես Մխիթարն է: Սակայն, սա միայն ենթադրություն է և ավելին չէ, քան հակառակ ենթադրությունը:

Եթե շենք կարող, գոնե առայժմ, պատասխանել առաջին հարցերին, ապա վերջին հարցին, թեկուզ և փորձի ձևով, բացատրություն տալու հնարավորություն կա. և այստեղ դարձյալ պետք է նշվի Վ. Հացունու վերը հիշված հոդվածը:

Վերը համադրվեցին նախադրության Ե գլխի միևնույն հատվածները ըստ Ա և Բ խմբագրությունների: Տեսանք, որ ըստ Ա խմբագրության աշխարհիկ իշխանության մարմիններին չի տրված օրինական ու մշտական դատիրավասություն: Ծիշտ է, հենց Ա խմբագրության մի շարք հոդվածներում, ինչպես կտեսնենք մեր ուսումնասիրության այն բաժնում, որը նվիրված է Դատաստանագրքով ներկայացված դատարանակազմությանն ու դատավարությանը, նշված են համարյա բոլոր այն գործերը, որոնց ընդգատությունը տրված է աշխարհական իշխանությանը, բայց դրանով սոսկ արձանագրված է իրերի փաստական վիճակը, այնինչ ընդհանուր ու սկզբունքային ձևակերպում ստացած հոդվածը իր մեջ արդեն պարունակում է մի ձգտում, որը վաղուց հատուկ էր հայ եկեղեցուն: Նշանակություն չունի, թե Մխիթարը ինչով է բացատրում հոդվածի նմանօրինակ ձևակերպումը: Միտումով, թե ոչ, համենայն դեպս գոնե տեսականորեն, Մխիթարը սահմանում է եկեղեցու դատական մենաշնորհ: Եթե նախորդ շրջանում, պետականության անկման պատճառով, եկեղեցին ազգովին կենտրոնացած միակ իշխանությունն էր, հետևապես հայտնի չափով դատական իրավունքի միակ իրացնողը երկրի այն շրջաններում, ուր չկար ազգային աշխարհիկ իշխանություն, ապա հոդվածի խմբագրման ժամանակ իրադրությունը տրամագծորեն փոխվել էր: Հայկական պետականությունն ընդհանրապես և աշխարհիկ իշխող դասը՝ մասնավորապես, մի նոր զարգացում ու վերելք էին ապրում: Հայ իշխանները բնաշխարհում ու նրանից դուրս զենքի փայլուն ու տևական հաղթանակներ էին տանում, հայկական նոր պետականության հիմքերն էին դնում: Դա չէր կարող չանդրազառնալ նրանց դիրքերի վրա երկրի ներսում: Իշխող դասակարգի երկու դասերի ուժերի հարաբերակցությունը փոխվել էր և փոխվել էր հօգուտ աշխարհիկ դասի: Հայ իշխաններն իրենց զենքի հաղթանակներին, իրենց դիրքերի ամրապնդմանը զուգորթաց, բնականաբար, երկրի ներսում վերականգնելու էին իրենց իշխանությունը ամբողջ ծավալով, որի մեջ անպայման մտնում էր նաև դատական իրավասությունը: Ոչ մի վարդապետ չէր կարող զրկել հզոր Զաքարիային դատական իրավասությունից, մանավանդ ավատատիրական կարգերի այն շրջանում, երբ ապրում էր Մխիթար Գոշր, որովհետև հասարակարգի զարգացման ներքին օրինաչափությամբ ավատատերերի իրավունքները խորանում էին ու զարգանում և ավելանում նոր իրավունքներ: Բացի դրանից. Դատաստանագրքի անդրանիկ օրինակներից մեկը Մխիթարը նվիրել է Վախթանգ իշխանին՝ իր բարերարին ու հովանավորին: Մի օրինակ էլ, հավանաբար, նվիրած կլինեք Քուրդ իշխանին, որի տիրույթներում և որի հովանավորության տակ Գետիկ վանքում ապրում էր Մխիթարը: Թվում է, չէր կարող անտեսվել նաև հեղինակի մեծազոր հոգևոր որդին և այլն. Դատաստանագրքը նվիրվել է «անսխալ ուղղությամբ դրա պատվիրաններով վարվելու» համար: Ստացվում է մի հակասություն. մի կողմից Մխիթարը Դատաստանագրք է նվիրում, ասենք, Վախթանգ իշխանին, դրա պատվիրաններով ղեկավարվելու համար, մյուս կողմից՝ նույն Մխիթարը, նույն Դատաստանագրքում սահմանում է, որ Վախթանգը և նմանները դատելու իրավասություն չունեն: Բնական է, որ այս

հսկասութիւնը պետք է վերացվել: Եվ ահա, հողավածը ի նորո խմբագրվելիս վերականգնվել է աշխարհիկ իշխողների դատական իրավասութիւնը. «Եւ արդ՝ մեզ այսպէս լիցի. զի ի տեղւոջ յորում լիցի քրիստոնեայ թագաւոր կամ իշխան—նորա զաշխարհի դատաստանս հոգայցեն ատենիւ եւ իրաւամբբ. իսկ զեկեղեցւոյ դատաստան եպիսկոպոսն հոգասցէ վարդապետական վարժմամբ եւ երկու կամ երեք կատարեալ արամբբ ընդ նմա ի դատաստանի»: Սրանով հարցը շարունակեց: Աշխարհիկ իշխանութիւնների դատական իրավասութիւնը de jure ամրապնդելուց հետո անհրաժեշտ էր նաև Դատաստանագրքի միջոցով ու Դատաստանագրքում որոշել շրջանակը այն գործերի, որոնք պետք է ենթարկվեին նրանց իրավասութեանը: Այս հարցի լուծման ամենահարմար միջոցը համարում են այն, որ Դատաստանագրքի հողվածների ընդհանուր բանակից առանձնացնում են մի ինքնուրույն բաժնի մեջ (թեև ոչ խիստ հետևողականութեամբ) այն հողվածները, որոնցով նախատեսված դիպվածները ենթակա են համարել աշխարհիկ դատարանների իրավասութեանը:

Թվում է, այսպես բաժանվեց Դատաստանագրքը երկու մասի: Դատաստանագրքը երկու մասի բաժանվելու փաստը տրամաբանական շարունակութիւնն ու ամրապնդումն է հոգևոր դատիրավասութիւնից զատ աշխարհիկ դատիրավասութեան ընդունման սկզբունքի:

Այս եզրակացութիւնը հաստատվում է նաև ձեռագրական փաստով, որն արդեն ոչ թե տրամաբանական, այլ առարկայական ապացույց է. Դատաստանագրքը բաժանված է երկու մասի միայն և միայն այն ձեռագրերում, որոնց մեջ նախադրութեան Ե զլխի հայտնի հատվածը ընդունում է հոգևոր իշխանութիւնների դատիրավասութիւնից զատ նաև աշխարհիկ մարմինների դատական իրավասութիւնը:

Այժմ անցնենք Գ խմբագրութեանը և փորձենք պարզել, թե ո՞վ է կազմել, ե՞րբ և ինչո՞ւ:

Առաջին հարցին պատասխանելու համար որևէ փաստ չունենք, ուստի հարցը առայժմ բաց է մնում:

Երկրորդ հարցին պատասխանելու համար մատենագրական վկայութիւններ նույնպես չունենք: Որոշումները ցույց տվեցին, որ խնդիրը լուծելու միակ հնարավոր միջոցը հողվածների համեմատական-իրավագիտական վերլուծումների ու բանասիրական պրպտումների ճանապարհն է, որը տվյալ դեպքում տարավ դեպի Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի համեմատութիւնը:

Վաղուց արդեն հաստատված է, և այս պատիվը պատկանում է ամենից առաջ Հ. Կարստին, որ Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքը կազմելիս լայնորեն օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքից, ավելի ճիշտ՝ Սմբատը որոշ փոփոխութիւններով կիլիկյան հայերենի է վերածել Մխիթարի Դատաստանագրքը: Մխիթար Գոշի Դատաստանագրքի երեք խմբագրութիւնների առկայութեան պայմաններում բնականորեն հարց էր ծագում, թե որ խմբագրութիւնից է օգտվել Սմբատը: Այս հարցը պարզելու մի միջոց էր մնում՝ բնագրային համեմատութիւնը: Եվ իրոք, Մխիթար Գոշի Դատաստանագրքի խմբագրութիւնների և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի բնագրերի մանրաբնիկ համեմատութիւնը ուշագրավ շատ փաստեր երևան հանեց: Սակայն պրպտումները ցույց տվեցին, որ կարևոր նշանակութիւն ունի և արդյունավետ հետևութիւնների հիմք կարող է դառնալ նաև Մխիթարի Դատաստանագրքի հարցը:

տանագրքի խմբագրութիւնների և Սմբատի Դատաստանագրքի համակարգերի բաղադատումը: Գործը ղեկավարանում է նրանով, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում Մխիթար Գոշի Դատաստանագրքի համակարգը մեծապես խախտվել է, հոդվածները վերադասավորվել են: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի Առաջաբանութիւն մեջ այս մասին ասված է. «Յառաջ պատե՛հ համարեցաք զվիճակեալ դատաւորացն գրել. բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւն եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի: Եւ զնոցին դատաստանն եւ զիրաւունքն գրեցաք. եւ ապա զկարգաւորացն եւ զաշխարհականացն եւ զայլուկնոջն»<sup>83</sup>: Սմբատը (կամ ով որ է, միևնույն է) ստեղծել է իր սեփական և բավական հաջող համակարգը, որն րեդհանրապես իրավագիտական մտքի նվաճում է իր ժամանակի համար: Բնական է, որ այս նոր համակարգը կարող էր ստեղծվել Մխիթարի Դատաստանագրքի համակարգի խախտումով միայն: Այս պարագային, Սմբատի Դատաստանագրքում, լավագույն դեպքում միայն հետքեր կարող էին մնալ Մխիթարի Դատաստանագրքի համակարգից, միայն հետքեր: Այդ հետքերը, բարեբախտաբար, կան, բավական ցայտուն են և անշեղորեն տանում են դեպի Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրութիւնների համակարգը: Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում Մխիթարի Դատաստանագրքի համակարգից եղած շեղումներն ու խախտումները չէ, որ պետք է հաշվի առնվեն ներկա դեպքում, որքան էլ դրանք նշանակալից լինեն. դա, ինքնին, հասկանալի է, որովհետև Սմբատը գիտակցաբար ու որոշակի նպատակադրութիւնամբ խախտել է այն: Այս պարագային առավել ևս ուշադրով է, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում, զգալի թվով դեպքերում, պահպանվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի որոշ հատվածների համակարգը և դա համապատասխանում է ոչ թե Բ, այլ ԱԳ խմբագրութիւնների համակարգին: Ասածը ցուցադրենք համեմատական մի տախտակով, սյունակների հետևյալ նշանակութիւնամբ.

1. Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի հոդվածների հաջորդականութիւնը<sup>84</sup>:

2. Նույն հոդվածների համապատասխանութիւնները Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ և Բ խմբագրութիւններում:

Սմբատ	Մխիթար	
	ԱԳ	Բ
1	2	II 1
2	20	II 2
3	31	II 10
4	32	II 11
5	33	II 12
6	34	II 13
7	35	II 14
8	36	I 22
9	37	II 15

Սմբատ	Միթար	
	ԱԳ	Բ
10	38	II 16
	39	I 23
	40	I 24
11	41	I 25
	42	I 26
12	43	I 27
13	44	I 28
14	45	I 29
15	46	I 30

<sup>83</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հրատ. Ա. Փալատյանի, Երևան, 1958, էջ 5. Armentisches Rechtsbuch, erster Band, Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert oder mittellarmenisches Rechtsbuch von Josef Karst. Strassburg, 1905, էջ 14.

<sup>84</sup> Հ. Կարստի և Ա. Փալատյանի հրատարակութիւններում այս հատվածում հոդվածների հաջորդականութիւնը նույնն է.

Մճբատ	Մխիթար	
	ԱԳ	Բ
16	47	I 31
17	48	I 32
18	49	II 17
19	50	II 18
20	4	I 3
21	157	I 66
22	158	I 67
23	159	I 68
24	160	I 69
	161	I 70
25	162	I 71
26	163	I 72
27	164	I 73
28	170	I 79
	173	I 82
29	173	I 82
30	199	I 97

Մճբատ	Մխիթար	
	ԱԳ	Բ
31	200	I 98
32	201	I 99
	202	I 100
33	Սահակի Կանոն.	Սահակի Կանոն.
34	Սահակի Կանոն.	Սահակի Կանոն.
35		
36		
37	203	I 101
38	204	I 102
39	205	I 103
40	206	I 104
41	207	I 105
42	208	I 106
43	209	I 107
44	210	II 103
45	211	II 104

Ուշադրութիւն դարձնենք այս տախտակի հետեյալ հատվածների վրա. հոդվ. 7—9, 10, 16—19, 41—45: Մճբատի Դատաստանագրքի 7-րդ հոդվածը = Բ, II, 14, 8-րդը՝ Բ, I, 22, 9-րդը՝ Բ, II, 15, բայց Մխիթարի Դատաստանագրքի Բ խմբագրութեան տարբեր մասերի այդ հոդվածները հավասար են ԱԳ խմբագրութիւնների 35, 36, 37-րդ հոդվածներին:

Այսպէս.

Մճբատի Դատաստանագիրք	Մխիթարի Դատաստանագիրք	
	ԱԳ խմբագր.	Բ խմբագր.
7	35	II 14
8	36	I 22
9	37	II 15

Մխիթար Գոշի Դատաստանագրքի Բ խմբագրութեան տարբեր մասերի հոդվածները այնպէս են միացված կամ այնպիսի հաջորդականութեամբ են տեղադրված Մճբատ Սպարապետի Դատաստանագրքում, որ ստացվել է ԱԳ խմբագրութիւնների հերթականութիւնը:

Կամ.

Մճբատի Դատաստանագիրք	Մխիթարի Դատաստանագիրք	
	ԱԳ խմբագր.	Բ խմբագր.
10	38	II 16
	39	I 23

Սիւն ելնենք փաստ համարվող այն ենթադրութիւնից, որ Մճբատ Սպարապետը օգտվել է միայն Բ խմբագրութիւնից, ապա զարմանքով պիտի ար-

ձանագրենք, որ Սմբատը իր ձեռքի տակ ունենալով միայն Բ խմբագրությունը հետևել է հողվածների ԱԳ խմբագրություններում եղած հաջորդականությանը: Դարձյալ.

Սմբատի Դատաստանագիրք	Մխիթարի Դատաստանագիրք	
	ԱԳ խմբագր.	Բ խմբագր.
16	47	I 31
17	48	I 32
18	49	II 17
19	50	II 18

Սմբատ Սպարապետը, դարձյալ, այնպիսի հաջորդականությամբ է տեղադրել Բ խմբագրության տարբեր մասերի հողվածները, որ ստացվել է ԱԳ խմբագրությունների հողվածների շարակարգը:

Մի օրինակ ևս.

Սմբատի Դատաստանագիրք	Մխիթարի Դատաստանագիրք	
	ԱԳ խմբագր.	Բ խմբագր.
41	207	I 105
42	208	I 106
43	209	I 107
44	210	II 103
45	211	II 104

Նորից ու նորից Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքում այնպիսի հերթականությամբ է տեղադրել Մխիթարի Դատաստանագրքի Բ խմբագրության տարբեր մասերի հողվածները, որ ստացվել է ԱԳ խմբագրությունների շարակարգը: Եզրակացությունը, թվում է, բխում է ինքնին. Սմբատ Սպարապետը իր Դատաստանագիրքը կազմելիս օգտվել է ոչ թե (կամ ոչ միայն) Մխիթար Գոշի Դատաստանագրքի Բ խմբագրությունից, այլ (կամ այլև) մի այնպիսի ձեռագրից (կամ ձեռագրերից), որը պատկանում է ԱԳ խմբագրություններին:

Քանի որ Սմբատ Սպարապետը իր Դատաստանագիրքը կազմելիս հետևել է նյութի առարկայական դասդասման սկզբունքին, մի բան, որ նվաճում է իրավագիտության մեջ իր ժամանակի համար, ապա վերը բերված համընկնումները կարող են համարվել հենց այդ աշխատանքի հետևանք, որով նշված համապատասխանությունները դառնում են արդեն պատահականության արդյունք: Այս պատկերացումը, թերևս, ճիշտ կլիներ, եթե Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում պահպանված լիներ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հողվածների առանձին խմբերի կարգը միայն և միայն այն դեպքերում, երբ Մխիթարի Դատաստանագրքում, անկախ խմբագրություններից, հողվածները հարմար դասավորություն ունեն և միմյանց հաջորդում են բովանդակությամբ

նման հողվածներ: Սակայն պետք է նշենք, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքում հաճախ իրար հաջորդում են Մխիթարի Դատաստանագրքի իրար հետևող այնպիսի հողվածներ, որոնք բովանդակությունով նման չեն:

Օրինակ.

Սմբատի Դատաստանագիրք	Մխիթարի Դատաստանագիրք
հողված	հողված
4 = Յաղագս դատաստանաց գիւտից:	ԱԳ 32, Բ II 11
5 = Յաղագս դատաստանաց կոտուղաց և խլուղաց զմորուս:	ԱԳ 33, Բ II 12
6 = Յաղագս դատաստանաց հորոց սերմանց:	ԱԳ 34, Բ II 13
7 = Յաղագս դատաստանաց վնասելոց շինականաց ի տերանց առանել քան զսովորականն լեալ հրաման:	ԱԳ 35, Բ II 14
8 = Յաղագս դատաստանաց որ շիցեն քա- հանայք եւ իրս ինչ առնիցեն եւ կամ քահանայք անիրաւս ինչ:	ԱԳ 36, Բ I 22
9 = Յաղագս դատաստանաց զքահանայս անարգողաց:	ԱԳ 37, Բ II 15
10 = { Յաղագս դատաստանաց դատաւորաց: Յաղագս դատաստանաց ընչից եկե- զեցւոյն եպիսկոպոսին:	ԱԳ 38, Բ II 16 ԱԳ 39, Բ I 23
Օրինակ.	
15 = Յաղագս դատաստանաց վկայից եպիսկոպոսաց:	ԱԳ 46, Բ I 30
16 = Յաղագս դատաստանաց եպիսկոպո- սաց շձեռնադրել զոք յիւրոցն արտաբոյ կամաց եւ միաբանութեան պլոցն:	ԱԳ 47, Բ I 31
17 = Յաղագս դատաստանաց եպիսկոպո- սաց որ արկանէ զանձն յերկրաւոր հոգս:	ԱԳ 48, Բ I 32
18 = Յաղագս դատաստանաց զժառայս ի ժառանգութիւն ածելոյ նշանակ:	ԱԳ 49, Բ II 17
19 = Յաղագս դատաստանաց անարգողաց զթագաւորս եւ զիշխանս:	ԱԳ 50, Բ II 13

Օրինակների թիվը կարելի է շարունակել, բայց այսքանն էլ բավական է թվում: Եթե Մխիթարի Դատաստանագրքի Բ խմբագրությունն տարբեր մասերի բովանդակությամբ նման հողվածները միշտ իրար հետևից շարված լինեին Սմբատի Դատաստանագրքում, ապա վերը նշված ենթադրությունը, թերևս, ճիշտ կլիներ: Բայց, ինչպես տեսնում ենք, Սմբատի Դատաստանագրքում իրար հաջորդում են Բ խմբագրության տարբեր մասերի այնպիսի հողվածներ, որոնք բովանդակությամբ իրար նման չեն, այսինքն՝ առարկայական խմբավորման ենթակա չեն: Սմբատ Սպարապետը, ճիշտ է, ձգտել է առարկայապես նման հողվածները կենտրոնացնել մի տեղ, բայց այդ սկզբունքից շեղումներ կան և քիչ չեն: Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքի առանձին հատվածներում հետևել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի համակարգին, բայց այս հատվածների առանձին մասերի հիման վրա, թվում է, անկարելի է որոշել, թե Մխիթարի Դատաստանագրքի որ խմբագրության համակարգին է հետևում

Սմբատը: Սակայն, երբ այդ հատվածները դիտում ենք ամբողջությամբ, վերը նշված շեղումներն են հենց (Բ խմբագրության տարբեր մասերի այլաբովանդակ հոդվածների այնպիսի հաջորդականությունը Սմբատի Դատաստանագրքում, որ համընկնում է այդ խմբագրությունների հաջորդականությանը), որ ցույց են տալիս, թե Սմբատի Դատաստանագրքը հետևում է ԱԳ խմբագրություններին: Ուստի, սրանով ևս հաստատվում է, որ Սմբատ Սպարապետը օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրությունից:

Շարունակելուց առաջ, հենց այստեղ նշենք, որ ներկա դեպքում մեզ չի հետաքրքրում Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի և Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ա ու Բ խմբագրությունների առնչակցության հարցը, որովհետև դա չունի որևէ կապ այն խնդրի լուծման հետ, որ հետամտվում է այս դեպքում՝ Գ խմբագրության ծագման ժամանակը որոշելու հետ: Հետևապես երբ ասում ենք, թե Սմբատն օգտվել է Գ խմբագրությունից, նկատի ունենք միայն այս խմբագրությունը:

Անցնենք բնագրային համեմատություններին: Պետք է նշել, սակայն, որ մեզ հետաքրքրող տեսանկյունով գուգահեռներ գտնելը Սմբատի Դատաստանագրքում շատ դժվար է, որովհետև Սմբատի Դատաստանագրքում Մխիթարի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները բերված են խիստ համառոտ, կիլիկյան բարբառով և ազատ շարադրանքի ձևով, տրված է ամենաէական, իրավական-նորմատիվ արժեք ունեցող նյութը միայն, «խոսքի սիրտը», ինչպես վկայում է հիշատակագիրը. «Սւ զսիրտ բանիցն առեալ եղի համարոտաբար», կամ՝ «Սւ արդ գրեցի.... համարոտաբար զսիրտ բանիցն»: Մի այլ առիթով Սմբատը դարձյալ գրում է. «Բայց ինչ սսեմ ես՝ որ կու գրեմս, չկարցի այլ ցեղ գրել քան զոր յարինակն գտայ, յանդիմանութիւն առ առաջնորդացն եկեղեցոյ—բայց կարճեցի քանի կարցի....»<sup>85</sup>: Այս պարագաներում, բնական է, որ երկու Դատաստանագրքերում բնագրային բառացի նույնություններ կարող են և չլինել, ուստի պետք է նկատի առնվեն նույնություններն ըստ բովանդակության, ըստ էության, ըստ իրավահարաբերությունների կարգավորման նույնության: Զուգահեռները երկու Դատաստանագրքերում գերազանցապես այս բնույթի են և նվազ խոսուն ապացույցներ չեն, քան բառացի գուգահեռները:

Համեմատենք.

Մխիթարի Դատաստանագրքը	Սմբատ Սպարապետի Դատաստանագրքը	
Նոդված Բ (=Բ, II, 1)	Նոդված Ա	
ԱԲ խմբագր.	Գ խմբագր.	
Եւ եթէ շինիցէ քաղաք ևւ կամ դղեակ, ևւ աշխարհագիր եթէ առնիցէ, ևւ եթէ դահեկան ևւ դրամ հաստատիցէ ևւ կամ հաստանիցէ.	Եւ եթէ շինիցէ քաղաք կամ բերդ, ևւ թէ աշխարհագիր առնիցէ, ևւ թէ դահեկան կամ դրամ հաստատիցէ, ինքնաշխարհ կամօք	Եւ թագաւորն մէն է, որ կարէ դեկան շինել, ևւ քաղաք, ևւ բերդ, ևւ մեծ դեպտոց կանդարայ, ևւ հոգեւտուն ի մեծ ճանփնի ևւ ի

<sup>85</sup> J. Karst, Sempadscher Kodex, 1. Band, էջ 40. «Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք», էջ 27: Ետ այսու քաղվածքներն այս Դատաստանագրքից բերվում են միայն ըստ Հ. Կարստի հրատարակության:

իշխանութիւն կալցի ըստ իրաւանց դատաստանի: Այլ իշխանաց ոչ է իրաւացի հատանել դահեկան եւ դրամ, եւ եթէ հատանիցէ, հրամանաւ թագաւորին լինիցի, նոյնպէս՝ շինել քաղաքս եւ բերդս:

Կամուրջս շինել մեծամեծ գետոց՝ թագաւորաց լիցի, եւ պանդոկի եւ իջաւանաց տունս. եւ այնոցիկ՝ հրամանաւ նոցա լիցին:

ԱՐ և Գ խմբագրութիւնները տարբերութիւններն արտահայտող նրբերանգներինց նշենք միայն մեկը: Ըստ ԱՐ խմբագրութեան թագաւորը պարգապես իրավունք ունի քաղաք կառուցելու, դրամ հատելու և այլն: Գ խմբագրութեան համաձայն թագաւորն այդ անում է ինքնիշխան, միահեծան կամքով: Վերջին ձևով է արտահայտվում և Սմբատը (միայն թագաւորն է, որ կարող է...), ուրեմն՝ Սմբատն օգտվել է Գ խմբագրութիւնինց:

Այնուհետև.

Մխիթարի  
Դատաստանագիրք

Հոգված Զ (=Բ, 1, 5)

ԱՐ խմբագր.

Եւ եթէ անասուն բերեալ իցէ, զգլուխն տացեն եւ զաճն յերկուս բաժանիցեն, յաղաքս աշխատելոյ ի պահելն:

Գ. խմբագր.

Եւ եթէ անասուն բերեալ իցէ կինն, զգլուխքն առցէ և զկէսն աճոյն և կէսն այրկանն տացի վասն աշխատութեան և ծախիցն:

Սմբատ Սպարապետի  
Դատաստանագիրք

Հոգված ԶԲ

Ապա անասուն գինչ որ լինի՝ գլուխքն դառնայ, և այճն ի կէս լինի. ու վասն արծեւոյ կամ ստածելոյ կամ վասն այլ իրաց վարց կամ այլ աւելի պակաս չկայ:

Ամուսինների բաժանման ղեպքում կինն ստանում է իր բերած անասունները լրիվ զլխաքանակով, իսկ այդ անասունների տված աճը ըստ ԱՐ խմբագրութիւնների բաժանվում է երկու մասի, ըստ Գ խմբագրութեան և Սմբատի Դատաստանագրքի կիսվում է: Ուրեմն, ԱՐ խմբագրութիւններում նորմի ձևակերպումը հստակ չէ, իրավական անորոշութիւն է պարունակում, որովհետև չի ասված, թե անասունների աճը ինչ հարաբերութեամբ պետք է բաժանել երկու մասի և ո՞ր մասը պետք է տալ տղամարդուն: Ինքնին հասկանալի է, որ այս անորոշութիւնը պիտի դառնար ամուսինների միջև լրացուցիչ վեճերի առիթ: Գ. խմբագրութիւնում, ամենայն հավանականութեամբ դատական փորձի հետևանքով, այդ անորոշութիւնը վերացված է: Նորմին տրված է հստակ և օրենսդրի դիտավորութիւնինց տարբեր մեկնաբանում բացառող ձևակերպում. աճի կեսը՝ կնոջը, կեսը՝ տղամարդուն: Ինչպես տեսանք, Սմբատի Դատաստանագրքում նորմը սահմանված է ոչ թե ԱՐ, այլ Գ խմբագրութեան սկզբունքով, հետևապես Սմբատ Սպարապետը օգտվել է Գ խմբագրութիւնինց:

Մի փաստ էս.

Մխիթարի  
Դատաստանագիրք

Սմբատ Սպարապետի  
Դատաստանագիրք

Հոգված ժն (= Բ, 1, 14)

Հոգված ՀԲ

ԱԲ խմբագր.

Գ խմբագր.

Եթէ դիական ախտիւ  
լցնալ այր զկին իւր անար-  
զէ նախատանաւք միշտ,  
եթէ խորթք իցեն եւ այնո-  
րիկ ազազաւ մոլի, դա-  
տաստան լիցի, թէ յառաջ-  
նունն յանձին կալաւ զնո-  
սա, համբերել պարտի, ա-  
պա թէ ոչ՝ յազց դարձցի  
կնոջն:

Եթէ այր զկին իւր անար-  
զէ անդադար մախանօք,  
եթէ խորթ կայր ի մէջ իւ-  
րեանց և վասն այնորիկ  
նախատեն զիրեարս, դա-  
տաստան լիցի, եթէ պոմ-  
նով էառ զկինն և զխոր-  
թերն, պարտ է համբերել,  
ապա թէ ոչ՝ յազց կնոջն  
դարձուցեն զխորթսն:

Եւ թէ անհանգստութիւն  
լինի ի յայրուկնաց մէջ, եւ  
վասն խորթերոյ լինի պատ-  
ճանն՝ նա պատեճ է որ, թէ  
պոմնով շինի շալկել այ-  
րիկն զխորթերն՝ ի մարն  
տանուլն, նա տան զխոր-  
թերն ի յազցն, որ հանգշին:

Առանց մեկնաբանությունների էլ ակնհայտ է, որ Սմբատն օգտվել է Գ և ոչ թե ԱԲ խմբագրություններից:

Ամփոփենք. Սմբատ Սպարապետը իր Դատաստանագիրքը կազմելիս, որը տեղի է ունեցել 1265 թ., օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունից, հետևապես Գ խմբագրությունը կազմվել է 1265 թ. առաջ:

Գ խմբագրությունը կազմվել է գործնական նպատակադրումով, և դատարաններում կիրառվող Մխիթար Գոշի Դատաստանագիրքը եղել է առավելապես Գ խմբագրությունը: Այդ է պատճառը, որ ամենից շատ բազմացվել ու տարածվել է Դատաստանագրքի հենց այս խմբագրությունը:

Այսպիսով, տեսնենք, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը ունի երեք խմբագրություն, որոնք իրենց ծագման հաշորդականությամբ նշանակված են Ա, Բ, Գ տառերով: Պետք է ավելացնել նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագիրքը, որը, վերջին հաշվով, այլ բան չէ, քան Մխիթարի Դատաստանագրքի խմբագրություն:

Դատաստանագրքի մեկ հասած երեք խմբագրություններից ցարդ հրատարակվել է միայն մեկը և միայն մեկ անգամ. դա Վահան Բաստամյանցի՝ ամենաբարձր զնահատականի արժանացած հրատարակությունն է, որը ներկայացնում է Բ խմբագրությունը. Ա և Գ խմբագրությունները այստեղ տրված են տողատակում, միայն որպես Բ խմբագրության տարրնթերցվածքներ: Սակայն զբանով Մխիթար Գոշի անվամբ հրատարակվել է մի գործ, որի հեղինակի մասին չենք կարող ստուգապես ասել, թե Մխիթար Գոշն է: Մինչդեռ, Դատաստանագրքի այն բնագիրը, որի հեղինակը ստուգապես ինքը՝ Մխիթար Գոշն է, Ա խմբագրությունը, ցարդ հրատարակված չէ, ինչպես նաև հրատարակված չէ Գ խմբագրությունը, որը, ինչպես քանիցս նշվել է վերը, մեծապես արժեքավոր խմբագրություն է:

Տասը տարվա կարի ծանր ու հոգնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող սույն հրատարակությամբ ընթերցող հասարակության տրամադրության տակ է դրվում Դատաստանագրքի՝ իրեն՝ մեծն Մխիթարի կողմից գրված, հեղինակային բնագիրը՝ Ա խմբագրությունը, ինչպես նաև Գ խմբագրությունը, որով ամբողջանում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հայկական խմբագրությունների հրատարակությունը:

Մխիթար Գոշի Գատաստանագիրքը հայերեն խմբագրություններից բացի ունեցել է նաև այլալեզու խմբագրություններ և սրանց թարգմանություններ՝ լատիներեն, լեհերեն, ղփչաղերեն, վրացերեն, ռուսերեն: Այս փաստն արդեն, ինքնին, խոսում է Գատաստանագրքի տարածման լայն շրջանակների ու աղ-ղեցության ընդարձակ ոլորտների մասին:

ԼԱՏԻՆԵՐԸ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Գոշի Գատաստանագրքի այլալեզու խմբագրություններից ժամանակով ստաշինը լատիներենն է, կազմված Լեհաստանում: Հայերը Լեհաստան են գաղթել ԺԱ ղարի երկրորդ կեսից սկսած տարբեր ժամանակներում և տարբեր շափերով: ԺԳ ղարում հայերը Լեհաստանում արդեն համայնք էին կազմում<sup>86</sup> և «կառավարվում էին իրենց տանուտերերով, վոյթով ու ավագներով... և ապրում էին իրենց հետ բերած իրավունքով, բարքերով ու սովորություններով»<sup>87</sup>: Լեհաստանի թագավորները ելնելով թե երկրի առևտրա-արդյունապործական զարգացման և թե իրենց ֆիսկալ շահերից, հայերին պարբերաբար տվել են առևտրա-արհեստագործական, նաև իրավական արտոնություններ: Սակայն հենց այս արտոնություններն էլ հիմքն են դարձել, մասնավորապես Լեմբերգ-Լվովում, հայկական և քաղաքային համայնքի պարբերական բախումների: Այս բախումների պատճառը, ամենից առաջ, տնտեսական էր. տեղի առևտրա-արհեստագործական խավը նեղվում էր հայկական նույն խավի մրցակցությունից: Քաղաքային համայնքը Միգիզմունդ Գ թագավորին ուղղած բողոքագիր-խնդրագրի մեջ տրտնջում է, թե «Հայք այժմ իրենց վաճառականութիւնն ամբողջ թագաւորութեան մէջ, Բրուսիոյ, Լիթուանիոյ և Մոսկուայի մէջ տարածած են, ուր իրենց նախնիքն միայն Արեւելքի վաճառականութեամբ զոհ կ'ըլլային: Այս վճառարէն ի վեր իրենց վիճակն այնպէս երջանիկ եղած է, որ ծով է ծով իրենց առուաւորը կը հասցընեն, առիթ չեն կորսընցներ գեղեր եւ աւաններ վարձելու, իրենց կալուածներն ու պարտէզներն արուարձանէից մէջ կը բազմանան եւ քաղաքին գրեթէ ամէն վաճառատները ձեռք անցուցած են: Ի՞նչ կրնան այլ եւս քաղաքին կաթողիկեայ բնակիչքն յուսալ, եթէ տակաւին Հայոց թողուի՝ որ իրենց տանց եւ շուկայի մէջ կարենան ամէն տեսակ կերպասեղէն մաս մաս վաճառել, կարենան գարեջուր, մեղրաջուր, գինի և օղի ծախել եւ ամէն արուեստ գործադրել: Կաթողիկեայ քաղաքացեաց վիճակէն վատթարագոյնը չկայ, եւ չկայ քաղաքին Հայոց վիճակէն լավագոյնը»<sup>88</sup>: Իրավական արտոնությունները ևս հայերը ձեռք էին բերում ոչ առանց պայքարի: Պրոֆ. Ֆերդինանդ Քիշոֆը, որ հատկապես ուսումնասիրել է այս հարցը և առաջինն է եղել այդ բնագավառում, գրում է. «Բարձրանալու իրենց ձգտմամբ (Emporstreben) հայերը հաճախ հակասու-

<sup>86</sup> Տե՛ս Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը (Թարգմանեց Գ. Գայէմբերեան), Վիեննա, 1890, F. Bischoff, Das alte Recht der Armenter in Lemberg, Wien, 1862, Յուլյնի՝ Urkunden zur Geschichte der Armenter in Lemberg, Wien, 1864.

<sup>87</sup> Das alte Recht der Armenter in Lemberg, էջ 255.

<sup>88</sup> Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը, Վիեննա, 1890, էջ 36—37.

Թյան մեջ էին ընկնում տիրապետող գերմանական քաղաքային համայնքի հետ, հատկապես դատիրավասության կապակցությամբ, որի շուրջ թունդ վեճ էր մղվում երկու հարյուր տարի շարունակ: Մինչդեռ հայերը, վկայակոչելով ավանդությունը, չէին ուզում ընդունել ոչ մի այլ դատիրավասություն, բացի իրենց սեփական վոյթից ու ավագներից, քաղաքային համայնքը հիմնված վավերագրերի վրա, պնդում էր, որ հայերը ստորագրվեն քաղաքային վոյթին»<sup>89</sup>, Լեհ թագավորների պարբերաբար քննել են այս վեճերը և իրենց հրամանագիր-հրովարտակներով այս կամ այն ձևով լուծել: 1469 թ. իր մի հրովարտակով Կազիմիր Գ-ն հայերին, դատիրավասության գծով, ստորագրեց քաղաքի վոյթի իշխանությունը, միաժամանակ պարտավորեցնելով վերջինիս, որ հայի դատելիս ատյան հրավիրվեն հայ ավագները և սրանց կարծիքի համաձայն կայացվի վճիռը: 1476, 1510 և 1518 թթ. հրովարտակներով այս որոշումը ավելի ճշտվեց. քաղաքային համայնքի վոյթի ու դատարանի իրավասությունը տարածվեց հայերի վրա միայն որոշակի գործերով՝ անշարժ գույքի, սպանության և մարմնական վնասվածքի, բռնաբարության և զոդության: Այս գործերով դատում էր քաղաքի վոյթը քաղաքի դատավորների հետ միասին, ըստ Մագդեբուրգյան իրավունքի, մնացած բոլոր դեպքերում դատում էր թեև նույնպես քաղաքի վոյթը, սակայն քաղաքի դատավորների փոխարեն հայոց ավագների հետ և ըստ հայկական իրավունքի»<sup>90</sup>: Այս որոշումներից հետո էլ վեճերը քաղաքային իշխանությունների ու հայկական համայնքի միջև չդադարեցին. դրանցից մեկը առիթ դարձավ, որ ստեղծվի Դատաստանագրքի լատինական խմբագրությունը: «Դատական իրավասության վերաբերյալ դեռ 1518 թ. թագավորի առջև հարուցած վեճի առիթով Սիգիզմունդ առաջինը հրամայեց հայերին, որ թարգմանեն իրենց օրենքները (Recht) հայերենից ռուբեններեն կամ լատիներեն և ներկայացնեն իրեն սեյմի առաջիկա նիստի ժամանակ: 1519 թ. Աստվածածնի ավետման օրը, հայերը Կրակովում թագավորին ներկայացրին իրենց օրենքները (Recht) լատիներեն թարգմանությամբ: Նույն թվականի Պենտեկոստեի շաբաթ օրը, թագավորը հաստատեց այն: Հայկական օրենքներն հաստատող իր հրովարտակում թագավորը ասում է, որ իրեն անհրաժեշտ է թվացել, որ հայերեն լեզվով գրված և այդպիսով միայն հայերին հասկանալի օրենքները (Recht) լատիներեն թարգմանվեն, որպեսզի դրանք հասկանալի դառնան նաև քաղաքի վոյթին և այն մարդկանց, ովքեր հայերի հետ իրավական վեճեր կունենան: [Այնուհետև թագավորն ասում է, որ] իր խորհրդականների հետ հասուն կերպով կշռադատելուց հետո նա փոխել ու կատարելագործել է մի քանի հոդված և պետական խորհրդարանի համաձայնությամբ տալիս է այժմ հայոց օրենքներին (Recht) իր հավանությունը և հաստատում է»<sup>91</sup>: 1519 թ. Լեհահայ գաղութն այնուհետև ղեկավարվում էր Սիգիզմունդ Մեծի հաստատած հայկական օրենսգրքով: Լեհահայ համայնքի ինքնավարության վերացման և ընդհանրապես գաղութի ուժացման հետ միասին Լեհահայոց Դատաստանագիրքը մոռացու-

<sup>89</sup> F. Bischoff, Das alte Recht ... էջ 255: Միխիթար Գոշի Դատաստանագրքի լատինական խմբագրության՝ Բիշոֆի հրատարակության առաջաբանը, որից կատարված է մեջբերումը, թարգմանել է նաև Վ. Բատտամյանցը. տե՛ս «Միխիթարյ Գոշի Դատաստանագիրք Հայոց», Յոռաշարանութիւն, էջ 22—27, ծնթղթ. 19:

<sup>90</sup> F. Bischoff, Das alte Recht... էջ 256:

<sup>91</sup> Անդ:

Թյան տրվեց: Սակայն, Թերևս, մի դար էլ չանցած, բարեպատե՛հ առիթն օգ-  
 նեց, որ նշանավոր այդ հուշարձանը փրկվի կորստից և դառնա հայագիտու-  
 թյան, ընդհանրապես գիտության սեփականությունը. դրա համար պարտա-  
 կան ենք կեմբերգի Համալսարանի ուսուցչապետ, գերմանական իրավունքի  
 հայտնի պատմաբան Ֆերդինանդ Բիշոֆին: Այս կապակցությամբ ինքը Ֆ. Բի-  
 շոֆը մի առիթով գրել է. «Երբ ես Ասաուրիական Բաղաֆային իրաւանց ժողո-  
 վածոյիս համար կեմպէրկի քաղաքային դիւանին դիմած էի... գտայ հոն  
 կեմպէրկի Հայոց յարաբերութեանց մասին վավերագրերու (Urkunden) մեծ  
 քանակութիւն մը, որոնց մէջէն մանաւանդ Սիկկոմունտ Ա-ի մէկ վճիռն իմ  
 մտազրութիւնս վերջին աստիճանի գրաւեց: Այս վճիռն, որ քաղաքին վարչաց  
 եւ Հայոց մէջ եղած իրաւանց խնդրոյ մ'առթիւ 1523-ին տրուած էր, ի մէջ այ-  
 լոց նաեւ միտ դնել կու տար՝ որ Հայոց իրաւունքն թագաւորին հրամանաւ հա-  
 յերէնէ լատիներէն թարգմանուած է, եւ չհտոյ բաւական ուղղութիւններէ եւ  
 փոփոխութիւններէ ետեւ՝ թագաւորէն հաստատուած է: Ասկէ զբզոնեցայ նոյն  
 իրաւունքը փնտռել, մանաւանդ որ կեմպէրկի Հայոց երբեմն սեպհական իրա-  
 ւունք ունենալուն վրայ յիշատակութիւններ կարգացած էի: Եւ արդեամբք՝ հե-  
 տաբարութեամբ փնտռածս շուտով գտայ նոյն դիւանին մէջ: ...Թէեւ կրնամ  
 ուրախանալ, որ այս շատ կողմանէ նշանակալից դատաստանագիրքն հրատա-  
 րակել պիտի կարենամ, կ'ուզեմ սակայն առ այժմ իմ մինչեւ ցայժմ րրած  
 խուզարկութեանցս արդիւնքն հոծ եւ համառօտ կերպով ծանուցանելով՝ նպաս-  
 տել նոյն արդիւնքն ամբողջացնելու եւ ուղղելու, եւ կամ նոր ծանօթութիւններ  
 տալու՝ որոնք կրնան իրն աւելի կատարելագործել»<sup>92</sup>: Ֆ. Բիշոֆը կատարեց իր  
 խոստումը և հրատարակեց լեհահայոց Դատաստանագիրքը, լատիներէն բնա-  
 գրին կցելով փոքրիկ (4 էջ), բայց բովանդակալից առաջաբան<sup>93</sup>: Ֆ. Բիշոֆը  
 իր հրատարակության համար ունեցել է երկու ձեռագիր: Առաջինը պատկանել  
 է կեմբերգի քաղաքային դիվանին. «Սա ստորագրված է, — գրում է Ֆ. Բի-  
 շոֆը, — լեհական թագավորության փոխկանցչեր՝ Պրեծեմիսլ Պետրոս եպիս-  
 կոպոսի կողմից, ունտի վավերական և բնագրի հետ նույն ժամանակ կատար-  
 ված ընդօրինակություն է, հավանաբար քաղաքային դատարանի գործածու-  
 թյան համար: Երկրորդը գտնվում է կեմբերգի կայսերական-թագավորական  
 համալսարանի գրադարանում»<sup>94</sup>: Այս ձեռագրի ստաջին էջի վրա կա հետևյալ  
 վերնագիրը. „Statuta juris Armenici per Sigismundum primum Regem Po-  
 lonie pientissimum approbata et confirmata iussuque ac mandato eiusdem  
 Regiae Majestatis ex lingua illorum natiua in latinum sermonem trans-  
 lata et hic fideliter ex exemplari descripta”<sup>95</sup>:

<sup>92</sup> Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն, 1. Պիշոֆ, լեհահայոց հին իրա-  
 ւունքը (Թարգմանեց Գ. Գալէմբերեան), Վիեննա, 1880, էջ 1—2: Ֆ. Բիշոֆի այս աշխատու-  
 թյունը՝ Das alte Recht der Armenier in Polen. Aus Urkunden des Lemberger Stadtar-  
 chivs, հրատարակվել է 1857 թ. ավստրիական թերթում՝ Österreichische Blätter für Li-  
 teratur und Kunst. Beilage zur Öster.-Kais. Wiener Zeitung, №№ 28, 33, 37, 39.

<sup>93</sup> Das alte Recht der Armenier in Lemberg, տպագրված սկզբում՝ Sitzungsberichte  
 der Kaiserlichen Akademie der Wissenschaften. Philologisch-historische Klasse B. 40,  
 Wien, 1862, որից և շրջանառության մեջ գտնվող առանձնատիպը նույն թվականով:

<sup>94</sup> Անդ, էջ 257—258:

<sup>95</sup> Անդ, էջ 258. «Օրէնքներ Հայոց իրաւանց կեհաստանի բարեպաշտ Սիգիսմունդ առաջին  
 թագաւորից հաւանութիւն ստացած և նորա հրամանով հաստատած, և նորա թագաւորական  
 մեծութեան հրամանով նոցա մայրենի լեզուից լատիներէն թարգմանած և բնագրից ուղիղ ընդ-  
 օրինակած». Թարգմանութիւնը Վ. Բաստամճյանցի — Յառաջաբանութիւն, էջ 26—27:

Միգիզմունդ Առաջինի կողմից հաստատված Լեհահայոց Դատաստանագիրքը բաղկացած է տասը գլխից, որոնք համարակալված չեն, և 124 գլխից, որոնք և՛ համարակալված են, և վերնագրված (բացի առաջին երեք գլխից)։ Տ. Բիշոֆը ծանոթ չէր ոչ հայ իրավունքին և ոչ էլ նրա հուշարձաններին, նրա գիտելիքները այս բնագավառում սահմանափակվում են իր իսկ հրատարակած բնագրի շրջանակներով։ Ուստի, նրան չէր կարող հայտնի լինել իր հրատարակած օրենսգրքի կապը հայ իրավունքի որևէ առանձին հուշարձանի, մասնավորապես Մխիթար Գոշի Դատաստանագրքի հետ։ Առաջինը Վ. Քաստամյանցն էր, որ ցույց տվեց ու հաստատեց նաև, որ Միգիզմունդ թագավորի կողմից հաստատված և Բիշոֆի հրատարակած՝ Լեհահայոց օրենսգիրքը կազմված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիման վրա։ Վ. Քաստամյանցը մեկ առ մեկ համեմատել է Լեհահայոց օրենսգրքի հոդվածները Մխիթար Գոշի Դատաստանագրքի իր հրատարակած բնագրի հետ և ցույց տվել, որ դրանք, գրեթե բոլորը, ուղղակի թարգմանված են Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածներից, որոնցից «մի քանիսը վերցրած են... գրեթե բառ առ բառ, մեծազոյն մասը ենթարկուած է քիչ կամ շատ փոփոխութիւնների, մի քանիսը աւելի համառօտուած են և մի քանիսը ընդհակառակը աւելի ընդարձակուած են։ Սոյն փոփոխութիւններից մի մասը արել են երեկ ինքեանք՝ Լեմբերգի հայերը յարմարացուցանելով իրեանց կեանքին, ժամանակին և դրութեան. միւս մասը արել է Լեհաստանի աէրութիւնը, յարմարացուցանելով իւր պետական օրէնքներին»<sup>96</sup>։

Համադրենք այս օրենսգրքերից մի քանի հոդված

### Capitulum primum

Si quis Juris Regii aut domini fuerit excessiws contra Regiam Maiestatem aut dominum suum, demerebitur talis cilum, filij uero eius et fratres lokum paternum non obtinebunt propter excessum criminum patris eorum, pueri uero bona paterna non petdunt, si cum patre in tali consilio criminoso non fuerint, et similiter fratres predicti excessoris si uero fuerint in consilio prefato, tunc quilibet eorum iuxta factum pat debet.<sup>97</sup>

Մխիթար

Բիշոֆ

Մասն Բ, հոդված Բ

Հոդված Ա

Եթէ իշխանք եւ այլք ի թագաւորական տանէ յանցաւորք թագաւորի լիցին, ևւ կամ այլ նուաստք իշխանի, ըստ դատաստանի է զկնի յանցաւորացն մահու զորդիս եւ զեղբարս ի ժառանգութիւն նոցա կացուցանել, եւ մի պատճառաւ հարց որդիք զրկիցին, եթէ հա-

մթե որ դուրս կզա թագավորի կամ (իր) տիրոջ իրավունքից ընդդէմ Արքայական Մեծութեան կամ իր տիրոջ, այդպիսին արժանի է մահի, իսկ նրա որդիք և եղբայրները չպիտի ստանան փոխանակ հոր իրենց՝ հոր հանցանքի փոխարենը, և որդիք չպիտի կորցնեն

<sup>96</sup> «Ճառաչարանութիւն», էջ 31:

<sup>97</sup> F. Bischoff, Das alte Recht .... էջ 262: Վ. Քաստամյանցը համարել է վեց հոդված. բերել է լատիներենը, այնուհետև սրա հայերեն թարգմանութեանը զուգորդել Մխիթարի համապատասխան հոդվածը: Մեր բերած երեք օրինակներն էլ բաղված են Վ. Քաստամյանցից (տե՛ս Ճառաչարանութիւն, էջ 33—36), լատիներենը՝ Բիշոֆի հրատարակութեանից:

մարարոյք նոցա շիցեն, զի իւրաքանչիւր ի սեղս իւր մեղցի բաւ տերունական հրամանի:

հայրական գույքը, եթէ հոր հետ այգպիսի հանցավոր իորհրդի մեջ մասնակից չեն եղել, որպէս և հիշյալ հանցավորի եղբայրները. իսկ ևլև մասնակից լինեն հիշյալ հանցանքին, այն ժամանակ նրանցից ով որ կլինի, գործին համեմատ պիտի պատժվի:

Capitulum secundum

Humanum genus deus liberum creavit et fecit, verum quia necessarij sunt dominis suis serui ad servendum propter terram et aquam, simile hoc ius est quando aliquis colonus seu Kmeto domino suo nichil mouendo a domino suo ubi vlt trasire potest, si vero aliquis dominorum istud tollerare nollet, scilicet libere emittere eundem subditum suum, volens eundem retinere in sua Jurisdictione tunc pueri post mortem patris si tales pueri in dominio huiusmodi domini non fuerint procreati habent libertatem eundi et se transferendi sub alios dominos ubi uoluerint.

Միւիթար

Մասն Բ, հոդված Գ

Ազատ յարարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յազազս պիտոյից եղև հոգոյ եւ շրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ գատաստան — զի թողեալ զտէրունիսն ազատ է ուր եւ կամեսցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ որ ի տերանցն եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն աղատ են որդիք ծնեալք այլուր եւ ոչ անդ:

Քիշոֆ

Հոդված Բ

Մարդկային աղբը Աստված ազատ ստեղծեց և արավ, բայց որովհետև հարկավոր են իրենց տերերին ծառայելու հոգի և ջրի համար, այսպիսի մի օրենք կա, որ երբ մի գյուղացի կամ կմեթ<sup>98</sup> իր տիրոջ՝ ուրիշ տեղ փոխադրվի իր տիրոջից, որտեղ կամենա, կարող է փոխադրվել: Իսկ եթե տերը չի կամենում թույլ տալ այդ, այսինքն՝ ազատ թողնել իր ստորադրյալին (ստրուկին) կամենալով պահել նրան իր իրավասութեան տակ, այն ժամանակ որդիք հոր մահից հետո, եթե նրանք նույն տիրոջ իշխանութեան տակ չեն ծնված, ունեն ազատութիւն զնալու և փոխադրվելու ուրիշ տերերի մոտ որտեղ և կամենան:

<sup>98</sup> «Կմեթ» բառի համար վ. Բաստամյանցը գրում է. «Անծանօթ բառ է և հաւանական է որ հայերէն լինի, բայց իբրև մի գաւառական բառ՝ սա իւր հնչմունքով փոքր-ինչ նման է վրացերէն կմա կամ դմա յոգնակի՝ բառին, որ նշանակում է ստրուկ, ճորտ: Սակայն, կարելի է, որ սա լինի և գաւառական բառ լեհերէն լեզուի» (Յառաջաբանութիւն, էջ 33, ծնթղթ. 24): «Կմեթ» հայերէն չէ և ոչ էլ վրացերեն շո՞ք բառն է: Ակադեմիկոս Բ. Գրեկովը գրում է. «Пронсхождение слова „кмет“ до сих пор точно определить не удалось. Несомненно, что слово это старое славянское... Во всех славянских языках известно это слово, однако в различных значениях: у чехов—это член земского суда (известно baronum); на руси-военный человек, дружинник; у поляков-крестьянин...»: Սլավոնական տարբեր ժողովուրդների մոտ «կմեթ» բառի իմաստի այս տարբերութիւնները Բ. Գրեկովը բացատրում է հետևյալ կերպ. «Կմեթ» բառը սլավոնական ժողովուրդների լեզվում սկզբում նշանակել է մարդ, համայնքի անդամ՝ նախ տոհմային, ապա՝ տերիտորիայի Դասակարգերի առաջացմամբ այդ բառն արդեն նշանակել է կամ համայնքից բարձրացած մարդկանց, կամ համայնականներին: ի տարբերութիւն բարձր գոտակարգերի, որոնք յուրացրել են նոր անվանումներ. «всякий есть кмет от своих предков» —ամեն ոք կմեթ է ըստ իր նախնիների: Б. Д. Греков, Полнца, М. 1951, էջ 46—47:

Capitulum sexagesimum nonum

Si aliquis nouiter vxorem duxerit, tali non licebit ad bellum proficisci, propterea ne sibi ibi aliquid aduersi et nociui contingat, ideo talem nouiter vxoratum ius a bello liberat, ut cum sua vxore noua sponsa gaudeat in domo sua. pauperes enim deus diligit et non sinit deus vt in eorum domo ita cito post nouas nuptias aliquid noui molestie tistitueque emergat, ideo tali nouo vxorio nullus imputare debet.

Մխիթար

Քիշոֆ

Մասն Բ, հոդված Զ

Հոդված ԿԹ

Եւ եթէ անուցու ոք կին նորոգ, մի մտցէ ի պատերազմ եւ մի անկիցին ի վերայ նորա եւ մի ինչ իրք. անպարտ լիցի, ի տան իւրում ուրախ արասցէ զկին իւր զոր էառ:

Մարդասէր է Աստուած, կամի զի մի անկեալ ի պատերազմին՝ սուգ լիցի տարածամ, յաղաքս որոյ անմեղադրելի են միանգամայն. կամ ամբարտաւանեալ՝ յանզգնի ճակատեալ եւ կամ երկրայի՝ զանգիտեալ: Չայս իրաւունս պահելի է զօրավարաց առ զօրս:

Եթե մեկը նոր կին առնի, այդպիսին լպիտի գնա պատերազմ, որ նրան այնտեղ ոչինչ անբախտութիւն և վնաս չպատահի, ուստի այդպիսի նոր պահվածին օրենքը ազատում է պատերազմից, որ իր նոր ամուսնացած կնոջ հետ ուրախանա իր տան մեջ, որովհետև Աստված սիրում է աղքատներին և չի թողնում Աստված, որ նրանց տան մեջ նոր հարսանիքից հետո այդպես շուտով մի նոր տարաբախտութիւն և տրամաթիւն պատահի, ուստի այդպիսի նոր ամուսինը ոչ ոք լպիտի հաշի (զօրքի համար):

Իր համեմատութիւնների արդյունքը Վ. Բաստամյանը ներկայացրել է նաև տախտակի ձևով, որտեղ լեհահայոց Դատաստանագրքի հոդվածների դիմաց նշել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները ըստ իր հրատարակութեան (Բ խմբագրութիւն)<sup>99</sup>, Վ. Բաստամյանի համեմատական այս տախտակում զգալի թվով անճշտութիւններ կան, որոնց մեծ մասը հետագայում ուղղել է Ֆրիդրիխ Մյուլլերը<sup>100</sup>, Նույն աշխատանքը, թվում է Գ. Մյուլլերից անկախ, կատարել է և Հ. Կարստը<sup>101</sup>, որն ավելի ևս ճշտել է երկու Դատաստանագրքերի հոդվածների համապատասխանութիւնը, թեև մի քանի դեպքում երեք դիտանկաններն էլ Մխիթարի Դատաստանագրքի տարբեր հոդվածներ են նշում լեհահայոց օրենսգրքի միևնույն հոդվածի համար:

<sup>99</sup> «Յատաշարանութիւն», էջ 29—31: Մխիթար Գոշի Դատաստանագրքի այն հոդվածները, որոնք Առաջին մասից են, ընդգծել է աստղանիշով:

<sup>100</sup> ՏԻ՛ս Վ. Բաստամյանի հրատարակութեան նրա գրախոսականը ի Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, V Band, Wien, 1891, էջ 52—58: «Յավթը,— որում է Յ. Մյուլլերը,— այս համեմատութիւնը ամբողջովին անճիշտ է և այդ պատճառով՝ անօգտագործելի: Այս տճան փաստի համար մեղքն ընկնում է այն հանգամանքի վրա, որ, ինչպես հետևում է էջ 27-ի ծանոթագրութեանց, հրատարակիչ Վահան Բաստամյանը իր գործի տպագրութեան սկզբում մահացել է և սրբագրիչը հոդվածների թվահամարները չի համեմատել բնագրի հետ: Ես թույլ եմ տալիս ինձ սրանով համեմատութեան սխալները սրբագրել» — անդ, էջ 54: Մենք միանում ենք Մյուլլերին, որովհետև չենք կարող մտածել, որ Վ. Բաստամյանը կարող էր նման անճշտութիւններ թույլ տալ:

<sup>101</sup> Grundriß der Geschichte des armenischen Rechtes, Sonderabdruck aus der Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX Band, Stuttgart, 1906, էջ 38—39:

Ստորև տալիս ենք երկու դատաստանագրքերի համեմատության ամփոփիչ տախտակը սյունակների հետևյալ նշանակությամբ.

1. Լեհահայոց Գատաստանագրքի հոդվածների հաջորդականությունը ըստ Քիշոֆի հրատարակության (նշանակում ենք B), Մխիթար Գոշի Գատաստանագրքի համապատասխան հոդվածների թվահամարները՝

2. Ըստ Վ. Բաստամյանցի (նշանակում ենք Բ),

3. Ըստ Ֆ. Մյուլլերի (նշանակում ենք M),

4. Ըստ Հ. Կարստի (նշանակում ենք K) և

5. Երեք ուսումնասիրողների նշանակած հոդվածները ըստ սույն հրատարակության (նշանակում ենք Ա — Ա խմբագրություն)։

Լեհահայոց Գատաստանագրքի առաջին 10-ը շհամարակալված գլուխները նշանակում ենք հոտմեական թվանշաններով։ Մյուլլերը և Կարստը Մխիթարի Գատաստանագրքի առաջին մասը նշանակել են հոտմեական առաջին (I), իսկ երկրորդ մասը՝ առանց որևէ նշանի, այդպես է նաև այստեղ։

B	Բ	M	K	Ա
1	2	3	4	5
I	—		ԱՀ <sup>102</sup> 44	
II	Նխդր. <sup>103</sup> IV		ԱՀ	
III			Նխդր. VI	
IV	Նխդր. VI			
V				
VI	Նխդր. VII		Նխդր. VI	
VII	101		99	
VIII	98, 99, 100 <sup>104</sup>		62—65	
IX	I 121		I 121	
X	I 123		I 122—123	
1	2		2	20
2	3		3	21
3	4		4	22
4	5		5	23
5	6		6	24
6	7		7	25
7	8		8	26
8	9		9	27
9	10	11	10	31, 32
10	12		12	33
11	13		13	34
12	14		14	35
13	15		15	37
14	18		18	50
15	17		17	49
16	20		20	54
17	21		21	55
18	22		22	56
19	23		23	57
20	85		85	128
21	24		24	58
22	25		25	59
23	26		26	60
24	27		27	61
25	28		28	62

<sup>102</sup> ԱՀ = Ասորա-հոտմեական Գատաստանագրքի հայկական խմբագրություն։

<sup>103</sup> Նխդր. = նախագրութիւն Մխիթար Գոշի Գատաստանագրքի։

<sup>104</sup> Չնզն = Մխիթար Գոշի Գատաստանագրքի զանազան տեղեր։

1	2	3	4	5
26	31		31	65
27	30		30	64
28	32		32	66
29	33		33	67
30	34		34	68
31	35		35	69
32	36		36	70
33	37		37	71
34	34	40	34	68, 74
35	41		41	76
36	42		42	77
37	43		43	78
38	44		44	79
39	44-45		44-45	79-80
40	46		46	82
41	47		47	83
42	48		48	84
43	49		49	85
44	51		51	89
45	52		52	90
46	53		53	91
47	54		54	93
48	55		55	94
49	56		56	95
50	57		57	96
51	58		58	97
52	59		59	98
53	60		60	99
54	61		61	100
55	I 40		I 40	105
56	67	66	66	108, 107
57	68	67	67	109, 108
58	69	68	68	111, 109
59	71	70	70	113, 112
60	72	71	71	114, 113
61	ՀԺ (6 գլխեր. 73 է. թ.)	19	—	115, 52
62	20		I 19, 20	54, 28 է 29
63	74		72	116, 114
64	ԲՃԺ = 210 <sup>105</sup>		73	115
65	75	74	74	117, 116
66	77	76	76	119, 118
67	79	78	78	121, 120
68	80	79	79	123, 121
69	81	80	80	124, 123
70	82	81	81	125, 124
71	83	82	82	126, 125
72	84	83	83	127, 126
73	87	86	86	130, 129
74	89	88	88	132, 131
75	90	89	89	154, 132
76	91, I 93	92, I 93	I 44	155, 195, 174, 195, 133
77	92	90	90	174, 154
78	93	91	91	175, 155
79	94	92	92	178, 174
80	95		95	179
81	100	98	98	185, 182
82	102	100	100	194, 185
83	104	102	102	211, 194
84	105	103	103	214, 210
85	106	104	104	216, 211

1	2	3	4	5
86	107	105	105	217, 214
87	108	106	106	218, 216
88	109	107	107	220, 217
89	98	96	108	182, 180, 218
90	111		109	222, 220
91	19		19	52
92	111		111	222
93	114	112	112	230, 226
94	115	113	113	231, 227
95	117	115	115	233, 231
96	118	116	116	234, 232
97	119	117	117	235, 233
98	120	118	118	236, 234
99	121	119	119	237, 235
100	122	120	120	238, 236
101	123	121	121	240, 237
102	124	122	122	241, 238
103	153		153	142
104	125	123	123	242, 240
105	126	124	124	243, 241
106	127	125	125	244, 242
107	1		130	2, 251
108			ԱՅ 53	
109			—	
110			ԱՅ 27, 97	
111	} <i>Ուրիշ տեղից</i>		ԱՅ 130	
112			—	
113			ԱՅ 145	
114			ԱՅ 149—150	
115 <sup>106</sup>				
116	62		ԱՅ <sup>107</sup> 1, 142	101
117	1		1	2
118	} <i>ուրիշ տեղից նիդր. VI</i>		—	
119			նիդր. VI	
120			նիդր. VI	
121			նիդր. VI	
122			—	
123	<i>նիդր. VII</i>		նիդր. VII	
124	<i>նիդր. VIII</i>		նիդր. VIII	

Լեզերեն եվ ՂՓՁԱԴԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեհահայոց Դատաստանագրքի լատիներեն խմբագրությունը թարգմանվել է նաև լեհերեն, Յ. Բիշոֆի, Կ. Վուլցիցիկու, Օ. Բալցերի և այլոց վկայությունք՝ 1601 թ.<sup>108</sup>:

<sup>106</sup> 115-րդ հոդվածը Հ. Կարստի աղյուսակում չկա:

<sup>107</sup> Առաջինը Հ. Կոչերեն է ցույց տվել, որ այդ վեց հոդվածի աղբյուրը Ասորա-հռոմեական Դատաստանագրքն է. տե՛ս Das Recht der Armenier, ի Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, Band VII, 1888, էջ 386—436, նույնի հայերեն թարգմանությունը, որ կատարել է Գ. Գալեմբեարեանը, տե՛ս Ուսումնասիրությունը լեհահայոց դատաստանագրոյն, Վիեննա, 1890. մեզ հետաքրքրող տեղեկությունը՝ էջ 21:

<sup>108</sup> Վեհահայոց հին իրավունքը, էջ 27. Das alte Recht... էջ 258, և այլն: Նույնն է գրում նաև Հ. Անասյանը. տե՛ս «Армянский Судебник Мхигара Гоша», Ереван, 1954, էջ 259: Լեհահայ Դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը հրատարակվել է մի քանի անգամ, առաջինը՝ К. Wójcicki, Prawa y artykuły ormian lwowskich, łacin'skiego orginalu pilute na polski jezyk przetlumaczone roku 1601, ի Biblioteka staroz'ytna pi-

Մխիթար Գոշի Գատաստանագիրքը թարգմանվել է նաև ղփչաղերեն (թյուրք-թաթարական լեզու): Կա երկու թարգմանություն, երկուսն էլ հայատառ ղփչաղերեն: Միայն այս փաստով արդեն այդ թարգմանությունները մեծազույն արժեք են ներկայացնում համաշխարհային լեզվաբանության համար, որովհետև մեռած այդ լեզվի սակավաթիվ հուշարձաններից են և հնագույն փաստաթղթերը: Հայատառ ղփչաղերենով կան նաև լեհահայոց դատարանների բազմաթիվ արձանագրություններ և այլ վավերագրեր, որոնք վերջին տասնամյակներում զարձել են աշխարհի ղփչաղագետների հատուկ քննության առարկա<sup>109</sup>:

Մինչև վերջերս հայտնի էր Մխիթար Գոշի Գատաստանագրքի հայատառ ղփչաղերեն թարգմանության երկու ձեռագիր՝ Վիեննայի Մխիթարյանների Մատենադարանի № 468<sup>110</sup> և Փարիզի ազգային գրադարանի № 176<sup>111</sup> ձեռագրերը, իսկ բնագրերը հրատարակված չէին:

№ 468 ձեռագիրը, որ ամբողջովին հայատառ-ղփչաղերեն է, մեզ հետաքրքրող երկու գործ է պարունակում:

Առաջին բնագիրը, որն ղբաղեցնում է ձեռագրի (գրված 1575 թ, Կամենեցում) 1ա—28բ թերթերը, ներկայացնում է Մխիթար Գոշի Գատաստանագրքի նախադրության 1—10 գլուխները և 2-րդ (=Բ, II, 1) հոդվածն ամբողջապես: 2. Տաշյանը գրում է. «Ամբողջ ներածությունն տասն գլուխներով ճշգրիկա՛յ սորկական թարգմանութեամբ, եւ որչափ կրցանք համեմատել առանց մեծ տարբերութեանց այժմու հայ բնագրէն»<sup>112</sup>: Այս բնագիրն, ուրիմն, թարգմանություն է ուղղակի Մխիթար Գոշի բուն Գատաստանագրքի և կապ չունի մյուս բնագրի հետ, որը գրավում է ձեռագրի 68բ—126ա թերթերը և ներկայացնում է լեհահայոց Գատաստանագրքի թարգմանությունը ղփչաղերեն: Այս երկու բնագրերը, լուսանկարային վերարտադրությամբ, վերջերս հրատարակեցին լեհ արևելագետներ Մ. Լեիցկին և Ռ. Կոհնովան<sup>113</sup>, Վրոցլավի Օսոլինյան հաստատության № 1916 ձեռագրից, ըստ որում լեհահայոց Գատաստանագրքի ղփչաղերեն բնագրից հրատարակվել են միայն առաջին տասը չհամարակալված գլուխները, իսկ բուն օրենսգիրքը (124 հոդվածները) չի հրատարակվել: Մա-

---

sarzy polskich, tom 1, Warszawa, 1843, էջ 31—137. *այնուհետև՝* S. Barącz, Rys 'dziejów ormian'skich, Tarnopol, 1869, էջ 205—261 (Սաղոկ Բարոնչը՝ դոմինիկյան հայտնի հայ կրոնավոր). այս հրատարակությունները հեռու են գիտական լինելուց: Նշենք նաև մեկը, որ լույս է տեսել Օ. Բայցերի ջանքերով, 25 ձեռագրի հիման վրա՝ Corpus juris Polonici v. III, Cracoviao, 1906.

<sup>109</sup> Տե՛ս Թ. Ի. Грунин, Документы на половецком языке XVI в. (Судебные акты Камеце-Подольской армянской общины), М. 1967. Edward Tryjarski, Dictionnaire arméno-kiptchack, t. Zakład orientalistyki polskiej akademii nauk, tome 1, fascicule 1, Warszawa, 1968, tome 1, fascicule 2, Warszawa, 1968, tome 1, fascicule 3, Warszawa, 1969, տե՛ս նաև Քրանսիացի Ժան Դընիի, հունգարացի էդմունդ Շյուլցի՝ հայտնի ղփչաղագետների աշխատությունները և այլն:

<sup>110</sup> Տե՛ս 2. Տաշյան, Տուրակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 943—945:

<sup>111</sup> Տե՛ս F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, էջ 97—98:

<sup>112</sup> «Տուրակ ձեռագրաց», էջ 943:

<sup>113</sup> Marian Lewicki, Renata Kohnowa La version turque—kiptchak du Code des lois des Arméniens polonais d, après le ms. № 1916 de la Bibliothèque Ossolineum t. Rocznik orientalistyczny, tom XXI, Warszawa, 1957, էջ 153—300, բնագիրը՝ էջ 166—252:

կայն, ինչպես երևում է հրատարակիչների առաջաբանից, նրանք այս երկու բնագիրը մի բնագիր են համարում:

Առաջին բնագիրը՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի թարգմանությունը գրադեցնում է ձեռագրի 156բ—193բ թերթերը և ունի հետևյալ վերնագիրը. «Աւարկի բօլօթէնեասի թօրա պիղիքինինկ», որից հետո նախադրութեան 10 գլուխների ցանկն է և ապա բնագիրը: Նմուշի համար բերենք նախադրութեան առաջին գլխի վերնագիրը. «Պուրունկիսի քի բամբասել էդարլար պիզնի քի թօրայլարի եօխդուր» (ձեռագիր № 1916, թ. 157ա. Պատասխանի այնոցիկ, որ բամբասեն զմեզ ոչ ունել դատաստան)<sup>114</sup>, Ուշագրավ է, որ ձեռագրի տարբեր էջերում այս բնագրի հեղինակ է անվանվում Միքայել վարդապետը. «Տաղըտայ եազար Միգանել վարդապետ թօրայ...» (թ. 165բ), «Տաղըտայ Միգանել վարդայպետ եազար...» (թ. 187բ և այլուր): Մ. Լեիցկին և Ռ. Կոհնովան շրջանցում են այն հարցը, թե ինչ կապ կա այս Միքայել վարդապետի և Դատաստանագրքի իսկական հեղինակ Մխիթար վարդապետ Գոշի միջև<sup>115</sup>, այնինչ Հ. Տաշյանը ուղղակի նշում է, որ զփշաղերեն բնագրի Միքայել վարդապետը Մխիթար Գոշն է<sup>116</sup>:

Երկրորդ բնագիրը, որը միայն հատվածաբար է հրատարակված, ներկայացնում է լեհահայոց Դատաստանագիրքը: Բնագրի հենց սկզբում ասված է թե զփշաղերենը ինչ լեզվից է թարգմանված. «Պաշլանիիրար թորայլարը էրմէնիլարնընկ, էրմէնի դիլինտան տայ պուիրմախընտան եարըխը ուլու պիյնինկ<sup>117</sup> տայ պիյնինկ Զիկմունդնունկ բօլաքի բօրօլնունկ, բաննընկ տայ տէտիչնինկ. դիլինտան էրմէնինինկ լադինկայ շիխարկան տր, լադինտան բուլաքիլկայ, այ բուլաքիտան՝ պիգիմ դիկլայ...» (ձեռագիր, թ. 209ա)<sup>118</sup>: Ըստ այսմ Դատաստանագիրքը հայերենից թարգմանվել է լատիներեն, լատիներենից՝ լեհերեն, իսկ զփշաղերենը թարգմանվել է լեհերենից:

Ինչպես տեսանք, գիտություն մեջ ընդունված է, որ լեհահայոց Դատաստանագիրքը լատիներենից թարգմանվել է լեհերեն 1601 թ.: Սակայն, և՛ Վիեննայի, և՛ Փարիզի, և՛ մանսվանդ, Մ. Լեիցկու ու Ռ. Կոհնովայի հրատարակած ձեռագրերը, թվում է, հնարավորություն են տալիս վերանայելու ընդունված տեսակետը:

Վիեննայի ձեռագիրը գրված է 1575 թ., Փարիզինը՝ 1568: Քանի որ զրփշաղերենը թարգմանություն է լեհերենից, ինչպես ասված է նաև Վիեննայի ձեռագրում, ապա լեհերենը պետք է գոյություն ունեցած լիներ, բնականաբար, նշված թվականներից առաջ, ուրեմն 1568 (կամ 1575) թվականից առաջ: Օսոլինյան հաստատության ձեռագիրը հնարավորություն է տալիս այդ թվականը ավելի առաջ տանելու: Ձեռագրի 297ա թերթում, ուր շարադրված է Միգիզմունդ առաջինի՝ լեհահայոց Դատաստանագիրքը հաստատող հրովարտակի բովանդակությունը, գրանից անմիջապես հետո կա հիշատակարան, որը վերջանում է հետևյալ բառերով. «եազըլտը թվականընկ ԶԶԲ սինայ», որ նշանակում է «գրեցավ թվականին ԶԶԲ», հայոց 972 թվականին, կամ ըստ մեր թվարկության՝ 1523 թ.:

<sup>114</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 167. տե՛ս նաև Հ. Տաշյան, Յուցակ... էջ 943, որտեղ և թարգմանությունը:

<sup>115</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 165:

<sup>116</sup> «Յուցակ ձեռագրաց», էջ 943:

<sup>117</sup> Բառը կրկնված է:

<sup>118</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 241, նաև Տաշյան, Յուցակ... էջ 944:

Մ. Լևիցկին և Ռ. Կոհնովան նշում են, որ իրենք մի կողմ են թողնում ձեռագրի լեհերեն բնագիրը, որովհետև զբանով մանրամասն գրադվել է Օ. Բալցհիրը<sup>119</sup>, ուստի նրանք կարող էին ուշադրություն չդարձնել այս ձեռագրի թվականի վրա՝ կապված Դատաստանագրքի լատիներենից լեհերենի թարգմանության թվականի հետ: Սակայն, վերը բերված հիշատակարանը, ինչպես երեվում է, վրիպել է մյուս ուսումնասիրողների ուշադրությունից: Ինչևէ, լեհահայոց Դատաստանագրքի թարգմանությունը ղփշաղերենի, գրված հայերեն տառերով, գտնում ենք արդեն 1523 թ. գրված ձեռագրում: Քանի որ հենց այս ձեռագրում էլ է ասված, որ ղփշաղերենը թարգմանություն է լեհերենից, ապա ակնհայտ է, որ Դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը 1523 թ. արդեն կար: Ինչպես նշում են Մ. Լևիցկին և Ռ. Կոհնովան, Օսոլիսյան հաստատության № 1916, մեզ հետաքրքրող այս ձեռագրում կա նաև Դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը: Ձեռագրի 1—155բ թերթերը բովանդակում են լեհերեն թարգմանության բնագիրը, 156բ—319բ թերթերը՝ ղփշաղերենը<sup>120</sup>: Ցավոք, հրատարակիչները նկարագրական անհրաժեշտ տեղեկություններ չեն հաղորդում ձեռագրի առաջին՝ լեհական մասի վերաբերյալ, ուրեմն պետք է ենթադրել, որ նրանց նկարագրությունը վերաբերում է ամբողջ ձեռագրին. եթե այդպես է, ապա 1523 թվականը վերաբերում է ամբողջ ձեռագրին: Սակայն, անկախ վերջին հանգամանքից, վերը նշված փաստն արդեն հաստատում է, որ լեհահայոց Դատաստանագիրքը լեհերեն է թարգմանվել ոչ թե 1601 թ. ինչպես ընդունված է գիտության մեջ, այլ 1523 թ. կամ ավելի ճիշտ՝ 1519—1523 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

Լեհահայ գաղութի լեզուն սկզբում, բնականաբար, հայերեն էր: Սակայն աստիճանաբար մայրենին տեղի է տալիս, և Սիգիզմունդ Մեծի ժամանակ արդեն, գոնե դատարանի համար, հայերի գործածական լեզուն նաև լեհերենն էր ու ղփշաղերենը: Գործնական այս կարիքները բավարարելու համար է, որ լեհահայ Դատաստանագիրքը թարգմանվել է լեհերենի և ղփշաղերենի: Գաղութի դատարանների արձանագրությունները ևս սկզբում եղել են հայերեն, սակայն հետագայում, հայերենից բացի, զբանք կազմվել են նաև լեհերեն և ղփշաղերեն<sup>121</sup>: Լեհահայ գաղութի կյանքին վերաբերող փաստաթղթերի, մասնավորապես նրանց Դատաստանագրքի շուրջ հարուստ գրականություն կա հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն, լեհերեն և եվրոպական այլևայլ լեզուներով<sup>122</sup>: Ի մասնավորի այդ բացատրվում է նաև այն նշանակությունը, որ ունեցել է լեհահայոց Դատաստանագիրքը իր տարածման սահմաններում և իրավունքի պատմության մեջ: Այս հարցի վերաբերյալ խոսքն ավարտելով՝ վկայակոչենք համեմատական իրավագիտության մեծանուն ներկայացուցիչներից մեկին՝

<sup>119</sup> Marian Lewicki, Renata Kohnowa... էջ 163:

<sup>120</sup> Անդ, էջ 163:

<sup>121</sup> Ավելի քան 600 հայերեն դատական արձանագրությունների հրատարակությունը, իրականացված առաջին անգամ, գիտական բարձր մակարդակով ու արժեքավոր ուսումնասիրությանը տե՛ս «Կամեննց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)», աշխատասիրության վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963 թ.: Նույն քաղաքի դատարանի ղփշաղերեն արձանագրությունները հրատարակվել են 1967 թ. Գրունինի աշխատասիրությանը տե՛ս վերը նշվ. աշխատությունը:

<sup>122</sup> Մեզ հայտնի վերջին ուսումնասիրությունը՝ В. С. Кульчицкий, Армянский «Судебник» Гоша и его применение во Львове (Исторические связи и дружба украинского и армянского народов, Сборник материалов второй украинско-армянской научной сессии, Киев, 1965, էջ 146—150):

կայն, ինչպես երևում է հրատարակիչների առաջաբանից, նրանք այս երկու բնագիրը մի բնագիր են համարում:

Առաջին բնագիրը՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքի թարգմանությունը զբաղեցնում է ձեռագրի 156բ—193բ թերթերը և ունի հետևյալ վերնագիրը. «Աւալիի բօլօժէնեասի թօրա պիղիքինինկ», որից հետո նախադրության 10 գլուխների ցանկն է և ապա բնագիրը: Նմուշի համար բերենք նախադրության առաջին գլխի վերնագիրը. «Պուրունկիսի քի բամբասի էդարլար պիզնի քի թօրալլարի եօխուր» (ձեռագիր № 1916, թ. 157ա. Պատասխանի այնոցիկ, որ բամբասեն զմեզ ոչ ունել դատաստան)<sup>114</sup>: Ուշագրավ է, որ ձեռագրի տարբեր էջերում այս բնագրի հեղինակ է անվանվում Միքայել վարդապետը. «Տաղրտայ եազար Միգաել վարդապետ թօրայ...» (թ. 165բ), «Տաղրտայ Միգաել վարդայպետ եազար...» (թ. 187բ և այլուր): Մ. Լեիցկին և Ռ. Կոհնովան շրջանցում են այն հարցը, թե ինչ կասյ կա այս Միքայել վարդապետի և Դատաստանագրքի իսկական հեղինակ Մխիթար վարդապետ Գոշի միջև<sup>115</sup>, այնինչ Հ. Տաշյանը ուղղակի նշում է, որ զիշաղերեն բնագրի Միքայել վարդապետը Մխիթար Գոշն է<sup>116</sup>:

Երկրորդ բնագիրը, որը միայն հատվածաբար է հրատարակված, ներկայացնում է լեհահայոց Դատաստանագիրքը: Բնագրի հենց սկզբում ասված է թե զփշաղերենը ինչ լեզվից է թարգմանված. «Պաշլանիիլար թորալլարը էրմէնիլարնընկ, էրմէնի դիլինտան տայ պուլումախընտան եարըխը ուլու պիլնինկ<sup>117</sup> տայ պիլնինկ Ջիկմունդնունկ բօլսքիլ քօրօյնունկ, բաննընկ տայ տէտիլնինկ. դիլինտան էրմէնիլնինկ լադինկայ չիխարկան տր, լադինտան բուպրիլայ, այ բուլսրիտան՝ պիգիմ դիկլայ...» (ձեռագիր, թ. 209ա)<sup>118</sup>: Ըստ այսմ Դատաստանագիրքը հայերենից թարգմանվել է լատիներեն, լատիներենից՝ լեհերեն, իսկ զփշաղերենը թարգմանվել է լեհերենից:

Ինչպես տեսանք, գիտություն մեջ ընդունված է, որ լեհահայոց Դատաստանագիրքը լատիներենից թարգմանվել է լեհերեն 1601 թ.: Սակայն, և՛ Վիեննայի, և՛ Փարիզի, և՛ մանսվանդ, Մ. Լեիցկու ու Ռ. Կոհնովայի հրատարակած ձեռագրերը, թվում է, հնարավորություն են տալիս վերանայելու ընդունված տեսակետը:

Վիեննայի ձեռագիրը գրված է 1575 թ., Փարիզինը՝ 1568: Քանի որ զրիչաղերենը թարգմանություն է լեհերենից, ինչպես ասված է նաև Վիեննայի ձեռագրում, ապա լեհերենը պետք է գոյություն ունեցած լիներ, բնականաբար, նշված թվականներից առաջ, ուրեմն 1568 (կամ 1575) թվականից առաջ: Օսոլինյան հաստատության ձեռագիրը հնարավորություն է տալիս այդ թվականը ավելի առաջ տանելու: Չեռագրի 297ա թերթում, ուր շարադրված է Միգիզմունդ առաջինի՝ լեհահայոց Դատաստանագիրքը հաստատող հրովարտակի բովանդակությունը, դրանից անմիջապես հետո կա հիշատակարան, որը վերջանում է հետևյալ բառերով. «եազրլար թվականնընկ ՋՀԲ սինայ», որ նշանակում է «գրեցավ թվականին ՋՀԲ», հայոց 972 թվականին, կամ ըստ մեր թվարկության՝ 1523 թ.:

<sup>114</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 167. տե՛ս նաև Հ. Տաշյան, *Ցուցակ...* էջ 943, որտեղ և թարգմանությունը:

<sup>115</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 165:

<sup>116</sup> «Ցուցակ ձեռագրաց», էջ 943:

<sup>117</sup> Բառը կրկնված է:

<sup>118</sup> M. Lewicki, Renata Kohnowa... էջ 241, նաև Տաշյան, *Ցուցակ...* էջ 944:

Մ. Լեիցկին և Ռ. Կոհնովան նշում են, որ իրենք մի կողմ են թողնում ձեռագրի լեհերեն բնագիրը, որովհետև գրանով մանրամասն ղբաղվել է Օ. Բալցերը<sup>119</sup>, ուստի նրանք կարող էին ուշադրություն չդարձնել այս ձեռագրի թվականի վրա՝ կապված Դատաստանագրքի լատիներենից լեհերենի թարգմանության թվականի հետ: Սակայն, վերը բերված հիշատակարանը, ինչպես երեւում է, վրիպել է մյուս ուսումնասիրողների ուշադրությունից: Ինչևէ, լեհահայոց Դատաստանագրքի թարգմանությունը ղվաղերենի, գրված հայերեն տառերով, գտնում ենք արդեն 1523 թ. գրված ձեռագրում: Քանի որ հենց այս ձեռագրում էլ է ասված, որ ղվաղերենը թարգմանություն է լեհերենից, ապա ակնհայտ է, որ Դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը 1523 թ. արդեն կար: Ինչպես նշում են Մ. Լեիցկին և Ռ. Կոհնովան, Օստրիյան հաստատություն № 1916, մեզ հետաքրքրող այս ձեռագրում կա նաև Դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը: Ձեռագրի 1—155բ թերթերը բովանդակում են լեհերեն թարգմանության բնագիրը, 156բ—319բ թերթերը՝ ղվաղերենը<sup>120</sup>: Ցավոք, հրատարակիչները նկարագրական անհրաժեշտ տեղեկություններ չեն հաղորդում ձեռագրի առաջին՝ լեհական մասի վերաբերյալ, ուրեմն պետք է ենթադրել, որ նրանց նկարագրությունը վերաբերում է ամբողջ ձեռագրին. Եթե այդպես է, ապա 1523 թվականը վերաբերում է ամբողջ ձեռագրին: Սակայն, անկախ վերջին հանդամանքից, վերը նշված փաստն արդեն համատարում է, որ լեհահայոց Դատաստանագիրը լեհերեն է թարգմանվել ոչ թե 1601 թ. ինչպես ընդունված է գիտության մեջ, այլ 1523 թ. կամ ավելի ճիշտ՝ 1519—1523 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

Լեհահայ գաղութի լեզուն սկզբում, բնականաբար, հայերեն էր: Սակայն աստիճանաբար մայրենին տեղի է տալիս, և Սիգիզմունդ Մեծի ժամանակ արդեն, գոնե դատարանի համար, հայերի գործածական լեզուն նաև լեհերենն էր ու ղվաղերենը: Գործնական այս կարիքները բավարարելու համար է, որ լեհահայ Դատաստանագիրը թարգմանվել է լեհերենի և ղվաղերենի: Գաղութի դատարանների արձանագրությունները ևս սկզբում եղել են հայերեն, սակայն հետագայում, հայերենից բացի, գրանք կաղմվել են նաև լեհերեն և ղվաղերեն<sup>121</sup>: Լեհահայ գաղութի կյանքին վերաբերող փաստաթղթերի, մասնավորապես նրանց Դատաստանագրքի շուրջ հարուստ գրականություն կա հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն, լեհերեն և եվրոպական այլևայլ լեզուներով<sup>122</sup>: Ի մասնավորի այդ բացատրվում է նաև այն նշանակությունները, որ ունեցել է լեհահայոց Դատաստանագիրը իր տարածման սահմաններում և իրավունքի պատմության մեջ: Այս հարցի վերաբերյալ խոսքն ավարտելով՝ վկայակոչենք համեմատական իրավագիտության մեծանուն ներկայացուցիչներից մեկին՝

<sup>119</sup> Marian Lewicki, Renata Kohnowa... էջ 163.

<sup>120</sup> Անդ, էջ 163:

<sup>121</sup> Ալեյի բան Հայերեն դատական արձանագրությունների հրատարակությունը, իրականացված առաջին անգամ, գիտական բարձր մակարդակով ու արժեքավոր ուսումնասիրությանը տե՛ս «Կամեննեց-Պոդոլսկ բաղաբի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.)», աշխատասիրությանը Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963 թ.: Նույն բաղաբի դատարանի ղվաղերեն արձանագրությունները հրատարակվել են 1967 թ. Գրունինի աշխատասիրությանը. տե՛ս վերը նշվ. աշխատությունը:

<sup>122</sup> Թեղ հայտնի վերջին ուսումնասիրությունը՝ В. С. Кульчицкий, Армянский «Судебник» Гоша и его применение во Львове (Исторические связи и дружба украинского и армянского народов, Сборник материалов второй украинско-армянской научной сессии, Киев, 1965, էջ 145—150):

2. Կոհլերին, որը լեհահայոց Գատաստանագիրքը համարում է մի անգին հիշատակարան համեմատական իրավագիտության համար, «յիշատակարան մը՝ որ մեր աշաց առջև լուսաւոր կը դնէ, թէ ինչպէս հայ իրաւանց ձեռօք արեւելեան բան մը յկրեւմուտս գորացաւ, արեւելեան բան մը՝ որ դարաւոր երկար պատերազմներէ ետեւ արեւմտեան իրաւանց տեղի տուաւ»<sup>123</sup>: Պարտութեան պատճառը, սակայն, այն չէր, որ հաղթեց իրավունքը իրավունքին, այլ այն, որ բախվեցին մայր հողից կտրված և մայր հողի վրա գտնվող իրավունքներ:

### ՎՐԱՅԵՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մխիթար Գոշի Գատաստանագիրքը ունեցել է նաև վրացերեն խմբագրություն<sup>124</sup>, որը կապված է արքայազն, այնուհետև վրաց արքա Վախթանգ Զ-ի անվան հետ: Ժէ—ԺԸ դարերի միջակա ժամանակահատվածում Վրաստանում ծավալվել էր կուլտուր-լուսավորչական աշխույժ գործունեություն, որի հիմնական կրողը «Իմաստուն արանց» խումբն էր նույն Վախթանգի գլխավորությամբ: Նա եղբայրական վրաց ժողովրդի մեծ լուսավորիչներից է, վրաց լեզվի ու մշակույթի մեծ երախտավորը, որը կորստից փրկեց հոգևոր շատ արժեքներ. նա առաջին տպարանի հիմնադիրն է և «Վագրենավորի» առաջին հրատարակիչը, թագավոր էր ու գիտնական: Վախթանգը միաժամանակ մեծ օրենսդետ էր ու օրենսդիր:

ԺԸ դարի սկզբներին (1703—1709 թթ.) արքայազն Վախթանգը կազմեց իր հայտնի Հավաք օրինաց-ը<sup>125</sup>, որով ձգտում էր կարգ ու կանոն հաստատել

<sup>123</sup> Գոլլե, Իրաւոնք հայոց, ի հրատարակութեանն Ռուսմասիրութիւնք լեհահայոց Գատաստանագրոյն, Վիեննա, 1890, էջ 9:

<sup>124</sup> Տե՛ս Խոսրով Թորոսյան, Մխիթար Գոշի Գատաստանագրքի վրացերեն խմբագրությունը. «Բանբեր Մատենագրանի», № 11:

<sup>125</sup> Վախթանգի Հավաք օրինացը հրատարակվել է Նախ ոտներեն թարգմանությամբ և 135 տարի հետո միայն բնագրի լեզվով՝ Երբ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսական կայսրությանը, նրան թույլատրվեց քաղաքացիական գործերով ղեկավարվել տեղի սովորույթով և Վախթանգի օրենսգրքով: Գործնական այս պահանջը բավարարելու համար ռուսական կառավարության առաջարկով Վախթանգի օրենսգիրքը թարգմանվեց ռուսերեն: Կառավարող Սենատը 1828 թ. հրատարակեց «Сборник законов грузинского царя Вахтанга»: Նույն բնագրի երկրորդ և վերջին հրատարակությունը տեղի ունեցավ Քրիլիսիոմ, 1887 թ., Ա. Ֆրենկելի ու Գ. Բաքրաձեի ջանքերով: Այստեղ առաջին հրատարակության պաշտոնական բնագիրը թողված է գրեթե անփոփոխ (փոփոխվել է համակարգը), բայց կցված են ուշագրավ առաջաբան և անհրաժեշտ ծանոթագրություններ:

Մինչև 1963 թ. Վախթանգի ժողովածուի միայն առանձին միավորներ են լույս տեսել վրացերեն: Վախթանգի ժողովածուն ամբողջությամբ վրացերեն լեզվով առաջին անգամ հրատարակվել է 1963 թ. վրաց ակնավոր գիտնական, առաջնակարգ իրավաբան-իրավագետ ակադ. Ի. Գոլիձեի աշխատասիրությամբ. *თქუა ქართული სამართლის ძეგლები, ტომი I, ვახტანგ VI-ის. სამართლის წიგნთა კრებულო, ტექსტები გამოსცა, გამოსველვა და ლექსიკონი დაუბრუნა პ. ბოლგო. დ. დოლოძემ, თბილისი, 1963, էջ 776. Հայկական օրենքները՝ էջ 223—380, Մխիթար Գոշի Գատաստանագիրքը՝ էջ 267—389: Հրատարակությունն ունի առաջաբան, որը հուշարձան արժեքավորող հակիրճ, բայց բովանդակալից խոսք է, և ընդարձակ հավելված, որտեղ տրված են անհրաժեշտ տեղեկություններ ու դնահատականի խոսք է ասված ժողովածուն կազմող միավորներից յուրաքանչյուրի վերաբերյալ:*

Հարկ է նշել, որ մեծաթեք այս հուշարձանը հրատարակված է գիտական բարձր մակարդակով, պատասխանատվության մեծ պատասխանով գործի կարևորության հանդեպ ու գիտական սկզբունքայնությամբ, որով սույն հրատարակությունը գրականապես տարբերվում է նրկու ժ-

ավատական ինքնիրավւոյթյան մեջ, օրինականութիւն սահմանել դատական կամայականութեան առօրյայում և այլն. դրանով իսկ ամրապնդել մայրամուտ ապրող պետականութիւնը: Օրենսդրական իր նախատեսումները Վախթանգն իրականացրեց ընդարձակ ծրագրով, մեծ լայնախոհութեամբ ու արքայական իմաստութեամբ: Նա շահամանախակից բուն իր օրենսդրով և իր Հավաքի մեջ մտցրեց նաև նախորդ դարաշրջաններում ստեղծված և գործող վրաց օրենքները՝ Բեքալի ու Աղբուղայի, Գևորգ Պայծառափայլի և այլն: Նա իր Հավաքի բաղկացուցիչ մաս դարձրեց նաև հարևան ու այլ ժողովուրդների օրենքներ, որոնք գործում էին Վրաստանում Վախթանգից դեռ շատ առաջ, այն է՝ Մովսիսական, Հոնական և Հայկական օրենքները: Ինչպես ասված է Հավաքի Առաջաբանում, Վախթանգը «ցանկացավ, ջանաց ու ժողովեց իրավանց բոլոր գրքերը, որոնք ժամանակի բերումով (չածոս ջոտօճոցծոտ) առանձին-առանձին ցրված էին ուրիշ թագավորութիւններում կամ Քարթլիի ներսում: Այսպես բոլորը փնտրեց, գտավ և բազում ջանքով (օծյլըծոտ) ու գերագանց աշխատանքով վերցրեց:

... Երրորդ, վերցրեց (ծոալըծոն) էջմիածնից՝ Մեծ Հայքի հովիվ Գրիգոր Լուսավորչի գերեզմանատեղից բերված հայ թագավորների իրավանց գրքերը, սրանցից թարգմանված...»<sup>126</sup>: Վախթանգի բուն օրենսգրքի առաջաբանում նույնպես ասված է, որ Հոնական և Հայկական օրենքները թարգմանվել են հոնաբանից ու հայերենից<sup>127</sup>: Այսպիսով, Վախթանգ Զ-ն խնդրում է էջմիածնից հայ թագավորների օրենքները. էջմիածինը կատարում է նրա խնդրանքը, և Վախթանգը հայկական օրենքները վրացերեն թարգմանել տալով մտցնում է իր ժողովածուի մեջ:

Հայտնի էր, որ Վախթանգը կազմել է իր Հավաքը այն ժամանակ, երբ ինքը Քարթլիի կառավարիչն էր (1703—1711/12 թթ.): Ըստ այդմ Հայկական օրենքների թարգմանութիւնը ևս կատարվել է նշված ժամանակահատվածում: Հավաքի այն ձեռագրից, որ պատկանել է արքայազն Փառնավապին, հետևում է, որ Հայկական օրենքները թարգմանվել են 1709—1711 թթ.<sup>128</sup>: Նորագույն ուսումնասիրութիւններով<sup>129</sup> պարզվել է, սակայն, որ Հավաքը կազմվել է 1703—1709 թթ., ուստի Հայկական օրենքները ևս թարգմանվել են այդ ժամանակ:

Ինչպես հայտնի է և ինչպես կտեսնենք սուրիս, էջմիածնից Վախթանգին ուղարկված հայ թագավորների օրենքները Մխիթար Գոշի Դատաստանագիրքն էր և գիտութեան մեջ Ասորա-հոմեակական անունով հայտնի օրենսգրքի հայկական խմբագրութիւնը:

---

ղովուրդների պատմա-բանասիրութիւնը շրջափող վրացերեն մի շարք այլ հրատարակութիւններից: Ուրախութեամբ նշենք նաև, որ 1963 թ. հետո էլ շարունակվել է պրոֆ. Ի. Դուխիի՝ մեծ գրվատանքի արժանի գործունեութիւնը և արդեն հրապարակի վրա են հրատարակութեան սույն շարքի մյուս հատորները ևս:

<sup>126</sup> Եւրոպական Երկրագրութեան օգնութեամբ, Երևան, 1963 թ., էջ 100: Հատվածի աուսերեն թարգմանութիւնը շատ անհաջող է. «Сей-то, усердствуя общей пользе, потщился собрать все книги законов, кои по обстоятельствам времени частью увезены были в чужне земли, а частью утеряны в Грузии...» (1867 թ. հրատ., էջ 146):

<sup>127</sup> Անդ, էջ 478:

<sup>128</sup> «Законы грузинского царя Вахтанга VI», Тбилиси, 1887, էջ 230, ժանութագր. 1:

<sup>129</sup> Յան Երանց VI, სამართლის წიგნი, ტექსტი გამოსაცემად დაამზადა, გამომკვლევა და ტვირთვა საბჭოთაო დაჯილდოვებული თინა ენუქიძემ, თბილისი, 1955, էջ 11—12:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը բնագրի ստուգազույն-բառացի թարգմանություն չէ: Վրացերեն թարգմանվելիս Մխիթար Գոշի Դատաստանագրքը որոշ փոփոխությունների է ենթարկվել ըստ բովանդակության՝ կապված տեղի ու ժամանակի պայմանների հետ և ըստ ձևի. որոշ հոդվածներ կրճատվել են, մի քանիսը՝ ընդարձակվել, որոշ հոդվածներ միացված են մեկի մեջ և ընդհակառակը՝ մեկ հոդվածը վերածվել է մի քանի հոդվածի, և այլն<sup>130</sup>: Բոլոր այս փոփոխությունները ամբողջությամբ վերագրվել են թարգմանիչ-խմբագիրներին<sup>131</sup>: Այսպես, Ի. Դոլիձեն թարգմանիչ-խմբագիրների գործ է համարում նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի համակարգի խախտումը, որով «Դատաստանագրքի առաջին և երկրորդ մասերի հոդվածները վրացերենում տեղափոխված են մի մասից մյուսը»<sup>132</sup>: Պետք է նշել, սակայն, որ այդ փոփոխությունների, թե ըստ ձևի, թե ըստ բովանդակության, մի մասը թարգմանիչ-խմբագիրների գործը չէ և գալիս է բնագրից: Բանն այն է, որ վրացերեն խմբագրությունը ուսումնասիրողների կողմից ցարդ համեմատվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի այն բնագրի հետ, որը հայտնի է Վ. Բաստամյանցի հրատարակությամբ, այսինքն՝ Բ խմբագրության հետ: Մինչդեռ իրերի վիճակը փոխվում է, երբ վրացերեն խմբագրությունը համեմատում ենք Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրությունների հետ: Մեր համեմատությունները ցույց տվեցին հետևյալը: Եթե հաշվի չառնենք հոդվածների միացում-կոտորակումները, ապա վրացերեն խմբագրությունը նույնությամբ հետևում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրությունների համակարգին, ինչպես կտեսնենք սուրբ բերվող համեմատական տախտակից, ուստի վրացերեն թարգմանության մեջ Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի մասից մյուսը հոդվածներ չեն տեղափոխված: Այս փաստն ինքնին հուշում էր, որ վրացերեն թարգմանությունը կատարված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ոչ թե Բ, այլ ԱԳ խմբագրություններից: Այս մի կողմից, մյուս կողմից հայերեն և վրացերեն բնագրերի համեմատությունն արդեն ըստ բովանդակության դարձյալ ուշագրավ փաստեր տվեց: Պարզվեց, որ Դատաստանագրքի վրացերեն խմբագրության և հայերեն բնագրի Բ խմբագրության միջև եղած տարբերությունները, որ նշվել են ցարդ, չի կարելի ամբողջությամբ վերագրել թարգմանիչ-խմբագիրներին: Այդ տարբերությունների մի մասը հենց այն տարբերություններն են, որ առկա են Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի կողմից Գ, մյուս կողմից՝ ԱԲ խմբագրությունների միջև: Սրանից հետևում է, որ վրացերեն խմբագրությունը թարգմանված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունից: Համեմատենք.

### Ք, տաջի ասամուցճատերտմեղծ

Ք. աճուտի Դամբաճեղևիսգան Կաճուտաճանի Եղևնեճա, Եագրամ Զատրոնցմոճա ամիսա Նղոմեճոտա օճեմնա միճիսա Դա Մյլլիսա. Դա ճիսաճ արա Եճլլս միճա Դա Մյլլա-

<sup>130</sup> Վախթանյի Հավաքի «Հայկական օրենքները» հրատարակվել են նաև առանձին, հայտնի հայագետ-վրացագետ Լ. Մելիքսեթ-Քեզի աշխատասիրությամբ. տե՛ս Եմբարտալու Եղևնեղրո, Եարտղու ճերսիա Մյերտղղեղեղ ճանճանճ ճյ-ՄԻ-օն Երմանեղեղա, ճամոճա ճյոճ ճյոճեղ-Եղեղա, Եղլլիսիս ճյոճյերսիոճեղլլիս ճամոճեղա, Եղլլիսի, 1927, էլ 256:

<sup>131</sup> Տե՛ս Լ. Մելիքսեթ-Քեզի հրատարակության առաջաբանը և Ի. Դոլիձեի հրատարակության էլ 596:

<sup>132</sup> Անդ, էլ 596:

ლი, ის კაცი აზატია, სადაც უნდა წავიდეს, არ არის სამართალი ხელმწიფეთაგან და თავადთაგან ძალად დაჭერა და დაყენება ერთ ადგილს, გინდა და არა იქ იყავი.<sup>133</sup>

Մխիթար Գոշի Դատաստանագիրք

Հոդված 21 (=Բ, II 3)

ԱԲ խմբագրություն

Գ խմբագրություն

Ազատ յԱրարչն եղև մարդկային բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և շրոյ և վայս պատշաճ կարծեմ դատաստան. զի թողեալ գտէրունիսն ազատ է ուր և կամեսցի կալ: Ապա թէ այս ոչ ներք ոք ի տերանց և բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հարն ազատ են որդիքն ծնեալ այլոր և ոչ անդ:

Ազատ յԱրարչն եղև մարդկային բնութիւնս, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և շրոյ: և ոք ոչ ունիցին շուր և հող, ազատ է ուր և կամեսցի գնացէ և բնակեսցէ, և ոչ է իրաւոնք թագաւորաց և իշխանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ ի մի երկիր:

Վախթանգի Ժողովածու

Հայկական օրենքներ

Գլուխ 171

Ազատ է Արարչից մարդկային բնութիւնը<sup>134</sup>, սակայն սրա ճորտութիւնը<sup>135</sup> եղա՛մ հողի ու ջրի կարիքից: Եվ ո՛վ շունի հող ու ջուր, այն մարդը ազատ է, ուր ուզում է թող գնա, ոչ է իրավունք թագավորներին և իշխաններին ուժով բռնել և կեցցենել նրան մի անդ, (ասելով) ուզում ես թն ոչ, այնտեղ մնա՛<sup>136</sup>:

Ակնհայտ է, որ թարգմանությունը կատարված է Գ խմբագրությունից:

Ձ. տաճի ասորմոցլատեյիլսեմեթի

... և տա շիրտուպի մոպուլուդես, տաճի մտլուց միսցեն և նաժենիսա նաժեյարի.

Մխիթար Գոշի Դատաստանագիրք

Հոդված 6 (=Բ, I, 5)

ԱԲ խմբագրություն

Գ խմբագրություն

և եթէ անասուն բերեալ իցէ, զգլուխն տացեն և դանն յերկուս բաժանիցեն:

և եթէ անասուն բերեալ իցէ կինն, զգլուխքն աուց և զկէսն անուցն, և կէսն այրեանն տացի:

Վախթանգի Ժողովածու

Հայկական օրենքներ

Գլուխ 156

Եվ թն անասուն բերած լինի գլուխն լրիվ տան և աճի կեսը:

Ձ. տաճի աստեմոցլատեսամի

Ձ տա Մաճիլենոն կազնի, որտի Մջերանի և որտի Մջերալուի, շիրՄիՄջելուի, և ման շիրՄիՄջելուման յտազոս Մջերան կազս իլուի և ևազուլուս Մջերի, ամիսի յամարտալուի յժնաս ասը, որոմ մուիցանոն ևս շիրՄիՄջելուի,

<sup>133</sup> Դարտուլու յամարտալուս յեղալեմ, Գ, I, էջ 286—Վախթանգի Ժողովածուի «Հայկական օրենքներ» 171 հոդված:

<sup>134</sup> Պետք է հասկանալ՝ ազատ է ստեղծվել արարչի կողմից:

<sup>135</sup> Թատրոնյեմոն—սորկուլթիւն, ճորտութիւն, կախվածութիւն, ծառայութիւն, հըպատակութիւն:

<sup>136</sup> Հոդվածի ուսուրեն թարգմանությունը դարձյալ շատ անհաջող է. տե՛ս 1887 թ. հրատ., էջ 277:

დაწვივინონ და მოსჭრან ქოჩორი ორჯელ, დაჰკრან ორჯელვე შვიდ-შვიდი ჯონი ზურგსა.

და თუ დანაშაული უფროს კაცს ჰქონდეს, ერთხელ მოსჭრან ქოჩორი და ჯონიც ვრთხელ ჰკრან, შვიდი, მას პირშიშველსა.

Մխիթար Գոշի Դատաստանագիրք

Վախթանգի Ժողովածու

Հոդված 32 (=Բ, II, 12)

Հայկական օրենքներ

ԱԲ խմբագրություն

Գ խմբագրություն

Գլուխ 183

Եթէ կոուիցին արք եւ մին պատահի անկատար լինել եւ յանդգնեալ փետտիցէ զմորուս կատարելոյն, դատաստան լիցի. կրկին մասամբ զհերան հատանել եւ զանիւ ըստ արժանւոյն կըսկըծեցուցանել, մանաւանդ զի զպատուաւոր անարգեաց: Ապա թէ բռնազոյն եւ կամ պատուաւոր յանդըգնեալն իցէ, միոյ զգայութեան տուգանի կէան լիցի ի տուգանս: Եւ այդ առայդ լիցի, զի այլոց արիւնակն ցուցեալ է ի կոուց դատաստանաց:

Եթէ կոուին արք երկու եւ մինն մալազ լինի եւ մինն կատարեալ, եւ ձգէ մալազն եւ փետէ զմուրուս կատարելոյն, դատաստան լիցի, որ կտրեն զմալազին մազն երկու տարպայ, քանզի զկատարելոյն մուրուքն քարշեաց եւ եհան, եւ եւթն փայտ ի վերայ թիկանցն տան: Ապա թէ յաւազ մարդոյն եղև պատճառ կուուոյն, կէս վրիժուցն խնդրեացի ի փոքերն, զոր ի վերոյ գրեցաք, զի մի այլք այսպիսի իրս դործեսցեն:

Եթէ կովին մարդ երկու, մեկը մորուքով եւ մեկն անմորուք, անմազ<sup>137</sup> եւ նա՛ անմազը ձգի ձեռքը մորուքավոր մարդուն եւ պոկի մորուքը, արա դատաստանը այսպես լինի, որ բերեն այն անմազին, պառկեցնեն եւ կտրեն քոշորը<sup>138</sup> երկու անգամ եւ երկու անգամ էլ յոթ-յոթ փայտ թիկունքին տան:

Ապա թե մեղքը ավազ մարդունը լինի, մեկ անգամ կտրեն քոշորը եւ փայտոն էլ մի անգամ յոթ տան նրան՝ անմազին:

Ակնհայտ է, որ վրացիները թարգմանված է Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ եւ ոչ թե ԱԲ խմբագրություններից: Գ խմբագրության եւ վրացիների որոշ տարբերությունները (երկու անգամ յոթ փայտ՝ մեկ անգամ յոթ փայտի փոխարեն եւ այլն) հենց այն փոփոխություններից մեկն է, որ հանդիպում ենք Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացիներն խմբագրության այլևայլ հոդվածներում եւս:

Վ. Բատամյանցն առաջինն էր, որ ցույց տվեց, թե արքայազն Վախթանգի «Հավաք օրինաց»-ում եղած Հայկական օրենքների երկրորդ մասը Մխիթար Գոշի Դատաստանագիրքն է: Նա էլ կազմել է համեմատական աղյուսակ, ուր վրացիներն խմբագրության հոդվածների դիմաց նշված են Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները ըստ իր հրատարակության<sup>139</sup>: Նույն աղյուսակը կազմել են նաև Հ. Տեր-Հովհաննիսյանը<sup>140</sup>, Հ. Կարս-

<sup>137</sup> Բնագրում ձերձիցեցու—մերկ դեմքով, երեսով:

<sup>138</sup> Գոհորո—քոշոր՝ (գլխի) մազափունջ, հերափունջ, ցցունք, քյանքուլ:

<sup>139</sup> Տե՛ս «Մատաղաբանութիւն», էջ 106, ծնթղթ. 68: Սխալաշատ է, ինչպես եւ լատինական խմբագրության աղյուսակը. պատճառը հավանաբար նույնն է, ինչ նշվել է առաջին դեպքի համար:

<sup>140</sup> «Сборник законов грузинского царя Вахтанга VI», Тифлис, 1887, էջ 350—351: Ուզեղ աղյուսակ է. կան միայն մի բանի վրիպումներ:



Վրաց. խմբագր.	Մխիթարի Ղատաստանագիրք		
	Բ. խմբագրութունն		ԱԳ. խմբագր.
	Ա մաս	Բ մաս	
209		25	59
210		26	60
211		27	61
212		28	62
213		29	63
214		30	64
215		31	65
216		32	66
217		33	67
218		34	68
219		35	69
220		36	70
221		37	71
222		39	73
223		40	74
224	35		75
225		41	76
226		42	77
227		43	78
228		44	79
229)		45	80
230)			
231	36		81
232		46	82
233		47	83
234		48	84
235		49	85
236		50	86
237	37		87
238	38		88
239		51	89
240		52	90
241		53	91
242	39		92
243		54	93
244		55	94
245		56	95
246		57	96
247		58	97
248		59	98
249		60	99
250		61	100
251		62	101
252		63	102
253		64	103
254		65	104
255	40		105
256	41		106
257		66	107
258		67	108
259		68	109
260	42		110
261		69	111
262		70	112
263		71	113
264		72	114
265		73	115
266		74	116
267		75	117
268		76	118
269		77	119
270		78	120

Վրաց. խմբագր.	Մխիթարի Ղատաստանագիրք		
	Բ. խմբագրութունն		ԱԳ. խմբագր.
	Ա մաս	Բ մաս	
271		79	121
272	43		122
273		80	123
274		81	124
275		82	125
276		83	126
277		84	127
278		85	128
279		86	129
280		87	130
281		88	131
282		89	132
283	44		133
284	45		134
285	46		135
286	47		136
287	48		137
288	49		138
289	50		139
290	51		140
291	52		141
292	53		142
293	54		143
294	55		144
295	56		145
296	57		146
297	58		147
298	59		148
299	60		149
300	61		150
301	62		151
302	63		152
303	64		153
304		90	154
305		91	155
306	65		156
307	66		157
308	67		158
309	68		159
310	69		160
311	70		161
312	71		162
313	72		163
314	73		164
315	74		165
316	75		166
317	76		167
318	78		169
319	(78)		(169)
320	79		170
321	80		171
322	81		172
323	82		173
324		92	174
325		93	175
326	83		176
327	84		177
328		94	178
329		95	179
330		96	180
331		97	181
332		98	182

Վրաց. խմբագր.	Մխիթարի դատաստանագիրք		
	Բ խմբագրութուն		ԱԳ խմբագր.
	Ա մաս	Բ մաս	
333		99	183
334	85		184
335		100	185
336		101	186
337	86		187
338	87		188
339	88		189
340	89		190
341	90		191
342	91		192
343	92		193
344		102	194
345	93		195
346	94		196
347	95		197
348	96		198
349	97		199
350	98		200
351	99		201
352	100		202
353	101		203
354	102		204
355	103		205
356	104		206
357	105		207
358	106		208
359	107		209
360		103	210
361		104	211
362	108		212
363	109		213
364		105	214
365	110		215
366		106	216
367		107	217
368		108	218
369	111		219
370		109	220
371		110	221
372		111	222
373	112		223
374	124		224
375	113		225
376		112	226
377		113	227
378	114		228
379	115		229
380		114	230
381		115	231
382		116	232

Վրաց. խմբագր.	Մխիթարի դատաստանագիրք		
	Բ խմբագրութուն		ԱԳ խմբագր.
	Ա մաս	Բ մաս	
383		117	233
384		118	234
385		119	235
386		120	236
387		121	237
388		122	238
389	116		239
390		123	240
391		124	241
392		125	242
393		126	243
394		127	244
395		128	245
396	117		246
397		129	247
398	118		248
399	119		249
400	120		250
401		130	251
402	Նախադրութուն, Ը		
403		1	2
404		1	2
405		1	2
406		1	2
407		1	2
408		1	2
409		1	2
410		1	2
411		1	2
412		1	2
413		1	2
414		1	2
415		1	2
416		1	2
417		1	2
418		1	2
419		1	2
420		1	2
421		1	2
422		1	2
423		1	2
424		1	2
425		1	2
426		1	2
427		1	2
428		1	2
429		1	2
430		1	2
431=165			

Վրացերենում չկան Մխիթար Գոշի Դատաստանագրքի նախադրության գլուխները, բացի Ը-ից, և հետևյալ հոդվածները՝ 72 (=Բ, II 38), 168 (=Բ, I, 77) և Բ խմբագրության Ա մասի 121—123 հոդվածները, որովհետև այս երեք հոդվածը չկա նաև ԱԳ խմբագրություններում: Բացի դրանից, Մխիթարի Դատաստանագրքի որոշ հոդվածներ վրացերենում կան մասամբ:

Համեմատական այս աղյուսակը ցույց է տալիս, որ վրացերենում հայերեն բնագրի համակարգը չի փոխված. թարգմանիչ-խմբագիրները նույնու-

Յլամբ հետևել են բնօրինակի համակարգին, և դա Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրության համակարգն է, որից հետևում է, որ վրաց հեղինակները օգտվել են Մխիթար Գոշի Դատաստանագրքի ԱԳ խմբագրությունից: Այս եզրակացությունը առավել ևս հաստատվում է, եթե համեմատական տախտակը դիտենք նաև այն եղանակով, որով դիտվել են վերը նման տախտակները Մխիթարի Դատաստանագրքի խմբագրությունների և այս վերջինների ու Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի կառուցվածքում: Այս մի կողմից, մյուս կողմից էլ երկու Դատաստանագրքերի բնագրերի համեմատությունը ըստ բովանդակության ցույց է տալիս, որ վրացերենը թարգմանություն է Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբագրությունից:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրության հետ կապված վերջին հարցը, որ շոշափվելու է այստեղ, վերաբերում է այն բանին, թե կիրառվում էր, արդյոք, այդ խմբագրությունը Վրաստանում, ունե՞ր պարտավորի ուժ, և եթե այո, ապա ի՞նչ շահով և ի՞նչ շրջանակներում: Այս խնդրը, սակայն, նույնանման հարցադրմամբ կապվում է արքայազն Վախթանգի ամբողջ ժողովածուի հետ, որն ընդգրկում է հետևյալ միավորները.

1. Մովսիսական օրենքներ,
2. Հունական օրենքներ,
3. Հայկական օրենքներ,
4. Կաթողիկոսների օրենքներ,
5. Գևորգ թագավորի օրենքներ,
6. Բեքայի և Աղբուղայի օրենքներ,
7. Արքայազն Վախթանգի օրենքներ<sup>144</sup>,

Այս օրենքները կարելի է բաժանել երկու խմբի, ինչպես արել են Ա. Ֆրենկելն ու Գ. Բաբրաձեն և ինչպես ընդունված է նաև վրացագիտության մեջ, ազգային վրացական օրենքներ՝ օրենսդիրների ազգային պատկանելությամբ և օտարերկրյա օրենքներ: Արքայազն Վախթանգի հավաքի և դրա մեջ մտնող օրենքների այս երկու խմբերի գործադրության ու պարտավորիչ ուժի մասին տարբեր են եղել ուսումնասիրողների կարծիքները: Ոմանք, ինչպես օրինակ՝ Ա. Զամբ.—Օրբելյանը, առհասարակ ժխտել են և՛ ամբողջ Հավաքի, և՛ իր՝ Վախթանգի օրենքների պարտավորիչ ուժը, հետևապես՝ նաև հայկական օրենքների պարտավորիչ ուժը Վրաստանում: Նույն կարծիքին է նաև Կ. Բորոզդինը: Կոմս Բյուզովի, իշխան Բազրատիոն-Մուխրանելու, Գ. Բաբրաձեի և այլոց կարծիքով, Վրաստանում գործող օրենքը եղել է բացառապես Վախթանգի բուն օրենսդիրքը: Հաջատհուդենի ու Հոլդակի կարծիքով պարտավորիչ ուժ ունեն միայն Վախթանգի բուն օրենսդիրքը, իսկ Հավաքում եղած վրացական աշխարհական մյուս օրենքները և օտարերկրյա օրենքները ունեին միայն օժանդակ նշանակություն և օգտագործվում էին այն դեպքում, երբ նրա օրենքները բավարար չէին: Հետաքրքրական է նաև Հ. Կարստի կարծիքը, որի

<sup>144</sup> Արքայազն Վախթանգի «Հավաք օրենսգրք»-ում օրենքներն ունեն նշված հերթականությունը: Սակայն Ա. Ֆրենկելն ու Գ. Բաբրաձեն իրենց հրատարակության մեջ ձեռագրերում եղած համակարգը խախտել են՝ ենթարկելով խմբավորման. 1) վրացական օրենքներ՝ Վախթանգի, Գևորգի, Աղբուղայի և կաթողիկոսների, 2) օտարերկրյա օրենքներ՝ Մովսիսական, Հունական, Հայկական, որով Հայկական օրենքները, որ բոլոր ձեռագրերում հրորդ տեղում են, ընկել են յոթերորդ տեղը:

համաձայն պարտավորիչ ուժ ունեցել է Վախթանգի բուն օրենսգիրքը, իսկ Հավաքում եղած վրաց աշխարհական մյուս օրենքները ունեցել են առաջին կարգի օժանդակ իրավունքի ուժ: Հավաքում եղած օտարերկրյա օրենքները նույնպես օժանդակ իրավունքի ուժ են ունեցել, բայց երկրորդ կարգի:

Արքայազն Վախթանգի Հավաքում եղած օրենսխմբերի զործադրության և նրանց պարտավորիչ ուժի հարցին վրաց սովետական հետապետողներից վերջին տասնամյակներում անդրադարձել են Ա. Վաչեիշվիլին, Ի. Սուրգուլաձեն, Ի. Դոլիձեն և այլք: Առաջինը կանգնած է ճշմարտությանն ավելի մոտ և գտնում է, որ Վախթանգի բուն օրենքները պարտավորիչ ուժ ունեին, սակայն գործող օրենքը միայն Վախթանգի օրենսգիրքը չէր, վերջինն ուներ կիրառության նախապատվություն միայն, որովհետև դատարանն իրավունք ուներ կիրառելու Հավաքում եղած մյուս նորմերը ևս, եթե դրա անհրաժեշտությունը առաջանար: Պրոֆ. Ի. Սուրգուլաձեն հակասական կարծիքներ է հայտնում այս հարցի կապակցությամբ: Նա մեկ գրում է, որ Վախթանգի բուն օրենսգիրքը պարտավորիչ ուժ ուներ ամբողջ Վրաստանում, մեկ էլ թե՛ այդպիսի ուժ չուներ և, բնականաբար, եղրակացնում է, որ եթե Վախթանգի բուն օրենսգրքի պարտավորիչ ուժը պայմանական էր, առավել ևս նվազ պետք է լիներ Վախթանգի Հավաքում եղած մյուս օրենսխմբերի պարտավորիչ ուժը<sup>145</sup>:

Բացառելով Ա. Վաչեիշվիլուն և Ի. Դոլիձենին, պետք է ասել, որ մյուս բոլոր ուսումնասիրողների կարծիքները այս հարցի կապակցությամբ կամ ճիշտ չեն, կամ միակողմանի են և չեն հիմնված գիտությանը հայտնի բոլոր փաստերի ամբողջության վրա: Պրոֆ. Ի. Դոլիձեն հիմնավոր փաստերով ցույց է տալիս, որ Վախթանգի բուն օրենսգիրքը գործող և պարտավորիչ ուժ ունեցող օրենսգիրք էր: Բացի դրանից, նա հատկապես քննում է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրության գործադրության և պարտավորիչ ուժի հարցը Վրաստանում, և հայ իրավունքի սլատմաբաններին ևս հայտնի մի շարք փաստերով, համոզել ու անառարկելիորեն ցույց է տալիս, որ «Հայկական օրենքները» Վրաստանում գործադրվում էին մյուս օրենքների հետ միասին ու պարտավորիչ ուժ ունեին: Բերենք այս իրողությունն հաստատող փաստերից մի քանիսը:

Բուն իր օրենսգրքի առաջաբանում արքայազն Վախթանգը դիմում է դատավորներին՝ ասելով, որ իմանան իր ժողովածուի մեջ մտած բոլոր օրենսխմբերը, կշռադատեն դրանք և որը ավելի լավ կհամարեն ու որին իրավունք կտան՝ նրանով էլ դատեն և արդարադատություն անեն<sup>146</sup>: Այսպիսով, ինքր օրենսդիրն արդեն պարտավորիչ ուժ է հաղորդել իր ժողովածուի բոլոր օրենսխմբերին, այդ թվում և՛ «Հայկական օրենքներին»:

Որ «Հայկական օրենքները» Վրաստանում գործադրվում էին և պարտավորիչ ուժ ունեին, հաստատում է նաև արքայազն Դավիթը, որ իր հոր՝ Վրաստանի վերջին թագավոր Գևորգ 13-րդի հանձնարարությամբ կազմել է ավելի րնդարձակ օրենսգիրք<sup>147</sup>: Ուստի նա քաջ ծանոթ էր իր հայրենիքում գործող

<sup>145</sup> Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Ի. Դոլիձեի ուսումնասիրությունը՝ յար. տղուի սամարտոլիս ժեղըքն, Ժ. I, էջ 637—640:

<sup>146</sup> յար. տղուի սամարտոլիս ժեղըքն, Ժ. I էջ 478: «Խոլո ցեցա Տեանտ, օջւղլլետ, ևա օջւղլլեմադգեցետ, ևա ռօմըլլօց ցեցեմօտ ևա շըմչօղբըն ցեցեցետ, միտ լջիլլետ ևա սամարտալեսա օլլմօլլետ» կամ «ևա ռօմըլլօց ցեցեմօտ մօսսամարտըլլեսա, միտ օլլմօլլեց սամարտալեսա»-անդ էջ 479:

<sup>147</sup> Տե՛ս սամարտալի ԶատրեմիՍեղլիս ևաջիտիսա, Եղբլլեցն յամօսեցա ևա յամօլլեցեցա: ևաջր. տղու ևաջիտ օջր. Եղլլաժեմ, 2 տնօլլիս, 1964:

ორბნებნებრინ: «*Վրաստանի պատմություն*» իր աշխատության մեջ նա գրում է, որ *Վրաստանում* „уголовные преступления судимы были особенно по Греческим Уставам“, *აქნობისა*՝ „Царь Вахтанг... управлял кротко и благоразумно Ивериею по законам Греческим, а для купечества по законам Армянским...“<sup>148</sup>, *Մի այլ փաստաթղթում կարդում ենք*. «К сему царевич Давид присовокупил, что при царствовании в Грузии родителей его и предков край сей управляем был: 1. Законами пророка Моисея. 2. Законами греческих императоров... 5. Законами армянскими от-носительно торговли».<sup>149</sup>

*Վախթանգ Զ-ի և արքայազն Գավթի վկայությունները հաստատվում են մի շատ ուշագրավ փաստաթղթով ևս՝ վրաց սովորութեան իրավունքի ժողովածուով, որը կազմվել է ԺԹ դարի սկզբին: Այս ժողովածուի<sup>150</sup> առանձին հոդվածների տակ նշումներ կան, արված կաղմողների կողմից, թե տվյալ հոդվածով նախատեսված իրավահարաբերությունը Վախթանգի ժողովածուի որ օրենսխմբի որ հոդվածով էր կարգավորվում: Սույն ժողովածուի 10-րդ հոդվածում խոսքը անշարժ գույքը գրավ դնելու և դրա հետ կապված այլ հարցերի մասին է: Հոդվածի վերջում նշված է, որ տվյալ իրավահարաբերությունը կարգավորվում է «Հայկական օրենքների 233-րդ հոդվածով»<sup>151</sup>: Նույնպիսի նշումներ կան նաև 20-րդ, 31-րդ հոդվածների տակ: Ակնհայտ է, որ «Հայկական օրենքները», մասնավորապես Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացական խմբագրությունը, գործադրվում էր Վրաստանում:*

*Նույն փաստը հաստատում է և դատական պրակտիկան: Այս բնագավառի մի փաստաթղթում կարդում ենք. «Судьи нашли, что по греческим законам малолетние не имеют права продавать имение, а если продадут то братья его имеют право выкупить; грузинские же и армянские законы говорят, что имение только с согласия помещика и родственников может быть продано, а если это при продаже не исполнено, то родственники могут выкупить его»<sup>152</sup>:*

*«Հայկական օրենքների» վրացական խմբագրությունը ոչ միայն գործող օրենք է եղել Վրաստանում, այլև աղբյուր է դարձել Վախթանգի բուն օրենսգրքի համար: Հայկական և Վախթանգյան օրենսգրքերի մի շարք հոդվածների համադրմամբ պրոֆ. Ի. Դոլիձեն ցույց է տվել և ապացուցել, որ Վախթանգը իր օրենսգրքի 23 հոդված քաղել է «Հայկական օրենքներից», որից 13-ը Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունից<sup>153</sup>:*

*Մխիթար Գոշի Դատաստանագրքի այսպիսի արմատական դոլություն ու աղղցություն փաստը Վրաստանում, հարկավ, դժվար կլինի բացատրել միայն*

<sup>148</sup> ქართული სამართლის ძეგლები, ტ. I, էջ 652: *Տե՛ս նաև Գ. Փուրցելաձեի հրատ. էջ 6204, որից և օգտվել է Դոլիձեն:*

<sup>149</sup> Անդ, էջ 653:

<sup>150</sup> *Տե՛ս* „Сборник законов грузинского царя Вахтанга VI“, Тифлис, 1887, էջ 365—382. „Обычаи, введенные при грузинских царях законом“: *Այս հուշարձանի վրացերեն բնագիրը հայտնաբերվել է միայն 1930-ական թվականներին ուսուցչապետ Գ. Գուգուշվիլու կողմից և հրատարակվել հետեյալ ժողովածուում. Զեսոլեծո სიქართველოს და ქვეყნის ისტორიისათვის, ნაკ. III, თბილისი, 1938, էջ 67—90: Երկրորդ անգամ հրատարակել է Ի. Դոլիձեն. օ. Լոლოძე, სიქართველოს ჩვეულებითი სჯული, თბილისი, 1960, բնագիրը՝ էջ 41—80. վրացերեն բնագիրն զուգահեռ տրված է ուսուցչին թարգմանությունը, որը վերցված է Վախթանգի ժողովածուի՝ Ա. Ֆրենկելի և Գ. Բաբրաձեի հրատարակությունից:*

<sup>151</sup> *Անդ, էջ 368—369, նաև* ქართული სამართლის ძეგლები, ტ. I, էջ 651:

<sup>152</sup> ქართული სამართლის ძეგლები, ტ. I, էջ 651:

<sup>153</sup> *Անդ, էջ 657—662:*

ժՐ դարի իրողությունները և ենթադրել է տալիս սլավոնական շատ ավելի մեծ խորք, որտեղից պալիս են երկու բախտակից ու երբայրական ժողովուրդների սերտ հարաբերությունները: Այս և պատմական մի շարք այլ փաստերի ամփոփմամբ, ակադեմիկոս Ի. Ջավախիշվիլին, որին միանում է նաև Ի. Գոլիձեն, իրավացիորեն կարակացնում է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը Վրաստանում գործում էր, բնագրով կամ թարգմանությամբ, Վախթանգից դեռ շատ առաջ և դարեր շարունակ<sup>154</sup>:

### ԲՆԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Վ. Բատամյանցը Դատաստանագրքի Բ խմբագրությունը, որն համարել է սկզբնական հեղինակային բնագիր, իր ուսումնասիրության հետ միասին հրատարակել է հետևյալ վերնագրով. «Մխիթարյ Գոշի Դատաստանագիրք Հայոց»: Այս վերնագրի բաղկացուցիչ բոլոր տարրերը վիճարկվել են, բացի «դատաստանագիրք» բառից<sup>155</sup>: Մխիթար Գոշի հեղինակային իրավունքը վավերական է ու ստույգ, ուստի Դատաստանագրքի վերնագրի այդ մասը փոփոխության ենթարկվել չի կարող: Անցնենք վերնագրի հաջորդ բաղկացուցիչ տարրին՝ «դատաստանագիրք» բառին: Այս տարրը ենթակա է փոփոխության, հասկանալի է, ոչ ըստ բովանդակության, այլ ըստ ձևի: Բանն այն է, որ թե ինքը Մխիթար Գոշը և թե ժամանակակիցները նրա աշխատությունը չեն կոչում «Դատաստանագիրք» բարդ բառով: Այդ բառը, սակայն, թվում է թե, ավելի ուշ շրջանի բարդություն է, որին հանդիպում ենք Դատաստանագրքի ժՆ և հետագա դարերի ձեռագրերի հիշատակարաններում: Մինչդեռ, Դատաստանագրքի բնագրում, բոլոր դարերի ձեռագրերում, գործը կոչված է երկու բառով՝ «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի», որ նշանակում է, թե և՛ հեղինակը, և՛ խմբագիրները գործը կոչել են հենց այդպես: Դատաստանագրքի երեք խմբագրություններում, միասին վերցված, հանդիպում ենք 28 դեպքի, երբ գործածված է աշխատության բնույթն արտահայտող բառը և այն միշտ գործածված է ոչ բարդ ձևով. այսպես՝ «ի ձեռն գրոց դատաստանի», «գգիրս դրոշմեցաք դատաստանի», «յօժարեցաք գրել գդատաստանաց գիրքըս», «պատճառ գրոցս դատաստանի», «գիրս դատաստանի», «գգիր դատաստանի», «դգիր դատաստանիս», «ի պիս դատաստանի», «գրոցս դատաստանի»

<sup>154</sup> օչ. չափնիճցիլո, յարտուլո սամարտոլոս օստորոօ, ֆոցնո ձօրցցլո, օցլոլոսօ, 1928, էջ 104, 110. յարտուլո սամարտոլոս օցլոցնօ, օ. I, էջ 650 և այլուր:

<sup>155</sup> Ն. Ակինյանը իր աշխատություններից մեկում շանցել է հիմնավորել, որ Դատաստանագրքի հեղինակը Մխիթար Գոշը չէ: Այս տեսակետի հանդամանալի բնույթունը վերապահելով մեր ուսումնասիրությանը, այստեղ նշենք միայն, որ այն անհիմն է: Վիճարկվել է նաև «Հայոց» բառի առկայության իրավասությունը վերնագրում. տե՛ս Յ. Бунятов, Азербайджан в VII—IX вв., Баку, 1965: Այս գրքի՝ հայ ժողովրդի պատմությանը վերաբերող մասի հակապատմական և հակագիտական կոնցեպցիայի բնագրատությունը, կատարված անհրեքիլի փաստերի հիմամբ և գիտական բարձր մակարդակով, տե՛ս Ա. Մնացականյան, Ազգային աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966. А. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Бунятова «Азербайджан в VII—IX вв.», «Պատմա—բանասիրական հանգես», 1967, № 1, էջ 177—190. К. А. Мелик—Оганджаниян, Историко—литературная концепция З. Бунятова, «Բանբեր հայաստանի արխիվներէ», 1968, № 2, էջ 169—190. Հ. Անասյան, Նոր հայացք ազգանագիտութեան բնագրավառում, Melanges d'etudes armeniennes. Venise, 1969, էջ 289—315. Н. Anasaiian, Une mise au point relative á l'Albanie caucasienne, Revue des études arméniennes, nouvelle série, t. VI, Paris, 1969, էջ 299—330:

և այլն: Ուստի, վերնագրի մեջ «գատաստանագիրք» ձևի փոխարեն պետք է դնել «գիրք գատաստանի» ձևը: Այժմ «Հայոց» բառի մասին: Գիտենք, և այդ մասին հաղորդում է Մխիթար Գոշը թե՛ Դատաստանագրքում և թե՛ Հայոց կաթողիկոսին ուղղված նամակում, որ օտարները հանդիմանում, նախատում էին հայերին Դատաստանագիրք չունենալու համար: Դատաստանագիրք գրելու պատճառներից մեկը ինքը՝ Մխիթար Գոշը համարում է հենց այդ հանդիմանությունը, այլ կերպ՝ Մխիթարը սկզբից ևեթ ձեռնամուխ եղավ գրելու գատաստանագիրք հայերի, հայ ժողովրդի, հայկական պետության համար և գրեց, իրոք, Հայոց Դատաստանագիրք: Ուրեմն, անկախ այն բանից՝ կա՞մ վերնագրում «Հայոց» բառը, թե ոչ, ինքնին հասկանալի է, որ Դատաստանագիրքը հայոց է: Սակայն հարցին նայելով բնագրագիտական տեսակետից, «Հայոց» բառը չենք կարող դնել վերնագրի մեջ, որովհետև ձեռագրային տվյալների այդ հնարավորությունը չեն տալիս: Դատաստանագրքի վերնագրում «Հայոց» բառի առկայությունը համար Վ. Բաստամյանցին քննադատողները չեն կարողացել, թերևս ճիշտ կլինի ասել՝ չեն ուզեցել տեսնել այն ակնհայտ փաստը, որ Վ. Բաստամյանցի հրատարակության մեջ երկու վերնագիր կա. առաջին՝ «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք» և երկրորդ՝ «Դատաստանագիրք Մխիթարայ Գօշի»: Առաջին վերնագիրը Վ. Բաստամյանցի հետազոտության վերնագիրն է: Ամեն ուսումնասիրող ազատ է իր հետազոտության վերնագիրը դնելու այնպես, ինչպես ինքն է հարմար գտնում: Սակայն, երբ վերջանում է «հետազոտությունը», և սկսվում է բնագիրը, Վ. Բաստամյանցը այն սկսում է նոր էջահամարով և այն վերնագրով, որ ունի բնագիրը՝ «Դատաստանագիրք Մխիթարայ Գօշի»:

Դատաստանագրքի ձեռագրերի մեծ մասում հոգվածները վերնագիր ունեն, սակայն բուն հոգվածները ձեռագրերում, որպես կանոն, անվանում չունեն, սակավ բացառություններով. օրինակ՝ «Նախադրութիւն գրոց գատաստանի. գլուխ առաջին» (ձեռ. № 10311, թ. 263ա): Մի շարք ձեռագրերի ցանկերի սկզբում հոգվածները անվանված են «գլուխ» (տես օրինակ՝ ձեռ. № № 2775, 209, 6890, 2593, 3291 և այլն). այսպես օրինակ՝ «Կատարեցաւ նախադրութիւն գրոցս գատաստանի ի ճառս ԺԱ: Զկնի սորին զհամար եւ թիւ գլխոցն դիցուք, որ է ցանկ» (ձեռ. № 2775, թ. 41ա), կամ՝ «Սկիզբն ամենայնի աստուած, զնոյն և կատարած ամենայնի աստուած: Եւ արդ սկիզբն գատաստանի գրոց ցանկս և թիւ գլխոց ի կարգի» (ձեռ. № 209, թ. 83ա: Այս կա շատ ձեռագրերում): Ինչպես տեսնում ենք, հոգվածը անվանված է գլուխ: Սակայն ցանկերում հոգվածները հաջորդում են իրար թվահամարների հերթականությամբ, և թվահամարներից առաջ չկա «գլուխ» բառը:

Դատաստանագրքի բնագրում Մխիթար Գոշի և խմբագիրների կողմից, որոնք, հավանաբար, անփոփոխ են թողել հեղինակային անվանումները, հոգվածներն անվանված են տարբեր կերպ, ավելի հաճախ՝ դատաստան, ապա նա՝ հինգ անգամ, գլուխ՝ երեք անգամ, վիճակ՝ երկու անգամ, զպլուրիւն՝ երկու անգամ և դուրսիւն: Անտեսում ենք «կանոն», «օրենսդրութիւն» և այլ բառերը, որոնք ավելի շուտ վերաբերում են Դատաստանագրքի աղբյուրներին, քան նրա հոգվածներին: Քանի որ ցանկը առկա է Դատաստանագրքի համարյա բոլոր ամբողջական ձեռագրերում, ապա պետք է ենթադրել, որ այն գալիս է հեղինակային օրինակից: Այս տեսակետից ուշագրավ է ձեռագրերից մեկի հետևյալ վկայությունը, որով եզրափակվում է ցանկը. «Կատարեցաւ ցանկ

գրոց դատաստանիս, որ ըստ Գոշայ վարդապետի» (ձեռ. № 2775, թ. 48բ)։ Այս նախադասությունը, թվում է, կարելի է հասկանալ նաև այնպես, որ «որ ըստ Գոշայ վարդապետի» բառերը վերաբերում են ցանկին։ Սակայն, անկախ դրանից, միջնադարում հոգվածների անվան համար ընդունված ու տարածված էր «գլուխ» — capitulum անվանումը։ Համոզվելու համար բավական է, թեկուզ, թերթեւ Նվրոպայի ավատական իրավունքի հուշարձանները։ Ինչ վերաբերում է Մխիթար Գոշի Դատաստանագրքին, ապա հեղինակը այս կասկածությունից միօրինակ տերմինաբանության չի հետևում։ Ինչպես տեսանք, նա հավասարապես գործածում է «գլուխ», «ճառ», «վիճակ» և այլ բառեր՝ նույն նշանակություններով։ Սակայն, նկատի ունենալով Դատաստանագրքի ձեռագրերի ցանկերի վերը բերված բանաձևերը, այն փաստը, որ ձեռագրերում նախադրույթի անունը հոգվածը և Դատաստանագրքի այլ հոգվածներ կրկնվում են «գլուխ» հենց բնագրում, և մի շարք այլ փաստեր, պետք է ասել, որ հոգվածների անվան համար ավելի տարածված էր «գլուխ» բառը։ Այդ պատճառով, նաև այնու, որ հոգվածները առանց անվան չմնան, և միօրինակություն մտցնելու համար դրանց անվանակոչության մեջ, մենք հոգվածների թվահամարներից առաջ դրինք «գլուխ» բառը։ Սա մեր միակ միջամտությունն է բնագրին, որ արել ենք առանց ձեռագրական բավարարչափ տվյալների։

Մխիթար Գոշի Դատաստանագրքի զգալի թվով հոգվածներից յուրաքանչյուրը արտաքին կառուցվածքի տեսակետից բաժանվում է երկու մասի. առաջին մասը աղբյուրն է, որից օգտվել է հեղինակը, և որը բերվում է, որպես կանոն, բառացի, իսկ հոգվածի երկրորդ մասը հեղինակի սահմանումն է, որով նա աղբյուրի իրավադրույթը կամ հաստատում է, կամ փոփոխում, կամ լրացնում և այլն։ Վ. Բատամյանցը իր հյատարակության մեջ հոգվածի այս երկու մասերը իրարից բաժանելու յուրօրինակ ձև է բնութագրել։ Հոգվածի երկրորդ մասը նա ոչ միայն սկսել է նոր ու կարմիր տողից, որ միանգամայն ճիշտ է, այլև Մխիթարի խոսքը առել է շակերտների մեջ, որը, թվում է, ճիշտ չէ։ Դրանով արհեստականորեն անջատվել են իրարից ներքին միասնություն կազմող ամբողջի մասերը, և այնպես է ստացվել, որ աղբյուրը մղվել է առաջին դիժ, իսկ Դատաստանագրքի հեղինակը՝ երկրորդ։ Մինչդեռ օրենքը մի ամբողջություն է և անկախ նրանից, թե ինչ աղբյուրից է քաղված, այն ամբողջապես պատկանում է օրենսդրին։ Սաղումնային, աղբյուրագիտական տեսակետից ոչ-մխիթարյանը ոչ-մխիթարյան է դարձվել նաև իրավական-օրենսդրական տեսակետից, մի բան, որ ճիշտ չէ։ Պահպանելով հոգվածի շարահյուսական-տրամաբանական-աղբյուրագիտական տարանջատումը (հոգվածի երկրորդ մասը սկսել ենք նոր և կարմիր տողից) մենք, բնականաբար, վերացրինք հոգվածի իրավական-օրենսդրական ամբողջականությունը խախտող տարանջատումը, Մխիթարի խոսքից հանելով շակերտները։

Բնագրերը կազմել ենք հետևյալ ձեռագրերի համեմատությամբ։

Ա խմբագրություն.

Ա—Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի № 1237 ձեռագիրը։ Դատաստանագրքի հնագույն և ընտիր ձեռագրերից մեկն է։ Ինչպես ցույց է տվել Վ. Հացունին, Դատաստանագրքի շորորդ օրինակն է՝ հաշված հեղինակային օրինակից։ Նվիրվել է Հաթերթի Վախթանգ իշխանին՝ Մխիթարի բարեկամին ու հովանավորին, «գրա պատվիրաններով ղեկավարվելու համար»։

Ձեռագիրը չինք սուսել և ոչ էլ մանրամասնապալենն էնք ունեցել, սակայն այնպես է ստացվել, որ կարող էնք ասել, թե ձեռագիրը գտնվել է մեր օրամագրոսիցան տակ: Գնահատանքի ամենաբարձր խոսքերով ու երախտապարտութիան ամենախոր զգացումով պետք է ասենք, որ դրա համար պարտական էնք Վենետիկի Մխիթարյան միաբանութիան ընդհանուր քարտուղար՝ հանդուցյալ հայր Եղիա Փեչիկյանին:

ա—Վրացական ՍՄՀ գիտութիւնների ակադեմիայի Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրաց ինստիտուտի հայկական ֆոնդի № 14 ձեռագիրը: Չափսը՝ 20×31 սմ, կազմը՝ սովորաբար (սև և կապույտ նախշերով), նյութը՝ թուղթ, գիրը՝ նոր ժամանակի ձեռագիր, թերթերը՝ 146, որոշ թերթեր կամ մաքուր են, կամ զրված են մասամբ (թթ. 55, 91, 98, 99-րդ կրկնված է երկու անգամ): Չունի ցանկը ոչ նախադրութիան և ոչ Դատաստանագրքի: Պահպանակի երկրորդ երեսի վրա. «Մխիթար Գօշի Դատաստանագիրը, ի գրչագրաց. օրինակեալ է ի Վենետիկ ի վանս ս. Ղազարու, 1862»:

Թ. 145-ում գրիչը գրում է. «Յիշատակարան երկաթագիր յաւարտ մատենին» և բերում հետևյալ սկզբնատողով հիշատակարանը. «Յս Քս, յորժամ դաս ի նորոգել...»:

Թ. 146.—«Այլ յիշատակարան, բոլորագիր»—«Փառք փրկչին մերոյ...»:

Թ. 146.—«Յիշատակարան երկաթագիր միջանկեալ»—«Տէր ած տացէ ածասէր...»:

Այս ձեռագրի համեմատութիւնը Վ. Բաստամյանցի հրատարակութիան մեջ «Վենետ.» կամ «Վեն.» նշված ձեռագրի ընթերցումների հետ ցույց տվեց, որ ա-ն ընդօրինակված է Վենետիկի № 1237 (մեր Ա) գրչագրից: Եւ ձեռագիրը մենք ամբողջովին արտագրեցինք և հիմք դարձրինք մեր համեմատութիւնների համար, որովհետև դեռ չունեինք մեր օրամագրոսիցան տակ ոչ Վենետիկի և ոչ Ձմմատի ձեռագրերը: Սակայն և ձեռագրի համեմատութիւնը Վ. Բաստամյանցի հրատարակութիան «Վեն.» ձեռագրի ընթերցումների հետ ցույց տվեց, որ այս երկու ձեռագրերի ընթերցումների մեջ կան տարբերութիւններ, թեև ոչ էական և ոչ շատ: Վ. Բաստամյանցի «Վեն.» նշված ձեռագիրը Փարիզի օրինակն է, որ արտագրել է Բ. Եսայանը Վենետիկի № 1237 ձեռագրից: Փարիզից Վենետիկ գալով՝ Վ. Բաստամյանցը, ինչպես նշում է ինքը, այլևս չի համեմատել իր օրինակը № 1237 ձեռագրի հետ: Այստեղից հետևում է, որ «Վեն.» և և ձեռագրերի որոշ ընթերցումների տարբերութիւնները արդյունք են այն բանի, որ № 1237 ձեռագիրը ոչ-խստագույն ճշգրտութիւնը է ընդօրինակվել կամ Բ. Եսայանի կողմից և կամ և ձեռագրի գրչի կողմից: Քանի որ բնագրի հիմքում, բնականաբար, գրվելու էր նաև № 1237 ձեռագիրը, ուստի պետք է մեր ձեռքի տակ ունենայինք նրա ստուգագույն ընդօրինակութիւնը: 1962 թ. երբ հ. Եղիա Փեչիկյանը գտնվում էր Երևանում, Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանի միջոցով դիմեցինք նրան, և նա սիրով հանձն առավ կատարել մեր խնդրանքը: Նույն թվականին Վենետիկ ուղարկեցինք մեր և ձեռագրի մեքենագիր օրինակը (230 էջ) խնդրանքով. համեմատել № 1237 ձեռագրի հետ և նշել բոլոր տարբերութիւնները, նշել № 1237 ձեռագրի էջերը, բոլոր հիշատակարան-հիշատակագրութիւնները և այլն: Հ. Եղիա Փեչիկյանը մեծ բարեխղճութիւնով կատարել էր այդ ամենը: Երբ 1965 թ. Վենետիկից ստացանք մեր մեքենագիր օրինակը, նկատեցինք, որ մահը խանգարել էր հ. Ե. Փեչիկյանին մինչև վերջ հասցնելու գործը, և այն, 147 էջից

սկսած, շարունակել էր, նույն բարեխղճությամբ, հ. Ներսես Տեր-Ներսեսյանը, որին երախտապարտ ենք նույնչափ:

Տարընթերցվածքների բաժնում Ա-ի վերաբերյալ բոլոր ծանոթագրությունները, այսպիսով, պատկանում են հ. Ե. Փեշիկյանին և հ. Ն. Տեր-Ներսեսյանին:

Ա ձեռագրի կարևոր հիշատակարաններն են.

«Տէր աստուած վայելել տացէ աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկայ օրդոյ Հասանայ, ի կամս իւր զգիրքս դատաստանի, անխալ ուղղութեամբ վաբել զպատուիրան սորին» (ձեռ., թ. 100բ):

«Յիսուս Քրիստոս, յորժամ զաս ի նորոգել զերկիր, նորոգեա հոգով եւ մարմնով զաստուածասէր իշխանն իշխանաց զՎախտանգ եւ զամուսինն իւր զԱրզովաթուն ի կեանս անմահս: Եւ ի ներկայիս առանց փորձանաց պահեսցես զաւակաւ հանդերձ եւ ամենայն քնտանեաւ: Եւ բազում առատ ողորմութեամբ քո ողորմեսցիս ննջեցելոց նոցա. ամէն: Եւ տառապեալ գրիչս ողորմեա, Քրիստոս Աստուած» (այս և հաջորդ հիշատակարանը բաղում ենք արձանագրութեան տե՛ս նաև Ղ. Ալիշան, Հայաստանում, էջ 407—408, և այլոց մոտ):

«Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, քնդ նմին Հաւր եւ Հոգւոյն, որ ետ զդարձումն աստանաւր տալ գրոցս դատաստանի: Զի թե եւ յառաջագոյն ասացաք, զրելով զսակաւ յիշատակարանն, եթե աւարտումն սորա ոչ է, սակայն այժմ մեք հանգուցանել կամեցաք զրելով ըստ կարի, ոչ խափանել զայլոց, որք կամին գրել եւ յաւելոյ: Եւ թեպետ յամի, յորում սկսաք, գրեցաք զեղեալ շափս դատաստանի, սակայն յաղագս հալածանաց, որ եհաս մեզ՝ քնտանի եւ ոչ աւտար, յապաղեաց զրել զյիշատակս զայսոսիկ (այս երկու հիշատակարանները գրված են յաւարտ մատենին):

Բ — Զմմառի միաբանության № 180 (հին № 226) ձեռագիրը (նկարագրությունը տե՛ս Մեսրոպ վ. Քէշիշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 414—426): Օգտվել ենք մանրաժապավենից, որը սիրով մեզ ուղարկեց Զմմառի միաբանությունը և որի համար խորապես երախտապարտ ենք:

Ձեռագրի բովանդակությունն է. Մխիթար Գոշի Դատաստանագիրք՝ թ. 1—252ա, Ասորա-հոմեական Դատաստանագիրք՝ թ. 255բ—299բ, Մովսիսական օրենքներ՝ թ. 299բ—308բ: Ձեռագրի վերջում, թ. 308բ, կա հետևյալ հիշատակարանը. «Տէր Յիսուս ի վայելումն տացէ տեանս Վրթանիսի արհիեպիսկոպոսի և հոգևոր վերադիտողի և բազմաց բարիս շնորհողի և մոլորելոց դարձուցչի և մեղուցելոց մխիթարիչի. ՈՁԹ» (=1240 թ.): Մ. վ. Քէշիշյանը (Յուցակ... էջ 414), Հ. Մ. Մսրյանը (Bulletin Arménologique-Beyrouth, 1947—1948, Mélanges de l' Univ. St. Joseph, t. XXVII fasc. 10, էջ 209—214) և այլք գտնում են, որ ձեռագիրը երկու գրիչ ունի, մեկը գրել է ձեռագրի 1բ—255բ թերթերը՝ Դատաստանագիրքը, մյուսը՝ օտար օրենքները և որ 1240 թ. վերաբերում է ձեռագրի միայն երկրորդ մասին, ուստի առաջին մասը՝ Դատաստանագիրքը, շատ հին ընդօրինակություն է: Հ. Կետիկյանը (Զմմառու ձեռագրի Դատաստանագրքի թուականը, «Բազմավէպ», 1952, էջ 152—154) 1240 թ. վերագրում է ամբողջ ձեռագրին: Գիտենք, որ Մխիթարը Դատաստանագրքի իր իսկ օրինակից արտագրված մի օրինակ, որը ընդհանրապես երկրորդ օրինակն էր Դատաստանագրքի, նամակով ուղարկել է Ամենայն Հայոց կաթողիկոսին: Այդ նամակը կա Զմմառի ձեռագրում: Արդ, եթե Զմմառի ձե-

ուսգիրք կաթողիկոսին ուղարկված օրինակը չէ, ապա ընդօրինակութիւնն է գրանից: Բոլոր գեպքերում Ձմմաստի գրչագիրը Դատաստանագրքի հին և մեծարժեք ձեռագրերից է:

Ք. 1բ, ոչ գրչի գրով. «Ի վայելումն Աբրահամ եպիսկոպոսին է: Զգուշ լեր, ով բարեմիտ ընթերցող, զի հերձուածողին է գիրքս այս, և զբազում սխալանս պարունակէ, դարձեալ ասեմ զգուշ լեր»:

Չեռագրի առաջին մասի վերջում, Դատաստանագրքից անմիջապէս հետո, թ. 253ա—255բ կա Մխիթարի հետեւյալ հիշատակարանը և նամակը.

«Փառք Փրկչին մերոյ Յիսուսի, ընդ նմին Հաւր և Հոգւոյն սրբոյ, որ ետ գղադարումն աստանաւ տալ գրոցս դատաստանի: Զի թէ և յառաջագոյն ասացաք, գրելով զսակաւ յիշատակարանն, եթէ աւարտումն սորա ոչ է, սակայն այժմ մեք / հանգուցանել կամեցաք գրելով ըստ կաւրի, ոչ խափանելով զայլոց, ուր կամին գրել և յաւելու: Եւ թէպէտ յամի, յորում սկսաք (բնագրում՝ սկասք—տ. Ք.), զրեցաք գեղեալ չափս դատաստանի, սակայն յաղագս հալածանացն, որ եհաս մեզ՝ ընտանի և ոչ աւտար, յապաղեաց գրել զյիշատակարանս զայստսիկ:

Զսուրբ և զաստուածաբեալ գլխոյդ Եկեղեցեացս Հայաստանեաց և հանուրց կարգաց պեաի անուանակրութեամբ տեսնող մերոյ հոգեւորի և Լուսաւորչին մերոյ սրբոյ կոչման և արոող ժառանգաւորի, զհարկ հոգեւոր հրամանի նուաստս յամենայնի ամենայնիվ Մխիթար ընկալայ, զոր վասն գրոցս էր դատաստանի, ի ձեռն եղբաւր Եկելոյ ի ձէնջ, որ երբեմն ընդ մեզ սակաւ ինչ դեգերեալ ի վարժս և յիւրոցն շարժեալ փափագանաց ի ձեռ/նադրութիւն տեսչութեան, զոր և բարտալ դատեալ ի կորովի ձեր տեսութենէ, դարձաւ ի ձէնջ, խափանեալ յիւրոց խորհրդոցն, թէպէտ և այլուր զիւրն ելից ախտ: Սակայն իրաացի կարծեցի յապաղել յայս հրաման մեալ և գրոյ, զի մի ցոյց ինչ կարծիցիմ զիմս առնել վաստակ սակաւ, այլ փութացայ և անվեհեւր կատարել զայս գործ հոգեւոր ըստ իմում կարի, խաշոր նիրով և գրով, քանզի ժառանգութիւն իմ Եղեւ անձեռնհասութիւնն ի սկզբանէ, ընդ միտ ածելով և զայս, թէ հասնելի ձեզ լիցի, դիւրին և փոխել ի նիր մագաղաթեայ գրչաւ նարտարաւ, ապա թէ ոչ՝ բաւական է և մեզ յաշխատութիւնս սնոտիս և այս կորուստ նիրոյ: Աղաչեմ պարապմամբ

և մտադիր ընթերցմամբ բննել զախտածէա մտաց իմոց զերկայ, զի և ես միշտ ընդ կարծիքս քամահանաց լինելով և հալածեալ ի խնդրողէն՝ գղատաստանացի գիրք փութով և տառապանաւ գծեալ յանգեցի: Եւ այնորիկ աղագաս սիրելի եղև ինձ համառօտն բան, իբր պատնառ ինչ տալ իմաստնոց, և հակիրեն բան ամփոփել սովոր է զմիտս յայտնիս, և աշխատասիրաբար Երևելի: լինել: Եւ արդ, Եթէ ինչ գոցի հանելի ձեզ, Տեսոն շնորհ, որ ոչ շիջուցանէ գիպայլակն իմաստից և ոչ ի միում ժամանակի, իսկ եթէ ոչ՝ այն մերոց տգիտութեան է, անպարտ ի պարսաւանաց շնորհն կացցէ, զի և ոչ ես իսկ ձեռնամուխ եղէ արտաբոյ ազդման շնորհին: Եւ եթէ բնաւին անաւուտ յեկեղեցի իցէ և պատնառ զայրակողութեանն՝ հրոյ տացես նարակ և հրամայի-

թ. 225ա ցես և որ / առ մեզ է արիւնակ զնոյն առնել և անխափան ձերոյ կացցէ հրաման, թէպէտ և մերես ընթերցեալ վարդապետք՝ հանեալ ընկա-

լան: Աստուծոյ վարկանելի է գներդ վնիւս և մի (մի—սովեյացված է սողամիջում—*հ. Թ.*) անփոյր անհիցէք այլոց վեհից և զայդ դնել գործ, զի յոյժ եպերիմք յայլասեոից՝ ոչ ունելով գիրս դատաստանի:

Գրեալ էաք և սակաւ ժամանակագրութիւն բնյ դատաստանի գրոցս ի մերն յարինակ, գոր անպատշան վարկայ և աստ գրել, զի յատուկ և այդ կացցէ գիրք: Սկիզբն արարաք ի կատարածէ Պատմութեանն Աղուանից զշար հայրապետացն միեռչե ցայն, որ այժմ ունի և զայլ զիրս, որքան լուսաք և տեսաք, զի և այդ այժմ ի մերս շիջաւ յագթ. 255ր գէ. զի թէ ունէաք սովորութիւն գրել զժամանակս իւրաքանչիւր՝ զկնի / եկեալքն ի միասին յարմարելով անէկին լիով պատմութիւն, բայց զի ծովացեալ թողաք, հատաւ և ժամանակաց կարգ, գոր թէ և այժմ կամ ձեզ իցէ և զայս ևս դուք գրել փութայք, գոր ինչ յատուս ձերոյ հայրապետութեանդ պատահեաց, զի մերձ էք յամենայնսդ զիտել անբերի, քանզի ձեր է զպատշանն զամենայն լնու իշխանութիւն: Թողութիւն արասցես ներելով և յանդուգն մերոյդ համարձակութեան և յիշատակի ևս արժանի արասցես ի սուրբ ձեր աղաքս նաստատելով և ի յոյսն բարեաց, գոր զանձեալ ունիք ի փառս Քրիստոսի» :

Գ — № 2577 ձեռագիրը (այստեղ և հետագայում, բոլոր այն ձեռագրերը, որոնց ուր գտնվելու վայրը չի նշվում, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի զրշագրերն են: Այս ձեռագրերի նկարագրութեանը վերաբերող տեղեկութիւնները ևս չենք բերում, բնթերցողին հղելով Մատենադարանի Ձեռագրաց ցուցակի հրատարակված երկհատորչակին). ԺԴ դար. գրիչը՝ Սիմէոն. գրչութեան վայրը՝ անհայտ. բովանդակութիւնը՝ Դատաստանագիրքը. ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ. հողվածների հերթակարգը՝ երբեմն խախտված. տեղ-տեղ չի կարդացվում՝ տառերը մաշված կամ քերված, թիւթերը պատուված լինելու և այլ պատճառներով:

Թ. 219 Թ. «ԵՍիմէոն դրիչ չիշեցէք ի տէր աղաչեմ...»:

Սկսած Թ. 212ա գրիչը փոխվել է: Թ. 211ա վերանորոգված մասի վրա 1629 Թ. հիշատակագրութիւն:

Թ. 124բ կա գաղտնագրութիւն, սրբ կարգացվում է «Հարութիւն» եթև գաղտնագրի «եզ» կարդանք «եդ»:

Գ — №6564 ձեռագիրը. ԺԴ դար. գրիչը, գրչութեան վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ Թ. 2—66, թերի՝ շունի Նախագրութիւնը և հողվածների զգալի մասը. գլխակարգութիւնը սեփական է: ՄԻՆ (բոստ այս ձեռագրի՝ ՃԼԴ) հողվածի վերջում՝ «Ոն գեղեցիկ կարգս խափանեալ». ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ:

Ե — № 6398 ձեռագիրը. մեր կարծիքով ԺԳ—ԺԴ դար (Ձեռագրաց ցուցակում վրիպակով՝ 1303 Թ.) գրիչը, գրչութեան վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ Թ. 52—111, շունի Նախագրութեան առաջին երկու գլուխները և մի շարք հողվածներ, մի քանի հողված միացված են. Գ հողվածից հետո գրված է վերնագիր՝ «Յաղագս դատաստանաց առն և կնոջ» և շարունակվում է. «Ղյաղագս քահանայիցն թողել գատաստան սակս կանոնացն դայն յոլով անգամ չեղ. չ եղոյս յարմարապէս առն և կնոջ սակս խաւսէցուք» և շարունակվում է Զ հողվածի կեսից (Թ. 58ա). ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ, աղավաղ:

Զ — № 209 ձեռագիրը. Ժէ գար. գրիչը, գրչութեան վայրը՝ անհայտ. ժո-

դովաժու, Դատաստանագիրքը՝ թ. 83—156, Նախադրությունը՝ ձեռագրի սկզբում՝ թ. 2—17. Դատաստանագրքի վերջին երեք հոդվածները չկան, մի քանի անգամ երկու հոդված միացված են մեկի մեջ և մի հոդվածը դարձված է երկու. ուղղագրությունը ոչ-միօրինակ. սղագրությամբ հաճախ գրվում է «օ», երբ անպայման պետք է լիներ «ա»։ 10-լաւ, գրօ-գրաւ, օան-աւան, Գօթիթ-Դաւիթ և այլն։ Այսպես է նաև այլ ձեռագրերում։

Է — № 6890 ձեռագիրը. Ժէ դար. գրիչը՝ Սկանդար. դրչության վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 66—114, Նախադրությունը՝ ձեռագրի սկզբում՝ թ. 5—16։ Ինչպես Զ ձեռագրում, այստեղ ևս ԿՅ հոդվածի «իսկ եթէ դժառայ» բառերից սկսած հատվածը անջատվել է որպես առանձին հոդված՝ ԿԶ համարով. շունի վերջին երեք հոդվածը, ինչպես և Զ ձեռագիրը և այլն. հոդվածների միացում-անջատումները մյուս դեպքերում ևս համընկնում են Զ ձեռագրին. բոլոր էական տվյալներով նույնանում է Զ-ի հետ, որից հետևում է, որ այս երկուսը ընդօրինակված են կամ իրարից, կամ ընդհանուր նախազաղափարից։ Թ. 55ա գրչի հիշատակարանը. «Եւ զիս զմեղուցեալ ուրեմայեցի Սկանդար սարկաւազս, որ աշխատեցայ ի ծուռ արիւնակ սորին և զրստոյզն գրեցի, յիշեսչիք մի աստուած ուր»։ Իրոք, օրինակը «ծուռ» է եղել։

Ը — № 3276 ձեռագիրը. 1640 թ. հետո. գրիչը, գրչության վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 191—193, ունի միայն Նախադրության երկու գլուխը, Բ (Թերի) և Ը, և վեց հոդված։

Թ. 193ա. «Ի քվին ՈԺԶ (=1167) տէր ներսէս կաթողիկոս նստի և ի ՈԻԲ (=1173) վախճանի. և տէր Գրիգոր նստի, որ կոչի Տղայ, ամս Ի (=20)։ Եւ ՈԿԲ (=1213) վախճանի վարդապետս գրոցս շինօղն Մխիթար, որ է Գօշն»։

Թ. 191բ. «Վատարեցաւ կանոնական գիրքս ի դառն և ի դժնեա ժամանակիս, յորում ոչ գոյր քազաւսր յազգէն նետողաց... ի սոյն ատուր եղև զրաւ սուրա ի քաղաքս Եգնկայ, ի ձեռն սուտանուն Երիցու Ստեփաննոսի, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս, որ Մառով սուրբ Յակոբ կոչի... բայց գրեցաւ սա ՊԳ (=1355) քվին, յամսեանն օգոստոսի Գ (=4)...»։ Ուսուցչապետ Լ. Խոսիկյանը այս հիշատակարանը համարում է նախազաղափար օրինակինը (տե՛ս ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 411)։

Թ — Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 1738 ձեռագիրը. 1238 թ., գրիչ՝ Բարսեղ. ստացող՝ Մարկոս արքեպիսկոպոս. տեղ՝ Հռոմիլա։ Ա խմբագրության թվակիր ամենահին ձեռագիրն է, նույնքան արժեքավոր, որքան և Ա ու Բ ձեռագրերը։ Այս ձեռագրից օգտվել ենք նույն միջոցով, ինչ և Ա ձեռագրից։ Վենետիկ ուղարկված մեքենագիր մեր օրինակի վրա հ. Եղիա Փեչիկյանը և հ. Ներսես Տեր-Ներսեսյանը նշել են նաև այս ձեռագրի տարբնթերցվածքները (առանց Նախադրության)։

Թ. 146—148. «Փառք Աստուծոյ յաւիտեանս, ամէն։ Ի թուիս ՈԶէ (=1238) գրեցաւ Գիրքս Դատաստանաց առ ափն մեծ գետոյս, որ կոչի Եփրատէս, առ ստորոտ Կաստուածապահ՝ դռնիս Հռոմիլայ կոչեցեալ, և հայրապետութեան տեանն Կոստընդնա, ի շար և ի դառն ժամանակի... Եւ արդ գրեցաւ սա ձեռամբ Բարսղի մեղաշարտի և փցուն գրչի, հրամանաւ աստուածապատիւ և առաքելաշնորհ տէր Մարկոսի արքեպիսկոպոսի... Եւ արդ եր սա ի դաւառէն Սուրբ Մարոյ, և բստ խոտորելոյ մեր ի պատուիրանացն տեանն՝ մատնեցաւ աշխարհն Հայոց ի ձեռն խուժադուժ ազգացն, որ կոչի Դադար, քան զի յաւարի եառ զաշխարհն ամենայն առ հասարակ, բազում քաղաքս և աւանս, և բազում

եպիսկոպոսը և վարդապետը և քահանայք և սարկաւազունք և իշխանայք և ազատք և շինականք և բազում այլ եւս կանայք և մանկտիք, գոր ոչ կարէ որ ընդ գրով արկանել, զոր ըմբռնեցին ընդ ձեռամբ իւրեանց: Եւ արդ եպիսկոպոսս այս, գոր յառաջ ասացաք զանունն, մատնեալ եղև ի ձեռս անաւրինաց, նաև եղբարք իւր եւ ազգատոհմ իւր, և ոչ ուստեք կայր աւգնական գերելոցն, բայց միայն այն, որ ազատեացն գմեգ արեամբն իւրով... Եւ արդ զեպիսկոպոսս զայս իշխան ոմն ի գերելոցն, որոյ անունն Քուրդ ասի, յիշատակ նորա՝ արհնութեամբ, ազատեալ յանաւրինացն, և սա ցաւագին սրտիւ և բեկեալ անձամբ դիմեալ յայս աթոռս հայրապետական, ուստի և սրբասնեալ կաթողիկոսս Հայոց, գոր յառաջ յիշատակեցաք զանունն, սիրով ընկալաւ զսա ըստ արժանոյն իւրոյ:

Եւ արդ ցանկացող այսմ տառիս, գոր է հաստատած յաշխարհս Կայենոյ՝ ի մենաստանին Գետիկ՝ ի սուրբ վարդապետաց սահմանած, որոյ անունն Միթթար յորչորչի: Եւ արդ եւ մեղապարտ ծառայս ձեր... աղաչեմ գամենեսեան, որք կարդայք կամ եղանակէք, զսուրբ եպիսկոպոսն զտէր Մարկոս... և զիս զանարժանս... յիշեսցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր...» (Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 930—932):

Այս ձեռագրերը՝ Ա.—Թ, պատկանում են Ա խմբագրութեան: Բնագրի հիմքում դրված են Ա, Բ և Թ ձեռագրերը: ա, ինչպես տեսանք, ընդօրինակված է Ա-ից: Ա, Բ և Թ ծագում են հեղինակային օրինակից կամ անմիջականորեն կամ, առավելագույնը, մեկ-երկու սերնդի միջնորդավորվածությամբ: Այսպես. Ա-ն ծագում է հեղինակային օրինակից կամ անմիջականորեն (երկրորդ սերունդ), կամ նրա մի ընդօրինակությունից անմիջապես (երրորդ սերունդ): Բ-ն, եթե իր առաջին մասով կաթողիկոսին ուղարկված օրինակը չէ (երկրորդ սերունդ), որը անմիջականորեն ծագում էր հեղինակային օրինակից, ապա ընդօրինակված է կաթողիկոսին ուղարկված ձեռագրից (որով դառնում է երրորդ սերունդ): Թ-ն, քանի որ իր տարբերակված ձևերով նույնանում է Բ-ի հետ և գրված է Հռոմկալյում, ընդօրինակված է կաթողիկոսին ուղարկված օրինակից (որով նույնպես դառնում է երրորդ սերունդ), եթե չենք ընդունում, որ հենց Բ-ն է կաթողիկոսին ուղարկված օրինակը: Նշված ձեռագրերն, այսպիսով, հեղինակային օրինակի առաջին կամ երկրորդ սերունդն են, ուստի մեծապես արժեքավոր գրչագրեր են, և, եթե անտեսենք 225-րդ հոդվածի փորձիկ մի հատվածը, կարող ենք ասել, որ հարազատորեն արտահայտում են հեղինակային բնագիրը:

### Գ խմբագրություն.

Ժ — № 485 ձեռագիր. ԺԴ դար. գրիչ՝ Գրիգոր. գրչության վայր՝ Քաղեի վանք. ստացող՝ պարոնտէր Ներսէս (Ձեռագրաց ցուցակում՝ Պարոնտէր Ներսէս, որով «Պարոնտէր» հատուկ անուն է, մինչդեռ պետք է լինի «պարոնտէր Ներսէս», որ նշանակում է, թե պարոնր հոգևոր անձ էր, ինչպես հաստատվում է թթ. 16ա, 159ա, 196բ հիշատակագրություններով. «Ջստացաւղի գրոցս զտէր Ներսէսն յիշեցէք», «Ջտէր Ներսէսն, որ ստացաւ զգիրս դատաստանի... յիշեցէք», «Ջստացողի այսմ կտակիս դատաստանի գրոց նոմոսիս՝ զտէր Ներսէս, որ է պարծանք մեր ամենիս... յիշեցէք...» «Պարոն-տէր» կամ «պարոնտէր» սոցիալական նոր տերմինի ծագման ու բովանդակության մասին տե՛ս

ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, կազմեց  
Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ LXXI—LXIV: Ժողովածու, Դատաստանա-  
գիրքը՝ թ. 1—170. շունի ճԶ—ՃԼ է հոգվածները. ձեռագրից պակաս է շուրջ  
տասը թերթ. ուղղագրությունը ոչ-միօրինակ, Այս և № 2776 ձեռագրերը բնդ-  
օրինակված են կա՛մ իրարից, կա՛մ բնդհանուր նախագաղտվարից:

Թ. 8ա. «Ջատացող զլոցս զպարոն տէր ներսէսն յիշեցէք ի Քրիստոս, բնդ  
նմին և ղեղկեյի գծողս Գրիգոր, և որպէս զուր զմեզ յիշէք, աստուած զձեզ  
յիշէք»:

Թ. 16բ. «Աղաչեմ զձեզ, ով պատուական եղբայրք, թողութիւն արէք պա-  
կասութեան գրոյս»:

Թ. 16բ. «Խիստ տառապանաւք զրեցի. ցաւահար կանայք կակաւեցուցա-  
նէին, մեղայ աստուծոյ»:

Թ. 20բ. «Աստուած տէր ներսէսն փառաւորէ, որ այսօր զմեղ մեղրօք կրա-  
կրեց»:

Թ. 27ա. «Չմերուկն խիստ առատ է այս տարիս»:

Թ. 48բ. «Մէկ աղբատ երեկ մէկ լաւ բաղարճ եբեր. աստուած իւրան առա-  
տութիւն տայ. ամէն»:

Թ. 70ա. «Մէկ այրի կին մի երեկ մեզ եւղով հաց եբեր. աստուած զինքն  
աւրհնէ. ամէն»:

Թ. 233ա. «Յիստ է ցուրտ, գրիչս ձեռնէս կընկէ»:

Ի — № 657 ձեռագիրք. տարբեր գրիչներ. Ժողովածու, Դատաստանա-  
գիրքը՝ թ. 3—87. ԺԴ դար. գրիչը, գրչութեան վայրը՝ անհայտ. Կանոնագրքի  
հատվածի գրիչը՝ Ստեփանոս, գրչութեան վայրը՝ Ջուղա, թվականը՝ 1614. թ.  
218. «գրեցօ ի թվականիս հայոց ՌԿԳ (=1614) ի յաստուածախնամ գողա-  
քաղաքս Ջուղայ»։ Ուղղագրությունը ոչ-միօրինակ. թերի՝ ՃԼԶ հոգվածի կեսից  
վերջանում է:

Լ — № 3788 ձեռագիրք. 1825 թ., գրիչը՝ Պետրոս Ավետ Սեթ, գրչութեան  
վայրը՝ Մաղրաս. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ էջ 188—320:

«Յամին մերդ կենարարին  
Հալար ութ հարիւր քսան հինգին,  
Չայս գծագրեալ տառս տերունի  
Չեռամք Պետրոս Աւետ Սեթին....  
Որ և Հնդիկս բնակի,  
Մաղրաս քաղաք վերայկոչի....  
Եղև աւարտ գրքոյս լրման  
Դեկտեմբերի երկոտասան»:

Ընդօրինակված է 1392 թ. մի ձեռագրից, որի հիշատակարանը բերում է  
Պետրոս գրիչը. էջ 184. «... Արդ գրեցաւ սա ի վանս Գոփորու սուրբ Քէոզո-  
րոսս, բնդ հավանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչիս եւ  
սուրբ Մարգիս զինաւորիս ի թվին հայոց ՊԽԱ (=1392 մեր թվականութեան—  
Խ. Թ.) ի մարտի 20, որ է հասարակ գահն: Գրեցաւ սա ի խնդրոյ Յակոբ քա-  
հանայի՝ նուաստ կրօնաւորի, զի ի վաղուց հետէ փափագէի այսմ ծաղկաւետ  
բուրաստանիս: Զի ի կենդանութեան իմում ով ոք մի իշխանութիւն արասցէ  
գրոյս և յետ ելից իմոց տայ պատուէր, զի ի վանս սուրբ Քէոզորոսու դիցեն ի  
վայելումն աստուածասէր կրօնաւորաց» (հավանաբար պետք է լինի Գորբբու

կամ Գորոփու վանք՝ համաձայն Ղ. Ինձիճյանի (Սասրաղրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 21—22). «Սեղեմնուաւ Զոր՝ ուր նահատակեցաւ և թաղեցաւ սուրբն Թէոդորոս շառարս Գրիգորի Լուսաւորչի. յորում ապա շինեցաւ վկայարան ի Լուսաւորչին, և եղև միայնարան, որ և կոչի Գորոփու վանք սուրբ Թորոս... ի յերկրին Եկեղեցաց, որ է յեղբնկա...»): Համեմատությունները ցույց տվեցին, որ այս ձևագիրը ըստ էութեան ոչինչ չի ավելացնում, ուստի և տարբերակները չնշեցինք:

Խ — № 2593 ձեռագիրը. 1303 թ., գրիչը՝ Կարապետ. գրչութեան վայրը՝ Երզնկա. ստացող՝ Յոանկ. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 1—179. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ:

Թ. 30ր. «Զմեղուցեայ գծողս աղաչեմ զԿարապետ (բնագրում՝ զԿր.) երեցս յիշել ի տէր» (թ. 179ր՝ գրչի անունը՝ լրիվ):

Թ. 231բ—232ա. «... Արդ գրեցաւ սայ ի մայրաքաղա[քս] ||| (կարելի է կարողալ՝ Եզնկայ), ընդ հովանեաւ կաթողիկէ Լկեղեցոյ, ձեռամբ ||| քահանայի, ի թվիս հայոց ՉՄԲ (=1303), ի հայրապետութեան ||| (տեառն—Խ.Թ.) Գրիգորիոսի և յառաջնորդութեան Եզնկայի՝ տեառն ն[երս]ի[սի], [ի թա]գաւորութեան Հեթմոյ աստուածասիրի և բարեպաշտի և [ի ժա]մանակս սշխարհակալ և մեծ դանին Ղազանին...»:

Մ — Լեւինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրական բաժնի հայերէն ձեռագրերի հավաքածուի նոր շարքի № 39 ձեռագիրը (այս հավաքածուի մասին տե՛ս Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, № 4, էջ 267—268). օգտվել ենք մանրաթափանցից: Ժամանակ՝ 1404 թ., գրիչ՝ Թումա. ձեռագիրը էջակալված չէ, համեմայն դեպս մանրաթափանցի վրա էջահամարներ չեն երևում. Ժողովածու. սկզբում՝ Ասորա-հոմեական դատաստանագիրքը, ապա՝ Մխիթար Գոչի Դատաստանագիրքը. Դատաստանագրքից հետո՝ մի քանի էջ մանր քաներ և ապա. «ԺԱ. յիշատակարան սուրբ վարդապետին, որ դայս գիրքս ասաց...» և հիշատակարանը. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ: Ունի հողվածների և թերթերի ետևառաջություն, այսպես. ԺԱ հողվածից հետո հող. ԺԳ, ԺԲ, ԺԳ. ԻԱ հողվածից հետո հողվ. Գ, Գ և նոր միայն՝ ԻԲ համարով իսկական ԻԲ հողվածը: Իր տեղում «Վասն վարդապետաց» հողվածը կա լրիվ, այստեղ միայն այսքանը. «և վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակերթեալք հին և նոր կտակարանաց և կանոնական հրամանաց աներկիւղ»: ՂԸ հողվածի մի քանի տողով վերջանում է թերթը, և հաջորդ թերթը սկսվում է ՃՀԳ հողվ. կեսից, որին հաջորդում են հ. հ. ՃՀԳ, ՃՀԵ, ՃՀԶ, ՃՄԷ հողվածի կեսից թերթը վերջանում է և հաջորդ թերթը սկսվում է ՂԹ հողվածի ընդհատված կեսից և շարունակվում է ՂԹ, Ճ, ՃԱ: ՃԱ հողվածը վերջանում է նախավերջին բառով, որն անմիջապես շարունակվում է ՃԽԶ հողվածի «ապաշխարութիւն կալցի՝ հինգ ամ արտաքոյ և երկու՝ ի ներքս...» բառերով, մինչև «զգրոցն առնելով անբամբաս զմեզ թողցնն», որով վերջանում է էջը. հաջորդ էջը սկսվում է ՃՄԷ հողվածի կեսից, այնուհետև ՃՄԸ, ՃՄԱ—ՃՀԲ. հաջորդ էջը ՃԲ հողվածն է և հաջորդները մինչև ՃԽԶ հողվածի ընդհատված կեսը և ապա հող. ՃՀԳ:

Դատաստանագրքի ցանկից հետո. «Թվին ՊՄԳ (= 1404) գրեցաւ գիրս

ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, կազմեց  
Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ LXXI—LXIV: Ժողովածու, Գատաստանա-  
գիրքը՝ թ. 1—170. չունի ՃԶ—ՃԼԷ հոդվածները. ձեռագրից պակաս է շուրջ  
տասը թերթ. ուղղագրությունը ոչ-միօրինակ: Այս և № 2776 ձեռագրերը ընդ-  
օրինակված են կա՛մ իրարից, կա՛մ ընդհանուր նախագաղափարից:

Թ. 8ա. «Զասացող ղրոցս գպարոն տէր ներսէսն յիշեցէք ի Քրիստոս, ընդ  
նմին և ղեղկելի գծողս Գրիգոր, և որպէս ղուք ղմեղ յիշէք, աստուած ղձեղ  
յիշէ»:

Թ. 16բ. «Աղաչեմ գձեզ, ով պատուական եղբայրք, թողութիւն արէք պա-  
կասութեան գրոյս»:

Թ. 16բ. «Խիստ տառապանաւք գրեցի. ցաւահար կանայք կակաւեցուցա-  
նէին, մեղայ աստուծոյ»:

Թ. 20բ. «Աստուած տէր ներսէսն փառաւորէ, որ այսօր ղմեղ մեղրօք կրա-  
կրեց»:

Թ. 27ա. «Զմերուկն խիստ սուստ է այս սարիս»:

Թ. 48բ. «Մէկ աղբատ երեկ մէկ լաւ բաղարճ եբեր. աստուած իւրան առա-  
տութիւն տայ. ամէն»:

Թ. 70ա. «Մէկ այրի կին մի երեկ մեզ ևւղով հաց եբեր. աստուած գինքն  
աւրհնէ. ամէն»:

Թ. 233ա. «Խիստ է ցուրտ, գրիշս ձեռնէս կրնկէ»:

Ի — № 657 ձեռագիրը. տարբեր գրիչներ. Ժողովածու, Գատաստանա-  
գիրքը՝ թ. 3—87. ԺԳ դար. գրիչը, գրչության վայրը՝ անհայտ. Կանոնադրքի  
հատվածի գրիչը՝ Ստեփանոս, գրչության վայրը՝ Զուղա, թվականը՝ 1614. թ.  
218. «գրեցօ ի թվականիս հայոց ՌԿԳ (=1614) ի յաստուածախնամ գողա-  
քաղաքս Զուղայ»։ Ուղղագրությունը ոչ-միօրինակ. թերի՝ ՃԼԶ հոդվածի կեսից  
վերջանում է:

Լ — № 3788 ձեռագիրը. 1825 թ., գրիչը՝ Պետրոս Ավետ Սեթ, գրչության  
վայրը՝ Մաղրաս. Ժողովածու, Գատաստանագիրքը՝ էջ 188—320:

«Յամին մերդ կենարարին  
Հազար ութ հարիւր քսան հինգին,  
Զայս դժագրեալ տառս տերունի  
Ձեռամբ Պետրոս Աւետ Սեթին....  
Որ և Հնդիկս բնակի,  
Մաղրաս քաղաք վերայկոչի....  
Եղև աւարտ գրքոյս լրման  
Դեկտեմբերի երկուսասան»:

Ընդօրինակված է 1392 թ. մի ձեռագրից, որի հիշատակարանը բերում է  
Պետրոս գրիչը. էջ 184. «... Արդ գրեցաւ սա ի վանս Գոփորու սուրբ Քէոզո-  
րոսս, ընդ հավանեալ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչիս եւ  
սուրբ Սարգիս գինաւորիս ի թվին հայոց ՊեՍ (=1392 մեր թվականության—  
Խ. թ.) ի մարտի 20, որ է հասարակ գահն: Գրեցաւ սա ի խնդրոյ Յակոբ քա-  
հանայի՝ նուստ կրօնաւորի, զի ի վաղուց հետէ փափագէի այսմ ծաղկաւէտ  
բուրաստանիս: Զի ի կենդանութեան իմում ով ոք մի իշխանութիւն արասցէ  
գրոյս և յետ ելից իմոց տայ պատուէր, զի ի վանս սուրբ Քէոզորոսու ղիցեն ի  
վայելումն աստուածասէր կրօնաւորաց» (հավանաբար պետք է լինի Գորբորու

կամ Գործփու վանք՝ համաձայն Ղ. Ինճիւնջանի (Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 21—22). «Սեղեմնուա Չոր՝ ուր նահատակեցաւ և թաղեցաւ սուրբն Քլոսքորոս յաւարս Գրիգորի Լուսաւորչի. յորում ապա շինեցաւ վկայարան ի Լուսաւորչէն, և եղև միայնաբան, որ և կոչի Գորբու վանք սուրբ Թորոս... ի յերկրին Եկեղեցաց, որ է յԾղզնկա...»): Համեմատությունները ցույց տվեցին, որ այս ձեռագիրը ըստ էութեան ոչինչ չի ավելացնում, ուստի և տարընթեքը վաճառքները չնշեցինք:

Խ — № 2593 ձեռագիր. 1303 թ., գրիչը՝ Կարապետ, գրչութեան վայրը՝ Երզնկա. ստացող՝ Ֆռանկ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 1—179. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ:

Թ. 30բ. «Զմեղուցեալ գժողս աղաչեմ գկարապետ (բնագրում՝ գկր.) երեցս յիշել ի տէր» (թ. 179բ՝ գրչի անունը՝ լրիվ):

Թ. 231բ—232ա. «... Արդ գրեցաւ սայ ի մայրաքաղա[քս] ||| (կարելի է կարդալ՝ Եզնկայ), ընդ հովանեաւ կաթողիկէ Եկեղեցոյ, ձեռամբ ||| քահանայի, ի թվիս հայոց ՉՄԲ (=1303), ի հայրապետութեան ||| (տեառն—Ն. Ք.) Գրիգորիոսի և յառաջնորդութեան Եզնկայի՝ տեառն Ն[էրս]ի[սի], [ի թա]գաւորութեան Հեթմոյ աստուածասիրի և բարեպաշտի և [ի ժա]մանակս աշխարհակալ և մեծ դանին Ղազանին...»:

Մ — Լեւիեգրադի Սարտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանի ձեռագրական բաժնի հայերեն ձեռագրերի հավաքածուի նոր շարքի № 39 ձեռագիրը (այս հավաքածուի մասին տե՛ս Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1958, № 4, էջ 267—268). օգտվել ենք մանրաժապավենից: Ժամանակ՝ 1404 թ., գրիչ՝ Թումա. ձեռագիրը էջակալված չէ, համեմայն դեպի մանրաժապավենի վրա էջահամարներ չեն երևում. ժողովածու. սկզբում՝ Ասորա-հոռմեական դատաստանագիրքը, ապա՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը. Դատաստանագրքից հետո՝ մի քանի էջ մանր բաներ և ապա. «ԺԱ. յիշատակարան սուրբ վարդապետին, որ զայս գիրքս ասաց...» և հիշատակարանը. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ: Ունի հոդվածների և թերթերի ետևառաջություն, այսպես. ԺԱ հոդվածից հետո հոդ. ԺԲ, ԺԳ, ԺԴ. ԻԱ հոդվածից հետո հոդվ. Գ, Դ և նոր միայն՝ ԻԲ համարով իսկական ԻԲ հոդվածը: Իր տեղում «Վասն վարդապետաց» հոդվածը կա լրիվ, այստեղ միայն այսքանը. «և վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթութեալք հին և նոր կտակարանաց և կանոնական հրամանաց աներկիւղ»: ՂԸ հոդվածի մի քանի տողով վերջանում է թերթը, և հաջորդ թերթը սկսվում է ՃԶԳ հոդվ. կեսից, որին հաջորդում են հ. հ. ՃԶԳ, ՃԶԵ, ՃԶԶ, ՃՄԷ հոդվածի կեսից թերթը վերջանում է և հաջորդ թերթը սկսվում է ՂԸ հոդվածի ընդհատված կետից և շարունակվում է ՂԹ, Ճ, ՃԱ: ՃԱ հոդվածը վերջանում է նախավերջին բառով, որն անմիջապէս շարունակվում է ՃԽԶ հոդվածի «ապաշխարութիւն կալցի՝ հինգ ամ արտաքոյ և երկու՝ ի ներքս...» բառերով, մինչև «ղգրոցն աննկրով անբամբաս գմեղ թողցեն», որով վերջանում է էջը. հաջորդ էջը սկսվում է ՃՄԷ հոդվածի կեսից, այնուհետև ՃՄԸ, ՃՄԱ—ՃԶԲ. հաջորդ էջը ՃԲ հոդվածն է և հաջորդները մինչև ՃԽԶ հոդվածի ընդհատված կետը և ապա հոդ. ՃԶԳ:

Դատաստանագրքի ցանկից հետո. «Թվին ՊԾԳ (= 1404) գրեցաւ գիրս

դատաստանի ձեռամբ մեղաւորաբար դրշի թումամի՝ բանի ինդրողի, ընդ հովանեաւ ոտոր Աստուածածնի և Գլորիա զարմարի: Ով սր որ ընթեանու յիշէ ի մարրափայլ յազօթս իւր զհոգեոր հայր մեր վեյրօրան կրօնաւոր և զծնաւորն մեր...» Ասորա-հոռմեական դատաստանագրքի վերջում. «Զթումա խնդրող բանի աղաչեմ յիշել ի տէր. թվին ՊՄԿ»:

ՄՍ հոգվածի վերնագրի կողքին. «ՊՄԳ. ասնուսւլը աղեղնաւորն»:

Ձեռագրի վերջում, ուրիշ գրշով. «Ով որ զայս գիրքս հանէ ի դրանէ սուրբ ատաբելոցս կամ գողանա՝ ով յափշտակելով և կամ գրաւ դնելով, զպատիժն Յուդայ առցէ և դիւաշողացն Քրիստոսի, ամէն. Եւ ով զայս թուխթս կտրէ կամ զայս գիրս քերէ՝ և նայ նոյնպէս պատժի որպէս զԿորնի և զԴադան. ամէն»:  
Կս հետագայի այլ հիշատակարան ևս (1622 թվականի):

Կ — № 2880 ձեռագիրը. 1784 թ., Ասորախան, գրիչը՝ Հովհաննես Փառակեցի. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 38—63, Նախադրութիւնը՝ ձեռագրի սկզբում՝ թ. 6—12, որից հետո՝ Ասորա-հոռմեական դատաստանագիրքը. թերի՝ ունի մինչև ճԻԱ հոգվածու: Ընդօրինակված է, հալանաբար, նախորդ ձեռագրից, որի մասին վկայում են ոչ միայն նախագաղափարի հիշատակարանը, այլև նախորդ ձեռագրի հոգվածների ետևառջութիւնն որոշ հետքերը, որ կան նաև այստեղ. այս ձեռագրում ևս ճԱ հոգվածը ճիշտ նույն կեանքի շարունակվում է ճԻԶ հոգվածի ճիշտ նույն բառով:

Մ և Կ ձեռագրերում վարդապետների դերը և նշանակութիւնը ընդգծված է, ինչպես կարելի է տեսնել տարբերութեան վաճառքից:

Թ. 9, որը ախտոսաթերթն է. «Գիրք դատաստանաց հայոց: Արարեալ ի վաղնջուց ժամանակաց եռամեծար վարդապետաց տանն Աղուանից, ժողովեալ յաստուածային գրոց և յայլ դատաստանական մատենից, որով յայնժամ ազգ մեր վարիւր ի դատողութիւնս հոգեորս և մարմնաւորս:

Այժմ ի բուն իսկ հեղինակէն արտագրեցաւ, որ գրեցեալն էր ի ԸՃՄ և Գ թուականիս հայոց (=1404) ի վայելս հայկազունեաց ժողովրդեան մերոյ և բանասէր մանկանց եկեղեցականաց և աշխարհականաց:

Հրամանաւ սրբոյ Աթոռոյն էջմիածնի ծայրագոյն նուիրակ, Ռուստաց երկրի ամենայն հայոց ազգին առաջնորդ և նոր Նախիջևանաց հիմնադիր՝ Սանահնեցի Երկայնաձեռն Արղութեցի Եհօշբէգի որդի իշխանագնեայ տեսնն Յովսեփայ՝ սրբազան արքեպիսկոպոսին, ի վեհափառ հայրապետութեան Քրիստոսահիմն սրբոյ Աթոռոյն էջմիածնի՝ մօր մերոյ, տեսնն Ղուկասու՝ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն հայոց, ձեռամբ փառակեցի հանդուցեալ Ոսկանի որդի ընչին Յովհաննէսիս, յամի Տեսնն 1784 և ի թուարեթեանն Հայոց ՌԲՃԷԳ, յերկիրս Ռուստաց, ի քաղաքս Հաշտարխան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածին Աւագ եկեղեցույս Հայոց»:

Հ — № 8964 ձեռագիրը. ԺԾ դար. գրիչ, գրչութիւն վայր՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 192—203. թերի՝ ունի միայն Նախադրութիւնն Ա.—է գլուխները:

Թ. 193. «Գիրք դատաստանաց, գոր արարեալ է սուրբ վարդապետին Մխիթարայ Գոշի կոչեցեալ»:

Չ — № 2776 ձեռագիրը. 1335 թ., գրիչ՝ Գրիգոր երեց. գրչութիւն վայր՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 1—176. ուղղագրութիւնը՝ ոչ միօրինակ: Այս և № 485 ձեռագրերը ընդօրինակված են կամ իրարից, կամ ընդհանուր նախագաղափարից, որովհետև նույնական են բովանդակութիւն-

նից սկսած մինչև ամենամանր նշանները և որոշ հիշատակագրությունները: Օրինակ՝ ձեռ. № 485, թ. 219ր, երբ վերջանում է «Համառոտ ժողովումն օրինաց վերստին», կա հեռեկալ հիշատակագրությունը. «Գրչի սորա և սաացողի Քրիստոս գլխածն ողորմեսցի. ամէն»: Նույն հիշատակագրությունը նույն օրենք-նեղի վերջում կա նաև № 2776 ձեռագրում, թ. 223ր, և այլն:

Թ. 260ր. «...Այս ամենայն սբանչելիքս, որ սուրբ գրաւքս մեզ ցուցան,  
ի յԱդամայ եղև ըսկիզբն, մինչև ի յայս նոր թվական  
Եւթնհարիւր 27 (=1335 թ.) որ գաւրացան յա[զգն  
հագարեան]....  
Եւ թէ զանունս հարցանես, Գրիգոր շէրէց եմ անարժան,  
Որ կարողեցի յայսմն տառի տունըս թվով ձ և քան:

(Ձեռագրի 259—263 թերթերը գրավող այս ընդարձակ ու չափածո հիշատակարանի հրատարակությունը տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 268—269: Ձեռագրում, ուստի և ԺԴ դարի հիշատակարաններում, չկա վերջին տունը, որը կա № 8245 ձեռագրում: Ուղղանկյուն փակագծի մեջ վերցրածը ուրիշ ձեռք է, հավանաբար վերանորոգողին):

Թ. 32ա. «Ես Դաւիթ երեց անունս ունեմ և զծո||| առի սուրբ զիրքս աստուածային իշատակ ինձ և ծնուղաց իմոց եւ հաւր իմոյ ճահանշային և մայր իմոյ Մուսամփաշային՝ զհանգուցեալ ի Քրիստոս, եւ որդին իմ Հաբբամ և Առատոմ և Մրկրտիչ եւ աւակ որդին իմ Քաթիոս եւ արեան մերձաւորաց իմոց առի իշա[տակ] ինձ, ի վաստա[կոց] իմոց առի ||| Քուրայմի|||ն Փիրիճան ||| էսին ||| ջձ թվիս հա[յոց] (=1531 թ.):»:

Թ. 32բ. «...Արդ, ես՝ Դաւիթ էրէցս սվի իմ սրտի կամաւս զսուրբ զիրքս Յոհանէս վարդապետին իմ հոգոյս անմահ յիշատակ....»:

«...Գրեցաւ թվիս ՌՃԸԲ (=1723), որ մեր խեղճ ազգս քրիստոնէից շատ գոտորվեցան ի ձեռաց ... մահմետականաց ի երկիրս Գեղամայ»:

Թ. 266ա. «...Արդ, ես՝ մեղուցեալ Սարեցի նրաստ Յոհաննէս վարդապետս, որդի Մելքոնին որդոյ Միրզաշանին յորդոյ Զհանշահի, որոյ որդի նորին մեծ վարդապետն Յոհաննէս ի ԶԶ թվին (=1531) ստացեալ էր այս սուրբ Գիրքս դատաստանաց, եւ ես ի Ռ և ի ԽԹ թվիս (=1600) նորոգել սվի զսուրբ մատենանս յիշատակ ինձ և կրկնակի՝ ձնողացն իմոց Մելքոնին և Փիանդին և եղբարցն իմ Քումայ իրիցոյն և նորին որդոյն Ռստակես իրիցոյն և միւս եղբօրն իմ Միրզին և հանգուցելոյն ||| լուխանին և քերքն իմ Փարին, Խանսուլթանին և Ալուլխանին և հօր եղբօրն իմոյ Յաղուլուլին.... Արդ, աղաչեմ.... յիշո զմեծ վարդապետն Յոհաննէս և զիս՝ զվիճք Յոհաննէսիկս....

Նորոգեցաւ սուրբ կտակս ձեռամբ յԱլեքսանտոս կրօնաւորի....», որից հետո՝ ժամանակագրություն, որը հրատարակվել է մի քանի անգամ (բնագիրը, սրա վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններով, տե՛ս Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դդ., հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 235—249):

Թ. 264բ. «Զմեծ վարդապետն Յոհաննէս զՋահնշենց կոչեցեալ՝ զստացող զրոցս, յիշեցէք ի Քրիստոս, ով հանդիպողք, և աստուած զձեզ յիշէ, և թէ կամիք՝ զվիճք Յովհաննէսիկս վասն աստուծոյ այլ յիշեցէք աստուած ողորմեսալիս, աղաչեմ»:

Ղ — № 3562 ձեռագիրը. 1597—1599 թթ., գրիչը՝ Արիստակես Տարոնացի. գրչության վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 51—172. Նախադրությունը՝ ձեռագրի սկզբում՝ թ. 1—12. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ, աղավաղ: Կազմելու կամ վերակազմելու ժամանակ թերթերը դասավորվել են ետևառաջ, մասնավանդ դա վերաբերում է նախադրությանը:

Թ. 16ա. «Զգործս ձեռաց իմոց ուղիղ արա ի մեզ, աէր, զգործս ձեռաց իմոց աջողեա ի մեզ: Այսօր շորեքշարթի է և յուլիս 6. սկիզբն արարի Ռեշ թվին» (=1597):

Թ. 422բ. «Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդին, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս զեղեցկայարմարս և պիտանացոս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայ, և զանպիտան գրիչս զԱրիստակէս Տարոնացիս յիշեցէք ի Քրիստոս և զծնաւոյն իմ, հանգուցեալ ի Քրիստոս, և զհարազատ Էղբարքն իմ՝ գտէր Մարգարէն և զՎարդանն և զԾղիարն և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ: Գրեցաւ ի թվին Ռեշ» (=1599):

Ճ — № 10311 ձեռագիրը. 1637 թ., գրիչը, գրչության վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 263—364: Նախադրության Զ հողվածից հետո ձեռագրից պակաս է 12 թերթ, որով չկան Նախադրության է, Ը, Թ, Ժ գլուխները, Ա հողվածը և Բ հողվածի մի մասը:

Թ. 261բ. «Գրեցաւ Կանոնագիրքս և զատաստանագիրքս ի լաւ օրինակէ թվին ՌԶԶ (=1637) ձեռամբ ումեմն մեղապարտի»:

Մ — № 7580 ձեռագիրը. 1651 թ., գրիչը՝ Ազարիա. գրչության վայրը՝ անհայտ. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 1—27. թերի՝ սկսվում է ՀԸ հողվածով և շարունակվում մինչև ՂԾ հողվածի կեսը, որից հետո, թերթերի պակասության պատճառով, սկսվում է ՄԶ հողվածի կեսից և շարունակվում մինչև վերջին հողվածը. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ:

Թ. 141բ. «Զմեղաւոր և զպիկար Ազարիայս յիշել մաղթեմ ի տէր: Թվին ՌՃ (=1651) ամին գրեցաւ»: Վերջում ունի չորս հողված, որոնց մասին տե՛ս 3 ձեռագրի նկարագրության մեջ:

Յ — № 3291 ձեռագիրը. 1653—1654 թ., գրիչը՝ Ազարիա քարտուղար (ղպիր). գրչության վայր՝ Նոր Զուլա. ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 4—124. ուղղագրությունը՝ ոչ-միօրինակ: Նախադրության մի քանի գլուխներ խառնաշփոթ են՝ մի գլխից ամբողջական հատվածներ գտնվում են մյուս գլխի մեջ: Թ. 62ա, ՃԴ համարի տակ կա մի հողված՝ հետևյալ վերնագրով. «Վասն հօրն, որ թաղից է զորդի իւր և ունից թոռն՝ ուստր կամ դուստր և տացի ժառանգութիւն», որը Դատաստանագրքի մեջ է ընկել ուրիշ օրենսգրքից: Այս փաստերից պետք է եզրակացնել, որ № 3291-ի նախագաղափարը կազմելու կամ վերակազմելու ժամանակ թերթերը ետևառաջ են դասավորվել, և № 3291-ի գրիչը նույնությամբ ընդօրինակել է, ինչպես արել է նաև № 3059 ձեռագրի գրիչը՝ № 3291 ձեռագիրը ընդօրինակելիս:

Թ. 124ա. «Արդ, յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ և պատահողացդ՝ յիշեցէք ի Քրիստոս զմեղսամած նուաստ քարտուղայր սուտանուն Ազարիայս և զծնողսն իմ և ամենայն արեան մերձաւորսն իմ, և զուք վարձն ի Քրիստոսէ առնուցուք: Ի թուին ՌՃԲ (=1653) գրեցաւ, մարտի ամսոյ 10»:

Թ. 165բ. «Յիշեցէք ի Քրիստոս զփծուն գրիչ սուտանուն Ազարիայս և ծնողսն իմ և ամենայն արեան մերձաւորօք իմովք: Ի թուին ՌՃԲ (=1653) կատարեցաւ»:

թ. 166ա. «Արդ, յերես անկեալ ազաշեմ հանգիստոցս՝ յիշեցէք ի Քրիստոս ըմբեղասամած նուաստ և անարժան սուտանուն Յոհաննէս քահանայս, որ ևմ ազգաս յԵրևանցի, և զսիրելի եղբայր իմ սրբանուէր՝ զՄկրտիչ քահանայն յիշեցէք»։ Հովհաննէս քահանան Աղարիայի հորեղբայրն է, ըստ այս հիշատակարանի, և կամ նա ունեցել է Հովհաննէս անունով եղբայր ևս, ինչպես երևում է ստորև բերվող հիշատակարանից. Մկրտիչը Աղարիայի հայրն է։

թ. 471. «...Յիշեցէք և զծնողսն իմ՝ զտէր Մկրտիչ քահանայն... եւ զեղբարքն իմ... զտէր Յոհան քահանայն, որ բազում աշխատեցաւ ի վերայ Կանոնգրքիս. Ե և Չ տետր տէր Յոհանն գրեաց»։

թ. 470. «Արդ, եղև զրաւ սուրբ զանձարանիս ի թուաբերութեանն հայոց ՌՃԳ (=1654) և մայիսի ամսոյ յոթ և մեհհեկի 30, և ի մարգեղութեանն Քրիստոսի մինչև ցայս ՌՌՄՁ, ձեռամբ մեղսաներկ և անհմտա, անծան և անծող գրչի Աղարիայ սուտանուն դպրի» (այստեղ հայոց ՌՃԳ=1654 և փրկչական ՌՌՄՁ=1656 թվականների միջև հակասութիւն չկա։ 1656 թ. հայոց փրկչական թվականով է, որը երկու տարով առաջ է հռոմեական կամ րնդհանուր քրիստոնեական թվականից, ըստ այդմ հայոց քրիստոնեական 1656 թվականը=րնդհանուր քրիստոնեական 1654 թվականին. տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կաղմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, մասնավորապես՝ էջ 174, և Ա. Գ. Աբրահամյան, Ներկա թվականի սկզբնավորութիւնը ըստ հայ տոմարագետների հաշվումների, Պատմա-բանասիրական հանդես, 1970, № 3, էջ 95—108)։

Ձեռագրի վերջում (թ. 471—472) կա շափածո հիշատակարան, որի առաջին տառերը հոգում են. «Աղարիս գրչես ընկալցիր»։

թ. 470բ. «...Բայց գրեցաւ սա ի յաշխարհս պարսից ի գեօղաքաղարն Ջուղայու, ընդ հովանեաւ ի դուն սուրբ Յակոբու սքանչելագործին...»։

Այս ձեռագրի վերջում (թ. 123—124), որպես Դատաստանագրքին պատկանող, կա ևս շորս հոգված.

## ՄԾԳ

Վասն իշխանաց տրոց, որ յեկեղեցիս տան

Իշխանք զգեօղս և զգաստակերտս և զգանձս ոսկւոյ և արծաթոյ և այլք յանգաստանաց և ի պատճառաց և ի հանդերձից պատուականաց. ոմանք՝ վասն անձանց փրկութեան, կէսք՝ յաղագս սիրելեաց և ծնօղաց և զվախճանելոց հատուցանել հատուցմունս՝ զարդ և պայծառութիւն կաղմելով հոգոց և մարմնոց։ Քանզի անսայթազ յարդորութեամբ տէրունական բանն զգուշացուցանէ ծառայից և պատուիրանապահաց իւրոց, թէ զանձեցէք ձեզ զանձս յերկինս, ուր ոչ ցեց և ուտիչ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և ոչ գողանան, եւ թէ դատարկաձեռն ամենեկին մի երեւեցիս առաջի իմ։ Չեն, ասէ, յերկրիս այգրէն իւրական տուրքդ ձեր, այլ ի կատարս բարձրութեանն երկնից (Մ՝ յերկնից) յանսպառ և յանվրէպ զանձարանին։

## ՄԾԴ

Վասն քահանայի, որ գիշերն [ ]երազի փորձի

Եթէ քահանայ ի գիշերի փորձի յերազի (Մ՝ երազի) և հարկ լինի հաղորդ տալոյ կամ մկրտութիւն առնելոյ վասն երկիւղի մահու, պարտ է առնել (Յ՝ ձժԴ

ազնել) զամենայն պէտս (Յ՝ տէտս) քահանայութեան, և մի խղճել, յորժամ քահանայ ոչ գոյ. նոյնպէս և թէ ընդ կնոջն իւրոյ էր ի գիշերի՝ և այսպիսի հարկ հասանէ, բայց քսան օր ապաշխարեսցէ՝ աւուրն հարիւր ծունր և կանոն մի: Իսկ ևթէ ի ժամու (Յ՝ իմու) հարկ լինիցի և երազախաբ լեալ էր ի գիւէն և տօն մեծ է տէրոնական և ժողովք, և այլ ոք չկայ, արասցէ պատարագ (Յ՝ պատարախ), բայց քառասուն օր կարգ կրեսցէ՝ հարիւր ծունր և օրն կանոն մի և ապա այլ ժամ արասցէ:

### ՄԾԵ

Վասն եպիսկոպոսաց և կրօնաւորից,  
որ հեծնուն ի ձի

Այլ են ոմանք [յ] եպիսկոպոսաց և կրօնաւորք ձիաբոյժք և վաճառականք և վաշխառութք, որ ոչ է արժան հեծնուլ ձի կամ կէս իշոյ. եթէ տկար է անձամբ, պարտ է հեծնուլ յէշ, յօրինակ (Մ՝ օրինակ) Տեառն մերոյ. փոխանակ կրօնաւորութեան՝ շահատողութք առնեն: Յայսմ հետէ դադարեսցեն և ապաշխարեսցեն զմեղս, ապա թէ ոչ՝ յանդիման արժանի է գործոցն, դատաստանաւ պատիժ կրեսցեն:

### ՄԾԶ

Վասն եպիսկոպոսաց, որ աշխարհի  
իշխանօք վարին

Եւ են եպիսկոպոսք ամբարտաւանեալք ի գործս իւրեանց աշխարհական իշխանօք, վարեցեալ նորօք, բուն ի վերայ ժողովրդոց կամ քահանայից կամ եկեղեցոց եղիցի, լուծցի և որոշեսցի, և ամենայնքն (Մ՝ ամենքեան), որք հաղորդին ընդ նմա, նորա ևս նզովեալք են. եւ որք արասցեն անմեղմաբար՝ ընդ երկոտասան սուրբ վարդապետացն դասակից լիցին: Քրիստոսի փառք (Մ՝ յաւիտեանս ամէն):

Այս շորս հողվածները կան նաև Մ ձեռագրում: Մ և Յ ձեռագրերը, որպես կանոն, նույնանում են նաև տարբերակներով: Մ ձեռագրի գրվել է 1651 թ., Յ՝ 1653 թ. և երկուսի գրիչն էլ Աղարիան է. Արդ, եթե Մ ձեռագրի գրիչ Աղարիան նույն Աղարիան է, որ ընդօրինակել է Յ ձեռագիրը, ապա պետք է ենթադրել, որ Յ-ն ընդօրինակվել է Մ-ից, իսկ եթե նրանք տարբեր Աղարիաներ են, ապա անտարակույս է, որ Մ և Յ ծագում են նույն նախագաղափարից: Հավանաբար, երկու ձեռագրերի գրիչն էլ նույն Աղարիան է:

Յ<sub>2</sub> — № 3059 ձեռագիրը. 1843 թ., գրիչը՝ Հովսեփ Տեր-Հովհաննիսյան Տեր-Հովսեփյան. գրչության վայրը՝ Քավրիզ. ստացողը՝ Մելիք Մեհրաբյան Ավագ խան Տիֆլիզցի, ժողովածու, Դատաստանագիրքը՝ ձեռագրի սկզբում:

Թ. Զբ. «...Անարժան մանկավարժ Յովսեփ դպիրս Տէր Յովհաննեսեան Տէր-Յովսեփեան ծագիւ մատին շնորհաց հաղորդելով՝ ետ զօրութիւն ընդօրինակել զսոյն գիր դատաստանաց և ստիպմանէ և ի յորդորանաց գերագահ բարեպաշտօն Մելիք Մեհրապեան Աւագ խանի, ի օգտութիւն և ի շահ համայն մերազնէից, թողլով անշինջ յիշատակ իւրն բարեհռչակ անուն, զոր և սկսեալ ի 1843 յամի մարդեղութեան Տեառն մերոյ, վեցն փետրվարի և աւարտեալ ի նոյն 1843 յամի և յուլիսի ամսոյ 21-ին ի Դարէժ, առանց յաւելման կամ պակասեցուցման, զի ի յընդօրինակելն մեր տեսաք ինչ-ինչ վրիպակս և սխալանս և ուրեք-ուրեք գեղջկական և աշխարհաբառ բառս ի գործ եղեալ, անպատեհ վարկացեալ՝ ոչ կամեցաք զնոսին ուղղագրել և ըստ կարգի յօրինել, յանիծից և ի նզովից հարցն սրբոց երկնչելով...»:

Այս ձեռագիրը ընդօրինակված է 3 (№ 3291) ձեռագրից, որն հաստատվում է հետևյալ վաստերով:

№ 3291 ձեռագրում, Դատաստանագրքի վերջում (թ. 124ա) գրիչը գրում է. «Ի թուին ՌՃԲ գրեցաւ, Մարտի ամսոյ 10»: Այս ձեռագրում ևս, Դատաստանագրքի վերջում (թ. 109բ) կա նախագաղափարի հիշատակագրութիւնը, որ բերել է № 3059-ի գրիչը. «Ի թուին ՌՃԲ գրեցեալ. ի մարտի ամսոյ 10-ին»:

№ 3059-ի գրիչը ղարձայլ գրում է (թ. 147բ). «Հին գաղափար գրոյս գրեցեալ ի թուին ՌՃԲ»:

Այս ձեռագրում ևս կա № 3291-ում եղած շորս հոգւածը:

№ 3059-ում ևս նախադրութիւնն նշված գլուխները խառնված են իրար ճիշտ և ճիշտ այնպես, ինչպէս № 3291 ձեռագրում, և № 3059-ի գրիչ խոսքերը, թե հին գաղափարից ընդօրինակելիս չի կամեցել «ըստ կարգի յօրինել», վերաբերում են հենց նախադրութիւնն խախտված կարգին:

Համեմատութիւնը ևս ցույց տվեց, որ № 3059 նույնանում է № 3291-ի հետ: Նշված պատճառներով № 3059 ձեռագրին առանձին տեղ չենք հատկացրել, և տարընթերցվածքների բաժնում 3 ձեռագրի հետ միշտ պետք է նկատի ունենալ նաև № 3059 ձեռագիրը:

Ն — № 8938 ձեռագիրը. 1685 թ., գրիչը՝ Ներսես. գրչութիւնն վայրը՝ անհայտ (Պոլիս?), ստացողը՝ Պոլսի Եփրեմ պատրիարք. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 312—414. Մխիթարի հիշատակարանը՝ թ. 487բ—488բ. ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ:

Թ. 309ա. «Ձմեղաւոր և գանարժան Ներսէս գծողս սորա յիշեա: Ձեռս երթա, գիրս մնա, ով որ կարդա՝ ողորմի տա»:

Թ. 495բ. «Ձայս կանոնգիրքս և ղատաստանի գիրքս է Ըստամպոլու պատրիարք Եփրեմ վարդապետին ի վայելումն իւրում անձին: ՌՃԼԳ (=1685) թուականին»:

Շ — № 2750 ձեռագիրը. Ժէ դար. գրիչը՝ անհայտ (ղուցե՛ Միքայել, որ գաղտնագրված է թ. 148բ—Միքայել). գրչութիւնն վայրը՝ անհայտ. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 29—148. ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ. հոգւածների համարակալումը՝ խախտված, կրկնված և այլն. շունի «Վասն կարգաց եկեղեցւոյ և տան թագաւորի» հոգւածը, թեև ցանկում կա:

Ո — № 2383 ձեռագիրը. ԺԸ դար (գրված է տպագիր շրջագարդ ունեցող թերթերի վրա). գրիչը, գրչութիւնն վայրը՝ անհայտ. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 1—89. նախադրութիւնը՝ թ. 70բ—89բ. թերի՝ պակասում է, թերթերի կորստյան պատճառով, ավելի քան 100 հոգւած. ուղղագրութիւնը՝ ոչ-միօրինակ:

Չ — № 8101 ձեռագիրը. Ժէ դար (ավելի հավանական՝ ԺԸ—ԺԹ դար). գրիչը, գրչութիւնն վայրը՝ անհայտ. ձեռագիրը բաղկացած է ընդամենը 11 թերթից. ունի միայն նախադրութիւնն Ա—Ը գլուխները, վերջինը՝ կիսատ: Գլուխները իրարից անջատված չեն:

Պ — № 8245 ձեռագիրը. 1847 թ., գրիչը՝ Սողոմոն Մանուկյան Տփիսիսեցի. գրչութիւնն վայրը՝ Տփլիս. ստացող՝ Գրիգոր Իվմիրյանց. Ժողովածու, Դատաստանագիրքը՝ թ. 2—66:

Թ. 1ա. «Արդեամբ պարոն Գրիգորի Իվմիրեանց և աշխատասիրութեամբ գաղափարեաց գայս գիրք ընտիր օրինակէ տփիսիսաբնակ Սողոմոն Մանուկյանց, յամի Փրկչին 1847, օգոստոսի 12, ի Տփիսիս»:

Բոլոր կետերով նույնանում է № № 485 և 2776 ձեռագրերի հետ, ունի № 2776-ում եղած բոլոր հիշատակաբանները և այլն, ուստի ընդօրինակված է կամ այդ ձեռագրերից, մասնավորապես՝ № 2776-ից, կա՛մ սրա նախագաղափարից:

Ժ—Պ ձեռագրերը ներկայացնում են Գ խմբագրությունը: Այս ձեռագրերը իրենց հեքթին բաժանվում են երկու հիմնական խմբի՝ Ժ, Ի, Զ, Պ՝ մի խումբ և մնացած ձեռագրերը՝ մյուս խումբը: Այս վերջին խումբը դարձյալ կարելի է բաժանել ենթախմբերի (առնվազն՝ երեք), որոնք պայմանականորեն անվանում ենք ի ենթախումբ (№ 2593-ը՝ հարակից ձեռագրերով), Մ ենթախումբ (կենինզրադի № 39-ը՝ հարակից ձեռագրերով) և Ն ենթախումբ (№ 8938-ը՝ հարակից ձեռագրերով): Ենթախմբերի միջև տարբերությունները էական չեն, ուստի այստեղ հարկ չենք համարում կանգ առնել դրանց վրա (կարելի է, օրինակ, նշել, որ Մ ենթախմբում վարդապետների դերն ու նշանակությունը ավելի ընդգծված է և այլն): Սակայն ենթախմբերի առկայությունը երևում է թեկուզ նրանից, որ տարբերակվածքների բաժնում երկրորդ խմբի ձեռագրերը, առնչվազն, երեք խմբավորում են կազմում:

Ավելի զգալի են առաջին և երկրորդ խմբերի տարբերությունները, որոնք չենք վկայակոչում, որովհետև դրանք ցայտուն երևում են տարբերակվածքների բաժնում:

Բնագրի հիմքում դրել ենք ԺԶՊ խումբը, սակայն մեզ չենք կաշկանդել հիմքում դրված ձեռագրախմբով, քանի որ կազմել ենք քննական բնագիր, անհրաժեշտության դեպքում բնագիր ենք տարել մյուս խմբի ընթերցումը:

Խմբագրությունների ներսում չկաշկանդվելով բնագրի հիմքում դրված ձեռագրերով, խիստ ենք եղել մի խմբագրության ընթերցումը մյուս խմբագրության ընթերցմամբ սրբագրելու հարցում. այսպիսի դեպքերը հատուկենտ են և ամեն անգամ նշված են կա՛մ տարբերակվածքներում, կա՛մ ժանտիպագրություններում:

Երկու խմբագրությունների էլ բնագրերը կազմելիս, սրբույն կանոն, խուսափել ենք բնագիրը սրբագրելուց առանց ձեռագրական տվյալի, իսկ եթե բնագրի ընթերցումը կարևոր նշանակություն է ունեցել, երբեմն անփոփոխ ենք թողել նույնիսկ այն դեպքում, երբ բանասիրտներն միանգամայն հիմնավորվել է առաջարկվող սրբագրումը:

Ա խմբագրության ուղղագրությունը, որպես կանոն, Ա, Բ ձեռագրերի ուղղագրությունն է, սակայն Ա-ն գրեթե միշտ գրում է «թե», «եթե» և այլն, որ մենք դարձրել ենք «թէ», «եթէ» և այլն:

Գ խմբագրության ձեռագրերից և ոչ մեկը հետևողական չէ ուղղագրության հարցում. օրինակ՝ միևնույն ձեռագիրը ունի «ծնաւը», «ծնօղ» և «ծնող» և այլն: Այս խմբագրության ուղղագրությունը տվել ենք սովորական, ընդունված ուղղագրությամբ:

Տարբերակվածքների բաժնում բառը չենք նշել բոլոր այն դեպքերում, երբ բնագրի ընթերցման համեմատ տարբերությունը եղել է միայն սեռականի «» կամ բառավերջի «յ»: Այսպես, օրինակ. Դատաստանագրքում ամենից հաճախ գործածվող բառերից մեկն է «եկեղեցի»: այն հանդիպում է համարյա ամեն էջում, իսկ երբեմն միևնույն էջում մի քանի անգամ: Այս բառի նշակի սեռականը գրվում է ավելի քան վեց ձևով. եկեղեցւոյ, եկեղեցո, եկեղեցոյ, եկեղեցո, եկեղեցիո և այլն, կամ՝ ուղւոյ, ուղո, ուղոյ, ուղո և այլն և այլն: Այս կարգի տարբերությունները չենք նշել:

Չեն նշվել նաև այն ընթերցումները, որոնք տարբերվել են միայն աւ-օ-ս գրություններ. օրինակ՝ հար, հօր, հոր, կամ՝ ծնաղ, ծնօղ, ծնող և այլն: Սակայն եթե բառը այլ պատճառով պետք է նշվեր տարբերակներում, ապա բերվել է այնպես, ինչպես գրված է ձեռագրում:

Տարբերակներում չենք նշել նաև այն դեպքերը, երբ «օ» գրվել է «աւ»-ի փոխարեն, օրինակ՝ իրօունք փխ իրաւունք, գրօ փխ գրաւ, Գօիթ փխ Գաւիթ և այլն և այլն:

Տարբերակների բաժինը շտանրաբեռնելու նույն այդ նպատակով, այնտեղ բերված ընթերցման ուղղագրությունը, որպես կանոն, տրված է առաջինը նշված ձեռագրի ուղղագրությամբ:

Շատ բառերի համար, որպես կանոն՝ առաջին հանդիպման դեպքում, բերել ենք ձեռագրերում նրանց ունեցած ուղղագրական բոլոր ձևերը նույն տեղում և, մի անգամ արդեն տալով դրանք, հետագայում այլևս չենք նշել:

Տարբերակների բաժնում երեք փոխադարձաբար զուգահեռ ուղղահայաց գծերը (|||) փոխարինում են ինչ-ինչ պատճառներով (տառերն են մաշված, թուղթն է պատուված, քերված է և այլն) չկարդացվող տառերը կամ բառերը: Օրինակ. Ա խմբագրություն, էջ 218, տ. 7՝ Գ ||| ադատէ (կամ բռնադատէ) նշանակում է՝ «կամ բռն» չի կարդացվում:

Երբ մի քանի ձեռագրով արտահայտված տարբերակներին հաջորդում է փակագծերի մեջ նշված՝ ձեռագիր նշանակող տառ և «չիք», ապա «չիք»-ը վերաբերում է փակագծին անմիջապես նախորդող բառին միայն: Օրինակ՝ աՁէ բայց սարկաագունք են (Ձ չիք), «չիք»-ը վերաբերում է միայն «են»-ին, և տեղ շահելու նպատակով է, որ չենք գրել (Ձ չիք են):

Այսպիսով, աշխատել ենք, որքան հնարավոր է, իզուր չծանրաբեռնել տարբերակների բաժինը, հակառակ դեպքում այն, թերևս, կրկնակի չափով ավելի մեծ կլիներ, քան է:

Մատենագարանի այլևայլ ձեռագրերում (օրինակ № № 5610, 8901, 10137 և այլն) կան Դատաստանագրքից առանձին հոդվածներ: Այս ձեռագրերի այլ-ընթերցումները, որպես կանոն, տարբերակների բաժիններում չենք նշել, թեև համեմատել ենք բնագրի հետ, որովհետև եղած ընթերցումներին ըստ էության նոր բան չեն ավելացնում:

Նրբ աշխատանքը լիովին ավարտված էր և գործն ուղարկված տպարան, հայտնի դարձավ, որ Մաշտոցի անվան Մատենագարանի № 9513 ձեռագիրը ևս պարունակում է Դատաստանագրքի ամբողջական մի օրինակ (թ. 298ա—417): Բնական է, որ նշված օրինակը ամբողջովին այլևս չէր կարող արտացոլվել աշխատասիրության մեջ, ուստի արեցինք միակ հնարավորը, առանձին դեպքերում մի քանի կարևոր ընթերցումները նշեցինք ծանոթագրությունների մեջ և երկու դեպքում՝ տարբերակների բաժնում: Սակայն համեմատությունը մեր օրինակի հետ ցույց տվեց, որ № 9513 ձեռագրում եղած Դատաստանագիրը, որը պատկանում է Գ խմբագրությանը և օձ դարի ընդօրինակություն է, չի տարբերվում այս խմբագրության մյուս ձեռագրերից:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

Գ Ի Ր Ք  
Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ի

Ա  
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԻ

### Գ Լ Ո Ւ Յ Ա

ՅՈՐՈՒՄ ԿԱՅ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐՔ ԲԱՄԲԱՍԵՆ ՁՄԵԶ,  
ԵԹԷ ՉԿԱՅ ԴԱՏԱՍՏԱՆ Ի ՀԱՅԲ\*

- 5 Հանդերձեալ գրել զգիրս դատաստանաց, նախ զընդդիմադրութիւն դիցուք պարսաւողաց զարէնս Տեառն, եթէ դատաստան ոչ է, զի յուրվք քան զսահաա են, որոց գործ եւ բան եղեւ պատուել զայլասեռս՝ իրաւացի ունել դատաստանս, եւ զի ինքեանք գայթակղեալք՝ զբազումս գայթակղեցուցանեն սոքաւք ի պարզամտացն, որոց եւ զայս նախ ասացուք, եթէ
- 10 բնաւորական է ի մեզ ընտրել զիրաւացին ի սկզբանէ, ըստ որում եւ իմաստունք հեթանոսաց զաստուածանարգս մահուամբ դատեցան եւ զհայրատանջսն՝ ձեռնաւորամբ, եւ զայլսն՝ այսպիսի ուղղացի դատաստանաւ: Իսկ Աւրէնքն<sup>(1)</sup> առաւելութեամբ վարին, առեալ զպատճառն ի բնաւորական արիւնացն՝ մահու մեռնիլ հայրանարգին՝ եւ յայլսն
- 15 նմանապէս:

- Այլ Աւետարան Փրկչին մերոյ լրումն երկոցունցն է, յաղագս որոյ հրամայէ՝ ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ ձեզ զայս ինչ<sup>2</sup>: Զի թէպէտ Աւրէնքն եւ Աւետարանն իբր մոռացեալ զբնաւորական արէնսըն յիշեցուցանեն, սակայն զիշխանական կամսն ոչ բառնան, ասելով
- 20 առաջնոցն՝ սիրեացես զընկեր քո իբրեւ զանձն քո<sup>3</sup>, զի բնաւորական է գիտել զանձին սէր: Եւ երկրորդն, մանաւանդ թէ առաջինն, ի կամս ապաստան առնէ զաշակիրտութիւնն եւ զայլ եւս ուղղութիւնն, որովք հաստատի ի մեզ լինել եւ իրաւամբք առ ամենեւին վարիլ. յաղագս որոյ եւ ոչ Աւետարանն յիսկզբանն գրով աւանդեցաւ:

\* Տողամիջում փակագծերի մեջ ասնված թվանշանը հղում է գործի վերջում գտնվող ծանոթագրութիւններին, բառի գլխին զրված թվանշանը՝ էջատակի ծանոթագրութիւններին:

<sup>1</sup> Եւք, ԻԱ, 15

<sup>2</sup> Մատթ., Ե, 21, 27, 33, 38, 43

<sup>3</sup> Ղևտ., ԺԹ, 18: Մատթ., ԺԹ, 19

5 Եւ երկրորդ՝ եկն նա արկանել արկնս կտատարեալս ի մէջ կտատարե-  
 լոց, ոչ կամեցաւ գտարկն սնկասարից գրով աւանդել դատաստան<sup>4</sup>),  
 ըստ որում խրատէր՝ ի ճանապարհի հաշտիլ ընդ ոսոխի, զի մի՛ ի դա-  
 տաստան մատնիցի դատաստարի՛: Եւ երրեմն անիրաւ դատաւորին առա-  
 5 կա<sup>5</sup> յայտնի եցոյց գամենայն ինչ վճարել խղճին մտաց, զոր դատաւոր  
 կոչեաց. նմանապէս եւ զիրս դատաստանի: Զսոյն եւ յառակս նշանակեաց  
 տնտեսին<sup>6</sup>, թէպէտ եւ յառաջնումն անիրաւ, սակայն յետոյ զովելի՛  
 զղջմամբն, որով ոչ եմուտ յատեան դատաստանի տալ գհաշին. ասե-  
 լովն, եթէ՛ տուր գհամար տնտեսութեան քո, եցոյց հարկաւոր լինել  
 10 դատաստանի, իսկ զովելովն՝ եթէ հնար է ոչ կարաւտանալ դատաստանի:  
 Այսորիկ աղազաւ հրաժարեաց առնել զդատաստան այնմ, որ աղաչեաց,  
 եթէ՛ ասա եղբար իմոյ բաժանել ընդ իս ժառանգութիւն՛, իբրու թէ ասի-  
 ցէ՛ կրկնապատիկ ունիք զպատճառն ձեզէն ընտրել զիրաւացին, ընդէ՛ր  
 այլոյ կարաւտիք դատաստանի: Յայսմանէ ուսաւ առաքեալ ասելով. զի  
 15 բնաւ իսկ դատաստանք զոն ի ձեզ, ընդէ՛ր ոչ դուք զրկիք եւ նեղիք, այլ  
 դուք զրկէք եւ նեղէք, եւ այգ՝ զեղբարս եւս՛:

20 Եւ երրորդ՝ կամեցաւ զի մի՛ հարկաւորաբար յիրաւունս կայցեմք  
 ընդ միմեանս գրով դատաստանի, այլ սիրով եւ վշտակցութեամբ, ըստ  
 զանազան ժամանակի անզիր արկինաք, զարդարադատութիւն պահիցեմք:  
 20 Զորրորդ՝ զի բաւական համարեցաւ զորս ըստ Արխնացն եւ Աւետա-  
 րանին իբր սերմն լինել յոգիս, եւ նոքաք վարիլ յարժանիս դատաստա-  
 նին:

25 Հինգերորդ՝ զի ոչ նման է իրք դատաստանին Արխնաց, կամ  
 Մարգարէից, կամ Աւետարանին անշարժութեան, այլ զի միշտ ըստ ազգի  
 եւ աշխարհաց փոփոխին հարկաւորաբար՝ իրաւացոյց թողուլ հմտագու-  
 նից փորձել ըստ պատահմանն:

Վեցերորդ՝ զրէ, թէ երդմամբ հաստատի դատաստան, եւ Տէր արգել<sup>9</sup>  
 կամելով բնաւին գհաւատացեալս գմեզ լինել:

Գ Լ Ո Ւ Ծ Բ

30 **ՅԱՂԱԳՍ ԹԷ ԸՆՌԷՐ ԱՅԺՄ ԿԱՄԵՑԱՔ ԳՐԵԼ ԿԱՄ ՅՈՒՄԷ  
 ՇԱՐԺԵԱԼ ՅԱՅՍՈՍԻԿ ԵԿՍՔ ՄԻՏՍ**

35 Զի թէպէտ ասացաւ ոչ լինել հարկաւոր գրով աւանդել մեզ դատաս-  
 տան ի Տեառնէ, այլ այժմ կամեցաք, յաղագս զի բազում անգամ լուաք  
 պարսաւանս ոչ յայլասեռից միայն, այլ եւ ի քրիստոնէից, եթէ բնաւին  
 ըստ Աւետարանին դատաստան ոչ է՝ անգիտանալով զկամս աստուած-  
 ախնս, որ ի նոսա, Եւ այսպիսի կարծիք երկուս ախտանայ չարս. մի՛

4 Մատթ., Ե, 25: Դուկ., ԺԲ, 58  
 5 Դուկ., ԺԸ, 2 և հաշորդ համարները  
 6 Դուկ., ԺԶ, 1 և հաշորդ համարները  
 7 Դուկ., ԺԲ, 13  
 8 Ա Կորնթ., 2, 7—8  
 9 Մատթ., Ե, 34

զանխմաստութիւն օրինազրին, և երկրորդ՝ ոչ կամել զուգահաւասար կենցաղատարել մտրդկան ազգի:

5 Եւ երկրորդ՝ զի զբնասարականն ի մեկ արկնս շարութիւնն շիշոյց, և զկատարելութիւնն՝ անկատարութիւն հոյոյ, և զվշտակցութիւն սիրոյ՝ ատելութիւն:

Երրորդ՝ զի ի հեղուքենէ անվարժք եղեալ Արինաց, և Մարգարէից. և Աւետարանին, յորոց զաւրութենէ անկարացաք ընտրել զիրս դատաստանի, գոր արժան վարկաք իբր ի քնոյ զարթուցանել ի ձեռն գրոգ դատաստանի:

10 Զորրորդ՝ զի նուագեաց հմտութիւն ի մէնջ փորձել ըստ ժամանակի, և ազգի, և աշխարհաց գիտփոխելն ըստ պատահման, և ոչ նման Արինաց, և Մարգարէից, և Աւետարանին մնալ անշարժ<sup>(3)</sup>:

15 Հինգերորդ՝ զի այժմ ոչ ներգործէ Հոգին Սուրբ, որպէս ի Դանիէլ և ի Սողոմոն երբեմն, և կամ որպէս ի Կորնթոս ի հաւատացեալն և յայլս՝ ճշմարտիւ առնել գդատաստան, յաղագս որոյ անկարուտ էին գրոյ արինաց, զի արէնք էին ի սիրտս նոցա, ըստ խոստման մարգարէին: Ըստ որում և առաքեալքն ոչ կամեցան գրով տալ Աւետարան, մինչև այնմ կարաւտացան, ըստ այնմ և ոչ զատաստան գրով աւանդեցին, քանզի փոյթ էր նոցա յաղագս յոյժ հարկաւորացն, թողին և նոքա 20 բնաւորական արինաք, և քաղաքական կրթութեամբ, և այլաւք յառաջագոյն ասացելովք վարիլ պատճառովք: Իսկ գրելն այժմ պատճառս ունի գամենայնի վրիպանն:

Վեցերորդ՝ զի իբր դատաստանի երդմամբ յանկի, և ի Տեառնէ ոչ թողացաւ<sup>10</sup>, և այժմ յաճախ, և գործ առ գործով, և վայրապար ի դատաստանի, և առանց դատաստանի լինի ի հաւատացեալս: Նմին իրի կամեցաք ոչ զՏեառն լուծանել զհրաման, այլ լուծելոյն արէնս և կանոնս հաստատել ի դատաստանի, ըստ հարկաւորութեան գրելոյն զդատաստան:

30 Եւթներորդ՝ զի մի՛ ի պատճառս ոչ լինել գրով դատաստան՝ դիմեալ երթիցեն յայլասեռս, ըստ ամբաստանելոյ մարգարէին՝ առ ի չզոյէ՞ Աստուած ի մէջ Իսրայելի երթան հարցանել ի ճանճիկ<sup>11</sup>. գոր և առաքեալ յայտնապէս յանդիմանէ, ասելով՝ այլ եղբայր ընդ եղբայր դատի և գայն ի մէջ անհաւատից<sup>12</sup>:

35 Ութերորդ՝ տեսանեմք այժմ, զի բազումք յեպիսկոպոսաց, և ի վարդապետաց, և ի քահանայից, և ի գլխաւոր աշխարհականաց աշտանաւք և կաշառոււք բազում անգամ և տգիտութեամբ թիրքն գուղիդ դատաստան<sup>(4)</sup>: Սակս որոյ յուղղութիւն և յանդիմանութիւն սակաւուք այնոցիկ զգիրս դրոշմեցաք դատաստանի:

40 Իններորդ՝ զի արարածական բնութիւնս միշտ ի մոռացման է բարտյն ըստ գանազան ախտից հոգոյ և մարմնոյ, և ի ժամանակ դատաստանին թէպէտ և ուղիդ կամիցիմք վճարել, բազում անգամ ի մոռացմանէ սխալիմք և զղջացեալ յետոյ տարակուսիմք՝ էութեան և շէութեան կար-

<sup>10</sup> Մատթ., Ե, 34—36

<sup>11</sup> Գթագ., Ա, 3

<sup>12</sup> Ա Կորնթ., Զ, 6

ծեալք շարշարեալք: Այլ զի մի՛ աչս լիցի, զգիրս եղաք դատաստանի ի պատճառս յիշման, զի զոր յայնմ ժամու ոչ կարեմք յիշել՝ ի ձեռն ասու- սլ վերստին յիշեմք եւ ատարաց ցուցանեմք ազգաց՝ գրոց վարիլ դատաստանաւ, որով ըմբերանեալք՝ մի՛ լիցին յանդիմանիչք մեզ:

5 Տասներորդ՝ յստեղծմանն հոգւոյն յտոաջանայր շնորհ պատկերին աղագաւ, եւ յեղիլն ի շար, ասաց՝ ոչ մնալ հոգի ի մարդկանն, իբրու զի եղեն մարմին<sup>13</sup>: Ուստի եւ Տէր, զնոյն վերստին առնուլ մեզ կամե- լով, զհոգւոյն հաստատէ դատաստան, այսինքն է՝ զԱւետարանն եւ զկա- նոնսն, գիտելով, զի հարկաւորաբար մարմնոյ լինի դատաստան ի մարմ- 10 նաւորաց: Եւ քանզի դարձեալ եղեաք մարմին, սպասաւորեսցուք դարձե- ալ մարմնոյ՝ գրութեամբ դատաստանի:

Մետասաներորդ՝ զի դատաւորք միշտ երկիցեն, գիտելով, զի դատա- ւորին առաջի կալոց են երկնաւորի՝ անվրէպ գիտութեամբ արինակաւ գրութեամբ դատաստանի:

15 Երկոտասաներորդ՝ եւ զի դատեալքն նմանապէս զարհուրեսցին, զի թէ զստութիւն արդարացուցանել առաջի մարդկան ոչ կարեն, թէպէտ եւ բազում անգամ պատրեն զդատաւորս, զի՞նչ անդ գործեսցեն, որ զիսորս տեսանէ, որում առաջի՞ն պատրանաւք արդարանալ ոչ է:

Յայտոսիկ երկոտասան գլուխս պարունակեալ եղև պատճառ գրոցս դատաստանի: Զի եւ երկոտասանս բաղկանայ յերկուց վեցեկաց, եւ 20 վեցեակն առաջին կատարեալ թիւ է<sup>(5)</sup>: Իբրու թէ որպէս.

Առաջին՝ զի երիւքն ի կոճատէ եւ երկական ի դարէ բաղկանայ. եւ ամենայն թիւ դար է եւ կոճատ: Երկրորդ՝ զի քանակ է արարչութեան<sup>(6)</sup>: Երրորդ՝ զի շափ է շարժման մարմնոյ: Չորրորդ՝ զի թիւ է ներգործութեան մարմնոյ: Հինգերորդ՝ զի ծնանի զայլ երկարսն: Վեցերորդ՝ զի ի կողմանց 30 իւրոց յանգի եւ կրկնելով ծնանի զերկոտասան թիւն, եւ երկոտասանն, ի կողմանց իւրոց զուգեալ, ծնանի զվեշտասանն, զերկուս կատարեալս՝ զտասն եւ զվեց: Եւ է խորհուրդ երկոտասան առաքելոցն՝ դատաւորաց աշխարհի, զի զայս ծնան դատաւորս յեկեղեցի: Եւ զի դար ունի վեցեա- կրն եւ կոճատ, որ է ներգործական եւ կրական: Եւ զի դատաւորաց է ներգործել, եւ կրել՝ դատելոց: Ի սոյն թիւ դատաւորին եղև զալուստ երկնաւորի, զոր եւ ի վեցից վշտաց փրկեսց զարդարն եւ նովին 35 թուով զտանշողսն առաքեաց զԻսրայելի տապարաքն: Այսոքիկ առ այս շատ լիցի, զի ոչ զբնութիւն թուոյ քննել առաջի արկաք, այլ եթէ ոչ վայրապար եղև յերկոտասան գլուխս արարտիլ գրոցս դատաստանի:

Իսկ եթէ յումէ՞ յորդորեալ եկաք ի գրել:

Ի բազում ժամանակաց հետէ տարակուսեալ յաղագս սորին լինէի՝ խոցոտելով ի նախատելն զմեզ մերոց եւ ատարաց ազգաց: Սակայն վստահել ի սոյն ոչ իշխէի՝ գիտելով զանձին տկարութիւն: Յաղագս 40 որոյ զվարանսն ի զրուցատրելն մեր լուաւ եղբայրն Պաղոսս՝ սիրելի աշակերտսն աստուածային զրոց, եւ խոստովան եղև փափագող այնմիկ լինել. առաւել հա սկսաւ շարժել զմեզ հարկեցուցիլ բանիւք: Նաեւ ոչ այնու ձեռնամուխ լինել կամեցաք, այլ խորհէի զայլս աղաչել զարաւորս, որք կարող էին զհարկ վճարել բանին, զի բազումք իսկ էին: Բայց զի

<sup>13</sup> Մտնողք, 2, 3

զանքնգտնելու՞թիւն ազգիս գիտէի պատճառել՝ եւ այնու ոչ կամեցայ զոք  
 առ այս ազերսել. լոնցի ապա այնուհետեւ եւ ես: Եւ զարմացեալ յաղազս  
 այսորիկ լինէի, թէ զի՞արդ յառաջնոցն հարանցն մերոց ոչ կարգեցաւ: Եւ  
 զնոյն գիտացեալ պատճառ, գի եւ ոչ առաքելոց Տէրն տուաւ, եւ կամ զի  
 5 ոչ ոք հրաւիրեաց եւ անձամբ ոչ ետուն՝ զարհուրեալք ի պարսաւադիտաց,  
 եւ. կամ ի հալածանաց եւ ի խռովութեանց անպարապ պատահեցան, եւ  
 կամ ընդ տէրութեամբ անկեալ այլոց ազգաց՝ նոցունց վարեցան դատաս-  
 տանաւ: Եւ թէպէտ ամենայն պատահեաց ըստ ժամանակիս եւ նոյն պատ-  
 ճառ, որպէս յաւուրս հարցն մերոց՝ ոչ տանդիլ գրով դատաստան, բայց  
 10 ի միոյն, զի եւ ոչ յառաքելոց անտի տուաւ, բայց սակայն հարկաւոր  
 եղև գրել, որպէս վերագոյն ցուցաւ: Եւ սկիզբն առնել այսմ իրողութեան  
 այսպիսի եղև:

Հանդիպեցաք առաջի տեառն Ստեփաննոսի՞(7) շնորհիւ Տեառն  
 Յիսուսի Ազուանից(8) կաթողիկոսի, եւ նոյն իրի վերստին յիշատակ եղև:  
 15 Եւ նա յորդորեալ փութացոյց զմեզ՝ ասելով, եթէ շնորհ յոյժ ունիմ իրիդ  
 կատարման: Առաջի եւ մեք զմերս եղաք անկարութիւն, որպէս վերա-  
 գոյնն: Սակայն յերկրորդելն եւ ի քաջալերելն խորհուրդ իմն ի մեզ  
 եղև, եթէ արժան է հոգևոր հրամանի անսալ, զի թէ ի Տեառնէ իցէ,  
 բարւոք յանգեալ կատարեսցի իմաստախոհութեամբ, զի թերեւ ի նմանէ  
 20 լինի առաջատութիւնս, ապա թէ ոչ՝ պատճառ լիցի կատարելոց ոմանց  
 շարժիլ ի սոյն: Զի եւ ոչ գործ ամենայն եւ արուեստ ի միոջէ սկսողէ  
 աւարտեալ կատարեցաւ ի սկզբանէ, այլ ի բազմաց, զի մասնաւոր գտե-  
 ալքն ժողովեալ գոյացուցին զարուեստն, ըստ առակի ոստայնանկաց:  
 Նաեւ պատշաճ ինձ վարկայ ընդոստնով սովաւ, եթէ յատեան մտանելոց  
 25 կմ յանկաշաւս եւ յանողոքելի, ըստ որում ձեռամբ իսկ դժեմ զապագայի-  
 ցըն նշանակ:

Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս դիցէ ասացելոցս, զի եթէ տխմար ոք  
 իցէ՞ ուսցի, եւ թէ ամենակատար իմաստուն՝ զթերին լցցէ: Երկաքան-  
 չիւրոցն պատրաստ եմք սիրով ընդառաջել:

30 **Գ Լ Ո Ւ Ն Գ**

**ՆՇԱՆԱԿ ԶԱՓԱԽՈՐԱՊԷՍ ԶԱԻՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻԿԱՅ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՍ  
 ՀԱՆԳԵՐՁ ԱՂԵՐՍԱՔԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՌ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ  
 ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Քանզի հարկաւոր է զկնի այսոցիկ սակաւուք ցուցանել զզարութիւն  
 35 առաջիկայ ձեռնարկութեանս, զոր եւ աղաչեմ, ո՞վ պատուականդ գլուխ  
 եկեղեցեաց սրբոց տանս Ազուանից, մի՛ վարկպարազի համարել զհար-  
 կըս հոգևորս, զոր եղիր, զի եւ կանոնական ունի սահման գիրս դատաս-  
 տանի, զոր յարմարել յայնոսիկ պարտիմք, զի յայտ լիցի չափ նորին:

Եւ արդ, այսպէս համեմատեսցուք: Կանոնական սահման հոգւոյ  
 40 է ուղղիչ, եւ սա՞ մարմնոյ, եւ թէպէտ բաժանեալք ի միմեանց են, սա-  
 կայն ի բազում իրս միաւորին: որպէս ոգի եւ մարմին. բնութեամբ՝ երկու  
 եւ անշփոթ խառնմամբ՝ մի, բազում անգամ ի միասին վարին մի կա-

մաւք: Վասն այսորիկ, թէպէտ պատահի միով սահմանաւ վարիլ, ոչ միմեանց լուծիչ են: Եւ զոր արիւնակ անդ հմտադունից է ընտրութիւն առաջիկայ իրին, նմանապէս եւ՝ սատ: Եւ որպէս է անդ պատիժ պատուհասի յանցաւորաց եւ մեղաւորաց՝ ըստ զանազանութեան իրին, նոյնպէս եւ՝ սատ: Եւ որպէս յանդգնելոցն սատ զկնի բանդ է եւ կասպանք, այսպէս եւ անդ բանդ է եւ կապանք բանադրանքն: Եւ զի ի վերայ արդարոց արէնք ոչ կան կանոնաց, եւ ոչ ի վերայ ուղիղ ընթացողաց ի կենցաղս՝ դատաստանք: Եւ զի այր արդարամիտ ոչ զարհուրի ի դատաւորէ երկնաւորէ, նաեւ՝ ոչ յերկրաւորէ:

10 Հայցեմ եւ ըստ երկրորդ բանի միտ դնել, զի ոչ փոքր-ինչ զմեզ ազտեցուցանէ, քանզի զհամարէն գիրս զուգրնթաց նոցա լինելով ըստ շահու, զի դիտաւորութիւն նոցա ի կարճել զմեզս է, եւ սորա՝ նմանապէս հատանել զչարս: Եւ այսորիկ ոչ այլ ինչ է, եթէ ոչ զի համամիտ եւ համակարիս զմեզ առնիցեն, յորոց եւ հաստատի սէրն՝ զլուխն ամենայն

15 պատուիրանաց:

Իսկ ի շորրորդ առաքինութիւնսն համեմատեալ՝ հաւասար է արդարութեան, զի ի վերայ կայ երիցն մասսնց, ըստ որում եւ սա ի վերայ կայ հաւասարել զանհաւասարսն. եւ այդ ըստ երրորդ բանի է:

Իսկ յարհեստս՝ նմանեալ է ոսկեգործաց, որոց ոսկին յառաջագոյն 20 ի նիւթս անյայտ եղեալ կայ եւ դժուարաւ ի գիւտ եկեալ գործի. եւ է ըստ շորրորդ բանի:

Հինգերորդ՝ զքերթողի ունի զաւրութիւն՝ յապաւել եւ քերթել զաւելլորդսն զամենայն:

Չափաւորապես յայսոսիկ զլուխս, իբր իմաստնոյ, տուաք տեսալս, 25 որովք եւ գիտել ունիցիք, եթէ այսոցիկ հետեւելով՝ որքան ազուտ՝ եւ շահ հասարակաց կենացս իցէ, զի գրէ եթէ ամենայն սլատերաղմ եւ ամբոխ խռովութեան ի նուազութենէ սորա իցէ, եւ հաստատելով յեկեղեցի՝ խաղաղութեան իցէ պատճառ եւ բազում բարեկարգութեան, քանչի եւ մի մասն յաստուածային շնորհացն տուեալ յեկեղեցիս, ի հին եւ ի 30 նորս, սա իսկ է:

Գ Լ Ո Ւ Խ Դ

ՅԱՂԱԴՍ ԹԷ ՈՅՔ ԵՆ ԴԱՏԱԻՈՐՔ, ԶԱՆԱԶԱՆԵԱԼՔ Ի ՄԻՄԵԱՆՑ ԻԲՐ ՃՇՄԱՐԻՏՔՆ ԵՒ ՊԻՏԱԿՔՆ

Առաջին դատաւոր ամենեցուն Աստուած է, ըստ այնմ՝ գատի Տէր 35 գժողովորդս իւր<sup>14</sup>, եւ այլուր՝ Տէր դատաւոր մեր<sup>15</sup>, եւ եթէ՝ քննէ զսիրտս եւ զերիկամունս Աստուած<sup>16</sup>, եւ դարձեալ՝ արի, Աստուած, եւ դատեա զդատաստանս քո<sup>17</sup>, եւ՝ Աստուած դատաւոր արդար<sup>18</sup>, եւ այլք այսպիսիք

<sup>14</sup> Բ օրին., 19, 36: Սաղմ., է, 9. ՂԾ, 13. ՂԷ, 9  
<sup>15</sup> Սաայի, 19, 22  
<sup>16</sup> Սաղմոս, է, 10  
<sup>17</sup> Սաղմոս, 29, 22  
<sup>18</sup> Սաղմոս, է, 12

նախանկար տնտեսութեան դատաստանի, որով յայտ է մարդկան լինել  
 դատաստան, զի ոչ անմարմնոց եւ ոչ զգայականաց է դատաստան,  
 թէպէտ եւ անասունք՝ սպանողք սպանեալ լինէին՝ յաղագս երկիւղի մարդ-  
 կան: Եւ դիւաց եղև անկումն ի դատաստան եւ լինի, այլ ոչ միշտ: Վասն  
 5 այնորիկ եւ ի լինելութեանն ի մարդոյն կազմածի ի կիր առեալ եղև  
 անուն դատաւորութեան, որ է Տէր: Իսկ ըստ տնտեսութեան նոյն իսկ  
 ասաց՝ ի դատաստան եկի յաշխարհս այս<sup>19</sup>, եւ թէ՛ Հայր ոչ զոք դատի,  
 այլ զամենայն դատաստան ետ Որդոյ իւրոյ<sup>20</sup> եւ՝ այս իսկ է դատաստան,  
 զի լոյս եկն յաշխարհ<sup>21</sup>, եւ այլք այսպիսիք: Բայց Աստուածդ անուն  
 10 զբնութիւն ոչ որոշէ, զի իբր դատաւոր Որդի, դատաւոր Հայր եւ Հոգի,  
 ըստ վկայութեանցդ եւ բնութեանն: Եւ սակայն ոչինչ դժուարին է զյատ-  
 կութիւնն դատողութեան ցուցանել զՀայր եւ զՀոգոյ, ըստ այնմ՝ դա՛տ  
 արա ինձ, Աստուած<sup>22</sup>, եւ դատեա զայնոսիկ, [ոյք դատեն զիս]<sup>23</sup>, զոր  
 եւ Հայր պատշաճի, եւ Հոգոյն: Եւ նա եկեալ յանդիմանեացէ զաշխարհս  
 15 վասն մեղաց, եւ վասն արդարութեան, եւ վասն դատաստանի, եւ որք  
 նման սոցունց:

Երկրորդ՝ զանուն դատողութեան ետ մարդկան, ըստ այնմ՝ դա՛տ  
 արարէք որդոյն<sup>24</sup>, հասարակաբար շնորհելով թաղաւորաց, եւ իշխանաց,  
 եւ ծերոց ժողովրդեանն, մարգարէից, եւ քահանայից: Յայտոցիկ տե՛ս  
 20 զՍողոմոն<sup>25</sup>, եւ զորս զկնի Յեսուայ, եւ զորս յանապատին կարգեաց Մով-  
 սէս<sup>26</sup>, զԴանիէլ, եւ զոր ասաց մարգարէն՝ քահանայքն կացցեն ի վերայ  
 դատաստանի արեան<sup>27</sup>: Եւ հանրական ետ, թէպէտ եւ մի է ի շնորհաց ըստ  
 հնոյն.

Առաջին՝ զի մի՛, առ ի շոյք դատաւորին մերձ, անիրաւութիւնքն  
 25 վնասեացեն:

Եւ երկրորդ՝ թէպէտ ըստ հարկի պատահի մին(9), ամենեքեան  
 զշնորհս վայելեն, զտիպ արինակի առաջնոցն Նլից: Իսկ Տէր ի ձեռս  
 առաքելոցն ասելով՝ նստջի՛ք յերկրտասան ամբող դատել զերկրտասան  
 ազգն զԻսրայէլի<sup>28</sup>, զոր ըստ փոխանորդութեան առեալ ունին առաջնորդք  
 30 եկեղեցեաց ըստ իպարանչիւր ազգաց: Նաեւ զիրաքանչիւր ոք անձին  
 դատաւոր եցոյց Տէր յառակս դատաւորին անիրաւութեան<sup>29</sup>, զի ի մեզ  
 խորհուրդքն ի վերայ կալով զգայութեանցն՝ նման դատաւորաց հաւասար-  
 ութեամբ վարեացին, անբժբոնելի անիրաւութեանցն լինելով, եւ լցեալ  
 զոգին արդարութեամբ յարդարեալ միշտ անպարստ վարուք:

<sup>19</sup> Յովհ., Բ, 39

<sup>20</sup> Յովհ., Ե, 22

<sup>21</sup> Յովհ., Գ, 19

<sup>22</sup> Սաղմոս, է, 9. ԽԲ, 1

<sup>23</sup> Սաղմոս, է

<sup>24</sup> Բ օրին., Ժ, 18. Իէ, 18: Սաղմոս, 2Ա, 3

<sup>25</sup> Դ. Քաղ., Գ: Բ Մնաց. Ա

<sup>26</sup> Ելք, ԺԸ, 25, 26

<sup>27</sup> Եզեկիէլ, ԽԴ, 24

<sup>28</sup> Մատթ., ԺԹ, 28

<sup>29</sup> Գուկառ, ԺԸ, 2—3

Գ Լ Ո Ւ Խ Ե

ՅԱՂԱԴՍ ԹԷ ԶԻՆՉ Է ԴԱՏԱՍՏԱՆ, ԵՒ ՈՐՈ՞Յ, ԵՒ Ո՞ՒՄ ԱԻԱՆԴԵԼԻ  
Է ԶԻՐՍ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

Բաղկանայ անունդ յիրէ եւ ի տեղւոջէ. յիրէ՛ դատել, որ է քննել, եւ  
 5 աստան, որ է տեղի, եւ ըստ փոխման՝ արան, որ է դատարան եւ է զննա-  
 րան, զի զննելով լինի իրք դատաստանաց ի դատաւորէ քննաւորէ, դատա-  
 խազաց եւ ամբաստանելոց ի տեղւոջ: Զի բազումք են յանուանցդ այսպի-  
 սիք, որպէս՝ Հայաստան եւ Ասորեստան, նմանապէս եւ՝ այլքդ:

Իսկ եթէ որոց՝ յառաջ քան զայս ցուցաւ ի ճառի՝ մարդկան լինել  
 10 դատաստան ըստ ազգի: Բայց այժմ ասելի է, եթէ որո՞ց մարդկան: Յայտ-  
 նապէս բարեաց ոչ է դատաստան մարդկան եւ ոչ երեւելի շարեաց ա-  
 րանց, այլ յերկուց անյայտ եղելոց: Զի երեք են, որով վարին մարդիկ՝  
 բարի՝ եւ չար, եւ միջակ: Եւ ընտրելի է դատաւորաց ոչ զյայտնապէս  
 դողս եւ ոչ զայր, վկայեալ ի բարի դործս, այլ առ որս կարծեալք է  
 15 շարն<sup>(10)</sup>: Որպէս Սողոմոն երկուց կանանցն քննէր զկարծեցեալ իրսն<sup>30</sup>,  
 եւ Դանիէլ զստութեամբ ասացեալսն ի ծերոցն յայտնէր<sup>31</sup>, սոյնպէս եւ  
 Տէր ի կատարածի ցուցանէ առ բնաւին արդարան, ասելով՝ եկա՛յք,  
 աւրհնեա՛լք հար իմոյ<sup>32</sup>. եւ մեղաւորացն անբաժ յարդարութեանց՝ եր-  
 թա՛յք, անիծեա՛լք, ի հուրն<sup>33</sup>. յորոց յայտ է միջակացն լինել դատաս-  
 20 տան: Եւ աստ միջակքն են ուպաշխարողք, զորոց գործս ապաշխարու-  
 թեան կշռելի է ընդ մեղացն, եւ առանելալն տանի զվճիռն: Զերկուս  
 առնլով զծայրսն՝ եցոյց առսոնց դատաստանի զոմանս կոշել զովութե-  
 ամբ գործոցն եւ զոմանս մերժել պարսաւանաւք գործոցն, յորոց ուս-  
 նիմք՝ ընդ ծայրիցն եւ միջակացն լինել դատաստան: Եւ արդ, յայտոսիկ  
 25 յոյժ սլէտք են հմտութեան դատաւորաց՝ քաջուսումնութեան, եւ հանճա-  
 րոյ, եւ տեղեկութեան աստուածայնոց եւ մարդկայնոց իրողութեանց լինե-  
 լոյ, որպէս զի անսխալ գատեանն հատուցէ դատաստանի, նաեւ՝ առու-  
 գութեան եւ քաջ զգայութեան, զի մի՛ հարկաւորաբար սխալանս ինլ  
 գործիցէ:

Այլ թէ ո՞ւմ ականդելի է: Եւ քանզի ըստ Արիինացն յատուկք էին  
 դատաւորք, եւ ըստ պատահման եղեն թագաւորք, եւ իշխանք, եւ մարգա-  
 րէք, եւ քահանայք, որպէս ասացաւ յառաջագոյն: Այլ քանզի առ մեզ  
 ապականեալ է յայսպիսի կարգ, աւանդելի է զիրս եւ զզիրս դատաստանի  
 ի ձեռս եպիսկոպոսաց<sup>(12)</sup>, զի ոչ ոք է ի մեզ ըստ արտաքնոցն վարժեալ  
 35 իմաստութեամբ յաշխարհականաց կամ ըստ Իսրայելի դպիր: Եւ զի այժմ  
 նոցա է յանձն հոգք եկեղեցեաց եւ աշխարհականաց, եւ ըստ պատահ-  
 մանն եղիցի իշխանաց եւ զլիաւորաց ժողովրդեան, հմտագունից քահա-  
 նայից եւ վարդապետաց, սակայն աւանդապահ այսմ իրի եպիսկոպոս-  
 ունք եղիցին<sup>(1)</sup>: Բայց մի՛ ոք ինձ ընդդէմ դիցէ զեպիսկոպոսունս

30 Գ թագ., Գ 16—18  
 31 Մարգ. Դանիէլի, ԺԳ  
 32 Մատթ., Ին 34, 41  
 33 Մատթ., Ին, 41

տգէտս եւ արծաթով առեալս զպատիւ, եւ անհանճարս՝ բաւական ոչ լինել այսմ իրի, զի ոչ ինչ անգէտ եմ: Զպատշաճն եւ զյարմարն ցուցար կարգ: Եթէ չիցեն բաւական, զործակցաւք վարեսցին՝ աշխարհականաւք եւ քահանայիւք եւ վարդապետաւք փորձագունիւք: Եւ եղիցի անբասիր  
5 այնուհետեւ՝ ամբարշտաւանութեան՝ եւ ամբարտաւանութեան ոչ տալով կարծիս: Եւ պատճառ եւս լիցի նմա վարժման՝ այլոցն ուղիղ հատուցումքն դատաստանի:

## Գ Լ Ո Ւ Ն Զ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՈՊԷՍ ԱՐԺԱՆ Է ԼԻՆԵԼ ԴԱՏԱԻՈՐԱՅ,  
ԱՄԲԱՍՏԱՆԱՅ ԵՒ ԴԱՏԱԽԱՉԱՅ

10

Եւ դատաւորացն անկաշառս լինել արժան է, զի ըստ զբեցելոյն՝ կաշառ զաշս կուրացուցանէ քաջատես<sup>34</sup>,—որպէս զի համարձակ լիցի յատենի անդ դատաստանի՝ կաշառ ի վերայ իրաւանց ոչ առնլով եւ զվճիռն ուղիղ ցուցցէ հատանելովն. մի՛ աշառանաւք, ըստ որում Տէր  
15 իսկ ասաց, այլ ուղիղ դատաստան արարէք<sup>35</sup>, զի մի՛ միտք զայթակղեալ խոցոտեսցին տկարագունիցն եւ պատճառաւք յայլազգիս վարեսցին: Այլ զի համարձակ լիցի ասել ըստ Տեառն՝ թէպէտ եւ դատիմ ես, դատաստանըն իմ արդար է<sup>36</sup>:

Զի մի՛ զանձին խնդրեսցէ զաւգուտ, այլ զի զմիտս բազմաց յինքն յանգուցցէ եւ զդատաստանն յորդորեսցէ ճշմարիտ վճռաւ: Եւ թէպէտ յամենայնի զողորմութիւն յիշելի է, այլ սակայն ի դատի զգուշանալի, հարթ եւ արդակ պահել զիրաւացին առ երկաքանչիւր կողմանս, իբրև ոչ խոնարհեցուցանել զանձն յողորմութիւն տղբատին, ըստ այնմ՝ մի՛ ողորմիր որբոյն եւ այլուոյն ի դատաստանի<sup>37</sup>, զի մի՛ պատճառ զայթա-  
25 կղութեան իցէ. դատ առնել որբոյ եւ տալ իրաւունս այլուոյ ի դատաստանի՝ ասացաւ<sup>38</sup>: Եւ թէպէտ զայս պահելի է դատաւորաց, սակայն ուսուցեն զիրաքանչիւրսն՝ մի՛ անզարմապէս առ միմեանս լինել, այլ կարողաց՝ ողորմութեամբ առ անկարսն խոնարհիլ:

Մի՛ զամբաստանի կամ զդատախազի միայն լուիցէ զբան, եւ եթէ  
30 լուիցէ, ուսցի միայն, այլ մի՛ վճիռ հատցէ միւնչ ի միասին կատարելապէս քննեսցի:

Երկուք կամ երիւք վկայիւք զվճիռն հատցէ հաւատարմաւք, ըստ Աւրինացն<sup>39</sup>: Եւ եթէ զի՞նչ հաւատարմութիւնն իցէ կամ ընդէ՞ր երկուք եւ երեք, ասացուք զկնի այսորիկ ճառի:

35 Իսկ որոյ վկայ ոչ իցէ, երդմամբ միւսոյ կողմանն հատցի վճիռ: Այլ զերդմունս ոչ հրամայեմք, զի եւ ոչ հրամայեցաւ, բայց սովորու-

34 Եւր., ԻԳ, 8: Բ օրին., ԺԶ, 19

35 Յովհ., է, 24

36 Յովհ., Ե, 30. Ը, 16

37 Եւր., ԻԳ, 3

38 Եսայ., Ա, 17

39 Բ օրին., ԺԷ, 6. ԺԹ, 15: Մատթ., ԺԸ, 16; Յովհ., Ը, 17: Բ Կորնթ., ԺԳ, 1

թեանցն, զոր ունին՝ անարէն եւ անհրաման, կանոնս եւ ապաշխարութիւնս սահմանեմք: Իսկ եթէ ո՞րպէս լիցի կրողմն եւ որո՞ց, ասասցի յիւրում ճառին, ոչ արինադրելով, այլ խրատելով:

Պարտ եւ պատշաճ իսկ է ի ժամ դատաստանի դատաւորաց երկուս կամ  
5 երիս ունել արս փորձս, յորոց եւ իցէ կարգաց, վկայս ուղիղ նոցա լինել դատաստանի<sup>(14)</sup>, զի որպէս ոսոխացն հաւատարմանան բանք վկայիւք, սույնպէս եւ դատաւորաց առանց կարժեաց լիցի դատաստանն վկայիւք: Զայս սովորութիւն եւ Հռովմայեցիք կալան յառաջնումն՝ արս եւթանասուն եւ երկուս ընտրեալս միշտ քննութեան սյարապեցուցանել դատաստանի  
10 եւ այլոց, զի անվթար եւ յառաջ դատեալքն ի նոցանէ իցեն: Եւ եւթանասուն եւ երկուս ըստ լեզուաց ընտրեն ազգաց, իբրու այն, եթէ զամենայն ազգաց ունել զիմաստութիւնն նոքաւք: Իսկ այժմ երկուտասան, ըստ թուոյ երկուտասան առաքելոցն, կացուցանեն զդատաւորս՝ ոչ միայն ընտրել զիրաւացին եւ անսխալ ունել զարդարն, այլ եւ բազմացն վկայութեամբ  
15 ճշգրտել զատեան դատաստանին: Իսկ Յոյնք զերիս կացուցանեն դատաւորս, նմանապէս եւ՝ Վիրք, ուսեալք ի նոցունց, ըստ թուոյ Երրորդութեանն եւ կամ ըստ վկայիցն թուոյ<sup>40</sup>: Զոր եւ մեզ զկարեւրիս զերիսն ընտրելի է, զի ի դատելոյ ժամանակի եպիսկոպոսն, զի նա է դատաւոր, զերկուսն կամ զերիսն առ ինքեան կայլի<sup>(15)</sup> ոչ միայն վկայ, այլ եւ  
20 նոքաւք կրթիլ եւ հմտանալ յամենայն ժամանակի:

Ի զիշերի եւ ի տուրնչեան հարկաւոր է խոկալ դատաւորաց՝ ոչ միայն յընթերցումն բնաբանական գրոց եւ կամ տառից դատաստանաց, այլ եւ որսալ զբանս իմաստուն որանց ըստ իւրաքանչիւրոց ազգաց: Եւ  
թէպէտ ոչ պատահի յատուկ իրք դատողական, այլ զարութիւն առեալ  
25 համեմատութեամբ բանիցն զարասցի միշտու: Ամենազանս առաքինութեամբ կատարիլ նոցա իրաւացի է յոյժ, յաւէտ անսրտնութեամբ եւ աննախանձ բարութ յամենայն ժամանակի, մանաւանդ ի ժամ դատաստանի, զի մի՛ միտք չարչարեսցին դատելոցն յարկութեան եւ կամ նախանձու աղազաւ թիրել զատաստանին: Երկայնամիտք եւ ներողք լիցին դատողքն: Եւ զի բազում անզամ անյայտ իրքն սլատահին, մի՛ կարճամտեալ  
30 լուծցեն, այլ շտեմարանեալ պահեսցեն եւ սյարապով տեսեալ՝ վերստին ատենիլ լուծցեն, որքան եւ իցէ առնուլ զնոյն:

Բանակոտութեան ոսոխաց յատենի անդ սաստեսցին, զի մի՛ ամբողջ լիցի խռովութեան յատենի անդ եւ պատճառ յսպիանման դատաստանին:  
35 Ուսցին միանգամայն դատախազքն՝ ոչ վիճոյ վասն գալ յատեան, այլ վշտակցաբար զարժանն առնուլ վճիռ:

Ըստ կարգի խաւսել երկաքանչիւրոցն տայցեն՝ լուութեամբ միոյն, զի ստուգեալ ճշմարտին՝ վճիռ նովաւ բերցի:

Զգոյշ դատաւորն եւ յիւրոցն կացցէ յատենախաւսից սպասաւորաց,  
40 զի սովորութիւն կալան ամբաստանք եւ դատախազք վարձու խաւսել նոցա յատենի, զի մի՛ կախարդեալ լսելեալք ի բանս նոցա լիցի եւ արտաքոյ անկցի արդարեւ դատաստանին: Անպատիր դատողութեամբ երկնայինն եւ եթ վարի դատարանն, իբր զի զներքին ամենեցուն տեսանէն՝ զխորս, իսկ երկրաւորս՝ անպարսաւ լիցի արտաքոյ կամաւորի

<sup>40</sup> Բ օրին., ԺԵ, 6. ԺԹ, 15 :Մատթ., ԺԸ, 16: Յովհ., Ը, 17: Բ Կորնթ., ԺԳ, 1

սխալանքն, եւ կամսւորն ընդ վերին դատաստանին դատապարտութեամբ կացցէ:

Մի՛ ամբարհաւաճեալ ղինքեանս մոռացին դատաւորք, այլ պիտասցեն, զի մի է ամենեցուն դատաւոր Աստուած, ըստ գրեցելումն<sup>41</sup>, Յամենայն պատրանս իւր ընդ միտ ածցէ զմարդարէին Ամբակոմայ կոչել զԱստուած վրէժիւնդիր անիրաւ դատաւորին<sup>42</sup>:

Բանտ լինել դատաւորին առ ի խրատել նոքաք զստահական: Եւ հրամանք Տեառն զեկուցանէ յասելն՝ եւ դահիճն արկանիցէ ի բանս<sup>43</sup>, որովք վարելի է հարկաւորապէս: Իսկ ամբաստանաց եւ դատախազաց եւ Տէր իսկ խրատ տայ՝ ի ճանապարհի լուծանել զհաշիւն<sup>44</sup>, զի մի՛ հակառակ ինչ պատահիցի:

Ոչ վայել է Քրիստոսի աշակերտաց նախահոգութեամբ խաւսել սուտ երկաքանչիւր կողմանցն, զի սուտն ի շարէն է: Եւ յորժամ խաւսի սուտ, յիւրոց անտի խաւսի, զի սուտ է եւ հայրն նորա՝ սատանայ<sup>45</sup>, եւ կորուսանէ Տէր, որ խաւսին սուտ<sup>46</sup>, եւ՝ մի՛ ստէք միմեանց, եւ խաւսեցի իւրաքանչիւր ոք զճճարտութիւն ընդ ընկերի իւրոս<sup>47</sup>, զի բաւական է վրիպանալքն ստութիւն խղճիւն մտաց ի շարշարանս: Ոչ է յարինաց Տեառն որոգայթս միմեանց ղնել բանիւք յատենի անդ որով եւ ըմբռնել ջանացեն, զի որ ղնէ որոգայթ ընկերի, անձամբ զնա լցցէ<sup>48</sup>:

Մի՛ լիցի ի հաւատացեալս յաղթասէր անիրաւութեամբ միմեանց լինել ի հրապարակի անդ, զի եթէ յաղթէ՝ զանձն վրկէ, եւ թէ յաղթի՝ կրէ ամաւթս:

Մի՛ կացուցեն սուտ վկայս ի զլանալն եւ ի ցանկալն ընչիցն ընկերին, զոր և Աւրէնքն գերկաքանչիւրսն արգելու<sup>49</sup>:

Մի՛ բնաւ լիցի ի վարձու ունել զճարտասանս ոմանս ատենախոսսս, որովք զշարն ի գլուխ տանիցեն յաղթութիւն:

Մի՛ բանակոտութեամբ զմիմեանս նախատիցեն եւ հարկանիցեն ի յայանութիւն ստենին:

Մի՛ կաշառիցէ զդատաւորս՝ յափշտակել զընկերին, խտտացեալ զարժախիւրութիւն, զի արմատ ամենայն շարնաց է: Լուիցէ և այլոր առաքելոյ՝ ընդէ՛ր ոչ գուք զրկիք եւ նեղիք, այլ զրկէք և նեղէք, եւ այդ՝ զեղբարս ևւ<sup>50</sup>, Զարհուրեցին յառաքելական հրամանէ կանոնացն, որ վստն Տեառն գրեալ է, եթէ հարաւ, քան թէ եհար, բամբասեցաւ քան թէ բամբասեաց<sup>51</sup>:

Մի՛ վայրապար զհրապարակն լցցեն երդմամբ, մինչև ի վճիռ դատաւորին, զի ոչ հրամայէ բանն երդնուլ<sup>52</sup>: Գիտացեն զի Տեառնէ զասացե-

<sup>41</sup> Եբր., ԺԲ, 22

<sup>42</sup> Մարգ., Ամբակ., Ա, 3

<sup>43</sup> Մատթ., Ծ, 25: Ղուկ., ԺԲ, 53

<sup>44</sup> Մատթ., Ծ, 25

<sup>45</sup> Յովհ., Ը, 44

<sup>46</sup> Սաղմ., Ե, 7

<sup>47</sup> Մարգ. Զաբար., Ը, 16: Եփես., Դ, 25

<sup>48</sup> Գիրք Առակաց, ԻԶ, 27: Ժողովօղ, Ժ, 8: Սիրաք, ԻԷ, 29

<sup>49</sup> Ելք, Ի, 16—17: Բ օրին., Ծ, 20—21

<sup>50</sup> Ա Կորնթ., Զ, 7—8

<sup>51</sup> Ա Պետրոսի, Բ, 23

<sup>52</sup> Մատթ., Ծ, 34

ալն՝ ընդ ամենայն դատարկ բանի համարս տայցեն մարդիկ յաւուրն դատաստանի<sup>53</sup>, եւ յայլսն, եւ եթէ՝ վասն այսր ամենայնի ածցէ գքեզ Աստուած ի դատաստան<sup>54</sup>, Խորհիցի եւ զալն, զի լաւ իսկ է ի դատաստանի աստ զյափշտակութիւն ընչից խնդութեամբ ընդունել եւ անվրէպ  
 5 զանձն ունել, քան ազահել եւ ոչ համբերել եւ ի դատաստան անթիրելի մտանել դատաւորին ահեղի եւ երկնաւորի: Խրատեսցին եւ յայսմ, զի ազալթիւք ի Տեառնէ նախ՝ ազնութիւն հայցեսցեն եւ ապա՝ յատեան կացցեն դատաստանի՝ զիրան եւ զարդարն խորհելով: Եթէ տացէ եւ ոչ յազլթեսցին իրան, շնորհ նմա կալցին, զի Հոգի Հար նորա ետ բերան  
 10 եւ իմաստութիւն: Ապա եթէ րստ նախատեսութեան իրիք Տէր ետ ի ձեռս անիրաւին զարդարն, միայն զոհութեամբ համբերիցեն, զի լաւագոյն հատուցմանն հասանիցեն եւ զնախանձ վրէժխնդրութեան ի Տէր թողցեն, ըստ գրեցելոյն<sup>55</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Է

15 **ՅԱՂԱԳՍ ՎԿԱՅԻՑ, ԵԹԷ ԶԻՆՁ Է ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ  
 ՆՈՅՍ, ԵՒ ԿԱՄ ԸՆԴԷՐ ԵՐԿՈՒԲ ԵՒ ԵՐԵԲ ԸՆՏՐԻՆ**

Եւ հարկաւորապէս իսկ զվկայսն խնդրէ դատաստանն, զի զհակառակութիւնսն ձգտեալ եւ յերկարեալ դատախազացն՝ նորովք լուծցէ դատաւորն, զի անհաւատալի է դատաւորի հակաճառութիւն նոցա մինչ ի գալ  
 20 նոցա, զի մոռացեալ զԱւրէնս՝ խորհիլ զընկերին եւ ոչ զիրն<sup>56</sup>, եկին յայնոսիկ. նաեւ ոսոխքն նորաք առաւել, քան դատաւորան զիշանին, յորժամ անկասկած ի վարձկանաց իցեն եւ հաւատալի ատենին դատաստանն գտանիցի:

Իսկ հաւատարմութիւն նոցա, նախ, ի վարուց ընտրին, իբր զի  
 25 ճշմարտախաւսք իցեն եւ շիցեն կաշառուք եկեալ ի տեղի ատենին. եւ զի շիցեն մերձաւոր ազգատոհմ դատախազաց, եւ թէ իցեն՝ եւ բազմաց վարք նոցա հաւատարիմ իցեն՝ ընկալեալ լիցին: Երկրորդ՝ հաւատարիմն լինել երկուքն եւ երեքն<sup>(16)</sup>, որպէս արեգակն եւ լուսին, զի հաւատարիմ հաստատեալ է վկայ յերկինս<sup>57</sup>: Երրորդ՝ զի կրկին ալեալք պատուեալ  
 30 իցեն, որովք առաւել պատիւ նոցա ցուցցի:

Բայց հարկաւոր է եւ զհաւատարմութիւն ժամանակացն յայտնել: Եւ է րստ այսմ. զի եռամենի խաւսելն է, եւ ելթնամենի ուսանելն է, եւ շորեքտասանամենի՝ սերմանելն, եւ քսանամենի՝ զինուորելն, եւ քսանհինգինգամենի՝ քահանայելն: Արդ, ի դէպ է գրահանայական հասակն  
 35 հաւատարիմ կարծել ի վկայութիւն, զի թէ առաջի Աստուծոյ կալ հավատարիմ է եւ վկայ ժողովրդեանն լինել զործոց, առաւել հաւատարիմ լիցի եւ առաջի մարդկան:

<sup>53</sup> Մատթ., ԺԲ, 36  
<sup>54</sup> Ժողովող, ԺԱ, 9  
<sup>55</sup> Եբր., Ժ, 30: Հոով., ԺԲ, 19  
<sup>56</sup> Ա. Կորնթ., Ժ, 24: Փիլիպ., Բ, 4—5  
<sup>57</sup> Սաղմ., Ը, 4. 29, 16

Իսկ հասակ որդե՛ծնութեան հաւատարիմ լիցի ի տուրեւառութիւն վաճառաց, զի թէ զանձն եւ զսերմն վաճառել կնոջ եւ զնիլ զկիինն յամուսնութիւն հաւատարիմ է, հաւատարիմ լիցի ի սուրեւառս վաճառաց:

Ապա թէ պատահի միոյ վկայի մանուկ լինելը ըստ հասակին ցուցելոյ, եւ միւսոյն՝ ծեր, ընկալեալ լիցի, ըստ այնմ՝ երիտասարդն ընդ ծերոյն, եւ ուղիղ են ճանապարհք նորա: Եւ եթէ երկուքն կամ երեքն պատահի մանուկ ըստ ասացելոյդ, ընկալեալ լիցի:

Իսկ ըստ ազգաց կրանից՝ ոչ է պարտ զանհաւատից վկայութիւն առնուլ ի վերայ քրիստոնէից, թէպէտ եւ արդարք իցեն եւ բազումք, որպէս եւ ոչ ընկալաւ զգիւացն Տէր<sup>55</sup>, թէպէտ եւ արդար վկայեցին, զի ունէին ընդ ճշմարիտն խառնեալ եւ զսուտն. նաեւ ոչ Պաւղոս ընկալաւ<sup>59</sup>, զի մի՛ միաբանութիւն ինչ կարծիցի. նաեւ ոչ զհերձուածողաց, զի թէ Տեառն ոչ են ճշմարիտ վկայք, զի՛ արդ մեզ եղիցին, բայց զնոցունցն նոցունց ընդունելի է, թէ պատահիցի ինչ այնպիսի հարկաւորութեամբ:

Իսկ զկանայս վկայս ոչ է ընդունելի, բայց արբանեակս վկայից<sup>(17)</sup>, որպէս ի յարութեան Տեառն արբանեկեցիին առաքելոցն շորք ի կանանցն, երկուս՝ յառաքելոցն, եւ նոքա հաստատեալք զյարութիւն՝ վկայք եղեն ճշմարիտ յարութեան Տեառն մերոյ<sup>60</sup>:

Այսպէս, եթէ պատահիցի իրիք վկայ լինել ի կանանց եւ ճշմարիտք իցեն եւ վարուք վկայեալք, հաւատարիմ արանց զիրն պատմեսցեն եւ ինքեանք կրկին իցեն, հաւատարիմ լիցի վկայութիւն կանանց ի ձեռն արանց<sup>(18)</sup>: Բայց յատենի մի՛ կացցեն, որպէս ո՛չ է քահանայել նոցա, եւ ո՛չ զինուորել, եւ ո՛չ հնձան հարկանել, եւ ո՛չ ի կապեղայս նստել, եւ ո՛չ առնացի ունել հանդերձ ըստ կանոնաց<sup>61</sup>, այսպէս ո՛չ դատել եւ ո՛չ վկայել, բայց միայն ըստ ցուցելոյդ արինակի: Բայց մի՛ ոք ապախտ առնել զվկայութիւն Տեառն կարծիցէ ինձ զկանանց: զի այլազգ Աստուծոյ վկայ լինելն է եւ այլազգ՝ մարդկան. թէ պատահին, որպէս եւ պատահեցան բազումք, ի Տեառնէ ընկալեալք լիցին<sup>(19)</sup> եւ ի մարդկանէ՝ յաղագս Աստուծոյ, բայց ի մարդկայինս, յաղագս դիւրագրգռութեանն, երկբայելի են:

Այլ զկանանցն ի կանանց ընդունել արժան է, զի բազում անգամ պատահի իրաց նոցա մերձ ոչ լինել արանցն, այլ զկանանց յարանց ընդունել որպէս ցուցաւ: Եւ զի կրկին պարտին լինել յերկաբանչիւր տեղիսն:

Եւ զի որպէս ամենայն հասակ վկայութեան Տեառն ընդունելի է, ըստ որում Բեթղա՛հէմի մանկունքն, եւ Նիւբալկոս սուրբն<sup>62</sup>, եւ Նախավկայն<sup>63</sup> եւ այլք, բայց սակայն ի մարդկայինս ցուցաւ ընդունելին հասակ. այսպէս եւ կանանց վկայութիւն ընդունելի է Տեառն, իսկ մարդկան՝ որպէս ասացաւ, զի Աստուած ի սիրտս, որպէս ասացեալ է, հայի, իսկ մարդ՝ յերեսս եւ ի տիս<sup>64</sup>: Վասն որոյ դուն ուրեք է մարզարէանալ նոցա

<sup>58</sup> Մատթ., Ը, 29: Մարկ., Ա, 24. Ե, 7

<sup>59</sup> Գործք Առաք., ԺԶ, 16—18

<sup>60</sup> Մարկ., ԺԶ, 1—13: Յովհ., Ի, 1—18

<sup>61</sup> Բ օրին., ԻԲ, 5: Կանոնք Բազիլի Գիսարացոյ ձեռն, Կանոնադիրք Հայոց, հ. Բ, էջ 130

<sup>62</sup> Վարք Սրբոց, Վենետիկ, 1810 թ. հատ. 1, էջ 170—178

<sup>63</sup> Գործք Առաք., Զ, է

<sup>64</sup> Ա թագ., ԺԶ, 7

և ոչ ստեղծելու, և քարոզելու ընդ առաքելային կանանց և ոչ արանց: Եւ եթէ սմանք մարտիրոսանալով վկայ եղեն հոգւոյն Աստուծոյ, և Մարիամ կոչս տնճառ ծննդեամբ՝ Բանին Աստուծոյ, մանաւանդ այլաբ, քան ինքեամբ եղեն վկայք, և զի ոչ Մարիամայ կուսի ընդ այսասիկ հարցանելի է:

5 Եւ թէ ընդէ՞ր երկուք կամ երեք ընտրին, ասելի է:

Երկուքն և երեքն ոչ վասն առաւելութեան խափանման է, այլ յազագըս զի մի՛ պակաս իցէ. եթէ բազումք իցեն՝ բարիոք է, և թէ ոչ՝ մի՛ նուազիցի: Ըստ որում ասէ առաքեալն՝ զերիցուէ շարախոսութիւն մի՛ ընդունիցիս ի միոջէ, բայց եթէ երկու կամ երեք վկայիւք<sup>66</sup>: Զի դիրքն է միոյն ախտի ինչ շարախաւսել, և երկուց վկայից ի վեր քան զպատրանս և զկաշառս լինել՝ երեքն: Եւ զի ուսցի դատաւորն, եթէ երկուց վկայիցն նման միմեանց իցեն բանքն և երիցն ոչ՝ անհաստատ է, որպէս Տեառն վկայիցն աննմանք միմեանց, զոր և Պիղատոս երկբայի, սակայն երկուցն հաստատի<sup>66</sup>: Եւ եթէ խարդախանաւք բազումք եղեալ վկայ՝ ի զլուիս զչարն տարան վճիռ, որպէս Նաբէովթայն<sup>67</sup> և սուրբ Նախավկային<sup>68</sup>, այգորքիկ դաւաճանութիւնք դատախազաց են և միշտ զպատրուակեալ շարութիւնն ծածկել ոչ կարեն: Այլ ճշմարիտ է երկուքն և երեքն բոստ կարդի իրաւանց, վասն որոյ ամենայն ուրեք այսքան ընտրին: Զի Աւրինացն տուչութեան Մովսիսի՝ Ովր, և Ահարսվն, և Յեսու վկայեն<sup>69</sup>:

20 և Աստուծոյ՝ փողքն, և ամպն, և մէգն, և հուրն վկայեն<sup>70</sup>. և ծննդեան Տեառն՝ հրեշտակք, և հովիւք, և մոզք վկայեն<sup>71</sup>, և դարձեալ՝ Յովսէփի, և Մարիամ, և մտուրն<sup>72</sup>. և ի տաճարն՝ Սիմէոն, և Աննա, և դուռն<sup>73</sup>. և յնգիպտոս՝ հրեշտակն, և ձեռագործքն, և նշանքն որ անդ<sup>74</sup>. և դարձեալ ի տաճարն՝ Մարիամ, և Յովսէփի, և քահանայքն<sup>75</sup>. և մկրտութեանն՝

25 Հայր, և Հոգին, և Յովհաննէս<sup>76</sup>: Իսկ ի Թաբոյթ երկուքն և երեքն միանգամայն ի միասին վկայեն<sup>77</sup>, զի երկու են մարգարէքն և երեք՝ առաքեալքն: Ի նշանսն՝ մարմնոցն բժշկութիւնքն, և դիւացն հալածումն, և մեռելոցն յարութիւն<sup>78</sup>. և դարձեալ՝ ի ծովու զնալն, և ընդ առջ ընթանալ և հացիւ կերակրել<sup>79</sup>. և շարշարանացն և մահուն՝ խաարումն արեգականն, և շարժումն երկրի, և պատառումն վիմաց<sup>80</sup>, և դարձեալ՝ արիւնն, և ջուրն, և վարագոյրն, և մեռեալքն<sup>81</sup>. և յարութեանն՝ հրեշ-

66 Ա Տիմոթէոս, Ծ, 19  
 66 Մատթ., Իէ: Մարկ., ԺԵ, 1—15: Յովհ., ԺԹ 1—16  
 67 Գ թագ., ԻԱ, 1—13  
 68 Գործք Առաք., 2, 8—13  
 69 Ելք, ԻԳ, 12—14  
 70 Ելք, ԺԹ, 11—19. Ի, 18  
 71 Մատթ., Բ, 1—11: Ղուկ., Բ, 8—20  
 72 Ղուկ., Բ, 7, 16  
 73 Ղուկ., Բ, 25—38  
 74 Մատթ., Բ, 19—20  
 75 Ղուկ., Բ, 25—38  
 76 Մատթ., Գ, 13—17: Մարկ., Ա, 9—11  
 77 Ղուկ., Թ, 28—36  
 78 Մատթ., Գ, 23—25. Ը, 2—3, 5—16, 30—34, Թ, 2—7, 18—26 և այլն.  
 79 Մատթ., ԺԳ, 16—30 և այլն.  
 80 Մատթ., Իէ, 51: Ղուկ., ԻԳ, 44—45  
 81 Յովհ., ԺԹ, 34

ասկօն, եւ վիմն, եւ սյատանքն, եւ վարշամակն<sup>82</sup>. եւ դարձեալ՝ կանայքն, եւ ասաքեայքն, եւ սյաւհապանքն<sup>83</sup>. եւ ամբարձմանն՝ առաքեալքն, եւ հրեշտակքն, եւ կանխաւ՝ մարգարէքն<sup>84</sup>:

5 Եւ թլպլա եւ միոյ վկայի հաստարմի ճշմարիտ վկայութիւնն, սակայն ոչ հաստատի, ըստ Տեանն՝ դուք առաքեցէք առ Յովհաննէս, եւ վկայեաց ճշմարտութեանն<sup>85</sup>. եւ զի ոչ հաւատացին, ասաց՝ այլ ես ունիմ վկայութիւն մեծ քան զՅովհաննուսն՝ զգործսն<sup>86</sup>. եւ դարձեալ՝ ես եմ, որ վկայեմ վասն իմ, եւ է Հայր, որ վկայէ<sup>87</sup>, եւ յարէնսն իսկ ձեր գրեալ է, եթէ երկուց մարդոց վկայութիւնն ճշմարիտ է<sup>88</sup>, եւ միոյ վասն իւր վկայելն անվաւեր է, ըստ ասելայն Հրէիցն Տեանն՝ դու վասն անձին քո վկայես<sup>89</sup>: Եւ թէպէտ տիրապէս ճշմարիտ, սակայն ասացին՝ եւ չէ ճշմարիտ<sup>90</sup>, յաղա- 10 գրս այնորիկ զՀայր եւ զՅովհաննէս կոչէ վկայ<sup>91</sup>: Եւ դարձեալ զառաքեալսն կոչէ վկայս. եղիջիք, ասէ, ինձ վկայք յԵրուսղէմ, եւ ի Սամարիա, եւ մինչև ի ծագս Երկրի<sup>92</sup>: Ըստ այսմ եւ Պետրոս վկայէ՝ լուեալ զձայնն 15 եկեալ ի մեծ վայելչութենէ փառաց անտի, թէ դա է որդի իմ սիրելի<sup>93</sup>, սակայն ընդ իւր առնու զքանն մարգարէականն<sup>94</sup>: Ինքն իսկ ճշմարիտ վկայէ Յովհաննէս, սակայն եւ ասէ՝ երեք են, որ վկայեն՝ արիւնն, եւ ջուր, եւ հոգին<sup>95</sup>: Յայսմանէ առեալ՝ կանոնքն հրամայէ վկայիւք ձեռնադրել եպիսկոպոսաց. եւ առաքելոցն ընծայական թղթովք շրջէին աշակերտք 20 նոցա: Ըստ այսմ եւ առաքեալն Թագէտոս ի կողմանս գնաց Հայոց նամակաւ թագաւորին Աբգարու<sup>96</sup>:

Բայց սակայն երկու լինել արքինակ վկայութեանն՝ կամ զի տեսանէ կամ զի լսէ, զոր եւ յոյժ ճշգրտելի է վկայից, զի մի՛ այլ ընդ այլոյ տեսեալն իցէ եւ կամ լուեալն. այլ ճշմարիտ տեսանելն, քան զլսելն է. 25 զոր եւ դատաւորաց ստուգելի է ի ժամ դատին զվկայսն, զի ըստ դրեցելոյն՝ մի՛ ի կարծս դատեսցի:

<sup>82</sup> Մատթ., ԻԸ, 2: Մարկ., ԺԶ, 3—7: Ղուկ., ԻԴ, 2—6

<sup>83</sup> Մատթ., ԻԸ, 1—7

<sup>84</sup> Մարկ., ԺԶ, 19: Ղուկ., ԻԴ, 51: Գործք Առաք., Ա, 9

<sup>85</sup> Յովհ., Ե, 33

<sup>86</sup> Յովհ., Ե, 36

<sup>87</sup> Յովհ., Ը, 18

<sup>88</sup> Յովհ., Ը, 17

<sup>89</sup> Յովհ., Ը, 13—14

<sup>90</sup> Յովհ., Ը, 13—14

<sup>91</sup> Յովհ., Ե, 31—37

<sup>92</sup> Գործք Առաք., Ա, 8

<sup>93</sup> Ղուկ., Թ, 28—36: Բ Պետր., Ա, 17—18

<sup>94</sup> Բ Պետր., Ա, 19

<sup>95</sup> Ա Յովհ. Առաք., Ե, 8

<sup>96</sup> Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913 թ., էջ 148—152

Գ Լ Ո Ի Խ Ը

ՅԱՂԱԳՍ ԵՐԳՄԱՆ, ԵԹԷ ՈՐՊԷՍ ԼԻՅԻ ԵՒ ՈՐՈ՞Յ, ՈՉ ԱՌԵՆԱԴՐԵՆԻՈՎ,  
ՉԻ ՈՉ ՀՐԱՄԱՅՅԵՑԱԻ<sup>(97)</sup>, ԱՅԼ ԽՐԱՏԵՆԻ ԵՒ ԿԱՆՈՆՍ ԵՒ ԱՊԱՇԵԱՐՈՒ-  
ԹԻՒՆՍ ՍԱՀՄԱՆՆԵՆ ԱՆԱԻՐԷՆ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑՆ

5        Զմեծ եւ զտէրունական պատուիրանս տեսանեմք այժմ կոխան լեալ  
ի մարդկանէ, զի վայրապար յաճախեաց երզնուլ, եւ յայն, զոր բնաւին  
արգել Տէր, ասելով՝ ամենեւին մի՛ երզնուցուա՞նք: Զի եւ հասարակաբար  
բանից կարգ եղև առնուլ յոչինչ պէտս ի գոհոս, եւ ի կապեղայս, եւ ի  
բանակոռութիւնս հրապարակաց, ոչ մանկանց, այլ եւ ծերոց եւ կատարե-  
10        լոց: Եւ եթէ պատահի դատախազ լինել ոմանց, մինչ ի տեղի անդ  
դատաստանի եւ ի հրաման դատաւորի հասանել, բազում անգամ երզնուն  
սոսկալի արինակաւ: Եւ եթէ հրամայիցէ դատաւորն ըստ իրաւանց դա-  
տաստանին երզնուլ, հակառակին, թէ յաղագս ամենայն շահից աշխարհի  
ոչ երզնումք, եւ այնու արինապահս զինքեանս ցուցանեն, այն որ սակաւ  
15        մի յառաջ առանց ուրուք հարկի բազում անգամ երզուան: Եւ եթէ ոք յան-  
դիմանէ, եթէ չէ արէն, ասեն՝ եւ զի ոչ հաւատան բանից մերոց: Եւ  
զՏեառն բամբասեն զարէնս, եթէ ամենեւին մի՛ երզնուլ, նմանեալք կու-  
րաց, զի տեսանելն նոցա շաւշափելն է: Որոց ասելի է, թէ արէնք Տեառն  
ոչ յանհնարից է, ապա եթէ ոչ՝ ոչ եղեալ լինէր, քանզի կամեցաւ զմեզ բնա-  
20        լին հաւատացեալս լինել, որպէս եւ յայլսն՝ կատարեալս: Եւ եթէ ծուլութե-  
ամբ վրիպեցաք, անպարսաւ լիցի Աւրէնքն, զի նա համեմատելով առ Աւ-  
րէնսն ասաց՝ ոչ եղնուլ, զի այսպէս լրումն է Աւրինացն, ապա եթէ յանցա-  
ւոր զտանիցի՛ ոչ ընու զԱւրէնսն, այլ ընդ Աւրինաքն է տակաւին, եւ հարկ  
է ապաշխարութեամբ ընուլ: Յաղագս այնորիկ ասացաք, եթէ ոչ հրամայէ՛  
25        բանս մեր երզնուլ, զի եւ ի Տեառնէ ոչ հրամայեցաւ: Բայց խրատս եւ  
կանոնս սահմանեմք սովորութեանց: Իսկ եթէ ասիցեն՝ անհնարին է  
չերզնուլ, եւ յայտ է, զի Աբրահամու երզուաւ Աստուած, ասելով ի ձեռն  
հրեշտակին՝ յանձն իմ երզուայ, ասէ Տէր<sup>98</sup>, եւ Աբրահամ ծառային ետ  
երզումն<sup>99</sup>, եւ դարձեալ՝ երզուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ<sup>100</sup>, եւ այլս  
30        այսպիսիս. եւ երզնու առաքեալն, ասելով՝ ի պարծանս ձեր երզում, եղ-  
բարք<sup>101</sup>: Եւ թագաւորք երզնուն արդարք, նմանապէս եւ՝ իշխանք, որովք  
հաստատի հարկաւոր լինել երզմանն, մանաւանդ ի դատաստանի:

Եւ արդ այսոցիկ եղից զլուծումն: Երզնուլ Աստուծոյ Աբրահամու  
առաքեալ ուսուցանէ, ասելով՝ ամենայն հակառակութեան մարդկան  
35        հաստատուն վճիռ երզումն է<sup>102</sup>, զոր եւ կամեցեալ Աստուծոյ երկու ան-  
փոփոխելի իրարք միջնորդել, երզմամբն եւ յանձն երզմամբն, խոստանալ  
զարհնութիւն: Եւ է այսպէս ասացեալդ. եթէ մարդկան, մանաւանդ, թա-  
գաւորաց յանձն երզնուլ սովորութիւն է, որովք զկատարած բանին

97 Մատթ., Ե, 34  
98 Մնունդք, ԻԲ, 15—16: Եսայի, ԽԾ, 23  
99 Մնունդք, ԻԴ, 2—3  
100 Սաղմոս, 2Ը, 50  
101 Ա Կորնթ., ԺԾ, 31  
102 Եբր., Զ, 16

- անվրէպ կնքին, նոյնպէս եւ Աստուած զձեւս զայս էտո բանի՝ ոչ երդմամբ, այլ ցուցանելով, կթէ տո մարդկան անստեղի է երդումն, նոյնպէս եւ խոստումն իմ անստեղի է<sup>103</sup>։ այլպէս է եւ՝ Երզնայի Տէր Գաթիկոս<sup>104</sup> եւ այլն։ Եւ երկրորդ՝ զի Աստուած ընդ Արիւնաւք ոչ անկանի, զմարդկան սովորութիւն առնաւ, որպէս ի սկզբանէ քաղմարինակ պատճառս առին հաստատութեան բանի։ Տակաւին ըստ Արիւնաց է եւ Արքաճամուն, որպէս զըրհորն, եւ զկարկառն, եւ զբլուրն<sup>105</sup>, զոր եւ Աստուած զաղեղն եր յամպս առ Նոյի<sup>106</sup>, ըստ որում եւ այժմ Սկիւթացիք զմարակս առին երիվարաց։ Իսկ առաքելոյ նոյն արիւնակ է, զի ոչ ասաց՝ երդուայ, այլ՝ երդնում<sup>107</sup>, եւ զի ոչ երդուաւ, միայն ցոյց զսովորութեանցն հաստատութիւն, զի առաքելոյ ի տեղի երդմանն է՝ քաւ լիցիւն<sup>108</sup>, որ է մի՛ լիցի։ եւ է ըստ Տեառն՝ այոն եւ ոչն, ըստ որում եւ ինքն այլոք ասէ՝ զի իցէ ի կողմանէ իմմէ այոն այո եւ ոչն՝ ոչ<sup>109</sup>։ Եւ զի թագաւորք երդուան արդարք՝ հաստատուն ցուցանել զուխտ խաղաղութեան ընդ ինքեանս եւ ընդ աշխարհ։ Եւ այս հարկաւորաբար եղեալ, զի հաւատալիք լիցին յայդոսիկ սովորեալք մարդկան։ Նմանապէս եւ իշխանք՝ յիրաքանչիւր ժամանակըս։ Զի թէ Տեառն հրամանի հասարակաբար հնազանդեալ էր մարդկային ազգ, այոն այո լինել եւ ոչն՝ ոչ, այդմ ոչ կարաւտէին։ Բայց արդ, յաղազս սովորութեանց զհրաման Տեառն լուծեալք՝ արք արդարք ապաշխարութեամբ զհրաման Տեառն լնուն, որպէս ասացաւ յառաջագոյն։ Այլ հարկաւոր լինել զերդումն՝ ցուցաւ ոչ լինել, եթէ ըստ հրամանի Տեառն հաւատալիք միմեանց՝ լինէին, եւ մանաւանդ ի դատաստանի լինի հարկաւոր։ Գիտելի է, զի եւ վեցերորդ պատճառ էր ոչ լինել դատաստան<sup>110</sup> վասն այդորիկ, զի մի՛ հարկ լիցի երդման։ Եւ եթէ ոք ասիցէ՝ զի ա՛րդ էր հնար ոչ լինել դատաստան։ Եթէ զհրաման Տեառն ընկալեալ էաք ի ճանապարհի տալ զհաշիւն<sup>111</sup>, այնմ ոչ կարաւտէաք, ընդ նմին եւ՝ ոչ երդման։ Եւ զի յայտնապէս յայդմանէ անկաք, ապաշխարութեամբ լնումք զպարտսն, յաղազս որոյ ասացաք, եթէ ապաշխարութիւնս եւ կանոնս սահմանեմք վրիպելոցն եւ խրատս։
- Եւ թէ ո՞րպէս լիցի երդումն, ասելի է։ Երկու արիւնակ է երդման. մին՝ ուրացութեան եւ միւսն՝ խոստովանութեան։ Եւ ուրացութեան է, յորժամ հրաժարէ ոք՝ ի խաչ կամ յԱւետարանն զձեռն եղեալ, եւ կամ յեկեղեցի, կամ ըստ այլ արիւնակի, յորժամ այլազգիք ուրացութեան արիւնակս առաջի դնեն, կամ զլոյս շիջուցանել, եւ կամ ջուր եւ ձէթ բերանաւք փշել, եւ կամ զջան ձեռոյ բուռն հարկանել, կամ խաչ ի գետնի նկարել եւ կոխել, եւ կամ ծիրս ինչ յերկրի առնել երկուս եւ ի միոջն ի միւսն անցանել։ Զի այդ ամենայն եւ այդպիսիք ուրացութեան արիւնակ է, զոր չէ պարտ յանձն առնուլ, թէ եւ մահ հասանիցէ եւ բնաւին տանց քակտումն։

<sup>103</sup> Մնունդք, ԻԲ 15—16, Եսայի ԽԾ, 23

<sup>104</sup> Սաղմոս, 2Ը, 50

<sup>105</sup> Մնունդք, ԻԱ, 31—32

<sup>106</sup> Մնունդք, Թ, 12—16

<sup>107</sup> Ա կորնթ., ԺԾ, 31

<sup>108</sup> Հռովմ., Գ, 3, 6, 31, 2, 2, 15

<sup>109</sup> Մատթ., Ե, 37

<sup>110</sup> Նախադրութիւն, զլուխ Ա

<sup>111</sup> Ղուկ., ԺԲ, 58

Իսկ խոստովանութիւն է, յորժամ իբր ի սրտադէտ ոք հուստացեալ յկատուած եւ զձեռն եղեալ ի խաչ եւ յԱւետարանն եւ կամ յեկեղեցի, այսպէս ասիցէ՝ գիտէ Աստուած, եւ խաչս եւ Աւետարանս վկայ է սրտիս, զի այսպէս է, որպէս ասեմ, եւ ոչ ստեմ: Եւ կամ ասիցէ՝ փառք սոցա եւ զարութիւն, զի ճշմարիտ է, զոր ասեմ, եւ ոչ ստեմ: Զի այսպիսի ասացեալքս խոստովանութիւն է. զԱստուած սրտագէտ գիտել, եւ զխաչն՝ Քրիստոսի նշան, եւ զԱւետարանն՝ Աստուծոյ բան, եւ զեկեղեցի՝ տուն Աստուծոյ: Արդ, երդումն խոստովանութեան լիցի եւ մի՛ ուրացութեան: Մի՛ ոք աւելի, քան զայդ, երդուիցի: Եւ զի ոչ արիննադրելով ասեմ, այլ խրատ տամ, որպէս բազում անգամ ասացաւ:

Ապա եթէ մի կողմ դատախազին յանհաւատից իցէ եւ հակառակիցի զուրացութեանն տալ զերդումնս, մի՛ յանձն առցէ բնաւ, թէ եւ մահ հասանէ կամ աւեր, որպէս ասացաւ, զի եւ ոչ դատաւոր նոցա աւելի հրամայէ երդնուլ ըստ իրաւանց դատաստանի, քան ի խաչ, եւ յԱւետարան, եւ յեկեղեցի խոստովանութեամբ: Որպէս ասացաւ յառաջագոյն, մի՛ ոք խաբիցի: Ապա եթէ երկաբունչիւրքն քրիստոնեայք իցեն եւ հակառակին միմեանց զշար եւ զուրացութեան զերդումն տալ, հալածեսցին ի սաստէ դատաւորին յատենէ անտի, մինչեւ յանձն առցեն զխոստովանութեան երդումն: Բայց մի՛ փութով երդումն լիցի եւ կամ յաղագս սակաւ ընչից, այլ նախ դատաւորն հնարիցի առանց երդման զբանն հատանել: Եւ եթէ չիցէ հնար, եւ երդմամբ հատանի, նախ զարինակ երդմանն ուսուցէ եւ զծանրութիւն ապաշխարութեանն յայտ արասցէ, եւ ապա զերդումն հրամայիցէ: Եւ ընչիցն չափ այսքան իցէ. որպէս թէ պակաս իցէ՝ տասն դահեկանի չափ եւ այլ նուազ, մի՛ լիցի յաղագս այնորիկ երդումն, զի ոչ վայել է եւ ոչ յաղագս ամենայն ընչից աշխարհիս երդնուլ: Ապա եթէ հակառակին աղքատութեան աղագաւ, զկէսն զին միմեանց տացեն երդման եւ այնպէս ազատիցին, եւ դատաւորն զնոյն արինակ ապաշխարութեան եւ ուսման երդմանն ցուցանիցէ: Եթէ զկէսն յանձն ոչ առնուցուն, եւ այնպէս լիցի երդումն եւ թէ ոչ՝ զապաշխարութիւն առնուն, անպարտ է դատաւորն: Իսկ եթէ աւելի իցէ քան զտասն՝ մինչեւ ի քսան եւ յայլս եւս բազումս, նոյն արինակաւ՝ մի՛ լիցի փութով, այլ աւուրբք յամեցուցէ դատաւորն, զի թերեւ զղջասցին եւ կամ միմեանց զին տալով զերծցին: Ապա եթէ անհնար է առանց երդման լինել, որպէս անդ եւ սստ դատաւորն ցուցցէ, եւ անպարտ լիցի չառնուլ յանձն: Եւ այդ ոչ արիննադրելով, այլ խրատելով ասացաւ:

Եւ եթէ որո՞ց է երդումն, ասելի է: Հասարակաբար առ ամենայն իրս դատաստանի, որոյ վկայ է, ոչ է երդումն նորա, իսկ որոյ վկայ չիցէ, հարկաւոր է երդնուլ<sup>(21)</sup>:

Ապա եթէ ոք զոք ըմբռնէ ի դատաստան, եւ չիցէ իւր վկայ, եւ ոչ այնմ որ ըմբռնեցաւ, իցէ վկայ, հարկաւոր է երդումն ոչ ըմբռնողին, այլ որ ըմբռնեցաւ. այլ այնմիկ, որոյ չիցէ կասկած ստութեան ըմբռնողին: Ապա թէ կասկածանք ինչ իցէ եւ նմանութիւն ստութեան, ըմբռնողին լիցի երդումն, զի թերեւ զարհուրեալ լուծցի դատաստանն: Ապա եթէ յանդուզն ոք է, զի որպէս զըսպարտեաց՝ նոյնպէս եւ երդնու, ապա հարկ է ըմբռնելու<sup>(22)</sup> երդնուլ, զի կասկած ճշմարտութեան է ի նմա<sup>(22)</sup>:

Այլ թէ ըմբռնեն զոք ի գողութեան, կամ ի շնութեան, եւ կամ յաւա-

զակաթեան կասկածանս, եւ ըմբոնողքն շունին վկայ, հրդումն է նոցա, զի այնպիսի շարագործքն շղանգիտէն երգնույ: մի տացի նոցա երդումն: Լեպա եթէ աղաղակին եւ զինքեանս անպարտս խոստովանին եւ զըմբոնողս՝ զրպարտողս եւ սուտս, եւ ի դէպ թուի դատաւորին եւ տոնինն

5 աղաղակ նոցա, նոցա լիցի երդումն եւ մի՛ զրպարտողացն<sup>(22)</sup>:

Իոկ հաւատարիմ հասակ երդմնողի՝ վկային լիցի՝ քսան եւ հինգ ամն:

Հիւանդին մի՛ լիցի երդումն մինչև առողջացի, զի առաջի կայ կասկած մահու, գուցէ անապաշխար ելանէ յաշխարհէ: Մանկան մի՛ լիցի՝ յաղագս խակութեան հասակին եւ ոչ զիտելոյ գահ ու զերկիւղ դատաստանին Աստուծոյ: Նմանապէս մի՛ լիցի եւ ծերոյ, զի ժամանակն գուցէ ոչ ներէ ապաշխարել: Մի՛ լիցի եւ ապաշխարողի, զի մի՛ բեռն ի վերայ գիցէ մեղաց: Եւ կանանց, որ ի հաւատս իցեն<sup>(24)</sup> եւ յապաշխարութեան, կամ յանմաքրութեան, եւ կամ ի ծերութեան, նմանապէս եւ ի մանկութեան, եւ կամ մերձ ի ծնունդս, եւ կամ անմաքուր յետ ծննդեան, մի՛ լիցի: Մաքսաւորի, եւ ամենայն մեղաւորի, եւ արբեցողի, մինչեւ զղջացին, մի՛ լիցի երդումն եւ մի՛ կալցին վկայս: Առ ի խրատ եւ ոչ յարինադրութիւն ասացաւ: Ոչ յարինադրութիւն՝ զի եւ հրաման երդման ոչ է, բայց խրատ զկնի սովորութեանցն յարինադրութիւն լիցի:

Այլ եթէ յառաջագոյն ասացելոցդ, որոց անդէպ ցուցաւ երդումն, եւ իցեն եղբարք, եւ հարք, եւ որդիք, եւ կանանց՝ մայր, եւ դուստր, եւ այր, եւ եղբայր, եւ այլ եւս մերձաւոր արեան, եւ կամ բարեկամ եւ սիրելիք, եթէ հաւատարիմք իցեն, զմիմեանց բեռն բարձցեն երդմանցն, եւ ընկալցին դատաւորք զայդոսիկ:

Կրանաւոր քահանայ եւ մոնաղն մի՛ մտցեն ի դատաստան, զի մի՛ հարկ լիցի երդման, այլ զպէտս իւրեանց ազգատոհմիւ լցցեն, որպէս այնորիկ, որոց անդէպ ցուցաւ երդումն, եւ ընկալեալ լիցին ի դատաւորաց: Այլ վճիռ<sup>(25)</sup> ուղիղ բոս հարկի, եւ վկայ, եթէ ճշմարիտք իցեն, համարձակ նոցա լիցի: Սոյն կարգ կացցէ ի վերայ աշխարհական քահանայից: Եւ եթէ ի տեղի երթիցեն դատաստանի, ի ձեռս թողցեն, որպէս ասացաւ, ազգատոհմին եւ ինքեանք անձանց զոյշ կացցեն, գուցէ լիրս ինչ անկարգս անկանխցին եւ ի զայթակղութիւնս:

Եւ արդ, զապաշխարութիւն եւ զկանոնս սահմանելի է զերդմանն, զի թէպէտ յառաջագոյն սահմանեալ է եւ կանոնեալ սրբոցն, սակայն բնաւին լուծեալ է եւ լիրս դատաստանի սովորեալ լինել վայրապար: Եւ որպէս բազում անգամ ասացաւ՝ ոչ արինադրեմք, եթէ արժան է երդնուլ եւ ապաշխարել, այլ զի շար սովորութեանցն դնեմք զապաշխարութիւն եւ զկանոնս, զի մի՛ բնաւին անտես լիցի մեծ արինադրութիւն եւ հրամանն Տեառն: Եւ եթէ սուկա ինչ ներելով գրեմք, ոչ առ ի լուծանել զառաջնոցն, այլ զի ներմամբն թերեւ յառաջինսն եկեսցեն: Եւ դարձեալ՝ զի ոչ դրով արանդեցաւ դատաստան, յաղագս այնորիկ եւ ոչ յատուկ կանոնեցաւ երդման նորա ապաշխարութիւն, թէպէտ եւ հասարակաբար ամենայն երդմանց սահմանեցաւ: Եւ մեք ոչ եթէ կանոնեմք, զի կանոն լինի ի հանդէս ժողովոյ, այլ զդատաստանս գրով դրոշմել յաւթարեցաք, որպէս ցուցեալ է պատճառն, եւ երդմանց նորա, որ լինի սովորաբար եւ անարէն, կանոնս եւ ապաշխարութիւնս զյառաջագոյն սահմանեալսն:

զնեմք ներմամբ, ոչ զբնան, որպէս եւ ցուցաւ եւ այսոցիկ պատճառն: Եւ եթէ ոչ էր զիրք գատաստանի եւ ոչ երզման նորա սահման, սակայն զհասարակարար կանոնելոցն առաք զտրութիւն զիշմամբ, որպէս ասուցաւ:

5 Եւ արդ, այսպէս, եթէ կամի Տէր, սահմանեսցուի: Եթէ որ ճշմարտութեամբ, եւ ոչ յաղագս զոյզն ինչ իրաց, զխոստովանութեան զարինակ եւ ոչ զուրացութեան երզնու, երեք ամ ապաշխարութիւն եպիսկոպոսն սահմանեսցէ, զի նա է գատատր: Եւ եթէ առ այլ ոք գատաստանն լիցի, որպէս ցուցեալ է, ում եւ կամիցի վարդապետաց<sup>(26)</sup>, որ զիտակ  
10 են իրաց գատաստանին, խոստովան լիցի, եւ նա սահմանիցէ: Ապա եթէ ստութեամբ երզնու զխոստովանութեանն՝ եւթն ամ, եւ սահմանողքն տեսցեն ի շատն եւ ի նուազն ընչիցն եւ զինչն աղքատաց տալ հրամայիցեն: Ապա եթէ զուրացութեան երզնու, մինչեւ ի մահ լիցի ապաշխարութիւնն ըստ կանոնաց առաջնոցն, եթէ ճշմարիտ եւ եթէ սուտ, զի աստ ոչ է  
15 ներել: Բայց իշխանութիւն լիցի սահմանողացն՝ որպէս եւ տեսցեն, զազոտն արասցեն:

Իսկ եթէ կրանատր իցէ, որոց ոչ հրամայեցաւ, եթէ զխոստովանութեան եւ եթէ զուրացութեան, եթէ սուտ եւ եթէ ճշմարիտ, մինչեւ ի մահ լիցի սահմանն: Բայց իշխանութիւն լիցի տեսանել զիտնականաց  
20 յամենայնոք եւ այնպէս կանոնել: Եւ քահանայիցն նոյն կարգ լիցի՝ աշխարհականաց եւ վանականաց: Զի թէ երզումն, որ վասն ծառայից<sup>(27)</sup>, յետ բազում ջանից, որ ոչ զժողովրդականաց յանձն առնուն այլազգիք, լուծանէ ի քահանայութեան պատուոյն<sup>113</sup>, ո՞րչափ եւս աստ: Այլ սակայն իշխան լիցին առաջնորդք ընտրել յամենայնսն, ի սուտն եւ ի ճշմարիտն,  
25 յառաւել նիթն եւ ի նուազն, ի խոստովանութեան երզումն եւ յուրացութեանն եւ այնպէս կանոնել հաստատութեամբ անեպիբ ի կամս Աստուծոյ, եւ եթէ ի ներքոյ բեմի կարգեալ, եւ եթէ յայնս ամենայն: Այլ այնքիկ, որ երզնուն յաղագս այնոցիկ, որոց ոչ իցէ ի դէպ երզնու, եւ եթէ ընդ կրանատրի եւ եթէ ընդ քահանայից, ըստ որում արինակի եւ իցէ,  
30 եւ ինքեանք անգէտ իցեն իմիք պատճառի, նոքա զապաշխարութիւն կրիցեն, յաղագս որոց երզուանն: Եւ թէ որպէս վշտակից եղեն երզմանն, նոյնպէս եւ՝ ապաշխարութեանն, որչափ եւ կամիցին յազոտ ինքեանց զործեն եւ այնոցիկ, ընդ որոց երզուանն: Ապա եթէ ինքեանք զիտակ իցեն իմիք պատճառի եւ յանզգնին, զապաշխարութիւնն, որպէս կամին,  
35 սահմանեսցեն առաջնորդքն, եւ ընկալեալ լիցին ի կամս Աստուծոյ: Ապա եթէ ոք երզնուցու յարանց կամ ի կանանց, որոց ոչ իցէ պատշաճ, որպէս յառաջագոյն ցուցեալ է արինակն եւ ընտրութիւն նոցա, եւ զայս եւս տեսցեն իմաստուն ուղղիչք եւ որպէս կամին արասցեն, զի ոչ ժամանակն է հաճոյ ապաշխարութեան, այլ ջերմութիւն վարուցն եւ յաւժարութիւն  
40 եւ յեղանակ դարձին: Զայդոսիկ յամենայնսն տեսցեն եւ կարճել եւ յերկարացուցանել ուսցին, եւ ընկալեալ լիցի ի կամս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

113 Կանոնք Դաւթի որդոյ Ալաւկայ, ևն

## Գ Լ ՈՒ Խ Թ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՉ Է ՊԱՐՏ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ  
ՅԱՏԵԱՆ ԵՐԹԱԼ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՒԱՏԻՑ Ի ՔՐԻՍՏՈՍ,  
ԲԱԶՈՒՄ ՌԻՆԵԼՈՎ ՄԻՋՈՑ, ՈՐՊԵՍ ՅՈՒՅԱՆԷ

5 Յայտնի է ամենեցուն հեռաւորութիւն հաւատացելոց յանհաւատից։  
յասելն առաքելոյ՝ զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, եւ կամ՝  
զի՞նչ բաժին կայ հաւատացելոյ ընդ անհաւատին<sup>113</sup>, եւ այլն այսպիսիք։  
Յասացելոցս ուսանիմք անբաւ լինել զմիջոցն, այլ զի ընդել արինակաւն  
յայտնիցէ յաղաքս անհնար ելոյն։ Եւ զի երբեմն որդի բարկութեան  
10 կոչէ եւ երբեմն՝ խաւարի<sup>114</sup>, ուսեալ ի Տեառնէ զասելն՝ որ ոչ հաւատայ  
յՈրդի Աստուծոյ, բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերայ նորա<sup>115</sup>, եւ դար-  
ձեալ՝ որ ոչ ծնանի ի շրոյ եւ ի Հոգւոյ, ոչ տեսանէ զարքայութիւն Աստու-  
ծոյ<sup>116</sup>։ Նմանապէս եւ Յովհաննէս ի մատենի անդ իւրում ասէ՝ որ ոչ  
15 խոստովանի զՈրդին Աստուծոյ մարմնով եկեալ յաշխարհ, նա իսկ է  
Նեոնն<sup>117</sup>։ Զոր եւ մարգարէք ամբարիշտս եւ հեթանոսս անուանեն զհեռա-  
ցեալսն յուղիղ հաւատոց։

Զի թէպէտ եւ այժմ մահմետականք զԱստուած խոստովանին Հայր,  
այլ զՈրդի արարած ասելով, նոյն է եւ հեթանոս եւ ընդ նոսա անուանեալ  
եւ համարեալ յուղիղ գիտողաց<sup>118</sup>։ Եւ զի չէ պարտ հաւատացելոց  
20 դատաստանաւ նոցա վարիլ, յայտնի է յառաքելոյ, զոր գրէ Կորնթաց-  
ւոցն, ասելով՝ ոչ ոք է ի ձէնջ այնքան իմաստուն, որ կարիցէ իրաւունս  
ընտրել ի մէջ եղբար իւրոյ, այլ եղբայր ընդ եղբար դատի եւ զայն՝  
ի մէջ անհաւատիցն<sup>119</sup>, եւ եթէ՛ զանարգս եկեղեցւոյ զատաւորս նստու-  
ցանէք<sup>120</sup>, Զի նոքա ըստ կրանից իւրեանց վարին զզատաստանն։ Թէպէտ  
25 եւ սկիզբն յԱրինաց անտի Մովսիսի ունին, բազում ինչ կեղծաւորութե-  
ամբ այլալին եւ ըստ արտօմակաց իւրեանց առնեն։ Սուտ վկայիւք  
վարին, եւ կեղծաւոր ատենիւ, եւ զրպարտող ճարտարաւք, եւ անգեղջ  
երդամար։ Զմեռեալս զրկեն կենդանեացն անուամբ եւ զանժառանգսն  
ընաւին աւար հարկանեն բարեգործելոյ պատճառաւ։ Եւ որքոց այցելու  
30 լինին ազահելով եւ կանանց վարձս տան անխնայ։ Զամենայն գործեն  
չարիս եւ զլուացումն սրբութիւն համարին հոգւոյ եւ մարմնոյ։ Զհեշտու-  
թիւն պատուեն մարմնոյ եւ ոչինչ արգելուն, զոր կամին։ Զարքայութիւնն  
կանամբք խոստովանին եւ զղրախտն՝ պոռնկանոց։ Աստուծոյ սիրելի  
ասեն զմոլար առաջնորդն իւրեանց եւ զբազում շարեաց վկային նորա։  
35 ԶԱստուած պաշտել պարծին եւ հայհոյեն զՈրդի նորա։ Յարութիւն խոս-  
տովանին եւ ոգւոյ ոչինչ շնորհեն։ Հատուցումն ասին գործոց եւ զշիրի-  
մրս զարդարեն։ Զգինի շար ասեն, եւ ոչ ոք է, որ ոչ արբենայ։ Եւ զի մի՛

<sup>113</sup> Բ Կորնթ., 2, 14—16

<sup>114</sup> Եփես., Բ, 3; Փիլիպ., Ե, 8 (°)

<sup>115</sup> Յովհ., Գ, 36

<sup>116</sup> Յովհ., Գ, 5

<sup>117</sup> Բ Յովհ., Ա, 7

<sup>118</sup> Ա Յովհ., Բ, 23

<sup>119</sup> Ա Կորնթ., 2, 5—6

<sup>120</sup> Ա Կորնթ., 2, 4

երկայնեցից: Որոց այսքան աւտարութիւն է վարուց եւ հաւատոյ թիրու-  
 թիւն, զի՛արդ ի դատաստան նոցա զոցի ուղղութիւն ըստ կրանից մե-  
 րոց: Եւ թէպէտ ըստ Աւրինաց բազում ինչ է նոցա, եւ հաւանելի է մեզ  
 5 իբր Աւրինաց Աստուծոյ, եւ ոչ նոցա, զի նոցա ոչ ինչ է ի ճշմարտութենէ:  
 Իսկ ուղիղ հաւատացելոցս ի Քրիստոս եւ բաժանելոցս ի Հրէից, եւ  
 ի բարբարոսաց, եւ ի Սամարացւոց, ի հերձուածողաց եւ յաղանդաւորաց,  
 եւ ի մահմետականաց՝ պարտ է վերագոչն, եւ ճշմարիտ, եւ վշտակից  
 դատաստանաւ վարիլ: Քանզի մեք խոստովանիմք զԾրրորդութիւնն  
 Սուրբ՝ միով աստուածութեամբ, եւ զարութեամբ, եւ փառաւք, եւ զՈրդի  
 10 Աստուած ճշմարիտ, որ եղև մարդ ճշմարիտ, եւ անքակ միութեամբ եւ  
 յաւիտեան, եւ փութամբ գործոց բարեաց: Եւ թէ պատրիմք ինչ ի ցան-  
 կութիւնս աշխարհի՝ ոչ կեղծաւորիմք, այլ խոստովանիմք եւ հաւատամք  
 թողութեան: Զմիմեանս սիրեմք եւ յանցաւորաց թողութիւն շնորհեմք:  
 Զսրբութիւն կամիմք եւ զարշիմք ի մեղաւորաց: Պահոց եւ աղաւթից  
 15 զգոյշ կամք: Ի վերայ հաւատոյ մեռանիմք եւ յարութեան, եւ հատուց-  
 ման, եւ արքայութեանն ակն ունիմք: Եւ զի ոչ յաղագս հաւատոյ եւ գոր-  
 ծոց է ալժմու ճառս, զի բաւանդակ ինչ զրեացուք, այլ զի շափաւորապէս  
 ցուցցուք, եթէ որպէս հաւատովք եւ գործովք ի բազմաց բաժանեալ եմք՝  
 նմանապէս արժան է եւ դատաստանաւ բաժանիլ, Քանզի դատաստան մեր  
 20 ճշմարտութեամբ եւ իրաւամբք պարտի լինել, ո՛չ կաշառաւք, եւ ո՛չ սուտ  
 վկայիւք, եւ ո՛չ պատրող ճարտարովք, ո՛չ զմեռեալս զրկել, եւ ո՛չ կա-  
 նանց վարձանս տալ, եւ ո՛չ զանորդեացն բնախն հանել զժառանգու-  
 թիւն, ո՛չ անզեղչ երգմամբ վարիլ, եւ ո՛չ յանձանձիչ լինել սրբոց կեղծա-  
 ւորութեամբք:

25 Եւ արդ, որ այսքան հեռաւորութիւն է ի դատաստանի, ոչ է արժան  
 ի դատաստան նոցա երթալ քրիստոնէի, ապա եթէ յանդգնի, բազում  
 շարեաց պատճառս տայ դայթակղութեան զմէնչ եւ զարինաց մերոց.  
 զմէնչ՝ ամենեւին տգէտս լինել եւ կամ բազմաւրինակ ախտաւորս, եւ  
 զարինաց՝ եթէ ոչ ճշմարտութեամբ ուսուցանէ, այլ մոլարս եւ խոտոր-  
 30 նակս: Եւ կատարի առ նոսա ասացեալն, եթէ՛ վա՛յ ձեզ, զի անուն իմ  
 վասն ձեր հայհոյի ի մէջ հեթանոսաց<sup>121</sup>: Զբազումս տեսանեմք ի հաւ-  
 տացելոց, յորժամ տեսանեն, եթէ յայլազգիս երթալով դատաստան մեր  
 յաղթութեամբ վճարի, անդ դիմեն, եւ եթէ առ հաւատացեալս լինի բարիոր  
 ըստ կամաց նոցա, առ նոսա իսկ երթան: Զոր չէ պարտ յաղագս ազա-  
 35 հութեան եւ յաղթութեան հաւատացելոց երթալ առ անհաւատան, այլ առ  
 հաւատացեալս, թէպէտ եւ ուղղութեամբ զրկիցի, զի չիրաւացին կալով  
 դատաստան զիտացէ, զի կենաց արժանացի ի Քրիստոս:

Գ Լ Ո Ի Խ Ժ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՅՈՐՈ՞Յ ԱՐԻԵԱԻՔ Ի ԿՐՈՅ ՀԱՆԿԵՐՁԵԱԼ ԵՄՔ ՀԱԻԱՔԵՆԻ  
 40 ԶԻՐՍ ԳԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ ԿԱՄ ՅԱԶԳԱՅ, ՈՐՈՎՔ ՀԱՍՏԱՏԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ  
 ՄԵՐ, ԵՒ ԵԹԷ ՈՐՊԷՍ ՊԱՐՈՒՆԱԿԻ ՏԱՌՍ ԳԱՏԱՍՏԱՆԻ

Հարկաւոր իսկ է այնմ, որ հանդերձեալ է գրով աւանդել զիրս  
 դատաստանի, ցուցանել զգիրս եւ զազգս, յորոց առնուցու, զի յայտ

121 Եսայի, ՄԲ, 5

ճշմարտութիւնն լիցի, եւ մի՛ որ զայթակղիցի մտացածին վարիլ բանիւ։  
Արդ, նախ եւ առաջին՝ հաւատարիմ համարիմք առնուլ եւ ի բնաւուրական արինաց, որովք վարեցան հեթանոսք, զի զզոզս, եւ զսպանոզս, եւ զամենայն շարագործս դատել ուսան։

5 Երկրորդ՝ զի մահմետականք առեալ զբնաւորական արինաց, եւ զգրաւորական առնումք ոչ ի նոցունց, զի ոչ է նոցա, որպէս ցուցեալ է յառաջագոյն, զի զոր ինչ սեփհական է մերոցս արինաց՝ ընդունիմք, իսկ զախտաւոր խառնուածսն ի բաց լուծանեմք, երբեմն իսկ զարինաւորն լրմամբք ընդունիմք Աւետարանին<sup>(28)</sup>։

10 Երրորդ՝ յամենայն ազգաց հաւատացելոց ի Տէր, իբր ի հարազատաց, պարտիմք հաւաքել, զոր լուաք եւ տեսաք։ Այդոքիկ՝ յազգաց, զի զոր ինչ անկ մերոց պիտոյիցս իցէ, յամենեցունց հաւաքելի է։

Իսկ ի գրոց. առաջին՝ յԵլից, յԵրկրորդ արինաց եւ յայլոց եւս զլիսոց, որ է ճշմարիտ աստուածատուր դատաստան, զի ի բազում տեղիս յիշատակէ, ասելով՝ այս են պատուիրանք, եւ վկայութիւնք, եւ դատաստանք, զոր պատուիրեաց ձեզ Տէր<sup>122</sup>։

Երկրորդ՝ ի կանոնական հրամանաց, զի եւ անդ գտանի ոչ միայն զարութեամբք ընտրել դատաստան, այլ եւ յատուկ լինել բան դատաստանի։

20 Երրորդ՝ յամենայն իսկ տաւից ի Հնոց եւ ի Նորոց առնլի է զիմաստս եւ զխրատս, զի եւ ամենայն Կտակարանք զի՞նչ այլ ինչ է, եթէ ոչ խրատ դատաստանի։

Արդ, այսպիսի հաւաքումն յայտ ճշմարտութիւն մեր առնէ կրկնակի արինակաւ։

25 Բայց զիտելի է, զի ոչ միանգամայն պարունակեալ այժմ բաւանդակի զիրքս դատաստանի, զի կանոնական ունի զարութիւն, որպէս ասացեալ է յառաջագոյն։ Զի զոր արինակ ոչ միանգամ եղաւ կանոնք, եւ ոչ ի միում ժամանակի, եւ ոչ ի միողէ, այլ առ սակաւ սակաւ, եւ ի բազում ժամանակս, եւ ի բազմաց։ Զի նախ՝ առաքելականն եղաւ, եւ ապա՝ ի

30 Նիկիայ, եւ նախ բան զնա՝ այլք, եւ ապա՝ յայլսն ժողով, եւ ի զանազան ժամանակս, եւ ի բազում հարց։ Այսպէ՛ս ի դէպ է լինել գրոցս դատաստանի։ Զի այժմ սկիզբն սորա եղել եւ առ սակաւ սակաւ ի դէպ է աճել ի զանազան ժամանակս եւ այլ եւս կարգել ի բազմաց, եւ այսպէս գալ ի կատարումն ամենատես գիտութեամբք։ Քանզի հրաման է կանոնական՝

35 երկիցս ի տարուոյն ժողով լինել<sup>123</sup> եւ զիրս պատահման սխալանաց աշխարհի քննել եւ կարգել կանոնս եւ ապաշխարութիւնս։ Ըստ այժմ պատշաճ է լինել եւ դատաստանիս իրաց, զի որքան նորոգ պատահի իրս, զայն եւս քննել եւ կարգել ի գիրս դատաստանի՝ զկնի զիրաւունս առնելոյ եւ տեսանելոյ։ Եթէ որ միտ դիցէ՝ գտցէ զամենայն իսկ զմատեանս առ

40 սակաւ սակաւ եկեալ ի կատարումն եւ յայլ եւ այլ ժամանակս, եթէ ի միողէ եւ եթէ ի բազմաց, որպէս Գիրք Արարածոցն ի Մովսիսէ ոչ ի միասին գրեցան եւ ոչ ի միում ժամանակի, եւ երկոտասան մարզարէիցն՝ ոչ ի միողէ եւ ոչ ի միում ժամանակի։ Նոյնպէս եւ այլ մարզարէութիւնքն, զոր եւ

<sup>122</sup> Ղևտ., ԻԶ, 46; Թիւք, 1Զ, 13; Բ օրին., Զ, 1 և այլն

<sup>123</sup> Կանոնք Նիկիական Ե, Կանոնք Անտիոքայ Ե, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 119—120, 218

5 յայտ առնէ Սասլիաս յասելն՝ եւ եղեւ յամին, յորում մեռաւ Ոգիա<sup>124</sup>, նաեւ յայլ եւս թագաւորացն պատմլ ի ժամանակս զմարգարէութիւնսն լինել: Ըստ ալսմ աւրիկանկի եւ Աւետարանքն զրեցան ի շորից աւետարանչացն եւ յայլ եւ ալ ժամանակս. նմանապէս շորեքտասան թուղթքն առաքելոյն

10 Պաւղոսի, բազում եւ ալ եւս մատեանք ի վարդապետաց եւ ի հարց: Ըստ ցուցելոցս յեղանակի լիցի եւ ալս ձեռնարկութիւն տառի, եթէ ի մէնջ եւ ոչ ի միում ժամանակի, եթէ ի բազմաց եւ յայլ եւ ալ եւս ժամանակս, իշխանութիւն լիցի լնուլ միայն զթերին՝ ուղիղ տեսութեամբ եւ անպարսաւ իրավամբք:

15 Ի քանզի արժանավայելուչ այն իսկ էր, զի ընդ բազումս քննելով յայսոսիկ ձեռնարկէաք, զսոյն զայս բաղձանաւք հայցէի, բայց սակայն ոչ պատահեաց ըստ բազում պատճառի: Զի թէ դատաւորաց երկուց եւ երկից ի միասին լինել ի դատելն իրաւունս համարեցաք, որչափ եւ աստ ի դէպ էր լինել բազմաց ի միասին դատել զիրաւացին իրս եւ ապա

20 զորով դրոշմել: Արդ, զայսոսիկ զտեղի լնումք զրոց վկայութեամբ, զորս ի զարկութենէ նոցա առնումք, եւ զբազումս՝ յեղելոց իրաց դատաստանաց իսկ նոցունց, եւ ի տեսութենէ եւ ի լրոյ քննութեանց հաւաստի իրաւանց՝ ըստ իւրաքանչիւր ազգաց: Եւ յայսպէս անպարսաւ լինիմք:

Գ Լ Ո Ւ Ն Ժ Ա

ՅԻՇԱՏԱՍԿԱՐԱՆ ՍԱԿԱՍՈՒԹ

20

Եւ զի թէսլէտ բնաւորական է ամենեցուն լաւին ցանկալ եւ անսխալ յիրս ամենայն լինել, սակայն ոչ է հնար, որ ի լինելութեան եւ յասլականութեան է բնութիւնս, եւ ալք՝ յոյժ քաջաբանից, ո՞րչափ եւ մեզ իցէ, որ ամենայն ինչ գործ սխալեալն եղեւ եւ զրեթէ ի սկզբանէ: Վասն որոյ

25 զամենեւեան զկնի մեր եկեալսդ՝ զհարս եւ զեղբարսդ ի զանազան ժամանակս, աղաչեմ մաղթանաւք՝ զյլով եւ զոչ սակաւ սխալանս ուղղեսցիք պատահեալք յընթերցման տառիս եւ զիրաւացի թերին լըցչիք<sup>(29)</sup>, որպէս վերագոյն ծանուցաւ: Զի հասարակ եւ ի վեր քան զհասարակ սխալանացն ունիմ զպատճառ. նախ՝ զբիծս անձին, զոր զներգործութիւն խափանէ զՀոգոյն. եւ ապա՝ զախտս մարմնոյ. եւ զի յայտ

30 անվարժութիւն համարէն է սեռի եւ յստկի. եւ դարձեալ՝ անպարապութիւն, զի ընդ ստեամբք ախտաժէտիւ զմանկունս ունէի բանի. եւ զպանդրխտութիւն եւ զանտեղութիւն. եւ զանտեղեկութիւն զըշտութեան. եւ զհակառակութիւն ներքնոց եւ արտաքնոց. զգայութեանց տկարութիւն եւ զմարտս

35 դիւաց<sup>(30)</sup>. եւ զպակասութիւն գործեաց գծագրութեան. եւ զաղքատութիւն մատենից, յորոց զնիւթս հաւաքել ի դէպ էր բանից: Ապա եթէ ընտանի ազգիս բարոյիւք սխալանացն լինիք պարսաւիչ եւ ոչ ուղղիչ, զիտելով զգործ Հայկազնեայցս զայդոսիկ, միանգամայն զչափ անձին, անմեղադիր ձեզ յայդոսիկ լինիմք: Ապա եթէ սիրով մնլոցս պատահիք բանից եւ

40 խնամիչ կամաւք զթերին լնուցիք, ի Տեառնէ զհասուցումնն առջիք բարեաց եւ զգանձս բանից ձերովք երկամբք յեկեղեցիս ամբարեսչիք՝ յիշատակ բարեաց մնալ ձեզ ի նմա:

124 Սասլի, 2, 1

Բայց ձեռնարկութիւն մեզ յայսմ իրողութեան եղև ի թուականութեանն Հայոց ՈՂԳ եւ շրջանին երթալոյ ի բաց ՃԱ, որ կոչի Փոքր, իսկ Հոռոմին՝ ՆԾ<sup>(31)</sup>, յամս անիշխանութեան թագաւորութեան մերոյ, ի վազընջուց ժամանակի մնացելոց սակաւ իշխանացս ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ՝ որդոյ Վախտանկայ կրանաւորեցելոյ, եւ որդոյ նորա Վախտանկայ<sup>(32)</sup>, ի ղղեկին, որ անուանեալ կոչի Հաթերք, գլխաւորի այլոց իշխանացն, եւ կողմանցն Կիւղիկեայ մեծի իշխանին Ռորենի<sup>(33)</sup>, յամի, յորում մեռաւ յաղթող թագաւորն Վրաց Գեարգեհ<sup>(34)</sup>, ի հայրապետութեան տեառն Գրիգորի<sup>(35)</sup> Հայոց Մեծաց եւ ի դիտապետութեան տեառն Ստեփաննոսի<sup>(36)</sup> տանս Աղուանից, յաշխարհս Առանայ, ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակայ<sup>(37)</sup>, յանապատի եւ յեղբայրանոցիս անուանեալ Դասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնաւորութեամբ հար Յովսեփայ եւ եղբար Պաղոսի յորդորմամբ յառաջարկութիւնս:

Բայց գծագրութիւն յիշատակիս ի Նախագրութիւն գրոցս դատաստանի եղև, զի կատարած սորա ի ձեռն մեր միանգամ ոչ է, որպէս ասացեալ է կանխաւ զպատճառն: Եւ արդ, որքան է կար՝ ի գործ անկանիմք հիւսել ղկնի զիրս դատաստանի: Ընդ որս եւ զայս եւս մարթեմք. եթէ պատահի եւ հաճոյ ոմանց թուի յարինակէ աստի փոխել զիրս դատաստանի, ընդ նմին փոխեալիք եւ ղյիշատակս զայսորիկ, յիշատակել սորաք զմեզ, որով եւ դուք համարէն յիշեալ լիջիք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յարիտեանս ամէն:

Կատարեցաւ Նախագրութիւն գրոցս դատաստանի ի ճառս մետասան:

ՍԿԻԶԲԵՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ Ի ԿԱՄՍ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ՆՈՐԱ ՅԻՍՈՒՍԻ  
ՔՐԻՍՏՈՍԻ, ԶԱԻՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՇՆՈՐՀՕՒՔ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՅԱՂԱԳՍ ՎԻՃԱԿԱՅ ԴՍՏԱԻՈՐԱՅ

5 Եկեացուք այժմ իսկ ի զործ դատաստանի՝ զիտելով, զի ըստ քաղաքաց դատաւորս հրամայէ լինել Մովսէս եւ նոցունց զպիրս<sup>125</sup>, յորոց յայտ է, զի ոչ զամենայն զրոզ աւանդեաց Մովսէս զիրս դատաստանի, այլ տեսակս ետ սակաւս եւ ի դատաւորս ապաստան արար ի զանազան իրս եւ ի ժամանակս: Եւ վասն այնր զզպիրս նոցա կարգեաց, զի զեղեալ  
10 դատաստանս գրով պահեսցեն: Ըստ որում եւ մերս եղիցի, որպէս եւ յառաջ իսկ ասացաւ<sup>126</sup>:

Եւ արդ, նախ զայս եւս տեսցուք, զի հարկաւոր իսկ է դատաւորաց յաղագս աշխատութեան դատաստանին թոշակս մտից լինել, զի մի՛ անպտուղ զործն նոցա կարծիցի, եւ տաղտկացեալ ի բաց կայցեն ի դատելոյ: Զի թէպէտ բազում անգամ Մովսէս զդատաւորս յիշատակէ եւ զթոշակս նոցա ոչ առնէ յայտ, զի ոմանք Ղեւտացիք իսկ էին և առանձինն էին, եւ նոցա քաղաքս եւ հասս ի ժողովրդենէ անտի: Եւ որք յայլոց ազգաց ի դէպ է, թէ եւ ի թագաւորաց եւ յիշխանաց կարգեալ իսկ լինէին՝ ոչ առանց վիճակի, եւ եթէ յիշխանաց պատահէին՝ նմանապէս զմասն ունէին  
15 դատողութեան: Եւ զի այժմ ոչ ունիմք թագաւոր և իշխան, զի այսպիսի բարեկարգութիւն ի ձեռս նոցա լիցի, զայսոսիկ ի հայրապետէ մերմէ լցցուք, զի նա է զլուխ դատաւորաց և կեղեցուց<sup>(38)</sup>:

Եւ այսպէս լիցի. զի թէ մեռանիցի այր ոք, եւ ուստր ոչ իցէ նորա եւ ո՛չ զուստր, եւ ո՛չ այլ ոք ի ցեղէ հարց նորա, ժառանգութիւն նորա  
25 դատաւորաց լիցի թոշակ, զի ինքեանք կերակրեսցին եւ հոգեւորապէս ի զործ յեկեղեցի արկանիցեն<sup>(38)</sup>: Բայց ըստ այսմ արիւնակի արասցեն. զի եթէ ի սեփհական վիճակի իցէ վախճանեալն անժառանգ, հայրասպետին եղիցի ժառանգութիւնն, եւ եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ՝ յերիս բաժանեսցի՝ հայրապետին, եւ եպիսկոպոսին, եւ քահանայից ժողովրդեանն: Եւ եթէ վարդապետ ոք ի նահանգին իցէ եւ զնոյն աշխատութիւն կրէ  
30 դատաստանի, մասն լիցի եւ նմա, նովին շափով՝ այլոցն<sup>(38)</sup>:

Իսկ աշխարհականաց դատաւորաց մի՛ լիցի մասն, զի ոչ բնաւորականք են դատաւորք, այլ պատահմամբ: Զի թէ ոք զկնի վճարման դա-

<sup>125</sup> Բ օրին., ԺՁ, 18

<sup>126</sup> նախադրութիւն, զլուխ Ե, 2

տաստանին, տեսեալ զաշխատութիւն նոցա, տացէ ինչ նոցա, այնու  
շատացին, այլ մի՛ ինչ արինաւոր լիցի նոցա, զի առաջնորդաց արինա-  
տրն թողացաւ յազազս հոգեւոր հատուցմանն:

5 Ապա եթէ կրանաւոր իցէ վախճանեալն ի վանս, ըստ մարմնոյ եղ-  
բայր, եւ այլ ազգատոհմ, եւ կամ հայր մի՛ լիցի՛ նորա ժառանգ, այլ՝  
հոգեւոր եղբարք եւ հարք, զի ի մարմնաւորացն վաղ ուրեմն հրաժարեաց:  
2 Աի կամ վարդապետ իցէ, եւ կամ աշակերտ նորո, եւ կամ եղբայր հոգեւոր  
եւ կամ ուսումնակից՝ դոքա լիցին ժառանգ եւ զհասս մահուանն եւ այլոց  
ժախից հարն տայցեն վանաց, զի մոնազն ի նմանէ ձեռնադրի: Յայսմա-  
10 նէ մի՛ լիցի դատաւորաց: Այլ եթէ ոչ լիցի յայգցանէ ոք, հայրն լիցի  
ժառանգ եւ զհասսն տացէ եպիսկոպոսին:

Իսկ հաւատաւոր կանայք, եթէ յաշխարհական քահանայէ ձեռնա-  
դրեսցի եւ մաւտ ի նա վախճանեսցի, նմա լիցի. եւ թէ ի վանս ձեռնադրի  
եւ մերձ ի նոսա վախճանի, նոցա լիցի. մի՛ եպիսկոպոսն ազահիցէ ի  
15 նոսա:

Իսկ եթէ քահանայ իցէ վախճանեալ կրանաւորն, եւ ժառանգ իցէ  
նմա, որպէս ասացաւ՝ զզենմանն հար վանացն տայցեն եւ զայլսն՝  
եպիսկոպոսին, զի նա է ձեռնադրող նորա եւ դատաւոր. եւ եթէ չիցէ  
ժառանգ, եպիսկոպոսն եղիցի, զի նա է հայր նորա, եւ զընծայս մահուն  
20 վանացն տացեն եւ զայլսն՝ կաթողիկոսին:

Այս դատաստան իրաւանց կացցէ եւ յազազս սենեկաւորացն, իսկ  
միաբանակեցացն՝ ամենայնի ինքեանք են ժառանգք, բայց զքահանայի  
հանդերձն տացեն եպիսկոպոսին, զի նա է ձեռնադրող նորա: Եւ այս  
կրկին իրաւունս է յազազս վիճակի եւ դատողութեան:

25 Նմանապէս թէ եպիսկոպոս փոխիցի, եւ ժառանգ իցէ, որպէս ասա-  
ցեալ է, զվախճանին հասոյթս, եւ զհանդերձն, եւ զզաւազանն, եւ զմիւ-  
րոնն, եւ զայլ ընծայս տայցեն հայրապետին. ապա թէ չիցէ ոք ժառանգ՝  
հայրապետն եղիցի, զի նա է ձեռնադրող եւ դատաւոր նորա, եւ զհասս  
մահուն տայցէ դրան եպիսկոպոսին, եւ զհանդերձն, եւ զզաւազանն, եւ  
30 զմիւրոնն՝ այնմ, որ ձեռնադրիցէ, եւ թէ ում կամեսցի:

Իսկ տան հայրապետին տանիցն զենմունքն իւրոյ եկեղեցւոյն  
սպասաւորին եղիցի, բայց ննջեցելոյն յիշատակի եւ ազգատոհմին պա-  
կի զենմանցն, եւ տոհմին վախճանելոցն զենմանցն, եւ ընծայիցն հա-  
սոյթս բաժանեսցի ի դրան եպիսկոպոսունսն եւ ի վարդապետն, որ մերձա-  
35 տր իցէ տան հայրապետին: Եւ եթէ այլք ի վարդապետաց ի ժողով անդ  
կոչեսցին, նմանապէս մասնաւորեսցին զոյգ:

Ապա եթէ վախճան եւս հայրապետին հասանիցէ, ամենայն զենման-  
ցրն հասոյթք եւ այլ եւս ընծայքն ի ժառանգաւորաց նորա հոգեւորաց  
զոյգ բաշխիցի, ժողովելոց եպիսկոպոսաց, եւ վարդապետաց, եւ հարց,  
40 եւ քահանայից այլ եւս տացի ընծայ:

Այդ լիցի իրաւունս ի դատաւորս եկեղեցւոյ. եւ մի՛ ոք ի վերայ  
իրաւանց ընկերին ելցէ, ապա թէ ոչ՝ զդատաստան պարտի անաշառ. եւ  
անկաշառ:

Ք Լ ՈՒ Խ Բ

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱԻՈՐԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ  
ՈՐԲ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՅԱ

5 նախ զի եղաք զվիճակ դատաւորաց եւ զգատաստան նոցա, զի առաջին է պատիւ նոցա եւ հարկաւոր: Իսկ երկրորդ զիցուք զգատաստան թագաւորաց, զի թէ եւ մեր ոչ է, յաղագս յարմարութեան եղաք զգատաստան նոցա<sup>(33)</sup>:

10 Բայց զիտեւի է, զի թագաւոր տիրապէս Աստուած է, եւ անուանակիր միայն մարդիկ, ոչ ճշմարիտք: Սակայն թագաւորք այնքիկ անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն համանգամայն եւ յայլոց հարկս առնուն յաղգաց, եւ եթէ ոչ՝ ոչ հարկիցին<sup>(39)</sup>:

15 Եւ եթէ պատահիցի ուստերս լինել նմա եւ զստերս, զոչդ եւ արգար զվիճակ թագաւորութեանն բաժանիցէ<sup>(39)</sup>: Զի թէպէտ եւ զանգրանիկն ի դէպ է թագաւորեցուցանել, այլ զյառաջադէմն յաթոռ նստուցէ արքայութեանն: Եւ որքան եղբարք իցեն նորա, որդուց նորա ոչ է իրաւացի առնուլ թագաւորութիւն, եւ ի հատանել եղբարցն սպա նստին որդիքն: Եւ եթէ զուստր իցէ նորա, նահապետութեան տուն կարգեսցէ հանգերձ արամբն, կէս եղբար մասն առցէ<sup>(39)</sup>:

20 Եւ եթէ մահուամբ բարձցին թագաւորք, եւ որդուց իցէ որդի եւ զրստեր, որդուց որդին առցէ զաթոռն եւ ոչ զստերն. եւ որքան յորդուցն իցէ ի ծննդոց, զստերն մի՛ առցէ, ապա եթէ առցէ՝ յաւատարս համարեսցի: Զի այդպէս մերն արքայ Աբգարիոս կարգեաց զտուն թագաւորութեան Պարսից<sup>(40)</sup>: Եւ նահապետս նուց ընդ որդիսն եւ զստերն ետ մասն վիճակի զկողմն հարաւոյ<sup>127</sup>, ըստ որում եւ կանայք թագաւորեն կողմանցն, զոր եւ Սողոմոն<sup>(41)</sup> երբեմն էած գղջիսոյն հարաւոյ<sup>128</sup>, եւ Տէր իսկ վիկայէ<sup>129</sup>: Սակայն զանգրանիկն պատուէ բնտիր վիճակաւ, զոր եւ Աւրէնքն կրկին հրամայէ տալ<sup>130</sup>: Ի դէպ է թէ եւ զստերն իբր կէս եղբար տուց վիճակ, սակայն թագաւոր է իբր նախնի եղեալ:

30 Իսկ եթէ ուստր ոչ իցէ, եւ զուստր իցէ, տացէ զթագ իւր զստերն: Եւ ունիմք հաստատուն վկայ զԱւրանն. եթէ ոք մեռանիցի, ասէ, եւ զուստր իցէ եւ ոչ ուստր, զժառանգութիւն իւր նմա տայցէ<sup>131</sup>: Եւ առեալ այլ՝ զթագ իւր տալ նմա իշխան լիցի, բայց զկնի մահուան նորա իբր յաւատարս համարեսցին ծնունդք նորա: Ապա թէ ոք ասիցէ՝ զիա՞րդ ոչ ըստ արիւնակի կողմանն հարաւոյ իշխան լիցի ինքն թագաւորել, այլ առն

35 տալ, զիտասցէ, զի անդ սովորութիւն գայնսսիկ յառաջէ, այլ ըստ գրոց գատաստանի գայգոսիկ հաստատուն կարծեմ:

Եւ եթէ կտակ արասցէ արքայ, որքան կենդանի է, իշխան լիցի փոփոխել ըստ արժանուցն, զի կտակ յետ մահու հաստատուն է, ըստ առաքելոյ<sup>132</sup>, որպէս արքայ Կոստանդինոս կտակաւ թագաւորեցուցանէր

127 Մնունդք, Զ—ԺԱ  
128 Գ թագ., Ժ, 1: Բ Մնաց., Թ, 1  
129 Մատթ., ԺԲ, 42: Ղուկ., ԺԱ, 31  
130 Բ օրին., ԻԱ, 17. տե՛ս նաև հ. ԿԹ  
131 Թիւք, Իէ, 8  
132 Եբբ., Թ, 17

գորգիս իյր: Եւ զսահմանսն լըրումբք եւ գետովք հաստատեցէ եւ արծա-  
նարք, ըստ տոացին թողաւարացն:

5 Կիւ շիցէ բնութին ժառանգ ի ցեղէ հարց, իշխան լիցի տալ զթագ  
խոր ասարի՝ ոչ ըստ կրտսնից<sup>(31)</sup>, սրպէս սրպի թաղաւորին Հնդկաց եւ  
Մակեդոնացին Աղեքսանդր, եւ զայլ եւս ժատակարարութիւն թողուլ ի Տէր:  
Իսկ եթէ ի տանէ հարնորա իցեն ժառանգք, որք մերձաւորք իցեն՝ նոքա  
լիցին: Եւ յորդոց<sup>(42)</sup> թէ իցեն, զմի առ ինքն կայցի, ի բացեայ միշտ եւ  
զայլսն, մինչև զմին ժառանգեցուցանէ զանկաւորն, հեռի բնակեցուցլ,  
որպէս եւ զայս սովորութիւն կալան ասաշինքն թաքաւորք<sup>132</sup>: Այս իրաւունք  
10 դատաստանի յասացեալս ամենայն եղիցի իշխանաց եւ ազատաց միան-  
գամայն<sup>(39)</sup>: Բայց ի թաղաւորեցուցանելն մի՛ առանց հրամանի հայրա-  
պետին լիցի:

Եւ եթէ շինիցէ քաղաք եւ կամ գղեակ, եւ աշխարհագիր եթէ առնիցէ,  
եւ եթէ դահեկան եւ դրամ հաստատիցէ եւ կամ հատանիցէ, իշխանութիւն  
15 կայցի ըստ իրաւանց դատաստանի<sup>(39)</sup>: Այլ իշխանաց ոչ է իրաւացի հա-  
տանել զտահեկան եւ դրամ, եւ եթէ հատանիցէ, հրամանաւ թաղաւորին  
լինիցի. նոյնպէս՝ շինել քաղաքս եւ բերդս:

Կամուրջս շինել մեծամեծ զետոց՝ թաղաւորաց լիցի, եւ սյանդոկի  
եւ իջաւանաց տունս. եւ այնոցիկ՝ հրամանաւ նոցա լիցին:

20 Իշխանք զթաղաւորաց մի՛ զպեցցին զգետ, մինչև նոքա հրամա-  
լեսցեն եւ կամ տայցեն պատիւս:

Առաջի արքայի մեծամեծ իշխանք մի՛ նստցին, բայց եթէ հրամա-  
լիցէ: Ի սեղան արքայի, բայց ի հայրապետէ, մի՛ ոք կերիցէ, եւ յորժամ  
նա կամիցի:

25 Այլ յարբունիս ինքնիշխան լիցի հայրապետն նստել, այլ ոչ արքայ՝  
ի տուն հայրապետի:

Մի՛ լիցի հաւատացեալ ի Տէր թաղաւորի զարէն հեթանոս թաղաւո-  
րի հարձաւք վարիլ, այլ արինաւոր լիցի ի կարգ ամուսնութեան, զի  
իշխանութիւն է նմա բնդ հայրապետի ի բեմի կալ, այլ զձեւ առցէ  
30 բարեպաշտիցն Ովսիայ<sup>134</sup>, եւ Եղեկիայի<sup>135</sup>, եւ զնոյն ինքն Դասթի<sup>136</sup>,  
զԿոստանդիանոսի եւ զԹէոդոսի, զՏրդատայ եւ զնմանեաց նոցա:

Դատաստանաւ վարեսցի յամենայն իրս եւ ի գործս հաւատացեալ  
թաղաւոր:

Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ  
35 սուրն վերասցի, մի՛ տացէ առնել սպանումն, բայց եթէ որ պատճառ  
պատերազմին իցէ յայլազգեացն<sup>(39)</sup>:

Եւ եթէ զբաղաք պաշարիցէ այլազգեաց, նախ ի խաղաղութիւն զնոսս  
կոչիցէ<sup>137</sup> մի անգամ, եւ երկիցս, եւ երիցս. եւ եթէ ոչ կամիցին զայլ,  
եւ բնաւբար առցէ, զընդդիմացեալսն սպանեալ՝ զայլսն ընդ հարկի կալ-  
40 ցէ. ապա թէ անձնատուրք լիցին, յայլսն հարկիցին, այլ մի՛ ի զլուխս<sup>(39)</sup>:

133 Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 118

134 Դ թագ., Ժէ, 1, 2 և այլն

135 Դ թագ., ԺԸ, 1-6 և այլն

136 Ա, Բ, Գ թագ.

137 Բ օրին., Ի, 10

Եւ զծառաւորնկս ոչ հարկանել ի սլաշարել քաղաքի՝ զպտղաբերս<sup>138</sup>,  
 Զբարգաքատուրս եւ զբերդատուրս, եթէ ճշմարիտ իցէ եւ յայլազգեաց,  
 մատնիցէ մահուս Ասլա եթէ բարական իցէ փրկել զանձն, գկին եւ զման-  
 կունս յարբունիս կալեալ վաճառիցէ եւ տարազիր ի ժառանգութենէ  
 5 արասցէ՝ խրատեալ յաշս: Ասլա եթէ շարն ի գլուխ ելանիցէ եւ ընդ ձեռամբ  
 զայցէ, մի՛ ապրեցուցէ: Իսկ եթէ քրիստոնեայ եւ հանդերձեալ իցէ  
 յայլազգիս մատնել եւ եթէ ի քրիստոնեայս, նոյն դատաստան մահու  
 է: Բայց վասն մարդասիրութեան մեր տրինացս խրատեսցի յաշս, կամ  
 ի ձեռս, կամ յայլս, զի ապաշխարութեան հասանիցէ եւ մի՛ կորիցէ, թէ ի  
 10 գլուխ ելեալ իցէ շարն եւ թէ ոչ:

Այլ զգող զանձուն տէրունի. զայլազգի՝ խրատեալ յաշս կամ ի ձեռս,  
 եւ զկին, եւ զորդի, եւ զծառանգութիւն յարբունիս կալեալ տարազիր  
 արասցէ, բայց զքրիստոնեայ՝ զգողանն առեալ եւ զինքն, եւ զկին, եւ  
 զորդիսն յազգատոհմ եւ ի քրիստոնեայս վաճառեալ, թողցէ: Ասլա թէ  
 15 այս ոչ իցէ, խրատիցի յաշս կամ ի ձեռս եւ թողցի<sup>(30)</sup>:

Իսկ եթէ սպանանիցէ այլազգի զքրիստոնեայ կամաւ, սպանցի փո-  
 խանակ նորա, ապա եթէ ակամայ՝ խրատեսցի ի ձեռս<sup>(30)</sup> եւ զգին  
 արեանն տուժեսցի:

Իսկ գին՝ արեան մարդոյ ըստ արժանւոյն գնոյ ոչ է, զի գործ է  
 20 Աստուծոյ եւ պատկեր, եւ յարուցանել միայն Աստուծոյ է զմեռեալն: Բայց մի՛ ոք զՅովսեփայ եւ զՏեառն զինն կարծիցէ ճշմարիտ զքսան<sup>139</sup>  
 եւ զերեսուն<sup>140</sup>, զի գող իսկ էին վաճառողքն: Այլ հանդիպողութեամբ եւ  
 ըստ կարի ի դէպ կարծեմ երեքհարիւր վաթսուն եւ հինգ լինել գին  
 դահկանի<sup>(43)</sup> ըստ ժամանակի վարման<sup>(29)</sup>: Այդ գին ըստ բանականի  
 25 շնորհին, եւ ըստ քրիստոնէութեանն կրկին լիցի եւ ըստ աստիճանացն  
 յաւելցի, իսկ այլազգեաց՝ յերից մասանցն մինն լիցի, իբրու զի ոչ զբանի  
 ունել շնորհ եւ ոչ զքրիստոնէութեանն: Այդ յայդոսիկ լիցի դատումն:  
 Ասլա թէ չիցէ կար հասուցանել, վաճառեսցի եւ սպանելոցն հատուցի,  
 եւ տունն յաւար յարբունիս լիցի:

30 Այլ թէ քրիստոնեայ զայլազգի սպանանէ կամաւ, զգին արեանն տու-  
 ժեսցի ըստ ցուցելոյդ արինակի, եւ եթէ ակամայ՝ զկէս գնոյն, եւ գինն  
 յարբունիս լիցի, բայց յերից մասանց զմինն տացի իւրոցն:

Իսկ եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ սպանցէ կամաւ, զգինն տու-  
 ժեսցի արեան՝ իւրոցն, եւ արքայի տուգանն ըստ կարի լիցի: Եւ թէպէտ  
 35 ըստ Արինացն մահու արժան է<sup>141</sup>, այլ ի ձեռս խրատ առեալ՝ ապաշ-  
 խարութեան հասցէ: Եթէ աղքատ իցէ, վաճառեսցի իւրովքն յազգատոհմ  
 եւ հատուցէ: Ասլա թէ ակամայ՝ զկէս գնոյն իւրոցն տացէ եւ արքայի՝  
 ըստ կարի տուգանք, բայց խրատ մի՛ առցէ: Զայդոսիկ թագաւոր դատի-  
 ցի եւ զայլ եւս դատաստան հասարակաց ի դատաւորսն թողցէ<sup>(44)</sup>, եւ  
 40 զանյայտս զբնաւ՝ ի խոստովանութիւն ուղղաց:

Իշխանաց մի՛ լիցի զսպանողսն սպանանել առանց հրամանի թագա-  
 ւորին, իսկ զգողսն խրատել իշխան լիցի:

<sup>138</sup> Բ. օրին., Ի, 19

<sup>139</sup> Մնունդք, Լէ, 28

<sup>140</sup> Մատթ., ԻԶ, 15

<sup>141</sup> Եւր., ԻԱ, 12: Ղեւ., ԻԳ, 17

Եւ ազատ տոանց հրամանի իշխանի մի՛ իշխեսցէ զդողուն խրատել: Բայց ասելի է զարիւնակ բաժանման զերուոյն եւ տարիւն: Եթէ սուսահի թաղարորի երթալ յատր ամենայն զսուրաք, զրոշիւք եւ փողովք յաշխարհ թշնամեաց եւ աւար սուեալ զարձցի, ոսկի դոեալ յաւարին՝ արքայի լիցի: Բայց մի՛ ելզմամբ առցէ, այլ քարոզ լիցի, զի թէ յետոյ առ ոք գտցի, ընդ միւս եւթն տուժեսցի: Բայց տասանորդս յեկեղեցին տացէ<sup>(39)</sup>:

Եւ զերուոյն եւ աւարին կէսն արքայի լիցի, եւ տասանորդեսցէ յեկեղեցիս, եւ ի կիսոյն՝ զաւրացն: Իւրաքանչիւր իշխանք զնոյն բաժին արասցեն եւ նոքա եւս նախ տասանորդեսցեն յեկեղեցիս իւրաքանչիւր<sup>(39)</sup>:

Իսկ եթէ լիցէ արքայ ընդ զաւրս, եւ իշխանք ինքեանց դրաւչիւք եւ փողովք իցեն, ոսկին նմանապէս արքայի լիցի, եւ ի զերուոյն եւ յաւարէն՝ տասանորդ արքայի, իսկ յեկեղեցիսն՝ յիսներորդիցեն, որ է ըստ Աւրինացն<sup>142</sup>:

Փողս եւ դրաւչս տալ իշխանի՝ ի վերայ զաւառի եւ բերդի լիցի:

Իսկ զողս թագաւորի եւ իշխանի ոչ վայել է, բայց միայն լրտեսս: Ապա թէ արտաքոյ իրաւանց ելցեն եւ առաքեսցեն, վասն հրամանին կէսն նոցա լիցի ի մարդոյ եւ յանասնոյ, իսկ եթէ առանց հրամանի երթիցեն, երկու բաժինն երթովին լիցի, զի կամաւք ի մահ զիմեցին<sup>(39)</sup>: Զայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի զրոց. զի ի պատերազմի զաւրականին մեռանել՝ անպարտ է տէրն: Իսկ զող առաքեալ եւ մեռեալ՝ պարտապան արեան է տէրն, իսկ իւրովի երթողին՝ ոչ: Եւ զոր առաքեսցէ եւ ըմբռնեսցի, զնեսցէ, եւ զոր ոչն առաքեսցէ, ինքնին զնեսցէ զանձն:

Զաւրական ի պատերազմի զոք ըմբռնեալ՝ զգեստն եւ զէնքն ամենայն նորա լիցին, այլ զրահն տեսան լիցի<sup>(39)</sup>:

Արծաթ յաւարին իշխանացն լիցի, պղինձ եւ երկաթ եւ նման նոցա՝ զաւրացն: Դիպակ, կերպաս ամենայն արիւնակաւ թագաւորին լիցի, եւ առերեղէն պատուական եւ կտաւ՝ իշխանացն, եւ անարզ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զաւրացն<sup>(39)</sup>:

Իսկ զհարկս զաւառաց եւ ազգաց թագաւորք եւ իշխանք արդարութեամբ առցեն. մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւնս, կալցեն, զի ընդ ամենայնի համարս ունին տալ, զի յԱստուծոյ կարգեցան ի փրկուցութիւն եւ ի պահպանութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն:

Եւ արդ, այսպէս լիցի: Զանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ արիւնազրեաց յԵզրպտոս<sup>143</sup>, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւոնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի նախ ինքեանց էր ժառանգութիւն, եւ ոչ էր հինգերորդ: Սոյնպէս եւ այժմ լիցի, զի արծաթազին անդաստան, եւ այգեստան, եւ բուրաստան մի՛ լիցի ընդ հարկաւ հնգեկին, նմանապէս՝ ջրաղաց եւ տուն<sup>(39)</sup>: Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի եւ կամ ընդ վաճառի հարկիցեն, զի ոչ է հարկ զլիսոյ քրիստոնէից, բայց այլազգեաց, յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն:

Բայց անդաստանք ջրարբիք լիցին ընդ հնգեկաւ, այլ ոստինք՝ տա-

142 Քիւր, Ա, 30

143 Մնունդք, Խէ, 26

տանորդեացին, զի հող միայն է իշխանի և թագաւորի եւ ոչ ջուր: Սոյն-  
պէս՝ ոտախնք այդիք եւ ծառաստանք<sup>(39)</sup>:

Այսպէս եւ յաւորս շարտթի յեկեղեցի մին պործիցլ իշխանի եւ  
տէրանի, այլ աւելի աշխատեցն զձեռամբ անկեալն տնիրատութիւն մեծ է:

5 Եզին առանձին այլ հարկ մի՛ լիցի, զի այն իսկ է, զոր աշխատեալ  
հնգեկի:

Կովու լրար եղն միայն լիցի:

Արաւի հարկ այլ մի՛ լիցի, զի այն իսկ են արաւականք, որ  
հարկին<sup>(39)</sup>:

10 Ոչխարք ի գառինսն տասանորդեացին. թէ հաճոյ իցէ տէրունեացն՝  
ընդ ոչխարի փոխանակիցէ ըստ արժանւոյն<sup>(39)</sup>:

Զիոյ, եւ ջորւոյ, եւ իշոյ մի՛ լիցի հարկ, զի նոքաք բազում անգամ  
ծառայէ զտէրունիսն<sup>(39)</sup>:

15 Ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ եւ յաւորս տաւնից: Մի՛ լիցի  
չէքչէք բազում, այլ շիք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի եւ սահմանդ ի  
բազում եւ յաւելորդ սովորութեանց եղեւ:

Առանց դատաստանի մի՛ տուժեսցի կամ տուգանիցէ, այլ ըստ կա-  
րի լիցի՝ յանցաւոր ի տէրունիսն գտեալ, իսկ յայլս յանցաւոր գտեալ՝  
դատաւորաք վճարեսցի:

20 Անդատաստան է իշխանաց հարկել զհաւատացեալս, զոր հարկեն  
այլազգիք, զի յայլադրեաց հարկ արժան է առնուլ եւ ոչ ի նոցունց, որպէս  
առնեն Վիրք ընդ ձեռամբ անկելոցն:

Թագաւոր իշխանի տուեալ գաւառ, եթէ շինէ ըստ հրամանին նորա  
բերդ, եւ կամ աւան վաճառի, եւ կամ աւերակս միոյ նահանգի, ժառան-  
25 գութիւնս համարեսցի նմա: Մի՛ լիցի փոխել զնա առանց մեծի եւ իրա-  
ւացի յանցանաց եւ զկնի մահու նոցա, որդուց նոցա լիցի՝ հրամանաւ  
արքայի: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց տգատք լիցին, եւ ընդ ազա-  
տաց ձեռամբ՝ շինականք. յորժամ աւերս շինեսցեն եւ հողս հատանիցեն  
ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ եւ որդուց նոցա յետ մահու:

30 Այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց եւ իրաւացի լիցի, եւ մի՛ ի  
պատճառս զբայարտութեան փոփոխիցեն:

Նոր շինեալ տեղեաց ազատութիւն լիցի, մինչ զի ամենայնիւ հաս-  
տատեսցի:

35 Ի շինուած քաղաքի եւ բերդի, թէ պակասիցի զանձ արքայի, ամե-  
նեքեան հասարակ նպաստ լիցին:

Արք քաղաքացիք առաւել, քան զգեղջկունս, պատուիցին<sup>(45)</sup>, եւ  
զգեղջկաց նմանապէս առաւել պատիւ լիցի, քան բնակչաց ազարակի:  
Սոյնպէս լիցի բերդի բնակչացն եւ աւանի, զի եւ կարգ առաջնոցն է մերոց  
թագաւորացն այդոքիկ<sup>144</sup>:

40 Հարկաւորք եւ աւգտակարգք յարուեստս հողագործութիւն է, եւ  
զարբնութիւն, եւ հիւսնութիւն. եւ բազմաց է հողագործի: Առաւել պա-  
տուիցի երկաթագործ եւ փայտագործ: Իսկ աւգնական բնութեանս մարմ-  
նոյ եւ հարկաւոր յարուեստս է բանական բժշկութիւն, պատուիցի եւ սա:  
Եւ թէպէտ ամենայն կարծեալքն նուազունք յոյժ հարկաւորք են, այլ

144 Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 117—118

որոց սակաւ դիտան է, յարբունուտա տտաւել ի պէտս հասարակաց պատուիցի: Ստիկան պիտանի եւ հարկատր ի բանական արուեստս եւ փրկական՝ վարդապետութիւն է, նախապատիւ լիցի յիշխանս եւ յարբունիս, զի հասարակաց հայր է եւ բժիշկ հոգւոց:

- 5 Սաղը ամենայն արիւնակաւ զարէնս իրաւանցս արասցեն, որք ընթերցման սորա պատահին, նմանս զմեզ տեսանելով այնոցիկ, որք յանուրջս երեւութանան թագաւորութիւնս եւ բազում ինչ ախորժելիս, եւ զարթուցեալ դատարկս եւ ունայնս յամենայն է իցեն: Բայց գիտասցեն, զի ոչ անգիտանամ, եթէ ամենայն թագաւորութիւն երկրաւոր անցաւոր
- 10 եւ փոփոխելի է, այլ տաւել մերս եղեւ արքայութիւն, զի անցեալն ոչ է ի միջի, եւ ի ներկայս շիք, եւ ապագային ոչ պատահիմ, բայց զփոփագս ձեանալով ընում եւ զյարմարութիւն առաջարկութեանս ամբողջ պահել փութամ: Յաղագս որոյ թողութիւն մեզ յայտսիկ լիցի ի հաւաստի տեսողաց, զի պատրաստ եմ յանխուզ պարսաւողաց զբամբասանս ժողովել,
- 15 եւ ի նոցունց եւս, թէ ի դէպ իցէ եւ ոչ կամիցին թողուլ ազատս:

## Գ Լ ՈՒՆ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԱՐՑ ԱՆԱՊԱՏԱՑ ԵՒ  
ՆՈՅՈՒՆՑ ԵՂԲԱՐՑ

- Կարգ ոգւոց դատաստանաց եւ հրահանգ բարիաց ի սրբոյն, բաւակա-
- 20 նապէս եղբարց եւ նոցունց հարց, եղեալ է ի Բարսղէ: Բայց շափաւորապէս եւ մարմնատեսակ արիւնաց դատաստանի զնշանակս յաւելումք հարկաւորապէս, զի ոչ այժմ ամենեցուն է ըստ հրամանի նորին վարիլ: Նաեւ ոչ հեռի ի դիտաւորութենէ սահմանի սրբոյն ինչ ընդ միտ ածել իշխեմք, այլ յարմար նորին վարիմք շաղաւք:

- 25 Եւ արդ, սկսցուք այսպէս: Զի թագաւորաց եւ իշխանաց, միանագամայն եւ ամենայն հաւատացելոց շինել վանս ոչ յաղագս մարմնաւոր ինչ յուսոյ է, այլ մանաւանդ՝ հոգեւոր, յաղագս այնորիկ ոչ պարտի ժառանգութիւն լինել: Զի որ յառաջնումն հայր եղեւ եղբարց, թէ յիւր շինեալ տեղի եղբարց եւ թէ՛ յայլոց, եւ բարիոք առաջնորդէ, անդատաստան է փոփոխել, ապա թէ հակառակ ինչ գործէ, երկու եւ երեք վկայիւք հարկաւոր է փոխել:

- Եւ եթէ իւրովք ընչիւք ոք գայ յառաջնորդութիւն եղբարց, զառաջին ինչնս վանացն գրով եւ վկայիւք արժան է ի նա տալ: Եւ եթէ պատահի թողուլ եւ զոր երեքն ոչ կամիցի թողուլ յեկեղեցին, իշխան լիցի առ-
- 35 նուզ զիւրն, եւ զոր ինչ յանուն եկեղեցոյն տուեալ եղեւ, անդէն թողուլ:

- Իսկ զկնի մահու հարց մի՛ լիցի իբր ժառանգութիւն առնուլ ազգատոհմին զառաջնորդութիւն եղբարց, եթէ ոչ կամիցին եւ չիցէ ի դէպ<sup>145</sup>: Ապա թէ հաճելի հարց շաղաւք իցին ազգայինքն, եւ եղբարքն կամիցին, բարիոք է նոցա լինել, քան աւտարացն, իբր գիտակք իւրոցն վարուց,
- 40 ըստ այնմ՝ փոխանակ հարց եղիցին որդիք<sup>146</sup>: Ապա թէ չիցեն ազգայինքն

145 Սաղմոս, ԽԳ, 17

յարմար, հարկաւորարար ընտրիցին յայլ եղբարցն՝ բարիոք հովուել ի կամս Աստուծոյ:

Արտաքոյ իրուանց է իշխանաց կաշառաւք առաջնորդ եղբարցն կացուցանել<sup>146</sup>, զոր նոքա ոչ կամիցին, եւ ըստ դատաստանի է կլանել եղբարցն, մինչեւ ըստ կամաց նոցա ընտրիցի լան: Բայց հասարակ լիցի կամքն, եւ եպիսկոպոսունք եղիցին այդոցիկ կարգիչք, եւ մի՛ ոք յաշխարհական կարգաց:

Եւ քանզի են ի գործոց ի վանս առաւել աշխատելի, եւ ամենեցուն մի է դիտաւորութիւն՝ յոյս կենացն յաւիտենականաց, բայց եթէ կարճամտաբար ոք ոչ զամենայն հոգեւորականին թողցէ հատուցման, տացի ինչ առաւել նմա, զի մի՛ ի պատճառս այնմիկ նուազութիւն ինչ եղբարցն լիցի: Եւ թէ այդոցիկ տրտունջ իցէ, դատաստան լիցի տրտնջողին առնել զգործն: Եւ զայս արտաքոյ կանոնի կամաց սրբոյն եղաք Բարսղի՝ կարճամտելոցն աղագաւ: Բայց զանաւթ ինչ ի գործեացն վնասել, որք մերձ գործաւորքն շիցեն, դատաստան լիցի վնասողին զնա ստանալ:

Այդոքիկ դատաստանի աղադաւ ստիկաւուք եղաւ ի պատճառս բարեկարգութեան: Այլ սահմանք ամենատես ուղղութեանց սրբոց ցուցեալն բաւականացի:

Գ Լ Ո Ւ Յ Գ

20

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ

Եւ վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին եւ Նոս կտակարանաց եւ կանոնական հրամանաց: Յերկուց եւ յերից վարդապետաց կոչեցցին ի պատիւ հրամանի, թէ եւ պատահի միոյ աշակերտիլ: Եւ եթէ զկամս եպիսկոպոսի եւ կամ եւս առաւել զհայրապետի ընդ իւրեանս առնուցուն, նաեւ՝ զիշխանի, բարիոք եւս գործիցեն, ապա թէ ոչ՝ ըստ աւրինացն յերկուց եւ յերիցն հաստատուցի: Իսկ ի միոջ զկարգեալսրն եւ անձամբ զընտրեալսն իրաւունք կայցէ դատաստանի լռեցուցանել: Այլ ըստ աւրինացն զկարգեալսն պատուել, իբրու զի երկրորդ է ըստ մարգարէական շնորհին, զի աշխատութեամբ առաքելոցն հաղորդի եւ շնորհաւք՝ մարգարէիցն, ուստի եւ բանիւ ընտրեալ կոչի:

Իսկ նախակրթեալք ի միոջէ վարդապետէ եւ ամբարտաւանեալք՝ յայլմէ առնուցուն պատիւ հրամանի՝ արհամարհելով զիւրն, իրաւունք լիցի դատաստանի՝ ի նմանէ զուսեալն երկրորդել, եւ կամ զղջացեալ արժանաւոր ապաշխարութեամբ՝ իւրոյն հրամանաւ վերստին ուղղիցի: Եւ կոչողն առանց կամաց իւրոյն վարդապետի, հատուցէ պատիժս՝ անզեղչ եղեալ, եւ զղջացեալ ի դէպ ապաշաւանաւք՝ թողութիւն առցէ յայնմանէ, զոր քամահեացն՝ զնորայն առանց նորուն հրամանի կոչել յառաջ:

Եւ եթէ պատահիցի վարդապետի զոք կապել յաշխարհականաց եւ կամ յեկեղեցականաց, այլ ոք վարդապետ մի՛ լուծցէ<sup>147</sup>. Թէ ախտաւոր

146 Կանոնք Գունայ Թ, Ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 209—211

147 Կանոնք Շահապիվանի ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 460, տե՛ս նաև Շնորհալի, Թուրք ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 90

իցէ՛ և՛ կամ տգիտութեամբ՝ միջնորդ լիցի սղղել ղիրաւացին՝ անհպեր, առանց հակառակելոյ, և՛ թէ՛ ոչ անասացէ՛՝ կապիցի փսխանակ կապելոյն, մինչև՛ գղջացի: Ապա եթէ՛ իրաւացի իցէ, և՛ ոչ անասացէ՛ այլ ոք նմա, դատաստան լիցի՝ և՛ նա ընդ կապելոյն կապիլ, մինչև՛ գղջացի՝ եթէ՛ ի տգիտաց և՛ յամբարտաւանլից իցէ, և՛ եթէ՛ ի վկայելոց՝ առաջի նորա զպատճառ կապանցն ցուցցէ՛ և՛ ի նա թողեալ զպատասխանին՝ անպարտ լիցի:

Եւ եթէ՛ պատահի ի միում եղբայրանոցի երկու լինել վարդապետ և՛ կամ աւելի և՛ս, զմի, որ յառաջադէմն իցէ, ինքեանց զուխ և՛ աւագ կոչեսցեն՝ ըստ հրամանի առաջնորդաց, զի բարեկարգութիւն և՛ ի նոսա իցէ, և՛ մի՛ պատճառ տայցեն զայթակղութեան՝ իւրաքանչիւր զգահերիցութիւն խնդրելով: Եւ թէ՛ իւրաքանչիւրքն զոյգ կարծիցին, գոր չէ հնար համեմատել զչնորհան, առաւելեալն տարցի զպատիւն, և՛ ըստ հրամանի նորա այլքն զտաւնս զարդարիցեն բանիւ, նաեւ գայլ և՛ս զհարկս բանից: Եթէ՛ ոք ընդվզեալ լուծցէ զսահման կարգին, դատաստան լիցի միաբանութեամբ եղբարցն՝ ելանել նմա:

Իսկ զաշակիրտս միմեանց, առանց գրոյ և՛ կամաց ինքեանց, մի՛ առցեն. ապա եթէ՛ քամահելով առցէ, դատաստան լիցի՝ որքան ուսեալ իցէ ի նմանէ, վերստին նա ուսցի, և՛ նա ուսուցցէ, և՛ կամ զղջացեալ՝ կամաւք նորա կացցէ, և՛ նա ընկալցի:

Իրաւունք են աւագ վարդապետի ընդ հայրապետի և՛ ընդ եպիսկոպոսի ի վիճակ ելանել ըստ նոցա կամացն, և՛ կամ այլ ոք՝ ըստ կամաց երկոցունց, զի մի՛ արտաքոյ կանոնաց յեպիսկոպոսէ գործիցի ինչ, զի և՛ եպիսկոպոսն միաբանութեամբ վարդապետին զիւրաքանչիւր զկարգն գործիցէ: Եւ եթէ՛ այսմ ոչ անասացէ՛ ոք ի վարդապետացն, ըստ դատաստանի եպիսկոպոսին և՛ առաջին վարդապետին ելցէ ի միաբանութենէ նոցա:

Այլ զայնոսիկ, որ հանդերձեալ իցեն կոչիլ յաստիճան հրամանի, զհամար ուսման գրոցն արժան է պահանջել, թէ՛ ո՛ր և՛ կամ յումէ՛ զտառս զիւրաքանչիւր ընթերցաւ ուսմամբ: Եւ այս առ այն լիցի, գոր ի բազումս շրջեալ՝ անգիտանամբ ուսման, զի մի՛ պատրեալ անկատարս զպատիւ առեալ՝ բազում վնասս խակութեամբն գործիցեն: Եւ այդ իրաւունք նոցա կացցէ, բայց համարէն ընտրութիւն լիցի: Մի՛ ինքեանց կամաւ գալ յառաջ, այլ զյառաջադիմութիւն նոցա, և՛ գերկիւղ, և՛ զբարիոր շինել զոգիս ինքեանց, և՛ զայլոց տեսեալ՝ հարկաւորիցեն, շարժեալք ոգով՝ անստգիտ մտացն խղճիւ կոչիցին ի սպասաւորութիւն բանին:

Այլ վաղվաղկոտացն իրաւունք լիցի և՛ այնոցիկ, որ զայլս աղաչիցեն ի պատիւ ելանել բանին, լոել մինչև՛ յախտիցն նախ բժշկիցին, զի մի՛ հիւանդք ոգով զբազումս ախտացուցեն. և՛ այդ իրաւացի է դատաստան նոցա: Այլ ոչ անվիճակս գնոսա իրաւացի է յամենայն տեղիս արձակել, այլ եթէ՛ ի գաւառի իւրեանց կամիցին և՛ եթէ՛ յայլում պանդխտանալ, եպիսկոպոսաց միաբանութեամբ և՛ հրամանաւ լիցին՝ շրջելով բարեկարգութեամբ. այդոքիկ վկայելոցն լիցին: Իսկ զանշան շրջողսն, և՛ զաւշաքաղս, և՛ որք կամիցին ցուցանել զանձինս հետաքնինք առ ամենայնս գնալով, մշակք եղեալք որովայնի և՛ այլոց ախտից, բանավաճառք և՛ վկայելոց պարսաւաղէտք, զայնպիսիսն լոնցուցեն իրաւացի

դատաստանաւ՝ առեալ ի ձեռանէ զգաւադանն եւ տացեն ցուպ շրջողութեան:

5 Եւ եթէ պատահի հիւրութեամբ երթալ վարդապետի յայլ վանս, որ վարդապետ իցէ, մի՛ առանց մեծարանաց վարդապետի տեղոյն խաւսեցի, եւ ըստ ամենեցունց հարկի՝ հիրն: Եւ եթէ վկայեալ ոք իցէ հիրն, եւ բնականն նախ նմա կամիցի, ըստ կամաց նորա խաւսեսցի. սակայն մի՛ յաճախիցէ եւ զասպնջականն ամաշնացուցէ, եւ յիւրոցն զնա քամահել տացէ: Ապա  
10 եթէ զսահմանս զայս լուծցէ եւ յանդղութեամբ անաղերս խաւսիցի, դատաստան լիցի՝ անպատիւ զնա ի բաց դարձուցանել:

Գ Լ Ո Ւ Խ Ե

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Եւ մի՛ լիցի քահանայից՝ ժառանգութիւն առնել զժողովուրդն, որպէս տեսանեմք, զի եւ դատերաց ի բաժինս տան ժառանգութեան զզինս  
15 արեանն Քրիստոսի: Դատաստան լիցի յեպիսկոպոսաց յայնպիսեացն առնուլ զհատն Քրիստոսի եւ տալ ի ձեռս այնոցիկ, որ Տեառն զտէրունիսն հովուիցէ, եւ պատասխանել նոցա իրաւամբք, եթէ զոր սրով քո գերեսցես<sup>148</sup> եւ զնով քո զնեսցես՝ զնոսա կալցես քեզ ժառանգութիւն եւ մի՛ զլարչարանաքն Քրիստոսի փրկեալսն. եւ եթէ յանդղնի՝ լուեցուցանել  
20 եւ ի քահանայութենէ:

Եւ թէ պատահի ժողովրդականաց փոփոխել բնակութեամբ, այնմ քահանայի լիցի ի հատս, որ եւ բնակիցի, եւ մի՛ առաջինն յաղագս յնորիկ հակառակիցի, զի մի է արինակ հովուութեան ընդ ամենայն տեղիս ուղղափառաց. զի այդոցիկ դատաստան լիցի՝ զժամանակ առաջ-  
25 նոյ քահանային առաջինն Տեառն տալ համար եւ զվերջոյն՝ վերջինն: Եւ թէ այդմ հակառակին, իբր անբան ոչխարաց ի վերայ ազահիլ, իրաւացի է լուել եւ ի քահանայութենէ հակառակողին: Այլ այնոցիկ, որ ոչ ոնին զպատիւ քահանայութեան եւ հարկիւ զժողովուրդ Տեառն ստանան, դատաստան լիցի՝ կամ քահանայանալ եւ կամ լուել ի շար սովորութենէն,  
30 եւ եթէ ոչ հնազանդին իրաւանց, որոշեսցին յեպիսկոպոսաց, մինչեւ զզրացցին: Իսկ քահանայից վանականաց ոչ է պարտ ժողովրդականաց լինել հովիւ, այլ կրաւնաւորութեան, զոր ընկալան, պարապիցին եւ զհասս ի ժողովրդենէն ըստ սահմանի կանոնաց սրբոյն կալցեն Սահակայ<sup>149</sup>:

Բայց զհոգեհանգիստ ի վանս առնել ոչ է ըստ արինաց դատաստանի  
35 գրոց, զի մսակերութիւն ի վանս կուսանաց ոչ է, բայց եթէ զենմունս յաշխարհի առնիցեն, եւ մասն ի վանս, իբրեւ վայել է նոցա, տարցեն: Իսկ եթէ յաղագս անձեռնհասութեան եւ կամ յաղագս յուսոյ ի վանս տարցեն եւ արտաքոյ գրոց դատաստանաց մսակերութիւն անդ աշխարհականաց առնիցեն, մի՛ լիցի հակառակիլ քահանայից աշխարհի յաղագս  
40 այնոցիկ, զի ոչ է դատաստան աւելի քան զկարն պահանջել կամ զյոյս

<sup>148</sup> Դ թագ., 2, 22

<sup>149</sup> Կանոնք Սահակայ Պարթևի Խ, ԽԱ, ԽԲ, ԽԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 397—402

հատանել, զի այլոց անկարգութեան պարտին վրէժխնդիր լինել եւ ոչ յաղազս այսոցիկ:

5 Եթէ աղ ոք յաշխարհականաց ի տան իւրում արհնել տացէ, յաղազս անհնազանդութեան իւրում քահանային, այլում քահանայի եւ նմա զմորթ եւ զերի տացէ, դատաստան լիցի՝ իւրում քահանային կրկին տալ, եւ լուծիչ իրաւանց քահանայն արժանապէս դատ առցէ յեպիսկոպոսաց: Այլ եթէ յաղազս յուսոյ ընտրելոց եւ կամ առ ի շոյէ մերձ իւր քահանայի ի տանն արասցէ եւ զմորթ եւ զերի յիւր տացէ յեկեղեցի, մի՛ լիցի ինչ դատ նմա:

10 Եւ եթէ ժողովրդական ոք տրհամարհէ զքահանայ իւր նախատելով, եւ կամ յանդգնի եւ կամ հարկունէ, դատաստան է իրաւամբք հատանել զձեռն Բայց եթէ յոյժ զղջմամբ առաջի անկանիցի եւ աղաչիցէ ապաշխարել, ներեցցէ նմա:

15 Եւ քահանայ եթէ յաղազս սնծին խնդրելով վրէժ զոք կապիցէ ըստ որում եւ իցէ պատճառի, զանձն մանսունդ դատապարտէ, բայց եթէ յաղազս վրէժխնդրութեան արինաց Տեառն իցէ, եւ ի զղջանալն ներիցէ ցաւակցաբար ապաշխարել: Իսկ եթէ յաղազս անծին վրէժխնդրութեան ոչ ներէ ապաշխարողին, դատաստան լիցի յեպիսկոպոսաց՝ կապել զնա, մինչև զղջացեալ՝ թողցէ զղջացելումն: Բայց սակայն որ կապեցաւ, թէ՛

20 իրաւ, թէ՛ անիրաւ, ընդ կապանաւք է, մինչև զղջացեալ թողցէ:

Այլ ամենայն դատաստան ի գրոց ցուցեալ է քահանայից:

## Գ Լ ՈՒ Ն Զ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՏԱՆԱՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ՈՐՔ ԱՆԿԱՐ ԳՈՆ ԼՈՒՄԱՆՆԵԼ ԶԿՈՒՍՈՒԹԻՒՆ

25 Յարմարումն առն եւ կնոջ ըստ պատշաճի ցուցեալ է՝ ժամանակաւ երէց լինել առն, եւ կրսեր՝ կնոջն, որպէս ի ստեղծմանն ցուցաւ նախաստեղծիցն, զի ամենայնիւ իշխան լիցի այլն ի վերայ կնոջն, որպէս յայլսն, նմանապէս յամուսնանալն:

30 Եւ եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տիրել կնոջ առն, ըստ հրամանի կանոնաց ի միասին զժամանակն կացցեն<sup>(47)</sup>: Եւ թէ դատաստան լիցի բաժանմանն, զամենայն զկնոջն զինչսն զբերեալն ի տուն առն՝ տացէ ի ձեռն կնոջն եւ արձակիցէ լինել առն այլում: Եւ զի թէպէտ ոչ ըստ կանոնաց առաջնոցն է, այլ ըստ վերջնոցն, այնպէս թողացաւ: Բայց մի՛ լիցի յաղազս յայտրիկ տուգանք առն, զի ակամայ է ախտն. եւ ամենայնն տացի, բայց ի հանդերձիցն, զոր արարաւ երկոցունցն ի հարսանիսն: Եւ եթէ անասուն բերեալ իցէ, զզուլխն տացեն եւ զաճն յերկուս բաժանիցեն՝ յաղազս աշխատելոյ ի պահելն<sup>(48)</sup>: Եւ ծախք եւ միմեանց ազգականաց ընծայք մի՛ չիշխսցին:

40 Զայսոսիկ իրաւունս հաճոյս վարկաք դատաստանի, զի որպէս ոչ տիրէ ամուսնութեամբ կնոջն, մի՛ լիցի իշխան ընչից նորա: Սակայն հաւանութեամբ եւ ըստ կամաց առն լիցի այլում առն, եւ այլն կին արասցէ ամուսնացեալ:

Գ Լ Ո Ւ Յ Է

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԴԱՐՁԵԱԼ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ԵՔԷ ՊԱՏԱՀԻ ՄԻՈՅՆ,  
 ԱՅՄԱՀԱՐԻԼ, ԿԱՄ ԱՆՏԱՆԱԼ ՌԻԿՈՒԹԵԱՄԲ, ԿԱՄ ԲՈՐՈՏՈՒԹԵԱՄԲ, ԵՒ  
 ԿԱՄ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՄԲ ՅԵՐԿԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՅ, ԿԱՄ ՀԱՇՄՈՒԹԵԱՄԲ  
 5 ԵՒ ՈՐ ԻՆՁ ՆՄԱՆ ԱՌՑՈՒՆՑ

Եթէ պատահի առն եւ կամ կնոջ այսահարիլ, քննել արժան է. եթէ  
 յառաջ քան զի միասին գալն իցէ եւ ծածկեցաւ խաբէութեամբ ի ծնողա-  
 ցրն կնոջ, ի տունս իւրեանց առցեն եւ զքնծայս ուխտից եւ զայլ ծախս  
 պիտոյից ինքեանք հոգասցեն եւ մի՛ այրն, զի ոչ ի տան առն, այլ կան-  
 10 խաւ ի տան իւրեանց ախտացաւ: Զայդ յամենայնսն<sup>(49)</sup> ըստ սահմանի  
 կանոնաց արասցեն<sup>150</sup>: Եթէ բժշկիցի, յայր իւր դարձեալ տացի, եթէ ան-  
 սասցէ այրն, ապա եթէ ոչ՝ իշխան լիցի:

Ապա եթէ ի տան առն լեալ ախտն իցէ, այրն ըստ ցուցմանդ  
 հողասցէ մինչ ի սահման բժշկութեան: Ապա եթէ անբժշկելի զկնի եւթն  
 15 ամին իցէ, ըստ հրամանի վերջնոցն կանոնաց արձակիցի յառնէն ի տուն  
 հաւր իւրոյ հանդերձ իւրովք ընչիւք, եւ այրն այլ կին արասցէ: Եւ եթէ  
 մանկունք իցեն, առ իւր այրն կալցի եւ ըստ կարի զկեանս եւս հոգասցէ  
 կնոջն, սակայն թողութեամբ ի կնոջէն եղիցի, եւ ապա առցէ այլ կին:  
 Իսկ եթէ ի տան հաւր իւրոյ եղեալ իցէ ախտաւոր, իշխան լիցի այրն ի  
 20 լնու սահմանի բժշկութեան եւ ոչ բժշկիլ, եւ նախ քան զսահմանն առանց  
 կամաց կնոջն առնուլ այլ կին: Եւ իրաւունք դատաստանի բաժանմանն  
 նոյն լիցի, որ եւ յառաջագոյն անկարողացն ասացաւ:

Իսկ եթէ առն պատահիցի ախտն ի դիւէ. եթէ նախ քան զպսակն  
 առնուլ, իշխան լիցի կինն մնալ սահմանի բժշկութեան եւ կամ ոչ մնալ,  
 25 եւ թէ յետ պսակին՝ համբերել բժշկութեան սահմանին արժան է, եւ ըստ  
 հրամանի առն լիցի այլում:

Այլ թէ լիցի ուրկութիւն կամ բորոտութիւն, այսոքիկ ախտք դժուարաւ  
 ծածկին: Եթէ դիտելով յանձն առ կարծեալք բժշկութեան, իբրու զի չէր  
 տարածեալ ախտն, պարտապան է ամենայնի բառնալ եւ ոչ իշխան է թո-  
 30 դուլ, ապա թէ զղջացեալ կինն թողութիւն առն արասցէ առնուլ կին՝  
 առցէ: Նման այսմ լիցի, եթէ ի տան ոռն ախտն եղեալ իցէ: Իսկ եթէ  
 խորամանկեալ գողացան ծնողքն, իշխան է այրն թողուլ զկինն եւ առ-  
 նուլ այլ ըստ իւրոց կամացն: Եւ իրաւունք դատաստանի այս լիցի. գիտե-  
 լով զախտն յառնուլն եւ ի տան առն ախտանալն, մինչ ի մահ զկեանս  
 35 նոցա հոգասցեն եւ զինչսն բաժնի անդրէն դարձուցեն, իսկ ծածկելով  
 ծնողացն՝ ինքեանց հոգքն լիցին իւրեանց ընչիւքն: Ապա թէ առն պատա-  
 հիցի ախտն. եթէ նախ քան զպսակն կարծեսուք առողջութեան եւ եթէ զկնի  
 պսակին, ոչ է իշխան կինն առնուլ այր, բայց եթէ կամաւք առն, ապա  
 եթէ խաբէութեամբ ծածկեալ իցէ, իշխան է կինն առնուլ այր արտաքոյ  
 40 կամաց նորա:

Եւ եթէ պատահիցի յերկար եւ անբժշկելի հիւանդութիւն, եւ կամ  
 հաշմութիւն, եւ կամ այլ ինչ, որով անկար գոյ կնութեան, ի սան առն

<sup>150</sup> Տե՛ս որինակ՝ Կանոնք Բասդի Կեսարացոյ Մեջ և հտգ. Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 168

պատահեալ՝ ոչ է իշխան թողուլ այրն: Ասյա եթէ խղճացեալ կնոջն՝ հրաման տայցի առնն առնուլ կին՝ աոցէ եւ զկեանս նորա հոգասցէ եւ զինչս նորա ի ձեռս նորա տացէ, ըստ դատաստանի իրաւանց: Նոյն եւ պատահման առն լիցի, եւ ըստ հրամանի առն՝ լիցի այլում կինն:

5 **Գ Լ Ո Ւ Խ Ը**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈՅ**

Եթէ ի տանէ առն մատնիցի ի գերութիւն, յառնէն միայնոյ զնկայցի, եւ թէ ի տանէ ծնողացն՝ յերկուցն, յորժամ ոչ ըստ կամաց առն անդ իցէ: Եւ այդ լիցի այդմ դատաստան: Բայց ժամանակն անսալոյ՝ կանոնացն լիցի<sup>151</sup>. զի եթէ ոչ գոցէ մինչեւ ցեւթն ամն շրջեալ, կին աոցէ կամաւք ծնողաց կնոջն գերելոյ, եւ զինչսն անդէն դարձուցէ գտուեալն ի բաժնի: Եւ առն գերելոյ նոյն լիցի՝ առնուլ այր կնոջն ըստ սահմանի ժամանակի:

**Գ Լ Ո Ւ Խ Թ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ**

15 Յորժամ դիակասն ախտիւ զմիմեանս այր եւ կին ատիցեն առանց շնութեան պատճառի, եթէ նախ քան զամուսնութիւն իցէ սկիզբն ախտիցըն եւ յառնէն իցէ, եւ ոչ կամիցի յարմարիլ ընդ նմա, սահման բաժանման աշտահարացն լիցի: Զկնի բազում խրատու եւ յանդիմանութեան բակտիցին, եւ ըստ կանոնաց դատաստանի<sup>152</sup> այրն ոչ իշխէ առնուլ կին, 20 եւ կինն լիցի առն՝ տանելով զիրն բաժին եւ յերից զմինն՝ յառնէն, իբր զի անարգեաց զպսակ նորա:

Նոյն դատաստան կացցէ, թէ կնոջն իցէ, եւ ոչ իշխէ առն լինել, բայց եթէ խղճացեալք միմեանց հրամայիցեն: Բայց հրամանաւ եպիսկոպոսին լիցի միմեանց ներելն, յորժամ ի դէպ եւ հաճոյ Տեառն կարծիցէ զներելն: Այսպէս յամենայնսն լիցի ի կամաց առաջնորդին միմեանց հրաման տալն, զի առաջնորդքն եւ ոչ նոքա միմեանց իշխեն: Իսկ տուգանք եւ ապաշխարութիւն ցուցեալ է ի կանոնաց<sup>153</sup>:

Իսկ եթէ զկնի ամուսնութեան եւ որդիս ծնանելոյ ախտն իցէ, ըստ վերագոյն սահմանին խրատիւք եւ յանդիմանութեամբ բազում՝ մեկնիլն լիցի, եւ զկէս ընչիցն կնոջն տացէ, իբր զի միացեալք էին, եւ ոչ իշխէ, բայց եթէ ըստ հրամանի կնոջն, առնուլ կին: Եւ եթէ ըստ իւրոց կամացն որում ակն եղեալ իցէ եւ առնուցու, կանոնքն զայդոցիկ ցուցին զդատաստան, եւ զտուգանս, եւ զապաշխարութիւն<sup>154</sup>: Իսկ եթէ ի կնոջն իցէ մեկնիլն անպատճառ<sup>(51)</sup>, յերիցն զմին մասն յիւրոց ընչիցն առն թողցէ<sup>(50)</sup>

35 եւ մի՛ լիցի առն այլում, բայց եթէ ի հրամանէ առնն:

151 Կանոնք Գունայ է, Կանոնագիրք Հայոց, Կ. Ք, էջ 205—206

152 Կանոնք Նէոկիսարեայ ԺԲ, Կանոնք Շահապիվանի Գ և այլուր, Կանոնագիրք Հայոց,

4. Ա, էջ 183, 432

153 Անդ

154 Անդ

Գ Լ Ո Ւ Խ Ժ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՇՆԱՅՈՂԱՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Ծթէ շար յայտոսիկ ախոս գտցի կին ուրուք, իշխան լիցի այրն արծակել զնա ըստ հրամանի Տեառն<sup>155</sup>, Եւ զի ոչ թողացուցանէ զարծակե-  
 5 ալ առնուլ<sup>155</sup>, զի ընդ առն հաշտեցցի, ըստ առաքելոյ<sup>157</sup>, եւ կամ անայր մնասցէ, վասն որոյ զղջանալով կնոջն՝ իշխան լիցի դարձեալ առնուլ, եւ այդ առանց բանի պոռնկութեան: Նոյն իշխան լիցի շնացող կնոջ այր ի զղջանալն առնուլ զնա եւ կամ ոչ: Իսկ կին ոչ լիցի առն, ըստ դատաստա-  
 նի կանոնաց<sup>158</sup>, բայց այր իշխան է առնուլ կին, եւ կին առն լիցի ըստ  
 10 հրամանի առն: Եւ կին ոչ իշխէ ի շնացող առնէ ելանել, բայց վասն խրատու առ ժամանակ մի մեկնիլ: Իսկ բաժանման յեղանակ ընչիցն նոյն լիցի, որ վասն ատելութեան գրեցաւ:

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՄՂՈՑ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Ամուլ գտեալ կին ուրուք՝ մի՛ լիցի յաղագս այնորիկ արծակել զնա, զի Արարչին է զբնութեան տալ զծնունդն: Փորձելի է, զի թէ ի ցաւոց իցէ՝ բժշկաւք աւգնեցցի, եւ թէ չիցէ՝ ըստ այսմ, բառնալի է զբնաւորա-  
 կան ամլութիւնն:  
 Ապա եթէ յաղագս անժառանգութեան տեսանիցէ զայրն տրտմեալ եւ  
 20 ցաւակցեալ, ըստ արիւնակին Աբրահամու եւ Սառայի<sup>159</sup>, տացէ համար- ձակութիւն առնուլ կին՝ առցէ. բայց մի՛ լիցի զամուլն եւ զծննդականն ի միասին պահել: Նոյնպէս, թէ առն իցէ անծնունդ լինել, արասցէ: Իսկ սահման ժամանակին առաւել քան զանկարողացն լիցի, եւ մի՛ նուազ<sup>(52)</sup>:  
 Եւ եթէ կինն այլում ոչ կամիցի լինել, զկեանս, իբր այրութեան  
 25 յայլում տան, մինչ կենդանի է, հոգասցէ եւ զինչս բերեալ զլնոջն դար- ձուցցէ: Իսկ եթէ կանխաւ գիտասցէ զամլութիւն եւ տախանաւք առնուցու ցանկութեամբ, մի՛ լիցի մինչև ի մահ մեկնիլ: Զայդ հշմարիտ կարծեմ դատաստան:

Գ Լ Ո Ւ Խ ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ԸՍՏ ՈՐՈՅ ՊԱՏՃԱՌԱՅ ԵԼՅԷ ԿԻՆ ՅԱՌՆԷ

Յորժամ կին զառն զշար ախոս զիտասցէ զարուագիտութեան, եւ կամ զանասնագիտութեան, եւ կամ ընդ այլազգիս պղծիցի, իշխան լիցի ելանել, ապա՝ եթէ զղջացեալ՝ զհայր խոստովանութեանն հաւատացուցէ  
 35 եւ նովա՛ւ՝ զկինն, մի՛ էլցէ: Բայց զապաշխարութիւն եւ զմիջոց սահմանին մեկնելոյն ի կնոջէն ցուցցէ հայր խոստովանութեանն եւ այնպէս խրատեալ զմիաբանութիւնն հաստատիցէ: Իսկ եթէ մի անգամ եւ երկիցս զայս

155 Մատթ., Ե, 32. ԺԹ, 9  
 156 Ղուկաս, ԺԶ, 18  
 157 Ա Կորնթ., է, 11  
 158 Կանոնք նշովկեսարեայ ԺԱ, Աթանասի ԿԱ, Գունայ է և այլուր:  
 159 Մեռնդք, ԺԶ, 1—4 և այլն:

արասցէ եւ ի նոյն կացցէ ախտ, ելցէ իրաւամբք դատաստանի՝ զկէս ընչիցն տանելով յառնէն<sup>(53)</sup>:

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

5 3ԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ԹԷ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԻ ՉՄԻՄԵԱՆՍ  
ԹՈՂՑԵՆ ԱՅՐ ԵՒ ԿԻՆ ԵՒ ԸՆԴ ԱՅԼՈՒՄ ԶՈՒԳԻՑԻՆ, ԵՒ ՊԱՏԱԶԻ  
ՄԵՌԱՆԵԼ ԸՆԴ ՈՐ ԶՈՒԳԵՑԱԻ, ԵՒ ԱՌ ՄԻՄԵԱՆՍ ԴԱՐՉՅԻՆ

Եթէ կին ատելութեամբ յառնէն մեկնեացի եւ այլում լիցի, եւ պատահի մեռանել զոր էառն, եւ հարկաւորաբար յառաջինն դարձցի, իբր զի շիցէ առեալ այրն այլ կին, կալցէ զնա զղջացեալ, զոր չէր արժան լինել առն այլում եւ եղեւ, թէպէտ եւ իշխան է շառնուլ, զի ի կնոջէն իցէ պատճառքն մեկնելոյ, սակայն շահելոյ աղազաւ զոգի նորա՝ առցէ: Սոյնպէս թէ առն պատահի առնուլ այլ կին, եւ մեռցի զոր էառն, եւ զղջացեալ դարձցի յառաջինն, իբր զի այլում շիցէ լեալ կին, սոցէ, եւ հաւանեացի նմա կինն յաղագս զղջմանն եւ ապաշխարութեանն արինակի երկուցն:

15 Իսկ եթէ զկնի մեկնելոյն ի միմեանց այրն կին առցէ եւ կինն՝ այր, եւ մեռանիցի կին սռն եւ այր կնոջն զոր առին, եւ զի այլ պսակ ոչ է նոցա, հարկաւորեալք դառնան առ միմեանս, որ պատճառ մեկնելոյն եղեւ՝ զապաշխարութիւն նմա տալով, միաւորեացին:

Եւ եթէ այր կնոջն մեռանիցի, եւ կին առն կենդանի իցէ, եւ կինն իցէ պատճառ մեկնելոյն եւ հարկաւորաբար զղջացեալ զայրն խնդրէ, չէ արժան առնուլ զնա առնն ըստ իրաւանց, մանաւանդ թէ մանկունք իցեն, եւ այլ այր ոչ հասանիցէ կնոջն, ապա եթէ հասանիցէ՝ իշխան լիցի այր զհարկիւ զղջացեալ կինն առնուլ եւ կամ ոչ: Նմանապէս՝ եթէ կին առն մեռանիցի:

25

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

3ԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԵՐ ԵՒ ԿԱՄ  
3ԱՂԱԳՍ ԱՅԼՈՅ ԻՐԻՔ ԱՅՐՆ 3ԱՄԻՑԷ, ԵՒ ԿԻՆՆ ԱՅԼՈՒՄ ԼԻՑԻ

Յորժամ այր վասն պատճառի իրիք եւ կամ յաղագս վաճառի ի ճանապարհ երթեալ յամիցէ, անսալ արժան է կնոջն: Ապա եթէ համբաւ շար գայցէ մահու եւ այլոց կորստեան, մի՛ լիցի այլում առն մինչեւ ստուգիցէ, թէ եւ յամել հասանիցէ ամս քաղումս: Ապա թէ եւ հաւատի յաղագս մահուան բանն, մինչեւ յեթն ամ մի՛ առցէ այր, ըստ սահմանի գերելոցն<sup>160</sup>: Իսկ եթէ նախ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան զստուգելն, եւ գայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ աչմ առն պսակ ոչ իցէ, եւ մանկունք իցեն: Ապա եթէ ինքեան պսակ իցէ եւ հաւանիցի աղաչողաց, կամք իւր են հնազանդիլ կամ ոչ:

Ապա եթէ զկնի սահմանին եւ ճշմարիտ կարծեալք սուտ մահուանն գայցէ, մի՛ առցէ զկին իւր, թէ ինքեան պսակ իցէ եւ այնմ առն շիցէ:

<sup>160</sup> Կանոնք Գունայ է, Կանոնագիրք Հայոց, Կ. Ք, էջ 205—206

ասյո թէ այնմ ատն իցէ եւ իւր շիցէ՝ ասցէ, թէ եւ մանկունք իցեն: Իսկ  
 եթէ այնմ շիցէ եւ ոչ իւր, եւ յայնմանէ մանկունք իցեն, մի՛ առցէ, զի զկնի  
 սահմանի դարձաւ: Ապա թէ այնմ ոչ անստացէ, հարցեալ զկինն՝ զոր  
 ախորժէ՝ նմա լիցի, զի թելուս այդպէս հակառակութիւնն լիցի լուծեալ:  
 5 Եւ պատշաճ յաղագս երիտասարդութեանն տեսեալ ի նա յանգեցուցեն  
 յերկուցն, եթէ անսան: Զայդ տեսաք յաղագս այդոցիկ իրաւացի դատաս-  
 տան:

Իսկ եթէ յամեալ այր յաշխարհ հետի, թե՛ վաճառականութեամբ եւ  
 թէ՛ աշուժ պատճառու, եւ կինն անդ առնուցու, եւ թէ շամեալ արասցէ,  
 10 կին նորա մի՛ լիցի առն աշուժ մինչեւ ցեւթն ամ, գուցէ զվշացեալ զայցէ:  
 Ապա թէ զկնի այնորիկ, իբր ստուգէ զամենայն ի ձեռն քահանայից, լուծ-  
 ցի յաւրինաց առն եւ աշուժ լիցի: Այլ մի՛ նախ քան զայստսիկ աշուժ  
 պատճառաւ առն լիցի, թէ եւ յամել հասանիցէ բազում ամ, զի պատահի  
 քսան ամ յամել նոցա, աւելի եւ պակաս. ստուգիւ եւ փորձիւ լիցի: Իսկ եթէ  
 15 զկնի սահմանի գայցէ, յորժամ առն լեալ իցէ կինն. մի իշխեսցէ առնույ  
 զնս ըստ դատաստանի, զի անարգեաց զպսակն արհնութեան:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ՄԻՇՏ ԿԱԳԻՑԻ ԱՅՐ ԸՆԿ ԿՆՈՋ ԱՆԱՐԳԵ-  
 ԼՈՎ, ԵՒ ՀԱՐԿԱՆԵԼՈՎ՝ ԲԵԿԱՆԻՑԷ, ԿԱՄ ԽԼԻՑԷ ԿԱՄ ԽԵՂԻՑԷ

20 Իթէ դիւական ախտիւ լցեալ այր զկին իւր անարգէ նախատանաբ  
 միշտ, եթէ խորթք իցեն եւ այնորիկ աղազաւ մոլի, դատաստան լիցի. թէ  
 յառաջնումն յանձին կալաւ զնոսա, համբերել պարտի, ապա թէ ոչ՝ յազգ  
 դարձցի կնոջն<sup>(54)</sup>:

Իսկ եթէ յաղագս ժանդ բարուց գործէ, բեկան՛ կամ խլէ, դատաս-  
 25 տան նոյն լիցի, որպէս ատարուցն՝ հատուցանել զտուգանս, որոց կնոջն  
 են, եւ կրկին լիցի, զի մի՛ իբրեւ զհարձս կայցին, այլ իբրեւ զմարմին  
 ինքեանց. եւ այդ՝ յորժամ զղշացցին<sup>(55)</sup>: Իսկ եթէ ի նոյն յամառութեան  
 կացցեն, երկիւղ է՝ մի գուցէ հարեալ սպանցէ, յետ բազում խրատու եւ  
 յանդիմանութեան մեկնեսցի, զի Տէր իսկ սուսաց. Մովսէս վասն խտա-  
 30 սըրտութեան ձերոյ տասց թողուլ զկանայս ձեր<sup>161</sup>: Եւ զի մի՛ լոկ պատճա-  
 ռաւ խտասիրտք լիցին, յաւել՝ զառանց բանի պոռնկութեանն: Եւ զի  
 յկարէնան հրամայեցաւ թողուլ, զի մի՛ զործիցի մահ: Եւ ի Տեառնէ նորին  
 աղագաւ ասացաւ, զոր եւ աստ նորին արինակաւ պատշաճ զմեկնիւն  
 դատեցաք: Իսկ ընչիցն բաժանումն գրեալ է յաղագս ստեցողաց<sup>(56)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ՈՋ ՅԱՅՏՆԻ ԱԽՏ ԻՑԷ ՈՒՐԿՈՒԹԵԱՆ ԵՒ  
 ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ ԱՅՍՊԻՍԻ, ԽԵԼԱԳԱՐՈՒԹԵԱՆ, ՊՈՌՆԿՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՅ-  
 ՍԱՀԱՐՈՒԹԵԱՆ, ՈՐՈՎՔ ՈՋ Է ԹՈՂՈՒԼ ՉՄԻՄԵԱՆՍ ԿԱՄ ԹՈՂՈՒԼ, ԱՅԼ  
 ՄԻԱՅՆ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՄՔ ՉՄԻՄԵԱՆՍ ԹՈՂՈՒՆ

40 Եթէ այր, անպատճառ, յաղագս պակասամտութեան ընդ վայր յածե-  
 լով, թողու զկին՝ ոչինչ զնորա հոգալով, եւ կինն համբերէ ի վեր քան

161 Մատթ., ԺԹ, 7—9

զեւթն ամ, եւ բազում անգամ, որ կնոջն են, յանդիմանեն եւ կոչին, եւ նա ոչ կամի, եւ հաւատեն, թէ ոչ է հնար, ի բերանոյ նորա խնդրիցին՝ կա՛մ առնուլ զկինն եւ կա՛մ հրաման լինել արձակման, եւ զկնաթողացն ապաշխարել. եւ այլ կին ոչ իշխէ առնուլ, որչափ կենդանի է կին նորա<sup>(57)</sup>,—եւ  
 5 այս դատաստան ամենայն անպատճառ կնահանից լիցի,—եւ կամ կին խղճացեալ՝ հրամայիցէ: Նոյն լիցի դատաստան եւ յաղագս կնոջն, եթէ ըստ այդմ ախտի պատահիցի:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՈՒՐԱՑՈՂԱՅ

10 Եթէ պատրեալ ի սատանայէ եւ ի նորին արբանեկաց կամ ի բունութենէ՝ ուրացի այր, մի՛ բնակեացէ կին նորա ընդ նմա, թէ եւ բռնաբարիցէ, զի մի՛ ի մոլորութիւն նորա անկցի: Իսկ եթէ յանձին կալցի յաշխարհ երթալ հեռի եւ անդ ապաշաւանաւք ունել զճշմարտութիւն, յազազս առն փրկութեան ընդ նմա գնասցէ կինն՝ միշտ յորդորելով եւ մխիթարելով,  
 15 Եւ ընդ նմա ըստ կարի ապաշխարել, զի իբր զշահող ոգւոյ նորա վարձս ատցէ: Նոյն լիցի, թէ կնոջն պատահի: Զնոյն իրաւունս պահելի է զխտորեալն յաղանդս եւ ի հերձուածս:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ՔԻՆՈՒ ՎԱՍՆ ԱՅՐ ԿՆՈՋ ԱՆԿՅԻ ՅՈՒՐԱՑՈՒԹԻՒՆ, ԵՒ ԿԱՄ ԿԻՆ ԱՌՆ

20 Իսկ եթէ այր, քինու կնոջ, անկցի յուրացութիւն, զղջացեալ՝ կամաւորի ապաշխարութիւն կնոջն լիցի եւ ակամայի՝ առն: Ապա եթէ անզեղջ կացցէ, արիւն նորա, ըստ իրաւանց, ի կնոջէն խնդրեցի զնով, հանդերձ ապաշխարութեամբ, եւ դատաստան նորա Տեառն լիցի: Նմանապէս՝ եթէ  
 25 կինն անկցի:  
 Եւ եթէ զիրովին երթայցէ, եւ կամ խեղդիցի այր եւ թէ կին, նոյն լիցի դատաստան: Ըստ դատաստանի կանոնաց կարծեմ եւ խափանել զամուսնութիւն զերկրորդ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԶՄԻՄԵԱՆՍ ՍՊԱՆՈՂԱՅ

30 Եթէ այր զկին սպանցէ յաղագս պոռնկութեան, արեան դատաստան լիցի բաւանդակ, զի ի Տեառնէ արձակել հրամայեցաւ եւ ոչ սպանանել<sup>162</sup>. եւ թէ ըստ այլ պատճառի ի շարութենէ բարուց՝ կրկին տուժիցի: Իսկ եթէ կին զայր դեղաւք սպանանէ եւ կամ այլ արիւնակաւ, նոյն լիցի  
 35 դատաստան:  
 Բայց մի՛ ոք զապաշխարութիւն հայցիցէ ի դիրս դատաստանի, զի այդ կանոնաց է եւ ոգւոյ, իսկ սա՛ մարմնոյ, եւ ապաշխարութիւն յաղա-

<sup>162</sup> Մատթ., Ե, 32. ԺԹ, 9

զրս տուգանին թեթեւ լիցի: Եւ զի ոչ անըմբոն կարծեմ եւ զոգոյ դնել դատաստան երբեմն, որպէս եւ նա՝ զմարմնոյ:

Գ Լ Ո Ւ Խ Ի

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՅԱՆՅԱԻՈՐ ԻՇԽԱՆԱՅ ԱՌ ԹԱԳԱԻՈՐՍ, ԵՒ ԱՅԼՈՑ՝ ԱՌ ՆՈՍԱ

5

Եթէ իշխան եւ այլք ի թաղաւորական տանէ յանցաւորք թաղայորին լիցին, եւ կամ այլ նուաստք՝ իշխանի, ըստ դատաստանի է զկնի յանցաւորացն մահու զորդիս եւ դեղբարս ի ժառանգութիւն նոցա կացուցանել, եւ մի՛ պատճառաւ հարց որդիքն զրկիցին, եթէ համաբարոյք նոցա շիցեն. զի իւրաքանչիւր ի մեղս իւր մեռցի ըստ տէրունական հրամանին<sup>163</sup>,

10

Գ Լ Ո Ւ Խ ԻԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՇԻՆԱԿԱՆԱՅ

Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ եւ ջրոյ: Եւ զայս սլատշաճ կարծեմ դատաստան, զի թողեալ զտէրունիսն՝ ազատ է ուր եւ կսմիցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տերանցն եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հարն ազատ են որդիքն ծնեալ այլուր եւ ոչ անդ<sup>(58)</sup>:

15

Գ Լ Ո Ւ Խ ԻԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՅ

20

Սպանութիւն ի մանկունս եղևալ, եթէ որ սպանն ի վեր քան ղերկտասան ամն է, իբր զկատարեալ արիւն լիցի եւ ըստ այնմ տուժիցի, իսկ խոնարհաց քան զայդ, որպէս մետասանից եւ տասնամեկից, կէսն լիցի. իսկ ի վայր քան զտասն՝ յերիցն մին լիցի մասն: Եւ զի թէպէտ յայլ յանցանս հնգետասանից ի խոնարհ հրամայէ զմեղս մանկութեանն մի՛ յիշել կանոնք<sup>164</sup>, յաղագս արեան այդպէս իրաւունս համարեցաք:

25

Եւ թէպէտ բնաւ յամենայն դատաստանս ի տեղիս տեղիս կարծի արտաքոյ կանոնաց եւ ընդդէմ, որպէս յաղագս արանց եւ կանանց ի դատաստանս, սակայն ի քննութենէ վարդապետաց զյիշատակն ունելով՝ համարձակեցաք:

30

Գ Լ Ո Ւ Խ ԻԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՄԱՆԿԱՆՅ, ԵԹէ Ի ԽԱՂՍ ՉՄԻՄԵԱՆՍ ԽԵՂԻՅԵՆ, ԿԱՄ ԲԵԿՅԵՆ, ԿԱՄ ԽԼԻՅԵՆ Ի ԶԳԱՅՈՒԹԵԱՆՅ

Յորժամ մանկունք ի խաղս զմիմեանս վնասիցեն, թէ՛ պատահամար իցէ եւ թէ՛ ցասմամբ, այդոքիկ դատեալ լիցին նմանապէս եւ ի սպանու-

35

<sup>163</sup> Բ օրին., ԻԳ, 16: Դ թագ., ԺԴ, 6: Եղեկ., ԺԸ, 20

<sup>164</sup> Կանոնք Բասդի Կեսարացոյ ՃԼԱ, Կանոնադիրք Հայոց, Կ. Տ, էջ 131—132. տե՛ս նաև Սաղմոս ԻԳ, 7

թիւնս. և ամբն նման սպանութեանն յիցին: և ի զպաշտօթիւնսն համեմատեալ տուգանքն լիցի, և խափանածոյն և բժշկութեանն տուժիցի: Զայլ ըստ մանկանցն իրաւամբ տեսաք զսասատան:

**Գ Լ Ո Ւ Ն Ի Կ**

5 **ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ Ի ԶՈՒՐՍ ԶՄԻՄԵԱՆՍ ՎՆԱՍԻՑԵՆ ԶՄՆԿՈՒՆԲ**

10 Ի ջուրս լողալով մանկունք զմիմեանս հեղձուցանիցեն, տեսանելով զատեսցեն՝ և թէ պարզմտաբա՞ր ի խաղս, և և թէ ցասուցեալ՝ քինու, և կամ իւրովի՞ դիմեալ ի խորս և անկար ի բերել արտաքս ալլոց: Այդոքիկ  
10 զատեալ համեմատիցի ընդ սպանութեան ամբն և սյնպէս վճիռն տացի իրաւամբը<sup>(59)</sup>:

**Գ Լ Ո Ւ Ն Ի Ե**

15 **ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՄԱՆԿԱՆՑ, ԵԹԷ ԳՐԱՒՈՒ ՊԱՏՃԱՌԱԻ ԶՄԻՄԵԱՆՍ ՇԱՐԺԵՆ Ի ԲԱՐՁԱՆՑ Ի ԽՈՆԱՐՀ ՎԱԶԵԼ, ԵՒ ԸՆԴ ԴԺՈՒԱՐՍ, ԵՒ ԸՆԴ ԶԻՆՍ, ԵՒ ԸՆԴ ԱՅԼ ԻՆՉ ԱՅՍՊԻՍԻՍ ԳՆԱԼ**

Եթէ յասացելոցդ և յայդպիսեացդ պատահի մանկանց, ամբն ըստ սպանմանն դատիցի՝ շարժողին, և կէս վնասու լիցի, թէ մահ լիցի. մանաւանդ թէ վնասեալն առաւել լիցի ամաւքն, ապա թէ խոնարհ՝ կիսու կէս լիցի, որպէս մեռասանամենից և տասնամենից. և այլ ևս խոնարհազոյնքն նովիմբ դատեսցին: Զի որպէս կանոնք ըստ վարդապետաց շարդարացուցանէ բնաւին զայդոսիկ, նաեւ՝ ոչ դատաստան: Եւ թէ կատարելոց իրդ լիցի, դովիմբ դատեսցի:

**Գ Լ Ո Ւ Ն Ի Զ**

25 **ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՎՆԱՍՈՂԱՅ ԶՄԻՄԵԱՆՍ Ի ՊԱՏՃԱՌՍ ՎԱՅՐԱՊԱՐ ԳՐԱԻՈՒՑ**

Սովոր ևն երիտասարդք վայրապար զմիմեանս շարժել՝ բառնալ ինչ ծանոնս, որպէս քարինս և ալլս ալսպիսիս, և վնասիլ և վնասել զմիմեանս: Եթէ որ շարժեացն ինչս եղ ի գրաւու յայտնի, և յայնմանէ որ պատրեալ վնասեցաւ, կէս վնասու արեան լիցի, ըստ որում բանիլ յանցոյց, մանաւանդ թէ պատրեալն ամաւք առաւել իցէ, և խափանածոյն և բժշկութեանն տուժիցի: Եւ զայս եղաք, զի մի՞ վայրապար մահ լիցի:

**Գ Լ Ո Ւ Ն Ի Է**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳԻՆԱՐԲՈՒԱՅ ԵՒ ՆՈՅՈՒՆՑ ՎՆԱՍՈՒՑ**

35 Ի գինարբուս վնաս ինչ եղեալ, ըստ հոգևոր մեր արինաց<sup>165</sup> մի՞ լիցի յաղազս այնորիկ ինչ ներել, զի նախ արբեցութիւնն դատի: Եւ թէ

<sup>165</sup> Կանոնք Սահակայ է, Յովհաննու Իմաստասիրի Ա և Բ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 371, 576—577 և այլուր:

անդ գմբմեանս ի մարտնչեյն բեկանիցեն եւ կամ խեղիցեն, հաւաստի դատ լիցի, եւ բժշկութեանն եւ խափանածոյն տուծիցի. եւ եթէ մահ գործի՝ տեսցի պատահումնն. թէ մտխտանաք, եւ կամ վրիպամբ, եւ կամ այլաբ այլպիսի՞ք իցէ, յերկս՞ցն շարժեալ եղև, թէ միոյն առաւելաց, 5 եւ այնպէս վճիռն հատցի եւ գին արեանն տուծեսցի: Եւ դէնարբուացն կցորդութիւնն դատիցի հաւաստի, եւ նոցայն ընդ նմին լիցի տոյժն. եւ թէ ի զպայութեանցն ինչ վնասիցի, ըստ այնմ եւ դատն լիցի: Բայց զի ըստ Աւրիւնացն մահու են իսկ արժանի, այլ զի խրատ ի ձեռս առցեն եւ ըստ Աւետարանիս<sup>(60)</sup> ապրիցին<sup>166</sup>, Զայդ պատշաճ վարկանիմք դատաստան: Եւ զայդ նախախնամաբար գործիցեն, զի թէ չիցէ երկիւղ նոյն 10 գործոյ շարի, մի՛ լիցի խրատ, բայց միայն տոյժ եւ ապաշխարութիւն:

Գ Լ Ո Ւ Ն Ի Ը

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՇՆԱՅՈՂԱՅ ԵՒ ԱՅԼՈՅ ՉԱՐԱԳՈՐԾԱՅ

Յորժամ յայտնի շար գործ շնացողաց ընդ առնակնոջ, վրէժ լիցի 15 դատաստանաւ: Եթէ կամաբ եւ կոշմամբ կնոջն իցէ, եւ եթէ լըբութեամբ առն պղծի, մի անգամ եթէ բազում անգամ, եւ այսու եթէ պարտաւորի այլն վնասիչ, ըստ Աւրիւնացն մահու արժանի է <sup>167</sup>, այլ ըստ Աւետարանիս փրկանաբ լիցի արիւնն, ընդ [նմին] հարցի եւ կամք կնոջն, եւ այլն: Բայց այլք ի դատաւորաց արժան վարկան հատանել պատկանս այդոցիկ 20 եւ զանասնապղծի եւ զարուպիտի. այլ ներէ արէնք զայդ իսկ զպատուհաս կանոնական եւ փրկանութ: Եւ դոքա լիցին, եթէ հարկ ինչ իցէ դատաստանի:

Եթէ յայլազպեաց պատահի, եւ ընդ ձեռամբ մեր իցեն, հատանելն իրաւացի է:

25 Իսկ եթէ ընդ այրոյ շնայցէ, եթէ խաբիցէ առնուլ կին, եւ կամ ի կնոջն իցէ պատճառն, եթէ բռնադատելով զայդ դատեալ եւ պարտաւոր ցուցեալ, այլն տուծիցի ըստ արիւնակի կիսոյ խաւսեցելոյ կուսին<sup>168</sup>, եթէ առցէ կին եւ թէ ոչ զպարտեալն այլք<sup>(61)</sup>:

Գ Լ Ո Ւ Ն Ի Թ

30 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՈՒՍԻՑ, ՈՐՔ ՉԻՅԵՆ ԽԱՒՍԵՅՅԱԼ

Զխաւսեալն բռնադատել՝ նոյն կացցէ դատաստան առնակնոջն, ըստ որում արիւնակի եւ իցէ<sup>169</sup>:

Ապա եթէ գտանիցէ որ աղջիկ կոյս, որ չիցէ խաւսեալ առն, եւ բռնաբար ննջիցէ ընդ նմա, տացէ այլն, որ ննջեացն ընդ նմա, հար աղջկանն

<sup>166</sup> Մատթ., Ե, 28, 29 և այլն:  
<sup>167</sup> Ղևտ., Ի, 10: Բ օրին, ԻԲ, 22  
<sup>168</sup> Տե՛ս հոգվ. 2Ա  
<sup>169</sup> Տե՛ս հոգվ. ԻԳ

յիսուն երկգրամեան արծաթոյ, եւ նորա լիցի կին. եւ մի՛ իշխեսցէ արձակել զնա զամենայն ժամանակս իւր<sup>170</sup>,

Այդ՝ ըստ Աւրինացն<sup>170</sup>. մեզ լիցի՝ անբաժին սուն առնուլ զնա անարձակելի: Ապա թէ ոչ կամեսցին, ըստ խաւսելոյն տոյժն լիցի<sup>171</sup>,

5

ԳՂՈՒՅ Լ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԲԱՄԲԱՍԱՆԱՅ ԶԿԱՆԱՅՍ

Եթէ ոք առնուցու կին եւ ատիցէ, եւ ստուժեամբ բամբասիցէ ոչ լինել կոյս, խոստովանութեամբ ճշգրտեալ կնոջն եւ այլոց կանանց դիտութեամբ, խրատիցի այրն գանիւ եւ տուժիցի հարիւր սիկղ ըստ Աւրինացն<sup>172</sup>, համեմատեալ ընդ մերս, եւ նորին լիցի կինն, եւ մի՛ արձակիցէ զամենայն ժամանակս: Ապա թէ ճշմարտիցի բանն, եւ ոչ գտցին կուտութիւնք աղջկանն, մահ ըստ Աւրինացն<sup>173</sup>: Եւ առ մեզ լիցի. առնն արձակել, եթէ կամիցի, եւ պահել՝ եթէ հաճոյ իցէ, եւ ոչ հրապարակիցէ, զի բազում ինչ վրիպանաք գործի կուտից, եւ զի ոչ ի տան առն եղեւ անարգութիւնն: Եւ այրն, եթէ արձակէ, իշխան է առնուլ կին, եւ կինն՝ այր, զի ոչ ընդ արինաւք առն շնացաւ: Ըստ լրման եւ ճշգրտելոյ եղիցի մեզ այս դատաստան: Եւ թէ ոչ կամիցի առնուլ ըստ սուտ բամբասանացն, եւ այնորիկ ցուցեալ է տուգանքն յայլսն<sup>174</sup>:

ԳՂՈՒՅ ԼԱ

20

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԳԱՒԱՌԱՅ ԵՒ ԳԻՒՂԻՑ ԵՒ ՆՈՑՈՒՆՑ ԻՐԱՅ

Ի գաւառս ոսկեհանս գտեալ յամենայն սահմանս իշխանաց, արքունի լիցի, իսկ արծաթ՝ թագուհեաց. եւ ի կամս նոցա է մասնաւորել նոցա կամ ոչ:

25

Այլ պղինձ եւ երկաթ եւ այլք ի նմանեաց սոցին՝ իշխանաց իցէ մեծամեծաց, պարզեաւք թագաւորաց. նմանապէս եւ՝ աղ եւ բարակ, նաւթ եւ կուպր, ապակի եւ այլ ինչ այսպիսի:

30

Իսկ ակն եւ մարգարիտ արքունի լիցի, եւ այլ ինչ՝ ի պատուաւորաց: Իսկ ձիւթ, եւ խունկ, եւ զնղնախունկ, գղթոր եւ մազտաքէ, զարիկոն եւ սակամոնի եւ այլք այսպիսիք, որք վաճառին եւ շահին, տասանորդիցին իշխանաց<sup>(88)</sup>:

Իսկ պտուղ ամենայն, դրեալ ի մայրիս իւրաքանչիւր սահմանաց, նոցին լիցի շինականաց: Իրաւացի է տասանորդել ատարացն ի կթել

170 Բ օրին., ԻԲ, 28, 29

171 Տե՛ս հոդվ. ԶԱ

172 Բ օրին., ԻԲ, 13—19

173 Բ օրին., ԻԲ, 20—21

174 Տե՛ս Կանոնք Բառուղի Կեսարացոյ Ժ, Շահապիվանի Դ և այլոր, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա. էջ 342, 435

պտղոյն<sup>(64)</sup>, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ, որոց իցէ սահմանն, եւ ըստ խնդրոյ նոցին կամաւք եղիցի: Այսպէս եւ՝ փայտ ի շինուած, եւ խոտ յարատ, եւ ի հնձիկ, եւ հող ի վարկլ:

Այլ գետք, յորոց հոսին սահմանաց՝ ոչ է, բայց առ որ հասանեն<sup>(65)</sup>:  
5 Եւ որսք իւրաքանչիւր նոցա լիցին, առ որս անցանեն. եւ յաւտարաց որսացեալ՝ տասանորդիցի, որոյ եւ իցէ սահմանի<sup>(66)</sup>, նմանապէս եւ ի մայրեաց հանեալ որս այնոցիկ տասանորդիցի, որոյ եւ իցէ սահմանն: Ըստ այսմ եղիցի եւ ծովու որս, ըստ որում յայլսդ:

Գ Լ Ո Ւ Պ Լ Բ

10 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳԻՒՏԻՑ

Եթէ պատահիցի ումեք գտանել յանդաստանի, կամ յայլ ինչ ի կա-  
լուած իւր, կամ ի շինել զտուն իւր, ոսկի կամ արծաթ ի գանձուց, եթէ  
նմանութեամբ գիտասցեն, թէ յառաջնոց թագաւորաց է, արքունի լիցի<sup>(67)</sup>  
եւ գտողին տասանորդիցի՝ յազազս տեղւոյն եւ գտանելոյն՝ կրկին, ապա  
15 թէ գտանելն միայն իցէ, պարզաբար տասանորդիցի, եւ տեղւոյն տեառնն  
կրկինն լիցի: Իսկ եթէ կարծիցի նախարարի ուրուք, եւ թէ այլոց փարթա-  
մաց, եթէ յազգէ նոցա իցեն, որոց անկ իցէ ժառանգութիւնն՝ նոցա լիցի,  
եւ տասանորդիցի արքունի, եւ գտողին, եւ տեղւոյն. թէ չիցէ իւրեանց:  
Ապա թէ ի դէպ իցէ իւրոց նախնեացն լինել, տասանորդիցի արքունի: Եւ  
20 եթէ ի վարձկանաց ոք իցէ գտողն, ոչ կարծեմ իրաւացի տասանորդել,  
այլ մասնաւորել:

Գ Լ Ո Ւ Պ Լ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿՌՈՒՈՂԱՑ ԵՒ ԽՈՂԱՑ ՉՄՈՐՈՒՄ

Եթէ կռուիցին արք, եւ մին պատահի անկատար լինել եւ յանդգնեալ  
25 փետտիցէ զմորուս կատարելոյն, դատաստան լիցի. կրկին մասամբ զհեր-  
սքն հատանել եւ զանիւ ըստ արժանւոյն կռկժեցուցանել, մանաւանդ զի  
զպատուաւոր անարգեաց<sup>(68)</sup>: Ապա թէ բռնագոյն եւ կամ պատուաւոր  
յանդգնեալն իցէ, միոյ զգայութեան տուգանի կէսն լիցի ի տուգանս Եւ  
այդ առ այդ լիցի, զի այլոց արինակն ցուցեալ է կռուոյ դատաստա-  
30 նաց<sup>175</sup>,

Գ Լ Ո Ւ Պ Լ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀՈՐՈՑ ՍԵՐՄԱՆՑ

Եւ թէ բացեալ ոք հոր ցորենոյ եւ կամ այլոց սերմանեաց՝ չիւրոց  
թէ յաւտարաց ի ներքս թողցէ հանել ի նմանէ, եւ մեռանիցի, մահու

<sup>175</sup> Տե՛ս հոգվ. ԽԲ և Կ

դատաստան լիցի. և թէ ախտացի, բժշկութեանն և խափանածոյն տու-  
մեացի, զի պարտ էր թողուլ մինչ յեւանել հոտոյն և այնպէս զգուշանալ:  
Եւ այդ ըստ այդմ կացցէ դատաստան: Սակայն վարձու կալիւսն և կան-  
խաւ զգուշացուցեալն տեսցի ճշգրիտ քննութեամբ, նմանապէս և՛ բռնա-  
դատեալն:

5

**ԳԼՈՒԽ ԼԵ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎՆԱՍԵԼՈՑ ՇԻՆԱԿԱՆԱՑ Ի ՏԵՐԱՆՑ ԱՌԱԻՅԷ,  
ՔԱՆ ԶՍՈՎՈՐԱԿԱՆՆ ԼԵԱԼ ՀՐԱՄԱՆ**

Եւ թէ աւելի, քան զարէնն, անգթաբար հրամայիցէ գործել, և այնու  
վնաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկիւ անկելոց, պարտապան լիցի  
10 արեան դատաստանի գերագունից տերանց, և ըստ արժանւոյն զապա-  
շաւանս ցուցցեն խոնարհութեամբ, և զայլսն ի վնասից՝ զբժշկութեան և  
զխափանածոյն հատուցեն, և յանբժշկելացն՝ զտուգանս<sup>(70)</sup>:

**ԳԼՈՒԽ ԼԶ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ՈՐ ԶԻՅԵՆ ՔԱՀԱՆԱՅՔ ԵՒ ԻՐՍ  
ԻՆՉ ԳՈՐԾԻՑԵՆ, ԵՒ ԿԱՄ ՔԱՀԱՆԱՅՔ՝ ԱՆԻՐԱԻՍ ԻՆՉ**

Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ մի՛ ոք յանդըգ-  
նեսցի ի մարդկանէ, որոյ շիցէ զաւժումն քահանայութեան ընկալեալ, և  
արասցէ իրս ինչ իշխանութեամբ իբրև զքահանայ, և կամ քահանայ  
աշառանաւք և ակնառութեամբ գործիցէ ինչ առանց արինաց և իրա-  
10 ւանց, այլ արդարութեամբ և անակնառութեամբ<sup>176</sup>:

Եւ զայս ահա զառաքելական կանոնի զհրաման այսպէս դատել պար-  
տին առաջնորդք, զի զսովորութիւնն չար լուծցեն, զոր աշխարհականք  
առնեն արք և կանայք՝ վերակացու լինել եկեղեցւոյ, և զքահանայս  
լուեցուցեն զաւշաքաղութեամբ վարեալս և ակնառութեամբ և այլովք  
25 ախտիւք: Եւ այդ ճշմարիտ դատաստան է յեկեղեցի անզղշից, իսկ զղշա-  
ցելոց՝ ուղղիլ<sup>(71)</sup>:

**ԳԼՈՒԽ ԼԷ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶՔԱՀԱՆԱՅՍ ԱՆԱՐԳՈՂԱՅ**

Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ մի՛ ոք անար-  
30 գեսցէ, և անգոսնեսցէ, և արհամարհանաւք կալցի զքահանայն, թէ եւ  
կարի ոք յանարզաց իցէ. զիտասցէ, զի զԱստուած անարգէ, զի Աստու-

<sup>176</sup> Կանոնք Առաքելականք ԻԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 43  
4-494

ծոյ սպասատոր է ձեզ ի բարիս, եւ համարս տացեն ընդ ողոց ձերոց. ո՛չ զրեալ է՝<sup>177</sup> զիշխան ժողովրդեան քոյ մի՛ բամբուսիցես՝<sup>178</sup>,

5 Եւ զայս դատաստան եւ որ նախ քան զսա երբեմն թէ եւ սակաւ ինչ գրեցաք՝<sup>179</sup>, այլ երկրորդել յստժարեցաք այժմ յառաքելական կանոնաց՝  
5 ցուցանելոյ աղադաւ զմեծութիւն պատժոցն անարդողաց քահանայից, զի դատել զոյդ է զնոսա ընդ աստուածանարգս՝ իրաւացի դատաստանաւ. ըստ այնմ՝ որ զձեզ անարգէ, զիս անարգէ՝<sup>180</sup>: Եւ որ շիցեն՝ եւ այն իսկ ըստ արժանւոյն ցուցաւ՝<sup>181</sup>:

ԳՆՈՒՅ ԼԸ

10

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԴԱՏԱԻՈՐԱՑ

Կարգեցին առաքեալքն եւ եզին հաստատութեամբ, եթէ որք են յաշտի-  
ձան դատաւորութեան եւ իշխան են առնել դատաստան, եթէ թիրիցէ եւ  
աշտիցէ երեսաց, եւ պարտաւորիցէ զարդարն եւ արդարացուցէ յդ-  
պարտաւորն, մի՛ եւս կացցէ ի կարգի դատաւորութեանն եւ պատուհասե-  
15 15 ալ կշտամբիցի, զի ոչ իմացաւ զգրեալսն աստուածային ձեռամբն յԱւ-  
րէնսն Մովսիսի՝<sup>182</sup>, եթէ մի՛ խոտորեցուցես զիրաւունս ի դատաստանի եւ  
կաշառ ի վերայ իրաւանց մի՛ առնուցուս՝<sup>183</sup>,

Ի դատաստանէ դատաւորացս, ի կանոնական հրամանացս ուսաք՝  
մի շնորհ յաշտիձանսն լինել եւ եկեղեցւոյ զդատողութիւնն. եւ եթէ ար-  
20 տաքոյ իրաւանց եւ աշառանաւք վարիցի, անկցի յայնմ շնորհէ: Զի գոն  
եւ դատաստանք դատաւորաց ի վեհիցն քան զնոսա՝ զիտողացն զիրա-  
ւունս Աւրինացն<sup>(72)</sup>:

ԳՆՈՒՅ ԼԹ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԸՆԶԻՑ ԵԿԵՂԵՅԻՈՅՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

25 Եղիցին յայտնի եւ եպիսկոպոսին իրք, եթէ առանձին ինչ ունի, եւ  
եկեղեցւոյն յայտնի լիցի, զի իշխանութիւն կալցի իւրոցն, վախճանեալ  
եպիսկոպոսն, որոց կամի, թողուլ, եւ մի՛ պատճառանաւք եկեղեցական  
իրաց անկանել յիւրմէն եպիսկոպոսին, թերեւս կին եւ մանկունս ստացե-  
ալ ունիցի, կամ ազգական կամ ծառայս: Զի իրաւացի է Աստուծոյ եւ  
30 մարդկան, զի մի՛ եկեղեցւոյն վնաս ինչ կրել անգիտութեամբ եպիս-

177 Եւբ, ԻԲ, 28: Գործք առաք. ԻԳ, 5

178 Կանոնք Առաքելականք, ԻԾ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 43—44

179 ՏԵ՛ս հոդվ. Ե

180 Ղուկ., Ժ, 16

181 ՏԵ՛ս հոդվ. ԼԶ

182 Եւբ, ԻԳ, 6, 8: Ղևտ., ԺԲ, 15: Բ օրին., ԺԶ, 19

183 Կանոնք Առաքելականք ԻԶ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 44

կոպտսին իրաց, եւ մի՛ զեպիսկոպոսն եւ զազգականնսն իւր պատճառա-  
նաւք եկեղեցւոյն յամենայնէ՛ զերծանել, եւ կամ յիրս ինչ անկանել նորա  
սպգականացն եւ մահու նորա լինել պատճառք հայհոյութեան<sup>184</sup>։

5 Ահաւանիկ յանդիմանին բամբասողքն՝ զեկեղեցի, եթէ դատաստան  
ուչ ունի, զի այս իրաւունք դատաստանաց նոցունց իսկ է առաքելոցն. զի  
եւ զդատաւորս հրամայեն դասել զանիրաւս, եւ զեպիսկոպոսաց եւ  
զեկեղեցւոյ զընչից ցուցին զիրաւունս։ Յորոց յայտ է, զի ոչ միայն ասան-  
դութեամբ վարէին դատաստանաւ, այլ եւ շափաւոր գրեցելովքն՝ իբր  
պատկերաւ գրաւանդակն ուսեալք վարէին։ Ըստ այդմ եւ մեզ յոյժ ի դէպ  
10 է վարիլ եւ մի՛ այլազգ ինչ։

ԳՂՈՒԽ Խ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԻՇԽԵԼՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅՆ  
ԻՐԱՑ

15 Հրամայեմք եպիսկոպոսին իշխանութիւն ունել եկեղեցական իրաց,  
բանդի թէ զպատուական հոգիս մարդկան նմա հաւատալի է, առաւել եւս  
իրաւացի է զիրս կատարել, որպէս զի ըստ իշխանութեան նորա խնամ ու-  
նել կարաւտելոց, եւ ի ձեռն երիցանց եւ սարկաւազաց ունել խնամակալու-  
թիւն երկիրդիւն Աստուծոյ եւ ամենայն զգուշութեամբ առնել. եւ ինքեանք  
իսկ, եթէ կարաւտ ինչ իցեն, եւ յաւտարաց եղբարց ի պէտս, զի մի՛ ինչ  
20 իրաւք նոցա պակասութիւն լիցի, վասն զի Աւրէնքն Աստուծոյ հրամայեն՝  
որք սեղանոյն պաշտակեայք են՝ ի սեղանոյ անտի կերակրել.<sup>185</sup> ըստ  
որում եւ ոչ զինուորն իւրովք թոշակաւք զզէնս զպատերազմացն բերէ<sup>186</sup>։

Եւ զի ասաց վերագոյն<sup>187</sup> եպիսկոպոսին իրաց յայտնի լինել եւ  
եկեղեցւոյն, եւ թէպէտ յաւել զպատճառն, զի մի՛ կարծիցի ոչ իշխել  
25 եպիսկոպոսին իրաց՝ եկեղեցւոյն, եցոյց զիշխանութիւնն, սակայն եւ  
զսահմանն յայտ արար, զի մի՛ վայրապար ինչ գործիցէ, զոր եւ իրաւա-  
ցի կարծեցի է ի դատաստանս եկեղեցւոյ։

ԳՂՈՒԽ ԽԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ՔԱՂԱՆԱՅԻՑ, ՈՐ  
ՉՊԷՏՍ ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅՆ ՈՉ ՏԱՅՑԵՆ

30 Եպիսկոպոս ոք կամ երէց, ի ժառանգաւորացն, որ կարաւտ իցեն, եւ  
ուչ տայցէ նոցա զպէտս, որոշեսցի իբրեւ զսպանող եղբար իւրոյ<sup>188</sup>։

Լուիցեն զկանոնականս դատաստան հարք միաբանաց, զի զանգութ  
բարսն ընդ սպանողս կարգէ, եւ այդմ դատաստանի բազում կան վկայք։

184 Կանոնք Կղեմայ լԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 85—86  
185 Ա Կորնթ., Թ. 13  
186 Կանոնք Կղեմայ լԹ, Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 86—87  
187 Տե՛ս հոդվ. լԹ  
188 Կանոնք Կղեմայ ՄԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 90

Գ Լ ՈՒ Մ Խ Բ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ Ի ԿՐՈՒՄ ԶԱՐԿԱՆՈՂԱՑ

Եթէ ոք ժառանգաւոր ի կոտի զոք հարցէ, եւ ի միողէ հարուածոյն մեոցի, լուծցի վասն յանդգնութեան իւրոյ, իսկ եթէ ժողովրդական ոք  
5 իցէ՝ որոշեսցի<sup>189</sup>;

Եւ այս կանոնական հրաման ըստ Աւրինացն է<sup>190</sup>. զի թէ ոչ մեոցի, այլ ի մահիճս դնիցի, եւ յառնիցէ եւ շրջիցի ի ցպոյ, անպարտ լիցի, որ եհարբն: Սահման եզ, զի թէ զկնի այնր մեոցի. սոյն եւ այս է ի միողէ հարուածոյ: Ապա թէ ոչ մեոցի ի միողէ հարուածոյ, ոչ լուծցի, այլ դատաստան լիցի յուղղութիւնն եւ յապաշխարութիւնն՝ եթէ՝ ժառանգաւոր եւ եթէ՝  
10 ժողովրդական:

Գ Լ ՈՒ Մ Խ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՐԿՐՈՐԴ ԶԵՌՆԱԴՐԵԼՈՑ

Եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաազ երկրորդ ձեռնադրութիւն  
15 ընկալեալ յումեքէ, լուծցի նա, ե՛ւ որ ձեռնադրեացն, քայց եթէ ցուցցէ ի թերահաւատից ունել նմա զձեռնադրութիւնն, քանզի յայսպիսեանցս զմկրտեալն եւ զձեռնադրեալն ո՛չ հաւատացեալս եւ ո՛չ ժառանգաւորս հնար է լինել<sup>191</sup>:

ձեռնադրեցան, ուստի իրաւացոյց լուծանել զնոսա իրաւամբբ:  
20 ի հայրապետէ կամ ի ժողովոյ, այլ զոր տակաւին յաշտիճանի իցէ, այնպիսին ախտացեալ ամբարտաւանութեամբ զործէ, նմանապէս եւ՝ որ ձեռնադրեցան, ուստի իրաւացոյց լուծանել զնոսա իրաւամբբ:

Եւ ի թերահաւատից, այսինքն՝ ի հերձուածողաց, զմկրտեալսն եւ զձեռնադրեալսն հրամայէ երկրորդել:

25

Գ Լ ՈՒ Մ Խ Դ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՈՂՈՑ ՅԵԿԵՂԵՑՈՑ

Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական առցէ ի սուրբ եկեղեցոյ մոմեղէն կամ ձէթ, որոշեսցի եւ հնգապատիկ տուժեսցի, որով առն անաւթով ոսկեղինաւ կամ արծաթեղինաւ սրբեցելով: Եւ մի՛ ոք ի պէտս  
30 գողացեալ, զի արինազանցութիւն է. ապա եթէ ոք ըմբռնեսցի՝ պատուհասեալ<sup>(73)</sup> որոշեսցի<sup>192</sup>:

189 Կանոնք Կղեմայ ԿԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 91

190 Ելք, ԻԱ, 18, 19

191 Կանոնք Կղեմայ ԿԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 91—92

192 Կանոնք Կղեմայ ԿԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 92—93

## ԳՂՈՒՄ ԽԵ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԱՄԲԱՍՏԱՆՆԸՆՑ

Եպիսկոպոս ամբաստանեալ առաջի հաւատարմաց ոմանց կամ հաւատացելոց, կարդալ զնա հարկաւոր է եպիսկոպոսաց: Եթէ եկեալ խոստովանեսցի, յանդիմանեալ զնա՝ սահմանեսցի պատուհասն: Ապա եթէ կարդացեալ զնա՝ ոչ լուաւ, կոչեսցի երկրորդ անգամ յառաքելոց առ նա երկուց եպիսկոպոսաց: Ապա թէ եւ այսպէս ոչ լուաւ, կոչեսցի երրորդ անգամ դարձեալ յերկուց եպիսկոպոսաց առաքելոց առ նա: Ապա թէ եւ այնպէս արհամարհեալ ոչ եկեսցէ ի ժողովն, վճիռն հատցի այնպիսոյն՝ որ ինչ արժանն թուեսցի, որպէս զի մի՛ շահել ինչ թուեսցի<sup>(193)</sup> փախուցելոյն<sup>193</sup>:

Այդ ճշմարիտ իրաւունք են ամբաստանելոցն առնել ըստ այդմ: Իսկ վճիռն այնպէս ընտրին, զի զպատճառն ստուգագոյն գիտելով հատցի:

## ԳՂՈՒՄ ԽԶ

## 15 ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎԿԱՅԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Եւ ի վկայութիւն զթերահաւատ ոք մի՛ ընդունել, այլ եւ ոչ զհաւատացեալ զմի, քանզի ի բերանոյ երկուց եւ երից վկայից<sup>194</sup> հաստատեսցի ամենայն բան<sup>195</sup>:

## ԳՂՈՒՄ ԽԷ

## 20 ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԶԶԵՐԱԿՐԵՆԻ ԶՈՔ ՅԻՐՈՑՑՆ ԱՐՏԱՔՈՑ ԿԱՄԱՑ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՅԼՈՑՆ

Զի ոչ է պարտ եպիսկոպոսին եղբաւք, կամ որդոյ, կամ աչունմ ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի՝ ձեռնադրել ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ: Զէ արժան զԱստուծոյն շնորհել մարդկային սիրոյ, քանզի եւ ոչ զեկեղեցին ընդ ժառանգութեամբ դնել: Ապա թէ ոք արասցէ զայս, անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա, եւ ինքն որոշեսցի<sup>196</sup>:

Կանոնականս իրաւունք այսպէս է. զի ոչ իշխէ իւրոցն տալ, եւ ոչ միայն ձեռնադրել, եւ ոչ զեկեղեցին ժառանգութիւն առնել: Ապա եթէ յանվզնի, հոգեւոր դատաստան է. թէ հաճոյ բազմաց թուեսցի՝ արհնութեամբ մասնաւորաւ հաստատել, ապա թէ ոչ՝ նոյն անհաստատ կացէ, եւ ինքն որոշեսցի, մինչև զարժանաւոր զապաշխարանս ցուցցէ:

193 Կանոնք Կղեմայ ԿԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 93

194 Բ օրին., ԺԹ, 15: Մատթ., ԺԸ, 16: Ա, Տիմ., Ե, 19 և այլուք:

195 Կանոնք Կղեմայ ԿԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 94

196 Կանոնք Կղեմայ Հ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 94

## ԳԼՈՒԽ ԽԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՈՐ ԱՐԿԱՆԷ  
ԶԱՆՁՆ ՅԵՐԿԻՐԱԿՈՐ ՀՈԳՍ

Ոչ է պարտ եպիսկոպոսին արկանել զինքն յերկրատր հոգս, այլ պարտպել եկեղեցական պիտոյից, ապա թէ ոչ՝ ի բաց դնիցէ<sup>197</sup>, զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել<sup>197</sup>, ըստ տէրունական բանին<sup>198</sup>,

Եւ զայս ոչ յաղագս հոգալոյ զիշխանացն պարտիմք իմանալ միայն, այլ թէ եւ ըստ պայմանի զվիճակ առցէ յայլազգեաց, որպէս եւ այժմ գործեն բազումք յեպիսկոպոսաց եւ ի քահանայից, որոց եւ տէրունականն զարժանաւորն բերէ դատաստան, ասելով՝ ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել: Յայտ է, զի զանգեղջսն հրամայէ լուծանել իրաւամբք:

## ԳԼՈՒԽ ԽԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԶՄԱՌԱՅՍ Ի ԺԱՌԱՆԳԱԿՈՐՈՒԹԻՒՆ ԱՍԵԼ  
ՆՇԱՆԱԿ

Զծառայս ի ծառանգաւորութիւն ընդունել առանց կամաց տերանցն՝ ոչ հրամայեմք, ի տրտմութիւն ստացողացն, քանզի տանց կործանումն այս գործէ: Ապա եթէ երբէք արժանի երեւեսցի ծառայն առ ի ձեռնադրութիւն աշախճանի, որպէս Ոնէսիմոսն<sup>199</sup> Երեւեցաւ, եւ թողացուցեն տեարք իւր, եւ ազատեսցեն, եւ ի տանէն ի բաց առաքեսցեն, եղիցի<sup>200</sup>:

Դատաստան կանոնացս հրամայէ զայնոսիկ պահել անգայթակղ զեկեղեցին, զի մի՛ պատճառաւ բարեպաշտութեան վնաս ինչ գործիցեն եւ տեղի տայցեն շարախաւաց զմէնջ:

## ԳԼՈՒԽ Խ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՆԱՐԳՈՂԱՑ ԶԹԱԳԱԿՈՐ ԿԱՄ ԶԻՇԵԱՆ

Եթէ ոք թշնամանեսցէ զթագաւորս եւ զիշխանս անիրաւաբար, պատուհաս կրեսցէ. եթէ ծառանգաւոր է՝ լուծցի, իսկ եթէ ժողովրդական՝ որոշեսցի<sup>201</sup>:

Եւ զայս դատաստան դատել եպիսկոպոսաց եւ վարդապետաց է, զի պատկեր են Աստուծոյ թագաւորք եւ իշխանք: Եւ թէ անզեղջ անարգողն իցէ ծառանգաւոր, իրաւացի է լուծանել, եւ սշխարհական ոք՝ որոշել, մինչեւ զղջացի: Եւ այդ հաստատիցի այժմ:

197 Մատթ., 2, 24, Ղուկ., ԺԶ, 13

198 Կանոնք Կղեմայ 2Ե, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 95

199 Փիլիմ., Կողոս., Դ, 9

200 Կանոնք Կղեմայ 2Զ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 95—96

201 Կանոնք Կղեմայ, 2Ը, անդ, էջ 96

ԳՆՈՒՄ ԾԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԵՂՁՈՒՑՈՂԱՅ ԶՏՂԱՅՍ

5 Եթէ հեղձուցանէ որ գտղայ իբրեւ զխեղ կամ ի շնութենէ, կամաւ զայն արարեալ՝ փոխանակ ինքն մեռցի, զի որպէս ոչ է հնար ի վեր կացուցանել, նոյնպէս եւ ոչ ապաշխարել<sup>202</sup>,

Եւ զի ըստ Աւրինացն ակամայիցն եւ ոչ կամաւորացն ապաստանի եղև ի քաղաքսն ապրել<sup>203</sup>, եւ զի ըստ Աւրինացն յաղագս հաւատացեալ Հրէիցն վարի, ուստի եւ յետոյ եւ այդմ տուաւ ապաշխարութիւն: Եւ այդոցիկ կամաւոր իտաստովանողացն ապաշխարութիւն, իսկ անզեղչիցն՝ 10 արեան դատաստան:

ԳՆՈՒՄ ԾԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՈՂՈՑ ԵՒ ԱԻԱԶԱԿԱՑ ԵՒ ՆՈՑՈՒՆՅ ՄԵՍԱՐՈՂԱՑ

Գողք կամ ասպնջական իւր, ըստ կամաց եկեղեցւոյն, զնոսա մահու մատնել արժանի լիցի, զի հնացեալ աւազակն եւ իւր հացամեծարքն միշտ 15 լինին ի մահ դատապարտեալք: Զայդր զկնի պարտ է դատաւորին հետեւել<sup>204</sup>,

Եւ զայս մարդագողոց եւ աւազակաց ասէ եւ ըստ Աւրինացն հրամայէ ի մահ դատապարտել<sup>205</sup>, նաեւ՝ զկամակից հացտուն. եւ ըստ եկեղեցւոյ արինաց եւս կարգէ:

20 Բայց զկնի կանոնաց եւ այդ եւս ցուցեալ է դատաստան<sup>206</sup>,

ԳՆՈՒՄ ԾԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՌԵՒԱՆԳԱՑ

25 Զանուանգ, թէ եւ որդիս ծնցի, եւ հայր, եւ մայր, եւ աղջիկն շկամիցին, մի՛ ինչ վնաս կրիցէ ի շարագաւաան հոգւոյն, անդրէն դարձուցանել<sup>207</sup>,

30 Եւ այտ է, թէ պօսակեալ եւ թէ առանց պսակի ընդ բռնապսակսն է արտաքոյ կամաց: Եթէ ձեռնհաս իցեն, անխիղճ է անդրէն դարձուցանել եւ կամաւք պսակել: Իսկ եթէ յետոյ կամեցան, ապաշխարութեամբ կարգեսցի, որպէս եւ զայս ցուցեալ է կանոնաց<sup>208</sup>: Եւ այդ ճշմարիտ դատաստան է եկեղեցւոյ:

<sup>202</sup> Կանոնք Հարանց հետեւողաց Ա, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 103: Տե՛ս նաև Կանոնք Թաղէտի ԻԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 36

<sup>203</sup> Թիւք, ՎԾ, 9—15: Բ օրին., ԺԹ, 2—7: Յետւ, Ի, 2, 3

<sup>204</sup> Կանոնք Հարանց հետեւողաց Դ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 104

<sup>205</sup> Ելք, ԻԱ, 16: Բ օրին., ԻԳ, 7

<sup>206</sup> Տե՛ս հոդվ. ԵԸ

<sup>207</sup> Կանոնք Հարանց հետեւողաց ԺԾ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108

<sup>208</sup> Հեղինակն ակնարկում է Գրիգոր Լուսավորչի Թ, Բարսեղ Կեսարացու ՄԺԶ (հ. Բ, էջ 159), ԾԲ (հ. Բ, էջ 115) և Շահապիվանի ժողովի է կանոնները:

ԳՂՈՒԽ ԾԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԾԱՌԱՅԻՑ ԱՌՆԼՈՎ ԸՍՏ ԱՌԻՆԱՑՆ

Եթէ պատահի քրիստոնէի գնել ծառայ քրիստոնեայ, ըստ Աւրինացն՝  
 վեց ամ ծառայել եւ ելանել յեթներորդ ամին<sup>209</sup>, Եղիցի մեզ՝ յորժամ ըստ  
 5 գնոյ իւր ծառայեսցէ, ելցէ ազատ: Եթէ ինքն միայն մտեալ իցէ, միայն  
 ելցէ, եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ, ելցէ եւ կինն ընդ նմա:

Ապա թէ տէր իւր տացէ նմա կին, եւ ծնանիցի նմա ուստերս եւ դրս-  
 տերս. կինն եւ որդիքն տեառն նորա եղիցին, եւ նա միայն ելցէ. փրկանաւք  
 ելցեն եւ նոքա<sup>(76)</sup>: Ապա եթէ պատասխանի տուեալ ասիցէ ծառայն՝ սի-  
 10 ընցի զտէր իմ, եւ զկին իմ, եւ զորդիս իմ, եւ ոչ զնասցէ յազատութիւն,  
 տարցէ զնա տէր իւր յեկեղեցի Աստուծոյ եւ քահանայիւք, եւ հաւատարիմ  
 վկայիւք, եւ զրով առցէ զնա ծառայ յաւիտեան<sup>210</sup>: Եւ մի յաղագս այնո-  
 ըրիկ փոյթ կալցէ, եթէ եւ կարիցէ ազատ լինել, զի ըստ առաքելոյ՝ Տերամք  
 կոչեցեալ ծառայն ազատ Տեառն է<sup>211</sup>:

15

ԳՂՈՒԽ ԾԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՂԱԽՆՈՅ

Իսկ եթէ պատահի ումեք վաճառել զոռատր իւր, ըստ որում եւ իցէ  
 պատճառի, յաղախնութիւն առն հաւատացելոյ, մի՛ իբրև զաղախին  
 վճառ վաճառիցէ, զի թէ ոչ իցէ յաշտ տեառն իւրոյ հաճոյ, որում հաստե-  
 20 ցան, փրկիցէ զնա հայրն իւր: Բայց յազգ աւտար չէ իշխան վաճառել  
 զնա տէր իւր, զի անարգեաց զնա. ապա թէ որդւոյ իւրում հաստիցէ զնա,  
 ըստ արինաց դասեր արասցէ նմա: Ապա թէ ո՛չ իւր եւ ո՛չ որդւոյ իւրում  
 հաստիցի ի կնուլթիւն, ի ընդ ամի սպասատրութեան նորա շափով գնոյ  
 իւրոյ՝ ազատ լիցի ձրի: Ապա եթէ կանխաւ հայրն իւր փրկել զնա կարիցէ՝  
 25 փրկիցէ<sup>212</sup>:

ԳՂՈՒԽ ԾԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՅԼԱԶԳԻ ԾԱՌԱՅԻՑ, ՆՄԱՆԱՊԷՍ ԵՒ ԱՂԱԽՆԱՅ

Եթէ գնիցէ ոք ծառայ այլազգի եւ կամ աղախին, եթէ յանձն առնուն  
 մկրտիլ՝ ընդ փրկանաւք լիցին. զնոյ շափ ծառայեսալք՝ ազատք լիցին.  
 30 ապա թէ ոչ կամիցին՝ վաճառել իշխան լիցին: Այլ մի՛ յաղագս ոչ ազատե-  
 լոյ հեղգասցին ի մկրտել: Իսկ մկրտելոցն ազատիլ եւ կամ ոչ՝ նոյն լիցի,  
 որպէս ի բնէ քրիստոնէից<sup>213</sup>. նմանապէս եւ՝ աղախնաց:

209 Ելք, ԻԱ, 2, Բ օրին., ԺԱ, 12  
 210 Ելք, ԻԱ, 3-6, Բ օրին., ԺԵ, 16-17  
 211 Ա Կորնթ., է, 22  
 212 Տե՛ս Ելք, ԻԱ, 7-22  
 213 Տե՛ս հոգվ. ԾԳ

## ԳՆՈՒՄ ԾԷ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԱՐԿԱՆՈՂԱՑ ԶՀԱՅՐ ԿԱՄ ԶՄԱՅՐ

Որ հարկանէ զհայր կամ զմայր իւր, մահու մեռցի<sup>214</sup>:

- Այդոքիկ ըստ Աւրինացն<sup>214</sup>, նմանապէս կանոնք լիցին մահու չափ  
 5 ապաշխարել: Իսկ դատաստան այս լիցի. եթէ յանզգայութեան եւ ի  
 մանկութեան գործէ, ներելի է ծնողացն, ապա թէ յանզգնութեամբ եւ  
 արհամարհանաւք՝ իշխան լիցին ծնողքն, յետ բազում անգամ խրատու,  
 առաջի քահանայից եւ ծերոց հրաժարիլ ի նմանէ եւ տարագրել ի ժառան-  
 10 գութենէ: Ապա թէ զղշացեալ ըստ կամաց նոցա դարձցի ապաշխարու-  
 թեամբ արժանապէս, ընկալեալ լիցի դարձեալ<sup>(77)</sup>:

## ԳՆՈՒՄ ԾԸ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՄԱՐԴԱԳՈՂՈՑ

Ով ոք գողացի յորդուցի Իսրայելի եւ վաճառիցէ զնա, եւ գացի առ  
 նմա, մահու մեռցի<sup>215</sup>:

- Իսկ մեզ փոխեալ լիցի այսպիսի լրմամբ. եթէ քրիստոնեայ գողացե-  
 15 ալ զքրիստոնեայ վաճառէ յայլազգիս, եւ յայտ շար գործն զայցէ, յա-  
 ղազս ապաշխարութեանն հասանելոյ մի՛ մեռցի մահու, այլ ի բանտ արկե-  
 ալ՝ երաշխաւորաւք զառեալ պինն յղիցէ եւ դարձուցէ զվաճառեալն. ա-  
 պա թէ չիցէ հնար՝ անզղչիցն լիցի խրատ, զպինն ի գողացելոյն տացնն  
 20 տեարս, եւ խրատեալ յաշս՝ արձակիցենն<sup>(78)</sup>:

## ԳՆՈՒՄ ԾԹ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԱՄԲԱՍՈՂԱՑ ԶՀԱՅՐ ԿԱՄ ԶՄԱՅՐ

Որ բամբաստէ զհայր իւր կամ զմայր իւր, մահու մեռցի<sup>216</sup>:

- Զյայտնի բամբասողաց եւ զյանցանս ծնողացն հրապարակողաց  
 25 զմահու մեռանիլն ասէ, այլ ըստ մեզ՝ դատաստանաց հարկանողաց զժը-  
 նողան լիցի, որպէս ցուցեալն է<sup>217</sup>:

## ԳՆՈՒՄ Կ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿԱԳՈՂԱՑ

- Եթէ կագիցին արք երկու, եւ հարկանիցէ ոք ի նոցանէ զընկեր իւր  
 30 քարիւ կամ բռնցի, եւ ոչ մեռանիցի, այլ զնիցի ի մահիճս, եթէ յառնիցէ

<sup>214</sup> Ելք, ԻԱ, 15

<sup>215</sup> Ելք, ԻԱ, 16: Բ օրին., ԻԳ, 7

<sup>216</sup> Ելք, ԻԱ, 17: Ղևտ., Ի, 9: Մատթ., ԺԵ, 5

<sup>217</sup> Տե՛ս հոդվ. ԾԷ

այրն եւ շրջի ի ցոյսյ արտաքոյ, անպարտ լիցի՝ որ եհարն, բայց զխափանածոյ նորա եւ զբժշկութեան նորա տուժեսցի<sup>218</sup>;

Այս դատաստան լրմամբ յԱրիինացն ասացաւ, եւ մեզ զնոյն ամբողջ պահելի է: Եւ մեռելոյն ասլաշխարութիւն լիցի<sup>(70)</sup>:

5

Գ Լ Ո Ւ Ն Կ Ա

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԾԱՌԱՅԻՅ ԵՒ ԱՂԱԽՆԱՅ,  
ՍՊԱՆԵԼՈՅ Ի ՏԵՐԱՆՑՆ

Եթէ ոք հարցէ զժառայ իւր կամ զազախին իւր գաւազանաւ, եւ մեռցի ի ձեռանէ նորա, դատաստանաւ վրէժխնդրութիւն լիցի<sup>219</sup> ի տերանց:

10 Տեառնն ասէ եւ դատաստան ի գաւազանն, եւ ի սուրն, եւ յայլսն այսպիսիս, միանդամայն յապստամբութիւն նոցա եւ ի պատճառ լինելն: Եթէ այլազգիք իցեն եւ եթէ քրիստոնեայք, ըստ այնմ գինք արեանն տուժեսցին:

15 Բայց եթէ մի ար կամ երկուս կեցցէ, մի խնդրիցի վրէժն, զի գինք արծաթոյ իւրոյ են<sup>220</sup>: Ապաշխարութիւն լիցի:

Գ Լ Ո Ւ Ն Կ Բ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶՅՂԻ ՀԱՐԿԱՆԵԼՈՅ ԶԿԻՆ Ի ԿՌՈՒԵԼՆ ԱՐԱՆՅ

10 Իսկ եթէ կռուիցին արք երկու եւ հարկանիցեն զկին յղի, եւ ելանիցէ սաղմնն աննկար, կէս վնասու տուժեսցի, որչափ ինչ արկանիցէ նմա այր կնոջն, եւ տացէ ազաշերով: Ապա եթէ կերպարանեալ իցէ, տացէ անձն ընդ անձին<sup>221</sup>:

25 Յայտնի է եւ դատաստան աստուածային ըստ սահմանի, ապու եթէ ոչ մի է նկարեալն եւ աննկարն ըստ յուսոյ առնն ծնանիլ կնոջն, զի թէ եւ բազում միջոց է նկարելոյն եւ աննկարին: Եւ տացէ անձն ընդ անձին. եւ այս դատաստան փոխեալ տուզանաւք եւ ապաշխարութեամբ վճարեսցի, որպէս յայտնեալ է դատաստանաւք թագաւորացն, համեմատելով ընդ այնոսիկ:

Գ Լ Ո Ւ Ն Կ Գ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀԱՐՈՒԱԾՈՅ

30 Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի. հարուած ընդ հարուածի<sup>222</sup>:

218 ԵԼԹ, ԻԱ, 18, 19

219 ԵԼԹ, ԻԱ, 20

220 ԵԼԹ, ԻԱ, 21

221 ԵԼԹ, ԻԱ, 21, 22

222 ԵԼԹ, ԻԱ, 24, 25: Ղևտ., ԻԳ, 20: Բ օրին., ԺԹ, 21

Եւ այս դատաստան աստուածային, շնորհաւք Աւետարանին<sup>223</sup>, տու-  
 դանաւք վճարեցցի ընդ բանականի գնոյ արեանն համեմատեալ: Սակայն  
 յառաւելն եւ ի նուազն ի զգայութիւնսն քննութիւն լիցի եւ յանդամսն եւ ի  
 գործսն, եւ է բաժանումն իրաքանչիւր յանդամսն եւ ի զգայութիւնսն  
 5 քսան եւ վեց դահեկան եւ կէս դանգ, գարի պակաս:

## ԳԼՈՒԽ ԿԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԾԱՌԱՅՈՒՅ ԵՒ ԱՂԱՆՆԱՑ  
 ՀԱՐՈՒԱԾՈՑ Ի ՏԵՐԱՆՑ

Իսկ եթէ հարցէ ոք զակն ծառայի իւրոյ կամ զաղախնոյ իւրոյ եւ  
 10 կուրացուցէ, արձակեցէ զնոսա ազատս փոխանակ ական նոցա: Եւ  
 եթէ զատամն ծառայի իւրոյ կամ զաղախնոյ իւրոյ թափեցէ, արձակեցէ  
 զնոսա ազատս փոխանակ ատաման նոցա<sup>224</sup>:

Թեհեա եւ աստուածային Արէնքս զայլ եւս զգայութիւնս եւ զան-  
 դամս զուգահաւասար սմին հրամայիցէ նմանապէս ելանել ծառայիցն եւ  
 15 աղախնաց: Եւ այս դատաստան անփոփոխ կացցէ մեզ յԱւրինացն առ  
 հավատացեալս: Իսկ եթէ յայլազգեաց իցէ ծառայն եւ աղախինն, վաճա-  
 որիցէ որքան արժէ՝ պակաս եւ կամ ընդ կէս գնոյ, ըստ որում ի դէպ իցէ  
 դատաստանի իրաւամբք: Սակայն իշխան լիցի թէ եւ ոչ կամիցի վաճառել:

## ԳԼՈՒԽ ԿԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ԵԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՑՈՒԼ  
 ԶԱՅՐ ԿԱՄ ԶԿԻՆ

Իսկ եթէ հարկանիցէ ցուլ զայր կամ զկին, եւ մեռանիցին, ցուլն  
 քարկոծ լիցի, միս նորա մի՛ կերիցի, եւ տէր ցլուն անպարտ լիցի<sup>225</sup>:

Եւ այս դատաստան ըստ Աւրինացն հաստատուն մեզ կացցէ: Զենեալ  
 25 զցուլն՝ զքարկոծելոյ լցցէ տեղի, եւ վաճառեալ յայլազգիս զմիսն՝ զգինն  
 յաղքատս տայցեն, եւ հաստատուն լրմամբ իսկ ասացաւ՝ եւ տէրն ան-  
 պարտ լիցի:

Ապա թէ ցուլն հարկանող իցէ յերէկն եւ յեռանդն, եւ բողոքեալ իցէ  
 տեառն նորա, եւ նորա չիցէ ի միջոյ բարձեալ, եւ սպանանիցէ զայր  
 30 կամ զկին, ցուլն քարկոծ լիցի, եւ տէր ցլուն առ նմին մեռցի: Իսկ եթէ  
 փրկանք անկանիցի ի վերայ նորա, տացէ փրկանս ընդ անձին իւրում  
 ըստ ամենայնի, որչափ ինչ արկանիցեն նմա: Եւ եթէ զուտր կամ զդու-  
 տրը հարկանիցէ, ըստ նմին արկանակի արացեն նմա<sup>226</sup>:

Եւ այս իրաւունք փրկանուք մեզ սահմանիցի ըստ Աւրինացն եւ ոչ  
 35 մահումբ, զի զողորմութիւն պատճառաւ Արէնքն ընդ ստուգութեանն

223 Տե՛ս Մատթ., Ե, 38—41

224 Սլք, ԻԱ, 26, 27

225 Սլք, ԻԱ, 28

226 Սլք, ԻԱ, 29—31

խառնէ: Եւ զի ցուցեալ է փրկանքն իր զինս արեան ի դատաստանս թաղաւորացն:

Իսկ եթէ զծառայ կամ զազտխին հարկանիցէ ցուլն, երեսուն կրկին սատեր արծաթոյ տացէ տեառն նորա, եւ ցուլն կոծ լիցի<sup>227</sup>:

5 Զզին ծառային այդոքիւք նշանակէ տալ, եւ ցլուն ցուցեալ է <sup>228</sup>: Սակայն ըստ դատաստանի քրիստոնեայն եւ յայլազգին ընտրութիւն լիցի:

10 Ապա եթէ բեկանիցէ եւ կամ խափանիցէ ի զգայութեանցն, եւ շիցէ զիտակ վնասու ցլուն, անպարտ լիցի տէրն նորա. իսկ եթէ բողոքեալ իցէ, եւ շիցէ ի միջոյ բարձեալ, տուժեսցի զբժշկութեանն եւ զխափանածոյն: Եւ այս յիրաքանչիւրսն լիցի դատողութեամբ:

ԳՆՈՒՄ ԿԶ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ԶԱՐԿԱՆԻՑԷ  
ՑՈՒՂ ԶՅՈՒՂ ԵՒ ՍՊԱՆԱՆԻՑԷ

15 Իսկ եթէ հարկանիցէ ցուլ ուրուք զցուլ ընկերի եւ սպանանիցէ, վաճառեսցեն զցուլն կենդանի եւ բաժանեսցեն զզինս նորա, եւ զցուլն սպանեալ բաժանեսցեն<sup>(80)</sup>: Ապա թէ յերէկն եւ եռանդն զիտէին զցուլն, եւ բողոքեալ իցէ տեառն նորա, եւ տեառն շիցէ ի միջոյ բարձեալ զնա, տուժեսցի ցուլ ընդ ցլու, եւ սպանեալն նորա<sup>(81)</sup> լիցի<sup>229</sup>:

20 Եւ այս դատաստան հաստատուն մեզ յԱրինացն կացցէ:

ԳՆՈՒՄ ԿԷ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ՀՈՐՈՑ ԵՒ ԶՐՀՈՐՈՑ, ԵՒ ԹԷ ԱՆԿԱՆԻՑԻ  
Ի ԿԵՆԴԱՆԵԱՅ Ի ՆԱ

25 Իսկ եթէ բանայցէ ոք հոր եւ կամ փուրիցէ ջրհոր եւ ոչ խափանիցէ զնա, եւ անկանիցի անդ արջառ եւ կամ էշ<sup>(82)</sup>, տէր հորոյն տուժեսցի արծաթ եւ տայցէ տեառն նորա, եւ շաղիղն նուրա լիցի<sup>230</sup>:

Եւ զայս դատաստան իմաւամբք պարտիմք պահել: Այլ թերեւս զանսուրբսն իշոպն նշանակեաց եւ զսուրբսն՝ արջառովն:

ԳՆՈՒՄ ԿԸ

30 ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵՐԷ ԱՆԿԱՆԻՑԻ ՅԱՐԱՆՑ, ԿԱՄ Ի ԿԱՆԱՆՑ,  
ԿԱՄ Ի ՄԱՆԿԱՆՑ Ի ՀՈՐ ԵՒ Ի ԶՐՀՈՐ

Այլ եթէ անկանի այր եւ կամ կին ի հոր բացեալ եւ ի ջրհոր փորեալ, թէ ի տուէ իցէ՝ կէս արեան տուժեսցի, իսկ թէ ի գիշերի՝ բաւանդակ

227 ԵԼՔ, ԻԱ, 32  
228 ՏԵ՛ս սույն հոդվածի սկիզբը:  
229 ԵԼՔ, ԻԱ, 35, 36  
229 ԵԼՔ, ԻԱ, 35, 36  
230 ԵԼՔ, ԻԱ, 33, 34

արիւնն: Նոյն լիցի յաղադու կանանց, ծառայից եւ աղախնաց: Դատեալ լիցի բրիտտոնեայն եւ ալլազցին: Որպէս ի զիշէրի լիցի կոյրն, եւ արբեալն, եւ մանուկն:

**ԳՆՈՒՍ ԿԹ**

5 **ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՅՈՒԼ Ի ՍՐՐՈՑ ԿԱՄ ՅԱՆՍՐԲՈՑ ԿԵՆԴԱՆԵԱՅ ԵՒ ՍՊԱՆԱՆԻՑԷ**

10 Իսկ եթէ հարկանիցէ ցուլ զկով կամ զոշխար կամ ալլ ինչ ալլապիսի եւ սպանանիցէ, իբր զի ոչ զիտէր զցուլն հարկանող, զկէս զնոյն տուծիցի, եւ փոքրազոյն կենդանի սպանեալն իւրում տեառն լիցի, իսկ մեծն բաժանիցի, յորժամ զոյդ զգինն ունիցին, եւ վաճառիցի հարկատնողն: Իսկ եթէ բողոքեալ իցէ, եւ լիցէ ի միշոյ բարձեալ, զբաւանդակն տուծիցի: Նոյն լիցի եւ յանսորբան, ալլաիքն՝ ի բեռնակիրսն:

**ԳՆՈՒՍ Լ**

15 **ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ Ի ԲԵՌՆԱԿՐԱՅ ԿԱՄ ՀԵՂՁՈՒՑԱՆԵԼՈՎ ԵՒ ԿԱՄ ՈՏԻՒՔ ՀԱՐԿԱՆԵԼՈՎ ՉՄԻՄԵԱՆՍ ՍՊԱՆԱՆԻՑԵՆ ԵՒ ԿԱՄ ՎՆԱՍԻՑԵՆ**

20 Եթէ ձի, կամ էշ, կամ ջորի հեղձուցանելով եւ կամ ոտիւք զմիմեանս սպանանիցեն եւ կամ ալլ ինչ վնասիցեն, եթէ զիտելով տեառն զխատութիւն իւրոյն եւ ոչ զզուշացաւ՝ զբաւանդակն տուծեսցի, ապա թէ անզիտանալով՝ զկէս վնասուն: Նոյն լիցի եւ ալլ ինչ ի կենդանեաց, եթէ սպանանիցեն եւ կամ վնասիցեն:

**ԳՆՈՒՍ ԼԱ**

25 **ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ՅԱՍԱՑԵԼՈՑ ԿԵՆԴԱՆԵԱՅԴ ԿԱՄ ԽԱՄԱՆԵԼՈՎ ԵՒ ԿԱՄ ԸՆԴՈՏԵԼՈՎ ՍՊԱՆԱՆԻՑԷ ՉԱՅՐ ԿԱՄ ԶԿԻՆ, ԶՈՒՍՏՐ ԿԱՄ ԶԴՈՒՍՏՐ, ԶԾԱՌԱՅ ԿԱՄ ԶԱՂԱԽԻՆ**

30 Եթէ բողոքեալ իցէ՝ զբաւանդակն տուծեսցի, եւ կամ ոչ զզուշացոյց. ապա եթէ անզիտանալով եւ կամ զզուշացուցեալ՝ զկէս վնասուն եւ մահուանն: Իսկ թէ ոչ վնասիցի եւ կամ ոչ մեռանիցի, զխափանածոյն եւ զբժշկութեանն տուծեսցի. զիտելով եւ ոչ զզուշացուցանելով՝ զբաւանդակն, եւ ոչ զիտելով եւ զզուշացուցեալ՝ զկէսն:

Իրաւացի կարծեմ յամենայնսն յոչ վնասեալսն եւ յոչ մեռեալսն զխափանածոյն եւ զբժշկութեանն տուծել:

35 Իսկ զապաշխարութիւնսն յամենայնսն տեսցեն վարդապետք, զի աստ միայն զդատաստանին փութամք հատուցանել զիրս, զի հարկաւորաբար զիրն հայցէ զիրս դատաստանի:

ԳՆՈՒՑ ԼԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, Թէ ՏԱՍԱՅՆԻՈՑ ԿԵՆԳԱՆԵԱՑ ՄԵՌԱՒ ՈՔ  
ԿԱՄ ՎՆԱՍԵՑԱԻ, ԵՒ ՁԻ ՏԱՐԵՍԱՆ ՈՐՎԱՆ ԿԱՄ ՎՆԱՍԵԱՑ ՅԻՒՐՈՑՆ ԿԱՄ  
Ի ՀՈՐ, ԿԱՄ Ի ՋՐՀՈՐ

5 Եթէ ծառայ, կամ աղայխին, կամ ուստր, կամ դուստր, կամ կին, կամ  
ալլ ոք յիւրոցն սպանաւ կամ վնասեցաւ, թէ անգիտանալով կամ զգուշա-  
ցոյց՝ անպարտ լիցի ի դատաստանէ: Իսկ թէ իւրքն բողոքիցեն, եւ նա ոչ  
հրարձ կամ ոչ զգուշացոյց, դատաստան լիցի ի վարդապետաց՝ զապաշ-  
խարութիւնն սահմանել զկամաւորի եւ զակամայի: Եւ այդ այդոցիկ իրա-  
10 տունք կարծին: :

ԳՆՈՒՑ ԼԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՈՂՈՑ ԱՐՋԱՌՈՑ ԵՒ ՈՉԵԱՐԱՑ, ԻՇՈՑ  
ԵՒ ՆՄԱՆԵԱՑ ՆՈՅԱ

Իսկ եթէ զողացի ոք արջառ կամ ոչխար, սպանցէ կամ վաճառիցէ,  
15 հինգ արջառ ընդ արջատոյ տուժիցի եւ չորս ոչխար՝ ընդ ոչխարին: Ապա  
թէ ոչինչ գտանիցի նորա, վաճառիցի փոխանակ զողութեանն իւրոյ: Իսկ  
թէ ըմբռնեսցի, եւ գտցի ի ձեռս նորա զողանն, յարջատոյ եւ յիշոյ մին-  
չեւ ցոչխարն կենդանի, կրկին տուժեսցի<sup>231</sup>:

Յայտնի է այս դատաստանս, զի զկորուսեալսն հինգ եւ չորս հրամա-  
20 յէ հատուցանել, եւ զոչ կորուսեալսն՝ միայն կրկին: Եւ զայս իրաւունք  
Արինաց ըստ այսմ պահեսցուք:

ԳՆՈՒՑ ԼԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՈՂՈՑ ԱԿԱՆԱՀԱՏԱՑ

Իսկ եթէ յական գտցի զող եւ խոցեալ մեռանիցի, չէ այն նմա ի  
25 սպանութիւն: Ապա եթէ արեղակն ի վերայ նորա ծագեսցէ, մահապարտ  
է. փոխարէն մեռցի<sup>232</sup>:

Ընդ խաւար գիշերոյ անգիտացեալ, ոչ համարի մեղս սուրբ  
Աւրէնքն, իսկ ընդ լուսոյ ծագիլն՝ իբր կամաւոր սպանող դատի իրա-  
ւամբք, զի մարդագողոց հրամայեցաւ մեռանիլ, եւ մեզ կամաւորի եւ  
30 ակամայի ապաշխարութիւն սահմանիցի, եւ փրկանք լիցի, որպէս ցուցե-  
ալ է<sup>233</sup>: Եւ զողանն կորուսեալ՝ շորբորդ հատուցի, եւ ոչ կորուսեալսն՝  
կրկին, որպէս յայլսն<sup>234</sup>:

231 Եւք, ԻԲ, 1, 3, 4

232 Եւք, ԻԲ, 2, 3 (Կեսք)

233 Տե՛ս հոգվ. ԾԲ և ԾԸ

234 Տե՛ս հոգվ. ՀԳ

## ԳՆՈՒՄ ՀԵ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՈՂՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ

Ջևկեղեցւոյն զողացեալ, եւ կորուսեալ եւ կամ վաճառեալ, որ ոչ  
իցէ դարձ, հինգերորդ հատուսցէ, եւ զոչ կորուսեալսն՝ կրկին: Եւ զսուղաշ-  
5 խարութիւն եցոյց կանոնք:

## ԳՆՈՒՄ ՀԶ

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԶԱՆԳՄ ԿԵՐՈՂԱՑ

Եթէ արածիցէ ոք զանդ կամ զայգի, եւ թոյլ տացէ խաշին իւրում  
արածել զանդ այլոյ, յիւրմէ անդոյ անտի տուժիցի ըստ արդեանն: Ապա  
10 թէ զամենայն իսկ զանդն արածիցէ, զընտիր կողմ անդոյ իւրոյ եւ զըն-  
տիր կողմ այլոյ իւրոյ տուժիցի<sup>235</sup>:

Եւ այս ըստ արդեանն դարձեալ յիցի իրաւամբք, եւ այս հաստա-  
տեսցի դատաստան ըստ մէզ:

## ԳՆՈՒՄ ՀԷ

15

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀՐԴԵՂԻՑ

Իսկ եթէ ելանիցէ հուր եւ գտանիցէ փուշ եւ ընդ նմին այրիցէ զկալ,  
կամ զաւրան, կամ զանդ, տուժելով տուժեսցի՝ որոյ զհուրն հանեալ  
իցէ<sup>236</sup>:

Եւ զայս դատաստան ըստ քննութեան հրամայէ սուրբ Արէնքն դա-  
տել, թէ ո՞ւր արդեալք հանեալ հուրն եղի՝ մե՞րձ թէ հեոի, յանտա՞ռս  
20 թէ յանդի, եւ յումէ՞ ի բարեկամէ՞ թէ ի թշնամուոյ, պատահմամբ թէ  
կամաւ, մանո՞ւկ թէ ծեր, եւ այլ այսպիսի, զի զայդ յայտ առնէ տուժե-  
լով տուժիլն: Եւ մեզ այսոցիկ հետեւելի է: Զի թէ կամաւ իցէ, կրկին  
տուժիցի: Ապա թէ մերձ ի կալ կամ յաւրան հանիցէ ոք հուր եւ ոչ զգու-  
25 շացեալ շիջուսցէ, զբաւանդակն տուժիցի, իսկ թէ ի հեռաստանէ յանդէ  
զայցէ՝ զկէսն նորուն եւ որ ինչ այսոցիկ հետեւին: Նմանապէս եթէ յանաս-  
նոց այրիցի եւ կամ ի մարդկանէ, տուն եւ թէ այլ ինչ ի շինուածոյ, եւ  
կամ հանդերձ եւ որ ինչ նման սոցին, այնորիւք եւ զայս դատեսցեն:

## ԳՆՈՒՄ ՀԸ

30

## ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՒԱՆԴԻՑ

Իսկ եթէ՝ ոք ընկերի իւրում արծաթ տայցէ եւ կամ այլ ինչ կարասի  
զիւր յաւանդ, եւ զողանայցին ի տանէ առն, եթէ գտցի որ զողացան՝

235 ԵԼԹ, ԻԲ, 5

236 ԵԼԹ, ԻԲ, 6

կրկին տուժեցի, ապա թէ ոչ գացի որ դողացան, մատիցէ տէր տանն առաջի Աստուծոյ եւ երդութիցի, թէ իւր չէ նենգեալ ամենեւին զաւանդ ընկերի իւրոյ: Ըստ ամենայն վնասակար բանի՝ յարջատոյ, եւ յիշոյ, եւ յոչխարէ, եւ ի հանդերձոյ, եւ յամենայն կորսսենէ, որում վնասակար առնիցեն, որ զինչ իցէ՝ առաջի Աստուծոյ եկեացէ դատաստան երկոցուն, եւ որ ոք ի նոցանէ ըմբռնիցի ի ձեռն Աստուծոյ, կրկին տուժիցի ընկերին իւրում<sup>237</sup>:

Անփոփոխի եւ զայս դատաստան պահելի է: Գողն գտեալ՝ կրկին տուժեցի: Եւ երդմանն ցուցեալ է ի մեզ արքինակն. եւ երդուեալ՝ ոչ տուժի: Եւ որ ոք ըմբռնի՝ կրկին տուժի. կամ զի սուտ երդուաւ, եւ յայտ եղեւ, եւ կամ զի ոչ երդուեալ՝ ցուցաւ սուտ լինել, իսկ միւսն՝ զի զրպարտող եղեւ սուտ:

ԳՂՈՒՄ ԷԹ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՊԱՀԵՍՏԻՑ

Եւ թէ տացէ որ ընկերի իւրում էշ, կամ եզն, կամ ոչխար, կամ այլ ինչ անասուն ի պահեստ, եւ բեկցի, կամ մեռցի, կամ գերի վարեացի, եւ ոչ որ զիտասցէ, երդումն Աստուծոյ լիցի ի մէջ երկոցուն. եթէ նենգանաւ ինչ շիցէ զնացեալ ամենեւին ընդ աւանդ ընկերի իւրոյ, ապա յանձն առցէ տէր նորա, եւ մի՛ տուժիցի: Իսկ եթէ գողութեամբ գողանայցի ի նմանէ, տուժեցի տեառն նորա: Ապա թէ զազտնաբեկ լինիցի, ածցէ զնա վկայ ի գէշ անդ եւ մի՛ տուժեցի<sup>238</sup>:

Յոյժ իրաւամբք եւ զայս կալցուք դատաստան, զի ի պահեստ տալ վարձու է: Յաղապս որոյ զգողանն հրամայէ տուժիլ, իսկ զաւանդն՝ ոչ եւս:

25

ԳՂՈՒՄ Զ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՆՃԻԹ ԱՌՈՂԱՅ

Իսկ եթէ խնորիցէ որ անաւթ<sup>(23)</sup> յընկերէ իւրմէ, եւ բեկցի, եւ կամ մեռցի, կամ գերի զնասցէ, եւ տէրն նորա ոչ իցէ ընդ նմա, տուժելով տուժեացի, ապա թէ տէր նորա ընդ նմա իցէ, ոչ տուժեացի. ապա թէ ի վարձու առեալ իցէ՝ ընդ վարձուց իւրոց եղիցի նմա<sup>239</sup>:

Տուժելով տուժեացի՝ ճշգրտիւ քննութիւն լիցի: Ըստ մերոցս եղիցի եւ այս:

ԳՂՈՒՄ ԶԱ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶԿՈՅՍ ԽԱՒՍԵՅԵԱԼ ԽՅՐՈՂԱՅ

Իսկ եթէ խաբիցէ որ զկոյս խաւեցեալ<sup>(24)</sup> եւ ննջիցէ ընդ նմա, վարձանաւք վարձեացէ զնա իւր կնութեան: Եթէ ոչ առնու յանձն հայրն

<sup>237</sup> Ելթ, ԻԲ, 7—9

<sup>238</sup> Ելթ, ԻԲ, 10—13

<sup>239</sup> Ելթ, ԻԲ, 14—15

տալ զնա նմա կնութեան, տուժիցի արծաթ հալո նորա, որպէս իցեն վարձանք կուսից<sup>240</sup>:

- Գիտելի է եւ զայս դատաստան, զի խաբել եւ հաւանել ոչ մեռա-  
նին, թէպէտ եւ խաւսեալ, որպէս զայն, որ բռնաբարիցէ զխաւսեալ, այլ  
5 հրամայէ վարձանաւք վարձել, զի ոչ հաւանութեամբ եւ խաւսիւք ծնողա-  
ցըն վարձելիք, այլ տուրք կամաւք, եւ զոչ հաւանիլ հարն՝ վարձիլ, որպէս  
արէն է կուսից հար հայցել. եւ այս է տուժիլն: Իսկ րատ կանոնի<sup>241</sup> զնոյն  
հրամայէ առնուլ կին, ընդ որ հաճեցան: Ապա թէ ոչ հայր եւ կամ մայր  
աղջկանն, եւ կամ նոյն կամեացի, ըստ վարձանին, զոր սովոր են առնուլ  
10 ծնաւոր կուսից, տուժիցի: Ապա թէ Երիտասարդն եւ կամ իւրքն ոչ կամին  
առնուլ, կրկին լիցի տոյժն: Եւ տոյժն՝ ծնողացն եւ ոչ տերանցն՝ ըստ  
իրաւանց:

## Գ Լ Ո Ւ Ն Ձ Բ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՓՈՒՈՅ

- 15 Եթէ արծաթ փոխ տացես եղբար քում, որ աղքատ իցէ առ քեզ<sup>242</sup>,  
մի՛ ճեպեացես զնա եւ մի՛ արկանիցես նմա տոկոսիս<sup>242</sup>:

- Հին կտակարանս եւ նորս յայտոսիկ միաբանին՝ ի բաց բառեալ  
զվաշխ եւ զտոկոսիս<sup>243</sup>: Ոչ աստ զտոկոսիս յիշատակելով՝ զվաշխ թողա-  
ցուցանէ, զի զծայրն բառնալով՝ ընդ նմին եւ զարմատն բառնայ: Եւ որ  
20 ինչ ի նոր կտակարանս է սաստն<sup>244</sup>, աւելորդ է, իբր գիտողաց, երկրոր-  
դեւ, զի թէ եւ Արէնքն ոչ հրամայէ ճեպել, որչա՛փ եւ նորս: Եւ փոխ  
ասացաւ, զի անդրէն հատուցի գլուխն:

- Արդ, իրաւունք դատաստանի լիցին՝ ներմամբ առնուլ զգլուխն, եւ  
վաշխ լիցի հատուցումն հանդերձեալ: Ապա թէ կար իցէ փոխառողին,  
25 տայցէ փոխատուին զնոյն գլուխն՝ մնալ առ նմա զնոյն շափն. եւ այդ  
ըստ կարի լիցի, զի Աստուծոյ ինքն է իսկ դատաստանդ՝ ոչ առնուլ վաշխ  
եւ տոկոսիս:

Եւ գիտելի է, զի թէ ոք զդատաստան Աստուծոյ թիւրէ, վնասէ զոգին՝  
ի հանդերձեալ հատուցմանէն զրկելով:

- 30 Ապա թէ ոք պատճառ ոչ հատուցանել անվաշխն, դատ լիցի. ի  
հատանիլն զլիսոյն՝ թողութիւն լիցի:

Որդուց, զկնի մահուան հարց, մի՛ լիցի զվաշխ հատուցանել, բայց  
միայն զգլուխն, զի բնաւին ոչ է ըստ իրաւանց: Եւ այդ արիւնագրութիւն  
է, միանգամայն եւ դատաստան:

<sup>240</sup> Ելք, ԻԲ, 16—17 (ըստ Ս. Պետերբուրգի 1817 թ. հրատարակութիւնն):

<sup>241</sup> Տե՛ս Կանոնք Կղեմայ ԿԲ, Կանոնագիրք Հայոց, Գ. Ա, էջ 31

<sup>242</sup> Ելք, ԻԲ, 25

<sup>243</sup> Ելք, ԻԲ, 25, Ղևտ., ԻԾ, 36: Բ օրին., ԵՊ, 19 և արմ. Ղուկ., Զ, 34, 35 և արմ.:

<sup>244</sup> Տե՛ս Ղուկ., Զ, 34, 35:

ԳՆՈՒՄ ԶԳ.

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԳՐԱԻՐՅ

5 Եթէ ոք ի դրաւ անուցու զուրուք զտուն, կամ զայդի, կամ զհող, կամ զայլ ինչ այսպիսի, եւ պատահի յամիլ, զզլուխն որքանութեան անե-  
 5 ւալ անվաշի՝ անդրէն դարձուցանիցէ զգրաւն: Եւ թէ լիցի աւելի կերեալ, եւ զայն եւս հատուցէ: Եւ զոր ինչ ծախեալ իցէ ի նմանէ<sup>(245)</sup>, ի զլուխ իւր համարիցի, յորժամ յաղագս անձեռնհատութեանն տեառն չիցէ դարմանեալ զգրաւ իւր: Գոչնպէս լիցի, եթէ ինչ ի կենդանեաց իցէ:

10 Եւ թէ ինչ ի հանդերձից իցէ գրաւն եւ ի նմանեաց նորա, եւ մաշիցէ, ի զլուխն իւր լիցի սլակասեայն:

15 Եւ զոսկեղէն եւ զայլ ինչ այսպիսի զզողացեալ եւ զկորուսեալ, եթէ չիցէ իւր նենգեալ եւ երզմամբ հաստատիցէ, իւրում տեառն լիցի, ապա թէ իւր նենգեալ իցէ եւ կորուսեալ՝ շորեքպատիկ հատուցէ: Իսկ եթէ ի ձեռին իցէ, եւ ստիցէ, կրկին տուժիցի: Իսկ յաւարի տարեալն՝ իւրում տեառն լիցի:

Զծառ հատեալ եւ զցանկ այրեալ զայգուոյ, զտան եւ զայլ ինչ զվնասու զգրաւի, եթէ տեառն պատճառաւ իցէ՝ իւրում տեառն լիցի, ապա եթէ առ ում գրաւն է՝ այնմ լիցի:

20 Զվայրապար վնասեայն եւ զբեկեայն յանասնոց՝ ի զլուխ իւր կայցի, եւ զհասարակաց զմեռեայն՝ իւրում տեառն:

Եթէ Աւրէնքն զգրաւ ոչ տայ ալթի<sup>246</sup>, ո՞րչափ եւս հրաժարեցուցանէ ի վաշխից գրաւից:

ԳՆՈՒՄ ԶԳ.

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՅՐԵՅՈՎԱՑ

25 Եթէ կամաւ ոք հուր դիցէ տան եւ ըմբռնիցի որ եզ, տեսցեն՝ զի թէ ի մարդկանէ մեռցի ի հուրն, խրատ առցէ ի ձեռն, թէպէտ եւ մահու արժանի է ըստ Աւրինացն<sup>246</sup>, թերեւս ապաշխարութեան հասանիցէ: Եւ տոյժ լիցի. թէ կարող իցէ՝ զբաւանդակն պահանջիցի արին, ապա թէ ոչ՝ ըստ կարի լիցի: Եւ տուժին խրատ ոչ է, ո՞չ աստ եւ ո՞չ յայլսն, այլ անառակին խրատ եւ ոչ տոյժ ի դէպ է. ըստ արժանւոյն զպատշաճն արասցեն:

30 Իսկ թէ յանասնոց՝ շորեքպատիկ հատուցէ: Ապա թէ ամբար խոտոյ, կամ արանի, կամ յայսպիսեացս իցէ, կրկին լիցի տոյժն: Նոյն լիցի ցանկոյ կամ նմանեաց նորին: Այսպէս հանդերձից եւ նոցին նմանեաց:

ԳՆՈՒՄ ԶԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՏՆԿԱՀԱՏԻՅ

35 Ծարժեալ ոք սատանայական ցամամբ հատանիցէ զտունկ ուրուք, եւ յայտ ճշգրտիւ զայցէ, դատաստան լիցի. դնել զտունկն հատողին եւ

<sup>245</sup> Տե՛ս Ելք, ԻԲ, 26: Բ օրին., ԻԳ, 13  
<sup>246</sup> Տե՛ս հոդվ. 2է

խորոցն՝ զաման, ցորքան անպտուղ իցեն տունկն, տուժիլ նովին շափով, ապա թէ իւր շիցէ՝ քստ պնոյն լիցի: Զի Աւրէնքն եւ ոչ զթշնամեացն հրամայէ զայլազգեաց հարկանել գտունկս<sup>247</sup>: Եւ այդ այդպէս լիցի իրամբք:

5

ԳՂՈՒԽ ԶԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱԻԱՆԴԻՅ ԵՒ ԶՈՎՈՂՈՒԹԵԱՆ, ՅԱՓՇՏԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎՆԱՍԵԼՈՅ ԻՆՉ ԶԸՆԿԵՐԻՆ, ԵՒ ԳՏԱՆԵԼՈՅ ԶԿՈՐՈՒՍՏ ԻՆՉ

10 Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ առէ. անձն որ եթէ մեղիցէ, եւ արհամարհելով արհամարհիցէ զպատուիրանս Տեառն, եւ ստիցէ ընկերի իւրում՝ եթէ յաւանդի, եթէ ի զովողութեան, եւ եթէ ի յափշտակութեան, եւ եթէ վնասիցէ ինչ ընկերի իւրում, եւ եթէ եգիտ կորուստ ինչ եւ ժխտիցէ ի վերայ նորա, եւ երդնուցու սուտ վասն միոյ իրիք, յամենայնէ զոր եւ առնիցէ մարդ առ ի մեղանչելոյ նորա նորաւք, եւ եղիցի յորժամ մեղանչիցէ եւ յանցանիցէ, հատուցէ զյափշտակութիւնն, զոր յափշտակեաց, եւ զվնասն, զոր վնասեաց, կամ զաւանդն, որ աւանդեցաւ նմա, կամ զկորուստն, զոր եգիտ: Յամենայն իրաց, զոր երդուաւ սուտ, տուժեսցի զգլուխն եւ զհինգերորդ մասն յաւելցէ ի նոյն, եւ ոչր իցէ՝ հատուցէ նմա յաուր, յորում յանդիմանեսցի<sup>248</sup>:

20 Աստուածխաւսութիւնս դատաստանի հաստատուն եւ յեկեղեցի կացցէ, քանզի նոյն իսկ է Տեառն: Բայց խոյին քաւութեամբն<sup>249</sup> եցոյց, եթէ որք միանգամ իրք դատաստանի են եւ տուժին, պէտք են ապաշխարութեանն: Եւ քանզի կանոնք եւ դատաստանք ի միմեանց այնու բաժանին, զի գծածուկ եղեալ յանցանսն, որոց եւ պէտք իցեն տուժի, հրամայէ առնել ողորմութիւն, իսկ դատաստան թէ եւ տուժէ, ոչ բառնայ զապաշխարութիւնն: Սակայն ներմամբ եւ փորձիւ լիցի իմաստնոց, յազազս որոյ յամենայն իրս դատաստանի զապաշխարութիւն ի կանոնսն թողաք:

ԳՂՈՒԽ ԶԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԶՊՏՈՒՂ ԵՒ ԶԱՅԼ ՀԱՍՍ ԿԵՐՈՂԱՑ ԶԵԿԵՂԵՑԻՈՅ

30 Եւ մարդ, որ յանգէտս կերիցէ զսրբութիւնսն, յաւելցէ ի նոյն զհինգերորդ մասնն եւ տացէ զսրբութիւնն ցքահանայն: Եւ մի՛ պղծեսցեն զսրբութիւն սրբութեանցն Իսրայելի, զոր զատուցին նորա Տեառն, եւ ածիցեն ի վերայ իրեանց անաւրէնութիւն յանցանաց՝ ուտելով իրեանց զսրբութիւն սրբութեանցն, զի ես եմ Տէր, որ սրբեմ զնոսա<sup>250</sup>:

247 Տէ՛ս Բ օրին., Ի, 19, 20 նաև հոգի. Բ  
248 Ղևտ., Զ, 1—5  
249 Տէ՛ս Ղևտ., Զ, 6  
250 Ղևտ., ԻԲ, 14—16

Աստուածային դատաստանս նշանակ անփոփոխ մեզ կացցէ յեկեղն-  
ցի:

ԳՆՈՒԽ ԶԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՆՑ ՀԱՅՀՈՅՉԱՑ ԶԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

5 Եւ ել որդի կնոջ Իսրայելացոյ, եւ նա էր որդի առն Եզրայիցոյ  
 ի մէջ որդոցն Իսրայելի. եւ կռուեցան ի բանակին՝ որ յԻսրայելացոց ան-  
 տի էր՝ եւ այր մի Իսրայելացի: Եւ անուանեալ որդի<sup>(87)</sup> կնոջն Իսրայել-  
 ցոյ զԱնունն՝ անէծ. եւ ածին առ Մովսէս: Եւ անուն մար նորա Սաղա-  
 միթ, դուտոր Դաբբեայ, յազգէ Դանայ: Եւ արկին զնա ի պահ՝ դատել զնա  
 10 հրամանաւ Տեառն: Եւ խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. հանէ՛ք  
 զայրն, որ անէծ, արտաքոյ բնակին, եւ դիցեն, որք լուանն, զձեռս իւրն-  
 անց ի վերայ զլիտոյ նորա, եւ քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուրդն:  
 Եւ ընդ որդիսն Իսրայելի խաւսեսցիս եւ ասացես ցնոսա. այր ոք, որ անի-  
 ծանիցէ զԱստուած, մեղս ընկալցի, զի անուանեաց զանուն Տեառն. մա-  
 15 հու մեռցի, քարընկեցութեամբ քարկոծեսցեն զնա ամենայն ժողովուր-  
 դրն. եթէ՛ պանդուխտ իցէ եւ թէ՛ բնակ, յանուանել նորա զանուն Տեառն՝  
 սատակեսցի: Եւ խաւսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայելի, եւ հանին  
 զայրն, որ անէծն, արտաքոյ բանակին, եւ քարկոծ արարին զնա քա-  
 րամբք ամենայն ժողովուրդն: Եւ որդիքն Իսրայելի արարին՝ որպէս եւ  
 20 պատուիրեաց Տէր Մովսիսի<sup>251</sup>:

Իրաւացի է զդատաստանս զայս յեղափոխել այսպէս. եթէ ոք, շար-  
 ժեալ ի սատանայէ, զանուն Քրիստոսի հայհոյէ, կամ զխաչ, կամ զեկե-  
 ղեցի, կամ զքահանայ ի կռին իրեանց, կամ զմկրտութիւն, եթէ մին  
 յայլազգեաց իցէ, որպէս եւ անդ պատահեաց, եթէ՛ քարկոծ առնել եւ եթէ՛  
 25 այլով արինակալ՝ սպանանել արժան է. ապա թէ քրիստոնեայք՝ մահու  
 դատաստան լիցի՝ քննելով զպատահումն:

ԳՆՈՒԽ ԶԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՆՑ ՍՊԱՆՈՂԱՑ ԶԱՆԱՍՈՒՆՍ

Եւ որ հարկանէ զանասուն՝ անձն ընդ անձին տուժեսցի<sup>252</sup>,  
 30 Ըստ իւր յայտնի տեսութեանդ եւ ի մեզ կացցէ դատաստանդ աս-  
 տուածային: Սակայն դատաստան կոչի, իբր զի քննիցի մախանաք  
 հարկանելն եւ պատահմամբ եւ այլն այսպիսի:

ԳՆՈՒԽ Դ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՆՑ ՎԱՃԱՌՈՂԱՑ ԵՒ ԳՆՈՂԱՑ ԶԵՐԿԻՐ

35 Եթէ աղքատացի եղբայր քո, որ ընդ քեզ իցէ, եւ վաճառիցէ ի կալուա-  
 ծոց իւրոց, եւ եկեսցէ մերձաւորիչն, որ մերձաւոր իցէ նորա, եւ փրկիցէ

251 Ղևտ., ԻԳ, 10—16 և 23  
 252 Ղևտ., ԻԳ, 18

զվաճառ եղբար իւրոյ: Ապա թէ շիցէ ուրուք մերձաւորիչ, եւ ձեռնհաս  
իցէ, եւ գտանիցի նմա բաւական փրկանաց իւրոց, եւ համարիցի զամս  
վաճառին իւրոյ եւ հատուցէ կարողն առնն, որում վաճառեաց նմա,  
եւ դարձցի ի կալուածս իւր: Ապա թէ ոչ գտցի ի ձեռին<sup>(69)</sup> նորա բաւական  
5 առ ի հատուցանելոյ նմա, եղիցի վաճառ նորա այնմ, որ ստացան զնա,  
մինչեւ յամն թողութեան իւրոյ, եւ ելցէ յամին թողութեան եւ դարձցի անդ-  
րէն ի կալուած իւր<sup>253</sup>:

Ըստ Աւետարանին հրամանաց առաւելութիւն ի Տեառնէ հրամայեցաւ  
յամենայնս, նմանապէս եւ՝ յիւր դատաստանի<sup>254</sup>, եւ զի ո՛չ առաւելութե-  
10 ամբ այժմ եւ ո՛չ հաւասարութեամբ վարիմք, պարտ է մեզ ընդ փրկա-  
նաւք լինել: Եթէ վասն աղքատութեան ի կալուածոյ վաճառէ, եղիցին ընդ  
փրկանաւք յազգատոհմէ իւրմէ մինչեւ յեւթն ամ: Ըստ Աւրինացն զեւթն  
ամն եղաք<sup>255</sup>, բայց առաւելու որքան կար է՝ արժան է, զի ոչ թողու ազատ  
ըստ Աւրինացն, զոր ի դէպ էր թողուլ նման Աւրինացն ազատս: Իսկ եթէ ոչ  
15 կարիցէ փրկել յեւթն ամին, եւ անդ հաստատիցի վաճառն: Ապա թէ ըստ  
այլոյ պատճառի վաճառն իցէ, ի նմին ամի հաստատիցի:

## ԳՂՈՒՈ ՂԱ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՃԱՌՈՂԱՅ ԵՒ ԳՆՈՂԱՅ ՏԱՆ

Եթէ վաճառիցէ ոք տուն բնակութեան ի պարսպաւոր քաղաքի, եղի-  
20 ցին փրկանք նորա մինչեւ ի կատարել տարւոյ ատուրցն վաճառին  
իւրոյ. արաթուի լինիցի փրկանք նորա: Ապա թէ ոչ փրկիցի մինչեւ  
լնուցու տարի նորա ողջոյն, հաստատիցի տունն, որ իցէ ի պարսպաւոր  
քաղաքի, հաստատութեամբ ստացողին իւրոյ յազգս իւր, եւ ելցէ<sup>(90)</sup> ի  
թողութեանն<sup>256</sup>:

25 Եւ զվաճառս փարթամաց եթէ ոմանց աղքատաց վաճառէ սահմա-  
նաւ, վասն ողորմութեան դարձուցանելի է ըստ պայմանին:

Իսկ տունք, որ յաւանս իցեն, որոց պարիսպ ոչ զուցէ շուրջանակի, ընդ  
անդս երկրի համարեսցին, եւ հանապազ ընդ փրկանաւք լիցին, եւ ի  
թողութեանն ելցեն<sup>257</sup>:

30 Եւ զայս դատաստան այսպէս աւցուք. զի թէպէտ եւ ամ թողութեան  
ոչ է առ մեզ, սակայն զամսն փրկանաց հաստատուն կալցուք, պակասե-  
ալք յառաւելութենէ. նմանապէս եւ՝ զաւուրսն:

## ԳՂՈՒՈ ՂԲ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՎԱՃԱՌՈՂԱՅ ԵՒ ԳՆՈՂԱՅ

35 ԶՏՈՒՆ ԵՒ ԶԱԳԱՐԱԿ

Եւ ի քաղաքս Ղեւտացւոց տունք, որ ի քաղաքս կալուածոց նոցա ի-  
ցեն, ընդ փրկանաւք լիցին հանապազ ի մէջ Ղեւտացւոցն: Եւ որ ոք

<sup>253</sup> Ղև., ԻԵ, 25—28

<sup>254</sup> Տե՛ս Մատթ., Ե, 21, 22. է, 2, 3ովհ. է, 24

<sup>255</sup> Տե՛ս Բ օրին., ԺԵ, 1, 2, 9, 12 և այլուր: Ելք ԻԱ, 2, 3. ԻԳ, 10, 11: Ղև., ԻԵ, 8—15

<sup>256</sup> Ղև., ԻԵ, 29, 30

<sup>257</sup> Ղև., ԻԵ, 31

փրկիցէ ի Ղեւտացոց անտի, ելցէ վաճառ տանց քաղաքաց կալուածոց նոցա ի թողութեանն, զի տունք քաղաքաց Ղեւտացոց՝ կալուածք նոցա են այն ի մէջ որդոցն Իսրայելի: Եւ ազարակքն, դատուցեալք ի քաղաքս նոցա, մի՛ վաճառեսցին, զի կալուած յաւիտենական է այն նոցա<sup>258</sup>:

- 5 Պարտ է եւ դայս դատաստան այսպէս իմանալ. զի քահանայք զտուն բնակութեան իւրեանց վաճառել իշխան լիցին առ քահանայս, եւ միշտ ընդ փրկանաւք լիցին, առաւելութեամբ, քան աշխարհականաց վաճառք: Եւ ազարակք եւ այլ ստացուածք, դատուցեալք յեկեղեցիս, մի՛ վաճառեսցի, զի կալուած յաւիտենական է այն նոցա: Ըստ այսմ եղիցի եւ այս
- 10 իրաւունք, թէ՛ եւ ամ թողութեան առ մեզ ոչ է: Նաեւ յամենայն դատաստանդ ծախք ստացողին տեսցին ի փրկելն:

#### ԳՆՈՒՄ ՂԳ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԶՐԱՂԱՅԱՑ

- Եւ յաղազս աղքատութեան վաճառեալ ջրաղացք զամ մի ընդ փրկա-
- 15 նաւք լինիցին ինքեանց եւ ազգականաց, իսկ այլազգ՝ ի նմին ամի հաստատեսցի:

#### ԳՆՈՒՄ ՂԴ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՆԱՍՆՈՑ ՎԱՃԱՌԱՑ

- Եւ զչորքոտանիս վաճառեալ՝ երից վկայից առաջի հաստատիցէ գայ-
- 20 սոսիկ, զի մի՛ գողան իցէ, եւ մի՛ հնակաղ, եւ մի՛ հնահաղ, եւ մի՛ դիշերակոյր, եւ մի՛ անդնալի ի կամրջի, եւ մի՛ հարկանող ոտիւք: Յայսցանէ դտեալ ի բեռնակիրս<sup>259</sup>, բայց ի գողանէից, մինչեւ յամ մի անդրէն դարձցի, կամ ի զնոյն անկցի ըստ արժանւոյն, եւ կամ տեառն հաստատիցի: Իսկ գողանն յամենայն ժամ դարձցի. եւ եթէ յայտնեալ՝ առաջինն
- 25 առցէ տէր, եւ գգինն ի վաճառողէն առցէ՝ որ զնեացն: Այլ արտաքոյ այսմ պատճառաց՝ մինչեւ յեթն աւր փորձի, վճիռ հատցի, եւ թէ ոչ դարձուցէ՝ հաստատեալ լիցի վաճառն: Իսկ վաճառողին նոյն կացցէ սահման ըստ արժանւոյն վաճառել: Եւ յայլսն զնոյն պահել ի վաճառան զսահման, որպէս վաճառողին, նմանապէս եւ զնողին:

30

#### ԳՆՈՒՄ ՂԵ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎԱՃԱՌԱՑ ԵԶԱՆՑ

Եւ վկայիւք երիւք եւ դայս հաստատիցեն, որ վաճառեն զեզինս, զի փորձ ի հերկ, եւ ի սայլ. եւ ի կալ իցէ, եւ մի՛ հնակաղ, եւ մի՛ հնահաղ,

<sup>258</sup> Ղևտ., ԻԾ, 32—34

<sup>259</sup> Տե՛ս նաև հոգվ. 2

և մի գիշերակույր և հարկանող իցէ, և մի՛ դողան: Մինչև յամ մի լինել  
այդոցիկ փորձի՛ դարձցի, և դողան՝ յամենայն ժամ, և յայլսն եւթն  
ար փորձիցի: Իսկ անմղիցն յայլսն՝ դարձցի, բայց ի լծոյ, ի հերկ, և  
ի սայլ, և ի կալ, որոց փորձն անյայտ կանխաւ է<sup>280</sup>:

ԳՂՈՒՄ ՂԶ

5 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿՈՎՈՒ Ի ՎԱՃԱՌ

Նմանապէս և յաղագս զկովս վաճառել զայլսն վկայիւք հաստատի-  
ցէ ընդ աշտոսիկ, զի ազգաւ յիրաքանչիւր ամի ծնանիցի, և յաղագս  
սոցին՝ յամի դարձցի. ըստ արժանւոյն զգինն հաստատելով և կամ տեան  
լինելով: Եւ յայլսն փորձիցի ևւթն ար:

10 ԳՂՈՒՄ ՂԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՄԵՂՈՒԱՑ Ի ՎԱՃԱՌ

Եւ մեղուք վաճառեալ յաշնան ըստ մեղեր, զոր ունին, հաստատիցի  
սերկանն<sup>(91)</sup>:

15 Իսկ ըստ պիտոյից անկշիռ վաճառեալ և կամ կշուաւ նովին փեթա-  
կաւ և առեալ արտաքս և պակաս գտեալ, լցցի կշիռն ի վաճառողն,  
ապա թէ ոչ՝ մի՛ լիցի այդ պատիր վաճառ: Իսկ առաւել գտեալն, ո՛չ  
յոյժ և ո՛չ խաբէութեամբ, մի՛ դարձցի, զի յուսոյ դորին գնէ:

20 Եւ զարնան սերմանոց վաճառեալ և եղեալ ի մեղուոց, մինչ ի  
տասն ար կամ քսան փորձի. վճիռ վկայիւք հաստատիցի, որպէս զի  
մտանելն և ելանելն ուղիղ ցուցցի, հաստատիցի վաճառն: Ապա թէ  
թիւրութեան յաւուրսն վճռին կարծիս լիցի գոգութեան և մահու առաջ-  
նորդին, ի վաճառողն դարձցի: Զկնի կարծեացն բառնալոյ աւուրցն՝  
ղնողին այդպիսի վնասոյ լիցի: Ի կերակրոյ մեռեալն և յամին անպտուղ  
եղեալն՝ գնողին լիցի:

25 ԳՂՈՒՄ ՂԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎԱՃԱՌՈՅ ԱՄԱՆԱՑ

30 Եւ կարաս վաճառեալ և գնեալ՝ հաստատիցի, յորժամ լցեալ ողջ  
զարկեալն պահիցէ գինի յամին: Ապա եթէ կարծեալք բեկման ի թրժ-  
մանէ իցէ, և զգինին կորուցէ, միմիայն զկարասն գործողն առցէ, այլ  
և զկէս վնասուն տուժիցի: Ապա թէ անկարծիս ի բեկմանէ իցէ, և ի  
թաղելն եղև կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յայդմանէ  
երկբայեցի, զամանն միայն վաճառողն տուժիցի:

Այդ ըստ այդմ լիցի ի փոքունս և ի մեծամեծս:

280 Տե՛ս նաև հոդվ. ՂԴ

ԳՆՈՒՆ ՂԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎԱՃԱՌՈՂԱՑ ԵՒ ԳԵՈՂԱՑ ԶՊՏՈՒՂ ԱՅԳԵԱՑ  
ԵՒ ԶԱՅԼՈՑ ԱՐՄՏԵԱՑ

Վաճառել եւ գնել բազմաց պատահի գպտուղս յամի՝ յուսով շահի:  
 5 Եթէ լիցի պահասել, արժան է վաճառողին ամբողջ զգլուխն պահել՝  
 ոչ միայն յաղագս յուսոյն, այլ եւ վասն աշխատութեանն: Եւ թէ շահիցի,  
 որ լիցէ խաբէութեամբ, մի՛ գղջացեալ վաճառողն դարձուցէ, զի վա-  
 ճառք յաջողմամբ բազմապատիկ շահս տան: Սակայն աւուրք փորձի  
 երեք վկայիք լիցի տասն աւր. եւ կատարածն ցուցաւ ըստ իրաւանց:

10

ԳՆՈՒՆ Ճ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԸՍՏ ԳԼԵՈՑ ՀԱՏՈՒՑՄԱՆՑ ԶՐԱՂԱՅԱՑ  
ԵՒ ԱՅԼՈՑ ԱՅՍՊԻՍԵԱՑ

Եւ զայսպիսիս ըստ գլխոյ առեալ՝ վկայիք հաստատիցէ: Շահին  
 անգեղջ իցէ տուողին, եւ մի՛ տացէ փոխանակ շահի տուգանս:  
 15 Եւ իւր լիցի պատրաստել զկազմածն ամենայն եւ վնասք՝ ըստ կար-  
 գի իրացն եղեալ, իսկ յանպատրաստութենէ եղեալ՝ առողին լիցի՝ ի քար,  
 ի նաւ, յերկաթ եւ յայլն ամենայն, եւ գողացեալն:  
 Իսկ այրեալն, եթէ ի պատճառս տեառն իցէ՝ նմա լիցի, եւ Լթէ ի  
 պատճառս արողին՝ նմա լիցի:  
 20 Ըստ այդմ դատիցի եւ այլ ամենայն այգպիսիս, որ ինչ միանգամ  
 եւ իցէ:

ԳՆՈՒՆ ՃԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԱՐԱՆՑ

Եւ մատեան դատերքն Սաղպաազու՝ որդւոյ Ոփերայ՝ որդւոյ  
 25 Գաղաազու՝ որդւոյ Մաքիրայ ի գնդէ Մանասէի՝ որդւոյն Յովսեփայ: Եւ  
 այս են անուանք նոցա՝ Մաաղա, եւ Նուա, եւ Եզղա, եւ Մեղքա, եւ Թերսա:  
 Կացին առաջի Մովսիսի, եւ առաջի Եղիազարու քահանայի, եւ առաջի  
 իշխանացն, եւ առաջի ամենայն ժողովրդեանն ի դրան խորանին վկա-  
 յութեան եւ ասեն. հայր մեր մեռաւ յանապատին, եւ նա ոչ էր ի մէջ ժողո-  
 30 վրդեանն գումարելոցն առաջի Տեառն ի ժողովրդեանն Կորխայ, որ  
 վասն մեղաց իւրոց մեռաւ, եւ որդիք ոչ եղեն նորա: Եւ արդ, մի՛ ջնջեսցի  
 անուն հար մերոյ ի միջոյ ցեղի իւրոյ, վասն զի ոչ գոյր նորա որդի-  
 տո՛ւք մեզ ժառանգութիւն ի մէջ եղբարց հար մերոյ: Եւ մատուց Մով-  
 սէս զգատաստանս նոցա առաջի Տեառն: Եւ խաւսեցաւ Տէր ընդ Մով-  
 35 սիսի եւ ասէ. ուղիղ խաւսեցան դատերքն Սաղպաազու, տալով տացես  
 նոցա կալուած ժառանգութեան ի մէջ եղբարց հար իրեանց, եւ դիցես

զվիճակ հարն իրեանց զնորաբար: Եւ ընդ որդիսն Իսրայելի խաւսեցիս եւ  
ասասցես. այր ոք եթէ մեռանիցի, եւ ուստր ոչ դուցէ նորա, տացէ գժա-  
ռանգութիւն իւր դստեր իւրում. եւ եթէ ոչ գուցէ նորա դուստր, տաջիք  
գժառանգութիւն նորա եղբար իւրում. եթէ ոչ գուցեն նորա եղբարք, տա-  
ջիք գժառանգութիւն նորա հարեղբար իւրում. եւ թէ ոչ գուցեն եղբարք  
հար նորա, տաջիք գժառանգութիւն ընտանույ մերձաւորի նորա. ի  
ցեղէ նորա ժառանգեցէ գնորայն: Եւ եղիցի որդուցն Իսրայելի այդ իրա-  
ւունք դատաստանի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի<sup>261</sup>:

Անլուծանելի յամենայն հաւատացեալս եւ այս կացցէ վճիռ դատաս-  
տանի, գի իւր իսկ է հաւաստի գիտողին զամենայն իրաւունս: Զի ուստեր  
անկ է ժառանգ լինել, թէ իցէ, ապա թէ ոչ իցէ՝ դստերն, որ տակաւին ի  
տանն իցէ: Իսկ արտաքս գնացեալն եւ առն եղեալն՝ երկու դուստր գժիոյ  
դստեր բաժին առցեն, այլ ոչ կարեն ժառանգ լինել: Եւ այս յայտ անտի  
է, գի ոչ թողին զդստերսն Սաղապաղու յաւտար ցեղս արանց լինել ,գի  
մի՝ ժառանգութիւնն յաւտարս ելցէ:

Ապա թէ շիցէ դուստրտ եղբայրն ժառանգիցէ:

Իսկ եթէ առն լեալ դուստրն կամիցի իւրովք ծննդաւք եւ արամք գալ  
եւ զհայրենիսն ժառանգել, նոցա լիցի եւ մի լիցի եղբարն, եւ յորժամ  
որդի շիցէ եղբարն. ապա թէ ոչ կամիցի դալ՝ գիւր մասնն առեալ,  
եղբայրն ժառանգիցէ:

Ապա թէ շիցէ եղբայր, հարեղբայրն ժառանգիցէ: Եւ թէ շիցէ հար-  
եղբայր, այլ ընտանի մերձաւոր ժառանգիցէ ի ցեղէ հարն: Որքան մեր-  
ձաւոր իցէ, հեռաւոր ընտանույն ոչ հրամայէ. եւ գցեղ հար առնէ ժառանգ  
եւ ոչ մար, մինչ ի դուստրն միայն կացոյց գժառանգ լինելն:

Ապա թէ հարեղբարն հրամայէ ժառանգ լինել, յայտ է, թէ հայր  
իցէ, նա ժառանգէ, եւ թէ մայր, եւ քոյր, եւ կին ոչ ժառանգեն, այլ մա-  
սունս առնուն, որպէս եւ ցուցանի<sup>(92)</sup>. Կնոջն՝ դանգ, եւ քեռն՝ դանգ եւ  
կէս, եւ մարն՝ երեք թասու:

Այլ ընտանի մերձաւոր համարիմք, գոր Աւրէնքն մինչ ի շորրորդ  
գարմն հրամայէ զառականս ոչ յայտնել յառնուլ կինն<sup>262</sup>. զայս եւ ի ժա-  
ռանգաւորսն պահելի է: Իսկ զկնի այնր ոչ են ժառանգ, այլ ժառանգու-  
թիւնն վիճակ լիցի դատաւորուց, որպէս ցուցեալ է ի գրութիւնս նոցա<sup>263</sup>:

Իսկ եղբայրն, որ շիցէ համամայր, կէս դանգ պակաս ընդ համա-  
հարսն եւ ընդ համամարսն ժառանգիցէ: Զայս եւ նահապետն եցոյց Աբ-  
րահամ, գի ետ զամենայն ինչս իւր Իսահակայ որդույ իւրոյ եւ որդուց հար-  
ճիցն ետ պարգեւս եւ արձակեաց զնոսա<sup>264</sup>: Եւ թէ ասիցէ ոք. աստ՝ պակ  
արհնութեան, եւ անդ՝ Քետուրա կին երկրորդ, սակայն անդ՝ տուրս, եւ  
ժառանգութիւն եղիցի աստ, ըստ ցուցելոցդ, սակաւ պակաս. եւ յԱւր-  
էնսն անդրանկանն տուաւ իրիցութեան պատիւ<sup>265</sup>: Ըստ այսմ արիւնա-  
կի եւ հարեղբարքն լիցին:

Յանդիմանին յաստուածային արիւնացս դատաստանէ մահմետակա-

261 Թիւք, Իէ, 1—11

262 Տե՛ս Ղևտ., ԺԸ, 6—18

263 Տե՛ս հոգվ. Ա,

264 Տե՛ս Մնունդք, ԻԱ, 5, 6

265 Տե՛ս Բ օրին., ԻԱ, 16—17

նացն դատաստանք, զի զդոտերս ժառանգ ոչ առնեն հարց, այլ ընդ ըն-  
տանիս մասնաւորեն, որոց ոչ հետեւելի է, այլ անվրէպ՝ աստուածայինս  
դատաստանաց իրաւամբք:

ԳՆՈՒՄ ՄԲ

5            3ԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ, ՈՐՈՑ  
                 ՈՒՍՏԵՐՍ ԵՒ ԴՍՏԵՐՍ ԻՅԷ

Նախ զայն ասացցուք, զի երկու դուտոր միոյ ուտեր առջէ բա-  
ժին<sup>265</sup>: Եւ այս վկայեալ է ի կանոնաց եւ յԱրիւնաց նշանակեալ ըստ  
այսմ:

10            Խաւսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. խաւսեա՛ց ընդ որդիսն Իսրայելի  
եւ ասացես ցնոսա. որ ոք ուխտիցէ ուխտս՝ տալ զգինս անձին իւրոյ  
Տեառն, եղիցին զինք արուին, ի քսանամենից մինչեւ ցվաթսնամեանս,  
եղիցին զինք նորա յիսուն երկդրամեան արծաթոյ ըստ սրբութեան սկե-  
ղքն, եւ իգին<sup>265</sup> լինիցին զինք երեսուն երկդրամեան: Ապա թէ ի հնգամե-  
15            նից մինչեւ ցքսանամեանս՝ լինիցին զինք արուին քսան երկդրամեան,  
եւ իգին՝ տասն երկդրամեան<sup>266</sup>:

Նաեւ ի կազմածն տեսանի, զի կրկին աւուրց կարաւտանայ էզն ի  
ծնունդն, ըստ որում թերին առաւ կող<sup>267</sup>. Եւ անունն իսկ նշանակէ, զի  
«կին» ըստ կիսոյն անուանի մտրմնոյն: Եւ թէպէտ եւ ի մի պատուէրդ  
20            աւելի հնգիւ է, քան զերկպատիկն զինք իգին՝ յաղագս կատարելութեան  
հասակին եւ կամ յաղագս պիտոցից կարգաց<sup>268</sup>, սակայն ըստ կազմածին  
ի միւսն ցուցաւ արուին կրկին լինել: Յայդցանէ հաստատի երկու  
դուտոր մի լինել որդի ի ժառանգութիւնս: Բայց գիտելի է եւ զայն եւս, զի  
կարգեալ դստերքն է երկուքն մի որդի, այլ ոչ որ ի տանն է, զի ժառանգ  
25            հրամայեցաւ, յորմէ յայտ է, զի զորդոյ ամուս բաժին. եւ այլքն զկէս  
եղբար առնլով Էլեալքն, նմանապէս զոյգ դստինն եղբարց, ըստ հրա-  
մանի Տեառն՝ եթէ չիցէ որդի, դուտորն ժառանգիցէ<sup>268</sup>: Այլ այս դատեալ  
եղև ըստ կազմածին, եթէ զերկուս դստերս մի առնլի է եղբայր, եւ  
ցուցաւ ըստ Տեառն հրամանի, եթէ ժառանգ է նման որդոյ, որ ի տան իցէ:

30            Այլ կամ լիցի եւ զայս ըստ հաճոյից եւս բնտրել, եթէ զամենա՛յն դստերս  
զերկուսն մի առնլի է եւ եթէ զելեալսն: Այլ ինձ այսպէս թուի, եթէ իկեա-  
լքն ի տանէ բաժնիւ եւ առն եղեալ՝ զերկուսն մի լեալ, զոյգ ընդ եղբար  
առնու բաժին իւրով կրկին բաժնաւն, ապա որ ի տանն՝ հաւասար եղ-  
բարցն ժառանգէ զհարն: Հոստատի ըստ այսմ ուտերաց եւ դստերաց  
35            հաւասար լինել ժառանգութիւնն հար, ըստ որում եւ Աստուած զոյգ էտ  
զժառանգութիւն արքայութեանն արանց եւ կանանց: Սակայն ավանդա-  
պահք կարգաց եկեղեցոյ արք եւ ոչ կանայք են. նմանապէս թէպէտ  
բաժանորդք ընդ եղբարս ժառանգութեան քորք են, այլ ոչ ժառանգա-  
պահք, յորժամ եղբարք իցեն:

266 Ղևտ., Իէ, 1—5  
267 Տե՛ս Մնոնդք, Բ, 21, 22  
268 Տե՛ս Թիւք, Իէ, 8

և եթէ հայր իցէ, կիինն միայն առցէ մասն, եւ ո՛չ մայր եւ ո՛չ քոյր, ապա թէ ոչ իցէ՝ մայր եւ քոյր մասնաւորին<sup>(269)</sup>:

Այլ որդի դստեր ո՛չ ժառանգէ եւ ո՛չ առցէ մասն, բայց եթէ մինչ կենդանի իցէ՝ գրով ժառանգ առնիցէ, զի իւր սերմ դուտորն է եւ ոչ որդի դստերն: Նոյն լիցի եւ խորթն, սակայն իշխան է կենաւք ժառանգեցուցանել զնա, թէ կամեսցի, իբրեւ զաւտարս. եւ թէ ի տան հարսուի աշխատեալ իցէ, իբր վարձկանի առցէ վարձ եւ ոչ մասն. նոյնպէս եւ թոռն. զի եւ առաքեալ ոչ ընդ որդիս զնոսա համարի, ասելով՝ խորթք իցէք եւ ոչ որդիք<sup>269</sup>: Ապա թէ որ զկանոնացն<sup>(270)</sup> բնդդէմ այսմ զիցէ, զի իբր զորզոց՝ զճնունդս նոցա հրաժարեցուցանէ ի խնամութիւնսն<sup>270</sup>, պիտասցէ, զի պսական ընդ մարն բնտանութիւնն եղև, եւ խափանի ամուսնութիւնն, այլ զի սերմ ոչ է հարն, ոչ ժառանգէ. զի թէ Աբրահամ եւ ոչ զիւր ծնունդսն արար արժանի ժառանգ լինել<sup>271</sup>, ո՞րչափ աւտար ծնունդն:

Նաեւ ոչ եղբայր մարն, եւ ո՛չ որդի նորա, եւ ո՛չ որդի քուերն, եւ ո՛չ մարքոյր եւ նորին որդի, կամ հարքոյր կամ ժառանգեն եւ կամ մասնաւորին, բայց եթէ կանխաւ ստանայցէ:

Իշխան է եւ զժառայս ստանալ ժառանգս, թէ կամեսցի, որպէս ի կանոնս եպիսկոպոսաց եցոյց<sup>272</sup> թերևս ծառայս ստացեալ իցէ, յայտ է, թէ ժառանգս, որ զինչսն ասաց թողուլ:

Իսկ յորժամ դուտորն ժառանգէ՝ որ ի տան իցէ, հարեղբայրն եւ նորին որդիք ժառանգել ոչ կարեն եւ ոչ մասնաւորիլ. ապա թէ առն լեալ իցէ եւ զայցէ ժառանգ, հարեղբայրն մասն առցէ զանգ, այլ ոչ որդի նորա, բայց թէ պատահի ի հարցն ժառանգութիւնսն զստաստան լինել:

Իսկ եթէ շիցեն ուստերք եւ դստերք մինչ ի շորրորդ զարմն, որ ի հարէն ժառանգիցեն, եւ այլք՝ ոչ եւս, եւ ոչ՝ ի մարցն տոհմէ:

ԳՆՈՒՆ ԺԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՍԱՍՏԱՆԱՅ ԿԱՆԱՆՑ ԺԱՌԱՆԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ

Եւ կանանց մեռելոց նոյն լիցի զատաստան, որպէս եւ արանց զկնի մահուան<sup>273</sup>. Եթէ շիցեն ուստերք եւ դստերք, իբրու թէ ծնեալ իցէ ուստերս եւ դստերս, եւ մեռեալ, եւ թէ՛ ի բնէ անժառանգ իցէ եւ թէ՛ ընդ պսակին փութով վախճանեալ կուսութեամբ, սակայն յայդոսիկ զանազանի դատաստանն:

Արդ, ըստ նմանութեան արանց, թէ ուստր իցէ, նա ժառանգիցէ զըմարն, ապա թէ շիցէ՝ դուտորն, եւ թէ շիցէ դուտոր՝ եղբայրն, եւ թէ շիցէ եղբայր՝ հարեղբայրն, եւ թէ ոչ հարեղբայր իցէ, ի ցեղէ հարն ժառանգէ մինչև ի շորրորդ զարմն: Ապա թէ հայր իցէ, հայրն ժառանգէ, եւ այլն՝ զոյգ է միմեանց: Իսկ եթէ ծնունդք իցեն մարն, ամենայն ինչ նոցա է,

269 Տե՛ս Թողթ առ Եբր., ԺԲ, 8  
270 Տե՛ս Բասդի Կեսարացու Կանոնք ՄԺԴ  
271 Տե՛ս Մնունդք, ԻԾ, 5, 6  
272 Տե՛ս Կանոնք Կղեմայ ԸԶ  
273 Տե՛ս հոգվ. ՃԱ, ՃԲ

որպէս եւ հարն ժառանգութիւնն: Ապա թէ մեռանիցի մանուկն, ժառանգութիւնն հարն եղև, ոչ անդրադարձի առ մայրն իբր ժառանգութիւն:

Ապա թէ մայրն եւս մեռանիցի, եւ հայր իցէ մարն, երկուցն լիցի ժառանգութիւնն՝ հար մանկանն եւ հար մար մանկանն. նախ զպատշաճ հոգոյ նորա տալով՝ յերկուս բաժանիցի:

Իսկ եթէ ի բնէ անժառանգ իցէ, ժառանգութիւնն հարն լիցի, եւ թէ ոչ հայր՝ այլոց ժառանգաւորացն լիցի, որպէս ցուցեալ է<sup>274</sup>: Իսկ առն դանգ լիցի վասն ի միասին կենակցութեանն: Ապա թէ շիցեն միաւորեալք, եւ մեռանիցի կիսն, մի՛ լիցի առն եւ ոչինչ ի կնոջէ, զի որպէս ոչ է տիրեալ մարմնոյ նորա, նոյնպէս ոչ տիրէ բնչից նորա: Նոյն լիցի եւ կնոջն: Ապա թէ ամուսնացեալ իցէ, թէ եւ սակաւ ժամանակ, նմանապէս դանգ լիցի առն: Եւ զի որպէս զհարն ժառանգելով որդին՝ մայրն դանգ առցէ, նոյնպէս զմարն ժառանգելով որդին՝ հայրն դանգ առցէ:

15

## Գ Լ Ո Ւ Պ Ճ Գ

## ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԲԱԺԱՆՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԸՆԶԻՑՆ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆ

Ըստ բաժանողական տրուեստի զժառանգութիւնն այսպէս ուղիղս բաժանիցես: Զինչն զամենայն մի համարիցիս դահեկան եւ զգահեկանն՝ վեց դանգ:

Եւ թէ մի որդի լինի եւ մի դուստր, որ ի տանն, յերկուս բաժանիցես. զերկու դանգ եւ կէս՝ եղբարն, եւ զնոյն կողմն՝ քուերն, եւ զգանգն՝ մարն:

Ապա թէ կարգեալ քուերք իցեն, զերկուսն մի եղբայր կալցիս եւ զերկու դանգ եւ կէսն եղբարն տացես, եւ զերկու դանգ եւ կէսն՝ երկու քուերն, եւ զգանգն՝ մարն:

Իսկ թէ մի եղբայր իցէ եւ մի քոյր առնակին, կէս դահեկան եւ չորս գարի եղբարն լիցի, եւ դանգ եւ կէս եւ երկու գարի՝ քուերն, եւ դանգ մի՝ մարն:

Ապա թէ երկու եղբայր եւ մի քոյր իցէ, որ ի տանն, դանգ եւ կէս եւ երկու գարի մի եղբարն լիցի, եւ նոյնչափ միւս եղբարն, եւ նոյնքան՝ քուերն, եւ գանգ՝ մարն: Իսկ թէ կարգեալ քոյրն իցէ, երկու դանգ մի եղբարն լիցի, եւ երկու դանգ՝ մի եղբարն, եւ դանգ՝ քուերն, եւ դանգ՝ մարն:

Ապա թէ մայր ոչ իցէ, ինքեանից միայն բաշխեսցի. երկու դանգ եւ թասու եւ մի գարի եւ չորս դանգ գարոյ եւ երեք թասու գարոյ՝ մի եղբարն, նոյնպէս՝ միւս եղբարն, եւ դանգ եւ երկու գարի եւ երկու գարոյ դանգ եւ կէս դանգ գարոյ՝ քուերն. կէս թասու գարոյ աւելի է քուերն: Եւ զի զայս ցուցաք յայ՛ս առնելոյ աղագաւ, եթէ զիրան եւ զարդարն խնդրէ զդատատանն:

274 Տե՛ս հոգվ. ձԲ

Իսկ եթէ երեք եղբայր եւ մի քոյր իցէ, դանձ եւ կէս եւ երկու գարի  
 եւ կէս՝ իւրաքանչիւր եղբար, եւ երեք թասու եւ գարի եւ կէս՝ քուերն: Եւ  
 է քուերն դանձ եւ կէս աւելի գարուոյ: Զի թէ կամ լիցի, աչղսլէս տկար  
 մասինն սահաւն թողցես աւելի, ապա թէ ոչ՝ եւ զայն եւս հասասարես-  
 ցես:

5

Ապա թէ շորս եղբայր եւ մի քոյր իցէ, դանձ եւ թասու եւ մի գարի՝  
 իւրաքանչիւր եղբար, եւ կէս դանձ եւ կէս թասու եւ կէս գարի՝ քուերն:

Իսկ եթէ հինգ եղբայր եւ մի քոյր իցէ, իւրաքանչիւր եղբար դանձ  
 լիցի եւ մի գարի, եւ քուերն՝ կէս դանձ եւ մի գարի. կէս գարի եւ աստ  
 աւելի լինի քուերն:

10

Ապա թէ վեց եղբայր եւ մի քոյր իցէ, երեք թասու եւ երկու գարի  
 իւրաքանչիւր եղբար լիցի, եւ կէս դանձ՝ քուերն. կէս գարի եւ աստ  
 առաւելեալ է քուերն:

15

Ըստ այսմ արիինակի եւ զայլսն որքան իցէ բաժանեսցես: Նմանա-  
 պէս եւ զմարն բաժանիցես զժառանգութիւն:

Իսկ եթէ վեց քոյր եւ մի եղբայր իցէ, ի շորս ժառանգութիւնն բա-  
 ժանիցի. երեք եղբայր վեց քոյրն լիցի: Ըստ այսմ արիինակի եւ այլքն  
 լիցին: Եւ եթէ մայր լիցի՝ եւ այն ցուցաւ, եթէ ոչ՝ եւ այն: Եւ թէ ի տան  
 քոյրն իցէ եւ թէ առն լեալ իցէ, ըստ զանազանութեան նոցա եւ դատաս-  
 տանն հաստատիցի, զի սակաւ եւ այդ նշանակ տուաւ: Յորմէ զարժանն  
 ոք գտցէ եւ գթերին լցցէ, եւ մի՛ ինչ պարսաւանս դիցէ, զի ըստ կարի  
 մեր այդքան ծանուցաւ:

20

ԳՆՈՒՄ ԾԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՐՀԱՄԱՐՀՈՂԱՅ ԶՔԱՀԱՆԱՅՍ ԵՒ  
 ԶԴԱՏԱԻՈՐՍ

25

Եւ եթէ վրիպեսցի ի քէն բան ի դատաստանի ի մէջ արեան եւ արե-  
 ան, եւ ի մէջ դատաստանի եւ դատաստանի, եւ ի մէջ զրդուութեան եւ  
 զրդուութեան, եւ ի մէջ հակառակութեան եւ հակառակութեան, բան դա-  
 տաստանի ի քաղաքս քո, յուրացեալ ելցես ի տեղին, զոր ընտրեսցէ Տէր  
 Աստուած քո անուանել զանուն իւր անդ: Եւ երթիցես առ քահանայս  
 Ղեստացիսն եւ առ դատաւորսն, որ լինիցի յաւուրսն յայնոսիկ, եւ քննեալ  
 պատմեսցեն քեզ զդատաստանն: Եւ արացես ըստ հրամանին, զոր  
 պատմիցեն քեզ, որք ի տեղւոյն իցեն, զոր ընտրիցէ Տէր Աստուած քո. եւ  
 զգուշացի՛ր յոյժ առնել ըստ ամենայնի, որպէս արիինադրեսցի քեզ: Ըստ  
 Աւրինաց եւ ըստ դատաստանին, զոր ասացեն քեզ, արացես եւ մի՛  
 խոտորեսցիս ի բանէն, զոր պատմեսցեն քեզ, մի՛ յաչ եւ մի՛ յահեակ: Եւ  
 մարդ ոք, որ առնիցէ հպարտութեամբ առ ի շլսելոյ քահանային, որ կացցէ  
 պաշտել յանուն Տեսոն Աստուծոյ քոյ, կամ դատաւորին, որ իցէ յաւուրսն  
 յայնոսիկ, մեռցի մարդն այն<sup>275</sup>:

30

35

40

Տես զի զարհամարհողս քահանայից եւ դատաւորաց զոյգ եցոյց,  
 զի մի է զարուսթիւն Աւրինաց եւ դատաստանի, եւ պարտաւորութիւն նոցա

մահ է, զի շանտալ նոցա ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհնազանդութիւն Աստուծոյ. եւ արեանն յայտ է գտաւատան:

ԳՆՈՒՄ ԾԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀԱՍԻՑ Ի ԺՈՂՈՎՐԴԵՆԷՔ ՔԱՀԱՆԱՅԻՑ

- 5 Եւ այս են իրաւունք քահանայիցն ի ժողովրդենէն, որք զենուցոմ զենիս. եթէ արշառ իցէ եւ եթէ ոչխար՝ տացէ քահանային զերին, եւ զծնատան, եւ զխախացոցն: Եւ զպտուղս ցորենոյ եւ զգինւոյ քոյ, եւ զհողոյ քոյ, եւ զպտուղս կտրոց խաշանց քոց տացես նմա: Զի զնոսա ընտրեաց Տէր յամենայն ցեղիցն քոց կալ առաջի Տեառն Աստուծոյ քոյ,
- 10 պաշտել եւ արհնել յանուն նորա, նաեւ որդիք իւր զամենայն ատուրս<sup>276</sup>:  
 Զայս զիրաւունս այժմ ոչ տահեն հաւատացեալք, զոր հարկաւոր էր առաւելու քան զԱւրիինացն, զի հասարակաց զենմանն արիւնադրէ իբր զայլ պտուղսն, զի ոչ զընծայից զենմանցն է բանդ:
- Եւ զայդ եղաք, եթէ ըստ դատաստանի իրաւանց է եւ քրիստոնէից
- 15 այդոքիւք զքահանայս պատուել:

ԳՆՈՒՄ ԾԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՍԱՀՄԱՆԱՅ ԱՄԵՆԱՅԻՑ

- Մի փոխեսցես զսահմանս ընկերի քոյ, զոր հաստատեցին հարքն քո ի ժառանգութեան քում, զոր ժառանգիցես յերկրին, զոր Տէր Աստուած
- 20 տացէ քեզ ի ժառանգութիւն<sup>277</sup>:
- Զանդաստանաց եւ զայլոց ասլ ճառդ. առ եղբարս եւ ազգականս եւ առ ատարս հրամայէ իրաւամբք վարիլ:
- Զոր ի հարէ ունի զսահման ժառանգութեան, ոչ պարտի փոխել զընկերին յափշտակելով, բայց եթէ կանխաւ զրկեալ իցէ, դատ վարիլ:
- 25 Այլ ճշմարտութեամբ ի հարէ առեալ ժառանգութիւնն ոչ է իրաւացի զկնի մահու հարն զղջմամբ փոխել ընդ այլ ժառանգակցաց:

ԳՆՈՒՄ ԾԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԿԱՅԻՑ ԵՒ ՍՈՒՑ ՎԿԱՅԻՑ

- Ոչ հաստատիցի մի վկայ վկայել զմարդոյ ըստ ամենայն ապիրատութեան, եւ ըստ ամենայն յանցանաց, եւ ըստ ամենայն մեղաց, զոր մեղանշիցէ: Ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեցի ամենայն բան: Եւ եթէ կացցէ յառաջ սուտ վկայ զմարդոյ եւ շարախաւսիցէ զըն-

<sup>276</sup> Բ օրին., ԺԸ, 3—5  
<sup>277</sup> Բ օրին., ԺԹ, 14

մանէ ամբարշտութիւն ինչ, կացցեն Երկոքին արքն, որոց իցէ հակառակութիւն, առաջի Տեառն, եւ առաջի քահանայիցն, եւ առաջի դատարացն, որ իցեն յաւորան յայնտակ, եւ քննեցեն դատարորքն ճշմարտութեամբ, եւ ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն, եկաց հակառակ եղբար իւրում. արասջի՛ք նմա՝ որպէս խորհեցաւ շար տանել եղբար իւրում, եւ բարձջի՛ք զշարն ի միջոյ ձերմէ՝<sup>278</sup>:

Աւրինացս դատաստան զերկուց եւ զերից վկայիցն հաստատէ զբան եւ զսուտ վկայն ըստ շար կամացն հրամայէ տանջել: Եթէ արեան կամեցաւ վկայել եւ թէ այլոց՝ նո՛վին դատել:

10

Գ Լ Ո Ւ Ն Ճ Թ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ԳՏԱՆԻՑԻ ՍՊԱՆԵԱԼ Ի ՍԱՀՄԱՆՍ ԴԱՇՏԱՅ

15

Եւ եթէ դտանիցի վիրատր յերկրի քում, զոր Տէր Աստուած քո տացէ քեզ ժառանգել, անկեալ ի դաշտի, եւ ոչ գիտիցեն զայլն, որ խոցեացն զնա, ելցէ ծերակոյտն քո եւ դատարորքն քս եւ շահեացեն շուրջ զվիրատրան զվայրս քաղաքացն: Եւ եղիցի քաղաք, որ հուպ իցէ ի վիրատրն, առցէ ծերակոյտ քաղաքին այնորիկ հրինչ մի յարջառոց, այլաւքն հանդերձ՝<sup>279</sup>:

20

Յայսմանէ յայտ է ո՛չ տուգանս լինել այդպիսի սպանման եւ ո՛չ դատաստան արեան, այլ քաւութիւն պատարագաւ՝ անդ եւ աստ՝ ապաշխարութիւն: Այդոցիկ հետեւելի է դատարաց, որքան անյայտ է, իսկ յայտ եկեալն՝ տուգանք՝ հաղորդիցն, եւ արեան դատաստան՝ սպանողացն:

Գ Լ Ո Ւ Ն Ճ Թ

25

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳԵՐԵԼՈՑ ԿԱՆԱՆՅ ԱՅԼԱԶԴԵԱՅ

30

Եւ եթէ ելանիցես ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց, եւ մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ աւարեսցես զաւար նոցա: Եւ տեսանիցես յաւարին կին գեղեցիկ տեսիւմբ, եւ ցանկանայցես նմա, եւ առցես զնա քեզ կնութեան, եւ տարցիս զնա ի տուն քո, եւ գերծցես զզլու՛ս նորա, եւ սրբեսցես զրզնգունս նորա, եւ հանցես զհանդերձ գերութեան նորա, եւ նստցի ի տան քում եւ լացցէ զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, եւ ապա մտցես առ նա եւ բնակեսցես ընդ նմա, եւ եղիցի քո կին: Եւ եղիցի թէ ոչ հաճեոցիս ընդ նմա՝ արձակեսցես զնա ազատ, եւ վաճառելով մի՛ վաճառեսցես զնա արծաթոյ, եւ մի՛ անարգեսցես զնա, քանզի լիկեցեր զնա՝<sup>280</sup>:

35

<sup>278</sup> Բ օրին., ԺԹ, 15—19  
<sup>279</sup> Բ օրին., ԻԱ, 1—3, «այլաւքն հանդերձ» բառերով, ինչպես նշել է Վ. Բաստամյանցը, Մխիթարը նկատի ունի շարունակութունը մինչև 9-րդ համարը:  
<sup>280</sup> Բ օրին., ԻԱ, 10—14

Եւ զայս ըստ Աւրինացն լրմամբ ընկայցին. թէ պատահի քրիստոնէի՝ նախ մկրտել եւ զսուրինակ հնութեանն բառնայ եւ ապա առնուլ կին ըստ կարգի մամուսութեան: Եւ ոչ եթէ յորժամ հաճեսցի ոչ<sup>(281)</sup>, արձակէ ազատ, այլ եւ ոչ բնու սրձակել, առանց բանի պոռնկութեան, իշխան է:

5

ԳՆՈՒՄ ԾԺԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀԱՐԱՆՑ ԱՆԴՐԱՆԿԱՑՈՒՑԱՆՆԵՆՈՅ ԶՈՐԴԻՍ

Եւ եթէ լինիցին տուն երկու կանայք, մին ի նոցանէ՝ սիրելի եւ մին՝ առելի, եւ ծնանիցին նմա որդիս սիրելին եւ առելին, եւ լինիցի որդի անդրանիկ առելւոյն: Եւ եղիցի յաւուր, յորում ժառանգեցուցանիցէ որդուց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անդրանկացուցանել զորդի սիրելւոյն, անտես արարեալ զորդի առելւոյն զանդրանիկ, այլ զանդրանիկ առելւոյն ծանիցէ՝ տալ նմա կրկին յամենայնէ, որ ինչ զտանիցի նորա, զի նա է սկիզբն որդուց նորա, եւ նմա անկ է անդրանկութիւնն<sup>281</sup>:

Արդ, զայս զգատաստան ի մեզ այսպէս առցուք: Զի թէ ոչ է ունել քրիստոնէից միանգամայն երկուս կանայս, սակայն ի մի կնոջէ լինի որդիս, եւ թէ երկրորդ առցէ կին եւ յայնմանէ իցէ որդի, մի՛ վասն սիրոյ կրտսերին զնա անդրանկացուցէ եւ կամ աչառեալ կնոջն վերջնոյ՝ զնորայն որդի: Այլ զսկիզբն պատուիցէ զորդուցն, ըստ որում եւ Տէր պատուիրեաց. տալ զառաջին ծնունդն<sup>282</sup>, առաւել տալ ի ժառանգութեանց<sup>283</sup>. բայց եթէ պատահի յազազս անպիտանութեան շառնել արժանի:

ԳՆՈՒՄ ԾԺԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՆՉԳԱՄ ՈՐԴԻՑ

Եւ եթէ իցէ ուրուք որդի խեռ եւ անզգամ եւ ոչ լուիցէ ձայնի հար եւ մար իւրոյ, եւ խրատիցեն զնա, եւ ոչ անսայցէ, կայցին զնա հար եւ մայր իւր եւ տարցին առ ծերակոյտ քաղաքին իւրեանց եւ ի դուն տեղւոյն իւրեանց եւ ասացեն ցարս քաղաքին իւրեանց. որդիս մեր այս խեռ է եւ անզգամ եւ ոչ լսէ ձայնի մերում, հանգանակող է եւ արբշխու: Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին նորա քարամբք, եւ մեռցի, եւ բարձրի՞ք զչարն ի միջոյ ձերմէ. եւ լուեալ այլոցն՝ զահի հարկանիցին<sup>284</sup>, Զույզ է այս դատաստան այնմ, որ զծնողսն հարկանէ<sup>285</sup>, զի անդ՝ մահու մեռցի, զի զիւր անարզէ զծնող եւ նովաւ՝ զհասարակացն Աստուած, եւ աստ՝ առանց միջնորդի՝ միայն զԱստուած, լուծմամբ պատուիրանին: Վասն որոյ անդ՝ մահու մեռցի, որ է երկու մահ, եւ աստ՝ պարզաբար

281 Բ օրին., ԻԱ, 15—17  
282 Տե՛ս Ելք, ԺԳ, 2. ԻԲ, 29. ԼԴ, 19 և այլուր:  
283 Տե՛ս Բ օրին., ԻԱ, 17  
284 Բ օրին., ԻԱ, 18—21  
285 Տե՛ս հոգվ. ՄԵ, նաև՝ Ելք, ԻԱ, 15, 17: Ղևտ., Ի, 9: Մատթ., ԺԵ, 4 և այլուր:

մեկոցի, որ է միայն առ Աստուած յանցանքն: Այլ որպէս անդ եղաւ իրաւամբք՝ էլլանել ի ժառանգութենէ փոխանակ մահու, նոյն լիցի եւ աստ:

## ԳԼՈՒԽ ԾԺԳ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՄԱՀԱՊԱՐՏԱՅ ՄԵՌԵԼՈՅ

5 Եւ եթէ հասանիցեն ումեք մեղք մահապարտութեան, եւ մեռանիցի, կախեսչիք՝ զնա զփայտէ, եւ մի՛ ազանիցի մարմին նորա ի փայտին, այլ թաղելով թաղեսչիք զնա ի նմին աւուր, զի անիծեալ յԱստուծոյ է ամենայն, որ կախիցի զփայտէ<sup>286</sup>:

20 Զի թէպէտ ամենայն արիւնադրութիւնս ոչ միայն առ ճառն, այլ եւ առ ի միտսն բազում ունի պատճառս, այլ մեզ որքան հարկաւոր է իրաւանց դատաստանի՝ առնլի է: Եւ զի անդ Իսրայելի զազգայնոցն ասացաւ թաղել զմարմինս, եւ զի մերոց թագաւորաց ոչ հրամայեցաւ զհաւատացեալ սպանանել, բայց միայն իրատել: Իսկ եթէ այլազգի պատահի ի մահ դատապարտեալն, ոչ է արտաքոյ իրաւանց, զբնութիւնս պատուելոյ  
15 աղազաւ, թաղել տալ հրաման, յորում աւուր եւ իցէ:

## ԳԼՈՒԽ ԾԺԴ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՈՐՍՏԷԻՑ

Գուցէ տեսեալ դարջառ եւ ղոչխար եղբար քոյ, մոլորեալ ի ճանապարհի, անտես առնիցես զնոսա, այլ դարձուցանելով դարձուցես զնոսա եւ ածցես առ հղբայրն քո: Ապա եթէ չիցէ եղբայրն քո մաւտ առ քեզ, եւ ոչ ճանաչիցես զնա, ժողովեսցես զնոսա ի տուն քո, եւ հղիցին առ քեզ մինչեւ խնդրեսցէ զնոսա եղբայրն քո, եւ տացես ցնա: Նոյնպէս արասցես զէջ նորա, նոյնպէս արասցէս եւ զհանդերձ նորա, նոյնպէս արասցես զամենայն կորուստ եղբար քոյ. որ ինչ կորնչիցի ի նմանէ, եւ  
25 գտանիցես, մի իշխեսցես անտես առնել զայն<sup>287</sup>:

Գութ եւ խնամ սիրոյ ունել ուսուցանէ արէնքս աստուածային ոչ միայն առ մերձաւորս, այլ եւ առ հեռաւորս. յամենայն կորուստս հաւատարիմ լինել եւ անվարձ, զի արտաքոյ իրաւանց է դատաստանի վարձաւք զկորուստ դարձուցանել:

30

## ԳԼՈՒԽ ԾԺԵ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՅԱՐՈՒՅՈՂԱՅ ԶԱՆԿԵԱԼ ԶՈՐՔՈՏԱՆԵՍ

Գուցէ տեսանիցես զլջ եղբար քոյ կամ զեզն նորա անկեալ ի ճանապարհի եւ զանց առնիցես զնոքաւք, այլ յարուցանելով յարուցես ընդ նմա<sup>288</sup>:

<sup>286</sup> Բ օրին., ԻԱ, 22—23

<sup>287</sup> Բ օրին., ԻԲ, 1—3

<sup>288</sup> Բ օրին., ԻԲ, 4

Անվարձ եւ զայս եւս հրամայէ: Եւ թէպէտ արինադրութիւն, սակայն եւ դատաւորաց է գիտել զայստսիկ եւ խրատել, որ յազազս սորին երթան յատեան:

ԳԼՈՒԽ ԾԺԶ

5

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀԱՆԴԵՐՁԻՑ ԿԱՆԱՆՑ

Մի՛ եղիցի հանդերձ առնացի զկանամբք եւ մի՛ զգեցցի այլ զգեստ կանացի, զի պիղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն, որ առնէ զայն<sup>289</sup>:

10

Զի բազում դովաւ լինել շարեաց ի դէպ էր եւ անձեւութիւն իսկ, յազազս որոյ հրաժարեցոյց: Ըստ այսմ խրատելի է դատաւորաց եւ քարոզչաց:

ԳԼՈՒԽ ԾԺԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԲՈՒՆՈՑ ԹՈՂՆՈՑ

15

Եւ թէ դիպեցցիս բունոց հատուց առաջի քո ի ճանապարհի, եթէ՛ ի ծառ եւ եթէ՛ ի գետնի, ձագուց կամ ձուոց, եւ մայրն ջեռեալ նստիցի ի վերայ ձուոցն կամ ձագուցն, մի՛ անուցուս զմայրն հանդերձ որդւովքն, արձակելով արձակեսցես զմայրն եւ զորդիսն առցես քեզ, զի բարի լինիցի քեզ եւ բազմաւրեայ լինիցիս ի վերայ երկրի<sup>290</sup>:

20

Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս մեզ դիցէ յայստսիկ, եթէ զի արինադրութիւն է, զի՞ արդ լիցի յիրս դատաստանի, նմանապէս եւ՛ նմանք սոցին: Գիտելի է, զի ամենայն արինադրութիւն լուծեալ եւ զղջացեալ ոչ կարաւորի դատաստանի, իսկ անհնազանդիցն դատաստանի պէտք են: Եւ զայս Տէր յայտ արար, ասելով. ի ճանապարհի զղջացեալ՝ տո՛ւր զհաշին ոսոխի, զի մի՛ ի դատաստան անկցիս<sup>291</sup>:

25

Եւ արդարութեան կատարումն: Իսկ լուծեալ եւ զղջացեալ՝ ի ձեռն վարդապետաց վերստին ուղղութիւն, այլ անզղջից՝ դատաստանաց իրաւունք: Փոքրագոյն արինադրութեամբս տեսցես այժմ եւ զմեծամեծսն սովաւ շափեալս: Եւ զի յայտ արասցէ զհաւս վասն մեր եղեալ, զոր հրամայէ թողուլ զմայրն անկելոյ պատճտուաւ եւ մեզ ի պէտս զձուս եւ զձուսն առնուլ:

30

Եւ սոքաւք վարձս խոստանայ՝ ցուցանելով, թէ որքան պսակին կատարողք մեծամեծաց պատուիրանացն, այլ զղջացեալքն ուղղին, եւ անզեղքն յայսմ՝ դատին: Եւ իրաւացի կարծեմ զոյգ ամաց կենաց թռչնոցն իմանալով ձագուցն խափանման՝ զտուզանսն լինել ի դատաւորաց<sup>(292)</sup>:

289 Բ օրին., ԻԲ, 5  
290 Բ օրին., ԻԲ, 6—7  
291 Տճ՛ս Մատթ., ն, 25: Ղուկ., ԺԲ, 58

ԳՂՈՒՅ ՃԺԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿՈՐԱՇԷՆ ՏԱՆՑ

5 Եւ եթէ շինեսցես տուն նորաշէն, արասցես պսակ շորջ զտանեալքն եւ մի՛ սպանումն գործեսցես ի տան քում, զի մի՛ անկանիցի, որ անկա- նելոց իցէ, ի նմանէ<sup>292</sup>;

Կարծելի է, թէ եւ զայս պատուիրան նման այնմ, որ զվիրաւոր գտե- ցաւ՝ պատարագաւք հրամայէր քաւել եւ ոչ զատաստանաւ արիւն խընդ- րել<sup>293</sup>, ոչ տայ ի ձեռս գատաւորաց զպատահեալն: Եւ զի մի՛ այսմ կա- րաւ իցեն, զգուշանալ ուսուցանէ: Իսկ մեզ ապաշխարութիւն լիցի:

10

ԳՂՈՒՅ ՃԺԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԾԱՌԱՅԻՑ ՓԱՆՈՒՑԵԼՈՑ

Մի՛ մատնեսցես զծառայ տեառն իւրում, որ յաւելուցու ի քեզ ի տեառնէ իւրմէ: Ընդ քեզ բնակեսցէ եւ ընդ քեզ զհտեղեսցի յամենայն տեղոջ, ուր եւ հաճոյ իցէ նմա. եւ մի՛ նեղիցէք զնա<sup>294</sup>:

15

Ոչ միայն զայլազգեսց աւէ, այլ եւ զԵբրայեցւոց, որ թէ չանդգնեալ ոչ կամի յեւթն ամին թողուլ զնա, եւ յաղագս այնր փախիցէ, զոր աւէ՛ ընդ քեզ բնակիցէ եւ թէ այլուր հաճոյ իցէ՛ անդ, եւ թէ այլազգ ինչ՝ հաշտեցուցանել եւ ոչ վայրապար տալ ի ձեռս: Զայս եւ մեզ պահել իրաւացի գատաստան է:

20

ԳՂՈՒՅ ՃԻ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՄՏԵԼՈՑ Ի ՀՈՒՆՁՍ

Եւ եթէ մտանիցես ի հունձս ընկերի քոյ, քաղեսցես ձեռաւք քովք զհասկն եւ մանզաղ մի արկանիցես յոճ ընկերի քոյ<sup>295</sup>:

25

Զի զողորմութիւն ի կամաց առնողին կամի Աւրէնքն եւ ոչ ի կամաց կրողաց, եւ թէ չանդգնի՛ գատաստանաւ է իբր ի յափշտակողէ տոյժ առ- նուլ:

ԳՂՈՒՅ ՃԻԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՄՏՈՂԱՑ ՅԱՅԳԻ ԸՆԿԵՐԱՑ

30 Եթէ մտանիցես յայգի ընկերի քոյ, կերիցես խաղող մինչեւ յազենալ անձին քոյ, բայց յամանս մի ամանիցես<sup>296</sup>:

292 Բ օրին., ԻԲ, 8  
293 Տէ՛ս հողմ. ՃԹ, նաև Բ օրին., ԻԱ, 1—9  
294 Բ օրին., ԻԳ, 15—16  
295 Բ օրին., ԻԳ, 25  
296 Բ օրին., ԻԳ, 24

Չափս զնէ եւ իրաւունս ակամայ ողորմութեան ճշմարիտ արինա-  
դրութիւնս այգեգործաց, զի մի՛ տաղտկասցին, զի նոցուն կամաք իցէ  
ընդ ուտելոյն եւ բառնալն, իսկ ըստ կերողին<sup>(100)</sup> տոյժ լիցի:

ԳԼՈՒԽ ԾԻԲ

5

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԱՆԱՅՍ

Եթէ առնուցու ոք կին եւ մտանիցէ առ նա, եւ եղիցի, եթէ ոչ գտանի-  
ցէ շնորհս առաջի նորա, զի եգիտ ի նմա իրս անարգութեան, գրեսցէ նա  
զիր ապահարզանի եւ տացէ ի ձեռս նորա եւ արձակեսցէ զնա ի տանէ  
իւրմէ: Եւ գնացեալ լինիցի առն այլում, եւ եթէ ատիցէ զնա այրն վեր-  
ջին, գրեսցէ նմա զիր մեկնելոյ, եւ տացէ ի ձեռս նորա եւ արձակեսցէ  
զնա ի տանէ իւրմէ: Ապա թէ մեռանիցի վերջին այր նորա, որ առ զնա  
կնութեան, մի՛ կարասցէ այրն առաջին, որ արձակեաց զնա, դառնալ  
առնուլ զնա իւր կնութեան յետ պղծելոյ նորա, զի պիղծ է այն առաջի Տե-  
առն Աստուծոյ քոյ. եւ մի՛ պղծիցէք զերկիրն, զոր Տէր Աստուած տացէ ձեզ  
ի ժառանգութիւն<sup>297</sup>:

Զայս երբեմն Հրէայքն պատասխանի ետուն Տեառն՝ ասելով. Մովսէս  
հրամայեաց զիր գրել մեկնելոյ կանանց. եւ Տէր եցոյց զպատճառն, թէ  
յադագս խտտարտութեան ձերոյ թողացաւ<sup>298</sup>: Զի մի՛ միշտ վայրապար  
թողցեն, ասաց յԱրէնս՝ ոչ առնուլ զանարգեալն: Եւ զի ընդարձակ էր  
առնուլ այլ, եւ միսնզամայն երկուս ունել ի տան, եւ այն առանց բանի  
պոռնկութեան: Եւ զի ըստ մեզ այս ոչ է, եթէ պատահի զկնի թողոյն  
եւ մահուն զղջանալ, որ ատելութեամբ մեկնեցան՝ ապաշխարութեամբ  
միասցին, բայց եթէ պատահի այնպիսի լինել, որոց միաւորել չիցէ<sup>(101)</sup>  
արժան:

25

ԳԼՈՒԽ ԾԻԳ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՌՈՂԱՑ ՆՈՐՈԳ ԿԱՆԱՅՍ ՉՄՏԱՆԵԼ Ի  
ՊԱՏԵՐԱԶՄ

Եւ եթէ առնուցու ոք նորոգ կին, մի՛ մտցէ ի պատերազմ, եւ մի՛  
անկցին ի վերայ նորա եւ մի՛ ինչ իրք, այլ անպարտ լիցի, ի տան իւրում  
ուրախ արասցէ զկին իւր, զոր էառ<sup>299</sup>:

Մարդասէր է Աստուած, կամի, զի մի՛ անկեալ ի պատերազմին՝ սուզ  
լիցի տարածամ, յադագս որոյ անմեղադրելի են միանգամայն, կամ ամ-  
բարտաւանեալ՝ յանգզնի ճակատել եւ կամ երկբայի՝ զանգիտեալ: Զայս  
իրաւունս պահելի է զարավարաց առ զարս:

297 Բ օրին., ԻՊ, 1—4  
298 Տե՛ս Մատթ., ԺԹ, 8: Մարկ., Ժ, 5  
299 Բ օրին., ԻՊ, 5

## ԳՂՈՒՆ ԺԻՎ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳՐԱԻՈՂԱՑ ԶԵՐԿԱՆՍ

Մի՛ գրաւեսցես զվերին եւ զներքին երկանս, զի զոգիս գրաւէ այնպիսին<sup>300</sup>։

- 5 Ոչ հրամայէ բնաւ չգրաւել, այլ նոցուն ցուցանէ զիրաւունս, զի միովն թերեւս զղջասցի դարձուցանել զմիւսն, ուստի եւ ծանրացոյց զարինակ խղճին՝ զոգիս գրաւէ, ասէ, այնպիսին, զի նոցա սպասաւորութեամբ ոգի մնայ ի մարմին։ Զոր եւ յամենայնսն մեզ պահելի է՝ չգրաւել զյոյժ հարկաւորսն, եւ թէ յանդգնի՝ ի դատաւորաց վրէժ լիցի։

10

## ԳՂՈՒՆ ԺԻԵ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՊԱՐՏՈՒՅ ԵՒ ՆՈՐԻՆ ԳՐԱԻՈՒՅ

Եթէ պարտելով պարտիցի ընկեր քո զինչ եւ իցէ, մի՛ մտանիցես ի տուն նորա գրաւել ինչ գրաւ, այլ արտաքոյ կացցես, եւ այրն, առ որում պարտքն քո իցեն, հանցէ զգրաւն արտաքս։ Եւ թէ աղքատ իցէ այրն, մի՛ ազցի ընդ գրաւան իւրով։ Դարձուցանելով դարձուցես զգրաւ նորա ընդ մտանել արեւուն, եւ ննչեսցէ հանդերձին իւրով եւ արհնեսցէ զքեզ, եւ եղիցի քեզ յողորմածութիւն առաջի Տեառն Աստուծոյ քոյ<sup>301</sup>։

15

Զտայ թոյլ մտանել եւ առնուլ գրաւ, զի մի՛ բռնութիւն լիցի, այլ՝ կամաւ. հանեալն, դարձեալ, ոչ ի հարկաւորաց գոյիցն իցէ։ Ապա թէ յազագս աղքատութեան հարկաւորքն իցեն, հրամայէ չաթեցուցանել, եւ այսու ողորմած կամի զնոսա լինել ընդ իրաւանցն։ Զսոյն զայս եւ մեզ ընտրելի է ըստ դատաստանի։

20

## ԳՂՈՒՆ ԺԻԶ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՐՁԿԱՆԱՅ ԸՍՏ ԱՄԵՆԱՏԵՒ

- 25 Մի զլասցիս զվարձս տնանկին եւ զկարաւտելոյ յեղբարց քոց կամ յեկաց քաղաքաց քոց։ Նոյն արին հատուցես զվարձս նորա, եւ մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այնորիկ, զի տնանկ է եւ այն է յոյս նորա, եւ մի՛ բողոք հարկանիցէ զքէն առ Տէր, եւ լինիցի քեզ այն ի մեղս<sup>302</sup>։
- 30 Յայտ է, զի յազագս աղքատութեան եղեւ վարձկան եւ աւուրն պիտոյից։ Զի թէ ոչ հատուցէ յաւուր գործոյն, դատաստանաւ է աւելի, քան որ վարձն իցէ, հատուցանել։

300 Բ օրին., ԻԴ, 6

301 Բ օրին., ԻԴ, 10—13

302 Բ օրին., ԻԴ, 14—15

ԳԼՈՒԽ ԺԻԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՉ ՄԵՌԱՆԵԼ ՀԱՐՑ ԵՒ ՈՐԴԻՈՑ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՑ

Մի՛ մեռանիցին հարք ընդ որդւոց, եւ մի՛ որդիք մեռանիցին ընդ հարանց իրեանց. իւրաքանչիւր ոք ի մեզս իրում մեռցի<sup>303</sup>:

5 Եւ զայս ասէ յաղազս այնորիկ, որ թէ պատահի մահապարտ լինել ըստ աւրինացն՝, հարք թէ եւ կամեսցին զորդիս ապրեցուցանելոյ վասն մեռանիլ, մի՛ մեռցին, այլ մեռցի որդին մահապարտ, զի մի՛ թիրեացի դատաստանն: Նոյնպէս եւ մի՛ որդիք ընդ հարանց մեռցին: Նաեւ ոչ դատաւորք, թէ ոչ կարասցեն զորդի մահապարտ ըմբռնել, պարտին զհայր ի  
10 մահ դատապարտել: Եւ այս ի մեզ հաստատուն կացցէ:

ԳԼՈՒԽ ԺԻԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԽՈՏՈՐՈՂԱՅ ԶԻՐԱՒՈՒՆՍ

Մի՛ խոտորիցես զիրաւունս եկին եւ որբոյ եւ զայրոյ<sup>304</sup>,  
Դատաւորաց զնէ աւրէնս՝ ոչ վարիլ կաշառաւք եւ ալլաւք պատրա-  
15 նաւք, որպէս եցոյց յալլսն<sup>305</sup>. եւ եթէ զայս գործ արասցէ՝ անկցի ի պատուոյն:

ԳԼՈՒԽ ԺԻԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳՐԱՒՈՒ ԱՅՐԻՈՑ

Մի՛ գրաւեսցես զծործս այլուոյն<sup>306</sup>,  
20 Զի թէպէտ յայլս ներեաց սահմանաւ զգրաւն<sup>307</sup>, այլ աստ եցոյց հարկաւոր ոչ գրաւել զայրոյ, ուսուցանելով նոցա գինամակաւութիւնն յիւրմէ, որպէս յնգիպտոս ամենազանս, զի եւ արտաքոյ է դատաստանի զզուել զնոսա:

ԳԼՈՒԽ ԺԼ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՅ ԳԱՆԵՑ

Յատեան դատաստանի, ըստ որում եւ իցէ, յորժամ արժանի իցէ զանի, եթէ եւ ոչ ըստ Ապրինացն քառասուն<sup>308</sup>, սակայն անվնաս: Արժան է դատաւորաց վարիլ նովաւ ի խրատ ստամբակաց:

303 Բ օրին., ԻԴ, 16  
304 Բ օրին., ԻԴ, 17  
305 Տե՛ս նլք, ԻԳ, 8, Ղևտ., ԺԹ, 15. Բ օրին., Ա, 17 և ալլուր:  
306 Բ օրին., ԻԴ, 17  
307 Տե՛ս Բ օրին., ԻԴ, 10—13 և հոդվ. ձիծ  
308 Տե՛ս Բ օրին., ԻԵ, 2—3

ԳԼՈՒԽ ԺԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿՌՈՒՈՂԱՑ ՆԻ ԿՆՈՋՆ ԹԱՓՈՂԻ

5 Եւ եթէ կոուիցին սրբ ընդ միմեանս, եւ թափելոյ աղազաւ կին միոյն բուն հարկանիցէ զերկատրեացն յաղթողի առն, ըստ Աւրինացն է հատանել զձեռն<sup>309</sup>, ալ մեզ՝ զին ձեռինն, որպէս եւ ցուցեալ է իւրաքանչիւր զգայութեանց<sup>310</sup>:

ԳԼՈՒԽ ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԴԻԱԿՈՂՈՊՏԻՅ

10 Զդիակողոպուտ եթէ ըմբռնեսցի եւ ապա կամաւք խոստովանեալ՝ ոչ մեռցի<sup>(102)</sup>, իսկ եթէ որ ոչ սպանցէ, քննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչեւ ի մահ որոշեսցի, քանզի տեղի ապաշխարութեան նորա չիք<sup>311</sup>:

Յայտ է յասացելոյս, թէ անզղջիցն մահ որոշեաց, ալ այնպիսեացն արեան լիցի զին ըստ ցուցելոյ արինակին<sup>312</sup>, դարձեալ՝ եւ ապաշխարութիւն պատշաճիւ Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ իրաւացի:

15

ԳԼՈՒԽ ԺԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

20 Եթէ որ անմեղ գնացէ ուղևոր եւ ոչ զոր ունէր յառաջ թշնամի պատահեալ, ալ թէ որ ամենեցուն զողն եւ աւազակն սմա դիպեսցի, եւ սպանցէ սա զնա, մի՛ իբրև սպանող դատեսցի սուրբ եկեղեցի: Բայց վասն ահադին սեղանոյն սրբեսցէ զանձն աւուրս սակաւ՝ զմտաւ ածեալ, թէ ընդէր իսկ եւ ակամայք դիպեցան, թէպէտ եւ յԱստուծոյ իցէ մատնութիւնն<sup>313</sup>:

25 Կարծեցուցանէ եւ յաղագս քահանայից վասն ասելոյն՝ ահազին սեղանոյն, ալ հասարակ ամենեցուն է: Բայց այս դատաստան եկեղեցւոյ դատաւորաց եւ ոչ արտաքնոց է դատել, զիւրաքանչիւրոցն աւզուտ ըստ իրին:

ԳԼՈՒԽ ԺԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

30 Զհիմունս եկեղեցւոյ եպիսկոպոսն միայն իշխեսցէ ծրագրել ուղղափառութեամբ, կամ քորեպիսկոպոս, կամ պերետուտ՝ հրամանաւ եպիս-

309 Տե՛ս Բ օրին., ԻԵ, 11—12

310 Տե՛ս հոդվ. ԿԳ

311 Տե՛ս Կանոնք Հարանց հետևողաց ԺԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108

312 Տե՛ս հոդվ. Բ

313 Կանոնք Հարանց հետևողաց ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108

կոպոսին: Ապա թէ ատանց եպիսկոպոսին կամ քորեպիսկոպոսին ոք յանդգնեսցի՝ քակել զայն հիմունս հրամայեցաք. ապա թէ թողցի՝ երկրորդումն սահմանք կարգեսցին, եւ այնպէս կարգ եկեղեցւոյ լինին անստգտանելի<sup>314</sup>:

5 Գիտելի է, զի քորեպիսկոպոս երկու են, մի՝ ձեռնադրեալ եւ մի՝ ոչ. եւ պերետուտ է<sup>(103)</sup>, որ այժմ է բուտ<sup>(103)</sup>: Եւ թէ ի պատահումն հայիցի եպիսկոպոսն եւ ի գեղչն եւ ոչ քակիցէ, երկրորդել հրամայէ զկարգն: Եւ այդ այդոցիկ դատաստան է հաստատուն:

ԳՆՈՒՄ ԱՆ

10 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Ջեպիսկոպոս արժան է, որք յաշխարհին եւ ի վիճակին եպիսկոպոսք իցեն, նոքիմբք նստուցանել յաթոտ. ապա թէ վասն փութոյ ինչ եւ վասն հեռաւորութեան ընկերացն՝ երեք եպիսկոպոսք, կամաւք այնոցիկ, որք հեռի են, թղթովք վկայութեան նստուցեն: Բայց զպատիւ եւ զշնորհս  
15 զլիաւորին արժան է տալ, այսինքն է կաթողիկոսին. կամ եղեւ մեծ ժողովոյն<sup>315</sup>:

Կարգաւորապէս զձեռնադրութիւն հրամայէ լինել. նախ ընտրել բազմաց, եւ հաւանութեամբ ամենեցուն ձեռանդրէ կաթողիկոսն եւ կամ հրամանաւ նորա՝ երկուքն եւ երեքն: Այլ անուն կաթողիկոսի աստ  
20 ցուցաւ պիսաւոր լինել այլոցն, բայց է այսուհետեւ մամոնայ:

ԳՆՈՒՄ ԱՂԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ՈՐՔ Ի ԿԱՐԳԷ ԵՒ ՅԱՂԱԹԻՑ ՄԵՐԺԵԱՂ ԻՅՆՆ

Վասն այնոցիկ, որք ի կարգէ եւ յաղաւթից մերժեալ իցեն, կամ ժողովրդական ոք եւ կամ ի կարգէ սլաշտանէիցն, եթէ երթեալ ուրեք զինքն  
25 ի կարգ արկցէ, մի՛ ընկալցին: Եւ որ այլոյ վարդապետի բանադրեալ իցէ եւ կամ մերժեալ, այլ վարդապետ մի՛ մերձեցուցէ եւ կամ ի կարգ արկցէ, բայց թէ հաւաստեաւ քննութիւն արասցեն, բանիւ վարդապետութեան բժշկել եւ անդէն հնազանդել ընդ բուն վարդապետան: Ապա թէ վասն մեղաց եւ շար գործոց մերժեալ իցէ յեկեղեցւոյ, զեղաւք ապաշխարութեան բժշկեսցեն<sup>316</sup>:

Եւ այս բարեկարգութիւն աստուածային դատաստանան է. ոչ զոք ատանց գիտութեան ընդունել, եւ վարդապետաց շքամահել զմիմեանս եւ զանկարգսն<sup>(104)</sup> անդրէն դարձի իմաստութեամբ բժշկել:

<sup>314</sup> Կանոնք Հարանց հետևողաց ԻԵՄ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 111—112

<sup>315</sup> Կանոնք Նիկիական. Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 119

<sup>316</sup> Կանոնք Նիկիական Ե, բերված է մի մասը որոշ կրճատումով, տե՛ս Կանոնագիրք Հայոց,

ԳԼՈՒԽ ԾԼԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՁՆՌԵԱԿՐՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՅ

Նախնեացն սովորութիւն կացցէ յնգիպտոս, զի Աղեքսանդրի կալիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի եւ Հռոմայ եպիսկոպոսին այս սովորութիւն է, սոյնպէս եւ Անտիոքացւոց եւ յայլ իշխանութիւնս պատիւ մեծութեանն պահեսցի եկեղեցեաց: Եւ ամենեցուն նմանապէս այն յայտ լիցի, զի թէ ոչ կամաւք կաթողիկոսի լիցի եպիսկոպոս, զայնպիսին մեծ ժողովն որոշեաց, զի մի՛ եւս իցէ եպիսկոպոս: Ապա թէ միաբան ամենեցուն ընտրելով ճշմարտութեամբ ըստ կարգին եկեղեցւոյ արժանի առնիցեն, եւ թէ երկու ուրեք կամ երեք ըստ անձին անզգամութեան կամ հակառակութեան ընդդէմ լինիցին, բազմացն ընտրութիւն հաստատեսցի<sup>317</sup>:

Վասն զի սովորութիւն կալու եւ կարգ նախնեացն, զի երուսաղեմի եպիսկոպոսն պատուեսցի, ընկալցի պատիւ, զի մայրաքաղաքացն ըստ արժանի պատիւն իւր պահեսցի<sup>318</sup>:

Ձոր յառաջ իշատակեաց զանուն կաթողիկոսին<sup>319</sup>, աստ ցուցանէ, զի ըստ նախնեացն սովորութեանց եւ ինքեանց կացցէ: Եւ ըստ շորից աւետարանչացն զայդոսիկ նշնակէ, եւ յայլ իշխանութիւնս նմանապէս, զի թէ իցեն առաքելական աթոռ եւ թէ լիցեն՝ հրամայէ կաթողիկոս լինել: Եւ թէ աթոռն Յովհաննու լեւիտոսէ ի Բիւզանդիա փոխեցաւ՝ պատուոյ աղապաւ, այլ ոչ կաթողիկոսութեան պատճառաւ: Եւ որոշէ, որք կամաւք կաթողիկոսին շնորհադրին, յորոց յայտ է, զի հրամանաւ նորա ձեռնադրին: Թէ պատահի ոչ յիւրմէ, այլ ի բազմացն ընտրութեանէն, ամենայն ուրեք ճշմարիտ է, եւ ի ձեռնադրել կաթողիկոս:

25 ԳԼՈՒԽ ԾԼԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԵՒ ՔԱՆԱՆԱՅԻՑ, ՈՐ ԶԱՅԼՈՑ ՎԻՃԱԿ ԵՒ ԶԺՈՂՈՎՈՒՐԴ ՅԱՓՇՏԱԿԵՆ

Վասն բազում յուզիցն եւ մեծամեծ ամբոխիցն, որ լինին ի կողմանս կողմանս, որք եպիսկոպոսք լինին եւ զայլոյ վիճակ յափշտակել ջանան, եւ որք երիցունք լինին եւ այլոյ քաղաքի եւ ժողովրդեան ցանկան յափշտակել, — կամ եղև մեծ ժողովոյս, զի զայնպիսիսն դադարեցուցեն յիւրաքանչիւր վիճակի: Ապա թէ բռնութեամբ կամ կաշառաւք զգործն զայն յանդգնեսցի գործել եւ ընդդէմ եկեսցէ առաքելական կանոնին, կամ եղև մեծ ժողովոյս, զի զայնպիսին ի բաց ընկեսցեն յաթոռոյն եւ ի կարգէ քահանայութեան եւ բնաւ իսկ ի բաց մերժեսցեն ի պաշտամանէն, եւ այնուհետեւ եղիցի քեզ իբրեւ զմի յանզգամաց, զի<sup>320</sup> որում տուեալն իցէ՝

317 Կանոնք Նիկիական Ձ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 120—121  
 318 Կանոնք Նիկիական է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 121  
 319 Տե՛ս հոդվ. ձև  
 320 Մատթ., ԺԳ, 12. Ին, 19. Մարկ., Կ, 25. Ղուկ., Ը, 18. ԺԹ, 26

տացի եւ յաւելցի, եւ որ ոչն զիտէ ունել՝ եւ զոր ունին բարձցի ի նմանէ<sup>321</sup>:  
Ոչինչ անյայտ է այս հոգեւոր—կանոնական դատաստան, եւ բազմաց ըստ այսմ մերժելի է այժմ եպիսկոպոսաց եւ քահանայից:

ԳՆՈՒՄ ԾԼԹ

5 ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՆԿԱՐԳԱՊԷՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Վասն այնոցիկ, որք ի կարգին իցեն եւ ի կանոնին եւ յուխտի եկեղեցոյ, եւ յագահութիւն, եւ ի զաւշաքաղութիւն անկանիցին, զարծաթ իւր ի վարձու տացէ եւ տոկոսեալք պահանջիցէ, եւ մոռանայցէ զբարբառ աստուածեղէն Գրոց, որ ասէ, եթէ՝ զարծաթ իւր ի վարձու նա ոչ տացէ<sup>322</sup>, եւ մանաւանդ, զայթ ի գայթ՝ ի պաշտանն եւ թուլասիրտ՝ յաղաւթսն, մեղկ եւ ծոյլ՝ ի հաւատս, այնպիսումն ասէ Գիր. վայ որոց թողեալ իցէ զուսումն մանկութեան եւ մոռացեալ զուխտն աստուածեղէն<sup>323</sup>, Կամ եղև մեծ ժողովոյս զայնպիսին մերժել ի կարգէն եւ կամ բարեսէր կամալք յուղղութիւն ածել<sup>324</sup>:  
15 Լուիցեն քահանայք զվճիռ կանոնական դատաստանիս եւ զարհուրեւցին, ապա թէ ոչ՝ վերջին եւ անաշառ դատաստանան զատելոց են:

ԳՆՈՒՄ ԾԽ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ՈՐՔ ԶԵԱԻՍԵԱԼ ԱՂՋԿՈՒՆՍ ՅԱՓՇՏԱԿԵՆ

Որք միանգամ խաւսեալ աղջկունք են եւ զուգեալ գտանիցին, եւ յետ այսորիկ այլք յաիշտակեսցեն, կամ եղև, զի անզրէն տացեն, որում խաւսեալն էր. թէ եւ ի բռնութիւն ասպատանի՝ մի թողցեն<sup>325</sup>:  
Մի զզուգեալն եւ զխաւսեալն համարի եւ անզրէն զարձուցանել, թէ եւ պսակիցի ընդ յաիշտակողին: Եւ այդ այդոցիկ ճշմարտիւ է դատաստան:

ԳՆՈՒՄ ԾԽԱ

25 ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՄՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՈՒՆՏԱԿԱՆԱՑ

Որք յուխտի անդ իցեն՝ երիցունք կամ սարկաւազունք կամ այլ ոք ի պաշտանէիցն, եւ հեռի իցեն ի մսոյ, եւ միտք իրեանց յաւժարիցեն ի ճաշակել, համարձակ կերիցեն եւ մի՛ զաղտաբար, ապա թէ կամեսցին՝ պահեսցեն. ընդունին կանոնք զերկոսին: Ապա թէ ոք պիղծ համարեսցի

321 Կանոնք նիկիական ժն, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 127—128  
322 Տե՛ս Սաղմոս ԺԳ, 5: Եզեկ., ԺԸ, 8  
323 Առակք, Բ, 17  
324 Կանոնք նիկիական ժՁ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 128  
325 Կանոնք Անկիւրեայ ժԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 162—163

կամ զբանջար ևւ զհաց, սր մտտ իցէ, ոչ ընդունին զնա կարգ եկեղեցւոյ<sup>326</sup>:

Ուխտական՝ յայտ է, զի դամոսնաշեալս ևւ վիուսանս ևւ որբ միանդամ յեկեղեցի ևւն՝ անուանէ: Ասլա ուրեմն վայրապար է ազգացն Յունաց ևւ մեր զմիմեանս բամբասելն, զի զերկոսին, ասէ, ընդունիլ կանոնաց: Աւրգ, բարիոք շուտելն, քան ուտելն է, թէպէտ ևւ ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում պահողք. այլ արտաքոյ դառաստանի է զմիմեանս դատելն:

ԳՆՈՒՄ ՇՈՒՔ

10 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԳԻՑ

Վասն ընչից, որ անուանեալ կոչի եկեղեցւոյ, զինչ ևւ իցէ՝ եթէ՛ գեղ ևւ եթէ՛ այլ ինչ, մինչչև եպիսկոպոսին լեալ էր ի տեղւոջն, ևւ երիցունքն վաճառեցին, իշխան լիցի անդրէն ի նոյն պահանջել. բայց եպիսկոպոսըն կշռեսցէ զիրան ևւ զարժանն, եթէ մարթէ առնուլ զզինն կամ 15 դարձուցանել<sup>327</sup>:

Կանոնականս հրաման անվաճառելի լինել զեկեղեցւոյսն կամի ևւ իշխան՝ զեպիսկոպոսն ևւ ոչ զքահանայսն. եթէ առնուլ կամ դարձուցանել՝ եպիսկոպոսն տեսցէ: Այսպիսի է. զի թէ որ զնեացն ամաւք զնոյն շափ կերեալ իցէ՝ զզինն ոչ դարձուցանել<sup>(105)</sup>, ապա թէ չիցէ ինչ շահեալ՝ 20 դարձուցանել: Ըստ այդմ արինակի զկշռելն ասէ: Ի դէպ է ևւ զայս զիտել, զի այլազզ ոչ վաճառի եկեղեցւոյքն, բայց եթէ վաճառեսցէ զանպատշաճան ևւ այլ անկատր զնեացէ նովին զնովն<sup>(106)</sup>: Եւ այդ ընդունելի դատաստան է յեկեղեցիս:

ԳՆՈՒՄ ՇՈՒԳ

25 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ՈՐ ՍՏԷ ԽՈՍԱՅԵԱՆ ԿՈՒՍՈՒԹԵԱՆ

Վասն այնոցիկ, որ ի շափ հասեալ իցեն ևւ կուսութիւն խոստանայցեն պահել ևւ ստիցեն խոստամանն՝ ի շնութիւն անկան, կուսան այնուհետև ոչ կարէ լինել, այլ եղիցի նա որպէս զայն, որոյ Երկուս կանայս արարեալ իցէ, ևւ զասհման զնոցին կալցի ևւ զապաշխարութիւն. երկուս ամս առ դրանն ընդ ձեռամբ ևւ ամ մի մտեալ յեկեղեցին ընդ ապաշխարողսն ելցէ: Եւ զքերմութիւն ապաշխարութեանն տեսցեն, ևւ հազորդեսցի արինացն, բայց յաւժումն քահանայութեան մի՛ մերձեսցին<sup>328</sup>:

Ձայս յայտնագոյն ի նիկիական յերեսուն զլիին ասէ, այլ աստ՝ որ ամուսնանայ ևւ շնայ: Յայտ է, զի զշնութեանն ապաշխարէ, այլ ամուս-

326 Կանոնք Անկիրեայ ժն, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 163—164

327 Կանոնք Անկիրեայ ժՋ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 164

328 Կանոնք Անկիրեայ ի, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 166—167. քերված է վերջից որոշ կրճատումով:

նութեանն՝ երկակացն է, ուստի ոչ կարէ լինել քահանայ. եւ թէ երկըրոր  
ամուսնանայ՝ իբր զերրորդ համարեալ է: Բայց տեսցեն եւ զհասակ  
խոստովանողին եւ այնպէս զատեսցեն: Եւ այդ ըստ այդմ լիցի: Զայս  
Լւս զտցես ի Լուսաւորչին կանոնսն յերեսուն գլխին, եւ յայլսն Լւս:

5

ԳՆՈՒՄ ՃԽԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶՅՂԻ ԿԱՆԱՅՍ ՄԿՐՏԵԼՈՅ

Վասն յդի կանանց. զի արժան է մկրտել՝ յորժամ եւ կամին, զի ոչ  
յայսպիսի իրս հաւասարեալ է ծնողն ընդ ծննդեանն, այլ արժան է  
ամենայնիւ իւրովք կամաւք զյաւժարութիւնն ցուցանել առ ի խոստո-  
վանութիւն ընդունելութեան մկրտութեան<sup>329</sup>:

10

Եւ զայս յաղագս երկիւղի մահու, որ յերկունսն է, թողացուցանէ, եւ  
յաղագս այնորիկ անխեղձ են մկրտեալն եւ մկրտողն: Եւ զի մի՛ կարծիցի  
մանուկն ընդ նմին մկրտիլ, յաւելու զպատճառն: Հաւանելի է այս իրա-  
ւունք յեկեղեցի:

15

ԳՆՈՒՄ ՃԽԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ՊՈՌՆԻԿ

Իսկ եթէ ոք արձակեսցէ զկին իւր վասն բանի պոռնկութեան եւ կամ  
վասն այլ շարագործութեան, որ ոչ միայն այրն, այլ եւ աշխարհ վկայէ  
չար գործոց նորա, արձակեսցէ. ընդունի զնա կանոնս: Բայց մի ամ<sup>(107)</sup>  
20 ապաշխարեսցէ, ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի արի-  
նացն եւ եթէ կամեսցի՝ կին արասցէ. եւ կինն այլ առն չիշխէ լինել,  
մինչդեռ կենդանի է այրն նորա<sup>330</sup>:

20

Եւ զայս թէպէտ զրեալ է մեր զղատաստան<sup>331</sup> երկրորդեցաք, զի ոչ  
վասն պոռնկութեան, այլ եւ յաղագս այլ շար գործոց հրամայէ թողուլ՝  
25 կախարդութեան, ղեղատուութեան եւ այլոց այսպիսեաց: Եւ զի դարձեալ  
միմեանց կամաւք ամուսնանալ, որպէս լուեալ էաք, ասացաք: Եւ զի մի՛  
ընդդէմ կարծիցի կանոնաց, որպէս կամեսցին, այնպէս ընկալցին:

25

ԳՆՈՒՄ ՃԽԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՄԲ

Իսկ եթէ ո՛չ վասն պոռնկութեան եւ ո՛չ վասն շար գործոց եթող զկին  
իւր, այլ վասն վատաբարութեան, որպէս թէ այլում ակն հոգեալ իցէ,

30

<sup>329</sup> Կանոնք նէոկեսարեայ Զ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 181

<sup>330</sup> Կանոնք նէոկեսարեայ ԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 183

<sup>331</sup> Տե՛ս հոգվ. Ժ

5 պայսպիսիս ոչ ընդունին կանոնք՝ մինչև ցղառնալ նորա յառաջին կինն.  
 և ընդ յանցանացն ելին ամ ապաշխարութիւն կալցէ, հինգ ամ՝ արտա-  
 քոյ եւ երկու՝ ի ներքս: Ապա թէ ոչ դարձցի առ բուն կին իւր, զկեանս  
 10 տան իւրոյ քածանեսցէ. զկէսն կնոջ իւրում տացէ եւ տուգանս՝ յեկեղե-  
 ցին, զի զսլակն արհնութեան, զոր ընկալաւ վասն ամուսնոյն իւրոյ,  
 անարգեաց: Եւ ինքն զաւուրս կենաց իւրոց պոռնիկ կոչեսցի եւ մի՛ մտցէ  
 յեկեղեցի Աստուծոյ, այլ ի դրունս հաւասարեսցի աղաւթից, ի ձեռն  
 ողորմութեան տրաւք տնանկաց, ջերմեռանդն արտասուաւք զյետին  
 15 թշաղկն առցէ: Ապա թէ կինն մեռանիցի, եւ այրն կին շառնիցէ եւ  
 10 յապաշխարութիւն եկեսցէ, հինգ ամ ի դրունս կացցէ եւ երեք ամ ընդ  
 ձեռամբ հաւասարեսցի աղաւթիցն, ի ձեռն ողորմութեան քաւեալ՝ հաղոր-  
 դեսցի<sup>332</sup>:

15 Նաեւ զայս եւս եղաք յառաջ եղեալս մեր դատաստան<sup>333</sup>, որպէս որ  
 նախ քան զայս ի գլխի ցուցաք, եթէ կամաւք միմեանց ամուսնանալ  
 ասացաք: Եւ զի ըստ կանոնաց ոչ կարծեցեալ, զոր եղաք ի լրոյ, զկանո-  
 նականս առցեն քան եւ այնպէս անկարծիս դատեսցեն:

20 Միանգամայն ի գիրս դատաստանի, որ ինչ ընդդէմ Գրոց կարծի  
 հրամանի, զԳրոցն առնելով՝ անբամբաս զմեզ թողցեն, զի ոչ հակառակ  
 աստուածական եմ հրամանաց, այլ ի լրոյ զճշմարտիցն եղաք ներմամբ  
 20 զբան: Սակայն ի կամս ապաստան է ընդունողաց եւ կամ ոչ, Եւ յաղագս  
 այսորիկ սիրով ընդ մեզ լիչիք եւ մի՛ վայրապար զմերս համարեսչիք  
 զսակաւս վաստակ:

ԳԼՈՒԽ ԺՅԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՍԱՐԿԱԻԱԳԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԱՆԱՅՍ  
ՇՆԱՅՅԱԼՍ

25

25 Վասն որ պատրաստեալն են ի քահանայութիւն եւ ունիցին կանայս,  
 թէ մինչև ի քահանայութիւն մերձեալ իցէ, եւ կինն շնայցէ, արձակիցէ  
 զկինն, եւ առն շիշխէ լինել, եւ այրն ի քահանայութիւն մատիցէ: Ապա  
 30 թէ կամք իցեն նմա կեալ ընդ կնոջն, քահանայ ոչ կարէ լինել, զի ոչ՝  
 ընդունի զնա եկեղեցի եւ ոչ՝ կանոնք<sup>334</sup>:

Իշխան առնէ յերկաքանչիւրսն. եւ աշխարհական կանանց ամուսնա-  
 նալ զկնի մահուան առն կամի, իսկ դոցա՝ ոչ: Բայց տեսցի ընդունելի  
 դատաստանաւ:

ԳԼՈՒԽ ԺԽԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՊՂՇՈՒԹԵԱՆ

35

35 Քահանայ թէ ի պղծութեան գտանիցի, եւ իրքն յայտնեսցին, եւ  
 խոստովան ոչ լինիցի, եւ յայտնապէս յանդիմանել ոք ոչ կարէ, ի կամս

<sup>332</sup> Կանոնք նէոկեսարեայ ԺԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 183—184  
<sup>333</sup> Տե՛ս Հողվ. Թ, ԺԳ, ՃԻԲ  
<sup>334</sup> Կանոնք նէոկեսարեայ ԺԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 184—185

նորա թողցեն լինել և չլինել և եպիսկոպոսին<sup>335</sup> նոյն կանոն և սարկա-  
ւազաց է<sup>336</sup>։

Կրատէ կկեղեցականաց և ժողովրդականաց չինքեանս զայնպիսիսն  
15 թաղաւ և յեպիսկոպոսն, զի նսքա ևն դատաւորք քահանայից և սարկա-  
ւազաց։

Գ Լ Ո Ւ Յ Ծ Խ Թ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՑ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՑ

Կամ եղև մեծ ամենայն ժողովոյն, թէ ցերեանամեանս մի՛ ոք  
աւծցի ի քահանայութիւն, զի փորձեսցի և ընարեսցի, պիղծն ի սրբոյն  
10 ի բաց պարզեսցի, քանզի և Տէրն մեր հրեանամեայ էր, յորժամ առ  
զաւծումն մկրտութեան և սկսաւ զնոյն արիւնակ ուսուցանել ամենեցուն՝  
ուխարեայ մկրտել, իսկ հրեանամեայ աւծանել ի քահանայութիւն<sup>337</sup>։

Եւ թէ ոչ ըստ այսմ սահմանի, զոր զպատկառելին եզին արիւնակ,  
գոնեայ ըստ կանոնի սրբոցն արասցեն հայրապետացն Գրիգորիսի և  
15 Ներսիսի<sup>(109)</sup> վերջնոց, զի զայս սահման լուծանել արտաքոյ համարելի  
է գրոց դատաստանի։

Գ Լ Ո Ւ Յ Ծ Մ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ, ՈՐՔ Ի ՀԱՐԿԷ Ի ՄԿԻՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ  
ՅԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՅՑԵՆ ՂՍՏ ՈՐՈՒՄ ԱՐԻՆՅԱԿԻ ԵՒ ԻՑԷ

Վասն որք ի նեղութիւն անկանիցին կամ ի խիստ հիւանդութիւն, և  
կամ ըմբռնեսցի ի բունաւորաց և վասն նեղութեան մկրտեսցի, կամ յա-  
ռաչ էր յանուն քրիստոնեայ և զորժով՝ վատթար և ապա վասն նեղու-  
թեանն ի հաւատս կացցէ, զայնպիսին ընդունի եկեղեցի, այլ ոչ կատարե-  
լապէս, զի աւամայութեամբ են հաւատքն։ Զայսպիսոյս ասէ Գիր<sup>338</sup>  
25 միթէ ի հո՞ղ խոստովան առնիցին առ քեզ<sup>339</sup>։

Եւ այս մարդասիրութիւն ի Տեառնէ ցուցեալ է առակաւ<sup>340</sup>, բայց ըստ  
դատաստանի է անկատարն։

Գ Լ Ո Ւ Յ Ծ Մ Ա

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԳԱՒԱՌԻ ԵՐԻՑԱՆՑ

Գաւառի հրիցունք ի քաղաքի կկեղեցուոջ, իբրև անդ իցէ եպիսկո-  
պոս կամ հրէց քաղաքին, չէ պատշաճ նոցա պատարագ մատուցանել կամ  
հաց յագայի տալ և ոչ բաժանել յեկեղեցուոջ։ Ապա թէ նոքա շատին<sup>(109)</sup>

335 Կանոնք նէոկեսարեայ ժԳ, կրճատումով. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 185  
336 Կանոնք նէոկեսարեայ ժԵ, միայն այդ նախադասութիւնը. Կանոնագիրք Հայոց, հ. Ա,  
էջ 185  
337 Կանոնք նէոկեսարեայ ժԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 186  
338 Սաղմոս, ԻԹ, 10  
339 Կանոնք նէոկեսարեայ ժԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 186  
340 Տե՛ս Ղուկ., ժԵ, 11—32

իցեն, և կոչիցի՝ յպատպի տացէ, այլ շահն զինչ և իցէ ի նմին յնկեղեց-  
ւոցն պահեսցի<sup>341</sup> :

2 Ձի թէ արք քաղաքի պատիւ ունին, ո՛րչափ ևս առտուել՝ եպիսկոպոս  
և քահանայ: Այլ թէ նոքա այլ ուրեք բաւականեալք իցեն և կամ անդ են  
5 և անպարապք, և կոչին, հրամանաւ նոցա պրասցեն: Եւ իրաւամբք է  
շահն յնկեղեցւոցն լինել:

**ԳԼՈՒԽ ԾԾԲ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ**

Այլ քորեպիսկոպոսք են ըստ արինակի և ըստ կարգի եւթանաս-  
10 նիցն, իբրև յծակիցք և գործակիցք վասն փրկութեան<sup>(110)</sup>, որ յազբատս  
կատարելոց է<sup>342</sup>: Գաւառի տեսուչ թարգմանեալ է քորեպիսկոպոսդ և  
ձեռնադրող է խոնարհազոյն աշտիճանաց, որ ի վայր է քահանայութեան:  
Հակառակ է գրոց դատաստանի եպիսկոպոսաց զարս աշխարհականս  
քորեպիսկոպոս առնել կամ զտգէտ քահանայ, կոփիչ ազբատաց և ոչ  
15 տեսուչ, զի և եպիսկոպոսդ տեսուչ թարգմանի և նոքա՝ գործակիցք  
նոցա:

**ԳԼՈՒԽ ԾԾԳ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՊՏՂՈՅ ԵԿԵՂԵՑՒՈՅ**

Որք զպտուղ եկեղեցւոյն կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ  
20 կամ տալ, և ոչ կամաւք եպիսկոպոսին կամ որ ձեռնադրեաց զայնպի-  
սին յայնպիսի իրս, և կամաւք նորա շառնիցէ: և շգործէ, նզովեալ  
լիցի<sup>343</sup>:

Լուիցեն զլացողք զեկեղեցիս կամ յինքեանս և կամ յայլս տալ և  
զարհուրեացին: Եւ եթէ այսքանեաց նզովք է, ո՛րչափ միանգամ յափըշ-  
25 տակողաց զեկեղեցի միմեանց: Եւ աստ դատաստանաւ է նզովս, զի որ  
զեկեղեցւոյն ատարացոյց զպտուղ՝ աւտարանալ և ինքն յնկեղեցւոյ:

**ԳԼՈՒԽ ԾԾԴ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՐ ԹՈՂՈՒՆ ԶՈՐԴԻՍ**

Ոչք հարկանեն թողուն զորդիս իրեանց և ոչ սնուցանեն և որչափ  
30 ձեռնհաս իցեն՝ ոչ փոթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին և սննդեանն  
մինչև ի կատարմանն հասակի, այլ որպէս թէ ի պատճառս պահոց և

341 Կանոնք Նեոկեսարեայ ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 187  
342 Կանոնք Նեոկեսարեայ ԺԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 187  
343 Կանոնք Գանգրայ է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 194

վանականութեան արհամարհիցէ և անփոյթ առնիցէ, նզովեալ լիցի<sup>344</sup>։  
 Եւ զայս սահման կանոնի թէպէտ և յաղազս աղանդոյն<sup>(111)</sup> կարծեմք  
 սաստիւ լինել, որք զանձինս սուրբս քարոզէին և բազում նորաձեւութիւնս  
 առնէին, որպէս վասն պողոյ եկեղեցւոյ և այլոց, այլ սակայն աստուածային  
 Գրոց հրաման է ըստ կամաց Աստուծոյ սնուցանել զորդիս<sup>345</sup>, զի  
 մի՛ հեռասցին յԱստուծոյ արինացն։ Եւ թէպէտ ինքեանք այնոքիւք  
 կարծին ծերձաւոր լինել Աստուծոյ, զատաստանաւ է որոշիլն, զի պատ-  
 ճառք եղեն ծննդոցն հեռանալ ի Տեառնէ։

ԳՂՈՒՆ ԾԾԵ

10 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՈՐԴԻՈՅ, ՈՐ ԹՈՂՈՒՆ ԶՆՆՈՂՍՆ

Եթէ ուրուք որդի, որոյ ծնողն առաւել հաւատացեալ իցէ և առաքինի  
 ի կարգս Աստուծոյ, հեռանայցէ ի պատճառս աստուածպաշտութեան և  
 արհամարհիցէ և զարժան և զիրաւ պատիւ ծնողացն շահատուցանիցէ,  
 նզովեալ լիցի<sup>346</sup>։

15 Եւ այսմ զարձեալ յոյժ պատուէր է ի Գրոց<sup>347</sup>, թէպէտ և յաղազս  
 ասացեալ աղանդոյն<sup>(111)</sup> առաւել զգուշացուցանէ, որք ի պատճառս  
 աստուածպաշտութեան արհամարհել զծնողան տային, յաղազս այնո-  
 րիկ գառաւելութիւնն եղ զհաւատոյ ծնողին։ Զի և Տէր զխափանիչ  
 աստուածպաշտութեան զծնողան հրամայեաց թողուլ<sup>348</sup>, այլ նորա՛ և զը-  
 20 լաւան։ Յաղազս այնորիկ զնզովան եղին իրաւացի։

ԳՂՈՒՆ ԾԾԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԿԵՐՈՂԱՅ ԶՂԻՆԳՇԱՐԱԹՆ ՄԵԾ

Եթէ ոք զքառասունն պահիցէ սուրբս և զատկի հինգշաբաթն արն  
 քան զհաղորդել արինացն և բաժակին սրբոյ աւելի ինչ համարձակիցի  
 25 ուտել, զպահոցն, զոր պահեաց, ընդունայն է և ի մեծ ժողովոյն նզովե-  
 ալ<sup>349</sup>։

Զայս և ի նիկիայ ժողովն եղին՝ յայնմ արուք սակաւ շորակեր  
 լինել։ Լուիցեն Յոյնք և Վիրք զղատաստան կերողացն զարն մեծ, զի  
 ո՛չ Գանգրայն ժողովեալքն և ո՛չ նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազ-  
 30 զաց, մանաւանդ Յունաց։ Եւ այս դատաստան անլուծանելի է ի վերայ նո-  
 ցա, զի ոչ յարժանաւոր ժողովոյ լուծաւ, այլ ի խոտեալ և յանարգեալ ժո-  
 ղովոյն Քաղկեդոնի։

344 Կանոնք Գանգրայ ժծ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 196  
 345 Տե՛ս Եփես., Զ, 4: Կողոս, Գ, 21  
 346 Կանոնք Գանգրայ ժԶ, կրճատումով. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 196—197  
 347 Տե՛ս Ելք, Ի, 12: Բ օրին., Ե, 16: Մատթ., ժծ, 4: Մարկ., Է, 10: Եփես., Զ, 1—2 և այլուր  
 348 Տե՛ս Մատթ., ժԹ, 29, և այլուր  
 349 Կանոնք Գանգրայ ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 198

## ԳԼՈՒԽ ԺԵԷ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՀՆԱԶԱՆԴԻԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

Որ յիրաքանչիւր իշխանութեան եպիսկոպոսք իցեն, իմասցին, զի մայրաքաղաքաց եպիսկոպոսն թիկունք է նոցա եւ հոգաբարձու, եւ ամենայն ոք, զինչ եւ պատասխանի կամի առնել, առ նա ընթանայ՝ եթէ մուրհակ արքունի եւ իշխանաց վասն իրաց եկեղեցւոյ եւ կարգաց հասարակաց: Վասն այսորիկ կամ եղև, եթէ պատուով յառաջ իցէ, եւ առանց նորա մի՛ իշխեսցէ գործել ինչ, ըստ նախնեացն սովորութեան հարցն մերոց, որ կարգեալ են կանոնք, բայց միայն զայս իշխեսցէ գործել յիրում իշխանութեանն՝ թէ՛ գեւղք, թէ՛ գաւառք, թէ՛ աւժումն քահանայութեան եւ կամ զինչ վարք իցեն իւրոյ գաւառին եւ իշխանութեանն, այլ այլոյ ամենեւին մի՛ իշխեսցէ գործել ինչ եւ ձեռնամուխ լինել արտաքոյ, քան զկամս մայրաքաղաքի եպիսկոպոսին: Եւ ո՛չ նմին կաթողիկոսին իսկ առանց հաւասարութեան այլոց եպիսկոպոսաց գործել ինչ<sup>350</sup>:

Յայտնի է այս դատաստան հոգեւոր եւ բնաւին այժմ լուծեալ: Մի՛ ընդ մեզ զայրասցին յեպիսկոպոսաց եւ յեպիսկոպոսապետաց, զի ոչ խնդրեն նոքա զարժանիսն ձեռնադրել, այլ կան մնան, զի զանձն ուրուք շարժեսցէ ախտ, եւ նոքա՝ զայլ ախտաւորս գաւառին, եւ ընծայական թղթիւք ի դիմաց վկայելոցն երթեալք: Թէպէտ եւ յայտնի է հայրապետաց, զի ո՞րք ի լաւացն յանձնէ յայդոսիկ համարձակեաց, կամաւք պատրին: Եւ այդ պատճառ հակառակութեան նոցա ընդդէմ հայրապետաց, զի ո՛չ ի Տեառնէ կոչեցան եւ ո՛չ հաւասարութեամբ եպիսկոպոսաց ձեռնադրեցան:

## ԳԼՈՒԽ ԺԵԸ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ՈՐՔ ՅԵՊԻՍԿՈՊՈՍԷ ԼՈՒՆԱՆԻՆ

Եթէ ոք յիրմէ եպիսկոպոսէ անկաւ՝ երէց կամ սարկաւազ եւ զեպիսկոպոսին զդատաստան յանձին ոչ կալաւ եւ համարձակեցաւ ձանձրացուցանել զլուր ժողովրդոց բազմաց, որպէս թէ զինչ իրաւունս ունիցի՝ առաջի բազմաց եպիսկոպոսաց ասիցէ եւ ի նոցանէ զարդար դատաստանի վճիռն ահն ունիցի առնուլ: Ապա թէ եւ՛ ի նոցանէ սրտնեղեցաւ եւ անգոսնեաց, եւ համարձակեցաւ առ թազաւոր դիմել եւ ձանձրացուցանել, զայնպիսին մի՛ արժանի առնել թողութեան կամ ընդունելութեան կամ բնաւ յոյս ինչ տալ, զի առ յապայ հաստատեցի ի նոյն տեղի<sup>351</sup>:

Արդար է այս դատաստան, զի յետ մի անգամ եւ երկիցս յանդիմանելոյ յանդգնեցաւ: Զի թէ իւրոյ եպիսկոպոսին կարծի նախանձու լինել, միթէ եւ բազմա՞ցն եւս: Այլ ի զղջանալն՝ այդ եւս տեսցի:

<sup>350</sup> Կանոնք Անտիոքայ Թ, Կանոնագիրք Հայոց, Գ. Ա, էջ 220—221

<sup>351</sup> Կանոնք Անտիոքայ ԺԲ, Կանոնագիրք Հայոց, Գ. Ա, էջ 213

ԳՆՈՒՄ ԺԾԹ

ՅԱՂԱԿՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՉՁԵՌՆԱԿՐԵԼ ՅԱՅԼՈՅ ՎԻՃԱԿԷ

Մի՛ որ ուրեք յեպիսկոպոսաց իշխեսցէ եւ համարձակեսցի յայլմէ իշխանութենէ յայլ մտանել եւ ձեռնադրութիւն առնել յեկեղեցիս եւ մերձեցուցանել զոք յաշտիճան. եւ ոչ՝ բազմութեամբ մտանել յայլ իշխանութիւն, բայց եթէ համարձակելով եւ թուղթս տալով՝ որ մայրաքաղաքացն է եւ որ ընդ նմա եպիսկոպոսք են՝ մուտ տացեն նմա: Ապա թէ ոչ ուրուք կոչեսցաւ՝ դիմեսցէ ստահակութեամբ ձեռնադրութիւնս առնել ուժեք եւ հաստատութիւն իրաց եկեղեցւոյ, որ ոչ բնաւ անկ իցէ նմա, անհաստատ լիցի, որ ի նմանէ արարեալ գտանիցի, եւ նա պարտաւոր լիցի ստահակութեան իւրում եւ յանմիտ ձեռնադրութեանն զարժան դատաստանն ընկալցի՝ առ հոռոյ մերժեսցի ի սուրբ ժողովոյն<sup>352</sup>:

Ի բազում կանոնս եւ գրեթէ յամենայնս այս եղաւ, զի շար է եւ անկարգութեան պատճառ: Անհաստատ լիցի՝ այսպէս է. զի թէ ի նմանէ ձեռնադրեալն արժանաւոր իցէ, զղջացեալ՝ հաստատեսցի արհնութեամբ պատշաճիւ յիւրմէ եպիսկոպոսէն, նմանապէս եւ՝ այլ ինչ կարգեալքն. եւ ինքն եւս հաստատեսցի, ցուցանելով զարժանին ապաշաւանս, ապա թէ ոչ՝ մերժեալ լիցի միշտ:

ԳՆՈՒՄ ԺԿ

ՅԱՂԱԿՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՄՐԱՍՏԱՆԵՍԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Եթէ յեպիսկոպոսաց յիրս ինչ յանցուածոց եւ մեղադրութեան դատաւարտեսցի, եւ ապա դէպ լիցի վասն նորա ոչ միաբանել, որք յիշխանութեան են եպիսկոպոսք, եւ ոմանք ի նոցանէ անպարտ եւ արդար յայտ առնել կամեսցին, եւ ոմանք ի նոցանէ՝ պարտաւորել, — զի վախճանեսցի ամենայն իրաւք հակառակութիւն կեղծաւորութեանն, — կամ եղև սուրբ ժողովոյն, որ մայրաքաղաքացն եպիսկոպոսն է, զի ի մերձաւոր գաւառաց անտի եւ յիշխանութենէ կոչեսցէ զայլս ոմանս, որ դատեսցեն եւ զհակառակութիւն կեղծաւորութեանն ի բաց լուծցեն. զի հաստատուն է՝ յոր ինչ կարգեսցեն, որ յիշխանութենէ անտի են<sup>353</sup>:

Տես, եթէ որքան ստուգիւ հրամայէ դատել կաթողիկոսաց եւ ոչ պատրիլ ի պատճառս ազահութեան եւ թիւրել զճշմարիտ դատաստանս:

ԳՆՈՒՄ ԺԿԱ

ՅԱՂԱԿՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՉ ՆՈՐԱԶԵԵԻՆ ԶՁԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ոչ է պարտ զվաղնչուցն սովորութիւնս ի գաւառի եկեղեցեաց նորաձեւել<sup>354</sup>:

352 Կանոնք Անտիոքայ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 213—214  
 353 Կանոնք Անտիոքայ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 214—215  
 354 Կանոնք Նրկորոզ Նիկիականք Զ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 74

Զվիճակաց եւ զաթոժոց եւ զժողովրդոց տակ: Եւ եթէ փոխել յասացելոցց կամի ոք ի հայրապետաց, ժողովաւք պարտի առնել, որ է անվտանգ ըստ դատաստանի գրոց:

**Գ Լ Ո Ւ Պ Ց Ծ Կ Բ**

**5 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՈՉ ՏԱԼ ՅԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՍ ԶՍԻՐՐՈՒԹԻՒՆՆԵՆ**

Ոչ է պարտ զսրբութիւնսն յարհնութեան կարգի ըստ զատկաց յայլ եկեղեցիս առաքել<sup>355</sup>:

Զնշխար տալն յայլ եկեղեցիս խափանէ, զի մի՛ պատճառ ամբոխի լիցի, զի յամենայնսն ուղիղ զատաստանի զգուշանան կանոնք:

10

**Գ Լ Ո Ւ Պ Ց Ծ Կ Գ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ՈՐՔ ԸՆԴ ԱՅԼԱԶԳԻՍ ԽԱՌՆԻՆ ԵՆԱՄՈՒԹԵԱՄԲ**

Չէ մարթ, որք յեկեղեցոյ մերոյ են, ի պէսպէս եւ ի ցովի հարսանիս ալլազգեաց մերձեցուցանել զուտերս եւ զդատերս իրեանց, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ<sup>356</sup>:

15

Դատաստան ըստ կամաց կանոնաց այս լիցի այնպիսեացն, զի թէ ի հեթանոս ալլազգիս տան, եւ զրկին ի հաղորդութենէ, զրկեսցին տուողքըն ի հաղորդութենէ իրեանց, եւ եթէ ի հերձուածողս, յորոց մեք ոչ հաղորդիմք, զգատաստան խղճին ծնողքն, որք ընդ նոսա ամուսնացուցին, հատուացեն:

20

**Գ Լ Ո Ւ Պ Ց Ծ Կ Դ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՈՐ ԶԱՅԼՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԱՌԵԱԼ ԶԻՐԸ ԶԱՐԴԱՐԻՑԷ**

25

Սպիսկոպոս ոք, եթէ իցէ զաւառաց բազմաց եւ ունիցի իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով, մի՛ իշխեսցէ յայլոյ իշխանութեանց առնուլ եւ զիւրն զարդարել զեկեղեցին, զի աշտութեամբ վարեցաւ եւ անձին իւրում զատապարտութիւն: Այնպիսին, թէ շհաւանեսցի դատնալ չիրացն, ի բաց լուծցի. եւ այն, զորոյ առն եւ զայլոյ շինեաց զեկեղեցին, մի՛ կոչեսցեն զանուն նորա իրեանց վարդապետ<sup>357</sup>:

30

Յայտնի է այս հոգեւոր զատաստան եւ պահելի հաւատեալ յեկեղեցի:

<sup>355</sup> Կանոնք Երկրորդ նիկիականք 2Թ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 87 և Կանոնք Լաւողիկեայ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 232

<sup>356</sup> Կանոնք Լաւողիկեայ ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 231

<sup>357</sup> Կանոնք Կղեմայ 2Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 99

ԳՂՈՒԹ ՄԳԵ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ՈՐ Ի ՄԻՏՍ ՈՉ ԻՑԷ ԵՒ ԶԻՒՐՈՎԻՆ ԵՐԹԱՅՑԷ:

Հարցումն. Որ յիւր միտս ոչ իցէ եւ երթիցէ զհիւրովին, այսինքն՝ կամ  
5 գահավէժ առնի, կամ այլ ինչ մահու մեռանի, պարտ է ի վերայ պատարա-  
գազ մատուցանել, թէ ոչ:

Պատասխանի. Պարտ է վիճակելոյն քննել, եթէ ճշմարտութեամբ  
պահասամիտ էր եւ արար զայս, քանզի բազում անգամ մերձատրին  
ախտացելոյն կամելով զիպել, որ ի վերայ նորա պատարագ մատչի,  
ստեն, ասեն, թէ չէր յիւր միտս, զի մատուցեն զպատարազն: Արդ,  
10 քննել պարտ է, մի զուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար  
զայս, ապա ոչ է պարտ լինել պատարագ ի վերայ նորա, քանզի ինքնաս-  
պան եղիւ անձին իւրոյ: Ապա պարտ է քննել զամենայն ճշմարտութե-  
ամբ, զի մի՛ ի դատաստան անկանիցի մատուցանողն<sup>358</sup>:

Արդ, թէպէտ յայտնի է բոս հարցմանն եւ պատասխանիդ, այլ  
15 վերակացուքն պարտապան են ապաշխարել ըստ դատելոյ վարդապե-  
տաց: Եւ դատաւորաց ոչ է այդ:

ԳՂՈՒԹ ՄԿՁ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՅՍԱՀՅՐ ԿՆՈՁ

Հարցումն. Եթէ որ կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս  
20 ազանիցի, եւ այր նորա ասիցէ՝ ոչ կարեմ ծուծկալ լինել, եւ կամիցի  
առնուլ այլ կին, աւրէ՛ն է, թէ ոչ:

Պատասխանի. Շնութիւն միջնորդի յիրսդ. եւ զի՛նչ պարտ եւ արժան  
է, ոչ գիտեմ վասն այդորիկ<sup>359</sup>:

Ըստ ներման եւ զայս զրեցաք երբեմն զդատաստան<sup>360</sup>. որպէս կամ է՝  
25 ընկալցին դատաւորք եւ անպարսաւս զմեզ թողցեն յայդմանէ:

ԳՂՈՒԹ ՄԿԷ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՆՅՐԵԱՅ

Հարց. Եթէ այր որ ոչ լինիցի ի զործ արութեան, եւ կինն ելանէ  
ի նմանէ, եթէ որ զկինն զայն կին առնիցէ, բնդ հանեա՞լ կանայսն պարտ  
է համարել զայնպիսին, եթէ անխի՛ղճ ունել: Կամ թէ այրն շարձակէ զը-  
30 կինն ի բաց եւ ասէ այսպէս, թէ՛ ինձ մտան հասեալ է յԱստուծոյ, կաց  
եւ պաշտեա զիս,—մեք զի՛նչ պատասխանի տացուք:

Պատասխանի. Չէ արժան արձակել եւ ոչ ձեզ թողացուցանել նմա<sup>361</sup>:

358 Կանոնք Աթանասի ԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 295  
359 Կանոնք Աթանասի ԺԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 295—296  
360 ՏՆ՝ս հոդվ. է  
361 Կանոնք Աթանասի ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 298—299

Եղեալ է եւ այս դատաստան կանոնական<sup>362</sup>. ներմամբ ի կամս ապաստան է հաճելն ընդ երկաքանչիւրսն, նմանապէս եւ՝ դատաւորաց եկեղեցոյ:

ԳՂՈՒԽ ԾԿԸ

5 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԱՇՄԵԼՈՅ ԿԵՈՁ

Հարց. Եթէ կին ուրուք հաշմիցի եւ ասիցէ ցայր իւր, թէ՛ ես ահաւասիկ չեմ արժանի առնակնութեան, արա դու քեզ այլ կին, որ քեզ պիտանի է եւ զտուն շէն կալցի, եւ ինձ ամ ըստ ամէ հաց եւ հանդերձ տուր, եւ ես նստայց առ եկեղեցոյդ մինչեւ ի վախճան ժամանակի իմոյ, եւ առցէ յանձն առնել զամենայն, ընդ պատուհասի՞ւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ՞ անվնաս է:

Պատասխանի. Վնասակար է, ոչ է իշխանութիւն այլ կին առնուլ, մինչեւ այն կինն կենդանի է<sup>363</sup>:

15 Ընտրութեամբ զիջանելով եղաւ այս դատաստան կանխաւ<sup>364</sup>, Ընդ կամս դատաւորաց եկեղեցոյ եղաք եւ զայսոցիկ ընդունելութիւն, միայն զի ի խղճէ ճողոպրիցիմ:

ԳՂՈՒԽ ԾԿԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՆԱՍՆԱՊՂՄԱՏ

20 Հարց. Եթէ այլ ոք ընդ անասնոյ պղծիցի, եւ յետ պղծութեանն զըզջանայցէ եւ ապաշխարիցէ, եւ վաստակիցի յարկանոցի, որպէս եւ հրամայեն վարդապետք, եւ կին նորա յետ յանցանացն շկամի նմա ի կնութեան կալ վասն պղծութեանն, որ եղաւ ի վերայ նորա, եւ այրն այսպէս ասիցէ, թէ՛ կամ կինն առաջին հաւանեսցի կամ այլ կին հրամայեցէք առնել:

25 Պատասխանի. Կինն իշխէ մեկնել, եւ այրն այլ կին<sup>(112)</sup> առնուլ<sup>365</sup>:

Նշանակեցաւ երբեմն այս դատաստան<sup>366</sup>, այլ այժմ զսրբոյս եղաք հրաման ի լրումն այնմ:

ԳՂՈՒԽ ԾԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ

30 Հարց. Եթէ ոք ի քահանայից յուղուշ դիպեսցի, եւ աւազակք ի վերայ անկցին, եւ դէպ լիցի քահանային սպանանել զոմանս յաւազակաց եւ

362 ՏԵ՛ս հոգվ. 2

363 Կանոնք Աթանասի ԻԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 299—300

364 ՏԵ՛ս հոգ. է

365 Կանոնք Աթանասի ԻԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 301

366 ՏԵ՛ս հոգ. ԺԱ

դանձն իւր եւ զընկերսն ապրեցուցանել, պարտ է նմա ի կարգի քահանայութեանն կալ, թէ ոչ:

Պատասխանի. Ոչ է արժան կալ ի քահանայութեան, վասն զի ոչ է արժան սպանանել քահանայի զմարդ որ, թէ եւ ինքն մեռանիցի, այլ եւ ոչ զանասուն<sup>367</sup>:

Յաղագս այսմ դատաստանի լուայ, եթէ վասն անձին շէ պարտ սպանանել, այլ յաղագս ընկերաց լաւ է սպանանել, յորժամ աւազակքն այլազգիք իցեն: Եւ պաշտել զքահանայութիւն կամ ոչ՝ ի դիպուածսն տեսցի ի վարդապետաց<sup>368</sup>:

10

ԳՆՈՒՅ ԾԼԱ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՏՍԱՀԱՐԱՅ ԵՒ ԱՅԼ ԽԵՆԱԹԱՓԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Հարց. Եթէ ուրուք ի դիւահարիւ իւրում մարդ սպանեալ առ անզգայութեան իւրում, յորժամ սրբեսցի ի դիւն, իբրեւ սպանող պարտ է ապաշխարել, թէ ո՞րպէս:

Պատասխանի. Սակաւ ինչ, վասն զի ի շարէն է գործն<sup>369</sup>:

Սոյն լիցի եւ յաղագս այլ մտախաբացն: Բայց ըստ հոգեւոր դատաստանի, եթէ ինքեանց վնասիցեն եւ թէ այլոց, առանց ապաշխարութեան մի՞ լիցին տեսողքն: Այլ ըստ մարմնոյ դատաւորաց աստ գործ ոչ է:

20

ԳՆՈՒՅ ԾԼԲ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՄԼՈՒԹԵԱՆ ԿԱՆԱՆՅ

Հարց. Եթէ որ վասն ամբողջեան եթող զկին իւր եւ առնէ կին ծննդական եւ ապաշխարութիւն խնդրէ նովին կնամ, զի՞նչ պարտ է առնել:

Պատասխանի. Շնացող է<sup>370</sup>:

Գրեալ է քննութեամբ եւ այս դատաստան<sup>371</sup>: Այլ դատաւորաց լիցի զսրբոյս մեծարել զհրաման եւ կամ զդատելն զկանխաւ, եւ աղատ զմեզ ի բամբասանաց թողուլ: Ներէ եւ Բարսեղ այսմ<sup>372</sup>:

ԳՆՈՒՅ ԾԼԳ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ԱՅԼՈՅ ԱԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՅ

30

Հարց. Եթէ որ ի քահանայից սրբէ զանդաստան իւր կամ զպարտէզ եւ քար ընկենու զորմով, եւ դիպի մարդոյ, եւ մեռանի, զի՞նչ պարտ է առնել:

367 Կանոնք Աթանասի լԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 303  
368 Տե՛ս հոդվ. ձԼԳ, նաև ՃԶԴ  
369 Կանոնք Աթանասի ԼԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 304  
370 Կանոնք Աթանասի ՄԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 315  
371 Տե՛ս հոդվ. ԺԱ, նաև ՃԴԶ  
372 Տե՛ս Կանոնք Բարսեղի Կեսաբացույ Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 336

վասն կարգի քահանայութեան պաշտամանն: Եւ կամ թէ ումէք յաշխարհականաց նոյնպէս ակամայ սպանութիւն դիպի, ո՞րպէս պարտ է տալ ապաշխարութիւն:

5 Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ եւ զքահանայութիւն մի՛ պաշտեսցէ<sup>373</sup>:

10 Նմանապէս եւ՝ ի վարդապետէ վասն խրատու հարեալ եւ մեռեալ ըստ սովորութեան<sup>374</sup>, նոյնպէս եւ՝ հայր՝ զորդի եւ այլ այսպիսի: Եւ այսպէս է. սաստիւ առաքեալ քահանայն զծառայան զհետ փախուցեալ ծառային<sup>375</sup>, այլ թէ յամբոխի միջի ձիով ընդ կուռն հարկանէ եւ սպանանէ, ի քահանայութիւն զալ ասէ եւ աստ լուծանէ<sup>376</sup>, կամ զի շէր քահանայ եւ կամ յամբոխէն եղև, ներէ:

15 Նման այսմ զակամայ սպանութիւն. Աւրէնքն ուսուցանեն, որպէս ոտաշիլ տապարին, կամ այլ ինչ այսպիսի, զոր յապաստանի, ասէ, անկանիլ ի քաղաքսն՝ եւ ապրել, որ դերկրորդ մահու ունի զտեղիսն<sup>377</sup>:

20 է կամայ դարձեալ եւ ակամայ, յորժամ նետ որ ձգէ որսոյ եւ կամ զազանի, կամ ըստ այլոյ տարինակի, եւ պատահէ թշնամւոյ, յորոյ վերայ խնդայ, խառն է յերկուցն: Յաղագս այնորիկ ի դատաստանս թագաւորաց, ի սպանանել այլազգոյ զքրիստոնեայ ակամայ, իբր կամաւորի եղաք զդատաստան, զի բնութեամբ է խնդալ նոցա ի կորստեան մերում: Եւ արդ, քանզի արժան է զակամայ սպանութիւն խոստովանեալ՝ 20 ըստ կանոնական ուղղել դատաստանի, եւ ի ձեռս անկեալ դատաւորացն՝ ճշգրիտ դատել զկամայ եւ զակամայ եւ որ յերկուցն է եւ այնպէս զտոյժսն ուղղել: Այլ զկատարեալ կամայն եւ զակամայն ի կանոնաց ուսցիս սրբոյն Բարսղի<sup>378</sup>:

25

ԳՂՈՒՍ ԾՁԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՆՈՂԱՅ

30 Իսկ որ ի պատերազմունս մահք դործին, հարքն մեր ամենեւին չհամարեցան զայն ի մեղս. ըստ որում մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոյս հետեւել: Բայց վասն զձեռս սրբելոյ բարիոք է այնպիսեացն երեք ամ արտաքոյ հաղորդութեան լինել<sup>379</sup>:

Այս եւ ոչ ընդ արիւնաւքն եմուտ: Եւ աստ լոկ ի հաղորդութեանէ ասէ արտաքոյ: Յայսմանէ ուսցին դատաւորք, եւ մի վրէժ ինչ լիցի:

373 Կանոնք Աթանասի ՀԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 320—321  
374 Տե՛ս Կանոնք. Աթանասի ՀԳ  
375 Տե՛ս Կանոնք Աթանասի ՀԱ  
376 Տե՛ս Կանոնք Աթանասի ԽԳ  
377 Տե՛ս Ելք, ԻԱ, 12—13: Թիւք, ԼԵ, 6—23: Բ օրին., Դ, 41—42: Եսու, Ի, 1—9, տե՛ս նաև Հողմ. ՄԼԳ  
378 Տե՛ս Կանոնք Բարսղի Կեսարացոյ Ե, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 338—341  
379 Կանոնք Բարսղի Կեսարացոյ Ը, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 341

ԳՂՈՒՄ ԾՀԵ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՐԴԻՈՑ

Որդիք որ ոչ հնազանդին ծնողաց իրեանց, որ ինչ եւ հասանէ լընչից իրեանց, տացեն նոցա սիրով եւ նստուցեն զնոսա ուրոյն. գուցէ շարիք ինչ հանդիպեսցին: Եւ որ կանայս առնեն՝ նոյնպէս արասցեն, զի այն է հաճոյ Աստուծոյ, քանզի Պաւղոս զայս այսպէս հրամայեաց<sup>380</sup>:

Թերեւս այն է, որ ասէ. հարք, սիրեցէք զորդիս ձեր, եւ այլն<sup>381</sup>, Եւ զայս ընտրելով ներմամբ կամի:

ԳՂՈՒՄ ԾԼՁ

10 ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՆԵՐՔԻՆԵԱՑ ԵՒ ՄԱՐՄՆԱՋԵՂԾԱՑ

Եթէ ոք ներքինի իցէ կամ մարմնազեղծ եւ կեղծաւորութեամբ կին առնիցէ, եւ կնոջն հասեալ ի վերայ գործոցն՝ իշխան լիցի ի կալ եւ ի քակել. եւ եթէ քակեսցի, ում եւ կամի՝ լիցի առն: Եւ զկէսն ընչիցն առցեն եւ տայցեն տուգանս յեկեղեցին վասն անարգանաց պսակին: Եւ երեք ամ ապաշխարեսցէ<sup>382</sup>,

ԳՂՈՒՄ ԾԼԷ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ՈՐ ՈՒՏԷ Ի ՏԵՂԻՈՑ

Եթէ ոք ուտիցէ ի տեղույ<sup>(113)</sup>, տացէ ընդ միոյն շորս, ապա թէ ոչ՝ ըստ կանոնին ապաշխարիցէ եւ կամ յաղքատս տալ, թէ այն պատահի<sup>383</sup>, 20 Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ:

ԳՂՈՒՄ ԾԼԸ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀՐԴԵՀԻՑ

Եթէ ոք հրդեհիցէ զարդար վաստակս, տուծեսցի ընդ միոյն երեք-կին, թէ ոչ՝ ապաշխարեսցէ տասն ամ<sup>384</sup>, 25 Յուցաւ այս եւ ըստ Աւրինացն<sup>385</sup>,

380 Կանոնք Բաղի Կեսարացույ իէ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 107  
381 Տէ'ս Եփես., Ե, 31. Ձ, 4: Կողոս., Գ, 21  
382 Կանոնք Բաղի Կեսարացույ ԽԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 111—112  
383 Կանոնք Բաղի Կեսարացույ ՁԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 121 և Կանոնք Գրիգորի Լուսաւորչի է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 246  
384 Կանոնք Բաղի Կեսարացույ ՁԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 122  
385 Ելք, ԻԲ, 6 և հողվ. Հէ

ԳՂՈՒՆ ԾԸԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՅԱՓՇՏԱԿՈՂ ԱՐՈՒՆԵՍՏԱԻՈՐԱՑ

Արուեստաւորք, որք յափշտակեն գինչս այլոց, տայցեն ընդ միոյ չորս, ապա թէ ոչ՝ ապաշխարեսցեն ըստ վարդապետին հրամանի<sup>386</sup>:

5 Զյայտնեալն եւ ի դատաստան անկեալն հատուցանել ասէ, որք կարողքն են, եւ որ ոչ ունին կար եւ զծածուկսն՝ ապաշխարել:

ԳՂՈՒՆ ԾՁ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱԹԱՆԳՈՒԹԵԱՆ ՅՈՒՍՏԵՐՍ ԵՒ Ի ԴՍՏԵՐՍ

10 Եթէ ոք վախճանի եւ ունիցի ուստերս եւ դստերս, զինչսն ծնողացն ընդ երկու քորսն մի բաժին եղբար դիցեն հաւասարապէս: Ըստ Աւրի- նացն յառաջագոյն գրեցաք զայս դատաստան եւ եղաք<sup>387</sup>, զի դուստր ի տան գորդոյ առցէ բաժին, եւ ելեալքն՝ երկուսն զմի եղբար: Եւ այս յայտնի յԱւրիկացն ոչ ասացաւ, եւ աստ կանոնական հրամանս զայս ոչ

15 ընտրեն, եւ ոչ հեթանոսք գանազանեն զսոսա: Այլ ես յիրացն հաւատարիմ զայն իսկ գիտեմ, զի ելանէ դուստր ի տանէ հար բաժնիւ, եւ որ տակաւին ի տան է՝ անբաժին իսկ է: Արդ, զսոսա հաւասարաբաժին զկնի մահուան հարն առնել ոչ է արդարադատութիւն, զի այդպէս գտա- նին կարգեալ դստերքն ընդ եղբարսն առեալ բաժին, եւ որք ի տան՝ եր-

20 կուսն մի: Ապա թէ ոք ասիցէ՝ որդւոցն ծախք լինել ածել կանայս, գիտելի է, զի որքան ծախք իցէ, եւ այնքան աշխատութիւն, իբր զի արու է, եւ բաժին ընդ կնոջ նորա ածաւ: Ըստ այսմ հաւատարիմ երեւի, զի կարգեալքն՝ երկուսն մի լիցին, եւ որք ի տան՝ ընդ որդիս համարեսցին: Եւ այդպէս ամենեցուն հաւասարութիւն եղիցի, եւ տկար ազգն խնամեսցի,

25 եւ մի՛ նուազ լիցի, զի բազում ծնողք զդստերս առաւել պատուեն. եւ զայս նախախնամութեամբ, զի որդւոց դիւրին է ապրել, քան դստերաց: Եւ զայս յայտ արարաք, զի եւ նոյն իրքդ այդպէս պատահի, այլ կամք ընտրեսցեն դատաւորաց՝ զամենայն դստերսն զերկուսն մի ունել եւ կամ ըստ դատմանդ, որպէս գրեցաւ: Նաեւ զայս իրաւունս համարիմ, զի բազում

30 անգամ պատահի զդուստր երկիցս կարգել. այնոցիկ բաւական լիցի այն ի մասն բաժնի, եթէ ըստ ընչիցն ծնողացն եւ առ նա ծախքն ելեալ իցէ, ապա թէ ոչ՝ տեսցի հաւասարութիւն, սակայն մասն լիցի բաւական առելոցն: Եւ յերկրորդ ամուսնութենէ ուստերքն եւ դստերքն նուազ լիցին ի մասն բաժնի, որպէս եւ գրեալ է<sup>388</sup>:

35 Այլ զտուն հար կրսեր որդւոյն սովոր են սալ, բայց տեսցի՝ անկատրին լինել, որ զտեղի հարն բաւական է ունել: Իսկ անդրանկանն պատիւ լիցի, որպէս ծանուցեալ է<sup>389</sup>. ըստ այդմ, եթէ հաւասար բաժանիցի ժառանգութիւնն ուստերաց<sup>(114)</sup>, առաւել լիցի յաղագս պատուոյ:

386 Կանոնք Բասղի Կեսարացու ձն, Կանոնագիրք Հայոց, Կ. Բ, էջ 126  
 387 Տե՛ս հոդվ. ՃԱ, ՃԲ, ՃԳ  
 388 Տե՛ս հոդվ. ՃԲ  
 389 Տե՛ս հոդվ. ՃԺԱ

ԳՆՈՒՄ ԾՁԱ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ԸՍՏ ՈՐՈ՞Յ ԺԱՄԱՆԱԿԱՅ Ի ԺԱՌԱՆԳՄ  
ՀԱՄԱՐԵԼԻ Է ՋՄՆՈՒՆԳՄ

Աստուածային արինադրութիւնն եւ կանոնական հրամանն զնկարե-  
 5 ալ սաղմնն ի դատաստանս զնէ արեան<sup>390</sup>, եւ այն, զի առաջի կայր ծնունդն  
 յանվնաս լինելն: Բայց զժառանգ լինելն, թէպէտ աշակերտեալքն Մահ-  
 մետի սնոտի իմաստասիրելով զտեսանել աստեղաց ասեն մանկանն, այլ  
 մեզ հաւատարիմ Տեառն լիցի ասելն՝ ոչ յիշէ զնեղութիւն վասն խնդութե-  
 անն, զի ծնաւ մարդ յաշխարհ<sup>391</sup>, եւ դարձեալ՝ ծնեալն ի մարմնոյ մարմին  
 10 է<sup>392</sup>: Եւ մարմին ծնեալ ի մարմնոյ ժառանգ եղիցի<sup>(115)</sup>, որպէս յԱստուծոյ  
 ծնեալքն՝ Աստուծոյ:

Ապա թէ յղի կին պատահի ի մեռանիլ առն, ակն կայցեն դատաւորք  
 ծննդեանն եւ այնպէս զժառանգութիւնն հաստատիցեն ի ծնանիլն: Եւ եթէ  
 ի նմին աւուր, յորում ծնաւ, մեռանիցի՝ մանուկն ժառանգ է. ի մանկանէն  
 15 այլք ժառանգիցեն եւ ոչ ի հարէն:

Եւ եթէ մայր մանկանն մեռանիցի, թէ ի ծնունդս, թէ զկնի ծննդե-  
 անն, թէ եւ ի նմին աւուր մեռանիցի, մանուկն ժառանգ է մարն, եւ ի  
 մանկանէն հայրն ժառանգէ:

Ըստ ասացելոցդ ուստերք եւ դստերք ժառանգ լիցին, ապա թէ չի-  
 20 ցնն՝ ում եւ կամի ժառանգեցուցէ՝ արգաստճմի, թէ ծառայի, թէ սիրելի-  
 ւոյ, զի ինքնիշխան է զայդոսիկ ժառանգ առնել:

Այլ զկնի մահու, թէ ինքն ոչ հաստատեաց, մերձաւորքն ի տոհմէ  
 եւ ոչ հեռաւորքն ժառանգեն, որպէս եւ դատեալ եղև այդ րստ Ալիի-  
 նացն<sup>393</sup>:

25 ԳՆՈՒՄ ԾՁԲ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀԱՇՄԵՆՈՑ ՋԱԽԱԿԱՅ

Եւ եթէ պատահի հաշմ լինել զաւակ, որպէս թէ բնաւ չունել միտս եւ  
 իմացուածս, սա ոչ է ժառանգ, զի ոչինչ իմանայ, որով ի գործ արկցէ  
 զհայրենիսն, զի ի ծնէ այնպէս պատահեաց: Ապա թէ յետոյ ախտն  
 30 եղեալ իցէ եւ կարծիցի բժշկիլ, յայլ ժառանգս աւանդեսցեն. թէ առողջաս-  
 ցին՝ ժառանգեն, ապա թէ ոչ՝ որք ժառանգենն ինամ կալցին մինչև ի  
 մահ:

Իսկ եթէ այլազգ իցէ՝ կաղ, կամ կոյր, կամ այսահար, որ չիցեն  
 անզգայեալ, կամ աւրկոտ, որ չիցէ բնախն ապականեալ, կամ անգամա-  
 35 լոյծ իմաստուն եւ այլք այսպիսիք, որ բաւական գոն այլաբ սպասաւորաբ  
 զհայրենիս ժառանգել, մի՛ զրկեսցին ի ժառանգ լինելոյ, իսկ անբաւա-

390 Տե՛ս Ելք, ԻԱ, 22—23 և հողվ. ԿԲ  
 391 Տե՛ս Յովհ., ԺԶ, 21  
 392 Տե՛ս Յովհ., Գ, 6  
 393 Տե՛ս Թիւք, Իէ, 1—11 և հողվ. ԾԱ

կանքն՝ այլաբ ժառանգորդովք խնամիցին մինչ ի մահ, որովչս ահա ցուցաւ:

5 Եւ զայդ այդոցիկ իրաւամբք դիտեմք դատաստան: Զի եւ ըստ Աւրինացն անարատք ի կենդանեացն ի բազինան Ելանէին Աստուծոյ նուիր, իսկ արատաւորքն հասարակաց էին ղենի<sup>394</sup>: Այսպէս անարատք հոգւով եւ մարմնով Աստուծոյ լիցին ընծայ ի մարդկանէ եւ ժառանդ, իսկ արատաւորքն մարդկան անխոտելի են ժառանգ:

#### ԳՆՈՒՄ ԾՁԳ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՏԱԿԱՅ

10 Եւ կտակ լիցի՝ որպէս ուսուցանեն կանոնք. զկնի երից աւուրց հիւանդութեան կոշիցէ հիւանդացեալն զքահանայս եւ զժառանգաւորս եկեղեցւոյն եւ երեք վկայիւք արասցէ զկտակն եւ զամենայն ինչ զտան իւր, եւ զհոգւոյ, եւ զթաղման իւրոյ խաւսեցի ըստ հաճոյից իւրոց: Եւ թէ ի նմին աւուր պատահի մեռանիլ, հաստատուն լիցի կտակն, թէ չիցէ  
15 թափեալ ի մտաց. ոչ որպէս Մահմետի անզոյ ասեն իմաստունք՝ յետ քառասուն աւր ապրելոյ հիւանդին հաստատի կտակ:

Բայց հաստատուն կտակ յառողջութեան է, թէպէտ եւ սասցեալդ անխոտելի է, զի կամաւոր՝ այն, իսկ այս խառն տեսանի:

20 Եւ թէ պատահի յառնել հիւանդին եւ փոխել զկտակն, իշխան լիցի, զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյ<sup>395</sup>: Այլ Աստուծոյ եղեալ կտակ հաստատուն կացցէ, մինչեւ կատարեսցէ զոր խաւսեցան բերանովք ի նեղութեան, եւ թէ՛ ուխտս դիք եւ կատարեսցէք<sup>396</sup>: Զոր ինչ ի դէպ իցէ ընդ յառնելն կատարել՝ կատարիցէ, եւ զոր ինչ զկնի մահու՝ եւ այն անվտանգ է, զկնի կատարիցեն: Եւ եթէ փոխէ յուխտեցելոցն՝ յառաւելն իշխան լիցի եւ ոչ ի նուազն: Եւ այդ ճահագոյն այդմ է դատաստան:

#### ԳՆՈՒՄ ԾՁԳ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ԹԷ ՈՐՊԷՍ ԱՐԺԱՆ Է ԶՄԵՌԵԼՈՅՆ ԱՌՆԵԼ

Եւ թէ ի միասին բազում ժամանակս բնակեալ իցեն այր եւ կին եւ որդիս ծնեալ, որոց ի միասին զանազանութիւն չիցէ. ստացուածոց; ի  
30 միաբանութենէ ընչից մեռելոցն լիցի, ապա թէ յայտնապէս կնոջն երեւի ստացուած՝ ժառանգաւորացն լիցի: Եւ թէ ձեռնհաս իցէ՝ այրն զմեռելոյնս արասցէ, եւ թէ ոչ իցէ՝ յիւրոցն, եւ առն ի ժառանգութիւն մի՛ լիցի:

Եւ թէ ամուլ կինն պատահիցէ, եւ բազում ժամանակ ի միասին իցեն,  
35 առն լիցի մեռելոցն, եւ մի՛ լիցի մասն ժառանգութիւն առն, այլ որք

<sup>394</sup> Տե՛ս Ղևտ., Ա, 10, 9, 1, 6, 7, 14 և այլուր:

<sup>395</sup> Տե՛ս Եբր., Թ, 17

<sup>396</sup> Տե՛ս Թիւք, Լ, 2: Բ օրին., ԻԳ, 21—23: Ժողովօղ, Ծ, 3

կնոջն են՝ ժառանգեսցեն: Իսկ սակաւժամանակեայ եղեալ կին եւ առանց  
ամուսնութեան մեռեալ՝ յիրոցն լիցի, եւ այլոն ոչ ժառանգէ: Ապա թէ որդի  
կամ դուստր ծնեալ, թէ կենդանի իցեն եւ թէ մեռեալ, առն լիցի մեռե-  
լոցն եւ մասն ժառանգութեան:

5 Եւ այդոքիկ յառաջին եւ յերկրորդ ամուսնութեան միեւնոյն լիցի  
աւրինակ:

Իսկ մեռեալ այր՝ յիրոցն լիցի յամենայն ասացեալդ մեռելոցն:

Եւ ծնեալ ուստիքս եւ դստերս՝ ի կնոջէն ժառանգէ, եւ ի նորայոցն՝  
կինն, իսկ յամուսն ոչ ժառանգէ, բայց սակաւ նշան մասին. այլ կին  
10 ամուլ ժառանգէ յառն յազգս տնտեսութեանն:

Եւ փութով մեռեալ այր, եւ կոյս մնացեալ կինն յառնէն ոչ ժառանգէ,  
եւ ծնեալ ծնունդ, թէ կենդանի իցեն, թէ մեռեալ, ժառանգէ յառնէն, թէ եւ  
սակաւժամանակեայ իցեն ի միասին:

Եւ հանդերձք մաշեալք ի բաժանմունս ոչ յիշին երկաքանչիւր կող-  
մանցն, բայց որ ի միջի կացցէ. նոյնպէս եւ՝ պարգեւք միմեանց, թէ  
15 մաշեալք իցեն, այլ ոսկի եւ որ ինչ կայուն իցէ, այնոքիկ ըստ իրաւանց  
դատեալ վճարեսցին:

Եւ ծախք հարսանեացն նմանապէս ի հաշիւ ոչ գան, զի ի կամաց  
այդոքիկ լինին:

20 Բայց գոր ինչ արժան է, իրաւամբք տեսցեն դատաւորք ըստ պատահ-  
ման եւ ըստ սովորութեան գաւառին, զի դատաստանս, զոր եզաք, իրա-  
ւացի կարծեալք է: Ապա թէ արտաքոյ ըստ ճշմարիտ իրաւանց կարծիսն  
իցէ, յիրաւունս դարձուցանելն ուղղութիւն է, միայն զի ներեսցէ մեզ  
սիրով եւ թողութիւն ի պակասութեանն արասցէ, կորովի տեսութեամբ  
25 գթերին լցցէ:

ԳՆՈՒՅՑ ԾԶԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՃՎՈԱՅ ՆԵՆԳՈՒԹԵԱՆ

Եթէ ոք զիր ինչ արատաւորն տայ ընկերի իւրում ի պատճառս վաճառի  
եւ նենգութեամբ զրկէ եւ խաբէ սուտ երդմամբ, եւ ինքն գովի յանձին  
30 իւրում վասն զրկելոյ զընկերն, նզովեալ եղիցի<sup>397</sup>:

Եւ զի մի՛ ի նզովս անկցին այնպիսի վաճառողքն, գայտցիկ զիցուք  
զդատաստան: Զարատաւորն տալն ըստ այսմ է. թէ հարկանող իցէ, կամ  
ի բարս կամ ի մարմին արատ ինչ զուցէ, կամ յանշնչից իցէ վաճառն, եւ  
այնպիսոյն բիծն իցէ, թէ վնաս ինչ գործեալ իցէ, դատաստանաւ է  
35 վճարել վաճառողին, զի Աւրկնքն ի միջոյ բառնալ եւ ոչ վաճառել հրա-  
մայ<sup>398</sup>, Ապա թէ այլազգ ինչ իցէ եւ յայտ գայցէ՝ կամ ի պարծիլ եւ կամ  
վկայք իցեն, զի գիտակ էր եւ վաճառեաց, անդրէն դարձցի, եւ թէ հա-  
ճոյ գնողին իցէ՝ որքան արժան է ուղղիցի: Եւ թէ շիցէ գիտակ եւ անգի-  
տանալով վաճառէ, եւ ասպաշաւ գնողն իցէ, հանել գապաշաւանսն արժան  
40 է:

397 Կանոնք Բասդի Կեսարացոյ ՄԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 155

398 ՏԵ՛ս Ելք, ԻԱ, 29, Կաւ հողվ. ԿԵ

Եւ ի վաճառելն զբիծ դամենայն ասիցէ, որպէս Եպիփան ի վաճառելն զէշն խեղճարոյ<sup>399</sup>. Եւ զիտելով զնողին զանվնաս պատճառն՝ ըստ հաճոյից իւրոց որքան արժան է գնեսցէ. եւ այդպէս ի կանոնական նգովիցն ազատիցի, ապա թէ ոչ՝ ընդ դուրսն եւ ընդ յափշտակողսն ապաշխարութիւնն լիցի:

ԳՂՈՒԽ ԾՁԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՍՈՒՏ ՎԿՄՅԻՑ

Եթէ երթայ սուտ վկայ եւ ընկենու զոք յորոգայթ մահու կամ գանի, հինգ ամ ընդ ունկնդիրսն կացցէ եւ մի ամ ընդ ձեռամբ տրաւք տնանկաց, ապա արժանի լիցի արինացն<sup>400</sup>:

Դատաստան այս եղաւ ըստ Արինացն<sup>401</sup>, այլ կանոնականս այժմ երկրորդի: Յորոգայթ մահու եւ կամ գանի սուէ, այլ որ ոչ մեռանի՝ կամ զի տուգանաւք ազատի, եւ այսոցիկ դատաստան լիցի՝ որքան վնասեացն հատուցէ, ըստ այնմ, թէ որպէս խորհեցաւ առնել՝ եղիցի նմա<sup>402</sup>. Եւ կամ թէ չիցէ բաւական՝ ըստ հրամանի կանոնացդ ապաշխարեսցէ:

ԳՂՈՒԽ ԾՁԷ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՈՒՍԱՆԻ ԵՒ ԵՐԿԱԿԻ

Իսկ որ մին կուսան է եւ մին երկակ, եւ մին վախճանի, ամուսնանալ անհնար է. եւ թէ ոք յանդգնի՝ ապաշխարութիւն երեքկնոյն եղիցի, եւ քահանայն լուծցի<sup>403</sup>:

Երկբայի այս կանոնք սրբոյն լինել Բարսղի, եւ թէ նորա՝ անհնարին է լինել այս կանոնաց: Այլ յուսմանէ ներմամբ այսպէս ծանեաք, զի կրկին ապաշխարութիւն երկկնոյն այնպիսեացն լիցի:

Եւ քահանային պարտ է զայս ուսուցանել զսահման կանոնի, զի մի՞ դատապարտեսցի յաղազս աշտուելոյն:

Զայդ այդոցիկ գիտացաք լինել դատաստան:

ԳՂՈՒԽ ԾՁԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԽԱՒՍԵՅՅԱԼ ԿԱՆԱՆՑ

Իսկ եթէ խաւիցի կին, եւ կամ հաստատեալ իցէ քահանային երկու կամ երեք վկայաւք, մի՞ իշխեսցէ թողուլ զնա եւ այլ կին առնուլ, բայց եթէ վասն պոռնկութեան կամ վասն մարմնազեղծութեան<sup>404</sup>:

399 Տե՛ս Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Գ, էջ 211

400 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 155

401 Տե՛ս Բ օրին., ԺԹ, 15—19, հոգվ. ԾԸ

402 Տե՛ս Ելք, ԺԹ, 19

403 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157

404 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157

Ջի խտտեալն բա՛ննայի եւ վկայութի կին՝ իրաշխատորեալ է, եւ վասն սյունկութեան իշխան լիցի, զի ոչ ի սան նորա է յանցումն, առնուլ կամ ոչ: Եւ մարմնագեղծ է՝ մարմնով տարկանեալ, վէրս ունի անբժշկելի, եւ յայսմ իշխան է, կարծեալք բժշկութեանն, առնուլ կամ ոչ: Իսկ այլաւք սլատաճատաւք չէ ալման թողուլ զխտտեալն:

ԳՆՈՒՄ ԾՁԹ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱԽՏԱԺԵՏԱՅ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Կին կամ սյր ցաւագին, կամ ախտաժէտ, կամ արուագէտ, մի՛ իշխանցն ամուսնանալ եւ անարգել զպսակն արհնութեան: Եթէ ոք յանդգնի՝ զկէս ընչից իւրոց յեկեղեցին տացէ եւ երեք ամ ապաշխարեսցէ<sup>405</sup>:  
Եւ զայս յաղագս ծնկեցելոցն յախտս ասէ, զի նախ առողջասցին, կամ հոգեւորաց՝ յաղագս այնորիկ պարապեսցին, արուագիտաց եւ անասնագիտաց՝ զի մի՛ ի պատճառս այնորիկ զապաշխարութիւնն մոռասցին եւ զի միջոցաւք ժամանակաւ մաքրեսցին:

15

ԳՆՈՒՄ ԾՂ

ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՒՐԿԱՅ, ԲՈՐՈՏԱՅ, ԿԱՂԱՑ, ԿՈՒՐԱՅ, ԽԼԻՑ, ՀԱՄԵՐՑ ԱՄՈՒՍՆԱՆԱՂՈՅ ԵՒ ՈՁ

Եւ զայսոցիկ իղից այժմ զդատաստան՝ ամուսնանալ կամ ոչ: Ի կանոնաց յաղագս շնութեան<sup>406</sup> ուսաք, ուրկաց՝ եթէ ծնունդ նոցա նմանապէս ուրուի լինի, յաղագս այսորիկ արգելցին, զի մի՛ ախտն տարածեսցի ի ծնունդն:

20

Արգելցին եւ բորոտք, զի թէպէտ եւ ի բժշկաց ասի փոխիլ ախտից, յորոց հոտ է, եւ ի բորոտս ոչ լինի, զի ի յուրկոտոս յաղագս վիրաց լինի, եւ անդ վէր ոչ է, սակայն կանոնք փոխելի զախտն ցուցին: Եւ զի մի՛ ի ծնունդսն ախտն լիցի, արգելցին. եւ զի Աւրէնքն ոչ միայն յամուսնանալոյ, այլ եւ ի բանակէ եւս մերժէ<sup>407</sup>: Եւ թէ ոք զԱւրինացն նշանակ ասէ, սակայն ըստ մարմնոյ խտրութիւն էր, որպէս եւ այժմ յաղագս ասացելոյ պատճառիդ:

25

Իսկ կաղ, թէ չիցէ բնաւին լուծեալ, զի խափանումն իցէ կամ ամուսնութեան, եւ կամ արուեստի, կամ այլոց հարկաւորաց, ամուսնասցի. եւ այդ՝ առն, նմանապէս եւ կնոջ լիցի:

30

Իսկ կուրաց յերկոսին յաշան. կին՝ մի՛ ամուսնասցի, զի ոչ մանկանութիւն մարթ է լինել եւ ոչ այլ ինչ սպասաւորութիւն, իսկ այր՝ թէ ծուծկալ է, բարիոք է, ապա թէ քաւական է զկին եւ զտուն հոգալ, թէ

405 Կանոնք Բաղի Կեսարացոյ ՄԺ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157  
406 Տե՛ս Կանոնք Հարանց հետեւողաց ԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 106—107  
407 Տե՛ս Ղևո., ԺԳ, 46

ընչիք նախնեաց, թէ այլաբ պատճառաւք, ներելի է յաղագս այլոյ վտանգի:

Իսկ կին խուլ, թէ ուշիմ իցէ, եւ ոք հաւանեսցի առնուլ, եղիցի. նմանապէս եւ՝ այր:

5 Իսկ համրն, թէ այր, թէ կին, ընդ անատունս համարեալ է. մի՛ լիցի ամուսնանալ:

Ձայրոսիկ զգատումն ես ճշմարիտ կարծեմ: Եւ թէ այլ ոք, ուղիղ ունելով տեսութիւն, պարսաւանս այսմ գիցէ, անխուով եմ խորհրդով, զի եւ ոչ միոյ դատաստանի վճիռ հատանի լինել եւ կամ կանոնական հրա-

10 մանաց, որ յայտոսիկ ածի դատաստան, զնոյն դատաստանի ունելով զարութիւն, այլ ընդ մերոյն ընտրութեան եւ զկանոնացն երկրորդեցի: Զի թէ ընդդէմ մերն կարծեսցի՝ զսրբոցն պատուեալ զբան ի նոյն, ի նոցունց թողութիւն ինձ խնդրեսցիք, զի ոչ այնքան յանդուգն եմ, թէ զոր ոչ ըստ ներման եւ կամ յայլմէ առեալ զարութիւն համարձակէի դնել:

15 Եւ թէ ոք համարեսցի յանդուգն՝ համարեսցի, միայն զաւղտակարն ընտրելով զատեսցի, եւ ես իսկ զամ դճեա՝ ոչ պարսաւելով, այլ շնորհ ունելով եւ գովելով:

ԳՂՈՒՅՈ ՇՂԱ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՅԼԱԶԳ ԽԱԽՍԵՅՅԱԼ ԿԱՆԱՆՑ

20 Եթէ ումեք խաւսեալ է կին, եւ նախ քան զմտանել աղջկանն յեկեղեցին շար գործքն յայտնեցան, իշխան է այրն առնուլ եւ շառնուլ: Ապա թէ յեկեղեցի մտեալ իցէ, մի՛ իշխեսցէ արձակել, եւ եթէ արձակիցէ, այրի կոչեսցի եւ երեք ամ ասլաշխարեսցէ<sup>408</sup>:

Եւ յայլում գլխի հրամայէ զխաւսեալն թողուլ վասն պոռնկութեան<sup>409</sup>, եւ աստ յաղագս յեկեղեցի մտելոյն՝ ոչ: Սակայն եւ թէ որդիս ծնեալ է, իշխան լիցի թողուլ յաղագս պոռնկութեանն, այլ աստ յաղագս պատուելոյ զեկեղեցի ասէ: Ապա ուրեմն ոչ է պսակ արտաքոյ եկեղեցւոյ եղեալն: Եւ զի ոչ է ի տան առն, առաջի կայ զգաստանալն, ապա թէ ի նոյն իցէ վարքն, իշխան է այնուհետեւ թողուլ:

30 ԳՂՈՒՅՈ ՇՂԲ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՏՂԱՅՈՅ ՊՍԱԿԱՑ

Տղայոց պսակ մի՛ ոք իշխեսցէ դնել, մինչեւ ի շափ հասեալ՝ զհաճոյսն իւրեանց իմասցին, եւ թէ ոք յանդգնի՛ լուծցի ի քահանայութեանէն ու հարիւր դրամ տուգանս տացէ յեկեղեցին. եւ տղայն ի շափ հասեալ՝ ում եւ կամեսցի ամուսնասցի<sup>410</sup>:

<sup>408</sup> Կանոնք Բասողի Կեսարացւոյ ՄԺԱ, Կանոնագիրք շայոց, հ. Բ, էջ 157—158  
<sup>409</sup> ՏԵ՛Ս Կանոնք Բասողի Կեսարացւոյ ՄԺ, Կանոնագիրք շայոց, հ. Բ, էջ 157  
<sup>410</sup> Կանոնք Բասողի Կեսարացւոյ ՄԺԹ, Կանոնագիրք շայոց, հ. Բ, էջ 160—161

Զոր և յայլում կանոնի ասէ՝ ոչ պատկել ստանց զմիմեանս տեղա-  
 նեյոյ<sup>411</sup>, զի անյայտ է, թէ բնութի իսկ ոչ կամին ամուսնանալ և կամ ոչ  
 հաւանիլ միմեանց, հրամայէ շահել: Ապա թէ լիցի, և ի շափ հասեալ  
 ոչ կամի, անլտանդ առնէ յաղագս ակամայ իրին: Հաւանելի լիցի այս  
 5 դատաստան յեկեղեցի Աստուծոյ:

ԳՆՈՒՅԾ ԺՂԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ, ՈՐ ՄԻՈՅ ՄԱԻՐ ԿԱԹԱՄԲ ՍՆԵԱԼ ԻՅՆԵ

Հարց. Որ միոյ մար կաթամբ ոնեալ իցեն ատարբ ի միմեանց,  
 յորժամ ի շափ հասանեն, արժա՞ն է ամուսնանալ:  
 10 Պատասխանի. Չէ արժան, քանզի ծնողն և ստնտուն ընդ մի համար  
 են<sup>412</sup>,

ԳՆՈՒՅԾ ԺՂԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՓՈՒՆՈՂԱՅ ՉՍԱՀՄԱՆՍ

Հարց. Որ զսահմանս յափշտակէ զընկերին, ո՞րպիսի ինչ է:  
 15 Պատասխանի. Զոր գրեաց Մովսէս յԱրէնսն հրամանաւ Աստուծոյ՝  
 իջցեն անխօսն այն ի վերայ գլխոց նոցա<sup>413</sup>, և եզիցի նզովեալ ի կեանս և  
 ի մահ<sup>414</sup>,

Լուիցեն զայս յափշտակողք սահմանաց և զարհուրեսցին, զի դա-  
 տաստան աստուածային է: Եւ թէ լիցի հակառակութիւն ինչ անդաստա-  
 20 նաց, վկայիւք լուծցի, զի զայն հաւաստի կարծեմ լինել, քան բառնալ  
 խաչ և Աւետարան միոյ, զի բազում անգամ խաբէութիւն լինի, և զի  
 երդումն է այդմ արինակաւ, զոր ոչ հրամայեցաւ: Եւ թէ այդպէս կատա-  
 րի բան դատաստանի, մի բարձող խային լիցի վկայ, և մի՝ երդումն, և  
 25 եղև Երկու ըստ Աւրինացն<sup>415</sup>: Այլ զայս ոչ հրաման տալով ասեմք,  
 որպէս յառաջ իսկ գրեցաք յաղագս երդմանն<sup>416</sup>, այլ յայտ առնել կամե-  
 ցաք, թէ ոք զայտոսիկ առնէ՝ վճարեալ է իրք դատաստանին, որպէս ցու-  
 ցաւ<sup>417</sup>, թէ զերկու վկայի ունի զտեղի: Եւ թէ այս լիցի, զապաշխարու-  
 թիւն լցցէ, որպէս ցուցեալ է յերդման ճառին<sup>418</sup>:

411 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի Իէ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 382 և Կանոնք Ներսէսի և Ներշապհոյ ԻԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 487

412 Կանոնք առաքելոյն Թադէոսի Լ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 29

413 Տե՛ս Բ օրին., Իէ, 17, Նաև ԺԹ, 14

414 Կանոնք առաքելոյն Թադէոսի ԼԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 39

415 Տե՛ս Բ օրին., ԺԹ, 15 և հոգվ. ՃԸ

416 Տե՛ս Նախադրութիւն, գլուխ Ը

417 Տե՛ս հոգվ. ՃԷ, ՃԸ, ՃԹՁ

418 Տե՛ս Նախադրութիւն, գլուխ Ը

## ԳԼՈՒԽ ԾՂԵ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՆՈՂԱՆԻԻՑ

Եթէ որ զկին թողցէ՝ զորդեաց մայր, առանց բանի պոռնկութեան, կամ կախարդութեան, կամ թէ արատ ինչ շար ի մարմնի շիցէ, այլ թէ 5 այրն շնաբարոյ իցէ, այլում ահն եղեալ իցէ, դատաստան այս լիցի. զորդիան, եւ զկեանսն, եւ զտունն, եւ զհողն, եւ զըլուն եւ զամենայն ինչ բաժանեացեն հասարակաց եւ զկէսն աղջկանն տացեն<sup>(116)</sup>: Եւ թէ կամք են կնոջն զայրն ի տուն ածել յինքն, համարձակ ածցէ: Եւ զբաժինն կալցին եւ զարքունի հարկն ողջ արասցեն: Եւ այրն, որ եթող, եւթն ամ 10 ապաշխարեացէ եւ յեկեղեցին տուզանս տացեն. թէ ազատ է՝ երեքհարիւր դրամ, եւ թէ շինական՝ զանալից լիցի եւ հարիւր դրամ յեկեղեցի տուզանեացի<sup>(117)</sup>, փոխանակ զարհնութեամբ զամուսնութիւնն խոտելոյ: Ապա թէ մինչդեռ ի պայքարին եւ ի տուզանին իցեն, եւ կին որ յանդգնեալ կնաթողին կին լիցի, եւ ամ մի շիցէ անցեալ, յայտ եղեւ, թէ զառաջին 15 կինն նա ետ թողուլ, կալցեն զկինն եւ յարկանոցս տացեն, եւ զտարի մի աղասցէ զողեացն. թէ ազատ է եւ յարկանոց չերթայ՝ հարիւր դրամ տուզան տացէ զողեացն<sup>118</sup>:

Մի անգամ եւ երկիցս զայս եղաք դատաստան<sup>120</sup>. դարձեալ եւ այժմ, զի զանձն յընդդիմադրութենէ կանոնաց կարծեաց ազատիցեմ եւ զյաւել- 20 լուած իւրաքանչիւր հրամանացն դիցեմ, ըստ որում եւ յայսմ կանոնի հանդերձ այլաբն: Եւ զայրն ի տանէ մերժել եւ այլ ի ներքս ածել հրամայէ, որ է առաւելութիւն սաստի:

## ԳԼՈՒԽ ԾՂԶ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿՆՈՂ ԱՄՈՅ

Եթէ կին որ արար, եւ ամուլ պատահեաց, եւ այրն հանցէ վասն ամուլութեանն, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տունն՝ թէ աղախին, եթէ անասուն, եթէ հանդերձ, եթէ արծաթ, առնուլ իշխեսցէ եւ զնալ: Եւ թէ քան զամուլութիւնն այլ ինչ արատ շուրջ է ի կինն, տուզան եւս տացէ կնոջն վասն անարգանացն, եթէ ազատ է՝ հազար եւ երկերիւր դրամ, եւ 30 թէ շինական՝ վեցհարիւր դրամ: Ապա թէ մինչդեռ ի դատաստանին եւ ի տուզանին իցեն, եւ ամ մի ի վերայ շիցէ անցեալ, եւ որ ի կանանց յանդգնեացի եւ առն կին լիցի, կալցեն զկինն եւ յարկանոցս տացեն, քանզի յայտ եղեւ, թէ հանելոյ կնոջն պատճառ նա եղեւ, եւ տարի մի աղասցէ զողեացն եւ յաղախնութեան կացցէ, եւ յեկեղեցի հարիւր դրամ 35 տուզան կալցեն, փոխանակ զի բուն ամուսնութիւնն վասն նորա խոտեցաւ. ապա թէ ազատ է եւ ի գողնոց չերթայ, հարիւր դրամ տացէ զողեացն: Ապա թէ առնն յառաջագոյն խորհուրդ եղեալ է, թէ՛ զիմն թողում եւ զքեզ առնում, կամ պոռնկութեամբ խանձական լեալ իցէ, հարիւր դրամ

<sup>119</sup> Կանոնք Շահապիվանի Դ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 435—436

<sup>120</sup> Տե՛ս հոդվ. Ժ, ԺԷ, Ը, ԺԽԵ, ԺԽԶ, ԺՂԱ

- այրն տուգան տացէ յեկեղեցին, և ասպաշխարութիւն սուն՝ հրեք ամ  
 րնդ ունկնդիրսն կացցէ և մի ամ՝ րնդ ձեռամբ և մտցէ յեկեղեցին: Եւ որ  
 զորդոց մայր թողցէ, առանց պոռնկութեան կամ այլ արատույ, առն և և  
 կնոջ պատուհաս տուղան և ասպաշխարութիւն կանոն այլ կացցէ<sup>421</sup>:
- 5 Եւ որքան կար էր և ի դէպ, զդատաստան այսմ եղաք և մեք<sup>422</sup>,  
 և զորս ի կանոնսն՝ և զայն և աս դրոշմեցաք, զի յիրաքանչիւրոցն զար-  
 ժանն դիւրին լիցի դատաւորաց տալ զվիճիոն ուղղապէս: Եւ զի մեք  
 շափաւորապէս զդատաստանն եղաք յիրաքանչիւրսն և զասպաշխարու-  
 թիւն ի կանոնս թողաք: Եւ զայս այժմ զեկուցաք, զի գիտասցես, թէ  
 10 յամենայն դատաստանս, ուր ասպաշխարութեան պէտք են, ի կանոնս աս-  
 պաստան թողաք:

## ԳՆՈՒՄ ԾՂԷ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԿԱՆԱՆՑ, ՈՐՔ ԶԱՐՍ ԻՒՐԵԱՆՑ ԹՈՂՈՒՆ

- Եթէ կին ոք յառնէ ելանէ, կալցեն և անդրէն յայրն իւր տայցեն,  
 15 և մանաւանդ զոր վարձանաւք իցէ վարձեալ և ոչ բողաբար, թէպէտ և  
 վաճառիցէ, թէպէտ և յաղախութիւն կալցի, թէ կամք իցեն՝ հոգեւոր  
 և բարի խրատու և սիրով կալցի: Ապա թէ այրն շարաբարոյ իցէ և  
 կամ պոռնիկ, կամ հանգանակսզ և արբեցող, և կամ այլ ինչ խեղական,  
 գանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն և հնազանդեցուցեն զերկուսե-  
 20 անն. ապա թէ ազատ է, տուղանաւք և խրատու զայրն ի կարգ ածցեն:  
 Ապա թէ դիւափոխի այրն, կինն պաշտեսցէ զնա<sup>423</sup>:

- Եթէ որպիսի պատճառաւ կինն ելցէ յառնէ և թէ շեղցէ, և այդ  
 նշանակեալ է մեք<sup>424</sup> զիջմամբ յազազս երկիւզի մեծագոյն վնասու: Նաև  
 կանոնական հրամանաւ յաժարեցաք և այժմ զայս իսկ զարբոց դնել  
 25 զբան, զի զանզգամ խրատել հրամայէ զկին և զայր:

Եւ զի յայտ արասցուք, թէ կամք մեր ոչ հակառակն կամի կանոնաց,  
 այլ թէ կամք լիցի դատաւորաց այլոց առնուլ ինչ ի մերոցն՝ առցէ, ապա  
 թէ ոչ՝ կանոնք հաստատուն կացցէ:

## ԳՆՈՒՄ ԾՂԸ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՌԵՒԱՆԳԱՑ

Որ առեւանգս առնեն, կալցեն զկինն և անդրէն ցհայր իւր և  
 ցմայր իւր տայցեն. և տուգան տայցեն փոխանակ անարգանացն, թէ  
 ազատ է՝ հազար և երկերիւր դրամ, թէ շինական է՝ վեցհարիւր: Եւ որք  
 հրոս երթեալ էին և ազնականք սուտ փեսային, առ այրն հարիւր դրամ

<sup>421</sup> Կանոնք Շահապիվանի Ե, վերջում մի բառի տարբերութեամբ, Կանոնագիրք Հայոց, Կ.  
 Ա, էջ 436—438

<sup>422</sup> Տե՛ս հոդվ. ԺԱ, ՃՁԲ

<sup>423</sup> Կանոնք Շահապիվանի Զ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 438

<sup>424</sup> Տե՛ս հոդվ. ԺԲ

տուգանան տայցեն. եւ զհրոսին դրամն զկէսն յեկեղեցին տայցեն եւ զկէսն՝ կարատելոց: Ապա թէ սուտ փեսայն ընդ սղջկանն պոռնկեցաւ առանց պսակ պնելոյ, յեկեղեցի տուգան կայցին հարիւր դրամ, զի զպսակն արհնութեան անարկեաց, եւ երեք ամ յապաշխարութեան կացցէ: Ապա թէ երիցու ուրուք զաղա պսակ իցէ եղեալ առանց հարս եւ մար աղջկանն, երէցն զքահանայութիւնն շիշխէ պաշտել, եւ հարիւր դրամ տուգան կայցեն եւ կարատելոց բաշխեսցեն, եւ պսակն, զոր եդ, անվաւեր լիցի: Ապա թէ յետ այսր խոտվութեան եւ տուգանաց դարձեալ ի հաւանութիւն գան կամաւք աղջկանն եւ ծնողացն, եւ յառաջ պոռնկեալ են, պսակ մի՛ արհնեսցի, այլ իբրեւ երկակին՝ ուռ տեառնազրեալ դիցեն ի զուլս. ապա թէ կուսանք կացեալ են, ըստ արինին արհնեսցի: Եթէ ազատ, եթէ շինական՝ կանոն այդ կացցէ<sup>425</sup>:

Թէպէտ եւ այս եղեալ է դատաստան ըստ զանազանութեան<sup>426</sup>, այլ աստ յոյժ լիով կարգեցաւ, վասն որոյ յաւժարեցաք եւ զայս եւս զրել, զի անտարակոյս լիցի դատաւորաց այդոցիկ պատահումն, եւ զտուգանսն ըստ ժամանակի եւ ըստ կարի համեմատելով արասցեն:

Եւ ուսցին այժմու եպիսկոպոսունք, զի տուգանք պոռնկի յաղքատս հրամայի: Եւ այդոցիկ եւ այլոց զանազանութիւն է, զոր ինքեանց այժմու առնուն պատատրք, որք են եպիսկոպոսք, յորոց զարհուրիլ եւ խորշիլ պարտ էր, զի յաղադս քաւելոյ զյանցանս լինի, եւ մնան այժմ անքաւելի:

ԳՂՈՒԹ ԾՂԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՒՅԳ ԵՐԻՅԱՆՑ

Քահանայք զահասիրութեամբ մի՛ հակառակեսցին ընդ միմեանս, զի զոր շնորհն Աստուծոյ ընտրեսց նախ ի քահանայութիւն՝ նա է նախագահ յեկեղեցուջն<sup>427</sup>:

Եւ զայս ասէ՝ որք կամին զառաջին պատին: Եւ ուղիղ դատաստանաւ է, որ առաջին աւժաւ՝ առաջին լինել, եթէ իցէ յառաջադէմ, ապա թէ չիցէ՝ զոր ընտրեն այլքն, կամաւք եպիսկոպոսին առաջին կացուսցեն, որպէս զի բարեզարդութեամբ լցցէ զեկեղեցին, մանաւանդ թէ հիւրասիրութեամբ վկայեալ իցէ:

ԳՂՈՒԹ Մ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՄՏԻՑ ԺՈՂՈՎՐԿԵԱՆ

Եւ ժողովրդականք մի՛ հրապուրեսցին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկեղեցույ, զի պատճառ խոտվութեան բերէ, այլ զպատուս եւ ըզմուտս ժողովրդականքն միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուսցեն ամենայն յաւժարութեամբ անխափան՝ եւ մի՛ ըստ դասուց բաժին արաս-

<sup>425</sup> Կանոնք Շահապիվանի է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 439—440  
<sup>426</sup> Տե՛ս հոդվ. ԾԳ  
<sup>427</sup> Կանոնք Ներսէսի եւ Ներշապէոյ ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 482

ցեն եւ երգոց, որ եղև վնաս: Եւ քահանայիցն առեալ ի սրբոյ եկեղեցոյն՝  
 բաժանեսցին կարգաւորաբար, որպէս եւ արէնն է. զլիաւոր քահանա-  
 յիցն՝ երկու մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն մէն՝ երկու մա-  
 սունս, սարկաւազունքն՝ մի մի մասն, զպիրքն՝ կէս մասն, եւ այլի կա-  
 նայքն, թէ իցեն պարկեշտք՝ մի մասն<sup>(118)</sup>, առանց ամենայն հակաուկու-  
 թեան: Ապա թէ իցէ ոք, որ հակառակիցի եւ առնիցէ խոռվութիւն, այն-  
 պիսին դատապարտեալ լիցի յիւր կարգէն, եւ ընկերքն իւր մի՛ իշխեսցեն  
 ընդ այնպիսումն հաղորդիլ, եւ ոչ ժողովրդականքն առ քահանայս ունել  
 զնոսա<sup>428</sup>:

10 **ԳՂՈՒՅ ՄԱ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՍՊԱՍՅԱՌՈՐԵԼՈՅ**

Պաշտան եւ պատարազիք եւ սպասք սրբոյ եկեղեցոյն ի զլիաւոր  
 քահանային տանն եղիցին, որպէս յառաջագոյն կարգեալ է<sup>429</sup>: Գլխաւոր  
 քահանայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողուլ եւ գործոյ տանն սյարապել,  
 15 այլ մշտնջենաւորի սուրբ եկեղեցոյն կացցէ, զի զպաշտանն եւ զաղաւթ-  
 սքն տուրնջեան եւ գիշերոյ ժամուցն եւ գտեսչութիւն ժողովրդեանն մի՛  
 խափանեսցէ: Իսկ այլ ընկերքն զամառն փոխանակաւ կացցեն ընդ նմա  
 անպղերգաբար: Ապա թէ իցէ ոք, որ սխալիցէ ի պաշտամանէն պղերգու-  
 թեամբ կամ երկրական հոգովք, ի մտիցն մի՛ իշխեսցէ մասն առնուլ:  
 20 Քահանայքն միակամ լիցին յաւրհանելն միաբանութեամբ զժողովուրդն եւ  
 որոշել ի սրբոյ եկեղեցոյ<sup>430</sup>:

Բարեկարգապէս եցոյց զդատաստան հասոյից եւ զսպասաւորութիւն  
 քահանայից աստուածային եւ սուրբ կանոնս, եթէ ոք կամեսցի կալ ճրշ-  
 մարտութեամբ ի գործ քահանայութեան, ապա թէ ոչ՝ անպարտ լիցին  
 25 դատաստանք եկեղեցոյ, եւ զպարտաւորութիւնն առցեն հեղագցեալքն:

**ԳՂՈՒՅ ՄԲ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՆԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՅՅԱՅ**

Կամ եղև ինձ եւ յաղագս այսոցիկ սակաւ ինչ գրել, զի ոչ փոքր ինչ  
 հակառակութիւն ի մեր իսկ լինի յաշխարհս յաղագս այսոցիկ  
 30 աշխարհական քահանայից եւ վանաց: Սակայն ընդ միտ ածի  
 եւ յաղագս կանոնաց մեծին Սահակայ<sup>431</sup>, եթէ որքան գեղեցիկ  
 եւ ըստ կարգի բաժանէ զվանաց եւ զեկեղեցոյ, որ յաշխարհի, զհասս եւ  
 զտանս, եւ այժմ շիրտթեալ եւ ապականեալ է այն ամենայն: Վասն այնո-  
 րիկ լռեցաք յասոցիկ դատաստանաց, զի թէ ի սրբոյն ոչ պատկառեն ի

428 Կանոնք Ներսէսի եւ Ներշապուոյ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 483—484  
 429 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի ժԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 378  
 430 Կանոնք Ներսէսի եւ Ներշապուոյ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 484  
 431 Կանոնք Սահակայ Պարթևի ԼԶ—ԽԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 386—400

բանից, զի ա՛րդ եւ ի մերոցս: Եւ եթէ վասն սորին դատաստանի կամի  
 ոք, զի ուղղիցէ, այնորիւք արժան է վարիլ եւ ոչ այլազգ, զի թէ կայր  
 կարծիս՝ այժմու դրեցելովքս դատել, ոչ ի դէպ էր մեզ յանդգնիլ, թող  
 թէ բնաւին ոչ է կարծիս: Ըստ այսմ կարծեմ եւ յամենայն ի մեր աշխա-  
 5 տութիւնս:

ԳԼՈՒԽ ՄԳ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՅԻՇԱՏԱԿԻ ՆՆՋԵՑՆԵԼՈՅ

Ի յիշատակս վախճանելոցն յընտանեաց նոցա, որ ինչ ըստ կարգի  
 արինաց քրիստոնէութեան, զոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխի-  
 10 թարութիւն հոգւոց նոցա՝ կամ զքառասունս եւ զապասս ի հանգիստ  
 նոցա, կամ զտուրս, զոր ինչ եւ հրամայիցէ վախճանեալն հոգւոյ իւրոյ,  
 մի՛ իշխեսցեն յայլ եկեղեցիս կամ ի կրանաւորս տալ, այլ անդէն զեղջն  
 եկեղեցւոյն երիցուն լիցին եւ վանաց՝ այնպիսեաց հասք, եւ իւրեանց  
 տան երիցուն, ուր շնորհաւք սուրբ աւագանին վերստին եղի ծնեալ եւ  
 15 պսակեալ եւ կենաց հացին կերակրեալ, ուստի եւ յղարկեալ առ Աստու-  
 ած երթայ: Իսկ յորժամ հարկաւորն յիւրում եկեղեցւոջն կատարեալ լինի  
 եւ կամեսցի աւելորդս ինչ առնել յայլ եկեղեցիս, կամ ի կրանաւորս, կամ  
 յաղքատս, ապա լիցի համարձակ առնել ինչ<sup>432</sup>:

Յոյժ ուղիղ է այս դատաստան՝ յետ զհարկաւորն յիւրն առնելոյ  
 20 եկեղեցւոջ, ապա յայլս կամ ի կրանաւորս տալ: Կամ թէ պատահի  
 յաղագս անձեռնհասութեան<sup>(119)</sup> եւ կամ յաղագս յուսոյ ի հեռաւորս եւ  
 զհարկաւորն տալ հաւանութեամբ իւր երիցուն եւ հրամանաւ իւր վանացն  
 առաջնորդի, զնոսա ըստ կարի շահելով, ներելի են եւ այնքթիկ, յորժամ  
 25 չիցէ յաղագս զիւրն արհամարհելոյ: Ապա թէ ոչ կամեսցին նորա, անդէն  
 որքան կարեն՝ արասցեն. եւ այդ անհակառակ է:

ԳԼՈՒԽ ՄԳ

ՅԱՂԱԿՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԲԱՆԱԴՐԵԼՈՅ

Ժողովրդական ոք, որ յաղագս պէսպէս սխալանաց ինչ բանադրեալ  
 լինին յեպիսկոպոսաց, թէ մեռեալ է՝ թող չթաղէ զնա քահանայն, եւ ոչ  
 30 երեխայ՝ մկրտել: Եւ թէ դէպ լիցի երեխայ հասանել այնպիսւոյն կամ  
 մեռել ոք<sup>(120)</sup>, քահանայն մկրտեսցէ զերեխայն եւ զմեռեալն թաղեսցէ  
 եւ զայլ կարգս բանին պնդութեամբ պահեսցէ անլոյժ<sup>433</sup>:

Զինքն իսկ զբանադրեալն հրամայէ չթաղել, թէ մեռանի, եւ թէ  
 երեխայ է՝ չմկրտել, այլ զտան նորա մեռեալ թաղել եւ զերեխայ տան  
 35 նորա մկրտել: Եւ երկուցն արինադրէ եպիսկոպոսաց, զի մի՛ զբոլոր  
 տունն ընդ բանիւ արասցեն, եւ կամ քահանայն անգիտաբար վասն մի-

432 Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի (Պարտաի) ժԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 14

433 Կանոնք Պարտաի ժԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 15

ոյն բանադրանաց զայլսն զրկիցէ: Նաև ոչ քահանայի արէն է յաղագս միոյն զամենեւեան, որ ի տան, ընդ բանիւ առնել, եւ այլ քահանայ, թէ պատահի այդպիսի, թաղեսցէ եւ մկրտեսցէ, բայց զայլ սահման պահեսցէ:

- 5 Եւ թէ առաւելութեամբ իցէ բանադրանքն, աղաչանաբ յայտ ածելի է, զի մի՛ այլքն ընդ բանիւ կացցեն վասն միոյ մեղուցելոյն:

#### ԳՆՈՒՆ ՄԵ

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՓԱԿՈՂԱՅ ԶԴՐՈՒՆՍՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ

- 10 Քորեպիսկոպոստուք մի՛ իշխեսցեն զդուռն եկեղեցւոյ փակել եւ խափանել զաստուածային աղաւթիցն ժամ վասն արբընթրեաց կամ վասն միոյ յանցանաց, բայց զպարտաւորս ընթրեացն եւ զմեղուցելոցն անձինս բանադրեսցեն<sup>434</sup>:

- 15 Կարծիս տայ, թէ վասն այլոյ յանցանաց հրամայէ փակել: Յայտ է, թէ ոչ վասն միոյ յանցանաց փակել ի դէպ է գեկեղեցիս եւ խափան առնել սպասաւորութեան, այլ սպասաւորացն սաստել յանցաւորաց, թէ փակել տայցեն զեկեղեցիս, բայց թէ պատահի հակառակ շինել եւ առանց հրամանի:

Զսոյն սաստ զնէ եւ գեղջաւագաց՝ հանդերձ նգովիւր<sup>435</sup>:

#### ԳՆՈՒՆ ՄԶ

### 20 ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳԵՐԵՆՈՅ ԱՐԱՆՅ ԵՒ ԿԱՆՅԱՆՅ

- Յորժամ վասն մեղաց մերոց աշխարհս գերեցաւ, բագում արք եւ կանայք, որ ի գերութեան էին, եւ նոցա ամուսինքն՝ աստ, առանց վարդապետաց հրամանի կանայս առին, եւ արանց եղև: Վասն այնպիսեացն սահմանեցաք այսպէս: Զի թէ յառաջ քան գեւթն ամն<sup>(121)</sup> ոք յանդգնեցաւ, մինչ զուգակիցքն ի գերութեան էին, եւ այլ առին, այնպիսեացն ի պոռնկութիւն համարեսցի, եւ զան եւ պատուհաս կրեսցեն, եւ յընչից եւ ի ստացուածոցն առնուլ եւ յաղքատս մատակարարել, եւ զատուցեն ի միմեանց, եւ ապաշխարեսցեն գեւթն ամ: Եւ յետ եւթն ամին թէ զառնան ամուսինքն ի գերութենէ, անդրէն դարձցին առ իւրաքանչիւր ամուսինս, ապա թէ ոչ՝ յետ վերագրեալ ապաշխարութեանն կալցին զոր առինն: Եւ նոքա, որք զառնանն յետ եւթն ամին, արհնութեամբ այլ կանայս առցեն, եւ այլ արանց լիցին, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի: Իսկ որ համբերեացն ցեւթն ամն, յետ եւթն ամին այլ առցէ՝ առանց տուգանի եւ պատուհասի, եւ կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի<sup>436</sup>: Նոյնպէս եւ որ յետ եւթն ամին զառնան ի գերութենէ, եթէ կամք իցեն՝ այլ կին

434 Կանոնք Պարտաի ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 16

435 Տե՛ս նոյն կանոնը:

436 Կանոնք Գունայ է, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 205—206

առցեն, եւ այլ առն լիցին, եւ նոյնպէս կրկնուցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի:

2 Զայս իսկ առեալ է վերջնոյ կանոնի զհրաման, զոր եւ մեր շախարատրապէս ըստ զանազանութեան եղաք եւ ի մերն<sup>437</sup>, եւ զսոյն աստ յաւելաք, զի աստ ամենակատար իսկ է այս դատաստան: Եւ թէ ինչ ի մերն հակառակ կարծիցի, այսոքիւք վարելով՝ անբամբաս մեք մնասցուք, զի խնդիր մեր է միայն ճշմարիտն լինել յեկեղեցիս դատաստան:

ԳՆՈՒՄ ՄԷ

ՅԱՂԱԴՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ

10 Եթէ այր ոք կամ կին ի սրբոյ եկեղեցւոյ անորդի մեղցի, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն ինչ, եւ անցեալ ըստ ինքն՝ ի մերձաւորաց շիշխէ ոք հեռացուցանել զհող, եւ զըլուր, եւ զժողովուրդ: Եւ ի մերձաւորսն, եթէ բազումք են, եւ կամի զմի ոք որդի առնել, իշխան է առնել՝ որ զնա հեշտ ոք կալցի, բայց հեռաւորի մի տացէ: Բայց զշարժուն ինչ եւ զհրիտակ, որում իշխան է, թէ ատարի տայ, թէ որ ոք զնա հեշտ պաշտիցէ, եւ եթէ կամի վաճառել եւ կամ հոգւոյ տալ, իշխան լիցի: Իսկ եթէ ոք յորդեգրացն ի քահանայութիւն ձեռնադրի կամ զեղջն վկայութեամբ կամ յանձնէ, որում շէր անկ քահանայութիւնն, զկէս շնորհին կալցի յաղագս ձեռնադրութեանն յիւր

20 կենդանութեան՝ անհարկ եւ անբեկար<sup>(122)</sup>, եւ զկէս շնորհին զհող եւ զըլուր բաւանդակ սրբոյ եկեղեցւոյն յանկաւորսն թողցէ: Եւ անցեալ ըստ քահանայն եւ ըստ կին նորա՝ ամենայն շնորհն իսկ բաւանդակ յանկաւորսն Լրթիցէ, զի շվայելէ զսրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւնն յանկաւորացն հեռացուցանել եւ տալ հեռաւորաց եւ ատարաց: Բայց եթէ անկաւորացն

25 կամաւորութեամբ կամ հաճելով տալ՝ թողացուցէ վարդապետն, եւ զայն՝ մի շինականի ումեք, այլ սրբոյ եկեղեցւոյն յուխտէ, թէպէտ եւ հեռաւոր իցէ՝ իշխան լիցի մերձաւորեցուցիչն մերձաւորեցուցանել: Ապա եթէ զիւղ զիւլի, որ իրիցուն ի ժառանգութիւն բարձեալ իցէ, ժառանգութիւն սրբոյ աթոռոյն է, զոր վարդապետն կամի՝ ժառանգեցուցէ, իշխանութիւն է նմա: Եւ այս սահմանադրութիւն Հերակղայ եւ Խոսրովայ ժամանակաւք եւ այսր լիցի: Բայց յառաջ քան զնոցա ժամանակն որ ինչ լեալ է, մի՛ շարժեսցի, զի շգիտէ ինչ հաստատութեամբ, որպէս կալեալ է՝ կալցին: Բայց նոցա ժամանակացն եւ յայսմ հետէ եւ յաւիտեան այս զիր հաստատուն կացցէ եւ մի՛ ոք անցցէ ըստ այսմ սահմանա<sup>438</sup>:

30 35 Տեսցուք եւ զայս հոգեւոր դատաստան, զի իշխան առնէ՞ իւրոցն տալ ում եւ կամի, իսկ զեկեղեցւոյն շհեռացուցանել յանկաւորացն: Եւ թէ պատահի ի հեռաւոր անկաւորաց եւ կամ յատարաց, զոր որդեգիր արար, քահանայանալ, զկնի իւր ի մերձաւոր յանկաւորսն ասէ թողու. զի թէ պատահի ի նոցանէ քահանայանալ՝ կալցին, ապա թէ ոչ՝ յատարս տալ իշխան լիցի առաջնորդն<sup>(123)</sup>, սակայն ի տանէ քահանայութեան իցէ՝ զոր ժառանգ առնեն:

437 Տե՛ս հողք. Ը և ԺԴ

438 Կանոնք Դունայ Ը, Կանոնադիրք Հայոց, հ. Բ, էջ 206—209

Յայտոսիկ զայս յաւելույ ի դէպ է, զի ոչ միայն յորժամ ժտտանգա-  
 ւորքն բարձեալ լինին յեկեղեցոյն՝ սուրբ աթոռոյն է, այլ թէ սլատահին  
 անկաւորքն անարժան լինել, թէ քահանայք իցեն եւ թէ շիցեն, իշխան  
 է զարժանաւորսն ի քահանայից կացուցանել: Եւ այդ բոս ճշմարտու-  
 5 թեան է:

ՊԼՈՒՏ ՄԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՏԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ

Ազատք յորժամ զիրեանց զերդ եւ զմարդ բաժանեն, յուրվք շարակ-  
 նութեամբ առնեն եւ զմանկունս եկեղեցւոյ ըզձանան ծառայս առնել եւ  
 10 ի ստրկութեան ունել, որ շվայելէ քրիստոնէից: Զի երիցս երանելւոյն  
 սրբոյն Գրիգորի եւ երանելւոյն Տրդատայ թագաւորի զսրբոյ եկեղեցւոյ  
 ժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է, եւ ազատ էին  
 սրբոյ եկեղեցւոյն հողովն եւ ջրովն: Եւ ի Պարսից թագաւորութեան ժամա-  
 նակս թէպէտ եւ ի բեկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է եւ շէ  
 15 խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկսն տային յարքունիսն: Արդ,  
 եթէ ոք ազահութեամբ ազամբ հայեցի եւ զազատ մանկունս եկեղեցւոյ  
 ի բաժին, եւ ի վիճակ, եւ ի ծառայութիւն արկանիցէ, այնպիսին ի մեր  
 ժողովոյս աւրհնութենէ հեռի եղիցի, եւ մի՛ եղիցի իշխանութիւն վարդա-  
 պետին եւ քահանայից զայնպիսւոյն զպատարագն աւրհնել: Այլ եւ ո-  
 20 մանք զմզիայի ախտն ախտանան<sup>439</sup> եւ ըստ իւրաքանչիւր կամաց, եւ  
 ըստ իւրաքանչիւր վրմի<sup>(124)</sup> բաժանեն զշնորհս սրբոյ եկեղեցւոյն եւ որ-  
 պէս կամին մատակարարեն, եւ վարդապետին հրամանի եւ իրաւանց  
 ունկն շննեն. այնպիսիքն նոյնպէս ի մեր աւրհնութենէն հեռի եղիցին,  
 որք յանդգնին զայնպիսի ինչ առնել<sup>440</sup>:  
 25 Լուիցեն ազատք, որք ի Վիրս, զի զայսպիսի լուծին զուղիղ եւ զնա-  
 խազոյն կանոնական հրաման:

ՊԼՈՒՏ ՄԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՆԱՅ

Ոմանք տանուտեարք եւ ազատք ի վանաց վերայ իշխանութիւն առ-  
 30 նեն եւ վանական՝ զոր կամին հանեն եւ զոր կամին՝ նստուցանեն վասն  
 ժլատութեան: Այլ եւ ոմանք իսկ ի վանս նստին եւ ըստ գրեցելումն, որպէս  
 թէ շունիցին արգեաւք տուն հաց ուտելոյ, որ զեկեղեցեաւն Աստուծոյ  
 արհամարհեն անպատկառելի անամաւթութեամբ: Այնպիսիքն եթէ  
 յուզողութիւն գան եւ յեպիսկոպոսն թողուն, որ տեսչութիւն առնէ սրբոցն  
 35 լուսոյ եւ պաշտաման եւ զպրոցս կարգաւորելոյ, այնպիսեացն անցելոց  
 մեղացն թողութիւն շնորհեալ եղիցի, եւ ի ժողովոյս աւրհնեալ եղիցին:

439 Տե՛ս Բ Մնացորդաց, ԻԶ  
 440 Կանոնք Դուեայ Թ, Կանոնագիրք Հայոց, Կ. Բ, էջ 208—210

Սև ժողովրդեամբ, եւ պաշարերովեամբ, եւ ուխտադրութեամբ երթիցեն եւ աղաւթիցեն ի վանորայն, որպէս պարսւ է յիւրեանց հարանց վաստակս եւ յազաւթանոցս, բայց ժլատանալ եւ հանել ինչ մի՛ իշխեսցեն: Ապա եթէ հակառակ ինչ կայցեն հրամանի հարանցն եւ մեր պատուիրանիդ, 5 այնպիսիքն ի մեր արհնութենէ հեռի եղիցին եւ զհատուցումն ի սրբոց վկայիցն ընկալցին<sup>441</sup>:

Որպէս եւ գրեալ է, թէ արասցեն վրէժխնդրութիւն յազգս եւ յանդիմանութիւն՝ ի ժողովուրդս<sup>442</sup>:

### Գ Լ Ո Ւ Ն Մ Ժ

10

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՏԿԱՐԱՆՈՅԱՅ

Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն եւ հարկս, եւ նշեմս, եւ կերակուրս, եւ ըմպելիս պահանջեն բռնութեամբ, եւ զիւրեանց զործակալս ի վերայ գումարեն, եւ կոռով<sup>(125)</sup> եւ պահակութեամբ նեղեն, եւ զողորմելի եղբարսն շարշարեն անխղճաբար, որում մանաւանդ զարման տանել առաւել պիտոյ է, եւ ամենայն քրիստոնէից պատել զամենայն վէրս նոցա<sup>443</sup>:

Արդ, եթէ ոք յայսմ հետէ յանդգնի զայսպիսի ինչ առնել ի տկարանոցս, անողորմ դատաստանաւ դատելոց են այնոքիկ, որք ոչ առնեն զողորմութիւն:

20

### Գ Լ Ո Ւ Ն Մ Ժ Ա

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԻԶԱԽԱՆԱՅ Ի ՎԱՆՈՐԱՅՍ

Ոմանք ազատք եւ հեծեսլք, որ ի գեւղորայս հասանեն, որոց բնաւ ի վանսն տեղի լինի, ի գեւղ շիջանեն, այլ ոմանք կանամբք եւ նաժշտաւք ի վանսն իջանեն եւ այնպէս կոխեն զկանոն հարցն, եւ զուսանաւք եւ վարձակաւք ի սրբութեանց եւ ի պաշտամանց ի տունն ընթրիս ուտեն, որ սոսկալի է քրիստոնէից լսել, թող թէ տեսանել: Արդ, զվերադրեալ կանոնսդ ի լսելիս այնպիսեացն խաւսեցին վանաց երիցունքն. եթէ լինին լսող եւ ի շինին աւթին՝ բարի է, ապա թէ ի նմին անհաւանութեան կացցեն՝ այնպիսիքն նոյնպէս ի մեր արհնութենէ հեռի եղիցին եւ զվրէժխնդրութիւնն ի սրբոցն ընկալցին: Զի վանքդ անուն հանգստարան սրբոց են եւ աւթեվանք եպիսկոպոսաց, եւ քահանայից, եւ աբեղայից, եւ աղքատաց: Եւ ազատք եւ հեծեալք, մինչ կոշելով կոշին արք եւ կանայք, մեծաւ երկհուրիւ պարտ է աղաւթել եւ աղաւթից եւ պաշտաման հաղորդել, որպէս վայել է ի տան Աստուծոյ<sup>444</sup>:

35 Այսոքիկ արինադրական դատաստան յայտնի է ամենեցուն:

<sup>441</sup> Կանոնք Գունայ Ժ, Կանոնապիրք Հայոց, հ. Բ, էջ 210—211

<sup>442</sup> Տէ՛ս Միքիէ, Ե, 14 և այլուր:

<sup>443</sup> Կանոնք Գունայ ԺԱ, Կանոնադիրք Հայոց, հ. Բ, էջ 211

<sup>444</sup> Կանոնք Գունայ ԺԲ, Կանոնադիրք Հայոց, հ. Բ, էջ 211—213

## ԳՂՈՒՆՈ ՄԺԲ

## ՅԱՂԱԳՄ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԻՈՆՈՒԹԵԱՆ ԱԶԳԱԿԱՆԱՅ

- 5 Զի որպէս առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եզել զրել ի նոյն  
 ութուտասներորդի ամի<sup>(126)</sup> տէրութեանն խոսորովայ՝ որդույ Որմզդի, ըզ-  
 նոյն եւ առ քո սրբութիւնդ հարկեցաք զրել՝ պինդ ունել զպատուէր Հոդ-  
 տյն Սրբոյ ի ձեռն Աւրինաց եւ Մարգարէից, զորս առաքելական կանոնա-  
 գրութեամբ հաստատեցին սուրբ եւ ուղղափառ վարդապետքն: Բայց մա-  
 նաւանդ առաւելագոյն զգուշանալ յանիծեալ յամուսնութենէ մերձաւո-  
 10 րաց, որ ազգաւ մերձաւորութիւն է, եւ կործանին յայնքան շարիս: Քանզի  
 ոչ միայն զխառնակութիւն ազգահամարութեան զործեն յայնպիսիքն,  
 այլ եւ զազահութիւն, զոր արմատ ամենայն շարեաց ասաց առաքեալն<sup>445</sup>,  
 զհեթանոս արէնսն անաստուածն լինել, որպէս եւ նախամարդարէիւն  
 ծանախացոյց ամենայն աստուածապաշտաց. եւ բիւր եւ այլ շարիս,  
 15 որպէս եւ իմաստնոց յայտնի է: Զի թէ աստուածային բերանն անիծանէ  
 զմարդիկ, որ փոխեն զընկերի եղեալ սահմանս<sup>446</sup>, իսկ զԱրարչին  
 բոլորեցուն զսահմանադրութիւն եւ զպատուէր առ ոտն հարու եւ  
 արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ճանաչելի է, այլ վասն  
 նոցա եւ այլք: Եւ յայտ անտի է, զի ի հնումն, զորս ըստ էլից,  
 20 Աստուած այնպէս ասաց, թէ ըստ կրանից ազգացն Եղիպտացոց եւ  
 Քանանացոցն մի՛ երթայցէք, ես եմ ՏէրԱստուած ձեր<sup>447</sup>: Եւ ի կարգ ար-  
 կեալ՝ զայսպիսի անկողինս կոչեաց խայտուականաց առականս<sup>448</sup>, որով  
 ամպարիշտքն վարէին: Հրաժարեցոյց յառաջին ազգէն եւ ապա՝ յերկրոր-  
 25 ղէն եւ հասեալ յայն, զոր մեք խորթս կոչեմք, եւ ասէ՛ մի յայտներ, զի  
 համմարեալս<sup>(127)</sup> քոյր քո է: Եւ ապա յետ ոչ սակաւ քանից եւս զարմանա-  
 լոյ արժանի իմն նշանակէ. քանզի իբր ասաց, թէ համմարեալս<sup>(127)</sup> քոյր է,  
 զարձեալ երկրորդէ այսպէս, թէ զառականս կնոջ եւ զգտեր նորա, որ  
 լինի մին կին, եւ միւսն՝ խորթ, մի՛ յայտնեսցես եւ զգուտար ուստեր նորա,  
 այսինքն է՝ զխորթին, եւ կամ զգուտար գտեր նորա մի՛ առնուցուս,  
 30 քանզի ամպարշտութիւն է: Ապա վերագոյն քան զայս նշանակէ, որ նոյն  
 մեզ երրորդ ազգ կարծի, ըստ յառաջ յայտնագոյնդ առնելոյ մեր, զառա-  
 կանս գտեր ուստեր քոյ կամ գտեր գտեր քոյ մի՛ յայտնեսցես<sup>449</sup>: Բայց  
 մի՛ ոք կարծեսցէ զասացեսուս ի վերայ ծնողին միայն, այլ եւ՝ որք ի նմա-  
 նէն, քանզի եւ այս կատարեալ յիմարութիւն է, քանզի ոչ ուրուք եզբայր ա-  
 35 ռանց հար եւ կամ քոյր, այլ թէ եւ հարաքեռ որդի եւ կամ մարաքեռ, քան-  
 զի ազգակցութիւնն մի է եւ նոյն է եւ որդուց: Զի որպէս առաջին, եւ երկ-  
 րորդ, եւ երրորդ՝ ազգ ասին, այսպէս եւ եղբարորդոյն եւ կամ այլոց առ  
 միմեանս առաջին ազգն, եւ երկրորդ, եւ երրորդ, եւ քառորդ՝ ազգ ասին: Եւ  
 ոչ այսչափ. բայց եւ այլ որոշումն, արժանի զարմանալոյ, ուսուցանէ  
 40 աստուածազանն մեզ Աւրէնք. զառականս նուոյ մի՛ յայտնեսցես եւ ըզ-

445 Տե՛ս Ա Տիմոթ., 2, 10

446 Տե՛ս Բ օրին., ԺԹ, 14

447 Ղևտ., ԺԸ, 2—4

448 Տե՛ս Ղևտ., ԺԸ, 6—18. Ի, 11—21

դուտոր դստեր նորա կամ զդուստր ուստեր նորա մի՛ առնուցուս<sup>449</sup>։  
 Որ ցուցանէ զայս. իբր թէ մեռեալ որդւոյն, եւ նուոյն առն այլում եղեալ  
 եւ ծնեալ ուստեր, եւ նորա կին առեալ այլ դուտոր ծնանիցի՝ մի առնու-  
 ցուս զնա կնութեան, զի ամպարշտութիւն է։ Այսու զկատարեալն իսկ  
 5 զսահման ցուցանէ եւ եթէ ցո՞ր խորշելի է յամուսնութենէ։ Իսկ Սուրբ  
 Հոգին Ովսեաւ մարգարէիւ զամենայն անհնարին եւ զչարաչար  
 մեղս փոքր համարեցաւ առ այսու յանցմամբ եւ ամբաստանութեամբ։  
 Լո՛ւր որ զսասցեալս նշանակէ. եթէ լոկ անուամբ գոյ, զի՞նչ  
 հարազատութիւն ի միջի կայ, ասէ. դատաստան Տեառն է ընդ  
 10 բնակիչս աշխարհի, զի ոչ գոյ ճշմարտութիւն, եւ ողորմութիւն, եւ  
 զիտութիւն Աստուծոյ ի վերայ երկրի, այլ անէծք, եւ ստութիւն, եւ զոչու-  
 թիւն, եւ շնութիւն, եւ սպանութիւն հեղեալ ի վերայ երկրի<sup>450</sup>։ Իսկ աւելի  
 ամպարշտութիւն եւ կսկծելի մեղք այն են, որ արիւն ընդ արիւնս խառնեն,  
 որ է ազգականաց ամուսնութիւն։ Եւ հատուցումն այնմ զայս պատմէ.  
 15 վասն այդր, ասէ, սուգ առցէ երկիր եւ նուաղեսցի սմենայն բնակչաւքն  
 իւրովք, այլ եւ զազանք անապատի, եւ սողունք, եւ թռչունք երկնից պա-  
 կասեսցին, զի ոչ ոք էր, որ յանդիմանէր եւ դատէր<sup>451</sup>։ Արդ, մինչ բանն  
 յանդիմանութեան եւ դատելոյ զայնպիսիսն ձեզ հաւատացաւ, եւ անփոյթ  
 առնես՝ եւ՛ զանձն դատապարտես, և՛ որոց իշխեսն։ Բայց եթէ արեան  
 20 յարիւն ոչ տաս խառնիլ, որ է մինչեւ անուն մերձատրութեանն սպառի,  
 արդարութեամբ կատարեալ զարդարես զքո վիճակդ։ Իսկ յանդնեցելոցն  
 եւ պատերազմասիրաց ընդ Հոգւոյն Սրբոյ՝ բան կանոնին, զոր երանելի  
 հարցն ի Քրիստոս հաստատեալ է եւ մինչեւ ցայժմ իբրեւ զարեգակն  
 անշիջանելի պահի, նոցա զայս ամանդեսես. սկիզբն ի հինգերորդէն  
 25 յառաջ, քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողոր-  
 մութիւն արարեալ՝ զսահմանն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է,  
 որում տեղեակ է եւ քո սրբութիւնդ։

Յամենայն զրեթէ ի կանոնս այսոցիկ եղաւ սահման, այլ լիով աստ.  
 զոր առեալ եցոյց յԱրիւնաց և ի Մարդարէից։ Զոր եւ մեղ զայսոսիկ  
 30 քննելի է, թէ ո՞ր արդեալք յաւելուած ըստ նորոյս եղև ի ձեռն կանոնաց.  
 Քանզի Աւրէնքն հրաժարեցոյց զառ ի հարկ եւ զառ ի մարէ քեռէ, որ է  
 ըստ այսմ. թէ պատահի առնուլ կին, եւ նորա իցէ դուտոր եւ թէ զկնի  
 առնելոյն ծնանիցի։ Իսկ կանոնք ըստ այսմ. մի՛ տալ զխորթս միմեանց  
 եւ մի՛ զառ ի նոցանէ ծնունդս մինչեւ ի զարմն երրորդ, ապա ծնեալ ի  
 35 ծնողաց խորթուցն մինչեւ ցորդիսն, որ առանց խորթուցն, որ լինին  
 հինգերորդ ազգ, ապա ամուսնացին<sup>(128)</sup>։

Զխորթս միմեանց զխորթակիցսն ասէ մինչեւ ցերրորդն, յայտ է, զի  
 շորրորդին հրամայէ, եւ ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչեւ ցորդիսն՝  
 Լորրորդին ասէ, որ խորթովքն լինի շորրորդ և ծնողաւքն՝ հինգերորդ։ Եւ  
 40 զայս ասէ, որ թէ պատահի մին ի խորթուցն, եւ մին՝ ի ծննդոց ծնողաց  
 խորթուցն, եւ կամ ի խորթուցն ծնողաց՝ շորրորդ, եւ խորթն՝ հինգերորդ,  
 ապա ամուսնացին<sup>(128)</sup>։

Եւ զի Աւրէնքն զհարաբոյր եւ զմարաբոյր լիշէ, իսկ կանոնք զծնունդ

<sup>449</sup> Տե՛ս Ղեւ., ԺԸ, 15

<sup>450</sup> Ովսէէ, Գ, 1—2՝

<sup>451</sup> Տե՛ս Ովսէէ, Գ, 3—4

սոցա եւ զծնունդ զեղբար մար եւ զայլոց միապէս հրաժարեցուցանէ: Զխորթոցն եւ զթոռանց, որ յորդոյ եւ ի դստերէ, եւ զեղբարց ծնունդս կանոնք եւ Աւրէնք միաւրինակ հրաժարեցուցանեն. նմանապէս եւ՝ զծնունդ, որ ի նուէ:

5

## ԳՂՈՒՍ ՄԺԳ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ԸՍՏ ԱԻՐԻՆԱՅ ԵՒ ԿԱՆՈՆԱՅ ՈՐՊԷՍ  
ԶՈՒԳԻՆ, ԵՒ ԹԷ ՈԳ՝ ՈՐՈ՞Ց ՆԵՐԵԼԻ Է ԵՒ ԶՈՐՍ ԲԱԺԱՆԵԼԻ

Գիտելի է, զի կանոնք հրամայէ՝ մի՛ որ իշխեսցէ խնամութիւն առնել մինչեւ ի շորրորդ եւ հինգերորդ զարմ: Զնոյն իսկ զԱւրինացն ասէ, զի զերրորդն զծնունդն, զոր հրամայէ շառնուլ, յայտ է, զի շորրորդին հրամայէ առնուլ, եւ որ առնու՝ լինի հինգերորդ: Եւ զայս յամենայն բնատանութիւնսն է իմանալ, եւ այս է շորրորդն եւ հինգերորդն:

Եւ թէ Աւրէնք եւ կանոնք զխնամիս ոչ յիշեն, յաղագս զմի ցուցանելոյ արինակ՝ նման այլոցն բաժանիլ ծննդովք. զի զայս ասէ Աւրէնքն՝ երկուս քորս ոչ առնուլ, եւ կանոնք զքոյր կնոջն յընտանութիւն առն փոխել ասեն: Ուստի յայտ է, զի այսպէս ամենայն արինակաւ խնամիք յընտանութիւն փոխին, եւ ըստ այլոց մերձաւորաց՝ ծննդաւք զատանին:

Եւ արդ, ըստ Աւրինաց եւ կանոնաց այսպէս զուգին, թէ եղբարց ծնունդք իցեն եւ թէ այլոց, զի առաջին՝ ծնողքն ի թիւ ոչ անկանին, զի վասն այնորիկ զարմ ասէ շորրորդ եւ կամ հինգերորդ: Եւ զարձեալ՝ զի մի՛ խոնարհագոյն քան զայս իցէ, զի շորրորդ ի միոյ կողմանէ ասէ լինել, եւ թէ ի միւս կողմանէ մի պատահի՝ անխորելի է.<sup>(130)</sup> եւ այս յայտ յԱւրինացն է՝ զառականս մի՛ յայտնեսցես<sup>452</sup>. Իւրն իսկ ասէ, զի երրորդին ոչ հրամայէ եւ զշորրորդն առնու, եւ առողն է հինգերորդ: Նոյն է ըստ կանոնաց:

Եթէ հինգ պատահի լինել՝ բարի է, եւ զարմիցն հինգ լինել նոյն է. եւ թէ որքան մի կողմն իցէ, եւ միւսն նոյն գտանի՝ առաւելութիւն է, ապա թէ ոչ գտանի՝ լիցի որպէս ցուցաւք:

Եւ թէ երեք ի մի կողմանէ իցեն, եւ երեք՝ ի մի, լինելի է: Եւ եթէ երեք ի մի կողմանէ իցեն, եւ երկու՝ ի մի, եւ այս եւս լինելի է, զի որպէս հրամայեցաւ յԱւրինացն՝ զշորրորդն առնուլ հինգերորդին, զի յորժամ առցէ, մնացէ երրորդն:

Նոյն է, յորժամ երեք ի միոյ կողմանէ իցէ, եւ երկուք՝ ի միւսն, ի լինելն մնայ երեք, զի որպէս որ իւրն առնու ըստ Աւրինացն, եւ մնայ երեք: Նոյն լիցի եւ որպէս, զի մի է հեռաւորութեան արինակն:

Մոյնպէս, թէ երեք ի մի կողմանէ իցէ, եւ երեքն՝ ի մի, ի լինելն մնայ շորրորդ. եւ այդ ըստ հինգերորդ զարմիցն է, որպէս այն՝ ըստ շորրորդին:

Այսպէս յամենայն խնամութիւնս այնորիկ լիցին, զի ի լինելն մնայ երեքն եւ կամ շորքն: Բայց հինգերորդն լիցի քահանայից, շորրորդն՝ աշխարհականաց ամենեցուն:

Իսկ երեք ի մի կողմանէ, եւ մին՝ ի միոյ, ոչ է լինելի. նոյնպէս՝ երկու՝ ի միօջէ, եւ երկու՝ ի միօջէ, զի ի լինելն մնան երկու եւ ոչ երեք: Արդ, այսոցիկ ոչ է համարձակելի, ապա եթէ յանդգին՝ քակեսցեն. ապա թէ ոչ կարասցեն՝ ապաշխարութեամբ ուղղեսցեն: Իսկ եթէ անգիտանալով արասցեն կամ զընտանութիւնն եւ կամ զսաստ պատուիրանին, այլոցիկ այլազգ լինիցի ներելն:

Ապա եթէ երկու ի մի կողմանէ իցէ, եւ մի՝ ի միոյ, բնաւին մի՝ տայցեն թոյլ, ապա թէ յամառեալ արասցեն՝ քակեսցեն. իսկ թէ ոչ կարեն՝ կամ յաղագս յանդնութեան եւ կամ զի իշխանք իցեն, ծանր ապաշխարութեամբ սահմանեսցեն. իսկ թէ անգիտանալով ըստ ասացելոցն իցէ, այլազգ լիցի ներելն: Սակայն իշխանաց այլ աւրինակ լիցի ներման յամենայնսն:

Ապա թէ մի ի միոյ կողմանէ իցէ, եւ մի՝ ի միոյ, բնաւին մի՝ լիցի ներել, թէ զիտելով իցէ թէ անգիտանալով՝ նզովիւք քակեսցին, ապա թէ ոչ կարեն՝ մի լիցի հաղորդիլ ընդ նոսա, այլ լիցին հեռացեալք իբրեւ զպոռնիկս, մինչ զղացեալ քակեսցին եւ ապաշխարութեամբ ուղղեսցին, զի ի լինելն ոչ մնայ եւ ոչ մի, որպէս ի շորրորդին՝ երկուս եւ յերրորդին՝ մի: Եւ այդ է ըստ կանոնաց ներման, որ ասէ. քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ զսահմանն մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է: Յայտ է, զի զշորրորդէն եւ զհինգերորդէն ասէ:

Զայդ ըստ Աւրինացն եւ կանոնաց դատեցաք, թէ ո՞րպէս զուգին, եւ կամ ներեսցին, եւ կամ բաժսնեսցին: Եւ թէ ունէի յաղագս այլոցիկ այլ ինչ ըստ տեսութեան զնել մտաց, ոչ կամեցայ, զի մի՝ ընդդէմ ինչ կարծիցիմ կանոնաց, այլ որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ: Եւ թէ վարժ ոք զրոց սովորութեան իցէ, տեսցէ զամենայնսդ հաստատապէս յԱւրինաց եւ ի կանոնաց, զի զբազումս ի գրոց տեսանեմք յարանց անտեղեակս այդմ լինելով, զի որքան ի միոջէ իցէ ի կողմանէ շորրորդն կամ հինգերորդն, զնոյն եւ ի միւսմէն պահանջն ի կողմանէ, որ է դուն ուրեք զտանիլ, զի իւրն ասէ Աւրէնքն՝ զառականս մի՝ յայտնել, եւ զերրորդն թողով ի միջոցին՝ զշորրորդն հրամայէ առնուլ: Նոյն եւ ծննդոցն է ըստ կանոնաց:

Սակայն բազումք ի տգիտաց յառաջ բերեն զՅովհաննու Ոսկեբերանին զասացեալսն, եթէ Աւրէնքն ի մերձաւորաց հրամայէ յազգականաց առնուլ կին՝ ոչ կամել յաւտարս զսէրն տալ, իսկ Աւետարանն՝ առ հեռաւորս զսէրն լինել: Եւ արդ, եթէ այդքան է պատճառն, ընդէ՞ր ճշդիւ խընդրեն ընտանիքն: Գիտեյի է, զի սուրբն ասացուածովն զգաւրութիւն Աւրինացն եւ Աւետարանին ասէ, այլ ոչ զպահպանութիւնն, զի ոչ ասաց, թէ վասն այսորիկ ոչ է խտրելի ազգայինն, այլ գիտէ, զի Աւրէնք է եւ պահելի է, զի ըստ ժամանակաց զանազանեցան այլոցիկ Աւրէնքն, զի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ Աւրինացն դրութեան յայտնելոյ գիտութիւն: Յառաջ քան զԱւրէնս զքոչրս իսկ առնուին, եւ Աւրէնքն հրաժարեցոյց: Աւրէնքն զհարթուեր եւ զմարթուեր եւ զեղբար մարդ զստեքս ոչ հրաժարեցոյց, իսկ կանոնք զայսոսիկ եւ որ նման սոցին իբրեւ զմերձաւորսն հրաժարեցոյց, ասելով՝ մի՞ ոք արասցէ խնամութիւն մինչեւ ի լորրորդ եւ ի հինգերորդ զարմն: Եւ զայս աննշան ասէ, ոչ ըստ Աւրինացն

թուելով, թէ ո՞րոց իցէ եւ ո՞րոց շիցէ, զի յայտ արասցէ ամենայն ընտանութեան ծննդաւ բաժանիլ: Եւ զի Հոգւոյն Սրբոյ է արիւնադրութիւնս, զդուշութեամբ սրահեսցուք, զի մի՛ դատապարտիցիմք:

5 Եւ արդ, եթէ հաճայ թուեսցին այս զատաստան յեկեղեցիս, զի ուրբան կար էր՝ ի գրոց ճշմարտելով եղաք<sup>(131)</sup>, ըստ այսմ վարեսցին, ապա թէ անհաճոյ՝ մի՛ իբր զյանդուզն սագացէ, այլ իբրեւ գտգէտ ելոյ՝ թողութիւն շնորհեսցէ մեզ եւ ուղղիդ դատաստանաւ վարելով ըստ գրոց, որպէս տեսանէ կորովի մտաւք զանձն, եւ զմեզ ազատէ ի մեծէ եւ յանաշառ դատաստանէ: Միայն մի՛ լիցին կաշառաւք կուրացեալք, որպէս զբազումս տեսանեմք, զի այնքան են վրէժխնդիրք այդորիկ արիւնաց, որքան զձեռս լի առնեն կաշառաւք, գորոց զդատն հատուցանելոց են:

ԳՂՈՒՄ ՄԺԴ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՆԱԻԱՅ ԲԵԿԵԼՈՅ Ի ՄՈՎՈՒ

15 Եւ զնաւս բեկեալս ի ծովու մերձաւոր քաղաքն ձեռնատուութեամբ փրկեսցէ, իբրու զի հանդերձեալ էր վայելող շահից նորա լինել. այլ յաւար առնուլ վասն բեկմանն արտաքոյ է գատաստանի: Եւ թէ ձրի ոչ կամին փրկել, որքան հնար է՝ վարձս տուցեն<sup>(132)</sup>, եւ զԱրիւնացն ընդ միտ ածել՝ զանկեալ զբաստ յարուցանել ընդ տեսոն իւրում<sup>453</sup>: Այլ ազահել եւ յափշտակել այսպէս լիցի դատաստան. կամ որպէս որ թափէ զաւար, կամ 20 իբր գտէր, որ ի հնազանդելոց տասանորդէ, եւ կամ ի հնգէ:

Եւ սակաւ գայդ եղաք դատաստան, զի յոյժ ընդզէմ իրաւանց գործեն Հոռմայեցիք այդոցիկ. եւ զի մի՛ այն լիցի, թէ ի մերոց պատահի ազգաց տիրելոց ծովու:

ԳՂՈՒՄ ՄԺԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԽԱՐԵԲԱՅԻՅ

25 Եւ զի բազումք շրջին խաբէութեամբ յանուն սրբոց, եւ եկեղեցեաց վանաց եւ այլաւք բազմադիմի պատճառաւք եւ զբազումս պատրեն, մինչ զի ոչ է դիրաւ ի վերայ կալ պատրուակեալ շարեաց նոցա, քանզի հնարին ընծայական ունել թուղթս եւ այլ եւս ձեւս ստանան կեղծաւորութեան: Արդ, յորժամ պատահի ի վերայ կալ նոցա եւ գտանել զխաբէութիւն 30 նոցա, զժողովեալ ինչս առնուլ, որ յայլոյ եկեղեցւոյ յանուն իցէ, եւ թէ կարիս ինչ է՝ անդ առաքել, եւ թէ այս շիցէ՝ յիւրաքանչիւր տեղիս տալ: Եւ թէ շիցէ հնար այսմ լինել, իրաւունտ կարծեմ ըստ պատճառի ժողովելոյն այնպէս մատակարարել եպիսկոպոսաց եւ եթէ այլ ոք իցէ: Եթէ 35 պատճառաւ եկեղեցի շինելոյ իցէ եւ բաւական այսմ իցէ, այնպէս առնել, եւ թէ շիցէ՝ ի պէտս ըստ բաւականին ածել եկեղեցւոյ: Եւ թէ պատճառաւ զերութեան իցէ, յայնոսիկ վարիլ: Ըստ այսմ արիւնակի լիցի եւ այլն ամենայն:

<sup>453</sup> Բ օրին., ԻԲ., 1—4, նաև հոգվ. ՃԺԾ

ԳՆՈՒՄ ՄԺՋ

ՅԱՂԱԳՄ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԳԵՂԻՑ ՆՈՐՈԳԱՊԷՍ ԾԻՆՈՂԱՑ

Յորժամ զատաջինն շինիցի զիւզ, շէ հաստատուն բաժանումն հողոյն  
եւ շրին եւ այլոց այսպիսեաց, մինչեւ բաւական բնակիլք ժողովիցին, եւ  
5 ապա բաժանումն հաստատիցի:

Ապա թէ աւերակ շինիցի եւ շիցէ բազմաժամանակեայ, մինչ զի  
զիտել իւրաքանչիւր զսահման անդաստանաց եւ զայլոց, իւրաքանչիւր  
բստ սահմանի նախնեացն կալցին: Իսկ եթէ բազմաժամանակեայ իցէ  
եւ անզիտելի, եւ տէրութեան փոփոխումն եղեալ, նորոգ արասցեն բաժա-  
10 նումն հաւասարադատութեամբ, նախ՝ եկեղեցւոյն եւ ապա՝ այլոցն, մասն  
աւելի տալով որ զխաւորն իցէ գեղջն՝ վասն հոգալոյ զայս:

ԳՆՈՒՄ ՄԺԷ

ՅԱՂԱԳՄ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ՀԱՄԱԻՐԷՆ ՎԱՃԱՌԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Վաճառք ամենայն հաստատին, յորժամ որք վաճառենն՝ ամենեցուն  
15 յանձնառութեան վկայութեան կամքն ընդ նոսա իցէ: Ըստ այսմ՝ եթէ  
հայր վաճառիցէ, պարտ է ուստերացն եւ դստերաց կամքն ընդ նմա լի-  
նել եւ եղբարց, որք ժառանգ իցեն. նմանապէս՝ թէ որդի վաճառէ՝ հաւրն,  
եւ այլ եղբարցն, եւ քերցն. ապա թէ ոչ, յորժամ կամին անդրէն դարձու-  
ցանել՝ իշխան լիցին, թէ եւ գրով հաստատեալ իցէ:

20 Եւ թէ ի միասին գրով եւ վկայիք վաճառիցեն, եւ յազապ աղքատու-  
թեան պատճառի իցէ, եւ սահմանաւ, զոր դնէ վաճառողն, եւ կամ որպէս  
յաւաջ ցուցեալ է<sup>464</sup>, իշխան լիցին դարձուցանել, ապա թէ անպատճառ  
իցէ՝ հաստատուն լիցի: Արդ, այդպէս՝ կամ դարձցին եւ կամ հաւանեցին  
բստ արժանւոյն:

25 Իսկ զիր հաստատուն՝ նշանաւ դատաւորին լիցի, սակայն նշանն կամ  
ճշմարիտ դատաւորին լիցի՝ Քրիստոսի նշան խաչին, եւ կամ պատկեր  
եպիսկոպոսին կամ այլոց դատաւորաց, այսինքն՝ հայրապետաց: Եւ թէ-  
պէտ այլոց գրին ձեռաք, նոքաք նշանակեալ հաստատուն լիցի, որպէս  
ի տուն թագաւորաց գրին զիր, սակայն նշանակին արքունի նշանաւ եւ  
30 այնպէս հաստատին. նոյնպէս եւ աստ լիցի:

ԳՆՈՒՄ ՄԺԸ

ՅԱՂԱԳՄ ԳԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԱԺՆԱՑ ՀԱՐՍԱՆՑ

Եւ յորժամ բաժանիցին եղբարք ի միմեանց եւ բաժանումն արասցեն  
հայրենեաց, նախ զհարսանցն բաժինսն յայտ արասցեն եւ իւրաքան-  
35 չիւրսն տաջեն, եւ ապա՝ ինքեանց հայրենեացն:

<sup>464</sup> Տե՛ս հոգվ., 2, ՂԱ

Իսկ եթէ ի մէջ եղբարցն ծախեալ իցէ ուրուք բաժին, յամենեցունց կանգնեացի, զի տէր է իւրաքանչիւր ոք իւրոցն:

Չայգ հասարակ կարծելի է դատաստան ըստ քաղաքավարութեան աշխարհի:

5

ԳՂՈՒՊ ՄԾԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ Ի ԾԱՌԷ ԱՆԿԵԼՈՅ ԵՒ ԿԱՄ ԿԱԽԵԼՈՅ, ԵՒ ՅԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆԿԵԼՈՅ ԵՒ ԿԱՄ ՔԱՐԻԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՌԵԼՈՅ

Այլ որ յաղագս ի ծառէ անկեալ մարդոյ մեռելոյ հարցեալ էիր<sup>(138)</sup> եւ կամ թէ խեղդով կախեալ զծառէ, շկայ ինչ մեղանս տնկոցն, զի անշունչ եւ անզգայք են, ոչինչ եղեն պատճառք մահունոցա, որ այնպէսն պատահեաց: Այլ թէ առնիցեն ըստ Աւրինացն Մովսէսի, յորում հրամայեաց Աստուած վասն անասնոցն, եթէ եղեւ ի նոցանէ յանաւթ պղծութեան ոգւոց եւ մարմնոց անասնագիտաց մարդոց, զկաթն նորա մի՛ կերիցեն, թէ յայնազգ կենդանեաց իցէ, եւ զանասունն քարկոծ արասցեն, եւ զմիս նորա շունք կերիցեն<sup>455</sup>: Նոյնպէս թէ եղչիւրաւորք հարկանիցեն զմարդ, եւ մեռանիցի, սպանցեն զանասունն եւ մի՛ կերիցեն<sup>456</sup>. ոչ զի մեղանք են, այլ զի անաւթք եղեն մեղականաց պղծութեան եւ սպանութեան: Ըստ այսմ արինակի թէ եւ առնիցեն զայս՝ հատանել զտունկն զայն, զի մի՛ կերիցեն ի պտղոյ նորա, բայց եթէ յարմատոյ նորա այլ բուսանիցի եւ եկեսցէ ի հաս, կերիցեն անխտիր եւ մի՛ խտեսցեն, որպէս եւ ծնեալքն յանասնոց աստի անխտիր են<sup>457</sup>:

Չայս հաւաստապէս ըստ Աւրինացն նոյնպէս եւ եկեղեցի ընդունի:

Այլ թէ յեկեղեցոյ անկեալ ի խոնարհ, եւ թէ քար զերծեալ եւ անկանիցի ի վերայ մարդոյ, եւ մեռանիցի, անվնաս է եկեղեցին, մատուցի ի նմա պատարագ, որպէս եւ կամի Տէր<sup>457</sup>:

Այլ ի դէպ թուի աւուրս ինչ, իբր մաւր՝ ի վերայ ծննդոց, ունել սուգ. եւ զայդ որպէս կամին՝ արասցեն:

ԳՂՈՒՊ ՄԻ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԳՈՂՈՅ Ի ՓԱՅՏ շԱՆՈՂԱՅ

Այլ վասն զոգոց ի փայտ հանելոյ էիր<sup>(134)</sup>: Եթէ այլազգի իցէ եւ եթէ քրիստոնեայ, եւ քրիստոնէի հրամայիցեն ի փայտ քարշել, եթէ հնար իցէ՝ խոյս տայցէ ի տեղւոջէն, ապա թէ ոչ՝ կաշառով զերծցի: Իսկ եթէ այսոքիկ ոչ աւգնեսցեն, ապա զհրամայեալսն ի տերանց հարկատրաբար պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս զինուորացն, թէ մի՛ տուի քան զհրամայեալսն ձեզ առնի-

455 Տե՛ս Ելք, ԻԹ, 31, Դևտ., Ի, 15 և այլուր:  
 456 Տե՛ս Ելք, ԻԱ, 28  
 457 Դավիթ Աւովկա որդու կանոնները, ԴԶ, «էջմիածին» 1953:

ցէք<sup>458</sup>, քանզի Աստուած ի սիրտն հայի, եւ մարդ՝ յերեսս<sup>459</sup>, որպէս հրամայեաց Տէր Սամուելի<sup>460</sup>,

**ԳՆՈՒՄ ՄԻԱ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՍՊԱՆՆԼՈՑ Ի ԿԵՆԴԱՆԵԱՑ**

- 5 Այլ թէ մարդոյ լինիցի ջորի խեռական, եւ կամ ձի կիցսընկէց կամ մարդակեր, որպէս զուարակագլուխ ձին Աղէկսանդրի, եւ կամ եզն հարկանող, եւ նա զիտիցէ, եւ այլք ազդ առնիցեն նմա եւ բողոք բառնայցեն եւ զվնասն ցուցանիցեն, եւ նա յանհոգս կացցէ եւ ոչ հնարեսցէ զնոսա, որպէս արժանն էր, եւ կիցս ընկեցեալ, կամ ատամնացեալ, կամ հարեալ սպանանիցէ զոք, տէր նորա մահապարտ է, եւ անասունն սպանցի, ապա թէ ոչ զիտէր՝ անպարտ է: Եւ թէ յանսուրբ անասնոց իցէ՝ թէ ձի, թէ ջորի, ի մեռելոցն տեարքն տացեն, զի ի պէտս հօգուոյ նորա ծախիցեն<sup>461</sup>: Սակայն յայտնիցեն զպատճառն եւ այնոցիկ վաճառիցեն, որ կարողն են խրատել զնոսա:
- 15 Եւ զայս դատաստան եղաք երբեմն ըստ Աւրինացն<sup>462</sup>, այլ հաստատել եւ կանոնաւք կամեցաք՝ մասամբ առաւելեալ<sup>(135)</sup>:

**ԳՆՈՒՄ ՄԻԲ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԶՄԱՐԴ Ի ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ՅԱՅԼ ԳՈՐԾ ԱՌԱՔՈՂԱՑ ԵՒ ՎՆԱՍԵԼՈՑ ՍՊԱՆՄԱՄԲ<sup>(136)</sup>**

- 20 Այլ վասն զմարդ ի ճանապարհ յուղարկել ումեք բազում արիւնակք տեսանին ի հարցմունս խղճի եւ անխղճի: Զի են ոմանք, որ ի գործ մշակութեան են կարգեալք ի տերանց իւրեանց, եւ կէսք՝ յայդեզործութիւն, եւ այլք՝ ի զինուորութիւն, եւ դարձեալ այլք՝ ի յայլ գործ, որ ի պէտս հասարակաց մերոց կենացս արիւնաւք պատրաստեալ է: Այսոցիկ, որոց ի գործս իւրեանց եկեսցէ որոգայթ մահու, անպարտ են տեարք նոցա, մանաւանդ այնոցիկ, որ զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանէ ի լսելի հնազանդելոց իւրոց: Ապա թէ հասարակաց միաբանութեան սիրոյ եւ խաղաղական մերոց կենաց զընդդէմսն հրամայիցեն գործել տեարք ծառայիցն, եւ անդ պատահիցէ ումեք մահ կամ սպանութիւն, մահապարտ է տէր նորա: Դարձեալ՝ եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեսուն իւրոյ զվնասն, որ առաջի կայր, եւ տէրն անհոգացեալ անպատրաստաբար առաքէ ի գործն, եւ պատահի վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն՝ արենապարտ է<sup>463</sup>:

<sup>458</sup> Տե՛ս Ղուկ., Գ, 12—13

<sup>459</sup> Տե՛ս Ա թագ., ԺԶ, 7

<sup>460</sup> Դավիթ Աւազկա որդու կանոնները, ԽԱ, «Էջմիածին», 1953:

<sup>461</sup> Դավիթ Աւազկա որդու կանոնները, ԽԲ, «Էջմիածին», 1953:

<sup>462</sup> Տե՛ս Տ. հ. ԿԵ, ԿԶ, ԿԷ, ԿԹ, Հ, ԺԶԵ

<sup>463</sup> Դավիթ Աւազկա որդու կանոնները, ԽԳ, «Էջմիածին», 1953:

## ԳՆՈՒՆՈ ՄԻԳ

## ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ՄԱՆԿԱՆՅ ՈՒՍՈՒՅՈՂԱՅ

Ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել ըստ կանոնի հրամա-  
նաց<sup>(137)</sup>։

5 Եթէ որք իցեն, զամենայն խնամ տանել նոցս ի դէպ է, ապա թէ չիցեն՝ զկերակուր եւ զհանդերձ միայն իւրքն հոգասցեն։ Եւ թէ կարողք իցեն եւ ըստ ինքեանց յօժարութեան ընծայ ուսուցողացն տացեն, արժան է հոգեւոր սերմանողաց զմարմնաւորսն հնձել, իսկ եթէ աղքատք՝ ոչ պահանջել։

10 Այլ եթէ որ հակառակիցի եւ բռնաբարէ, դատաստանաւ է՝ զոր ինչ ի մանուկն ծախեալ իցէ, զայն միայն հատուցանել, ոչլ ոչ զհոգեւոր շնորհին<sup>464</sup>։

Այդոցիկ զհետ երթալ դատաւորաց արժան է հոգեւորապէս։

## ԳՆՈՒՆՈ ՄԻԳ

15

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԽՍՏԱՆԱՅ ԱՐԲԵՅՈՒԹԵԱՆ<sup>(138)</sup>

Եւ զարբեցութեան բազումք անգիտանան դասման յառաջնորդաց եւ ի սպասաւորաց եկեղեցւոյ։ Միայն եթէ ոչ ժայթքեն՝ համարձակին ի գործ եկեղեցւոյ։

Արդ, դնելի է զսահման նորա։ Արբեցութիւն ըստ ստուգաբանութեան  
20 յաղեցումն իսկ է, իսկ ժայթքելն եւ կամ ոչ՝ ի կազմածէ բազում անգամ պատահի մարմնոյ։ Իսկ եթէ սահման արբեցութեան յագեցութիւն է, ապա եւ սահման ոչ արբենալոյ անյագեցութիւնն է։ Եւ դարձեալ՝ նշանակ արբեցութեան դեղնումն մարմնոյ է եւ բանի։

Արդ, որ ըստ այսմ սահմանի եւ կամ նշանի իցէ, ի բաց կալ արժան  
25 է չիւրաքանչիւր սպասաւորութենէ եւ լնուլ զապաշխարութեան զչափ եւ ապա մատչիլ ի գործ շնորհին, իսկ եթէ անփոյթ արասցեն՝ ընդ դատաստանաւք արբեցողացն են<sup>465</sup>։

## ԳՆՈՒՆՈ ՄԻԵ

ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՅ ԵՒ ՏԱՆ ԹԱԳԱՒՈՐԻ<sup>(139)</sup>

30 Զի՞նչ զործ մարդոյ՝ զաստուածուպաշտութիւն ծանեաք։ Ապա արժան է մարդոյս քննել զպաշտանակցաց իւրոց, որով մարթագոյն զինքն շանայցէ առնել մաքուրս եւ զուարթունս՝ առ նոսա նայելով, եւ զկնի այսորիկ հասու լինել կարգաց եկեղեցւոյ եւ թագաւորաց, զոր պաշտեմք։

<sup>464</sup> Տե՛ս Դավիթ Ալավկա որդու կանոնները, լԵ, «Էջմիածին», 1953։

<sup>465</sup> Տե՛ս հոգվ. Իէ

Արդ ահա, որպէս սմենեցուն յայտնի է, երկու արարածք եղեն իորհրդականք եւ բանաւորք՝ հրեշտակք եւ մարդիկք. մին՝ ի պարզ եւ յանխառն բնութենէ, իսկ միսն՝ ի բազմաց դոյացեալ: Եւ Մովսէս ի սկզբանն ոչ գրեաց յաղադս հիշատակաց եւ վասն մարդոյն պատմեաց՝

5 ասելով, եթէ սուեղծ Աստուած զմարդն հող յերկրէ եւ փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղեւ մարդն յոգի կենդանի<sup>466</sup>: Այլ ապուշքն կարծեն զԱստուած բերանով եւ այլաւք գործիք վարիլ եւ զանբաւանդակելին ի զգալութիւն բաւանդակեալ. այլ իմանալի է զփշեալն՝ կենդանացոյց կամ հոգիացոյց: Նոյնպէս գիտեա եւ զհողն յերկրէ՝ ոչ մեկին

10 իմանալ հող, այլ բաւանդակ զշորեսիս բնութիւնսն ունելով՝ զցամաքն եւ զխոնսն, զջերմն եւ զցուրտն, եւ զհողմն: Որպէս բժշկացն մանկունքն բաժանեն զհողոյն զցամաքութիւնն յոսկերսն, եւ զմարմինն՝ ի խոնաութիւն ջուրցն, եւ զջրոյն՝ յարեան երակսն, զցրտութիւն հողմոյն՝ ի շնչերակսն, զջերմութիւն հրոյն խառնեն ընդ ամենայն: Այլ եւ արտականս եւ

15 իբրականս բաժանեն եւ զմիսն եւ զմորթն իզական ասեն: Եւ զայս ամենայն Մովսէս ոչ ասաց եւ ոչ զբնութիւն հրեշտակաց, սակայն լինելութիւն է նոցա:

Իսկ արդ, անե՞ղք իցեն, կամ ինքնե՞ղք, կամ նա՞խ քան զսկսանիլն արարածոց, վասն որոյ ոչ ասաց Մովսէս, եթէ արար Աստուած զհրեշտակս, այլ թէ հրամայեաց սերովբէիցն բոցեղէն սրով պահել զճանապարհոս ծառոյն կենաց<sup>467</sup>: Թէ այդ այդպէս է, ապա անեղ պարտիմք իմանալ եւ զջուրն, քանզի ասաց, եթէ ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր, եւ ոչ ասաց, թէ՛ զջուրն. այլ թէ երկիր էր աներեւոյթ եւ անզարդ, եւ հողի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց<sup>468</sup>:

Այլ իմանալի է մեզ ասել, թէ մինչ արար Աստուած զերկին եւ զերկիր, ընդ նմին արար եւ զամենայն զաւրս երկնից, եւ զջուրս, եւ զքարս եւ զամենայն, որ ինչ յերկրի, զի երկիրս հող միայն ասի ըստ Եբրայեցւոցն բարբառոյ: Ապա, ուրեմն, եւ ջուրք ընդ երկրի արարան, որպէս եւ Դաւիթ ասէ՝ նորա է ծով, եւ նա արար զնա<sup>469</sup>: Եւ ընդ երկնի հրեշտակք արարան, ասելով՝ ո՞ր արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտամեայսն իւր ի բոց հրոյ<sup>470</sup>: Հրեշտակս եւ պաշտամեայս լսելով՝ դասս ոչ յայտնեն, այլ սեռական անուանեն զանունն: Բայց Մովսէս այսպէս ծածկաբար ոչ միայն զդասն ոչ յայտնեաց, այլ եւ ոչ իսկ յիշեաց զհրեշտակսն ի սկզբանն, այլ յետոյ ասաց առ Աբրահամու, եթէ եղիտ հրեշտակն զՀազար յանապատին<sup>471</sup>. եւ դարձեալ ասէ, եթէ եկին հրեշտակքն ի Սոդոմ<sup>472</sup>: Եւ ոչ կերպարանս ինչ ասաց, այլ իբրեւ զարս երեւեալ. ոչ միայն զսոցա, այլ եւ ոչ զքերովբէիցն եւ ոչ զսերովբէիցն ինչ ասաց զկերպարանս: Իսկ Յակոբ ի տեսեանն ասէ զկերպս հրեշտակացն<sup>473</sup>, որ-

466 Մնունդք, Բ, 7

467 Մնունդք, Գ, 24

468 Մնունդք, Ա, 1—2

469 Սաղմոս, 107, 5

470 Սաղմոս, 139, 4

471 Մնունդք, ԻԱ, 17

472 Մնունդք, ԺԲ, 1

473 Մնունդք, ԻԸ, 12

պէս Ակիւղաս ցուցանէ, սսեւլով. տեսանէր սանդուխտս հաստատեալ  
 յերկրի, որոյ զլուին հասանէր յերկինս, և բազմութիւն մարդկան թեա-  
 ւորաց, որ ելանէին և իջանէին<sup>473</sup>. Թուի ինձ՝ և թանասնիցն<sup>(140)</sup> կարճելով  
 վասն բանին, զանունս հրեշտակաց բաւական համարելով, զկերպան  
 5 ոչ յիշեն: Սոյն կերպաւ լսեմք և զքերովբէսն, զոր սակի արար Սողովմոն  
 և եղ ի տաճարին<sup>474</sup>, զոր արարեալ էր Մովսեսի ի խորանին երկթեւեանս  
 և թե ի թե կցող, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն<sup>475</sup>: Դարձեալ և  
 ի մեքենովթան լսեմք քերովբք, և առիժունս, և եղինս, և ուսք մարդոյ  
 և ձեռս, անիւս՝ որպէս կառաց<sup>476</sup>: Եւ ոչ ասեն ստուգիւ կամ կարեն հասու  
 10 լինել դասուցն և ոչ կերպիցն, այլ միայն նմանեցուցանեն, որպէս զթիթե-  
 ղունսն թռուցեալս լուսերամս: Իսկ Միքիաս զգարս երկնից ասէ զարա-  
 ցուցանել շորջ կացեալ զաթոռովն Աստուծոյ և ոչ զթիւ դասուցն և ոչ  
 զանուանան կոչէ: Բայց ծնայիաս ասէ զանուանս սերովբէից և վեցթեւեան  
 կերպաւ և զփառաբանութիւնն յայտնէ<sup>477</sup>: Իսկ Եզեկիէլ այլ դասս յայտնէ  
 15 և յաւելու շորեքկերպեանս և շորեքթեւեանս<sup>478</sup>. և այս նման է մեքենովթայ  
 տաճարին: Բայց փոխանակ նորա արմաւենւոյն՝ սորա արժուին է, թէպէտ  
 և ի խորհուրդ առ ի միտս զնոյն բերէ, սակայն կերպան որոշի: Տե-  
 սանէ Եզեկիէլ և անիւս այլակերպս և ոչ որպէս մեքենովթայ նման,  
 այլ անիւ ի մէջ անուոց<sup>479</sup>, նորոգ և հրաշալի: Այս այլ դասս թուի ինձ,  
 20 քանզի առանձնական ասէ զանիւսն, զի ոգի կենդանի գոյր ի նոսա: Եւ  
 ասէ այլ դասս, որք բազմաշեայք են, ասէ և հուր ահագին խառնեալ  
 և բորբոքեալ<sup>480</sup>. զայս առանձնական ակնարկէ:

Թէպէտ և զայս ամենայն ասացին մարգարէքն, սակայն ծածկա-  
 բար և ոչ յայտնապէս զիւրաքանչիւր դասս: Նաեւ ոչ Տէրն յԱւետարանի  
 անդ այլ ինչ յայտնեաց, բայց միայն զբազմութիւնս հրեշտակաց  
 25 զնդացն<sup>481</sup>:

Բայց սուրբ առաքեալն Յուդա պարզ և յայտնի ցուցանէ մեզ և թե  
 դասք և զանուանս և ս իւրաքանչիւրոցն ասէ. Հրեշտակք և Հրեշտակա-  
 պետք, Իշխանութիւնք, Զարութիւնք, Աթոռք, Պետութիւնք, Տէրութիւնք,  
 30 Սերովբէք և Քերովբէք<sup>482</sup>:

Իսկ սուրբն Դիոնեսիոս՝ պարծանքն Աթենացոց, Արիսպագացի,  
 առաքելոյն աշակերտ և հետեւող<sup>(141)</sup>, ինն դասս ասաց. զոր առաքելոյն  
 երկու ի մի էր ասացեալ՝ ի զստ ասաց զՀրեշտակապետսն ի Հրեշտակացն  
 և զՔերովբէսն՝ ի Սերովբէիցն: Եւ թուեաց զնոսա ինն դասս ստուգու-  
 35 թեամբ այսպիսի կարգաւորութեամբ, յորմէ և մեր ուսեալ՝ պատմեմք  
 քում հարցասիրութեանդ, որ են.

Ներքին դասք Հրեշտակացն, որք են պատգամաւորք և հրամանա-

474 Գ թագաւ. 2, 23—28  
 475 Եւք, Ին, 18—20. Լէ, 7—9  
 476 Գ թագաւ., Է, 27—36  
 477 Եսայի, 2, 2—3  
 478 Եզեկ., Ա, 5 և այլն:  
 479 Եզեկ., Ժ, 10  
 480 Եզեկ., Ժ, 1 և այլն:  
 481 Մատթ., ԻԶ, 53; Յովհ., Ա, 51 և այլուր:  
 482 Տէս Թուղթ Յուդայի, նաեւ Հոռովմ., Ը, 38—39; Եփես., Ա, 21 և այլուր:

տարք. եւ փառաբանութիւն է նոցա, զոր հովիւքն լուան՝ փառք ի բարձունս Աստուծոյ<sup>483</sup>,

Երկրորդ դաս Հրեշտակապետացն է. եւ փառաբանութիւն է նոցա՝ Տէր, ողորմեա քո արարածոց, զոր Զաքարիասն լուաւ, թէ՛ մինչև ցն՞րբ ոչ ողորմեսցիս Երուսաղեմի եւ քաղաքացն Յուդայ<sup>484</sup>,

Երրորդ դաս Իշխանութեանցն է, որք են իշխանութեանցն Աստուծոյ փառաբանիչք, ասելով՝ տուաւ քեզ հեթանոսք ի ժառանգութիւն եւ իշխանութիւն քեզ յամենայն ժազս երկրի<sup>485</sup>,

Չորրորդ դաս Զարուփեանցն է, որք զարուփեանցն Աստուծոյ են փառաբանիչք, ասելով՝ Տէր հզար ի պատերազմի<sup>486</sup>,

Հինգերորդ դաս Աթոռոցն է, որք են փառաբանիչք աթոռոցն Աստուծոյ, ասելով՝ աթոռ քո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից, գաւազանն զարուփեան՝ գաւազան արքայութեան քոյ<sup>487</sup>,

Վեցերորդ դաս Պետութեանցն է, որք են փառաբանիչք քահանայութեանն Աստուծոյ, ասելով՝ դու ես քահանայ յաւիտեան<sup>488</sup>,

Եւթներորդ դաս Տէրութեանց է, որք են փառաբանիչք տէրութեանցն Աստուծոյ, ասելով՝ արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից<sup>489</sup>,

Ութերորդ դաս Սեբովբէիցն է, որք լսին բերանք հրեղէնք, որք երեք-սրբենին են փառաբանիչք, զոր լուան Եսայիաս՝ սուրբ, սուրբ, սուրբ ես<sup>490</sup>,

Իններորդ դաս Քերովբէիցն է, որք լսին վերինք կամ հանճար մեծութեան, որք զովոզք են մեծութեանց Աստուծոյ, ասելով՝ Տէր զարութեանց, լի են երկինք եւ երկիր փառաւք քո<sup>491</sup>,

Այս են իններորդ դասք երկնայինք եւ այս է դործ նոցա: Աւելի քան զայս, մի՛ ինչ իմասցուք, որպէս եղկելին Որոզինէս<sup>(142)</sup> աւելի, քան զգրեալսն, խմանալով՝ կործանեցաւ անկանգնելի, զերկնային դասսն զանազանելով. հրաշալիս իմն բարբառելով, զպաիբատութիւն ի բարձունս խորհեցաւ՝ այսպիսի ասելով քան, թէ մարդիկ ոչ տեսանեն զհրեշտակս, եւ ոչ հրեշտակապետք՝ զհոգիս մարդկան, եւ Հոգին Սուրբ ոչ տեսանէ զՈրոզին, եւ Որոզին ոչ տեսանէ զՀայր: Բայց մեզ քաւ եւ մի՛ լիցի այսպիսի բարբառել հայհոյութիւն, այլ ասել զերկնային դասսն փառաբանիչս աստուածութեանն:

Եւ կարգաւ կայանին բաժանեն զլուսատրութիւնն եւ ասլա շափով լուսատրութեանն զդասսն առեալ, որպէս անձն է Հար, նոյնպէս եւ անձն Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ: Եւ արդ, որ ինչ երկնային դասուցն է, բաւական լիցի այսչափ:

Իսկ եկեղեցի որպէս հարսն մի գեղեցիկ, որ պահի ի համար մեծի փեսային՝ որդոյ թագաւորին եւ զիւր սենեակն յարինէ գեղեցիկ կարգա-

483 Ղուկ., Բ, 14

484 Զաքարեայ, Ա, 12

485 Մաղմոս, Բ, 8

486 Մաղմոս, ԻԲ, 9

487 Մաղմոս, ԽԳ, 7: Եբբ., Ա, 8

488 Մաղմոս, ՃԹ, 4

489 Մաղմոս, ԸԽԴ, 13

490 Եսայի, 2, 3: Յայտն. Յովհ., Դ, 8

491 Եսայի, 2, 3

ւորութեամբ, որպէս զի նմանագոյն ինչ արքունական կարգաց յարդարիցէ զպատիւ որդւոյ թագաւորին: Սոյնպէս եւ եկեղեցի երկնային դասուցն ընտանութիւն զիրն կարգեաց զնմանութիւնն եւ զդասն ինն թուով, քանզի ի խորանին ինն դասս տեսանեմք զՂեւտացուցն եւ զպաշտանէիցն,  
 5 քանզի ոչ ամենեքեան միում արժանաւորեցան կայանիւ, այլ ըստ շափոյ արժանաւորութեանն առին սպասաւորութիւն<sup>492</sup>:

Առաջին դասն՝ Մովսէս եւ Ահարոն եւ որդիքն նորա<sup>493</sup>:

Երկրորդ դասն՝ զունդն Ամրամայ<sup>494</sup>:

Երրորդ՝ զունդն Սահառայ<sup>495</sup>:

10 Զորրորդ՝ զունդն Քերոնի<sup>496</sup>:

Հինգերորդ՝ զունդն Ոզիէլի<sup>497(143)</sup>:

Վեցերորդ՝ զունդն Ռոբենի<sup>498</sup>:

Եւթներորդ՝ զունդն Սեմէի<sup>499(144)</sup>:

Ութերորդ՝ զունդն Մոողի<sup>500</sup>:

15 Իններորդ՝ զունդն Մոռաէի<sup>501</sup>:

Ապա թէ ասասցէ ոք, թէ Մովսէս եւ Ահարոն ի նոյն զնդէ իցեն, զիտասցէ, եթէ զատոցց Աստուած զնոսա, զի նոքա էին քահանայք՝ մատուցանել պատարագս, եւ արկանել խունկս քաւութեանն, եւ իշուցանել զխորանն եւ ծածկեալ դնա նուարտանան<sup>502</sup>: Ապա այլ սպասաւորքն մատչէին եւ բառնային ըստ արժանաւորութեանն, ոմանք՝ զտախտական եւ զքաւութիւնն, եւ ոմանք՝ զցիցս խորանին, եւ զապաւանդական, եւ զկրտերագոյն կահ սպասուն սրբութեան<sup>503</sup>: Եւ բանակել ոչ ընդ այլ դասս հրամայեաց Մովսեսի, այլ յարեւելից կողմանէ խորանին<sup>504</sup>:

Արդ, ահա յայտնապէս ցուցաք, թէ ըստ երկնային դասուցն ինն  
 25 Երեւին, եւ ի հնումն՝ զՂեւտացիսն:

Պարզեւս, առաքեալ Սրբոյ Հոգւոյն, համարի. բան իմաստութեան, բան զիտութեան, հաւատս, շնորհս բժշկութեան, աշոգութիւն զարութեանց, մարդարէութիւն, ընտրութիւն հոգւոյ, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց<sup>505</sup>:

30 Դարձեալ յայտնապէս ցուցանէ մեզ առաքեալն ինն դաս եկեղեցւոյ, ասելովն այսպէս՝ զորս եղ Աստուած յեկեղեցւոջն, այս են.

նախ՝ զԱռաքեալս,

Երկրորդ՝ զՄարգարէս,

Երրորդ՝ զՎարդապետս,

492 Տե՛ս Թիւք, Գ, Դ

493 Թիւք, Գ, 38

494 Թիւք, Գ, 19, 27

495 Անդ:

496 Անդ:

497 Անդ:

498 Մտնոդք, ԽԶ, 9: Եւթ, 2, 14: Թիւք, Ա, 20. ԻԶ, 3 և այլուր:

499 Թիւք Գ, 21 նաև Եւթ, 2, 17: Թիւք Գ, 18: Բ թագ. ԺԶ, 5, 7, 13 և այլուր:

500 Թիւք, Գ, 20, 33

501 Անդ:

502 Ղևա., Թ: Թիւք, Դ, 5—6 և այլուր:

503 Թիւք, Դ, 25 և այլուր:

504 Թիւք, Գ, 38

505 Ա Կորնթ., ԺԲ, 8—10

չորրորդ՝ զՋարութիւնս,  
հինգերորդ՝ Շնորհս բժշկութեան,  
վեցերորդ՝ Աւզնութիւնս,  
5 եւթներորդ՝ Վարիշս,  
ութերորդ՝ Ազգս լեզուաց,  
իններորդ՝ Թարգմանութիւնս լեզուաց<sup>506</sup>։  
Որք են այսոքիկ։

Առաջին դասք եկեղեցւոյ՝ պատրիարզք, որք Թարգմանին հայրապետք, որք ունին զաթոռ չորից աւետարանչացն։

10 Եւ արդ, տես զգաւրութիւն խորհրդոյն՝ փոխանակ շորեքկերպեան կենդանեացն<sup>507</sup> եղան սուրբ աւետարանիչքն, որ նշանակէ. դէմք մարդոյն՝ զՄատթէոս<sup>508</sup>, քանզի որպէս զմարդ ծնեալ ասէ զՔրիստոս ի Բեղղեհէմ<sup>509</sup>։

Իսկ Մարկոս դէմք առիւծուն նշանակի<sup>510</sup>, քանզի նա ասէ՝ ել Քրիստոս իբրև զառիւծ ի Յորդանանէ ի Դաթան<sup>511</sup>։ Եւ սատանայ առիւծ ասի<sup>512</sup> վասն շաղղակեցութեանն եւ զազանաբար կապտելոյն եւ գիշելոյն զկենդանիսն։ Այլ Փրկիչն մեր կոչեցաւ առիւծ վասն զաւրութեանն եւ ի վերայ կենդանեացն թազաւորելով։ Չնոյն եւ Մարկոս ասէ՝ ել Քրիստոս իբրև զառիւծ ի Յորդանանէ, այսինքն է՝ թագաւորել։

Իսկ դէմք եղինն նշանակէ զԼուկաս, քանզի նա ասէ՝ որպէս զեզն  
20 փոխանակ աշխարհի զենեալ<sup>513</sup>։

Իսկ դէմք արծուոյն նշանակէ զՅովհաննէս, որպէս ասէ զվերստին քարոզութիւնն, եւ ոչ ի յերկրէ եւ ոչ ի մարմնաւորութիւնն սկասնի, որպէս եւ այլքն, այլ նման արազաթիւ արծուոյ սրաթոռիչ լեալ՝ սկիզբն արարեալ ասէ, թէ՛ ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն, որով մամենայն ինչ եղեւ<sup>514</sup>։ Յիրաւի անուանէ զնա արծուի բարձրաթոռիչ եւ թռչուն երկնից<sup>515</sup>։

Արդ, ահա ցուցաք փոխանակ երկնից՝ զեկեղեցի, փոխանակ շորեքկերպեան կենդանեացն՝ զաւետարանիչսն, եւ նոցա փոխանակ՝ զհայրապետացն զասոն եւ զնոցին աթոռսն։ Աւագ եւ մեծ աթոռ<sup>(45)</sup> Անտիոքայն՝  
30 զՄատթէոսին, Աղէկոսանդրուն՝ զՄարկոսին, Հոռոմայն՝ զԼուկասուն, Եփեսոսին՝ զՅովհաննուն։

Այս կարդաւորութեամբ յարեցաւ եկեղեցի մինչեւ յաւուրս թագաւորութեան Յուստիանոսի, ըստ շորեքկերպեան կենդանեացն, շորեքկուսի եղեմական բխմանն<sup>516</sup>, ըստ շորեքեզերեան տիեզերաց, ըստ չորից  
35 աւետարանչացն բաժանեցաւ աշխարհս յիշխանութիւն չորից աւետարան-

506 Ա. Կորնթ., ԺԲ, 8, 28

507 Յայտն. Յովհ., Գ, 6—7: Եզեկ., Ժ, 14

508 Նույն տեղում։

509 Մատթ., Ա, 16 և այլուր, Բ, 1

510 Յայտն. Յովհ., Գ, 7: Եզեկ., Ժ, 14

511 Այսպիսի նախադասութիւնն Աստվածաշնչի մեջ չի հանդիպում։

512 Ա. Պետրոսի, Ե, 8

513 Յայտն. Յովհ., ԺԳ, 8

514 Յովհ., Ա, 1—3

515 Տե՛ս Եզեկ., Ժ, 14: Յայտն. Յովհ., Գ, 7

516 Տե՛ս Մնունդք, Բ, 10

չացն: Իսկ Յուստիանոս իբրև թագաւորեաց, կամ եղև փոխել զաթոռ սրբոյն Յովհաննու յմփեսոսէ ի Կոստանդնուպայիս, եւ հաւանեցուցեալ զժողովն՝ եւ զսրբոյն Մատթէոսին՝ յԱնտիոքայ յերուսաղեմ, զի մինչ ի նորա ժամանակն ինքնագլուխք էին եպիսկոպոսքն, ոչ ինքեանք՝ ընդ ալլաւք, եւ ոչ ալլք՝ ընդ նաքաւք. Կոստանդնուպայիս՝ վասն թագաւորելոյ քաղաքին, եւ Երուսաղէմ՝ վասն զի քաղաք երկնաւոր թագաւորին է: Բայց ի ժողովս հրամայեցին սուրբ հարքն՝ Երուսաղեմի եպիսկոպոսին գեր ի վերոյ նստիլ:

Ահա, ասացաք զեկեղեցւոյ առաջին դասն՝ զհայրապետսն, որք ունին զառաքելական զգեստ եւ զեմիփորոն<sup>(146)</sup> հինգկրկին: Եւ զործ է հայրապետին ձեռնադրել զարհիեպիսկոպոսս, որք են ընդ վիճակաւ ի շորս բաժնի տիեզերաց. նա տայ հրաման վասն ժողով առնելոյ:

Երկրորդ դասք եկեղեցւոյ՝ արքեպիսկոպոսք: Սքեմ է նոցա արականու<sup>(147)</sup> պճղնաւոր եւ փիլոն, եւ ի վերայ՝ եմիփորոն շորեքկրկին: Եւ զործ է նոցա ձեռնադրել մետրապալիտս եւ արհնել ձէթ կնքոյ: Եւ ունին իշխանութիւն ձեռնադրել պատրիարզս:

Երրորդ դասք եկեղեցւոյ՝ մետրապալիտք, որ թարգմանին մայրաքաղաքացիք, որք ունին զնոյն սքեմ, բայց եմիփորոն երեքկրկին: Գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոսունս եւ արհնել ձէթ կնքոյ վասն յաւելումս ծին արկանելոյ յառաքելական ձիթոյն, գոր պահէ եկեղեցի յաւելումով: Եւ երեք մետրապալիտք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց արքեպիսկոպոս:

Չորրորդ դասք եկեղեցւոյ եպիսկոպոսունք են, որք ունին զնոյն սքեմ, բայց եմիփորոն կրկին: Գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս: Եւ երեք եպիսկոպոսունք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց մետրապալիտ: Եւ զործ է նոցա սեղան արհնել, եւ աւաղան, եւ եւղ աւժութեան:

Հինգերորդ դասք եկեղեցւոյ՝ եոիսունք եւ պապասք, որք են քահանայք եւ երիցունք: Քահանայք ի քաղաքս լինին, եւ երիցունք՝ ի զելուս եւ յազարակս. եւ երկոքեան մի են, բայց յաղազս պատուոյն անուանքն զանազանին: Բայց սքեմ է նոցա՝ նոցայն, բայց յեմիփորոնէ, զի սոքա փակեղն միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն, նոքա եւ բաճկոնաւ իշխեն կալ ի վերայ բեմին: Եւ զործ է նոցա պատարագ մատուցանել, եւ բաշխել զկենդանարար մարմինն, եւ մկրտել, եւ աղաթս մատուցանել, եւ խաղաղութիւն տալ. եւ ուր եպիսկոպոսն չլինի՝ արհնել զխաշն եւ զպատարագն սրբութեան: Եւ թէ հրաման առեալ իցէ յեպիսկոպոսէն, եւ զիւղն աւժութեան իշխանութիւն ունի արհնել եւ ձեռնադրել զանագանոսս, եւ զփսաղտսն, եւ զկրանաւորսն:

Վեցերորդ դասք՝ սարկաւագունքն: Եւ սքեմ է նոցա նոյն, բայց հոլանի կալ, է առանց զաւտոյ միայն, եւ զահեակ ուսովն արկեալ զուրարն: Գործ է նոցա Աւետարան կարդալ եւ քարոզել, եւ զմաղզմայն, եւ զսկիհն, եւ զքշոցն բերել ի սննեկէն ի սեղանն եւ ի սեղանոյն արտաքս զբաշխումն, եւ խունկ ծխել եւ առնել որ ինչ միանգամ սպասաւորութիւն է. եւ նստիլ՝ ոչ ամենեւիմք, բայց ի գիշերոյն ցժամ առաւաւտին, եւ եթէ հրամայէ քահանայն<sup>517</sup>: Են եւ ի կանանց սարկաւագունք ձեռնադրեալք<sup>(148)</sup>, որք

517 Տե՛ս Կանոնք Լաոդիկեայ Ի. Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 234

կոչին սարկաւագուհիք, վասն քարոզելոյ կանանց եւ ընթեռնուլ Աւետարան, զի մի՛ մտցէ անդ այլ, եւ մի՛ նա արտաքս, քան զվանսն, ելանիցէ: Բայց յորժամ մկրտութիւն առնեն քահանայքն, զան յաւաղանն, զի վկանայսն նոքա լուանան ջրով քառութեանն՝ ներքոյ վարագուրին: Աքեմ է նոցա ամենայն ինչ հաւատաւորաց, բայց ի ճակատն խաշ լինի, եւ քուշկէն ի յաջմէ կողմանէ ի կախ ունելով: Մի՛ ինչ նոր եւ անկարգ վարկցիս գայս, քանզի ի սրբոյ առաքելոյն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ՝ յանձն առնեմ ձեզ զՓիբէ քոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցւոյն<sup>518</sup>:

Եւթներորդ զասք<sup>(149)</sup> եկեղեցւոյ՝ զպիրք, որ են կէս սարկաւագաց: Աքեմ է նոցա պատմութեան երկփեղկեան եւ առանց աւձեաց: Եւ գործ է նոցա հոլանի եւ անգաւտի կալ ի վերայ բեմբի, եւ ունել զքշոցան, եւ արկանել ջուր ձեռաց քահանայից, եւ արկանել խունկս, եւ սպասաւորել զգեստուց քահանայից:

Ութերորդ զասք՝ անագանոսք: Աքեմ է նոցա խզել զվարսսն եւ փոքրել զհերս իւրեանց եւ հոլանի ընթեռնուլ զՄարգարէականսն եւ գառաքելական զգիրս ի մէջ տաճարին եւ արտաքս ի մէջ ժողովրդոցն: Եւ գործ է նոցա կալ առ դրան եւ արգելուլ զանարժանիցն մուտս յեկեղեցի, եւ դարձեալ՝ զերեխայսն եւ որք ոչ են կարող հազորդիլ՝ արտաքս հանէ, յորժամ սարկաւագն քարոզէ, առ դրունս ելանել եւ աղաթել:

Իններորդ զասք փսաղտք, որ են սաղմոս երգողք: Աքեմ է նոցա ոչ այլ ինչ զգեստու երեւիլ, բայց ի կղերիկոսացն բոլոր պատմութեանաց, եւ սպիտակ ունել պարէգաւտկունս: Եւ գործ է նոցա երգել զսաղմոսս եւ ձայնիւ՝ ստողոցիսն:

Արդ, է յետ այսմ եւ այլ գործ հայրապետի, գոր եւ Փռանգք պատմանեն, կարգել եւ զղասս թաղաւորաց: Զի թէ մարդ պատկեր է Աստուծոյ, եւ որք ի Քրիստոս մկրտեալ են՝ զՔրիստոս գգեցեալ են, որչափ եւս առանել թագաւորք հաւատացեալք, որք ի վերայ զխոյն բերեն զնշան տէրունւոյն: Պարտ է նոցա նմանել Քրիստոսի, ոչ միայն խոնարհամտել եւ զարշարանս Քրիստոսի ի մարմնի իւրում կրել, այլ եւ փառացն նմանել, որ ցուցանէ զքաղցրութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ, զի եւ հեթանոս թագաւորաց լուեալ՝ յաւժարեցոցին դալ յերկրպաղութիւն Տեառն Աստուծոյ մերոյ:

Եւ այս է նմանութիւն երկնաւոր դասուցն.

Հրեշտակքն՝ առաքելական զգեստիւ յաղաթս.

Հրեշտակապետքն՝ քղամղաւ.

Իշխանութիւնքն՝ գնդաւ առաքելական զգեստիւ յաղաթս.

Ջաւրութիւնքն՝ առաքելական զգեստիւ.

Աթոռքն՝ հրպատիւք.

Պետութիւնքն՝ առաքելական զգեստիւ.

Տէրութիւնքն՝ պսակաւ առաքելական զգեստիւ.

Սերովբէքն՝ վեցթեւանք.

Քերովբէքն՝ ութթեւանք եւ բազմաշեալք:

Չայս ամենայն զմտաւ ածելով սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին, որ ըստ դիւթիւթեան կարգ էին հեթանոսաց՝ զայն եղծեալ խանգարեաց եւ

այսպէս գերկնից եւ զեկեղեցւոյ յարմարեաց զկարգս դասուցն ի սլատիւ  
 թազաւորութեանն եւ ի պատիւ պաղատանն եւ զտեղիս կայանիցն իւրա-  
 քանչիւրոցն որոշեաց եւ զգործս յայտնեաց, որք են այսոքիկ:

Առաջին դաս պաղատանն՝ եղենդիարքն<sup>(150)</sup>, որք են պահապանք ոսկի  
 5 վաղարին: Սքեմ է նոցա զրատք մետաքսեայք վզնատին կազմաւ, եւ  
 ունին գաւազանս ոսկիս: Եւ գործ է նոցա տանել յառաջ զագաւորողսն<sup>(151)</sup>  
 եւ զայլսն, զոր խնդրէ արքայն:

Երկրորդ դաս վեստիտորայն է<sup>(152)</sup>, որք են պսակակապք արքային:  
 Սքեմ է նոցա զրատք դիպակք եւ զաղտազէնք ի կոպազս ոսկիս:

10 Երրորդ դաս կանտիտորայն է<sup>(153)</sup>, որք զոսկէ տէգան ունին: Սքեմ է  
 նոցա բեհեզ կտաւ ճամկաւոր եւ մանեակ ոսկի՝ ի պարանոցսն: Եւ յորժամ  
 ի ճանապարհի լինի արքայն, գտուրք խաչն ի նոցանէ կրէ: Եւ ի նոցանէ  
 լինին սպատխարք<sup>(154)</sup> շորս արք, որք զզէնսն կրեն:

Չորրորդ դաս պաղատանն պոքքսետորայն է<sup>(155)</sup>, որք զվաղբոսն  
 15 ունին եւ ասպարս երկաթիս: Սքեմ է նոցա զրատք կաճէ դիպակաւ: Եւ  
 յորժամ վախճանի արքայն, նոքա են, որ զդազազսն եւ զզահոյսն բառ-  
 նան:

Հինգերորդ դաս պաղատանն եսկոպոտիւրայն է<sup>(156)</sup>, որք լինին  
 մեծահասակք եւ ունին վահանս կմբրաւորս<sup>(157)</sup> եւ ասպարս փոքրս: Եւ  
 20 սքեմ է նոցա զրատք կտաւիք ուղղորդք, վարչամակս եւ կարթպատս  
 ճարմանդաւ եւ դաւտի ոսկի կրկին: Եւ ի սոցանէ լինին՝ որք սրկբունք<sup>(158)</sup>  
 եւ մանդատորք<sup>(160)</sup>:

Վեցրորդ դաս պաղատանն՝ սարատորք<sup>(161)</sup>, որք զձին թամբեն եւ  
 հեծուցանեն զարքայն: Եւ սքեմ է նոցա ապու կալամին զրատք կազմաւ  
 25 եւ կապակք<sup>(162)</sup>, եւ ի ձեռս իւրեանց՝ միասայրիք եւ ասպարք փոքր:

Եւթներորդ դաս պաղատանն՝ սքողարքն<sup>(163)</sup>: Եւ սքեմ է նոցա զրատք  
 կտաւիք եւ թեզանիքն դիպակաւ: Ունին նիզակս եւ սեաւ ասպարս: Եւ ի  
 սոցանէ լինին՝ որք զդրաւսն եւ զվիշապագլուխսն կրեն եւ կոչին սիզ-  
 նայք<sup>(164)</sup>:

30 Ութերորդ դաս պաղատանն՝ դեկանիոնքն<sup>(165)</sup>, որք են աղեղնաւորքն:  
 Եւ ունին կրկին վարոցս եւ ասպարս անկազմս, սատակս: Եւ սքեմ է նոցա  
 այծենի դրատք կարմիր, եւ ունին տրեխք: Եւ յորժամ արքայն ի դրամոնի  
 լինի, նոքա վարեն զամբոխն: Եւ զսոսա կոչեն Եբրայեցիքն քերեթին<sup>(166)</sup>:

Իններորդ դաս պաղատանն՝ կիւտորքն<sup>(167)</sup>, որք են սուրհանդակք  
 35 հետեւակք: Եւ սքեմ է նոցա բամբակէ զրատք կազմաւ ճամկաւք եւ  
 զանկապանաւք, ունին հողաթափս: Եւ են սոքա սպասաւորք: Եւ զսոսա  
 կոչեն Եբրայեցիք պիւելեթին<sup>(168)</sup>: Եւ ամենեքեան հոլանի կան եւ գաւտիս  
 ունին, բայց սոքա միայն են անգաւտի:

Այսոքիկ են դասք պաղատանն պահապանք, զինուորութիւնք որձիք  
 40 յիւրաքանչիւր կայեանս, արտաքոյ ոսկի բեղարին, եւ այս է նոցա գործ  
 եւ սքեմ:

Են եւ այլ սպասաւորք արքունիք, ոմանք՝ որձիք, եւ ոմանք՝ կուրտք,  
 որ ոչ են յինն զինուորութեանցն, այլ արձակք են, ոչ դասք են եւ ոչ  
 շափս քանեաց, ոչ կայք տեղեաց պահպանութեան, այլ երբեմն շատ  
 45 լինին եւ երբեմն՝ սակաւ:

Առաջին՝ դեմետրիտոսք<sup>(169)</sup>, որք են պատգամասացք:

Երկրորդ՝ ռեքինարքն<sup>(170)</sup>, որք զյայտակարարսն կարդան առաջի արքային:

Երրորդ՝ ասին կրիտքն<sup>(171)</sup>, որք են թղթագիրք արքային:

Չորրորդ՝ վենետորք<sup>(172)</sup> ասին, որք զբաղանիսն կազմեն եւ լուանան 5 գարքային:

Հինգերորդ՝ տոհվլինարք<sup>(173)</sup>, որք են տաճարապետք, որք զկոչեալսն ի հաց մատուցանեն առաջի արքային:

Իսկ ի կոտորացն լինին ակտարք<sup>(174)</sup>, որք են նշանագիրք:

Եւ սպսիտարք<sup>(175)</sup> ասին, որք արկանեն ձեռաց շուր արքային:

10 Ապոկրիսիարք<sup>(176)</sup> ասին՝ սպասաւորք եկեղեցւոյն:

Իսկ փղակոնք<sup>(177)</sup>՝ նոքա են կցրդասացք եւ արձակապաշտանք:

Սպուղէք<sup>(178)</sup>՝ կրանաւորք քաղաքին, որոց գործ է նոցա զգոբողայան, եւ զպաշտանսն, եւ զկանոնսն երգել:

Իսկ արասք եւ մոնոզոնք<sup>(179)</sup>, որք խարագնագրեստք են եւ ըստ կամաց 15 իրեանց զան ի պաշտանսն:

Իսկ փղակոնքն եւ սպուղէս մոնաքոսքն<sup>(180)</sup>՝ որք են միաւորք:

Դոմետիկոսք<sup>(181)</sup>՝ որք են հաւատագիրք, որք զարտաքնոցն աստուածաբանութիւնսն ուսանին եւ եկեղեցականաւքն վարժին:

Այսոքիկ ամենեքեան ոչ են ի յինն դասուէն եկեղեցւոյ եւ ոչ եթէ ի 20 սպասաւորութիւն ինչ հպին, ոչ ի յամբոն ելանեն, եւ ոչ ի բեմն մտեն, այլ են ամենեքեան սպասաւորք եւ փառաբանիչք, կարգեալք ի տան Տեառն Աստուծոյ:

Եւ քանզի վայս ոչ վայրասլար ինչ եղաք ի գիրս դատաստանի, այլ զի դիտասչիք, թէ այսոքիք պարտին Հայք ի Յունաց, որպէս Աղուանիցն 25 ուսուցանէ Պատմութիւն եւ այլք: Վասն որոյ հարկաւոր է այս կարգ յեկեղեցի ի հայրապետաց կարգիլ, եւ անփոյթ արարեալ՝ միշտ պարտաւոր ցուցանին յատեան դատաստանին: Քանզի ի մեր Լուսաւորչէն եւ այս դասք պաշտաման երեւի յեկեղեցի, ըստ որում եւ ի սրբոյն յիշի յնշիշայի Պատմութեանն եւ այս դասք, ասելով՝ ընդ ձեզ կան զբակարգացք եւ 30 սաղմոսասացք: Նմանապէս եւ սարկաւազաց յիշին անուանք եւ ի կանոնս եւ յայս:

Արդ, յայտ է յաւերածոյ եկեղեցեաց խանգարիլ եւ այս կարգի, եւ զկնի՝ ի հեղգութենէ ուղղչաց: Թէպէտ եւ այլ ինչ յաւոհն սլատճառք, սակայն արդարացուցանել ոչ կարեն: Եւ թէ այլազգ այսոքիկ յիշատակին 35 ի սրբոյն Դիոնէսիոսի գիրս եւ աստ՝ այլազգ՝ փոփոխմամբ, սակայն զթիւն ամբողջ պահեն, ուտի ոչ ինչ երկբայելիք են: Եւ արգ, ըստ ճշմարիտ դատաստանի վարելի է զեկեղեցի այսպիսի կարգաւ ըստ երկնայնոցն, զի թէ տուն թազաւորի ըստ այսմ յարինի, ո՞րչափ երկնաւոր թազաւորին Քրիստոսի:

40

ԳԼՈՒԽ ՄԻՋ

ՅԱՂԱԿՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ, ԵԹԷ ՈՔ ԶՈՔ, ՈՐ ԶԻՅԷ ԻԻՐ, Ի ԳՈՐԾ ԱՌՅՔԷ

Իսկ եթէ ոք զոք, որ շիցէ իւր, ի գործ իւր առաքէ, եւ անդ որոգայթի, արեան պարտ է<sup>519</sup>:

<sup>519</sup> Գաղիթ Ալավկա որդու կանոնները, ԽԳ, «Էջմիածին», 1953:

Զգուշանալ հրամայէ կանոնքս<sup>(182)</sup>՝ ոչ վայրապար զոք, որ շիցէ վարձկան եւ կամ այլ արիւնակաւ իւր, ի գործ առաքել, զի արեան դատաստան հրամայէ վնասելոցն լինել:

5 Եւ այդ ցուցեալ է դատաստան հոգեւորապէս եւ մարմնաւորապէս<sup>520</sup>: Սակայն քննութիւն լիցի արիւնակի առաքողին երախտեաց եւ պատահման մահուն կամայի եւ ակամայի:

#### Գ Լ Ո Ւ Ռ Ս Մ Ի Է

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՐՁԿԱՆԱՅ

10 Այլ եթէ վարձկան ոք լինի եւ ասիցէ ցտանուտէր տանն, թէ առաքեալս զիս եւ կամ տուր ինձ գործ, զի արարից, իսկ նա յառաջապատրաստ ծանուցանէ նմա զորոզայթ վնասուն, եւ վարձկանն առ կարիս հարկին իւրոյ յանձն առնուցու, եւ սա կրկին զանպարտութեան բանն ասէ առ նա, եւ անդ պատահի վարձկանին մահ, անպարտ է, եւ եթէ անզգուշութեամբ ի բազմաց վկայեալ վնասն առաքիցէ կամ զործել հրամայիցէ, եւ անդ  
15 հասանիցէ նմա որոգայթ մահու, արեան պարտ է<sup>521</sup>:

Յայտնի է այս դատաստան կանոնական<sup>(182)</sup>: Զի ըստ կամաց վարձկանին երթալ ի գործ՝ անպարտ առաքողն է, իսկ հարկաւորեայն եւ ի վկայեալ վնասն առաքեալ՝ ընդ դատաստանաւ արեան է, թէպէտ եւ վարձու իցէ:

20

#### Գ Լ Ո Ւ Ռ Ս Մ Ի Ը

### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՀՅԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑԻ ԾԻՆՈՂԱՅ

Այլ որ վասն հակառակ եկեղեցի շինելոյ հարցեալ էիր<sup>(182)</sup>, զրեալ է վասն այսորիկ, թէ՛ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա աւճ եւ սպանց<sup>522</sup>, այսինքն՝ զսահման եւ զկարգ, զոր եղին մարզարէքն, եւ  
25 առաքեալքն, եւ վարդապետք եկեղեցւոյ: Արդ, որ ղհարանցն մերոց զեղեալ կարգն խափանէ եւ հակառակ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ եւ ի կեանս եւ յամենայն քահանայական կարգէն լուծցին. եւ այլք, որ նոցին կամակից եղեն, զնոյն պատիժս կրեսցեն, եւ զշինեալ եկեղեցին ի ժառանգաւորս տեղեացն թողցնն  
30 իրաւապէս: Ապա թէ մարդասիրապէս առնիցեն, զզինս աշխատութեան ցնոսա տայցեն, ապա թէ այս ոչ լինիցի, քակտեսցեն հանդարտութեամբ եւ մի՛ այրեսցեն: Իսկ եթէ ամենայն բազմութիւնքն եպիսկոպոսաւք, եւ քահանայաւք, եւ միաբան ժողովրդականաւք զշինեալն կամեսցին, մի՛ ոք հակառակ վիճաբանեսցէ ընդդէմ միաբանական հրամանացն: Ապա թէ  
35 յանդգնի ոք եւ հուր դիցէ եկեղեցւոյն կամ յաւազաց կաշառաւք բռնութիւն

<sup>520</sup> Տե՛ս մասնավորապէս հոդվ. ԼԾ

<sup>521</sup> Դատիթ Ալավկա որդու կանոնները, ԽԳ, «Էջմիածին», 1953:

<sup>522</sup> Ժողովօղ, Ժ, 8

բերիցէ ի մէջ ն: քակտիցէ գեկեղեցին, աստուածամարտք են այնպիսիքն եւ ընդ խաչահանունն հղիցին, իսկ եթէ զղոյսնայցեն, մինչեւ ցմահ ապաշխարեսցեն<sup>523</sup> եւ յիս կենաց իրեանց յաշխարհէ հաղորդեսցին:

5 Վի ամենայն ճշգրտութեամբ եղևայ և այս դատաստան կանոնական<sup>524</sup>, զի հակառակ շինելն յաղազս ազահուսթեան խափանելի է, բայց կամաւք հպիսկոպոսին եւ այլոցն հաստատի, զի մի՛ ժառանգութիւն ոք գեկեղեցի առնիցէ<sup>525</sup>, եւ այլ եկեղեցի ըստ պատշաճի շտայցէ շինել, զի միշտ հպիսկոպոսաց է ժառանգութիւն եկեղեցի եւ ոչ քահանայից ըստ ինքեան կամաց:

10

**ԳՆՈՒՆ ՄԻԹ**

**ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՔՍՈՐԵԼՈՑ**

Արդ, եթէ արժանաւոր ոք աքսորանաց իցէ, որք միանգամ յեկեղեցական կարգէ իցեն, ըստ իրաւանց այսպէս լիցի. սարկաւազք եւ քահանայք լուծցին յեպիսկոպոսէ, զի նա և ձեռնադրող նոցա . սարկաւազուհիք՝ ի սարկաւազաց. եւ աշխարհականք, եւ հաւատաւորք, եւ կրանաւորք եւ որք միանգամ ի քահանայէ ձեռնադրին՝ ի քահանայէն. հպիսկոպոսունք՝ յիւրաքանչիւր ձեռնադրողաց. եւ կաթողիկոս՝ կամ ի կաթողիկոսէ եւ կամ յիւրոց ձեռնադրողաց հպիսկոպոսաց. իսկ վարդապետ՝ ի վարդապետաց հրամանատուաց: Այլ վարդապետաց ոչ և ըստ իրաւանց զքահանայ աքսորել՝ առնլով զկարգն, բայց միայն որոշել. նաեւ զիւրաքանչիւր զղոս խրատել, եւ յանդիմանել, եւ յուղղութիւն ածել իշխան լիցի, իսկ աքսորել՝ նոցունց իշխանաւքն, այսինքն՝ ձեռնադրողաւքն, արասցէ, զի բանիւ իշխէ ամենեցունց: Այլ հայրապետք ամենեցունց իշխեն, այլ ոչ ամենեքեան՝ նմա, բայց ձեռնադրողք նորա<sup>526</sup>:

25

**ԳՆՈՒՆ ՄԼ**

**ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՔՍՈՐԵԼՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՒ ՈՐԲ ԸՆԴ ՆԱՂԱԻ**

Թագաւորք, կարգեալ յԱստուծոյ, որպէս Իսրայելին, յԱստուծոյ բարձցին եւ կամ աքսորեսցին, իսկ ի մարդկանէ կացեալք՝ ի նոցունց աքսորեսցին: Եթէ իշխանք թագաւորեցուցեն, եւ ոչ ըստ արժանւոյն վարէ զթագաւորութիւնն, ի նոցունց կարգողացն աքսորեսցի. այլ որդոց նոցա ոչ է իրաւացի փոխել:

30

Իսկ թագաւորութիւն սեփական լիցի ի հարէ անկեալ առ որդի: Իսկ զիշխանս, զոր կարգէ թագաւորն, ի նմանէ եւ աքսորեսցին եւ կամ խրատեսցին:

<sup>523</sup> Դավիթ Աշակա որդու կանոններք, ԿԱ, «էջմիածին», 1953  
<sup>524</sup> Տե՛ս հոգվ. ՃԼԹ, նաև Կանոնք Հարանց հետևողաց ԻՅ  
<sup>525</sup> Տե՛ս հոգվ. Գ, Ե, Մէ  
<sup>526</sup> Տե՛ս հոգվ. Դ, նաև Կանոնք Նիկիական Ե, Կանոնք Շահապիվանի ԺԸ

Իսկ զթագաւոր խրատել, թէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամաւք լիցի այլ թագաւորի եւ հայրապետի, եւ հաւասարութեամբ ամենեկուն:

5 Իսկ եթէ իշխանք եւ ազատք լիքեանց կացուցանեն իշխան, ի նոցունց միաբանութենէ արսորեսցի եւ խրատեսցի: Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւոր արսորեսցէ եւ խրատեսցէ:

Այլ իշխանաց իշխան՝ զիշխան խրատել եւ կամ արսորել եւ զազատ. թէ ի նոցունց կարգեալ իցէ՝ նոցունց միաբանութեամբ արասցէ, եւ թէ ի թագաւորէ՝ թագաւորին կամաւք արասցէ:

10 Իսկ ազատք զգինուորս ոչ իշխան խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի:

Նմանապէս զինուորք զշինականս ո՛չ կարեն արսորել եւ ոչ խրատել, այլ արսորել՝ ազատք, եւ խրատել՝ իշխանք:

15 Զայդ ըստ այդմ կարգի իրաւացի գիտեմ զատաստան ի տունս թագաւորաց:

### ԳՆՈՒՅՈ ՄՂԱ

#### ՅԱՂԱԳՍ ԳԱՏԱՍՏԱՆԱՋ ՎՆԱՍՈՂԱՑ ԶԿԵՆԴԱՆԻՍ Ի ՀԱՆՆԷԼ ԶՆՈՍԱ Ի ՎՆԱՍԷ ԵՒ ԿԱՄ ՈՉ

20 Եթէ ի կենդանեաց, ի սրբոց կամ յանսրբոց, մտեալ յանդաստան, կամ յաջգի, կամ յայլ ինչ այսպիսի, յաւրան կամ ի խոտ դիզեալ, եւ տէր նորա գշարեալ հարցէ եւ սպանցլ, դատաստան լիցի՝ զեղեալ վնասն վճարմամբ հատուցանել, եւ նա զսպանեալ կենդանին, որ հհարն, ըստ իրաւանց լիով հատուցէ, զի պարտ էր ի վնասէն հանել, այլ ոչ սպանանել: Այլ ի հարկանելն բնութիւն լիցի. եւ եթէ խրտուցեալ անկաւ եւ մեռաւ, զի ոչ զմեռանիլ կամէր, այլ զփախուցանել, այդոքիկ յակամայից լիցին,—զկէսն հատուցլ գնոյն. ի հարուածն տեսցին կամքն: Իսկ եթէ բժշկելի հարուածն իցէ, զխափանածոյն եւ զբժշկութեանն տացլ. այլ եթէ անբժշկելի հարուածն իցէ, եթէ ոտից, եւ ի սուրբ կենդանեաց իցէ, զգինն լիով տացէ, եւ նորա շաղիղն լիցի, եթէ յանսրբոց՝ բաւանդակ հատուցի: Եթէ կուրացուցէ, կամ զատամն ընկենուցու, կամ եղջիւր, կամ զկող բեկցէ, թէպէտ եւ բժշկիցի, զգինն ի շորս բաժանեալ՝ մի մասն ընդ միոյ վնասու տացի. եւ այդ ուտելեաց եւ անուտելեաց լիցի: Եւ եթէ զագի կտրիցէ, մի ի շորից մասանցն լիցի:

35 Ապա թէ տեսնն անասնոյն բազում անգամ ասացեալ իցէ վնասն, եւ նա անփոյթ արասցէ, տեսցին այդոքիկ եւ այնպէս դատեսցին:

Իսկ ոտիցն կաղութիւնն մնացեալ՝ մի ի շորիցն լիցի գնոյն տուգանքն:

Այլ ընդ խաղ եւ վայրապար վնասողացն առաւելութեամբ լիցի տուգանքն ի բեկանելն եւ ի հատուցանելն զգինն ի սպանանելն:

ԳՆՈՒԽ ՄԼԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆՔՅ, ԵԹԷ ՉԱՐ ԿԱՄԱԻՔ ԵՒ ԿԱՄ ԸՆԳ ԽԱՂ  
ԽՐՏՈՒՅԱՆԷ ՈՔ ԶԵՐՈՒԼԱՐ, ԵՒ ԱՆԿԵԱԼ Ի ՆՄԱՆԷ ՈՔ ՄԵՌՅԹԷ ԿԱՄ  
ԲԵԿՑԻ, ԵՒ ԵԹԷ ՅԱՅԼ ԻՆՉ ԿԵՆԴԱՆԵԱՅ, ԿԱՄ ՄԻԱՅՆ ԽՐՏՉԻՑԻ  
ԱՆՊԱՏՃԱՌ Ի ՏԵՍԱՆԵԼ ԶՈՔ

5

Եթէ կատարեալ ոք իցէ եւ շար կամաւք գործիցէ, եւ անկեալն մեռցի,  
արեան դատաստան լիցի, որպէս գրեալն է՝ հատուցի<sup>527</sup>. Իսկ բեկեալն՝  
բժշկութեանն եւ դարմանոյն տացի. իսկ զգալութեանցն վնասելոյ՝ որպէս  
եւ գրեալն է, այնպէս հատուցի<sup>528</sup>. Իսկ ոչ անբիծ բժշկեալն՝ կէս զգալու-  
թեանցն հատուցի:

10

Ապա եթէ ընդ խաղ իցէ, նոյն լիցի դատաստան, զի ոչ խաղալ,  
այլ զարհուրել արժան էր, սակայն ներեսցի վասն սովորութեան աշ-  
խարհի՝ մինչ ի կէսն հատուցանել, եւ կամ յերիցն մի լիցի: Սոյն աւրինակ  
եւ ապաշխարութիւնն լիցի, թէ ի դատաստան ոչ մտանէ: Իսկ թէ մանուկ  
իցէ, տեսցի հասակն, որպէս յառաջագոյն գրեալն է<sup>529</sup>, եւ այնպէս դատեսցի,  
միանգամայն շարակամութեամբն առնել եւ կամ ընդ խաղ:

15

Եւ յամենայնդ ճշգրտութեամբ տեսցի կամայն եւ ակամայն, զի  
կատարեալ ակամայ է, որոց յետոյ զեղջ հետեւի, իսկ կամաւորին՝  
ուրախութիւն:

20

Այլ թէ ըստ ինքեան զոք տեսեալ խրոշիցի, եւ այնպէս վնասն լիցի  
մահու, թէ ի թշնամեաց յայլազգեաց իցէ, զի բնութեամբ է նոցա ի կո-  
րուստ մեր խնդալ, կէս արեան դատաստան լիցի. ապա եթէ քրիստոնեայ  
թշնամի իցէ՝ կիսոյ կէս, այլ ըստ ապաշխարութեանն՝ կէսն լիցի: Եւ  
բեկելոյն եւ զգալութեանցն վնասելոյն այդոքիւք դատեսցին:

25

Իսկ եթէ շիցէ թշնամի, սակայն յահուր շարժմամբ վնասիցէ, մի՛  
լիցի անպարտ յաղազս այլոյ ժամանակի զգուշութեան. քննելով՝ սակաւ  
յամենայնսն տուգանք լիցի: Ապա թէ համեստ շարժմամբ եւ ըստ կարգի  
զնացն իցէ, սուգանաց դատաստան մի՛ լիցի, բայց ըստ իւրոյ խղճին եւ  
ըստ կամաց. նմանապէս եւ ապաշխարութիւնն լիցի:

30

ԳՆՈՒԽ ՄԼԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆՔՅ ԱԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՄԱՅ ՈՊԱՆՈՒԹԵԱՆՅ

Եւ ակամայ սպանութիւն լինի բազում սուրինակաւ, սակայն զնշա-  
նական տացուք շափաւորապէս: Եւ է այսպէս:

35

Ձի ի հարկանել ուրուք փայտ եւ ոստեալ տտայարն ումեք զիպեալ  
սպանցէ<sup>530</sup>:

527 ՏԵՍ հոդվ. 4Ե—ԸԲ  
528 ՏԵՍ հոդվ. Բ և ԿԳ  
529 ՏԵՍ հոդվ. ԻԲ  
530 ՏԵՍ Բ. օրին., ԺԲ, 5

Եւ կամ ի խոնարհ ի բարձանց եւ կամ ի լերանց թողեալ փայտ եւ կամ քար՝ զիպեալ սպանցէ:

Եւ կամ յազգոյ, եւ կամ ի պարտիզէ, եւ կամ յայլ ինչ աշխարհեաց արտաքս ոք ձգիցէ քար եւ սպանցէ<sup>531</sup>:

5 Եւ կամ ի ծառ ձգիցէ քար թափել պտուղ եւ զիպեալ սպանցէ, եւ կամ ի ծառոյ ի խոնարհ թափել պտուղ, եւ քար մնացեալ, եւ կամ դաւազան անկեալ եւ կամ այլ ինչ աշխարհի, ուստի մահ գործիցի<sup>532</sup>:

Եւ կամ վարդապետ զաշակերտ վասն խրատու ըստ շափոյ հարկանիցէ<sup>533</sup>, եւ կամ հայր՝ զորդի, եւ կամ մայր՝ զղուտոր<sup>534</sup>, կամ զհարսն՝ սկեսոր, կամ եղբայր՝ զեղբայր, կամ տէր՝ զծառայ, կամ զաղախին՝ տիկին, կամ ոք՝ զոք, ուստի վնաս մահու լիցի<sup>535</sup>:

10 Եւ եթէ զերիվար ոք ընդ հրապտրակ վարիցէ<sup>536</sup>, եւ կամ զայլ ինչ ի կենդանեաց, կամ զսայլ, եւ առ ոտն կոխեալ՝ մահ լիցի:

Կամ նեո ոք որսոյ ձգիցէ, եւ կամ ի նպատակ, եւ կամ ի վայրի, եւ

15 պատահիցի ումեք եւ սպանցէ:  
Եւ եթէ քար ոք ձգիցէ՝ կարծեցեալ կիսար<sup>(183)</sup> գոլ:

Է եւ այլազգ ակամայ, յորժամ զհետ մտանէ եղբայր զեղբայր սպանանել, եւ նա հարկատրաբար դարձցի եւ սպանցէ<sup>537</sup>, կամ ոք՝ զուրուք:

Եւ կամ յաւազակաց ի մէջ անկեալ՝ ի հարկէ սպանցէ<sup>538</sup>: Եւ եւ սոքա

20 յակամայէ եւ ի կամաւորէ:  
Իսկ ի պատերազմի սպանանելն՝ ի կամաւորէ եւ յակամայէ<sup>539</sup>:

Եւ եթէ ի գիշերի ոք կարծիցէ զթշնամի հարկանել եւ հարեալ զբարեկամ սպանցէ. եւ է սա ի կամաւորէ եւ յակամայէ:

Եւ թէ նեո ոք ձգիցէ, եւ թշնամույ պատահեալ՝ սպանցէ, է յակամայէ

25 եւ ի կամաւորէ:  
Իսկ կամաւորն<sup>540</sup>. եթէ ոք հարկանէ խիստ զաւազանաւ զմարդ՝ կարծելով յուղղութիւն ածել զլարագործն, մինչեւ հանել արիւն, յորմէ եւ մեռցի:

Նոյնպէս՝ եթէ քարիւ եւ կամ փայտիւ զոք հարեալ շարչարիցէ

30 առաւել, քան զկարն, ընդ այնոսիկ համարեալ է, որ սրով սպանցէ, կամ այլ ինչ յաշխարհեաց:

Նոյնպէս՝ եւ որ փայտատ ինչ ձգիցէ, եւ ի ծանրութենէ երկաթոյն, եւ ի սրոյն իսկ, եւ ի ձեռացն երեւի հարուածն. ի բազմապատիկ դիմաց հարուածոյն, որ ի վերայ նորա են, գուշակէ զեղեալսն:

35 Նոյն արիւնակաւ՝ առանց իրիք հարկանելոյ կամաւոր շարիք, որ յաւազակաց գործին:  
Իսկ կանայք, զեղս արբուցեալ, արանց սովոր են սպանանել.

531 Տե՛ս հոդվ. ՃԶԳ և Կանոնք Աթանասի ԶԲ  
532 Տե՛ս Կանոնք Բարսղի Ծ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 339  
533 Տե՛ս Կանոնք Աթանասի ԶԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 321  
534 Տե՛ս Կանոնք Բասղի ՃԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 126  
535 Տե՛ս Կանոնք Աթանասի Լ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 303  
536 Տե՛ս Կանոնք Աթանասի ԽԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 308  
537 Տե՛ս Կանոնք Աթանասի ԻԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 302  
538 Տե՛ս Կանոնք Հարանց հետեւողաց ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108  
539 Տե՛ս Կանոնք Բասղի ՂԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 124  
540 Տե՛ս Կանոնք Բարսղի Ծ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 338—341

նոյնպէս, որ առ նախանձու զեղս տայ մերձաւորի, ընդ մահաւարտս համարեալ է: Եւ արտնց եւ կանանց զոյգ է վճիռն:

Արդ, այսոքիկ են կամաւոր սպանութիւնք եւ նմանք սոցին, եւ ակամայքն եւ խառն յերկոցունց, որպէս ցուցաւ. եւ բժշկել խոստովանութեամբ յայտնի է:

5 Այլ զգատաստանին տացուք զարիւնակ: Զի որպէս գրեցաւ ի գատաստանս թագաւորաց, զի թէպէտ ակամայ այլազգի զքրիստոնեայ սպանցէ, իբրու զի խնդայ, ըստ կամաւորի դատիցի ի գինն արեան: Իսկ քրիստոնէի զքրիստոնեայ սպանեալ՝ կամաւոր:

10 Եւ է կամաւորն, յորժամ վասն նախունձու կնոջ, եւ կամ յաղագս ընչից, եւ կամ փառաց վասն, կամ ըստ այլ պատճառի սպանցէ. լիով, որպէս գրեալն է, դատեսցի: Եւ թէ զայլազգի սպանցէ, որպէս եւ անս գրեցաւ՝ դատեսցի: Իսկ եթէ ակամայ, եւ թշնամի հանդիպի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբր զկամաւոր դատիցի կամ ըստ ներման՝ ընդ

15 կիսոյ, որպէս ի գատաստանս գրեցաւ թագաւորաց: Իսկ եթէ բնաւին ակամայ իցէ, ըստ այնմ լիցի դատեալ, եւ թէ խառն ի կամաւորէ եւ յակամայէ, ըստ այնմ դատիցի<sup>541</sup>:

ԳԼՈՒԽ ՄԼԳ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎՆԱՍՈՂԱՑ ԶՐՈՎ

20 Եթէ սպտահի ումեք ջուր բերել առուով ի գործ ինչ կամ յաղագս ոռոգանելոյ եւ վճարեալ զիւր գործն եւ ընդ վայր թողեալ՝ վնաս ընկերի իրոյ յայգի, կամ յանդաստան, կամ ի բնակութիւն ինչ առնիցէ, եթէ զգուշացոյց, եւ ինքն փոյթ կալաւ զգուշանալ, եւ ակամայ վնաս ինչ գործեցաւ, կէս վնասուն դատաստանաւ վճարեսցի. ապա թէ հեղզացեալ

25 անփոյթ արար եւ ոչ զգուշացոյց, եւ ինքն ոչ զգուշացաւ, եղեալ վնաս ինչ՝ բաւանդակն տուծեալ լիցի, մանաւանդ թէ շարակամութեամբ առնիցէ: Սակայն արիւնակն տեսցի, թէ յումէ՞ եղեւ՝ յուրմէ՞ թէ ի վարձկանէ, ի կատարելոյ՞ թէ յանկատարէ, ի գիշերի՞ թէ ի տուրնջեան, եւ այլն այդպէս զատեսցի:

ԳԼՈՒԽ ՄԼԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲԺՇԿԱՑ

30 Բազումք ի բժշկաց բազում վնասս գործեն զեղաւք կամ ի փորձել զդեղս յայլս, եւ կամ շարակամութեամբ սպանանեն զեղաւք, կամ վասն անգիտութեան զվնասակարսն տան ի դեղոց, կամ անվարժ գոլով՝ զցաւս

35 ոչ գիտեն ճանաչել եւ յաղագս այնորիկ մահ գործեն հիւանդաց, կամ հեղզան յաղագս ըստ կամաց զվարձն ոչ տալոյ եւ այնպէս վնասեն, կամ նախանձելով ընդ աշակերտս՝ ոչ ուղիղ ուսուցին, եւ նոքա անգիտանալով՝

<sup>541</sup> Տե՛ս հոգվ. ԾՂԳ

բազում արարին վնասս, եւ Եթէ այլ ինչ ախտս ցտուց մուծին՝ Եթէ ինքեանք, Եթէ աշակերտաւքն, զայսոսիկ զամենեսեան կամաւորս գիտեմք:

Իսկ ահամայք. զոր ի հիւանդին տեսողացն հեղգութենէ լիցի վնասն կամ ի հիւանդին, կամ զի բոս հրամանի նորա գհիւանդն ոչ զարմանիցեն, կամ ի մեծ ինչ հարկէ ոչ Եղեւ հնար գալ բժշկին առ հիւանդն, եւ յազագս այնորիկ մահ եղև, կամ գիտութեամբ դեղ տուեալ կենաց՝ մահու եղև պատճառ: Սոյնպէս հատանելն եւ խարելն այդոքիւք դատիցին:

Արդ, կամաւորացն արեան լիցի դատաստան, Եթէ յայտ վնասն գայցէ, ապա թէ խոտտովանութեամբ ծանիցի՝ կամաւորի ապաշխարութիւնն լիցի. իսկ ահամային՝ անպարտ յերկաքանչիւրսն լիցի: Իսկ ի կամաւորէ եւ յահամայէ եղեալ վնասն՝ մի՛ լիցի անպարտ յերկաքանչիւրսն<sup>(184)</sup>:

**ԳՆՈՒՄ ՄԱԶ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆՍՅ ՀԱՐԿՈՂԱՅ ԵՒ ԲՈՆԱԳԱՏՈՂԱՅ ԶՈՔ Ի ԳՈՐԾ ԻՆՁ, ՅՈՐՄԷ՛ ՎՆԱՍՔ ԼԻՅԻՆ ՄԱՀՈՒ**

15 Եթէ ոք զսք ի գործ ինչ հարկիւ առաքէ, եւ վնաս լիցի մահու, այսպիսի ինչ. Եթէ ի ծառ հարկէ ելանել եւ թափել պտուղ, կամ ընդ դեռանցանել հարկէ, եւ կամ ի ձի, որ խիստ իցէ, հարկէ ելանել, կամ այլ ինչ այսպիսի, կամ բռնադատէ, եւ լիցէ յիւրոց կամ վարձկան, եւ մահ պատահի, արեան դատաստան լիցի ի կամայէ եւ յահամայէ, առաւել  
20 լիցի բռնազատողացն: Իսկ վարձկանին եւ իւրոցն՝ Եթէ աւելի քան գտովորութիւնն հարկէ կամ բռնադատէ, ընդ դատաստանաւ է կամաւորի եւ ահամայի<sup>542</sup>:

**ԳՆՈՒՄ ՄԱԷ**

**ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԱՅԳԵԳՈՐԾԱՅ ՄՇԱԿԱՅ, ԸՆԿԵՐԱՒՈՐ ՄԱՍՆԱՒՈՐԱՅ ՀՍԿԱՐԱՇԱՅ ԵՒ ՎԱՐՁԿԱՆԱՅ**

3 Յազագս այգեզործաց եւ այլոցդ ճշգրտել զաւրինակն ոչ կարեմ՝ յազագս զանազան սովորութեանց դաւառաց եւ աշխարհաց, բայց սահալ ինչ նշանակ տացուք իրաւանց, գի ըստ սովորութեան վճռին այն հաստատուն առ նոսա կացցէ:

30 Արդ, մի՛ ոք անիրաւութեամբ զրկանս ինչ գործիցէ, այլ իրաւամբբ զբաժանումն սրասցէ ընդ ընկերին: Իսկ գող գտեալ ոք ի նոսա, կրկին տուժիցի եւ ոչ շորեքիին՝ բոս Աւրինացն<sup>543</sup>, զի յիւր վաստական եւ ոչ յաւտարին անիբաւէ, եւ յազագս այնորիկ իրաւացի կարծեմ զնեռելն:

35 Իսկ վարձաւոր մշակացն վարձն ի յեղանակս առատութեան եւ նուազութեանն դատիցի, առաւելեալն՝ ի նուազն լիցի, եւ պակասեալն՝ յառաւելուլն: Նմանապէս եւ յազագս տեղեացն լիցի:

<sup>542</sup> Տե՛ս նաև հոգվ. ԼԵ, ՄԻԲ, ՄԻԶ, ՄԻԷ

<sup>543</sup> ԵԼՔ, ԻԲ, 1

ԳՆՈՒՄ ՄԼԸ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՀՈՎՈՒԱՅ ԵՒ ԱՆԳԷՈՐԴԱՅ

5 Եւ հովիւք եւ անդէորդք ըստ սովորութեան զաւառաց զանազանին ի վարձս, սակայն ի ճշմարտութիւնն, որպէս կարգեալ եղեն, պահեսցի ի նոսա:

Արութեամբ ղգուշացեալք լիցին, եւ եթէ պատահի զազանաբեկ լինել, յորժամ շիցէ ի ծուլութենէ, վկայ ի գէշն ածցէ եւ անպարտ է: Իսկ եթէ շիցէ մերձ, եւ պատճառ անհողութիւնն իցէ եւ կամ այլ ինչ, որ թէ պատահեալ էր մերձ՝ անվնասելի էր, դատաստանաւ է վճարել նոցա՝

10 կամ բաւանդակ, կամ ընդ կիսոյ. բաւանդակ՝ եթէ բնաւին յանփոյթութենէ եղեւ եւ ընդ կիսոյ՝ եթէ խառն ինչ էր:

Յակամայից եղեալ վնաս՝ ի վարձէ մի՛ գրկիցին: Իսկ եթէ ի ծուլութենէ եւ յայլոց աչգպիսեացո պատճառանաց զողացին, դատաստանաւ է վճարել. իսկ ոչ յաչգպիսեացո եղեալ եւ բնաւին յակամայիցն՝ անպարտ է:

Իսկ իւր զողացեալ եւ [ի] յայտ կկեալ՝ ըստ Աւրինացն պարտի վճարել<sup>544</sup>:

Այլ հարեալն եւ սպանեալն, վճարեալ լիցի, ի քարէ կամ ի գաւազանէ, նմանապէս եւ՝ բեկանելն կամ գլխի հարկանելն եւ վնասել: Ըստ այնմ

20 լիցի, եթէ ի վայր ելեալ մեղցի, յորժամ անփոյթ արար եւ մերձ ոչ էր: Գոյն լիցի եւ ձիատածիցն եւ այլոցն:

Իսկ զմիմեանս հարեալ եւ սպանեալ՝ ըստ Աւրինացն դատեսցին<sup>545</sup>:

ԳՆՈՒՄ ՄԼԹ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՆՈՒԻՐԱՅ ՅԵԿԵՂԵՑԻ ՀՈՂ, ԿԱՄ ԶՈՒՐ, ԿԱՄ ԱՅԳԻ, ԿԱՄ ԱՅԼ ԻՆՁ ԱՅՍՊԻՍԻ

25 Եթէ պատահի աւեր եկեղեցոյն, յոր նուէրն եղեւ, թէ ի վանս, թէ ի դեղ, եւ աշխարհականք բնակելով առցեն եւ կերիցեն, իշխանք լիցին նուիրողքն առնուլ եւ յայլ եկեղեցիս նուիրել, թէ շիցէ կարծիս շինութեան, ապա թէ իցէ՝ ինքեանք հոգևորապէս մատակարարիցեն, մինչեւ շինիցի, եւ ապա անգրէն հաստատիցեն. այլ մի՛ առ իւրեանս կալցին, զի Աստուծոյ է՝ յորմէ հեաէ նուիրեալն եղեւ:

Այլ թէ պատահի զաւերեալ եկեղեցոյ զժողովուրդ առնուլ այլ եկեղեցի, յորժամ շինիցի՝ առանց ամենայն հակառակութեան անգրէն հաստատեսցէ եպիսկոպոսն:

35 Ապա թէ ոք յայլոյ ժողովուրդ կամիցի եկեղեցի շինել հակառակելով, մի՛ տացէ թոյլ եպիսկոպոսն. ապա թէ պահանջիցեն ըստ պիտոյից, ըստ հրամանի եպիսկոպոսին շինեսցի:

544 Տե՛ս Ելք, ԻԲ, 4  
545 Տե՛ս Ելք, ԻԱ, 35—36 նաև հողվ. 42

ԳՂՈՒՆ ՄԻՍ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՎԱՃԱՌԱՑ

Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս կամ յիշխանաց՝ ըստ հրամանի թագաւորաց, եթէ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի դաւառս: Եւ նախահոգութեամբ զշափս, եւ զկշիռս, եւ զոյգս նոքա դիցեն՝ տեսանելով զգաւրութիւնս վաճառին: Կարգեսցեն եւ կոփիչս միշտ որոնել եւ տեսանել, զի մի՛ նենգութիւն ինչ արասցեն:

Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի:

Գողիցն ի շափս եւ ի կշիռս հատուցանել շորեքկին եւ յանդիմանութեամբ նշաւակել ի դարհոբումն այլոցն:

Իսկ դահեկանահատիցն եւ դրամակոփիցն զձեռն հատանել հրամանաւ իշխանաց:

Իսկ զմաքսն առնուլ իրաւապէս, յորժամ ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճառիցին: Այլ մի՛ լիցի յանցս ճանապարհաց մաքսել, եթէ ոչ վաճառիցեն, բայց վարձս միայն, թէ ի թշնամեաց ընդ նոսա զնալով պահիցեն:

Այլ մաքս հրամանաւ լիցի թագաւորաց, եւ իշխանք նմանապէս ի հրամանս նոցա մաքսեսցեն:

Այլ ի վաճառս խաբողաց զտղէտսն՝ ըստ գողիցն հատուցի:

Իսկ զգին հացի եւ զդինւոյ եւ զայլոց այսպիսեաց, ըստ քաշաբերութեան ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապէս ըստ նուազութեան եւ ըստ այդպիսեացդ պատճառի փոփոխել ի վեր եւ ի վայր՝ թագաւորաց լիցի հրամանաւ եւ իշխանաց, յիշատակելով գաւառապետաց եւ ժողովրդապետաց: Այլ անհաստատ լիցի փոխելն յազքատաց ըստ կարեաց վաճառողաց եւ կամ փարթամաց՝ անկարուտից վաճառողաց: Բայց իշխանք ի վեր եւ ի խոնարհ զգինս առնել՝ ուղիղ տեսլեամբ արասցեն, զի մի՛ մշակք եւ այլ ինչ գործանեայք, նմանապէս՝ վաճառականք, վրիպեալ գրկիցին յիրաքանչիւր յերկանց. կամ դատաւորք ճշդիսս քննութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն:

30 ԳՂՈՒՆ ՄԻՍ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԲՆԱԻՑ ԱՐՈՒԵՍԱԿԱՆԱՑ ԽԱՐԴԱՆՈՂԱՑ

Արուեստաւորք ամենայն ըստ որում եւ իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն եւ եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեսն գործիցեն, այլ եւ զնութն ապականիցեն, դատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել զարձեալ կամ զպականեայն ի գնոյն ըստ արժանւոյն ընուլ եւ ապա լիով հասանել վարձու, ապա թէ ոչ՝ պականեալ ի վարձէ ըստ արժանւոյն, որպէս տեսանն դատաւորք՝ արասցեն:

Իսկ զողք գտեալ՝ ըստ Աւրինացն<sup>546</sup> հատուցեն եւ զկորուսեալն վճարեսցեն:

<sup>546</sup> ՏԵ՛ս ԵԼՔ, ԻԲ, 11—12

Իսկ զվնասեալն ի ցեցէ կամ ի մկանէ, թէ այնպիսի պատահի նիւթ, վասն բազմաժամանակեայ առ ինքեանս պահելոյն, եւ կամ այլ ինչ, որ վնասիցի, հատուցեն դատաստանաւ, զի ի զործիլ եւ ոչ յապականելի տուն:

5 Այլ ի նոցանէ եթէ գողացին եւ գինքեանց եւս, եւ հաւատարմացին, անպարտ լիցին, ապա թէ գզործ առեալն միայն եւ յամբարոյն տեղուջէ առեալ իցէ, բնդ կիսոյ վճար լիցի. իսկ յանզգուշութեան տեղի գեղեալն՝ լիով հատուցեն:

Իսկ յաւարի երթելոցն անպարտք լիցին:

10 Այլ զգրաւ եղեալն եւ զկորուսեալն վճարիցեն:

Իսկ զհրով այրեալն ի հասարակաց թշնամեացն՝ մի՛ հատուցեն, այլ վասն ինքեանց եղեալ՝ հատուցեն, այլ տերանցն ազագաւ՝ մի՛ հատուցի: Զայդ այդպէս դատեսցեն<sup>547</sup>:

**ԳՂՈՒՄ ՄԽԲ**

15 **ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՎԱՐՁԿԱՆԱՅ ՎՆԱՍՈՂԱՅ ԶԳՈՐԾԻՄ**

Վարձկանք, որք տերանց գործիւք վարին, որպէս երկրագործք, ի վնասել գգործիսն ըստ սովորութեան, անպարտք են, իսկ յիւրեանց ի գործան վնասելով՝ վճար լիցի տերանցն: Իսկ ինքեանց գործիւք վարելով, որպէս հնձողք, ինքեանց վնասն լիցի, իսկ եթէ զտեառն ի վարձու առցէ, 20 եւ ըստ սովորութեան վնասիցի, տեառն լիցի: Այլ թէ յանաւթ ի տեառնէ առնուցու եւ վնասիցէ, վճար լիցի. եւ շարակամութեամբ վնասելով՝ վճար լիցի:

**ԳՂՈՒՄ ՄԽԳ**

**ՅԱՂԱԳՄ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ**

25 Եւ զգատատանս դատաստանի այսպէս սլարտիմք իմանալ, Զի յորժամ սպանողի եւ կամ այլ շարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորժամ զգինն արեան առցեն, թեթեւ ապաշխարութիւն լիցի: Թէպէտ արեամբ զնոյ վճարիլ կարծի, մի՛ արասցեն առանց ապաշ- 30 խարութեան, զի շիք զին մարդոյ, բայց միայն փոխանակ մեռանիլ ըստ Աւրինաց եւ կանոնաց<sup>548</sup>: Այլ զի թէպէտ գիրն զնելով զարիւն՝ զսպանելոյն կարծի, այլ շիք զին մարդոյ, ապաշխարութեամբ լցցի, զի գինն ըստ կարի եղաւ եւ ոչ ըստ արժանւոյն: Այդ բաւական լիցի, թէ շիցէ սովորութեամբ շարն, ապա թէ կարծիս իցէ զարձեալ վնասու, զխրատն առցէ եւ ի ձեռս իսկ եթէ աղքատ իցէ, բաւական լիցի խրատն:

35 Իսկ տուղանք յազազս արքունեաց գրեցաւ ըստ կարի<sup>549</sup>, իսկ աւարն՝

<sup>547</sup> Տե՛ս հոդվ. ձձԹ  
<sup>548</sup> Տե՛ս Ելք, ԹԱ, 12, Ղևտ., ԻԳ, 17, Հոդվ. Բ  
<sup>549</sup> Տե՛ս հոդվ. Բ

փոխանակ տուգանի, այլ արեան գինն իւրոցն լիցի: Այդ ըստ դատաստանի լիցի յայտ եկելոցն, իսկ անյայտքն խոստովանութեամբ ուղղիցին ըստ իւրոցն սահմանի:

5 Միանգամայն ամենայն դատաստան ըստ իրին քննութեամբ լիցի: Իսկ պատիժն ըստ վնասուն համեմատ լիցի, որպէս շարագործաց դարականն հատանել զանդամ՝ նմանելով աստուածային դատաստանին, ըստ այնմ՝ հատուցել իւրաքանչիւր ըստ գործս, որպէս մեծատանն փոխանակ ոչ արբուցանելոյն՝ պասքումն<sup>550</sup>, եւ ցանկացողաց շարեացն՝ հուր<sup>551</sup>, եւ անողորմիցն՝ տանջանք<sup>552</sup>, եւ ատողացն զլոյս գիտութեան՝ խաւար<sup>553</sup>, եւ որ ըստ այսմ: Այդոցիկ նման լիցի եւ մերս դատաստան:

ԳՂՈՒՆ ՄԻՅԿ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ Ի ԶՐԱՂԱՅՍ ԱՂԱԻՆԱԻՐԱՅ

15 Եւ ջրաղացպանք փորձք լիցին արուեստի ամենայն կազմածոյ, զի մի՛ զբազմատանջն<sup>(185)</sup> ապականեսցեն գկերակուր աներկեղութեամբ: Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել<sup>(186)</sup>, այլ զվնասն եւս տուժել: Ապա թէ պատճառն ի գիճութենէ աղանին իցէ, անպարտք լիցին, իսկ ի ջուր գաղացեալն վճարիցեն: Այլ զգողացեալն՝ շորեքկին, եւ ի կոփողացն յանդիմանութիւն լիցի նշաւակաց: Այլ թէ աղացողն աւելի, քան զպատրաստեալն, ի վեր եւ ի խոնարհ արասցէ զքար ջրաղացին եւ վնաս 20 ինչ արասցէ, վճար առ ի նմանէ լիցի, զի ասել ի դէպ էր պատրաստողին եւ ոչ իւր համարձակիլ:

Այլ վարձն ըստ դաւառաց զանազանին, բայց փոփոխին ի նուազութենէ հացի եւ ի ջրոյ եւ կամ յառաւելութենէ: Եւ այդ անսահման յիրս լիցի դատաստանի:

25

ԳՂՈՒՆ ՄԻՅԵ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶՆԻԻՎԱՐՍ ԵՒ ԿԱՄ ԶԱՅՆ ԻՆՉ ԶՈՐՔՈՏԱՆԻՍ Ի ԳՈՐԾ, ԿԱՄ Ի ԶՈՒԲ, ԿԱՄ ՅԱՐԱՒՏ ԱՌ ԺԱՄԱՅՆ Ի ԶՆՈՆ ԱՅՈՅ ԱՌԱՔՈՂԱՅ ԵՒ ՎՆԱՍԵՈՅ

30 Զի եւ այս բազում անգամ պատահի լինել՝ տալ գերիվար կամ զայլ ինչ եւ ի գործ առաքել զայլ ոք, եւ անդէն լինել վնաս՝ կամ ի ջուր, կամ յարատ, կամ շրջեցուցանել:

Եթէ խոտերախ իցէ, եւ ոչ զգուշացուց եւ բռնաբարելով առաքեսց, եւ հեծեալ անկաւ եւ մեռաւ, կամաւորի դատաստան լիցի. ապա թէ

550 Տէ՛ս Ղուկ., ԺԶ, 19—31

551 Տէ՛ս Մատթ., Ե, 22. ԺԳ, 40—42. ԺԸ, 8—9 և այլուր:

552 Տէ՛ս Մատթ., ԻԵ, 46

553 Տէ՛ս Յովհ., Գ, 19

զգուշացոյց, եւ շէր խստերախ, եւ ոչ բռնադատեաց՝ ակամայի, զի ոչ էր յիրոց եւ ոչ ի՝ վարձկանաց:

Իսկ եթէ կամաւք ոք շոգաւ վարձ գարշաւանսն առեալ, եւ զգուշացոյց, եւ խստերախ լինելով՝ անկաւ կամ՝ անվարժ գլով, մանաւանդ թէ կատարեալ հասակաւ իցէ, անպարտ տէր կենդանւոյն իցէ. իսկ թէ մանուկ իցէ, մի՛ լիցի անպարտ: Իսկ թէ անկեալ ոչ մեռանիցի, զգատարկութեանն եւ զբժշկութեանն այդոքիւք դատեալ լցցեն, նաև՝ ոչ զկատարեալ առողջանալն եւ զվնաս զգայութեանն:

Ասլա թէ գիրիվարն կամ զայլ ինչ կենդանի հեծեալքն վնասիցեն՝ կամ բեկանելով, կամ սպանանելով, թէ զսովորական պահեաց հրահանգ ի վարելն, եւ կամ ըստ պատուիրանի առաքողին, յորժամ առաքեաց, վարիցէ, անպարտ լիցի հեծեալն, յորժամ եւ հաւատարմացուցէ: Ասլա թէ արշաւանս արասցէ, եւ ոչ ըստ պատուիրանին վարիցէ, կամ ընդ դժուարինս կազիցէ եւ վնասիցէ, լիով տուժիցի՝ սլակաս ի մասնէ. իսկ կամաւոր տարողացն՝ բաւանդակն:

ԳՂՈՒՍ ՄԽԶ

ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՆՈՒԱՆԵԱԿ ԼՈՂԱԳՐԱՄԱՑ

Հողագրամդ այժմ անուանեալ ոչ է ի կանոնական հրամանաց, զի կանոնք զանկողին եւ զայլ ինչ այսպիսի, զոր ունի, յիշատակէ<sup>554</sup>: Արդ, յայտ է, թէ դրամդ հողոյ ի կապալաւոր քահանայից եղև վաճառել զգերեզմանս, մինչ զի եւ հագորդի առնուլ զրամ եւ Աւետարանի: Բայց քրիստոնեայք ըստ յստոյ տան զգրամն հողոյ, եւ այնոքիւք ոչ շատանան, այլ բռնադատեն եւ զայթակղեցուցանեն, որում համար տալոց են, կամ զի այլոց քահանայից ըստ կարի տալ կամեցան, յայնմանէ սուտն եւ իւրբն պահանջել: Այլ չէ պարտ այլ քահանայից. եթէ ոչ կոչիցէ քահանայ մեռելոյն, երթալ ի մեռեալ, ապա թէ սիրելի իցէ կամ ըստ այլ պատճառի ի սուգ երթիցէ, մի՛ առցէ ինչ:

Իսկ քահանայ վախճանեալ, որ յաշխարհի իցէ, եթէ չիցէ ժառանգ, դատաւորաց լիցի, որպէս ցուցեալ է ի վիճակս նոցա<sup>555</sup>, իսկ զհասոյթսն առցէ իւր եպիսկոպոսն, եւ զհանդերձսն, եւ դանկողինսն, զի նա է ձեռնադրող նորա, եւ զժողովուրդն ըստ կամաց իւրոց տացէ յայլ քահանայ. ապա թէ ժառանգ իցէ եւ արժանի ոք, մի՛ փոխիցէ, իսկ յանարժանից՝ փոխիցէ, զի ժողովուրդ ժառանգութիւն ոչ է. բայց եպիսկոպոսի: Քահանայն է՝ ժողովորդ զոր ձեռնադրէ, այլ ոչ ոք ի տանէ, զի կանոնք ոչ հրամայէ զեղբարս երիցանց ուսել ի ժողովուրդին, նոյնպէս ոչ լինել ժողովուրդ եպիսկոպոսին, կամ թէ իցէ կին եւ որդիք միայն: Այսպիսի եւ իւրաքանչիւր ձեռնադրողք զձեռնադրեալն կալցեն:

Իսկ հայրապետ, զի ի բազմաց ձեռնագրի՝ բազումք կալցեն, այլ տունն ի բազմաց վայելէ՝ բազմաց լիցի, որպէս եւ զրեալ է<sup>556</sup>. ապա թէ

554 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթեի Խ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա., էջ 398—399.  
555 Տե՛ս հողվ. Ա.  
556 Տե՛ս հողվ. Ա.

ոչ կամեսցի հայրապետն՝ իւր լիցի: Իսկ գխաշ, եւ գգիրք, եւ զշուրջառ, գոր տայ հայրապետն եպիսկոպոսին, զնոյն առցէ ի մահուն՝ եպիսկոպոսին, իսկ գոր իւր ստացեալ իցէ եպիսկոպոսին, մի՛ առցէ, այլ նովին գեպիսկոպոսարանն ում կամի՛ շնորհիցէ. այլ զիւրն որպէս եւ կամի՛ արասցէ: Նոյնպէս արասցէ եպիսկոպոսն քահանային, թէ իցէ ժառանգ, թէ ոչ:

## ԳՂՈՒՅՍ ՄԻԷ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ՍԱՀՄԱՆԱՑ

Սւ սահմանք գաւառաց լիւրամբք, եւ գետաւք, եւ արձանաւք հաստատեսցին, նմանապէս եւ՝ գեւղից: Սւ գեւղք, ի սահմանս շինեալք յերկուց կամ յերից գաւառաց, զոյգ բաժանիցին՝ առաւելութեամբ եւ նուագութեամբ. նմանապէս՝ անդաստանք եւ այլք ի սահմանս գեւղից, սապէս եւ՝ ծառք բուսեալք ի սահմանս անդաստանաց: Իսկ գմիշոցի ցանկս այգիաց զոյգ երկաքանչիւրքն դիցեն, գի թէպէտ առաջինն իւրոյն աղագաւ եղ, երկրորդին մի՛ լիցի պատճառ՝ միշտ նմա դնել, գի թէ այն ոչ էր, իւրն հարկ էր միանգամայն դնել, կամ որ ստացաւ կամ եղ այգի յաղագս այնր, գի մի՛ դիցէ ցանկ: Ըստ այսմ լիցի եւ տանց որմոց եւ այլոց այսպիսեաց:

## ԳՂՈՒՅՍ ՄԻԸ

## ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ ԱՅՍԱՀԱՐԱՑ ԱՆԱՍՆՈՑ

Այսահարութիւն յանասունս գտեալ՝ ոչ ինքեանց լինի աղագաւ, գի ոչինչ անբանն մեղան բնութիւնք: Զի ի խրատ ի մարդիկ մեղանաց աղագաւ պատահի եւ ի նոսա՝ դարձեալ յաղագս մեղանաց մարդկան, որպէս ի խոզերամակն Գերգեսացուոց, գի ուխտ եղին նոքա ոչ տեսանել զՏէր մեր<sup>557</sup>: Արդ, յայտ է, գի անասնոց ոչ իշխէ եւ թողսցուցանէ ի վարհուրումն տերանց: Արդ, յորժամ պատահի ի նոսա, արժան է տերանցն զգուշանալ եւ դիտել, գի խնայելով ի նոսա ոչ ետ թոյլ բարեգութն Աստուած. ապա թէ անփոյթ արասցեն՝ մի գուցէ թէ եւ ի նոսա մացեն: Խոստովան լիցին զմեղս իւրեանց եւ աղաւթիւք եւ պահաւք ըստ կարի երեք ամ զքառասնորդս պահելով եւ խաշիւ. եւ Աւետարանաւ կնքելով, թերեւ հաճեսցի Աստուած եւ հալածեսցէ, եւ բանականքն ազատիցին ի կարծեացն: Ապա թէ ոչ բժշկիցի, գենցեն եւ յայլագգիս վաճառեսցեն, մի՛ կենդանի, գի մի՛ դարձեալ ի քրիստոնեայս վաճառեսցի: Ապա թէ բժշկիցին եւ երեք ամս այլ ոչ լիցին, ապա թէ գենեալ կերիցեն եւ թէ ի քրիստոնեայս վաճառիցեն՝ անվնասք են ի կամս Տեառն<sup>(187)</sup>. եւ այդ՝ եթէ ի տանէ պատահի: Իսկ եթէ գնեալ իցեն, եւ այնոցիկ պատահի, հաւատարմացուցանէ վկայիւք, թէ ի տան նորա շիցէ լեալ, ապա թէ ոչ կարէ՛ անդրէն դարձցի: Ապա թէ գկնի գնելոյն իցէ, մի՛ դարձցի:

Այլ ժամանակ դարձին յամենայն ժամ լիցի, թէ ի վաճառողին տանն ախտն լեալ իցէ: Նոյն դատաստան դարձի եւ խելազարիցն լիցի: Իսկ զանուտելիսն՝ անբժշկելի եղեալ, յայլազգիս վաճառիցեն, եւ զբժշկեալն՝ ի քրիստոնեայս. այլ դարձուցանելն նոյն լիցի:

5 Այս դատաստան կանոնական է<sup>558</sup>, Թէ հաճոյ թուեսցի՝ այսպէս հաստատուն կացցէ, ապա թէ ոչ՝ որպէս կամին արասցեն:

Գ Լ Ո Ւ Ս Մ Խ Թ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԶԱՆԿԱՏԱՐՆ ԸՆԴ ԿԱՏԱՐԵԼՈՅ ԶՈՒԳԵԼ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՄԲ

10 Կանոնական հրամանաւ է տղայոց պսակ ոչ արհնել մինչեւ ի զիտել զկարիս բնութեանն<sup>559</sup>: Ապա թէ պատահի անկատար լինել կինն, եւ կատարեալ՝ այրն, կրկին շար, զի որպէս ուսաք ի խոստովանութենէ՝ յամուանանալն հատանի կապ միջոցին երկուց վտառացն, յորմէ եւ մահանայ: Արդ, այսպիսի վնասուս կանոնական լիցի դատաստան. 15 զկամաւոր սպանողի զկարգն երիցն դնել՝ ծնողաց հարսինն, եւ փեսային, եւ ծնողաց նորա. եւ քահանային լուծանիլ ի կարգէն. եւ զխաւսողն շառնել անպարտ, այլ յակամայիցն դնել ի կարգն: Եւ յոյժ սաստել եպիսկոպոսացն՝ այնպիսեացն<sup>560</sup>:

Գ Լ Ո Ւ Ս Մ Ս

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՒՒՍԻՅ

20 Տեղիք ուխտաց, եթէ վկայարանք իցեն եւ եթէ այլ ինչ տեղի շնորհաց աստուածայնոց, եւ կամ նշան խաչի հաստատեալ, յորոյ վիճակի իցէ եպիսկոպոսի՝ զեղջ երիցոյ, որոյ ի սահմանն կացցէ, այնմ տայցէ, զի զզուշութեամբ սպասաւորեսցէ, թէ պատահի ի հեռաւոր տեղիս լինել: 25 Ապա թէ ի մէջ սահմանաց իցէ, զոյգ սպասաւորիցեն քահանայք եւ զհաս շնորհին ի գործ սպասու եւ կազմածոյ ածիցեն, սակայն եւ ինքեանք վայելեսցեն առանց ամենայն հակառակութեան: Այլ մի՛ յաղաղութեան յիցին, զոր վասն բժշկութեան մատուցանեն, պատերազմիցին, այլ յեպիսկոպոսէ ժառանգութիւն այնմ լիցի, որ բարիորքն սպասաւորէ: Ապա 30 թէ ազահեալք զսուրբ տեղիսն ի հարկ արկանիցեն եւ խրատու եպիսկոպոսին ոչ անսան, ունայնանայ աստուածային շնորհն, եւ պարտական այնմ լիցին պակասութեան, որում համար տալոց են, իբր հակառակք

<sup>558</sup> Տե՛ս Կանոնք Բասղի ՄԽԹ—ՄԿԵ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 167—174. Կանոնք Յովհաննու Մանգակունտոյ Թ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 499 եւ այլուր. Ելք, ԻԱ, 28—32, նաև հոգվ. ԿԵ և հաջորդները:

<sup>559</sup> Տե՛ս Կանոնք Մահակայ Պարթևի ԻԷ, ԻԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 382—383. Կանոնք Ներսէսի եւ Ներշապուհոյ ԻԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 487. Կանոնք Բասղի ՄԹԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 160—161 եւ այլն:

<sup>560</sup> Տե՛ս նաև հոգվ. ՃՂԲ

- մարդասիրութեանն Աստուծոյ եւ բարի կամոց սրբոցն, զի ձրի բարեխաւսք լինին միշտ աշխարհի: Այսպիսեացս քարոզ կարգալ արժան է եպիսկոպոսին, զի մի՛ ինչ ընծայ տարցին, այլ զընծայսն ի տունս իւրեանց ազգատաց տացեն եւ ինքեանք երթեալ աղաթեցեն, զի մի՛
- 5 շնորհ եկեղեցւոյն յայլազգիս անցցէ: Քանզի խորհրդականք են ամենայն ընծայք. զի դահեկան, յաղագս անախտ բնութեան ոսկւոյն, խորհուրդ է աստուածութեան Քրիստոսի, իսկ պատկերն յիրկչական՝ մերն պատկեր, զոր էտոն յառաջագոյն շնորհեալն զիւրն պատկեր, ըստ այնմ՝
- 10 տուք գկայսերն կայսեր եւ զԱստուծոյն՝ Աստուծոյն<sup>561</sup>, իսկ վեց դանգն՝ խորհուրդ ժամանակացն գալստեանն, իսկ չորս թասուն՝ արինակ չորից տարերց եւ խորհուրդ չորից անտարանչացն, իսկ երկոտասան գարին ի դանգ՝ երկոտասան ասաքելոցն, իսկ եւթանասուն եւ երկու գարին ի դահեկան՝ խորհուրդ եւթանասուն եւ երկու ասաքելոցն, իսկ զրամն՝
- 15 արինակ բնութեանս մերոյ, զի մարդ սաուիքն է անդրադարձութեամբ: Իսկ այլ նիւթք, որպէս ի խորանն նուէրք<sup>562</sup> եւ ի տաճարն ընծայեալքն<sup>563</sup>, այսպէս են, իսկ անընծայքն՝ անխորհուրդ: Արդ, ի խորհուրդ եկեալքն մի՛ լիցին ընդ անխորհուրդսն յայլազգիս, սոյա թէ յանդգնին՝ լուծցէ եպիսկոպոսն եւ ի կարգէն:
- 20 Այլ եւ զխաբերայնս բնաւին հալսուել, որք գան ձեւաք կրանաւորաց եւ բնակին ի տեղիս ուխտից եւ բազում գայթակղութիւնս ասան լինել սլարզամտաց, մոլեալք յորովայն եւ յայլ ախտս, ստութեամբ պատմիչք լինին երազոց եւ զրազումս մոլորեցուցանեն:

### ԳՆՈՒՆ ՄԵԱ

#### ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ ՈՐՔ ՅԱԹԱՐԷ ԳԱՃԱՌԱՅ

- 25 Եւ վաճառեալ եւ դնեալ զսուր՝ ոչ դարձցի անդրէն իբր զգողացեալն, զի այդ արինաւսր զորժ թաղատուրաց եւ իշխանաց է<sup>564</sup>, ուստի եւ կանոնք յընծայս ընդունի պատարագի, իսկ զլսողացեալն եւ դյափշտակեալն՝ ոչ եւս:

Կատարեցաւ զիրքս զստատանի ի փառս Աստուծոյ

<sup>561</sup> Մատթ., ԻԲ, 21 թԲ, 17, Ղուկ., Ի, 25

<sup>562</sup> Տէ՛ս ելք, ԻԾ, ԻԶ, ԻԷ, ԻԲ, Լ, ԼԱ, ԼԵ եւ այլուր:

<sup>563</sup> Տէ՛ս Գ թագ., Զ, է

<sup>564</sup> Տէ՛ս հոգվ. Բ

ՏԱՐԸՆԹԵՐՅՎԱԾՔՆԵՐ Ա. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

1-ԻՆ ԷՁԻ

- 1 Ձէ գիր (է գիրք) դատաստանի ըստ ակներկելոյ կամաց տեան յիտաի քրիստոսի. նախադրութիւն գրոց դատաստանի (է շիբ)
- 2—4 ԲՁէ դուրս (Ձէ շիբ) յորում ընդդիմադրէ (Ձ ընդդիմա |||) բամբասողաց թէ (Ձէ Լթէ) ոչ Լն դատաստանք
- 5 ԱաՁէ հանդերձեալ եմք, Գ հանդերձեալ մեր, Բ զգիրս զայս
- 6 Գ ||| (գիրք), Գ ||| (դատաստան ոչ է)
- 7 Գ ||| (որոց... Լզեւ), Գ իբրու թէ իբաւացի, Զ իբաւասի
- 8 Գ ||| (ունեւ), Գ ||| (գալթակղեալք), Բ զայթաղէալք
- 9 Բ զայթաղէացուցանեն, Ձէ մուրեցուցանեն փխ զայթակղեցուցանեն, Գ տխմարաց փխ պարզամտացն
- 10 Գ ընտրեալ, Գ շիբ և
- 11 Գ զաստուածանարզան մահուամբ զստուպարտեցան
- 12 Գ զձեռն հատանելով և զայլսն ևս, Ձէ ուզիչ փխ ուղղացի
- 14 Գ յայլս
- 14—15 Ձէ շիբ և յայլսն նմանտպէս

- 15 Գ նոյնպէս
- 16 Գ աւետարանն, Գ Յիսուսի փխ փրկչին մերոյ
- 16—17 Գ վասն որո և հրամաէ ասացաւ
- 17 Ա շիբ հրամայէ, Զ յառաջնոցն, Գ այնպէս փխ այս ինչ, Գ այսպէս փխ զայս ինչ
- 18 Ձէ թէպէտեւ, Գ գրեւտրական մոռացեալսն փխ իբր... արէնսն
- 19 Գ զանձնիշխան փխ գիշխանական, Զ յիշխանական, Գ ասելովն
- 20 Ձ առաջնոյն, Գ առա ||| (առաջնոցն... զընկեր), Է զընկերն, Գ ||| (բնաւորական է գիտէլ)
- 21 Ձ Երկրորդ, Գ ||| (ե... մանաւանդ), Ձէ Լթէ, Գ կա ||| (կամս... առնէ)
- 22 Գ ||| աշակերտութիւնն, Գ զայլսն, Զ ալլ, ԲՁէ ուղղութիւն, Գ ||| (ուղղութիւնն որովք), Զ որով
- 23 Բ իբաւամբ, Գ ||| ին (իբաւամբք առ ամենեանն), Բէ ամենեանն, Գ վարեալ, Ձէ վարել, Գ վասն
- 24 Գ ||| աւ (որոյ... տանդեցաւ), Ձէ ի ըսկըղբանէ

2-ՐԿ ԷՁԻ

- 1 Գ ||| որդ (և Երկրորդ), Գ ||| (եա), Գ ||| (արէնս կատարեալս)
- 2 Գ ||| (ոչ... զաւրէն), Գ անկատարեցից, Գ ||| (աւանդել դատաստան)
- 3 Գ շիբ ի ճանապարհի, ԱաՁէ հաշտել, Ձէ ոտիսին
- 3—4 Գ ||| Եւսցի (մի ի դատաստան մատնեցի)
Զի թէպէտ ասացաւ ոչ լինել հարկաւոր զրով. ականդիլ մեզ զատաստան ի Տեառնէ, այլ այժմ կամեցաք, յաղագս զի բազում անգամ լուաք պարսաւանս ոչ յայլտեսեոից միայն, այլ և ի քրիստոնէից, եթէ բնաւին 30 ըստ Աւետարանին դատաստան ոչ է՝ անգիտանալով զկամս աստուածայինս, որ ի նոսա: Եւ այսպիսի կարծիւք երկուս տխտանայ շարս. մի՛ զանիմաստութիւն օրինադրին, և երկրորդ՝ ոչ կամել զուզահաւասար կենցաղավարել մարդկան ազգի:

Եւ երկրորդ՝ զի զբնաւորականս ի մեզ օրէնս շարութիւնն շիջոյց, և 35 զկատարելութիւն՝ անկատարութիւն հոգոյն, և զվշտակցութիւն սիրոյ՝ ատելութիւնն:

Երրորդ՝ զի ի հեղգութենէ անվարժք եղեալք Օրինաց, և Մարգարէից, և Աւետարանին, յորոց զօրութենէ անկարացաք ընտրել զիրս զատաստան:

<sup>6</sup> Գուկ., ԺԶ, 1 և հաջորդ համարները:  
<sup>7</sup> Գուկ., ԺԲ, 13  
<sup>8</sup> Ա Կորնթ., Զ, 7—8  
<sup>9</sup> Մատթ., Ե, 34

տանի, զոր արժան վարկաք իբր ի քնոյ զարթոցանել ի ձեռն գրոց դատաստանի:

Չորրորդ՝ զի նուազեաց հմտութիւն ի մէնջ փորձել ըստ ժամանակի, և ազգի, և աշխարհաց զփոփոխելն ըստ պատահման, և ոչ նման Օրինաց, և Մարգարէից, և Աւետարանին մնալ անշարժ<sup>(9)</sup>:

Հինգերորդ՝ զի այժմ ոչ ներգործէ Հոգին Սուրբ, որայէս և ի 'Իանիէլ և ի Սողոմոն երբեմն և կամ որայէս ի Կորնթոս ի հաւատացեալսն և յայլս՝ ճշմարտի ունել զդատաստանն, յազազս որոյ անկարօտ էին գրոյ օրինաց, զի օրէնք էին ի սիրտս նոցա, ըստ խոստման մարգարէին: Ըստ որում և առաքեալքն ոչ կամեցան գրով ալ Աւետարան, մինչև այնմ կարօտացան, ըստ այնմ և ոչ դատաստան գրով աւանդեցին, քանզի փոյթ էր նոցա յազազս յոյժ հարկաւորացն, թողին և նոքա բնաւորական օրինօք, և քաղաքական կրթութեամբ, և այլօք յառաջագոյն ասացելօք վարիլ պատճառօք: Իսկ գրելն այժմ զպատճառս ունի զամենայն վրիպանսն:

Վեցերորդ՝ զի իբք դատաստանի երգմամբ չանգի, և ի Տեառնէ ոչ թողացաւ<sup>10</sup>, և այժմ յաճախ, և զորձ առ զորձով, և վայրապար ի դատաստանի, և առանց դատաստանի, լինի ի հաւատացեալս: Նմին իրի կամեցաք ոչ զամենայն լուծանել զհրաման, այլ լուծելոյն օրէնս և կանոնս հաստատել ի դատաստանի, ըստ հարկաւորութեան ներելոյն զդատաստանի:

Եւթներորդ՝ զի մի՛ ի պատճառս ոչ գրով լինել դատաստան՝ դիմեալ երթիցեն յայլասեռս, ըստ ամբաստանելոյ մարգարէին՝ առ ի շքոյէ՞ Աստուած ի մէջ Իսրայէլի երթան հարցանել ի Ճանճիկ<sup>11</sup>. զոր և առաքեալն յայտնապէս յանգիմանէ, ասելով՝ այլ եղբայր րնդ եղբօր դատի և զայն՝ ի մէջ անհաւատից<sup>12</sup>:

Ութերորդ՝ տեսանեմք այժմ, զի բազումք յկախկոպոսաց, և ի վարդապետազ, և ի քահանայից, և ի զլիաւոր աշխարհականաց ընդ երեսաց և վասն կաշառոց և տգիտութեամբ թիւրեն զդատաստանս ճշմարիտս<sup>(13)</sup>: Եւ վասն այնորիկ յօժարեցաք զրել զդատաստանաց զիրքս:

Իններորդ՝ զի մարդոյ բնութիւնս ի շատ հոգոց և ի գրադանաց և ի ցնորից, թէ կամենամք ևս զրզորդ դատաստանն առնել, ոչ կարեմք ի մոռացմանէ, ապա յետոյ դառնամք ապաշաւեմք և ասեմք՝ միթէ արարաք ըզո՞րդ, թէ ոչ: Այլ զի մի՛ այս լիցի ի միջի մերում, վասն այնորիկ զրեցաք զզիր դատաստանիս, զի մի՛ կարծեօք դատիցիմք և մի՛ դիմևցուք յայլազգիս ի դատաստան, այլ կարկեսցուք զբերանս նոցա, զի մի՛ դարձեալ հերձուածս խօսին մեզ, թէ ոչ ունիմք զիր իրաւանց: Եւ զի նոքա ի մէնջ են ուսեալ և զրեալ, ապա զբարիոք զրեալսն շարաշար րնթիւնուն:

Տասներորդ՝ քանզի յորժամ ստեղծ Տէր Աստուած զԱզամ, շնորհք Սուրբ Հոգոյն գորանայր ի մեզ օր աւուր վերայ: Իսկ սատանայ ասաց, թէ ոչ մնաց հոգի Աստուծոյ ի մարդիկ<sup>13</sup> վասն յանցանացն, որ մեղան ի

<sup>10</sup> Մատթ., Ե, 34—36

<sup>11</sup> Գ թագ., Ա, 3

<sup>12</sup> Ա Կորնթ., Զ, 6

<sup>13</sup> Ենանդբ., Զ, 3

դրախտն Աստուծոյ: Եւ վասն այսորիկ Քրիստոս մարմնացաւ ի կուսէն և զրեաց մեղ զԱւեսարանն փրկութեան և կանոնս ի ձեռն սուրբ հարցն մերոց, որք ի Հոգոյն Սրբոյ զիտացին գմարմնոյ կիրք և զբիծ և զբեցին զՏոգևոր դեղն:

5 Մետասաներորդ՝ զի դատաւորք միշտ երկիցեն յԱստուծոյ՝ զիտելով, զի կալոց են ասաջի դատաւորին երկնաւորի, և ճշմարիտ և ուղիղ զրով արասցեն զդատաստան մարդկան:

Երկոտասաներորդ՝ զի մարդիկ, որ զան առաջի դատաւորաց, երկիցեն յԱստուծոյ և ոչ կաշառեն զդատաւորս և թիրել տայցեն ղճշմարիտ դատաստանն, քանզի ծածկագէտն Աստուած տեսալնէ զգործս նոցա, և առաջի նորա կալոց եմք ի դատաստան: Եւ որք այժմ թիրեն կաշառօք դատաւորք և դատաստանաւորք, առաջի Քրիստոսի կալոց են, և նա սնէ զերեսս նոցա, որ թիրեն զԱստուծոյ գրեալ դատաստանն:

Յայսոսիկ երկոտասան զլուխս պարունակեալ եղև պատճառ գրոցս դատաստանի: Եւ զի երկոտասանն բաղկանայ յերկուց վեցից, և վեցն կատարեալ թիւ է<sup>(5)</sup>: Եւ թէ որպէս լինի վեցն կատարեալ թիւ.

Առաջինն՝ զի երիւթն ի կոճատէ և երկական ի դարէ բաղկանայ. և ամենայն թիւ դար է և կոճատ:

Երկրորդ՝ զի ժամանակ է արարչութեան<sup>(6)</sup>:

20 Երրորդ՝ զի շափ է շարժման մարմնոյ:

Չորրորդ՝ զի թիւ է ներգործութեան մարմնոյ:

Հինգերորդ՝ զի ծնանի զայլ երկարսն:

Վեցերորդ՝ զի ի կողմանց իւրոց յանկի և կրկնելով ծնանի զերկոտասան թիւն, և երկոտասանն, ի կողմանց իւրոց զուգեալ, ծնանի զվեցտասանն, զերկուս կատարեալս՝ զտասն և զվեց: Եւ է խորհուրդ երկոտասան առաքելոցն՝ դատաւորաց աշխարհի, զի նոքա զայլս ծնան դատաւորս եկեղեցոյ: Զի և դար ունի վեցեակ և կոճատ, որ է ներգործական և կրական: Եւ զի դատաւորաց է ներգործել, և կրել՝ դատելոց:

Ի սոյն թիւ եղև զալուստն Քրիստոսի՝ դատաւորին երկնաւորի, 30 զոր և ի վեցից վշտաց փրկեաց զարդարն, և նովին թուով զտանջողսն առաքեաց Իսրայէլի տապաքօք:

Այսօրիկ առ այս շատ լիցի, զի ոչ զբնութիւն թուոյ առաջի արկաք քննել, այլ եթէ ոչ վայրապար եղև յերկոտասան զլուխս աւարտիլ գրոցս դատաստանի:

35 Իսկ եթէ յո՞ւմմէ յորդորեալ եկաք ի գրել:

Ի բազում ժամանակաց հետէ տարակուսեալ յաղագս սորին լինէի՝ խոցոտելով ի նախատեին զմեզ մերոց և օտարաց ազգաց: Սակայն վրստահանալ ի սոյն ոչ իշխէի, քանզի գիտէի զանձին իմոյ տկարութիւնս: Իսկ այրումն, Պօղոս ասեն, հմուտ աստուածային օրինացն, լուաւ զայս 40 խորհուրդ յինէն, և նա ևս առաւել յորդորեցաւ ի սմին, և սկսաւ յորդորել զմեզ իՔրոց Սրբոց: Եւ ես ոչ այնու կամեցայ ձեռնամուխ լինել, այլ սկսայ զայլս աղաչել, որք կարողք էին և գիտակբ օրինացն Աստուծոյ, քանզի բազումք էին, որ զայսպիսի խորհուրդս ի գլուխ հանէին: Բայց զի զանընդունելութիւն ազգիս գիտէի, և վասն այնր ոչ առնուի յանձն և 45 ոչ զայլ ոք կամէի աղերսել. լոնցի ապա այնուհետև և ես: Եւ զարմացեալ յաղագս այսորիկ լինէի, թէ զիա՞րդ յառաջնոց հարանցն մերոց

ոչ կարգեցաւ: Եւ զնոյն գիտացեալ զպատճառ, և զի ոչ առաքելոց Տէրն տուաւ, և կամ զի ոչ ոք հրաւիրեաց և անձամբ ոչ ոք իշխեաց՝ զարհուրեալք ի պարսաւանաց և կամ ի հալածանաց ժամանակին, և կամ ընդ տէրութեամբ անկեալ այլոց ազգաց՝ նոցունց վարեցան զատաստանաւ:

5 Եւ թէպէտ ամենայն պատահեաց ըստ ժամանակիս և նոյն պատճառ, որպէս յաւուրսն հարցն մերոց՝ ոչ աւանդիլ զրով զատաստան, բայց յԱւետարանէն, զի և ոչ յառաքելոց անտի տուաւ մեզ, բայց սակայն հարկաւոր եղև զրել մեզ, որպէս վերագոյն ցուցաք: Եւ սկիզբն առնել այսպիսի բանիս այսպէս եղև:

10 Հանդիպեցաք առաջի տեառն Ստեփաննոսի (1) Աղուանից.(2) կաթողիկոսի, և ամին իրի յիշատակ եղև առաջի նորա, եւ նա յորգորեաց գմեղ՝ ասելով, թէ և ես փափագեմ այդմ բանի: Ձնոյնն և մեք ասացաք նմա գմեր անկարութիւնս: Սակայն ի յորգորելն և ի քաջալերելն նորա՝ խորհուրդ իմն ի Հոգոյն Սրբոյ եղև ի մեզ, և թէ արժան է հոգևոր հրամանի անսալ, զի և յԱստուծոյ լիցի կատարումն սորա, զոր խորհիմք, զնոյն և սկիզբն, այպա թէ ոչ՝ պատճառ լիցի կասարելոց սմանց շարժիլ ի սոյն:

15 Զի և ոչ զորժ արուեստ ամենայն ի միոջէ՝ սկսողէ աւարտեցաւ ի ըսկրգբանէ, այլ ի բազմաց, զի մասնաւոր զտեալքն ժողովեալք՝ զոյացուցին զարհեստն, ըստ փոակի ոստայնանկաց: Նաև պատշաճ ինչ վարկայ ընդոստնուլ սովաւ, և թէ յատեան մտանելոց եմ յանկաշառ և յանողքելի, ըստ որում ձեռամբ իսկ զրեմ զապաղայիցն նշանակ:

Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս դիցէ ասացելոցս, զի թէ տխմար ոք իցէ՛ ուսցի, և թէ ամենակատար ոք և իմաստուն՝ զթերին լցցէ: Երկաքանչիւրոցն պատրաստ եմք սիրով ընդ առաջ ելանել:

25 **Գ Լ Ո Ւ Ն Գ**

**ՆՇԱՆԱԿ ԶՅՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՆԴԵՐՁ ԱՂԵՐՍԱՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՌ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵՆՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ**

Քանզի հարկաւոր է զկնի այսոցիկ սակաւուք ցուցանել զգօրութիւն առաջիկայ գործոյս, զոր և աղաչեմ, ո՛վ պատուական զլուխ եկեղեցեաց սրբոց տանդ Աղուանից, մի՛ վարկպարագի համարիք զհարկս հոգևորս, զոր եզերլ մեզ, զի և կանոնական ունի սահման գիրս զատաստանի, զոր յարմարել յայնոսիկ պարտիմք, զի յայտ լիցի շափ նորին:

Եւ արդ, այսպէս համեմատեցուք: Կանոնական սահմանն հոգոյ է ուղղիչ, իսկ սա՞՛ մարմնոյ, և թէպէտ բաժանեալք ի միմեանց են, սակայն ի բազում իրս միատրին, որպէս հոգի և մարմին բնութեամբ՝ երկու և անշփոթ խառնմամբ՝ մի, բազում անզամ ի միասին վարին մի կամօք: Վասն այսորիկ, պատահի թէպէտ միով սահմանաւ վարիլ, ոչ միմեանց լուծիչ են: Եւ զոր օրինակ ունդ հմտազունից է ընտրութիւն ստաջիկայ իրին, նմանապէս և՛ աստ: Եւ որպէս է անդ պատիժ պատուհասի յանցաւորաց և մեղաւորաց՝ ըստ զանազանութեան իրին, նոյնպէս և՛ աստ: Եւ որպէս յանդգնելոցն աստ զկնի բանդ է և կապանք, նոյնպէս և անդ բանդ է և կապանք բանազրանքն: Եւ զի ի վերայ արդարոց օրէնք ոչ կան կանոնաց, և ոչ ի վերայ ուղիղ բնթացողաց ի կենցաղս՝ զատաստանք: Եւ

40

զի այր արդարամիտ ոչ զարհուրի ի դատաւորէն Լրփնաւորէ, նաև՝ ոչ յերկրաւորէ:

2 Զայցևմ և զի երկրորդ բան ի միտ դնել, զի և ոչ փոքր ինչ զմեզ օգտեցուցանէ, քանզի համօրէն է դիրս զուղղնթաց զօրութեան նոցա, 5 լինելով ըստ շափոյ, զի դիտաւորութիւն նոցա ի կարճել զմեզս է, և սորա՝ նմանապէս հատանել զշարս: Իւ այսոքիկ ոչ այլ ինչ է, եթէ ոչ զի համամիտ և համակարիս զմեզ անխիցեն, յորոց և հաստատի սէրն, որ է զլուխ ամե-

10 րանսն պատուիրանաց: Իսկ ի շորորդ առաքինութեան համեմատեալ՝ հաւասար է արգարու- թեանց, զի ի վերայ կայ երիցն մասանց, և այդ ըստ երրորդ բանի է:

Իսկ յարուեստաւորս՝ նմանեալ է ոսկեգործաց, որոց ոսկին յառա- ջագոյն ի նիւթս գործաւորի անյայտ եղեալ կայ և դժուարաւ ի գիւտ հղեալ գործի. և է ըստ շորորդ բանի:

15 Զինզերսորդ՝ զի զքերթողի ունի զօրութիւն՝ յապաւել և քերթել զա- լելորդսն ամենայն:

20 Զափաւորապէս յայսոսիկ զլուխս, իբր իմաստնոյ, տուաք տեսակս, որով և զիտել ունիցիք, եթէ այսոցիկ հետեւելով՝ որբան օգուտ և շահ հասարակաց կենացս իցէ, զի գրեթէ ամենայն պատերազմ և ամբոխ խռովութեան ի նուազութենէ սորա իցէ, և հաստատելով յեկեղեցի՝ խաղա- 20 գութեան իցէ պատճառ և բազում բարեկարգութեան, քանզի մինն յաս- տուածային շնորհաց տուեալ յեկեղեցիս, ի հին ի նորս, սա իսկ է:

Գ Լ Ո Ւ Խ Դ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱՍՏԱՆԱՑ, ԹԷ Ո՞ՅՔ ԵՆ ԴԱՏԱԻՈՐՔ ԶԱՆԱԶԱՆԵՍԱԼՔ

25 Առաջին դատաւոր ամենեցուն Աստուած է, ըստ այնմ, թէ՛ դատի Տէր զժողովորդ իւր<sup>14</sup>, և Եսայի այլուր ասէ՛ Տէր դատաւոր մեր<sup>15</sup>, և թէ՛ քննէ զսիրտս և զերիկամունս Աստուած<sup>16</sup>, և զարձեալ՝ արի, Աստուած, և դատեա զդատաստանս քո<sup>17</sup>, և՛ Աստուած դատաւոր արդար<sup>18</sup>, և այլ այսպիսիք նախանկար տնօրէնութեան դատաստանի, որովք յայտ է մարդկան լինել դատաստան, թէպէտ և գրեաք Աստուած ի ձեռն Մովսիսի, եթէ անասուն, 30 որ հարկանէ զանասուն, փոխանակ նորա և նա սպանցի, և այս՝ ի խրատ մարդկան: Եւ դիւաց եղև դատաստան, քանզի երբ ամբարտաւանեցան, բնկեաց Աստուած զսատանայ յերկնից, զնոյն և յերկրորդ զալուստն Քրիստոսի դատել ունի զսատանայ: Վասն այսորիկ ի լինելութեան մար- 35 դոյն բնութեամբ եղաւ անունն Տէր, որ կոչի դատաւոր:

Իսկ Քրիստոս ասաց, եթէ՛ ի դատաստան եկի յաշխարհս յայս<sup>19</sup>, և թէ՛ Զայր ոչ դատի գորք, այլ զամենայն դատաստան ետ Որդոյ իւրոյ<sup>20</sup>, և՛

14 Բ Օրին., 14, 36: Սաղմ., է, 9. 26, 13. 2է, 9  
15 Եսայի, 49, 22  
16 Սաղմ., է, 10  
17 Սաղմ., 29, 22  
18 Սաղմ., է, 12  
19 Յովհ., Թ, 39  
20 Յովհ., Ե, 22

այս իսկ է դատաստան, զի լոյս եկն յաշխարհ, և սիրեցին մարդիկ զիսաւար<sup>21</sup>, և այլ այսպիսի բազում:

Բայց Աստուած անուն զբնութիւն ոչ որոշէ, զի իբր դատաւոր Որդի, դատաւոր Հայր և Հոգի, ըստ վկայութեանցդ: Եւ սակայն ոչ ինչ դժուարին է ցուցանել զպատկութիւն դատողութեան Հօր և Հոգոյ, ըստ այնմ՝ դատ արա ինձ, Աստուած<sup>22</sup>, և դատեա, Տէր, զայնոսիկ, ոչք դատեն զիս<sup>23</sup>, զոր և Հօր պատշաճի այս: Եւ Հոգին եկեալ յանդիմանեսցէ զաշխարհս վասն մեղաց և վասն արդարութեան, և վասն դատաստանի և այլ բազում բանս նման սոցին:

Իրկրորդ՝ քանզի Աստուած ետ զանուն դատողութեան մարդկան, ըստ այնմ, եթէ՛ դատ արարէք որբոյն և այրոյն<sup>24</sup>, Հասարակաց ասէ զբանս առ թագաւորս, և առ քահանայս, և առ իշխանս, և առ ծերս ժողովրդոց: Յայսոսիկ տես զՍողոմոն<sup>25</sup>, և զորս զկնի Յեսուայ, և զորս յանապատին կարգեաց Մովսէս<sup>26</sup>. զնոյն և Դանիէլ, և զորս ասաց մարգարէն՝ քահանայք, կացէք ի վերայ դատաստանի արեան<sup>27</sup>: Եւ հասարակաց ետ զհրամանս, թէպէտ և մի է ի շնորհաց ըստ հնոյն:

Առաջին՝ զի մի առ ի շնորհ դատաւորին մերձ, դատախազքն զիրեարս վնասեսցեն:

Եւ երկրորդ՝ թէպէտ և դատաւոր մի լինի ի քաղաքի, բայց ամենեքեան պատուականքն պատիւ ունիցին: Իսկ Քրիստոս ասաց ընդ առաքեալսն՝ նստջիք յերկոտասան աթոռս դատել զերկոտասան ազգն Իսրայելի<sup>28</sup>, զոր և ունին քրիստոնեայք մինչև ցայսօր՝ երկոտասան դատաւորս նստուցանեն ի դատարանի իւրեանց:

Իսկ Աստուած դամենայն ոք անձին իւրոյ եցոյց դատաւոր յառակս դատաւորին անիրաւութեան<sup>29</sup>, զի ի մեզ խորհուրդն ի վերայ կալով՝ ամենայն ոք իւր դատաւոր լիցի մտօք և ոչ թիրեացի ի հոգևոր դատաստանաց:

Գ Լ Ո Ւ Ս Ե

30 3ԱՂԱԳՍ ԹԷ ԶԻՆՁ Է ԴԱՏԱՍՏԱՆ, ԵՒ ՈՐՈՅ, ԵՒ ՈՒՄ ԱՒԱՆԴԵԱԼ Է ԶԻՐՍ ԴԱՏԱՍՏԱՆԻ

Թարգմանի դատաստանարանդ՝ դատել, որ է քննել, աստան, որ է տեղի, արան, որ է դատարան կամ զննարան, զի քննելով վճարի դատաստան յիմաստուն դատաւորաց ի մէջ անուղղայ մարդկան: Զի բազումք են յանուանսդ այդպիսիք, որպէս՝ Հայաստան կամ Ասորիստան, նմանա-

21 Յովհ., Գ, 19  
 22 Սաղմ., է, 9. ԽԲ, 1  
 23 Սաղմ., է  
 24 Բ Օրին., Ժ, 18. Իէ, 18: Սաղմ., 2Ա, 3  
 25 Գ թագ., Գ, Գ  
 26 Ելք, ԺԸ, 25, 26  
 27 Եզեկ., ԽԴ, 24  
 28 Մատթ., ԺԹ, 28  
 29 Դուկ., ԺԸ, 2, 2

Եւ արդ ցուցցուք, թէ որք են դատաւորք: Զի երեք կերպիւ վարին մարդիկ՝ բարի, և շար, և միջակ: Եւ սլարտ է բնորել զդատաւորս ոչ յոր-  
 5 սոր ի շարս<sup>(10)</sup>: Որպէս Սողոմոն երկուց կանանցն արար դատաստան և քննէր զկարծեցուցեալ իրս<sup>30</sup>, և Դանիէլ ծերոցն զստութեամբ զասացեալ-  
 սրն յայտնէր<sup>31</sup>, այսպէս և Քրիստոս յերկրորդ զալտեանն իւրում առնե-  
 10 ւոց է. ասէ առ արդարսն՝ եկա՛յք, օրհնեալք Հօր իմոյ<sup>32</sup>, և ցմեղաւորսն ասէ՝ երթա՛յք լինէն, անիծեալք<sup>33</sup>, յորոց յայտ է միջակացն լինել դա-  
 տաստան: Եւ աստ միջակք են ապաշխարողք, զորոց զզորսն ապաշխարու-  
 թեան կշռելի է բնդ մեղացն, և առաւելեալն տանի զվճիոն: Զերկուսն  
 15 առնելով զծայրսն՝ եցոյց առանց դատաստանի զոմանս կոչել զովու-  
 թեամբ զործոցն և զոմանս մերժել պարսաւանօք զործոցն, յորոց ուսա-  
 նիմք՝ ընդ ծայրիցն և միջակացն լինել դատաստան:

Եւ արդ, այսոցիկ յոյժ պէտք են իմաստունս լինել դատաւորաց  
 ուսման և հանճարոց, զի Աստուծոյ կամացն կատարողք լիցին ի հողե-  
 15 ւորս և ի մարմնաւորս, որպէս զի րդորդ արասցեն զդատաստանս, այլ և  
 բարեմիտս՝ զի մի՛ առ երեսս առնէ ամաշխելով և կամ ի հարկէ:

Այլ եթէ ո՛ւմ սուանդելի է: Եւ քանզի բստ Օրինացն յատուկք էին  
 դատաւորքն, և բստ պատահման եղեն թագաւորք, և մարդարէք, և քահա-  
 20 նայք, որպէս սսացաւ յառաջագոյն: Այլ քանզի առ մեզ ապականեալ է  
 այսպիսի կարդ, աւանդելի է զիրս դատաստանի ի ձեռս եպիսկոպոս-  
 սաց<sup>(12)</sup>, զի ոչ ոք է առ մեզ բստ արտաքնոցն վարժեալ իմաստութեամբ  
 յաշխարհականաց կամ բստ Իսրայէլի դպիր: Եւ զի այժմ եպիսկոպոսաց  
 է յանձին հողք եկեղեցոյ և աշխարհաց, և յետ եպիսկոպոսաց եղիցի  
 25 իշխանաց՝ բստ պատահման, և զլիսաւորաց ժողովրդեան, այլ և՛ քահա-  
 նայից իմաստնոց և վարդապետաց, սակայն աւանդապահ այսմ իրի  
 եպիսկոպոսք եղիցին<sup>(11)</sup>: Բայց և ոչ եպիսկոպոսք տգէտք և արծաթա-  
 սէրք, այլ զիտունք և ճշմարիտք բստ օրինացն և պատուիրանացն Յիսուսի  
 վարժեալք: Եւ եթէ պատահի եպիսկոպոս տխմար այսմ իրի, վարդապե-  
 30 տունք լիցին ուսման աստուածայնոյ, և անբամբաս մնացէ ի հերձա-  
 ծողաց ամենեկին:

## Գ Լ Ո Ի Ս Զ

### ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՊԷՄ ԱՐԺԱՆ Է ԴԱՏԱԻՈՐԱՅՆ ԼԻՆԵԼ Ի ՎԵՐԱՅ ԱՆԴԱՏԱՍՏԱՆԱՅ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱՅ

35 Եւ դատաւորացն անկաշառս լինել արժան է, զի կաշառ զաչս  
 իմաստնոց կուրացուցանէ<sup>34</sup>,—որպէս զի համարձակ նստիցի յատեան  
 դատաստանի, որպէս և դրեալ է, թէ կաշառ ի վերայ իրաւանց նա ոչ

<sup>30</sup> Գ թագ., Գ, 16—18

<sup>31</sup> Դանիէլ, ԺԳ

<sup>32</sup> Մատթ., ԻԾ, 34

<sup>33</sup> Մատթ., ԻԾ, 41

<sup>34</sup> Եւք, ԻԳ, 8: Բ Օրին., ԺԶ, 19

առնու. որ զայս արասցէ, նա մի՛ սասանեսցի յաւիտեան<sup>35</sup>: Եւ Քրիստոս հրամայէ, թէ մի՛ աշառանօք, այլ ուղիղ և իմաստուն դատաստան արարէք<sup>36</sup>:

5 Եւ արդ, ոչ է պարտ թիւրել զդատաստանս արդար վասն կաշառոյ, զի մի՛ զայթակղեեսցին տխմարք և երթիցեն առ այլազգիս ի դատաստան, այլ զի համարձակ լիցին ասել, որպէս և Քրիստոս ասէ՝ թէպէտ և դատիմ, բայց դատաստանն իմ արդար է<sup>37</sup>:

Եւ ոչ է պարտ զանձին միայն խնդրել զօգուտն, այլ զի բազումք հաւատասցեն ի նա և զդատաստանն ուղիղ արասցեն: Եւ թէպէտ յամենայնի զողորմութիւն չիշել պարտ է, այլ ի դատաստանի ոչ միայն առ աղբատս, այլ առ ամենեսեան միապէս, ըստ այնմ՝ մի՛ ողորմիր որբոյն և այրոյն ի դատաստանի<sup>38</sup>, զի մի՛ պատճառ զայթակղութեան լիցի. դատ արարէք որբոյն և տուք իբաւունս այրոյն<sup>39</sup> ի դատաստանի՝ ասացաւ: Եւ թէպէտ և դատաւորաց զայս պահելի է, սակայն ուսուցանեն զիրաքանչիւրսն՝ մի՛ անզարմապէս առ միմեանս լինել, այլ կարողաց՝ ողորմութեամբ առ անկարսն խոնարհիլ:

Մի՛ զամբաստանի կամ զդատախազի լուիցեն զբան և եթէ լուիցեն, ուսցին միայն, այլ մի՛ զվճիռ միայն հատցէ, մինչև ի միասին կատարելապէս քննեսցի:

20 Երկու կամ երեք վկայիւք զվճիռն հատցէ հաւատարմօք, ըստ օրինացն<sup>40</sup>: Եւ եթէ զի՞նչ հաւատարմութիւն է կամ ընդէ՞ր է երկու կամ երեք, ասացուցուք ի միւս ճառիդ, որ յառաջիկայդ գրելոց եմք:

Իսկ որոյ վկայ ոչ իցէ, երդմամբ միւսոյ կողմանն հատցի վճիռն: Այլ զերդմունս ոչ հրամայեմք, և զի ոչ հրամայեցաւ<sup>(13)</sup>, բայց սովորութեանցն, զոր ունին՝ անօրէն և անհրաման, կտնոնս և ապաշխարութիւնս հրամայեմք: Իսկ եթէ ո՞րպէս լիցի երդումն և որո՞ց, ասացի յիւրում ճառին, ոչ օրինադրելով այլ խրատելով:

Պարտ և պատշաճ իսկ է դատաւորաց ի դատաստանի երկու կամ երեք ունել արս փորձեալս, հաւատարիմս յամենայն կրօնս աստուածայինս, վկայեալս յամենայն բնակչացն<sup>(14)</sup>, զի որպէս ոսոխացն հաւատարմանան բանք վկայիւք, սոյնպէս և դատաւորացն առանց կարծեաց լինի դատաստանն վկայիւք զայս:

Զայս սովորութիւն և Հոռմայեցիք կալան յառաջնումն՝ արս եւթանասուն և երկու ընտրեալս միշտ քննութեամբ պարապեցուցանել դատաստանի և այլոց, զի անվթար և յառաջ դատեալքն ի նոցանէ իցեն: Եւ եւթանասուն և երկու ըստ լեզուաց և ազգաց ընտրեն, իբր թէ զամենայն ազգաց իմաստութիւն ունել այնոքիւք: Իսկ այժմ երկոտասան թուով, երկոտասանից առաքելոցն օրինակաւ, կացուցանեն զդատաւորս՝ ոչ միայն ընտրել զիրաւացին և անսխալ ունել զարդարն, այլ և բազմացն  
40 վկայութեամբ ճշգրտել զատեան դատաստանին: Իսկ Յոյնք երիս կացու-

<sup>35</sup> Մաղմ., ԺԳ, 5

<sup>36</sup> Յովհ., է, 24

<sup>37</sup> Յովհ., Ե, 30. Ը, 16

<sup>38</sup> Եւթ, ԻԳ, 3

<sup>39</sup> Եսայի, Ա, 17

<sup>40</sup> Բ Օրին., Ժէ, 6. ԺԹ, 15: Մատթ., ԺԸ, 16: Յովհ., Ը, 17: Բ Կորնթ., ԺԳ, 1

ցանեն զդատաւորս, նմանապէս և՛ Վիրք, որ ևն Վրացիք, ուսեալք ի նոցունց, ըստ թուոյ Երրորդութեանն և կամ ըստ վկայիցն թուոց<sup>41</sup>: Զոր և մեք վկայեմք և զնոյն պատուիրեմք դատաւորաց մերոց և եպիսկոպոսաց մերոց, զի միշտ առ ինքեանս պահեսցեն ի հաւատարիմ քահանայից երկու կամ երեք<sup>(15)</sup>՝ ոչ միայն վկայ, այլև և նորօք կրթիլ և հմտանալ ի գիրս աստուածայինս, և ի գիրս դատաստանի և իմաստութեան, այլ և որսալ զբանս իմաստունս յամենայն ազգաց՝ յասել և ի լսել, ի դատել, և ի վճիռ, ի ճանապարհի և ի տան:

Այլ և յերկարողի լինել ի դատաստանի, և աննախանձ, և անոխակալ, և անլիշաշար, զի նման Աստուծոյ դատաւոր է, պարտ է, որ զԱստուծոյ նմանութիւն բերել մարդասիրութեամբ յամենայն ժամանակի, ևս առաւել՝ ի ժամ դատաստանին:

Երկայնամիտք և ներողք լինիցին դատաւորք: Զի քաղում անգամ անյայտ իրքն պատահին, մի՛ կարճամտեալ լուծցեն, այլ շտեմարանեալ պահեսցեն և պարապով տեսեալ՝ վերստին ատենիւ լուծցեն, որքան և իցէ առնուլ զնոյն:

Բանակոտութեան օտոխացն յատենի ստատեսցեն, զի մի՛ ամբոխ խրոտովութեան լիցի յատենի անդ և պատճառ խափսնման դատաստանին: Ուսցին միանգամայն դատախազքն՝ ոչ վասն վիճոյ զալ յատեան, այլ վշտակցաբար զարժանն առնուլ վճիռ:

Ըստ կարգի խօս, երկաքանչիւրոցն լուրթեամբ, սացեն միայն միոյն և ապա՝ միւսոյն, զի որ ճշմարիտն է՝ երեսնցի:

Զգոյշ կացցէ դատաւորն ի սպասաւորաց իւրոց, զի մի՛ վարձ առցեն և զթիրն խօսեսցին, զի սովորութիւն կալան այնոքիկ, որք զան ի դատաստանի, զի վարձու առցեն զոք ի սպասաւորաց դատաւորին, զի խօսեսցի ոչ զճշմարիտն վասն իւր: Արդ, պարտ է դատաւորին զճշմարիտն լսել և մի՛ երեսս առցէ ի սպասաւորաց իւրոց, պատրելով ի խօսից նոցա և արդար դատաստան ոչ առնէ, քանզի երկնայինն դատաստան, որ է աստուածային, ոչ պատրի յումեքէ և ոչ ամաշէ, քանզի արդար է: Իսկ երկրաւոր դատաւորք պարտին այնմ նման լինել, և որք ոչ լիցին, մնայ նոցա դատաստան առ Աստուած:

Մի՛ հպարտացցին դատաւորք ի վերայ մարդկան, քանզի մի է դատաւոր ամենեցուն՝ Աստուած, որպէս և զրեալ է<sup>42</sup>: Թէ՛ հպարտանայ դատաւոր ոք մտօք, զմտաւ ածէ զբանս Ամբակումայ մարդարէին՝ կոչել զԱստուած վրէժխնդիր անիրաւ դատաւորաց<sup>43</sup>:

Պարտ է բանտ ունել դատաւորաց առ ի խրատել նովաւ զանիրաւան, զի և Քրիստոս հրամայէ, թէ՛ և դահիճն արկանէ ի բանտ<sup>44</sup>: Զնոյն և դատախազաց խրատ տայ Քրիստոս՝ ի ճանապարհի տալ զհաշիւն<sup>45</sup> և հաշտիլ ընդ միմեանս, զի մի՛ հակառակ ինչ պատահի:

Ոչ վայել է Քրիստոսի սուղակերտաց խօսել սուտ, զի զստախօսին ըզհայրն դատանայ ասաց Քրիստոս, զի որ խօսի սուտ, յիւրոց անտի խօսի,

<sup>41</sup> Բ Օրին., Ժէ, 6. ԺԹ, 15: Մատթ., ԺԸ, 16: Յովհ., Ը, 17: Բ Կորնթ., ԺԳ, 1  
<sup>42</sup> Եբբ., ԺԲ, 22  
<sup>43</sup> Ամբակ., Ա, 3  
<sup>44</sup> Մատթ., Ե, 25: Ղուկ., ԺԲ, 58  
<sup>45</sup> Մատթ., Ե, 25

զի սուտ է և հայրն նորա՝ սատանայ<sup>46</sup>, և թէ կորուսանէ Տէր զայնոսիկ, ոչք խօսին սուտ<sup>47</sup>. զայս Դաւիթ ասէ: Մի՛ ստէք միմեանց, և խօսեսցի իւրաքանչիւր ոք զճշմարտութիւն ընդ ընկերի իւրում<sup>48</sup>: Եւ արդ, եթէ ստախօսին հայրն սատանայ է, ոչ է պարտ թողուլ զԱստուծոյ հայրու-  
 5 թիւնն և լինել որդի սատանայի, զի ոչ է յօրինաց Աստուծոյ որողայթս դնել ընկերի սուտ բանիւք առաջի դատաւորաց, և այնու ջանան իրաւացուցանել զզատաստանս իւրեանց: Զի գրեալ է իմաստունն Սողոմոն, թէ որ դնէ ընկերի իւրում որողայթ, անձամբ իւրով լցցէ դնա<sup>49</sup>, և Դաւիթ զնոյն ասէ՝ գուրն, զոր փորեաց և պեղեաց, անկցի ի նա, որ զնա փորեաց<sup>50</sup>:

Մի՛ լիցի դատաւորաց սիրել զանիրաւութիւն, և մի՛ լիցի հաւատացելոց սիրել զյաղթութիւն անիրաւաբար առաջին դատաւորաց, զի թէ յաղթէ՝ զանձն գրկէ, և թէ յաղթի ի սուտ բանից՝ կրէ ամօթ ի մարդկանէ, իսկ առ Աստուած՝ պարզ երեսօք:

15 Մի՛ կացուսցեն սուտ վկայս, զի զընկերին զինչսն յափշտակեն, զի գրեալ է յօբէսն Աստուծոյ, թէ մի՛ ցանկար ընչից ընկերի ք<sup>51</sup>: Արդ, եթէ ցանկալն պեղծ է, որչափ ևս առաւել յափշտակելն:

Մի՛ վարձէք ճարտարասանս և ճարտարախօսս ի դատաստանի, զի զչարն ի զլուխ հանիցէք:

20 Մի՛ կովուեալ նախատէք զմիմեանս յատենի:

Մի՛ կաշտէք զդատաւորս՝ յափշտակելով զինչս ընկերին՝ խիտացեալ զարծաթսիրութիւն, որ է արմատ ամենայն շարեաց: Լուարուք ստաքելոյն Պօղոսի, որ ասէ՝ ընդէ՞ր ոչ դուք պրկիք և նեղիք, այլ զրկէք և նեղէք և այդ՝ զեղբարս ևս<sup>52</sup>: Արդ, զարհուրեսցին յառաքելական հրամանէն կանոնաց, որ վասն Տեառն գրեալ է, թէ լաւ է, որ հարաւ, քան թէ եհար, և բամբասեցաւ, քան թէ բամբասեաց<sup>53</sup>:

Մի՛ վայրապար երդուիցեն յատենի, յառաջ քան զհրամայել դատաւորին, զի Աստուած ոչ հրամայէ երդնուլ<sup>54</sup>, այլ գիտասցեն զասացեալն ի Տեառնէ, եթէ ընդ ամենայն դատարկ բանից համարս տալոց են յաւուրն դատաստանի<sup>55</sup>, և թէ՛ վասն այսր ամենայնի ածցէ Աստուած զքեզ ի դատաստան<sup>56</sup>: Խորհեսցի և զայն, զի լաւ իսկ է ի դատի աստ զյափշտակութիւն ընչիցն ինդութեամբ ընդունել և անվրէպ զանձն պահել, քան ազահել և յափշտակել և ոչ ինչ համարել և ի դատաստան անթիրելի մտանել դատաւորին ահեղի և երկնաւորի: Խրատեսցին և յայսմ, զի  
 30 աղօթիք ի Տեառնէ նախ՝ օգնականութիւն հայցեսցեն և ապա յատեան կայցեն դատաստանի: Եւ երբ ի բարին աւարտի իրաւացի դատաստան

46 Յովհ., Ը, 44  
 47 Սաղմ., Ե, 7  
 48 Զաք., Ը, 16: Եփես., 7, 25  
 49 Առակք, ԻԶ, 27: Սիրաք, ԻԷ, 29: Ժողովօղ, Ժ, 8  
 50 Սաղմ., Է, 16  
 51 Ելք, Ի, 16—17: Բ Թրին., Ե, 20—21  
 52 Ա Կորնթ., Զ, 7—8  
 53 Ա Պետրոսի, Բ, 23  
 54 Մատթ., Ե, 34  
 55 Մատթ., ԺԲ, 36  
 56 Ժողովօղ, ԺԱ, 9

- նոցա, զայն Աստուծոյ համարեսցին, քանզի նա ետ բերան և իմաստութիւն: Ապա թէ ընդ յանցանել իրիք Տէր ետ ի ձեռն անիրաւին զարդարն, զայն զոհութեամբ համբերեսցեն, զի լաւազոյն հատուցմանն հասանիցեն և զնախանձ վրէժխնդրութեանն ի Տէր թողցեն, քանզի
- 5 Աստուած է վրէժխնդիր<sup>57</sup>:

## Գ Լ ՈՒ Խ Է

ՅԱՂԱԳՍ ՎԿԱՅԻՅ, ԹԷ ԶԻՆՉ Է ՀԱԽԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ ԵՆՅԱ,  
ԵՒ ԿԱՄ ԸՆԴԷ՞Ր ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ ԸՆՏՐԻՆ

- Եւ հարկաւորապէս իսկ զվկայսն խնդրէ դատաստանն, զի զհակա-
- 10 ոակութիւն դատախազացն նոքօք լուծցէ դատաւորն, զի անհաւատալի է դատաւորացն մատնութիւն դատաստանաւորացն, քանզի թէ հնար զտանէին նոքա, զմիմեանս ի հուր մատնէին: Նաև ոսոխքն նոքօք առաւել, քան դատաւորան, շիջանին, յորժամ վկայքն չիինին վարձած կաշառօք, և դատաւորն առաւել հաւատարիմ գտանիցի նոքօք:

- 15 Իսկ հաւատարմութիւն վկայիցն, նախ, ի վարուցն ընտրին, զի ճրջմարտախօսք իցեն և շիցեն կաշառօք եկեալ ի տեղի առենին. և շիցեն ազգականք դատախազացն, և թէ իցեն ազգականք, և ի բազմաց վկայեալք իցեն հաւատարմութիւնք նոցա, հաւատարիմ լինել երկու և երեք<sup>(18)</sup>, որպէս արեգակն և լուսին, զի հաւատարիմ վկայ է. հաստատեալ յերկինս<sup>58</sup>:
- 20 կինս<sup>58</sup>:

Երկրորդ՝ զի կրկին ալեօք պատուեալ իցեն, որովք առաւել պատիւ նոցա լինի:

- Քայց պարտ է ցուցանել, թէ քանի ամաց լինի վկայն: Զի երբ երեք տարոյ լինի տղայն՝ խօսի, և եւթ տարոյ յուսումն տան, և շորեքտասան տարոյ՝ սերմանեն, և քսան տարոյ՝ գինուորելն, և քսան և հինգ տարոյ քահանայ ձեռնադրի: Արդ, պարտ է զքահանայականն հասակ ընդունել ի վկայութիւն, զի թէ առաջի Աստուծոյ հաւատարիմ է կալ և վկայ լինել զործոց մարդկան բարոյ և շարի, ևս առաւել հաւատարիմ լիցի առաջի դատաւորաց:

- 30 Իսկ քսան տարոյ է հասակ որդէծնութեան՝ հաւատարիմ լիցի ի տուրևառութիւն վաճառաց, զի թէ զանձն և զսերմն վաճառել կնոջ և զնել գկինն յամուսնութիւն հաւատարիմ է, հաւատարիմ լիցի ի գնել և ի ծախել:

- Ապա թէ պատահի մին վկայն մանուկ լինել քսանհինգ տարոյ և միւսն՝ ծեր, հաւատարիմ լիցին, բստ այնմ՝ երիտասարդ ընդ ծերոյն, և ուղիղ են ճանապարհք նորա: Եւ թէ երկու կամ երեք պատահեսցին մանուկ քսանհինգ տարոյ, ընկալեալ լիցին:

- Իսկ ըստ ազգաց կրօնից՝ ոչ է պարտ զանհաւատից վկայութիւն առնուլ ի վերայ քրիստոնէից, թէպէտ և արդարք իցեն և բազումք, որպէս և ոչ ընկալաւ զդիւացն Քրիստոս<sup>59</sup> և ոչ ընդունեցաւ, թէպէտ և արդար
- 40 ոչ ընկալաւ զդիւացն Քրիստոս<sup>59</sup> և ոչ ընդունեցաւ, թէպէտ և արդար

<sup>57</sup> Եբր., Ժ, 30: Հոով., ԺԲ, 19

<sup>58</sup> Սաղմ., Ը, 4. 29, 16

<sup>59</sup> Մատթ., Ը, 29, Մարկ., Ա, 24. Ե, 7

վկայեցին, զի ունէին ընդ ճշմարիտն խառնեալ և զսուտն. նաև ոչ Պօղոս ընկալաւ<sup>60</sup>, զի մի՛ միաբանութիւն ինչ կարծիցի. նաև՝ ոչ զհերձուածոցաց, զի թէ Տեառն ոչ են ճշմարիտ վկայք, զի՛արդ մեր իցեն, բայց նոցայն ի վերայ իրեանց ընդունելի է, թէ պատահի այնպիսի ինչ հարկաւորութեամբ:

5 Իսկ զկանայս վկայ ոչ է ընդունելի, բայց արբանեակս վկայից<sup>(17)</sup>, որպէս ի յարութեան Տեառն արբանեկեցին առաքելոցն շորք ի կանանցն, երկու՛ յառաքելոցն, և նոքա հաստատեալք զյարութիւն Տեառն՝ վկայք եղեն ճշմարիտ յարութեանն Տեառն<sup>61</sup>:

10 Այսպէս է. թէ պատահեսցի իրիք վկայ լինել կանանց և ճշմարիտք իցեն վարուք, հաւատարիմ արանց զիրան սլատմեսցեն և ինքեանք կրկին իցեն, հաւատարիմ լիցի վկայութիւն կանանց ի ձեռն արանց<sup>(18)</sup>:

Բայց յատենի մի՛ կայցեն կանայքն, որպէս և ոչ է քահանայել նոցա, և ոչ նուիրել, և ոչ հնձան հարկանել, և ոչ ի իւսնութ նստել, և ոչ այրական հանդերձ ազանել ըստ կանոնաց<sup>52</sup>, այսպէս ոչ զատել և ոչ վկայել, բայց զոր ցուցաք յառաջդ: Բայց մի՛ ոք ապախտ սունել զվկայութիւն Տեառն կարծիցէ ինձ զկանանց, զի այլազգ Աստուծոյ վկայ լինելն է և այլազգ՝ մարդկան արբանեակ. թէ պատահին, որպէս պատահեցան բազումք, ի Տեառնէ ընկալեալք են<sup>(19)</sup> և ի մարդկանէ՛ յաղագս Աստուծոյ, բայց ի մարդկայինս, յաղագս դիրազրգոթեան կանանց, երկբայելի է:

20 Այլ զկանանցն ի կանանց ընդունել արժան է, զի բազում անգամ պատահի իրաց նոցա մերձ ոչ լինել արանց: Եւ զի պարտին կրկին լինել՝ երկուք ընդ միոյ յամենայն տեղիս:

25 Զի որպէս ամենայն հասակ՝ եթէ ծեր, և եթէ երիտասարդ, և եթէ մանուկ վկայեսցէ զԱստուծոյ՝ ընդունելի է, որպէս Բեթզեհէմի մանկունքն, և սուրբ Կիրակոս<sup>63</sup>, և սուրբ Ստեփաննոս Նախավկայն<sup>64</sup> և այլք բազումք, բայց սակայն ի մարդկայինս քսան և հինգ ամենիցն վկայութիւն, այլ ևս ծերացելոցն ընդունելի է, զի Աստուած հայի ի սիրտս, իսկ մարդ՝ յերեան և ի տեսն<sup>65</sup>:

30 Եւ եթէ ընդէ՛ր երկու կամ երեք ընտրեն. ոչ եթէ զայլ շատն խտտեմք, այլ զի մի՛ պակաս իցէ, քան զայս, որպէս և գրեալ է, եթէ յերկուց և յերից վկայից հաստատի ամենայն բան<sup>66</sup>: Զի դիրին է մին վկային ախտի սուտ վկայել, իսկ երկու և երեքն՝ ոչ:

35 Եւ զի ուսցի դատաւորն, եթէ երկուց վկայիցն նման լիցի բանքն և անտի ճշմարտեսցի:

Բայց պարտ է վկայիցն տեսանել և լսել և ասլա վկայել, զի լաւ է տեսանելն, քան զլսելն, և վկայել ճշմարիտ առաջի մարդկան, և չԱստուծոյ առցեն զպարզեան:

60 Գործք Առաք., ԺԶ, 16—18  
 61 Մարկ., ԺԶ, 1—13, Յովհ., Ի 1—18  
 62 Բ Օրին., ԻԲ, 5: Բարսեղ Կես. Կանոն ճիշտ  
 63 Վարք Սրբոց, Վենետիկ, 1810, հ. 1 էջ 170—178  
 64 Գործք Առաք., Զ, է  
 65 Ա թագ., ԺԶ, 7  
 66 Բ Օրին., ԺԹ, 15 և այլուր

Գ Լ Ո Ւ Խ Ը

ՅԱՂԱԳՍ ԵՐԴՄԱՆ, ԹԷ ՈՐՐՊԷՍ ԼԻՑԻ ԵՒ ՈՐՈՑՑ,  
ՈՉ ՕՐԻՆԱԴՐԵԼՈՎ

Արդ, զմեծ և զտէրունական հրամանն և զպատուիրանն տեսանեմք  
 5 այժմ կոխան լեալ ի մարդկանէ, քանզի ոչ ունիմք հրաման ի Քրիստոսէ  
 երզնու<sup>67</sup>, Եւ այժմ յամենայն ոչինչ քանս և կարի յաճախապէս երզնուն  
 յանուն Աստուծոյ մարդիկ ի փողոցս, ի շուկայս, ի տունս, ծերք և տղայք,  
 քահանայք և ժողովուրդք, զիտնականք և անզէտք: Եւ եթէ պատահի  
 դատաստան լինել ոմանց, և հրամայէ դատաւորն երզնու ի վերայ  
 10 իրաւանց, հակառակին և ասեն, եթէ Քրիստոս ասէ՝ ամենևին մի՛ երզ-  
 նուլ, և այլ շատ պատուիրանացն Քրիստոսի միտ ոչ դնեն ամենևին:  
 Իսկ եթէ ասիցէ որ՝ անհնարին է երզնուլ, և յայտ է, զի Աբրահամու  
 երզուաւ Աստուած, ասելով ի ձեռն հրեշտակին՝ յանձն իմ երզուայ, ասէ  
 Տէր<sup>68</sup>, և Աբրահամ ծառային ետ երզումն<sup>69</sup>, և դարձեալ՝ երզուա Տէր  
 15 Դաւթի ճշմարտութեամբ<sup>70</sup>: Եւ թազաւորք երզնուն միմեանց, և խաղաղու-  
 թին աշխարհի լիցի երզումն նոցա. նոյնպէս և՛ իշխանքն: Արդ, եթէ  
 այստքիկ երզնուն, պարտ է երզնուլ յարգար դատաստանս:

Եւ արդ, այսպէս երզնուլ պարտ է. զիցէ զձեռն ի վերայ Աւետարանին  
 և ասիցէ՝ գիտէ Աստուած, և խաշս և Աւետարանս վկայ է սրտիս, զի  
 20 այսպէս է, որպէս ասեմս, և ոչ ստեմ: Եւ կամ ասիցէ՝ փառք սոցա և  
 զօրութիւն, զի ճշմարիտ է, զոր ասեմս, և ոչ ստեմ: Արդ, այսպիսի  
 ասացեալքս խոստովանութիւն է. զԱստուած սրտագէտ գիտել, և զխաշն՝  
 Քրիստոսի նշան, և զԱւետարանն՝ Աստուծոյ բան, և զեկեղեցին՝ Աստու-  
 30 ծոյ տուն: Եւ եթէ հանդիպի որ առաջի դատաւորաց անօրինաց և այլցնդ  
 երզումն տացեն քրիստոնէի, եթէ ուրացիր զքո խաշն և զԱւետարանն,  
 ամենևին մի՛ առնուցուն յանձն, թէ և մահ հանդիպի:

Եւ դատաւորք մի՛ շուտով տացեն երզումն և կամ յաղագս սակաւ  
 րնչից, այլ շանք զնեն և թողուլ տան զկէսն և զկիսոցն վճարն և եթէ ոչ  
 երզնուն:

30 Եւ երզման կարգն գրեալ է ի կանոնսն, թէ որչափ ասլաշխարեսցեն,  
 Իսկ եթէ կրօնաւոր իցէ և հարկ ունի երզման կամ երէց, բնաւ մի՛  
 երզնուցուն:

Եւ որո՞ց է պարտ երզնուլ: Ամենայն ոք, որ ոչ իցէ իւրն վկայ կամ  
 զիր գրեալ վկայիւք, երզումն կայ ի միշի<sup>(21)</sup>:

35 Ապա թէ ոք զոք ըմբռնիցէ ի դատաստան, և շիցէ իւր վկայ և ոչ  
 այնմ, որ ըմբռնեցան, հարկ է երզնուլ ոչ որ ըմբռնեացն, այլ այնմ, որ  
 ըմբռնեցաւ: Այլ և տեսցեն, թէ սուտակ ոք իցէ, շտացեն նմա երզումն, այլ՝  
 ճշմարտախօսին, զի թերևս վախելով երկնչեսցի յԱստուծոյ և ոչ երզնու,  
 և դատաստանն կատարի առանց երզման<sup>(22)</sup>.

67 Մատթ., Ե, 34  
 68 Մնունդք, ԻԲ, 15—16, Եսայի, ԽԵ, 23  
 69 Մնունդք, ԻԴ, 2—3  
 70 Սաղմոս, 2Ը, 50

Եւ թէ ըմբռնեն զոք ի գողութեան կամ ի բողոքեան, և ըմբռնողքն շունին վկայ, երգումն է նոցա, որք ըմբռնեցին, զի չարագործաց երգումն ոչ կայ: Ապա եթէ գիտիցեն զատուորքն և կամ այլք ի դատուորաց կողմանէն և կամ այլ ատեանն ատենի վկայեացեն, եթէ սուտ ըմբռնեալ  
5 իցեն ի գողութեան կամ ի շնութեան, երգումն լիցի այնպիսի գողոցն<sup>(23)</sup>:

Եւ թէ ոչ է պարտ ամենայն հասակի երգնուլ, այլ քսան և հինդ ամաց և ի վերայ այնոցիկ է երգումն:

Եւ հիւանդաց ոչ է պարտ երգումն տալ և կամ երգնուլ, զի մահու կասկած ունին, դուցէ անապաշխար մեռանիցին:

10 Մանկան մի՛ լիցի երգումն վասն խակութեանն:

Ապաշխարողաց մի՛ լիցի երգումն, զի մի՛ մեղս ի վերայ մեղաց դիցէ: Մաքսուորաց և արքեցոդաց և այլոց այսպիսեաց մի՛ լիցի երգումն:

Եւ արդ, զրեցաք զայս զիր երգման, այլ ոչ ոք դիւրաշարժ լիցի երգնուլ կամ սուտ, զի մի՛ դատապարտութիւն կրեսցէ յԱստուծոյ դատաստանին:  
15

Եւ այս սակաւս, զոր զրեցաք, վասն չարութեան ժամանակիս է: Եւ զի անօրէնք բազմացան ի վերայ մեր և նոքա դիւրաւ են յերգնուլ, վասն այնորիկ ուսուցաք ձեզ, թէ ո՞րպէս սլարտ է երգնուլ, որպէս և զրեցաք ի ճառս, և մի՛ այլ կերպ, զի մի՛ դատեսչիք յԱստուծոյ:

20

Գ Լ Ո Ւ Խ Թ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՉ Է ՊԱՐՏ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ ՅԱՏԵԱՆ ԵՐԹԱԼ ԳԱՏԱՍՏԱՆԻ ԱՆՀԱԻԱՏԻՑՆ Ի ՔՐԻՍՏՈՍ. ԲԱԶՈՒՄ ՈՒՆԵԼ ԱԵՋՈՑՍ

Յայտնի է ամենեցուն հեռաւորութիւն հաւատացելոցն յանհաւատիցն, յասելն առաքելոյն՝ զի՞նչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի, կամ՝  
25 զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատիին<sup>71</sup>: Եւ Տէրն ասէ, թէ՛ որ ոչ հաւատայ յՈրդին Աստուծոյ, բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա<sup>72</sup>, և եթէ՛ որ ոչ ծնանի ի ջրոյ և ի Հոգոյ, ոչ տեսանէ զարքայութիւն Աստուծոյ<sup>73</sup>: Եւ Յովհաննէս առաքեալն ասէ՛ որ ոչ խոստովանի զՈրդին Աստուծոյ մարմնով եկեալ յաշխարհ, նա իսկ է նեռն<sup>74</sup>: Եւ ամենայն  
30 մարգարէքն ուրացողք ասեն զհեռացեալսն յուրիւ ճանապարհէն: Զի թէյլէտ և այժմ մահմետականք զԱստուած խոստովանին Հայր, այլ զՈրդի և զՀոգի ուրանան, և այս մեծ ուրացութիւն է:

Եւ արդ, եթէ յաստուածալաշտութեանն մեզ ընկերակիցք չեն, ոչ է պարտ առ նոսա ի դատաստան երթալ, զի զհին ատելին նոր սիրելի  
35 դժուար է առնել, զսր և զրէ առաքեալն Կորնթացոցն, ասելով. ոչ ոք է ի ձէնջ այնքան իմաստուն, որ կարիցէ իրաւունս ընտրել ի մէջ երբօր իւրոյ, այլ եղբայր ընդ երբօր դատի և զայն՝ ի մէջ անհաւատից<sup>75</sup>, և եթէ՛ զանալզս եկեղեցոյ դատաւոր նստուցանէք<sup>76</sup>: Զի նոքա ըստ կրօնից

71 Բ Կորնթ., 2, 14—16

72 Յովհ., 9, 36

73 Յովհ., 9, 5

74 Բ Յովհ., Ա, 7

75 Ա Կորնթ., 2, 5—6

76 Ա Կորնթ., 2, 4

իրեանց առնեն դատաստան, զի զինչ իրեանց զործքն է և հաւատն, նոյն և դատաստանն: Թէպէտ և սկիզբն յօրինաց անտի Մովսիսի ունին, բազում ինչ այլայլեն և ըստ շար մտաց իրեանց առնեն: Մուտ վկայիւք վարին, և կեղծատր ատենիւ, և զըպարտ ճարտարօք, և անզեղչ երգմամբ: Զմեռեալս զրկեն և զինչսն առնուն, թէ որրօց կու պահեմք, մեռեալք ի՞նչ առնեն: Եւ այս այնոր նշան է, որ ոչ հաւատան, թէ բարի կամի առնել Աստուած մեռելոց, հայնց և նորա ոչ տան մասն իրեանց մեռելեացն: Եւ զորբա և զայրիս, որք անժառանգ են, բնաւին զրկեն, թէ առնումք զիրբս և զզանձս պահեմք, և երբ մեծանան որբերն՝ տամք, և յետոյ սուտ գտանին ի խօսս իրեանց:

Զկանայս ի վարձու ունին, և երբ զմտաւ ածեն զշար զործս իրեանց, տան զվարձս զինչ գտան մի և թողուն և զորդիսն այլոց թողուն: Անսահման և անխնայ զործեն զամենայն շարիս, զոր պատահի նոցա:

Եւ զլուացումն մարմնոյ սրբութիւն հոգոյ համարին, զհեշտութիւն մարմնոյ պատուեն և յոչինչ շարեաց յետ շղան:

Զարքայութիւն Աստուծոյ կանամբ ասեն առնուլ և զգրախտն՝ սղոնկանոց:

Աստուծոյ սիրելի ասեն զմոլորեցուցիչ առաջնորդն իրեանց, զայն որ զարուպիտութիւն և զանասնապղծութիւն քարոզեաց:

ԶԱստուած ասեն պաշտեմք և զրան նորա Դորանան: Յարութիւն խոստովանին և հոգոյ բաժին ոչ տան: Հատուցումն ասեն զործոց և զամենայն մեղս զործեն և միայն զղերեզմանս զեղագործեն: Զզինի հարամ ասեն և ամենքին արբենան, և զի մի՛ երկայնեցից զշարիս նոցա:

Եւ արդ, եթէ այսպիսի օտարութիւն է ընդ մեզ և ընդ նոսահաւատոց և զործոց, զի՞ ի դատաստան նոցա լիցի ըզորդութիւն մերոց օրինօք: Եւ թէպէտ ըստ օրինացն ըստում ինչ է նոցա, և հաւատամք օրինացն Աստուծոյ և ոչ նոցա:

Իսկ ուղիւ հաւատացելոցս ի Քրիստոս ոչ է պարտ դատաստանալ նոցա վարիլ, քանզի մեք խոստովանիմք զՅրրորդութիւն սուրբ միով աստուածութեամբ և զօրութեամբ, որում փառք յախտեանս ամէն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՅՈՐՈՅ ԳՐՈՅ ՀԱԻԱՔԵՄՔ ԻՒ ԳՐԵՄՔ ԶԳԻՐՍ ԳԱՏԱՍՏԱՆԻՍ, ԵՒ ԿԱՄ ՅՈՐ ԱԶԳԱՅ ՀԱԻԱՔԵՑԱԻ: ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍԱԿԱՌՈՒՔ

Հաւաքեցաք յառաջ յօրինացն Աստուծոյ, որ ետ Մովսիսի. առաջին՝ յնից, յԵրկրորդ օրինացն և յայլոց. դիտոցն, երկրորդ՝ ի կանոնաց սուրբ հարցն և յԱւետարանէն, երրորդ՝ յամենայն սուրբ տառից ի հնոց և ի նորոց:

Եւ արդ, թէպէտ և համարձակեցաք մեք և զընցաք զգիրս, սակայն եթէ հանդիպի որ իմաստուն և թիւրութիւն զտցէ ի սմա, աղաչեմ, զի լցցէ զպակասն, քանզի ամենայն զիրք ոչ եթէ ի միում ժամանակի զրեալ են, այլ յայլ և այլ ժամանակս: Զնոյն և այս սկիզբն եղև իմաստնոց՝ յաղագս զմեզ յիշելոյ ի ըստիս:

ՍԿԻԶԲԵՆ ԿՈՏԱՍՏԱՆՆԱՑ Ի ԿՈՄՍ ՆՕՐ ԵՒ ՈՐԿՈՑ ՆՈՐԱ  
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ԼՈԳՈՑՆ ՍՐԲՈՑ

Գ Լ Ո Ւ Խ Ա

ՎԱՍՆ ՎԻՃԱԿԻ ԿՈՏԱԽՈՐԱՅ

5 Եկեսցուք այժմ իսկ ի զորձ դատաստանի՝ գիտելով, զի ըստ քաղա-  
քաց դատաւորս հրամայէ լինել Մովսէս և նոցունց զպիրս<sup>77</sup>, յորոց յայտ  
է, զի ոչ զամենայն պրով աւանդեաց Մովսէս զիրս դատաստանի, այլ՝  
տեսակս սակաւ, և ի դատաւորս ապաստան արար ի զանազան իրս և  
10 ի ժամանակս: Եւ վասն այն զգպիրս նոցա կարգեաց, զի զեզեալ զատաս-  
տանս նոցա գրով պահեսցեն: Ըստ որում և մերս եզիցի, որպէս յառաջ  
իսկ ասացաւ:

Եւ արդ, նախ զայս ևս տեսցուք, զի պարտ է, որ դատաւորք հոռք  
և պարզեք ունիցին ի թազաւորաց, զի մի՛ ձանձրացցին ի զատելոյն-  
զնոյն և եկեղեցոյ դատաւորքն, որ են եպիսկոպոսք, պարզևս մեծամեծս  
15 կալցեն ի կաթողիկոսէն լիապէս, զի մի՛ յազազս ազքատութեան թիրես-  
ցեն զուզիզ դատաստանս Աստուծոյ<sup>(35)</sup>:

Եւ արդ, այսպէս լիցի: Եթէ մեռանիցի այր որ և ուստր ոչ ունիցի, և  
ոչ դուստր, և ոչ այլ որ ի ցեղից հարց նորա, ժառանգութիւն նորա եպիս-  
կոպոսաց լիցի<sup>(36)</sup>: Բայց այսպէս արասցեն. զի եթէ ի կաթողիկոսի վիճակ  
20 եզիցի անժառանգ վախճանեալն, կաթողիկոսին Լզիցի ինչքն, և Լթէ  
յեպիսկոպոսի՝ եպիսկոպոսն երեք բաժին սունէ զինչս մեռելոյն և զմինն  
իւրն առցէ, և զմիւսն կաթողիկոսին տուցէ, և զմիւսն այլ՝ քահանայիցն:  
Եւ թէ թիմին վարդապետ կայ, ի վեց բաժնեն, զմինն նմա տան և զայլն  
այպա երեք բաժին արասցեն<sup>(37)</sup>:

25 Իսկ աշխարհական դատաւորաց ոչ տան մասն, վասն զի այսօր են  
և վազն չեն: Ապա եկեղեցոյ դատաւորք հայրք են հոգոց և մարմնաց  
և նոքա պարտին հատուցումն առնել ննչեցելոց: Իսկ սիրոյ ազազաւ,  
վասն աշխատութեան դատաստանին, տացեն մասն ինչ մարմնաւոր  
դատաւորաց, այլ ոչ օրինօք, այլ ըստ պատահման:

30 Ապա թէ կրօնաւոր վախճանի ի վանքն, զիւր իրքն իւրքն առցեն՝  
զինչ մարդոյ որ ընկերակից էր, և թէ աշակերտ ունի՝ նա ժառանգէ, և թէ  
վարդապետ՝ նա, և մի՛ մարմնաւոր ազգն՝ Լզբայր, կամ հայր, կամ

ազգական, այլ հոգևորքն, և զմատղենիքն և զայլ մահու իրաւունքն հօր վանացն տացեն, զի մոնոզոնքն ի նմանէ ձեռնադրին, և վասն այսորիկ նա ժառանգէ, զի իւր ձեռնադրեալն է: Ի՛նչ թէ շունենայ մոնոզոնն, որ մեռանի, մօտ ի յինքն աշակերտ կամ վարդապետ, հայր վանացն ժառանգէ զինչս նորա, և զմատղին իրաւունքն և զմահուն և պիսկոպոսին տան:

Իսկ հաւատաւոր կանայք, թէ յաշխարհական քահանայէ ձեռնադրի և մօտ ի նա վախճանի, նա ժառանգէ զինչս նորա. և եթէ ի վանք ձեռնադրի և մօտ ի նոսա վախճանի, նոքա ժառանգեն զնա, և մի՛ եպիսկոպոսք արկցեն ձեռն ի նոսա:

Իսկ եթէ օրհնած երէց է արեղայն, որ վախճանի և ոչ ունենա վարդապետ կամ աշակերտ, որ ի կենդանութեանն մի էին, և պիսկոպոսն ժառանգէ, և զմատղենիքն հօր վանացն տացեն, և թէ իցէ հոգևոր ժառանգ՝ զինչսն նմա տացին և զմատղենին և զմահուն իրաւունքն՝ և պիսկոպոսին:

Այս դատաստան հաստատուն կացցէ և սենեկատրացն, իսկ միայնակեացք միաբանք իրեանք զիւրեանք ժառանգեն: Բայց եթէ երէց արեղայ հանդիպի ի միջի նոցա, զհանդերձն և զմատղենին և պիսկոպոսին տացեն և զայլ ստացուածսն ի մէջ եղբարցն հաւասար բաժանեն:

Նմանապէս եթէ եպիսկոպոս փոխեսցի մահուամբ առ Քրիստոս և ունիցի աշակերտ ժառանգ կամ այլ հոգևոր եղբայր, ընդ որ ինքն կամեսցի և հպճեսցի՝ նա ժառանգեսցէ զինչս նորա, իսկ զհանդերձսն, և զզաւազանն և զմեռոնն, և զայլ ընծայա տացեն կաթողիկոսին, զի նա է ձեռնադրող նորա և դատաւոր, և զմատղենին և զմեռելոյթսն տացեն զրան եպիսկոպոսին:

Իսկ ի կաթողիկոսի դարպասն զինչ մատաղ առնէ ի տօնս տէրունականս, իւր եկեղեցւոյնուն լիցի: Իսկ թէ հանդիպի, որ մեռանի յիւրոց ազգականացն, և կամ մատաղ առնէ իւր ննջեցելոցն, և կամ պսակէ յիւրոց ազգականացն, այսոցիկ իրաւունքն յիւր զրան եպիսկոպոսացն վերայ բաժանեսցի և ի վերայ վարդապետացն:

Իսկ եթէ վախճան հանդիպի կաթողիկոսին, իւր ամենայն ստացուածք և զանձք եկեղեցոյն և կաթողոյն մնացէ անփոփոխ, և զենմունք և այլ հոգոյ ընծայք բաշխեսցեն առհասարակ ի վերայ եկեղեցականաց ըստ արժանեացն:

Այս եղիցի իրաւունք ի դատաստանս եկեղեցոյ. և մի ոք ի վերայ իրաւանց ընկերին ևլցէ, զի մի՛ մնացէ ի ներքոյ անաշառ դատաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի:

#### Գ Լ Ո Ւ Թ Բ

#### ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ՆՈՅԱ

Նախ զի եղաք զվիճակս և զդատաստանս եպիսկոպոսաց, զի առաջին է պատիւ նոցա և հարկաւոր: Իսկ երկրորդ ղիցուք զդատաստանս թագաւորաց<sup>(39)</sup>:

Բայց զհտելի է, զի թագաւոր տիրապէս Աստուած է, և մարդիկ՝  
անուամբ միայն:

Արդ, եթէ պատահի թագաւորի մեռանել և ունիցի ուստերս և դրս-  
տերս, պարտ է զինչսն հաւաւար բաժանել<sup>(30)</sup> և անդրանկին տալ  
5 զթագաւորութիւնն, իսկ որ յառաջադէմ լիցի և իմաստուն յորդիսն,  
յաթոռն նստուցանեն:

Իսկ եթէ եղբայրք ունի թագաւորն, նոքա նստցին, մինչև այլ ոչ  
իցեն, քանզի ոչ է իրաւացի, զի մինչ եղբայրքն կենդանի իցեն, որդիքն  
նստցին, այլ՝ յետ մահուան եղբարցն: Եւ եթէ դուստր իցէ նորա, կէս  
10 եղբոր մասն առցէ հանդերձ արամբն<sup>(31)</sup>:

Եւ եթէ մահուամբ բարձցին թագաւորք և սրղիք նոցա, և որդիք  
լիցին որդոյն և դստեր որդիք, որդիք որդոյն ժառանգեսցեն զաթոռն և  
ոչ որդի դստերն, և որքան յորդոցն իցէ ի ծննդոց, դստերն մի՛ առցէ,  
ապա թէ առցէ՝ յօտորս համարեսցի: Զի այդպէս մեծն արքայ Աբգարիոս  
15 կարգեաց զտուն թագաւորութեանն Պարսից<sup>(40)</sup>: Եւ նահապետն Նոյ րնդ  
որդիսն և րնդ դստերն ետ մասն վիճակի զկողմն հարաւոյ<sup>78</sup>, ըստ որում  
և կանայք թագաւորեն կողմանցն, զոր և Սողոմոն<sup>(41)</sup> էած երբեմն  
զղշխոյն հարաւոյ<sup>79</sup>, զոր և Տէրն իսկ վկայէ<sup>80</sup> յԱւետարանի անդ: Սա-  
կայն զանդրանիկն իսկ պատուէ րնտիր վիճակաւ, զոր և Օրէնքն կրկին  
20 հրամայէ տալ<sup>81</sup>: Ի դէպ է, թէ և դստերն իբր զկէս եղբոր տայ վիճակ,  
սակայն թագաւոր է իրր նախնի եղեալ:

Իսկ եթէ ուստր չիցէ, և դուստր իցէ, սացէ զթագ իւր դստերն: Եւ  
ունիմբ հաստատուն վկայ դՕրէնսն. եթէ որ մեռանիցի, ասէ, և դուստր  
իցէ նմա և ոչ ուստր, զժառանգութիւն իւր նմա տացէ<sup>82</sup>: Եւ առեալ այր՝  
25 զթագ իւր նմա տացէ՝ իշխան է դուստրն, բայց զկնի մահուան նորա իբրև  
յօտարս համարեսցի ծնունդք նորա: Ապա թէ ոք ասիցէ՝ զիա՞րդ ոչ ըստ  
օրինաց կողմանցն հարաւոյ իշխան լիցի ինքն թագաւորել, այլ առնն տալ,  
զիտասցէ, զի անդ սովորութիւնն զայնոսիկ յառաջէ, այլ ըստ զրոց  
դատաստանի զայդպիսիդ հաստատուն կարծեմ:

Եւ եթէ կտակ արասցէ արքայ, որքան կենդանի է, իշխան լիցի  
փոխել զնա ըստ արժանոյն, զի կտակ յետ մահու հաստատուն է, ըստ  
առաքելոյն<sup>83</sup>, որպէս արքայ Կոստանդիանոս կտակաւ թագաւորեցուցա-  
նէր զորդիս իւր և զսահմանս լերամբք և զետօք հաստատէր և արձանօք,  
ըստ առաջին թագաւորացն:

Եւ թէ չիցէ բնաւ ժառանգ ի ցեղէ հարց մինչև ի շորրորդ զարմն,  
իշխան լիցի տալ զթագ իւր օտարի՛ ոչ ըստ կրօնից<sup>(32)</sup>, որպէս որդի  
թագաւորին Հնդկաց և Մակեդոնացին Աղէկսանդր, և զայլ ևս մատակա-  
րարութիւն թողուլ ի Տէր: Բայց ի թագաւորեցուցանելն մի՛ առանց  
հրամանի հայրապետին լիցի:

Եւ եթէ շինիցէ քաղաք կամ բերդ, և թէ աշխարհագիր առնիցէ, և թէ

<sup>78</sup> Ծնունդք, 2—ԺԱ

<sup>79</sup> Գ թագ., Ժ, 1: Բ Մնաց., Թ, 1

<sup>80</sup> Մատթ., ԺԲ, 42: Ղուկ., ԺԱ, 31

<sup>81</sup> Բ Օրին., ԻԱ, 17, տե՛ս նաև հորդ. ԿԹ

<sup>82</sup> Թիւք, Իէ, 8

<sup>83</sup> Եբր., Թ, 17

դահեկան կամ դրամ հատանիցէ, ինքնիշխան կամօք արասցէ, ըստ օրինաց դատաստանի<sup>(39)</sup>:

Այլ իշխանաց ոչ է պարտ դահեկան կամ դրամ հատանել և եթէ հատանիցէ, թազաւորին կամօք լիցի:

5 Նոյնպէս շինել կամուրջ ի վերայ մեծամեծ դետոց՝ թազաւորաց լիցի:

Իշխանք զթազաւորաց զգեստ մի՛ զզեցցին, մինչև նոքա հրամայիցեն կամ պարգևեցեն:

10 Առաջի արքայի մեծամեծ՝ իշխանք մի՛ նստցին, բայց եթէ հրամայեցեն:

Ի սեղանն արքայի, բայց ի հայրապետէ, մի՛ ոք նստցի, առանց հրամանի նորա:

Ի յարքունիս արքային մի՛ ոք նստցի, բայց ի հայրապետէն: Իսկ արքայ ի տունս հայրապետի ոչ նստցի, միայն հրամանաւ:

15 Մի՛ լիցի քրիստոնեայ թազաւորի հարձօք վարիլ, որպէս անօրէն արքայ, զի իշխանութիւն է նմա ընդ հայրապետին ի բեմն ելանել:

Դատաստանաւ վարեցի յամենայն իրս և ի զործս արքայն:

Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերացի, հրաման մի՛ տացէ այլ սպանութիւն առնել<sup>(39)</sup>:

20 Եւ եթէ պաշարեցէ զքաղաք այլազգեաց, նախ ի խաղաղութիւն կոշեցէ զնոսա<sup>84</sup> մի անգամ, և երկիցս, և երիցս. և թէ ոչ կամիցին գալ, և բռնաբար առցէ զքաղաքն, զայնոսիկ, որ ոչ կամէին զխաղաղութիւն, սրով սպանանէ և զայլսն ընդ հարկիւ ածցէ, ապա թէ և նոքա հակառակին, սատակեացէ զնոսա, իսկ զզլխաւորսն ոչ ևս<sup>(39)</sup>:

25 Եւ ի պաշարել արքայի զքաղաքս ոչ է պարտ զծառս պտղաբերս կտրել<sup>85</sup>:

Զքաղաքատուրս և զբերդատուրս, եթէ յառաջ քան զշարն ի գլուխ հանելն յայտնեցցին իրքն, մահու մատնեցցին, իսկ եթէ գնով զնեացէ զանձն իւր, փրկեացի, ապա զաշան հանիցեն և գկինն և գորդիսն յարքունիսն ծառայ առցեն և զինքն յայլ աշխարհ վարեցցեն մերկ և անաշք: Ապա թէ զշարն ի գլուխ հանիցէ, և ընդ ձեռամբ ածցեն զնա, անողորմ սպանցի. այս դատաստանս այլազգոյ է, թէ հանդիպի:

35 Իսկ եթէ քրիստոնեայ իցէ և մատնիցէ քաղաք կամ բերդ ի ձեռս անօրինաց կամ ի ձեռս քրիստոնէից, գնոյն արասգեն. զկին և զորդիսն և գատացուածս առցեն և գինքն յաշան խրատեցցեն և յայլ աշխարհ վարեցցեն և մի՛ սպանցեն վասն մարդասիրին Քրիստոսի:

40 Եւ զզող զանձուն տէրունի. զայլազգիսն՝ հանցեն զաշան կամ կտրեցցեն գձեռսն և գկինն, և զորդիսն, և գինչսն առցեն յարքունիս և գինքն տարագիր արասցեն, և զքրիստոնեայ զողն՝ առնուն յիւրմէն զոր գողացեալն է, և զաունն, և գինչսն, զսր ունի, և զանձն իւր ծախեցցեն և զգինսն առցեն և զբորդիսն և գկինն ագատեցցեն<sup>(39)</sup>:

Իսկ եթէ սպանցէ այլազգի զքրիստոնեայ կամաւ, սպանցի փոխանակ նորա, ապա թէ ակամայ՝ կտրեցցեն զաջ ձեռն<sup>(39)</sup> և զգին մարդոյն առցեն ի նմանէ:

<sup>84</sup> Բ Օրին., Ի, 10

<sup>85</sup> Բ Օրին., Ի, 19

Իսկ գին մարդոյ ըստ արժանոցն գին ոչ զոց, քանզի գործ է Աստուծոյ և պատկեր, և յարուցանել զմեռեալս միայն կարողութիւն է Աստուծոյ: Բայց մի՛ ոք զՅովսեփայն կամ զՔրիստոսի գինն կարծիցէ: Ճշմարիտ քսան<sup>86</sup> կամ երեսոմ<sup>87</sup>, զի գողք իսկ էին վաճառողքն: Այլ գին մարդոյ ըստ թուոյ աւուրց տարոյ կարծեմ երեքհարիւր վաթսուն և հինգ դահեկան ոսկի(<sup>88</sup>), և դեկանն՝ երեքտասան դրամ արծաթ(<sup>89</sup>):

Այս գին ըստ բանականին շնորհի, իսկ քրիստոնէին՝ կրկին և ըստ աստիճանաց յաւելցի, իսկ ալլազգեաց՝ յերից մասանց մինն լիցի՝ հարիւր քսան և երկու դեկան և երկու քարտէզ, քանզի ոչ ունին զշնորհս աւազանին: Ապա թէ շիցէ կարողութիւն հատուցանել, վաճառեսցեն զսպանողն և զգինն յարենտէրքն տան և զտունն յաւար առնուն յարքունիսն:

Եթէ քրիստոնեայ զալլազգի սպանանէ կամաւ, զգին արեանն առցեն՝ հարիւր քսան և երկու դահեկան, և թէ ակամայ՝ վաթսուն և մի դահեկան և զգինսն յարքունիսն առցեն, բայց յերից մասանցն զմինն իւրոցն տալցեն:

Իսկ եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ սպանանէ կամաւ, զգինն յարենտէրքն տան և արքայի տուգանքն ըստ կարողութեան առցեն: Եւ թէպէտ ըստ Օրինացն մահու արժան է<sup>88</sup>, ալլ զձեռն հատեալ՝ ապաշխարութեան հասցէ. ապա թէ աղքատ է, վաճառեսցի իւրովքն յազգս իւր և հատուցէ: Ապա թէ ակամայ՝ զկէս դնոյն առցեն և տան յարենտէրքն, և արքային՝ ըստ կարոյն տուգանք, բայց զձեռն մի՛ հասցեն: Զայդոսիկ թագաւորն դատիցի և զալլ ևս դատաստանսն ի դատաւորսն թողցէ (<sup>89</sup>), և զձածուկ մեղսն զամենայն՝ յառաջնորդսն:

Իշխանաց մի՛ լիցի զսպանողսն սպանանել առանց հրամանի թագաւորին, իսկ զգողսն խրատել իշխան լիցի:

Ապառք առանց հրամանի իշխանաց մի՛ իշխեսցեն զգողսն իւրատել:

Եթէ պատահի երթալ թագաւորի յաւալը զօրօք և աւար առեալ զարձցի, ոսկի զտեալ՝ արքային լիցի: Բայց մի՛ երդամբ առցէ, ալլ քարոզ կարդասցէ ի ժողովն, զի թէ յետոյ առ ոք զտցի, ընդ միոյ եւթն տուժեսցի: Բայց թագաւորն ի տասնէն զմինն կաթողիկոսին տացէ յամենայնէ(<sup>89</sup>):

Գերոյն և աւարոյն կէսն արքային լիցի, և կէսն՝ զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արասցեն և տասանորդս տացեն յեկեղեցին(<sup>89</sup>):

Իսկ եթէ շիցէ արքայ ընդ զօրսն, ալլ իշխանք միայն՝ զօրօք իւրեանց, նոյնպէս ոսկին արքային լիցի, և զերին և աւարն՝ տասանորդս արքայի, իսկ յեկեղեցի՝ ի յիսնէն մինն ըստ Օրինացն<sup>89</sup>:

Փողս և դրօշս պարտ է տալ իշխանի ի վերայ զաւարի և բերդի:

Գողս և աւազակս ոչ վայել է թագաւորի և իշխանի, բայց միայն լրտեսս, որ է շաշուշ:

<sup>86</sup> Մնունդք, 1է, 28  
<sup>87</sup> Մատթ., 12, 15  
<sup>88</sup> Եւք, ԻԱ, 12: Ղևտ., ԻԴ, 17  
<sup>89</sup> Թիւք, 1Ա, 30

Ձօրք և իշխանք, եթէ հրամանաւ արքայի յաւար երթիցեն ըստ պատահման անկասկած, կէս աւարոյն և զերոյն արքային լիցի, և կէսն՝ զօրացն, իսկ եթէ սուանց հրամանի երթիցեն՝ երկու բաժին երթողին լիցի, քանզի կամօք ի մահ զիմեցին<sup>(30)</sup>: Ձայս ըստ սովորութեան ասացաք, զի ոչ է հրաման ի գրոց. զի ի պատերազմի զօրականի մեռանել՝ անպարտ է աւրն, որ առաքեացն զնա: Իսկ եթէ զող առաքեսցէ, և մեռանիցի, պարտապան արեան նորա նա եղիցի, որ առաքեացն զնա: Իսկ եթէ զողն հրամանաւ իւրով երթիցէ ի զողութիւն և մեռանի, արիւն նորա ի զլուխ նորա: Եւ զոր առաքեսցէ արքայ կամ իշխան ի զողութիւն, և ըմբռնեսցի, որ առաքեացն զնա, նա զնեսցէ, իսկ եթէ կամաւ իւրով երթիցէ առանց հրամանի, ինքն զինքն զնեսցէ:

Ձօրական եթէ ի պատերազմի զոք ըմբռնեսցէ, զզեստն, և զէնքն, և երիվարն նորա լիցի, իսկ զրահն՝ թագաւորին<sup>(30)</sup>:

Ոսկի, ակունք և կերպաս ամենայն կերպիս, զորս առցեն յաւարի, թագաւորաց բաժին է, իսկ արծաթ և մարգարիտ՝ իշխանաց, նոյն և ասրեղէն պատուական. իսկ անարգ ասրեղէն, և կտաւ, և պղինձ, և երկաթ և այլ այսպիսի, զօրացն լիցի<sup>(30)</sup>:

Իսկ զհարկս զսուտաց և ազղաց թագաւորք և իշխանք արդարութեամբ առցեն և մի՛ ինչ աւելի, քան զառաջնոցն սովորութիւն, կալցնն, զի բնղ ամենայնի համարս ունին տալ Աստուծոյ, զի յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն և ի փրկութիւն աշխարհի և ոչ ի կործանումն:

Եւ արդ, այսպէս լիցի: Ձանդաստանացն զհինգերորդ մասն առցեն, որպէս օրինադրեաց յԵգիպտոս<sup>90</sup>, որ կոչի մինչև ցայսօր հնկակ, զի յորժամ ստացաւ զերկիրն փարաւոնի, յայնժամ զհինգերորդն կարգեաց. յայտ է, զի յառաջ ոչ էին հնկակ, այլ հայրենի կտուր, սակաւ եղեալ ունէին արծաթ համարով: Սոյնպէս և այժմ լիցի, զի արծաթագին անդաստան, և այգի, և դրախտ մի՛ լիցի ի նմանէ հնկակ, նմանապէս և՛ ջրաղաց, և տուն, և խանութ<sup>(30)</sup>: Այլ թէ բնակիչքն արուեստաւորք են, իրաւամբ լիցի, որ ինչ պարտ իցէ, զի ոչ է հարկ զլիսոյ քրիստոնէից, բայց միայն այլազգեաց:

Արտորայք ջրարբիք ընդ հնկեկիւ լիցին, իսկ դրախտք՝ տասանորդեսցին, զի հոզ միայն է թագաւորի և իշխանի և ոչ ջուր: Սոյնպէս՝ այդիք և ծառատունկք<sup>(30)</sup>:

Այսպէս և յաւորս շարաթու յեւթն, մինն թագաւորաց և իշխանաց վատակեսցեն շինականք:

Եզին առանձին այլ հարկ թագաւորի և իշխանի մի՛ լիցի, զի այն է իսկ, զոր աշխատեալ է հնկեկիւ:

Կովու հարիւր դրամ կշիւ եղ տացեն:

Ոչխարք ի գառինս տասանորդեսցեն<sup>(30)</sup>:

Ձիոյ, և ջորոյ, և իշոյ մի՛ լիցին հարկք, միայն պատահմամբ՝ ծառայել նոքօք զտէրունիսն<sup>(30)</sup>:

Ի տարեմուտս ըստ կարողութեան լիցի ծառայել, նոյնպէս և յաւորս տօնից: Ձէքչէք բազում մի՛ լիցի ի վերայ քրիստոնէից, զի և սահմանքդ բազում և յաւելորդ կարգեցաւ:

<sup>90</sup> Մնունքք, Խէ, 26

Առանց դատաստանի և բազում քննութեան մի՛ տուգանեացեն զայնոսիկ, որ տէրունի իրաց յանցաւոր լեալ իցեն, և այն՝ ըստ կարողութեան, իսկ յայլս յանցաւոր գտեալ՝ զատաւորք վճռեացեն:

5 Թագաւոր իշխանի տուեալ գաւառ, եթէ շինէ ի նմա բերդ՝ հրամանաւ թագաւորին, կամ գեղ, կամ ագարակ, կամ հոգէտուն և կամ այլ ինչ նոր շէն, ի ժառանգութիւն նորա համարեսցի ազգէ յազգ: Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին, և ընդ ձեռամբ ազատացն՝ շինականք: յորժամ աւերս շինեացեն և հողս հատանիցեն ի մայրեաց, ստացուածս լիցի նոցա անփոփոխ և որդոց նոցա յետ մահու: Այլ փոփոխումն

10 ի վերայ մեծի յանցանաց և իրաւանց լիցի:

Նոր շինեալ տեղեաց ազատութիւն լիցի, մինչ զի ամենայնիւ հաստատեսցի:

Ի շինուածս քաղաքի և բերդի, եթէ պակասեսցի գանձ արքունի, ամենեքեան առահասարակ ռգնեսցեն՝ զեղացիք և քաղաքացիք:

15 Արք քաղաքացիք առաւել պատուեսցին, քան զգեղացիս, և զեղացիք՝ քան զագարակցիս: Սոյնպէս լիցի բերդից և աւանից<sup>(45)</sup>:

Հարկաւորք և օգտակարք յարուեստս հողագործութիւնն է, և դարբնութիւն, և հիւնութիւն. եւս բազմաց է հողագործել: Առաւել պատուեսցի երկաթագործ և փայտակոփ: Իսկ բժիշկք ևս առաւել պատուեսցին:

20 Եւ վարդապետք գերագոյն պատուեսցին ի թագաւորաց և յամենեցունց, զի բժիշկ և հայր է հոգոց:

Գ Լ ՈՒՆ Գ

ՎԱՍՆ ՀԱՐՑ ՎԱՆԻՑ ԵՒ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ

25 Կարգ ոգոց դատաստանաց և հրահանգ բարեաց հարանց և եղբարց ի սրբոյն Սահակայ և ի սրբոյն Բարսղէ եղեալ են: Բայց շափաւորապէս և մարմնատեսակ օրինաց դատաստանի զնշանակս յաւելում հարկաւորապէս, զի ոչ այժմ ամենեցուն է ըստ հրամանի նորին վարիլ: Նաև ոչ հեռի ի դիտաւորութենէ սահմանի սրբոյն ինչ ընդ միտս ածել իշխեմք, այլ յարմար նորին վարիմք շաւղօք:

30 Եւ արդ, տյսպէս սկսցուք: Զի թագաւորաց և իշխանաց, միանգամայն և ամենայն հաւատացելոց շինել վանս ոչ յաղագս մարմնաւոր ինչ յուսոյ է, այլ մանաւանդ՝ հոգևոր, յաղագս այնորիկ ոչ պարտի ժառանգ լինել: Զի որ յառաջնումն հայր եղև եղբարց, թէ յիւր շինեալ տեղի եղբարց և թէ յայլոց, և բարիոք առաջնորդէ, անդատաստան է

35 փոխել, ապա թէ հակառակ ինչ գործէ, երկու և հրեք վկայիւք հարկաւոր է փոխել:

Եթէ դիցեն վանաց հայրպետ, յառաջ զամենայն ինչսն վանացն գրով ի նա տան, նոյնն և զիւր ինչսն անցուցէ, որ թէ պատահի նմա ելանել ի վանացն, զիւրն առցէ, և զոր յանուն եկեղեցւոյն տուեալ եղև, 40 անդէն թողցէ:

Իսկ զկնի մահու հարց մի՛ լիցի իբր ժառանգութիւն առնուլ ազգատոհմից, միայն եթէ պատահի վարուքն բարի և հաճութեամբ եղբարց՝

նասցի<sup>(46)</sup>, ըստ այնմ՝ փոխանակ հարց եղիցին որդիք<sup>91</sup>, Ապա թէ շիցէ որ յագրատոհմից հօրն, զայլ որ իմաստուն յեղբարցն ընտրեսցեն հայր վանացն:

Իշխանաց ոչ է օրէն կաշառօք հայր դնել վանաց առանց կամաց եղբարց<sup>92</sup>: Եւ եպիսկոպոսունք եղիցին այդոցիկ կարգիչք և այն իրաւամբք և ոչ կաշառօք:

Եւ քանզի են ի վանս զործ քան զգործս աւելի աշխատութեամբ, և ամենեցուն յոյս և հատուցանող Քրիստոս է, բայց եթէ կարճամիտ որ հանդիպի ի զործաւորսն, տացի նմա առաւել վարձ վասն ծանրութեան զործոյն, զի մի՛ ի պատճառս այնմիկ նուազութիւն եղբարցն լիցի: Եւ թէ այդոցիկ տրտունջ իցէ, դատաստան լիցի տրտնջողին առնել զգործս: Եւ զայս արտաքոյ կանոնի կամաց սրբոյն Բարսղի եղաք կարճամտելոցն աղաղաւ:

Բայց զանօթ ինչ գործելիաց եթէ վայրապար վնասիցեն, նորա վճարիցեն, իսկ եթէ պատահմամբ՝ ոչ վճարեսցեն:

#### Գ Լ Ո Ւ Ք Դ

#### Վ Ա Ս Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ա Յ

Եւ վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին և Նոր կատակարանաց և կանոնական հրամանաց: Յերկուց և յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թէ և պատահի միոյ վարդապետի աշակերտի: Եւ թէ զկամս եպիսկոպոսի և կամ առ առաւել զհայրապետի ընդ իրեանս ունիցին, նաև զիշխանի, բարիք ևս գործիցեն, ապա թէ ոչ՝ ըստ Օրինացն յերկուց և յերից վկայից հաստատեսցի: Իսկ ի միոջէ զկարգեալսն և զանձամբ եկեալսն լռեցուցեն: Այլ ըստ օրինացն զկարգեալսն պատուել, իբրու զի երկրորդ է ըստ մարգարէական շնորհին, զի աշխատութեամբ առաքելոցն հաղորդի և շնորհօք՝ մարգարէիցն, ուստի և բանիւ ընտրեալ կոչի:

Իսկ նախակրթեալք ի միոջէ վարդապետէ և ամբարտաւանեալք՝ յայլմէ առնուցուն պատիւ հրամանի՝ արհամարհելով զիրն, իրաւունք լիցին դատաստանի՝ ի նմանէ զուսեալն երկրորդել, և կամ զղջացեալ արժանաւոր ասյաշխարութեամբ՝ իւրոյն հրամանաւ վերստին ուղղեսցի: Եւ կոչողն առանց կամաց իւրոյն վարդապետի, հատուցէ պատիժս՝ անզեղջ եղեալ, և զղջացեալ ի դէպ ապաշաւանօք՝ թողութիւն առցէ յայնմանէ, զոր քամահեսցն՝ զնորայն առսնց նորին կամաց կոչել յառաջ:

Եւ թէ պատահեսցի վարդապետի զսք կապել բանիւն Աստուծոյ յաշխարհականաց, կամ ի վանականաց, կամ յեկեղեցականաց, այլ ոք վարդապետ մի՛ լուծցէ<sup>93</sup>. Թէ ախտաւոր իցէ և կամ տգիտութեամբ՝ միջնորդ լինել ուղղել զիրաւացին՝ անեպեր, առանց հակառակելոյ, և թէ ոչ

<sup>91</sup> Սաղմոս, ԽԴ, 17

<sup>92</sup> Կանոնք Դունայ Թ, Ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 209—211

<sup>93</sup> Կանոնք Շահապիվանի ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 460—461, տե՛ս նաև Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 90

անսայցէ՛ կապեսցի փոխանակ կապելոյն, մինչև զղջասցի: Ապա թէ իրաւացի իցէ, և ոչ անսայցէ այլ ոք նմա, դատաստան լիցի՛ և նա ընդ կապելոյն կապիլ, մինչև զղջասցի՛ եթէ ի տգիտաց և յամբարտաւանից իցէ, և թէ ի վկայելոց՝ առաջի նորա զպատճառ կապանացն ցուցցէ և ի նա թողեալ զպատասխանին՝ անպարսաւ լիցի:

Եթէ պատահի ի միում եղբայրանոցի երկու լինել վարդապետ և կամ աւելի ևս, դմի, որ յառաջադէմ իցէ, ինքեանց զլուխ և աւագ կոչեսցեն՝ ըստ հրամանի առաջնորդաց, զի բարեկարգութիւն և ի նոսա իցէ, և մի՛ պատճառ տայցեն գայթակղութեան: Եւ թէ իւրաքանչիւրքն զոյգ կարգիցին, զոր շէ հնար համեմատել զշնորհան, աւուելեայն տարցի ըզպատիւն, և ըստ հրամանի նորա այլքն զարդարեսցեն զտօնս բանիւ, նակ դայլ ևս հարկս բանից: Եւ եթէ ոք ընդվզեալ լուծցէ զսահման կարգին, դատաստան լիցի միաբանութեամբ եղբարցն՝ ելանել նմա:

Իսկ զաշակերտս միմեանց, առանց գրոյ և կամաց ինքեանց, մի՛ առցեն, ապա թէ քամահելով առցէ, դատաստան լիցի՛ որքան ուսեալ ի նմանէ իցէ, վերստին նստցի և ուսուցէ, և կամ զղջացեալ՝ կամօք նորա կացցէ, և նա ընկալցի:

Իրաւունք են աւագ վարդապետի ընդ կաթողիկոսի և ընդ եպիսկոպոսի ի վիճակ ելանել ըստ նոցա կամաց, և կամ այլ ոք՝ ըստ կամաց երկոցունց, զի մի՛ արտաքոյ կանոնաց յեպիսկոպոսէ գործիցի ինչ, զի և եպիսկոպոսն միաբանութեամբ վարդապետին զիւրաքանչիւր կարգն զործիցէ: Եւ թէ այսմ ոչ անսայցէ ոք ի վարդապետացն, ըստ դատաստանի եպիսկոպոսին և աւագ վարդապետին ելցէ ի միաբանութենէ նոցա:

Այլ զայնոսիկ, որ հանդերձեալ իցեն կոչիլ յաստիճան հրամանի, զհամար ուսման արժան է պահանջել, թէ ո՛ւր և յումմէ՞ զտառս զիւրաքանչիւր ընթերցաւ ուսմամբ: Եւ այս առ այնք լիցի, զոր ի բազումս շրջեալ՝ անգիտանամբ ուսմանն, զի մի՛ պատրեալ անկատարս զպատիւ առեալ՝ բազում վնասս խակութեամբն գործիցեն: Եւ այդ իրաւունք նոցա կացցէ, բայց համօրէն ընտրութիւն լիցի: Մի՛ ինքեանց կամօք զայցեն յառաջ, այլ զառաջադիմութիւն նոցա, և զերկիւղ, և զբարիոք շինել զոգիս զինքեանց, և զայլոց տեսեալ՝ հարկաւորիցեն, շարժեալ հոգով՝ անստգիւտ մտացն խղճիւ կոչիցին ի սպասաւորութիւն բանին:

Այլ վաղվաղկոտացն իրաւունք լիցի և այնոցիկ, որ զայլս աղաչիցեն ի պատիւ ելանել բանին, լուել մինչև յախտիցն նախ բժշկիցին, զի մի՛ հիւանդք հոգով զբազումս ախտացուցանեն. և այդ իրաւացի է դատաստան նոցա: Այլ ոչ անվիճակս զնոսա իրաւացի է յամենայն տեղիս արձակել, այլ եթէ ի զաւառի իրեանց կամիցին և թէ յայլում պանդխտանալ, եպիսկոպոսաց միաբանութեամբ և հրամանաւ լիցին՝ շրջելով բարեկարգութեամբ. այդոքիկ վկայելոցն լիցին: Իսկ զաննշան շրջողս, և զօշաքաղս, և որք կամիցին ցուցանել զանձինս գիտունս առ ամենայն ոք, մշակք եղեալք որովայնի և այլոց ախտից, բանավաճառք և վկայելոց պարսաւադէտք, զայնպիսինս լուեցուցանեն իրաւացի դատաստանաւ և առցեն ի նոցանէ զգաւազանն և տացեն ցուպ շրջողութեան:

Եւ թէ պատահի վարդապետի երթալ հիւրութեամբ յայլ վայրս, ուր վարդապետ իցէ, մի՛ առանց մեծարանաց վարդապետի տեղոյն խօսեսցի,

այլ զի նախ նա ըստ սեղոյն սովորութեան ընդ եղբարսն խօսեսցի, և  
 ապա ըստ ամենեցուն կամաց հարկի՝ հիւրն: Եւ թէ վկայեալ ոք հիւրն իցէ,  
 և բնականն նախ նմա կամիցի, ըստ կամաց նորա խօսեսցի. սակայն մի՛  
 յաճախեսցէ և զսպնջականն ամաշեցուցէ և յիւրոցն զնա քամահել  
 5 տացէ: Ապա թէ զսահմանս զայս լուծցէ և յանդգնութեամբ անաղերս  
 խօսեսցի, դատաստան լիցի՝ անսպասիւ զնա ի բաց դարձուցանել:

## Գ Լ Ո Ւ Ն Ե

## Վ Ա Ս Ն Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի Յ Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ա Յ

Եւ մի՛ լիցի քահանայից ժառանգութիւն առնել զժողովուրդն Քրիս-  
 10 տոսի, որպէս տեսանեմք, զի և դատերաց ի բաժինս տան ժառանգութեան  
 զզինս արեանն Քրիստոսի: Պարտ է եպիսկոպոսին յայնպիսոյն առնուլ  
 զհօտն Քրիստոսի և տալ ի ձեռս այնոցիկ, որ Տեսան զտէրունիսն հովու-  
 եացեն, և սլատասխանել նոցա իրաւամբք, թէ զոր սրով քո զերեցեք՞ և  
 զնով քո զնեցեր, զնոսա կայցիս քեզ ժառանգութիւն և մի՛ զշարչարանօքն  
 15 Քրիստոսի զգնեալսն և զփրկեալսն. և թէ յանդգնի՝ լռեցուցանել և ի  
 քահանայութենէն:

Եւ թէ պատահի ժողովրդականացն փոփոխել բնակութեամբ թաղէ  
 ի թաղ, այն իրիցուն լիցի ծովս, յոր թաղ բնակեսցի և մի՛ առաջնոյն,  
 քանզի մի և օրինակ հովուութեան ընդ ամենայն տեղիս ուղղափառաց:  
 20 Զի են ոմանք յազգէ քահանայից աշխարհականք, զի յորժամ մեռա-  
 նի երէցն, նա իւրեանք ուտեն զծուխ, և զմուխ, և զմոխիր կրակացն և  
 իւրեանց դրան երէց դնեն. և այս մեծ անիրաւութիւն է: Արդ, սլարտ է  
 այնպիսեացն, թէ սարկաւազունք իցեն՝ քահանայ լինել, և թէ աշխար-  
 հականք՝ խափանեսցին ի ծխի ուտելոյ. և թէ յանդգնին՝ նզովեսցին  
 25 յեպիսկոպոսէն, մինչև զղջացին:

Իսկ քահանայից վանականաց ոչ է սլարտ ծխակերութիւն առնել:  
 Աշխարհական ոք, թէ մատաղ առնէ, իւրում քահանային տացէ զե-  
 րին և զմորթն և մի՛ վասն շորութեան այլ քահանայի տացէ. և թէ  
 յանդգնի՝ կրկին առցէ եպիսկոպոսն ի նմանէ և տացէ յիւր քահանային:  
 30 Եւ եթէ ժողովրդական ոք նախատէ զքահանայ կամ հարկանէ, ար-  
 ժան է հատանել զձեռն, որով եհարն, և կամ զնեսցէ զձեռն իւր յեպիսկո-  
 պոսէն և բազում ապաշխարութեամբ թողութիւն արասցէ նմա:

Քահանայ, թէ վասն անձին խնդրելոյ վրէժ բանադրէ զոք, զինչ և իցէ  
 պատճառ, զանձն իւր դատապարտէ. և զղջացեալ յետոյ սլարտ է նմա  
 35 եպիսկոպոսին խրատով ապաշխարել: Եթէ զոր կապեացն ոչ արձակեսցէ,  
 կապեսցէ զնա եպիսկոպոսն, մինչև զղջացցի և արձակեսցէ զոր կապեացն:  
 Բայց սակայն ոք կապեցաւն, թէ իրաւ է, թէ անիրաւ, ընդ կապանօք է,  
 մինչև զղջացեալ թողցէ:

Գ Լ Ո Ւ Խ Զ

ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԱՆԿԱՐՈՂԱՅ: ԱՅՐԻԿՆ ԵԹԷ ԶԿԻՆՆ  
ԻՐ ԶԿԱՐԷ ՅԱՆՁՆԷ ՀԱՆՆԼ, ԱՅՍ Է ԴԱՏԱՍԱՆ

3 Զարմարումն առն և կնոջ ըստ պատշաճի ցուցեալ է՝ ժամանակաւ  
5 երէց լինել առն, և կրսեր՝ կնոջն, որպէս ի ստեղծմանն ցուցաւ նախաստեղ-  
ծիցն, զի ամենայնիւ իշխան լիցի այրն ի վերայ կնոջն, որպէս յայլսն,  
նմանապէս և յամուսնանալն:

Եւ թէ պատահի, որ այրն չկարէ զկինն ի կուսութենէ հանել, թէ կամ  
լիցի կնոջն, որ ի միասին կենան՝ կացցեն առ իրարս, ապա թէ ոչ կամ՝  
10 բաժանեացին<sup>(47)</sup>, և առնու կինն զիւր պոռոյգն զամենայն և ելանէ և առնու  
իւր այլ այր, զոր և կամեսցի: Բայց մի՛ լիցի յաղազս այսոցիկ տուգանք  
առն, զի յոչ կամաց է ախտն. և ամենայն ինչ տացի ի կինն, բայց ի  
հանդերձիցն, զոր արարաւ երկոցունցն ի հարսանիսն:

Եւ թէ անասուն բերեալ իցէ կինն, զզրութիւն առցէ և զկէսն աճոյն,  
15 և կէսն այրկանն տացի վասն աշխատութեան և ծախիցն<sup>(48)</sup>:

Եւ օժիտք և ծախք, զոր արարեալ են միմեանց ազգն և ազգայինքն  
չերկուց կողմանցն, մի՛ չիշեցիին, և ոչ ծախք հարսանեացն:

Սակայն հաւանութեամբ առն լիցի առն այլում. և այրն առցէ կին,  
որ այլ այր լինի առեալ, և մեռեալ իցէ այր կնոջն, զայն առցէ:

20

Գ Լ Ո Ւ Խ Է

ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏԱՀԱՐԱՅ

Եթէ պատահի առն և կնոջ դիւահարութիւն, քննել արժան է. թէ յա-  
ռաջ քան զպսակն էր և ծածկեցաւ խաբէությամբ ծնողաց կնոջն, ի սու-  
նրս իրեանց առցեն, մինչև բժշկեսցի, և զամենայն ծախք ինքեանք  
25 վճարեսցեն, մինչև բժշկեսցի և ապա դարձցի յայրն իւր, եթէ կամեսցի  
այրն, ապա թէ ոչ՝ իշխան լիցի արձակել զկինն:

Ապա թէ ի տան առն պատահի դիւահարիւ, այրն հոգասցէ, մինչև  
բժշկեսցի կինն, և զամենայն ծախսն: Ապա թէ յետ եւթն ամի ոչ բժշկես-  
ցի, իշխան լիցի այրն արձակել զնա և առցէ այլ կին: Եւ եթէ մանկունք ի-  
ցեն, առ իւր հայրն թողցի, և կինն ընչիւք իւրովք ելցէ, և այրն, հրամա-  
նաւ կնոջն, այլ կին արասցէ, բայց ըստ կարողութեան հոգասցէ զկեանս:  
30 Իսկ եթէ ի տան ծնողացն է դիւահարել, առանց հրամանի կնոջն արասցէ  
կին, առանց լնուլ եւթն ամացն կանոնացն. բայց կինն ընչիւք իւրովք  
ելցէ, և ծախքն և հանդերձն, որ ի պսակին, մի՛ չիշեցիին:

35

Նոյն դասաստան այսպէս լիցի, թէ առն պատահի ախտն գողի կամ  
պիտակութիւն. եթէ յառաջ քան զպսակն էր, և ծածկեցին ծնողքն, իշխան  
է այրն թողուլ զկինն, նոյնպէս և այրն թէ իցէ այսպիսի ախտիւ, իշխան  
է կինն թողուլ զայրն և լինիցի այլում: Իսկ եթէ յետ պսակին հանդիպի  
ախտքս այսոքիկ, ոչ է պարտ ննջել առ իրարս, այրն և կինն հայեսցին  
40 ի կեանս իւրեանց և ցուցցեն բժշկաց հողևորաց և մարմնաւորաց. եթէ  
դոյ հնար բժշկութեան՝ համբերեսցեն, ապա թէ ոչ՝ հրամանաւ առն և

կնոջն արձակեսցիին ի միմեանց: Եւ որ առողջն իցէ, ամուսնասցի այլում, և մինչև ի մահ հողասցեն զկեանս իւրեանց, և զպտոյզն անդրէն դարձուցեն:

5 Եւ եթէ պատահի յերկար և անբժշկելի հիւանդութիւն առն կամ կնոջն, ոչ ունին իշխանութիւն արձակիլ ի միմեանց, միայն թէ խղճասցեն միմեանց՝ արձակեսցիին. և որ առողջն իցէ, ամուսնասցի, և զինչսն հիւանդին անդրէն դարձուցէն, և մինչև ի մահ զիրարս հողասցեն, բայց ի տունս ծնողացն և ոչ երկուքինն ի մի տուն:

Գ Լ Ո Ի Խ Ը

10 Վ Ա Ս Ն Ա Ռ Ն Ե Ի Կ Ն Ո Ջ Գ Ե Ր Ե Լ Ո Ց

Եթէ ի տանէ առն զերի վարեսցի կինն, այր իւր զնեսցէ զնա:

Եւ եթէ խռովեալ էր կինն և ի տունս ծնողացն զնացեալ էր և զերի վարեսցի, այրն և ծնողքն զնհսցեն: Նոյն լիցի և այրն, եթէ զերի վարեսցի:

15 Եւ երբ զերեսցին, շրջելով խնդրեսցեն. Եւթն ամ, և թէ ոչ գտցեն, որ աղատն մնաց՝ ամուսնասցի հրամանաւ ծնողաց զերելոյն:

Եթէ իրբ մնացեալ կայ ի զերելոյն բաժնէ, անդրէն դարձուցեն ի ծնողան զերելոյն:

Գ Լ Ո Ի Խ Թ

Վ Ա Ս Ն Ա Տ Ե Լ Ո Ի Թ Ե Ա Ն Ա Ռ Ն Ե Ի Կ Ն Ո Ջ

20 Կան ոմանք, որ ախտիւ ատելութեանն զմիմեանս ատիցեն այր և կին, առանց բանի պտոնկութեան: Եթէ յառաջ քան զպսակն էր ատելութիւնն, և այրն ատիցէ զկինն և կամենայ զբաժնիլն ի կնոջէն, բաժանեսցէ եպիսկոպոսն յետ բազում խրատու, և այսոց բաժինքն որպէս զիւսհարացն լիցի: Եւ ըստ կանոնաց զատաստանի<sup>95</sup> այրն ոչ իշխէ սոնուլ կին, և կինն առցէ իւր այր, առցէ և զպտոյզն և յերից զմինն յայրկան իրացն՝ տուգանք, վասն զի անարգեաց զպսակն օրհնութեան:

25 Նոյն զատաստան և կնոջն լիցի, և ոչ առցէ այր, բայց եթէ զղջացեալ միմեանց տացեն թողութիւն իրերաց՝ ամուսնասցին: Բայց հրամանաւ եպիսկոպոսին լինիցի ամենայն ինչ: Իսկ այսոցիկ տուգանք և ապաշխարութիւն գրեալ է ի կանոնս սուրբ<sup>96</sup>:

30 Իսկ եթէ յետ պսակին ատիցեն զիրար այր և կին և որդիս ծնեալ իցեն, խրատիւ և տանջանօք և շատ ժամանակաւ՝ մեկնեսցին: Եթէ ի կնոջէն է պատճառն, զկէս ընչից կնոջն տուգանք տացեն յայրն<sup>(90)</sup>, վասն զի միացեալք են, և եթէ յառնէն՝ նոյնպէս, և ոչ իշխեն ամուսնանալ, բայց

35 հրամանաւ միմեանց:

<sup>95</sup> Կանոնք Նեոկեսարեայ ժԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 133—134  
<sup>96</sup> Անդ

Գ Լ Ո Ւ Խ Ժ

ՎԱՍՆ ՇՆԱՑՈՂԱՑ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Եթէ կին ումեք շնասցի, արձակեսցէ զնա այլ իւր և ինքն այլ կին՝ արասցէ: Եւ եթէ հաճոյ է առն, զի բնակեսցեն ի միասին, բարիոք է, զի պարտ է ի վերայ կնոջ իւրոյ<sup>97</sup>:

Եւ ընչիցն դարձն՝ որպէս յինն կանոնին գրեցար՝ վասն ատելութեանն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա

ՎԱՍՆ ԱՄԼՈՑ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Ամուլ կին մի՛ արձակեսցէ զնա այլ իւր, զի Աստուծոյ է տալ զորդիս: Փորձել պարտ է, զի թէ ի ցաւոց իցէ՝ բժշկօք առողջասցին:

Ապա թէ վասն ժառանգութեան տեսանիցէ կինն զայլ իւր տրամեալ, ըստ օրինակին Աբրահամու և Սառայի<sup>98</sup>, տացէ կինն հրաման արձակման. բայց մի՛ լիցի զամուլն և զծննդականն ի միասին պահել: Նոյնպէս, և թէ այլն իցէ անծնունդ, արասցէ, ըստ գրելոյդ:

Իսկ սահման ժամանակին եթն ամ իցէ, եթէ ի պսակն ազգիկն հնգետասան տարոյ էր, և կտրիճն՝ ութուտասան. իսկ եթէ այլ պակաս էին՝ զնոյն, և համբերութեան ժամանակն առաւել լիցի<sup>(92)</sup>:

Իսկ եթէ կինն այլ այլ շկամենայ առնուլ, զնէ զնա այլն իւր յայլ տուն և անդ հողասցէ զկեանս նորա մինչ ի մահ, և զինչս կնոջն տացէ ի կինն լիով, և ինքն առցէ այլ կին ծննդական, հրամանաւ կնոջ իւրոյ: Բայց եթէ յառաջ զիտէր զամուլութիւնն, և տրփանօք զիրար տոբին, մի՛ լիցի մեկնիլ մինչ ի մահ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ

ՎԱՍՆ ՈՐՈՒՅ ՊԱՏՃԱՌԻ ԵԼԱՆԷ ԿԻՆՆ ՅԱՌՆԷՆ

Յորժամ կինն տեսանէ զայլ իւր յարուագիտութեան, կամ յանասնապղծութեան, կամ թէ ընդ անօրինի պղծի կամ պղծեսցէ, կամ ի մարդասպանութեան, յայս պատճառանացս ի վերայ իշխան է կինն թողուլ զայլ իւր և լիցի առն այլում: Եւ զկէս ընչից առն առցէ կինն, ապա եթէ կամեսցի կինն թողուլ և ոչ<sup>(93)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ

ՎԱՍՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԶՄԻՄԵԱՆՍ ԹՈՂՈՒԼ ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Այլ և կինն, եթէ ատելութեամբ զիրար թողցեն, և պատահի մեռանել զոր էառն, և այն, զոր թողեալն էր, անայր կայր, պարտ է առնուլ զայն,

<sup>97</sup> Ա Կորնթ., է, 3  
<sup>98</sup> Մնունդք, ժՁ, 1-4 և այլուր:

քանզի այլ պսակ ոչ հասանի նոցա. այլ ոչ բռնութեամբ, այլ կամօք վասն Աստուծոյ:

## Գ Լ Ո Ւ Պ Ժ Դ

5 ՎԱՍՆ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՄ ԱՅԼ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴ ԻՅԷ ԱՅՐՆ ԵՒ ՅԱՄԵՆԱՅ, ԵՒ ԿԻՆՆ ԱՅԼ ԱՅՐ ԱՌՆՈՒ

30 Յորժամ այր ոք գնայ ի ճանապարհ և յամիցէ, պարտ է կնոջ նորա համբերել: Ապա եթէ լսէ վասն մահու ստուգիւ, մի՛ աոցէ այր մինչև յեւթն ամն, ըստ սահմանի դերելոցն<sup>98</sup>: Իսկ եթէ յառաջ քան զսահմանն առն լիցի և կամ քան զստուգելն մահու, և գայցէ այրն, իշխան է առնուլ  
10 զկին իւր, թէ և այնմ առն պսակ ոչ հասանի, թէ և որդիս ծնեալ իցեն: Ապա թէ այլ պսակ հասանի այս ճանապարհորդ այրկանս, իւր հրամանաւ լինի թողուլն և ոչ թողուլն:

Ապա թէ չետ եւթն տարոյն և սուտ մահուանն գայցէ յետոյ, մի՛ աոցէ զկինն իւր, թէ այլ պսակ հասանի իւր, և այրկանն, որ զկինն առեալ  
15 էր, ոչ հասանի պսակ. թողցի կինն այնմ, որ ոչ հասանի պսակ: Ապա թէ այնմ առն իցէ պսակ և իւր շիցէ, աոցէ զկինն իւր, թէ և որդիս ծնեալ իցեն: Իսկ եթէ այնմ ոչ իցէ պսակ և ոչ իւր, մի՛ աոցէ, զի զկին սահմանին դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսայցէ, հարցանեն ընդ կինն, և կինն ում կամիցի՝ լինի:

20 Իսկ եթէ գնայ մարդ յաշխարհ հեռի և կին արասցէ, կին նորա մի՛ լինիցի այլում մինչև յեւթն ամ, եթէ զղջացեալ դարձցի: Ապա թէ չետ այնորիկ ոչ գայ, և կինն ստուգեսցէ զզգալն, օրինօք աոցէ իւր այր: Իսկ եթէ զկին եւթն ամին գայցէ, ոչ կարէ առնուլ զկինն, քանզի անարգեաց զպսակն օրհնութեան:

25

## Գ Լ Ո Ւ Պ Ժ Ե

ՎԱՍՆ ԹԷ ԿՌՈՒՒ ԱՅՐ ԸՆԴ ԿԻՆ ԵՒ ՎՆԱՍԵՍՅԷ ԶՆԱ

Եթէ այր զկին իւր անարգէ անդադար մախանօք, եթէ խորթ կայր ի մէջ իւրեանց և վասն այնորիկ նախատեն զիրարս, դատաստան լիցի-  
30 եթէ պոմնով էառ զկինն և զխորթերն, պարտ է համբերել, ապա թէ ոչ՝ յազգ կնոջն դարձուացեն զխորթսն<sup>(54)</sup>:

Իսկ եթէ աներկեղութեամբ և ժանդ բարուք այր զկին իւր հարկանէ, ձեռն կտորէ, կամ աչք հանէ, կամ ատամն կամ ոտն կտորէ, աոցեն ի նմանէ երկու հազար դեկան, այսինքն՝ դրամ արծաթ, կրկին, քան զոր օտարն հարկանէ, քանզի թէ օտարն այդպիսի վնաս գործէ ընկերի՝ հա-  
35 զար դրամ տուգանք է ձեռացն, կամ ոտիցն, կամ ատամանն, կամ աչացն: Այս շորս անդամք ի մարմին մարդոյ մի է համարեալ զինն, վասն զի մարդոյ զինն, երբ կամաւ զիրար սպանեն, շորս հազար դրամ արծաթ է. և այս շորս անդամս ի շորս բաժնէն մի է համարած:

<sup>98</sup> Կանոնք Դոմայ է, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 205—206

Իսկ իբրև այր զկնոջն հատանէ զձեռն, կամ զոտն, կամ զաչքն, կամ զատամն, կրկին տուգանք առցեն ի նմանէ, զի մի՛ իբրև զբող մի կալցէ զկինն իւր այրն, այլ իբրև զանձն իւր, և զկինն դարձեալ յայրն տացեն, որ զցաւսն առողջացուցանէ բժշկօք: Եւ թէ կամք իցէ կնոջն՝ բնակիցէ առնա, և այրն ի զզջումն դայցէ. իսկ զտուգանքն ի կինն տացեն<sup>(55)</sup>: Եւ եթէ ի նոյն աներկեղութեան կացցէ այրն, մեկնել ի միմեանց արժան է, զուցէ մահ գործիցի ի միջի նոցա, և Տէրն իսկ ասաց. Մովսէս վասն խտասարտութեան ձերոյ ասաց թողուլ գկանայս ձեր<sup>100</sup>: Եւ զայս ոչ վայրապար ասաց Տէրն, քանզի յայլում վայրի վասն պողոնկութեան միայն ասաց, և աստ՝ վասն խտասարտութեան: Եւ զի խտասարտութիւն բազում շարիս գործէ, լաւ է բաժանել զկինն և զայրն, քան թէ զիրար սպանեն, քանզի և Քրիստոս զնոյնն ասաց:

Իսկ ընչից բաժանումն զրեալ է որ վասն ատեցողացն<sup>(56)</sup>:

**Գ Լ Ո Ւ Խ Թ Զ**

15 **ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ՈՐՔ ՅԻՄԱՐՈՒԹԵԱՄԲ ԹՈՂՈՒՆ ՉՄԻՄԵԱՆՍ**

Եթէ այր, առանց պատճառի, զկինն իւր թողցէ չիմարութեամբ, և կինն համբերէ եւթն ամ, և բազում սնգամ յանդիմանեն զնա ազգ կնոջն և դատաւորքն, և ոչ լսէ և ոչ ամաչէ, կոչեն զկինն և զայրն առ իրարս և ի բերանոյ նորա ստուգեն՝ առնուլ և կամ հրաման տալ կնոջն առնուլ այր: Եւ այրն ոչ առնու կին, քանի կենդանի է կին նորա. և ապաշխարութիւն կնաթողացն լիցի<sup>(57)</sup>:

Եւ այս դատաստանս ամենայն անպատճառ կնաթողացն լիցի. իսկ եթէ կինն խղճացեալ հրաման տացէ: Նոյն՝ և թէ կինն թողցէ զայրն:

**Գ Լ Ո Ւ Խ Թ Է**

25 **ՎԱՍՆ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՈՒՐԱՅՈՂԱՅ**

Եթէ այրն կամ կինն, վասն նեղութեան կամ վասն տուգանաց, ուրացի զՔրիստոս, մի՛ բնակեացէ կին նորա ընդ նմա, զի մի՛ ժողորութիւն նորա անկցի: Իսկ եթէ զղջասցի այրն և ասիցէ ցկինն, թէ եկ գնամք յայլ երկիր և դարձեալ դաւանեմ զՔրիստոս, պարտ է կնոջն գնալ և շահել զայր իւր վասն Քրիստոսի: Նոյնպէս եթէ կինն լիցի՝ այսպէս լիցի:

**Գ Լ Ո Ւ Խ Թ Ը**

**ՎԱՍՆ ԹԷ ԱՅՐՆ ԵՒ ԿԻՆՆ ԿՌՈՒԻՆ ՀԵՏ ԻՐԵՐԱՅ ԵՒ ՈՒՐԱՆԱՆ ԶՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԶՀԱՒԱՏՆ**

Իսկ եթէ այր, վասն քինու կնոջն իւրոյ, ուրանայ զՔրիստոս, կինն ունի զմեղս նորա, եթէ ի կնոջէն էր պատճառն: Իսկ եթէ ուրացաւ զՔրիստոս կաման իւրով, ինքն տացէ պատասխանի Աստուծոյ: Ապա թէ ի

<sup>100</sup> Մատթ., ԺԹ, 7—9

կնոջէն եղև պատճառն, և անդարձ մնաց այրն, արիւն նորա ի կնոջէն խնդրեսցի իրաւամբ գնով՝ հանդերձ ապաշխարութեամբ, և դատաստան նորա Տեառն լիցի: նմանապէս՝ եթէ կինն անկցի յայսմ:

5 Եւ եթէ զհարովին երթայցէ այր կամ կին, և կամ ի գետ անկեալ խեղդիցի և կամ՝ շվանով, կամ ընդ քար ի վայր անկանի և մեռանի, յումմէ պատճառ կորստեանն եղև՝ նմա և զինք արեսն լիցի վճարել:

Ըստ դատաստանի կանոնաց կարծեմ և զերկրորդ ամուսնութիւնն խափանել:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ

10 ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ, ՈՐ ԶԻՐԱՐ ՍՊԱՆԱՆԵՆ

Եթէ այր զկին իւր սպանանէ վասն սլոռնկութեան, արեան դատաստան լիցի ի լման, քանզի արձակել ասաց Աստուած և ոչ սպանանել <sup>101</sup>, Իսկ եթէ զայր իւր սպանանէ կինն դեղօք կամ այլ ցաւօք, նոյն դատաստան է:

15 Գ Լ Ո Ւ Խ Ի

ՎԱՍՆ ՅԱՆՅԱՒՈՐ ԻՇԽԱՆԱՑ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՍ ԵՒ ԱՅԼՈՅ՝ ԱՌ ՆՈՍԱ

20 Եթէ յիշխանաց և այլոց ի թագաւորական տանէ թագաւորին իրեանց յանցաւորք գտանիցին, և կամ այլ նուաստ՝ իշխանի, ինքեանք տացեն վասն անձանց իրեանց պատասխանի և ոչ որդիքն նոցա: Այլ և զժառանգութիւն հօրն թողցեն որդոցն, և մի՛ պատճառաւ հարց որդիք զրկիցին, զի իւրաքանչիւր ի մեղս իւր մեղցի ըստ օրինաց <sup>102</sup>: Ապա թէ համախոհք իցեն միմեանց եղբարք կամ որդիք՝ կորսցեն:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա

ՎԱՍՆ ՇԻՆԱԿԱՆԱՑ

25 Ազատ յկարարչէն եղև մարդկային բնութիւնս, այլ ծառայել տերանց յազգազս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր և հող, ազատ է, ուր և կամեսցի գնացել և բնակեսցէ, և ոչ է իրաւունք թագաւորաց և իշխանաց բռնադատել զոք կենալ ի գեղ մի կամ ի մի երկիր <sup>(33)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

30 ՎԱՍՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՆՑ

Սպանումն եթէ լինիցի ի մէջ մանկանց, տեսցեն, թէ որ սպանեացն ի վեր քան զերկոտառան ամն իցէ, արեան պարտական է և այնպէս

<sup>101</sup> Մատթ., Ե, 32. ԺԹ, 9

<sup>102</sup> Բ օրին., ԻԳ, 16: Դ թագ., ԺԴ, 6: Եզեկ., ԺԸ, 20

տուժեսցի, իսկ եթէ մետառան և տասն՝ զկէսն տուժեսցեն, իսկ ի վայր  
քան զտասն՝ յերից մինն լիցի:

Եւ թէպէտ և յայլ մեղս զհնգետասան ամացն յիշէ<sup>103</sup>, սակայն  
մեղք արեանն են այսոքիկ:

5

## Գ Լ ՈՒ Պ Ի Գ

## ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՅ, ԹԷ Ի ԽԱՂԱՎ ՎՆԱՍԵՆ ԶԻՐԱՐ

Յորժամ մանկունք ի խաղս զմիմեանս վնասիցեն, թէ՛ պատահամբ,  
թէ՛ ցասամբ, որ կոտորեաց՝ պարտ է տալ զվարճս բժշկացն և զխա-  
փանման բանիցն, և թէ ոչ բժշկի՝ զգինս զգայութեանցն, և թէ մեռանի՝  
10 զգին արեանն: Ապա պտարիքն ի սպանութեան կանոնս քննեսցեն, ի քսան  
և երկու համարն:

## Գ Լ ՈՒ Պ Ի Գ

## ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՅ, ԹԷ Ի ԶՈՒՐՍ ԽԵՂԴԵՆ ԶԻՐԱՐՍ

Ի ջուրս լողալով մանկունք զմիմեանս խեղդեն, եթէ պարզմտա-  
15 բար ի խաղս և եթէ քինու ցասամբ. եթէ կամսու առնիցեն՝ զինք արեան  
լիցի, և եթէ ակամայ՝ կէսն: Իսկ տարիքն քննեսցի այնմ ,որ խեղդեացն  
վնա(<sup>59</sup>):

## Գ Լ ՈՒ Պ Ի Ե

## ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՅ, ՈՐ Ի ԳՐԱԻՍ ՍՊԱՆԱՆԵՆ ԶԻՐԱՐՍ

Եթէ մանկունք զրաւ դնեն բնդ իրար, թէ վազէ ի վայր և կամ ընդ  
20 զժարս և բնդ ձին սահելով և այլ այսպիսի, եթէ պատահի մեռանել՝  
քննեսցեն զամբն, որ զգրաւն եղ, և կէս տուզանք լիցի ի վերայ նորա,  
թէ վնասեալն աւելի ամօք իցէ, քան զայն, որ զգրաւն եզ, ապա թէ այլ  
պակաս՝ կիսոյ կէսն, որպէս տասն տարոյ կամ պակաս: Եւ եթէ կատա-  
25 բելոց իրդ դիպեսցեն, նովիմբ գատեսցին:

## Գ Լ ՈՒ Պ Ի Զ

## ՎԱՍՆ ԵՐԹՏԱՍԱՐԿԱՅ, ԹԷ ՎԱՅՐԱՊԱՐ ԳՐԱԻ ԳՆԵՆ

Սովոր ևն երիտասարդք ոմանք զմիմեանս վայրապար շարժել՝ բառ-  
նալ ինչ ծանունս, որպէս քարինս և այլ այսպիսիս, և վնասիլ և վնասել  
30 զմիմեանս: Եթէ որ շարժեացն ինչս ևտ ի զրաւու յայտնի, և յայնմանէ  
որ պատրեալ վնասեցաւ, կէս վնասու արեան լիցի, բստ որում բանի:

<sup>103</sup> Կանոնք Բաղի Կեսարացոյ ճլմ, Կանոնս.գիրք շալոց, հ. Բ, էջ 131—132, տե՛ս  
ևաև Սաղմոս, ԻԳ, ?

յանցոյց, մանաւանդ թէ պատրեալն աւելի ամօք իցէ, և խափանածոյն և բժշկութեանն տուծեսցի:

Եւ զայս եղաք, զի մի՛ վայրապար մահ գործեսցի յոմանց:

Գ Լ Ո Ւ Խ Ի Է

5 ՎԱՍՆ ԳԻՆԱՐԲՈՒԱՅ ԵՒ ՆՈՑԻՆ ՎՆԱՍՈՒՅՑ

Ի մէջ գինեխում մարդկան եթէ ընդ միմեանս կռվին, և կոտորի ձեռն կամ այլ անդամ, պարտի բժշկել և զպակասութիւն բանիցն լնուլ, և թէ մահ հանդիպի կամաւ՝ արեան գինք առցեն անպակաս. և այլ ընկերքն, որ անդ էին, նոքա այլ տուգանօք են ըստ շափոյն: Եւ թէ ակն կամ ատամն 10 խլեսցի, զգինն առցեն հազար դրամ. և թէ ուն և ձեռն կոտորի և անբրժը-կելի մնայ, նոյն հազար դրամ և այս<sup>(60)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

ՎԱՍՆ ՇՆԱՑՈՂԱՅ ԵՒ ԱՅԼՈՑ ՉԱՐԱԳՈՐԾԱՅ

Յորժամ շնայ ոք ընդ կին, որ այր ունի, եթէ կամաւ կնոջն է և եթէ 15 լրբութեամբ առն, ըստ Օրինացն մահու արժանի է: Եւ այլք ի դատաւորաց զայսպիսեաց զձեռն և զժածուկ մարմինն կտրեն, և կարգ արուազիտացն և անանապղծացն է. եթէ ի դատաստան գայ՝ տուգանօք փրկեսցին և մի իրատիւ:

Եթէ այլազգի հանդիպի յայս գործս հետ քրիստոնէի կնոջ, առանց 20 ամենայն պատճառի հատանեն զժածուկն և զկինն խրատեսցեն զքիթն կտրելով:

Իսկ եթէ քրիստոնեայ մարդ զայրի կին խաբեսցէ և պղծեսցէ զնա, կամ առնու կին զնա, կամ տայ հարիր դրամ արծաթ կնոջն, երբ այլ կին ոչ ունենայ այն մարդն, որ շնացաւ:

25 Նա թէ և այլ մեծատուն իցէ այրն և կինն՝ նոյն, և տուգանքն յա-ւելցին<sup>(61)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ի Թ

ՎԱՍՆ ԿՈՒՍԻՅ, ՈՐ ՉԻՑԻՆ ԽՕՍԵԱԼ

2 Ղկոյս աղջիկ, որ խօսալ լինի առն, և այլ ոք զայ և բռնութեամբ 30 պղծէ զնա, դատաստան տոնակնոջն է,՝ ըստ որում օրինակի և իցէ:

Ապա թէ զսանիցէ ոք աղջիկ կոյս, որ լիցէ առն խօսեալ, և բռնաբար ննջիցէ ընդ նմա, տացէ այրն, որ ննջեացն ընդ նմա, հօր աղջկանն հարիր դրամ արծաթ, և նորա լիցի կին. և մի՛ իշխեսցէ արծակել զնա<sup>104</sup>:

35 Այդ ըստ Օրինացն է, զնոյն և մեզ լիցի՝ անբաժանելի առնուլ զնա, ապա թէ ոչ կամեսցի՝ ըստ արժանեացն և տուծն լիցի:

104 Բ Օրին., ԻԲ, 28, 29

Գ Լ Ո Ւ Խ Լ

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Զ Կ Ա Ն Ա Յ Ս Բ Ա Մ Բ Ա Ս Ի Ց Ե Ն Ս Ո Ւ Տ, Թ Է Զ Կ Տ Ա Ի Կ Ո Յ Ս

Եթէ որ առնուցու կին և ատիցէ զնա և ստութեամբ բամբասիցէ, թէ կոյս չէ աղջիկն, քննեսցեն ի ձեռն կանանց՝ եթէ ստի այրն, խրատեսցեն 5 զայն գանիւ և տուգանեն հարիւր դրամ արծաթ՝ ըստ Օրինացն<sup>105</sup>. զնոյն և մեք միարան այնմ, և նմին եղիցի կինն, և մի՛ արձակիցէ: Ապա թէ ճշմարիտ իցէ այրն, աղջիկն մահու արժան է ըստ Օրինացն<sup>106</sup>, և մեք տամք այնպիսոյն՝ արձակիլ ի նմանէ առնն, և թէ կամք իցեն՝ բնակիցեն, զի բազում ինչ վրիպանօք գործի կուսից, և զի ոչ ի տան առն եղև անար- 10 դութիմն: Եւ այրն, թէ արձակէ՝ ամուսնացի այլ կնոջ, և կինն այր առցէ, զի ոչ ընդ օրինօք առնն էր, երբ շնացաւ. և եթէ ոչ կամեսցի առնուլ վասն իւր սուտ բամբասանացն, տուգանք դիցեն ի վերայ նորա, որպէս և զրեալ է ի գիրս, որ վասն արանց և կանանց:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ա

Վ Ա Ս Ն Գ Ա Ի Ա Ռ Ա Յ Ե Ի Գ Ե Ղ Ի Ց Ե Ի Ն Ո Յ Ո Ւ Ն Ց Ի Ր Ա Յ Ն

Ի յամենայն երկիր, ուր ոսկի ելանէ, թագաւորաց է իրաւունք, իսկ արծաթն՝ թագուհեաց: Իսկ եթէ չերկիր իշխանաց զտցի ոսկի կամ արծաթ, թէ կամք իցէ թագաւորին՝ մասն տացէ նմա, ապա թէ ոչ՝ ի կամս իւր մնացէ: 20 Պղինձ, և երկաթ, և կաշեկ և այլք յայսպիսեաց՝ իշխանաց լիցի մեծամեծ, պարզևօք ի թագաւորաց<sup>(62)</sup>. նմանապէս և աղ, և բորակ, և նաւթ, և կուպր և այլ ինչ այսպիսի՝ իշխանաց լիցի: Իսկ ակն և մարգարիտ արքունեաց է, և այլ ինչ՝ ի պատուարաց: Իսկ ձիւթ, և խունկ, և դեղին խունկ, և մազտաքէ, և զխտոր, զարիկոն 25 և սակամունի և այլք յայսպիսեաց, որք վաճառին և շահին, տասանորդեսցեն իշխանք<sup>(63)</sup>: Իսկ պտուղք ամենայն, գտեալ ի մայրիս, շինականացնն եղիցի յիրարքանչիւր սահմանս: Իրաւացի դատաստանաւ տասանորդել օտարացն ի կթել պտղոցն, 30 վասն զի դան և կթեն, և վարձս առնուն ի տասնէն զմինն, և դեղջին կամօք լիցի, յորում սինօս պտուղն էր: Այսպէս և՛ շինոյ վայտ, և խոտ յարօտ և ի հնձել, և հող ի վարել: ... Այլ և գետք, ուստի ակն ելանէ՝ նոցա է, և ոչ տո ուր հասանեն<sup>(65)</sup>: Որսք վայրիք, ով որսայ, նորա լիցի: Եւ թէ այլք յայլոց սինօս որ- 35 սան, յամէն տասնէ զմէկն գեղջին տիրոջն տան<sup>(66)</sup>: Եւ թէ որ ի մայրիս որս առնէ, յամէն տասնէ զմինն յայն տայ, յոյր սահմանքն լիցի: Նոյնպէս և ծովու որսք տասանորդեսցեն՝ ում և իցեն սահմանքն:

105 Բ Օրին., ԻԲ, 13—19  
 106 Բ Օրին., ԻԲ, 20—21

Գ Լ Ո Ւ Ն Լ Բ

Վ Ա Ս Ն Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ա Ց Գ Ի Ի Տ Ի Ց Գ Ա Ն Ձ Ի

5 Եթէ շինէ որ տուն, կամ վարէ օրտ, կամ փորէ հող և գտանէ գանձ կա-  
րասով կամ այլ փոքր ամանով, այն թագաւորաց է իրաւունք<sup>(67)</sup>, և ի տաս-  
նէն մինն գտողին է, երբ իւրն շինի տեղիքն, ուր զանձն գտաւ. ապա թէ  
10 յիւր տունն կամ յիւր արտն և յայգին գտանէ, ի հնզէն մինն գտողին է,  
վասն զի իւրն է տեղն: Ապա թէ որ գտաւ, իւր ազգին և իւր հարսնցն լեալ  
էր զանձն, և հաստատէ վկայիք, նմա լիցի, որ եզիտն, և ի տասնէն մինն  
10 արքային բաժին է: Եւ թէ ի վարձկանաց իցէ գտողն ոչ կարծեմ իրաւացի  
տասանորդել, այլ մասն ինչ:

Գ Լ Ո Ւ Ն Լ Գ

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Կ Ռ Ո Ւ Ն Ե Ի Չ Ի Ր Ե Ր Ա Ց Մ Ո Ւ Ր Ո Ւ Ք Փ Ե Տ Ե Ն

15 Եթէ կուտին արք երկու<sup>(68)</sup>, և մինն մաւազ<sup>(69)</sup> լինի, և մինն՝ կատա-  
րեալ, և ձգէ մաւազն և յիետէ զմուրուք կատարելոյն, դատաստան լիցի, որ  
կտրեն զմաւազին մաղն երկու տարպայ, քանզի զկատարելոյն մուրուքն  
քարշեաց և հհան, և եւթն վայտ ի վերայ թիկանցն տան: Ապա թէ յաւազ  
մարդոյն եղև պատճառ կուտոյն, կէս վրիժուցն խնդրեսցի ի փոքերն, զոր  
ի վերոյ գրեցաք, զի մի՛ այլք այսպիսի իրս գործեսցեն:

Գ Լ Ո Ւ Ն Լ Դ

Վ Ա Ս Ն Հ Ո Ր Ո Ց Ս Ե Ր Մ Ա Ն Ց

20 Եթէ բանայ որ հոր ցորենոյ կամ այլ սերմանց, յիւրոց և թէ յօտարաց  
ի ներքս՝ ի հորն իջուցանէ, թէ մեռանի՝ արիւն նորա ի ձեռաց նորա  
խնդրեսցի, և թէ հիւանդանայ՝ զղեղագիւնն և զիւսփանումն վճարեսցէ, զի  
պարտ էր զգուշանալ մինչև հորին հօտն ելանէր և ապա մարդ ի ներսն  
25 էր կախեալ: Ապա թէ վարձեաց զմարդն և յառաջն ասաց, թէ խիստ է  
հարոյն հօտն, և նա էջ ի ներս, արիւն նորա ի զուխն իւր:

Գ Լ Ո Ւ Ն Լ Ե

Վ Ա Ս Ն Վ Ն Ա Ս Ե Լ Ո Ց Շ Ի Ն Ա Կ Ա Ն Ա Ց Ի Տ Ե Ր Ա Ն Ց

30 Իշխանք և այլք, եթէ յաւելի դատելն զպարտկոսս, որ ընդ ձեռամբ  
իւրեանց իցեն, և հանդիպի մեռանել, արեան զինք աւուցեն ի նմանէ և տա-  
ցեն յորդիս կամ յազգայինս. և թէ ձեռն կտրեն կամ ոտն, կամ ատամն  
խլին կամ ախն, զգինս տան. և թէ բժշկօք լիցի՝ զվարձս բժշկին և զիւս-  
փանումն վճարէ<sup>(70)</sup>:

Գ Լ Ո Ւ Ն Լ Զ

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Ս Ո Ւ Տ Ք Ա Հ Ա Ն Ա Ց Ք Լ Ի Ե Ի Ն Ե Ի Կ Ա Մ Ք Ա Հ Ա Ն Ա Ց Ք Ա Ն Ի Ր Մ Ի Գ Ո Ր Մ Ե Ի Գ Ո Ր Մ Ե Ն

35 Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ. եթէ մի՛ որ  
յանդգնեսցի ի մարդկանէ, որոյ լիցէ զօժումն քահանայութեան ընկա-

լեալ, և արասցէ իրս ինչ իշխանութեամբ իբրև զքահանայ, և կամ քահանայ աշառանօք և ակնառութեամբ զործիցէ ինչ առանց օրինաց և իրականց, այլ արդարութեամբ և սնականառութեամբ<sup>107</sup>;

5 Եւ զայս ահա զառաքելական կանոնի զհրաման այսպէս գատել պարտին առաջնորդք, զի զլար սովորութիւն լուծցեն, զոր աշխարհականք առնեն արք և կանայք՝ վերակացուք լինին եկեղեցոյ Աստուծոյ և զմուտրս և զպտղիս ուտեն: Արդ, պարտ է ասել, զի լուծցեն յայնպիսի սովորութեանց: Նոյնն և ընդ քահանայս հրամայէ եպիսկոպոսն, որք անկարգք և անուղղայք իցեն, կերողք և արբեցողք, զի մի՛ այնպէս վարեսցին, այլ սրբութեամբ և առաքինասէր վարուք: Եւ որք ոչ կայցեն ըստ  
10 խրատու օրինացն Քրիստոսի, լուծուցէ ի կարգէն քահանայութեան<sup>(7)</sup>:

Գ Լ Ո Ւ Ն Լ Ե

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Զ Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ս Ա Ն Ա Ր Գ Ե Ն

15 Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, թէ մի՛ ոք անարգեսցէ և անգոսնեսցէ և արհամարհանօք կալցի զքահանայս, թէ և կարի ոք յանարգաց իցէ. գիտասցէ, զի որ անարգէ զայնպիսին՝ զԱստուած անարդէ, զի Աստուծոյ սպասաւոր է ի բարիս, և համարս տայցեն ընդ հոգոց ձերոց. ո՛չ զրեալ է<sup>108</sup>, զիշխան ժողովուրդեան քոյ մի՛ բամբասիցես<sup>109</sup>:

20 Եւ զայս դատաստան և որ նախ քան զայս երբեմն թլ և սակաւ ինչ զրեցաք<sup>110</sup>, այլ երկրորդել յօժարեցաք այժմ յառաքելական կանոնաց՝ ցուցանելոյ աղազաւ զմեծութիւն պատժոցն անարգողաց քահանայից, զի գատել զոյգ է զնոսա ընդ աստուածանարգս՝ իրաւացի դատաստանաւ, ըստ այնմ՝ որ զձեզ անարգէ, զիս անարգէ<sup>111</sup>: Եւ որ շիցեն՝ և այն իսկ  
25 ըստ արժանոյն ցուցաւ<sup>112</sup>:

Գ Լ Ո Ւ Ն Լ Ը

Վ Ա Ս Ն Դ Ա Տ Մ Է Ի Ո Ր Ա Յ

30 Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, եթէ որք են յատիճան դատաւորութեան և իշխան են առնել դատաստան, եթէ թիւրէ և ընդ երեսաց առնէ, և պարտաւորեսցէ զարդարն և արդարացուցցէ զպարտաւորն, մի՛ ևս կացցէ ի կարգի դատաւորութեան և պատուհասեալ կըշտամբեսցի, զի ոչ իմացաւ զզրեալսն աստուածային ձեռամբն յօրէնսն Մովսիսի<sup>113</sup>, եթէ մի՛ խոտորեցուցես զիրաւունս ի դատաստանի և կաշառ ի վերայ իրաւանց մի՛ առնուցուս<sup>114</sup>:

107 Կանոնք առաքելականք ԻԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 43  
 108 Ելք, ԻԲ, 28: Գործք առաքելոց, ԻԳ, 5  
 109 Կանոնք առաքելականք ԻԾ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 43—44  
 110 ՏՆ՝ս հոգվ. Ե  
 111 Ղուկաս, Ժ, 16  
 112 ՏՆ՝ս հոգվ. Ա, 12  
 113 Ելք, ԻԳ, 6, 8: Ղևտ., ԺԹ, 15: Բ Օրին., Ժ2, 19 և այլուր.  
 114 Կանոնք առաքելականք ԻԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 44

Ի դատաստանէ դատաւորացս, ի կանոնական հրամանացս ուսաք, զի որք եկեղեցական դատաւորքն են՝ մի՛ զոմն քան զոմն պատուեսցեն ի դատաստանի, այլ թէ գայցէ իշխան ի դատաստան, և աղքատ ոմն՝ զկնի, կանգնեցնեն զերկորեանն ի միասին և օրինօքն Աստուծոյ դատ արասցեն

5 ի միջի նոցա, այլ արծաթ մի՛ առցեն և թիւրեսցեն զդատաստանս ճշմարիտս, քանզի Աստուած վրէժխնդիր է դատաւորաց վասն օրինացն իւրոց<sup>(72)</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Լ Թ

Վ Ա Ս Ն Ը Ն Ձ Ի Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Ց Ե Ի Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ն

10 Եպիսկոպոս, որ գայ նոր յաթոռ եպիսկոպոսութեան նստի ի քաղաքի, զրո՞վ և թղթով յայտնեսցէ զինչսն, զոր ունի: Նոյնպէս և զեկեղեցոյն զրո՞վ առցէ յինքն, զի ի մեռանելն իւրում իշխան լիցի ի վերայ ընչից իւրոց միայն և ում կամեսցի տացէ զինչսն իւր, և զեկեղեցոյն ոչ կարէ: Եւ մի պատճառանօք եկեղեցական իրացն, անկանել յիւրմէն եպիսկոպոսին, թերևս կին և մանկունս ստացեալ ունիցի, կամ ազգական, կամ ծառայս: Զի իրաւացի է Աստուծոյ և մարդկան, զի մի՛ եկեղեցոյն վնաս

15 ինչ կրել անգիտութեամբ եպիսկոպոսին իրաց, և մի՛ զեպիսկոպոսն և զազգականսն իւր պատճառանօք եկեղեցոյն յամենայնէ զերծանել, և կամ յիրս ինչ անկանել նորա ազգականացն և մահու նորա լինել պատճառօք հաշոյութեան<sup>115</sup>:

Ահաւասիկ յանդիմանին բամբասողք զեկեղեցի, թէ դատաստան ոչ ունի, զի այս իրաւունք դատաստանաց նոցունց իսկ է առաքելոցն, զի և զդատաւորս հրամայեն դատել զանիրաւս, և զեպիսկոպոսաց և զեկեղեցոյ զընչից ցուցին գիրաւունս: Յորոց յայտ է, զի ոչ միայն աւանդութեամբ վարէին դատաստանաւ, այլ և շափաւոր գրեցելովքն, իբր պատկերաւ զբաւանդակ ուսեալ վարէին: Ըստ որում և մեզ յոյժ ի դէպ է վարիլ և մի՛ այլազպ ինչ:

Գ Լ Ո Ւ Խ Խ

Վ Ա Ս Ն Ի Շ Ե Ն Լ Ո Ց Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Ի Ր Ա Ց

30 Հրամայեմք եպիսկոպոսին իշխանութիւն ունել զեկեղեցական իրաց, քանզի եթէ զպատուական հոգիս մարդկան նմա հաւատալի է, առաւել ևս իրաւացի է զիրս կատարել, որպէս զի ըստ իշխանութեան նորա խնամ ունել կարօտելոց, և ի ձեռն երիցանց և սարկաւազաց ունել խնամակալութիւն եկեղեցոյն Աստուծոյ և ամենայն զպուշտութեամբ առնել:

35 և ինքեանք իսկ, եթէ կարօտ ինչ իցեն, և յօտարաց եղբարց ի պէտս, զի մի՛ ինչ իրօք նոցա պակասութիւն լիցի, վասն զի օրէնքն Աստուծոյ հրամային՝ որ սեղանոյն պաշտօնեայքն են, ի սեղանոյ անտի կերակրել<sup>116</sup>. ըստ որում և ոչ զինուորն իւրովք թոշակօքն զզէնս պատերազմացն բերէ<sup>117</sup>:

Եւ ասացաք վերագոյնն՝ եկեղեցոյն իրաց յայտնի լինել և եպիսկո-

115 Կանոնք Կղեմայ լԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 85—86  
 116 Ա. Կորնթ., Թ, 13  
 117 Կանոնք Կղեմայ լԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 86—87

յոսին, և թէպէտ յաւել զպատճառան, զի մի՛ կարծիցի ոչ իշխել եպիսկոպոսին իրաց եկեղեցոյն, եցոյց զիշխանութիւնն, սակայն և զսահմանն յայտ արար, զի մի՛ վայրասպար ինչ գործիցէ, զոր և իրաւացի կարծելի է դատաստան եկեղեցոյ:

5

**Գ Լ ՈՒ Ն Խ Ա**

**Վ Ա Ս Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց Ե Ի Ք Ա Ն Ա Ն Ա Ց Ի Ց, ՈՐ Զ Պ Է Տ Ս Ժ Ա Ռ Ա Ն Գ Ա Ի Ռ Ա Ց Ո Չ Տ Ա Ց Ե Ն**

Եթէ որ եպիսկոպոս կամ երէց, ի ժառանգաւորացն, որ կարօտ իցեն, և ոչ տացէ նոցա զպէտս, որոշեսցի իբր զսպանող ելքօր իւրոյ<sup>118</sup>:

10

Լուիցեն զկանոնական դատաստանս և հարք միաբանաց, զի զանգուժ բարսն ընդ սպանողսն կարգէ, և այսմ դատաստանի բազում կան վկայք:

**Գ Լ ՈՒ Ն Խ Բ**

**Վ Ա Ս Ն Ժ Ա Ռ Ա Ն Գ Ա Ի Ռ Ա Ց Ի Կ ՈՒ Ռ Ի Հ Ա Ր Կ Ա Ն Ո Ղ Ա Ց**

15

Եթէ որ ժառանգաւոր ի կոտի զոր հարկանէ, և ի միոջէ հարուածոյն մեռցի, լուծցի վասն յանդգնութեան իւրոյ, իսկ եթէ ժողովրդական որ իցէ՝ որոշեսցի<sup>119</sup>:

20

Եւ այս կանոնական հրաման ըստ Օրինացն է<sup>120</sup>. զի թէ ոչ մեռցի, այլ ի մահիճս զնիցի և յառնիցէ և շրջեսցի, անպարտ լիցի, որ եհարն: Սահման եղ, զի թէ զկնի այնր մեռցի. նոյն և այս է ի միոջէ հարուածոյ: Ապա թէ ոչ մեռցի ի միոջէ հարուածոյ, ոչ լուծցի, այլ դատաստան լիցի յուղղութիւն և յապաշխարութիւն, եթէ ժառանգաւոր է և եթէ աշխարհակուն:

**Գ Լ ՈՒ Ն Խ Գ**

**Վ Ա Ս Ն Ե Ր Կ Ի Ր Ր Դ Զ Ե Ռ Ն Ա Գ Ի Ե Լ Ո Ց**

25

Եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւազ երկրորդ ձեռնադրութիւն ընկալեալ յումեքէ, լուծցի նա, և՛ որ ձեռնադրեսացն, բայց եթէ ցուցցէ ի թերահաւատից ունել նմա զձեռնադրութիւնն, քանզի յայսպիսեացս զրմկրտեալն և զձեռնադրեալն ոչ հաւատացեալս և ոչ ժառանգաւորս հնար է լինել<sup>121</sup>:

30

Յայտնի է ընդ դատաստան կանոնիս, զի որ ձեռնադրէ ոչ զլուծելոցն ի հայրապետէ կամ ի ժողովոյ, այլ որ տակաւին յաստիճանի իցէ, այնպիսին ախտացեալ ամբարտաւանութեամբ գործէ, նմանապէս և՛ որ ձեռնադրեցան, ուստի իրաւացոյց լուծանել զնոստ իրաւամբք:

<sup>118</sup> Կանոնք Կղեմայ ՄԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 90  
<sup>119</sup> Կանոնք Կղեմայ ԿԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 91  
<sup>120</sup> Ելք, ԻԱ, 18, 19  
<sup>121</sup> Կանոնք Կղեմայ ԿԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 91—92

Եւ ի թերահաւատից, աշխնքն՝ ի հերձուածողաց, զմկրտեալսն և դձեռնադրեալսն հրամայէ երկրորդել:

Գ Լ Ո Ւ Խ Խ Դ

Վ Ա Ս Ն Գ Ո Ղ Ո Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Ց

5 Եթէ ոք ժառանգաւոր կամ ի ժողովրդականանաց առցէ յեկեղեցոյն մոմեղէն կամ ձէթ, որոշեսցի և հնազապատիկ տուժեսցի, որով էառն անօթով ոսկեղինաւ կամ արծաթեղինաւ սրբեցելով: Եւ մի՛ ոք ի սէտս գողացեալ, զի օրինազանցութիւն է. ապա թէ ոք ըմբռնեսցի՝ պատուհասեալ<sup>(73)</sup> որոշեսցի<sup>122</sup>:

10

Գ Լ Ո Ւ Խ Խ Ե

Վ Ա Ս Ն Կ Ա Ր Բ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Լ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց

Եպիսկոպոս ամբաստանեալ առաջի հաւատարմաց ոմանց կամ հաւատացելոց, կարդալ զնա հարկաւոր է եպիսկոպոսաց: Եթէ եկեալ խոստովանեսցի, յանդիմանեալ զնա՝ սահմանեսցի պատուհասն: Ապա թէ կարգացեալ զնա՝ ոչ լուաւ, կոշեսցի երկրորդ անգամ՝ առաքելով առ նա երկու եպիսկոպոսունք: Ապա թէ և այսպէս ոչ լուաւ, կոշեսցի երրորդ անգամ՝ դարձեալ երկուց եպիսկոպոսաց առաքելով առ նա: Ապա թէ և այնպէս արհամարհեալ՝ ոչ եկեսցէ ի ժողովն, վճիռ հատցի այնպիսոյն՝ որ ինչ արժան թուեսցի, որպէս զի մի՛ շահել ինչ թուեսցի<sup>(74)</sup> ի փախուցելոյն<sup>123</sup>:

20

Այդ ճշմարիտ իրաւունք են ամբաստանելոց առնել ըստ այդմ: Վճիռն այնպէս ընտրին, զի զպատճառն ստուգագոյն գիտելով՝ հատցի:

Գ Լ Ո Ւ Խ Խ Զ

Վ Ա Ս Ն Վ Կ Ա Յ Ի Ց Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց

25 Եւ ի վկայութիւն գթերահաւատ ոք մի՛ ընդունել և ոչ զհաւատացեալ զմի, քանզի ի բերանոյ երկուց և երից վկայից<sup>124</sup> հաստատեսցի ամենայն բան<sup>125</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Խ Է

Վ Ա Ս Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց Զ Ձ Ե Ռ Ն Ա Դ Ի Ր Ե Լ Զ Ո Ք Յ Ի Ի Ր Ո Ց Ն Ա Ռ Ա Ն Ց  
Կ Ա Մ Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Ա Ց

30 Զի ոչ է պարտ եպիսկոպոսին՝ եղբօր, կամ որդոյ, կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի՛

122 Կանոնք Կղեմայ Կէ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 92—93

123 Կանոնք Կղեմայ ԿԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 93

124 Բ Օրին., ԺԹ, 15: Մատթ., ԺԸ, 16: Ա Տիմ., Ծ, 19 և այլուր:

125 Կանոնք Կղեմայ ԿԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 94

ձեռնադրել ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ: Չէ արժան վայն շնորհել մարդկային սիրոյ, քանզի և ոչ զեկեղեցիս Քրիստոսի ընդ ժառանգութեամբ զնել: Ապա թէ ոք արասցէ զայս, անհաստատ յիցի ձեռնադրութիւն նորա, և ինքն որոշեսցի<sup>126</sup>:

5 Կանոնական իրաւունքն այսպէս է. զի ոչ իշխէ իւրոցն տալ, և ոչ միայն ձեռնադրել, և ոչ զեկեղեցի ժառանգութիւն առնել: Ապա թէ յանդրզնի, հոգևոր դատաստան է. թէ հաճոյ բազմացն թուեսցի՝ օրհնութեամբ մասնաւորաւ հաստատել, ապա թէ ոչ՝ նոյն անհաստատ կացցէ, և ինքն որոշեսցի, մինչև զարժանաւոր ապաշխարութիւնն ցուցցէ:

10

Գ Լ Ո Ւ Խ Խ Ը

Վ Ա Ս Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի, ՈՐ ԱՐԿԱՆԷ ԶԱՆՁՆ ԻՒՐ ՅՆՐԿՐԱԻՈՐ ՀՈԿՍ

Ոչ է պարտ եպիսկոպոսին արկանել զինքն յերկրաւոր հոգս, այլ պարապել եկեղեցական պիտոյից, ապա թէ ոչ՝ ի բաց զնիցէ<sup>(75)</sup>, զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել<sup>127</sup>, ըստ տէրունական բանին<sup>128</sup>:

15

Եւ զայս ոչ յազազս հոգալոյ զիշխանացն պարտիմք իմանալ միայն, այլ թէ և ըստ պայմանի վիճակ առցէ յայլազգևոց, որպէս և այժմ գործեն բազումք յեպիսկոպոսաց և ի քահանայից, որոց և տէրունականն զարժանաւորն բերէ դատաստան, ասելով՝ ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել<sup>129</sup>: Յայտ է, զի զանզեղջսն հրամայէ լուծանել իրաւամբք:

20

Գ Լ Ո Ւ Խ Խ Թ

Վ Ա Ս Ն Զ Ս Ա Ռ Ա Յ Ս Ե Ր Է Ց Օ Ր Հ Ն Ե Լ Կ Ա Ս Ս Ա Ր Կ Ա Խ Ա Գ

Զծառայս ի ժառանգաւորութիւն ընձեռել ստանց կամաց տերանց ոչ հրամայեմք, ի տրամութիւն ստացողացն, քանզի տանց կործանումն այս գործէ: Ապա թէ երբէք արժանի երեսցի ծառայն առ ի ձեռնադրութիւն աստիճանի, որպէս Ոնէսիմոսն երեսցաւ<sup>130</sup>, և թողացուցեն տեարքն իւր և ազատ ի տանէն ի բաց առաքեսցեն, եզիցիս<sup>131</sup>:

25

Դատաստան կանոնացս հրամայէ զայսոսիկ պահել անզայթակղ զեկեղեցի, զի մի՛ պատճառաւ բարեպաշտութեան վնաս ինչ զործեսցեն և տեղի տայցեն շարախօսացն զմէնչ:

30

Գ Լ Ո Ւ Խ Խ Ր

Վ Ա Ս Ն Ա Ն Ա Ր Գ Ո Ղ Ա Ց Զ Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ս Ե Ի Զ Ի Շ Խ Ա Ն Ա Ս

Եթէ ոք թշնամանեսցէ զթագաւորս և զիշխանս անիրաւաբար, պատուհաս կրեսցէ. եթէ ժառանգաւոր է՝ լուծցի, իսկ եթէ ժողովրդական՝ որոշեսցի<sup>132</sup>:

<sup>126</sup> Կանոնք Կղեմայ 2, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 94

<sup>127</sup> Մատթ., 2, 24, Ղուկ., ԺԶ, 13

<sup>128</sup> Կանոնք Կղեմայ 2Ծ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 95

<sup>129</sup> Մատթ., 2, 24: Ղուկ., ԺԶ, 13

<sup>130</sup> Կողոս., Գ, 9: Առ Փիլիմոսին

<sup>131</sup> Կանոնք Կղեմայ 2Զ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 95—96

<sup>132</sup> Կանոնք Կղեմայ 2Ը, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 96

Եւ զայս դատաստան դատել եպիսկոպոսաց եւ վարդապետաց է, զի պատկեր են Աստուծոյ եւ թագաւորք, եւ իշխանք: Եթէ, անարգողն ժառանգաւոր իցէ, իրպւացի է լուծանել, եւ աշխարհական ոք՝ որոշել, մինչև զղջասցի: Եւ այդ հաստատեսցի այժմ:

5

Գ Լ Ո Ի Խ Ծ Ա

ՎԵԱՍՆ ՈՐ ՏՂԱՅ ԿՈՐՈՒՍԱՆՆԵՆ ԿԱՆԱՅՔ

Եթէ հեղձուցանէ ոք զտղայ իբրև զխեղ կամ ի շնութեան, կամ աւզայն արարեալ՝ փոխանակ ինքն մեացի, զի որպէս ոչ է հնար ի վեր կացուցանել, նոյնպէս եւ ոչ ստաշխարել<sup>132</sup>:

10

Եւ զի ըստ Օրինացն սկամայիցն եւ ոչ կամատորացն ապաստանի եղև ի քաղաքսն ապրել<sup>134</sup>, եւ զի ըստ Օրինացն յաղագս հաւատացեալ Հրէիցն վարի, ուստի եւ յետոյ եւ այլմ սուաւ ապաշխարութիւն: Եւ այդոցիկ կամաւոր խոստովանողացն՝ ապաշխարութիւն, իսկ անղեղջիցն՝ արևան դատաստան:

15

Գ Լ Ո Ի Խ Ծ Բ

ՎԱՍՆ ԳՈՂՈՅ ԵՒ ԱՍՊՆՋԱԿԱՆԱՅ ՆՈՅՍ

Գողք կամ ասպնջականք նոցին, ըստ կամաց եկեղեցոյն զնոսա մասո մատնել արժանի լիցի, զի հնացեալ աւաղակքն եւ իւր հացամեծարքն միշտ լինին ի մահ դատապարտեալք: Զայդր զկնի պարտ է դատաւորին հետեւել<sup>135</sup>:

20

Եւ զայս յաղագս մարդագողաց եւ աւագակաց տսէ եւ ըստ Օրինացն հրամայէ ի մահ դատապարտել<sup>136</sup>, նաև՝ զկամակից հացտուն. եւ ըստ եկեղեցոյ օրինաց եւ կարգէ:

Բայց զկնի կանոնաց այդ եւ ցուցեալ է դատաստան<sup>137</sup>,

25

Գ Լ Ո Ի Խ Ծ Գ

ՎԱՍՆ ՈՐ ԱՌՈՒԳԵԱՅՔ ԱՌՆԵՆ

Զառեանկան, թէև որպի ծնցի, եւ հայր եւ մայր եւ աղջիկն շկամիցին, մի՛ ինչ վնաս Կրեացէ ի շարագագան հողոյն, անդրէն դարձուցանել<sup>138</sup>:

30

Յայտ է, թէ պսակեալ եւ թէ առանց պսակ ընդ բռնապսակն է արտաքոյ կամաց:

Եթէ ձեռնհաս իցեն, անխեղճ է անդրէն դարձուցանել եւ կամօք պսակել:

<sup>132</sup> Կանոնք Հարանց հետեւողաց Ա, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 103

<sup>134</sup> Քիւր, ԼԵ, 9—15: Բ Օրին., ԺԹ, 2—7: Յեսու, Ի, 2, 3

<sup>135</sup> Կանոնք Հարանց հետեւողաց Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 104

<sup>136</sup> Ելք, ԻԱ, 16: Բ Օրին., ԻԴ, 7

<sup>137</sup> Տե՛ս հոգվ., ԾԸ

<sup>138</sup> Կանոնք Հարանց հետեւողաց ԺԵ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108

Իսկ եթէ յետոյ կամեցան, ապաշխարութեամբ կարգեսցին, որպէս և գայս ցուցեալ է կանոնաց<sup>139</sup>:

Եւ այդ ճշմարիտ դատաստան է յեկեղեցի:

Գ Լ Ո Ւ Խ Ե Դ

5 ՎԱՍՆ ՄԱՌԱՅԻՅ ԱԶԱՏԵԼ ԸՍՏ ԱԻՐԻՆԱՅՆ

Եթէ պատահի քրիստոնէի գնել ծառայ քրիստոնեայ, ըստ Օրինացն՝ վեց ամ ծառայել և յեւթն ամին ելանել<sup>140</sup>: Եղիցի մեզ՝ յորժամ ըստ գնոյ իւրոյ ծառայեսցէ, ելցէ ազատս: Եթէ ինքն միայն մտեալ իցէ, միայն ելցէ, եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ, ելցէ և կինն ընդ նմա:

10 Ապա թէ տէրն իւր տացէ կին նմա, և ծնանիցի նմա ուսուերս և զըստերս, կինն և որդիքն տեառն լինին, և նա միայն ելցէ փրկանօք<sup>(76)</sup>: Ապա եթէ պատասխանի տուեալ ասիցէ ծառայն՝ սիրեցի գտլը իմ, և զկին իմ, և զորդիս իմ, և ոչ գնացէ յաղատութիւն, տարցէ զնա տէրն իւր յեկեղեցի Աստուծոյ և քահանայիք, և հաւատարիմ վկայիք, և գրուլ առցէ զնա ծառայ յաւիտեան<sup>141</sup>: Եւ մի՛ յաղագս այնորիկ փոյթ կալցէ, թէ և կարիցէ ազատ լինել, զի ըստ առաքելոյ՝ ի Տէր կոչեցեալ ծառայն ազատ Տեառն է<sup>142</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ե

ՎԱՍՆ ՈՐ ԶԴՈՒՄՍԲ ԻՒՐ ՎԱՃԱՌԷ ՅԱՂԱԿՆՈՒԹԻՒՆ

20 Իսկ եթէ պատահի ումեք վաճառել գոյուտը իւր, ըստ որում և իցէ սլատճառի, յաղախութիւն ասն հաւատացելոյ, մի՛ իբրև զաղախին վճռաւ վաճառիցէ, զի թէ ոչ իցէ յաշս տեառն իւրոյ հաճոյ, որում հաստատեցան, փրկեսցէ զնա հայրն իւր: Բայց յազգ օտար չէ իշխան վաճառել զնա տէր իւր, զի անարգեաց զնա. ապա թէ որդոյ իւրում հաստատեսցէ զնա, ըստ օրինաց դատերս արասցէ նմա: Ապա թէ ոչ իւր և ոչ որդոյն հասանի ի կնութիւն, ի լնուլ ամի սպասաւորութեան նորա շափուլ գնոյ իւրոյ՝ ազատ լիցի ձրի: Ապա թէ կանխաւ հայր իւր կարիցէ փրկել զնա, փրկեսցէ<sup>143</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ե Զ

30 ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԻ ՄԱՌԱՅԻՅ ՆԻ ԱՂԱԿՆՆԱՅ

Եթէ գնեսցէ ոք ծառայ կամ աղախին այլազգի, եթէ յանձն առնուն մկրտիլ՝ ընդ փրկանօք լիցին, զնոյ շափ ծառայեալք՝ ազատք լիցին, ապա թէ ոչ կամիցին՝ վաճառել իշխան լիցին: Այլ մի՛ յազագս ոչ ազատելոյ

<sup>139</sup> Տէւ Գրիգոր Լուսավորչի Թ, Բարսեղ Կեսարացու ՄԺԵ, ՍԲ, Շահապիլանի է կանոնեբլր:

<sup>140</sup> Ելք, ԻԱ, 2: Բ Օրին., ԺԵ, 12

<sup>141</sup> Ելք, ԵԱ, 3—6: Բ Օրին., ԺԵ, 16—17

<sup>142</sup> Ա Կորնթ., է, 22

<sup>143</sup> Տէ՛ս Ելք, ԻԱ, 7—11

հեղգասցին մկրտել: Իսկ մկրտելոցն ազատիլ և կամ ոչ՝ նոյն լիցի, որպէս ի բնէ քրիստոնէից. նմանապէս և՝ ազախնեացն<sup>144</sup>:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Է

##### ՎԱՍՆ ԱՆԱՐԳՈՂԱՑ ԶԶԱՅՐ ԿԱՄ ԶՄԱՅՐ

5 Եթէ որ անարգի յորդոյ իւրոյ, և կամ թէ այլ անօրէնութիւն զործեն որդիքն առ օտարս, վասն անարզանացն հրաման տայ Օրէնքն, զի իշխանութիւն ունի հայրն տանել զորդին իւր առաջի դատաւորաց, զի թէ յանձին կալնու զմեղանս իւր և այլ ոչ արասցէ՝ խրատեսցի և արձակեսցի, ապա թէ ոչ՝ պատժեսցի, զի ի հնումն, ըստ Օրինացն, զհայր և զմայր անարզողսրն զերկճղի փայտէ կախէին<sup>145</sup>:

10 Այլ վասն շար դործոց, զոր արարին առ օտար մարդիկ, ոչ տայ նմա հրաման Օրէնքս բամբասել զորդիսն առաջի դատաւորին<sup>(77)</sup>:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Ը

##### ՎԱՍՆ ՈՐՔ ԶՏՂԱՅՍ ԳՈՂԱՆԱՆ

15 Որ որ զողացի յորդոցն Իսրայէլի և վաճառիցէ զնա, և առ ով որ գտցի գողութիւնն, մահու մատնիցի<sup>146</sup>:

Իսկ մեզ փոխեալ լիցի լրմամբ. եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ գողացեալ վաճառէ յայլազգիս, և ի յայտ եկեսցէ շար գործն, յաղագս ապաշխարութեան հասանելոյ մի՛ մեոցի մահու, այլ ի բանտ արկեալ՝ երաշխաւորօք զառեալ զինն յղիցէ և զարձուցէ զվաճառեալն. ապա թէ շիցէ հնար՝ զզինն ի գողացելոյ տէրն տացեն և խրատեալ յաշան՝ արձակիցեն, և կամ նշան դիցեն. իսկ անզղջիցն լիցի իւրսաւ<sup>(78)</sup>:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Թ

##### ՎԱՍՆ ԲԱՄԲԱՍՈՂԱՑ ԶԶԱՅՐ ԿԱՄ ԶՄԱՅՐ

25 Որ բամբասէ զհայր կամ զմայր իւր, մահու մեոցի<sup>147</sup>:

Զյայտնի բամբասողաց և զյանցանս ծնողացն հրապարակողաց բզմահու մեռանիլն ասէ, այլ ըստ մեզ՝ դատաստանաց հարկանողաց բզծնողսրն լիցի, որպէս ցուցեալն է<sup>148</sup>:

#### Գ Լ Ո Ւ Խ Կ

30 ՎԱՍՆ ՈՐՔ ԿԱՏԱԿՈՎ ՎՆԱՍՆ ԶԻՐԱՐ

Եթէ կազիցեն արք երկու, և հարկանէ որ զրնկեր իւր քարիւ կամ բռնցի, և ոչ մեռանիցի, այլ զնիցի ի մահիճս, եթէ յառնիցէ այրն և

<sup>144</sup> Տե՛ս հոգվ. ԾԳ

<sup>145</sup> Տե՛ս ԵԼԹ, ԻԱ, 15

<sup>146</sup> ԵԼԹ, ԻԱ, 16: Բ Օրին., ԻԳ, 7

<sup>147</sup> ԵԼԹ, ԻԱ, 17: Ղևտ., Ի, 9: Մատթ., ԺԵ, 5

<sup>148</sup> Տե՛ս հոգվ. ԾԷ

շրջեսցի արտաքս ի ցպոյ, անպարտ լիցի՝ որ հհարն, բայց զխափանածոյն  
և զբժշկութեանն տացէ<sup>149</sup>, իսկ եթէ մեռանի՝ զգինն առնունլ:

Այս դատաստան լումամբ յՕրինացն ասացաւ, և մեզ զնոյն սմբողջ  
պահելոյ արժան է<sup>(78)</sup>:

5

**Գ Լ Ո Ւ Խ Կ Ա**

**Վ Ա Ս Ն Ծ Ա Ռ Ա Յ Ի Յ, Զ Ո Ր Ս Պ Ա Ն Ե Ն Տ Ե Ա Ր Ք Ն Ի Ր Ե Ա Ն Ց**

Եթէ որ հարցէ զծառայ իւր կամ զաղախին իւր զաւագանաւ, և մեռցի  
ի ձեռանէ նորա, դատաստանաւ վրէժխնդրութիւն լիցի<sup>150</sup> ի տերանց:

Տեառնն ասէ և դատաստանն ի զաւագանն, և ի սուրն, և յայլսն այս-  
պիսիս, միանգամայն յապստամբութիւն նոցա և ի պատճառն լինելլ թէ  
այլազգիք իցեն և թէ քրիստոնեայք, ըստ այնմ զինք արեանն տուծեսցի:

Բայց եթէ մի օր կամ երկու կեցցէ, մի՛ խնդրեսցի վրէժն, զի դինք  
արծաթոյ իւրոյ են<sup>151</sup>, այլ ապաշխարութեամբ լիցի:

**Գ Լ Ո Ւ Խ Կ Բ**

15

**Վ Ա Ս Ն Ո Ր Զ Յ Ղ Ի Կ Ա Ն Ա Յ Ս Ի Կ Ռ Ո Ւ Ե Լ Ա Ր Ա Ն Ց Հ Ա Ր Կ Ա Ն Ե Ն**

Եթէ կոռիցեն արք երկու և հարկանիցեն զկին յղի, և ելանիցէ սաղմն,  
որ ի յանձն կայր, կէս վնասու տուծեսցի, որչափ ինչ արկանիցէ այրն  
այնմ կնոջն և տացէ աղաչելով: Ապա թէ կերպարանեալ իցէ, տացէ անձն  
ընդ անձին<sup>152</sup>:

20

Յայտնի է և դատաստանն աստուածային ըստ սահմանի, ապա թէ ոչ  
մի է նկարեսլն և յանձն որ կայրն, ըստ յուսոյ առնն ծնանիլ կնոջն,  
զի թէ և բազում միջոց է նկարելոյ և աննկարի: Այլ տացէ անձն ընդ ան-  
ձին. և այս դատաստանն վոտիեալ տուգանօք և ապաշխարութեամբ վը-  
ճարեսցի, որպէս յայտնեալ է դատաստանօք թագաւորացն, համեմատե-  
լով ընդ այնոսիկ:

25

**Գ Լ Ո Ւ Խ Կ Գ**

**Վ Ա Ս Ն Հ Ա Ր Ո Ւ Ա Մ Ո Ց**

Ակն ընդ ախան, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ  
ոտին, խարան ընդ խարանի, վէր ընդ վիրի, հարուած ընդ հարուածի<sup>153</sup>:

30

Նւ այս դատաստանն աստուածային, շնորհօք Աւետարանին<sup>154</sup>, տուգա-  
նօք վճարեսցի ընդ բանականի զնոյ արեանն համեմատեալ: Սակայն յա-  
ռուելն և ի նուազն ի զգայութիւնսն քննութիւն լիցի և յանդամսն և ի  
զործան, և ի բաժանումն յիրաքանչիւր անդամսն և զգայութիւնսն քսան  
և վեց դահեկան և կէս դտնդ, զարի մի պակաս:

<sup>149</sup> Ելք, ԻԱ, 18—19

<sup>150</sup> Ելք, ԻԱ, 20

<sup>151</sup> Ելք, ԻԱ, 21

<sup>152</sup> Ելք, ԻԱ, 21, 22

<sup>153</sup> Ելք, ԻԱ, 24—25: Ղևտ., ԻԴ, 20: Բ Օրին., ԺԹ, 21

<sup>154</sup> Տե՛ս Մատթ., Ե, 38—41

Գ Լ ՈՒՅ Կ Գ

ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻՑ ՀԱՐՈՒԱԾՈՑ Ի ՏԵՐԱՆՑ

Ծթէ հարցէ որ զակն ծառայի իւրոյ և կամ զաղախնոյ իւրոյ և կուրացուցէ, ազատեսցէ զնա ազատս փոխանակ ահան նորա: Եւ եթէ զատամն  
 5 ծառայի իւրոյ կամ զատամն աղախնոյ թափեսցէ, ազատեսցէ զնոսա ազատս փոխանակ ատաման նոցա<sup>155</sup>:

Թերևս աստուածային Օրէնքս զայլ ևս զգայութիւնս և զատամն միահաւասար համարեցաւ, նմանապէս և ելանել հրամայէ ծառայից և աղախնեաց վասն խլելոյ ատամանց նոցա: Եւ այս դատաստան անփոփոխ  
 10 կացցէ մեզ յՕրինաց առ հաւատացեալս: Իսկ եթէ յայլազգեաց իցէ ծառայն և աղախինն, վաճառիցէ որքան արժանն է՝ պահաս և կամ ընդ կէս զնոյ, ըստ որում ի ղէպ իցէ դատաստանն իրաւամբբ: Սակայն իշխան լիցի թէ և ոչ կամի վաճառել:

Գ Լ ՈՒՅ Կ Ե

15 ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՅՈՒՂ ԶԱՅՐ ԿԱՄ ԶԿԻՆ

Ծթէ հարկանէ ցուլ զայր կամ զկին, և մեռանիցին, ցուլն քարկոծ լիցի, և միսն մի՛ կերիցի, և տէր ցլոյն անպարտ լիցի<sup>156</sup>:

Եւ այս դատաստան ըստ Օրինացն հաստատուն մեզ կացցէ: Զենուլ զցուլն՝ զքարկոծելոյն լցցէ զտեղի, և վաճառել յայլազգիս զմիսն, և զգինն  
 20 յաղքատս տացեն, և հաստատուն լրամամբ ասացաւ, թէ՛ և տէր նորա անպարտ լիցի:

Ապա թէ ցուլն հարկանող էր յերէկն և յեռանդն, և բողոքեալ էին առ տէրն իւր, և նա անփոյթ արար, և սպան զոք, ցուլն քարկոծ լիցի, և տէր ցլոյն մեռցի: Իսկ եթէ փրկանք անկանիցին ի վերայ նորա, տացէ  
 25 փրկանս ընդ անձին իւրում ըստ ամենայնի, որչափ ինչ արկանիցի նմա, և տէր նորա փրկեսցի: Եւ եթէ զուստր կամ զզուստր հարկանիցէ, ըստ նմին օրինակի արասցեն<sup>157</sup>:

Եւ այս իրաւունք փրկանօք մեզ սահմանեսցի ըստ Օրինացն և ոչ մահուամբ, զի զողորմութիւն պատճառաւ Օրէնքն ընդ ստուգութեանն  
 30 խառնէ, և զի ցուցեալ է փրկանքն ի գինս արեան ի դատաստանս թաղաւորացն:

Իսկ եթէ զծառայ կամ զաղախին հարկանիցէ ցուլն, երեսուն կրկին սատեր արծաթոյ տացի տեառն նորա, և ցուլն քարկոծ լիցի<sup>158</sup>:

Իսկ զգին ծառային այդոքիկ նշանակէ տալ, և ցուլն ցուցեալ է:  
 35 Սակայն ընդ դատաստանի ի քրիստոնեայն և յայլազգին ընտրութիւն լիցի:

Ապա թէ բեկանիցէ կամ խափանէ ի զգայութեանցն, և շիցէ զիտակ վնասու ցլոյն, անպարտ լիցի տէրն նորա, իսկ թէ բողոքեալ իցին, և շիցէ

155 Եւթ, ԻԱ, 26—27

156 Եւթ, ԻԱ, 28

157 Եւթ, ԻԱ, 29—31

158 Եւթ, ԻԱ, 32

ի միջոյ բարձեալ, տուժեացի բժշկութեանն և զխտփանածոյն տացէ: Եւ այս յիւրանքանչիւրսն լիցի դատողութեամբ:

## Գ Լ Ո Ւ Խ Կ Զ

## ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՅՈՒՎ ԶՅՈՒՎ

- 5 Իսկ եթէ հարկանիցէ ցուլ գցուլ ուրուք, և մեռանիցի, վաճառեսցեն ղցուլն կենդանի և բաժանեսցեն գգինս նորա երկու տէրքն, և ղցուլն սպանեալ վաճառեսցեն և բաժանեսցեն<sup>(60)</sup>: Ապա թէ գիտէր տէրն նորա, որ վնասարար էր, և նմա բողոքեալ էին, և նա անփոյթ արար, տուժեացի ցուլն ընդ ցլի<sup>59</sup>:
- 10 Այս է տուժիլն. ցլոյն փոխան ղցուլն կենդանի տացեն, և մեռեալ ցուլն սպանողի տիրոջն փոխան լիցի<sup>(61)</sup>: Եւ այս ղասաստան հաստատուն մեզ յՅրինացն կայցէ:

## Գ Լ Ո Ւ Խ Կ Է

## ՎԱՍՆ ՀՈՐՈՑ ԵՒ ԶՐՀՈՐՈՑ, ԵԹԷ ԱՆԿԱՆԻՑԻ Ի ԿՆՆԴԱՆԵԱՑ

- 15 Եթէ բանայցէ ոք հոր կամ ջրհոր և ոչ խփէ, և անկանիցի անդ անասուն գինչ և իցէ<sup>(62)</sup>, ի տիրոյ հորոյն տուժեացի արծաթ, և տացեն տեառն նորա, և մեռեալ անասունն նորա լիցի<sup>60</sup>:
- Եւ զայս դատաստան իրաւամբք պարտիմք պահել: Այլ թերևս զանսորբն իշովն նշանակեաց, զսուրբն՝ արշառովն:

20

## Գ Լ Ո Ւ Խ Կ Ը

## ՎԱՍՆ ՀՈՐՈՑ ԵՒ ԶՐՀՈՐՈՑ, ԵԹԷ ԱՆԿԱՆԻՑԻ ՄԱՐԳ Ի ՆԱ

- Եթէ անկանիցի այր կամ կին ի հոր բացեալ կամ ի ջրհոր և մեռանիցի, թէ ի տուէ իցէ՝ կէս արեան տուժեացի, իսկ եթէ ի գիշերի՝ բաւանդակ արինն: Նոյն լիցի յաղազս կանանց, ծառայից և ազախնից: Դատեալ լիցի քրիստոնեայն և այլադոկին: Որպէս ի գիշերի՝ լիցի կոյրն, և արբեալն, և մանուկն:

## Գ Լ Ո Ւ Խ Կ Թ

## ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՅՈՒՎ ՅԱՆԱՍՆՈՑ

- 30 Եթէ հարկանիցէ ցուլ զկով կամ զոչխար կամ զայլ ինչ յայսպիսեաց և սպանանիցէ, իբր գի ոչ ղիտէր գցուլն հարկանող, կէս գնոյն տուժեացի, և փոքրագոյն կենդանին սպանեալն իրում տեառն լիցի, իսկ մեծն բաժանեսցի, յորժամ գոյգ զգինսն ունիցին, և վաճառեսցի հարկանողն: Իսկ եթէ բողոքեալ իցեն, և շիցէ ի միջոյ բարձեալ, զբաւանդակն տուժեացի: Նոյն լիցի և յանսուրբն, այսինքն՝ ի բեռնակիրսն:

159 Ելք, ԻԱ, 35—36

160 Ելք, ԻԱ, 33—34

Գ Լ Ո Ւ Խ Է

ՎԱՍՆ ԳՐԱՍՏԻՑ, ԵՔԷ ԶՄԻՄԵԱՆՍ ՀԱՐԿԱՆԵՆ

5 Եթէ ձի, կամ էշ, կամ ջորի հեղձուցանելով կամ ոտիւք զմիմեանս սպանանեն և կամ այլ ինչ վնասս առնեն, եթէ զիտելով տեառն զխստութիւն անասնոյն և ոչ զգուշացաւ՝ զբաւանդակն տուժեսցի, ապա թէ անզիտանալով՝ զկէս վնասուն: Նոյնդ լիցի, եթէ այլ ինչ ի կենդանեաց սպանանիցի կամ վնասեսցի:

Գ Լ Ո Ւ Խ Ը Ա

ՎԱՍՆ ԳՐԱՍՏԵՆՈՅ, ԹԷ ՀԱՐԿԱՆԵՆ ԶՄԱՐԳ ԵՒ ՎՆԱՍԵՆ

10 Եթէ զբաստ հարկանէ զմարդ և վնասէ, եթէ բողոքեալ իցեն, և նա ոչ զգուշացոյց՝ զբաւանդակն տուժեսցի, ապա թէ անզիտանալով և կամ զգուշացուցեալ՝ զկէս վնասուն և զմահուանն:

15 Իսկ եթէ ոչ վնասեսցի և ոչ մեռանիցի, զխալիանածոյն և զբժշկութեանն տուժեսցի. զիտելով և ոչ զգուշացուցանելով՝ զբաւանդակն, և ոչ զիտելով և զգուշացուցանելով՝ զկէսն:

Իրաւացի կարծեմ յամենայն ոչ վնասեալսն և ոչ մեռեալսն զխալիանածոյն և զբժշկութեանն զի տուժեսցի:

20 Իսկ զապաշխարութեանն յամենայնսն տեսցին վարդապետք, զի աստ միայն զդատաստանին փութամք հատուցանել զիրս, զի հարկաւորաբար զիրն հայցէ զիրս դատաստանի:

Գ Լ Ո Ւ Խ Ը Բ

ՎԱՍՆ ԳՐԱՍՏԻՑ, ԹԷ ՀԱՐԿԱՆԵՆ ԶՈՔ ՅԻՐՈՑՆ

25 Եթէ ծառայ, կամ կին, կամ աղախին, կամ ուստր, կամ դուստր և կամ այլ ոք յիրոցն սպանաւ կամ վնասեցաւ, թէ անզիտանալով և կամ զգուշացոյց՝ անպարտ լիցի ի դատաստանէ: Իսկ եթէ իւրքն բողոքեցին, և նա ոչ եբարձ ի միջոյ և ոչ զգուշացոյց, դատաստան լիցի ի վարդապետաց՝ զապաշխարութիւն սահմանել զկամաւորի և զակամայի:

Ս: այդ այդոցիկ իրաւունք կարծին:

Գ Լ Ո Ւ Խ Ը Գ

30 ՎԱՍՆ ԴՈՂՈՑ ՈՉԵԱՐԱՑ ԵՒ ԱՅԼՑԵՂ ԱՆԱՍՆՈՅ ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ

Իսկ եթէ զողասցի ոք արջառ կամ ոչխար, թէ սպանցէ կամ վաճառեսցէ, հինգ արջառ ընդ միոյ արջառոյն տուժեսցի, և շորս ոչխար՝ ընդ միոյ ոչխարին: Ապա թէ ոչինչ գտանիցի առ նմա, վաճառեսցի փոխանակ զողութեան իւրոյ: Իսկ եթէ ըմբոնեսցի, և զտցի ի ձեռս նորա յարջառոյ 35 և յիշոյ մինչև ցոշխար կենդանի, կրկին տուժեսցի<sup>161</sup>:

<sup>161</sup> Եւք, ԻԲ, 1, 3, 4

Յայտնի է դատաստանս, զի զկորուսեալս հինգ և շորս հրամայէ հատուցանել, և զոչ կորուսեալս՝ միայն կրկին: Եւ զայս իրաւունք Օրինացս ըստ այսմ սլահեսցուք:

Գ Լ Ո Ւ Խ Հ Գ

5 ՎԱՍՆ ՈՐ ԶՏՈՒՆ ՊԱՏԱՌԵՆ ԳՈՂՔ

Իսկ եթէ յական գտցի զոդ և խոցեալ մեռանիցի, շէ այն նմա ի սպանութիւն: Ապա թէ արևն ի վերայ նորա ծագեսցի, մահապարտ է, փոխարէն մեռցի<sup>162</sup>:

10 Զի ընդ խաւար զիշերոյ անգիտացեալ, ոչ համարի մեղս սուրբ Օրէնքն, իսկ ընդ լուսոյ ծագիլն՝ իբր կամաւոր սպանող դատի իրաւամբք, զի մարդագողաց հրամայեցաւ սպանանիլ, և մեզ կամաւորի կամ ակամայի ապաշխարութիւն սահմանեսցի, և փրկանք լիցի, որպէս ցուցեալ է<sup>163</sup>: Եւ զողունն կորուսեալ՝ շորրորդ հատուցի, և ոչ կորուսեալն՝ կրկին, որպէս յայլսն<sup>164</sup>:

15 Գ Լ Ո Ւ Խ Հ Ե

ՎԱՍՆ ԳՈՂՈՅ ԵԿԵՂԵՑԵԱՅ

Զեկեղեցոյսն զողացեալ և կորուսեալ կամ վաճառեալ, որոց ոչ իցէ դարձ, հինգերորդ հատուցէ, և զոչ կորուսեալն՝ կրկին: Եւ զապաշխարութիւնն եցոյց կանոնք:

20 Գ Լ Ո Ւ Խ Հ Զ

ՎԱՍՆ ՈՐ ԶԱՐՏ ԵՒ ԶԱՅԳԻ ԱՐԱԾԵԼ ՏԱՆ ԱՆԱՍՆՈՅ

Եթէ արածել տայ ոք զսուր կամ զայգի խաշանցն, յիւրմէ անդոյ անտի տուժեսցի ըստ արդեանն: Ապա թէ զամենայն իսկ անդսն արածիցէ, զընտիր կողմն այդոյ խըոյ տուժեսցի<sup>165</sup>:

25 Եւ այս ըստ արդեանն դարձեալ լիցի իրաւամբք, և այս հաստատեսցի դատաստան ըստ մեզ:

Գ Լ Ո Ւ Խ Հ Է

ՎԱՍՆ ՈՐՔ ԱՅՐԵՆ ՀՐՈՎ ԶՎԱՍՏԱԿԱՍՆ

30 Իսկ եթէ ելանիցէ հուր և գտանիցէ փուշ և ընդ նմին զվաստակ այրիցէ՝ կամ զկալ, կամ զօրան, կամ զանդ, տուժելով տուժեսցի՝ որ զհոպն հանեալ իցէ<sup>166</sup>:

162 Ելք, ԻԲ, 2, 3  
163 Տե՛ս հողվ. ՄԲ, ԾԸ  
164 Տե՛ս հողվ. ՀԴ  
165 Ելք, ԻԲ, 5  
166 Ելք, ԻԲ, 6

Եւ զայս դատաստան քննութեամբ հրամայէ սուրբ Օրէնքս Աստուծոյ դատել, թէ ո՛ր արդեօք հանեալ հուրն եղև՝ մե՞րձ թէ հեռի, յանտա՞ռս թէ ի դաշտի, և յումմէ՛ ի բարեկամէ՞ թէ ի թշնամոյ, պատահմ՞ամբ թէ կամաւ, ման՞ուկ թէ ծեր, և այլ այսպիսի, զի զայս յայտ առնէ տուժելով տուժիլն: Եւ մեզ այսոցիկ հետեւելի է: Զի թէ կամաւ իցէ, կրկին տուժեսցի: Ապա թէ որ մերձ ի կալ կամ յօրան հանիցէ հուր և ոչ զգուշացեալ շիջուցէ, զբաւանդակն տուժեսցի, իսկ եթէ ի հեռաստանէ ի դաշտէն զայցէ՛ զկէս վնասուն և որ ինչ այսոցիկ հետեւին: Նմանապէս թէ յանասնոց այրիցի, կամ ի մարդկանէ, կամ տուն, կամ այլ ինչ ի շինուծոց, կամ հանդերձ և որ ինչ նման սոցին, այնսքերք և զայս գատեսցեն:

#### Գ Լ Ո Ւ Խ Է Ը

ՎԱՍՆ ՈՐ ԻՐՔ ՏԱՆ ՊԱՀ Ի ՄԱՐԴ, ԵՒ ԿՈՐՈՒՅԱՆԷ ԿԱՄ ԳՈՂԱՆԱԼ ՏԱՅ

Իսկ եթէ որ ընկերի իւրում տացէ արծաթ կամ այլ ինչ կարասի զիւր յաւանդ, և զողացցի ի տանէ՛ առն, եթէ գտցի սր զողացան՝ կրկին տուժեսցի, ապա թէ ոչ գտցի որ զողացան, մատիցէ տէր տանն աւաջի Աստուծոյ և երդուիցէ, թէ իւր շիցէ նենգեալ ամենեկին զաւանդ ընկերի իւրոյ: Հստ ամենայն վնասակար բանի՛ յարջառոչ և չիշոյ, յաշխարէ և ի հանդերձոյ և յամենայն կորստենէ, յորում վնասակարութիւն առնիցեն, որ զինչ և իցէ՛ առաջի Աստուծոյ եկեսցեն ի դատաստան երկոցունց, և որ սք ի նոցանէ լմբռնեսցի ի ձեռն Աստուծոյ, կրկին տուժեսցի ընկերի իւրում<sup>167</sup>:

Անփոփոխ և այս դատաստան պահելի է: Գողն դոեալ՝ կրկին տուժեսցի: Եւ երզման ցուցեալ է օրինակն մեզ, և երպուեալ՝ ոչ տուժի: Եւ որ սք ըմբռնի՛ կրկին տուժի, կամ զի սուտ երգուաւ՝ յայտ եղև, կամ զի ոչ երգուեալ՝ ցուցաւ սուտ լինել, իսկ միսն՝ զի կրպարասոզ եզև սուտ:

#### Գ Լ Ո Ւ Խ Է Ք

ՎԱՍՆ ՊԱՀԵՍՏԻՑ ՉՈՐՔՈՏԱՆԵԱՅ

Եթէ տացէ որ ընկերի իւրում էշ, կամ եզն, կամ սշխար և կամ այլ ինչ անասուն ի պահեստ, և բեկցի, կամ մեռցի, կամ գերի վարեսցի, և ոչ սք պիտասցէ, երդումն Աստուծոյ լիցի ի մէջ երկուցն. եթէ նենգանօք ինչ ոչ իցէ ևրթեալ ամենեկին ընդ աւանդ ընկերի իւրոյ, ապա յանձն առցէ սէրն նորա, և մի՛ տուժեսցի: Իսկ եթէ զօղութեամբ զողացցի ի նմանէ, տուժեսցի տեառն նորա: Ապա թէ զազանաբեկ լիցի, ածցէ գտէրն ի գէշ անդ և մի տուժեսցի<sup>168</sup>:

Յոյժ իրաւամբք և զայս կալցուք զատաստան, զի ի պահեստ տալ վարձու է: Յաղագս որոյ զգողօնն հրամայէ տուժել, իսկ զաւանդն՝ ոչ ևս:

<sup>167</sup> Ելք, Իբ, 7—9.

<sup>168</sup> Ելք, Իբ, 10—13.

Գ Լ ՈՒ Խ 2

ՎԱՍՆ ՈՐ ԱՌՆՈՒ ԻՐՔ Ի ԲԱՆ ԵՒ ՎԼԱՍԷ

5 Եթէ խնդրէ որ անօթ<sup>169</sup> յընկերէ իւրմէ և վնասուցէ, կամ մեղցի և կամ դերի գնացէ, և տէր նորա ոչ իցէ ընդ նմա, տուժելով տուժեցցի, ասլա թէ տէրն նորա ընդ նմա եղիցի, ոչ տուժեցցի. ասլա թէ ընդ վարձու տուեալ իցէ, ընդ վարձուց իրոց եղիցի նմա<sup>169</sup>:

Տուժելով տուժելն ճշգրտիւ քննութեամբ լիցի: Ըստ մեղոց եղիցին և այս:

Գ Լ ՈՒ Խ 2Ա

10 ՎԱՍՆ ՈՐ ԶԿՈՅՍ ԽՕՍԵԱԼ ԽԱՐԵՍՅԵՆ, ՄԱՍՁԳ

Եթէ խարեացէ որ զկոյս խօսեցնալ<sup>170</sup> և ննջեցէ ընդ նմա, վարձանօք վարձեցէ զնա ի կնութիւն իւր: Եւ եթէ ոչ առնուցու յանձն հայրն սալ զնա նմա ի կնութիւն, տուժեցցի արծաթ հօր նորա, որպէս իցեն վարձանք կուսից<sup>170</sup>:

15 Գիտելի է և դայս դատաստան, զի խարեալ և հաւանեալ ոչ մեռանին, թէ ոչ և խօսեալ է, որպէս զայն, որ բռնաբարիցէ զխօսեալ, այլ հրամայէ վարձանօք վարձել, զի և ոչ հաւանութեամբ և իօսիւք ծնողացն է վարձելիք, այլ տուրք կամօք, և զոչ հաւանիլ հօրն՝ վարձիլ որպէս օրէն է կուսից հօր հայցել. և այս է տուժիլն:

20 Իսկ ըստ կանոնաց<sup>171</sup> զնոյն հրամայէ առնուլ կին, ընդ որ հաճեցան: Ասլա թէ ոչ է աղջկանն հայր կամ մայր և կամ նոյն կամիցի, ըստ վարձանին, զոր սովոր են առնուլ ծնողք կուսիցն, տուժեցցի:

Ասլա թէ երիտասարդն կամ իւրքն ոչ կամին առնուլ, կրկին լիցի տուժն: Եւ տուժն՝ ծնողացն և ոչ տերանցն՝ ըստ օրինացն:

25 Գ Լ ՈՒ Խ 2Բ

ՎԱՍՆ ՈՐ ԻՐՔ ՏԱՆ Ի ՓՈՆ

Եթէ արծաթ փոխ տացես եղբօր քում, որ աղքատն իցէ առ քեզ<sup>172</sup>, մի՛ ճեպհացես զնա և մի՛ արկանիցես նմա տոկոսիս<sup>172</sup>:

30 Հին կտակարանքն և նորս յայտասիկ միաբանին՝ ի բաց բառնալ զվաշխ և զտոկոսիս<sup>173</sup>, Ոչ թէ աստ զտոկոսիս յիշատակելով՝ զվաշխ թողացուցանէ, զի զծայրն բտոնալով ընդ նմին և զարմատն բառնայ: Եւ որ ինչի նոր կտակարանքս է սաստն<sup>174</sup>, աւելորդ է, իբր դիտողաց, երկրորդել, զի թէ Օրէնքն ոչ հրամայէ ճեպել, ո՛րչափ և նորս: Եւ փոխ ասացաւ, զի անդրէն հատուցի:

169 Ելք, ԻԲ, 14—15

170 Ելք, ԻԲ, 16—17 (ըստ Ս. Պետրբուրգի 1817 թ. հրատարակութեան)

171 Տե՛ս Կանոնք Կղնմալ ԿԲ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 91

172 Ելք, ԻԲ, 25

173 Ելք, ԻԲ, 25: Ղևտ., ԻԵ, 36: Բ Օրին., ԻԴ, 19 և այլուր: Ղուկ., 2, 34—35 և

այլուր: 174 Տե՛ս Ղուկ., 2, 34, 35

Արդ, իրաւունք դատաստանի լիցին՝ ներմամբ առնուլ զգլուխն, և վաշխ լիցի հատուցումն ի հանդերձեալն: Ապա թէ կար իցէ փոխառողին, տացէ փոխատուին զնոյնն՝ զլուխն մնալ առ նմա զնոյնչափ. և աստ բստ կարի լիցի, զի Աստուծոյ իսկ ինքն է դատաստանդ՝ ոչ առնուլ վաշխ և տոկոս:

Եւ զիտելի է, զի թէ ոք զդատաստանն Աստուծոյ թիւրէ, վնասէ զհոգին՝ ի հանդերձեալ հատուցմանէն զրիւնով:

Ապա թէ ոք պատճառէ ոչ հատուցանել անվաշխն, դատ լիցի, ի հասանելն զլիւտն՝ թողութիւն լիցի:

Եւ որդոց, զկնի մահուան հարցն, մի լիցի զվաշխ հատուցանել, բայց միայն զզուլսքն, զի բնաւին ոչ է բստ իրաւանց: Եւ այլ օրինադրութիւն է, միանգամայն և դատաստան:

### Գ Լ ՈՒՆ Զ Գ

#### ՎԱՍՆ ԳՐԱԻՅՑ

Եթէ ոք ի զրաւ առնուցու զուրուք զտուն, կամ զայգի, կամ զհող, կամ զայլ ինչ աշխարհի և պատահի յամել, զզլուխն որքանութեան առեալ անվաշխ՝ անզրէն դարձուցէ զգրաւն: Եւ թէ լիցի աւելի կերեալ, և զայս ևս հատուցէ: Եւ զոր ինչ ծախեալ իցէ ի նմանէ, ի զլուխ իւր հաշուեսցի, յորժամ յաղագս անձեռնահասութեան տեառն շիցէ դարձանեալ զգրաւ իւր: Դոյնպէս լիցի, թէ ինչ ի կենդանեաց իցէ:

Եթէ ինչ ի հանդերձից իցէ գրաւն և ի նմանեաց սոցին, և մաշիցէ, ի զլուխն իւր լիցի պակասեալ:

Եւ զոսկեղէն և զայլ ինչ աշխարհի զգողացեալ և զկորուսեալ, և թէ շիցէ իւր նենգեալ և երդմամբ հաստատիցէ, իւրում տեառն լիցի, ապա թէ իւր նենգեալ իցէ և կորուսեալ՝ շտրեբպատիկ տուժեսցի: Իսկ եթէ ի ձեռին իցէ և ստիցէ, կրկին տուժեսցի: Իսկ յաւարի տարեալն՝ իւրում տեառն լիցի:

Զծառ հատեալ և զցանկ աշրհալ զայգոյ, զտան և զայլ ինչ զվնասու զրաւի, եթէ տեառն պատճառաւ իցէ, իւրում տեառն լիցի, ապա թէ առ որում գրաւն իցէ՝ այնմ լիցի:

Զվաշխապար վնասեալն և զբեկեալն յանասնոց ի զլուխ իւր կալցի, և զհասարակաց զմեռեալն՝ իւրում տեառնն:

Եթէ Օրէնքն զգրաւ ոչ տայ օթել<sup>175</sup>, ո՛րչափ ևս հրաժարեցուցանէ և ի վաշխից գրաւից:

35

### Գ Լ ՈՒՆ Զ Գ

#### ՎԱՍՆ ԱՅՐԵՑՈՂԱՑ ՏԱՆ

Եթէ կամաւ ոք հոր դիցէ տան և ըմբռնեսցի, որ եղն զհուրն, տեսցեն՝ զի թէ ի մարդկանէ մեռցի ի հուրն, խրատ աոցէ ի ձեռն, թէպէտ և մահու արժանի է ըստ Օրինացն<sup>176</sup>, թերևս ապաշխարութեան հասանիցէ:

<sup>175</sup> Տե՛ս Ելք, ԻԲ, 26: Բ Օրին., ԻԳ, 13

<sup>176</sup> Տե՛ս հոգվ. 2է

Եւ տուժ լիցի. թէ կարող իցէ՝ զբաւանդակն պահանջեացի արիւն, ապա թէ ոչ՝ ըստ կարի լիցի: Եւ տուժին խրատ ոչ է, ոչ աստ և ոչ չալսն, այլ անատակին խրատ և ոչ է տուժն ի դէպ. ըստ արժանոյն զխրատն արասցեն, այսինքն՝ ըստ պատշաճին:

5 Իսկ թէ յանասնոց իցէ, շորեքպատիկ հատուցցի: Ապա թէ ամբար խոտոյ, կամ օրան կամ յայսպիսեացս՝ կրկին լիցի տուժն: Նոյն լիցի ցանկոյ և նմանեաց նորին: Այսպէս՝ հանդերձիցն և նոցին նմանեացն:

Գ Լ ՈՒ Խ 2 Ե

ՎԱՍՆ ՏՆԿԱՀԱՏԱՅ

10 Շարժեալ ոք սատանայական ցասմամբ հարկունիցէ զտունկ ուրուք, և յայտ ճշգրտիւ գայցէ, դատաստան լիցի. դնել զտունկն հատանողին և յիրոցն զամսն, ցորքան անպտուղ իցէ տունկն: տուժիլ նովին շափովն, ապա թէ իւր շիցէ՝ ըստ գնոյն լիցի: Զի Յրէնքն և ոչ զթշնամեացն հրամայէ, այսինքն՝ զայլազգեացն, հատանել զտունկն<sup>177</sup>: Եւ այդ այսպէս լիցի իրամբք:

15

Գ Լ ՈՒ Խ 2 Զ

ՎԱՍՆ ՈՐ Ի ՊԱՀ ԻՐՔ ՏԱՆ, ԵՒ ԶՈՒՂՈՒԹԵԱՆ, ԵՒ ՈՐ ԽԷԷ  
ԶԸՆԿԵՐԻՆ, ԿԱՄ ԳՏԱՆԷ ԶԿՈՐՈՒՍՏ ԵՒ ԿԱՄ ԿՈՏՐԷ

10 Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. անձն ոք եթէ մեղիցէ և արհամարհելով անարգիցէ զպատուիրանս Աստուծոյ, և սորիցէ ընկերի իւրում, և եթէ եզիտ կորուստ ինչ, և ժխտիցէ ի վերայ նորա և երդնուցու սուտ վասն միոյ իրիք յամենայնէ, զոր և անիցէ մարդ առ ի մեղանշելոյ նորա նօքօք, և եղիցի յորժամ մեղանշիցէ և յանցանիցէ, հատուցէ զյափշտակութիւնն, զոր յափշտակեաց, և զվնասն, զոր վնասեաց, կամ

25 զաւանդն, որ աւանդեցաւ նմա, կամ զկորուստն, զոր եզիտ: Յամենայն իրաց, զոր երդուաւ սուտ, տուժեացի զգլուխն և զհինգերորդ մասն յաւելցէ ի նոյն, և ոչր իցէ՝ հատուցէ նմա յաւուր, յորում յանդիմանեացի<sup>178</sup>:

Աստուածախօսութիւնս դատաստանի հաստատուն և յեկեղեցի կացցէ, քանզի նոյն իսկ է Տէառն: Բայց խոյին քաւութեամբ<sup>179</sup> եցոյց, եթէ որք

30 միանգամ իրք դատաստանի են և տուժին, պէտք են և ապաշխարութեան: Եւ քանզի կանոնք և դատաստանք ի միմեանց այնու բաժանին, զի ծածուկ եղեալ յանցանս, որոց և պէտք իցեն տուժի, հրամայէ առնել ողորմութիւն, իսկ դատաստան թէ և տուժէ, ոչ բառնայ զապաշխարութիւն: Սակայն ներմամբ և փորձիւ լիցի իմաստնոց, յադադս որոյ յամենայն իրս դատաս-

35 տանի զապաշխարութիւն ի կանոնս թողաք:

<sup>177</sup> Տե՛ս Բ Օրին., Ի, 19, 20, ևսև հոդվ. Բ

<sup>178</sup> Ղևտ., 2, 1—5

<sup>179</sup> Տե՛ս Ղևտ., 2, 6

Գ Լ Ո Ւ Խ Զ Է

ՎԱՍՆ ՈՐ ԶԵԿԵՂԵՑՈՅ ՊՏՈՒՂ ԱՐԳԵԼԵՆ ԵՒ ՈՉ ՏԱՆ

Եւ մարդ, որ յանգէտս կերիցէ զսրբութիւնսն, յաւելցէ ի նոյն զհինդ-  
 երորդ մասն և տացէ զսրբութիւնն ցբահանայն: Եւ մի՛ պղծեսցէ զսրբու-  
 5 թիւնն Իսրայէլի, զոր զատուցին նոքա Տեառն, և ածիցեն ի վերայ իւրեանց  
 անօրէնութիւն յանցանաց՝ ուտելովն իւրեանց զսրբութիւն սրբութեանցն,  
 զի ևս եմ Տէր, որ սրբեմ զնոսա<sup>180</sup>:

Աստուածային դատաստանս նշանակեալ անփոփոխ կացցէ յեկեղեցի  
 սուրբ:

10

Գ Լ Ո Ւ Խ Զ Ը

ՎԱՍՆ ՅԻՇՈՑՆԱՏՈՒԱՅ

Եւ ել սրդի կնոջ Իսրայէլացոյ, և նա էր որդի առն Եգիպտացոյ ի  
 մէջ որդոցն Իսրայէլի, և կոուեցան ի բանակին՝ որ յԻսրայէլացոյ անտի  
 էր՝ և այր մի Իսրայէլացի: Եւ անուանեալ որդի<sup>(37)</sup> կնոջն Իսրայէլացոյ  
 15 զԱնունն՝ անէծ. և ածին առ Մովսէս: Եւ անուն մօր նորա Սաղամիթ,  
 դուստր Դաբբեայ, յազգէ Դանայ: Եւ ածին զնա ի պահ՝ զատել զնա  
 հրամանաւ Տեառն: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ, հանէք զայրն,  
 որ անէծ, արտաքոյ բնակին, և դիցեն, որք լուանն, զձեռս իւրեանց ի  
 վերայ զլիտջ նորա, և քարակոծեացեն զնա ամենայն ժողովուրդքն: Եւ ընդ  
 20 որդիսն Իսրայէլի խօսեցցիս և ասացիս ցնոսա. այր ոք, որ անիծանէ  
 զԱստուած, մեզս ընկալցի, զի անուանեաց զանուն Տեառն, մահու մեռցի,  
 քարընկեցութեամբ քարկոծեացեն զնա ամենայն ժողովուրդքն. եթէ պան-  
 դուխտ իցէ և ևթէ բնիկ, յահուանել նորա զանուն Տեառն՝ սատակեսցի:  
 Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, և հանին զայրն, որ անէծն.  
 25 արտաքոյ բանակին, և քարկոծ արարին զնա ամենայն ժողովուրդքն  
 քարամբբ: Եւ որդիքն Իսրայէլի արարին՝ որպէս պատուիրեաց Տէր Մով-  
 սիսի<sup>181</sup>:

Իրաւացի է զզատաստանս զայս յեղափոխել աշտպէս. եթէ ոք, շար-  
 ժեալ ի սատանայէ, զանունն Քրիստոսի հայհոյէ, կամ զխաչ, կամ զեկե-  
 30 ղեցի, կամ զքահանայ ի կոիւն իւրեանց, և կամ զմկրտութիւն, ևթէ միւսն  
 յաչազգեաց իցէ, որպէս և անդ պատահեցաւ, եթէ քարկոծել և եթէ աչտով  
 օրինակաւ սպանանել արժան է. ապա թէ քրիստոնեայք՝ մահու զատաս-  
 տան լիցի, քննելով զպատահումն:

Գ Լ Ո Ւ Խ Զ Թ

ՎԱՍՆ ՈՐ ՍՊԱՆԱՆԵՆ ԶԱՆԱՍՈՒՆ

35

Եւ որ հարկանէ զանասուն, անձն ընդ անձին տուծեսցի<sup>182</sup>:  
 Ըստ իւր յայտնի տեսութեանն և ի մեզ կացցէ զատաստանդ աստուա-  
 ծային: Սակայն դատաստան կոչի, իբր զի քննեսցի մախանօք հարեալն:

180 Ղևտ., ԻԲ, 14—16  
 181 Ղևտ., ԻԳ, 10—16, 23  
 182 Ղևտ., ԻԳ, 18

## Գ Լ Ո Ւ Խ Ղ

## Վ Ա Ս Ն Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ Ա Ց Ե Ի Գ Ն Ո Ղ Ա Ց Զ Ե Բ Կ Ի Բ

5 Եթէ աղքատացի եղբայր քո, որ ընդ քեզ է, և վաճառեսցէ ի կալուածոց իւրոց, և եկեսցէ մերձաւորիչն<sup>183</sup>, որ մերձաւոր է նորա, և փրկեսցէ զվաճառն եղբոր իւրոյ: Ապա թէ չիցէ ուրուք մերձաւորիչ, և ձեռնհաս իցէ, և գտանիցի նմա բաւական փրկանաց իւրոց, և համարեսցէ զամս վաճառին իւրոյ, և հատուցէ կարողն առն, որում վաճառեաց նմա, և դարձցի ի կալուածս իւր: Ապա թէ ոչ գտցի ի ձեռին<sup>184</sup> նորա բաւական առ ի հատուցանելոյ նմա, եղիցի վաճառ նորա այնմ, որ ստացան զնա, մինչև յամն թողութեան իւրոյ, և դարձցի անդրէն յամին թողութեան իւրոյ և եկեսցէ ի կալուած իւր<sup>185</sup>:

15 Ըստ Աւետարանին հրամանի առաւելութիւն ի Տեառնէ հրամայեցաւ յամենայնս, նմանապէս և՛ յիրս զատաստանի<sup>186</sup>: Եւ զի ոչ առաւելութեամբ այժմ և ոչ հաւասարութեամբ վարիմք, պարտ է մեզ փրկանօք լինել: Եթէ վասն աղքատութեան ի կալուածոց վաճառէ, եղիցին ընդ փրկանօք յազգատոհմէ իւրմէ մինչև յեւթն ամ: Ըստ Օրինացն զեւթն ամն եղաք<sup>187</sup>, բայց առաւելու որքան կար է՝ արժան է, զի ոչ թողու ազատ բոտ Օրինացն, զոր ի դէպ էր թողուլ նմա ազատս ըստ Օրինացն: Իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յեւթն ամին, և անդ հաստատեսցի վաճառն: Ապա թէ ըստ այլոց 20 պատճառի վաճառն իցէ, ի նմին ամին հաստատեսցի:

## Գ Լ Ո Ւ Խ Ղ Ա

## Վ Ա Ս Ն Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ Ա Ց Ե Ի Գ Ն Ո Ղ Ա Ց Զ Տ Ո Ւ Ն

25 Եթէ վաճառիցէ որ տուն բնակութեան ի պարսպաւոր քաղաքի, եղիցին փրկանք նորա մինչև ի կատարել տարոյ ատուրցն վաճառին իւրոյ: օրաթուի լիցի փրկանք նորա: Ապա թէ ոչ փրկեսցի մինչև ընուցու տարի նորա ողջոյն, հաստատեսցի տունն, որ իցէ ի պարսպաւոր քաղաքի, հաստատութեամբ ստացողին իւրոյ յազգս իւր և ելցէ<sup>188</sup> ի թողութեանն<sup>186</sup>:

Եւ զվաճառ փարթամաց թէ ոմանց աղքատաց վաճառէ սոհմանաւ, վասն ողորմութեան դարձուցանելի է ըստ պայմանին:

30 Իսկ տունք, որ յաւանս իցեն, որոց պարիսպ ոչ իցէ շուրջանակի, ընդ անդս երկրի համարեսցին և հանապազ ընդ փրկանօք լիցին և ի թողութեանն ելցեն<sup>187</sup>:

35 Եւ պայս զատաստան այսպէս առցուք. զի թէպէտ և ամ թողութեան ոչ է առ մեզ, սակայն զամսն փրկանաց հաստատուն կալցուք, պակասաւր յառաւելութենէ. նմանապէս և՛ զաւուրսն:

183 Ղևտ., ԻԵ, 25—28

184 ՏԵՍ Մատթ., Ե, 21, 22. է, 2: Յովհ. է, 24

185 ՏԵՍ Բ Օրին., ԺԵ, 1, 2, 9, 12 և այլուր: Ելք, ԻԱ, 2, 3, ԻԳ, 10, 11: Ղևտ, ԻԵ, 8—15

186 Ղևտ., ԻԵ, 29—30

187 Ղևտ., ԻԵ, 31

Գ Լ Ո Ւ Խ Ն Ղ Բ

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԳՆԵՆ ԵՒ ԾԱԽԵՆ ՏՈՒՆ

Եւ ի քաղաքս Ղևտացոցն տունք, որ ի քաղաքսն կալուածոց նոցա  
 իցեն, ընդ փրկանօք լիցին հանապաղ ի մէջ Ղևտացոց: Եւ որ որ փրկեսցէ  
 5 ի Ղևտացոց անտի, ելցէ վաճառ տանց քաղաքաց կալուածոց նոցա ի թո-  
 դութեան, զի տունք քաղաքաց Ղևտացոց՝ կալուածք նոցա են ի մէջ Իսրա-  
 յէլի որդոցն: Եւ ազարակքն, զասուցեալք ի քաղաքս նոցա, մի՛ վաճառես-  
 ցին, զի կալուած յաւիտենական է այն նոցա<sup>188</sup>:

Պարտ է և զայս զատաստանս այսպէս իմանալ. զի քահանայք զտուն  
 10 բնակութեան իւրեանց վաճառելիշխան լիցին առ քահանայս, և միշտ ընդ  
 փրկանօք լիցին առաւելութեամբ, քան աշխարհականաց վաճառք: Եւ  
 ազարակք և այլ ստացուածք, զասուցեալք յեկեղեցի, մի՛ վաճառեսցին,  
 զի կալուած է յաւիտենական այն նոցա: Ըստ այսմ եղիցի և այս իրա-  
 տունք, թէ և ամ թողութեան առ մեզ ոչ է: Նաև յամենայն զատաստանսդ  
 15 ծախք ստացողին տեսցին ի փրկելն:

Գ Լ Ո Ւ Խ Ն Ղ Գ

ՎԱՍՆ ԶՐԱՂԱՅԱՅ

Եւ յադագս աղքատութեան վաճառեալ ջրաղացք զամ մի ընդ փր-  
 կանօք լիցին ինքեանց և ազգականաց, իսկ եթէ այլազո՞ ի նմին ամի  
 20 հաստատեսցի:

Գ Լ Ո Ւ Խ Ն Ղ Դ

ՎԱՍՆ ՈՐՔ ԳՆԵՆ ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԿԱՄ ԾԱԽԵՆ

Եւ զչորքոտանիս վաճառել՝ Երից վկայից սուաջի հաստատեսցի  
 այսոքիկ, զի մի գողունի իցէ, և մի հնակաղ և հնահազ, և մի գիշերա-  
 25 կոյր, և մի անդնալ ի կամրջի, և մի հարկանող ոտիւր: Յայսցանէ զտեալ  
 ի բեռնակիրս<sup>189</sup>, բայց ի գողունէից, մինչև յամ մի անդրէն դարձցի կամ ի  
 զնոյն անկցի ըստ արժանոյն և կամ տեսուն հաստատեսցի: Իսկ գողունին  
 յամենայն ժամ դարձցի. եթէ յայտնեալ՝ առաջինն առցէ տէրն, և զզինն ի  
 վաճառողէն առցէ՝ որ զնեացն: Այլ արտաքոյ տայմ պատճառաց՝ մինչև  
 30 յեւթն օր փորձի և վճիռ հատցի, և թէ ոչ դարձուցէ՝ հաստատեալ լիցի  
 վաճառն: Իսկ վաճառողին նոյն կացցէ սահման ըստ արժանոյն վաճա-  
 ռել: Եւ յայսն զնոյն պահել ի վաճառսն զսահման, որպէս վաճառողին,  
 նմանապէս և զնողին:

Գ Լ Ո Ւ Խ Ն Ղ Ե

ՎԱՍՆ ՈՐՔ ԵԶԻՆՍ ԾԱԽԵՆ

Եւ զայս ևս վկայիւք հաստատեսցեն, որք վաճառեն զեղինս, զի փորձ  
 ի հերկ, և ի սայլ, և ի կալ իցէ, մի հնակաղ, և հնահազ, և գիշերակոյր,

<sup>188</sup> Ղևտ., ԻԵ, 32—34  
<sup>189</sup> Տե՛ս նաև հոդվ. 2

և հարկանող, և մի գողունի: Մինչև յամ մի լինել այդոցիկ փորձի՝ դարձցի, և գողունին՝ յամհնայն ժամ. և յայլսն եւթն օր փորձեսցի: Իսկ անմղիցն յայլսն՝ դարձցի, բայց ի լծոյ, ի հերկ, և ի սայլ, և ի կալ, որոց փորձն անյայտ է կանխաւ<sup>190</sup>:

5

Ք Լ Ո Ւ Ն Չ Զ

Վ Ա Ս Ն Ո Ր Կ Ո Վ Ծ Ա Խ Ե Ն

Նմանապէս և յաղաղս զկողմս վաճառելոյ զայլսն, վկայիք հաստատեսցէ ընդ այնոսիկ, զի ազգաւ յիրաքանչիւր ամի ծնանիցին, և յաղաղս սոցին յամի դարձցին՝ ըստ արժանոյն զգինն հաստատելով և կամ  
10 տեառն լինելով: Եւ յայլսն փորձի եւթն օր:

Ք Լ Ո Ւ Ն Չ Է

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Զ Մ Ե Ղ Ո Ւ Ք Ծ Ա Խ Ե Ն Փ Ե Թ Ա Կ Ո Վ

Եւ մեղուք վաճառեալ յաշնան ըստ մեղեր, զոր ունի, հաստատեսցի սերկանն<sup>(91)</sup>:  
15 Իսկ ըստ պիտոյից անկշիռ վաճառեալ կամ կշռաւ նովին փեթակաւ և առեալ արտաքս և պակաս գտեալ, լցցի կշիռն ի վաճառողէն, տպա թէ ոչ՝ մի՛ լիցի այդ պատիր վաճառ: Իսկ առաւել գտեալն, ոչ յոյժ և ոչ խաբէութեամբ, մի՛ դարձցի, զի վասն յուսոյ զորին զնէ:  
Եւ զարնան սերմանոց վաճառեալ և եղեալ ի մեղուց, մինչև ի տասն  
20 օր կամ քսան փորձի. վճիռ վկայիք հաստատեսցի, որպէս զի մտանելն և ելանելն ուղիղ ցուցցի, հաստատեսցի վաճառն: Ապա թէ թիրութեամբ յաւուրսն վճոին կարծիս լիցի՝ զողութեան և մահու առաջնորդին, ի վաճառողն դարձցի: Զկնի կարծեացն բառնալոյ սուրօցն՝ զնողին այդպիսի վնասդ լիցի: Ի կերակրոյ մեռեալն և յամի անպտուղ ելեալն՝  
25 զնողին լիցի:

Ք Լ Ո Ւ Ն Չ Ը

Վ Ա Ս Ն Ո Ր Կ Ա Ր Ա Ս Ծ Ա Խ Ե Ն Կ Ա Մ Ա Յ Լ Ց Ե Ղ Ա Ն Օ Թ

Իսկ կարաս վաճառեալ և զնեալ հաստատեսցի, յորժամ լցեալ ողջ զարկեալն պահիցէ յինքն զգինին: Ապա թէ կարծիք բեկման ի թրծմանէ  
30 իցէ, և զգինին կորուսցէ, միմիայն զկարասն գործողն առնու, այլ և զկէս վնասուն տուժեսցի: Ապա թէ անկարծիս իցէ ի բեկմանէ, և ի թաղելլն եղև կարծիսն, անտոյժ լիցի վաճառողն: Այլ եթէ յայդմանէ երկբայեսցի, զամանն միայն վաճառողն տուժեսցի:

Այդ ըստ այդմ լիցին ի փոքունսն և ի մեծամեծսն:

190 Տե՛ս նաև հոգվ. ՉԳ

Գ Լ Ո Ւ Խ Գ Թ

ՎԱՍՆ ՈՐ ԱՅԳԻ ԵՒ ԴՐԱՆՏ ԿԱՊԼԵՆ

Վաճառել և գնել բազմաց հանդիպի զպատուդ յամի՛ յուսով շահի՛:  
 Եւ թէ լիցի պակասիլ, արժան է վաճառողին ամբողջ զզուլին պահել,  
 5 ոչ միայն յաղագս յուսոյն, այլ վասն աշխատութեանն:  
 Եւ եթէ շահիցի, որ շիցէ խաբէութեամբ, մի՛ զղշացեալ վաճառողն  
 զարձուցէ, զի վաճառք յաջողմամբ բազմապատիկ շահս տան:  
 Սակայն աւուրք փորձի երեք վկայիք լիցի տասն օր. և կատարածն  
 ցուցաւ ըստ իրաւանց:

10

Գ Լ Ո Ւ Խ Ծ

ՎԱՍՆ ԶՐԱՂԱՅԱՅ ՎԱՐՁԵԼՈՅ

Եւ զայսպիսիս ըստ գլխոյ՝ առեալ՝ վկայիք հաստատեսցի: Շահին  
 անզեղջ իցէ սուողին, և մի՛ տացէ փոխանակ շահին տուգանս:  
 Եւ իւր լիցի պատրաստել զկազմուածն ամենայն և վնասք՝ ըստ կարգի  
 15 իրաց եղեալ, իսկ յանպատրաստութենէ եղեալ՝ առողին լիցի՛ ի քար, ի  
 նաւ, յերկաթ և յայլսն ամենայն, և զողացեալն:  
 Իսկ այրեալն, եթէ ի պատճառս տեսոն իցէ՛ նմա լիցի, և թէ ի  
 պատճառս առողին՝ նմա:  
 Ըստ այսմ զատեսցի և այլն ամենայն այդպիսի, որ ինչ միանգամ և  
 20 իցէ:

Գ Լ Ո Ւ Խ ԾԱ

ՎԱՍՆ ՈՐՔ ՀԱՅՐԵՆԻՔ ԲԱԺԱՆԵՆ ՈՐԴՈՅ

Եւ մատեան դատերքն Սաղպաադու՝ որդոյ Ոփերայ՝ որդոյ Գաղաադու՝  
 որդոյ Մաքիրայ ի գնդէ Մանասէի՝ որդոյն Յովսեփայ: Եւ այս են անու-  
 անք նոցա՝ Մաաղա, Նուա, Եղա, Մեղքա և Թերսա: Եւ կացին առաջի  
 25 Մովսիսի և Եղիազարու քահանայի և առաջի իշխանացն և ամենայն  
 ժողովրդեանն ի զրան խորանին վկայութեան և ասեն. հայր մեր մեռաւ  
 յանպատի անդ և նա ոչ էր ի մէջ ժողովրդեանն զումարելոցն առաջի  
 Տեառն ի ժողովրդեանն Կորխայ, որ վասն մեղացն իւրոց մեռաւ, և որդիք  
 30 ոչ եղեն նորա: Եւ արդ, մի՛ շնչեսցի անուն հօր մերոյ ի միջոյ ցեղի իւրոյ,  
 վասն զի ոչ գոյր նորա որդի. տուք մեզ ժառանգութիւն ի մէջ եղբարց  
 հօր մերոյ: Եւ մատոյց Մովսէս զղատաստանս նոցա առաջի Աստուծոյ:  
 Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի և ասէ. ուզիդ խօսեցան դատերքն Սաղպաա-  
 դու, տալով տացես նոցա կալուածս ժառանգութեան ի մէջ եղբարց հօր  
 35 իրեանց, և շիցես զվիճակ հօրն իւրեանց զնոքօք: Եւ ընդ որդիսն Իսրայէլի  
 խօսեսցիս և ասացես. այր ոք՝ եթէ մեռանիցի, և ուստր՝ ոչ է նորա, տա-  
 ցէ զժառանգութիւն իւր դատեր իւրում. եւ եթէ ոչ զուցէ գուստր, տաշիք  
 զժառանգութիւն նորա եղբօր իւրում. եւ եթէ ոչ զուցէ եղբայր, տաշիք  
 զժառանգութիւն նորա հօրեղբօրն իւրում. եւ թէ ոչ զուցեն եղբարք հօր

նորա, տաշիք զժառանգութիւն ընտանոյ մերձաւորի իւրոյ. ի ցեղէ նորա ժառանգեացէ զնորայն: Եւ եղիցի որդոցն Իսրայէլի այդ իրաւունք դատաստանի, որպէս հրամայեաց Տէր Մովսիսի<sup>191</sup>:

5 Անլուծանելի յամենայն հաւատացեալս եւ այս կացցէ վճիռ դատաստանի, զի իւր իսկ է հաւաստի գիտողին զամենայն իրաւունս: Զի որդոյ պարտ է ժառանգել, թէ իցէ, ապա թէ ոչ իցէ որդի, զուստրն ժառանգէ զհայրենին, այն, որ ի տանն իցէ անկարգ: Իսկ կարգեալ աղջիկն՝ երկու քոյրն մին որդոյ բաժին առցեն և ոչ կարեն ժառանգ լինել: Եւ այս յայտ անտի է, զի ոչ թողին զգաստերս Սաղաւաղու յօտար ցեղս արանց  
10 լինել, զի մի՛ ժառանգութիւնն յօտարս էլցէ:

Ապա թէ շիցէ զուստր, եղբայրն ժառանգէ:

Իսկ եթէ կարգած աղջիկն կամեսցի իւրովք որդովքն և արամբն գալ և զհայրենիսն ժառանգել, նոցա լիցի և մի՛ եղբօրն, յորժամ որդի չիցէ եղբօրն, ապա թէ ոչ կամիցի՝ գալ՝ առցէ զբաժինն իւր և եղբայրն ժառանգեացէ:  
15

Ապա թէ չիցէ եղբայր, հօրեղբայրն ժառանգեացէ:

Եւ թէ չիցէ հօրեղբայր, որ ժառանգեացէ, այլ ընտանի մերձաւոր ժառանգեացէ ի ցեղէ հօրն: Որքան մերձաւոր իցէ, հեռաւոր ընտանոյ ոչ հրամայէ. եւ՛ պեղս հօրն առնէ ժառանգ և ոչ զմօրն, մինչ ի դուստր միայն կացոյց զժառանգ լինելն:  
20

Ապա թէ հօրեղբօրն հրամայէ ժառանգ լինել, յայտ է, զի թէ հայր իցէ, նա ժառանգէ, և թէ մայր, և քոյր, և կին ոչ ժառանգեն, այլ մաստնս առնուն, որպէս և ցուցանի<sup>(92)</sup>. կնոջն՝ դանգ, և քվերն՝ դանգ և կէս, և մօրն՝ երեք թասու:

25 Այլ ընտանի մերձաւոր համարիմք, զոր Օւէնքն մինչև ցշորրորդ զարմն հրամայէ զառականս ոչ յայտնել յառնուզ կին<sup>192</sup>. զայս և ի ժառանգաւորսն պահելի է: Իսկ զկնի այնր ոչ են ժառանգք, իբրև անցանի զշորրորդ զարմն, այլ ժառանգութիւնն վիճակ լիցի զատաւորաց, որպէս և զրեալ է ի ճառս զատաւորացն ի գիրս<sup>193</sup>:

30 Իսկ եղբայրն, որ չիցէ համամայր, կէս դանգ պակաս առցէ, ընդ համահայրսն և ընդ համամայրսն ժառանգեացէ: Զայս զնոյնս և նահապետրն Աբրահամ եցոյց, զի ետ զամենայն ինչսն իւր Իսահակայ որդոյ իւրոյ և որդոց հարձիցն ետ պարգևս և արձակեաց զնոսա<sup>194</sup>: Եւ եթէ ասիցէ ոք. աստ՝ պսակ օրհնութեան և անդ՝ Քետուրս կին երկրորդ. սակայն անդ՝ տուրս, և ժառանգութիւն եղիցի սաստ, բոտ ցուցելոյդ, սակաւ պակաս. Եւ յՕրէնսն անզրանկանն տուաւ երիցութեան պատիւն<sup>195</sup>: Ըստ այսմ օրինակի և հօրեղբայրն լինիցի:

35 Յանպիմանին յաստուածային օրինացս դատաստանէ մահմետականացն դատաստանք, զի զգաստերս ժառանգ ոչ առնեն հարց, այլ որպէս ընտանիս մասնաւորեն, որոց ոչ հետեւիլի է, այլ անվրէպ՝ աստուածային օրինացս դատաստանաց իրաւամբք:

191 Թիւք, Իէ, 1—11

192 Ղևտ., ԺԸ, 6—18

193 Տե՛ս հօղվ. Ա.

194 Տե՛ս Մնունդք, Ին, 5—6

195 Տե՛ս Բ Օրին., ԻԱ, 16—17

## Գ Լ ՈՒ Խ Ծ Ֆ

## ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՈՒՍՏԵՐԱՑ ԵՒ ԴՍՏԵՐԱՑ

Եւ նախ զայս ասասցուք, զի երկու դուստր, որ այր առեալ իցեն, մի որդոյ բաժին առցեն<sup>(93)</sup>: Եւ այս վկայեալ է ի կանոնաց և յօրինաց նշանակեալ:

5 Խօսեցաւ Տէր Մովսիսի և ասէ. խօսեաց ընդ որդիսն Իսրայէլի և ասասցես ցնոսա. որ ոք ուխտիցէ ուխտս՝ տալ զզին անձին իւրոյ Տեառն, եղիցին զինք արուին, ի քսանամենից մինչև ցվաթսնամեանս, և եղիցին զինք նորա չիստն երկգրամեանս արժաթոյ ըստ սրբութեան սկեդն, և 10 իզին<sup>(95)</sup> լիցին զինք երեսուն երկգրամեան: Ապա թէ ի հինգամենից մինչև ցքսանամեանս՝ լինիցին զինք արուին քսան երկգրամեան, և իզին՝ տասն երկգրամեան<sup>196</sup>:

Նաև ի կազմածն տեսանի, զի կրկին աւուրց կարօտանայ էզն ի ծնունդն, ըստ որում թերին առաւ կող<sup>197</sup>. և անունն իսկ նշանակէ, զի 15 «կին» ըստ կիսոյն անուանի մարմնոյն: Եւ թէպէտ ի մի պատուէրդ աւելի հնզիւ է, քան զերկպատիկն զինք իզին՝ յաղազս կատարելութեան հասակին և կամ յաղազս կատարելութեան պիտոյից կարգաց<sup>(96)</sup>, սակայն ըստ կազմածին և ի միան ցուցաւ արուին կրկին լինել: Յայցցանէ հաստատին երկու դուստր մին լինել որդի ի ժառանգութիւնս: Բայց գիտելի է և զայն ևս, զի կարգեալ դստերքն երկուսն է մին որդի, այլ ոչ որ ի տանն է, զի ժառանգ հրամայեցաւ, յորմէ յայտ է, զի զորդոյ առնու զբաժին, և այլքն զկէս եղբօր առնելով ելեալքն, նմանապէս զոյզ զտանին եղբարցն, ըստ հրամանի Տեառն՝ եթէ չիցէ որդի, դուստրն ժառանգիցէ<sup>198</sup>: Այլ այդ դատեալ եզև ըստ կազմածին, եթէ զերկուս դստերս մին առնելի է 25 եղբայր, և ցուցաւ ըստ Տեառն հրամանի, եթէ ժառանգ է նման որդոյ, որ ի տանն է: Այլ կամ լիցի և զայս ըստ հաճոյից ևս ընտրել, եթէ զամենա՞յն դստերս զերկուսն մի առնելի է և եթէ զելե՞ալսն: Այլ ինձ այսպէս թուի, եթէ ելեալն ի տանէն բաժնիւ և առն եղեալն՝ երկուքն մին լեալ, զոյզ ընդ եղբօրն առնու բաժին իրով կրկին բաժնսուն, ապա որ ի տանն՝ 30 հաւասար եղբարցն ժառանգէ զհօրն: Հաստատի ըստ այսմ ուստերաց և դստերաց հաւասար լինել ժառանգութիւն հօր, ըստ որում և աստուած զոյզ ետ զժառանգութիւն արքայութեան արանց և կանանց: Սակայն աւանդապահք կարգաց եկեղեցոյ արք և ոչ կանայք են. նմանապէս թէսլէտ բաժանորդք ընդ եղբարս ժառանգութեանն քոյրք են, այլ ոչ ժառանգա- 35 պահք, յորժամ եղբարք իցեն:

Եւ եթէ հայր իցէ, կինն միայն առցէ մասն, և ոչ մայր և ոչ քոյր մասնաւորին<sup>(94)</sup>, որ և այս իսկ է:

Զի և որդի դստեր ոչ ժառանգէ և ոչ առցէ մասն, բայց թէ մինչ կենդանի իցէ՝ զրով ժառանգ առնիցէ. նոյնդ լիցի և խորթն: Սակայն 40 իշխան է կենօքն ժառանգեցուցանել զնոսա, թէ կամեսցի, իբրև զօտարս: Եւ թէ խորթն և կամ որդի դստերն ի տանն իւրում աշխատեալ իցեն, իբր վարձկանի առցեն վարձ և ոչ մասն, զի և առաքեալն ոչ ընդ որդիս համա-

<sup>196</sup> Ղևտ., Ին, 1—5

<sup>197</sup> Տե՛ս Մնունգք, Թ, 21, 22

<sup>198</sup> Տե՛ս Թիւք, Իէ, 8

րի զնոսա, ասելով՝ խորթ էիք և ոչ որդիք<sup>199</sup>: Ապա թէ որ զկանոնացն<sup>(97)</sup> ընդդէմ այսմ լիցէ, զի իբր զորդոց՝ զծնունդս նոցա հրաժարեցուցէ ի խնամութիւնս<sup>200</sup>, զիտասցէ, զի պսական ընդ մօրն ընտանութիւն եղև, և խափանի ամուսնութիւնն. այլ զի սերմ ոչ է հօրն, ոչ ժառանգէ. զի թէ  
 5 Աբրահամ և ոչ զԻր ծնունդսն արար արժանի ժառանգ լինել<sup>201</sup>, ո՞րչափ օտար ծնունդն:

Նաև ոչ եղբայր մօրն, և ոչ որդի նորա, և ոչ որդի քուերն, և ոչ մօրքոյրն, և ոչ նորին որդին և կամ հօրքոյր ոչ ժառանգեն և ոչ մասնաւորին, բայց եթէ կանխաւ ժառանգեցուցանէ:

10 Իշխան է և զծառայս ստանալ ժառանգս, թէ կամեսցի, որպէս ի կանոնսն եցոյց<sup>202</sup>. Թերևս ծառայս ստացեալ իցէ, յայտ է, թէ ժառանգս, որ ինչսն ասաց թողուլ:

Իսկ յորժամ դուտարն ժառանգէ՝ որ ի տանն իցէ, հօրեղբայր և նորին որդի ժառանգել ոչ կարեն և ոչ մասնաւորիլ. ապա թէ առն լեալ իցէ և ի ժառանգ գայցէ, հօրեղբայրն մասն առցէ դանգ, այլ ոչ որդի նորա, բայց թէ պատահի ի հարցն ժառանգութիւնսն դատաստան լինել:

15 Իսկ թէ շիցեն ուտերք և դատերք մինչ ի շորորդ զարմն, որ ի հօրէն ժառանգեսցեն, և այլք՝ ոչ ևս, և ոչ՝ ի մարցն տոհմէ:

Գ Լ Ո Ւ Ն Մ Գ

20 ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԿԱՆԱՆՑ ԶԻՐՍ ՈՐԴՈՑ ԻՐԲԱՆՑ

Սու կանանց մեռելոց նոյն լիցի դատաստան, որպէս և արանցն գկնի մահուան<sup>203</sup>. Եթէ շիցեն ուտերք և դատերք, իբրու թէ ծնեալ իցէ ուտերս և դատերս, և մեռեալ իցեն, և թէ ի բնէ անժառանգ իցէ, և թէ ընդ պսակին փութով վախճանեալ կուսութեամբ, սակայն յայդոսիկ զանազանի դատաստանն:

25 Արդ, րստ նմանութեան արանց, թէ ուտար իցէ, նա է ժառանգ մօրն, ապա թէ շիցէ ուտար կամ դուտար՝ եղբայրն, և թէ շիցէ եղբայր՝ հօրեղբայրն, և թէ շիցէ հօրեղբայր, ի ցեղէ հօրն ժառանգէ մինչև ի շորորդ զարմն, Ապա թէ հայր իցէ, հայրն ժառանգէ, և այլն՝ գոյգ է միմեանց:

30 Իսկ թէ ծնեալք իցեն մօրն, ամենայն ինչ նոցա է, որպէս և հօրն ժառանգութիւնն: Ապա թէ մեռանիցի մանուկն, ժառանգութիւնն հօրն եղև և ոչ անդրադարձի առ մայրն իբր ժառանգութիւն:

35 Ապա թէ և մայր ևս մեռանիցի, և հայր իցէ մօրն, երկուցն լիցի ժառանգութիւնն՝ հօր մանկանն և հօր մօր մանկանն. նախ գպատշաճ ոգոյ նորա. տալով՝ չերկուս բաժանեսցի:

Իսկ եթէ ի բնէ անժառանգ իցէ, ժառանգութիւնն հօրն լիցի, և թէ ոչ է հայր, այլոց ժառանգաւորացն լիցի, որպէս ցուցեալ է<sup>204</sup>: Իսկ առն մի դանդ լիցի վասն ի միասին կենակցութեան: Ապա թէ ոչ իցեն միաւորե-

199 Տե՛ս Թուղթ առ Ծբբ., ԺԲ, 8  
 200 Բասդի Կեսարացոյ Կանոնք ՄԺԳ  
 201 Տե՛ս Մնունդք, ԻԾ, 5, 6  
 202 Տե՛ս Կանոնք Կղեմայ 2Զ  
 203 Տե՛ս հոգվ. ՃԱ, ճԲ  
 204 Տե՛ս հոգվ. ՃԲ

ալք, և մեռանի կի՛նն, մի՛ լիցի աոն և ոչինչ ի կնոջէն, զի որպէս ոչ է տիրեալ մարմնոյ նորա, նոյնպէս և ոչ տիրէ՝ ընչից նորա: Նոյն լիցի և կնոջն: Ապա թէ ամուսնացեալ իցէ; թէ և սակաւ ժամանակ, նմանապէս դանգ մի լիցի առնն: Եւ զի որպէս զհօրն ժառանգելով որդին՝ մայրն մին դանգ առցէ, նոյնպէս և զմօրն ժառանգելով որդին՝ հայրն մին դանգ առցէ:

Գ Լ Ո Ւ Ն Ը Դ

ՎԱՍՆ Թէ Ո՛ՐՊԷՍ ԲԱԺԱՆԵՆ ԶԿՈՒՄԱՇՆ ՈՒՍՏԵՐՔ ԵՒ ԴՍՏԵՐՔ

Ըստ բաժանողական արուեստի զժառանգութիւնս զայս այսպէս ուղիղս բաժանեսցես: Զինչսն զամենայն մի համարեսցիս զահեկան և զդահեկանն՝ վեց դանգ:

Եւ թէ մին որդի իցէ և մին զուստր, որ ի տանն, յերկուս բաժանեսցես. զերկուս դանգ ու կէսն՝ եղբօրն, և զնոյնս՝ քուերն, և մին դանգ՝ մօրն:

Ապա թէ կարգեալ քոյրք իցեն, զերկուսն մին եղբայր համարեա և զերկուս դանգ ու կէսն եղբօրն տացես, և զերկուս դանգ և կէսն՝ երկու քուերն, և զմին դանգն՝ մօրն:

Իսկ եթէ մին ևղբայր իցէ և մին քոյր առնակին, կէս զահեկան և շորս գարի եղբօրն լիցի, և դանգ և կէս և երկու գարի՝ քուերն, և մին դանգ՝ մօրն:

Ապա թէ երկու եղբայր և մին քոյր իցէ, որ ի տանն, դանգ և կէս և երկու գարի մին եղբօրն լիցի, և նոյնչափ՝ միւսոյն, և նոյնքան՝ քուերն, և մին դանգ՝ մօրն: Իսկ թէ կարգեալ քոյրն իցէ, երկու դանգ մին եղբօրն լիցի, և երկու դանգ՝ միւս եղբօրն, և մին դանգ՝ քուերն, և մին դանգ՝ մօրն:

Ապա թէ մայրն ոչ իցէ, ինքեանց միայն բաշխեսցեն. երկու դանգ և թասու և մին գարի և շորս դանգ գարոյ և երեք թասու գարոյ՝ մին եղբօրն, նոյնպէս՝ և միւսոյն, և մին դանգ և երկու գարի և երկու դանգ գարոյ և կէս դանգ գարոյ՝ քուերն: Կէս թասու գարոյ աւելի է քուերն: Եւ զի զայս ցուցաք յայտ առնելոյ աղագաւ, եթէ զիրաւն և զարղարն խնդրէ դատաստան:

Իսկ եթէ երեք ևղբայր և մին քոյր իցէ, դանգ և կէս և երկու գարի և կէս՝ իւրաքանչիւր եղբօր, և երեք թասու և գարի և կէս՝ քուերն: Եւ է քուերն դանգ և կէս աւելի գարոյ: Զի թէ կամ լիցի, այդպէս տկար մասինն զսակաւն թողցես աւելի, ապա թէ ոչ՝ զայն ևս հաւասարեսցես:

Ապա թէ շորս ևղբայր և մին քոյր իցէ՝ դանգ և թասու և մին գարի՝ իւրաքանչիւր եղբօր, և կէս դանգ և կէս թասու և կէս գարի՝ քուերն:

Իսկ եթէ հինգ եղբայր և մին քոյր իցէ, իւրաքանչիւր եղօր մին դանգ լիցի և մին գարի, և քուերն՝ կէս դանգ և մին գարի: Կէս գարի և աստ աւելի լինի քուերն:

Ապա թէ վեց եղբայր և մին քոյր իցէ, երեք թասու և երկու գարի իւրաքանչիւր եղբօր լիցի, և կէս դանգ՝ քուերն:

Ըստ այսմ օրինակի և զայլսն սրբան իցէ բաժանեսցես: Նմանապէս և զմօրն բաժանեսցես զժառանգութիւն:

Իսկ եթէ վեց քոյր իցեն և մին եղբայր, ի շորս բաժին զժառանգութիւնն բաժանեացես՝ երեք եղբայր ի վեց քոյրն լիցի: Ըստ այսմ օրինակի և այլքն լիցին: Եւ եթէ մայր իցէ՝ և այն ցուցաւ, և եթէ ոչ՝ և այն: Եթէ ի տան քոյրն իցէ և եթէ առն լեալ իցէ, ըստ զանազանութեան նոցա և դատաստանն հաստատեսցի, զի սակաւ և այդ նշանակ տուաւ:

Յորմէ զարժանն նորա դոցեն և զթերին լցցեն, և մի՛ ինչ պարսաւանս դիցեն, զի ըստ կարի մեր այդքան ծանուցաւ:

**Գ Լ Ո Ւ Խ Ծ Ե**

**ՎԱՍՆ ՈՐ ԶՔԱՀԱՆԱՅ ԵՒ ԶԴԱՏԱՒՈՐ ԱՆԱՐԳԷ**

10 Եթէ վրիպեսցի ի քէն բան ի դատաստանի ի մէջ արեան և արեան, ի մէջ դատաստանի և դատաստանի, ի մէջ զրգոութեան և զրգոութեան, ի մէջ հակառակութեան և հակառակութեան, բան դատաստանի ի քաղաքս քո, յարուցեալ երթիցես ի տեղին, զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո անուանել զանուն իւր անդ: Եւ երթիցես առ քահանայս Ղևտացիս և սոռ դատաւորսն, որ լինիցին յաւուրսն յայնոսիկ, և քննեալ պատմեսցեն քեզ զդատաստանն: Եւ արասցես ըստ հրամանին, զոր պատմեսցեն քեզ, որք ի տեղոյն իցեն, զոր ընտրեսցէ Տէր Աստուած քո, և զգուշացիր առնել ըստ ամենայնի, որպէս օրինադրեսցի քեզ: Ըստ օրինացն և ըստ դատաստանին, զոր ասացեն քեզ, արասցես և մի՛ խոտորեսցիս ի բանէն, զոր պատմեսցեն քեզ, մի՛ յաջ և մի՛ յահեակ: Եւ մարդ որ, որ առնիցէ հպարտութեամբ առ ի շլտելոյ քահանային, որ կայցէ պաշտել յանուն Տեառն Աստուծոյ քոյ, կամ դատաւորին, որ իցէ յաւուրսն յայնոսիկ, մեռցի մարդն այն<sup>205</sup>:

25 Տես զի զարհամարհոքս քահանայից և դատաւորաց զոյգ եցոյց, զի մի է զօրութիւն Թրինաց և դատաստանի, և սարսաւորութիւն նոցա մահ է, զի և շանալ նոցա մահ է, այսինքն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ անհնազանդութիւն Աստուծոյ. և արեանն յայտ է դատաստանն:

**Գ Լ Ո Ւ Խ Ծ Զ**

**ՎԱՍՆ ՊՏՂՈՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ Ի ԺՈՂՈՎՐԴՈՑ**

30 Եւ այս են իրաւունք քահանայիցն ի ժողովրդենէն, որք զենուցուն զենլիս. եթէ արչառ իցէ և եթէ ոչխար՝ տացէ քահանային զաջոյ երին, և զծնօտն, և զխախցոցն: Զպտուղս ցորենոյ, և զզիւնոյ, և զհիւզոյ քոյ և զպտուղս կտրոցաց խաշանց քոց տացես նմա: Զի զնոսա Տէր Աստուած ընտրեաց յամենայն ցեղիցն քոց կալ առաջի Աստուծոյ քոյ, և պաշտել և օրհնել զանուն նորա, նաև որդիք իւր զամենայն աւուրս<sup>206</sup>:

Զայս իրաւունս և այժմ՝ ոչ պահեն հաւատացեալք, զոր հարկաւոր է առաւելուլ քան զՕրինացն, զի հասարակաց զենմանն օրինադրէ իբր զայլ պտուղսն, զի ոչ զընծայից զենմանն է բանդ:

205 Բ. Թրին., ԺԷ, 8—12

206 Բ. Թրին., ԺԲ, 3—5

Եւ զայդ եղաք, եթէ ըստ դատաստանի իրաւանց է և քրիստոնէից այդոքիւք զբահանայս պատուել:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Է

## Վ Ա Ս Ն Ս Ա Հ Մ Ա Ն Ա Յ, Թ Է Ո Ր Պ Է Ս Ս Ի Ե Ո Ւ Ե Ն

5 Մի՛ փոխեսցես զսահմանս ընկերի քոյ, զոր հաստատեցին հարքն քո ի ժառանգութեան քում, զոր ժառանգեսցես յերկրին զինչ և իցէ, զոր Տէր Աստուած տացէ քեզ ի ժառանգութիւն<sup>207</sup>:

Զանդատանաց և զայլոց ասէ ճառդ. առ եղբարս, և առ ազգականս, և առ օտարս հրամայէ իրաւամբք վարիլ:

10 Զոր ի հօրէ ունի զսահման ժառանգութեան իւրոյ, ոչ սլարտի զընկերին յափշտակել, բայց եթէ կանխաւ յափշտակեսու և զրկեալ իցէ, դատ վարել: Այլ ճշմարտութեամբ ի հօրէ առեալ ժառանգութիւն ոչ է իրաւացի վկնի մահուան հօրն զղջմամբ փոխել ընդ այլ ժառանգակցացն:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Ը

15 Վ Ա Ս Ն Ո Ր Ս Ո Ւ Տ Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ւ Ի Ն Տ Ա Ն Ի Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ի

Ոչ հաստատեսցի մին վկայ վկայել զմարդոյ ըստ ամենայն ապիրատութեան, և ըստ ամենայն յանցանաց, և ըստ ամենայն մեղաց, զոր մեղանչէ: Ի բերանոյ երկուց և երկից վկայից հաստատեսցի ամենայն բան: Եւ եթէ կացցէ յառաջ սուտ վկայ զմարդոյ և շարախօսեսցէ զնմանէ 20 ամբարշտութիւն ինչ, կացցեն երկոքին արքն, որոց իցէ հակառակութիւն, առաջի Տեառն, և առաջի քահանայիցն և դատաւորացն, որ իցեն յաւուրսն յայնոսիկ, և քննեսցեն զատաւորքն ճշմարտութեամբ. և ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն, և կաց հակառակ եղբօր իւրում: Արասջիք նմա՛ որպէս խորհեցաւ շար առնել եղբօրն իւրում, և բարձջիք 25 զշարն ի միջոյ ձերմէ<sup>208</sup>:

Օրինացս դատաստան զեկուցանէ զերկուց և զերկից վկայից հաստատէ զբան, և գտտոտ վկայս ըստ շար կամացն հրամայէ տանջել: Եթէ արեան կամեսցի վկայել և թէ այլոցն՝ նովին դատել:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Թ

30 Վ Ա Ս Ն Թ Է Գ Տ Յ Ի Ս Պ Ա Ն Ա Ս Ս Ի Դ Ա Շ Տ Ի

Եւ եթէ գտանիցի վիրաւոր ի դաշտի յերկրին քում, զոր Տէր Աստուած տացէ քեզ ժառանգել, անկեալ ի դաշտի, և ոչ դիտիցեն զայրն, որ խոցեացն զնա, էլցէ ձերակոյտն քո և դատաւորքն քո և շափեսցեն շուրջ զվիրաւորան զվայրս քաղաքացն: Եւ եղիցի քաղաք, որ հուպ իցէ առ 35 վիրաւորն, ասցէ ձերակոյտ քաղաքին այնորիկ երինչ մի յարջառաց, այլօքն<sup>209</sup>:

<sup>207</sup> Բ Օրին., ԺԹ, 14

<sup>208</sup> Բ Ղրին., ԺԹ, 15—19

<sup>209</sup> Բ Օրին., ԻԱ, 1—3. «այլօքն» բառերով ակնարկվում է Մովսիսական օրենքի շարունակությունը մինչև 9-րդ համարը:

Յայսմանէ յայտ է ո՛չ տուգանս լինել այսպիսի սպանման և ո՛չ դատաստան արեան, այլ քառութիւն պատարագօք՝ անդ և աստ՝ ապաշխարութիւն: Այդոցիկ հետեւիլ է դատաւորաց, որքան անյայտ է, իսկ յայտ եկեալն՝ տուգանք՝ հաղորդիցն, և արեան դատաստան՝ սպանողին:

5

Գ Լ ՈՒ Ն Ճ Ժ

ՎԱՍՆ ԳԵՐԵԼՈՅ ԿԱՆԱՆՅ ԱՅԼԱԶԳԵԱՅ

Եթէ էլանիցես ի պատերազմ ի վերայ իշնամեաց քոց, և մատնեսցէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, և աւարեսցես զաւար նոցա: Եւ տեսանիցես յաւարին կին գեղեցիկ տեսեամբ, և ցանկանայցես նմա, առցես զնա քեզ կին, և տարցես զնա ի տուն քո, և գերծցես զպլուխ նորա, և սրբեսցես զրդեգունս նորա, և հանցես զհանդերձ գերութեան նորա, և նստցի ի տան քում և լացցէ զհայր և զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, և ապա մտցես առ նա և բնակեսցես ընդ նմա, և եղիցի քեզ կին: Եւ եղիցի եթէ ոչ հաճեսցիս ընդ նմա՝ արձակեսցես զնա ազատ, և վաճառելով մի՛ վաճառեսցի ընդ արծաթիւց, և մի անարգեսցես զնա, քանզի լլկեցեր զնա<sup>210</sup>,

Եւ զայս ըստ Օրինացն լրամաբ ընկալցին. ի՞նչ սլատահի քրիստոնէի՝ նախ մկրտել և զօրինակ հնութեանն բառնալ և սույա առնուլ կին ըստ կարգի ամուսնութեան: Եւ ոչ եթէ յորժամ ոչ հաճեսցի<sup>(98)</sup>, արձակէ ազատ, այլ և ոչ բնաւ արձակել, սուանց բանի սլոռնկութեան, իշխան է:

20

Գ Լ ՈՒ Ն Ճ Ժ Ա

ՎԱՍՆ ՀԱՐԱՆՅ ԱՆԴՐԱՆԿԱՅՈՒՅԱՆԵԼՈՅ ԶՈՐԳԻՍ

Եթէ լինիցին առն երկու կանայք, մինն ի նոցանէ՝ սիրելի, և մինն՝ ատելի, և ծնանիցին նմա որդիս սիրելին և ատելին, և լինիցի որդի անգրանիկ ատելոյն: Եւ եղիցի յաւուր, յորում ժառանգեցուցանէ որդոց իւրոց զինչս իւր, մի՛ իշխեսցէ անգրանկացուցանել զորդի սիրելոյն, անտես արարեալ զորդի ատելոյն զանգրանիկ, այլ զանգրանիկ ատելոյն ծանիցէ՝ տալ նմա կրկին յամենայնէ, որ ինչ գտանիցի նմա, զի նա է սկիզբն որդոց նորա, և նմա է անգրանկութիւնն<sup>211</sup>:

25

Արդ, զայս դատաստանս ի մեզ այսպէս առցուք: Զի թէ ոչ է քրիստոնէից ունել միանդամայն երկուս կանայս, սակայն ի մի կնոջէ լինիցի որդիս, և թէ երկրորդ առցէ կին, և յանմանէ իցէ որդի, մի՛ վասն սիրոյ կրսերոյն զնա անգրանկացուցէ և կամ աշտեալ ի վերջի կնոջէն՝ զուրդի նորա: Այլ զսկիզբն որդոց իւրոց պատուեսցէ, ըստ որում և Տէր պատուիրեաց՝ տալ զառաջին ծնունդն<sup>212</sup> և առաւել տալ ի ժառանգութեանցն<sup>213</sup>, բայց եթէ պատահի յաղաղս անպիտանութեան շատնել արժանի:

35

<sup>210</sup> Թ Օրին., ԻԱ, 10—14

<sup>211</sup> Թ Օրին., ԻԱ, 15—17

<sup>212</sup> ՏԼ՝ս Ելք, ԺԳ, 2. ԻԲ, 29, 1Գ, 19 և այլուր:

<sup>213</sup> ՏԼ՝ս Թ Օրին., ԻԱ, 17

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ժ Բ

Վ Ա Ս Ն Ա Ն Զ Գ Ա Մ Ո Ր Գ Ո Ց

Եթէ իցէ ուրուք որդի խեռ և անզգամ և ոչ լուիցէ ձայնի հօր և մօր իւրոյ, և խրատեսցեն զնա, և ոչ անսայցէ, կայցին զնա հայր և մայր  
 5 իւր և տարցին առ ձերակոյտս քաղաքին իւրեանց և ի դուռն տեղոյն իւրեանց և ասացեն ցարս քաղաքին իւրեանց. որդիս մեր այս անզգամ է և ոչ լսէ ձայնի մերում, հարկանող է և արբշիւ: Եւ քարկոծեսցեն զնա արք քաղաքին իւրեանց, և մեռցի, և բարձջիք զշարն ի միջոյ ձերմէ, և լուեալ ալլոցն զահի հարկանիցին<sup>214</sup>:

10 Զոյգ է այս դատաստան այնմ, որ զծնողսն անարգէ<sup>215</sup>, զի անդ՝ մահու մեռցի, զի զիւրն անարգէ զծնողսն և նովալ՝ զհասարակացն Աստուած, և աստ՝ առանց միջնորդի՝ միայն զԱստուած, լուծամբ պատուիրանին: Վասն սրոյ անդ՝ մահու մեռցի, որ է երկու մահ, և աստ՝ պարզարար մեռցի, որ է միայն առ Աստուած յանցանքն: Այլ որպէս անդ եղաւ  
 15 իրաւամբք՝ ելանել ի ժառանգութենէ փոխանակ մահուն, նոյն լիցի և աստ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ժ Գ

Վ Ա Ս Ն Մ Ա Հ Ա Գ Ա Ր Տ Մ Ե Ռ Ե Լ Ո Ց

Եթէ հասանիցեն ումեք մահապարտութիւն, և մեռանիցի, կախեսջիք զնա զփայտէ, և մի՛ ազանիցի մարմին նորա ի փայտին, այլ թաղեսջիք  
 20 զնա ի նմին ատուր, զի անիծեալ է յԱստուծոյ ամենայն, որ կախեալ կայցէ զփայտէ<sup>216</sup>:

Զի թէպէտ ամենայն օրինադրութիւնս ոչ միայն առ ճառսն, այլ և առ միտսն բազում ունի պատճառս, այլ մեզ որքան հարկաւորն է իրաւանց դատաստանի՝ առնլի է: Եւ զի անդ զԻսրայէլացոցն ասացաւ թաղել զմարմին, և զի ի մերոց թագաւորաց ոչ հրամայեցաւ սպանանել, բայց միայն խրատել: Իսկ թէ այլազգի պատահի ի մահապարտութիւն, ոչ է արտաքոյ իրաւանց, զընութիւնս պատուելոյ ազագաւ, թաղել տալ հրաման՝ յորժամ մեռանի, ուր և իցէ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ժ Դ

Վ Ա Ս Ն Կ Ո Ր Ս Տ Ի Ց

Գուցէ տեսեալ զարջառ և զոչխար եղբօր քոյ մոլորեալ ի ճանապարհի, մի՛ անտես առնիցես զնոսա, այլ դարձուցես՝ զնոսա և ածցես առ եղբայրն քո: Այս թէ չիցէ եղբայրն քո մօտ առ քեզ, և ոչ ճանաչիցես զնա, ժողովեսցես զնոսա ի տան քում, և եղիցին առ քեզ, մինչև խնդրեսցէ զնոսա եղբայրն քո, և տացես ցնա: Նոյնպէս արասցես զէշ նորա, և զհանդերձ, և զամենայն կորուստ եղբօր քոյ, որ ինչ կորնչիցի: Մի՛ իշխեսցէ եղբայր ոք անտես առնել զինչս եղբօր իւրոյ<sup>217</sup>:

214 Բ Օրին., ԻԱ, 18—21  
 215 Տէ՛ս հողվ. Սէ, նահ Ելք, ԻԱ, 15, 17. Ղևտ., Ի, 9. Մատթ., ԺԵ, 4 և ալլուր:  
 216 Բ Օրին., ԻԱ, 22—23  
 217 Բ Օրին., ԻԲ, 1—2

Գութի և խնամս ունելով ուսուցանէ Օրէնքս յատուածայինս ոչ միայն առ մերձաւորս, այլ և առ հեռաւորս յամենայն կորուստս հաւատարիմս լինել և անվարձս, զի արտաքոյ իրաւանց է վարձանօք զկորուստ ընկերին զարձուցանել:

5 **Գ Լ ՈՒ Խ Ծ Ժ Ե**

**Վ Ա Ս Ն Յ Ա Ր ՈՒ Յ Ա Ն Ե Լ Ո Յ Զ Ա Ն Կ Ե Ա Լ Զ Ո Ր Ք Ո Տ Ա Ն Ի Ս**

Գուցէ տեսանիցես զէջ կամ զեզն հղբօր քոյ անկեալ ի ճանապարհի, մի՛ դանց առնիցես զնոքօք, այլ յարուցես ընդ նմա<sup>218</sup>:

10 Անվարձ և զայս ևս հրամայէ: Եւ թէպէտ և Օրինադրութիւն է, սակայն և թազաւորաց և դատաւորաց է գիտելի զայսոսիկ և խրատել, որ յաղազս սորին երթան յատեան:

**Գ Լ ՈՒ Խ Ծ Ժ Զ**

**Վ Ա Ս Ն Հ Ա Ն Կ Ե Բ Զ Ի**

15 Մի՛ կղիցի հանդերձ առնացի զկանամբք, կամ զզեցցի այլ զզեսս կանացի, զի պեղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն, որ առնէ զայն<sup>219</sup>:

Զի բազում դովաւ լինել շարեաց ի դէպ էր և անձեութիւն իսկ, յաղազս որոյ հրաժարեցոյց: Ըստ այսմ խրատելի է դատաւորաց և քարոզչաց:

**Գ Լ ՈՒ Խ Ծ Ժ Է**

**Վ Ա Ս Ն Բ ՈՒ Ն Ո Յ Թ Ռ Զ Ն Ո Յ**

20 Եթէ դիպեսցիս բունոց հաւուց առաջի քո ի ճանապարհի, և թէ ի ծառ և թէ ի գետնի, ձագուց կամ ձուոց, մի՛ առնուցուս զմայրն հանդերձ ձագօք, այլ արձակեսցես զմայրն, և զորդիսն առցես քեզ, զի բարի լինիցի քեզ, և բազմօրեայ լինիցիս ի վերայ երկրի<sup>220</sup>:

25 Եւ արդ, մի՛ որ պարսաւանս դիցէ մեզ յայսոսիկ, եթէ զի Օրինադրութիւն է, զի՞ արդ լիցի յիրս դատաստանի, նմանապէս և՛ նմանք սոցին: Գիտելի է, զի ամենայն օրինադրութիւն լուծեալն և զղջացեալն ոչ կարօտի դատաստանի, իսկ անհնազանդիցն դատաստանի պէտք են: Եւ զայս Տէրն յայտ արար, ասելով՝ ի ճանապարհի զղջացեալ տուր զհաշիւ ուխտին, զի մի՛ ի դատաստան անկցիս<sup>221</sup>: Եւ զի այս Օրինադրութիւն է և արդարութեան կատարումն: Իսկ լուծեալ և զղջացեալ՝ ի ձեռն վարդապետաց վերստին ուղղութիւն, այլ անզղջից՝ դատաստանաց իրաւունք: Փոքրազոյն օրինադրութեամբս տեսցես ալժմ զմեծամեծսն սովաւ շափեալս: Եւ զի յայտ արասցէ զհաւս վասն մեր եղեալ, զոր հրամայէ թուղուլ

218 Բ Օրին., ԻԲ, 4  
219 Բ Օրին., ԻԲ, 5  
220 Բ Օրին., ԻԲ, 6—7  
221 Տե՛ս Մատթ., Ե, 25. Ղուկ., ԺԲ, 58

զմայրն աճելոյ պատճառաւ և մեզ ի պէտս զձագս և զձուս առնուլ: Եւ սորօք վարձս խոստանայ՝ ցուցանելով, թէ որքան պոսակին կատարողքն մեծամեծաց պատուիրանաց, այլ զղշացեալքն ուղղին, և անզեղջքն յայսմ՝ զատին: Եւ իրաւացի կարծեմ զոյզ ամաց թռչնոցն իմանալով ձագուցն խափանման՝ զտուգանս լինել ի թագաւորաց<sup>(90)</sup>:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Ժ Ը

#### Վ Ա Ս Ն Ն Ո Ր Ա Շ Է Ն Տ Ա Ն

Եթէ շինեսցես սուս նորաշէն, արասցես պսակ շուրջ զտանեօքն, և մի՛ սպանումն զործեսցի ի տան քում, զի մի՛ անկանիցի, որ անկանելոցն  
10 իցէ, ի նմանէ<sup>222</sup>:

Կարծելի է, թէ և զայս պատուիրան նման այնմ, որ զվիրաւոր գտեալ՝ պատարագօք հրամայէր քաւել և ոչ զատաստանաւ արիւն խնդրել<sup>223</sup>, ոչ տայ ի ձեռս դատաւորաց զպատահեալն: Եւ զի մի՛ այնմ կարօտ իցեն, զգուշանալ ուսուցանէ: Իսկ մեզ ապաշխարութիւն լիցի:

15

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Ժ Թ

#### Վ Ա Ս Ն Մ Ա Ռ Ա Յ Ի Յ Փ Ա Ն Ո Ւ Յ Ն Ե Լ Ո Յ

Մի՛ մատնեսցես զժառայ տեառն իբրում, որ յաւելուցու առ քեզ ի տեառնէ իրմէ: Ընդ քեզ բնակեսցէ և ընդ քեզ զետեղեսցի յամենայն անդոջ, ուր և հաճոյ է նմա, և մի՛ նեղիցես զնա<sup>224</sup>:

20

Ոչ միայն զայլազգեաց ասէ, այլ և զԵբրայեցոց, որ թէ յանդղնեալ ոչ կամի յեւթն ամի թողուլ զնա, և յաղագս այնր փախիցէ, զոր ասէ՝ ընդ քեզ բնակեսցէ և թէ այլուր հաճոյ իցէ՝ անդ, և թէ այլազգ ինչ՝ հաշտեցուցանել և ոչ վայրապար տալ ի ձեռս: Զայս և մեզ պահել իրաւացի զատաստան է:

25

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի

#### Վ Ա Ս Ն Մ Տ Ե Լ Ո Յ Ի Հ Ո Ւ Ն Ձ Ս

Իսկ եթէ մտանիցես ի հուսնս ընկերի քոյ, քաղեսցես ձեռօք քովք զհասկն և մանգալ մի՛ արկանիցես յոճ ընկերի քոյ<sup>225</sup>:

Զի զողորմութիւն ի կամաց առողին կամի Օրէնքն և ոչ ի կամաց  
30 կրողացն, և եթէ յանդղնի՝ զատաստանաւ է իբր ի յափշտակողէ տոյժ առնուլ:

<sup>222</sup> Բ Օրին., ԻԲ, 8

<sup>223</sup> Տե՛ս հոդվ. ձԹ, ևս և Բ Օրին., ԻԱ, 1—9

<sup>224</sup> Բ Օրին., ԻԳ, 15—16

<sup>225</sup> Բ Օրին., ԻԳ, 25

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի Ա

Վ Ա Ս Ն Մ Տ Ո Ղ Ա Ց Յ Ա Յ Գ Ի Ը Ն Կ Ե Ր Ի Ն

Իսկ եթէ մտանիցես յայգի ընկերին քոյ, կերիցես խաղաղ, մինչև յաղեսցես, բայց յամանս մի ամանհսցես<sup>226</sup>;

5 Չափս դնէ և իրաւունս ակամայ ողորմութեան ճշմարիտ Օրինադրութիւնս այգեգործաց, զի մի՛ տաղտկասցին, զի նոցունց կամօք իցէ բնդ ուսելոյն և բառնայն, իսկ ըստ կերողին<sup>(100)</sup> տոյժ լիցի:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի Բ

Վ Ա Ս Ն Ա Ր Ձ Ա Կ Ե Լ Ո Յ Չ Կ Ա Ն Ա Յ Ս

10 Եթէ առնուցու որ կին և մտանիցէ առ նա, և եղիցէ, թէ ոչ դստանիցէ շնորհս առաջի նորա, զի եգիտ ի նմա իրս անարգութեան, զրեսցէ նմա զիր ապահարզանի և տացէ ի ձեռս նորա և արձակեսցէ զնա ի տանէ իւրմէ: Եւ գնացեալ լինիցի առն այլում, և թէ ատիցէ զնա այրն վերջին, զրեսցէ նմա զիր մեկնելոյ և տացէ ի ձեռս նրա և արձակեսցէ զնա ի տանէ իւրմէ: Ապա թէ մեռանիցի վերջին այրն, մի՛ կարասցէ այրն առաջին, որ արձակեաց զնա, զառնայ առնույ զնա ի կնութիւն, զի պիղծ է այն առաջի Աստուծոյ քոյ. և մի՛ պղծիցէք զերկիրն, զոր Տէր Աստուած տացէ ձեզ ի ժառանգութիւն<sup>227</sup>:

15 Զայս երբեմն Հրէայքն պատասխանի ետուն Տեառն, ասելով. Մովսէս հրաման ետ զիր զրկյ մեկնելոյ կանանց, և Տէր եցոյց զպատճառն, եթէ յաղագս խստասրտութեան ձերոյ թողացաւ<sup>228</sup>: Եւ զի մի՛ միշտ վայրապարթողցեն, ասաց յՕրէնսն՝ ոչ առնույ զանարգեալն: Եւ զի ընդարձակ էր առնույ այլ, և միանգամայն երկուս առնույ և կեալ ի մի տուն, և այն առանց բանի պրոնկութեան: Եւ զի ըստ ձեզ այս ոչ է, եթէ պատահի զկնի թողլոյն և մահուն զղջանայ, որ ատելութեամբ մեկնեցան՝ ազաշխարութեամբ միասցին, բայց եթէ պատահի այնպեսի լինել, որոց միատրեւ շիցէ<sup>(101)</sup> արժան:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի Գ

Վ Ա Ս Ն ՈՐ ԱՌԵՆՈՒ ՆՈՐ ԿԻՆ, ՉԷ ՊԱՐՏ Ի ՊԱՏԵՐԱԶՄ ԵՐՔԱԼ

30 Եթէ առնուցու որ կին նորոգ, մի՛ մտցէ ի պատերազմ, և մի՛ անկցին ի վերայ նորա ինչ իրք, այլ անպարտ լիցի ի տան իւրում, և ուրախ արասցէ զկին իւր<sup>229</sup>:

35 Մարդասէր է Աստուած, կամի, զի մի՛ անկեալ ի պատերազմին՝ սուղ լիցի տարածամ, յաղագս որոյ անմեղադրելի են միանգամայն, կամ ամբարտաւանեալ՝ յանդգնի ճակատեալ և կամ երկբայի՝ զանգիտեալ: Զայս իրաւունս պահելի է զօրավարաց առ զօրս իւր ամենայն:

226 Բ Օրին., ԻԳ, 24  
227 Բ Օրին., ԻԳ, 1—4  
228 Տե՛ս Մատթ., ԺԹ, 8. Մարկ., Ժ, 5  
229 Բ Օրին., ԻԳ, 5

Գ Լ Ո Ւ Խ Ե Ծ Ի Գ

ՎԱՍՆ ՈՐՔ ԳՐԱԻԱԿԱՆ ԴԵՆՆ ԿԱՄ ԳՐԱԻ ԱՌՆՈՒՆ ԶԵՐԿԱՆՔ

Մի՛ գրաւեսցես գլիերին կամ գնհրքին երկանք, գի գոգիս գրաւէ  
այնպիսին<sup>230</sup>,

5 Ոչ հրամայէ բնաւ չզրաւել, այլ նոցունց ցուցանէ զիրաւունս, գի  
միովն թերեւս զըջասցի դարձուցանել զմիւսն, ուստի և ծանրացոյց զօրի-  
նակն խղճին՝ գոգիս գրաւէ, ասէ, այնպիսին, գի նոցա սպասատրու-  
թեամբ ոգի մնայ ի մարմին: Զոր և յամենայնսն մեզ պահելի է՝ չգրաւել  
զյոյժ հարկատրքն, և թէ յանդգնի՝ ի դատատրաց վրէժ լիցի:

10

Գ Լ Ո Ւ Խ Ե Ծ Ի Ե

ՎԱՍՆ ՊԱՐՏՈՒՅ ԵՒ ԳՐԱԿԱՆԵՐՈՅ

Եթէ պարտիցի ընկեր քո զինչ և իցէ, մի՛ մտանիցես ի տուն նորա  
առնուլ ինչ գրաւ, այլ արտաքոյ կայցես, և այլն, առ որում պարտքն  
քո իցեն, հանցէ զգրաւն արտաքաւ: Եւ եթէ աղքատ իցէ այլն, մի՛ ազցի  
15 գրաւն ի տուն քո, այլ դարձուցես զգրաւ նորա ընդ մտանել արևուն, և  
ննչեսցէ հանդերձին և օրհնեսցէ զքեզ, և եղիցի քեզ յողորմածութիւն  
առաջի Տեառն Աստուծոյ քոյ<sup>231</sup>,

20 Զտալ թոյլ մտանել և առնուլ գրաւ, գի մի՛ բռնութիւն լիցի, այլ՝  
կամաւ. հանեալն, դարձեալ, ոչ ի հարկատրոսց գոյիցն իցէ: Ապա թէ  
յազազս աղքատութեան հարկատրքն իցին, հրամայէ շօթեցուցանել և  
այսու ողորմած կամի գնոսա լինել լնդ իրաւանցն: Զսոյն զայս և մեզ  
ընտերելի է:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ծ Ի Զ

ՎԱՍՆ ՈՐ ՎԱՐՁԷ ԳՐԱՍՏ ԵՒ ԱՅԼ ԻՆՁ ԵՒ ՎՆԱՍԷ

25 Մի՛ զլասցիս զվարձս տնանկին և գկարօտելոյն յեղբարց քոց կամ  
յեկաց քաղաքաց քոց: Այլ նոյն օր հատուցես զվարձս նորա, և մի՛ մտա-  
նիցէ արեգակն ի վերայ այնորիկ, գի տնանկ է, և այն է յոյս նորա, և մի՛  
բողոք հարկանիցէ առ Տէր, և լինի քեզ այն ի մեղս<sup>232</sup>:

30 Զայտ է, գի յազազս աղքատութեան եղև վարձկան և աւուրն պիտո-  
լից: Զի եթէ ոչ հատուցես յաւուր գործոյն, դատաստանաւ է ատկի, քան  
որ վարձեցան, հատուցանել զվարձսն:

Գ Լ Ո Ւ Խ Ե Ծ Ի Է

ՎԱՍՆ ՈՉ Է ՊԱՐՏ ՄԵՌԱՆԵԼ ԶԱՐՑ ՎԱՍՆ ՈՐԳՈՅ, ԵՒ ՈՉ  
ՈՐԳԻՔ՝ ՎԱՍՆ ԶԱՐՑ

35 Մի՛ մեռանիցին հարք ընդ որդոց, և մի՛ որդիք՝ ընդ հարց, այլ ի-  
րաբանչիպ ոք ի մեղս իւր մեռանիցի<sup>233</sup>:

230 Բ Օրին., ԻԳ, 6  
231 Բ Օրին., ԻԳ, 10-13  
232 Բ Օրին., ԻԳ, 14-15  
233 Բ Օրին., ԻԳ, 16

Եւ զայս ասէ յաղագս այնորիկ, որ թէ պատահի մահապարտ լինել ըստ օրինաց, հարք եթէ կամիցեն վասն զորդիսն ապրեցուցանելոյ մեռանիլ, մի՛ մեռցին, այլ մեռցի որդին մահապարտ, զի մի՛ թիրեացի դատատանն: Նոյնպէս և մի՛ որդիք ընդ հարց մեռցին: Նաև դատաւորք, թէ ոչ կարասցեն զորդիս մահապարտս ըմբռնել, ոչ պարտին զհայր ի մահ դատապարտել: Եւ այս ի մեզ հաստատուն կացցէ:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի Ը

## Վ Ա Ս Ն Ո Ր Ք Չ Դ Ա Դ Ա Ր Ի Ն Յ Ի Ր Ա Ի Ո Ւ Ն Ս

Մի՛ խոտորեսցես զիրաւունս եկին և որբոյն և այրոյն<sup>234</sup>,  
 10 Դատաւորաց զնէ օրէնս՝ ոչ վարիլ կաշառօք և այլօք պատրանօք, որպէս եցոյց յայլսն<sup>235</sup>, և եթէ զայս արասցէ՝ անկցի ի պատուոյն:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Ի Թ

## Վ Ա Ս Ն Ո Ր Զ Ա Յ Ր Ի Մ Ա Ր Դ Ո Յ Ի Ր Ք Գ Ր Ա Խ Կ Ա Ն Ն Ն

Մի՛ զրաւեսցես զգրաւ այրոյն զձորձս նորա<sup>236</sup>,  
 15 Զի թէպէտ և յայլսն ներեաց սահմանան զգրաւն<sup>237</sup>, այլ աստ եցոյց հարկաւոր ոչ զրաւել զայրոյ, ուսուցանելով նոցա զխնամակալութիւն յիւրմէ, որպէս յնզիպոսս ամենազանս, զի արտաքոյ է դատաստանի զգուել զնոսս:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ

20 Վ Ա Ս Ն Ա Ր Ժ Ա Ն Ա Ի Ո Ր Ա Ց Գ Ա Ն Ի Յ

Յատեան դատաստանի, ըստ որում և իցէ, յորժամ արժանի զանի իցէ, եթէ ոչ ըստ Օրինացն քառասուն<sup>238</sup>, սակայն անվնաս: Արժան է դատաւորաց վարիլ նովա ի խրատ ստահակաց:

## Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Ա

25 Վ Ա Ս Ն Թ Է Կ Ռ Ո Ւ Ի Ն Ե Ր Կ Ո Ւ Մ Ա Ր Դ, Ե Ի Կ Ի Ն Ն Թ Ա Փ Է, Ե Ի Վ Ն Ա Ս Ի

Եթէ կոուիցին երկու արք, և թափելոյ աղագաւ կին միոյն բուռն հարկանէ զյաղթողի առն, ըստ Օրինացն է հատանել զձեռնն<sup>239</sup>, այլ մեզ՝ զիսն ձեռինն, որպէս ցուցեալ է իւրաքանչիւր զզայութեանցն<sup>240</sup>:

<sup>234</sup> Բ Օրին., ԻԴ, 17

<sup>235</sup> ՏԷ՛ս ԵԼԲ, ԻԳ, 8: Ղևտ., ԺԹ, 15: Բ Օրին., Ա, 17 և այլուր:

<sup>236</sup> Բ Օրին., ԻԴ, 17

<sup>237</sup> ՏԷ՛ս Բ Օրին., ԻԴ, 10—13 և ՃԻԾ հոգվածը:

<sup>238</sup> ՏԷ՛ս Բ Օրին., ԻԾ, 2—3

<sup>239</sup> ՏԷ՛ս Բ Օրին., ԻԾ, 11—12

<sup>240</sup> ՏԷ՛ս հոգվ. ԿԳ

Գ Լ Ո Ւ Խ Ո Ճ Լ Բ

ՎԱՍՆ ՈՐ ԶԳԵՐԵԶՄԱՆՍ ԵՒ ԶՄԵՌԻՆԱԿԱՍ ԿՈՂՈՊՏԵՆ

2 Ձդիակողողուտս եթէ քմբունեսցի և ապա կամօք խոստովանեալ՝ ոչ մեղցի<sup>(102)</sup>, իսկ եթէ ոք ոչ սպանցէ, քննեսցէ զնա սուրբ եկեղեցի՝ մինչև ի 5 մահ որոշեսցի, քանզի տեղիք ապաշխարութեան չիք նմա<sup>241</sup>։

Յայտ է յասացելոցս, թէ անզղջիցն մահ որոշեաց, այլ այնպիսեացն արեան լիցի զին ըստ ցուցելոյ օրինակին<sup>242</sup>, դարձեալ և՛ ապաշխարութիւն պատշաճիւ։ Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ իրաւացի։

Գ Լ Ո Ւ Խ Ո Ճ Լ Գ

ՎԱՍՆ ԱԿԱՄԱՅ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

10 Եթէ ոք անմեղ զնասցէ ուղևոր և ոչ զոր ունէր թշնամի յատաչ պատահեալ, այլ թէ որ ամենեցուն գողն և աւազակն նմա դիպեսցի, և սպանցէ սա զնոսա, մի՛ իրրև սպանող դատեսցէ զնա սուրբ եկեղեցի։ Բայց վասն ահագին սեղանոյն սրբեսցէ զանձն աւուրս սակաւ՝ զմտաւ 15 ածեալ, թէ ընդէ՞ր իսկ և ակամայ դիպեցան, թէպէտ և յԱստուծոյ իցէ մատնութիւնն<sup>243</sup>։

Կարծեսցուցանէ և յաղսզս քահանայից վասն ասելոյն՝ ահագին սեղանոյն, այլ հասարակ ամենեցուն է։ Բայց այս զատաստան եկեղեցոյ դատաւորաց և ոչ արտաքնոց է դատել, զիրաքանչիւրոցն օգուտ ըստ 20 իրին։

Գ Լ Ո Ւ Խ Ո Ճ Լ Գ

ՎԱՍՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՑ

25 Զհիմունս եկեղեցոյ եպիսկոպոսն միայն իշխեսցէ ծրագրել ուղղափառութեամբ, կամ քորեպիսկոպոսն, կամ պերետուան՝ հրամանաւ եպիսկոպոսին։ Ապա թէ առանց եպիսկոպոսին կամ քորեպիսկոպոսին ոք յանդրգնեսցի՝ քակել զհիմունսն հրամայեցաք. ապա թէ թողցի՝ երկրորդումն սահմանք կարգեսցին, և այնպէս կտրող եկեղեցոյն լինի անըստգտանելի<sup>244</sup>։

30 Գիտելի է, զի քորեպիսկոպոսք երկու են, մին՝ ձեռնադրեալն և մին՝ ոչ. եւ պերետուտ է<sup>(103)</sup>, որ այժմ է բուտ<sup>(103)</sup>։ Եւ եթէ ի պատահումն հայիցի եպիսկոպոսն և ի զեղջն և ոչ քակեսցէ, երկրորդել հրամայէ զկարգն։ Եւ այդ այդոցիկ զատաստան է հաստատուն։

241 Կանոնք Հարանց հետևողաց ԺԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108  
 242 Տի՛ւ հոգի. Բ  
 243 Կանոնք Հարանց հետևողաց ԺԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 108  
 244 Կանոնք Հարանց հետևողաց ԻԾ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 111—112

Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Ե

Վ Ա Ս Ն Չ Ե Ռ Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց

5 Զեպիսկոպոս արժան է, որք յաշխարհին և վիճակին եպիսկոպոսք իցեն, նորքմբք նստուցանել յաթոռ. ապա թէ վասն փութոյ ինչ և վասն հեռաւորութեան ընկերացն՝ երեք եպիսկոպոսք կամօք այնոցիկ, որք հեւր են, թղթովք վկայութեան նստուցանեն: Բայց զպատիւ և զշնորհս զխատորին արժան է տալ, այսինքն՝ կաթողիկոսին. կամ եղև մեծ ժողովոյն<sup>245</sup>:

10 Կարգաւորապէս զձեռնադրութիւն հրամայէ լինել. նախ ընտրել բաղմաց, և հաւանութեամբ ամենեցուն ձեռնադրէ կաթողիկոսն, կամ հրամանաւ նորա՝ երկուքն կամ երեքն: Այլ անուն կաթողիկոսի աստ ցուցաւ զլիաւոր լինել այլոցն, բայց այսուհետև մամսնայ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Զ

Վ Ա Ս Ն Ա Յ Ն Ա Յ Ի Կ, Ո Ր Ք Ի Կ Ա Ր Գ Է Ե Ի Յ Ա Ղ Օ Թ Ի Յ Մ Ե Ր Ժ Ե Ա Լ Ե Ն

15 Որք ի կարգէ և յաղօթից մերժեալ են, կամ ժողովրդական ոք կամ ի կարգէ պաշտօնէից, եթէ երթեալ ուրեք զինքն ի կարգ արկցէ, մի՛ ընկալցին: Եւ որ այլոյ վարդապետի բանադրեալ իցէ և կամ մերժեալ, այլ վարդապետ մի՛ մերձեցուցէ կամ ի կարգ արկցէ, բայց եթէ հաւաստեալ քննութիւն արասցեն, բանիւ վարդապետութեան բժշկել և անդէն հնազանդել ընդ բուն վարդապետան: Ապա թէ վասն մեղաց և շար
 20 գործոց մերժեալ իցէ ի սուրբ եկեղեցոյ, դեղօք ապաշխարութեան բժշկեսցեն<sup>246</sup>,

Եւ այս բարեկարգութիւն աստուածային դատաստանաւ է. ոչ զոր առանց գիտութեան ընդունել, և վարդապետաց շքամահել զմիմեանս և ղանկարգան<sup>(104)</sup> անդրէն դարձի իմաստութեամբ բժշկել:

25

Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Է

Վ Ա Ս Ն Չ Ե Ռ Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ա Ց

30 Նախնեացն սովորութիւն կացցէ յնգիպտոս, զի Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի Հռոմայ եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս և Անտիոքացոց և յայլ իշխանութիւնս պատիւ մեծութեան պահեսցի եկեղեցեաց: Եւ ամենեցուն նմանապէս յայտնի լիցի, զի
 35 թէ ոչ կամօք կաթողիկոսին լիցի. եպիսկոպոս, զայնպիսին մեծ ժողովն որոշեաց, զի մի՛ ևս իցէ եպիսկոպոս: Ապա թէ միաբան ամենեցուն ընտրելով ճշմարտութեամբ ըստ կարգի եկեղեցոյ արժանի առնիցեն, երկու կամ երեք բոստ անձին անզգամութեան կամ հակառակութեան ընդդէմ
 լինիցին, բազմացն ընտրութիւն հաստատեսցի<sup>247</sup>:

<sup>245</sup> Կանոնք Նիկիական Գ, Կանոնադիրք Հայոց, հ. Ա, էջ 119  
<sup>246</sup> Կանոնք Նիկիական Ե, բերված է մի մասը որոշ կրճատումներով, տե՛ս Կանոնա-  
 վիրք Հայոց, հ. Ա, էջ 119—120  
<sup>247</sup> Կանոնք Նիկիական Զ, Կանոնադիրք Հայոց, հ. Ա, էջ 120—121

Վասն զի սովորութիւն կալաւ և կարգ նախնեացն, զի Երուսաղէմի եպիսկոպոսն պատուեացի, բնկալցի պատիւ, զի մայրաքաղաքացն ըստ արժանի պատուին իւր պահեսցի<sup>248</sup> :

2 Զոր յառաջն յիշատակեաց զանուն կաթողիկոսի<sup>249</sup>, աստ ցուցանէ, զի  
5 ըստ նախնեացն սովորութեանց և ինքեանց կացցէ: Եւ ըստ շարից աւետարանչացն զայդոսիկ նշնակէ, և յայլ իշխանութիւնս նմանապէս, զի  
թէ իցեն առաքելական աթոռ և թէ չիցեն՝ հրամայէ կաթողիկոս լինել. և  
թէ աթոռն Յովհաննու յեփեսոսէ ի Բիւզանդիա փոխեցաւ՝ պատուելոյ  
աղաղաւ, այլ ոչ կաթողիկոսութեան պատճառաւ. Եւ որոշէ, որք հրամանաւ  
10 կաթողիկոսին չձեռնադրին, յորոց յայտ է, զի հրամանաւ նորա ձեռնադրին: Եւ թէ պատահին ոչ յիւրմէ, այլ ի բազմացն ընտրութենէ,  
ամենայն ուրեք ճշմարիտ է, և ի ձեռնադրելն կաթողիկոս:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Ը

15 ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԶԱՅԼՈՑ ՎԵՃԱԿ  
ԵՒ ԶԺՈՂՈՎՈՒՐԴ ՅԱՓՇՏԱԿԵՆ

Վասն բազում յուզիցն և մեծամեծ ամբոխիցն, որ լինին ի կողմանս  
կողմանս, որք եպիսկոպոս լինին և զայլոյ վիճակ չափշտակել շանան, և  
որք երիցունք լինին և այլոյ քաղաքի և ժողովրդեան ցանկան յափշտա-  
կել, — կամ եղև մեծ ժողովոյս, զի զայնպիսին դատարեցուցանեն յիւրա-  
20 քանչիւր վիճակի: Ապա թէ բռնութեամբ կամ կաշառօք զգործն զայն յան-  
դրղենացի գործել և ընդդէմ եկեսցէ առաջնորդական կանոնին, կամ եղև  
մեծ ժողովոյս, զի զայնպիսին ընկեսցեն յաթոռոյն և ի կարգէ քահանա-  
յութեան և բնաւ իսկ ի բաց մերժեսցեն ի պաշտմանէն, և այնուհետև եղիցի  
քեզ իբրև զմի յանզղամաց, զի<sup>250</sup> որում տուեալն իցէ՝ տացի և յաւելցի,  
25 և որ ոչն գիտէ ունել՝ և զոր ունի բարձցի ի նմանէն<sup>251</sup>:

Ոչինչ անյայտ է այս. հոգևոր կանոնական դատաստան, և բազմաց  
ըստ այսմ մերժելի է այժմ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Լ Թ

ՎԱՍՆ ԱՆԿԱՐԳԱՊԷՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՅ

30 Վասն այնոցիկ, որ ի կարգին իցեն և ի կանոնին և յուխտի եկեղեց-  
ոյ և յազահոութիւն և ի զօշաքաղութիւն անկանիցին, զարծաթ ի վարձու  
տան և տոկոսեօք պահանջեն և մոռանան զբարբառ աստուածային Գրոցն,  
որ ասէ՝ զարծաթ իւր ի վարձու ոչ տայ և այլն<sup>252</sup>, և, մանաւանդ, ծոյլ  
և պղերգ՝ ի պաշտմանն և թուլասիրտ՝ յազօթս, մեղկ և ծոյլ՝ ի հաւատս,  
35 այնպիսոյն ասէ Գիր՝ վայ որ թողեալ իցէ զուսումն մանկութեան և

248 Կանոնք Նիկիական է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 121  
249 Տե՛ս հոգվ. ՃԼԵ  
250 Մատթ., ԺԳ, 12. ԻԵ, 29: Մարկ., Դ, 25: Ղուկ., Ը, 18. ԺԹ, 26  
251 Կանոնք Նիկիական ԺԾ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 127—128  
252 Տե՛ս Սաղմ., ԺԳ, 5. Եզեկ., ԺԸ, 8

մոռացեալ զուխտն աստուածեղէն<sup>253</sup>: Կամ եղև մեծ ժողովոյս՝ զայնպիսին մերժել ի կարգէն և կամ բարեսէր կամօք յուզղութիւն ածել<sup>254</sup>:

Լուիցեն քահանայք զվճիռ կանոնական դատաստանին և զարհուրեացին, ապա թէ ոչ՝ վերջին և անաշառ դատաստանաւ դատելոց են:

5

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ

ՎԱՍՆ ՈՐ ԶՁԵՌՆ ՏՈՒԵԱԼ ԱՂՋԻԿ ՅԱՓՇՏԱԿԻՑԷ

Որք միանդամ խօսեալ աղջկունք են և զուգեալ գտանիցին, և յետ այսորիկ այլք յափշտակիցեն, կամ եղև, զի անդրէն տացեն, որում խոսեալն էր. թէ և ի բռնութիւն ապաստանի՝ մի թողցեն<sup>255</sup>:

10

Մի զզուգեալն և զխօսեալն համարի և անդրէն դարձուցանել, թէ և պատկեսցի ընդ յափշտակողին: Եւ այդոցիկ ճշմարիտ է դատաստան:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ Ա

ՎԱՍՆ ՄՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Որք յուխտի անդ իցեն՝ երիցունք, կամ սարկաւագունք, կամ այլ ոք ի պաշտօնէից և հեռի իցեն ի մտոյ, և միտք յօժարեսցին ի ճաշակել, համարձակ կերիցեն և մի՛ զաղտաբար, ապա թէ կամեսցին՝ պահեսցեն: Այլ թէ ոք պիղծ համարեսցի զբանջար կամ զհաց, որ մտտ իցէ, ոչ ընդունին զնա ի կարգ եկեղեցոյ<sup>256</sup>:

20

Ուխտական՝ յայտ է, զի զամուսնացեալս և զկուսանս և որք միանգամ յեկեղեցի են՝ անուանէ: Ապա ուրեմն վայրապար է ազգացն Յունաց և մեր զմիմեանս բամբասել, զի զերկուսինն, ասէ, ընդունիլ ի կանոնաց: Արդ, բարիոք է շուտելն, քան ուտելն, թէպէտ և ոչ բամբասի, որպէս ի մեզ գտանին բազում պահողք. այլ արտաքոյ դատաստանի է զմիմեանս դատելն:

25

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ Բ

ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԶԻՑ

Վասն ընչից, որ անուանեալ իցէ եկեղեցոյ, զինչ և իցէ՝ եթէ գեղ և եթէ այլ ինչ, մինչև եպիսկոպոս լեալ ի տեղոջն և երիցունք վաճառիցեն, իշխան լիցի անդրէն ի նոյն պահանջել. բայց եպիսկոպոսն կշռեսցէ զիրան և զարժանն, եթէ մարթ է առնուլ զգինն կամ դարձուցանել<sup>257</sup>:

30

Կանոնականս հրաման անվաճառելիս լինել զեկեղեցոյսն կամի և իշխան՝ վեպիսկոպոսն և ոչ զքահանայս, եթէ առնուլ կամ դարձուցանել եպիսկոպոսն տեսցէ: Այսպիսի է. զի թէ որ գնեաց՝ ամօք զնոյն շափ

253 Առակք, Բ, 17

254 Կանոնք նիկիական ժՁ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 128

255 Կանոնք Անկիւրեայ ժԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 162—163

256 Կանոնք Անկիւրեայ ժԵ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 163—164

257 Կանոնք Անկիւրեայ ժԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 164

կերեալ իցէ՝ զգինն ոչ դարձուցանել<sup>(105)</sup>, ապա թէ շիցէ ինչ շահեալ՝ դարձուցանել: Ըստ այսմ օրինակի զկշռելն ասէ: Ի դէպ է և զայս գիտել, զի այլազգ ոչ վաճառի եկեղեցոյքն, բայց եթէ վաճառեսցի զանպատշաճսն և այլ ևս անկաւոր գնեսցէ նուիրն զնուրն<sup>(106)</sup>: Եւ այդ ընդունելի 5 դատաստան է յեկեղեցի:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ Գ

ՎԱՍՆ ՈՐ ԿՈՒՍՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՆԱՅ ԵՒ ՍՏԷ

Վասն այնոցիկ, որ ի շափ հասեալ իցեն և կուսութիւն խոստանան պահել և ստիցեն խոստմանն և ի շնութիւն անկանին, կուսան այնուհետև 10 ոչ կարէ լինել, այլ եղիցի նա որպէս զայն, որ երկուս կանայս առեալ իցէ, և զասման նոցին կալցի, և զապաշխարութիւն՝ երկու ամ առ դրանն ընդ ձեռամբ և մի ամ մտեալ յեկեղեցին ընդ ապաշխարողսն ելցէ: Եւ զշերմութիւն ապաշխարութեանն տեսցեն, և հաղորդեսցի օրինացն, բայց յօծումն քահանայութեան մի՛ մերձեսցին<sup>258</sup>:

15 Զայս յայտնագոյն ի նիկիական յերեսուն զլիսին ասէ, այլ աստ՝ որ ամուսնանայ և շնայ, Յայտ է, զի զշնութեան ապաշխարէ, այլ ամուսնութեանն երկակացն է, ուստի ոչ կարէ լինել քահանայ. և թէ երկրորդ ամուսնանալ՝ իբր զերրորդ համարեալ է: Բայց տեսցեն և զհասակ խոստովանողին և այդպէս դատեոցեն: Եւ այդ ըստ այդմ լիցի: Զայս ևս զրտցես 20 ի Լուսաւորչին կանոնսն յերեսուն զլիսին:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ Գ

ՎԱՍՆ ԶՅՂԻ ԿԱՆԱՅՍ ՄԿՐՏԵԼ

Զյղի կանայս արժան է մկրտել՝ յորժամ և կամին, զի ոչ յայսպիսի իրս հաւասարեալ է ծնողն ընդ ծննդեանն, այլ արժան է ամենայն իրօք 25 և կամօք զյօժարութիւնն ցուցանել առ ի խոստովանութիւն ընդունելութեան մկրտութեանն<sup>259</sup>:

Եւ զայս յսղազս երկիւղի մահու, որ յերկունսն է, թողացուցանէ, և յաղազս այնորիկ անխեղճ են մկրտեալն և մկրտողն: Եւ զի մի՛ կարծիցի մանուկն ընդ նմին մկրտիլ, յաւելու զպատճառն: Հաւանելի է այս իրա- 30 տունք յեկեղեցի:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Խ Ե

ՎԱՍՆ ԱՐՉԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ՊՈՌՆԻԿ

Եթէ ոք արձակեսցէ զկին իւր վասն բանի պոռնկութեան և կամ այլ շարագործութեան, որ ոչ միայն այրն վկայէ, այլ և բրազումք վկայեն վասն

<sup>258</sup> Կանոնք Անկիւրեայ Ի, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 166—167. Բերված է վերջից որոշ կրճատումով:  
<sup>259</sup> Կանոնք Նեոկեսարեայ Զ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 166—167

չար գործոց նորա, արձակեսցէ. ընդունի զկանոնս: Բայց մի՛ ապաշխարեսցէ<sup>260</sup>), այլ ի ձեռն ողորմութեան սրբեսցի և հաղորդեսցի օրինացն և եթէ կամեսցի՝ կին արասցէ, և կինն այլ այր չիշխէ առնուլ, մինչ կենդանի է այր նորա<sup>260</sup>,

5 Եւ զայս թէպէտ և գրեալ է մեր զդատաստան<sup>261</sup>, երկրորդեցաք, զի ոչ վասն պոռնկութեան, այլ և յաղազս այլ շար գործոց հրամայէ թողուլ՝ կախարդութեան, դեղատուութեան և այլոց այսպիսեաց: Եւ զի դարձեալ միմեանց կամօք ամուսնանալ, որպէս լուեալ էաք՝ ասացաք: Եւ զի մի՛ ընդդէմ կարծեսցի կանոնաց, որպէս և կամեսցին, այնպէս կալցին:

10

Գ Լ Ո Ւ Ն Ժ Խ Զ

ՎԱՍՆ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԻՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՄԲ

Իսկ եթէ ոչ վասն պոռնկութեան և ոչ վասն շար գործոց եթող զկին իւր, այլ վասն վատաբարութեան, որպէս թէ այլում ակն եղեալ իցէ, զայսպիսիս ոչ ընդունին կանոնք, մինչև ցդառնալ նորա առ կինն. և ընդ յանցանաց եւթն տմ ապաշխարութիւն կալցի, հինգ ամ՝ արատաբոյ, երկու՝ ի ներքս: Ապա թէ ոչ զարձցի առ բուն կինն իւր, զկեանս տան իւրոյ բաժանեսցէ. զկէսն կնոջն տացէ և տուղանս՝ յեկեղեցի, զի զպսակն օրհնութեան անարգեաց: Եւ ինքն զաւուրս կենաց իւրոց պոռնիկ կոչեսցի և մի՛ մտցէ յեկեղեցի Աստուծոյ, այլ ի դուռն աղօթեսցէ, ողորմութեամբ տրօք տնանկաց և ջերմեռանդն արտասուօք գլխոյն թօշակն ընկալցի: Ապա թէ կինն մեռանիցի, և այրն կին շառնիցէ և յապաշխարութիւն եկեսցէ, հինգ ամ ի դրունս և երեք ամ ընդ ձեռամբ հաւասարեսցի աղօթից, ի ձեռն ողորմութեան քաւալ՝ հաղորդեսցի<sup>262</sup>:

25 Եւս և զայս ևս եղաք յառաջ եղեալսն մեր դատաստան<sup>263</sup>, որպէս որ նախ քան զայս ի գլխի ցուցաք, եթէ կամօք միմեանց ամուսնանալ ասացաք: Եւ զի ըստ կանոնաց ոչ կարծեսցեալ, զոր եղաք ի լրոյ, զկանոնականս առցեն քան և այնպէս անկարծիս դատեսցեն:

Միանգամայն ի դիրս դատաստանի, որ ինչ ընդդէմ գրոց կարծի հրամանի, զգրոցն առնլով՝ անբանբաս զմեղ թողցեն, զի ոչ հակառակ էմք աստուածական հրամանացն, այլ ի լրոյ զճշմարտիցն եղաք ներմամբ զբան: Սակայն ի կամսն սպաստան է ընդունողաց և կամ ոչ, և յաղազս այսորիկ սիրով ընդ մեղ լիջիք և մի՛ վայրապար զմերս համարեսցիք զսակաւ վաստակ:

Գ Լ Ո Ւ Ն Ժ Խ Է

35

ՎԱՍՆ ՄԱՐԿԱՆԱԳԱՅ ԱՐՁԱԿԵԼՈՅ ԶԿԱՆԱՅՍ

Վասն որ պատրաստեալ են ի քահանայութիւն և ունիցին կանայս, թէ մինչև ի քահանայութիւն մերձեալ իցէ, և կինն շնայցէ, արձակիցէ զկինն,

<sup>260</sup> Կանոնք Նէոկեսարեայ ԺԱ, Կանոնադիրք Հալոց, հ. Ա, էջ 183

<sup>261</sup> Տե՛ս հոգվ. Ժ

<sup>262</sup> Կանոնք Նէոկեսարեայ ԺԲ, Կանոնադիրք Հալոց, հ. էջ 183—184

<sup>263</sup> Տե՛ս հոգվ. Թ, ԺԳ, ՃԻԲ

և առն շիշխէ լինել, և այրն ի քահանայութիւն մատիցէ: Ապա եթէ կամք իցեն կեալ ընդ նմա առն, քահանայ ոչ կարէ լինել, զի ոչ ընդունի զնա եկեղեցին և ոչ կանոնք<sup>264</sup>:

Իշխան առնէ յերկաքանչիւրսն. և աշխարհական կանանց ամուսնա-  
5 նալ զկնի առն մահուանն կամի, իսկ դոցա՝ ոչ: Բայց տեսցի ընդունելի դատաստանաւ:

Գ Լ Ո Ի Խ Ժ Խ Ը

Վ Ա Ս Ն Ք Ա Ն Ա Յ Ի Յ Պ Ա Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

Քահանայ թէ ի պղծութեան գտանիցի, և իրքն յայտնեսցին, և խոս-  
10 տովան ոչ լինիցի, և յայտնապէս յանդիմանել ոչ կարեն, ի կամս նորա թողցեն լինել և շիինելն և յեպիսկոպոսին<sup>265</sup>: Նոյն կանոն և սարկաւազացն է <sup>266</sup>,

Խրատէ եկեղեցականաց և ժողովրդականաց յինքեանս զայնպիսին  
15 թողուլ և յեպիսկոպոսն, զի նոքա են դատաւորք քահանայից և սարկաւա-  
զաց:

Գ Լ Ո Ի Խ Ժ Խ Թ

Վ Ա Ս Ն Թ Է Ք Ա Ն Ի՞ Ա Մ Ա Յ Օ Ր Հ Ն Ե Ն Զ Ե Ր Է Յ Ն

Կամ եղև մեծ ամենայն ժողովոյն, եթէ մինչև յերեսուն տարին մի՛  
օծցի ի քահանայութիւն, զի փրճեսցի և ևս ընտրեսցի պիղծն ի սրբոյն և  
20 ի բաց պարզեսցի, քանզի և Տէրն մեր երեսնամեայ էր, յորժամ աւ զօ-  
ծումն մկրտութեան և սկսաւ զնոյն օրինակ ուսուցանել ամենեցուն՝ ութ-  
օրեայ մկրտիլ, իսկ երեսնամեայ օժանիլ ի քահանայութիւն<sup>267</sup>:

Սև եթէ ոչ ըստ այսմ սահմանի, զոր զպատկառելին եղին օրինակ,  
զոնեայ ըստ կանոնի սրբոցն արասցեն հայրապետացն Գրիգորիսի և  
25 Ներսիսի<sup>(108)</sup> վերջնոց, զի զայս սահման լուծանել արտաքոյ է զրոց դա-  
տաստանի:

Գ Լ Ո Ի Խ Ժ Խ Ծ

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Ի Զ Ա Ր Կ Է Գ Ա Ն Ի Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Յ Ա Պ Ա Շ Ե Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Վասն որք ի նեղութիւն անկանիցին և կամ ի խիստ հիւանդութիւն,  
30 կամ ըմբոնեսցին ի բռնաւորաց և վասն նեղութեան մկրտեսցին, և կամ էր յառաջ քրիստոնեայ և զործովք՝ վատթար և ապա վասն նեղութեան ի հաւատս կացցէ, զայնպիսին ընդունի եկեղեցին, այլ ոչ կատարելա-

<sup>264</sup> Կանոնք Նէոկեսարեայ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 184—185  
<sup>265</sup> Կանոնք Նէոկեսարեայ ժԳ, կրճատումներով. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 185  
<sup>266</sup> Կանոնք Նէոկեսարեայ ժԵ, միայն այդ նախադասութիւնը. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 185  
<sup>267</sup> Կանոնք Նէոկեսարեայ ժԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 186

պէս, զի անկամայութեամբ են հաւատքն: Զայսպիտոյ ասէ Գիր<sup>268</sup>. միթէ  
ի հո՞ղ խոստովան աննիցի առ քեզ<sup>269</sup>:

Եւ այս մարդասիրութիւն ի Տեառնէ ցուցեալ է առական<sup>270</sup>, բայց բոս  
դատաստանի է անկատարն:

5

Գ Լ ՈՒ Ն Ծ Ծ Ա

Վ Ա Ս Ն Գ Ա Ի Ա Ռ Ի Ե Ր Ի Յ Ա Ն Յ

Գաւառի երիցունք ի քաղաքի եկեղեցոջ, իբրև անդ իցէ եպիսկոպոս  
կամ երէջ քաղաքին, չէ պատշաճ նոցա պատարսուզ մատուցանել կամ հաց  
յազապի տալ և ոչ բաժանել յեկեղեցոջն: Ապա թէ նոքա շատին<sup>(109)</sup> ինչ  
10 իցեն, և կոչիցի՝ յազապի տացէ, այլ շահն զինչ և իցէ ի նմին յեկեղեցոջն  
պահեսցի<sup>271</sup>:

Զի թէ արք քաղաքի պատիւ ունին, որչափ ևս առանել՝ եպիսկոպոսք  
և քահանայք: Եւ թէ նոքա այլուր բաւականեալք իցեն և կամ անդ են և  
անպարապք, և կոչին, հրամանաւ նոցա արասցեն, և շահն յեկեղեցոջն  
15 լինել իրաւամբք է:

Գ Լ ՈՒ Ն Ծ Ծ Բ

Վ Ա Ս Ն Ք ՈՐ Ն Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Յ

Եւ քորեպիսկոպոսք են բոս օրինակի և բոս կարգի եւթանասնիցն,  
իբր լծակիցք և դործակիցք վասն փրկութեան<sup>(110)</sup>, որ յաղքատս կատար-  
20 բելոց է<sup>272</sup>:

Գաւառի տեսուչ թարգմանի քորեպիսկոպոսն և ձեռնադրող է խոնար-  
հագոյն աստիճանաց, որ ի վայր է քահանայութեան: Հակառակ է զբոց  
դատաստանի եպիսկոպոսաց զարս աշխարհակաւնս քորեպիսկոպոս առնել  
կամ զտղէտ քահանայ՝ կոփիչ աղքատաց և ոչ տեսուչ, զի և եպիսկոպոսն  
25 տեսուչ թարգմանի, և նոքա՝ դործակիցք:

Գ Լ ՈՒ Ն Ծ Ծ Գ

Վ Ա Ս Ն Պ Տ Ղ Ո Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ո Յ

Որք զպտուղս եկեղեցոյ կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ կամ  
տալ, և ոչ կամօք եպիսկոպոսին կամ որ ձեռնադրեաց զայնպիսին յայն-  
30 պիսի իրս, և կամօք նորա շառնիցէ և չպործիցէ, նզովեալ լիցի<sup>273</sup>:

Լուիցեն զլացողք զեկեղեցիս կամ յինքեանս և կամ յայլ ոք տալ և  
զարհուրեսցին: Եւ թէ այսքանեաց նզովք է, ո՞րչափ միանգամայն յա-  
փրշտակողաց զեկեղեցի միմեանց: Եւ աստ դատաստանաւ է նզովս, զի որ  
զեկեղեցոյն օտարացոյց զպլտուղ, օտարանայ, և ինքն յեկեղեցոյ:

268 Սաղմ., ԻԹ, 10  
269 Կանոնք նէոկեսարեայ ժէ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 186  
270 Տէ՛ս Ղուկ., ԺԵ, 11—32  
271 Կանոնք նէոկեսարեայ ժԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 187  
272 Կանոնք նէոկեսարեայ ժԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 187  
273 Կանոնք Գանգրայ է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 194

Գ Լ Ո Ւ Խ Ծ Մ Դ

Վ Ա Ս Ն Ո Ր Ք Զ Ո Ր Դ Ի Ս Թ Ո Ղ Ո Ւ Ն Հ Ա Ր Ք

Որ հարկանեն և թողուն զորդիս իրեանց և ոչ սնուցանեն՝ որչափ  
 5 ձեռնհաս իցեն, և ոչ փոյթ առնիցեն վասն Աստուծոյ կարգին և սննդեանն,  
 մինչև ի պատճառս պահոց և վանականութեան արհամարհիցէ և անիոյթ  
 առնիցէ, նզովեալ լիցի<sup>274</sup>:

Եւ զայս սահման կանոնի թէպէտ և յազազս աղանդոյն<sup>(111)</sup> կարծեմք  
 սաստիւ լինել, որք զանձինս սուրբս քարոզէին և բազում նորաձևութիւնս  
 առնէին, որպէս վասն պաշոյ կեղեցոյ և այլոց, այլ սակայն աստուածա-  
 10 յին Գրոց հրաման է բոս կամացն Աստուծոյ սնուցանել զորդիս<sup>275</sup>,  
 զի մի՛ հեռացին յԱստուծոյ օրինացն: Եւ թէպէտ ինքեանք այնքորք  
 կարծին մերձաւոր լինել Աստուծոյ, դատաստանաւ է որոշին, զի պատ-  
 ճառք եզեն ծննդոցն հեռանալ ի Տեառնէ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Մ Ե

Վ Ա Ս Ն Ո Ր Դ Ո Ց, Ո Ր Թ Ո Ղ Ո Ւ Ն Զ Հ Ա Յ Ր Ն

Եթէ սերուք որդի, որոյ ծնողն առաւել հաւատացեալ է և առաքինի ի  
 կարգս Աստուծոյ, հեռանայցէ ի պատճառս աստուածպաշտութեան և  
 արհամարհիցէ և զարժանն և զիրաւ պատիւ ծնողացն շհատուցանիցէ,  
 նզովեալ լիցի<sup>276</sup>:

Եւ այսմ դարձեալ յոյժ պատուէր է ի Գրոց<sup>277</sup>, թէպէտ և յազազս  
 ասացեալ աղանդոյն<sup>(111)</sup> առաւել զզուշացուցանէ, որք ի պատճառս  
 աստուածպաշտութեան արհամարհել զծնողսն տային, յազազս այնորիկ  
 դառաւելութիւն եղ զհաւատոյ ծնողին: Զի և Տէր զխափանիչ ստուած-  
 15 պաշտութեան զծնողսն հրամայեաց թողալ<sup>278</sup>, այլ նորա՛ զլաւոն: Յազազս  
 այնորիկ զնզովսն կրին իրաւացի:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Մ Զ

Վ Ա Ս Ն Կ Ե Ր Ո Ղ Ա Յ Զ Ա Խ Ա Գ Հ Ի Ն Գ Շ Ա Ր Թ Ի Ն

Եթէ սք զբառասունսն պահեսցէ սուրբս և զատկի հինգշաբաթ օրն  
 քան զհազորդէլ օրինացն և բաժակին սրբոյ աւելի ինչ համարձակեսցի ու-  
 30 տակ, զպահոցն, զոր պահեսց, ընդունայն է և ի մեծ ժողովոյս նզովեալ  
 կղիցի<sup>279</sup>:

Զայս և ի նիկիայ ժողովն կրին՝ յայնմ աւուր շորակեր լինել սակաւ  
 լուիցին Յոյնք և Վիրք զդատաստանս կերողաց զօրն մեծ, զի ոչ Գան-  
 դրայն ժողովեալք և ոչ նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազգաց, մա-

274 Կանոնք Գանդրայ ժԵ, կրճատումով. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 196

276 Տե՛ս եփես., 2, 4. Կողոս, Գ, 21

276 Կանոնք Գանդրայ ժԶ, կրճատումով. Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 196—197

277 Տե՛ս ելք Ի, 12: Բ Թրին., Ե, 16: Մատթ., ԺԵ, 4: Մարկ., է, 10: Եփես., 2, 1—2 և այլուր:

278 Տե՛ս Մատթ., ԺԹ, 29, և այլուր:

279 Կանոնք Գանդրայ ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 198

նաւանդ ի Յունաց: Եւ այս դատաստանս անլուծելի է ի վերայ նոցա, զի ոչ յարժանաւոր ժողովոյ լուծաւ, այլ ի խոտորեալ և յանարգեալ ժողովոյն Քաղկեդոնի:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ծ Է

5 Վ Ա Ս Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց Հ Ն Ա Զ Ա Ն Դ Ի Լ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ն

Որ յիւրաքանչիւր իշխանութեան եպիսկոպոսք իցեն, իմասցին, զի մայրաքաղաքաց եպիսկոպոսն թիկունք է նոցա և հոգեբարձու, և ամենայն ոք, զինչ և պատասխանի կամիցին առնել, առ նա ընթանան՝ և թէ մուրհակ արքունի և իշխանաց վասն իրաց եկեղեցոյ և կարգաց հասարակաց: 10 Վասն այսորիկ կամ եղև, թէ պատռուվ յառաջ իցէ, և առանց նորա մի՛ իշխեսցեն գործել ինչ, ըստ նախնեացն սովորութեան հարցն մերոց, որ կարգեալ են կանոնք, բայց միայն զայս իշխեսցեն գործել յիւրեանց իշխանութիւնսն՝ եթէ զեղք, եթէ զաւտոք, եթէ օժումն քահանայութեան և կամ զինչ վարք իցեն իւրոյ գաւառին և իշխանութեան, այլ այլոյ ամենե- 15 վին մի՛ իշխեսցէ գործել ինչ և ձեռնամուխ լինել արտաքոյ, քան զկամս մայրաքաղաքի եպիսկոպոսին: Եւ ոչ նմին կաթողիկոսին առանց հաւասարութեան այլոց եպիսկոպոսաց գործել ինչ<sup>280</sup>:

Յայտնի է այս հոգևոր դատաստան և բնաւին այժմ լուծեալ: Մի՛ ընդ մեզ զայրասցին յեպիսկոպոսաց, զի ոչ խնդրեն նոքա զարժանիս ձեռնա- 20 դրել, այլ կան մնան, զի զանձն ուրուք շարժեսցէ ախտ, և նոքա՝ զայլ ախտաւորս գաւառին, և ընծայական թղթովք ի դիմաց վկայելոցն երթան: Թէպէտ յայտնի է հայրապետաց, զի ո՞ ոք ի լաւացն յանձնէ յայգոսիկ համարձակեաց, կամօք պատրին: Եւ այդ պատճառ հակառակութեան նոցա ընդդէմ հայրապետաց, զի ոչ ի Տեառնէ կոչեցան և ոչ հաւասարու- 25 թեամբ եպիսկոպոսաց ձեռնադրեցան:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ծ Ը

Վ Ա Ս Ն Ո Ր Յ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Է Բ Ա Ն Ա Դ Բ Ե Ա Լ Ե Ն

Եթէ ոք յիւրմէ եպիսկոպոսէն անկաւ՝ երէց կամ սարկաւազ, և զեպիսկոպոսին զդատաստան յանձին շկալաւ և համարձակեցաւ ձանձրա- 30 ցուցանել զուր ժողովոց բազմաց, որպէս թէ զինչ իրաւունս ունիցի՝ առաջի բազում եպիսկոպոսաց ասասցէ և ի նոցանէ զարդար դատաստանի զվճիռն ակն անխցի տոնուր: Այդ թէ ե՞ ի նոցանէ սրտնեղեցաւ և անգոսնեաց, և համարձակեցաւ առ թագաւոր դիմել և ձանձրացուցանել, զայնպիսին մի՛ արժանի տոնել թողութեան կամ ընդունելութեան կամ 35 բնաւին յոյս ինչ տալ, զի առ յապայ հաստատիցի ի նոյն տեղի<sup>281</sup>:

Արդար է այս դատաստան, զի յետ մի անգամ և երկիցս յանդիմանելոյ յանդգնեցաւ: Զի թէ իւրոյ եպիսկոպոսին կարծի նախանձու լինել, միթէ և բազմօացն ևս: Այլ ի դրշանալն՝ այդ ևս տեսցին:

<sup>280</sup> Կանոնք Անտիոքայ Թ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 198  
<sup>281</sup> Կանոնք Անտիոքայ ԺԹ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 213

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ծ Թ

Վ Ա Ս Ն Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց Զ Ձ Ե Ռ Ն Ա Դ Ի Ր Ե Լ Յ Ա Յ Լ Ո Յ Վ Ի Ճ Ա Կ Է

Մի՛ ոք յեպիսկոպոսաց իշխել համարձակեսցի յայլմէ իշխանութենէ  
 յայլ մտանել և ձեռնադրութիւն առնել յեկեղեցիս և մերձեցուցանել զոք  
 5 յաստիճան, և ոչ բազմութեամբ մտանել յայլ իշխանութիւնս, բայց եթէ  
 համարձակելով և թուղթս տալով՝ որ մայրաքաղաքացն է և որ ընդ նմա  
 եպիսկոպոսքն են՝ մուտ տայցեն նմա: Ապա թէ ոչ ուրեք կոչեցեալ՝  
 դիմեսցէ ստահակութեամբ ձեռնադրութիւնս առնել ումեք և հաստատու-  
 10 թիւն իրաց եկեղեցոյ, որ ոչ բնաւ անկ իցէ նմա, անհաստատ լիցի, որ ի  
 նմանէ արարեալն գտանիցի, և նա պարտաւոր լիցի ստահակութեանն իւ-  
 րում և յանմիտ ձեռնադրութենէ զարժանն զատաստան ընկալցի՝ առ ետեղ  
 մերժեսցի ի սուրբ ժողովոյն<sup>282</sup>:

Ի բազում կանոնս և գրեթէ ամենայնս այս եզաս, զի շար է և անկար-  
 գութեան պատճառ: Անհաստատ լիցի՝ այսպէս ասէ. զի թէ ի նմանէ ձեռ-  
 15 նադրեալն արժանաւոր իցէ, զզջացեալ՝ հաստատեսցի օրհնութեամբ  
 պատշաճի յիւրմէ եպիսկոպոսէն, նմանապէս և՛ այլ ինչ կարգեալքն, և  
 ինքն ևս հաստատեսցի՝ ցուցանելով զարժանի ասպշաւս, ապա թէ ոչ՝  
 մերժեալ լիցի միշտ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ

Վ Ա Ս Ն Ա Մ Բ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Լ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ց

Եթէ ոք յեպիսկոպոսաց յիրս ինչ յանցուածոց և մեղադրութեան գա-  
 տապարտեսցի, և ապա զէպ լիցի վասն նորա ոչ միաբանել, որք յիշխա-  
 նութեան են եպիսկոպոսք, և ոմանք ի նոցանէ անպարտ և արզար յայտ  
 առնել կամեսցին, և ոմանք ի նոցանէ՝ պարտաւորել, զի վախճանեսցի  
 25 ամենայն իրօք հակառակութիւն կեղծաւորութեան, կամ եղև սուրբ ժողո-  
 վոյս, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն է, զի ի մերձաւոր գաւառաց անտի  
 և յիշխանութենէ կոչեսցէ զայլս ոմանս, որ դատեսցեն և զհակառակութիւն  
 կեղծաւորութեանն ի բաց լուծցեն, զի հաստատուն է՝ յոր ինչ կարգեսցեն,  
 որ ինչ յիշխանութենէ անտի են<sup>283</sup>:

Տե՛ս, թէ որքան ստուգիւ հրամայէ զատել կաթողիկոսաց և ոչ պատ-  
 30 րիլ ի պատճառս ազահութեան և թիւրել զճշմարիտ դատաստանս:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Ա

Վ Ա Ս Ն Ո Չ Փ Ո Ն Ե Լ Ո Յ Զ Հ Ի Ն Ս Ո Վ Ո Ր Ո Թ Ի Թ Ի Ի Ն, Ո Ր Բ Ա Ր Ի Ն Է, Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Յ Ս Ր Բ Ո Յ

Ոչ է պարտ զվաղնչուցն սովորութիւն ի գաւառի եկեղեցեաց նորա-  
 35 ձևել<sup>284</sup>:

<sup>282</sup> Կանոնք Անտիոքայ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 213—214  
<sup>283</sup> Կանոնք Անտիոքայ ժԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 214—215  
<sup>284</sup> Կանոնք Երկրորդ Նիկիականք Զ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 74

Զվիճակաց, և դաթոռոց, և դժողովրդոց ասէ: Եւ թէ փոխակալ յասացելոցդ կամի որ ի հայրապետաց, ժողովօք պարտի առնել, որ է անվտանգ ըստ դատաստանի գրոց:

**Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Բ**

5 **ՎԱՍՆ ՈՉ ՏԱԼ ՅԱՅԼ ԵԿԵՂԵՑԻ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑՈՅ ՆՈՒԼՐ**

Ոչ է պարտ դարբութիւնսն յօրհնութեան կարգի ըստ դատկաց յայլ եկեղեցիս առաքել<sup>285</sup>:

Զնշխար տալն յայլ եկեղեցիս խափանէ, զի մի՛ սլատճառ ամբոխի լիցի, զի յամենայնսն ուղիղ դատաստանի զգուշանան կանոնք:

10 **Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Գ**

**ՎԱՍՆ ՈՐ ԸՆԳ ԱՅԼԱԶԳԻՍ ԽԱՌՆԱԿԻՆ ԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ**

Զէ մարթ, որ յեկեղեցոյ մերոյ են, ի պէսպէս և ի ցոփ հարսանիս ալլազգեաց մերձեցուցանել զուստերս և զդատերս իւրեանց, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ<sup>286</sup>:

15 Գտաստան ըստ կամաց կանոնաց այս լիցի այնպիսեացն. զի թէ ի հեթանոս ալլազգաց տան, և զրկին ի հաղորդութենէ, զրկեսցին տուողքն ի հաղորդութենէ իւրեանց, և եթէ ի հերձուածողս, յոր մեք ոչ հաղորդիմք, զգատաստան խղճին ծնողքն, որ ընդ նոսա ամուսնացուցին, հատուցեն:

20 **Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Գ**

**ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՈՐ ԶԱՅԼ ԵԿԵՂԵՑԻ ԿՈՂՈՊՏԷ ԵՒ ԶԻՒՐՆ ԶԱՐԴԱՐԷ**

Եսլիսկոպոս որ, եթէ իցէ գաւառաց բազմաց և ունիցի իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով, մի՛ իշխեսցէ յայլոց իշխանութեանց առնուլ ինչ և 25 զիւր եկեղեցին զարդարել, զի աշառութեամբ վարեցաւ և անձին իւրում դատապարտութեամբ: Այնպիսին, եթէ շհաւանիցի դառնալ յիրացն, ի բաց լուծցի. և այն, զոր սու յայլոց և շինեաց զեկեղեցին, մի՛ կոչեսցեն զանուն նորա իւրեանց վարդապետ<sup>287</sup>:

Յայտնի է այս հոգևոր դատաստան և պահելի հաւաստեալ յեկեղեցի:

30 **Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Ե**

**ՎԱՍՆ ՈՐ Ի ՄԻՏՍ ՈՉ ԻՅԷ ԵՒ ԶԻՒՐՈՎԻՆ ԵՐԹԻՅԷ**

Հարցումն. Որ յիւր միտս ոչ իցէ և զիւրովին երթիցէ, այսինքն՝ կամ գահապէժ առնի, կամ այլ ինչ մահու մեռանի, պա՛րտ է ի վերայ պատարագ մատուցանել, թէ ոչ:

<sup>285</sup> Կանոնք Երկրորդ Նիկիականք ԶԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 87: Կանոնք Լատղիկեալ ժԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 232

<sup>286</sup> Կանոնք Լատղիկեալ ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 231

<sup>287</sup> Կանոնք Կղեմայ ԶԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 99:

Պատասխանի. Պարտ է վիճակելոյն քննել, եթէ ճշմարտութեամբ պակասամիտ էր և արար զայս, քանզի բազում անգամ մերձաւորին ախտացելոյն կամելով դիպել, որ ի վերայ նորա սլատարագ մատչի, ստեն և ասեն՝ չէր յիւր միտսն, զի մատուցեն զպատարագն: Արդ՝ քննել պարտ է, մի գուցէ ի բռնութենէ մարդկան կամ այլապէս արար զայս, ապա ոչ է պարտ լինել պատարագ ի վերայ նորա, քանզի ինքնասպան եղև անձին իւրոյ: Ապա պարտ է քննել զամենայն ճշմարտութեամբ, զի մի՛ ի դատաստան անկանիցի մատուցանողն<sup>288</sup>:

Արդ՝ թէսլէտ յայտնի է ըստ հարցմանն և պատասխանիդ, այլ վերակացորն սլարտասլան են տպաշխարել ըստ դատելոյ վարդապետաց: Եւ դատաւորաց ոչ է այդ:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Զ

##### Վ Ա Ս Ն Գ Ի Ի Ա Հ Ա Ր Կ Ն Ո Ջ

Հարցումն. Եթէ որ կին այսահարիցի յոյժ, որպէս զի երկաթս ազանիցի, և այր նորա ասիցէ՝ ոչ կարեմ ժուժկալել, և կամիցի առնուլ այլ կին, օրէ՞ն է, թէ ոչ:

Պատասխանի. Շնութիւն միջնորդի յիրսդ, և զինչ՞ պարտ և արժան է, ոչ գիտեմ վասն այդորիկ<sup>289</sup>:

Ըստ ներման և զայս զրեցտք երբևմն զդատաստան<sup>290</sup>. որպէս կամ է րնկալցին դատաւորք և անպարտաւ զմեզ թողցեն յայդմանէ:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Է

##### Վ Ա Ս Ն Ո Ր Ա Յ Ր Չ Լ Ի Ն Ի

Հարցումն. Եթէ այր որ ոչ լինիցի ի գործ այրութեան, և կինն ելանէ ի նմանէ, եթէ որ զկինն զայն կին առնիցէ, րնդ հանե՞ալ կանայսն պարտ է համարել զայնպիսին, եթէ անխե՞ղճ ունել: Կամ թէ այրն շարձակ է և ասէ այնպէս, եթէ՞ ինձ մասն հասեսուլ է յՍտտոժոյ, կաց և պաշտեա զիս, մեր զի՞նչ պատասխանի տացուր:

Պատասխանի. Չէ արժան արձակել և ոչ ձեզ թողացուցանել<sup>291</sup>:

Եղևալ է և այս դատաստան կանոնական<sup>292</sup>. ներմամբ ի կամս ապաստան է հաճելն ընդ երկաքանչիւրսն, նմանապէս և՛ դատաւորաց եկեղեցոյ:

#### Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Ը

##### Վ Ա Ս Ն Հ Ա Շ Մ Ե Լ Ո Յ Կ Ա Ն Ա Ն Յ

Հարցումն. Եթէ կին ուրուք հաշմիցի և ասիցէ ցայր իւր, եթէ՞ Ես 35 ահաւասիկ շեմ արժանի առնակնութեան, արա դու քեզ այլ կին, որ քեզ

<sup>288</sup> Կանոնք Աթանասի ԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 295

<sup>289</sup> Կանոնք Աթանասի ԺԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 295—296

<sup>290</sup> Տե՛ս հոդվ. է

<sup>291</sup> Կանոնք Աթանասի ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 298—299

<sup>292</sup> Տե՛ս հոդվ. Զ

պիտանի է և զտուն ըս շէն կալցի, և ինձ ամ ըստ ամէ հաց և հանդերձ տուտ, և ես նստայց առ եկեղեցոյդ մինչ ի վախճան ժամանակի իմոյ, և այրն առնու յանձն առնել զամենայն, ընդ պատուհասի՞ւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ՛ անվնաս է:

5 Պատասխանի. Վնասակար է, ոչ կարէ այլ կին առնուլ, սրչափ կենդանի իցէ կինն իւր<sup>293</sup>:

Ընտրութեամբ զիջանելով եղաւ այս դատաստան կանխաւ<sup>294</sup>: Ընդ կամս դատաւորաց եկեղեցոյ եղաք և զայսոցիկ ընդունելութիւն, միայն զի ի խղձէ ճողոպրիցիմ:

10

Գ Լ Ո Ւ Խ Ծ Կ Թ

Վ Ա Ս Ն Ա Ն Ա Ս Ն Ա Պ Ղ Մ Ա Յ

Հարցումն. Եթէ այր ոք ընդ անասնոյ սլղծիցի և յետ սլղծութեանն զզջանայցէ և ապաշխարիցէ և վաստակիցի յօրկանոցի, որպէս և հրամայեն վարդապետք, և կին նորա յետ յանցանացն շկամիցի ի կնութեան կալ վասն պղծութեանն, որ եղաւ ի վերայ նորա, և այրն այնպէս ասասցէ, թէ՛ կամ կինն առաջին հաւանեացի, կամ այլ կին հրամայիցէք առնել:

15

Պատասխանի. Կինն իշխէ մեկնել, և այրն այլ կին<sup>(112)</sup> առնուլ<sup>295</sup>:

Նշանակեցաւ երբեմն այս դատաստան<sup>296</sup>, այլ այժմ զսրբոյս եղաք հրաման ի լրման այնմ:

20

Գ Լ Ո Ւ Խ Ծ Է

Վ Ա Ս Ն Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի, Թ Է Ս Պ Ա Ն Ա Ն Է Ջ Ո Ք

Հարցումն. Եթէ ոք ի քահանայից յուղտը զիպեսցի, և աւազակք ի վերայ անկցին, և դէպ լիցի քահանայի սպանանալ զոմանս յաւազակացն և զանձն իւր և զընկեր իւր ապրեցուցէ, պա՞րտ է նմա ի կարգի քահանայութեան կալ, թէ՛ ոչ:

25

Պատասխանի. Չէ արժան կալ ի քահանայութեան, վասն զի ոչ է արժան քահանայի սպանանել զոր, թէ՛ և ինքն մեռցի, այլ և ոչ զանասուն<sup>297</sup>:

Յաղագս այսմ դատաստանի լուայ, եթէ վասն անձին շէ պարտ սպանանել զոր, այլ վասն ընկերացն լաւ է սպանանել, յորժամ աւազակքն այլազգիք իցեն: Եւ պաշտել զքահանայութիւն կամ ոչ ՚ի դիպուածսն տեսցի ի վարդապետաց<sup>298</sup>:

30

Գ Լ Ո Ւ Խ Ծ Է Ա

Վ Ա Ս Ն Դ Ի Ի Ա Հ Ա Ր Ա Յ Ե Ի Ա Յ Լ Խ Ո Ւ Մ Ա Ր Ն Ո Ւ Ս Պ Ա Ն Մ Ա Ն

Հարցումն. Եթէ ուրուք ի դիւահարիւն իւրում մարդ սպանեալ առանց զզայութեան իւրում, յորժամ սրբեսցի ի դիւէն, իբրև սպանող պարտ է ապաշխարել, թէ՛ ո՞րպէս:

35

<sup>293</sup> Կանոնք Աթանասի ԻԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 299—300

<sup>294</sup> Տե՛ս հոգվ. է

<sup>295</sup> Կանոնք Աթանասի ԻԶ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 301

<sup>296</sup> Տե՛ս հոգվ. ԺԱ

<sup>297</sup> Կանոնք Աթանասի ԼԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 303

<sup>298</sup> Տե՛ս նաև հոգվ. ՃԼԳ և ՃԼԴ

Պատասխանի. Սակաւ ինչ, զի ի շարէն է գործն<sup>299</sup>:

Սոյն լիցի և յաղագոս այլ մտախաբացն: Բայց ըստ հոգևոր գատաստանի, եթէ ինքեանց վնասիցեն և թէ այլոց, առանց ապաշխարութեան մի՛ լիցի տեսողքն: Այլ ըստ մարմնոյ գատաւորաց աստ գործ ոչ է:

5

Գ Լ Ո Ի Խ Ծ Է Բ

Վ Ա Ս Ն Ա Մ Լ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ա Ն Ա Ն Ց

Շարցումն. Եթէ ոք վասն ամլութեան եթող զկին իւր և առնէ կին ծննդական և ապաշխարութիւն խնդրէ նովին կնան, զին՛չ պարտ է առնել:

10

Պատասխանի. Շնացող է<sup>300</sup>:

Գրեալ է քննութեամբ և այս գատաստան<sup>301</sup>: Այլ գատաւորաց լիցի զսրբոյս մեծարել զհրաման և կամ գատեկն զկանխաւ, և ազատս զմեզ ի բամբասանաց թողուլ: Ներէ և այսմ սուրբն Բարսեղ<sup>302</sup>:

Գ Լ Ո Ի Խ Ծ Է Գ

15

Վ Ա Ս Ն Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի Ց Ե Ի Ա Յ Լ Ո Ց Ա Կ Ա Մ Ա Ն Ս Ս Պ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ց

Շարցումն. Եթէ ոք ի քահանայից սրբէ զանդաստան իւր կամ զպարտէզ և քար ընկենու զորմովն, և գիպի մարդոյ, և մեռանի, զին՛չ պարտի առնել վասն կարգի քահանայութեանն և պաշտմանն: Կամ թէ ումեք յաշխարհականաց նոյնպէս ակամայ սպանութիւն գիպի, ո՞րպէս պարտ է տալ ապաշխարութիւն:

20

Պատասխանի. Սպանող է, ապաշխարեսցէ և զքահանայութիւն մի՛ պաշտեսցէ<sup>303</sup>:

Նմանապէս և՛ հայր՝ զորդի և այլ այսպիսի, նմանապէս և՛ որ ի վարդապետէ վասն խրատու հարեալ է և մեռեալ, ըստ սովորութեան<sup>304</sup>: Եւ այսպէս է. սաստիւ առաքեալ քահանայ զծառայսն զհետ փախուցելոյ ծառային<sup>305</sup>, այլ թէ յամբոխի միջի ձիով ընդ կուռն հարկանէ և սպանանէ, ի քահանայութիւն դալ ասէ և աստ լուծանէ<sup>306</sup>, կամ զի շէր քահանայ, կամ յամբոխէն եղև, ներէ:

25

Նման այսմ և զակամայ սպանութիւն Օրէնքն ուսուցանեն, որպէս ոստչիլ տապարին, կամ այլ ինչ այսպիսի, զոր յապաստանի, ասէ, անկանել ի քաղաքսն և ապրել, որ զերկրորդ մահուն ունի զտեղին<sup>307</sup>:

30

է կամաւ գարձեալ և ակամայ, յորժամ նետ ոք ձգէ որսոյ, կամ գահանի, կամ ըստ այլոյ օրինակի, և պատահի թշնամոյ, յորոյ վերայ խնդայ,

299 Կանոնք Աթանասի ԼԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 304

300 Կանոնք Աթանասի ՄԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 315

301 Տե՛ս հոգվ. ԺԱ և ՃՂԶ

302 Տե՛ս Կանոնք Բարսղի Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 336

303 Կանոնք Աթանասի ՀԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 320—321

304 Տե՛ս Կանոնք Աթանասի ՀԳ

305 Տե՛ս Կանոնք Աթանասի ՀԱ

306 Տե՛ս Կանոնք Աթանասի ԽԳ

307 Տե՛ս Ելք, ԻԱ, 12—13: Թիբ., ԼԵ, 6—28: Բ Օրին., Գ, 41—42: Եսու, Ի, 1—9

խառն է յերկուցն: Յաղագոս այնորիկ է դատաստանս թագաւորացն, ի սպանանել այլազոյ զքրիստոնեայ ակամայ իբր զկամաւոր եղաք զդատաստան, զի բնութեամբ է խնդալ նոցա ի կորստեան մերում: Եւ արդ, քանզի արժան է զակամայ սպանութիւն խոստովանեալ՝ ըստ կանոնական ուղղել դատաստանի, և ի ձեռս անկեալ դատաւորացն՝ ճշգրրիտ դատել զակամայ և զկամայ և որ յերկուցն է և այնպէս զտուժսն ուղղել: Այլ զկատարեալ կամայն և զակամայն ի կանոնաց ուսցիս ի Բարսղի սրբոյն<sup>308</sup>:

Գ Լ ՈՒ Խ Ծ Է Գ

10 ՎԱՍՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Իսկ որ ի պատերազմունս մահք գործին, հարքն մեր ամենեկին շահմարեցան ինչ զայն ի մեղս, ըստ որում և մեզ հաճոյ թուեցաւ սմին խորհրդոյս հետեւել: Բայց վասն զձեռս սրբելոյ բարիոք է այնպիսեացն երեք ամ արտաքոյ հաղորդութեան լինել<sup>309</sup>:

15 Այս և ոչ ընդ օրինօքն հմուտ: Եւ սստ լոկ ի հաղորդութենէ ասէ արտաքոյ: Յայսմանէ ուսցին դատաւորք, և մի՛ վրէժ ինչ լիցի:

Գ Լ ՈՒ Խ Ծ Է Ե

ՎԱՍՆ ՈՐԴՈՑ ԲԱԺԱՆՄԱՆ

20 Որդիք որ ոչ հնազանդին ծնողաց իւրեանց, որ ինչ և հասանէ յընչից իւրեանց, տացեն նոցա սիրով և նստուցանեն զնոսա ուրոյն. գուցէ շարիք ինչ հանդիպեսցին: Եւ որ կանայս առնեն՝ նոյնպէս արասցեն, զի այն է հաճոյ Աստուծոյ, քանզի Պօղոս այսպէս հրամայեաց<sup>310</sup>:

Թերևս այն է, որ ասէ՝ հարք, սիրեցէք զորդիս ձեր, և այլն<sup>311</sup>: Եւ զայս ընտրելով ներմամբ կամի:

25 Գ Լ ՈՒ Խ Ծ Է Զ

ՎԱՍՆ ՆԵՐՔԻՆԵԱՅ ԵՒ ՄԱՐՄՆԱԶԵՂՆԱՅ

30 Եթէ ոք ներքինի իցէ և կամ մարմնազերծ և կեղծաւորութեամբ կին առցէ, և կնոջն հասեալ ի վերայ գործոյն՝ իշխան է քակտել և թէ կալ. և թէ քակեսցի, ում և կամի՛ լինիցի: Եւ զկէս ընչիցն. առցեն յառնէն և տացեն տուգանս, վասն անարզանաց պսակին, յեկեղեցին, և երեք ամ ապաշխարեսցէ այրն պիղծ<sup>312</sup>:

308 Տե՛ս Կանոնք Բարսղի Կեսարացոյ Ե, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 338—341

309 Կանոնք Բարսղի Կեսարացոյ Ը, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 341

310 Կանոնք Բարսղի Կեսարացոյ ԻԷ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 107

311 Տե՛ս Եփես., Ե, 31. Զ, 4: Կողոս., Գ, 21

312 Կանոնք Բարսղի Կեսարացոյ ԽԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 111—112

Գ Լ Ո Ւ Խ Ս Ծ Է Է

Վ Ա Ս Ն ՈՐ ՈՒՏԷ Ի ՏԵՂՈՅ

Եթէ որ ուտէ ի տեղոյ<sup>(113)</sup>, տացէ ընդ միոյն չորս, ապա թէ ոչ՝ ըստ  
 կանոնին ապաշխարիցէ, կամ յաղքատս տալ, թէ այն պատահի<sup>313</sup>;  
 5 Եւ այդ լիցի դատաստան այդոցիկ:

Գ Լ Ո Ւ Խ Ս Ծ Է Ը

Վ Ա Ս Ն ՀՐԳԵՀԻՑ

Եթէ որ հրդեհիցէ զարդար վաստակս, տուժեսցի ընդ միոյն երեք, թէ  
 ոչ՝ ապաշխարեսցէ տասն ամ<sup>314</sup>;  
 10 Ցուցաւ այս և ըստ Օրինացն<sup>315</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ս Ծ Է Ք

Վ Ա Ս Ն ՀԱՓՇՏԱԿՈՂ ԱՐՈՒԵՍԱՒԻՐԱՑ

Արուեստարք, որ յափշտակեն զինչսն այլոց, տացեն ընդ միոյն  
 չորս, ապա թէ ոչ՝ ապաշխարեսցեն ըստ վարդապետին հրամանի<sup>316</sup>;  
 15 Զյայտնեալն և ի դատաստան անկեալն հատուցանել ասէ, և որք կա-  
 րողն են, և որք շունին կար և զժածուկն՝ ապաշխարել:

Գ Լ Ո Ւ Խ Ս Ծ Զ

Վ Ա Ս Ն ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՅՈՒՍՏԵՐՍ ԵՒ Ի ԴՍՏԵՐՍ

Եթէ որ վախճանի և ունիցի ուստերս և դստերս, զինչսն ծնողացն  
 20 ընդ երկու քոյրսն մին եղբօր բաժին դիցեն հաւասարապէս: Ըստ Օրինացն  
 յաճախագոյն զրեցաք զայս դատաստան և եղաք<sup>317</sup>. դուստր ի տան աոցէ  
 դեղբօր բաժին, և ելեալք՝ երկուսն զմին եղբօր: Եւ այս յայտնի յՕրինաց  
 ոչ ասացաւ, և աստ կանոնական հրամանս զայս ոչ ընտրեն, և ոչ հեթա-  
 25 նոսք զանազանն զսոսա: Այլ ես յիրացն հաւատարիմ զայն իսկ գիտեմ,  
 զի ելանէ դուստր ի տանէ հօր բաժնիւ և որ ի տան է՝ անբաժին ևս է: Արդ,  
 զսոսա հաւասարաբաժին զկնի մահուան հօրն առնել ոչ է արդարադա-  
 տութիւն, զի այդպէս գտանին կարգեալ դստերքն ընդ եղբարսն առեալ բա-  
 ժին, և որք ի տանն՝ երկուսն մի: Ապա թէ որ ասիցէ՝ որդոցն ծախք լինել  
 աժել կանայս, գիտելի է, զի որքան ծախք իցէ, այնքան աշխատութիւն, իբր  
 30 զի արու է, և բաժին ընդ կնոջ նորա ածաւ: Ըստ այսմ հաւատարիմ երևի,  
 զի կարգեալքն՝ երկուսն մին լիցին, և որք ի տան՝ ընդ որդիս համարես-

313 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՁԴ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 121 և Կանոնք Գրիգորի  
 Լուսաւորչի է, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 246  
 314 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՁԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 122  
 315 Տե՛ս Ելք, ԻԲ, 6 և հոդվ. 2է  
 316 Կանոնք Բասղի Կեսարացոյ ՃԵ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 126  
 317 Տե՛ս հոդվ. ՃԱ, ՃԲ, ՃԴ

ցին: Եւ այդպէս ամենեցուն հաւասարութիւն եղիցի, և տկար ազգն խնամեացի, և մի՛ նուազ լիցի, զի բազում ծնողք զդատերս առաւել պատուեն. և այս նախախնամութեամբ, զի որդոց դիւրին է ապրել, քան դատերաց: Եւ զայս յայտ արարաք, զի և նոյն իրքդ այդպէս պատահի, այլ կամք ընտրեսցեն դատաւորաց՝ զամենայն զդատերսն զերկուսն մին ունել և կամ ըստ դատմանն, որպէս զրեցաւ: Նաև զայս իրաւունս համարիմ, զի բազում անգամ պատահի զդուստր երկիցս կարգել. այնոցիկ բաւական լիցի այն մասն ի բաժնի, եթէ ըստ ընչից ծնողացն առ նա ծախքն լեալ իցէ, ապա թէ ոչ՝ տեսցի հաւասարութիւն, սակայն մասն լիցի բաւական առելոցն: Եւ յերկրորդ ամուսնութենէ ուստերքն և դատերքն նուազ լիցին ի մասն բաժնի, որպէս զրեալ է<sup>318</sup>:

Այլ զտուն հօր կրտսեր որդոյն սովոր են տալ, բայց տեսցի անկաւորին լինել, որ զտեղի հօրն բաւական է ունել: Իսկ անդրանկանն պատիւ լիցի, որպէս ծանուցեալ է<sup>319</sup>. ըստ այդմ, եթէ հաւասար բաժանեսցին ժառանգութիւնն ուստերաց<sup>(14)</sup>, առաւել լիցի յաղազս պատուոյն:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ձ Ա

Վ Ա Ս Ն Թ Է Ք Ա Ն Ի Տ Ա Ր Ո Յ Լ Ի Ն Ի Տ Ղ Ա Յ Ն, ՈՐ Բ Ա Փ Ի Ն Ա Ռ Ն Ո Ւ

Աստուածային օրինադրութիւնն և կանոնական հրամանն զնկարեալ սաղմն ի դատաստան դնէ արեան<sup>320</sup> և այն, զի առաջի կայր ծնունդ յանվնաս լինելն: Բայց ժառանգ լինելն, թէպէտ աշակերտեալք Մահմետի սնոտի իմաստասիրելով զտեսանել աստեղաց ասեն մանկանն, այլ մեզ հաւատարիմ Տեառն լիցի ասելն՝ ոչ յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ<sup>321</sup>, և դարձեալ՝ ծնեալն ի մարմնոյ մարմին է <sup>322</sup>: Եւ մարմնոյ ծնեալն մարմնոյ ժառանգ եղիցի<sup>(15)</sup>, որպէս յԱստուծոյ ծնեալն՝ Աստուծոյ:

Ապա թէ յդի է կինն, և պատահի մեռանել առնն, ակն կալցեն դատաւորք ծննդեանն և այնպէս զժառանգութիւնն հաստատեսցեն ի ծնանելն: Եւ թէ ի նմին ատուր, յորում ծնաւ, մեռանիցի՝ մանուկն, որ ժառանգ է, ի մանկանէն ժառանգիցին այլք և ոչ ի հօրէն:

Եւ եթէ մայր մանկանն մեռանիցի, թէ ի ծնունդն, թէ զկնի ծննդեանն և թէ ի նմին ատուր մեռանիցի, մանուկն ժառանգ է մօրն, և ի մանկանէն հայրն ժառանգէ:

Ըստ ասացելոյդ ուստերք և դատերք ժառանգ լիցին, ապա թէ շիցին՝ ում և կամի ժառանգեցուցէ՝ սզգատոհմի եթէ ծառայի, զի ինքնիշխան է զայդոսիկ ժառանգեցուցանել:

Այլ զկնի մահուն, թէ ինքն ոչ հաստատեաց, մերձաւորքն ի տոհմէ և ոչ հեռաւորքն ժառանգեն, որպէս և դատեալ եղև այդ ըստ Օրինաց<sup>323</sup>:

318 Տե՛ս հոդվ. ճԲ

319 Տե՛ս հոդվ. ճԺԱ

320 Տե՛ս Ծլք, ԻԱ, 22—23 և հոդվ. ԿԲ

321 Տե՛ս Յովհ., ԺԶ, 21

322 Տե՛ս Յովհ., Գ, 6

323 Տե՛ս Թիւք, ԻԷ, 1—11 և հոդվ. ՃԱ

Գ Լ Ո Ւ Խ Ծ Զ Բ

Վ Ա Ս Ն Հ Ա Շ Ա Մ Ե Լ Ո Յ Զ Ա Ի Ա Կ Ա Յ

Եթէ պատահի հաշմ լինել զաւակ, որպէս թէ շունել բնաւ միտս և  
 իմացուածս, սա ոչ է ժառանգ, զի ոչինչ իմանայ, որով ի գործ արկցէ  
 5 զհայրենիսն, զի ի ծնէ այնպէս պատահեաց: Ապա թէ յետոյ ախտն եզեալ  
 իցէ և կարծիցի բժշկիլ, յայլ ժառանգս աւանդեսցեն. թէ առողջացի՝ ժա-  
 ռանզէ, ապա թէ ոչ՝ որք ժառանգենն խնամս տարցին մինչ ի մահ:

Իսկ եթէ այլապէս իցէ՝ կաղ, կամ կոյր, կամ այսահար, որ շիցէ ան-  
 զգայեալ, կամ բորոտ, որ շիցէ բնաւին ապականեալ, կամ անզամալոյծ  
 10 իմաստուն և այլք այսպիսիք, որ բաւական զոն այլօք սպասաւորօք  
 զհայրենիսն ժառանգել, մի՛ գրկեսցին ի ժառանգ լինելոյ, իսկ անբաւ-  
 կանքն՝ այլօք ժառանգորդօք խնամիցին մինչ ի մահ, որպէս ահա ցուցաւ:

Սւ զայդ այդոցիկ իրաւամբք գիտեմք դատաստան: Զի և ըստ Օրի-  
 նացն անարատք ի կենդանեացն ի սեղանն ելանէին Աստուծոյ նուէր,  
 15 իսկ արատաւորքն հասարակաց էին զենլի<sup>324</sup>: Այսպէս, անարատք հողով և  
 մարմնով Աստուծոյ լիցին ընծայ ի մարդկանէ և ժառանգք, իսկ արատա-  
 ւորքն մարդկան անխոտելի են ժառանգք:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Զ Գ

Վ Ա Ս Ն Կ Տ Ա Կ Ա Յ; Ա Ր Է Տ Ի Ա Ք Ի Կ

Սւ կտակ լիցի՝ որպէս ուսուցանեն կանոնք. զկնի երկից աւուրց հիւան-  
 դութեան կոչէ հիւանդն զբահանայն և զժառանգաւորս եկեղեցոյն և երեք  
 վկայիւք արասցէ զկտակն և զամենայն ինչ զգհոգոյ, և զթաղմանն, և  
 զտան խօսեսցի բոտ կամաց իւրոց: Սւ եթէ ի նմին աւուր պատահի մեռա-  
 25 մետի անգոյ իմաստունքն ասեն՝ չետ քառասուն աւուր ապրելոյ հիւանդին  
 հաստատի կտակն: Բայց հաստատուն կտակ յառողջութեանն է, թէպէտ  
 և ասացեալն անխոտելի է, զի կամաւոր՝ այն, իսկ այս խառն տեսանի:

Սւ եթէ պատահի յառնել հիւանդին և փոխել զկտակն, իշխան լիցի,  
 զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյն<sup>325</sup>: Այլ Աստուծոյ  
 30 եղեալ կտակն հաստատուն լիցի, կատարեսցէ զոր խօսեցաւ բերան նորա  
 ի նեղութեանն, և թէ ուխտս զիք և կատարեսցէ<sup>326</sup>: Ինչ ի դէպ իցէ ընդ  
 յառնելն կատարման կտակին՝ տեսցէ, և զոր ինչ զկնի մահու զրեալ է,  
 զկնի կատարեսցին: Սւ թէ փոխէ՝ յայլ առաւելն իշխան լիցի և ոչ ի նուա-  
 զեցուցանելն:

35 Սւ արդ, այսմ այդ է դատաստան:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Զ Գ

Վ Ա Ս Ն Թ Է ՈՐՊԷՄ ԱՐԺԱՆ Է ԶՄԵՌԵԼՈՅ ԽՕՄՔՆ ԸՆԴՈՒՆԵԼ

Եթէ ի միասին բազում ժամանակք կեցեալ իցեն այր և կին և որդիս  
 ծնեալ, որոց ի միասին զանազանութիւն շիցէ ստացուածոց, ի միաբանու-

<sup>324</sup> Տե՛ս Ղևո., Ա, 10. Գ, 1, 6. Դ, 14 և այլուր:  
<sup>325</sup> Տե՛ս Եբբ., Թ, 17  
<sup>326</sup> Տե՛ս Քիբ., լ, 2: Բ Օրին., ԻԳ, 21—23: Ժողովուրդ, Ե, 3

Թեև ընչից մեռելոցն լիցի, ապա թէ յայտնապէս կնոջն երևի ստացուածն՝ ժառանգաւորացն լիցի: Եւ թէ ձեռնհաս իցէ՝ այրն զմեռելոյթան արասցէ, և թէ ոչ իցէ՝ յիրոցն, և առն ի ժառանգութիւն մի՛ լիցի:

5 Եւ թէ ամուլ կին պատահի, և բարձմաժանակեայ ի միասին իցեն, առն լիցի մեռելոյթան, և մի՛ լիցի ի մասն ժառանգութեան առն, այլ որք կնոջն են՝ ժառանգեսցեն: Իսկ սակաւաժամանակեայ եղեալ կին և առանց ամուսնութեան մեռեալ՝ իւրքն ժառանգեն և ոչ այրն: Ապա թէ որդի կամ դուստր ծնեալ, թէ կենդանի իցեն և թէ մեռեալ, առնն լիցի մեռելոցն և մասն ժառանգութեան:

10 Եւ այդոքիկ յառաջին և յերկրորդ ամուսնութիւնն միևնոյն լիցի օրինակ:

Իսկ մեռեալ այր՝ յիրոցն լիցի յամենայն ասացեալսդ մեռելոցն:

15 Եւ ծնեալ ուստերս և դստերս՝ ի կնոջն ժառանգէ, և ի նորայոցն՝ կինն, իսկ յամլոյն ոչ ժառնգէ այրն, բայց սակաւ նշան մասին. այլ կին ամուլ ժառանգէ յառնէն յաղագս անսուսնութեանն:

Եւ փութով մեռեալ այր, և կոյս մնացեալ կինն յառնէն շժառանգէ. և ծնեալ ծնունդ, թէ կենդանի իցեն, թէ մեռեալ, ժառանգէ յառնէն, թէ և սակաւաժամանակեայ իցեն ի միասին:

20 Եւ հանդերձք մաշեալք ի բաժանումն ոչ յիշին երկաբանչիւր կողմանցըն, բայց որ ի միջի կացցէ. նոյնպէս և՛ պարգեքն ի միմեանց, թէ մաշեալք իցեն, այլ ոսկի և որ ինչ կայուն իցէ, այնոքիկ ըստ իրաւանց դատեալք վճարեսցին:

Եւ ծախք հարսանեաց ոչ յիշին, գի ի կամաց այդոքիկ լինին:

25 Բայց որ ինչ արժան է, իրաւամբք տեսցեն դատաւորք ըստ պատահման և ըստ սովորութեան գաւառին, գի դատաստանս, գոր եղաք, իրաւացի կարծիք է: Ապա թէ արտաքոյ ըստ ճշմարիտ իրաւանցն կարծիքն է, յիրաւունս դարձուցանել ուղղութիւն է, միայն գի ներեսցէ մեզ սիրով և թողութիւն ի պակասութեանն արասցէ, կորովի տեսութեամբ ղթերին լցցէ:

30

Գ Լ ՈՒ Խ Ծ Զ Ե

ՎԱՍՆ ՎԱՃԱՌԱՅ ՆԵՆԿՈՒԹԵԱՆ

Եթէ ոք զիւր ինչ զարատաւորն տայ ընկերին ի պատճառս վաճառի և նենգութեամբ գրկէ և խաբէ սուտ երգմամբ և ինքն գովի յանձին իւրում՝ վասն ղրկելոյ գրնկերն, նղովեալ եղիցր<sup>327</sup>:

35 Եւ գի մի՛ ի նգովս անկցին այնպիսի վաճառողքն, զայսոցիկ ղիցուք գդատաստան: Զարատաւորն տալ ըստ այսմ է. թէ հարկանող իցէ, և կամ ի բարս կամ ի մարմինս արատ ինչ գուցէ, կամ յանշնչից իցէ վաճառն, և այնպիսոյն բիծն իցէ, թէ վնաս ինչ գործեալ իցէ, դատաստանաւ է վճարել վաճառողին, զի Օրէնքն ի միջոյ բաճնալ և ոչ վաճառել հրամայէ<sup>328</sup>:  
40 Ապա թէ այլազգ ինչ իցէ և յայտ գայցէ՝ կամ ի պարծիլ կամ վկայք իցեն, ղի դիտակ էր և վաճառեաց, անդրէն դարձցի, և թէ հաճոյ իցէ գնո-

<sup>327</sup> Կանոնք Բաղդի Կեսարացոյ ՄԱ, Կանոնագիրք Հայոց, Կ. Բ, էջ 155

<sup>328</sup> Տե՛ս Ելք, ԻԱ, 29 և հոգվ. ԿԵ

ղին՝ որքան արժան է ուղղեսցին: Եւ թէ չիցէ գիտակ և վաճառէ, և ապա շաւ գնողն իցէ, հանել զապաշաւն արժան է:

5 Եւ ի վաճառելն զբիծն զամենայն ասասցէ, որպէս Եպիփան ի վաճառելն գէշն խեռաբարոյ<sup>329</sup>, և գիտելով գնողին զանվնաս պատճառն՝ ըստ հաճոյից իւրոց որքան արժան է գնեսցէ. և այդպէս ի կանոնական նզովիցն ազատի, ապա թէ ոչ՝ ընդ գողսն և յափշտակողսն ապաշխարութիւն լիցի:

Գ Լ Ո Ի Ն Ծ Զ Զ

Վ Ա Ս Ն Ս Ո Ւ Տ Վ Կ Ա Յ Ի Յ

10 Եթէ ոք երթայ սուտ վկայ և ընկենու զոք յորոգայթ մահու կամ գանի, հինգ ամ ընդ ունկնդիրսն կացցէ և մի ամ ընդ ձեռամբ՝ տրօք տնանկաց, ապա արժանի լիցի օրինաց<sup>330</sup>:

15 Դատաստան այս եղաւ ըստ Օրինաց<sup>331</sup>, այլ կանոնականս այժմ երկրորդի: Յորոգայթ մահու և զանի ասէ, այլ որ ոչ մեռանի կամ տուգանօք ազատի, և այսոցիկ դատաստան լիցի՝ որքան վնասեացն հատուցէ, ըստ այնմ, թէ որպէս խորհեցաւ առնել՝ եղիցի նմա<sup>332</sup>. և կամ թէ չիցէ բաւական՝ ըստ հրամանի կաճոնացդ ապաշխարեսցէ:

Գ Լ Ո Ի Ն Ծ Զ Է

Վ Ա Ս Ն Կ Ո Ւ Ս Ա Ն Ի Ե Ի Ե Ր Կ Ա Կ Ի

20 Իսկ որ մինն կուսան է, և միւսն՝ երկակ, և մինն վախճանի, ամուսնանալ անհնար է. և թէ յանդգնի ոք՝ ապաշխարութիւն երեքկնոյն լիցի, և քահանայն լուծցի<sup>333</sup>,

25 Երկրայի այս կանոնք սրբոյն լինել Բարսղի, և թէ նորա՝ անհնարին է լինել այս կանոնաց: Այլ յուսմանէ ներմամբ այսպէս ծանեաք, զի կրկին ապաշխարութիւն երկուցն այնպիսեացն լիցի:

Եւ քահանային պարտ է ուսուցանել զայս սահման կանոնի, զի մի՛ դատապարտեսցի յաղագս աշառելոյն:

Զայդ այդոցիկ գիտասցուք լինել զատաստան:

Գ Լ Ո Ի Ն Ծ Զ Ը

Վ Խ Ս Ն Խ Օ Ս Ե Ա Լ Կ Ա Ն Ա Ն Յ

30

Իսկ եթէ խօսեսցի կին, և հաստատեալ իցէ քահանային երկու կամ երեք վկայիւք, մի՛ իշխեսցէ թողուլ զնա և այլ կին առնուլ, բայց եթէ վասն սրոնկութեան կամ վասն մարմնազեղծութեան<sup>334</sup>,

<sup>329</sup> Տե՛ս Լիակատար վարք և վկայներանութիւն սրբոց, հ. Գ, էջ 211

<sup>330</sup> Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 155

<sup>331</sup> Տե՛ս Բ Օրին., ԺԹ, 15—19 և հոգվ. ՃԸ

<sup>332</sup> Տե՛ս Բ Օրին., ԺԹ, 19

<sup>333</sup> Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157

<sup>334</sup> Կանոնք Բասղի Կեսարացոյ ՄԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157

2 Զի խօսեալն քահանայիւ և վկայիւք կին երաշխատրեալ է, և վասն պոռնկութեանն իշխան լիցի, զի ոչ ի տան նորա է յանցումն, առնուլ կամ ոչ: Եւ մարմնագեղծ է մարմնով ապականեալ, վէրս ունի անբժշկելի, և յայսմ իշխան է, կարծեօք բժշկութեան, առնուլ կամ ոչ: Իսկ այլօր  
5 պատճառանօք չէ արժան թողուլ զխօսեալն:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Զ Թ

Վ Ա Ս Ն Ա Ն Տ Ա Ժ Է Տ Ա Տ Ա Ր Ա Ն Յ Ե Ւ Կ Ա Ն Ա Ն Յ

10 Կին կամ այր ցաւազին, կամ ախտաժէտ, կամ արուազէտ, մի իշխեսցեն ամուսնանալ և անարգել զպսակն օրհնութեան. և թէ որք յանդրգնի՝ զկէս ընչիցն յեկեղեցի տացեն և երեք ամ ապաշխարեսցեն<sup>335</sup>:

Եւ զայս յաղագս ծնկելոցն յախտս ասէ, զի նախ առողջացցին, կամ հոգևորաց՝ յազագս այնորիկ պարապեսցին, արուազիտաց և անասնագիտաց՝ զի մի՛ ի պատճառս այնորիկ գտարաշխարութիւնան մոռացցին և զի միջոցօք ժամանակօք մաքրեսցին:

15

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ

Վ Ա Ս Ն Գ Ո Դ Ե Ա Տ Ե Ւ Պ Ի Ս Ա Կ Ա Տ, Խ Լ Ի Յ Ե Ւ Հ Ա Մ Բ Ի Տ, Ե Ւ Կ Ա Ղ Ա Տ Ա Ռ Ն Ո Ւ Կ Ե Ն Թ Է Ո Չ

20 Եւ զայսոցիկ եղից այժմ զդատաստան՝ ամուսնանալ կամ ոչ: Ի կանոնաց յաղագս շնութեան<sup>336</sup> ուսաք, ուրկաց՝ եթէ ծնունդնոցա նմանապէս ուրուկ լիցի, յազագս այսոցիկ արգելցին, զի մի՛ ախսն տարածեսցի ի ծնունդն:

Արգելցին և բորոսք, զի թէպէտ և ի բժշկաց ասի փոխի ախտից, յորոց հոտ է, և ի բորոտ ոչ լինի, զի յուրկոտս յաղագս վիրացն լինի, և անդ վէր ոչ է, սակայն կանոնք փոխելի զախտն ցուցին: Եւ զի մի՛ ի ծնունդս ախտն լիցի, արգելցին. զի և Օրէնքն ոչ միայն յամուսնանալոյ, այլ և ի բանակէ ևս մերժէ<sup>337</sup>: Եւ թէ որ զՕրինացն նշանակ ասէ, սակայն ըստ մարմնոյ խտրութիւն էր, որպէս և այժմ յաղագս տսացելոյ պատճառիդ:

30 Իսկ կազ, թէ շիցէ բնաւին լուծեալ, զի խափանումն իցէ կամ ուսման կամ այլոց մասնատրաց, ամուսնացի. և այդ՝ առնն է, նմանապէս և կնոջն լիցի:

Իսկ կուրաց յերկոսին աշնն. կին՝ մի՛ ամուսնացի, զի ոչ կարէ սնուցանել զմանկունսն և ոչ այլ ինչ սպասաւորութիւն, իսկ այր՝ թէ ժուժկալ է, բարւոք է, ապա թէ բաւական է գիին և զտուն հոգալ, թէ ընչիւք նախնեացն և թէ այլ իրօք, ներկի է յաղագս այլոյ պատճառի և վտանգի:

35 Իսկ կին խուլ, թէ ուշիմ իցէ, և որ հաւանեացի առնուլ, եղիցի. նոյնպէս և՛ այր:

Իսկ համրն, թէ այր է, թէ կին, ընդ անասունս համարեալ է. մի՛ ամուսնացիլ:

<sup>335</sup> Կանոնք Բաղդի Կեսարացոյ ՄԺ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157

<sup>336</sup> Տէ՛ս Կանոնք Հարանց հետեւողաց ԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 106—107

<sup>337</sup> Տէ՛ս Ղևա., ԺԳ, 46

Զայդոսիկ զգատումն ես ճշմարիտ կարծեմ: Եւ թէ այլ ոք, ուղիղ ունելով՝ զտեսութիւն, պարսաւանս այսմ դիցէ, անխոռով եմ խորհրդով, զի ե ոչ միոյ դատաստանի վճիռ հատանի լինել ե կամ կանոնական հրամանաց, որ յայտոսիկ ածի դատաստան, զնոյն դատաստանի ունելով

5 զօրութիւն, այլ ընդ մերոյն ընտրութեան ե զկանոնացն երկրորդեցի: Զի թէ ընդդէմ մերն կարծիցի՝ զսրբոցն պատուեալ զբան ի նոյն, ի նոցունց թողութիւն ինձ խնդրեսցիք, զի ոչ այնքան յանդուգն եմ, թէ զոր ոչ ըստ ներման ե կամ յայլմէ առեալ զօրութիւն համարծակէի դնել: Եւ թէ ոք համարեսցի յանդուգն՝ համարեսցի, միայն զօգտակարն ընտրիցէ ե դատիցէ, ե ես իսկ գամ զհետ՝ ոչ պարսաւելով, այլ շնորհ ունելով ե զովելով:

10

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Ա

Վ Ա Ս Ն Ա Յ Ի Ա Ջ Գ Խ Օ Ս Ե Ա Լ Կ Ա Ն Ա Ն Ց

Եթէ ումեք խօսեալ է կին, նախ քան զմտանել աղքկանն յեկեղեցին շար գործքն յայտնեցան, իշխան է այլն թէ առնուլ թէ ոչ: Ապա թէ յեկեղեցի մտեալ իցէ, մի՛ իշխեսցէ արձակել, ե թէ արձակեսցէ, այրի կոչեսցի ե երեք ամ ապաշխարեսցէ<sup>338</sup>,

15

Եւ յայլում զլիսի հրամայէ զխօսեալն թողուլ վասն պոռնկութեան<sup>339</sup>, ե աստ յաղազս յեկեղեցի մտանելոյն՝ ոչ: Սակայն ե թէ որդիս ծնեալ է, իշխան է թողուլ վասն պոռնկութեան, այլ աստ յաղազս պատուելոյ զկեկեղեցին ասէ: Ապա՝ ոչ է պսակ արտաքոյ եկեղեցոյ եղեալն: Եւ զի ոչ է ի տան առն, ե առաջի կայ զգաստանալն, ապա թէ ի նոյն իցէ վարքն, իշխան է այնուհետեւ թողուլ:

20

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Բ

Վ Ա Ս Ն Տ Ղ Ա Յ Ո Ց Պ Ս Ա Կ Ո Ջ Գ Ն Ե Լ

Տղայոց պսակ մի՛ իշխեսցէ ոք դնել, մինչև ի շափ հասեալ՝ զհաճոյս իւրեանց իմասցին, ե թէ ոք յանդգնի՝ լուծցի ի քահանայութենէն ե հարիւր զրամ տուգան տացէ յեկեղեցին. եւ տղայն ի շափ հասեալ՝ ամուսնացի ընդ որ ե կամեսցի<sup>340</sup>,

25

Եւ յայլում կանոնի ասէ՝ ոչ պսակեալ առանց զմիմեանս տեսանելոյ<sup>341</sup>, զի անյայտ է, թէ բնաւին ոչ կամին ամուսնանալ ե կամ ոչ հաւանիլ միմեանց, հրամայէ շառնուլ: Ապա թէ լիցի, ե ի շափ հասեալ ոչ կամի, անվտանգ առնէ յաղազս ակամայ իրին: Հաւանելի լիցի այս դատաստան յեկեղեցի Աստուծոյ:

30

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Գ

Վ Ա Ս Ն Ո Ր Զ Մ Ի Ն Մ Օ Ր Կ Ա Ք Ն Կ Ե Ի Բ Ա Լ Ի Ց Ե Ն

Հարցումն. Որ միոյ մօր կաթամբ սնեալ իցեն օտարք ի միմեանց, յորժամ ի շափ հասանիցեն, արժան է ամուսնանալ, թէ ոչ:

35

<sup>338</sup> Կանոնք Բազիլի Կեսարացոյ ՄԺԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157—158  
<sup>339</sup> Տե՛ս Կանոնք Բազիլի Կեսարացոյ ՄԺ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 157  
<sup>340</sup> Կանոնք Բազիլի Կեսարացոյ ՄԺԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 160—161  
<sup>341</sup> Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի Իէ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 382. Կանոնք Ներսէսի ե Ներշապհոյ ԻԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 487

Պատասխանի. Զէ արժան, քանզի ծնողն և ստնտուն ընդ մի համարեալ են<sup>342</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Դ

ՎԱՍՆ ՓՈՆՈՂԱՅ ԶՍԱՀՄԱՆՍ

- 5        Լարցումն. Որ զսահմանս յափշտակէ զընկերին, ո՞րպիսի ինչ է:  
 Պատասխանի. Զոր զրեաց Մովսէս յՕրէնս հրամանաւ Աստուծոյ՝ իջցէ անէծքն այն ի վերայ գլխոց նոցա<sup>345</sup>, և եղիցի նզովեալ ի կեանս և ի մահ<sup>344</sup>:
- 10       Լուիցեն զայս յափշտակող սահմանաց և զարհուրեացին, զի զատաստան աստուածայինն է: Եւ թէ լիցի հակառակութիւն ինչ անզատանաց, վկայիւք լուծցի, զի զայն հաւաստի կարծեմ լինել, քան բառնալ խաչ և Աւետարան միոյ, զի բազում անգամ խաբէութիւն լինի, և զի երդումն է այդմ օրինակաւ, զոր ոչ հրամայեցաւ: Եւ թէ այդպէս կատարի բանդ զատաստանի, մի բարձող խաչին լիցի վկայ, և մի՝ երդումն, և եղև երկու
- 15       քստ Օրինացն<sup>345</sup>: Այլ զայս ոչ հրաման տալով ասեմք, որպէս յառաջդ իսկ գրեցաք վասն երդմանն<sup>346</sup>, այլ յայտնել կամեցաւք, թէ ոք զայսպիսի առնէ՝ վճարեալ է իրք զատաստանին, որպէս ցուցաւ<sup>347</sup>, թէ զերկու վկայի ունի զտեղի: Եւ թէ այսպէս լիցի, զապաշխարութիւնն լցցէ, որպէս ցուցեալ է յերդման ճառին<sup>348</sup>:

20

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Ե

ՎԱՍՆ ԿՆԱՀԱՆԱՅ

- Եթէ ոք թողցէ զկին՝ զորդոց մայր, առանց բանի պոռնկութեան, կամ կախարդութեան, կամ թէ արատ ինչ ի մարմին չիցէ, այլ թէ այրն շնաբարոյ իցէ և ակն եղեալ իցէ այլում, զատաստան այս լիցի. զորդիսն
- 25       և զամենայն ինչ որ ունի բաժանեացեն հասարակաց<sup>(116)</sup>: Եւ թէ կամք են կնոջն զայր ի տուն ածել յինքն, համարձակ ածցէ: Եւ զբաժինն կալցին և զարբունի հարկն ողջ արսուցին: Եւ այրն, որ եթող, եւթն ամ ապաշխարեացէ և չեկեղեցի տուգանս տացէ. թէ ազատ է՝ երեքհարիւր դրամ, և թէ շինական՝ զանալից լիցի և հարիւր դրամ տայ յեկեղեցին<sup>(117)</sup>, փոխանակ զօրհնութեամբ զամուսնութիւնն խտտելոյ: Ապա թէ մինչդեռ ի պայքարին և ի տուգանին իցեն, և կին ոք յանդընեալ կնաթողին լիցի կին, և ամ մի չիցէ անցեալ, յայտ ևզև, յէ զառաջին կինն նա ետ թողու, կալցեն զկինն և յօրկանոց տուցեն, և զտարի մի ադասցէ զողեացն. թէ ազատ է և յօրկանոց չերթայ՝ հարիւր դրամ տուգանք տայ զողեացն<sup>349</sup>:

342 Կանոնք առաքելոյն Քաղէոսի Լ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 39  
 343 Տե՛ս Բ Օրին., ԻԷ, 17, նաև ԺԹ, 14  
 344 Կանոնք առաքելոյն Քաղէոսի ԼԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 39  
 345 Տե՛ս Բ Օրին., ԺԹ, 15 և հոգվ. ԾԸ  
 346 Տե՛ս նախադրութիւն, Ը  
 347 Տե՛ս հոգվ. ԾԷ, ԾԸ, ԾՁԶ  
 348 Տե՛ս նախադրութիւն, Ը  
 349 Կանոնք Շահապիվանի Գ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 435—436

Մի անգամ և երկիցս զայս եղաք դատաստան<sup>350</sup>. դարձեալ և այժմ, զի զանձն լընդդիմադրութենէ կանոնաց կարծեաց ազատիցեմ և զյաւելումս իւրաքանչիւր հրամանացն դիցեմ, ըստ որում և յայսմ կանոնի հանդերձ այլօք: Եւ զայրն ի տանէ մերժել և այլ ի ներքս ածել հրամայէ, որ է առաւելութիւն սաստի:

Գ Լ Ո Ի Խ Ծ Ղ Զ

Վ Ա Ս Ն Ա Մ Ո Ի Լ Կ Ա Ն Ա Ն Յ

Եթէ ոք արար կին և պատահեցաւ ամուլ, և այրն հանցէ վասն ամուլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տունն՝ թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, իշխան է առնուլ և զնալ: Եւ թէ քան զամուլութիւնն այլ արատ չգուցէ ի կինն, տուգան ևս տացէ կնոջն վասն սնարզանացն. թէ ազատ է՝ հազար և երկուհարիւր դրամ, թէ շինական է՝ վեցհարիւր դրամ: Ապա թէ մինչդեռ ի դատաստանին և ի տուգանին իցեն, և ամ մի ի վերայ շիցէ անցեալ, և ոք ի կանսնց յանդանի և առնն կին լիցի, կայցեն զկինն և յօրկանոց տացեն, քանզի յայս եղև, թէ հանելոյ կնոջն պատճառ նա եղև, և տարի մի աղասցէ զողեացն, և յապիւնութեան կացցէ, և եկեղեցի հարիւր դրամ տուգանք կայցեն, փոխանակ զի բուն ամուսնութիւնն վասն նորա խոտեցաւ. ապա թէ ազատ է և չերթայ ի գողենոց, հարիւր դրամ տուգանք տացէ զողեացն: Ապա թէ յառաջագոյն խորհուրդ եղեալ էր առն, թէ՛ զիմն թողում և զքեզ առնում, և կամ պոռնկութեամբ խաժական յեայ իցէ, հարիւր դրամ այրն տուգան տացէ յեկեղեցին և ապաշխարութեամբ երեք ամ ընդ ունկնդիրսն կացցէ և մին ամ՝ ընդ ձեռամբ և ապա մտցէ յեկեղեցի: Եւ որ զորդոց մայր թողցէ առանց պոռնկութեան կամ այլ արատոյ, առն և կնոջ պատուհաս տուգան և ապաշխարութիւն ի կանոնացդ կացցէ<sup>351</sup>:

Եւ որքան կար եղև՝ ի դէպ զդատաստան այսմ եղաք և մեք<sup>352</sup>, և զորս ի կանոնսն՝ և զայնս ևս դրոշմեցաք, զի զիրաքանչիւրոցն զարժանն դիրին լիցի դատաւորաց տալ զվճիռն ուղղապէս: Եւ զի մեք շափաւորապէս զդատաստանն եղաք յիրաքանչիւրսն և զապաշխարութիւնն ի կանոնսն թողաք: Եւ զայս այժմ ծանուցաք, զի զիտուցես, թէ յամենայն դատաստանս, ուր ապաշխարութեան պէտք ևն, ի կանոնսն ապաստան թողաք:

Գ Լ Ո Ի Խ Ծ Ղ Զ

Վ Ա Ս Ն Կ Ա Ն Ա Ն Յ, ՈՐ Թ Ո Ղ Ո Ի Ն Զ Ա Յ Ր Ս

Եթէ կին ոք յառնէ ելանէ, կայցեն և անդրէն տացեն յայր իւր, և մանաւանդ զոր վարձանօք իցէ վարձեալ և ոչ բոզաբար, թէպէտ վաճառիցէ, թէպէտ յազախնութեան կայցէ, թէ կամք իցէ՝ հոգևոր և բարի խրատու և սիրով կայցի: Ապա թէ այրն շարսրարոյ իցէ, կամ պոռնիկ, կամ

<sup>350</sup> Տե՛ս հոդվ. Ժ, ԺԸ, Լ, ՃԽԾ, ՃԽԶ, ՃՂԱ.  
<sup>351</sup> Կանոնք Շահապիվանի Ե, վերջում մի բառի սարբերութեամբ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 436—438.  
<sup>352</sup> Տե՛ս հոդվ. ԺԱ և ՃԶԲ

հանգանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղական, զանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն և հնազանդեցուցեն զերկոսեանն. ապա թէ ազատ է, տուգանօք և խրատիւ զայրն ի կարգ ածեն: Ապա թէ ի բարի շրջի այրն, կինն ծառայեսցէ նմա<sup>353</sup>:

5 Եթէ որպիսի պատճառաւ Լլցէ կինն յանէն և թէ շեցէ, և այդ նշանակեալ է մեր զիրմամբ<sup>354</sup> յաղագս երկիրդի մեծագին վնասու: Նաև կանոնական հրամանաւ յօժարեցար և դայս այժմ դարբոց դնել զբան, զի զանգզամ կինն խրատել հրամայէ, նոյնպէս և՛ զայրն:

10 Եւ զի յայտ արասցուք, թէ կամք մեր ոչ զհակառակն կամի կանոնաց, այլ թէ կամք լիցի դատաւորաց այլոց առնուլ ինչ ի մերոնցն՝ առցէ, ապա թէ ոչ՝ կանոնքն հաստատուն կացցէ:

Գ Լ Ո Ւ Խ Ծ Ղ Ը

Վ Ա Ս Ն Ո Ր Ա Ռ Ո Ւ Գ Ն Ա Յ Ք Ա Ռ Ն Է

Որ առեանդս առնեն, կալցեն զկինն և անդրէն ի ծնողքն տացեն, և 15 տուգանք տացեն փոխանակ անարզանացն. թէ ազատ է՝ հազար և երկերիւր դրամ, թէ շինական է՝ վեցհարիւր դրամ: Եւ որք հրոս երթեալ իցեն և օղնականք սուտ փեսային, առ այրն հարիւր դրամ տուգանք տացեն. և դայս տուգանս զկէսն չեկեղեցին տացեն և զկէսն՝ կարօտելոց: Ապա թէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պսակ դնելոյ, յեկեղեցի տուգանք առցեն յի նմանէ, զի զպսակն օրհնութեան ընկեաց, և 20 երևք ամ յապաշխարութեան կացցէ: Ապա թէ երէց զաղտ պսակ իցէ եղեալ առանց հօր և մօր աղջկանն, երէցն դքահանայութիւն շիշխէ պաշտել և հարիւր դրամ տուգանք առցէ, և կարօտելոց բաշխեսցեն, և պսակն, զսր ԼՂ, անվաւեր լիցի: Ապա թէ յեւ այսր խոսովութեան և տուգանաց 25 դարձեալ ի հաւանութիւն զան կամօք աղջկանն և ծնողացն, և յառաջ պոռնկեալ են, պսակ մի՛ օրհնեսցի, այլ իբրև երկակին՝ ուռ տեառնագրեալ զիցեն ի զլուխ նոցա. ապա թէ կուսանք կացեալ են, ըստ օրինին օրհնեսցի: Թէ ազատ է, թէ շինական՝ կանոնք այդ կացցէ<sup>355</sup>:

30 Թէպէտ և այս եղեալ է զատաստան ըստ զանազանութեան<sup>356</sup>, այլ աստ յոյժ լիով կարգեցաւ, վասն որոյ յօժարեցար զայս ևս գրել, զի անտարակոյս լիցի դատաւորաց այդոցիկ պատահումն, և զտուգանսն ըստ ժամանակի և ըստ կարի համեմատելով սրացեն:

Եւ ուսցին այժմու Եպիսկոպոստոնք, զի տրուանք պոռնկի յաղքատս հրամայի: Եւ այդոցիկ և այլոց զանազանութիւն է, զոր ինքեանց այժմ 35 տանուն դատաւորք, սրք են Լպիսկոպոսք, յորոց զարհուրիլ և խորշիլ պարտ է, զի յաղադս քուսելոյ գլանցանս լինի, և մնան այժմ անքաւելի:

353 Կանոնք Շահապիվանի Զ, Կանոնագիրք շալոց, հ. Ա, էջ 438  
 354 Տե՛ս հոգվ. ԺԲ  
 355 Կանոնք Շահապիվանի Է, Կանոնագիրք շալոց, հ. Ա, էջ 439—440  
 356 Տե՛ս հոգվ. ԾԳ

ՎԱՍՆ ԱԻԱԳ ԵՐԻՑԱՆՑ

Քահանայք զահասիրութեամբ մի՛ հակառակեսցին ընդ միմեանս, զի զոր շնորհն Աստուծոյ ընտրեաց նախ ի քահանայութիւն՝ նա է նախագահ յեկեղեցոյ<sup>357</sup>;

5 Եւ զայս ասէ՛ որք կամին զառաջին պատիւն։ Եւ ուզիլ զատաստանաւ է, որ առաջին օծաւ՝ առաջին լինել, եթէ իցէ յառաջագէմ, ապա թէ լիցէ՛ զոր ընտրեալ են այլք, կամօք եպիսկոպոսին առաջին կացուցեն, որպէս զի բարեզարդութեամբ լցցէ զեկեղեցին, մանաւանդ թէ՛ հիւրասիրութե-  
10 ամբ վկայեալ իցէ։

Գ Լ Ռ Ի Խ Մ

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՄՏԻՑ ՅՈՂՈՎՐԻՅԱՆ

Եւ ժողովրդական ոք մի՛ հրապուրեսցին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկեղեցոյ, զի պատճառ խոռովութեանն բերէ, այլ զպտուզս և զմուտս  
15 ժողովրդականն միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուցեն ամե- նայն յօժարութեամբ անխափան և մի՛ ըստ զասուց բաժին արասցեն և երգոց, որ եղև վնաս։ Եւ քահանայից առեալ ի սրբոյ եկեղեցոյն՝ բաժա- նեսցեն կարգատարար, որպէս և օրէնն է. գլխաւոր քահանայիցն՝ երկու մասն և կէս, և այլ քահանայիցն՝ երկու մասունս, և սարկաւազունքն՝  
20 մին մին մասն, զպիրքն՝ կէս կէս մասն, և այրի կանայքն, թէ իցեն պար- կեշտք՝ մին մասն<sup>(118)</sup>, առանց ամենայն հակառակութեան։ Ապա թէ իցէ ոք, որ հակառակեսցի և առնիցէ խոռովութիւն, այնպիսին զատապար- տեալ լիցի յիւր կարգէն, և ընկերքն իւր մի՛ իշխեսցեն ընդ այնպիսին հազորդիլ, և ոչ ժողովրդականն առ քահանայս ունել զնոսա<sup>358</sup>։

Գ Լ Ռ Ի Խ Մ Ա

ՎԱՍՆ ՍՊԱՍԱՒՈՐԵԼՈՅ ԵԿԵՂԵՑՈՅ

Պաշտօն և պատարագիք և սպասք եկեղեցոյն ի գլխաւոր քահանա- յին տանն եգիցին, որպէս և յառաջագոյն կարգեալ է<sup>359</sup>։ Գլխաւոր քահա- նայն զեկեղեցին մի՛ իշխեսցէ թողուլ և գործոց տան իւրոյ պարապել, այլ  
30 մշտնջենաւոր ի սուրբ եկեղեցոյն կացցէ, զի պաշտօնն և զագօթքն տուրն- ջեան և զիշերոյ ժամուցն և զտեսչութիւն ժողովրդեանն մի՛ խափանես- ցէ։ Իսկ այլ ընկերքն զամառն փոխանակաւ կացցեն ընդ նմա անպղերգա- րար։ Ապա թէ իցէ ոք, որ սխալեսցի ի պաշտմանէն պղերգութեամբ կամ երկրական հոգովք, մի՛ իշխեսցէ ի մտիցն մասն սոնուլ։ Քահանայքն  
35 միակամ լիցին յօրհնել միաբանութեամբ զժողովուրդն և որոշիլ ի սրբոյ եկեղեցոյ<sup>360</sup>։

357 Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 482  
358 Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ ժԳ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 483—484  
359 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի ժԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 378  
360 Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ ժԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 484

Բարեկարգապէս եցոյց զդատաստան հասոյից և զսպասաւորութիւն քահանայից աստուածային և սուրբ կանոնս, և թէ ոք կամեացի ճշմարտութեամբ կալ ի գործ քահանայութեան, ապա թէ ոչ՝ անպարտ լիցին դատաստանք եկեղեցոյ և զպարտաւորութիւնն առցեն հեղգացեալքն:

5

Գ Լ ՈՒ Խ Մ Բ

Վ Ա Ս Ն Վ Ա Ն Ա Յ ԵՒ Ն Ո Ց Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ե Ա Յ Ն

Կամ եղև ինձ և յազազս այսոցիկ սակաւ ինչ գրել, զի ոչ փոքր ինչ հակառակութիւն ի մեջ մեր լինի յաշխարհի յազազս այսոցիկ աշխարհական քահանայից և վանաց: Սակայն ընդ միտ ածի և վասն կանոնաց մեծին Սահակայ<sup>361</sup>, թէ որքան գեղեցիկ և ըստ կարգի բաժանէ զվանաց և զեկեղեցոյ, որ յաշխարհի, զհասս և զտօնս, և այժմ շփոթեալ և ապահանեալ է այն ամենայն: Վասն այնորիկ լոեցաք յայսոցիկ դատաստանաց, զի թէ ի սրբոյն ոչ պատկառեն ի բունից, գիւրդ և ի մերոց: Եւ թէ վասն սորին դատաստանի կամի ոք զի ուղղիցէ, այնոքիւք արժան է վարի և ոչ այլազգ, զի թէ և կայր կարծիս՝ այժմու գրելովքս դատաստան դատել, ոչ էր ի դէպ մեզ յանդգնիլ, թող թէ բնաւին ոչ էր կարծիս: Ըստ այսմ կարծեմ և յամենալն ի մեր աշխատութիւնս:

10

15

Գ Լ ՈՒ Խ Մ Գ

Վ Ա Ս Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն Ե Ղ Ե Ց Ե Ա Յ Ն

Ի յիշատակս ննջեցելոցն յրնտանեաց նոցա, որ ինչ ըստ կարգի օրինաց քրիստոնէութեան, զոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխիթարութիւն հոգոց նոցա՝ կամ զբառասուն և զազապս ի հանգիստ նոցա, կամ զտուրս, զոր ինչ և հրամայիցէ վախճանեալն հոգոյ իւրոյ, մի՛ իշխեսցեն յայլ եկեղեցիս կամ ի կրօնաւորս տալ, այլ անդէն գեղջի երիցուն լիցի և վանաց՝ այնպիսեաց հասք, և իւրհանց տան երիցուն, ուր շնորհօք սուրբ աւազանին վերստին եղև ծնեալ և պսակեալ և կենաց հացին կերակրեալ, ուստի և յգարկեալ առ Աստուած երթայ: Իսկ յորժամ հարկաւորն յիւրում եկեղեցոջն կատարեալ լինի և կամեացի աւելորդս ինչ առնել յայլ եկեղեցիս, կամ ի կրօնաւորս, կամ յազբատս, ապա լիցի համարձակ առնել ինչ<sup>362</sup>:

25

30

Յոյժ ուղիղ է այս դատաստան՝ յետ զհարկաւորն առնելոյ յիւրն եկեղեցոջ, ապա յայլս կամ ի կրօնաւորս տալ: Կամ թէ պատահի յազազս անձեռնհասութեան<sup>(119)</sup> և կամ յազազս յուսոյ ի հեռաւորս և զհարկաւորն տալ հաւանութեամբ իւր տան երիցուն և հրամանաւ իւր վանաց առաջնորդին, զնոսա ըստ կարի շահելով, ներելի են և այնքիկ, յորժամ շիցէ յազազս զիւրն արհամարհելոյ: Ապա թէ ոչ կամեացին նոքա, անդէն որքան կարեն արասցեն. և այդ անհակադակ է:

35

361 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթեի ԼԶ—ԽԲ, Կանոնադիրք Հայոց, հ. Ա, էջ 386—400  
 362 Կանոնք Սիոնի հայոց կաթողիկոսի (Պարտարի) ԺԸ, Կանոնագրքը Հայոց հ. Բ, էջ 14

Գ Լ Ո Ւ Ն Մ Դ

Վ Ա Ս Ն Բ Ա Ն Ա Դ Ի Բ Ե Լ Ո Ց

Ժողովրդականն որ, որ յաղսպս պէսպէս սխալանաց ինչ բնագրեալ լինիցին յեպիսկոպոսաց, թէ մեռանի՝ ոչ թաղէ քահանայն, և ոչ երեխայ մկրտել: Եւ թէ գէպ լիցի երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռել որ<sup>(120)</sup>, քահանայն մկրտեսցէ զերեխայն և զմեռեալն թաղեսցէ և զայլ կարգս բանին պնդութեամբ պահեսցէ անլոյծ<sup>363</sup>:

Զինքն զբանագրեալն հրամայէ շթաղել, թէ մեռանել հասանէ, և թէ երեխայ է բանագրեալն՝ շմկրտել, այլ զտան մեռեալն թաղել և զերեխայն մկրտել: Եւ երկուցն օրինադրէ եպիսկոպոսաց, զի մի՛ զբոլոր տունն ընդ բանիւ արասցեն, և կամ քահանայն անգիտաբար վասն միոյն բանագրանաց զայլսն զրկեսցէ: Նաև ոչ քահանայի օրէն է յաղպս միոյն զամենայն տունն բանագրել, և այլ քահանայ, թէ այդպիսի պատահի, թաղեսցէ և մկրտեսցէ, բայց զայլ սահման պահեսցէ: Եւ թէ առաւելութեամբ իցէ բանագրանքն, աղաչանօր յայտ ածելի է, զի մի՛ այլքն ընդ բանիւ կացցեն վասն միոյ մեղացելոյն:

Գ Լ Ո Ւ Ն Մ Ե

Վ Ա Ս Ն Փ Ա Ն Ո Ղ Ա Ց Զ Ե Ն Ե Ղ Ե Ց Ի

Քորեւիսկոպոսունք մի՛ իշխեսցեն փակել զեկեղեցոյ գտուն և խափանել զաստուածային աղօթից ժամն վասն օրընթրեաց կամ վասն միոյ յանցանաց, բայց զպարտաւորս րնթրեացն և զմեղուցելոցն անձինս բանադրեսցեն<sup>364</sup>:

Կարծիս տալ, թէ յաղպս այլոյ յանցանաց հրամայէ փակել: Յայտ է, թէ ոչ և վասն միոյ յանցանաց փակել ի գէպ է զեկեղեցին և խափան առնել սպասաւորութեանն, այլ սպասաւորացն սաստել յանցաւորացն, թէ փակել տան զեկեղեցիս, բայց թէ պատահի հակառակ շինել և առանց հրամանի:

Զսոյն սաստ դնէ և գեզլաւագաց՝ հանգերձ նզովիւք<sup>365</sup>:

Գ Լ Ո Ւ Ն Մ Զ

Վ Ա Ս Ն Գ Ե Բ Ե Լ Ո Ց Ա Ր Ա Ն Ց Ե Ի Կ Ա Ն Ա Ն Ց

Յորժամ վասն մեղաց միոց աշխարհս գերեցաւ, քաղում արք և կանայք, որ ի գերութեան էին, և նոցա ամուսինքն՝ աստ, առանց վարդապետաց հրամանի կանայս առին, և տրանց եղին: Վասն այնպիսեացն սահմանեցաք այսպէս: Զի թէ յառաջ քան զեւթն ամ<sup>(121)</sup> որ յանդրգնեցաւ, մինչ զուգակիցքն ի գերութեան էին, և այլ առին, այնպիսեացն ի պոռնկութիւն համարեսցի, և գան և պատուհաս կրեսցեն, և լընչից և ի

363 Կանոնք Պարտաի ԺԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 15  
 364 Կանոնք Պարտաի ԻԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 16  
 365 Տէ՛ս նույն կանոնք:

ստացուածոց առնուլ և ալքաստաց տալ, և զատուցեն ի միմեանց, և ապաշխարեսցեն եւթն ամ: Եւ յետ եւթն ամին թէ դառնան ամուսինքն ի գերութենէն, իւրաքանչիւր ոք զիւր սամուսինն առցէ, ապա թէ ոչ՝ յետ ապաշխարութեանն կայցին զոր առինն: Եւ նորա, որք դառնան յետ եւթն ամի, օրհնութեամբ այլ կանայս առցեն, և այլ արանց լինին, և կրկնոցից ապաշխարութիւն ի վերայ եղիցի: Իսկ որ հաբերեացն ցեւթն ամն, յետ եւթն ամին այլ առցէ առանց տուգանի և պատուհասի, և կրկնոցից ապաշխարութիւնն ի վերայ եղիցի<sup>366</sup>: Նոյնպէս որ յետ եւթն ամին դառնան ի գերութենէն, եթէ կամք իցեն՝ այլ կին առցին, և այլ առն լիցին, և նոյնպէս վկրկնոցացն ապաշխարեսցեն:

Զայս իսկ առեալ է զվերջնոյ կանոնի զհրաման, զոր և մեր չափաւորապէս ըստ զանազանութեան եղաք և ի մերն<sup>367</sup>, և զսոյն աստ յաւելաք, զի աստ ամենակատար իսկ է այս դատաստան: Եւ եթէ ինչ ի մերն հակառակ կարծեսցի, այսոքիւք վարելով՝ անբամբաս մեր մնասցուք, զի խնդիր մեր այն է, զի ճշմարիտ լիցի յեկեղեցիս զաստատան:

Գ Լ Ո Ւ Խ Մ Է

Վ Ա Ս Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Յ Ժ Ա Ռ Ա Ն Գ Ա Ւ Ո Ր Ա Ց

Եթէ այր ոք կամ կին ի սրբոյ եկեղեցոյ անորդի մեոցի, ի կենդանութեան իւրում իշխան լիցի ինքն ունել զամենայն ինչ, և անցեալ ըստ ինքն՝ ի մերձաւորաց իշխէ հեռացուցանել զհող, և զջուր, և զժողովուրդ: Եւ ի մերձաւորսն, եթէ րսգումք են, և կամի զմի ոք որդի առնել, իշխան է առնել՝ որ զնա հեշտ ոք կալցի: Եւ թէ կամի վաճառել կամ հոգոյ տալ, իշխան է: Իսկ եթէ ոք յորդեզրաց ի քահանայութիւն ձեռնադրի կամ զեղջն վկայութեամբ, կամ յանձնէ, որում չէր անկ քահանայութիւն, զկէս շնորհին կալցի յազազս ձեռնադրութեանն անհարկ<sup>(122)</sup>, զկէս շնորհին, զհող և զջուր բաւանդակ սրբոյ եկեղեցոյն յանկաւորսն թողցէ: Եւ անցեալ ըստ քահանայն և ըստ կին նորա՝ ամենայն շնորհն իսկ բաւանդակ յանկաւորսն երթիցէ, զի չվայելէ սրբոյ եկեղեցոյ զժառանգութիւնն յանկաւորացն հեռացուցանել և տալ հեռաւորաց և օտարաց: Բայց եթէ անկաւորացն կամաւորութեամբ կամ հաճելով տալ՝ թողացուցէ վարդապետն և զայն՝ մի շինականի ումեք, այլ սրբոյ եկեղեցոյ յուխտէ, թէպէտ և հեռաւոր իցէ՝ իշխան լիցի մերձաւորեցուցիչն մերձաւորեցուցանել: Ապա թէ գեղ դիպի, որ իրիցուն ի ժառանգութիւն բարձեալ իցէ, ժառանգութիւն սրբոյ աթոռոյն է, զոր վարդապետն կամի՝ ժառանգեցուցանէ, իշխան է: Եւ այս սահմանադրութիւնս շերակլեայ է և հոսորովայ լինելով ժամանակօք և այսր լիցի: Բայց յառաջ քան զնոցա ժամանակն որ ինչ լեալ է, մի՛ շարժեսցի, զի չգիտէ ինչ հաստատութեամբ, որպէս կալեալ է՝ կալցին: Բայց նոցա ժամանակացն և յայսմ հետէ և յաւիտեան այս գիր հաստատուն կացցէ, և մի՛ ոք անցցէ ըստ այսմ սահմանաւ<sup>368</sup>:

Տեսցուք և զայս հոգևոր դատաստան, զի իշխան առնէ իւրոցն տալ

<sup>366</sup> Կանոնք Գունայ է, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 205—206

<sup>367</sup> Տե՛ս հոգվ. Ը և ԺԲ

<sup>368</sup> Կանոնք Գունայ Ը, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 206—209

ում և կամի, իսկ ղեկեղեցոյն շնորհուրացանել յանկաւորացն: Եւ թէ պատահի ի հեռաւոր անկաւորաց կամ յօտարաց, զոր որդեգիր արար, քահանայանալ, զկնի իր ի մերձաւոր յանկաւորսն ասէ թողուլ. զի թէ պատահի ի նոցանէ քահանայանալ՝ կալցին, ապա թէ ոչ՝ նոցին կամօք յօտարս տալ իշխան լիցին առաջնորդքն<sup>(123)</sup>, սակայն ի տանէ քահանայութեան իցէ՝ զոր ժառանգ առնեն:

Յայտոսիկ զայս առաւելու ի դէպ է, զի ոչ միայն յորժամ ժառանգաւորքն բարձեալ լինին յեկեղեցոյն՝ սուրբ աթոռոյն է այն, այլ թէ պատահին անկաւորքն անարժան լինել, թէ քահանայք իցեն, թէ ոչ, իշխան է զարժանաւորսն ի քահանայից կացուցել: Եւ այդ ըստ ճշմարտութեան է:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ը

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ՈՐ ԱԶԱՏ Է ՅԱՄՆԵԱՅՆԷ

Ազատք յորժամ զիրեանց զերդ և զմարդ բաժանեն, յուրվք շարակամութեամբ առնեն և զմանկունս եկեղեցոյ ըղնձանան ծառայս առնել և ի ստրկութեան պահեն, որ շվայելէ քրիստոնէից: Զի երիցս երանելոյն Տրդատայ թագաւորին զսուրբ եկեղեցոյ զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է, և ազատ էին որդիք սրբոյ եկեղեցոյ, հոգ և ջուր: Եւ ի Պարսից թագաւորութեան ժամանակին թէպէտ և ի պէկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի էր և շէր. խառնեալ ընդ շինականսն, բայց միայն զհարկսն տային յարքունիսն: Արդ եթէ ոք սգահութեամբ ակամբ հայեացի և զազատ մանկունս եկեղեցոյ ի բաժին և ի վիճակ ծառայութեան արկանիցէ, այնպիսին ի մեր ժողովոյս օրհնութենէն հեռի եղիցի, և մի՛ եղիցի իշխանութիւն վարդապետին և քահանայից զայնպիսոյն ըզպատարագս օրհնել: Այլ և ոմանք զՈգիայի ախտն ախտանան<sup>369</sup> և ըստ իւրաքանչիւր կամաց, և ըստ իւրաքանչիւր ֆրմի<sup>(124)</sup> բաժանեն շնորհս սրբոյ եկեղեցոյ և որպէս կամին մատակարարեն, և վարդապետին հրամանի և օրինաց ունին շղնեն, այնպիսիքն նոյնպէս ի մեր օրհնութենէ հեռի եղիցին, որք յանդգնին զայնպիսի ինչ առնել<sup>370</sup>:

Կուիցեն ազատք ի Վիրս, զի զայսպիսի լուծին զուզիդ և զկանոնական զնախադոյն հրաման:

Գ Լ Ո Ւ Խ Մ Թ

ՎԱՍՆ ՎԱՆԱՑ

Ոմանք տանուտէրք և ազատք ի վերայ վանաց իշխանութիւն առնեն և վանական՝ զոր կամին հանեն և զոր կամին՝ նստուցանեն վասն ժլատութեան: Այլ և ոմանք իսկ ի վանս նստին և ըստ զրեցելումն, որպէս թէ շունիցին արգօք տուն հաց ուտելոյ, որ զեկեղեցեան Աստուծոյ արհամարհեն անպատկառելի անամօթութեամբ: Այնպիսիքն եթէ յուղութիւն զան և յեպիսկոպոսն թողուն, որ տեսչութիւն առնէ սրբոցն լուսոյ և

369 Տե՛ս Բ Մնաց., ԻԶ  
 370 Կանոնք Դունայ Թ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 209—210

պաշտման և դպրոցս կարգաւորելոյ, այնպիսեացն անցելոց մեղացն թուղութիւն շնորհեալ եղիցի, և ի ժողովոյս օրհնեալ եղիցին: Եւ ժողովրդիւս ամբ, և օրհնութեամբ, և պաղաքերութեամբ, և ուխտադրութեամբ երթիցն և աղօթեսցեն ի վանօրեայն, որպէս պարտ է յիւրեանց հարանցն 5 վաստակս և յաղօթանոցս, բայց ժլատանալ և հանել ինչ մի՛ իշխեսցեն: Ապա թէ հակառակ ինչ կայցեն հրամանի հարանցն և մեր պատուիրանցս, այնպիսիքն ի մեր օրհնութենէ հեոի եղիցին և զհատուցումն ի սրբոց վկայիցն ընկալցին<sup>371</sup>:

Որպէս և գրեալ է, թէ արասցեն վրէժխնդրութիւն յազգս և յանդիմանութիւն՝ ի ժողովուրդս<sup>372</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ժ

Վ Ա Ս Ն Տ Կ Ա Ր Ա Ն Ո Ց Ա Ց

Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն և հարկս, և նշեմս, և կերակուրս, և ըմպելիս պահանջեն բռնութեամբ, և զիւրեանց գործակալս 15 ի վերայ գումարեն, և կոռով<sup>(125)</sup> և պահակութեամբ նեղեն, և զողորմելի եղբայրան շարշարեն անխղճաբար, որում մանաւանդ առաւել դարման տանել պիտոյ էր և ամենայն քրիստոնէից պատել զամենայն վէրս նոցա<sup>373</sup>:

Արդ, եթէ որ յայսմ հետէ յանդգնի զայսպիսի ինչս առնել ի տկարանոցս, անողորմ դատաստանաւ դատելոց են այնոքիկ, որ ոչ առնեն զողորմութիւն:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ժ Ա

Վ Ա Ս Ն ՈՐ ԵՐԹԱՆ ԲՈՆՈՒԹԵԱՄԲ Ի ՎԱՆՍ ԻԶԱՆՆՆ

Ոմանք ազատք և հեծեալք, որ ի գեղորեայս հասանեն, որոց բնաւ ի վանսն տեղի լինի, ի գեղ շիջանեն, այլ ոմանք կանամբք և նաժշտօք ի վանս իջանեն և այնպէս կոխեն զկանոնս հարցն, և զուսանօք և վարձակօք ի սրբութեան և ի պաշտամանց տունն ընթրիս ուտեն, որ սոսկալի է քրիստոնէից լսել, թող թէ տեսանել: Արդ, զվերագրեալ կանոնսդ ի լսելիս այնպիսեացն ընթերցցին վանաց երիցունքն. եթէ լինին լսող և երթան 30 ի գեղորեայն իջանեն՝ բարի է, ապա թէ ի նմին անհնազանդութեան կացցեն՝ այնպիսիքն նոյնպէս ի մեր օրհնութենէն հեոի եղիցին և զվրէժխնդրութիւնն ի սրբոցն ընկալցին: Զի վանքդ անուն հանգստարան սրբոց կոչի և օթեվանք եպիսկոպոսաց, և քահանայից, և արեղայից, և աղքատաց: Եւ ազատք և կանայք, և հեծեալք և արք, մինչ կոչելով կոչին, մեծաւ երկիւղիւ պարտ է աղօթել և աղօթից և պաշտաման հաղորդել, որպէս վայել է ի տան Աստուծոյ<sup>374</sup>:

Այսոքիկ օրինադրական դատաստան յայտնի է ամենեցուն:

371 Կանոնք Դունայ ժ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 210—211

372 Տե՛ս Միքիէ, Ե, 14 և այլուր:

373 Կանոնք Դունայ ժԱ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 211—213

374 Կանոնք Դունայ ժԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 211—213

Գ Լ ՈՒՆ Մ Փ Բ

ՎԱՍՆ ԹԷ ՔԱՆԻ՝ ԱԶԳ ԱՌՆՈՒՆ ԶԻՐԱՐ

Զի որպէս առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղև գրել ի նոյն նիւթիւ տասներորդ ամի<sup>(126)</sup> տէրութեան Խոսրովայ՝ որդոյ Որմզդի, զնոյն և  
 5 առ քո սրբութիւնդ հարկեցաք գրել՝ պինդ ունել գլխատուէր Հոգոյն Սրբոյ ի ձեռն Օրինաց և Մարգարէից, զոր առաքելական կանոնադրութեամբ հաստատեցին սուրբ և ուղղափառ վարդապետքն: Բայց մանաւանդ առաւելագոյն զգուշանալ յանիծեալ ամուսնութենէ մերձաւորաց, որ ազգաւ մոտաւորութիւն է, և կործանին յայնքան շարիս: Քանզի ոչ միայն զխառնակութիւն ազգահամարութեանն գործեն այնպիսիքն, այլ և վաղահոգութիւն, որ է արմատ ամենայն շարեաց<sup>375</sup>, ասէ առաքեալն, զհեթանոսաց օրէնս անաստուածս լինել, որպէս և նախամարգարէիւն ծանօթացոյց աստուածապաշտաց. և բիւր և այլ շարիս, որպէս և իմաստնոց յայտնի է: Զի թէ աստուածային բերանն անիծանէ զմարդիկ, որ փոխեն զրնկերի եղեալ  
 15 սահմանս<sup>376</sup>, իսկ զԱրարչին զհոլորեցունց զսահմանագրութիւն և զպատուէր առ ոտն կոխել և հարկանել և արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ճանաչելի է այս, վասն նոցա և այլք: Եւ յայտ անտի է, զի ի հնումրն, զորս ըստ ելից, Աստուած այսպէս ասաց, թէ ըստ կրօնիցն ազգացն Եզրիպտացոց և Քանանացոց մի՛ երթայցէք, ևս եւմ Տէր Աստուած ձեր<sup>377</sup>:  
 20 Եւ ի կարգ արկեալ՝ զայսպիսի տնկողինս կոշեաց խայտառականաց առականս<sup>378</sup>, որով ամբարիշտքն վարէին: Հրածարեցոյց յառաջին ազգէն և ապա՝ յերկրորդէն և հասեալ յայն, զոր մեք խորթս կոշեմք, և ասէ՝ մի յայտներ, զի համօրեայ<sup>(127)</sup> քոյր է: Եւ տպա յետ ոչ սակաւ բանից ևս զարմանալոյ արժանի իմն նշանակէ. քանզի իբր ասաց, թէ համօրեայ<sup>(127)</sup> քոյր քո է, դարձեալ երկրորդէ այսպէս, թէ զառականս կնոջ և զստեր նորա, որ լինի մին կին, և միւսն՝ խորթ, մի՛ յայտնեսցես և զզուտոր ուստեր նորա, այսինքն է՝ զխորթին, և կամ զզուտոր զստեր նորա մի՛ անուցուս, քանզի ամբարշտութիւն է: Ապա վերագոյնս քան զայս նշանակէ, որ նոյն մեզ երրորդ ազգ կարծի, ըստ յառաջ յայտնագոյնդ  
 25 առնելոյ մեր, զառականս զստեր ուստեր քոյ կամ զստեր զստեր քոյ մի՛ յայտնեսցես<sup>379</sup>: Բայց մի՛ ոք կարծեսցէ զասացեալս ի վերայ ծնողին միայն, այլ և՛ որք ի նմանէն, քանզի այս կատարեալ լիմարութիւն է, քանզի ոչ ուրուք եղբայր առանց հօր կամ քոյր, այլ թէ և հօրաբեռ որդի կամ մօրաբեռ, քանզի և ազգակցութիւն մի է, նոյն և որդոց: Զի որպէս առաջին, և երկիր և երիւր՝ ազգ ասին, այսպէս և եղբորորդացն և կամ այլոց առ միմեանս առաջին ազգն, և երկրորդն, և երրորդն, և քառորդ՝ ազգ ասին: Եւ ոչ այսչափ. բայց և այլ որոշումն, արժանի զարմանալոյ, ուսուցանէ աստուածազանն մեզ Օրէնք. զառականս նուոյ մի՛ յայտնեսցես և զզուտոր զստեր նորա և կամ զզուտոր ուստեր նորա մի՛ անուցուս<sup>380</sup>: Որ ցուցանել

375 Տե՛ս Ա Տիմոթ., 2, 10  
 376 Տե՛ս Բ Օրին., ԺԹ, 14  
 377 Ղևտ., ԺԸ, 2-4  
 378 Տե՛ս Ղևտ., ԺԸ, 6-18. Ի, 11-21  
 379 Տե՛ս Ղևտ., ԺԸ, 6-18. Ի, 11-21  
 380 Տե՛ս Ղևտ., ԺԸ, 15

զայս. իբր թէ մեռեալ որդոյն, և նուոյն անն այլում եղեալ և ծնեալ ուստր, և նորա կին սուեալ այլ դուստր ծնանիցի՝ մի՛ առնուցուս զնա ի կնութիւն, զի ամբարշտութիւն է, այսինքն՝ զկատարեալն իսկ ըզսահման ցուցանէ՝ զի՞ զարշիլի է յամուսնութենէ: Իսկ Սուրբ Հոգին

5 Ովսեաւ մարզարէի զամենայն անհնարին և զարաշար մեղս փոքր համարեցաւ առ այսու յանցմամբ և ամբաստանութեամբ: Լուր որ զասացեալս նշանակէ. եթէ լոկ անուամբ գոյ, զի՞նչ հարազատութիւն ի միշի կայ, ասէ. զատաստան Տեառն է ընդ բնակիչս աշխարհի, զի ոչ գոյ ճրմարտութիւն, և ողորմութիւն, և գիտութիւն Աստուծոյ ի վերայ երկրի.

10 այլ անէծք, և ստութիւն, և զողութիւն և շնութիւն, և սպանութիւն հեղեալ ի վերայ երկրի՞ 381, Իսկ Եւելի ամբարշտութիւն և մեղք կսկծելի այն են, որ արին բնդ արիւնս խառնեն, որ է ազգականաց ամուսնութիւն: Եւ հատուցումն այնմ զայս պատմէ. վասն այդր, ասէ, աոցէ սուգ երկիր և նուազեսցի ամենայն բնակչօք իւրովք, այլ և զազանք անապատի, և սողունք, և թռչունք երկնից պակասեսցին, զի ոչ ոք էր, որ յանդիմանէր և զատէր՞ 382, Արդ, մինչ բանն յանդիմանութեան և զատելոյ զայնպիսիսն ձեզ հաւատացաւ, և անփոյթ առնես՝ և զանձն զատապարտես, և որոց իշխեսն: Բայց եթէ արիւն յարիւն ոչ տաս խառնել, որ մինչև արիւն մերձաորութեանն սպառի, արդարութեամբ կատարեալ զարդարես զքո վիճակդ: Իսկ յանզգեկոց և պատերազմասիրաց ընդ Հոգոյն Սրբոյ՝ բան կանոնին, զոր երանելի հարցն ի Քրիստոս հաստատեալ է և մինչև ցայժմ իբրև զարեգակն անշիջանելի պահի, նոցա զայս ասանդեսցես. սկիզբն ի հինգերորդէն յառաջ, բանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ՝ զսահմանն

25 մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է, որում տեղեակ է քո սրբութիւնդ: Յամենայն գրեթէ ի կանոնս այնոցիկ եղաւ սահման, այլ լիով աստ, զոր առեալ եցոյց յՕրինաց և ի Մարգարէից: Չոր և մեզ զայսոսիկ քննելի է, թէ ո՞ր արդեօք յաւելուած ըստ նորոյն եղև ի ձեռն կանոնաց: Քանզի Օրէնքն հրաժարեցոյց զառ ի հօրէ և զառ ի մօրէ քնոէ, որ է ըստ այսմ. թէ պատահի առնուլ կին, և նորա դուստր իցէ և եթէ զկնի առնելոյն ծնանիցի: Իսկ կանոնք հրամայէ ըստ այսմ. մի՛ տալ զխորթս միմեանց և մի՛ զառ ի նոցանէ զծնունդս մինչև ի զարմն երրորդ, ապա ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչև ցորդիսն թոռանց որդոցն, որ լինին հինգերորդ ազգ, ապա ամուսնասցին(128):

35 Այլ խորթս միմեանց զխորթակիցսն ասէ մինչև ցերրորդն, յայտ է, զի զչորրորդին հրամայէ, և ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչև ցորդիսն՝ երրորդին ասէ, որ խորթօքն լինի շորրորդ և ծնողքն՝ հինգերորդ: Եւ զայս ասէր, թէ պատահի մինն ի խորթուցն, և մինն՝ ի ճնողաց խորթուցն, և կամ ի խորթուցն ծնողաց՝ շորրորդ, և ծնողքն՝ հինգերորդ, ապա ամուս-

40 նասցին(129):

Եւ զի Օրէնքն զհօրքոյր կամ զմօրքոյր լիշէ, իսկ կանոնք զծնունդս նոցա և զծնունդս զեղբօր մօր և զայլոցն միապէս հրաժարեցուցանէ: Չխորթուց և զթոռանց, որ յորդոյ և ի զատերէ, և զեղբարց ծնունդս կա-

381 Ովսէէ, Գ, 1—2

382 Ովսէէ, Գ, 3—4

նոնք և Օրէնք միօրինակ հրաժարեցուցանեն. նմանապէս և՛ զծնունդս. որ ի նուէ:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ժ Գ

Գ Ա Ր Ձ Ե Ա Լ Ի Ն Ո Յ Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Կ

5 Գիտելի է, զի կանոնք հրամայէ՝ մի՛ որ իշխեսցէ խնամութիւն առնել մինչև ի շորրորդ և ի հինգերորդ զարմն: Չնոյն իսկ զՕրինացն ասէ, զի գերրորդ զծնունդն, զոր հրամայէ շառնուլ, յայտ է, զի զշորրորդին հրամայէ առնուլ, և որ առնու՝ լինի հինգերորդ: Եւ գայս յամենայն ընտանութիւնս է իմանալ, և այս է շորրորդն և հինգերորդն:

10 Եւ թէ Օրէնքն և կանոնք զխնամիս ոչ յիշեն, յազագս զմի ցուցանելոյ օրինակ՝ նման այլոցն բաժանիլ ծննդօք. զի զայս ասէ Օրէնքն՝ երկուս քոյրս ոչ առնուլ, և կանոնք գքոյր կնոջ յընտանութիւն առն փոխել ասեն: Ուստի յայտ է, զի այսպէս ամենայն օրինակաւ խնամիք յընտանութիւն փոխին, և ըստ այլոց մերձաւորաց՝ ծննդօք գատանին:

15 Եւ արդ, ըստ Օրինաց և կանոնաց այսպէս զուգին, թէ Եղբարց ծնունդք իցեն և թէ այլոց, զի առաջին՝ ծնողքն ի թիւ ոչ անկանին, զի Վասն այնր իսկ գարմ ասէ շորրորդ կամ հինգերորդ: Եւ դարձեալ՝ զի մի՛ խոնարհագոյն քան զայն իցէ, զի շորրորդ ի միոյ կողմանէ ասէ լինել, և թէ ի միւս կողմանէ մին պակաս լինի՝ անխտրելի է<sup>(130)</sup>. և այս յայտ յՕրինացն է՝ գառականս մի՛ յայտնեսցես<sup>383</sup>. Իւր իսկ ասէ, զի երրորդին ոչ հրամայէ և զշորրորդն առնու, և առնողն՝ հինգերորդ: Նոյն է ըստ կանոնացն:

20 Եւ թէ հինգ պատահի լինել՝ բարի է, և գարմիցն հինգ լինել նոյն է. և թէ որքան մի կողմն իցէ, և միւսն նոյն գտանի՝ առաւելութիւն է , ապա թէ ոչ գտանի՝ լիցի որպէս ցուցաւ:

25 Եւ թէ երեք ի մին կողմանէ իցէ, և երկու՝ ի միւսն, և այս լինելի է, զի որպէս հրամայեցաւ յՕրինացն՝ զշորրորդն առնուլ հինգերորդին, զի յորժամ առցէ, մնասցէ երրորդն:  
Նոյն է՝ երեք ի մին կողմանէ իցէ, և երկու՝ ի միւսն, ի լինելն մնայ երեք:

30 Նոյն լիցի և որդոցն, զի մի է հեռուորութեան օրինակն:  
Սոյնպէս, թէ երեք ի մին կողմանէ իցէ, և երեք՝ ի մին, ի լինելն մնայ շորրորդ. և այդ ըստ հինգերորդ գարմիցն է, որպէս այն՝ ըստ շորրորդին:

Այսպէս յամենայն խնամութիւնսն այնորիկ լիցին, զի ի լինելն մնայ

35 երեքն կամ չորսն: Բայց հինգերորդն լիցի քահանայից, և շորրորդն՝ աշխարհականցն ամենեցուն:  
Իսկ երեք ի մի կողմանէ, և մին՝ ի միւսոյն, ոչ է լինելի. նոյնպէս՝ երկու՝ ի միոջէ, և երկու՝ ի միւսոյն, զի ի լինելն մնան երկու և ոչ երեք: Արդ, այսոցիկ ոչ է համարձակելի, և թէ յանդգնի ոք՝ քակեսցի. ապա  
40 թէ ոչ կարասցեն՝ ապաշխարութեամբ ուղղեսցին: Իսկ եթէ անգիտանալով արասցեն կամ գընտանութիւն և կամ դասատ պատուիրանին, այդոցիկ այլապզ լիցի ներելն:

383 Ղևտ., ԺԸ, 6-7

Ապա թէ երկու ի մի կողմանէ իցէ, և մի՛ ի միոյ, բնաւին մի՛ տայցեն թոյլ, և թէ չամառեալ արասցեն՝ քակեսցի. իսկ եթէ ոչ կարեն՝ կամ յազազս յանդգնութեանն, կամ զի իշխանք իցեն, ծանր ապաշխարութեամբ սահմանեսցի. իսկ թէ անգիտանալով ըստ ասացելոցն իցէ, այլազգ լիցի

5 ներելն: Սակայն իշխանաց այլազգ լիցի ներումն չամենայնսն:  
Ապա թէ մի ի միոյ կողմանէ իցէ, և մինն՝ ի միոյ, բնաւին մի՛ լիցի ներել, թէ գիտելով իցէ, թէ անգիտանալով՝ նզովիւք քակեսցին, ապա թէ ոչ կարեն՝ մի՛ լիցի հաղորդիլ ընդ նոսա, այլ լիցին հեռացեալք իբր զպոռնիկս, մինչև զղջացեալ քակեսցին և ապաշխարութեամբ ուղիսցին,

10 զի ի լինելն ոչ մնայ և ոչ մի, որպէս ի շորրորդին՝ երկու և յերրորդին՝ մին: Եւ այդ ըստ կանոնաց ներման, որ ասէ. քանզի որ յանասնոցն բնութիւն սիրելի էր անկանել, այնց ողորմութիւն արարեալ զսահմանս մեղմացուցին, բայց լաւացն բնիկն է: Յայտ է, զի զշորրորդէն և զհինդերորդէն ասէ:  
Չայդ ըստ Օրինաց և կանոնաց զստեցաք, թէ ո՞րպէս զուգին, և ներեսցին, և կամ բաժանեսցին: Եւ թէ ունէի յազազս այդոցիկ ըստ տեսութեան զնել մտաց այլ ինչ, որ կամեցայ, զի մի՛ ընդդէմ ինչ կարծիցիմ կանոնաց, այլ որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ: Եւ եթէ վարժ ոք գրոց սովորութեան իցէ, տեսցէ զամենայնսզ հաւասարապէս

20 յՕրինաց և ի կանոնաց, զի զբազումս ի գրոց տեսանեմք յարանց անտեղեակ այդմ լինել, զի որքան ի միոջէ կողմանէ իցէ շորրորդն կամ հինգերորդն, զնոյն և ի միւս կողմանէ պահանջելի է, որ է դուն ուրեք գտանիլ, զի զիրն ասէ օրէնքն՝ զառականս մի՛ յայտնել, և զերրորդն թողով ի միջոցին՝ զշորրորդն հրամայէ առնուլ: Նոյն և ծննդոցն է ըստ կանոնաց:  
25 Սակայն բազումք ի տգիտաց յառաջ բերեն զՅովհաննու Ոսկեբերանի պասացեալն, եթէ Օրէնքն ի մերձաւորաց հրամայէ յազգականաց առնուլ կին՝ ոչ կամել յօտուրս զսերմն տալ, իսկ Աւետարանս՝ առ հեռաւորս զսէրն տալ: Արգ, եթէ այգբան է պատճառն, ընդէ՞ր ճշդիւ խնդրին բնասնիքն: Գիտելի է, զի սուրբն ասացուածուլն զգօրութիւն Օրինացն և Աւետարանին ասէ, այլ ոչ զպահպանութիւն, զի ոչ ասաց. թէ վասն այսոսիկ ոչ է խտրելի ազգայինն, այլ զհտէ, զի Օրէնք է և պահելի է, զի ըստ ժամանակաց զանազանեցան այդոցիկ Օրէնք, զի ըստ բնութեան ոչ է մեղք, այլ ըստ օրինադրութեան յայտնելոյ գիտութիւն: Յառաջ քան զՕրէնս զքոյր իսկ առնէին, և Օրէնքն հրաժարեցոյց: Օրէնքն զհօրքոյր և զմօրքոյր և զեղբօր մօր դատերս ոչ հրաժարեցոյց, իսկ կանոնք զայսոսիկ և որ նման սոցին իբր զմերձաւորսն հրաժարեցոյց, ասելով՝ մի՛ ոք արասցէ խնամութիւն մինչև ի շորրորդ և ի հինգերորդ զարմն: Եւ զայս աննշան ասէ, ոչ ըստ Օրինացն թուելով, թէ որո՞ց իցէ և որո՞ց շիցէ, զի յայտ արասցէ տմենայն բնասնութեանն ծննդօք բաժանիլ: Եւ զի Հոգոյն Սրբոյ է օրինադրութիւնս, զգուշութեամբ սրահեսցուք, զի մի՛ դատապարտիցիմք:

30 Եւ արդ, եթէ հաճոյ թուեսցին այս դատաստան յեկեղեցի, զի որքան կար չր՝ ի դրոց ճշմարտելով հզար<sup>(131)</sup>, ըստ այսմ վարեսցին, ապա թէ անհաճոյ՝ մի՛ իբր յանդուրն ըստգտցէ, այլ իբր տգիտելոյ՝ թողութիւն շնորհեսցէ մեզ և ուղիղ դատաստանաւ վարելով ըստ գրոց, որպէս տեսանէ կորովի մտօք զանձն, և զմեզ ազատ ի մեծէ և յանաչառ դատաստանէ ազատս արասցէ: Միայն մի՛ լիցի կաշառօք կուրացեալք, որպէս զբազումս

45

տեսանեմք, զի այնքան են վրէժխնդիր այդորիկ օրինաց, որքան զձեռս լի առնեն կաշառօք, զորոց զգաստն հատուցանելոց են:

Գ Լ Ո Ի Ն Մ Ժ Դ

Վ Ա Ս Ն Ն Ա Ի Ա Յ Բ Ե Կ Ե Լ Ո Յ

5 Եւ զնաւա բեկեալս ի ծովու մերձաւոր քաղաքն ձեռնատուութեամբ փրկիցէ, իբրու զի հանդերձեալ էր վայելուլ ի շահից նոցա. այլ յաւար առնուլ յօտար մարդկանէ վասն բեկմանն արտաքոյ է դատաստանի: Եւ թէ ձրի կամին փրկել, որքան հնար է՝ վարձս տացեն, և զՕրինացն ընդ միտ ածել՝ զանկեալ զրատտ յարուցանել ընդ տեառն իւրում<sup>384</sup>: Այլ ազահել և յափշտակել այսպէս լիցի դատաստան. կամ որպէս թափէ զաւար, կամ իբր տէր, որ ի հնազանդելոց տասանորդէ, և կամ ի հնգէ:

10 Եւ սակաւ զայդ եղաք զգատաստան, զի յոժ ընդդէմ իրաւանց զործեն Հռոմայեցիք այդոցիկ. և զի մի՛ այն լիցի, թէ ի մերոց աւագաց պատահի տիրել ծովու:

15

Գ Լ Ո Ի Ն Մ Ժ Ե

Վ Ա Ս Ն Խ Ա Բ Ե Բ Ա Տ Ի Յ

Եւ զի բազումք շրջին խաբէութեամբ յանուն սրբոյ եկեղեցոյ և վանաց և այլօք բազմադիմի պատճառօք և զբազումս պատրեն, մինչ զի ոչ է գիրաւ ի վերայ կալ պատրուակեալ շարեաց. նոցա, քանզի սովորին ընծայական առնել թուղթս և այլ ևս ձևս ստանան կեղծաւորութեամբ: Արդ, յորժամ պատահի ի վերայ կալ նոցա և գտանել զխաբէութիւն նոցա, զժողովեալ ինչսն առնուլ, որ յայլոյ եկեղեցոյ անուն իցէ, և թէ կարիս ինչ իցէ՝ յիրաքանչիւր եկեղեցի անդ առաքել, յորոյ յանուն ժողովեալ է: Եւ թէ չիցէ հնար այսմ լինել, իրաւունս կարծեմ ըստ պատճառի ժողովել ոչն այնպէս մատակարարել եպիսկոպոսաց և թէ այլ ոք իցէ: Եթէ պատճառաւ եկեղեցի շինելոյ իցէ եւ բաւական այսմ իցէ, այնպէս առնել, և թէ չիցէ բաւական, ի պէտս եկեղեցոյ ածցեն: Եւ թէ պատճառաւ զերութեան իցէ, յայնոսիկ վարիլ: Ըստ այնմ օրինակի լիցի և այլն ամենայն:

30

Գ Լ Ո Ի Ն Մ Ժ Զ

Վ Ա Ս Ն Ո Ր Ն Ո Ր Գ Ե Ղ Ծ Ի Ն Ն Ը

Յորժամ զառաջինն շինեսցի գեղ, չէ հաստատուն բաժանումն հողոյն և ջրոյն և այլոց այսպիսեաց, մինչ բաւական բնակիչք ժողովեսցին, և ապա բաժանումն հաստատեսցին:

35 Ապա թէ աւերակ շինիցի և չիցէ բազմաժամանակեայ, մինչ զի գիտել իւրաքանչիւր զսահման անդաստանի, ըստ սահմանի առաջնոցն կալցին: Իսկ եթէ բազմաժամանակեայ իցէ, և ոչ գիտիցեն զսահմանսն, և տէրութեան փոխումն եղեալ, նորոգ արասցեն քաժանումն հաւասարադատու-

<sup>384</sup> Տե՛ս Բ Օրին., ԻԲ, 1-4, նաև հոդվ. ԸԺԾ

թեամբ, նախ՝ Էկեղեցոյն և ապա՝ ալոցն, և մասն աւելի տալով որ գլխա-  
տրն իցէ գեղջն՝ վասն հոգալոյ գայլսն:

Գ Լ ՈՒ Խ Մ Ժ Է

ՎԱՍՆ ՈՐ ԳՆԵՆ ԵՒ ԾԱԽԵՆ ԿՈՒՄԱՇ ԵՒ ԱՅԼ ԻՆՁ

5 Վաճառք ամենայն հաստատին, յորժամ որք վաճառենն՝ ամենե-  
ցուն յանձնառութեամբ վկայութեան կամքն ընդ նոսա իցէ:

Հստ այսմ լիցի. թէ հայր վաճառիցէ, պարտ է ուստերաց և դստերաց  
իւրոց կամօք առնել և Եղբարց, որ ժառանգն իցեն. նմանապէս՝ թէ որդիքն  
վաճառեն՝ հօրն, և այլ Եղբարցն, և քերցն կամօք: Ապա թէ ոչ առնեն  
10 այնպէս, յորժամ կամին անդրէն դարձուցանել՝ իշխան լիցին, թէ և գրով  
հաստատեալ իցէ:

Եւ թէ ի միասին գրով և վկայիւք վաճառիցեն, և յազազս աղքատու-  
թեան պատճառի իցէ, և սահմանաւ, զոր զնէ վաճառողն, և կամ որպէս  
յառաջ ցուցեալ<sup>385</sup> է, իշխան լիցին դարձուցանել, ապա թէ անպատճառ  
15 իցէ՝ հաստատուն լիցի: Արդ այդպէս՝ կամ դարձցին և կամ հաւանեացին  
ըստ արժանւոյն:

Իսկ զիր հաստատութեան նշանաւ Եպիսկոպոսին լիցի կամ ճշմարիտ  
դատաւորին լիցի, սակայն նշանն՝ Քրիստոսի նշան խաչին և պատկեր  
Եպիսկոպոսին և կամ ալոց դատաւորաց, այսինքն՝ հայրապետաց: Եւ թէ-  
20 պէտ ալոց ձեռամբ գրին, նոքօք նշանակեալք հաստատուն լիցին, որպէս  
ի տուն թագաւորաց գրին գիր, սակայն արքունի նշանաւ նշանակին և  
այնպէս հաստատին. նոյնպէս և աստ լիցի:

Գ Լ ՈՒ Խ Մ Ժ Ը

ՎԱՍՆ ԹԷ ԻՆՁ ՅԵՂ ԲԱԺՆԻԻ ԵԼԱՆԷ ԶԱՐՍՆ Ի ՏԱՆԷՆ

25 Եւ յորժամ բաժանեցին Եղբարք ի միմեանց և բաժանումն արացեն  
հայրենեաց, նախ զհարսանցն բաժինսն յայտ արացեն և յիրաքանչիւր-  
սրն տացեն, և ապա՝ ինքեանց հայրենեացն:

Իսկ եթէ ի մէջ Եղբարցն ծախեալ իցէ ուրուք բաժին, յամենեցունց  
կանչնեցի, զի տէր է իւրաքանչիւր ոք իւրոցն:

30 Զայդ հասարակ կարծելի է դատաստան ըստ քաղաքավարութեան  
աշխարհի:

Գ Լ ՈՒ Խ Մ Ժ Թ

ՎԱՍՆ ՈՐ ԱՆԿԱՆԻՆ Ի ԾԱՌԷ ԿԱՄ ՅԵԿԵՂԵՅՈՅ Ի ՎԱՅՐ

Այլ որ յաղազս ի ծառէ անկեալ մարդոյ մեռելոյ հարցեալ էիր<sup>(133)</sup>  
35 կամ թէ խեղդելով կախեալ զծառէ, շկայ ինչ մեղանս տնկոցն, զի անշունչ  
և անզգայք են, ոչինչ Եղեն պատճառք մահու նոցա, որ այնպէս պատա-  
հեաց: Այլ թէ առնիցեն ըստ Օրինացն Մովսիսի, յորում հրամայեաց

<sup>385</sup> Տե՛ս հոդվ. 2, 2Ա

- Աստուած վասն անասնոցն, եթէ եզև ի նոցանէ յանօթ պղծութեան ոգոց  
 և մարմնոց անասնագիտաց մարդոց, զկաթն նորա մի՛ կերիցեն, թէ յայն-  
 ազգ կենդանեաց իցէ, և զանասունն քարկոծ արասցեն, և զմիսն շունք  
 կերիցեն<sup>386</sup>, նոյնպէս և թէ եղջերաւորք հարկանիցեն զմարդ, և մեռանիցի,  
 5 սպանցեն զանասունն և մի՛ կերիցեն<sup>387</sup>. և ոչ զի մեղանք են, այլ զի ան-  
 օթք եզեն մեղանաց պղծութեանն և սպանութեանն: Ըստ այսմ օրինակի  
 թէ և առնիցեն զայս՝ հատանել զտունկն զայն, զի մի՛ կերիցեն ի պտղոյ  
 նորա, բայց եթէ յարմատոյ նորա այլ բուսցի և պտուղ տացէ, կերիցեն  
 անխտիր, որպէս և ծնեալքն յանասնոց աստի անխտիր են<sup>388</sup>:
- 10 Զայս հաւաստապէս ըստ Օրինացն նոյնպէս և եկեղեցի ընդունի:  
 Այլ թէ յեկեղեցոյ անկիտլ ի խոնարհ, և թէ քար անկանիցի յեկեղեցոյ  
 ի վայր ի վերայ մարդոյ, և մեռանիցի, անվնաս է եկեղեցին, մատուցի  
 ի նմա պատարագ, որպէս և կամի Տէր<sup>389</sup>:
- 15 Այլ ի դէպ թուի աւուրս ինչ, որպէս մօր՝ ի վերայ ծննդոց, ունել սուգ.  
 և զայդ որպէս կամին՝ արասցեն:

## Գ Լ Ո Ւ Խ Մ Ի

## Վ Ա Ս Ն Գ Ո Ղ Ո Ց Ի Փ Ա Յ Տ Հ Ա Ն Ե Լ Ո Յ

- Վասն զոգոց ի փայտ հանելոյ էիր հարցեալ<sup>(134)</sup>: Եթէ այլազգի իցէ և  
 եթէ քրիստոնեայ, և քրիստոնէի հրամայիցեն ի փայտ քարշել, եթէ հնար  
 20 իցէ՝ խոյս տացէ ի տեղոջէն, ապա թէ ոչ՝ կաշառով զերծցի: Իսկ եթէ ալ-  
 դոքիկ ոչ օգնեսցեն, ապա զհրամայեսլսն ի տերանց հարկաւորաբար  
 պարտ է կատարել, այլ ոչ առաւելութեամբ, որպէս հրամայէ Յովհաննէս  
 զինուորացն, թէ մի՛ աւելի քան զհրամայեսլսն ձեզ առնիցէք<sup>389</sup>, քանզի  
 Աստուած ի սիրտս հայի, և մարդ՝ յերեսս<sup>390</sup>, որպէս հրամայեաց Տէր  
 25 Սամուէլի<sup>391</sup>:

## Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Ա

## Վ Ա Ս Ն Ս Պ Ա Ն Ե Լ Ո Ց Ի Կ Ե Ն Գ Ա Ն Ե Ա Տ

- Այլ թէ մարդոյ լիցի ջորի խումար, կամ ձի արհան կամ մարդակեր,  
 որպէս զուարակազլուսի ձին Աղէքսանդրի, կամ եզն հարկանող, և նա  
 30 զիտացէ, և այլք ազգ առնիցեն նմա և զվնասն ցուցանեն, և նա անհոգս  
 արասցէ և ոչ հնարեսցէ զնոսա, որպէս արժանն էր, և կիցս ընկեցեալ, կամ  
 խածեալ, կամ հարեալ սպանանիցլ զոր, տէր նորա մահապարտ է, և  
 անասունն սպանցի, ապա թէ ոչ զիտէր՝ սնուարտ է: Եթէ յանսուրբ անաս-  
 նոց իցէ՝ թէ ձի, թէ ջորի, թէ էջ, ի մեռելոց տէրքն տայցեն, զի ի պէտս

386 ՏԷ՛ս ԵԼՔ, ԲԲ, 31: Ղատ., Ի, 15 և այլուր:

387 ՏԷ՛ս ԵԼՔ, ԻԱ, 28

388 Գալիթ Ալավկա որդու կանոնները, ՂԶ, «Էջմիածին», 1953

389 ՏԷ՛ս Ղուկ., Գ, 12—13

390 Ա թագ., ԺԶ, 7

391 Գալիթ Ալավկա որդու կանոնները, ԽԱ, «Էջմիածին», 1953

հոգոց նոցա ծախիցեն<sup>392</sup>, Սահայն յայտնեսցեն զպատճառն և այնոցիկ վաճառեսցեն, որ կարող են խրատել:

Եւ զայս դատաստան եղաք երբեմն ըստ Օրինացն<sup>393</sup>, այլ հաստատել կանոնօք կամեցաք՝ մասամբ առաւելեալ<sup>(395)</sup>:

5

**Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Բ**

**ՎԱՍՆ ՈՐ ՂՐԿԷ ԶՄԱՐԳ Ի ՃԱՆՍՊԱՐՀ, ԵՒ ՄԵՌԱՆԻ ԿԱՄ ԱՅԼ ԻՆՉ<sup>(136)</sup>**

Վասն զմարդ ի ճանապարհ զրկել ումեք բազում օրինակք տեսանին ի հարցմանս խղճի և անխղճի: Զի են ոմանք, որ ի զործ մշակութեան են կարգեալք ի տերանց իւրեանց, և կէսք՝ յայգեգործութիւն, և այլք՝ ի զինուորութիւն, և դարձեալ այլք՝ ի յայլ զործ, որպէս հասարակաց մերոց կենացս օրինօք պատրաստեալ է: Այնոցիկ, որոց ի գործս իւրեանց եկեսցէ որոգայթ մահու, անպարտ են տէրքն նոցա, մանաւանդ այնոցիկ, որք զպատրաստութեան պատուէրն հանապազ կացուցանէ ի լսելիս հնազանդելոց իւրոց: Ապա թէ հասարակաց միաբանութեան սիրոյ և խաղաղական մերոց կենաց զընդդէմսն հրամայիցեն զործել տէրք ծառայից, և անդ պատահի ումեք մահ կամ սպանութիւն, մահապարտ է տէրն նորա: Դարձեալ՝ եթէ ոք ի նոցանէ ծանուցանէ տեսառն իւրում զվնասն, որ առաջի կայ, և տէրն անհոգացեալ անպատրաստաբար առաքէ ի զործն, և պատահի վնասն, յորմէ խիթայր, որ առաքեացն՝ արեան պարտ է<sup>394</sup>:

20

**Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Գ**

**ՎԱՍՆ ՈՐՔ ՏՂԱՅ ՈՒՍՈՒՑԱՆՆԵՆ**

Ոչ է պարտ վարձու զմանկունս ուսուցանել ըստ կանոնաց հրամանաց<sup>(137)</sup>:

Եթէ որք իցեն, զամենայն խնամ տանել նոցա ի դէպ է, ապա թէ չիցեն՝ զկերակուր և զհանդերձ միայն իւրքն հոգացեն: Եւ եթէ կարողք իցեն և ըստ ինքեանց յօժարութեանց ընծայ ուսուցողացն տացեն, արժան է հոգևոր սերմանողացն զմարմնաւորսն հնձել, իսկ եթէ ազգատ՝ ոչ պահանջել:

Այլ եթէ ոք հակառակեսցի և բռնաբարէ, դատաստանաւ է, զոր ինչ ի մանուկն ծախեալ իցէ, գայն միայն հատուցանել, այլ ոչ զհոգևորն շնորհի<sup>395</sup>:

Այդոցիկ զհետ երթալ դատաւորաց արժան է հոգևորապէս:

**Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Դ**

**ՎԱՍՆ ԱՐԲԵՑՈՒԹԵԱՆ<sup>(138)</sup>**

Եւ զարբեցութեան բազումք անգիտանան զսահման յառաջնորդաց և ի սպասաւորաց եկեղեցոյ: Միայն եթէ ոչ ժայթքեն՝ համարձակին ի գործ եկեղեցոյ:

<sup>392</sup> Դավիթ Ալավկա որդու կանոնները, ԽԲ, «էջմիածին», 1953

<sup>393</sup> Տե՛ս հոգվ. ԿԵ, ԿԶ, ԿԷ, ԿԹ, Հ, ՃԶԾ

<sup>394</sup> Դավիթ Ալավկա որդու կանոնները, ԽԳ, «էջմիածին», 1953

<sup>395</sup> Տե՛ս Դավիթ Ալավկա որդու կանոնները, ԼԵ, «էջմիածին», 1953

Արդ, դնելի է զսահմանս նոցա: Արբեցութիւն ըստ ստուգաբանութեան յազեցումն իսկ է, իսկ ժայթքելն և կամ ոչ՝ ի կազմուածէ բազում անզամ պատահի մարմնոյ: Իսկ եթէ սահման արբեցութեան յազեցութիւն է, ապա և սահման ոչ արբենալոյ անյազեցութիւն է: Դարձեալ՝ նշանակ 5 արբեցութեան ղեղևումն մարմնոյ է և բանի:

Արդ, որ ըստ այսմ սահմանի կամ նշանի իցէ, ի բաց կալ արժան է յիրաքանչիւր սպասաւորութենէ և ընուլ զապաշխարութեան շափն և ապա մատչիլ ի զորձ շնորհին, իսկ եթէ անփոյթ արասցեն՝ ընդ դատաստանօք արբեցողացն են:

10

Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Ե

Վ Ա Ս Ն Կ Ա Ր Գ Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Ց Ե Ի Տ Ա Ն Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ի<sup>(139)</sup>

Զի՞նչ զորձ մարդոյ՝ զաստուածպաշտութիւն ծանեալ: Ապա արժան է մարդոյս քննել զպաշտօնակցաց իրոց, որով մարթազոյն զինքն շանայց ցէ առնել մաքուրս և զուարթունս՝ առ նոսա հայելով, և ղկնի այսորիկ հասու լինել կարգաց եկեղեցոյ և թագաւորաց, զոր պաշտեմք: 15

Արդ ահա, որպէս ամենեցուն յայտնի է, երկու արարածք եղեն խորհրդականք և բանաւորք՝ հրեշտակք և մարդիկք. մինն՝ ի պարզ և յանխառն բնութենէ, իսկ միւսն՝ ի բազմաց զոյացեալ: Եւ Մովսէս ի սկզբանն ոչ զրեաց յաղագս հրեշտակաց և վասն մարդոյ պատմեաց՝ ասելով, եթէ 20 ստեղծ Աստուած զմարդն հող յերկրէ և փշեաց յերեսս նորա շունչ կենդանի, և եղև մարդն հոգի կենդանի<sup>396</sup>: Այլ ապուշքն, այսինքն՝ տղէտք, կարծեն զԱստուած բերանով և այլովք զործիք վարիլ և զանբաւանդակելին ի զղայութիւն բաւանդակեալ. այլ իմանալի է զփշեալն՝ կենդանացոյց կամ հոգիացոյց: Նոյնպէս զհտեա և զհոգն յերկրէ՝ ոչ մեկին իմանալ հող, 25 այլ բաւանդակ զշորեաին բնութիւնսն ունելով՝ զցամաքն և զխոնանն, զջերմն և ղցուրտն, և զհողմն: Որպէս բժշկացն մանկունք բաժանեն զհոգոյն ցամաքութիւնն յոսկերս, և զմարմինն՝ ի խոնաութիւն ջուրցն, և զջրոյն՝ յարեան երակսն, զցրտութիւն հողմոյն՝ ի շնչերակսն, զջերմութիւն հրոյն խոնանն ընդ ամենայն: Այլ և արականս և իգականս բաժանեն և զմիսն և զմորթն իգական ասեն: Եւ զայս ամենայն Մովսէս ոչ ասաց և ոչ զբնութիւն հրեշտակաց, սակայն լինելութիւն է նոցա:

Իսկ արդ, անե՞ղք իցեն, կամ ինքնե՞ղք, կամ նա՞խ քան զսկսանիլն արարածոց, վասն որոյ ոչ ասաց Մովսէս, թէ արար Աստուած զհրեշտակս, այլ թէ հրամայեաց սերովբէիցն բոցնդէն սրով պահել զճանապարհ ծառոյն կենաց<sup>397</sup>: Թէ այդ այդպէս է, ապա անեղ պարտիմք իմանալ և զջուրն, զի ասաց, թէ ի սկզբունէ արար Աստուած զերկին և զերկիր, և ոչ ասաց, թէ՛ զջուրն, այլ թէ՛ երկիր էր աներեւոյթ և անդարդ, և հոգի Աստուածոյ շրջէր ի վերայ ջուրց<sup>398</sup>:

Այլ իմանալի է մեզ ասել, թէ մինչ արար Աստուած զերկին և ղերկիր, ընդ նմին արար դամենայն զօրութիւնս երկնից, և զջուրս, և զբարս

396 Մնունդք, Բ, 7  
 397 Մնունդք, Գ, 24  
 398 Մնունդք, Ա, 1—2

և զամենայն, որ ինչ յերկրի, զի երկիրս հող միայն ասի ըստ Եբրայեցոց բարբառոյն: Ապա և զուրք, ուրեմն, ընդ երկիր արարան, որպէս և Դաւիթ ասէ՝ նորա է ծով, և նա արար զնա, և զցամաք ձեռք նորա ստեղծին<sup>399</sup>, Եւ ընդ երկնի հրեշտակք արարան, ասելով՝ ո՞ր արար զհրեշտակս իւր հոգիս և զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ<sup>400</sup>: Հրեշտակս և պաշտօնեայս լսելով՝ դասս ոչ յայտնեն, այլ սեռական անուանեն զանունն: Բայց Մովսէս այսպէս ծածկաբար ոչ միայն զդասս ոչ յայտնեաց, այլ և ոչ իսկ յիշեաց զհրեշտական ի սկզբանն, այլ յետոյ ասաց առ Աբրահամու, եթէ եգիտ հրեշտակն զԱգար յանապատին<sup>401</sup>. և դարձեալ ասէ՝ եկին հրեշտակք ի Սոդոմ<sup>402</sup>: Եւ ոչ կերպարանս ինչ ասաց, այլ իբրև զարս երևաւ. ոչ միայն ըզսոցս, այլ և ոչ զքերովբէիցն և ոչ զսերովբէիցն ինչ ասաց զկերպարանս: Իսկ Յակոբ ի տեսեանն ասէ զկերպս հրեշտակաց<sup>403</sup>, որպէս Ակիւզաս ցուցանէ, ասելով. տեսանէր սանդուխտս հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, և բազմութիւն մարդկան թևաւորաց, որ ելանէին և իջանէին<sup>403</sup>: Թուի ինձ՝ եւթանասնիցն<sup>(140)</sup> կարծելով վասն բանին, զանուանս հրեշտակացն բաւական համարելով, զկերպսն ոչ յիշեն: Սոյն կերպիւ լսեմք և զքերովբէսն, զոր ոսկի արար Սոդոմոն և եդի տաճարին<sup>404</sup>, զոր արարեալ էր Մովսէս ի խորանին երկթևեանս՝ և թև ի թև կցող, որք հովանի ունէին ի վերայ քաւութեանն<sup>405</sup>: Դարձեալ և ի մեքենովթան լսեմք քերոքք, և առիծունս, և եդինս, և ուք մարդոյ և ձեռս, անիս՝ որպէս կանաց<sup>406</sup>: Եւ ոչ ասեն ստուգիւ կամ կարեն հասու լինել դասուցն և ոչ կերպիցըն, այլ միայն նմանեցուցանեն, որպէս զթիթեղունս թռուցեալս լուսերամս: Իսկ Միքիաս զզօրս երկնից ասէ զօրուցուցանել շուրջ կացեալ զաթոռովրն Աստուծոյ և ոչ զթիւ դասուցն և ոչ զանուանս կոչէ: Բայց Եսայի ասէ զանուանս սերովբէիցն և վեցթևեան կերպիւ զփառաբանութիւնն յայտնէ<sup>407</sup>, Իսկ Եզեկիէլ այլ դասս յայտնէ և յաւելու չորեքկերպեանն չորեքթևեանն<sup>408</sup>. և այս նման է մեքենովթայ տաճարին: Բայց փոխանակ նորա արմաւենոյն՝ սորա արծուին է, թէպէտ և ի խորհուրդ առ ի միաս զնոյն բերէ, սակայն կերպիւն որոշի: Տեսանէ Եզեկիէլ և անիւս, այսինքըն՝ սայլս, այլս՝ կերպս և ոչ որպէս մեքենովթայ նման, այլ անիւ ի մէջ անուաց<sup>409</sup>, նորոզ և հրաշալի: Այս այլ դասս թուի ինձ, քանզի անձնական ասէ զանիւսն, զի ոգի կենդանի զոյր ի նոսա: Եւ ասէ այլ դասս, որ բազմաշեպքն են, ասէ և հուր ահագին խառնեալ և բորբոքեալ<sup>410</sup>. զայս առոնձնական ակնարկէ:

399 Սաղմոս, ՂԳ, 5

400 Սաղմոս, ՃԳ, 4

401 Մնունդք, ԻԱ, 17

402 Մնունդք, ԺԲ, 1

403 Մնունդք, ԻԸ, 12

404 Գ թագ., Զ, 3—28

405 Եւբ, ԻԵ, 18—20. Լէ, 7—9

406 Գ թագ., է, 27—36

407 Եսայի, Զ, 2—3

408 Եզեկ., Ա, 5 և այլուր:

409 Եզեկ., Ժ, 10

410 Եզեկ., Ժ, 1 և այլուր:

Թէպէտ և զայս ամենայն ասացին մարգարէքն, սակայն ծածկաբար և ոչ յայտնապէս զիրաքանչիւր դասս: Նաև ոչ Տէրն յԱւետարանի անդ այլ ինչ յայտնեաց, բայց միայն զբազմութիւնս հրեշտակաց զընդացն<sup>411</sup>:

5 Բայց սուրբ առաքեալն Յուդա պարզ և յայսնի ցուցանէ մեզ և ինն դասք և դանուանս իւրաքանչիւրոցն ասէ՝ Հրեշտակք, Հրեշտակապետք, Իշխանութիւնք, Տէրութիւնք, Սերովբէք, Քերովբէք, Պետութիւնք<sup>412</sup>:

Իսկ սուրբն Դիոննսիոս՝ պարծանքն Աթենացոց, Արիսպագացին, առաքելոյն աշակերտ և հետևող<sup>(41)</sup>, ինն դասս ասաց. զոր առաքեալն երկու ի մի երես ասաց՝ ի զառ ասաց զՀրեշտակապետն ի Հրեշտակացրն և զՔերովբէսն ի Սերովբէիցն: Եւ թուեաց զնոսա ինն դասս ստուգութեամբ այսպիսի կարգաւորութեամբ, յորմէ և մեր ուսեալ՝ պատմեմք բում հարցասիրութեանդ, որ են.

15 Ներքին դասք Հրեշտակացն, որք են պատգամաւորք և հրամանատարք. և փառաբանութիւն է նոցա, զոր հովիւքն լուան՝ փառք ի բարձունս Աստուծոյ<sup>413</sup>:

Երկրորդ դաս Հրեշտակապետացն է. և փառաբանութիւն է նոցա՝ Տէր, ողորմեա բո արարածոցս, զոր Զաքարիասն լուաւ, թէ՛ մինչև ցե՛րք շողորմեսցիս Երուաղէմի և բաղաբացն Յուդայ<sup>414</sup>:

20 Երրորդ դաս Իշխանութեանցն է, որք են իշխանութեանցն Աստուծոյ փառաբանիչք, ասելով՝ տուաւ քեզ հեթանոսք ի ժառանգութիւն և իշխանութիւն քեզ յամենայն ծագս երկրի<sup>415</sup>:

Չորրորդ դաս Զօրութեանցն է, որք զօրութեանցն Աստուծոյ են փառաբանիչք, ասելով՝ Տէր հզօր ի պատերազմի<sup>416</sup>:

25 Հինգերորդ դաս Աթոռոցն է, որք են փառաբանիչք աթոռոյն Աստուծոյ, ասելով՝ աթոռ բո, Աստուած, յաւիտեանս յաւիտենից<sup>417</sup>:

Վեցերորդ դաս Պետութեանցն է, որք են փառաբանիչք քահանայութեանն Աստուծոյ, ասելով՝ դու ես քահանայ յաւիտեան<sup>418</sup>:

30 Եւթներորդ դաս Տէրութեանցն է, որք են փառաբանիչք տէրութեանն Աստուծոյ, ասելով՝ արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից<sup>419</sup>:

Ութերորդ դաս Սերովբէիցն է, որք լսին բերանք հրեղէնք, որք են երեքսրբենին փառաբանիչք, զոր լուան Եսայիաս՝ սուրբ սուրբ, սուրբ<sup>420</sup>:

Իններորդ դաս Քերովբէիցն է, որք լսին վերինք կամ հանճար մեծութեան, որք գովողք են մեծութեանցն Աստուծոյ, ասելով՝ Տէր զօրութեանց, լի են երկինք և երկիր փառօք քովք<sup>421</sup>:

Այս են իններորդ դասք երկնայինք և այս է զործ նոցա: Աւելի, քան

411 Մատթ., ԻԶ, 53: Յովհ., Ա, 51 և այլուր:

412 Տե՛ս Թուղթ Յուդայի, ևսև Հոովմ, Ը, 38—39. Եվեւ., Ա, 21 և այլուր:

413 Ղուկ., Բ, 14

414 Զաքարեայ, Ա, 12

415 Սաղմոս, Բ, 8

416 Սաղմոս, ԻԲ, 9

417 Սաղմոս, ԽԳ, 8: Եբր., Ա, 8

418 Սաղմոս, ճԹ 4

419 Սաղմոս, ճՆԴ, 13

420 Եսայի, Զ, 3: Յայտն. Յովհ., Գ, 8

421 Եսայի, Զ, 3

զայս, մի՛ այլ ինչ իմաստցուք, որպէս եղկելին Որոզինէս<sup>(142)</sup>, որ աւելի, քան զգրեալսն, իմանալով՝ կործանեցաւ անկանգնելի, զերկնային դասսն զանազանելով. հրաշալիս իմն բարբառելով, զսպիրատութիւն ի բարձունս խորհեցաւ՝ այսպիսի ասելով բան, թէ մարդիկ ոչ տեսանեն զհրեշտակս, և ոչ հրեշտակապետք՝ զհոգիս մարդկան, և Հոգին Սուրբ ոչ տեսանէ զՅրդի, և Որդին ոչ տեսանէ զՀայր: Բայց մեղ քաւ և մի՛ լիցի այսպիսի բարբառել հայհոյութիւն, այլ ասել զերկնային դասս փառաբանիչս աստուածութեանն:

Եւ կարգաւ կայանին բաժանեն զլուսարութիւնն և ասյա շափով լուսաւորութեանն դասս ատեալ, որպէս անձն է Հօր, նոյնպէս և անձն Որդոյ և Հոգոյն Սրբոյ: Եւ արդ, որ ինչ հրկնային դասուցն է, բաւական լիցի այդչափ:

Իսկ եկեղեցի որպէս հարսն մի զեղեցիկ, որ պահի ի համար մեծի փնասայի՝ որդոյ թագաւորին և զիւր սենեակն յօրինէ կարգաւորութեամբ, որպէս զի նմանագոյն ինչ տրքունական կարգաց յարդարիցէ զզատիւ որդոյ թագաւորին: Նոյնպէս և եկեղեցի երկնային դասուցն ընտանութիւն դիւրն կարգեաց զնմանութիւն և զդասս ինն թուով, քանզի ի խորանին ինն դասս տեսանեմք զՂևտացոցն և զպաշտօնէիցն, քանզի ոչ ամենեքեան միում արժանաւորեցան կայանիւ, այլ ըստ շուփոյ արժանաւորութեանն ատին զսպասաւորութիւնն<sup>422</sup>:

Սուաջին դասն՝ Մովսէս և Ահարոն և որդիք նորա<sup>423</sup>:

Երկրորդ՝ գունդն Ամրամայ<sup>424</sup>:

Երրորդ՝ գունդն Սահառայ<sup>425</sup>:

Չորրորդ՝ գունդն Քերովնի<sup>426</sup>:

Հինգերորդ՝ գունդն Ոզիէլի<sup>427(143)</sup>:

Վեցերորդ՝ դասն Ռաբենի<sup>428</sup>:

Եւթներորդ՝ դասն Սեմէի<sup>429(144)</sup>:

Ութերորդ՝ գունդն Մոզի<sup>430</sup>:

Իններորդ՝ գունդն Մուսէայ<sup>431</sup>:

Ապա թէ ասիցէ որք, թէ Մովսէս և Ահարոն ի նոյն զնդէ իցեն, զիտասցէ, դի զասոյց զնոսա Աստուած, զի նորք էին քահանայք՝ մատուցանել պատարագս, և արկանել խունկս քաւութեան, և իշուցանել զխորանն, և ծածկել զնա նուարտանան<sup>432</sup>, այսինքն՝ սեկէ ծածկոցան: Ապա այլ սպասաւորք մատչէին և բառնային ըստ արժանաւորութեանն, ոմանք՝ ըզտախտակն և զքաւութիւնն, և ոմանք՝ զցիցս խորանին, և զսպասանդակ-

422 Տե՛ս Թիւք, Գ, 7

423 Թիւք, Գ, 38

424 Թիւք, Գ, 19, 27

425 Անդ

426 Անդ

427 Անդ

428 Մետուք, ԽԶ, 9, Ելք, 2, 14: Թիւք, Ա, 20. ԻԶ, 3 և այլուր:

429 Թիւք Գ, 21, Նաև Ելք, 2, 17: Թիւք, Գ, 18: Բ թաղ, ԺԶ, 5, 7, 13 և այլուր:

430 Թիւք, Գ, 20, 33

431 Անդ

432 Ղևտ., Թ: Թիւք, Գ, 5—6 և այլուր:

սըն, և զկրսերագոյն կահ սպասուն սրբութեան<sup>433</sup>, Եւ բանակիլ ոչ ընդ այլ դասս հրամայեցաւ Մովսիսի, այլ յարեւելից կողմանէ խորանին<sup>434</sup>:

Արդ, ահա յայտնապէս ցուցաք, թէ լատ երկնային դասուցն ինն երկին, և ի հնումն՝ զՂևտացիսն:

- 5 Պարզես, առաքեալ Սրբո Հոգոյն, համարի. բան իմաստութեան, բան գիտութեան, հաւատս, շնորհս բժշկութեան, աշողութիւն գորութեանց, մարգարէութիւն, ընտրութիւն հոգոյ, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց<sup>435</sup>:

- 10 Դարձեալ յայտնապէս ցուցանէ մեզ առաքեալն ինն դասս եկեղեցոյ, ասելով այսպէս՝ զորս եղ Աստուած յեկեղեցոյ, այս են.

նախ՝ զԱռաքեալս,  
երկրորդ՝ զՄարգարէս,  
երրորդ՝ զՎարդապետս,  
չորրորդ՝ զԶօրութիւնս,

- 15 հինգերորդ՝ Շնորհս բժշկութեան,  
վեցերորդ՝ Օգնութիւնս,  
եւթներորդ՝ Վարիչս,  
ութերորդ՝ Ազգս լեզուաց,  
իններորդ՝ թարգմանութիւնս լեզուաց<sup>436</sup>:

- 20 Որքն են այսոքիկ.

Առաջին դասք եկեղեցոյ՝ պատրիարքք, որ թարգմանի հայրապետք, որք ունին զաթոռ չորից աւետարանչացն:

Եւ արդ, աես զգօրութիւն խորհրդոցն՝ փոխանակ չորեքկերպեան կենդանեացն<sup>437</sup> եղան սուրբ աւետարանիչքն, որ նշանակէ. դէմք մարդոյն՝

- 25 զՄատթէոս<sup>438</sup>, քանզի որպէս զմարդ ծնեալ ասէ զՔրիստոս ի Բեթղէհէմ<sup>439</sup>:  
Իսկ Մարկոս՝ դէմք առիժու նշանակի<sup>440</sup>, քանզի նա ասէ՝ և ել Քրիստոս իբրև զառիժ ի Յորդանանէ ի Դաթան<sup>441</sup>: Եւ սատանայ առիժ ասի<sup>442</sup> վասն շաղղակերութեան և զազանաբար կապտելոյն և գիշելոյն զկենդանիսն: Այլ Փրկիչն մեր կոչեցաւ առիժ վասն զօրութեանն և ի վերայ կենդանեացն թագաւորելով: Զնոյն և Մարկոս ասէ՝ ել Քրիստոս ի Յորդանանէ իբրև զառիժ, այսինքն՝ թագաւորել:

Իսկ դէմք եղինն նշանակէ զՂուկաս, վասն զի նա ասէ՝ փոխանակ աշխարհի զենեալ<sup>443</sup>:

- 35 Իսկ դէմք արժուոյն նշանակէ զՅովհաննէս, որպէս ասէ զվերստին քարոզութիւնն, և ոչ յերկրէ և ոչ ի մարմնաւորութիւնն սկսանի, որպէս և այլքն, այլ նման արագաթև արժուոյ արաթոխ լեալ՝ սկիզբն արարեալ ասէ. ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն.

<sup>433</sup> Թիւք, Դ, 25, և այլուր,

<sup>434</sup> Թիւք, Գ, 38

<sup>435</sup> Ա Կորնթ., ԺԲ, 8—10

<sup>436</sup> Ա Կորնթ., ԺԲ, 8, 28

<sup>437</sup> Յայտն. Յովհ., Դ, 6—7: Եզեկ., Ժ, 14

<sup>438</sup> Անդ

<sup>439</sup> Մատթ., Ա, 16 և այլուր. Բ, 1

<sup>440</sup> Յայտն. Յովհ., Դ, 7, Եզեկ., Ժ, 14

<sup>441</sup> Այսպիսի նախադասութիւն Աստվածաշնչի մեջ չի հանդիպում:

<sup>442</sup> Ա Պետրոսի Ե, 8

<sup>443</sup> Յայտն. Յովհ., ԺԴ, 8

որով ամենայն եղև<sup>444</sup>։ Յիրտի անուանել զնա արծուի բարձրախոյզ և  
թուռն երկնից<sup>445</sup>։

Արդ, ահա ցուցաք փոխանակ երկնից՝ զեկեղեցի, և փոխանակ շորեք-  
կերպեան կենդանեաց՝ զշորս աւետարանիչան, և նոցա փոխանակ՝ զհայ-  
5 րապետացն դասս և զնոցին աթոռսն։ Աւագ և մեծ աթոռ<sup>(445)</sup> Անտիոքայն՝  
զՄատթէոսին, Աղէքսանդրուն՝ զՄարկոսին, Հռոմայն՝ զԴուկասուն, Եփե-  
սոսին՝ զՅովհաննուն։

Այս կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի մինչև յաւուրս Յուստիա-  
նոսի թագաւորին, ըստ շորեքկերպեան կենդանեացն, շորեքկուսի եղեմա-  
10 կան բիմանն<sup>446</sup>, ըստ շորեքեզերեան տիեզերաց, ըստ շորից աւետարան-  
չացն բաժանեցաւ աշխարհս յիշխանութիւն շորից աւետարանչացն։ Իսկ  
Յուստիանոս իբրև թագաւորեաց, կամ եղև փոխել զաթոռ սրբայն Յովհան-  
նու յԵփեսոսէ ի Կոստանդինուպօլիս, և հաւանեցուցանել զժողովն՝ եւ ըզ-  
սրբոյն Մատթէոսի՝ յԱնտիոքայ յԵրուսաղէմ, զի մինչև ի նորա ժամա-  
15 նակն ինքնազուխ էին եպիսկոպոսքն, ոչ ինքեանք՝ ընդ այլօք և ոչ այլք՝  
ընդ նոքօք։ Կոստանդինուպօլիս՝ վասն թագաւորելոյ քաղաքին, և Երուսա-  
ղէմ՝ վասն զի քաղաք է երկնաւոր թագաւորին։ Բայց ի ժողովսն հրա-  
մայեցին սուրբ հարքն՝ Երուսաղէմի եպիսկոպոսին զԵր ի վերոյ նստիլ։

Ահա, ասացաք զեկեղեցոյ առաջին դասն՝ զհայրապետսն, որք ունին  
20 զառաքելական զգեստն և զեմիփորոն<sup>(446)</sup> հինգերկին։ Եւ գործ է հայրա-  
պետին ձեռնադրել զարհիեպիսկոպոսս, որք են ընդ վիճակաւ ի շորս  
բաժնի տիեզերաց։ Եւ նա տայ հրաման վասն ժողով առնելոյ։

Երկրորդ դասք եկեղեցոյ՝ արքեպիսկոպոսք։ Կարգ է նոցա սպիտակ  
հանդերձ մինչև ծածկէ գոտս՝ արքականու<sup>(447)</sup> պճղնաւոր, և շուրջառ, և  
25 եմիփորոն շորեքերկին։ Գործ է նոցա ձեռնադրել մետրապօլիտս, այսինքն՝  
մայրաքաղաքաց եպիսկոպոս, և օրհնել ձէթ կնքոյն։ Եւ ունին իշխանու-  
թիւն ձեռնադրել պատրիարգս։

Երրորդ դասք եկեղեցոյ՝ մետրապօլիտք, որ կոչին մայրաքաղաքաց  
եպիսկոպոսք, որք ունին զնոյն հանդերձս սպիտակս մինչև ցպճղունսն, և  
30 շուրջառ, և եմիփորոն երեքերկին։ Գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս  
ի վերայ բերդից և գեղից և օրհնել զձէթ կնքոյ վասն յաւելուածին արկա-  
նելոյ յառաքելական ձիթոյն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով։ Եւ երեք  
մետրապօլիտք ունին իշխանութիւն ձեռնադրել իրեանց արքեպիսկոպոս։

Չորրորդ դասք եկեղեցոյ եպիսկոպոսք են, որք ունին զնոյն կարգ։  
35 Գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս։ Եւ երեք եպիսկոպո-  
սունք ունին իշխանութիւն ձեռնադրել իրեանց մետրապօլիտ։ Եւ գործ է  
նոցա սեղան օրհնել, և աւագան, եւ իւղ օծութեան։

Հինգերորդ դասք եկեղեցոյ՝ եոիսունք և պապասք, որք են քահա-  
նայք և երիցունք։ Քահանայքն ի քաղաքս լինին, և երիցունքն՝ ի գեղս և  
40 յազարակս. և երկոքեանն մի են, բայց յաղագս պատուոյն և անուանքն  
զանագանին։ Բայց կարգ է նոցա՝ նոցայն, բայց յեմիփորոնէ, զի սոքա  
ուրար միայն արկանեն ի վերայ երկոցունց ուսոցն, նոքա և թիկնոցիւ  
իշխեն կալ ի վերայ բեմին։ Եւ գործ է սոցա պատարագ մատուցանել, և

444 Յովհ., Ա, 1—3  
445 Տե՛ս Եզեկ., Ժ, 14։ Յայտն. Յովհ., Գ, 7  
446 Տե՛ս Մեռնդք, Բ, 10

մկրտել, և պսակել, և ուր հպիսկոպոս չլինի, օրհնել զխաչն և զմատաղն: Եւ թէ հրաման առեալ իցէ յեպիսկոպոսէն, և զիւզն օծութեան իշխանութիւն ունի օրհնել և ձեռնադրել զգպիրն, և զզրակարգացն, և զկրօնատրն:

5 Վեցերորդ դասք եկեղեցոյ սարկաւազունք են: Եւ կարգ է նոցա նոյն, բայց հոլանի կայցեն, այսինքն՝ զլիխբաց, և զօտելոյծ և զահեակ ուսովն արկեալ զուրարն: Գործ է նոցա Աւետարան կալողալ և քարոզել, և զսկիթն և զքշոցն բերել ի սենեկէն ի սեղանն և ի սեղանոյն արտաքս զբաշխումն, և խունկ ծխել և առնել, որ ինչ միանդամ սպասաւորութիւն է. և նստիլ՝

10 ոչ ամենեկին, բայց յետ արձակման ժամուն, երբ հրամայէ քահանայն<sup>447</sup>: Են և ի կանանց սարկաւազուհիք, ձեռնադրեալս վասն քարոզելոյ կանանց և կարգալ Աւետարան, զի մի՛ մտցէ անդ այր, և մի՛ նա արտաքս, քան զվանս կանանց, ելանիցէ: Բայց յորժամ քահանայք մկրտութիւն առնեն կատարեալ կանանց, զան սարկաւազուհիքն յաւազանն և ջրով լուսացեն

15 զկանայսն, և քահանայն օծան, ի ներքոյ վարագուրին: Եւ կարգ է սարկաւազուհեացն ամենայն ինչ հաւատաւորացն, բայց ի վարս պինդն, խաչ ունենայ ի վերայ ճակատին և կիսաթիկնոց՝ յաջմէ կողմանէ ուսոցն: Եւ մի՛ նոր ինչ կամ անկարգ համարեսցիք զայս, ով սուրբ եղբարք, այլ ի սրբոց առաքելոցն աւանդութենէ ուսանիմք, քանզի ասէ, թէ՛ յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է սպասաւոր եկեղեցոյն<sup>448</sup>:

Եւթներորդ դասք եկեղեցոյ<sup>(149)</sup> եպիսկոպոսք են, որ կոչին քորեպիսկոպոսք այժմ, զլիաւոր սարկաւազաց: Եւ կարգ է նոցա նոյն, և ուրար զերկոսին ուսովքն, և կալ զօտելոյծ և զլիխբաց, և իշխանաւ եպիսկոպոսին օրհնեն եկեղեցի և հրաման ունել ի վերայ քահանայից և եկեղեցականաց:

25

Ութերորդ դասք եկեղեցոյ՝ զլիաւորք եպիսկոպոսաց, որք են կաթողիկոսք, որ ունին զպատուականազոյն աթոռն՝ նմանեալ սերսվբէից: Կարգ է նոցա նոյնպէս հոլանի, այսինքն՝ զլիխբաց, և զօտելոյծ և ուրար զերկոսին ուսովքն: Բայց գործ է նոցա ձեռնադրել զեպիսկոպոսունս և ինքնակամ օրհնել զիւզն օծութեան:

30

Իններորդ դասք վերագոյն քան զամենեսեան՝ պապիոս, որ այժմ կոչեն Ֆրանկք պապ, նմանեալ քերովբէից: Կարգ է նոցա հոլանի, այսինքն՝ զլիխբաց, և զօտելոյծ: Եւ գործ է նոցա կարգել զզասս թաղաւորաց. զի թէ մարդն պատկէր է Աստուծոյ, և որք ի Քրիստոս մկրտին՝ զՔրիստոս զգեցեալ են, որչափ ևս առաւել թաղաւորք հաւատացեալք, որ ի վերայ զլիսոյն բերեն զնշան տէրունակսն: Պարտ է նոցա նմանել Քրիստոսի, ոչ միայն խոնարհամտել և զշարշարանսն Քրիստոսի ի մարմնի իւրում կրել, այլ փառացն նմանել, որ ցուցանէ զքաղցրութիւն Տեառն և Փրկչին մերոյ, զի և հեթանոսաց թաղաւորաց լուեալ՝ յօժարեսցին զալ յերկրպագութիւն

40 Տեառն Աստուծոյ մերոյ:

Եւ այս են նմանութիւն երկնաւոր դասուցն.  
 Հրեշտակքն՝ առաքելական զգեստիւ յազօթս.  
 Հրեշտակապետքն՝ քղանցիւ.  
 Իշխանութիւնքն՝ զնդաւ առաքելական զգեստիւ.

<sup>447</sup> Տե՛ս Կանոնք լատղիկեայ Ի, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 234  
<sup>448</sup> Հոովմ., ԺԶ, 1

Զօրութիւնք՝ առաքելական զգեստիւ.

Աթոռքն՝ հիւպատիկք.

Պետութիւնքն՝ առաքելական զգեստիւ.

Տէրութիւնքն՝ պսական ստաքելական զգեստիւ.

5 Սերովբէքն՝ վեցթևեանք.

Քերովբէքն՝ ութթևեանքն և բազմաշեւքն:

Զայս ամենայն զմտաւ ածելով սրբոյն Կոստանդիանոսի թագաւորին, որ ըստ դիւթութեան կարգ էին հեթանոսաց՝ գայն եղծեալ խանգարեաց և այսպէս զերկնից և զեկեղեցոյ շարմարեաց զկարգս դասուցն ի պատիւ  
10 թագաւորութեանն և զտեղիս իւրաքանչիւր կայանացն որոշեաց և զգործն յայտնեաց, որ են այսոքիկ.

Առաջին դաս պաղատին, որ է դարպաս, եղենդիարք<sup>(150)</sup>, որ են պահապանք ոսկի վաղարին: Զգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կազմաւ, և ունին գաւազան ոսկի: Եւ գործ է նոցա տանել յառաջ զագաւորողն<sup>(151)</sup> և  
15 զայլս, զոր խնդրէ արքայն:

Երկրորդ դաս՝ վեստիտորայն<sup>(152)</sup>, որ են պսակակալք արքային: Զգեստ է նոցա դիպակք արծաթաթելս և զաղտազէնք ի կոպաղս ոսկիս, որ է կիսաթուր՝ ներքև հալաւին:

Երրորդ դաս կանտիտորայն է <sup>(153)</sup>, որ զոսկի տէգսն ունին, այսինքն՝  
20 զոսկով կազմած խիշտսն: Զգեստ է նոցա ծիրանի դիպակ ճամկաւոր և մանեակ ոսկի՝ ի պարանոցսն: Եւ յորժամ ի ճանապարհ ելանէ արքայն, նոքա բառնան զխաշն սուրբ: Եւ ի նոցանէ լինին շորս արք, որք զզէնսն կրեն թագաւորին:

Չորրորդ դաս պոքսետորայն է <sup>(155)</sup> որք զվաղերս ունին և ասպարս երկաթիս: Եւ զգեստ է նոցա ապրիշմէ դիպակ: Եւ յորժամ վախճանի արքայն, նոքա են, որ զգազաղսն և զգահոյսն բառնան:

Հինգերորդ դաս եսկոպոտիրայն է <sup>(156)</sup>, որք լինին մեծահասակք և ունին վահանս կմբրաւորս<sup>(157)</sup> և ասպարս փոքրս: Եւ զգեստ է նոցա կտասրն ուղորկ, և վարշամակս, որ է փակեղն, և շաղջեր<sup>(158)</sup> յոտսն, և զօտի  
30 ոսկի կրկին: Եւ ի նոցանէ լինին՝ որք սրկբունք<sup>(159)</sup> և մանդատորք<sup>(160)</sup>:

Վեցերորդ դաս պաղատին՝ սորատորքն<sup>(161)</sup>, որք զձին թամբեն և հեծուցանեն զարքայն: Եւ զգեստ է նոցա ուռուռ կապայ<sup>(162)</sup>, և ի ձեռս իւրեանց՝ թուր միասայրիք և ասպար փոքր:

Եւթներորդ դաս պաղատին սքողարք են<sup>(163)</sup>: Եւ զգեստ է նոցա գրատր կտաւիք և թեզնէ, բերանն դիպակով: Ունին նիզակս, որ է ումբ, և սև ասպարս: Եւ ի նոցանէ լինին՝ որք զզրոշսն, այսինքն՝ զնշանակն, և ըզվիշապագուլսն կրեն և կոշին սիզնայք<sup>(164)</sup>:

Ութերորդ դաս պաղատին՝ դեկանիոնքն<sup>(165)</sup>, որք են աղեղնաւորք: Եւ ունին կրկին վարոցս և ասպարս լոկ: Եւ սքեմ է նոցա, այսինքն՝ զգեստս, այժեհի գրատք կարմիր, և ունին մուճակք: Եւ յորժամ արքայն ի թամաշա ելանէ, նոքա վարեն զամբոխն: Եւ զսոսս կոշեն Եբրայեցիքն քերեթին<sup>(166)</sup>, այսինքն՝ աղեղնաւորք:

Իններորդ դաս պաղատին՝ կիւտորքն<sup>(167)</sup>, որք են սուրհանդակք հետեակք: Եւ զգեստ է նոցա բամբակէ գրատք կազմաւ ճամկօք և զանկապանօք, ունին հողաթափս: Եւ են սոքա սպասաւորք: Եւ զսոսս կոշեն  
45 կապանօք, ունին հողաթափս: Եւ են սոքա սպասաւորք: Եւ զսոսս կոշեն

Եբրայեցիքն օփելեթին<sup>(168)</sup>, այսինքն՝ նետողք: Եւ ամենեքեան զիսիբաց կան և դօտիս ունին ոսկով, բայց միայն սոքա են անգօտի:

Այսոքիկ են դասք թագաւորութեան պահապանք, զինուորութիւնք որձիք յիրաքանչիւր կայանս, արտաքոյ ոսկի բեզարին, և այս է գործ 5 նոցա և զգեստք:

Են և այլ սպասաւորք արքունիք, ոմանք՝ որձիք, և ոմանք՝ կուրտք, որ ոչ են յինն զինուորութեանցն, այլ արծակք են, ոչ դասք են, ոչ շափս քանեաց, ոչ կայք տեղեաց պահպանութեան, այլ երբեմն շատ լինին և երբեմն՝ սակաւ:

10 Առաջին՝ դեմեաիտոսք<sup>(169)</sup>, որք են պատգամաւորք:

Երկրորդ՝ ռիբինարք<sup>(170)</sup>, որք զյիշատակարանքն կարդան առաջի թագաւորին:

Եւ ոսպիտարք<sup>(173)</sup> ասին, որք արկանեն ձեռաց ջուր արքային:

15 Զորրորդ՝ վիննտորք<sup>(172)</sup> ասին, որք զբաղանիս կազմեն և յուանան պարբայն:

Հինգերորդ՝ տոիզլինարք<sup>(173)</sup>, որք են տաճարապետք, որք զկոչեցեալսն ի հաց մատուցանեն առաջի արքային:

Իսկ ի կոտորոցն լինին ակտարք<sup>(174)</sup> որք են նշանագիրք:

Եւ ոսպիտարք<sup>(175)</sup> ասին, որք արկանեն ձեռաց ջուր արքային:

20 Ապօկրիսիարք<sup>(176)</sup> ասին սպասաւորք Եկեղեցոյ արքային:

Իսկ փղակունքն<sup>(177)</sup> նոքա են կցորդասացք և արձակապաշտօնք:

Սպուղէք<sup>(178)</sup> կրօնաւորք քաղաքին, որոց գործ է նոցա զգութեայս, և զպաշտօնն, և զկանոնն երգել:

25 Իսկ աբեղայք և մոնոզոնք<sup>(179)</sup>, որք խարազնազգեստք են ըստ կամաց իրեանց քան ի պաշտօնն:

Իսկ փղակունք և սպուղէս մոնոզոնքն՝ ոչ մոնաքոսքն<sup>(180)</sup>, որք են միայնակեցունք և ապաշխարողք:

Պոմեաիկոսք<sup>(181)</sup> որք են հաւատադիրք, որք զարտաքնոցն առտուածաբանութիւնս ուսին և եկեղեցականօքն վարժին:

30 Այսոքիկ ամենեքեան ոչ են յինն դասուէն եկեղեցոյ և ոչ եթէ ի սպասաւորութիւն ինչ հպին, և ոչ յամբիոն Ելանեն և ոչ ի բեմն, այլ են ամենեքեան փառաբանիչք, կարգեայք ի տան Տեառն:

Եւ քանզի զայս ոչ վայրապար ինչ դրաք ի գիրս դատաստանի, այլ զի գիտասցիք, եթէ այսոքիք պարտին Հայք ի Հոռոմոց և ի Յռանկաց, որպէս 35 Աղուանիցն ուսուցանէ Պատմութիւն և այլք: Վասն որոյ հարկաւոր է այս կարգ յեկեղեցի ի հայրապետաց կարգիլ, և թէ անփոյթ արարեալ՝ միշտ պարտաւոր ցուցանին յատեան դատաստանին: Քանզի ի մեր կուսաւորչէն և այս դասք պաշտման երևի յեկեղեցիս, ըստ որում ի սրբոյն յիշի յնդիշէի Պատմութեանն և այս դասք, սոսկով՝ ընդ ձեզ կան գրակարդացք և սաղմոսասացք: Նմանապէս և սարկաւագաց յիշուին անուանք ի կանոնս և յայս:

Արդ, յայտ է յաւերածոյ Եկեղեցեաց խանգարիլ և այս կարգի, և այլ ի հեղգութենէ ուղղաց: Թէպէտ և այլ ինչ յօղեն պատճառք, սակայն արդարացուցանել ոչ կարեն: Եւ թէ այլազգ այսոքիկ յիշատակի ի սրբոյն 45 Դիոնէսիոսի գիրսն և աստ՝ այլազգ՝ փոփոխմամբ, սակայն զթիւն ամբողջ պահեն, ուստի ոչ ինչ երկբայեցիք են: Արդ, ըստ ճշմարիտ դատաստանի

վարելի է զեկեղեցի այսպիսի կարգաւ ըստ երկնայնոցն, զի թէ տուն զերկրաւոր թագաւորի ըստ այսմ յօրինի, ո՞րչափ ևս երկնաւոր թագաւորին Քրիստոսի. և նմա փառք յաւիտեանս ամէն:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Զ

5 ՎԱՍՆ ՈՐ ԶՕՏԱՐ ՄԱՐԴ Ի ԲԱՆ ՂՐԿԷ, ԵՒ ՄԵՌԱՆԻ

Իսկ եթէ ոք զոք, որ շիցէ իւրն, ի գործ իւր առաքէ, և անդ որոգայթի, արեան պարտ է<sup>449</sup>,

20 Զգուշանալ հրամայէ կանոնքս<sup>(182)</sup> ոչ վայրապար զոք, որ շիցէ վարձկան և կամ այլ օրինակաւ իւր, ի գործ իւր առաքել, զի արեան դատաստան հրամայէ վնասելոյն լինել:

Եւ այդ ցուցեալ է դատաստան հոգեւորապէս և մարմնաւորապէս<sup>450</sup>: Սակայն քննութիւն լիցի օրինակի առաքողին երախտեաց և պատահման մահուն կամայի և ակամայի:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Է

15 ՎԱՍՆ ՈՐ ՎԱՐՁՈՎ ՂՐԿԷ ԶՄԱՐԴ Ի ԲԱՆ

Այլ թէ վարձկան ոք իցէ և ասիցէ ցտնատէր տանն, թէ առաքեա զիս կամ տուր ինձ գործ, զի արարից, իսկ նա յառջապատրաստ ծանուցանէ նմա զորոգայթ մահուն, և վարձկանն առ կարիս հարկի իւրոյ յանձն առնու, և սա կրկին զանպարտութեան բանն ասիցէ նմա, և պատահի վարձկանին մեռանել, անպարտ է: Եւ թէ անզգուշութեամբ ի բազմաց վկայեալ վնասն առաքիցէ կամ գործել հրամայիցէ, և անդ հասանիցեն նմա որոգայթք մահու, արեան պարտ է<sup>451</sup>:

25 Յայտնի է այս դատաստան կանոնական<sup>(182)</sup>: Զի ըստ կամաց վարձկանին երթալ ի գործ՝ անպարտ է առաքողն, իսկ հարկատրեալն և ի վկայեալ վնասն առաքեալ՝ ընդ դատաստանաւ արեան է, թէպէտ և վարձաւոր իցէ:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Ը

ՎԱՍՆ ՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՀԱԿԱՌԱԿ ԵԿԵՂԵՑՈՑ ՇԻՆԷ

30 Եւ վասն հակառակ եկեղեցի շինելոյ հարցեալ էիր<sup>(182)</sup>, գրեալ է վասն այսորիկ, թէ՛ որ քակէ զցանկ հայրենի, հարցէ զնա օձ և սպանցէ<sup>452</sup>, այսինքն՝ զհրաման և զկարգ, զոր եղին մարգարէքն, և առաքեալքն, և վարդապետքն եկեղեցոյ: Արդ, որ զհարանցն մերոց զեղեալ կարգն խափանէ՝ հակառակ եկեղեցոյ եկեղեցի շինէ յեպիսկոպոսաց կամ յերիցանց, նզովեսցին ի մահ և ի կեանս և յամենայն քահանայական կարգէ լուծցին:

449 Դավիթ Ալավկա որդու կանոնները, ԽԳ, «Էջմիածին», 1953

450 Տե՛ս մասնավորապես հոդվ. ԼԾ

451 Դավիթ Ալավկա որդու կանոնները, ԽԳ «Էջմիածին», 1953

452 Ժողովուրդ, Ժ, 8

և այլք, որ նոցին կամակիցք իցեն, զնոյն պատիժս կրեսցեն, և գշինեալ  
 եկեղեցին ի ժառանգաւորս տեղեացն թողցեն իրաւապէս: Ապա թէ մար-  
 դասիրապէս արասցեն, զգինս աշխատութեան տացեն ցնոսա, ապա թէ  
 այս ոչ լինիցի, քակեսցեն հանդարտութեամբ և մի՛ այրեսցեն: Իսկ եթէ  
 5 ամենայն բազմութիւնքն եպիսկոպոսօք, և քահանայիւք, և միաբան ժողո-  
 վըրդականօք զշինեալն կամեսցին, մի՛ որ հակառակ վիճարանեսցէ ընդ-  
 դէմ միաբանական հրամանացն: Ապա թէ յանդգնի որ և հուր դիցէ եկե-  
 ղեցոյն կամ յաւագաց կաշառօք բռնութիւն բերիցէ ի մէջ և քակեսցէ զեկե-  
 ղեցին, աստուածամարտ են այնպիսիքն և ընդ խաշահանունսն եղիցին,  
 10 իսկ եթէ զղջանայցեն, մինչև ի մահ՝ ապաշխարեսցեն<sup>453</sup> և յետի օրն մա-  
 հուան հաղորդեսցին:

Լի ամենայն ճշմարտութեամբ եղեալ է այս դատաստան կանոնա-  
 կան<sup>454</sup>, զի հակառակ շինել յաղագս ազահութեանն է, խափանելի է, բայց  
 կամօք եպիսկոպոսին և այլոցն հաստատի, զի մի՛ ժառանգութիւն որ  
 15 գեկեղեցի առնիցէ<sup>455</sup>, և այլ եկեղեցի ըստ պատշաճի շտայցէ շինել, զի  
 միշտ եպիսկոպոսաց է ժառանգութիւն եկեղեցոյ և ոչ քահանայից ըստ  
 ինքեանց կամաց:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ի Ք

Վ Ա Ս Ն Ա Ք Ս Ո Ր Ե Լ Ո Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Յ

Արդ, եթէ որ արժանաւոր արքսորանաց իցէ, որք միանգամ չեկեղեցա-  
 կան կարգէ իցեն, ըստ իրաւանց այսպէս լիցի. սարկաւազք և քահա-  
 նայք լուծցին յեպիսկոպոսէ, զի նա է ձեռնադրող նոցա. սարկաւազուհիք՝  
 ի սարկաւազաց. և աշխարհականք, և հաւատաւորք, և կրօնաւորք և որք  
 միանգամ ի քահանայէ ձեռնադրին՝ ի քահանայէ. և եպիսկոպոսունք՝ յիւ-  
 25 րեանց ձեռնադրողաց. և կաթողիկոս՝ կամ ի կաթողիկոսէ, կամ յիւրոց  
 ձեռնադրողաց եպիսկոպոսաց. իսկ վարդապետք՝ ի վարդապետաց հրա-  
 մանատուաց: Այլ վարդապետաց ոչ է ըստ իրաւանց զքահանայ արքսորել  
 կամ առնուլ գկարգն, բայց միայն որոշել. նաև զիւրաքանչիւր զդասս  
 խրատել, և յանդիմանել, և յուղզութիւն ածել իշխան լիցի, իսկ արքսորելն՝  
 30 նոցունց իշխանօքն, այսինքն՝ ձեռնադրողօքն, արասցէ, զի բանիւ իշխէ  
 ամենեցունց: Այլ հայրապետք ամենեցունց իշխեն, այլ ոչ ամենեքեան՝  
 նմա, բայց ձեռնադրողք նորա<sup>456</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ

Վ Ա Ս Ն Ա Ք Ս Ո Ր Ե Լ Ո Յ Թ Ա Գ Ա Խ Ո Ր Ա Ց

35 Թագաւորք, կարգեալք յԱստուծոյ, որպէս Իսրայէլին, յԱստուծոյ  
 բարձցին կամ արքսորեսցին, իսկ ի մարդկանէ կացեալք՝ ի նոցունց ար-  
 սորեսցին: Եթէ իշխանք թագաւորեցուցեն, և ոչ ըստ արժանոյն վարէ

453 Դավիթ Ալափկա որդու կանոնները, ԿԱ, «էշմիածին», 1953

454 Տե՛ս հոդվ. ՃԼԴ, նաև Կանոնք Հարանց հետեւողաց ԻԵ

455 Տե՛ս հոդվ. Գ, Ե, ՄԷ

456 Տե՛ս հոդվ. Դ, նաև Կանոնք Նիկիականք Ե, Կանոնք Շահապիվանի ՉԸ

զթագաւորութիւնն, ի նոցունց կարգողացն աքսորեսցի. այլ որդոյ նորա ոչ է իրաւացի փոխել:

Իսկ թագաւորութիւն սեպհական լիցի ի հօրէ անկեալ առ որդի:

Իսկ իշխանս, զորս կարգէ թագաւորն, ի նմանէն և աքսորեսցին կամ  
5 խրատեսցին:

Իսկ զթագաւոր խրատել, եթէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամօք լիցի այլ թագաւորի և հայրապետի, և հաւասարութեամբ ամենեցուն:

Իսկ եթէ իշխանք և ազատք ինքեանց կացուցանեն իշխան, ի նոցունց  
10 միաբանութենէ աքսորեսցի և կամ խրատեսցի: Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւորն աքսորեսցէ և խրատեսցէ:

Այլ իշխանաց իշխան՝ զիշխան խրատել կամ աքսորել և զազատ. թէ ի նոցունց կարգեալ իցէ՝ նոցունց միաբանութեամբ արասցէ, և թէ ի թագաւորէ՝ թագաւորին կամօք արասցէ:

Իսկ ազատք զգինուորս ոչ կարեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի:

Նմանապէս և զինուորքն զշինականսն ոչ կարեն աքսորել և ոչ խրատել, այլ աքսորել՝ ազատք, և խրատել՝ իշխանք:

Զայդ ըստ այսմ կարգի իրաւացի գիտեմ զատաստան ի տունս  
20 թագաւորաց:

### Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Ա

#### ՎԱՍՆ ՈՐ ՀԱՆՔ ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՎՆԱՍՔ ԵՒ ՍՊԱՆՔ

Եթէ որ ի կենդանեաց, ի սրբոց կամ յանսրբոց, մտեալ յանդաստան, յայգի, կամ յայլ ինչ յայսպիսի, յօրան կամ ի խոտ դիզեալ, և տէր նորա

25 զչարեալ հարցէ և սպանցէ, դատաստան լիցի՝ զեղեալ վնասն վճարմամբ հատուցանել, և նա զսպանալ կենդանին, զոր եհարն, ըստ իրաւանց լիով հատուցէ, զի պարտ էր ի վնասէն հանել, այլ ոչ սպանել: Այլ ի հարկանելն քննութիւն լիցի. եթէ խրտուցեալ անկաւ և մեռաւ, զի ոչ զմեռանիլն կամէր, այլ զփախուցանելն, այդոքիկ յակամայից լինին,—զկէս զնոյն

30 հատուցէ. ի հարուածսն տեսցեն կամքն: Իսկ եթէ բժշկելի իցէ հարուածն. զխափանածոյն և զբժշկութեանն տայցէ. այլ եթէ անբժշկելի իցէ հարուածն՝ թէ ոտից և թէ այլոց, և ի սուրբ կենդանեաց իցէ, զգինն լիով տայցէ, և նորա շաղիղն լիցի, և թէ յանսրբոց՝ բաւանդակ հատուցի:

Եթէ կուրացուցէ, կամ զատամն ընկենուցու, կամ զեղջիւր, կամ զկող բեկցէ, թէպէտ և բժշկեսցի, զգինն ընդ շորս բաժանեալ՝ մի մասն ընդ միոյ վնասուն տացի. և այդ ուտելեաց և անուտելեաց լիցի: Եւ թէ զազի կտրեսցէ, մի ի շորից մասանց լիցի:

Ապա թէ անասնոյ տեսոնն բազում անգամ ասացեալ իցէ զվնասն, և նա անփոյթ արասցէ, տեսցին այդոքիկ և այնպէս դատեսցին:

Իսկ ոտից կաղութիւն մնացեալ՝ մի ի շորիցն լիցի զնոյն տուգանքն:  
40 Այլ ընդ խոզ և վայրապար վնասողացն առաւելութեամբ լիցի տուգանքն ի բեկանիլն և ի հատուցանելն զգինն ի սպանանելն:

Գ Լ Ո Ւ Խ Ս Լ Բ

ՎԱՍՆ ՈՐ ԽՐՏՑՆԷ ԶԳՐԱՍՏ, ԵՒ ՄԱՐԴՆ ԱՆԿԱՆԻ ԵՒ ՎՆԱՍԻ

Եթէ կատարեալ ոք իցէ և շար կամօք գործիցէ, և անկեալն մեոցի, արեան դատաստան լիցի, որպէս և գրեալն է՝ հատուցի<sup>457</sup>. Իսկ բեկեալն՝

5 բժշկութեանն և դարմանոյն տացի. իսկ զգալութեանցն վնասելոյ՝ որպէս և գրեալն է, այնպէս հատուցի<sup>458</sup>. Իսկ ոչ անբիժ բժշկեալն՝ կէս զգալութեանցն հատուցի:

Ապա թէ ընդ խաղ իցէ, նոյն լիցի դատաստան, զի ոչ խաղալ, այլ զարհուրել արժան էր, սակայն ներեսցի վասն սովորութեան աշխարհի՝

10 մինչ ի կէսն հատուցանել կամ յերիցն՝ մին: Սոյն օրինակ և ապաշխարութիւնն լիցի, թէ ի դատաստան ոչ մտունէ: Իսկ եթէ մանուկ իցէ, տեսցի հասակն, որպէս յառաջագոյն գրեալն է<sup>459</sup>, և այնպէս դատեսցի, միանդամայն շարակամութեամբ առնել կամ ընդ խաղ:

Ճշգրտութեամբ տեսցի կամայն և ակամայն: Եւ զի կատարեալ ակամայ է, որոց յետոյ զեղջ հետևի, իսկ կամաւորին՝ ուրախութիւն:

15 Այլ թէ ըստ ինքեան զոք տեսեալ խրտնչի, և վնաս լիցի մահու, թէ ի թշնամեաց յայլազգեաց իցէ, զի բնութիւն է նոցա ի կորուստ մեր խրնդալ, կէս արեան դատաստան լիցի. ապա թէ քրիստոնեայ թշնամի իցէ՝

կրտոյ կէսն, այլ ըստ ապաշխարութեանն՝ կէսն լիցի Եւ բեկելոյն և զգալութեանցն վնասելոյն այդոքիւք դատեսցին:

20 Իսկ թէ շիցէ թշնամի, սակայն յահուր շարժմամբ վնասիցէ, մի՛ լիցի անպարտ յաղագս այլոյ ժամանակի զգուշութեան. քննելով՝ սակաւ յամենայնի տուգանք լիցի: Ապա թէ համեստ շարժմամբ և ըստ կարգի գնալն իցէ, տուգանաց դատաստան մի՛ լիցի, բայց ըստ իւրոյ խղճին և ըստ կամայ.

25 նմանապէս և ապաշխարութիւնն լիցի:

Գ Լ Ո Ւ Խ Ս Լ Գ

ՎԱՍՆ ԱԿԱՄԱՅ ԵՒ ԿԱՄԱԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ

Եւ ակամայ սպանութիւն լինի բազում օրինակաւ, սակայն զնշանակս տացուք շափաւորապէս: Եւ է այսպէս:

30 Զի ի հարկանել ուրուք փայտ և ոստեալ տապալուն, որ է կացինն, և ումեք դիպեալ սպանցէ<sup>460</sup>:

Եւ կամ խոնարհ ի բարձանց կամ ի լերանց թողեալ փայտ կամ քար՝ դիպեալ զոք սպանցէ:

Եւ կամ յայգոյ, կամ ի դրախտէ, և կամ այլ ինչ յայսպիսեաց արտարքս

35 ձգեսցէ քար և սպանցէ զոք<sup>461</sup>:

Կամ ի ծառ ձգեալ ոք քար ի թափել պտուղ, և քարն անկեալ ի վերայ ուրուք սպանցէ, և կամ ի ծառոյ ի խոնարհ թափել սյուուղ, և քար իցէ

457 Տե՛ս հոդվ. ԿԵ-ԶԲ  
 458 Տե՛ս հոդվ. Բ և ԿԳ  
 459 Տե՛ս հոդվ. ԻԲ  
 460 Տե՛ս Բ օրին., ԺԹ, 5  
 461 Տե՛ս հոդվ. ՃԶԳ և Կանոնք Աթանասի ԶԲ

մնացեալ ի ծառ կամ գաւազան անկեալ և կամ այլ ինչ այսպիսի, ուստի մահ զործեսցի<sup>462</sup>։

Կամ վարդապետ զաշակերտս վասն խրատու հարկանէ ըստ շափոյ<sup>463</sup>, կամ հայր՝ զորդի, կամ մայր՝ զդուստր<sup>464</sup>, կամ սկեսուր՝ զհարսն, կամ եղբայր՝ զեղբայր, և կամ տէր՝ զծառայ, և կամ տիկին՝ զաղախին, և այլ ոք՝ զոք, ուստի վնաս մահու լիցի<sup>465</sup>։

Եւ թէ զերիվար ոք ընդ հրապարակ վարիցէ<sup>466</sup>, կամ զայլ ինչ ի կենդանեաց, կամ զսայլ, և առ ոտն կոխեալ՝ մահ լիցի։

Եւ կամ նետ որսոյ ձգիցէ, և կամ ի նսպատակ, այսինքն՝ ի մողոր, կամ էրէ վայրի, և պատահիցի ումեք և սպանցէ։

Կամ թէ քար ոք ձգիցէ՝ կարծեցեալ քիսար<sup>(183)</sup> գոլ։

է և այլազո ակամայ, յորժամ ի հետ մտանէ եղբայր զեղբայր սպանանել, և նա հարկատրաբար դարձցի և սպանցէ<sup>467</sup>, կամ ոք՝ զոք այդպէս։

Կամ յաւազակաց ի մէջ անկեալ՝ ի հարկէ սպանցէ<sup>468</sup>, Եւ են սորս յակամայէ և ի կամաւորէ։

Իսկ ի պատերազմի սպանանելն՝ ի կամաւորէ և յակամայէ<sup>469</sup>։

Եւ եթէ ոք ի գիշերի կարծիցէ զթշնամի հարկանել և հարեալ զբարեկամ սպանցէ. և է սա ի կամաւորէ և յակամայէ։

Եւ եթէ նետ ոք ձգիցէ, և թշնամոյ պատահեալ՝ սպանցէ, յակամայէ և ի կամաւորէ է։

Իսկ կամաւորն<sup>470</sup>, եթէ ոք հարկանէ խիստ զաւազանաւ զմարդ՝ կարծելով յուզողութիւն ածել զչարագործն, մինչև հանեալ արիւն, յորմէ և մեռցի։

Նոյնպէս՝ եթէ քարիւ կամ փայտիւ զոք հարեալ առանել շարշարեսցէ, քան զկարն, ընդ այնոսիկ համարեալ է, որ սրով սպանցէ, կամ այլ ինչ այսպիսեաց։

Նոյնպէս՝ և որ փայտատ ինչ ձգիցէ, և ի ծանրութենէ երկաթին, և ի սրոյն իսկ, և ի ձեռացն երևի հարուածն. ի բազմապատիկ զիմաց հարուածոյն, որ ի վերայ նորա են, զուշակէ զեղեալսն։

Նոյն օրինակաւ՝ առանց իրիք հարկանելոյ կամաւոր շարիք, որ յաւազակացն լինին։

Իսկ կանայք, զեղս արբուցեալ, արանց սովոր են սպանել. նոյնպէս և որ առ նախանձու զեղս տայ մերձաւորի, ընդ մահապարտս համարեալ է։ Եւ արանց և կանանց զոյզ է վճիռն։

Արդ, այլոքիկ են կամաւոր սպանութիւնք և նմանք սոցա, և ակամայքն և խառն չերկոցունցն, որպէս ցուցաւ. և բժշկել խոստովանութեամբ յայտնի է։

Այլ զգատատան սացուք զօրինակ։ Զի որպէս գրեցաւ ի զատատան թագաւորացն, զի թէպէտ ակամայ այլազո զբրիստոնեայ սպանանէ

462 Տե՛ս Կանոնք Բարսղի Ե, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 339

463 Տե՛ս Կանոնք Աթանասի 29, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 321

464 Տե՛ս Կանոնք Բարսղի ԸԱ, Կանոնագիրք Հայոց, Կ. Բ, էջ 126

465 Տե՛ս Կանոնք Աթանասի Լ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 303

466 Տե՛ս Կանոնք Աթանասի ԽԾ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 308

467 Տե՛ս Կանոնք Աթանասի ԻԹ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 302

468 Տե՛ս Կանոնք Հարանց հետեղաց ժԸ, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 108

469 Տե՛ս Կանոնք Բարսղի ՂԷ, Կանոնագիրք Հայոց, Կ. Բ, էջ 124

470 Տե՛ս Կանոնք Բարսղի Ե, Կանոնագիրք Հայոց, Կ. Ա, էջ 338—341

իբրու զի խնդայ, ըստ կամաւորի զատեսցի ի զին արեանն: Իսկ քրիստոնեանայ զքրիստոնէ սպանեալ՝ կամաւոր է:

5 Եւ է կամաւորն, յորժամ վասն նախանձու կնոջն, կամ յաղագս ընչից, կամ վասն փառաց, կամ վասն այլ պատճառի սպանցէ. որպէս և գրեալ է՝ լիով դատեսցի: Իսկ թէ ակամայ և թշնամի պատահի սպանեալն, յորոյ վերայ խնդայ, իբր զկամաւոր դատեսցի կամ ըստ ներման՝ ըստ կիսոյ, որպէս ի դատաստանս թագաւորացն գրեցաք:

Իսկ թէ բնաւին ակամայ իցէ, ըստ այնմ լիցի դատաստան, և եթէ խառն ի կամաւորէ և յակամայէ, ըստ այնմ լիցի<sup>471</sup>:

10

Գ Լ Ո Ի Ն Մ Լ Գ

Վ Ա Ս Ն Վ Ն Ա Ս Ո Ղ Ա Ց Ջ Բ Ո Վ

15 Եթէ պատահի ումեք ջուր բերել առուով ի գործ ինչ կամ յաղագս ոտզանելոյ և վճարեալ զիւր գործն և ընդ վայր թողեալ՝ վնաս ընկերին իւրոյ լինի՝ յայգի, կամ յանդաստան, կամ ի բնակութիւն ինչ առնիցէ, 20 եթէ զգուշացոյց, և ինքն փոյթ կալաւ զգուշանալ, և ակամայ վնաս ինչ գործեցաւ, կէս վնասուն դատաստանաւ վճարեսցի. ապա թէ հեղզացեալ անփոյթ արար և ոչ զգուշացոյց՝ բաւանդակն վճարեսցի, մանաւանդ թէ թշնամութեամբ արասցէ: Սակայն օրինակն տեսցի, եթէ յումմէ՞ եղև՝ յիւրմէ՞ թէ ի վարձկանէ, ի կատարելո՞յ թէ յանկատարէ, ի դիշերի՞ թէ ի տուրնջեան, և այլն այդպէս դատեսցի:

Գ Լ Ո Ի Ն Մ Լ Ե

Վ Ա Ս Ն Բ Ժ Շ Կ Ա Ց

25 Բազումք ի բժշկաց բազում վնասս գործեն դեղօք կամ ի փորձել զգեղս յայլսն, կամ շարակամութեամբ սպանանեն դեղօք, կամ վասն անզիտութեան վնասակար դեղս տան, կամ անվարժք գոլով՝ զցաւսն ոչ գիտեն, կամ հեղզանան, վասն զի զվարձս ոչ տան, կամ նախանձելով ընդ աշակերտսն՝ ոչ ուղիղ ուսուցին, և նոքա անգիտանալով՝ բազում վնասս առնեն, և թէ այլ ինչ ախտս ցաւոց մուծին՝ և եթէ այլ ընչիւքն և եթէ աշակերտօքն, զայսոսիկ զամենեսեան կամաւոր գիտեմք:

30 Իսկ ակամայք. զոր ի հիւանդին տեսողացն հեղզութենէ գործին կամ ի հիւանդին, կամ զի ըստ հրամանի նորսս զհիւանդն ոչ դարմանեցին, կամ ի մեծ ինչ հարկէ ոչ եղև հնար գալ բժշկին առ հիւանդին, կամ գիտութեամբ դեղ տուեալ կենաց՝ մահու եղև պատճառք: Սոյնպէս հատանելն և խարելն այդոքիւք դատեսցին:

35 Արդ կամաւորացն արեան լիցի դատաստան, երբ վնասն յայտնին, ապա թէ խոստովանութեամբ ծնուցի՝ կամաւորի ապաշխարութիւն լիցի. իսկ ակամային՝ անպարտ յիւրաքանչիւրսն լիցի: Իսկ ի կամաւորէ և յակամայէ եղեալ վնասն՝ մի՞ լիցի սնպարտ յիւրաքանչիւր յիրսն<sup>(184)</sup>:

<sup>471</sup> Տե՛ս նաև հոդվ. Ճ29

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Ձ

ՎԱՍՆ ՈՐ ՀԱՐԿԷ ԶՄԱՐԴ ԵՒ Ի ԲԱՆ ՂՐԿԷ, ԵՒ ՄԱՐԳՆ ՄԵՌԱՆԻ

5 Եթէ ոք զոք ի գործ ինչ հարկիւ առաքէ, և վնաս լիցի մահու, այսպիսի ինչ, եթէ ի ծառ հանէ թափել պտուղ ի հարկէ, կամ ընդ գետ անցանել, կամ ի խումար ձի հեծուցանէ, կամ այլ ինչ այսպիսի, կամ վարձկան ի բան յղեալ ի հարկէ, և մահ պատահի, այդոցիկ արեան դատաստան լիցի ի կամայէ և յակամայէ, առաւել լիցի բռնադատողացն: Իսկ վարձկանին և իւրոցն՝ եթէ աւելի քան զսովորութիւնն դատէ կամ հարկանէ, ընդ դատաստանաւ է կամայի և ակամայի<sup>472</sup>:

10

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Է

ՎԱՍՆ ՄԱՐԱՊՆԵՐՈՅ ԵՒ ՄՇԱԿԱՑ

Յաղազս այգեզործաց և այլոց ճշգրտել զօրինակն ոչ կարեմ՝ յաղազս զանազան սովորութեանց զաւտաց, բայց սակաւ ինչ նշանակ տացուք իրաւանց, զի ըստ սովորութեան վճռին այն հաստատուն առ նոսա կայցէ:

15

Արդ, մի՛ ոք անիրաւութեամբ զրկանս ինչ գործեսցէ, այլ իրաւամբք զբաժանումն արասցէ ընդ ընկերին: Իսկ զող զտեալ ոք ի նոսա, կրկին սուժեսցի և ոչ շորեքկին՝ ըստ Օրինացն<sup>473</sup>, զի յիւր վաստակսն և ոչ յօտարին անիրաւէ:

20

Իսկ վարձաւ մշակացն վարձ ի յեղանակս առատութեան և նուազութեան դատեսցի. առաւելեալ՝ ի նուազն լիցի, և պակասեալ՝ յառաւելուն: Նմանապէս և յաղազս տեղեացն լիցի:

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Ը

ՎԱՍՆ ՀՈՎՈՒԱՑ ԵՒ ԱՆԴՊԱՀԻՑ

25 Եւ հովիւք և անղպահք ըստ սովորութեան զաւտաց զանազանին ի վարձս, սակայն ի ճշմարտութիւնն, որպէս կարգեալ եղեն, պահեսցի ի նոսա:

30

Արիութեամբ զգուշացեալ լիցին, և թէ պատահի գազանաբեկ լինել, յորժամ չիցէ ի ծուլութենէ, վկայ ի գէշն ածցէ և անպարտ է: Եւ թէ չիցէ մերձ, և պատճառ անհոգութիւնն իցէ և կամ այլ ինչ, որ թէ պատահեալ էր մերձ՝ անվնասելի էր, զատաստանաւ է վճարել նոցա՝ կամ բաւանդակ, կամ ընդ կիսոյ. բաւանդակ՝ եթէ բնաւ յանփոյթութենէ եղև, և կիսոյ՝ եթէ խառն ինչ էր:

35

Յակամայից եղեալ վնաս՝ ի վարձէ մի՛ զրկեսցին: Իսկ եթէ ի ծուլութենէ յայլոց այղպիսեաց պատճառաց զողացին, զատաստանաւ է վճարել: Իսկ եթէ իւր զողացաւ և յայտ եկեալ, միոյն շորս և հինգ վճարեսցէ ըստ Օրինացն<sup>474</sup>:

472 Տե՛ս նաև հողվ. ԼԵ, ՄԻԲ, ՄԻԶ, ՄԻԷ  
 473 ԵԼԹ, ԻԲ, 1  
 474 ԵԼԹ, ԻԲ, 4

Այլ հարեալն և սպանեալն, վճարեալ լիցի, ի քարէ կամ ի գաւազանէ, նմանապէս՝ հարկանելն և բեկանելն, կամ հարցէ և վնասեցէ՝ ըստ աշխատի լիցի, եթէ ի վայր ելեալ ծնունդն մեռցի, և ինքն անփոյթ արարեալ մերձ ոչ իցէ: Դոյն լիցի և որք զձիս և զջորիս արածեն:

5 Իսկ զմիմեանս հարեալ և սպանեալ՝ ըստ Օրինացն դատեսցի<sup>175</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Ք

ՎԱՍՆ ՈՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԳԻՍ ՏԱՆ ԵՒ ԱՅԼ ԻՐՔ

Եթէ պատահի աւեր եկեղեցոյն, յոր նուէրն եղև, թէ ի վանս, թէ ի գեղ, և աշխարհականք բնակելով առցեն և կերիցեն, իշխան լիցին այնոքիկ, որք նուիրեցին, առնուլ և յայլ եկեղեցիս նուիրել, թէ չիցէ կարծիս շինութեան, ապա թէ իցէ՝ ինքեանք սպասաւորեսցեն, մինչև շինեսցի, և մի՛ առ իւրեանս կալցին, զի Աստուծոյ է բաժին, յորմէ հետէ նուիրեալքն եղև:

10 Այլ թէ պատահի գաւերեալ եկեղեցոյ զժողովուրդ առնուլ և այլ եկեղեցոյ տալ, յորժամ շինեսցի՝ առանց հակառակութեան անդրէն դարձուցլ եպիսկոպոսն:

15 Այսա թէ սք յայլոյ ժողովուրդ կամեսցի եկեղեցի շինել հակառակելով, մի՛ տայցէ թոյլ եպիսկոպոսն. ապա թէ պահանջեսցեն ըստ պիտոյից, ըստ հրամանի եպիսկոպոսին եղիցի շինել:

20

Գ Լ Ո Ւ Խ Մ Լ Ք

ՎԱՍՆ ՎԱՃԱՌԱՅ

Եւ վաճառք ըստ հրամանի թագաւորաց կարգեսցին ի քաղաքս կամ իշխանաց՝ ըստ հրամանի թագաւորաց, թէ ի քաղաքս, կամ յաւանս, կամ յայլ ինչ տեղիս ի գաւառս: Եւ նախադրութեամբ զշափս, և զկշիոս, և զոյգս նոքա դիցեն՝ տեսանելով զգորութիւնս վաճառին: Կարգեսցեն և կոփիչս միշտ որոնել և տեսանել, զի մի՛ նենգութեամբ ինչ արասցեն:

25 Այլ խարդախիցն խրատ ըստ հրամանի իշխանացն լիցի: Գողին ի շափս և ի կշիոս հատուցանել շորեքկին և յանդիմանութեամբ նշաւակել ի զարհուրումն այլոցն:

30 Իսկ զահեկանահատիցն և դրամակոփիցն զձեռսն հատանել հրամանաւ իշխանաց:

Իսկ զմաքսն առնուլ իրաւապէս, յորժամ ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճառիցեն: Այլ մի՛ լիցի յանցո՝ ճանապարհաց մաքսնլ, եթէ ոչ վաճառիցեն, բայց վարձս միայն, թէ ընդ նոսա զնալով ի թշնամեացն պահիցեն:

35 Այլ մաքս, որ է բաժ, հրամանաւ թագաւորաց լիցի և իշխանաց՝ հրամանաւ թագաւորաց:

Այլ ի վաճառս խարդաց զտգէտսն՝ ըստ գողիցն հատուցի:

Իսկ զգին հացի և գինուլ և զայլոց այսպիսեաց, ըստ քաջարեութեան

<sup>175</sup> Տե՛ս ելք ԻԱ, 35—36, և աև հողվ. 49

ամի կամ ըստ այլ իմիք պատճառի, նմանապէս ըստ նուագութեան և ըստ այդպիսեաց պատճառի փոփոխի ի վեր և ի վայր՝ թագաւորաց հրամանաւ լիցի և իշխանաց, յիշատակելով զաւանակետաց և ժողովրդապետաց, Այլ անհաստատ լիցի վոխելն յաղքատաց ըստ կարեաց վաճառողաց և կամ փարթամաց՝ անկարօտից վաճառողաց: Բայց իշխանք ի վեր և ի վայր գգինս առնել՝ ուղիղ տեսլեամք արասցեն, զի մի՛ մշակք և այլ ինչ գործօնեայք, նմանապէս՝ վաճառականք, վրիպեալք գրկիցին յիւրաքանչիւր յերկանց, և կամ ղատաւորք ճշգրիտ քննութեամբ ըստ հրամանի իշխանաց առնիցեն:

10

## Գ Լ Ո Ւ Խ Մ Խ Ա

## Վ Ա Ս Ն Գ Ո Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Ա Ի Ո Ր Ա Յ

Արուեստաւորք ամենայն ըստ որում և իցեն արուեստի, եթէ հատուածով գործիցեն և եթէ վարձով, յորժամ ոչ ըստ հաճոյից տեսն գործիցեն, այլ և գնիւթն ապականիցեն, գատաստանաւ է ըստ հաճոյից նոցա առնել գարձեալ կամ գապականեալն ի գնոյն ըստ արժանոյն լնուլ և ապա լիով հասանել վարձու, ապա թէ ոչ՝ պակասեալ ի վարձէն ըստ արժանոյն, որպէս տեսանեն գատաւորք՝ արասցեն:

Իսկ գող գտեալ՝ ըստ Օրինացն<sup>476</sup> հատուցեն և զկորուսեալն վճարեսցեն:

Իսկ թէ վնասեալ իցէ՝ կամ ի մկանէ, կամ տյնպիսի պատահի նիւթն, վասն բազում ժամանակեայ առ ինքեանս պահելոյ, կամ ալլ ինչ վնասիցէ, հատուցեն գատաստանաւ, զի ի գործել և ոչ յապականել ետուն:

Այլ ի նոցանէ եթէ գողացին և զինքեանցն ևս, և հաւասարմացի, անպարտ լիցին, ապա թէ ի գործ տուեալն միայն և յամբազոյն տեղոջէ առեալ իցէ, ընդ կիսոյ վճար լիցի. իսկ յանգղուշութեան տեղի ղեզեալն՝ լիով հատուցեն:

Իսկ յաւարի երթալոյն անպարտք լիցին:

Այլ զգրաւ եզեալն և զկորուսեալն վճարեսցեն:

Իսկ զհրով այրեալն ի հասարակաց թշնամեաց՝ մի հատուցեն, այլ վասն ինքեանց եղեալ՝ հատուցեն, այլ տերանցն սղազաւ՝ մի հատուցի: Զայդ սյղպէս գատեսցեն<sup>477</sup>:

## Գ Լ Ո Ւ Խ Մ Խ Բ

## Վ Ա Ս Ն Ո Ր Ա Ն Օ Թ Ա Ռ Ն Ո Ւ Ի Բ Ա Ն Ե Ւ Վ Ն Ա Ս Է

Վարձկանք, որք տերանց գործիք վարին, որպէս երկրագործք, ի վնասելն զգործիս ըստ սովորութեան, անպարտք են, իսկ յիւրեանց ի գործարն վնասելով՝ վճար լիցի տերանցն: Իսկ ինքեանց գործիք վարելով, որպէս հնձողք, ինքեանց վնասն լիցի, իսկ եթէ գտեառն ի վարձու առցէ և ըստ սովորութեան վնասիցէ, տեսն լիցի: Այլ թէ ի բան առեալ ի տեսնէ և վնասեսցէ, վճար լիցի. և թէ շար կամօք վնասելով՝ վճարեսցէ:

<sup>476</sup> Տե՛ս Ելք, ԻԲ, 11—12

<sup>477</sup> Տե՛ս նաև հողվ. ճշԹ

## Գ Լ Ո Ւ Ն Մ Խ Գ

## Վ Ա Ս Ն Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ա Ց Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ի

2 Ջրատաստանս դատաստանի այսպէս պարտիմք իմանալ: Զի յորժամ սպանողի կամ այլ շարագործի կրկին ցուցանէ պատիժս, քննել արժան է, զի յորժամ զգին արեանն, առցեն, թեթէ ապաշխարութիւն լիցի: Թէպէտ արեամբ զնոյ վճարիլ կարծի, մի՛ արասցեն առանց ապաշխարութեան, զի շիբ գին մարդոյ<sup>478</sup>, բայց միայն փոխանակ մեռանիլ ըստ Օրինացն<sup>479</sup> և կանոնացն<sup>480</sup>: Այլ թէպէտ գիւրն գնելով կարին՝ զսպանելոյն կարծի, այլ շիբ գին մարդոյ, ապաշխարութեամբ լցցի, զի գինն ըստ կարի եղաւ և ոչ ըստ արժանոյն: Այդ բաւական լիցի, թէ շիցէ սովորութեամբ շարն, ապա թէ կարծիս իցէ դարձեալ վնասու, զխրատն առցէ և ի ձեռս: Իսկ եթէ աղքատ իցէ, բաւական լիցի խրատն:

Իսկ տուգանք յաղագս արքունեացն գրեցաւ ըստ կարի<sup>481</sup>, իսկ աւարն՝ փոխանակ տուգանի, այլ արեան գինն իւրոցն լիցի: Այլ ըստ գատաստանի լիցի յայտ եկելոցն, իսկ անյայտքն խոտտովանութեամբ ուղղեսցին ըստ իւրոյն սահմանի:

Միանգամայն ամենայն դատաստան ըստ իրին քննութեանն լիցի: Իսկ պատիժն ըստ վնասուն համեմատ լիցի, որպէս շարագործաց զարականսն հատանել զանդամսն՝ նմանելով աստուածային դատաստանին, ըստ այնմ՝ հատուացէ իւրաքանչիւր ըստ գործս, որպէս մեծատանն փոխանակ ոչ արբուցանելոյն՝ պաւքումն<sup>482</sup>, և ցանկացողաց շարեացն՝ հուր<sup>483</sup>, և անողորմիցն՝ տանջանք<sup>484</sup>, և ատողացն զլոյս գիտութեան՝ խավարն<sup>485</sup>, և որ ըստ այսմ: Այդոցիկ նման լիցի և մերս դատաստան:

## Գ Լ Ո Ւ Ն Մ Խ Գ

25

## Վ Ա Ս Ն Զ Ր Ա Ղ Ա Ց Ա Ն Ա Ղ Օ Ն Ա Ի Ռ Ո Ւ Ա Ց

Զրաղացպանք փորձ լիցին արուեստի ամենայն կազմուածի, զի մի՛ բազմատանջն<sup>(185)</sup> ապականէ զկերակուրն աներկեղութեամբ: Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել<sup>(186)</sup>, այլ զվնասն ևս տուժել: Ապա թէ պատճառն ի գիշութենէ աղունին իցէ, անպարտ լիցին. իսկ ի ջուրն անցեալ զալիւրն վճարիցեն: Այլ զգողացեալն՝ շորեքկին, և կոփողաց, այսինքն՝ մոխթասպաց, յանդիմանութիւն լիցի նշաւակաց: Այլ թէ աղացողն աւելի, քան զպատրաստեսուն, ի վեր և ի խոնարհ արասցէ գթար ջրաղացին և վնաս ինչ արասցէ, վճարն ի նմանէն լիցի, զի ասել ի զէպէր պատրաստողին և ոչ իւր համարձակիլ:

478 Տե՛ս հոդվ. Բ

479 Տե՛ս Ելք, ԻԱ, 12: Ղևտ., ԻԳ, 17

480 Տե՛ս հոդվ. Բ

481 Տե՛ս հոդվ. Բ

482 Տե՛ս Ղուկ., ԺԶ, 19—31

483 Տե՛ս Մատթ., Ե, 22. ԺԳ, 40—42. ԺԸ, 8—9 և այլուր:

484 Տե՛ս Մատթ., ԻԵ, 46

485 Տե՛ս Ցովհ., Գ, 19

Այլ վարձն ըստ զաւառաց զանազանին, բայց փոփոխին ի նուազութենէ հացի և ջրոյ կամ յառուելութենէ: Եւ այդ անսահման լիցի յիրս դատաստանի:

Գ Լ ՈՒ Խ Մ Խ Ե

ՎԱՍՆ ՈՐ ԶԳՐԱՍՏ Ի ԶՈՒՐ ԵՒ ՅԱՐՈՏ ԵՒ Ի ԲԱՆ  
ՏԱՅ ԱՅԼ ՄԱՐԿՈՅ, ԵՒ ՎՆԱՍԻ

- 5
  - 10
  - 15
  - 20
  - 25
- Զի և այս բազում անգամ պատահի լինել՝ տալ զերիվար կամ այլ գրաստ և ի զորժ առաքել զոք, և անտի լինի վնաս՝ կամ ի ջուր, կամ յարօտ, կամ շրջեցուցանել:
- Եթէ խստերախ իցէ, և ոչ զգուշացոյց և բռնաբարելով առաքեաց, և հեծեալ անկաւ և մեռաւ, կամ աւորի դատաստան լիցի. ապա թէ զգուշացոյց, և չէր խստերախ, և ոչ բռնադատեաց՝ ակամայի, զի ոչ էր յիրոց և ոչ ի վարձկանաց:
- Իսկ թէ կամօք շոգաւ վարձ զարշաւանսն առեալ, և զգուշացոյց, և խստերախ լինելով՝ անկաւ կամ՝ անվարժ գոլով, մասնաւոր թէ կատարեալ հասակաւ իցէ, անպարտ տէր կենդանոյն իցէ. իսկ թէ մանուկ իցէ, մի՛ լիցի անպարտ: Իսկ թէ անկեալ ոչ մեռաւ, զգատարկութեանն և զբժշկութեանն այդօրիք դատեալս լցցեն, նաև ոչ զկատարեալ առողջանալն և զվնաս զզայութեանն:
- Ապա թէ զերիվարն կամ զայլ ինչ զկենդանի հեծեալքն վնասիցեն՝ կամ բեկանելով, կամ սպանանելով, թէ զսովորականն պահելով հրահանգ ի վարելն, կամ ըստ պատուիրանի առաքողին, յորժամ նա առաքեաց, վարիցէ, անպարտ լիցի հեծեալն, յորժամ հաւատարմացուցէ: Ապա թէ արշաւանս արասցէ, և ոչ ըստ պատուիրանին վարիցէ, կամ ընդ դժուարինս կազիցէ և վնասիցէ, լիով տուժեացի՝ պակաս ի մասնէ. իսկ կամաւոր տարողացն՝ բաւանդակն:

Գ Լ ՈՒ Խ Մ Խ Զ

ՎԱՍՆ ՀՈՂԱԴՐԱՄԱՅ ՔԱՀԱՆԱՅԻՑ

- 30
  - 35
  - 40
- Հողադրամդ այժմ անուանեալ ոչ է ի կանոնական հրամանաց, զի կանոնք զանկողին և զայլ ինչ այսպիսի յիշատակէ<sup>486</sup>: Արդ, դրամդ հողոյ ի կապալաւոր քահանայից եղև վաճառել զգերեզմանս, մինչ զի և հաղորդի առնուն դրամ և Աւետարանի: Բայց քրիստոնեայք ըստ յուսոյ տան զդրամ հողոյ, և այնօրիք ոչ շատանան, այլ բռնադատեն և զայթակղեցուցանեն, որում համարս տալոց են Աստուծոյ, կամ զի այլոց քահանայից ըստ կարի տալ կամեցան, յայնմանէ ուսան և իւրքն պահանջել: Այլ չէ պարտ քահանայից ատանց կոչման զնալ ի մեռելոյ մահ վասն ինչս՝ առնելոյ, ապա թէ սիրելի իցէ և կամ աղքատ, որ զով ոք ոչ ոմնիցի, երթիցէ առանց կոչման և ըստ այլ պատճառի, ի սուղ երթիցէ և մի՛ առցէ ինչ:
- Իսկ քահանայ վախճանեալ, որ յաշխարհի իցէ, թէ շունի ժառանգ, և պիսկոպոսաց լիցի, իսկ զհասոյթնս իւր եպիսկոպոսն առցէ և զհան-

<sup>486</sup> Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի Խ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 398—399

դերձան, և վանկողինն, զի նա է ձեռնադրող նորա, և զժողովուրդն ըստ կամաց իւրոց տացէ յայլ քահանայ. ապա թէ ժառանգ ունիցի, և արժանի լիցի, մի՛ փոխեսցէ, իսկ յանարժանից՝ փոխեսցէ, զի ժողովուրդ ժառանգութիւն ոչ է, բայց եպիսկոպոսին: Քահանային է ժողովուրդ, զոր ձեռնա-

5 գրէ տամբ իւրով, զի կանոնք ոչ հրամայէ զեղբարս երիցանց ուտել ի ժողովրդեանէ, նոյնպէս և ոչ լինել ժողովուրդ եպիսկոպոսին, կամ թէ իցէ կին և որդիք միայն: Այսպէս և իւրաքանչիւր ձեռնադրողք զձեռնադրեալսն կայցեն:

Իսկ հայրապետք, զի ի բազմաց ձեռնադրին, բազումք կայցին, այլ առնն ի բաղմաց վայելէ՝ բազմաց լիցի, որպէս գրեալ է<sup>487</sup>. ապա թէ ոչ կամեսցի հայրապետն՝ իւր լիցի: Իսկ զխաչ, և զգիրք, և զշուրջառ, զոր տայ հայրապետն եպիսկոպոսին, զնոյն առցէ ի մահուն, իսկ զոր եպիսկոպոսն իւր լիցի արարեալ, նսվիմք զեպիսկոպոսարանն ում կամի՝ շնորհեսցէ: Նոյնպէս արասցէ եպիսկոպոսն քահանային, թէ իցէ ժառանգ:

10

15

## Գ Լ Ո Ւ Խ Մ Խ Է

## Վ Ա Ս Ն Ս Ի Կ Ն Օ Ռ Ո Ւ, Ո Ր Է Ս Ա Հ Մ Ա Ն Բ

Սահմանք գաւառաց լիւրամբք, և գետովք, և արձանօք հաստատեսցին, նմանապէս և՛ գեղից: Եւ գեղք ի սահմանս շինեալք յերկուց կամ յերկուց գաւառաց, զոյգ բաժանեսցին առաւելութեամբ և նուազութեամբ. նմանա-

20 պէս և՛ անդաստանք և այլք ի սահմանս գեղից, սոյնպէս և՛ ծառք բուսեալք ի սահմանս անդաստանաց: Իսկ զմիջոցի ցանկս այդեաց զոյգ երկաքանչիւրքն զիցեն, զի թէպէտ սուաջինն իւրոյն աղագաւ եղ, երկրորդին մի՛ լիցի պատճառք՝ միշտ նմա դնել, զի թէ այն ոչ էր, իւրն հարկ էր միանգամայն դնել, կամ որ ստացաւ կամ եղ այդի յաղագս այնր, զի մի՛ զիցէ

25 ցանկ: Ըստ այսմ լիցի և տանց որմոց և այլոց այսպիսեաց:

## Գ Լ Ո Ւ Խ Մ Խ Ը

## Վ Ա Ս Ն Դ Ի Ի Ա Հ Ա Ր Ա Ն Ա Ս Ն Ո Ց

Այսահարութիւն յանասունս գտեալ՝ ոչ ինքեանց լինի աղագաւ, զի ոչինչ մեղան, այլ վասն մեր խրատու, որպէս ի խոզերամական Գերդեսացոց, զի ուխտ եղին նոքա շտեսնել զՏէր մեր<sup>488</sup>, Արդ, յայտ է, զի անասնոցն ոչ իշխէ դէն, այլ թոյլ տայ Աստուած ի զարհուրումն տերանց: Արդ, յորժամ պատահի ի նոսա, արժան է տերանցն զգուշանալ և զիտել, զի խնայելով ի նոսա ոչ ետ թոյլ բարեգութն Աստուած. ապա թէ անփոյթ արասցեն՝ մի գուցէ և ի նոսա մտցեն: Խոստովան լիցին զմեղս իւրեանց և

35 աղօթիւք և պահօք ըստ կարի երեք ամ ղբառասնորդսն պահելով և խաչի և Աւետարանաւ կնքելով, թերևս հաճեսցի Աստուած և հալածեսցէ, և բանականքն ազատեսցին ի կարծեացն: Ապա թէ ոչ բժշկեսցի, զենեսցեն և յայլազգիս վաճառեսցին: Ապա թէ բժշկեսցի և երեք ամ այլ ոչ լիցի, թէ ղենեալ կերիցեն և թէ քրիստոնէից վաճառեսցեն՝ անվնաս լիցին ի կամս

487 Տե՛ս հողվ. Ա

488 Տե՛ս Ղուկ., Ը, 26—35

Տեառն<sup>(167)</sup>. և այդ՝ եթէ ի տանէ պատահի: Իսկ թէ գնեալ իգնն, և այնոցիկ պատահի, հաւատարմացուցէ վկայիւք, թէ ի տան նորա շիջէ լեալ, ապա թէ ոչ կարէ՝ անդրէն դարձցի: Եւ թէ ղկնի գնելոյն իցէ, ոչ դարձցի:

Այլ ժամանակ դարձին յամենայն ժամ լիցի, թէ ի վաճառողին աւան 5 ախտն լեալ իցէ:

Նոյն դատաստան դարձեալ և խելագարիցն լիցի:

Իսկ գանուտելիսն՝ անբժշկելի եղեալ, յայլագրիս վաճառեացն, և զբժշկեալն՝ քրիստոնէից. այլ դարձուցանելն նոյն լիցի:

Այս դատաստան կանոնական է<sup>489</sup>. թէ հաճոյ թուեսցի՝ այսպէս հաս- 10 տասուն կացցէ, և թէ ոչ՝ որպէս կամին արասցեն:

Գ Լ Ո Ւ Խ Մ Խ Թ

ՎԱՍՆ ՈՐ ԶՓՈՔՐ ԱՂՋԻԿ ՀԵՏ ՄԵՄ ՄԱՐԴՈՅ ՊԱԱԿԵՆ

Կանոնական հրամանաւ է տղայոց պսակ ոչ օրհնել մինչև ի գիտել ղկարիս բնութեանն<sup>490</sup>: Ապա թէ պատահի անկատար լինել կինն, և կատարեալ՝ այրն, կրկին շար է, ղի որպէս ուսաք ի խոստովանութենէ՝ ղի յամուսնանալն հատանի կապ միջոցի երկուց վտառացն, յորմէ և մահանայ: Արդ, այսպիսի վնասուս կանոնական լիցի դատաստան. զի կամաւոր սպանողի ղկարգն երիցն դնել՝ ծնողոց հարսիսն, և փեսային, և ծնողաց նորա. և քահանային լուծանիլ ի կարգէն. և զխնամէխօսս շառնել ան- 20 պարտ, այլ յակամայիցն դնել ի կարգն: Եւ եպիսկոպոսաց պարտ է յորժ սաստել այնպիսեացն<sup>491</sup>:

Գ Լ Ո Ւ Խ Մ Ծ

ՎԱՍՆ ՈՒՆՏԻՑ

Տեղիք ուխտից, եթէ վկայարանք են և թէ այլ ինչ տեղիք շնորհաց 25 աստուածայնոց, և կամ նշտն խաչի հաստատեալ, յոր եպիսկոպոսի վիճակ իցէ, յորոյ գեղջի իցէ՝ երիցուն տացէ, յորոյ սահման ուխտն իցէ, ղի ղգուշութեամբ սպասատրեսցէ, թէ պատահի ի հեռաւոր տեղիս լինել: Ապա թէ ի մէջ սահմանաց իցէ, զոյգս սպասատրեսցեն քահանայքն և զհաս շնորհին ի գործ սպասու և կազմուածին ածիցեն, սակայն և ինքե- 30 անք վայելեսցեն առանց ամենայն հակառակութեան: Այլ մի յաղագս ընծայիցն, զոր վասն բժշկութեան մատուցանեն, պատերազմեսցին, այլ յեպիսկոպոսէ ժառանգութիւն տյնմ լիցի, որ բարիք սպասատրեսցէ: Ապա թէ ազահեալք զտուրք տեղիսն ի հարկ արկանիցեն և խրատու եպիսկոպոսին ոչ անսան, ունայնանայ աստուածային շնորհքն, և պար-

489 Տե՛ս Կանոնք Բաղդի Մեթ—ՄԿԵ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 167—174. Կանոնք Յովհաննու Մանրակունույ Թ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 449, Ելք, ԻԱ, 28—32, նաև հոդվ. ԿԵ և հաջորդները:

490 Տե՛ս Կանոնք Սահակայ Պարթևի Իէ, ԻԸ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 382—383. Կանոնք Ներսէսի և Ներշապհոյ ԻԲ, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 487. Կանոնք Բաղդի ՄԺԹ, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 160—164 և այլն:

491 Տե՛ս նաև հոդվ. ՃՂԲ

- տական սյնմ լիցին պակասութեան, որում համարս տալոց են, իբր հակառակ մարդասիրութեանն Աստուծոյ և բարի կամաց սրբոց, զի ձրի բարեխօսք լինին միշտ աշխարհի: Այսպիսեացս բարոզ կարգալ արժան է եպիսկոպոսաց, զի մի՛ ինչ բնծայ տարցին, ալլ զբնծայն ի տունս իւրեանց աղքատաց տացցեն և ինքեանք երթեալ աղօթեացեն, զի մի՛ շնորհ յեկեղեցոյն յայլազգիս անցցէ: Քանզի խորհրդականք են ամենայն բնծայք. զի դահեկան, յաղագս անախտ բնութեանն, խորհուրդ է աստուածութեանն Քրիստոսի, իսկ պատկերն փրկչական՝ մերն սլատկեր. զոր էառ զյառաջագոյն շնորհեալն զիւրն պատկեր, ըստ այսմ՝ տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ<sup>492</sup> յիսկ վեց դանգն խորհուրդ է ժամանակաց զալտեանն Քրիստոսի, իսկ շորս թասուն՝ օրինակ շորից տարերացս և խորհուրդ շորից աւետարանչացն, իսկ երկոտասան զարին ի դանգն՝ երկոտասան առաքելոցն, իսկ եւթանասուն և երկու զարին ի դեկանն՝ եւթանասուն և երկու առաքելոցն, իսկ դրամն՝ օրինակ բնութեանս մեր, զի մարդ տառիւքն է անդրադարձութեամբ: Իսկ այլ նիւթքն, որպէս ի խորանն նուէրքն<sup>493</sup> և ի տաճարն բնծայեալքն<sup>494</sup>, այսպէս են, իսկ անբնծայքրն՝ անխորհուրդ: Արդ, ի խորհուրդ եկեալքն մի՛ լիցին բնդ անխորհուրդըսն յայլազգիսն, ապա թէ յանդգնին՝ լուծցէ եպիսկոպոսն և ի կարգէն:
- 20 Ալլ զխաբեբայսն բնաին հալածել, որ գան ձեռք կրօնատրաց և բնակին ի տեղիս ուխտից և բազում զայթակղութիւնս տան գործել պարզամտացն, մոլեալք յորովայն և յայլ ախոս, ստութեամբ պատմիչք լինին երազոց և զբազումս մոլորեցուցանեն:

## Գ Լ Ո Ի Խ Մ Ծ Ա

25

## ՎԱՍՆ ՅԱԻԱՐԷ՛ ՎԱՃԱՌԱՅ

Վաճառեալ և զնեալ զաւար՝ ոչ դարձցի անդրէն իբրև զզողացեալն, զի այդ օրինաւոր գործ թագաւորաց է և իշխանաց<sup>495</sup>, ուստի և կանոնք յրնծայս բնդունի պատարազի, իսկ զզողացեալն և զյափշտակեալն՝ ոչ ևս:

<sup>492</sup> Մատթ., ԻԲ, 21: Մարկ., ԺԲ, 17: Ղուկ., Ի, 25

<sup>493</sup> Տե՛ս Ելք, ԻԵ, ԻԶ, ԻԷ, ԻԸ, Լ, ԼԱ, ԼԵ և այլուր:

<sup>494</sup> Տե՛ս Գ թագ., Զ, է

<sup>495</sup> Տե՛ս հողվ. Բ

1-4 ԺԻՆԾԿՁՂՄՇՈ շիք նախադրութիւն....  
Հայք

Ֆիլս նախադրութիւն.... Հայք՝ Հ Գիրք դատաստանաց, զոր արարեալ է սուրբ վարդապետին Մխիթարայ Գոշի կոչեցեալ, Ն Երանելի վարդապետին Մխիթարայ արարեալ զգիրս դատաստանի ի խնդրոյ տեառն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի,

Ճն նախադրութիւն զրոց դատաստանի Գլուխ առաջին, յորում կայ պատասխանի այնոցիկ, որ բամբասան զմեզ, եթէ կայ դատաստան ի հայք (ն եթէ ոչ ունել դատաստան հայք),

Յ նախադրութիւն զրոց դատաստանի, ըստ ակնարկել կամաց տեառն Յիսուսի Քրիստոս, որ ունի դատաստան արդար Գլուխ. ընդդիմադրութիւն բամբասողացն, որք ասեն, թէ ոչ գոյ դատաստան ի հայք: Եւ մեք կամիմք զրել զգիրս դատաստանաց, նախ զընդդիմադրութիւն դիցուք....,

Զ Գիր դատաստանի ըստ ակնարկելոյ կամաց տեառն Յիսուսի Քրիստոսի: Նախադրութիւն զրոց դատաստանի,

Պ Գիրք դատաստանի ըստ ակնարկելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորում ընդդիմադրել բանբասողաց, եթէ ոչ են դատաստանք

5 Ի շիք Հանդերձեալ գրել, ճնՁ հանդերձեալ Ի և զգիրս, ԻճնՁ շիք բայց պատշաճաւորաբար

5-17 Ո շիք Հանդերձեալ.... ասացաւ յառաջելոցն

6 Ի պարտողաց փիս պարտողաց

7 Ի զսակաւ:

8 ԺԻՁ զայլոց սեռս, ճ շիք ունել.... և

9 Ձ մուրեցուցանեն փիս զայթակղեցուցանեն

10 Ճ զայլս փիս զայս, ճ շիք է՛ ի

11 Ձ սկզբաննէ, ճն ընդ, ԺՁՊ զչաստուածս անարգս, ճՅնՁ զաստուածանարգս

12 ԺԻՁՊ հայրատանջսն, ճն հատմամբ փիս ձեռնատմամբ

13 Ձ ուղիղ, Յ՛ ալլազգիքն, Ձ՛ օրէնքն փիս անօրէնքն, ՅնՁ վարի

14 Յ ըզպատճառսն, ՅնՁ օրինացն, ԺԻ հայրանարգսն,

15 Ն զայլսն , Պ ալլսն, Ձ շիք և.... նմանացէս

16 Պ ակետարանն, ՅնՁ շիք ամենայնի, ՅնՁ երկցունց (ն երկոցունցն) է, ԺԻՁ երկոցունցն

17 Ի հրամայեցաւ, Ն շիք հրամայէ, Ի շիք ասացաւ, Պ ասաց ատ, ՅնՁ ատաշնոցն

17-18 Ն շիք նս ասեմ.... ինչ

18 ՅնՈՁ թէպէտ (Ձ թէպէտ և) փիս որպէս, ԻՊ հրամայեալ են, ՅնՈՁ իրր փիս հրամայել են մարդիկ

19 Ի կատարեալ, ՅնՁ յիշեցուցանեն փիս կատարել են, Ձ յիշխանական

19-20 Ո շիք կատարել.... բառնան, ԺԻՁՊ զիշխանականն կարգեալ փիս զիշխանական.... բառնան

21 ՅնՈՁ գիտել զանձին (Ձ զանձինն) սէր, Յ երկրորդ է

22 Ձ եթէ, Յ դատաստան փիս ապաստան, ԺՁ՛ զաշակերտութիւնն, ԻՅնՈ՛ զաշակերտութիւն փիս զաշխատութիւնն

23 Յ հրամայէ փիս հաստատի ի, ՆՁ լինել և, Ո լինեալ և, Յ ի դատաստանն փիս առ ամենեսան, Ձ ամենայնսն

24 Ձ վարիր, Ձ և ոչ, ԺՁՅն յիսկզբանն, Ձ ի սկզբաննէ

5-25 ԽԾԿՁՃՇ (ճ սկսած տ. 13) այսպէս.

Հանդերձեալ եմք գրել զգիրս (ՄԿՂՇ զգիրքս) դատաստանաց (ՂՇ դատաստանիս), յառաջ գրեմք զպատասխանիս ալնոցիկ (Շ յանոցիկ), որ բանբասան զմեզ, եթէ (ՄԿՂՇ թէ) չկա (չ ոչ կա) դատաստանք (ՄԿՂՇ դատաստան) ի Հայք, զի յուրմբ ի մէնչ պատուեն զայլազգիս, թէ (Շ թէ ի) դատաստանի զիր ունին ու (ՂՇ և) մենք չունիմք (ՄԿ մեք ոչ ունիմք): Եւ այս անյարմար մարդոց (չ մարդոյ) բանք

են, որ (Շ որոց փխ են որ) ոչ գիրք են կարդացեալ (ՄՇ կարգացել) և ոչ ուսնալ (ՄՇ ուսել)։ Ապալ (ՄԿ վասն այն, չ և փխ ապալ) պարտ է մեզ ասել ըրորդ (ՄԿ ուրորդ) և գրել զճըմարիտն յարինացն աստուծոյ, որ կալ յամենայն սուրբ գիրս (Շ գիրքս)։ Ըստ որում և իմաստունք հեթանոսաց, ով զաստուած անարգէ, զայն աստակեն (Մ աստակեն զայն) մահուամբ և որ (Շ ուղ) զիր ծնաւորն (Մ ծնող, Կ ծնողն, Շ ծնաւորք) անարգէ, զայնոր ձեռն (չ ձեռքն) հատանեն, և ալլ ալլապիսի շատ (ՄԿ շիք և... շատ)։ Ապալ աստուծոյ արէնքն ալլ աւելի դատի, զի (Խ տառերը մաշված են) հրամայեալ է աստուած յարէնքն, թէ որ զիր (ՄԿ շիք) ծնաւորն (Կ զծնողն) անարգէ (Մ անարգէ զծնողն), զաստուած անարգէ, և որ (չ ով) աստուած (չձՇ գաստուած) անարգէ և զիր ծնաւորն՝ միապէս է (ՄԿ շիք և որ... միապէս է)։ Զայնցեղ (ՄԿ զայն) մարդն րապանեել (ՄԿձձՇ սպանանել) արժան է հայնց (չ հանց) պիտ (չձ պինդ) է ու (չձՇ և) ալլքն (ՄԿ շիք հայնց... ալլքն)։

Ապա Քրիստոսի աւետարանն կատարումն է ամէն (ՄԿձձՇ ամենայն) արինաց (Շ յարինաց) և դատաստանի (չձ դատաստանաց), զի Քրիստոս ասէ, թէ ասացաւ յառաջի (ՄԿձ յառաջին) արէնքն, թէ մի սպանանէք (ՄԿ սպանաներ) զիրարս (ՄԿ շիք, չձ զիրեարս) և որ սպաննէ (ՄԵ սպանէ, չձՇ սպանանէ)՝ սպանցի, բայց ես ասեմ ձեզ, թէ ամենկին մի կոռիք ընդ (չձ շիք) իրար (չ յիրեար, չ յիրար), զի թէպէտ արէնքն և աւետարանն իբր մտացեալ զընառդկան արէնսն յիշեցուցանեն (չ յիշեցուցանեն), ապա ոչ բառնան զիշխանական կամքն, զի արէնքն և աւետարանն (Շ յաւետարանն) աստուծոյ հրամանք (չձ հրամանքն) են միապէս. ասելով (ՄԿ ասել) տալնոցն, թէ սիրեսցես զընկեր (Մ զընկեր) քո իբրև զանձն քո, զի որ (Շ չիք)

սիրէ զիր (Կ զիր) անձն, ալլ չէ յալոց (Շ ալոց) շանուց (չձ շանաց), ալլ ինքն յիրմէ (չ յիրմէ, Շ իրմէ) սիրէ զիր (ԿձձՇ զիր) անձն ամ (sic) հայնց (Շ հանց, չ այնպէս) ի (չ այնպիսի փխ հայնց ի) սրտէ պիտի սիրել (ՄԿ հայնպէս փխ ամ... սիրել) զընկերն (ՄԿ զընկերին), զինչ զիր (չ զիր, չՇ իւր) անձն (ՄԿ շիք զինչ... անձն), Եւ Քրիստոս ասէ, թէ (ՄԿ շիք) ալլ (Շ յամենայն) ժամ զիտենայ ամենայն (ՄԿ շիք, Շ յամենայն) աշխարհս (ՄԿ աշխարհ), թէ (ՄԿ եթէ) իմ որդիք էք, երբ (ՄԿ եթէ) զիրար սիրէք (ՄԿ սիրեք զմիմեանս) և ալլ շատ բանք (ՄԿ բազում բանս) ալլապիսի (Շ ալլապիսիք), որ դիտենան անմիտ մարդիք (ՄԿ շիք ալլապիսի... մարդիք), որ կա սո մեզ իբրտունք, զի աւետարանն Քրիստոսի չէ թէ (Շ շիք) երբ աստուած զաշխարհս նոր էստեղծ (ՄԿձ ստեղծ, չ Եստեղծ, Շ նորաստեղծ) յայն ժամն (ԿՇ ժամ, Մ ի յայն ժամն) զրեցաւ, ալլ յորժամ աստուած պատե՛հ (չձ պատե՛հ) տեսաւ։

26 Պ յերկրորդ, ԽՄԿձձՅՆՇՈՉ Եւ երկրորդ են Քրիստոս (ՅՆՈՉ նա) արկանել, ԽձձՇ՝ աղէկ հաւատ մարդկան, ԿՍ՝ հաւատարիմ մարդկան փխ կատարելոց

26—29 ԽՄԿձձՇ և ոչ կամեցաւ զանխել և զանկարգ մարդոց (Շ մարդոցն) դատաստանք (ՄԿ դատաստան) գրել մեզ իւր (չձ իւրոց) հաւատացելոցս, ըստ որում խրատէ զմեզ՝ զիր (ՄԿ շիք) ժողովուրդս (ՄԿ շիք), թէ երբ (ՄԿ շիք) կոռիք ընդ իրար (ՄԿ բարկանայք փխ կոռիք... իրար) զարձալ ճշտիցիք (ՄԿ հաշտիք, չ հաշտեցէք, չ ճշտիցէք) ու (ՄԿձձ և) մի՛ գնայք առ մարմնաւոր դատաւոր, զի ես եմ ձեր աստուած և ձեր (Մ շիք) դատաւոր։

27 ՅՆՈՉ զօրէն անկատարից, Ո ընդ

28 ՅՆՈ հաշտել, ԺՁՊ շիք զի, ՅՁ դատաստանն, և մատնեցի, Ո մատնեցի ի

29 ԺԻՆՈ դատաւորի (Եւ), ՆՈ երբ, Ձ յայտն

284-ԲԴ ԷՁԻ

- 1 ԽԿՁՅՆՈՉ զճարիւ, ՅՆ խըզճիւ, Ո ի խըճու
- 1—2 ՄԿ շիք գոր... դատաստանի
- 2 ԽձձՇ հանց (չձ հայնց) ու (չձ և) ղուք լիք (Շ լինիք՝ դատաւոր) ձեր (չձ ձերով) սրտովս (չձ սրտովք) ամէն մարդ իր դատաւոր (Շ շիք) փխ եմանապէս... դատաստանի, ՅՆՈՉ յոռակս
- 3 ՆՈ շիք (թէպէտ) և, ԽՄԿձձՇ յառաջ Խ. սակայն և, ԽՄԿձձՇ զողբեաց (ԽՄԿձ+

- Քրիստոս), Մ զըճմամբ
- 4 Յ զի փխ որով, ԽՄԿձձՇ շիք որով... ըզհաշտելն, ՄձձՇ աւելով, ԽԿձՅՆՈՉ եթէ, չ շիք թէ
- 5—6 ԽՄԿձձՇ շիք իսկ... դատաստանի
- 6 Յ շիք է, ԺԻՁ կարօտանա, Պ կարօտանաս, Ո աղաղակաւ փխ աղաղաւ
- 7 ԽՄԿձձՇ հրամայեցոց, ԺԻՁ զդատաստանն, Ո զդատաստանն, Ձ դատաստան, չձ այն,

- 2 յայնմ, Կ ոչ փխ որ, Հ թէ, Չ աստ փխ աստ, ԽԿՀՃՇ ԿՂՐՐԻՆ
- 8 ԾԿՀՃ զժառանգութիւնն
- 9 ՅԿ ընտրեալ, Ո ընդրեւ, Շ ընկեր փխ ընդէ՛ր, Շ այս փխ այլոյ
- 10 ԵՉ յուսա, ՈՉ առաքեալ, Ե առաքեալ զի ԽԾԿՀՃՇ առաքեալն Պաւղոս, ԺԻՉՆ շի՛ք զի
- 11 ՀնՈ զատաստանք, Յ զոյ, բոլոր ձեռ. շի՛ք ընդէ՛ր.... Ենդիք
- 12 Յ շի՛ք և (Ենդիք), Չ արդ փխ այդ, ԺՉ շի՛ք ևս
- 13 Յ շի՛ք ծւ, ՀՃ Կրրորդն, ՈՉ Կրկրորդ փխ Կրրորդ, ԺԻՉՆՈՉՊ շի՛ք Քրիստոս, Յ Հարկաւ Ի, Ե Հարկաւոր
- 14 Խ՛ առ, ՆՈ՛ ընդ փխ Ի, Յ՛ մի միայն, Չ՛ միմեանց փխ Ի միմեանս, ԾԿՀՃՇ Կայցեմք (ԿՀՃ Կացեմք) զատաստանի գրով առ միմեանս այլ, ԺՉ՛ որով, Ի՛ սրով, Յ՛ Ի փխ գրով, Ո զատաստանի, ԽԾԿՀՃՇ ցաւակից փխ վշտակցութեամբ
- 15 Ի շի՛ք ժամանակի, Ի զիբ, ԽԾԿՀՃՇՉ աբի-նաւ զարդարադատութիւն (Չ զարդարադատութիւնն) սահանք, Ե դարդար դատաւորութիւնն, Ո զարդարադատաւորութիւն սահանցիմք
- 16 Ը Հրամայեցաւ փխ Համարեցաւ, Պ Համարեցաք, ԽԾԿՀՃՇՇ Համարեցաւ Քրիստոս, Շ շի՛ք զի (զբանս), ԺԻՉՆՈՉՊ զորս (Ե շի՛ք) ըստ փխ զի գրանս, Խ Մովսէս, ԺԻՉՆՈՉՊ շի՛ք Մովսէսի
- 17 ԺԻՉՎՅՆՈՉՊ շի՛ք զիւր, Ս զաւետարանին, Հ աւետարանն, Շ Իբրև, ՅՇՉ սերմ, Ո սերման, Հ Ի Հոգիս, ԺԻՉՅՆՇՆՈՉՊ շի՛ք մեր, Շ վարի զարժանիս, Չ արժանիս
- 18 Խ դատաւորին փխ դատաստանին
- 19 Կ շի՛ք նման է, ԽԾԿՀՃՇ դատաստանի, ԽԾԿՀՃ Օրինացն, ՀՃ և փխ կամ (Մարգարէից), ԽՃՃ մարգարէիցն
- 20 ԺՉՉՊ անշարժութեանն, Ը անարժանութեամբ փխ անշարժութեան, ԺԻՉՊ շի՛ք զի, ԽԾԿՀՃՇ ազգաց

- 21 ԺԻՉ Իրաւացուց, ԺԻՉ Հնդագոյնից, ՀՃ Հմտագոյնիցն, Շ Հմտայգոյնից
- 22 Կ փորձեալ, Ե փորձեր, Ե պատահման
- 23 Ո զբեւ, ԽԾԿՀՃՅՆՈՉՊ թէ, ԽԾԿՀՃՇ Քրիստոս փխ Տէր
- 24 Ե արգելոյ, Ո արգելով, ԽԾԿՀՃՇ արգել զերդումն, ԽԾԿՀՃՇ կամեցաւ, ԸՈ զհաւատացեալս, Ե զհաւատացեալ, ՃԻՉ զմեզ Ի կեանս յայս
- 26 Չ շի՛ք վերեւգիր ԺԻԽԾԿՀՉՃՇ շի՛ք Յաղագրս, ՅՆՈՊ Յաղագս թէ ընդէր այժմ կամեցաք զբեւ կամ յումմէ (Ո ումմէ) շարժեալ Կայց յայսսոյիկ (Ե յայսսոյիկ Կայց) Ի (ՆՈ շի՛ք) միտս (Պ շարժեալ յայս Իսկ Կայց միտս), ԽԾԿՀՃՇ թէ ընդէր այժմ գրեցաւ (Հ+այժմ) և կամ ում Հրամանաւ Կդէ (ՀՃ+Ե) կամ յումմէ շարժեցաք (ՀՃ+Ի) յայս (Շ այս) բան (ԿՃՇ բանս)
- 26—էջ 286,30 Պ շի՛ք Յաղագս.... զոր և ձեռագրում թերթեր Են պակաս
- 27 ՆՈ թէպէտ և, ՉՊ աւանդել
- 28 ՉՈՊ այժմբ, Չ բազում փխ զի բազում
- 29 Ե այլասեռից, Ե և այլև, ԺԻՉՆՈՉՊ շի՛ք Ի
- 31 Ո կարծիք, ԺԻՉՊ յերկուս, Պ ախտան, ՆՈ շար
- 32 Յ գայնիմաստութիւնն, ՈՉ զանիմաստութիւնն, Յ շի՛ք և, Չ Կրկու փխ Կրկրորդ, ՆՈ կամելով
- 33 Ո կենցաղավարիլ
- 34 Չ շի՛ք ծւ, ԺԻՉՊ Կրրորդ փխ Կրկրորդ, ԺԻՉՅՉՊ բնաւորականն, Ե զբնաւորական, Ո բնաւորական, ԺԻՉՆՊ շարութեան, ՅՈ շարութիւն
- 35 Չ զկատարելութիւնն, ՅՆ Հոգոյ, Չ Հոգոյս, Չ զվշտակցութիւնն
- 36 Չ առելութիւնն, մյուսեւեր՝ առելութիւն
- 37 ԺՉՊ Չորրորդ փխ Օրրորդ, Յ շի՛ք Ի, Յ Հեղգութիւնէ, Պ Հեղգութեան, Ո՛ ծուլութեանէ. Ե՛ Ի մեր ծուլութեանէ է փխ Հեղգութեանէ, ԺԻՉՅՉ անշարժ փխ անվարժք ՉՅՆՈՉ Կդեալ, Յ օրինաց առաքելոց, Ո շի՛ք և
- 38 ՉՊ որոց, ՉՈ զզօրութեանէ, ԺԻՉՊ սկարացաք

285-ՐԳ ԷՉԻ

- 1 ԺԻՉՊ արար անվարեաք փխ արժան վարկաք, ԺԻՉՊ զոն փխ գրոց, Յ գրոյ
- 3 Պ շի՛ք Չորրորդ, Պ Հմտութիւնն, Չ մէջ փխ մէջ
- 4 Ի զի փոփոխելն, Յ զի փոփոխեալն, Ի պատահմանն
- 5 Յ աւետարանի, Յ անշարժ հաւատով
- 6 ՉՊ շի՛ք Ի, Չ որպէս կանոն դատակաճ բվականեւր Երկու ը-ով, Յ Դանիէլի
- 7 ՉՊ շի՛ք Ի (Սոզոմոն), ՆՈ Կրք փխ Կրքեմն,

- ԺԻՉՊ շի՛ք կամ, Ո Կորնթոսի,
- 8 Ե այլս, Ե առեւել փխ ունել, ՅՆՈ զդատաստան, ԺՉ՛ անկատ, Ո՛ անկատար փխ անկարօտ, Ե էի, Պ գրոց
- 10 Չ աւետարանն, Պ զաւետարանն, ԺԻՉՅՉ և փխ միեշև, ՅՉ յայնմ, Ո այն մի փխ այնմ
- 11 Ո մնա փխ այնմ, Ո դատաստանն, Պ դատաստանն, Ե շի՛ք գրով
- 13 Ո առաջագոյն, ՅՉՊ ասացելովք, ԺԻՉ արպցեալք

- 14 ԺԻՉՅԳՊ զրեւան, Ո զրել նոցա, ԺԻՉՅՆՈՎ պատճառս, ԺԻՉՅ շիֆ ունի, ԺԻՉ յամեն-ախի, 3 յամենայնի Չ յամենայն, ՅՆՈՎ ի վրիպանս, ԺԻՉ պրիպանս, 3 պրիպանս, Ո գվրիպանս, Պ վրիպանս
- 16 3 հանգի, ՆՈ յանկի
- 17 ՉՉ յայժմ
- 18 ԺԻՉՅՆ դատաստան (լինի), ԺԻՉ շիֆ լինի, ԺՉՊ հաւատացեալս Եօթներորդ
- 19 ՅՆՈՎՊ գտեառն փխ զամենայն, ԺԻՉՅԳՊ կանոն
- 20 ԺԻՉՊ դատաստան, 3Չ հարկաւորութեամբ, ԻՅՆՈՎՊՊ գրելոյն, ՊՊ գրելոցն փխ ներելոյն, ՅՆՈ գլխատաստան, Չ դատաստան, Պ ի դատաստան
- 22 ԺԻՉ շիֆ 7—8-րդ կեաներ, Պ շիֆ 7-րդ կեանք: 7—8-րդ կեանքը ավելացված են ըստ 3. ձեռագրի, որի հետ և համեմատված են մյուսները:
- 23 Ն յայլ սեռս, ԽՄԿՂՃԵ հողվածք սկզբից այսպես.

Ջի Թէպէտ և զրեցաք յառաջդ, Թէ ոչ (Ճ շիֆ) աւանդեցաւ մեզ ի Քրիստոսէ զրով և հարկիւ դատաստան, այլ այժմ կամեցաք (ԿՄ կամեցաւ) հաւաքել ճըշգրտիւ (ԿՄ ճշմարտիւ) յաղազս զի բազում անգամ լուաք պարտաւանս ոչ յայլասեոից (Ճ յայլ սեոից, Ե այլասեոից) միայն, այլ և ի տրգէտ քրիստոնէից, եթէ (ՂԵ Թէ) բնաւին դատաստան չկա առ (ԿՄ շիֆ) քրիստոնէակայս (ԿՄ քրիստոնէից), զատ ի յանտարանէն: Եւ մոռանան զբազում բանս աւկատկարս, որ զրեալ (Ղ շիֆ, Ե զրել) կա յաւետարանն (Ե աւետարանն), զի ոչ կարդան և ոչ (Շ շիֆ) ի միտ առնունք Եւ երկու կերպիւ մեղանշեն. մէկ՝ զի չկամին ընդ քրիստոնէայս հաւասարել [ՄԿՂՃԵ ա. զի Քրիստոսի (ՄԿՃ Քրիստոսի) արէնքն ուրանան և (ՂՇ շիֆ) բ.] և այլ՝ զի զոր Քրիստոս զմեզ (ՄԿՂՃԵ մեզ) առոյց աւրէնս, զայն մեր մեղաւքն կորուսաք և գիււաւարիութիւնն (Ե գիւաւարութիւն հոգոյ) անկատարութիւն հոգոյ (Ե շիֆ) և զվշտակցութիւն սիրոյ (Ղ շիֆ) ատելութիւն (Ղ յատելութիւն, ԿՄ շիֆ և գիւաւարիութիւն... ատելութիւն):

Երրորդ՝ զի ի մեր ծուլութենէ անվարժ եղեալ արինաց (Ճ օրինացն) և մարգարէից և և աւետարանի, կամեցաւ Քրիստոս, զի մի (Շ զի փխ զի մի) հարկաւորաբար յիբաւունս կայցեմք (Ղ կացեմք, Ճ կացցեք) դատաստանի գրով (ՂՃ շիֆ) առ միմեանս, այլ սիրով և ցաւակից. յորոց զատութենէ անկարացաք ընտրել զիրս դատաստանի, զոր և պատշաճ համարեցաք զրել (ՂՃ շիֆ) զիրս դատաստանի, զերդ

(ԿՄՇ գերթ) ի ընոյ զարթեաք (ՄԿՂՃԵ զարթեաք):

Այլ բանցի առ մեզ ապականեալ է այսպիսի կարգ, աւանդելի է գիրս եւ ղգիրս (Գ՝ չիք եւ ղգիրս) դատաստանի ի ձեռս եպիսկոպոսաց, զի ոչ որ է ի մեզ (Գ՝ առ մեզ) ըստ արտաբնոցն վարժեալ իմաստութեամբ յաշխարհականաց կամ ըստ Եսրայելի ղպիր: Եւ ղի այժմ նոցա է (Գ՝ եպիսկոպոսաց է) յանձն (Գ՝ յանձին) հոգք եկեղեցեաց (Գ՝ եկեղեցոյ) եւ աշխարհականաց (Գ՝ աշխարհաց), եւ ըստ պատահմանն (Գ՝ եւ յետ եպիսկոպոսաց) եղիցի իշխանաց (Գ՝ + ըստ պատահմանն) եւ զխաւորաց ժողովրդեանն, հմտագունից քահանայից (Գ՝ այլե քահանայից իմաստնոց) եւ վարդապետաց, սակայն աւանդապահ այսմ իրի եպիսկոպոսունք (Գ՝ եպիսկոպոսք) եղիցին (Ա՝ էջ 8, Գ՝ էջ 290):

Տե՛ս Առաջարան, էջ ԾԷ, ԿԷ-ԿԹ:

Եւ արդ մեզ այսպէս լիցի. զի ի տեղոջ յորում լիցի՝ քրիստոնեայ թագոր կամ իշխաննոքա զաշխարհի դատաստանս հոգայցնն առնելու եւ իրաւամբք, իսկ գեկեղեցոյ դատաստան եպիսկոպոսն հոգասցէ վարդապետական վարժմամբ եւ երկու կամ երեք կատարեալ արամբք ընդ նմա ի դատաստանի եւ ի տեղոջ, ուր ոչ իցին թագաւոր կամ իշխան, պարտ է յեպիսկոպոսն տալ զսա յաւանդ, զի ամենայն դատաստանս նոքա հոգասցնն (էջ 26):

12. (ԱԳ) «...Աւանդելի է զիրս եւ ղգիրս դատաստանի ի ձեռս եպիսկոպոսաց...» (Ա՝ էջ 8, Գ՝ էջ 290, տե՛ս նաև Բ՝ էջ 26):

Այս և մի բանի այլ տվյալների հիման վրա հայագիտության մեջ հաստատվել է այն տեսակետը, թե Հայաստանում դատիրաբանությունը հոգևոր դասի մենաշնորհն էր (տե՛ս օրինակ Վ. Բաստանեանց, Յառաջարանորին, էջ 126. Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 447. J. Karst, Kommentar, էջ 341. և Ասամանյան, Մխիթար Գոշի Դատաստանագրի մասին հայոց լաղաբացիական իրավագիտության, Վիեննա, 1911, էջ 121 և այլն):

Սակայն դատիրաբանության իրական վիճակը այսպես էր.

Հայկական պետականության սլայմաններում դատական իրավասության բարձրագույն կրողը երկրում եղել է մարմնավոր գերագույն իշխանավորը՝ թագավորը: Հոգևոր ատյաններից զատ եղել է աշխարհական դատարանների համակարգը սրան ընդդատյա գործերի որոշակի շրջանակով, որն ընդգրկում էր քրեական արդարադատության համարյա ամբողջ բնագավառը և քաղաքացիականի մեծ մասը:

Օտար տիրակալության ժամանակ, եթե սակայն պահպանվել է աշխարհական համագային իշխանությունը, կամ երկրի այն շրջաններում, որտեղ մնացել են հայկական իշխանություններ, դատական իրավասությունը բաժանված է եղել սրանց և հոգևոր մարմինների միջև, ինչպես նախորդ դեպքում, թեևս կաթողիկոսի գերի որոշ ուժեղացմամբ և երկուսի համար էլ այն ընդհանուր սահմանափակումով, որ պայմանավորված էր օտարատիրությանը:

Հայկական իրավունքի պատմության մեջ հոգևորականությունը եղել է դատական իրավասության միակ կրողը այն շրջաններում և այն ժամանակ, որտեղ և երբ ազգային մարմնավոր իշխանություն չի եղել և որքանով այդպիսի իրավասությունն արտոնվել է տիրողների կողմից:

Ինչ վերաբերում է Մխիթար Գոշին ու նրա Դատաստանագրին, ապա պետք է ասել հետևյալը: Վիճարկվող կարծիքի հիմքը Դատաստանագրի Բ խմբագրությունն է: Բայց, առավել ևս անտեղի էր այն հիմք դարձնել, որովհետև հենց այդ խմբագրությունն է սահմանազատում երկու բնույթի ատյանների դատիրաբանությունը, ըստ որի՝ մարմնավոր իշխանությունները պետք է թաշխարհի դատաստանս հոգայցնեն», իսկ հոգևոր իշխանությունները՝ «գեկեղեցոյ դատաստանս»: Հ. Կարստի այն կարծիքը, թե ըստ Դատաստանագրի հոգևոր իշխանությունն է դատիրաբանության իսկական ու միակ օրինական կրողը, կարող էր իր հիմնավորումը գտնել, թեևս, Դատաստանագրի ԱԳ խմբագրությունների

վերջ բերված հողավանդակում, որը իրոք, արտաքուստ նման եզրակացության հնարավորությունն առաջ է բաց դա միայն արտաքուստ իրականում այս խմբագրությունների համաձայն էլ եպիսկոպոսը, այսինքն՝ հողերը իշխանությունը, միայն «աւանդապահն է այսմ իրի», այլ կերպ դատարանությունը նրան է հանձնված «յաւանդ» ի պահ այնքան ժամանակ, քանի դեռ ռաւ մեզ ապականեալ է այսպիսի կարգ»՝ քանի դեռ չկա թագավորական իշխանությունը: Իսկ երբ այն կա կամ երբ ստեղծվի, եպիսկոպոսը պետք է միայն «զեկեղեցուց դատաստանն հոգւացէ», իսկ թագավորը՝ «գաշխարհի դատաստանն»: Դատաստանագրքի անդրանիկ օրինակներից մեկը Մխիթարը նվիրել է Վախթանգ իշխանին՝ հայկական մարմնավոր իշխանության խոշոր նեկայացուցիչներից մեկին, հետևյալ մաղթանքով. «Տէր Աստուած վայելի տացէ ևստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Վախտանկալ՝ որդւոյ Հասանա ի կամս իր զգիրքս դատաստանի անխախտ ուղղութեամբ վարել զպատմիրան սորին» (Մատենադարան Մխիթարյան ի Վենետիկ, ձ. № 1237, ք. 100): Անկասկած է, որ Մխիթարի համար էլ մարմնավոր իշխանները նույնքան իսկական և օրինական դատավորներ են, որքան և հողերը իշխանները, որովհետև նրանց է նվիրում Դատաստանագրքը՝ վերջինիս պատվիրաններով ղեկավարվելու համար: Վերջպսես հենց ինքը Մխիթարն է սահմանել Դատաստանագրքի շատ ու շատ հողավանդակներ, որոնցով նախատեսված հանցադեպերը կամ արարքները բնորոշույա է համարել աշխարհական առյուծներին՝ թագավորին, իշխաններին ու դատավորներին, որով սրանք ևս համարված են դատական իշխանության օրինական ներկայացուցիչներ: Ուստի, նախագրության 6 զլխի համապատասխան հատվածը չպետք է հասկանալ ոչ այն իմաստով, թե աշխարհական իշխանությունը դատարանության նշանակությունը իրականում երկրորդական էր, և ոչ էլ այն իմաստով, թե այդ վերջինն է Մխիթարի համար ցանկալի կարգը (տե՛ս նաև Առաջաբան, էջ ԻԷ-ԻԹ, ԿԷ-ԿԹ, ծանոթագրություններ 38, 44 նաև և. Թորոսյան, Ընդդատությունը միջնադարյան Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 79—91):

13. (Գ) Այլ գերմանուս ոչ հրամայեմք և զի ոչ հրամայեցաւ (էջ 291):

Այս խմբագրության բոլոր ձեռագրերն ունեն՝ և զի ոչ հրամայեցաւ: Ուղղի ենք համաձայն Ա խմբագրության: Պատճառաբանությունը հետևյալն է: Ըստ ձեռագրերի, Մխիթարն ասում է. «Երբովի շեք հրամայում, որովհետև շեք հրամայելու: Ըստ այսմ՝ երդումն արգելուր Մխիթարն է, բայց ինքը՝ Մխիթարն է նաև արգելքի սկզբնական ու գերագույն աղբյուրը: Մրբագրված ձևի համաձայն, տվյալ ղեկավարը երդումն արգելուր թեև դարձյալ Մխիթարն է, բայց արգելքի աղբյուրը այլ է: Հայտնի է, որ դա Ավետարանն է (տե՛ս օրինակ՝ Մտտթ., Ե, 33—37), որի հիման վրա երդումն արգելի են ինչպես արտաքին, այնպես էլ մեր եկեղեցու հայրերը (տե՛ս օրինակ՝ Յովնանու Ոսկեբերանի Յուստուստանագիր Մատթեոս, Վենետիկ, 1826, էջ 279, Կանոնք Աթմասի Ալեքսանդրացույ, Կանոն Խէ ի Կանոնգիրք Հայոց, Հ. Ա, էջ 309—310, Յովնանու Մանդակունոյ Ճառք, Վենետիկ, 1860, էջ 121, Գովթի ԶԲ Կանոնք բոտ Ա. Աբրահամյանի ճատաբանագրության և այլն): Մխիթարը ևս երդումն արգելում է նույն հիմամբ, որն ակնհայտ է Դատաստանագրքի մե շարք այլ հատվածներից (տե՛ս մասնավորապես նախագրություն, Ը): Այդ պատճառով «ոչ հրամայեցաք» ձևը համարեցինք աղճատունք» «ոչ հրամայեցաւ» ձևի:

14. (ԱԳ) Պարտ եւ պատշան իսկ է ի ժամ դատաստանի դատուուրաց երկուս կամ երիս ունել արս վարձս, յարոց եւ իցել կարգաց, վկայս ուղիղ նոցա լինել դատաստանի (Ա՝ էջ 10, Գ՝ էջ 291):

Դատական առյուծը միանձնյա չէ: Իհարկե, դատարանը կարող էր և իրականում, հավանաբար, հանդես է եկել նաև ի դեմս մեկ անձի՝ իշխանի, եպիսկոպոսի և այլն, բայց սովորականն այն է, ինչպես հետևում է Դատաստանագրքից և այլ տվյալներից, որ դատարանը բաղմանձնյա է: Մխիթար Գոռը ևս դեմ է միանձնյա առյուծին: Մխիթարի այս դիրքորոշումը, անշուշտ առաջադիմական է և իր հետեմախորքում պայմանավորված է ոչ միայն նրա քննահանուր իրավափիլիսոփայությանը, այլև ժողովրդավոտ հայացքներով:

Միջնադարյան մտածողության համաձայն, մարդու բնութիանը հատուկ է սխալվելը՝ կամս թե ակամա: Դրա հավանականությունն ավելի է մեծանում, մասնավոր, դատական գործերի քննության ժամանակ, որովհետև, նախ, կողմերից մեկը, որպես կանոն, շահագրգռված է, որ ճշմարտությունը հանդես չկա իր իսկական տեսքով, և աշխատում է թշուրիմացության մեջ գցել դատավորին, երկրորդ՝ ինչ-ինչ պատճառներով ինքը դատավորը կարող է սխալվել կամ անախառ չլինել: Սխալվելու հավանականությունը ավելի մեծ է, երբ որոշողը մեկ անձ

է: Ատյանի բազմանձնութեան անհրաժեշտութեանն ի նպաստ Մխիթարյան գիրքորոշումը հիմնոված է այս իրավամտածողութեան վրա:

Դատական ատյանը կազմված է նախագահից (ատաշին դատավորից) և ատենակալներին: Նախագահի հարցը պարզ է. նա իշխանութեան այն աստիճանի ներկայացուցիչն է, որի անունով, սովորաբար, կոչվում է դատական տվյալ օդակը (Քրազավոր, կաթողիկոս, իշխան, եպիսկոպոս և այլն. տե՛ս ծանոթագրութուն Ս 44): Այդպես պարզ չէ, սակայն ատենակալներին հարցը:

Համաձայն Դատաստանագրքի

Ա խմբագրութեան

Բ խմբագրութեան

Գ խմբագրութեան

Պարտ և պատշաճ իսկ է... դատաւորաց երկուս կամ երիս ունել արս վորձս, չորոց և իցէ կարգաց (էջ 10):

և դատաւորին պարտ է... երկուս կամ երիս արս փորձած գիտնականս ունել ի դատաստանին (էջ 30):

Պարտ և պատշաճ իսկ է դատաւորաց... երկու կամ երեք ունել արս փորձեալս, հաւատարիմս յամենայն կրօնս աստուածայինս, վկայեալս յամենայն բնակչացն (էջ 291):

Բ խմբագրութեան համաձայն, ատենակալները պետք է լինեն փորձառու գիտնականներ, Ա խմբագրութունից իմանում ենք, որ փորձառու այդ գիտնականները կարող են լինել «չորոց և իցէ կարգաց», այսինքն՝ աշխարհական, և՛ հոգևորական: Վերջապես, Գ խմբագրութունը նշում է, որ նրանք պետք է «վկայված» լինեն ժողովրդի կողմից, այսինքն՝ լինեն լավ համարում ունեցող մարդիկ: ԱԳ խմբագրութունները մի այլ առիթով նշում են. «Ենթ շիցին բաւական (Գ՝ և թէ պատահի եպիսկոպոս տիմուր ալամ էրի), գործակցաբ վարեսցին, աշխարհականաբ և քահանայիբ և վարդապետաբ փորձողունիբ» (Նախագրութիւն, 6, էջ 9): Ըստ այսմ՝ հոգևորականներից ատենակալներ կարող են լինել միայն վարդապետներն ու քահանաները: Բ խմբագրութունն էլ իր հերթին օգնում է պարզելու, թե ովքեր կարող էին լինել ատենակալ աշխարհականներից. «Եւ վերադոյն ասացաւ զի վարդապետօք արասցեն դատաստան. և թէ այս ոչ իցէ, արասցեն գիտնական քահանայիբ և տանուտէրօք» (էջ 27): Ուրեմն, աշխարհականներից ատենակալներ կարող էին լինել տանուտերերը: Այսպիսով, եպիսկոպոսական դատարանի ատենակալներ կարող էին լինել վարդապետները, քահանաները և տանուտերերը: Առաջինների հարցը պարզ է. վերջիններիս՝ ոչ, որովհետև «տանուտեր» բառը մի բանի նշանակութունն ունի, և Դատաստանագրքում էլ չի բացատրված, թե ինչ իմաստով պետք է հասկանալ այդ բառը: «Տանուտեր» բառը ունի երեք իմաստ. 1) տեր տանն, գլուխ քուտանչաց, գյուղի մեծավոր կամ կառավարիչ: Վ. Բատաստանցը (Յատաշարանութիւն, էջ 133) և Խ. Սամուելյանը (Մխիթար Գոշի Գատաստանագիրքն ու երեք հալոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911, էջ 130—131) ենթադրում են, որ «տանուտեր»-ի տակ, որպես եպիսկոպոսական դատարանի ատենակալ, Մխիթարը նկատի ունի նախարարներին կամ իշխաններին: Թվում է, սակայն, որ խոսքը գեղջավազի մասին է, որովհետև միշտ չէ, որ իշխանը կարող էր գյուղում լինել, և ամեն գյուղում չէ, որ կարող էր իշխան լինել, այնինչ գեղջավազ կար յուրաքանչյուր գյուղում (քննվող դարաշրջանին ժամանակամերձ հայկական իրականութեան մեջ «տանուտեր» հասկացութեան և առհասարակ տանուտերերի իրավունքների մասին մանրամասն տե՛ս Լ. Խաչիկյան, «XIV—XV դարերի հայկական գյուղական համայնքի մասին», տպ. «Պատմա-բանասիրական հասցիք», 1958, № 1, էջ 110—133): Բացի դրանից, իշխանն ինքը դատավոր էր, նման եպիսկոպոսին և հավասար նրան, ընդհատյա գործերի շատ ավելի լայն շրջանակով, քան եպիսկոպոսը: Իշխանը չէ, որ պետք է եպիսկոպոսական դատարանի ատենակալ լիներ. այն էլ խորհրդակցական ձևի իրավունքով: Սա բնոճանուր կարգն է, որով, իհարկե, չի բացառվում, որ երբևէ իշխանը կարող էր մասնակցել եպիսկոպոսական դատարանին, ճիշտ այնպես, ինչպես որ եպիսկոպոսը՝ իշխանականին:

և. Սամուելյանը արդեն ցույց է տվել (տե՛ս նշված աշխ.), որ եպիսկոպոսական դատարանը շարժական բնույթ ուներ: Եպիսկոպոսի կենտրոնատեղում միշտ էլ կլինեին վարդա-

պիտաներ կամ քահանաներ, այնպես որ տանուտեր ատենակալի կարիք չէր գգացվի: Կենտրոնից հեռու տեղերում է, որ կարող էին չլինել վարդապետներ կամ գիտնական քահանաներ, որոնց և փոխարինելու էր տանուտերը: Հիրավի, եկեղեցական կանոնների համաձայն, եպիսկոպոսը պարտավոր էր տարին երկու անգամ շրջել թեմում: Այս շրջագայությունների ժամանակ նա իրականացնում էր նաև արգարադատությունը:

Ի՞նչ իրավասություն ունեին եպիսկոպոսական դատարանի ատենակալները, վճռահատությունը մասնակցում էին որոշիչ, թե խորհրդակցական ձայնի իրավունքով: Այս հարցին որոշակիորեն պատասխանելու համար Դատաստանագրքերը բավարարալափ տվյալներ չի տալիս:

**Ա խմբագրություն**

Եպիսկոպոսն, զի նա է դատար, զերկուսն կամ զերեսն առ ինքեան կալցի (էջ 10):

**Բ խմբագրություն**

Եպիսկոպոսն, զի նա է առաջին դատար, երկու կամ երեք առ ինքն կալցի (էջ 31):

**Գ խմբագրություն**

Պատուիրեմք դատարաց մերոց և եպիսկոպոսաց մերոց, զի միշտ առ ինքեանս պահեսցեն ի հաւատարիմ քահանայից երկու կամ երեք (էջ 292):

Այս և նման մի շարք վկայություններից ակնհայտ է, որ ատենակալներին ընտրում էր ինքը՝ դատարանի նախագահ ու առաջին դատավոր եպիսկոպոսը: Այս հանգամանքն արդեն, ինքնին, ինչ-որ շահով սահմանափակում է ատենակալների իրավունքը և հատկանշում նրանց կախվածությունը եպիսկոպոսից: Բացի դրանից, ատենակալներին իր հայեցողությամբ ընտրելու հնարավորությունը եպիսկոպոսին թույլ է տալիս նախապես արդեն բարենպաստ պայմաններ ստեղծել իրեն ցանկալի վճիռ կայացնելու համար: Անուհետև, ատենակալները մասնակցում են, որպեսզի դատավորը «ի նոցա վճռէն ուսցի զդատաստանն» (Բ, էջ 27), «զի եւ ինքն ի նոցանէ ուսցի զդատաստան» (Բ, էջ 31), «նոքաւք կրթի եւ հրմտանալ յամենայն ժամանակի (Ա, էջ 10 Գ՝ + ի գիրս աստուածայինս, և ի գիրս դատաստանի, էջ 292): Ատենակալների իրավունք-կոչում-պարտականություններից զոնե մեկը, Դատաստանագրքի երեք խմբագրությունների միաձայն այս վկայություններից, պարզվում է: Եպիսկոպոսը պետք է գիտուն ատենակալների կողմից կրթվի և հմտանա «ի գիրս աստուածայինս և ի գիրս դատաստանի»: Բայց սա զեռ ոչինչ չի պարզում, որովհետև այս կարգի հորդոր-պահանջներ մեծերի կողմից ուղղված եպիսկոպոսներին միշտ էլ եղել են: Շնորհալին, օրինակ, նույնպես գրում է. «Եւ թէ որք զեպիսկոպոսութեանն ունիցին աստիճան, և ոչ իցեն վարժեալք վարդապետական բանիւ, պարտ է յայնցանէ՛ որք կրթեցան յայս շնորհ աստուածային, մերձ առ ինքեանս ունիլ. զի տացեն ծառայակցացն յւրաքանչիւր ժամուրբանին աստուծոյ գկերակուրս» (Թուրք ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 64): Կարող է ուշադրավ թվալ «ի նոցա վճռէն ուսցի զդատաստան» արտահայտությունը (մանրամասն տե՛ս Յառաջաբանափոխ, էջ 134), բայց սա էլ չի օգնում հարցը պարզելուն, որովհետև «վճիռ» բառը տարբեր նշանակություն ունի: Անկախ դրանից, վերը բերված բոլոր քաղվածքներն էլ վերաբերում են այն դեպքին, երբ եպիսկոպոսը «տգէտ» է, «տխմար այսմ իրի», այսինքն՝ անփորձ դատավորական գործում: Հակառակ դեպքի համար ուշադրավ են հետևյալ վկայությունները:

**ԱԳ խմբագրություն**

Վկայս ուղիղ նոցա լինել դատաստանի, զի որպէս քտխացն հաւատարմանան բանք վկայիւք, սոյնպէ՛ս եւ դատաւորաց առանց կարծեաց լիցի դատաստանն վկայիւք (Ա՛ էջ 10, Գ՛ 291):

**Բ խմբագրություն**

Մի՛ զի իրաւամբք լիցի դատաստանն, եւ երկրորդ՝ զի եւ նոքա վկայք լիցին իրաւանց դատաստանին (էջ 30):

Այս և նման վկայությունների համաձայն, ատենակալների իրավունքներն ու պարտականությունները հանդում են երկու կետի: Նրանք մասնակցում են առյայտին, որպեսզի ա) «իրաւամբք լիցի դատաստանն», և բ) «վկայք լիցին իրաւանց դատաստանին»: Վերջի՛ կետի բովանդակությունը Հ. Կարստը մեկնում է այսպես. «Վկտ լինել դատավարություն ազնվությանը, որի վրա նրանք պետք է հսկին և որի ճիշտ ընթացքը հրաշխավորեն»:

(Kommentar, էջ 362): Ավելացնենք. «իրաւանց դատաստանին» վկա լինել, հավանաբար, նշանակում է նաև անհրաժեշտութեան ղեկորում հավաստել, որ տվյալ գործը դատաքննութեան առարկա է եղել և վճիռ կայացվել, վերհիշել վճիռի բովանդակութունը, նաև՝ հաստատել կողմերի կամ վկաների որևէ գործողութիւնը կամ ցուցումները և այլն: Ինչու՞ և հավանական են թվում հետևյալ երկու պատճառները. նախ՝ որպէսզի մեկ անգամ արդէն լրացած գործը երկրորդ անգամ դատաքննութեան առարկա չըստնա: Կողմերից մեկի նման փորձը (օրինակ՝ ի դեպ դատավորի փոփոխութեան) կարող էր խափանվել ատենակալներին վկայութեամբ, և այլևս հարկ չէր լինի մի երկրորդ դատավարութեամբ ապացուցել, որ գործն, իրոք, քննվել է և վճիռ կայացվել: Երկրորդ՝ դատական նիստը միշտ չէ, որ արձանագրվում էր, ուստի վերադաս ատեսներ գործը վերանայելիս իր տրամադրութեան տակ համապատասխան նյութեր կարող էր և չունենալ: Ատենակալները, որպէս «իրավանց դատաստանի վկաներ»: անհրաժեշտութեան ղեկորում լրացնելու էին այդ բացը:

Ավելի ևս մշուշոտ է առաջին կետի իմաստը: «Իրաւամբ լիցի դատաստանն» արտահայտութիւնը ևս կարելի է հասկանալ մի քանի իմաստով: Ի միջի այլոց, սա նշանակում է նաև գործը վճռել զոյութիւն ունեցող օրենքով: Միջնադարում, ինչպէս վկայում է Մխիթարը և ինչպէս գծվար շէ համոզվել թերթելով օրինակ, Կանոնագիրքը, միևնույն խնդրի վերաբերյալ կային դարերով կոտակված օրենք-կանոններ, երբեմն հակասական ու իրարամերձ: Այսպիսի պայմաններում անհրաժեշտ օրենքն ընտրելը այնքան էլ դյուրին գործ չէ, և ատենակալները կարող էին օգնել դատավորին այս հարցում: Թերևս պատճառներից մեկն էլ այդ է, որ Գատաստանագիրքը պահանջում է ատենակալներից օրենքների գիտակցութիւն և այլն: Ըստ այսմ, ատենակալները միայն խորհրդակցական ձայնի իրավունք ունեն: Բայց, «իրաւամբ լիցի դատաստանն» նշանակում է նաև, որ գործը վճռվի օրենքով, սովորութեական իրավունքի համապատասխան երբեմով կամ ընդունված իրավարմբուման համաձայն և ոչ կամայականորեն: Ըստ այսմ, ատենակալներն ունեն վճռական ձայնի իրավունք: Եթէ նկատի առնվի, որ դատարանի նախագահը, այնուամենայնիվ, եպիսկոպոսն է, թէմում նա է ամենարարձը հողերը պաշտոնյան, որից շատ բանով կախված են մյուս հողերականները, այդ թվում և ատենակալները, ապա առանձին ղեկպերում եպիսկոպոսը, իհարկէ, կկարողանար կայացնել իր ուզած վճիռը: Բայց և այնպէս չպետք է կասկածել, որ ատենակալները, մանավանդ եթէ նրանք հեղինակավոր անձինք էին, կարող էին ազդել եպիսկոպոսն՝ վրա, զսպելով միանձնյա որոշողի կամայականութիւնները, և նպաստել, որ այնուամենայնիվ, «իրաւամբ լիցի դատաստանն»:

Ասվածը վերաբերում է նաև աշխարհական դատարանին: Այս դատարանը ևս միանձնյա չէ: Գատարանի նախագահն է թագավորը (իշխանապետը), իշխանը կամ պաշտոնյա-դատավորը, Սրանք ևս զգալիաբար դատաստան հոգացնեն ատենի ևս իրաւամբ» (Բ, էջ 26): Դժվար չէ կուսել, որ օրինակ թագավորական դատարանի ատենակալներ կարող էին լինել թագավորի անմիջական շրջապատի բարձրաստիճան իշխանավորներն ու բարձրատոհմիկ ազնուականները, իշխանական դատարանի ատենակալներ՝ համապատասխան աստիճանի ազնուականներն ու պաշտոնյաները և այլն: Ատենակալների իրաւունքներն այս ղեկպերում էլ նույնն են, ինչ որ նախորդ ղեկպերում էր: Թագավորը (իշխանապետը), որպէս իշխանութեան բարձրագոյն կրող, իրավականորեն միշտ էլ կայող է իր ուզած վճիռն արձակել: Ինչ վերաբերում է իշխանին և ստորին դատավորին, ապա առանձին ղեկպերում թէև սրանք էլ կարող են իրենց կամքը թելադրել, բայց, ընդհանուր առմամբ, գործը վճռվում է «ատենի»: :

15. (ԱՊ) Զի՛ ի դաւելոյ ծամանակի Եպիսկոպոսն, զի նա է դատաւոր (Բ՝ զի նա է առաջին դատաւոր), գերկուսն կամ գերիսն առ ինեման կալցի... (Ա՛ էջ 10, Գ՛ էջ 292):

Այս (և նման մի քանի այլ) փաստի հիման վրա, ինչպէս տեսանք (տե՛ս ծանոթագր. 12) Շ. Կարստը եզրակացրել էր, որ ըստ Գատաստանագրքի «ոչ թէ թագավորը այլ ի դէմս եպիսկոպոսի ներկայացրված հողեր հաստատութիւնն է դատական իշխանութեան իսկական ու միակ օրինական կրողը», որ «հողերը դուրսը՝ եպիսկոպոսը... օրենքի ուժով առաջին դատավոր է, որպէս երկնային դատավորի անմիջական ժառանգորդ ու տեղապահ» (Kommentar, էջ 34): Բայց այս հատվածում խոսքն այն մասին չէ, թէ երկու բնույթի իշխանութիւններից՝ հողերը և մարմնավոր, ում է պատկանում դատիրավասութիւնը, ով է դատական իշխանութեան կրողը՝ ընդհանրապէս և դատական աստիճանակարգութեան գլուխը՝ մասնավորապէս: Այս հատվածում եպիսկոպոսը դատավոր (առաջին դատավոր) է անվանված միայն և միայն եպիսկոպոսական դատարանի առնչութեամբ, որտեղ եպիսկոպոսն, իրոք, առաջին դատավոր է որպէս այդ դատարանի նախագահ:

16. (ԱՔԳ) Երկրորդ՝ հաստատարման լինել երկուսն է երեքն (Ա՛ էջ 12, Բ՛ 36, Գ՛ 294):

Դատաստանագրքը սահմանում է, որ վկաների թիվը երկուսից պակաս լինել չի կարող։ Ըստ Դատաստանագրքի դատական ապացույցների շարքում ամենակարևոր վկաներն են ու նրանց ցուցմունքները, ուստի հատուկ ուշադրություն է դարձված այդ հարցի վրա։ Դատաստանագրքում վկաների վերաբերյալ արված դատողությունների՝ հանրագումարը տալիս է դրական և բացասական հատկանիշների մի շարք, որով պայմանավորված է վկա լինելը չլինելու իրավունքը։ Ավելանում է արտաքին մի պայման. վկաների թիվը, որը չի կարող երկուսից պակաս լինել։ Այս իրողությունը հալագիտության մեջ բացատրված է որպես փոխառություն Մովսիսական իրավունքից (Karst, Kommentar, էջ 382, Մամուելյան, Մխիթար Գալի Դատաստանագրքին ու հին հայոց փառապատկան իրավունքը, Վիեննա, 1911, էջ 154)։ Նախ, փոխառության տեսակետի ներկայացուցիչները, եթե ընդունենք, որ սովյալ դեպքում սուկա է փոխառություն, արձանագրում են միայն վաստի, ատանց բացատրելու այն։ Մինչդեռ բացատրությունն անհրաժեշտ էր, թեև ուղի ցույց տալու համար, թե ինչու փոխառված է հենց սովյալ իրավադրույթը և իրավունքի հենց սովյալ համակարգից։ Այնուհետև, հայտնի է, որ իրավական բաղձաթիվ իրողություններ նույն ձևով հանդիպում են իրավունքի տարբեր համակարգերում և տարբեր իրավակարգերում։ Այս բոլորը փոխառությամբ բացատրել, անշուշտ, դուրիս է, բայց ոչ միշտ ընդունելի կամ ճիշտ։ Վկաների նվազագույն թիվը ընդունված է եղել տարածությունը ու ժամանակով իրարից շատ հեռու օրենսդրություններում՝ հին հեթանոսական, հին հնդկական, գերմանական և այլն։ Հռոմեական իրավունքի համաձայն testis unus-testis nullus-մեկ վկան վկա չէ։ Այս դեպքերում Մովսիսական իրավունքի ազդեցությունը բացատրում է։ Ուրեմն, պետք է ընդունել, որ այդ օրենսդրությունները իրավական սովյալ դրույթին են հասել իրարից անկախ, սեփական իրավական կյանքի փորձն ամփոփելով։ Թվում է, որ Մխիթարն էլ հասել է նույն մտքին հայկական և, ընդհանրապես, իրավական կյանքի փորձն ամփոփելով։

Մխիթարը բացատրում է, թե ինչու չի ընդունում երկուսից պակաս վկա, և հենց այդ պատասխանն է նաև հաստատում, որ ընդունելի վկաների նվազագույն երկու թվի անցումը Դատաստանագրքի փոխառությունների տեսության տրորված ուղիներում շարտք է որոնել։ Մխիթարը գրում է. «Եւ թէ ընդէր երկուք կամ երեք ըստրին, ասելի է։ Երկուքն եւ երեքն ոչ վասն ատանելութեան իսպիանման է, այլ յաղագս դի մի՛ սյակաս իցէ. եթէ բազումք իցէն՝ բարիոք է, եւ թէ ոչ՝ մի՛ նուագեցի... Աի դիւրիւն է միայն ախտի ինչ շարախանել, եւ երկուց վկայից ի վեր քան զպատրասն եւ զկաշառ լինել՝ երեքն» (Ա՛ էջ 14, Բ՛ 42, Գ՛ 295)։

«Չարախոսության» տակ պետք չէ անպայման հասկանալ շահագիտական միտումով ոչ-ճիշտ ցուցմունք տալու Ամենաբարեխիղճ վկան էլ կարող է ոչ-ճիշտ ցուցմունք տալ միանգամայն բարեխիղճ մոլորության հետևանքով, «վասն ախտի ինչ»։ Բարեխիղճ մոլորությունը մարդկային է, մարդկային է նաև միտումնավոր «չարախոսությունը», բայց մարդկային չէ, անարդարացի է մոլորության կամ շարախոսության վրա հիմնված դատապարտող վճիռը։ Մարդիկ դա նկատել են վաղուց, շատ վաղուց և վճռի արդարացիությունը ապահովող ուղիներ են որոնել։ Վճիռը ապացույցների հանրագումարն է, վճռի որակը, հայտնի շարտքով, արդեն կանխորոշված է ապացույցների որակով։ Եվ որովհետև վկայությունը ապացույցների շարքում, որպես կանոն, միշտ էլ առաջնակարգ տեղ է զբաղվել, այդ պատճառով իրավունքն ու իրավագիտությունը սկզբից ևեթ շահաանիշներ են որոնել վկաների ցուցմունքները արժեքավորելու համար։ Նկատած լինելով, որ մեկ վկային «դիւրին է վասն ախտի ինչ շարախանել» և որ իր հիմքում այդպիսի ապացույց ունեցող վճիռը նվազ համոզիչ է, իրավունքն ու իրավագիտությունը այլ միջոց չեն գտել (և հազիվ էլ կարողանային գտնել այն ժամանակ), քան այն, որ վճռի հավաստիության աստիճանը մեծացնելու համար մեծացրել են վկաների թիվը։ Հավասարաբար, իրավական կյանքի սկզբից շարունակ դիտվող այս փորձն է ընկած բոլոր այն հին օրենսդրությունների հիմքում, որոնք չեն ընդունում երկուսից պակաս վկաների ցուցմունքը։ Այս նույն փորձն է ընկած նաև Դատաստանագրքի և Մխիթարի հայաբնիկ հիմքում։ Վկաների և նրանց ցուցմունքների մասին Մխիթարի դատողությունների հանրագումարը հայացքների մի համակարգ է, որը կարելի է անվանել վկաների ցուցմունքների գեներալացիոն փառապատկան շահաանիշների տեսություն։ Իրոք, եթե վերհիշենք Մխիթարի դատողությունները վկաների վերաբերյալ, ապա դժվար չի լինի նկատել, որ դրանք պատվում են հիմնականում երկու հարցի շուրջ՝ վկաների թիվը և վկաների անձը, հանդամանքներ, որոնցով, ըստ Մխիթարի, ի վերջո պայմանավորված է վատահույությունը նրանց ցուցմունքների նկատմամբ։ Մեկ անձի վկայությունը Մխիթարը չի ընդունում, ենթադրելով, որ մի շարք պատճառներով՝

առարկայական թև ենթակայական, գրական թև բացասական, Իրա ցուցմունքը կարող է ճիշտ չլինել: Բայց վկայի ցուցմունքի նկատմամբ վստահությունը մեծանում է և այն արմանահավատ դառնում, եթե նույն փաստը վկայում են շատերը: Ըստ Մխիթարի, ուրեմն, վկայության արժանահավատությունը համեմատական է վկաների քվին: Մխիթարը ցանկալի է համարում յուրաքանչյուր դեպքի համար ունենալ վկաների առավելագույն թիվ. «քի թէ բազումք իցեն, բարիոք է»: Բայց պատկերացնելով, որ դա անհնար է, հարցին մոտենում է գործնականորեն և վկայություն հավաստության բանակային շափանիչի ստորին սահմանը համարում է վկաների երկու-երեք թիվը: Բայց, հարցը դրանով սպառված չի համարում: Նա գիտակցում է, որ վկաների առավելագույն թվի գործնական անհնարինությունը մի այլ դրժվարություն է ստեղծում իրականում: Երկու-երեք վկաների ցուցմունքների համաձայնությունը կարելի է բացատրել նրանով, որ նրանց կողմից վկայվող փաստը, դեպքը, իրոք, տեղի է ունեցել, և դա է պատճառը, որ ցուցմունքները նույնանում են: Իրա երաշխիքը այն է նաև, որ «եթևուցն կամ երիցն ոչ է այնպես դիրի»՝ «վասն արտի ինչ շարախասել»: Մխիթարը, սակայն, հասկանում է, որ երկու-երեք կողմից շարախոսելը սոսկ «այնքան էլ հեշտ չէ», ուրեմն, գուցե և դժվարությամբ, բայց և այնպես «իհանգամայն հնարավոր է: Այդ դեպքում երկու-երեք վկաների ցուցմունքների համաձայնությունը կարելի է բացատրել և այլ պատճառներով, օրինակ՝ շահախնդրություն, անձնական նկատառումներ և այլն: Այստեղ, ահա, ըստ Մխիթարի, վճռական նշանակություն է ստանում վկայի անձը: Եթե վկան որպես մարդ ճշմարտասեր է, անշահախնդիր, անձնական նկատմունքներից վեր և այլն, ուրեմն նրա ցուցմունքները արժանի են վստահության: Ըստ Մխիթարի, ուրեմն, վկայության արժանահավատությունը համեմատական է վկայի անձնական-բարոյական նկարագրին:

Մխիթար Գոշն, այսպիսով, վկաների ցուցմունքների գնահատման երկու շափանիչ է սահմանում. քանակային՝ վկաների թիվը և որակային՝ վկաների բարոյական գրական նրկարագրը: Այդ շափանիչները առանձին-առանձին կիրառվել չեն կարող և կազմում են մի ամբողջություն. շափանիչը իր իսկական իմաստով այդ երկուսի միասնությունն է:

Վկաների թիվը և բարոյական նկարագիրը սոսկ միջոց է, որով Մխիթար Գոշը որոշում է վկայության որակը:

17. (ԱԲԳ) Իսկ զիանայս վկայս ոչ է ընդունելի, բայց արբանակս վկայից... Ա՛ էջ 13, Բ՛ էջ 41, Գ՛ էջ 295):

Մինչևդարձում կանանց իրավունքները շատ սահմանափակ էին, մասնավորապես նրանք զրկված էին վկա լինելու իրավունքից: Բայց կանանց վկայությունն իրավունքը, այնպես ինչպես ձևակերպված է Գոտտաստանագրքում, որոշ հարցերում, թերևս, կրում է մուսուլմանական իրավունքի ազդեցությունը (նորագույն ուսումնասիրություններից տե՛ս, օրինակ, Ք. Շարլ, Мусульманское право, пер. с французского, Москва, 1959, стр. 119, М. В. Вагибов, Ислам и женщина, Москва, 1968, стр. 27):

18. (Ա) Հաստատում լիցի վկայութիւն կանանց ի ձեռն արանց (էջ 13):

ԱԿԳ ձեռագրերն ունեն. «Հաստատում լիցի վկայությունն արանցն ի ձեռն կանանց (ԲԳ կանանցն)»:

ԱԿԳ ձեռագրերի ընթերցումը համարելով զրբական վրիպակ՝ Իրբագրել ենք համաձայն Գ խմբագրության (էջ 295), մանավանդ որ այդպես է պահանջում հողվածի իմաստը:

Ըստ արբագրվող ընթերցման, տղամարդկանց վկայությունն է, որ հաղորդվում է կանանց միջոցով: Մինչդեռ հողվածը պահանջում է, որ կանայք դատարան չներկայանան, այլ դեպքի մասին պատմեն տղամարդկանց, և սրանք նույնը հայտնեն դատարանին: Հետևապես, կանանց վկայությունն է, որ հաղորդվում է տղամարդկանց միջոցով:

19. (ԱԳ)... բէ պատանին, որպէս եւ պատանեցան բազումք, ի Տեառնէ ընկալեալք լիցին... (Ա՛ էջ 13, Գ՛ էջ 295, Բ՛ էջ 42, տարբ. թ. ա):

Վ. Բաստամյանցը ստորակետը դրել է «պատահեցան» բառից հետո, որով նշանակալիորեն փոխվում է հատվածի իմաստը: Ըստ այդմ՝ վկա կանանց թիվը պետք է շատ լինի, բազում, որպեսզի «բնկալեալ» լինեն: Մինչդեռ, խոսքը կանանց վկայության օրինակների «բազում»-ության մասին է:

20. (Ա) Յաղագս երդման, եթէ ո՛րպէս լիցի եւ որո՞ց, ոչ արիւնօդրելով, զի ոչ հրամայեցաւ... (էջ 16):

ԱԿԲէ ձեռագրերն ունեն զի ոչ հրամայեցաւ: Արբագրման պատճառաբանությունը տե՛ս

ժանոթազր. 13: Եսան՝ Ա խմբագրութիւնը (նախագրութիւն, 2, էջ 12) ուրիշ դեպքերում տալիս է ճիշտ բնթերցում. օրինակ՝ «այլ գերդումս ոչ հրամայեմք, զի եւ ոչ հրամայեցաւ»:

21

ԱՔ

Պ

Հասարակաբար առ ամենայն իրս դատաստանի, որոյ վկայ է, ոչ է երդումն նորս, իսկ որոյ վկայ չիցէ, հարկաւոր է երդնուլ (էջ 18):

Ամենայն ոք, որ ոչ իցէ իւրն վկայ կամ զիր գրեալ վկայութ, երդումն կայ ի միջի (էջ 296):

22. (Ա) Ապա եթէ ո՛ք զո՛ք ըմբռնէ ի դատաստան, եւ չիցէ իւր վկայ, եւ ոչ այնմ, որ ըմբռնեցաւ, իցէ վկայ, հարկաւոր է երդումն ոչ ըմբռնողին, այլ որ ըմբռնեցաւ. այլ այնմիկ, որոյ չիցէ կասկած ստուրեան ըմբռնողին: Ապա թէ կասկածանք ինչ իցէ եւ նմանութիւն ստուրեան, ըմբռնողին լիցի երդումն, զի թերեւ զարհուրեալ լուծցի դատաստանն: Ապա եթէ յանդուգն ո՛ք է, զի որպէս զւարտեաց՝ նայնպէս եւ երդնու, ապա հարկ է ըմբռնելոյն երդնուլ, զի կասկած նշմարտուրեան է ի նմա (Ա՛ էջ 18, Բ՛ էջ 54, Գ՛ էջ 296):

Այս սահմանումը, որը հիմնականում նույնն է երեք խմբագրութիւններում էլ, իրավաբանական տեսակետից որքան ուշագրա՞յ ու հետաքրքրական, նույնքան էլ հեղհեղուկ է ու ոչ հետևողական: Այնուհանդերձ ԲԳ խմբագրութիւններում իմաստը պարզ է, ինչ չի կարելի ասել Ա խմբագրութիւն մասին:

Խոսքն այստեղ քաղաքացիական գործերով վեճերի մասին է: Դա երևում է, նախ հաշորդ պարբերութիւնից, որտեղ խոսքը վերաբերում է քրեական գործերին, երկրորդ՝ Բ խմբագրութիւնից, որն ուղղակի նշում է այդ. «եւ թէ ոք զոք ըմբռնէ ի դատաստան իրրեւ պարտական կամ այլ ինչ» (էջ 54):

Երեք խմբագրութիւնների համար հիմնական նույնութիւնն այն է, որ քաղաքացիական գործերով երդման նախապատմութիւնը տրվում է պատասխանողին (այնուհետև արված լրացում-ճշտումներով), իսկ քրեական գործերով՝ մեղադրողին (նույնպիսի լրացում-ճշտումներով):

Քաղաքացիական և քրեական իրավահարաբերութիւններին վերաբերող այս սահմանումների առաջին մասերի համադրութիւնը երդման նախապատմութիւն իրավունքի առումով տալիս է այն. խիստ ուշագրա՞յ պատկերը, որն իրավական նույն դրութիւնն է նշում մի կողմից՝ պատասխանողի ու մեղադրողի, մյուս կողմից հայցվորի ու մեղադրալի համար:

Ա

Բ

Պ

23. Այլ թէ ըմբռնեն զոք ի գողութեան, եւ կամ ի շնութեան, եւ կամ յաւազակութեան կասկածանս, եւ ըմբռնողին շունիս վկայ, երդումն է նոցա, զի այնպիսի շարագործքն շանգիտեն երդնուլ. մի տացի նոցա երդումն: Ապա եթէ աղաղակեն եւ զիե՛քնանս անպարտս խստովանին եւ զըմբռնող՝ զպարտողս եւ սուտս, եւ ի դէպ թուի դատաւորին եւ ատենին աղաղակ նոցա, նոցա լիցի երդումն եւ մի՛ զպարտողացն (էջ 18—19):

Ապա թէ ոք ըմբռնի ի գողութեան, կամ մի ի շնութեան, կամ ի սպանութեան, կամ յաւազակութեան կասկածանս, եւ չիցէ բանն յայտնի, եւ որ ըմբռնեացն վկայ ոչ ունի, պարտ է ըմբռնողին տալ գերդումն, զի այնպիսի շարագործքն ոչ զանգիտեն երդնուլ: Ապա թէ ըմբռնեալքն աղաղակեն եւ ատեն թէ՛ ոչ եւ զոր ատենք եւ սուտ է բանք զվե՛ջը, զուր պարտաւորեն զվեզ, այնպիսի բանիւք որ՝ զատաւորին եւ ամենայն ատենին ի դէպ թուին բանք նոցա եւ աղաղակեն, յայնժամ նոցա լիցի երդումն եւ մի՛ զպարտողին (էջ 54):

Եւ թէ ըմբռնեն զոք ի գողութեան կամ ի բողոթեան, և ըմբռնողքն շունին վկայ, երդումն է նոցա, որը ըմբռնեցին, զի շարագործաց երդումն ոչ կայ: Ապա եթէ զիտիցեն դատաւորքն և կամ այլք ի դատաւորաց կոզմանէն և կամ այլ ատեանն ատենի վըկայեցեն, եթէ սուտ ըմբռնեալ իցեն ի գողութեան կամ ի շնութեան, երդումն լիցի այնպիսի գողացն (էջ 297):

24. (Ա) «Եւ կանանց, որ ի հաւատս իցեն... մի լիցի» երդումն (էջ 19):

«Հատաւոր կանայք կողմում են վանքի նուանքը, որք զեռ շնն սարկաւազուհիներ, եւ կամ այն կանայքը, որք հրաժարվելով աշխարհից՝ ապրում են վանքի մեջ իբրև ապաշխարողներ, հոգու համար» (Բատումյանց, ժանոթազր. № 141):

25. (Ա) Այլ վճիռ ուղիղ քստ հարկի (էջ 19):

Բոլոր ձեռագրերն ունեն. Այլ վաճառ ուղիղ քստ հարկի: Ուղղել ենք համաձայն հաս-  
վածի իմաստի, մանավանդ, որ Բ խմբագրությունում ևս այդպես է:  
Սխալը կարող է առաջացած լինել «վճիռ» բառի ձայնավորների սղված գրելու և հե-  
տագայում ոչ ճիշտ վերականգնելու պատճառով:

26. (Ա) Ում եւ կամիցի վարդապետաց... (էջ 20):

Քերես ավելի ճիշտ կլինենք. ում եւ կամիցի ի վարդապետաց

27. (Ա) Զի քէ երգումն, որ վասն ծառայից... (էջ 20):

Նույն հատվածի Բ խմբագրության կայացրությունը վ. Բաստամյանցը գրում է. «Մի  
աչապիսի կանոն շատանք ոչ Հայոց և ոչ արտաքին կանոնագրքերի մեջ: Բայց մեր հնդի-  
նակը գոցեի ի նկատի ունի Ս. Աթանասի ՀԱ. կանոնը... որ խոսում է փախած ծառաների  
սպանության մասին քահանայի հրամանով» (էջ 58, ծանոթագր. № 106):  
Աթանասի նշված կանոնում հրքման մասին խոսք չկա, ուստի հնդինակի ակնարկը չի  
կարող վերաբերել դրան:  
Ինչպես կտեսնենք ստորև, Մխիթարը ակնարկում է Ալավիկի որդի Գավթի ԽԾ կանոնը  
(ըստ Ա. Աբրահամյանի հրատարակության), Մխիթարը վերցրել է նաև Գավթի ԽԱ, ԽԲ,  
ԽԳ, ԿԱ, ԶԶ կանոնները և, զույցե, մեկ-երկու այլ կանոն ևս: Բոլոր այս դեպքերում Բաս-  
տամյանցը տալիս է վերը բերվածի նման ծանոթագրություն:

28. (Ա) Իսկ գախտաւոր խառնուածն ի բաց լուծանեմք, երբեմն իսկ զարեւատն լրմամբ  
ընդունիմք Անտարանին (Ա՝ էջ 23, Բ՝ էջ 65, տարրնթ. ք):

Վ. Բաստամյանցը ստորակետը դրել է «երբեմն» բառից հետո, որով լրջորեն փոխվում է  
հատվածի իմաստը: Ըստ այլմ, մահմեդական իրավունքում արտաք ու. Գրքից հղած  
զգախտաւոր խառնուածն» Մխիթարի «ի բաց է լուծանում» երբեմն, մինչդեռ նա քա մեր-  
ժում է միշտ Ուստի, «երբեմն»-ը վերաբերում է մահմեդական իրավունքում ու. Գրքից  
հղած «արեւատն»-ը ընդունելուն, երբեմն Ավետարանով լրացված:

29. (Ա) Վասն որոյ զամենեւեան զկնի մեր եկեալս՝ զհաւս եւ զեղբարսոյ ի զանազան մա-  
նանակս, աղաչմ մաղթանաւ՝ զյոյզմ եւ զոչ սակաւ սխալանս ուղղութից պատահեալք  
լընթեցման տառիս եւ զիրաւացի բերին լցիւիք (էջ 24): Զեռագրերն ունեն՝ ընթեցման կամ  
ընթեցմամբ տառիս: Բ խմբագրությունն ունի՝ պատահեալք ընթեցման Բ տառիս (= եր-  
կու տառիս, էջ 69):

Քանի որ խոսքը Գատաստանագրքի ընթերցանության ժամանակ նկատվող սխալների ու  
դրանք ուղղելու մասին է, ուստի արտահայտությունը սրբագրեցիցք համաձայն նախագա-  
սություն իմաստի՝ «լընթեցման տառիս»:

30. (Ա) եւ զպանդխտութիւն եւ զանտեղութիւն. եւ զանտեղելութիւն գրչութեան. եւ զհակա-  
նակութիւն ներհնոց եւ արտահնոց, զգայութեանց տկարութիւն եւ զմարտս դիաց... (էջ 24):

(Բ) եւ զպանդխտութիւն. եւ զանտեղութիւն եւ զանտեղելութիւն գրչութեան. եւ զը-  
հակառակութիւն ներհնոց, եւ արտահնոց զգայութեանց տկարութիւն. եւ զմարտս դիաց...  
(էջ 69):

Վ. Բաստամյանցը կետադրությունը կատարել է այլ կերպ, որով զգախորեն փոխվել է  
իմաստը: Այսպես. «զանտեղութիւն» բառը «զպանդխտութիւն» բառի հետ կապվելու փո-  
խարեն կապվել է «անտեղելութիւն» բառի հետ: Առավել նշելի է հաջորդ կետադրական  
անձշտությունը. քստ Վ. Բաստամյանցի Մխիթարի իր սխալների պատճառ է համարում  
յուրայինների (ներքեց) հակառակությունը և իր արտաքին «զգայությունների» տկարու-  
թյունը: Այնինչ, «արտաքեց»-ը պետք է կապել «ներքեց»-ի հետ, որովհետև խոսքը ոչ  
միայն յուրայինների, այլև օտարների հակառակության մասին է: Յուրայինների կողմից  
«հակառակություն»-ը վկայված է ոչ միայն այստեղ, այլև Մխիթարի մի այլ հիշատակա-  
րանում, որ հասել է մեզ Վենետիկի և Ջամատի ձեռագրերում: «Սակայն յազգաս հայա-  
ժանց, որ հհաս մեզ՝ ընտանիս և ոչ աւտար, յայպաղեաց դրել զյիշատակս զայստիկ»,  
կամ՝ «և հայածնայ ի խորողն զգատաստանացը գիրք՝ փոթելու և տառայանաւք զը-  
ծեալ յանգեցիք»: Օտարների՝ «արտաքեց» հակառակության մասին վկայում է Կիրակոս  
Գանակեցին. «Եւ այսպեւ նեղելի ի տաճկաց՝ ի սագրելոյ կաթողիկոսին Աղտանից Ստե-  
փաննասի, և եկեալ նորա յաշխարհն Խաչենոյ առ Վախթանկ... և սնդ դադարեալ ամս

ինչ» Պատմություն Հայոց, աշխատասիրությունքսմբ Կ. Մեյիֆ-Յեանճաճանճի, Երևան, 1961, էջ 209)։

Վերջապես ինքը Մխիթարը դեռ 1187 թ. գրում է իր կրած հայածանքների մասին թե՛ յուրայիններից և թե՛ օտարներից. «... և բազում հնչեաց ի վերայ մեր փորձութիւնք, ներքոյ և արտաքոյ...» (Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ե. Ա. Աճրիկիաս, 1951, էջ 521)։

31. (Ա) Բայց ձեռնարկուրիւմ մեզ յայսմ իրողութեան եղև ի բուսկանուրեանն Հայոց Ուր և շրջանին երբայլ ի բաց ձԱ, որ կոչի Փոբ, իսկ Հոռոմի՛ն՝ նՅ (էջ 25)։

Հայոց թվականության սկիզբը 551—552 թ. է, ուրեմն, հայկական Ուր թվականը հավասար է մեր 1184 թ. (633+551=1184)։

Հայկական փոքր թվականը, որ գործածության մեջ դրեց Հովհաննես Սարկավազը և այդ պատճառով կոչվում է նաև «Սարկավակադիր», սկսվում է 1084 թվականից։ Քանի որ այդ թվականությունը հիմնված է ՇԼԲ աղյուսակի կամ 532 տարեշրջանի վրա, ապա հայկական փոքր թվականության ձԱ (=101) թվականը ստանալու համար պետք է 101 գումարել 551 (մինչ հայոց մեծ թվականության տարիները) և գումարել 532 տարեշրջանը, որը կտա դարձյալ 1184։ Այս թվականը կարելի է հաշվել և այլ կերպ, ուղղակի ավելացնելով 1083 կամ 1084. դեպքը «եթե տեղի է ունեցել օգոստոսի 11-ից մինչև դեկտեմբերի 31-ը, ավելացվում է 1083, իսկ եթե տեղի է ունեցել հունվարի 1-ից մինչև օգոստոսի 10-ը՝ 1084» (Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 269)։

Իսկ Հոռոմի՛ն՝ նՅ։ Անշուշտ հոռոմական թվականությունն է, որը մեզանում կոչվել է նաև հունական։ Ինչպես հայտնի է, հոռոմացիները իրենց թվարկությունը սկսում էին Հոռոմի հիմնադրման տարեթվից, որը, ըստ Վարրոնի (116—27 մ. թ. ա.) հաշվումների, տեղի է ունեցել 753 մ. թ. ա.։ Հոռոմի հիմնադրման հազար տարին լրացավ մ. թ. 247 թ.։ Դրանից հետո հաշվարկումը սկսել են 248 թվականից, այն համարելով առաջին տարի (երկրորդ հազարամյակի)։ Եկեղեցու կողմից այնքանադրյան կամ ՇԼԲ (532) տարեշրջանի ներմուծումից հետո հաշվարկը կատարվում էր այսպես. 248 թ., այսինքն՝ երկրորդ հազարամյակի առաջին տարին, համարվում էր ՇԼԲ տարեշրջանի սկիզբը։ Ըստ այսմ շեշտումիս 405 թվականը հավասար է 247 (մինչև ՇԼԲ-ի սկիզբը) + 532 տարեշրջանը և + 405 = 1184 թ. մեր թվարկության (տես Վ. Քաստամյանց. Ժանոթագր. 123, Ա. Աբրահամյան, Նշված աշխ. էջ 255—256, Армянский Судебник Мхитаря Гоша, Ереван, 1954, ծանոթագր. 7, էջ 228—229)։

32. (Ա) Ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ՝ որդոյ Վախտանկայ կրանաւորեցելոյ. և որդոյ ևորս Վախտանկայ, ի դղեկին, որ անուանեալ կոչի Հարբեբ (էջ 25)։

(Բ) Ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ և որդոյ ևորս Վախտանկայ, ի դղեկին որ անուանի Հայրեբ (էջ 71—73)

ԺԲ դարի կեսերից սկսած (գուցե և ավելի վաղ) խաչենում շատ տարածված էին Վախտանգ և Հասան անունները, և իշխանական տարրեր ընտանիքներում շատ երկար ժամանակամիջոցում սերունդները հաջորդում են իրար Վախտանգ-Հասան-Վախտանգ կամ Հասան-Վախտանգ-Հասան անուններով։ Այս պարզան հայտնի շափով դժվարություններ է բուսեղծում որոշելու Մխիթարի նշած Վախտանգին և, ինչպես կտեսնենք, շփոթություններ է առաջացրել։

Ա և Բ խմբագրություններից ակնհայտ է, որ մեզ հետաքրքրող Վախտանգի հոր անունը Հասան է եղել, Ա խմբագրությունից իմանում ենք նաև, որ Վախտանգի պապի անունը նույնպես Վախտանգ է եղել։ Ըստ այսմ փնտրելի է Վախտանգ-Հասան-Վախտանգ սերունդը։ Ոչ քիչ թվով նույնանման գծերից մեզ հետաքրքրող պարզվում օգնում է նաև «կրօնաւորեցեալ» բառը։ Սակայն ըստ Ա խմբագրության «կրօնաւորեցեալ» էր Վախտանգի պապ Վախտանգը, ըստ Բ խմբագրության՝ Վախտանգի հայր Հասանը։ Մխիթարն հայտնում է այսքանը։

Վիրակոս Գանձակեցին գիտի երկու Վախտանգ, երկուսն էլ Հայկական Աղվանքի խաչեն գավառից։ Առաջին. Վախտանգ, տեղ Հաթերքի, որի եղբայրներն են Գրիգոր, Գրիգորիս, Խոլյան, Վասակ. և որի կինն էր Արգոնիսթունը՝ Քուրդ իշխանի դուստրը (Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 209, 215)։ Պատմիրը չի նշում այս Վախտանգի հոր անունը և ոչ այն, թե նա ուղաներ ուներ թե ոչ։

Երկրորդ. Վախտանց «զոր Տանկիկն կոչիին»: Սա ունիւր էրեք տղա՝ Հասան, «զոր Զալան կոչիին», Զաքարէ և Իվանն: Սրա ամուսինն էր մեծ Զտքարեի և Իվանեի թույրը՝ Խորիշահը (Պատմութիւն հայոց, էջ 268 և այլուր):

Վարդան Պատմիչը ևս երկու Վախտանց գիտի. «Ե 663 թուին (1214) զՀայթերք յԼանէ տոփն տեսրք նորա-զի մեռա Վախթանկ բուն տէր նորա և որդիքն իւր տարածամ, և ի միա Վախթանկն Սակոեանց՝ փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչնոյ՝ թողով երկու տղայս՝ զՀասան, որ և ի գգուանաց Զալատաւէ, և Զաքարէ, որ և Նասրատաւէ, զոր խրեմարկէր Բուանէ մարքն իւրեանց՝ Խորիշահի» (Պատմութիւն տիեզերակեան, Մտակվա, 1861, էջ 184): Այս Վախտանգներն են Մխիթարի ժամանակակիցը, որովհետև մահացել են 1214 թ., մի տարի ուշ Մխիթարից, ուստի փնտրելի Վախտանգը նրանցից մեկն է: Ակնհայտ է, որ Կիրակոսի նշած Վախտանց Տանկիկը և Վարդանի հիշած Վախտանց Սակոեանցը նույն անձն են:


Մատենադարանի ձեռագրերից մեկում կա հետևյալ հիշատակարանը. «Աստանար յանկ ելեալ կատարեցաւ հրաշապատում մատենիս այսորիկ սրբոյ աւետարանիս հրամանաւ և ծախիւք բարեւէր և աստուածահաճոյ առն Վախտանգա որդու շասանա որդոյ Վախտանգա և քրիստոսաւէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի...» ձեռագիր № 378, ք. 308 ա. առաջին անգամ հրատարակել է Հ. Օրբելին, տԻՍ, Асан Джалал, князь Хаченский, Известия Императорской Академии Наук, СПб, 1909, էջ 408—409): Այս Վախտանգի հոր անունը ևս Հասան է, իսկ պապի անունը նույնպէս Վախտանգ: Թեքեւ այդ է պատճառը, որ ակադ. Հ. Օրբելին բուլղարովին չփոխել է այս երկու Վախտանգներին: Ըստ Հ. Օրբելու «1142 թվականից Խաչնը զլիսավորում էր Հասանը, Սակո Վախտանգի որդին... Այդ Հասանը 1152 թ. ամուսնացավ Մամախաթունի՝ Կյուրիկի թագավորի դստեր հետ... 1182 թ. Հասանը կնոջ հետ վանք մտավ, թողնելով վեց տղա... Նրա տղաներից մեկը՝ Վախտանգը, կոչված Տոնկիկ կամ Տանկիկ, Ներքին Խաչնի տերը, ամուսնացավ Խորիշահի՝ Սարգիս մեծի դստեր հետ... (նշվ. աշխ. էջ 406—407):

Այստեղ տարբեր մարդիկ են համարված Վախտանց Սակոեանն ու Վախտանց Տանկիկը, և վերջինը համարվել է առաջինի թոռը, ըստ որում պապին և թոռին կապող հայր Հասանն էլ ներմուծվել է բուլղարովին այլ բնամանիքից: Ըստ Հ. Օրբելու, որ ճիշտ չէ, Մխիթարին հյուրընկալող ու հովանանավորող Հասանն ու Վախտանգը եղել են Տանկիկն ու նրա հայրը (նշվ. աշխ. էջ 408):

Վախտանգներից մեկը տերն էր Հաթերքի (վկայում են Մխիթարը, Վարդանը և այլ փաստեր), մյուսը իշխում էր Ներքին Խաչնում: Առաջին Վախտանգը, որ շօնի մականուն, ամուսնացել է Արզուխաթունի հետ, փեսան էր Քրդի, մյուսը, որի մականունն է Տանկիկ կամ Սակոեանց, ամուսնացել էր Խորիշահի հետ, փեսան էր Զաքարեի և Իվանեի:

Դարի վանքի 1182 թ. արձանագրութուններից մեկը վկայում է. «Կաանաւ աստուծոյ ևս Հասան որդի Վախտանկայ տէր Հաթերքու և Հանդարերդու, Խաչնաբերդու և Հաւքայաղացի, կացի յաւազութեան ամս Խ. շատ պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց օգնութեամբն Աստուծոյ, և եղին ինձ վեց որդի. զրեզդերս և զգաւառս ետու նոցա և ես եկի ի վանքս մաւտ իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս և եղէ կրանատր...» (Շանխարունյան, Ստորագրութիւն..., հ. Բ, էջ 361—362, Զալայյանց, Ճանապարհորդութիւն, մասն Ա, էջ 205): Նույն վանքի նույն թվականի մի այլ արձանագրութիւն. «Ես՝ Մամայ թագուհի, ամուսին Հասանայ, դուստր Կուրիկայ թագաւորին, կացաք յաւազութեան ամս է: Ես և այր իմ թողեալ զհայրենիքս որդոց մերոց եկաք ի վանքս մաւտ տէր Գրիգորիս և որդին մեր համանուն նորին և զզեցաք զձև միանձանց...» (նշված աշխատութիւններ, էջ 362, էջ 205): Այս Հասանն, ուրեմն, իր կնոջ՝ Մամայի հետ վանք է մտել: Քանի որ Դատաստանագրքի հիշատակարանը զրվելու ժամանակին նախորդող մտակա տարիներին վանք մտած ուրիշ Հասան հայտնի չէ, ուստի հիշատակարանում նշված «կրօնաւորեցեալ» Հասանն ու այս Հասանը պետք է նույն անձը լինեն (հիշատակարանի համապատասխան հատվածի Ա խմբագրութիւնում, հավանաբար շիոթմամբ, «կրօնաւորեցեալ» է անվանված ոչ թե Հասանը, այլ նրա հայր Վախտանգը): Մեզ հետաքրքրող Վախտանգի ծննդաբանութիւնը պարզելու առումով արձանագրութուններիս առնչվում է նոր Գետիկի մի արձանագրութիւն. «Ե ՈՅ (1191) զվնի Գ ամաց առնլո զՊրուսաղէմ Սալահոնին սկսեալ եկեղեցիս սուրբ ի նորս Գետիկ և կատարի յամս Ե...» ձեռամբ վարդապետին Մխիթարա... ձեռնադրութեամբ բարեպաշտ իշխանի Վախտանգա և նորին զուգակցի Արզու Խաթունի և նորին եղբարցն Սըմ-

պատա, Վասակա, Խոլդեա, Գրիգորիսի և նոցին զաւակացն լիցի նոցա պատարագ... յԴ աւուրսն բայց զԱ շասանա հար Վախտանգա և զԱ մար նոցին Մամին...» (Հ. Զաւա-  
 փաղաղյան, Մխիթար Գոշը և Նոր Գետիկ վանքը, Աշխատություններ Հայաստանի պետա-  
 կան պատմական քանդաւանի, Ե. Ա. Երևան, 1948, էջ 157—158. տե՛ս նաև Զաւալյանց,  
 մ. Ա, էջ 140): Այս արձանագրութիւնները, Գանձակեցու հաղորդած տեղեկութիւնները  
 և այլ փաստերի հիման վրա կարող ենք կազմել Վախտանգեանցի մեկի ծննդաբանութիւն  
 հետևյալ հատվածը:



Այս Վախտանգեանցի ընտանիքն է հիշատակարանում նշվածը: Առ այդ ուշադրութեամբ են ար-  
 ժանի հետևյալ փաստերը: Դատաստանագրում հիշված Վախտանգը Հաթերքի տեղն է:  
 Գիտենք արդեն, որ նշած Վախտանգեանցի Հաթերքի տեղը առաջինն է, ոչ Տանկիկը: Գի-  
 տենք նաև, որ Նոր Գետիկի Ս. Աստվածածնի եկեղեցին Մխիթարը կառուցել է Վախտանգի,  
 նրա եղբայրների և կնոջ՝ Արզուխաթունի «ձեռնառուութեամբ»: Այս Վախտանգը ևս առաջին  
 Վախտանգն է, ոչ Տանկիկը կամ Սակոեանցը: Գանձակեցին շի նշում առաջին Վախտանգի  
 տղաներին: Պատճառը, թերևս, այն է, որ ինչպես ասում է Վարդանը, նրա որդիք մահա-  
 ցել էին տարածամ: Դա հաստատվում է Արզուխաթունի 1214 թ. արձանագրութեամբ.  
 «... Ես Արզու խաթուն... ամուսին Վախտանգայ թագաւորազնոյ տեառն Հաթերքոյ և  
 ամենայն վերին խաչնոյ... շինեցի զուրբ կաթողիկէս ի տեղոշ հանգստարանի առն  
 իմոյ և զաւակաց իմոց Հասանայ սնդրանկին իմոյ և Գրիգորի՝ որ ի Տէր կէսաւրեայ  
 վաղճանելոյ... Զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի թուրքաց պատերազմին... և զկնի  
 երկց ամաց գիրտուէր որդին իմ գրիգորն... փոխեցաւ առ Քրիստոս» (Քարթլոստառե-  
 անց, Արցախ, էջ 204, տե՛ս նաև Շահխաթունյան, Բ, 356—358): Հիշատակարանից զի-  
 տենք, որ Վախտանգի հայր Հասանը «կրօնատրեցեալ» էր: Դա հաստատվում է Հասանի ու  
 նրա կնոջ՝ Մամայի արձանագրութիւններով: Բայց այս Հասանը առաջին Վախտանգի  
 հայրն է և ոչ Տանկիկ Վախտանգի: Դատաստանագրի վեներիկում պահանջ հնազույն օրի-  
 նակը նվիրվել է սելջուկաց իշխանին Վախտանգայ՝ որդւոյ Հասանայ: Նույն ձեռագրի  
 վերջում կա հետևյալ հիշատակարանը. «Յս. Քս, յորժամ գաս ի նորոգել գերկիւր, նորոգեա  
 հոգով եւ մարմնով զաստուածաէր իշխանն իշխանաց զՎախտանգ և զամուսին իւր  
 զԱրզու խաթունն ի կեանս անմահս, և ի ներկայիս ւսոսնց փորձանաց պահեսցես գա-

ակաւք հանդերձ...»: Գառաստանագիրքը նվեր ստացած և այս հիշատակարանում նշված Վախտանգը Արզուխաթունի ամուսինն է, հետևապես ոչ Տանկիկը: Բերված և մի քանի այլ փաստեր, թվում է, հաստատապես վկայում են, որ Գառաստանագրքի հիշատակարանում նշված Վախտանգը՝ Մխիթարի հովանավորողներից մեկն ու բարեկամը, Վերին Խաչենի տեր, Արզուխաթունի ամուսին, Քրդի փեսա Վախտանգն է և ոչ թե Զալալյանների տոհմի հիմնադիր Հասան Զալալի հայր, Խորիշահի ամուսին, Զաքարի ու Իվանների փեսա Վախտանգ Տանկիկը, ինչպես ոչ Ճիշտ նշում է Ն. Օրբելին: Հիշատակարանում նշված Վախտանգին Ճիշտ են որոշել Վ. Բաստամյանը (ծանոթագր. № 126), Բարխուդարյանը (Արցախ, Բաքու, 1895, էջ 426), Ն. Աճառյանը (Անձնանունների բառարան, հ. V):

33. (Ա) Եւ կողմանցն կիւղիկեայ մեծի իշխանին Ռուբենի (էջ 25)՝  
(Բ) մեծի իշխանին Ռուբէնին (էջ 73)

Վ. Բաստամյանը այս Ռուբենի մասին գրում է. «Ռուբեն Բ մեծ իշխան հայոց» (ծանոթագր. 128, էջ 73): Նա հավանաբար հաշվի չի առել իրական Ռուբեն երկրորդին, որովհետև նա անշահասա էր երբ անցավ իշխանությունը զուլփ և իշխեց միայն մեկ տարի (1169—1170) և 1170 թ. էլ մահացավ: Հիշատակարանում նշվածը Ռուբեն երրորդն է, որ իշխել է 1175—1185 թթ. 1185 թ. Անտիոքի իշխան Ռեյնալդը ուխտադրժորեն նրան գերի վերցրեց: Բայց շուտով նա ազատվեց գերութունից և իշխանությունը հանձնելով իր եղբայր Լևոն երկրորդին՝ թագավորության հիմնադրին, մտավ վանք և մեռավ 1187 թ. (տե՛ս Դ. Գ. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 130, 140):

34. (Ա) ...յամի, յորում մեզաւ յաղբող քաղաւորն Վրաց Գեաւրգն (էջ 25):

Թագավորել է 1156—1184 թթ. Թամար թագուհու հայրն էր: Մեծապես հարգում էր ժամանակի աջի բնկող հայ մտավորականներին, մանավանդ՝ խաչատուր Տարոնացուն (Կիրակոս Գանձակցի, Պատմություն Հայոց, 1961, էջ 211):

35. (Ա) Ի հայրապետութեան տեառն Գրիգորի Հայոց Մեծաց (էջ 25):

Գրիգոր Տղա կաթողիկոսն է, որը զահակալել է 1173—1193 թթ.

36. (Ա) Ի դիապետութեան տեառն Ստեփաննոսի տանս Աղուանից, չաշխարհիս Առանայ (էջ 25):

Տե՛ս ծանոթագր. № 7,8:

37. (Ա) Ի ճահանգիս, որ կոչի մայրաֆղափին Գանձակայ, յանապատի եւ յեղբայրանցու անուանեալ Գասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնալոյմն մեծաստեղին կոչեցելոյ Հռոմաշէն (էջ 25):

Գանձակ նահանգը այդպես է կոչվել Հայաղվանքի հին Գանձակ քաղաքի անունով և բնդգրկում էր պատմական Արցախ և Ուտիք նահանգների որոշ մասերը: Գասնո և Հոռոմաշեն անապատները գտնվում էին նահանգի՝ հետագայում Այրում կոչված գավառում տե՛ս Ա. Ալիշան, Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 95):

38. Ա հողավոր բստ խմբագրութունների ուշագրավ տարբերություններ ունի՝ մասնավորապես դատավորների վարձատրման սկզբունքների, աղբյուրների և շահերի վերաբերյալ, որ բերում են ստորև:

ԱՐ

Զի հարկաւոր իսկ է դատաւորաց յազգարս աշխատութեան դատաստանին թողակրս մտից լինել, զի մի՛ անպտուղ գործն նոցա կարծիցի, եւ տաղտկացեալ ի բաց կայցեն ի դատելոյ:

Եւ զի այժմ ոչ ունիմք թագաւոր եւ իշխան, զի այսպիսի բարեկարգութիւն ի ձեռքս նոցա լիցի, զայտոսիկ ի հայրապետէ մերմէ յցոյս, զի նա է զլուս դատաւորաց եկեղեցւոյ (Ա՛ էջ 26, Բ՛ էջ 82):

Գ

Զի պարտ է, որ դատաւորք հոռք և պարգնք ունիցին ի թագաւորաց, զի մի ձանձրացին ի դատելոյն. գնոյն և եկեղեցոյ դատաւորքն, որ են եպիսկոպոսք, պարզես մեծամեծ կայցին ի կաթողիկոսէն լիապէս, զի մի յազգս աղբատութեան թիւրեցեն զուղիղ դատաստանս Աստուծոյ (էջ 299):

ԱԲ

Ձի թէ մեռանիցի այր ոք, և ուստր ոչ իցլ նորա, և ոչ դուստր, և ոչ այլ ոք ի ցեղէ հարց նորա, ժառանգութիւն նորա դատաւորաց լիցի թողակ, զի ինքեանք կերակրեսցին և հոգեւորապէս ի գործ յեկեղեցի արկանիցեն (Ա՛ էջ 26, Բ՛ էջ 82):

ԱԲ

Ձի եթէ ի սեփհական վիճակի իցէ վախճանիս անժառանգ, հայրապետին եղիցի ժառանգութիւնն, և եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ՝ յերիս բաժանեսցի՝ հայրապետին, և եպիսկոպոսին, և բահանայից ժողովրդեանն: Եւ եթէ վարդապետ ոք ի նահանգին իցէ և զնոյն աշխատութիւն կրէ դատաստանի, մասն լիցի և նմա, նովին շարիով՝ այլոցն (Ա՛ էջ 26, Բ՛ էջ 82—83):

Դատաստանագրքի այս հորվածի համաձայն դատավորը պետք է վարձատրվի: Վարձատրման ընդհանուր սկզբունքը հետևյալն է. եկեղեցական դատավորները պետք է վարձատրվեն հոգևոր իշխանութիւն կողմից, աշխարհական դատավորները՝ մարմնավոր:

Հոգևոր դատավորներին ի վարձատրութիւն հատկացվում է անժառանգ մեռնողների գույքը: Դժվար չէ նկատել, որ եկեղեցու դատավորներին հատկացվող այդ եկամտը ոչ միայն դիպվածային էր, այլ և աննշան և եթե հնարավոր էր դրանով հոգևոր-եկեղեցական որոշ կարիքներ հոգայ, ապա անհնար էր գոյութիւնն ապահովել: Ուրեմն, պետք է ընդունեն, որ եկեղեցու դատավորների ապրուստի միջոցը տիրազուրկ ժառանգութիւններ չէր, շիրավի, գիտենք, որ եկեղեցու դատավորներն էին կաթողիկոսը, եպիսկոպոսը (նաև վարդապետը), քահանան (տե՛ս ժանոթագր. № 44): Սրանք միայն դատավորներ չէին, այլ ընդհանրապէս հոգևոր սպասավորներ, եկեղեցու պաշտոնյաներ միաժամանակ և որպէս այդպիսիք նյութապէս ապահովված էին եկեղեցու միջոցների-եկամտաների հաշվին: Եթե դատավորներ ի վարձատրութիւն տակ Դատաստանագրքում նկատի են առնված եկեղեցու ընդհանուր եկամտաների հաշվին հայթայթվող գոյամիջոցները, ապա ավելորդ էր այն կողմ վարձատրութիւն հատկապէս դատավորական պաշտոնակատարութիւն համար, իսկ եթե դատավորներ ի վարձատրութիւն է համարվել տիրազուրկ ժառանգութիւնը, ապա Դատաստանագրքի հեղինակի համար էլ ակնհայտ էր, որ այն չէր կարող լինել գոյութիւն հիմնական միջոց: Ուրեմն, մնում է ենթադրել, որ եկեղեցու ընդհանուր պաշտոնյաների համար եղել է վարձատրութիւն հատուկ աղբյուր հատկապէս նրանց դատավորական ծառայութիւնների համար:

Դատաստանագրքի ԱԲ խմբագրութիւններին արտաբուստ այն տպավորութիւնն է ըստացվում, որ վարձատրութիւն չի սահմանվում աշխարհական դատավորների համար. «Եւ աշխարհականաց դատաւորաց մի լիցի մասն, զի ոչ բնաւորակնք են դատաւորք, այլ պատահմարք»: Այս փաստը հիմք է դարձել հայագիտութիւն մեջ ընդունված մի տեսակետի և, որը չի համապատասխանում իրականութիւն: Քաղվածքից Վ. Բաստամյանցը (Յոսաւարանութիւն, էջ 124—126, 131 և այլուր), Հ. Կարսաը Kommentar, էջ 34), Խ. Սամուելյանը (Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու ինն հայոց փառաբանական իրավունք, Վիեննա, 1911, էջ 121 և այլուր) և այլք եզրակացրել են, որ Մխիթարի համար թագավորն ու իշխանները պատահական, ոչ-սկզբնական դատավորներ են, որոնց ինչ-որ շարիով միայն լրացուցիչ, օժանդակ դատական դեր է տրված, որ աշխարհիկ դատավորների դերը հայ իրավունքում ու կյանքում երկրորդական է եղել: Քաղվածքում, սակայն, խոսքը ոչ թե անհասարակ աշխարհական դատավորների՝ թագավորի, իշխանների, տանուտերերի կամ աշխարհականներից հատկապէս նշանակված պետական-պաշտոնական դատավորներին մասին է, այլ աշխարհականներից ընտրվող այն դատավորների, որոնք իրավունքի պատմութիւն մեջ հայտնի են միջնորդ դատավոր անունով: Մխիթարի համար թագավորն ու իշխանները նույնքան իսկական ու բնական դատավորներ են, որքան և հոգևոր դատավորները: Որ ԱԲ խմբա-

Գ

Եթէ մեռանիցի այր ոք և ուստր ոչ ունիցի, և ոչ դուստր, և ոչ այլ ոք ի ցեղից հարց նորա, ժառանգութիւն նորա եպիսկոպոսաց լիցի (էջ 299):

Գ

Ձի եթէ ի կաթողիկոսի վիճակ եղիցի անժառանգ վախճանեալն, կաթողիկոսին եղիցի ինչքն, և եթէ յեպիսկոպոսի՝ եպիսկոպոսն երեք բաժին առնէ զինչս մեռնոյն և զմինն իւրն առցէ, և զմիւսն կաթողիկոսին տացէ, և զմիւսն այլ՝ քահանայիցն: Եւ թէ թիմին վարդապետ կայ, ի վեց բաժնեն, զմինն նմա տան և զայլըն ապա երեք բաժին արացցեն (էջ 299):

Դատաստանագրքի այս հորվածի համաձայն դատավորը պետք է վարձատրվի: Վարձատրման ընդհանուր սկզբունքը հետևյալն է. եկեղեցական դատավորները պետք է վարձատրվեն հոգևոր իշխանութիւն կողմից, աշխարհական դատավորները՝ մարմնավոր:

Հոգևոր դատավորներին ի վարձատրութիւն հատկացվում է անժառանգ մեռնողների գույքը: Դժվար չէ նկատել, որ եկեղեցու դատավորներին հատկացվող այդ եկամտը ոչ միայն դիպվածային էր, այլ և աննշան և եթե հնարավոր էր դրանով հոգևոր-եկեղեցական որոշ կարիքներ հոգայ, ապա անհնար էր գոյութիւնն ապահովել: Ուրեմն, պետք է ընդունեն, որ եկեղեցու դատավորների ապրուստի միջոցը տիրազուրկ ժառանգութիւններ չէր, շիրավի, գիտենք, որ եկեղեցու դատավորներն էին կաթողիկոսը, եպիսկոպոսը (նաև վարդապետը), քահանան (տե՛ս ժանոթագր. № 44): Սրանք միայն դատավորներ չէին, այլ ընդհանրապէս հոգևոր սպասավորներ, եկեղեցու պաշտոնյաներ միաժամանակ և որպէս այդպիսիք նյութապէս ապահովված էին եկեղեցու միջոցների-եկամտաների հաշվին: Եթե դատավորներ ի վարձատրութիւն տակ Դատաստանագրքում նկատի են առնված եկեղեցու ընդհանուր եկամտաների հաշվին հայթայթվող գոյամիջոցները, ապա ավելորդ էր այն կողմ վարձատրութիւն հատկապէս դատավորական պաշտոնակատարութիւն համար, իսկ եթե դատավորներ ի վարձատրութիւն է համարվել տիրազուրկ ժառանգութիւնը, ապա Դատաստանագրքի հեղինակի համար էլ ակնհայտ էր, որ այն չէր կարող լինել գոյութիւն հիմնական միջոց: Ուրեմն, մնում է ենթադրել, որ եկեղեցու ընդհանուր պաշտոնյաների համար եղել է վարձատրութիւն հատուկ աղբյուր հատկապէս նրանց դատավորական ծառայութիւնների համար:

գրութիւններում խոսքը ոչ թէ «բնական», այլ միջնորդ դատավորների մասին է, հաստատում է, ի թիվս այլ փաստերի, նաև ԱԲ և Գ խմբագրութիւնների համադրութիւմը:

ԱԲ

Գ

Իսկ աշխարհականաց դատաւորաց մի լիցի մասն, զի ոչ բնաւորականք են դատաւորք, այլ պատահմամբ: Զի թէ ոք զըզկնի վճարման դատաստանին, տեսեալ զաշխատութիւն նոցա, տացէ ինչ նոցա, այնու շատացին, այլ մի ինչ արիւնաւոր լիցի նոցա, զի առաջնորդաց արիւնաւորն թողացաւ յաղագս հոգեւոր հատուցմանն (Ա՛ էջ 26—27, Բ՛ էջ 83):

Իսկ աշխարհական դատաւորաց ոչ տան մասն, վասն զի այսօր են և վաղն շին: Ապա եկեղեցոյ դատաւորք հայրք են հոգոց և մարմնոց և ետքս պարտին հատուցումն անեկ ննջեցեոց: Իսկ սիրոյ աղագաւ, վասն աշխատութեան դատաստանին, տացեն մասն ինչ մարմնաւոր դատաւորաց, այլ ոչ օրինօք, այլ ըստ պատահման (էջ 299):

Ակնհայտ է, որ ԱԲ խմբագրութիւնների խոսքը՝ «զի ոչ բնաւորականք են դատաւորք, այլ պատահմամբ վերաբերում է ոչ թէ ընդհանրապես աշխարհական դատավորներին, այլ միջնորդ դատավորներին, որովհետև Գ խմբագրութիւնում ուղղակի ասված է, որ վարձատրութիւն չպետք է տրվի աշխարհական պատահական դատավորներին և ոչ թէ աշխարհական օրինական դատավորներին: Այլ կերպ՝ Գ խմբագրութիւնը որոշակիութիւն մըտցընելով ԱԲ խմբագրութիւնն ձևակերպման մեջ, հստակորեն զանազանում է մարմնավոր, աշխարհական երկու տեսակ դատավոր՝ օրինական և պատահական: Թվում է, կասկած չի կարող լինել, որ «բնաւորական», «օրինօք» դատավորը թագավորն է, իշխանը կամ նա, ով կոչված է ի դատավորութիւն օրնքով, իշխանութիւն կամքով և ոչ թէ երկու մարդու ցանկութիւմը: «Ըստ պատահման» դատավորները նրանք են, ովքեր «այսօր են և վաղն չեն», սրանք հենց միջնորդ դատավորներն են: Հնում եղած սովորութիւն համաձայն վիճող կողմերը կարող էին և երբեմն դիմում էին, ոչ թէ ի պաշտոնն դատավորներին, այլ փոխադարձ համաձայնութիւմը իրենց համար դատավոր էին ընտրում տեղի մարդկանցից: Այս անձը դատավոր էր միայն սովյալ գործով և վեճը լուծելուց հետո ինքնաբերաբար պաշտօնավոր էր լինում: Սրանք «բնաւորական» դատավորներ չէին, այլ՝ «պատահական», և Գ խմբագրութիւնը ճշտադուրս բնութագրել է նրանց որպէս դատավորներ, որ «այսօր են և վաղը չեն»: Միջնորդ դատավորները իրենց ծառայութիւնների համար պաշտօնապես չէին վարձատրվում ո՛չ իշխանութիւնների և ո՛չ էլ ընտրողների կողմից: Ուստի պատահական չէ, որ մեր Դատաստանագիրքը ևս նրանց վարձատրութիւն չի սահմանում:

Դատաստանագիրքը վարձատրութիւն է սահմանում աշխարհական պետական-պաշտօնական դատավորների համար: Աշխարհական այս դատավորները՝ թագավորը, իշխանը, գեղջավազը նյութապես ազատված իին անկախ դատավորի համար սահմանված վարձատրութիւնից: Բայց, եթէ Դատաստանագիրքը վարձատրութիւն է սահմանում հատուկպես նրանց դատավորական ծառայութիւն համար, պետք է որ նկատի ունեցած լինի վարձատրութիւն որոշ աղբյուր: Այս հոդվածում այդ աղբյուրը չի նշված: Բայց հաջորդ հոդվածը և որոշակի տեղեկութիւններ, որոնք վերաբերում են մի փոքր ավելի ուշ ժամանակաշրջանի, թույլ են տալիս նշելու այդ աղբյուրը:

Բ հոդվածը թագավորական դատարանին ընդգատյալ գործերով սահմանում է տուգանք դատապարտալից հօգուտ թագավորի: Դրանով փոխհատուցվում էր թագավորի այն ծառայութիւնը, որ նա մատուցում էր արդարատութիւն իրականացմանը:

Քանի որ հայկական դատարանային համակարգի առաջին դատարանի համար դատավորի վարձատրութիւն սկզբունք վերահիշյալ էր, ապա այդպես պետք է լինէր նաև հաջորդ օղակների դատավորների համար: Դատաստանագրքում թեև չկան փաստեր այդ մասին, բայց Հովհաննես Մործորեցին և Գրիգոր Տաթևացին հաղորդում են անհրաժեշտ տեղեկութիւններ:

Հովհաննես Մործորեցին, մեկնելով Մատթեոսի Ավետարանի հայտնի հատվածը, որտեղ կոչ է արվում վիճող կողմերին հաշտվել և զործը շհասցնել դատարան, բացատրում է, որ հակառակ դեպքում պատասխանողը «բնավին կաղքատանա» «մինչև ցնտին դանգն տուգանս տալով զիրաւունս ոսոխին, զոր ոչ խորհեցար նախ, և զդատաւորին և զպատաւորաց նորին» (Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի... Կ. Պոլիս, 1825, էջ 116): Ըստ այսմ՝ դատարանի կողմից անիրավացի ճանաչված կողմը, մյուս կողմի վնասը փոխհատուցելուց բացի, տուգանք էր վճարում նաև դատավորին:

Գրիգոր Տաթևացին իր քարոզներից մեկում ասում է. «Եւ զինչ իցէ հնար գողին: Այն՝

զոր յօրէնսն հրամայէ աստուած. եթէ գտցին զողունիքն ի ձեռս զողին և բմբոսն, միոյն կրկին առնուն ի զողէն և տան զմին ի տէր ընշիցն և զմին՝ իշխանին և զանեալ թողցնու իսկ թէ Կերեալ լինին զողունիքն, և զտանի գողն, միոյն շորս կամ հինգ առնուն ի զողէն և տան ի տեսարս և իշխանն» (Պիտի Բարոզութեան որ կոչի Ամառան ճատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 26): Տաթևացին ևս վկայում է, որ դատապարտալից զանձվում էր հատուկ տուգանք հօգուտ իշխանի:

39. Բ հողվածք ևս ըստ խմբագրութիւնների բազմաթիվ ու կարևոր տարբերութիւններ ունի, որոնք վերաբերում են, մասնավորապէս, պետական և քրեական իրավունքներին և որոնք բերում ենք ստորև:

Ա	Բ	Գ
Իսկ երկրորդ դիցուք զըզատաստան թագաւորաց, զի թէ եւ մեր ոչ է, յաղագս յարմատեթեան եղաք զըզատաստան նոցա (էջ 28):	Իսկ երկրորդ նմին կարգեսցուք զըզատաստան թագաւորի եւ իշխանաց եւ ամենայն աշխարհականաց (էջ 299):	Իսկ երկրորդ դիցուք զըզատաստանս թագաւորաց (էջ 300):

Պ	Պ
Սակայն թագաւորք այնոքիկ անուանին, որք ազգաց իւրեանց տիրեն համանգամայն (Բ՝ միանգամայն) եւ յայլոց հարկս (Բ՝ հարկ) առնուն յազգաց, եւ եթէ ոչ՝ ոչ հարկիցին (Ա՝ էջ 28, Բ՝ էջ 300):	Պ

ԱԲ	Պ
Եւ եթէ պատահիցի ուստերս լինել նմա եւ դատերս, զոյգ եւ արդար զվիճակ թագաւորութեանն բաժանիցէ (Ա՝ էջ 28, Բ՝ էջ 300):	Արդ, եթէ պատահի թագաւորի մեռանել և ունիցի ուստերս և դատերս, պարտ է զիւնչսն հաւասար բաժանել (էջ 301):

ԱԲ	Պ
Եւ եթէ դուստր իցէ նորա, եւ հասպտութեան տուն կարգեսցէ հանդերձ արամբն, կէս եղբարւ մասն առցէ (Ա՝ էջ 28, Բ՝ էջ 300):	Եւ եթէ դուստր իցէ նորա, կէս եղբոր մասն առցէ, հանդերձ արամբն (էջ 301):

ԱԲ	Պ
Եթէ շիցէ բնաւին ժառանգ ի ցեղէ հարց, իշխան լիցի տալ զթագ իւր արտարի... (Ա՝ էջ 29, Բ՝ էջ 303):	Եւ թէ շիցէ բնաւ ժառանգ ի ցեղէ հարց մինչև ի շորբորդ զարմն, իշխան լիցի տալ զթագ իւր օտարի... (էջ 301):

ԱԲ	Պ
Իսկ եթէ ի տանէ հարւ նորա իցեն ժառանգք, որք մերձաւորք իցեն՝ նոքա լիցին: Եւ յորդուց թէ իցեն, զմի առ ինքն կալցի, ի բացեալ միշտ եւ զայլսն, մինչ զմին ժառանգեցուցանէ զանկաւորն, հետի բնակեցուցէ, որպէս եւ զայս սովորութիւն կալան ատաշխնքն թագաւորք: Այս իրաւունք դատաստանի յապացեալս ամենայն եղիցի իշխանաց եւ ազատաց միտնգամայն (Ա՝ էջ 29, Բ՝ էջ 303—304):	Պ

ԱԲ	Պ
Եւ եթէ շինիցէ քաղաք և կամ դղեակ, և աշխարհազիր եթէ առնիցէ, և եթէ դա-	Եւ եթէ շինիցէ քաղաք կամ բերդ, և թէ աշխարհազիր առնիցէ, և թէ դահեկան կամ

հեկան եւ զրամ հատանիցէ եւ կամ հատանիցէ, իշխանութիւն կալցի ըստ իրականց դատաստանի (Ա՛ էջ 29, Բ՛ էջ 304):

զրամ հատանիցէ, ինքնիշխան կամ օր արացէ, ըստ օրինաց դատաստանի (էջ 301—302):

ԱՐ

Գ

Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, մի տացէ առնել սպանումն, բայց եթէ որ պատճառ պատերազմին իցէ յայլազգացն (Ա՛ էջ 29, Բ՛ էջ 307):

Եթէ պատահի պատերազմել ընդ այլազգիս հարկաւորաբար, յորժամ սուրն վերասցի, հրաման մի տացէ այլ սպանութիւն առնել (էջ 302):

ԱՐ

Գ

...եւ եթէ ոչ կամիցին գալ, եւ բռնաբար առցէ, զընդդիմացեալսն սպանեալ՝ զայլսն ընդ հարկիւ կալցէ. ապա թէ անձնատուրք լիցին, յայլսն հարկիցին, այլ մի ի գլուխս (Ա՛ էջ 41, Բ՛ էջ 307):

...եւ թէ ոչ կամիցին գալ, և բռնաբար առցէ զթաղաքն, զալնոսիկ, որ ոչ կամէին զլաւազաղութիւն, սրով սպանանէ և զայլսն ընդ հարկիւ ածցէ, ապա թէ և նոքա հակառակին, սատակեսցէ զնոսա, իսկ զգլխատորսն ոչ ևս (էջ 302):

ԱՐ

Գ

...բայց զբրիստոնեայ՝ զղողանն առեալ եւ զինքն, եւ զկին, եւ զորդիսն յազատոհմ եւ ի քրիստոնեայս վաճառեալ, թողցէ: Ապա թէ այս ոչ իցէ, խրատիցի յաշքս կամ ի ձեռս եւ թողցի (Ա՛ էջ 30, Բ՛ էջ 308):

...և զբրիստոնեայ գողն՝ առնուն լիւրմէն զոր գողացեալն է, և զտունն, և զինչըսն, զոր ունի, և զանձն իւր ծախեսցեն և զզինան առցեն և զորդիսն և զկինն ազատեսցեն (էջ 302):

ԱՐ

Գ

Իսկ եթէ սպանանիցէ այլազգի զբրիստոնեայ... ազամայ՝ իրատեսցի ի ձեռս (Ա՛ էջ 31, Բ՛ էջ 312):

Իսկ եթէ սպանցէ այլազգի զբրիստոնեայ... ազամայ՝ կտրեսցեն գաշ ձեռն (էջ 302):

Ա

Բ

Գ

Այլ հանդիպողութեամբ եւ ըստ կարի ի զէպ կարծեմ երեքհարիւր վաթսուն եւ հինգ լինել զին զահեկանի ըստ ժամանակի վարման (էջ 30):

Այլ հանդիպողութեամբ եւ ըստ կարի ի զէպ կարծեմ երեքհարիւր վաթսուն եւ հինգ լինել զին զահեկանի, ոսկի զահեկան, որ լինի երեքասասն զրամ արծաթ ըստ ժամանակին վարման (էջ 309):

Այլ զին մարդոյ ըստ թուոյ աւուրց տարոյ կարծեմ երեքհարիւր վաթսուն եւ հինգ զահեկան ոսկի, և զեկանն՝ երեքասասն զըրամ արծաթ (էջ 303):

ԱՐ

Գ

Բայց տասանորդս յեկեղեցին տացլ (Ա՛ էջ 31, Բ՛ էջ 312):

Բայց թագաւորն ի տասնէն զմինն կաթողիկոսին տացէ յամենայնէ (էջ 303):

ԱՐ

Գ

Եւ գերոյն եւ աւարին կէսն արքայի լիցի, եւ տասանորդեսցէ յեկեղեցիս, եւ ի կիսոյն՝ զաւրացն: Իւրաքանչիւր իշխանք զնոյն բաժին արացսն եւ նոքա եւս նախ տասանորդեսցեն յեկեղեցիս իւրաքանչիւր (Ա՛ էջ 31, Բ՛ էջ 312):

Գերոյն և աւարոյն կէսն արքային լիցի, և կէսն՝ զօրացն: Իւրաքանչիւր իշխանքն զնոյն բաժին արացսն և տասանորդս տացեն յեկեղեցին (էջ 303):

ԱՐ

Գ

Իսկ զողոս թագաւորի եւ իշխանի ոչ վա-

րդս և աւազակս ոչ վայել է թագաւորի

յիչ է, բայց միայն լրտեսու Ապա թէ արտաքոյ իրաւանց կեցնն եւ առաքեսցնն, վասն հրամանին կէսն նոցա լիցի ի մարդոյ եւ յանասնոյ, իսկ եթէ առանց հրամանի երթիցնն, երկու բաժին երթողին լիցի, զի կամաւք ի մահ գիմեցին (Ա՛ էջ 31, Բ՛ էջ 312—313):

և իշխանի, բայց միայն լրտեսու, որ է շաշուշ: Զօրք և իշխանք, եթէ հրամանաւ արքայի յաւար երթիցնն ըստ պատահման անկասկած, կէս աւարոյն և գերոյն արքային լիցի, և կէսն՝ զօրացն, իսկ եթէ առանց հրամանի երթիցնն՝ երկու բաժինն երթողին լիցի, քանզի կամօք ի մահ գիմեցին (էջ 303—304):

Ա

Զարական ի պատերազմի զոք ըմբռնեալ՝ զգեստն եւ զէնքն ամենայն նորա լիցին, ալլ զբահն տեառն լիցի (էջ 31):

Բ

Զօրական ի պատերազմի զոք ըմբռնեալ, զգեստն եւ երիվարն եւ զէնքն ամենայն նորա լիցին, ալլ զբահն տեառն լիցի (էջ 313):

Գ

Զօրական եթէ ի պատերազմի զոք ըմբռնեսցէ, զգեստն, և զէնքն, և երիվարն նորա լիցի, իսկ զբահն՝ թագաւորին (էջ 304):

Ա

Արծաթ յաւարին իշխանացն լիցի, պղինձ եւ երկաթ եւ նմանք նոցա՝ զաւրացն: Գիպակ, կերպաս ամենայն արինակաւ թագաւորին լիցի, եւ ասրեղէն պատուական եւ կտաւ՝ իշխանացն, եւ անարգ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զաւրացն (էջ 31):

Բ

Արծաթ եւ մարգարիտ յաւարին իշխանաց լիցի, պղինձ եւ երկաթ եւ նմանք նոցա՝ զօրացն: Ոսկի, ակունք եւ դիպակ ամենայն օրինակաւ թագաւորի լիցի, և ասրեղէն պատուական եւ կտաւ իշխանաց, եւ անարգ ասրեղէն եւ կտաւեղէն՝ զօրացն (էջ 313—314):

Գ

Ոսկի, ակունք և կերպաս ամենայն կերպիւ, զորս առցնն յաւարի, թագաւորաց բաժին է, իսկ արծաթ և մարգարիտ՝ իշխանաց. նոյն և ասրեղէն պատուական. իսկ անարգ ասրեղէն, և կտաւ, և պղինձ, և երկաթ և ալլ յայսպիսի, զօրացն լիցի (էջ 304):

Ա

Զի արծաթագին անդաստան, եւ այզեստան, եւ բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնգեկին, նմանապէս՝ ջրաղաց եւ տուն (էջ 31):

Բ

Զի արծաթագին անդաստան եւ այզեստան եւ բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնգեկի, նմանապէս եւ ջրաղաց եւ տուն եւ խանութ (էջ 314):

Գ

Զի արծաթագին անդաստան, և այզի, և դրախտ մի լիցի ի նմանէ հնկակ, նըմանապէս և՛ ջրաղաց, և տուն, և խանութ (էջ 304):

ԱՐ

Առնպէս ոստինք, այգիք եւ ծառաստանք (Ա՛ էջ 32, Բ՛ էջ 315):

Գ

Առնպէս այգիք և ծառաստանք (էջ 304):

ԱՐ

Արաւտի հարկ ալլ մի լիցի, զի այն իսկ են արաւտականք, որ հարկին (Ա՛ էջ 32, Բ՛ էջ 315):

Գ

ԻԲ

ԱՐ

Ոշխարք ի գառինսն տասանորդեսցին. թի հաճոյ իցէ տէրոմեհացն՝ ընդ ոշխարի փոխանակիցէ ըստ արծանուոյն (Ա՛ էջ 32, Բ՛ էջ 315):

Գ

Ոշխարք ի գառինս տասանորդեսցեն (էջ 304):

ԱՔ

Գ

Զիռոյ, և չորոյոյ, և իշոյ մի՛ լիցի հարկ, զի նոքաք ըստում անգամ ծառայէ զըտերունիսն (Ա՛ էջ 32, Բ՛ էջ 316):

Զիռոյ, և չորոյոյ, և իշոյ մի լիցին հարկք, միայն պատահմամբ ծառայել նոքօք զըտերունիսն (էջ 304):

40 (ԱԳ) Զի այգպէս մերև (Գ՛ մեծն) արքայ Աբգարիոս կարգեաց զտուն բազաուորսեան Պարսից (Ա՛ էջ 28, Գ՛ էջ 301):

Մխիթարը վկայակոչում է Խորենացու Պատմութիւնը. «Աբգարն արևելք գալով գտնում է, որ Պարսից վրա թագավորել է Արտաշեսը, Արշավիրի որդին և եղբայրները նրան ընդդիմանում են, որովհետև նա կամենում էր ժառանգաբար նրանց վրա թագավորել, իսկ նրանք չէին համաձայնում: Ուստի Արտաշեսը նրանց պաշարել էր և մահվան սպառնալիք արել և այս պատճառով գորթի և մյուս ազգականների մեջ մեծ երկպառակութիւնն և հակառակութիւն էին ծագել: Որովհետև Արշավիր թագավորը երեք որդի և մի դուստր ուներ. մեկն ինքը, Արտաշես թագավորը, երկրորդը Կարեն, երրորդը Արտրեմ, իսկ նրանց թուրքը, որ Կոշմ էր կոչվում, կին էր բոլոր արջաց զորավարին...»

Աբգարը նրանց համոզում է խաղաղանալ և բոլորի մեջ այս կարգն է սահմանում.—կրթագավորն Արտաշեսը իր զավակներով հանդերձ, ինչպես մտադրվել էր, իսկ եղբայրները կկոչվեն Պահլավներ՝ իրենց քաղաքի և մեծ ու պտղաբեր շախարհի անունով և կհամարվեն Պարսից բոլոր նախարարութիւնների մեջ ամենապատվավորները և առաջինները՝ ինչպես իսկական թագավորական սերունդներ: Նաև երգումով դաշինք է հաստատում (Աբգարը) նրանց մեջ, որ էթե Արտաշեսի ցեղից տղամարդիկ սպառովին, թագավորութիւնը նրանց կանցնի» (II, ԲԼ, բարգմանությունը Ստ. Մալխասյանի, 1940, էջ 55—56):

41. (ԱԳ) ....զոր և Սաղմուն երբեմն էած զղշտյն հաբաւոյ, և Տէր իսկ վկայէ (Ա՛ էջ 28, Գ՛ 301):

Այ խմբագրութիւնների բոլոր ձևագրերը, բացի Զէ, ունեն «զոր և Մովսէս...»: Բաստամյանը (Ժանթագր.650) հիմնվելով Զ ձեռագրի վրա (նրան հայտնի չէր է ձեռագիրը) ուղղել է Սողմոնն: Իրավացի է ուղղումը, որովհետև դեպքը, որի մասին պատմվում է. կապված է Սողմոնի հետ (տե՛ս Գ թագ. Ժ, 1. Բ Մնաց., Թ, 1): Ավետարանի վկայակոչումն էլ նույնն է հաստատում (տե՛ս Մատթ., ԺԲ, 42. Ղուկ., ԺԱ, 31):

ԺԶՊ ձևագրերն ունեն. «....զոր և Մովսէս էած երբեմն զղշտյն հարաւոյ, որ և յաւուրս Սողմոնի, զոր և Տէրն իսկ վկայէ...»: Ըհշտ է, այստեղ Մովսէսն ու Սողմոնը դարձել են ժամանակակիցներ, բայց խմբագիրը (զրիշր) ինչ-որ ձևով դեպքը դարձյալ կապել է Սողմոնի հետ:

42. (Ա) Եւ յարգաց թէ իցեն, զմի առ ինքն կայցի, ի բացեալ միշտ և զայսն, մինչ զմին ժառանգեցուցանել զանկաւառն, հեռի բնակեցուցել, որպէս և զայս սովորութիւն կայան առաջինն բազաուր (էջ 29):

Մխիթարը դարձյալ ակնարկում է Խորենացու պատմութիւնը. «Եվ որովհետև շատ որդիներ ուներ (Վաղարշակը, ըստ Խորենացու Արշակունյաց հարստութեան հիմնադիրը.—Խ. Թ.), հարմար գտավ, որ բոլորն էլ միասին իր մոտ շման Մծրինում, այլ նրանց ուղարկում է բնակվելու Հաշտենից գավառը, և նրան սահմանակից ձորը, որ Տարունից դուրս է գտնվում, նրանց է թողնում բոլոր պուղերը, ավելացնելով նաև առանձին եկամուտներ և ուտեստ արթունի (գանձարանից): Միայն իր առաջին որդուն, որ կոչվում էր Արշակ, պահում է իր մոտ, իբրև թագավորութեան հաջորդ, նաև նրա որդուն, որին կոչեց Արտաշես... Եվ այս բանն այնուհետև մինչև վերջը օրենք դարձավ Արշակունի թագավորների համար, որ մի որդին ապրի թագավորի հետ՝ թագավորութեան փոխանորդ լինելու համար, իսկ մյուս որդիներն ու դուստրները զենև Հաշտենից կողմերը, իբրև ցեղի ժառանգներ» (II, Ը, բարգմանությունը Ստ. Մալխասյանի, 1940, էջ 76): Ըստ Խորենացու, Արշակունյաց հարստութեան մեջ գահը ժառանգաբար անցնում էր հորից որդի, հարստութեան հիմնադրման սկզբից: Բայց ինչպես նշում է Հ. Մանանդյանը, «Տրդատ Ա-ի (այսինքն՝ Արշակունյաց հարստութեան հիմնադիրը.—Խ. Թ.) և նրա հաջորդների ժամանակ Հայոց թագավորութիւնը շարժավ ժառանգական նրանց շառավիղների գծով: Արշակունյաց հարստութեան հաստատումը Հայաստանում, այսինքն՝ նրանց թագավորումը որդեցորդի... ըսկըսվել էր միայն երկրորդ դարի վերջերում, և Հայ Արշակունիների զինատախալի հիմնադրն է Վաղարշ Բ-ը: Կարելի է, ուրեմն, ենթադրել, որ Խորենացու Պատմութեան Վաղարշակը,

որը հայ Արշակունիների նախահայրն էր, հիշողություն է ոչ թե Տրդատ Ա-ի կամ պարթև-վական թագավոր Վաղարշ Ա-ի... այլ նորով Ա-ի հայր Վաղարշ Բ-ի» (Քենակյան տեսու-րյուն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 58):

43. (ԱԲԳ, էջք 30, 309, 303) Մարզու կյանքի, արյան գինը Դատաստանագիրքը սահմանում է 365 դահեկան: ԱՐ խմբագրությունները չեն բացատրում, թե որտեղից են վերցրել այդ թվով: Կ խմբագրությունը դա կապում է տարվա օրերի թվի հետ: Թվում է, որ այդ թիվը պետք է կապել մարդու մարմնի բաղադրուցիչ մասերի քանակի մասին հետո պատկերացումների հետ: Գրիգոր Տաթևացին այս կապակցությամբ տրված հարցին պատասխանում է. «Ասեն բժշկը ընէ, 248 ոսկը է մարդուն. շլօք պնտեալ և կապեալ ի մի մարմին... Ոմանք ասեն, 17 գրխա-տոր ջլօքն որ կապին սոքա՝ լինին 365 զօղուածք: Կամ զօղուածք ներքին գլխաւոր անդա-մացրն և արտաքին մարմնոն, որ մորթ և միս և արիւն և ալլքն առ միմեանս յօղին՝ լի-նին նոյնքան: Եւ դարձեալ՝ թիւ ոսկերացն 248 և 12 անդամքն և 5 զգայարանքն յօղեալ առ միմեանս, լինին 365 զօղուածք» (Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 243—244, տե՛ս նաև Բաստամյանց, ծանոթագր. 669): Հին բնագետների պատկերացմամբ, ուրեմն, մարդու մարմինը կազմված է 365 մասերից: Մխիթարը շատ լավ գիտակցում է, որ «գին արեան մարդոյ ըստ արժանույն զնոյ ոչ է», որ մարդու կորուստը ոչ մի գումարով չի կարելի ոչ վերադարձնել և ոչ փոխհատուցել, դի «չարուցանել միայն Աստուծոյ է գմեռեալն»: Բայց գործնական անհրաժեշտությունը պարտադրում է որևէ գին սահմանել մարդու կյանքի հա-մար «հանդիպողութեամբ ևւ ըստ կարի ևւ ըստ ժամանակի վարման»: Մխիթարը գիտնա-կանի օգտին է խոսում և այն, որ նա մարդու արյան գինը սահմանելիս ցուցաբերում է ոչ թե ենթակաշական մոտեցում, այլ առարկայական հիմքեր է փնտրում: Ընդէս է, այդ հիմքը այսօրվա ըմբռնմամբ կարող է թվալ ոչ-գիտական, ոչ-իրավագիտական, բայց ժամա-նակի պատկերացումների համաձայն այն լիովին գիտական էր և միանգամայն առարկա-յական: Ըստ այդմ, նա մարդու մարմնի մասերից յուրաքանչյուրը զնահատում է մեկ դու-հեկան և արյան գինը, այդ մասերի գումարով, 365 դահեկան:

Արդ, փորձենք պարզել դահեկանի արժեքը և իրական գնորունակությունը Մխիթարի ժամանակ, որովհետև միայն այդ կերպ հնարավոր կլինի պատկերացնել, թե որքան բար-ձր էր զնահատվում արյան գինը: Վ. Բաստամյանցը այսպես է որոշել դահեկանի ար-ժեքը. «Արդ թե մեր հայոց հին դրամը հավասար համարենք հունաց դրամին, որ մոտա-վորապես հավասար է այժմյան ֆրանսիական մեկ ֆրանկին կամ ռուսաց 24 կոպեկին, հողվածին մեզ հիշած ոսկի դահեկանը հավասար կլինի... 13 ֆրանկին կամ... 312 կո-պեկին... իսկ եթե ըստ այլոց հաշվենք դրամը հավասար ֆրանսիական 40 սանտիմին, դա-հեկանը հավասար կլինի... 5 ֆր 20 սան.» (Ծանոթագր. 669): Բայց, ինչպես ճիշտ կեր-պով նշում է Թ. Ավարբեկյանը, «թանկագին մետաղների միջնադարյան ու այժմյան կր-չիտներն արևելի տեսակետից նույնացնելը տեսակետորեն սխալ է: Անհրաժեշտ է հաշ-վի առնել թանկագին մետաղների արժեքի փոփոխությունները, որոնք նրանց արտադրու-թյան ասպարեզում կիրառվող աշխատանքի արտադրողականության այս կամ այն աս-տիճանի հետևանք են: Միջնադարում ոսկու և արծաթի հարաբերությունը եղել է 1 առ 10: Նոր դարում արծաթի արժեքն ընկել է, այսինքն՝ քիչ աշխատանքով ավելի շատ արծաթ է արտադրվել: Այս նշանակում է, որ միջնադարի 1 գրամմ արծաթն այժմյան արծաթի 1 գրամմին չէ հավասար, այլ ավելի շատ արծաթի: Փրիդըիխ էնգելսի ասելով XIX դարի վերջին տասնամյակում արդեն ոսկու և արծաթի հարաբերությունը հասել էր 1 առ 22-ի: Ուրեմն միջնադարի 1 գրամմ արծաթը հավասար էր 2,2 գրամմ արծաթի» (Մի գաղտնիք հայ վիճակյան արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տրեռն-սական զարգացման պատմության համար, Հ. Ս. Խ. Հ. Գիտության և Արվեստի ինստի-տուտի Տեղեկագիր, № 2, Երևան, 1927, էջ 71): Այս տարբերությունը նկատի ունենալով հանդերձ, այնուամենայնիվ նպատակահարմար չէ դահեկանը վերածել այսօրվա ռուբլու, դոլլարի կամ ֆունտ ստեյնիզի, որովհետև դրանով ղեռ հատակ պատկերացում չի ըստեղ-ծովի դահեկանի գնորունակության մասին Մխիթարի ժամանակ: Այդ պատճառով Հայաս-տանում գործող դահեկանը պետք է համեմատվի ժամանակին այլ երկրներում գործող ոսկե-դրամների հետ և, որ մանեից կարևորն է, ոչևտք է փորձ արվել պարզելու, թե ինչ կարելի էր գնել մեկ դահեկանով:

Դատաստանագրքի Բ խմբագրության հողվածներից մեկում (II, 62) ասված է. «Ոսկի դե-կանն վեց դանգ է. պօպատ դեկանն երեք դանգ. թասուն ի դանգին շորիցն մին»: Այս հատ-վածը եթե նույնիսկ ընդմիջարկում համարենք, միևնույն է այն մնում է որպես ԺԲ-ԺԳ դա-

րերի փաստը, ուստի կարող է կարեւոր կոման դառնալ Դատաստանագրքում նշված դահեկանի արժեքը որոշելու համար: «Պօպատի»-ի հիման վրա դահեկանի արժեքը պարզելու փորձ են արել Ք. Ավդալբեկյանը և Ն. Մանանդյանը (Բաստամյանց Ն: 784 ծանոթագրության մեջ առում է, որ այդ բառն իրեն անհասկանալի է):

Մեր Մատենադարանի Ն: 7735 ձեռագրում, ընդօրինակված 986 թ., որը հայտնի է Սանատարյան ազիտարան անունով, խիստ արժեքավոր վկայություններ են պահպանվել «պատատ»-ի մասին (տե՛ս Ն. Աճառյան Յուզակ հայերեն ձեռագրաց Սանատարյան վարժարանի Կարին, Վիեննա, 1900, էջ 1—3):

Այդ ձեռագրի այլևայլ էջերում պահպանվել են գրառումներ, իրոք, «գեշ գրված և դրժվարքն թեռնելի ու սխալագիր, բայց համենայն դեպս հին, և կերևա թե թորթումն են» (Ն. Տաշյան, Հայ քննադպրուցը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 66): Դրանք գործարքների գրառումներ են, որոնք կարելի է թվագրել Մխիթարի ժամանակաշրջանով (մեր ձեռագրերում գրառված գործարքների մասին տե՛ս 1. Նաչիկյան, Տեսնակական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և հրանց աղբյուրագիտական եղանակույթունը, Բաքեր Մատենադարանի, Ն: 5, էջ 212—243): 1. «որ այլ առևլ ո (պետք է կարդալ ու, ինչպես որիշ դեպքերում է- ի. Ք.) լսեր կպոստիմու տամ (՛) ճ. պոտ» 2. Մանանդյանը իրավացիորեն ուղղում է՝ լսեր է պոստիմոն տամ): 2. «ճ: պոտատ լումն եզ: տայ որ առևլ ու լսեալ էր»: 3. «Գ: մաղ: հաց: տվար: Բ: կապին: ի պատատնէր: ու մարգերս առար:» (Ն. Մանանդյանը ուղղել է՝ ի պատատնէր, թեև կարելի է կարդալ նաև Ի պատատնէր-ի. Ք.): 4. «Գ: պատատ փողոցին արտին ենք տվել» (Ք. Ավդալբեկյանի հոդվածի մեջ տպված է՝ պոտատ, որ նշել է նաև Ն. Մանանդյանը): 5. «Զ: պատատի դեղին ենք տվել (Ք. Ավդալբեկյանը ուղղել է՝ ի Դեղիկն, որը Ն. Մանանդյանը համարում է հնարավոր, բայց ոչ անվիճելի իր հերթին Ք. Ավդալբեկյանը ընդօրինակել է՝ պատատ, որը նշել է նաև Ն. Մանանդյանը): 6. «Ն: պատատ ի Վասին ենք տվել» (Ք. Ավդալբեկյանը զարձալ ընդօրինակել է որպես պատատ, որը նշել է նաև Ն. Մանանդյանը): 7. «առ առար: Ք: պատատ արտին ու մարգին» (Ք. Ավդալբեկյանը ընդօրինակել է՝ պատատ, որը նշել է նաև Ն. Մանանդյանը): 8. «Սախէցի զարտս ծանխու ու: ծ: ա: պատատ»: 9. Ն. Մանանդյանը իր կողմից ավելացնում է մի փայտ ևս. «Ապա դատարը քաղաքին ձեռք լառաջ տարեալ՝ զոր պատճառանօք բանս ի վերայ եղեալ թէ հինգհարիս պատարս մեաց ինձ առ Աստուճատուն» (Ալիշան, Հայագրություն, էջ 448):

«Պատատ» բառի ուղղագրությունը (և կան նշանակություն է ունեցել նրա ստուգաբանության համար: Դատաստանագրքի նշված հոդվածում բառն ունի «պօպատ» ձևը: Բայց դա պետք է համարել տպագրական վրիպակ, որովհետև թե Վ. Բաստամյանցի համար հիմք ծառայած ձեռագրում և թե մյուս բոլոր գրչագրերում, որոնք պարունակում են այդ բառը, այն ունի «պատատ» ձևը: Ք. Ավդալբեկյանը, վերջ նշված իր շատ արժեքավոր հոդվածում, այսպես է մեկնում «պատատ»-ը: Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան հատվածի դիմաց Սմբատ Սպարապետի Դատաստանագրքը ունի, «Սու ընդհանուր գին արևան քրիստոնէին ԳՃ (= 300)–ի. Ք.) դեկան պեոպեոտ է» (հրատարակութուն Ա. Գալստյանի, Երևան, 1958, էջ 10): Այս պեոպեոտս «բյուզանդական այն ոսկի փողն է, որ ծանոթ է yperperorum sive Bysantiorum, uyperperus կամ սոսկ besand (=բյուզանդ կամ բիզանդ) անուններով: Այս yperperorum-uperperus-besand ոսկին է հենց, որ դարձել է պերպիրատ (=խիպերպիրատ), ապա հավանորեն պեպատ (պի[ր]պի[ր]ատ), հետո հավատի պոպոտ-պօպոտ-պատպատ ու ամենից վերջն էլ պոտատ-պոտատ-պատատ» (Ք. Ավդալբեկյանի նշված աշխ. էջ 49): Ըստ Ավդալբեկյանի, դահեկանը ունի երկու զբաղվող տեսակ, որոնցից մեկը նա պայմանականորեն անվանում է մեծ, սա հենց Մխիթարի նշած ոսկի դահեկանն է, մյուսը՝ պոպատ կամ պոտատ, որը առաջինի կեսին է համասար: Արդ, եթե Ք. Ավդալբեկյանի պոտատ դահեկանը պեպեպեոտ է, ապա սա պարունակում էր, ըստ Սերաստյանի (Description general des monnaies byz., I, 55) 4,49—4,53 գրամ ոսկի, բայց այլոց՝ 4,26—4,54 (տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 378—385, Մանանդյան, ստորև նշվող հոդված, էջ 70, E. A. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, выпуск VI, Баку, 1954, էջ 37—44): Ուրեմն, մեծ դահեկանը պարունակում էր շուրջ 9 գրամ. ոսկի: Բայց, Մխիթարի դարաշրջանում (և դրանից առաջ ու հետո էլ) այդ կշռով բյուզանդական ոսկեդրամ չի հատվել: Այս մի կողմից: Մյուս կողմից. Ք. Ավդալբեկյանի բացատրությունը՝ պեպատ < պերպիրատ, թերևս, հիմք կունենար, եթե այդ բառը մեզ հայտնի դեպքերից գոնե մեկում ունե-

նար պեղպատ, կամ պոպատ, կամ պապատ ձևը, մինչդեռ բոլոր դեպքերում, այդ թվում և Գատաստանագրքի բոլոր ձևագրերում, որոնք ունեն այդ բար, այն հանդես է գալիս. գործարքների զբաղումներում՝ պապատ, պոպատ, պատատ, իսկ ձևագրերում՝ միշտ պապատ ձևով: Այս հանգամանքները նկատի ունենալով Հ. Մանանդյանը վճռականապես առարկել է Թ. Ավդաբեկյանին և առաջարկել իր բացատրությունը (տե՛ս, Նյուքեթր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմություն (II), ՀՍԽՂ Պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Երևան, 1928, № 4, էջ 43—72, մեկ հետաքրքրող մասը՝ էջ 65—72): Հ. Մանանդյանը նշում է, որ եթե Մխիթարի «ոսկի դահեկանի» դիմաց Սմբատ Սպարապետը դնում է «պոպպետ դեկանը», ապա զրանից կարելի է թեքես եզրակացնել միայն, որ «պոպպետ դեկանը» համապատասխան է եղել «ոսկի դահեկանին»: Այստեղից հետևում է, որ պերպպետը ոչ թե՛ զահեկանի կենս էր, այլ պոտատն էր, այլ երկուսից յուրաքանչյուրի կերպ: Հ. Մանանդյանը, այնուհետև, հենվում է Մ. Բրոսսեյի վրա (Histoire de la Géorgie, Introduction et Tables des matières, St.-Petersbourg, 1858, էջ 88, 177—179, 212 և Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie, St.-Petersbourg, 1851, էջ 233) բառ որի ԺԱ-ԺԵ դարերում Վրաստանում տարածված է եղել botinat գրամը, որը Գալիթ Ծինարարին վերաբրված կտակի մեջ անվանվում է potonat, Սամադադլի-Գադիանի 15-րդ դարի վճռագրում՝ patinat՝ Այդ փողը, ինչպես ուղիղ դիտել է Բրոսսեյ, Նիկեփոր 3-րդ Բատանիատի (1078—1081 թթ.) գրամն է, որը նրա անունով կոչվել է botinat (Հ. Մանանդյան, նշված հոդվ. էջ 68, տե՛ս նաև Դ. Գ. Капанадзе, Грузинская нумизматика, Москва, 1955, էջ 140): Հ. Մանանդյանը եզրակացնում է. «Հայերեն «պոտատ» կամ «պատատ»-ը, իմ կարծիքով, հենց այս potonat կամ potinat փողն է: Ինչպես բյուզանդական «դոկատը»-ը ծագել է բյուզանդական կայսրների Dukas ազգանունից..., նույնպես և «պոտատ» կամ «պատատ» գրամի անունը... առաջ է եկել, ինչպես տեսնում ենք, Նիկեփոր 3-րդի Botaniates մականունից (նշված հոդվ. էջ 68): Հ. Մանանդյանի հաշվումներով պոտատը կշռում էր 2,26<sup>2</sup>/<sub>3</sub> գրամ ոսկի, հետևապես Գատաստանագրքում հիշված դահեկանը հավասար էր 4,53<sup>1</sup>/<sub>3</sub> գրամ ոսկի: Մոտավորապես նույն կշիռն ունեին նաև Հայաստանին հարևան երկրների ոսկեգրամները, որոնք ընդհանուր անունով կոչվում էին Bisantius sarracenus. էյուբյանը՝ 4,54 գրամ, ֆաթիմյանը՝ 4,10 գրամ, առարականը կամ սուրին՝ 3,93 գրամ (տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 385), վենետիկյան լիբան՝ 33,65 գրամ (տե՛ս Дж. Луццато, Экономическая история Италии. Античность и средневековые Москва, 1954, էջ 49):

Մանասարյան Ավետարանում գրանցված գործարքներից, որոնք ամենայն հավանականությամբ Մխիթարի դարաշրջանին են վերաբերում, գիտենք, որ մի դեպքում արտ են գնել 4 պոտատով, այսինքն 2 դահեկանով և ուրեմն՝ 365 դահեկանով կարելի կլիներ գնել 170—180 այդպիսի արտ, մի այլ դեպքում մի արտ ու մի մարզ վաճառվել է 9 պոտատի, այսինքն 4,5 դահեկանով, ուստի 365 դահեկանով կարելի կլիներ գնել շուրջ 80 այդպիսի արտ ու մարզ և այլն (Ս. Բարխուդարյանի շատ արժեքավոր մի հոդվածից գիտենք՝ Մի քանի դիտողություններ Երևանի կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, Հասարակական գիտություններ, Երևան, 1947 թ. № 5, էջ 69—70-րդ 14—15 դարերում Հայաստանում փողի գինը խիստ բնկել էր կամ, որ միևնույնն է, ապրանքի՝ հողի և անասունի գինը բարձրացել էր՝ մի կողմն ու մի եզր վաճառվել է 600 դահեկանով—եթե դահեկանն այստեղ արծաթ չէ: Ժժ դարի տարբեր տասնամյակներում որոշ ապրանքների, մասնավորապես՝ հացի գինը, հիշատակարանների բնձնածո սովյալներով, որոշել է կապու. Լ. Նալիկյանը—տե՛ս Ժժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ մասն Բ, Երևան, 1958, էջ CXXIV—CXXVII, որտեղ, 1407 թ. վերաբերյալ բերված մի փաստից իմանում ենք, որ մեկ կապիճ (3 փութ) հացն արժեցել է 34 գրամ արծաթ: Հատ Գատաստանագրքի ընդունելով ոսկու և արծաթի հարաբերությունը 1:13, ԺԳ դարի համար, ուրեմն, կարող ենք ասել, հայտնի վերապահումներով, որ մեկ դահեկանով կարելի կլիներ գնել մոտ 5 փութ հաց, ուստի 365 դահեկանով՝ շուրջ 1800 փութ): Բերված փաստերից երևում է, որ մարդու արյան գինը Մխիթարի ժամանակ շատ բարձր էր (այդպես էր նաև Բյուզանդիայում՝ Յ. 4.5.1., Սերբիայում և այլուր): Տե՛ս նաև հոդված 63 ԱԳ խմբագրությունների, 15 և 27 Գ խմբագրության, Բ խմբագրության I, 14, II, 9, 29 հոդվածները և ծանոթագրություն № 56:

44. (ԱԲԳ) Զայդուպի բագատը դատիցի եւ զայլ եւս դատաստան հասարակաց ի դատատուն բողէ... (Ա՛ էջ 30, Բ՛ էջ 311, Գ՛ էջ 303):

Խոսքը թագավորական և իշխանական դատարանների մասին է: Դատաստանագրքում, առհասարակ, բազմաթիվ են վկայությունները ինչպես Նշված, այնպես էլ կաթողիկոսական, եպիսկոպոսական և այլ դատարանների մասին: Այս կարգի վկայությունների ամփոփման հիման վրա հայկական դատարանային համակարգը, բառ Դատաստանագրքի, ներկայանում է հետևյալ կերպը:

Ա. Պետական դատարաններ

- ա. թագավորական
- բ. իշխանական
- գ. ստորին

Բ. Ավատատիրական դատարաններ

- ա. դասային
- բ. տերունական

Գ. Հոգևոր-եկեղեցական դատարաններ

- ա. եկեղեցական ժողով (դատաժողով)
- բ. կաթողիկոսական
- գ. եպիսկոպոսական
- դ. քահանայական

Թագավորական դատարանի մասին խոսքը Դատաստանագրքում չպետք է տարօրինակ թվա այն պատճառաբանությամբ, թե Մխիթարի ժամանակ Մայր Հայրենիքում հայկական թագավորություն չկար, իսկ Կիլիկյան թագավորությունը ստեղծվեց Դատաստանագիրքը գրվելուց հետո: Իրականում թագավորություն չկար, բայց հայոց աշխարհի երկու ժայրերում ներքին և արտաքին իրադարձությունները զարգանում էին այն ուղղությամբ, որ կարող էին տանել և Կիլիկիայում, իրօք, տարան դեպի թագավորական իշխանության վերականգնում: Մխիթարը կանխում է երկար սպասված ու վերջապես երևացող գալիքը, սահմանելով նաև թագավորական իշխանության դատա-իրավական հիմունքները:

Իշխանական դատարանները շունեն մահվան դատապարտելու իրավունք, այդ իրավունքը նրանց տայիս է թագավորը: Այս և նման մի շարք փաստերից հետևում է, որ իշխանների դատական իրավասությունը հիմնված էր ոչ թե նրանց տահմական-ժառանգական իրավունքների, այլ բարձրագույն իշխանության կողմից տրված լիազորությունների վրա: Սա նշանակում է, որ իշխանները որպես դատավորներ պետական թագավորական պաշտոնյաներ էին, ուստի նրանց դատարաններն էլ՝ պետական դատարաններ: Նույնը վերաբերում է նաև աշխարհական ստորին դատարաններին: Սրանք կամ հատուկ պաշտոնյաներ էին, առավելապես քաղաքներում, կամ գյուղական տանտուհրերն էին, որոնք որպես զեղչավագներ նաև դատավորներ էին:

Ավատատիրական դատարանների վերաբերյալ վկայություններից հետևում է, որ դրանք երկու տեսակի էին՝ դասային և տերունական: Դասային դատարանը կազմված էր միայն ազնվականներից, հավասար կամ ավելի բարձր աստիճանի, քան այն ազնվականը, որի գործը քննում էին: Այս դատարանը քննում էր գործեր, որոնք վերաբերում էին, օրինակ՝ ազնվականների դահին ու բարձին, ավատատիրական բարոյա-իրավական որոշ նորմեր խախտելուն և այլն:

Տերունական դատարանը քննում էր այն վեճերը, որոնք ծագում էին զուտ ավատատիրական հարաբերությունների հողի վրա, ենթաավատատերերի միջև, ավատատիրոջ և շինականների միջև և այլն. օրինակ՝ ենթաավատատերերի սահմանային վեճերը, հարկ չվճարելու, այս կամ այն պարտավորությունը չկատարելու վերաբերյալ վեճերը և այլն (տերունական դատարանի վերաբերյալ մի կարևոր փաստաթուղթ՝ դատական նիստի արարձանագրությունը և վճիռը տե՛ս Ս. Հայալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 243—244, Մ. Բարխուտարյան, Արցախ, Բագու, 1895, էջ 187, Լ. Խաչիկյան, Ժե քաթի հայերեն ձեռագրերի նիշատակաբաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ LXX): Դիտելի է, որ տերունական դատարանը իր ընդլայնված մեկ էր, անկախ այն բանից, թե ով էր հանդես գալիս դատավորի դերում՝ թագավորը, իշխանը, կամ եկեղեցին որպես ավատատեր, թե զուտ ավատատերը:

Միջնադարյան Հայաստանում ընդհանրապես և Մխիթարի ժամանակ՝ մասնավորապես, դատարանի դեր էին կատարում երբեմն-երբեմն հրավիրվող եկեղեցական ժողովները ևս, որոնք իրենց հիմնական աշխատանքներից բացի, ի դեպ քննում էին նաև դատական գործեր, կամ զտնաբերում էին հատկապես դատական գործեր քննելու համար: Այդպիսի ժողով-

ները, որոնք քննվող հարցի տեսանկյունից հորմար է կոչել դատաժողովներ, գումար-վում էին կամ կաթողիկոսի նախագահությանը՝ կարևոր գործերով, կամ եպիսկոպոսի նախագահությանը՝ Բենուս, տեղական գործերով: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ դատաժողովները մշտապես գործող ատյաններ չէին:

Երկու խոսք նաև վարդապետների մասին որպես դատավորների: Դատաստանագրքի տվյալներից հետևում է, որ վարդապետական դատարանը առանձին, ինքնուրույն օղակ չէր հոգևոր-եկեղեցական դատարանների շղթայում, ինչպես եպիսկոպոսականը: Վարդապետական դատարանը այն իրավասությունը չուներ, ինչ՝ եպիսկոպոսականը. նա գործը քննում էր այն շահով միայն, որ շահով անհրաժեշտ էր որոշելու ապաշխարության շահն ու բնույթը կամ զանցատու հոգևորականին իր դբադեցրած պաշտոնում թողնելու հարցը և այլն: Ուրեմն, վարդապետական դատարանի, բուն իմաստով դատարանի մասին, դժվար է խոսել, խոսք կարող է լինել վարդապետի որպես դատավորի մասին: Եվ իրոք, վարդապետները մասնակցում են, իրավունք ունեն և սովորաբար հրավիրվում են մասնակցելու եկեղեցական, մանավանդ, եպիսկոպոսական դատարանի աշխատանքներին: Վարդապետները դատավորական իրավունքներ ունեն: Վարդապետների դերը, սակայն, հայկական իրավունքի պատմության մեջ առավել մեծ է ու նշանակալից որպես հմուտ օրենսգետ-օրենսմեկնիչ-ների և խորհրդատուների իրավական հարցերում: Մեծ է եղել վարդապետների դերը, մանավանդ, հայկական իրավունքի զարգացման գործում: Իրավաստեղծման բնազավատում վարդապետը մեզանում խաղացել են նույն դերը ինչ՝ իրավաբանները Հռոմում:

Պետք է հիշտակվի մի դատարան ևս, որը թեև կար իրականում, բայց չի արտահայտվել Դատաստանագրքում: Խոսքը «ծերոց ատյանի» մասին է: Մեզ հայտնի միակ փաստը, որով վկայված է «ծերոց ատյանը» իրեն Մխիթար Գոշի առականներից մեկն է. «Պղնձադոծ և երկաթագործ ի խնամենայն՝ արուեստի ճորտարանէին. և ի ինչև հակառակութեանն շատեան ևս երթային ծերոց: Եւ նոքա մեծարգոյ ցուցին դերկաթագործ սաելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է» (Առակներ, բնագիրը՝ ձեռագրերի համեմատությամբ և հերածությունը էմ. Պիվազյանի, Երևան, 1951, էջ 122): Առականց, նաև համարությունների ամբի ու շրջանին վերաբերող աղբյուրներից, հայտնի է, որ ծերոց ատյանը քննում էր միայն այն վեճերը, որոնք ծագում էին համարությունների կամ համարականների միջև և որոնք կապված էին բացառապես արհեստի հանգամանքների հետ (տե՛ս С. А. Егiazаров, Исследования по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, Казань, 1891): Մերոց ատյանը համարական հաստատություններից մեկն էր: Քաղաքացիական-իրավական և քրեա-իրավական ընդհանուր ու սովորական վեճերի կարգավորումը այդ ատյանի իրավասության սահմաններից դուրս էր գտնվում, ուստի ինքը՝ ատյանն էլ պետք է դուրս մնա պետական-ավատատիրական դատարանների ընդհանուր համակարգից:

Ի վերջո պետք է նշել նաև, որ պետական բարձրագույն իշխանությունը, հանձինս թագավորի կամ իշխանապետի, քացադիկ նշանակության որևէ գործ քննելու համար կարող էր կազմել և հատուկ դատարան հատկապես նշանակված անձանցից: Գործը քննելուց հետո այդ դատարանը ինքնաբերաբար լուծվում էր (այդպիսի մի դատարանի մասին տե՛ս Ստեփանենուի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տաւն Սիսական, ի լոյս ընծայեաց Մըկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 259—261, և Ն. Մեխիսեթ-բեկ, Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զախարյան Հայաստանում, Տեղեկագիր, 1945 թ., № 3—4, էջ 73—79):

Այս հոդվածում նշված հարկերի մասին տե՛ս Հ. Մանանդյան, ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1954 թ., Բ. Ավդալբեկյան, վերը նշված աշխատությունը և այլուր:

45. (ԱԲԳ) Արժ Բաղաբաղի առաւել Բան գրեղնուոն պատուիցիւն.. (Ա՛ էջ 32, Բ՛ էջ 318, Գ՛ էջ 305):

Ակնաբղկում է Խորենացու Պատմությունը, ըստ որի Վաղարշակը «հրաման է տալիս, որ քաղաքացիների հարգն ու պատիվը ամբի լինի, քան գյուղացիներիը. որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխանների, բայց որ քաղաքացիները շատ չգոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն...» (Հայոց Պատմություն, Երևան, 1961, էջ 159):

46. (ԱԲԳ) Իսկ գիճի մանու հարց մի լիցի իբր ժառանգութիւն առնուլ ազգատոմիճ գառաշնորդութիւն եղբարց, էթէ ոչ կամիցիւն և լիցի ի դիպ (Ա՛ էջ 33, Բ՛ էջ 86, Գ՛ էջ 306):

Մխիթարի ժամանակ այս սովորությունը լայնորեն արդեն տարածված էր Կիլիկիայից մինչև Արցախ: Լամբրոնացիին դատությունը գրում է. «Երէջն մատուռ մի շինէ, և գժրիտոսի ժողովուրդն վասն այսորիկ որդեացն և կնոջն ծառայ թողու յախտեան, թէ հովուեն և թէ ոչ. և արեղայն վանք շինէ, և զեղբայրութիւնն որ ի Քրիստոսի անունն ժողովին՝ բուերորդոցն ի գերութիւն մատնէ, և զայն իրաւամբք ատնել համարի... Եպիսկոպոսք ղվիճակս, հարք զվանորայս, քահանայք զեկեղեցիս՝ մարմնական ընտանեացն զրեն որպէ՛ն զմարմնական ժառանգութիւն. և բարձաւ աստուածային ընտրութիւնն (Նարեքաժնութիւնն ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոյ . պատարագիւն, Վեճեմիկ, 1847, էջ 524, 535—536): Լամբրոնացիին, այնուհետեւ, գրում է նաև, որ «այս շարիք շունչ բազում ինչ ծամանակ, զի սկսաւ ընծիւղել. զրեթէ հարբար ամ աւելի կամ պակաս՝ յորմէ հետէ տասպայեցաւ իշխանութիւնն, օր ըստ օրէ սկսու զարգանայ, և բնաւ փոյթ ումէք շնդև առ ի կարճել զըսոյն աշխատել» (անդ, էջ 526): Բայց պետք է նկատել, որ վանահոր պաշտոնի ժառանգական փոխանցման այս սովորությունը, որ դատապարտում են և Լամբրոնացիին, և Մխիթարը, իր արմատներն ունեն, թերևս, այն փաստի մեջ, որ Հայաստանում հնուց ի վեր քահանայի սերունդը նախապատվութեան իրավունք ունեն քահանայությունը ժառանգելու գործում: Այս վերջին սովորությունը, որպէս եկեղեցու ընդհանուր կարգերին հակառակ, դատապարտվել է Տրուլի ժողովում (692 թ.), որի 33-րդ կանոնը ասում է. «Այդպես էլ հայերի մյուս սովորությունը, որով հոգևորական են օծում միայն քահանայական ընտանիքի սերունդից» Hefele, Conciliengeschichte, dritter Band, Freiburg, 1877, էջ 355). Կանոնների ոռուսւղանական հրատարակութեան համաձայն. «Ինչպէս մենք տեղեկացանք, հայոց երկրում միայն նրանք են ընդունվում կղերի մեջ, ովքեր քահանայական ծագում ունեն— из священнического рода—որով հրեից սովորություններին են հետևում» Книга правил святых апостол, святых соборов вселенских и поместных и святых отец, Москва, 1893. տ՛ս նաև Վ. Բաստամյանց, ծանոթագր. 164:

Ա

Բ

Գ

47. Եւ եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տիրել կընոջ առն, բոտ հրամանի կանոնաց ի միասին գրծամանակն կացցեն (էջ 37):

Եւ եթէ պատահի ամուսնութեամբ ոչ տիրել կնոջ առն, ըստ հրամանի կանոնաց թէ կամ լիցի կնոջն ի միասին զծամանակն կայցեն. եւ թէ ոչ-դատաստան լիցի բաժանմանն (էջ 37):

Եւ թէ պատահի, որ այլն չկարէ զկինն ի կուսութենէ հանել, թէ կամ լիցի կնոջն, որ ի միասին կենան՝ կացցեն առ իրարս, ապա թէ ոչ կամ՝ բաժանուցին (էջ 309):

Ա

Բ

Գ

48. Եւ եթէ անասուն բերնալ իցէ, զգլուխն տացեն եւ զաճն յերկուս բաժանիցեն՝ յաղազս աշխատելոյ ի պահելն (էջ 37):

Եւ եթէ անասուն բերնալ իցէ կինն, զգլուխն տացէ եւ զաճն յերկուսն բաժանիցեն յաղազս աշխատելոյ ի պահելն (էջ 38):

Եւ թէ անասուն բերնալ իցէ կինն, ըզգլուխքն առցէ և զկէսն աճոյն, և կէսն այրկանն տացի վասն աշխատութեան և ծախիցն (էջ 309):

Դատաստանագրքի ուսերին հրատարակութեան մեջ հատվածը ճիշտ չէ թարգմանված. «Если жена привела в дом мужа скот, возвращается ей основное, прилод же делится между ними поровну за груды по уходу за скотом»—Армянский Судебник Мхитара Гоша, Ереван, 1954, էջ 43—44: Բնագրում չի ասված, թե աճը պետք է հավասար չափով բաժանել ամուսինների միջև, այլ՝ աճը բաժնավում է երկու մասի (տե՛ս Առաջաբան, էջ 26):

49. Զայդ յամենայնեւ ըստ սահմանի կանոնաց արացցեն (Ա՝ էջ 38, Բ՝ էջ 99):  
Վ. Բաստամյանցը գրում է. «Թե մեր և թե մյուս բոլոր օրինակների մեջ զրված է յամեն և միայն Սարգիս եպիս. օրինակի մեջ՝ այսմ, իսկ 489 օրին. մեջ չկա զայդ յամեն: Բայց որովհետև յամեն իբրև ամ (տարի) բառից ամենեկին հարմարություն չունի նախադասության մեջ, մենք, ենթադրելով որ, ընտրինակողի անսովորությունից պակաս է մի

պատիվ՝ յամեն որով կըստնա յամենայնսն և հարմար է իմաստին, այդպես սրբազրեցիներ, թեպետ այսմ ևս կարող է հարմարվել» (ժանոթագր. 170): Ուրախությամբ նշենք. ձեռագրերը, որ կան այժմ մեր տրամադրության տակ և որոնք շունկեր Վ. Բաստամյանցը, հաստատում են նրա ենթադրությունը:

Որ հեղինակագիր օրինակում եղել է «յամենայնսն» կամ «յամանս» (պատվով) հաստատվում է Չմամտի ձեռագրով (Բ): Սա կամ սրա նախագաղափարազիրը ընդօրինակված է, ինչպես և վենետիկյան հնազույն գրչագիրը, հեղինակագիր օրինակից: Բայց վենետիկյան օրինակի զրիչը մոտացել է «յամանս» բառի զվիթին դնել պատիվը: Անմիջականորեն կամ միջնորդաբար սրանից ծագող մի քանի ձեռագրերում ևս («Երկնակ՝ ԳԹ») ունենք յամեն, որը պետք է կարդալ հենց այդպես կամ ի տարիսն և ահա Գ-ի զրիչը այդպես էլ կարդացել է. «Չայդ ի տարիսն ըստ կանոնաց սահմանաց սրտացեն»:

ԱՔ

Գ

50. Իսկ եթէ ի կնոջէն իցէ մեկնիւն անպատճառ, յերիցն զմին մասն յիւրոց ընչիցն առն թողցէ (Ա՛ էջ 39, Բ՛ էջ 104):

Եթէ ի կնոջէն է պատճառն, զկէս ընչից կնոջն տուգանք տացեն յայրն (էջ 310):

51. (ԱՔ) Իսկ եթէ ի կնոջէն իցէ մեկնիւն անպատճառ, յերիցն զմին մասն յիւրոց ընչիցն առն թողցէ եւ մի լիցի առն այլում, բայց եթէ ի հրամանէ առնն (Ա՛ էջ 39, Բ՛ էջ 104):

Վ. Բաստամյանցը իրավացիորեն նշել է, որ այս հատվածում ստորակետը մեծ նշանակություն ունի և տեղը փոխելով կարող է բոլորովին փոխել ամբողջ նախադասության իմաստը: Այսպես. եթե ստորակետը դնենք «անպատճառ» բառից առաջ, ապա կստացվի՝ կիրն իր գույքի մեկ երրորդը անպատճառ պետք է թողնի տղամարդուն: Իսկ եթե ստորակետը դրվի «անպատճառ» բառից հետո կստացվի՝ եթե կիրն հեռանա ամուսնուց առանց պատճառի: Հենվելով Գ խմբագրության ձեռագրերի վրա, Վ. Բաստամյանցը այստեղ «անպատճառը» հասկացել է «առանց պատճառի» և ստորակետը զրկել է «անպատճառ» բառից հետո (տե՛ս ժանոթագր. 182): Մենք ևս ստորակետը զրկել ենք «անպատճառ» բառից հետո, զա միանգամայն ճիշտ համարելով, բայց «անպատճառ»-ը հասկանում ենք ոչ թե «առանց պատճառի» բնո՞հանրապես, այլ՝ «առանց շնութեան պատճառի»: Հողվածի սկզբում խոսքն այն դեպքի մասին է, երբ տղամարդն է թողնում կնոջը՝ առանց շնութեան պատճառի, իսկ վերջում դարձյալ նույն դեպքի մասին, բայց կնոջ անընդամյամբ, ուստի հողվածի սկզբի «առանց շնութեան պատճառի» հավասար է հողվածի վերջում եղած «անպատճառին»-ին, հետևապես ստորակետը պետք է զրվի «անպատճառի»-ից հետո:

Ա

Բ

Գ

52. Իսկ սահման ժամանակին առուել քան զանկարողացն լիցի: եւ մի նուազ (էջ 40):

Իսկ սահման ժամանակին՝ եօթն ամ է սահման անսարոյն երբ ի պսակն աղջիկն հնգետասան ամաց էր եւ կրտրիճրն ութնտասան .և թէ պակաս էին, աւելի համբերեսցեն. առուել քան զանկարողացն լիցի եւ մի նուազ (էջ 106):

Իսկ սահման ժամանակին եթէ ամ իցէ, եթէ ի պսակն աղջիկն հնգետասան տարոյ էր, և կտրիճն՝ ութնտասան. իսկ եթէ այլ պակաս էին՝ զընոյն, և համբերութեան ժամանակն առուել լիցի (էջ 311):

ԱՔ

Գ

53. Յորժամ կին զառն զչար արտ գիտացէ զարուագիտութեան, և կամ զանասնագիտութեան, եւ կամ ընդ այլազգիս պղծիցի, իշխան լիցի ելանել, ապա թէ զղացեալ՝ զհայր խոտտովանութեանն հատուցուցէ եւ նովմ՝ զկիրն, մի ելցէ: Բայց զապաշխարութիւն եւ զմիչոց սահմանին մեկնելոյն ի կնոջէն ցուցցէ հայր

Յորժամ կինն տեսնէ զայր իւր յարուագիտութեան, կամ յանասնապղծութեան, կամ թէ ընդ անօրինի պղծի կամ պղծեսցէ, կամ ի մարդասպանութեան, յայս պատճառանցս ի վերայ իշխան է կինն թողու զայր իւր և լիցի առն այլում: Եւ զկէս ընչից առն առցէ կիրն, ապա եթէ կամեսցի կինն թողուլ և ոչ (էջ 311):

խոստովանութեանն եւ այնպէս իրատեալ զմիբանութիւնն հաստատիցէ: Իսկ եթէ մի անգամ եւ երկիցս զայս արասցէ եւ ի նոյն կացցէ ախտ, ելցէ իբաւամբք դատաստանի՝ զկէս ընչիցն տանելով յառնէն (Ա՛ էջ 40—41, Բ՛ էջ 107):

Ա

Գ

54. Եթէ դիւական ախտիւ լցեալ այր զկին իւր անարզէ նախատանաւք միշտ, եթէ խորթք իցեն եւ այնորիկ աղազաւ մոլի, դատաստան լիցի. թէ յատաշնումն յանձին կալաւ զնոսա, համբերել պարտի, ապա թէ ոչ՝ յազգ դարձցի կնոջն (Ա՛ էջ 42, Բ, էջ 111):

Եթէ այր զկին իւր անարզէ անդադար մախանօք, եթէ խորթ կայր ի մէջ իւրեանց եւ վասն այնորիկ նախատեն զիրարս, դատաստան լիցի. եթէ պոմնեղ էառ զկինն եւ զխորթերն, պարտ է համբերել, ապա թէ ոչ՝ յազգ կնոջն դարձուցեն զխորթսն (էջ 312):

Ա

Բ

Գ

55. Իսկ եթէ յաղազս ժանդ բարոց զործէ, բեկանէ կամ խլէ, դատաստան նոյն լիցի, որպէս ատարացն՝ հատուցանել զտուգանս, որոց կնոջն են, եւ կըրկին լիցի, զի մի իբրեւ զհարճս կալցին, այլ իբրեւ զմարմին ինքեանց. եւ այդ՝ յորժամ զղչասցին (էջ 42):

Իսկ եթէ յաղազս ժանդ բարոց զործէ, ոտն բեկանէ կամ ձեռքն, կամ խլէ աչք կամ ատամն, կամ խեղէ, դատաստան նոյն լիցի որպէս օտարացն՝ հատուցանել զտուգանս որոց կնոջն են. եւ կըրկին լիցի, զի մի իբրեւ զհարճս կալցին, այլ իբրեւ զմարմին ինքեանց. եւ այդ՝ յորժամ զղչասցին (էջ 111):

Իսկ եթէ աներկեղութեամբ եւ ժանդ բարոք այր զկին իւր հարկանէ, ձեռքն կոտորէ կամ աչք հանէ, կամ ատամն կամ ոտն կոտորէ, առցեն ի նմանէ երկու հազար դեկան, այսինքն՝ դրամ արծաթ, կըրկին, քան զոր օտարն հարկանէ, քանզի թէ օտարն այդպիսի վնաս գործէ ընկերի՝ հազար դրամ տուգանք է ձեռացըն, կամ ոտիցն, կամ առամանն, կամ աչացն: Այս շորս անդամս ի մարմին մարդոյ մի է համարեալ զինն, վասն զի մարդոյ զինն, երբ կամաւ զիրար սպանեն, շորս հազար դրամ արծաթ է. եւ այս շորս անդամս ի շորս բաժնէն մի է համարած:

Իսկ իբրեւ այր զկնոջն հատանէ բզձեռն, կամ զոտն, կամ զաչքն, կամ զատամն, կըրկին տուգանք առցեն ի նմանէ, զի մի իբրեւ զբոզ մի կալցէ զկինն իւր այրն, այլ իբրեւ զանձն իւր, եւ զկինն զարձեալ յայրն տացեն, որ զցասան առողջացուցանէ բժշկօք: Եւ թէ կամք իցէ կնոջն՝ բնակիցէ առ նա, եւ այրն ի զղշումն զայցէ. իսկ տուգանքն ի կինն տացեն (էջ 312—313):

56. Այ խմբագրութեան այս ժն հողվածք հավասար է Բ խմբագրութեան առաջին մասի ԺԳ հողվածին: Բ խմբագրութեան հնազույն ձեռագիրք, ընթօրինակված 1295 թ., որը պահվում է Մատենադարանում 488 համարի տակ (= Բաստամյանցի նշումով 492) այս հողվածի դիմաց (Թ. 21 ր) ունի հետևյալ լուսանցագրութիւնը, որը հետագայի գրիչներին մեկը անվանում է լուծումնք (ձեռագրի էջը վերանորոգելիս եզրը կտրել են, դրա հետևանքով որոշ բառեր կամ բառերի մասեր շփան կամ չեն կարդացվում. այդ պատճառով լուծումնքը ընթօրինակելիս միշտ նկատի ենք ունեցել Բաստամյանցին— տե՛ս ժանդագր. 197—Թեև պետք է նշել, որ արդեն Բաստամյանցի ժամանակ էլ որոշ բառեր չեն կարդացվել, հավանաբար էջի եզրի մաշվածութեան պատճառով). Եւ առցեն ի նմանէ հազար դրամ արծաթ, կըրկին քան զոր օտարն հարկանէ, զի երբ օտարն կտրէ ձեռն կամ ոտն, խլէ աչք կամ ատամն եւ անդամոցս, իւրաքանչիւր անդամոյ հազար դրամ է տուգանքն, եւ որ կամօք

զմարդ սպանէ շորս հագար դրամ է գինն, եւ որ յայս շորս անգամոցս վնասէ, ամէն մէկի հագար տուգան է: Իսկ երբ այլն զկինն վնասէ յայտոց, կրկին տուծեսցի. զի մի իբրև գրող մի կալցի զկինն, այլ իբրև զանձն իւր, եւ կինն դարձաւ յայլն տացեն գցաւն բուծիլ բժշկօք. եւ թէ այլն ի զղջումն գայցէ եւ կամք իցէ կնոջն, քնակիցէ առ նմա. իսկ զտուգան ի կինն տացեն»:

Մեր Մատենադարանի ՔՔ 795, 2635, 2655, 6496, 8926 ձեռագրերում, որոնք չեն եղել Վ. Բաստամյանցի տրամադրութեան տակ և Ք 3497 գրչագրում, որը ծանոթ է Վ. Բաստամյանցիին (նշում է «Սարգիս եպիսկոպոսի օրինակ» անուամբ, որը Զաւալյանցն է) այս լուծմունքը մուծված է Տողվածի մեջ: Բնրում ենք ըստ Ք 2655 ձեռագրի (բայ թողք ներով առաջին պարբերությունը. «Ի՞նչ դիական աստուծո՞ւ... ասպ թէ ոչ յազգ դարձցի կնոջն»), փակագծերի մեջ նշելով տարրինթերցվածքները ըստ մյուս ձեռագրերի. «Իսկ քէ յազագս ծանդ բարուց գործէ, ոտն բեկանէ կամ ձեռն, խլէ աչի կամ ատամն, կամ խնդէ, դատաօտանն նոյն լիցի» (2635, 6496 չի գատաստան նոյն լիցի, 795 լից) առնել (795 առ են, 2635 արէն, 3497 օղն, 6496, 8926 առցեն) ի նմանէ Ս. Ղրամ արժաք, կրկին քան գոր աւտարն (6496 աւտարացն) հարկանէ, զի երբ աւտարն կտրէ (2635, 6496 կտարն, 8926 կտրէ բայց վերկեց գրված է «ո») ձեռն (3497 զձեռն) կամ ոտն (3497 գտտն), խլէ աչք (3497 աչքն) կամ ատամն և (2635, 6496 այս, 8926 ինչ-որ բան քերված-չնչված է հավանաբար «և») ու տողամիչում ավելացված է «այս») անդամնոցս (3497, 2635 անդամնոցս) իւրաքանչիւր անդամնոց (2635, 3497 անդամոյ) Ռ. Ղրամ (2635, 6496, 8926 + է, 8926՝ տողամիչում) տուգանքն (ոմանք՝ տուգանքն, 3497 փակագծում նույն գրչից՝ շերմէ) և որ կամաւ գմարգ սպանէ (3497 սսլանսէ) ԴՌ Ղրամ է զինն և յոր (2635, 3497, 6496, 8926 որ) այս (2635, 6496, 8926 յայս, 8926 առաջին «յ» տողամիչում) շորս անդամնոցս (ոմանք՝ անդամնոցս) վնասէ, ամեն մեկի Ռ. տուգանք (ոմանք՝ տուգանք) է, իսկ երբ այլն զկինն վնասէ յայտոց (3497 այտոց), կրկին տուծեսցի (3497 բ. տակ տայ), զի մի իբրև գրող մի կալցի զկինն, այլ իբրև զանձն իւր և զկինն (6496 գկին) դարձեալ յայլն տացեն գցաւն բուծիլ (6496 բժշկիլ) բժշկով և քէ այլն ի զղեցումն (2635, 6496, 8926 ի զղջումն, 8926 զղաջումն, բայց «աց» քերված է) զայլց և կամ իցէ կնոջն՝ բնակիցէ առ նմայ. իսկ զտուգանքն (ոմանք՝ գտուգանքն) ի զինն (2635, 3497, 6496, 8926 ի կինն, 8926 ի գինն, բայց «գ» դարձված է «կ») տացեն. նոյն լիցի (2635, 6496 դատաստան նոյն լիցի, 8926 «նոյն լիցի» քերված է) որպէս աւտարացն, հատուցանել՝ գտուգանս (ոմանք՝ գտուգանս) որոց կնոջն (6496 կնոց կնոջն) եւ և կրկին լիցի, զի մի իբրև բզ-հարնըս կալցին, այլ իբրև զմարմին ինքեանց. այդ (795, 2635, 6496, 8926 և այդ)՝ յորժամ զղաջացին: Իսկ եթէ ի նոյն յամառութեան կացցեն...

Անչնայտ է, որ այս հատվածը անցել է Բ խմբագրությունից Գ խմբագրությունից, սկզբում որպես լուսանցարություն՝ լուծմունք, ինչպես Ք 488 ձեռագրում է, այնուհետև մտել է բնագրի մեջ: Դա հաստատվում է նաև Ք 8926 ձեռագրով: Այստեղ, առաջին տողի առաջին (առնել) և վերջին տողի «տացեն» բառերի վրա գրված է նշան և 234 բ թերթի ստորին լուսանցքում գրված է. «ՅԱյս նշանէս մինչև ցմիւս նշան, ոչ է ի բնաբանէն. այլ լուծմունք էր որ ի լուսանցն էր գրեալ. իսկ գրին ոչ գիտենալով ի կարգ բնաբանին է գրեալ: Եվ այսպիսի ի յովով տեղիս արարեալ է. իսկ ես նշանեալ եմ» (կետագրությունը ձեռագրի նրն է—Ն. Ք.): Այս տողերի հեղինակը Ք 8926 ձեռագրում եղած Դատաստանագրքի բնագիրը համեմատել է, հավանաբար, Ք 488-ի հետ և նշումը կատարել ըստ այդմ: Այդպես է թվում, որովհետև Դատաստանագրքի Բ խմբագրության մեջ հայտնի ձեռագրերից միայն Ք 488-ում է, որ Գ խմբագրությունից անցած այս հատվածը գտնվում է լուսանցքում: Բ խմբագրության մյուս ձեռագրերի մեջ Մատենադարանի Ք 486, Վիեննայի օրինակը (տե՛ս Բաստամյանց, Ժաննթագր. Ք 197) այս հատվածը չունեն և ոչ լուսանցքում և ոչ բնագրում:

	Ա	Բ	Գ
57.	Ի բերանոյ նորա խնդրիցեն՝ կամ առնուլ զկինն եւ կամ հրաման լինել արձակման, եւ զկնաթողանս ասպաշխարհի. եւ այլ կին ոչ իշխէ առնուլ, որչափ կենդանի է	Ի բերանոյ նորա խնդրիցեն՝ կամ առնուլ զկինն եւ կամ հրաման լինել արձակման, եւ կնոջն առնուլ այլ. եւ առնն զկնաթողացն ասպաշխարհի, եւ այլ կին ոչ իշխէ	Ի բերանոյ նորա ստուգեն՝ առնուլ և կամ հրաման տայ կրնոջն առնուլ այլ: Եւ այլն ոչ առնու կին, քանի կենդանի է կին

կին նորա (էջ 43):

առնուլ որչափ կենդանի է կին նորա (էջ 113):

նորա. և ապաշխարութիւն կնաթողացն լիցի (էջ 313):

ԱՐ

Գ

58. Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւն, այլ ծառայիլ տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան. զի թողեալ զտէրունիան ազատ է ուր և կամիցի կալ: Ապա թէ այսմ ոչ ներէ ոք ի տերանցն և բռնադատէ զգնացեալսն անդրէն դատնալ, զկնի մահտան հաւրն ազատ էն որդիքն ծնեալք այլուր և ոչ անդ (Ա՛ էջ 44, Բ՛ էջ 320—321):

Ազատ յԱրարչէն եղև մարդկայինս բնութիւնս, այլ ծառայիլ տերանց յաղագս պիտոյից եղև հողոյ և ջրոյ: Եւ որք ոչ ունիցին ջուր և հող, ազատ է, որ և կամեսցի զընասցէ և բնակեսցէ, և ոչ է իրաւունք թազաւորաց և իշխանաց բռնադատել զոք կեանալ ի գեղ մի կամ ի մի երկիր (էջ 341):

ԱՐ

Գ

59. Ի ջուրս լողալով մանկունք զմիմեանս հեղձուցանիցեն, տեսանելով դատեսցեն՝ եթէ պարզմտաբա՛ր ի խաղս, և եթէ ցատուցեա՛լ քինու և կամ իւրովի՞ դիմեալ ի խորս և անկար ի բերել արտաք այլոց: Այլորքիկ դատեալ համեմատիցի ընդ ըսպանութեան ամբն և այնպէս վճիռն տացի իրաւամբք (Ա՛ էջ 45, Բ՛ էջ 322):

Ի ջուրս լողալով մանկունք զմիմեանս խեղդեն, եթէ պարզմտաբար ի խաղս և եթէ քինու ցատմամբ, եթէ կամաւ առնիցեն՝ զինք արեան լիցի, և եթէ ակամայ՝ կէսն: Իսկ տարիքն քննեսցի այնմ, որ խեղդեացն զնա (էջ 315):

ԱՐ

Գ

60. Եւ թէ անդ զմիմեանս ի մարտնչելըն բեկանիցեն և կամ խեղդիցեն, հաւաստի դատ լիցի, և բժշկութեանն և խափանածոյն տուժիցի. և եթէ մահ զործի՛ տեսցի պատահումն. թէ մախանաւք... իցէ... զին արեանն տուժեսցի: Եւ զինարբուացն կցորդութիւնն դատիցի հաւաստի, և նոցայն ընդ նմին լիցի սոյժն. և թէ ի զգայութեանցն ինչ վնասիցի, ըստ այնմ և դատն լիցի: Բայց զի ըստ Աւրիանացն մահու ևն իսկ արծանի, այլ զի խրատ ի ձեռս առցեն և ըստ Աւետարանիս ապրիցին (Ա՛ էջ 45—46, Բ՛ 324—325):

Ի մէջ զինեխում մարդկան եթէ ընդ միմեանս կռվին, և կտորի ձեռն կամ այլ անդամ, պարտի բժշկել և զպակասութիւն բանիցն լնուլ, և թէ մահ հանդիպի կամաւ՝ արեան զինք առցեն անպակաս. և այլ ընկերքն, որ անդ էին, նորա այլ տուգանօք են ըստ շափոյն: Եւ թէ ակն կամ ատամն խլեսցի, զգինն առցեն հազար դրամ. և թէ ոտն և ձեռն կտորի և անբժշկելի մնայ, նոյն հազար դրամ և այս (էջ 316):

Դատաստանագրքի Բ խմբագրութիւն Ն 488 ձեռագրում այս ի՛նչ հոգովածի (= II, 9) «Եւ թէ ի զգայութեանցն ինչ վնասիցի, ըստ այնմ և դատն լիցի» բառերի դիմաց լուսանցքում գրված է «Ռ. դրամ տուգանք ընդ միոյ միոյ»: Սրանով դարձայ ճատատուովում է, որ Բ խմբագրութիւն (հատկապես Ն 488 ձեռագրի) այս լուսանցագրութիւն-լուծմունքը կատարված է Գ խմբագրութիւն շիման վրա (տե՛ս նաև ծանոթագր. 56):

ԱՐ

Գ

61. ...այլ ըստ Աւետարանիս փրկանաւր լիցի արիւնն, ընդ [նմին] հարցի և կամք կնոջն, և այլն: Բայց այլք ի դատաւորաց արժան վարկան հատանել գտողական այդոցիկ և զանասնապղծի և զարուպիտի. այլ ներէ արէնք զարդ իսկ զպատուհաս կանոնական և փրկանաւր... Եթէ յայլ-

Եւ այլք ի դատաւորաց գայսպիսեաց ըզձեռն և զծածուկ մարմինն կտրեն, և կարգ արուագիտացն և անասնապղծացն է. եթէ ի դատաստան գայ՝ տուգանօք փրկեսցին և մի խրատիւ: Եթէ այլազգի հանդիպի յայս զործս հետքրիստոնէի կնոջ, առանց ամենայն պատ-

ազգեաց պատահի եւ ընդ ձեռամբ մեր իցեն, հատանեն իրաւացի է: Իսկ եթէ ընդ այլոց շնայցէ, եթէ խարխիջէ առնուկ կին, եւ կամ ի կնոջէն իցէ պատճառն, եթէ բրոնադատելով զայդ դատեալ եւ պարտաւոր ցոյցեալ, այլն տուժիցի բստ աւրինակի կիտոյ խաւանցելոյ կուտին, եթէ առցէ կին եւ թէ ոչ զպարտեալն այլրի (Ա՛ էջ 46, Բ՛ էջ 116):

ճառի հատանեն զծածուկն և զկինն խրատեսցեն զբիթն կտրելով:

Իսկ եթէ քրիստոնեայ մարդ զայլրի կին խաբեսցէ և պղծեսցէ զնա, կամ առնու կին զնա, կամ տայ հարկիւր դրամ արծաթ կրնոջրն, երբ այլ կին ոչ ունենայ այն մարդն, որ շնացաւ:

Նա թէ և այլ մեծատուն իցէ այլն եւ կինն՝ նոյն, և տուգանքն յաւելցիին (էջ 316):

62. (Գ) Պղինձ, և երկաթ, և կլայել և այլ յայսիպիսեաց՝ իշխանաց լիցի մեծամեծ, պարզով ի քաղաւուրաց (էջ 317):

Առաջին հայացքից թվում է, որ այտեղ ստորակետը պետք է դրվի «լիցի» բառից հետո, որով «մեծամեծ» կվերաբերի ոչ թե «իշխանաց», այլ՝ «պարզուօք» բառին, որովհետև «իշխանաց»-ին վերաբերելու համար սպասելի էր, որ «մեծամեծ» բառը լինի հոլոված՝ «մեծամեծաց», որպես ածականի ետագաս գործածութեան դեպք, ինչպես որ է Ա՛ Խմբագրութեան ներում: Բայց դրոջ լեզվի անկման, միջնադարյան աշխարհաբարի ձևավորման ժամանակաշրջանի լեզվի առնչութեամբ, ինչպիսին է Գ խմբագրութեան լեզուն, նման դեպքերում պետք է ղեկավարվել ավելի շուտ նախադասութեան բովանդակութեամբ, հողվածի ընդհանուր իմաստով և այլն, քան թե դասական դրաբարի կանոններով (թեև այս դեպքում էլ ետագաս ածականը երբևէ կարող է շոյուղվել): Եթէ ստորակետը դրվի «լիցի» բառից հետո, կտաքվի. պղինձը և այլն իշխաններին է հանդերձ թագավորի կողմից տրվող մեծամեծ պարգևներով: մի բան որ անիմաստ է: Մինչդեռ խոսքն այն մասին է, որ պղինձը (հանքերը) և այլն մեծամեծ իշխաններինն է և դրանց մշակման արտոնութունը նրանց պարգևում, շնորհում է թագավորը:

ԱՐ

Գ

63. Իսկ ձիւթ, եւ խունկ, եւ դեղնախունկ, զդթոր եւ մաղտաբէ, զարիկոն եւ սակամունի եւ այլք այսպիսիք, որք վաճառին եւ շահին, տասանորդիցին իշխանաց (Ա՛ էջ 47, Բ՛ էջ 326—327):

Իսկ ձիւթ, և խունկ, և դեղին խունկ, և մաղտաբէ, և դխտոր, զարիկոն և սակամունի և այլք յայսպիսեաց, որք վաճառին և շահին, տասանորդեսցեն իշխանք (էջ 317):

64. (Ա) Իսկ պտուղ ամենայն, գտեալ ի մայրիս իւրաբանչիւր սահմանաց. ևսցին լիցի շինականաց: Իրաւացի է տասանորդել ատարացն ի կրել պտղոցն... (էջ 47):

Վ. Բաստամյանցը կետագրութունը կատարել է այսպես. «Իսկ պտուղ՝ ամենայն գտեալ ի մայրիս իւրաբանչիւր սահմանաց ևսցա լիցի»:

Շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կրել պտղոցն... (էջ 327), որով զգալիորեն փոխվել է հատվածի իմաստը:

ԱՐ

Գ

65. Այլ գետք, յորոց հոսին սահմանաց՝ ոչ է, բայց առ որ հասանեն (Ա՛ էջ 48, Բ՛ էջ 327):

Այլ և գետք, ուտտի ակն էլանէ՝ նոցա է, և ոչ առ ուրհասանեն ն (էջ 317):

Այս հողվածի գետերին վերաբերող հատվածի խմբագրութուններից Խ. Սամուելյանը գերադասում Գ խմբագրութունը, «ընդունելով այն ավելի ճիշտ ու հարադատ, մանավանդ որ Սմբատ Գունդուսարի Գատաստանագիրքը, կազմված լինելով Մխիթար Գոշի Գատաստանագրից, յուրացրել է հենց այդ վերջին վարիանտով, որն անշուշտ ավելի հին է ու հարադատ: Տպագրված օրինակի իմաստը միանգամայն հակասում է № 488 և 749 (= մեր №№ 485, 657 ձեռագրերին, Գ խմբագրութուն-Խ. Թ.) ձեռագրերին և ամենայն հավանականությամբ հետնազույն ժամանակի դիտավորյալ փոփոխութուն է, կամ թե արտագրող գրիչների անգիտակ աղավաղումն» (2ին հաշ իրավունքի պատմություն, հ. I, Երևան, 1939 էջ 330. Ժանդիսյան, 96, տե՛ս նաև էջ 204): Խ. Սամուելյանն, այսպիսով, հատվածի Բ (հետևագրեա և Ա, որովհետև երկուսն էլ բառացիորեն նույնն են) խմբագրութունը համարում է հետնազույն և դիտավորյալ փոփոխութուն կամ գրիչների անգիտակ աղավաղումն և,

ընդհակառակը, Գ խմբագրութիւն ընթերցումը՝ ավելի հին, ավելի ճիշտ ու հարազատ: Նախ, այստեղ չկա գրիչներէ աղավաղման և ոչ էլ ճշտի ու ոչ-ճշտի հարց: Երկու ընթերցումն էլ անաղարտ են, երկուսն էլ ճիշտ: Քանի որ Ա խմբագրութիւն ընթերցումը ունեն այդ խմբագրութիւն թուր ձեռագրերը, ուստի այն հեղինակային է, հետևապէս բնագրային առումով հինը դա է. բնագրային առումով հետևագույնը Գ խմբագրութիւն ընթերցումն է, որքանով որ Գ խմբագրութիւնը ընդհանրապէս հետևագույն է: Երկրորդ, բայտ էութիւն երկու ընթերցումն էլ ճիշտ են, որովհետև արտահայտում են կամ սովորութեան իրավունքի տեղային տարբեր դրսևորումները, կամ միևնույն փաստի տարբեր իրավարմունքներ և կամ միևնույն իրականութեան զարգացման երկու կողմերը:

Ըստ ԱՐ խմբագրութեան գետը նրանք չէ, ում սահմաններից հոսում է, այլ նրանք, ում սահմաններին հասնում է, այսինքն՝ նրանն է, ով ջրանցքների, արհեստական առուների և այլնի միջոցով ջուր հասցնում է իր սահմաններին՝ հողերին: Ըստ Գ խմբագրութեան գետը նրանն է, ում սահմաններում այն բխում է: Գ խմբագրութեան ընթերցումը Խ. Ամատեայանը մեկնում է այսպէս. «Ըստ այս իրավարմունքի՝ գետի ակունքը պատկանում է կալվածատիրոջն, իսկ այդտեղից բնական հոսող ջուրը՝ ոչ ոքի» (նշված աշխ. էջ 204): Այս բացատրութիւնը թերի է կալվածատէրու ոչ ճիշտ ԱՐ և Գ խմբագրութիւնների հիմնական տարբերութիւնն այն է, որ Գ հակառակ ԱՐ-ի ջուրը չի համարում նրանք շառ ուր հասանի»: Եթե բնական հոսող ջուրը ոչ ոքի չի պատկանում, նշանակում է ամեն մեկը կարող է օգտվել նրանից, այդ թիւում և ջրանցքի, արհեստական առվի միջոցով ջուրը սեփական հողը հասցնելու միջոցով, այս իմաստով պետք է հասկանալ «առ ուր հասանի» արտահայտութիւնը: Բայց Գ խմբագրութիւնը ջուրը չի համարում նրա սեփականութիւնը, ով առու կամ ջրանցք է անցկացրել: Նկատի ունենալու է, որ այս հողվածում «գետ» պետք է հասկանալ լայն առումով, ոչ միայն գետը սովորական իմաստով, այլև աղբյուրները, մանր գետակները և այլն: Այս հատվածի երկու խմբագրութիւնները հիմնված են իրավական երկու տարբեր սկզբունքների վրա: Ըստ ԱՐ խմբագրութեան, գետը բոլորին է, հետևապէս ոչ ոքի մասնավոր սեփականութիւնը չէ: Երբ մեկը առու կամ ջրանցք է անցկացնում այդ գետից տանելով ջուր, վերջինս դառնում է մասնավոր սեփականութիւն այդ առվի կամ ջրանցքի շահով: Այս դեպքում իրավանորմի հիմքում ընկած է աշխատանքի ըսկզբունքը. աշխատանքով ձեռք բերվածը աշխատանք թափողին է, Բերք այս կարգի բազմաթիւ օրինակներից մեկը. «Ե իր թողիկոսութեան Հայոց Տեառն Սարգսի, և ի թագաորութեանն Գագկայ՝ որդու Սշոտայ... հայր Սարգիս... արարեալ բազում արգինս, և ամեալ զուրն ի լեռնէն ի մեծ դիտատր սարն, ուր ակունքն են քաղցրահամ գետոյն որ Զկնարած կոչն... բազում ջանի և մեծամեծ ծախիք բերեալ յանդաստան վանիցն, և զանհուն առապարն անջրդի արար ջրարբի և զամենայն լեռնակողմն. յորում ոչ գոյ ումեք հաշիւ՝ ոչ Պրակնցեաց և Կեչուեցեաց և ոչ այլ սահմանակից զիւզօրէիցն և ոչ այլ ումեք. և այս ի թուականին 457 (= 1008 թ. -Ն. Ք.), և զրէ ինքեան արծան ի վերայ եկեղեցույն սևադեղով. և հազարն և մեծամեծ նդովիք փակէ վասն ջրոյն զի մի ոք իշխեսցէ կտրել դնա և կամ հարակաշ գոյ և քաժինս անուով, բայց միայն թէ ըմպեն ի մատակէն մարդ և անասուն» (Ստեփանոս Օրբելլյան, Պատմութիւն Լաճախի Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 262—263, տե՛ս նաև էջ 253—255): Աս սոցիալական և այնուհետև իրավական շատ հին սկզբունք է: Գ խմբագրութեան սկզբունքը հատուկ է ավատատիրութեանը, մասնավոր դարգացած շրջանում:

Երկու՝ դատողութիւնն է: Այս դեպքում Սմբատն օգտվել է ոչ թե Գ այլ ԱՐ խմբագրութիւններից («Եւ չէ այն ջուրն՝ քանց այնոր որ տարաւ դայն ջուրն՝ հայրենիք իւր սեփական» հողվ. 3): Եվ որովհետև Սմբատի Գատատանագրքի այս հողվածում ցայտուն ձևով ընդգծված է նաև սերվիտուտային իրավունքը, ուստի պետք է ենթադրել, որ ԱՐ խմբագրութիւնը ևս պարունակում են այդ իրավունքը: Երկրորդ՝ բացի ԺԷՁ ձեռագրերից, Գ խմբագրութեան մյուս ձեռագրերում հատվածը նույնական է ԱՐ խմբագրութիւններին: Ն՝ 9513 ձեռագրի ընթերցումը (Ք. 336 ա) նույնական է ՄԿ ձեռագրերի ընթերցմանը:

ԱՐ

Գ

66. Եւ որք իւրաքանչիւր նոցա լիցին, առ որս անցանն. և յատարաց որսացեալ՝ տասանորդիցի, որոյ և իցէ սահմանի (Ա՝ էջ 48, Բ՝ էջ 327):

Որսը վայրիք, ով որսայ, նորս լիցի: Եւ ի՛նչ այլք յայոց սինօս որսան, յամէն տասնէ զմէկն զեզչին տիրոջն տան (էջ 317):

Ա.Բ

67. Եթէ պատահիցի ումեք զտաննի յան-  
դատանի, կամ յայլ ինչ ի կարուած իւր,  
կամ ի շինել զտուն իւր, ոսկի կամ ար-  
ծաթ ի գանձուց, եթէ նմանութեամբ զի-  
տասցեն, թէ յառաջնոց թագաւորաց է,  
արքունի լիցի (Ա՛ էջ 48, Բ՛ էջ 328):

Ա.Բ

68. Եթէ կոռփցին արք, եւ մին պատա-  
հի անկատար լինել եւ յանդգնեալ փետ-  
տիցի զմորուս կատարելոյն, դատաստան  
լիցի. կրկին մասամբ զճերսն հատանել եւ  
զանիւ ըստ արժանւոյն կսկծեցուցանել.  
մանաւանդ զի զպատուաւոր անարգեաց  
(Ա՛ էջ 48, Բ՛ էջ 329):

69. (Գ, էջ 318) Մալազ: Հ. Աճառլանը համարում է «նորագլուս բառ, որ երեք անգամ զտնում եմ:  
զործածված Մխ. դատ.» Արմատական բառարան, հ. Գ, էջ 728): Նույն հեղինակը. «Մալազ  
բառին իբրև հոմանիշ են դրված «անկատար, փոքր». իսկ իբրև հակահիշ «կատարեալ եւ  
աւագ»: նկատելի է նույնպես, որ մալազը կը փետտէ կատարեալին մօրուբը, եւ թէև պատ-  
ծին մէջ ակն ընդ ականի սկզբունքը կը պահպի, բայց մալազին մազը միայն կը կտրեն  
եւ ոչ մօրուբը: Ասկէ կը հետեի, որ մալազ կը նշանակէ «ոչ-շափահաս, դեռ մօրուբ շեկած  
մարդ» (Հայերեն նոր բառեր հին մատենագրորայն մեջ, հ. Ա, Վեներիկ, 1913, էջ 65—66):  
Ծագած է համարում «արար. malas հոմանիշ ձևից, որ թեև ճիշտ այս ձևով չկա կամուսի  
մեջ... բայց նույնից են imlās տշխարի բուրդը թափիւ», ... malasa «հարթ ու ողորկ դառ-  
նալ», ... almas «հարթ, ողորկ» (Արմատական բառարան, հ. Գ, էջ 729). տե՛ս նաև Հայե-  
րեն նոր բառեր..., հ. Բ, Վեներիկ, 1926, էջ 290):

Լ. Մեխրեսիթ-բեկը (Христианский Восток, т. II, вып. III, СПб, 1914, էջ 389, «По  
поводу термина малязъ malazep в армянском») գրում է, որ հայերեն մի ձևուպարում,  
1480 թ. գրութիւմը «встречается термин малязъ malazep в значении, несомненно,  
монаха» և այս դեպքում բառը համարում է հունագուն ձևը հունարենից փոխառված μοναχὸν  
բառի Սրա հետ է կապում նաև Դատաստանագրքի «մալազ» բառը, (տե՛ս նաև Մ. Մ.—Ե.  
Христианский Восток, т. III, вып. 2, Петроград, 1914, էջ 200): Գ խմբագրութիւն  
ԶԱ հոգովածի վերնագրին է: «Վասն որ զկոյս խօսեալ խաբեսցեն մալազը» Հոգովածի վերջում  
ասված է. «Ապա թէ երիտասարդն կամ իւրքն ոչ կամին առնուր...»: Ըստ այսմ՝ մալազ = երի-  
տասարդ:

Ա.Բ

70. Եւ թէ աւելի, քան զաբէնն, անզը-  
թաբար հրամայիցէ զործել, եւ այնու վնաս  
մահու հասցէ ի տերանց ընդ հարկու ան-  
կելոց, պարտապան լիցի արեան դատաս-  
տանի զերագունից տերանց, և ըստ ար-  
ժանւոյն զապաշաւանս (Բ՛ զապաշխա-  
րանսն) ցուցցեն խոնարհութեամբ, եւ  
զայլսն ի վնասից՝ զբժշկութեան եւ բղխա-  
փանածոյն հատուցեն, եւ յանբժշկելիացն՝  
զտուգանս (Ա՛ էջ 48, Բ՛ էջ 330):

Ա.Բ

71. ....զոր աշխարհականք առնեն արք  
եւ կանայք՝ վերակացու լինել եկեղեցույ,  
եւ զբահանայս լռեցուցեն զաւշաբաղու-

Գ

Եթէ շինէ որ տուն, կամ վարէ արտ, կամ  
փորէ հող և զտանն գանձ կարասով կամ  
այլ փոքր ամանով, այն թագաւորաց Լ  
իրաւունք (էջ 318):

Գ

Եթէ կոռփն արք երկու, և մինն մալազ  
լինի և մինն՝ կատարեալ, և ձգէ մալազն  
և փետէ զմուրուբ կատարելոյն, դատաս-  
տան լիցի, որ կտրեն զմալազին մազն եր-  
կու տարպաշ, քանզի զկատարելոյն մու-  
րուբն քարշեաց և եհան, և եւթն փայտ  
ի վերայ թիկանցն տան (էջ 318):

Գ

Իշխանք և այլք, եթէ յաւելի դատելն  
զպատիկոսս, որ ընդ ձեռամբ իւրեանց իցեն,  
և հանդիպի մեռանել, արեան գինք առցեն  
ի նմանէ և տացեն յորդիս կամ յազգայինս.  
եւ թէ ձեռն կտրեն կամ ոտն, կամ ատամն  
խլեն կամ ակն, զգինս տան. և թէ բժշկօք  
լիցի՝ զվարձս բժշկին և զխափանումն վը-  
ճարէ (էջ 318):

Գ

....զոր աշխարհականք առնեն արք և  
կանայք՝ վերակացուք լինին եկեղեցույ Աս-  
տուծոյ և զմուտս և զպտղիս ոտեն: Արդ,

Յեամբ վարեալս եւ ակնառութեամբ եւ այլ-  
ովք ախտիք: Եւ այդ ճշմարիտ դատաս-  
տան է յեկեղեցի անզղջից, իսկ զղշացելոց՝  
ուղղիլ (Ա՛ էջ 49, Բ՛ էջ 120):

ԱԲ

72. Ի դատաստանէ զատաւորացս, ի  
կանոնական հրամանացս ուսար՝ մի շնորհ  
լաշտիճանսն լինել եւ եկեղեցւոյ ըզդա-  
տողութիւնն. եւ հթէ արտաքոյ իրաւանց եւ  
աշառանայք վարիցի, անկցի յայնմ շնորհ:  
Զի գոն եւ զատաստանք զատաւորաց ի վե-  
հիցնն բան զնոսա՝ գիտողացն զիրաւունս  
արինացն (Ա՛ էջ 50, Բ՛ էջ 332):

73. ԽԴ հողվածը ամբողջովին կգնմ եւ հայր.սպետին վերագրվող կանոնների 67-րդ կանոնն  
է ըստ հայոց Կանոնագրքի: Բայց այս կանոնը այնպես, ինչպես կա Գատաստանագրքում,  
զգալիորեն տարբերվում է Կանոնագրքում հրատարակվածից: Համադրենք.

Գատաստանագիրք

Եթէ որ ժառանգատր կամ ժողովրդական  
առցէ ի սուրբ եկեղեցւոյ մոմեղէն կամ ձէթ,  
որոշեսցի եւ հնգապատիկ տուժեսցի, որով  
առն անաթով սուկեղինաւ կամ արծաթեղինաւ  
սրբեցելով: Եւ մի որ ի պէտս գողացեալ,  
զի արինազանցութիւն է. ապա եթէ որ  
ըմբոնեսցի՝ պատուհասեալ որոշեսցի:

Կանոնագիրք

Եթէ որ ժառանգատր կամ ժողովրդական  
առցէ ի սուրբ եկեղեցւոյ մոմեղէն կամ ձէթ՝  
որոշեսցի. եւ հինգապատիկ տուժեսցի, հան-  
դերձ որով առն:

Անաթով սուկեղինաւ կամ արծաթեղինաւ  
սրբեցելով մի որ լիւր պէտս գողացեալ, զի  
արինազանցութիւն է. ապա թէ որ ըմբո-  
նեսցի՝ պատուհասի որոշեսցի:

Կետադրութիւնն այստեղ կական նշանակութիւն ունի, ուստի այն պետք է զննել քննու-  
թիւնից հետո Բայց դա կապվում է նաև այս կանոնի հունական բնագրի հետ, որին նույնա-  
կան է ուսու-սլավոնական կանոնը.

Կանոն 72. «Եթէ որ կղերականներից կամ աշխարհականներից գողանա (пачитит) մոմ  
կամ ձէթ թող մերժվի (Да будет отлучен) եկեղեցական հաղորդութիւնից եւ հնգապա-  
տիկ ազկիացնի նրան, ինչ վերջրեցի:

Կանոն 73. Անոթ սուկեղեն կամ արծաթեղեն սրբեցյալ կամ վարագույր թող ոչ որ ի պետս յոր  
չլուրացնի՝ անօրենութիւնն է: Եթե որ անի այդ՝ պատժվի մերժումով (отлучением)» (Кни-  
га правил...): Ինչպես նշում է Կանոնագրքի հրատարակիչը (Կանոնագիրք հայոց, հ. Ա.  
էջ 555—556), հայերենում այս երկու կանոնները միացվել են: Կանոնագրքում այս կանոնը  
հրատարակվել է երկու պարբերութեամբ, հարմարեցվելով հունական բնագրի երկու կանոն-  
ներին: Հունարենում, նաև ուսներենում, խոսքը, իրոք. Երկու հարցի մասին է. ա) Էթե  
գողացվում է մոմ կամ ձէթ եւ բ) եթե գողացվում է անոթ կամ վարագույր:

Գատաստանագրքի եւ Կանոնագրքի մեկական ձեռագիր ըստ բովանդակութեան համընկնում  
են հուն-սլավոնական կանոնին: Ձեռագիր № 486 (= Բատաստանացի նշումով 490, Բ  
խմբագրութիւն, թ. 111 Բ, փակագծերում նշում ենք նաև ոչ-ուղղագրական տարբերութիւնները-  
ները ըստ № 659 ձեռագրի. բացի կանոնի երկրորդ մասից, որը բերված է Կանոնագրքի  
ծանոթագրութիւններում՝ էջ 556). «Եթէ որ ի ժառանգատրաց կամ ի ժողովրդականաց ի

սրբոյ եկեղեցոյ անու զողոթնամբ մոմեղին կամ ձեթ ի բաց որոշեսցի. և հնգապատիկ տուժեսցի որով անն անաթով. կամ թէ անաթ ինչ ոսկեզէն կամ արծաթեղէն որ բերաւ յեկեղեցին և սրբեցաւ և (թէ չիլ և) յիւր (չի՛ք) պետա առ կամ զողացեալ թաքուցել այս արհնայազանցութիւն (անարէնութիւն) է և թէ ոք ոմբոնեսցի այսպիսի (այսպիսի) իրս պատուհանեսցի և ի բաց որոշեսցա՞» (ուղազարութունը և կետադրութունը ձեռագրինն է) :

Դատաստանագրքի ու Կանոնագրքի մնացած բոլոր ձեռագրերում խոսքը միայն մեկ հարցի՝ մոմ կամ ձեթ զողանալու մասին է: Կանոնագրքի այն ձեռագրերը, որոնք զրվել են բնագրի հիմքում, հնարավորութուն են տալիս հրատարակչին կանոնը կետադրելու և պարբերութունների վերածելու այնպես, ինչպես արված է և այդ դեպքում կանոնը լիովին իմաստավորված է: Առաջին մաս. եթե վերջնում են մոմ կամ ձեթ, մերժվում են եկեղեցոց և վճարում հնգապատիկը՝ հանդերձ անոթով, որով վերջվել է: Երկրորդ մաս. եթե եկեղեցում եղած սրբեցյալ ոսկեզէն կամ արծաթեզէն անոթով ձեթ զողացվի՝ «այստուհասի որոշեսցի»: Դատաստանագրքի ձեռագրերը հնարավորութուն չեն տալիս կանոնը կետադրելու և պարբերութունների վերածելու այդպես «Որով անն» բառից հետո վերջակետ չընելուն խանգարում է արծաթեղինաւ սրբեցելով» բառից հետո եղած «եւ»-ը, որը թելադրում է վերջակետը դնել հենց այդ «եւ»-ից առաջ, ինչպես վարվել է նաև Վ. Բաստամյանցը ծիրտ է, այս դեպքում կանոնի իմաստը այնպես չէ, ինչպես Կանոնագրքում է, բայց մենք իրավունք չվերապահեցինք մեզ սրբագրելու կանոնը առանց ձեռագրական տվյալների:

74. Վ. Բաստամյանցը (ձանոթագր. 228) նշելով, որ ին հոդվածը Կրեմի Կը կանոնն է, ավելացնում է. «Բայց մեր հեղինակը կանոնի վերջում կցել է մի տող՝ ուպլես զի մի շաճեւ... և այլն, որ սկիզբն է Կրեմի հետևյալ ԿԹ՝ կանոնի»: Վ. Հակոբյանը իրավացիորեն գրում է. «Այս հոդվածի վերջին մասը «որպէս զի մի շաճեւ ինչ թուեսցի ի փախուցելոյն» բոլոր ձեռագրերում (Կանոնագրքի—հ. Թ.), բացի ձեռագրերից, սխալմամբ անշատել և դրել են հաջորդ՝ ԿԹ հոդվածի սկզբի մասում: Այդ ձևով միտքը մնում էր աղավաղված, ուստի այն ուղղեցինք համաձայն հունարենի և վերևում նշված ձեռագրերի» (Կանոնագրի՞՛մ Հալոց, հ. Ա, էջ 556): Այդ ուղղումը հաստատում է նաև Դատաստանագրքը, որի մեջ Կանոնագրքը պահպանված է ավելի հարազատ ձևով:

75. (ԱԳ) Բոլոր ձեռագրերը ունեն. «Ոչ է պարտ կայիկոպոսին աբկանել զինքն յերկաւոր հոգս, այլ պարապել եկեղեցական պիտոյից, ապա թէ ոչ՝ իւրացի դեիցել (Գ գիտասցէ)... (Ա, էջ 54, Գ՝ էջ 323):

Վ. Բաստամյանցը իրավացիորեն «իրաացի դեիցել» ուղղել է ըստ Կանոնագրքի՝ «ի բաց դեիցի» (տե՛ս ծանոթագր. № 231), որին հետևեցինք և մենք, բայց թողեցինք «դնիցէ» և ոչ «դիցի», որովհետև և՛ Կանոնագրքի և՛ Դատաստանագրքի ձեռագրերը՝ չունեն «դրնիցի»:

ԱՐ

76. Ապա թէ տէր իւր տացէ նմա կին, եւ ծնանիցի նմա ուստերս եւ դատերս, կինն եւ որդիքն տեառն նորա եղիցին, եւ նա միայն ելցլ. փրկանաք ելցին եւ նորա (Ա, էջ 56, Բ, էջ 335):

Գ

Ապա թէ տէրն իւր տացէ կին նմա, և ծնանիցի նմա ուստերս և դատերս, կինն և որդիքն տեառն ինիին, և նա միայն ելցլ, փրկանաք (էջ 325):

Գ

77. Որ հարկանէ զհայր կամ զմայր իւր մահու մեռցի: Այդորիկ բոս Արքինացն: Նմանապէս կանոնք լիցին մահու շափ ապաշխարել: Իսկ դատաստան այս լիցի. եթէ յանրզգայութեան և ի մանկութեան զործէ, ներելի է ծնողացն, այսպ թէ յանդնութեամբ և արհամարհանաք՝ իշխան լիցին ծնողքն, յետ բազում անգամ խրատո, առաջի բահանայից և ծերոց հրածարիլ (Բ հրածարել) ի նմանէ և տարագրել ի ծառան-

ծիլ, որ անարգի յորդոյ իւրոյ, և կամ թէ այլ անօրէնութիւն գործեն որդիքն առ օտարս, վասն անարգանացն հրաման տայ Օրէնքն, զի իշխանութիւն ունի հայրն տանել զորդին իւր առաջի դատաւորաց, զի թէ յանձին կայնու զմեղանա իւր և այլ ոչ արտոցլ՝ խրատեսցի և արձակեսցի, այսպ թէ ոչ՝ պատժեսցի, զի ի հնումն, բոս Օրինացն, զհայր և զմայր անարգողսն զերկեզի փայտէ կախէին:

գուժենէ: Ապա թէ զղացեալ շատ կամաց նոցա դարձցի ապաշխարութեամբ արժանապէս, ընկալեալ լիցի դարձեալ (Ա, էջ 57, Բ, 337—338):

Այլ վասն շար գործոց, զոր արարին առ օտար մարդիկ, ոչ տայ նմա հրաման Օրէնքս բամբասել զորդիսն առաջի դատաւորին (էջ 326):

Ա

78. Ապա թէ շիցէ հնար՝ անզղշիցն լիցի խրատ, զգինն ի գողացելոյն տացնն տեսաւ, եւ խրատեալ յաւս՝ արձակեցնն (էջ 57):

Բ

Ապա թէ շիցէ հնար, զգինն ի գողացելոյն տայցնն տեսաւ. եւ խրատեալ յաւս արձակեցնն, կամ նշան դիցի. անզղշից եղիցի խրատն (էջ 338—339):

Գ

Ապա թէ շիցէ հնար՝ զգինն ի գողացելոյ տէրն տացնն և խրատեալ յաւսն՝ արձակեցնն, և կամ նշան դիցնն. իսկ անզղշիցն լիցի խրատ (էջ 326):

Ա

79. Եթէ յառնիցէ այրն և շրջի ի ցպոյ արտաքոյ, անպարտ լիցի՝ որ եհարն, բայց զխափանածոյ նորա և ըզբըժըղիութեան նորա տուժեսցի:

Այս դատաստան լրմամբ լիւրինացն ասացաւ, և մեղ զնոյն ամբողջ պահելի է: Եւ մեղելոյն սպաշխարութիւն լիցի (էջ 57—58):

Բ

Եթէ յառնիցէ այրն և շրջի ի ցպոյ արտաքոյ, անպարտ լիցի որ եհարն: Մեռելոյն սպաշխարութիւնն լիցի: Բայց զխափանածոյ նորա և զբժըղութեան նորա տուժանեսցի. և թէ մեղցի՝ զգինն:

Այս դատաստան լրմամբ յօրինացն ասացաւ. և ի մեղ զնոյն ամբողջ պահելի է (էջ 340):

Գ

Եթէ յառնիցէ այրն և շրջեսցի արտաքս ի ցպոյ, անպարտ լիցի՝ որ եհարն, բայց ըզխափանածոյն և ըզբըժըղութեան տացէ, իսկ եթէ մեռանի՝ ըզգինն առնուն:

Այս դատաստան լրմամբ յօրինացն ասացաւ, և մեղ զնոյն ամբողջ պահելոյ արժան է (էջ 326—327):

ԱԲ

80. Վաճառեսցեն զցուլն կենդանի և բաժանեսցեն զգինս նորա, և զցուլն ըսպանեալ բաժանեսցեն (Ա՝ էջ 60, Բ՝ էջ 346):

Գ

Վաճառեսցեն զցուլն կենդանի և բաժանեսցեն զգինս նորա երկու տէրքն, և ըզցուլն սպանեալ վաճառեսցեն և բաժանեսցեն (էջ 329):

ԱԲ

81. Տուժեսցի ցուլ ընդ ցլու, և ըսպանեալ և նորա լիցի (Ա՝ էջ 60, Բ՝ էջ 346):

Գ

Տուժեսցի ցուլն ընդ ցլի: Այս է տուժիլն. ցլոյն փոխան զցուլն կենդանի տացնն, և մեռեալ ցուլն ըսպանողի տիրոջն փոխան լիցի (էջ 329):

Ա

82. Եւ անկանիցի անդ արշառ և կամ էջ (Ա՝ էջ 60, Բ՝ էջ 346):

Գ

Եւ անկանիցի անդ անասուն զինչ և իցէ էջ 329):

83. (ԱԲԳ) Իսկ եթէ խնդրիցէ ոք անաւր յրեկերէ իւրմէ... (Ա, էջ 64, Բ, 355, Գ, 333):

Վ. Բաստամլանցը գրում է, որ Գատաստանագրքի վրացերէն թարգմանութեան մեջ «անօթ» բառը թարգմանված է «ուշաղի», որ նշանակում է էջ (ավելացնում է. Երեւանի նահանգում, և Տաճկաստանի շատ տեղերում նոյնպէս գործածում են ուշաղ բառը էջ, մատակ ձի, զորն նշանակութեամբ): Մուլն հողվածում «անօթ» բառը նա հասկանում է «թե հատկապես անօթ, զօ. աման, կաթնաս, կուժ, կարաս կլն, որոց համար գրած է՝ բնկցի, և թե բնտանի անասուն, զօ էջ, եզն, ձի կլն, որոց համար գրած է՝ մեռցի կամ զերի զնասնէ» (ծանոթագր. 764):

ն. Մառը նշում է, որ «издателем это выражение не понятно, судя по примечанию 764» և իբր վայցիորեն «այնուհետև տալ» հասկանում է «одолжить (в противоположность (г)անուիթ խնդրել ևս առնուլ» (Сборник притч Вардана, часть I, СПб 1899, էջ 55—56): Մակայն Հայկազյան նոր բառարանն արդեն նշում է, որ «այնուհետև առնուլ» նշանակում է Ձանութ ինչ և զղործի ի փոխ և ի պետս առ ժամանակ մի առնուլ»:

84. (ԱԲԳ) Եսկ էքէ խարիցէ ու գզոյս խաստեցեալ եւ ներիցէ ընդ նմա... (Ա՛ էջ 64, Բ՛ էջ 130, Գ՛ էջ 333):

Այս հոդվածի առաջին մասը բառացի նույնն է Ելք, ԻԲ, 16—17, այն տարբերությամբ, որ Ելք-ում խոսքը «ոչ խօսեալ» կույսի մասին է, այստեղ՝ «խառնեցեալ»: Առաջին հայաբոլից կարող է թվալ թի «ոչ»-ը պատահական գրչագրական վրիպակ է և, ուրեմն, հոդվածը պետք է սրբագրել բառ Ելք-ի Բայց, այս դեպքում, թվում է, խոսք չի կարող լինել գրչագրական վրիպակի մասին, որովհետև այդ «ոչ»-ը շկս Դատաստանագրքի և ոչ մի ձեռագրում: Երկրորդ՝ այլ դեպքերում էլ Մխիթարը փոխում է Մովսիսական օրենքները, երբեմն արմատապես, և այս հոդվածը պատկանում է դրանց թվին: Բացի դրանից, «ոչ խօսեալ» կույսի բնաբարմանը Մխիթարը նվիրել է առանձին հոդված՝ ԱԴ 29 (= Բ, I, 20), որտեղ բերված են Բ Օրին. 28—29 հոդվածները, որոնք նույնպես վերաբերում են այդ հարցին (աշխի մանրամասն տե՛ս Խ. Քոռոսյան, Մխիթար Գործի Դատաստանագրքի առեղծվածաբանությունը Աստվածաշունչ գրոց հետ, ՀԱՄԻ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1963, № 4, էջ 61—74):

85. (ԱԲԳ) Հրատարակված բնագիրը (= Բ խմբագրություն) ունի. «որ աղբառ իցէ և բնակեսցի առ քեզ...» (Ա, էջ 65, Բ, 365, Գ, 333):

Հոդվածի առաջին մասն է Ելք, ԻԲ, 25: Դատաստանագրքի ոչ մի ձեռագիր չունի «և բնակեսցի»: Դա նշում է նաև Վ. Բաստամյանցը և ավելացնում. «բանի որ Աստվածաշնչի մեջ կա այդ բառը և «ենթադրելով, որ այդ պատահական սխալ է գրչի, գուցե նույնիսկ Մխիթարի աչքի տակից փախած, մենք ավելացրինք իմաստի պարզության համար» (ծանոթագր. № 767):

Մեր ստուգած հայերեն Աստվածաշնչից «և բնակեսցի» չունեն Զոհրայական հրատարակությունը (Վենետիկ, 1805), Վենետիկի 1860 թ. հրատարակությունը, Կ. Պոլսի 1895 թ. հրատարակությունը. ունի Պետերբուրգի 1817 թ. հրատարակությունը. չունեն նաև Պետերբուրգի 1912 թ. և Մոսկվայի պատրիարքարանի 1956 թ. ուսերեն հրատարակությունները: Նշանակում է Ելք-ի այդ հոդվածը հնուց արդեն երկու ընթերցում է ունեցել՝ Պետք է, ուրեմն, ենթադրել, որ Մխիթարի ձեռքի տակ եղած օրինակը ևս չի ունեցել «և բնակեսցի» ընթերցումը: Այդ պատճառով հոդվածը թողինք բառ Դատաստանագրքի ձեռագրերի:

86. Եւ զոր ինչ ծախեալ իցէ ի նմանէ, ի գլուխ իւր համաբիցի... (Ա, էջ 66):

Ա խմբագրության ձեռագրերն ունեն. ԱաԲԹ՝ ի նա, ԱԷ՛ նմա: Գ խմբագրություն. ԺԻԶՊ՛ նմա, ԽԵԿՂՄՅԵ՛ ի նմա և ՃՆՈ՛ ի նմանէ (էջ 334): Բ խմբագրությունն ունի՝ ի նմա (էջ 358): Քանի որ հոդվածում խոսքը գրառվ դրված ապրանքի կամ այդ ապրանքի մի մասը ծախելու մասին է, ուստի Ա խմբագրությունը ևս սրբագրեցինք համաձայն Գ խմբագրության ՃՆՈ ձեռագրերի, որոնց ընթերցումն ունի նաև № 9513 ձեռագիրը (թ. 348 ա):

87. (ԱԲԳ) Եւ անուանեալ որդի կնոջ Խուայելցոց (Ա, էջ 68, Բ, էջ 132, Գ, էջ 336):

Դատաստանագրքի ոչ մի ձեռագիր չունի «որդի»: Վ. Բաստամյանցը ավելացրել է իր կողմից, որովհետև նախադասության իմաստը ակնհայտորեն պահանջում է այդ Բայց Վ. Բաստամյանցը ավելացնում է նաև, որ Աստվածաշունչը ևս չունի «որդի» (էջ 132, տարբերակներ էջ 132, տարբերակներ էջ 132): Նշենք, որ մեր ստուգած Աստվածաշնչից «որդի» ունեն, օրինակ՝ Վենետիկի 1860 և Կ. Պոլսի 1895 թթ. հրատարակությունները, այդ պատճառով մենք ևս ավելացրինք բնագրում:

88. (Գ) ... և եկեսցէ մերձաւորին, որ մերձաւոր է նորա... Ապա քէ շիցէ ուրում մերձաւորիչ, և նևնհաս իցէ... (էջ 337):

Առաջին դեպքում բոլոր ձեռագրերն ունեն «մերձաւոր ինչ», երկրորդ դեպքում, բացի ՃՄՅ-ից, մյուս բոլոր ձեռագրերը դարձաւ ունեն «մերձաւոր ինչ»: Սրբագրել ենք համաձայն ՃՄՅ ձեռագրերի, որովհետև այդպես է Աստվածաշնչում, մանավանդ որ սովորական

Յշուրատեսությամբ (աչքի խաղով) «մերձաւորիչ»-ը հեշտությամբ կկարգացվեր նաև «մերձաւոր ինչ»՝ ՃՄԹ-ի ընթերցումն ունի նաև № 9513 ձեռագիրը (թ. 350 ր)։

89. (ԱԿ) Ապա թև ոչ զացի ի ձեռին Ըորա... (Ա՛ էջ 69, Գ՛ էջ 337)։

Բ խմբագրութիւնը ինչպես և ԱԿ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերը ունեն՝ ձեռն, կամ ի ձեռն, կամ ի ձեռս։ Սրբագրել ենք համաձայն Աստվածաշնչի, ինչպես վարվել է նաև Բաստմյանցը։

90. եւ ելցէ ի բողոքեանն (Ա՛ էջ 69, Գ՛ էջ 337)։

Բ խմբագրութիւնը ունի. «եւ ոչ ելցէ» (էջ 364)։ Վ. Բաստմյանցը ծանոթագրում է. «Թեպետ մեր և մյուս բոլոր օրինակների մէջ չկա ոչ և դրած է միայն ելցէ, բայց որովհետև նախ նույն իսկ նախադասութեան իմաստը պահանջում է, որ լինի՝ ոչ ելցէ, երկրորդ՝ Աստվածաշնչի մէջ, որտեղից հանած է սույն կտորը, կա այդ ոչ և դրած է՝ ոչ ելցէ, և երրորդ՝ չէ կարելի կարծել որ Մխիթարը կամենար մի այլպիսի մեծ փոփոխութիւն աւելնի աստվածային օրենքի մէջ... ուստի մենք ենթադրում ենք որ այդպէս մասնիկի պակասութիւնը ավելի պատահական է և գրիչների սխալ, թերևս նույնիսկ Մխիթարի աչքից փախած, վասն որո և դնում ենք ոչ ելցէ համաձայն Աստվածաշնչին, մանավանդ որ այդպիսի է դրած և հունարեն ու սլավոներեն Աստվածաշնչի մէջ» (ծանոթագր. № 785)։ Մեր ըստուգած հայերեն չորս Աստվածաշնչերը տալիս են հետևյալ պատկերը.

Պետերբուրգի 1817 թ. հրատարակութիւն—«եւ ոչ ելցէ»,

Կ. Պոլսի 1895 թ. հրատարակութիւն—«եւ մի ելցէ»,

Վենետիկի 1805 թ. հրատարակութիւն (Ձոհրապայան)—«եւ ելցէ»,

Վենետիկի 1860 թ. հրատարակութիւն—«եւ ելցէ»։

Ակնհայտ է, որ առկա է Աստվածաշնչի, գոնե Ղևտ., 2Ե, 30 հոդվածի, երկու խմբագրութիւն։ Այս պայմաններում իրականութեան համապատասխան կարելի է համարել, եթե մտածենք, որ Մխիթարի ձեռքի տակ եղած Աստվածաշնչը ունեցել է վերջին ընթերցումը և ըստ այդմ էլ ընդօրինակվել է Մխիթարի կողմից։ Այդ պատճառով քննարկը թողինք անփոփոխ ։

91. (ԱԲԳ) եւ մեղու վանտեալ յաշնան ըստ մեղեւ, գոր ունին, հաստատիցի սերկանն (Ա՛ էջ 71, Բ՛ էջ 367, Գ՛ էջ 339)։

«Սերկան» բառի դիմաց ձեռագրերը ունեն նաև սերական, սերականն, ըստ սերմանն, տէր կանն։ Վ. Բաստմյանցը ծանոթագրում է. «Բայց մենք շունչը սերկան բառ. վասն որո պետք է լիներ Սերականն, ինչպես գրած է № 489 (= № 209, Ա խմբագր. Զ—Ե. Թ.) մեջ ,և որին փոքր ինչ հարմարում է Սինոդի օրինակի՝ ըստ սերմանն, այսինքն՝ վաճառելով աշնանը մեղուները պիտի տրվի նոցա հետ և գարնան սերունդը կամ ծնունդը. և կամ պետք է լինի՝ սերկանն, այսինքն վաճառելով աշնանը մեղուներ՝ պիտի տրվի այն, ինչ որ կար նույն օրը, վաճառման օրը» (ծանոթագր. № 791)։

Հ. Կարստը թարգմանել է. «Betreffend Bienenkauf, der im Herbste geschieht, so erfolgt der Abschluss des Kaufvertrages nach Massgabe des Honigs, den sie haben» (Armenisches Rechtsbuch, zweiter Band, Strassburg, 1905, էջ 227) «Մեղուների գնման մասին, որ տեղի է ունենում աշնանը. գնման պայմանագիրը կնքվում է ըստ մեղրի այն շափի, որ նրանք ունեն» և ծանոթագրել է. քննարկ «սերկանն» պետք է կարդացվի «ասմանն»—die Kaufbestimmung (անդ, էջ 227)։ Կարստը, թվում է, ճիշտ է թարգմանել, հետևապես, ճիշտ է ընկալել հոդվածի իմաստը։ Ըստ այսմ նա հետևել է Բաստմյանցի երկրորդ առաջարկությանը՝ «սերկան» սերկան ընկալելով, բայց հենց այդ պատճառով անհաջող է թվում «ասմանն» նրա առաջարկությունը։ Այդպես է հասկացել նաև Սմբատ Սպարապետը. «Եւ որ մեղուք վաճառեն, նա թէ մեղուն լինի՝ նա մեղուին գէղ որ կայ ծախեն...» (ըստ Ա. Գալստյանի հրատ. հոդված 138, ըստ Կարստի՝ 110)։

Գրատաստանագրքի ձեռագրերից մեկը նկատի ունենալով (ձեռ. Գ, Ա խմբագրութիւն) «սերկանն» հավանաբար աղավաղումն է «սակս սերմանն» ընթերցման։ Զեռագիր Գ. «Մեղուք վաճառեալը յաշնան ըստ մեղրին, գոր ունիցի սակս սերմանոցի, ըստ այնմ եւ վաճառն հաստատիցի...»։ Ուստի, «սերկանն» պետք է կարդալ «սակս սերմանն», բայց հենց այսպիսի ընթերցում չունենալու պատճառով քննարկը թողինք անփոփոխ։

92. ԱԳ խմբագրութիւնների (էջ 73 և 341) «այլ մասունս անուն, որպէս եւ ցուցանի» բա-

ներից հետո Բ խմբագրութիւնը (էջ 372) ունի. «Յակի գեկանն վից դանգ է, պօպաս<sup>1</sup> գեկանն էրեր գանգ. Թատուն ի դանգին շորիցն մին» և այնուհետե ինչպիս ԱԳ խմբագրութիւններում:

Ա

Բ

Գ

93. Նախ զայն ասասցուք, զի երկու գուտար միոյ ուտեր աոցէ բաժին (էջ 74):

Եւ նախ զայն ասասցուք զի երկու գուտար աոն եղեալքն միոյ որդւոյ աոցէ բաժին (էջ 374):

Եւ նախ զայս ասասցուք, զի երկու գուտար, որ այր աոնալ իցեն, մի որդոյ բաժին աոցեն (էջ 342):

Ա

Բ

Գ

94. Եւ եթէ հայր իցէ, կինն միայն աոցէ մասն, եւ ոչ մայր եւ ոչ քոյր, ապա թէ ոչ իցէ՝ մայր եւ քոյր մասնաւորին (էջ 75):

Եւ եթէ հայր իցէ, կինն միայն աոցէ մասն, եւ ոչ մայր ոչ քոյր մասնաւորին (էջ 376):

Եւ եթէ հայր իցէ, կինն միայն աոցէ մասրն, եւ ոչ մայր եւ ոչ քոյր մասնաւորին, որ և այս իսկ է (էջ 342):

95. Բ խմբագրութիւնն հրատարակված բնագրում այս հոդվածի մեք էրեք անգամ «իգին» բառը տպագրված է «ի գին» ձևով, որը անպայման վրիպակ է (զուցեց տպագրական), որովհետև խոսքը էգի (կնոջ, աղջկա) գնի մասին է, ինչպես ակնհայտ է հոդվածի իմաստից, ինչպես է Աստվածաշնչում և ինչպես հասկացել է նաև ինքը Վ. Բաստամյանցը իր № 805 ծանոթագրութիւն մեջ (Ա, էջ 74, Գ, էջ 342):

96. (ԱԲ) կամ յաղագս պիտոյից կարգաց (Ա, էջ 74, Բ, 374):  
Վ. Բաստամյանցը ծանոթագրում է. «Թերևս պետք է լիներ՝ կարգած, որ ավելի հարմար է» (ծանոթագր. № 802):  
Գ խմբագրութիւնն ընթերցումը (էջ 342) պարզում է հարցը. «յաղագս կատարելութեան հասակին և կամ յաղագս կատարելութեան պիտոյից կարգաց»:

97. (ԱԳ) Ապա քէ ոք զկանոնացն ընդդիմ այսմ դիցէ... (Ա, էջ 75, Գ, էջ 343):  
Բ խմբագրութիւնն ունի զկանոնցն (էջ 376), որն ակնհայտորեն սխալ է (կամ զուցե վրիպակ է):

98. (ԱԳ) Եւ ոչ էրէ յորժամ հաննեցի ոչ, արձակէ ազատ, այլ եւ ոչ քեաւ արձակել, առանց բանի պտեկութեան, իշխան է (Ա, էջ 80, Գ, էջ 347):  
Վ. Բաստամյանցը կետադրել է. «Ոչ եթէ յորժամ հաննեցի՝ ոչ արձակէ ազատ, այլև ոչ քեաւ արձակել... իշխան է »էջ 138), որով էական փոխվել է հոդվածի իմաստը: Որ տրոճման նշանը պետք է դրվի (հաննեցի) «ոչ»-ից հետո և ոչ թէ դրանից առաջ, հաստատվում է և հոդվածի իմաստով և մանավանդ Գ խմբագրութիւնն ընթերցումով. «Եւ ոչ եթէ յորժամ ոչ հաննեցի...»:

ԱԲ

Գ

99. ....զտուգանս լինել ի դատարաց ....զտուգանս լինել ի թագարաց (էջ Ա, էջ 82, Բ, էջ 309): 350):

100. (ԱԲԳ).... զի նոցուն կամաւ իցէ ընդ ուտելոյն եւ բառեալն, իսկ քստ կերողին տոյժ լինի (Ա, էջ 84, Բ, էջ 392, Գ, էջ 351):

Ղ. Կարսոյը (Armenisches Rechtsbuch, 2. Band, էջ 282, ծանոթագր. 2) առաջարկում է «կերողին» ուղղել «կրողին» ինչպես է նախորդ՝ ՃԻ հոդվածում. «Զի զորոմութիւն ի կամաց անողին կամի Արէնքն եւ ոչ ի կամաց կրողաց...»: Ըստ այսմ Ղ. Կարսոյը «կերողին» համարում է աղճատումնք «կրողաց» ձևի, կոնտեքստում անիմաստ կամ, գոնէ, ոչ հարմար:

Ա խմբագրութիւնն Գ ձևազրի գրելը ՃԻ հոդվածի «կրողաց» սրբագրել է «տառղաց», իսկ սույն հոդվածի «իսկ քստ կերողին տոյժ լիցի»՝ «եւ տանել ընդ ինքեան իսկ կամայն տոյժ լիցի»: Գ ձևազրի գրելի համար ևս «կերող» բառը անհասականալի է եղել, ուստի քննելի հատվածը սրբագրել է քստ հոդվածի իմաստի, կամ եթե ինքը իմացել է քստի իմաստը, ենթադրել է, որ շատերի համար անհասականալի է, այդ պատճառով սրբագրել է ընդհանուրին ըմբռնելի ձևով:

<sup>1</sup> Տես ծանոթագրութիւնն № 43:

ևի, իրոք, «կերող» բառը մեր մատենագրության մեջ հազվագեղ գործածվող բառերից է և Կոնստանդնուպոլսի իմաստալորված է և սրբազրկելու հարկ չկա նշ՞ Գիտի «կերող», «Կերողութիւն» բառերը սովորական իմաստով. Որ ուտի, ճաշակող. շատակերութիւն. որկրամտութիւն, բայց ոչ այն իմաստով, որ գործածված է Դատաստանագրութեմ: Նույն այս բառարանը ունի նաև «Կերութիւն» բառը այլազրկութիւն (կամ դայազրկութիւն), դայոց կերութիւն, և ցանկութիւն այլոց ստացուածոց իմաստով. նշված է միայն մի աղբյուր՝ Բուզ. 4.6., որտեղ տվյալ բառը չբառանք: Արմատական բառարանը «Կեր» բառի տակ նշում է. «որից կերութիւն» «ուրիշի ինչքը ուտելը» Բուզ. կերեցութիւն «որկրամտութիւն»...»:

Բառը «կերող» ձևով և «այլազրկութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց» «ուրիշի ինչքը ուտելը» և ուղղակի՝ «Տափշտակութիւն» և այլն. իմաստով վկայված է, օրինակ, Գրիգոր Սկևռացու «Ներսէսի ճանապարհը տնկեաց, զի այնու ազգը կերակրեցցին. ազրեի յորդահոս բղխեաց, զի որ տապալեցաք իցէն զովասցին, խորան հովանոց սփռեաց, զի աշարիքն տաղաւարեցցին. Բաղալ ամբազոյն փակեաց, զի ի կերողէն յապահավացցին. հովիւ իմաստուն կացոյց. զի պահպանեցցին ի պատանողէն. շտեմարան գանձուց շնորհեաց, զի աղբարն փարթամացցին» («Ստփերէ ԸայկակաճԷ», Ժն, Վենետիկ, 1854, էջ 32—33):

Կամրոնացու մի այլ վարքում, որ ընդհանրութիւններ ունի Գրիգոր Սկևռացու գործի հետ, մեզ հետաքրքրող տողը այսպես. «զի ի գերազէն ապահովեցցին»—Շայտապատում, էջ 421):

Ըստ այսմ ձ՞Ւ հողվածի «կերող» նշանակում է «գող», «հափշտակող», այնքան, որքան այգոց պտուղը զորս է տարվում հակառակ տիրոջ կամքի:

Այս կապակցութեամբ ուշագրավ է ձ՞Ւ հատվածի վերջին երկու տողը, որ բերվել է վերը: Այստեղ «կերող» = «հափշտակող»: Այս պատճառով, նաև նկատի ունենալով ձ՞Ւ հողվածը, ավելի ճիշտ ենք համարում ձ՞Ւ հողվածի «կրողաց» կարգալ «կերողաց»:

101. (ԱԳ) որոց միաուսել շիցէ արծան (Ա, էջ 84, Գ, 351);

Բ խմբագրութիւնն ունի. «որոց միաուսել իցէ արծան» (էջ 139):

Վ. Բաստամյանցը ծանոթագրում է. «Մեր և մյուս բոլոր օրինակների մեջ զրած է՝ շիցէ... Բայց որովհետև այդ բացասական շ մասնիկը հակասութիւն և մթութիւն է պատճառում իմաստի մեջ, մենք ենթադրում ենք, որ դա գրչի կամ գուցէ նույն իսկ հեղինակի սխալման սխալ է, ուստի և զորս հանեցցինք այդ շ մասնիկը: Իսկ եթէ ընդունենք որ այդ սխալ չէ և սխալ է լինի շիցէ, այն ժամանակ պիտի ենթադրենք, որ կանոնս չէ վերջացրած» (Ծանոթագր. № 260):

Նախ՝ չէր կարելի առանց ձեռագրական և տվյալի այլպիսի մեծ փոփոխութիւն մտցնել բնագրի մեջ: Երկրորդ՝ քանի որ ԱԳ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերը ունեն «շիցէ», ուստի բնագիրը պետք է մնա այդպես, անկախ նրանից՝ պարզ է բնագրի իմաստը թե մութ: Երրորդ, մենք այստեղ չենք տեսնում ոչ բնագրի իմաստի մթութիւն և ոչ էլ հողվածի թերազրկութիւն: Հողվածն ասում է. զղջման դեպքում նախկին ամուսինները կարող են միանալ, բացի այն դեպքերից, որոնց, ինչ-ինչ պատճաններով, շարժն միավորել:

102. ՃԼԲ հողվածի սկզբի պարբերութիւնը «Շարանց հետեւողաց» կանոնախմբի ժէ կանոնն է, բայց Դատաստանագրութեմ բերվածը և Կանոնագրութեմ եղածը էպպես տարբերվում են:

Դատաստանագիրք

Կանոնագիրք

Ղդիկողոպտու եթէ բմբոնեցի ևւ ապա կամաւ խոստովանեալ՝ ոչ մեղցի, իսկ եթէ ոք ոչ սպանցէ... (Ա, էջ 87, Բ, էջ 399, Գ, էջ 354):

Ղդիկողոպտու եթէ բմբոնեցի ևւ ապա կամաւ կամաւ խոստովանեալ՝ մեղցի. իսկ եթէ ոք ոչ սպանցէ... (Տ. Ա, էջ 108):

Մի կողմից Դատաստանագրքի բոլոր ձեռագրերն ունեն «ոչ մեղցի» մյուս կողմից՝ Կանոնագրքի և ոչ մի ձեռագիրը չունի «ոչ մեղցի»: Սակայն, Կանոնագրքի հիկոս ձեռագրերը «ակամայ»-ի փոխարեն ունեն «ապա», որեմն և՛ «ապա կամաւ խոստովանեալ՝ մեղցի», մի բան որ բոլորովին հակառակ է եկեղեցու սկզբունքներին: «Ակամայ կամաւ» նըշանակում է (տես ն՞Ղ) ակամաչաբար, չկամելով, ընդդէմ կամաց, որեմն և՛ «հարկազրարար խոստովանողը՝ մեղցի»: Բայց, այսպիսի սահմանումը կաշկածելի է թվում, որովհետև անմիջապես վերապահութիւն է արվում՝ իսկ եթէ ոք ոչ սպանցէ: Բայց եթէ ընդ նմին և մարդ է սպանել, որեմն պատիժը պետք է ավելի ծանր լինի, քան նախորդ դեպքում, և

որովհետև մահից ալիլի ծանր պատիժ չկա, որեմն վերապահությունից առաջ նախա-  
 նախած պատիժը ալիլի մեղմ է եղել՝ «ոչ մահ»: Ըստ այդմ եկեղեցիի է, որ Կանոնա-  
 գրքում կանոնը սկզբնապես եղել է այնպես, ինչպես է Դատաստանագրքում. «ապա կա-  
 մաք խոստովանեալ՝ ոչ մեղցի», որովհետև միայն այս դեպքում հասկանալի կդառնա վե-  
 րապահությունը՝ «եթէ մարդ չի սպանել»: Նաև՝ եթե սկզբնապես եղել է «մեղցի», ապա  
 միանգամայն ալիլներդ է դառնում «մինչև ի մահ որոշեցի». հանցագործը պետք է կեն-  
 դանի մնար, որ հնարավոր լիներ «մինչև մահ որոշել»:

103. (ԱԲԳ) Եւ պերետուտ է որ այժմ է բուտ (Ա, էջ 88, Բ, էջ 141, Գ, էջ 354):

Հայերենում անգործածական բառեր: Ըստ Վ. Բաստամյանցի. 2. Կարսոյի, 2. Աճառ-  
 յանի և այլոց, առաջինը վկայված է միայն կանոնում և Մխիթարի ու Սմբատի Դատաստա-  
 նագրքերում, երկրորդը՝ միայն Դատաստանագրքերում, իսկ որպես հատուկ անուն՝ նաև  
 այլուր:

«Պերետուտ» հունարեն բառ է և նշանակում է պարետ, տեսուչ, դետ: «Բուտ» այստեղ  
 կապ չունի ևույնահնչյուն բառի հետ, որ նշանակում է անասնակեր, կեր: «Բուտ» Վ. Բաս-  
 տամյանցը (տե՛ս ծանոթագր. № 265) համարում է ժողովրդական արճատմուկը հայերեն  
 «պարետ» բառի, որ նույնպես նշանակում է «տեսուչ, վերակացու»: 2. Տաշյանը (Վարդա-  
 պետություն առաջինը անվավերական կանոնաց մատյանը, Վիեննա, 1896, էջ 51—52)  
 մերժում է այդ բացատրությունը և համարում է բառատարեկ bud—եկեղեցական տեսուչ, որ  
 ընդունում է 2. Աճառյանը (Արմատական բառարան, հ. Ա, էջ 1212—1213), Տե՛ս նաև  
 ՆՃԲ, համապատասխան բառերը, J. Karst, Armenisches Rechtsbuch, 2. Band, էջ 82,  
 И. Орбели, Помнальная надпись Бута в Багаране, Христианский Восток, т. III, вып.  
 I, Петроград, 1914, էջ 76—77, Н. Марр, Имя Бут или Буд, Записки Восточного от-  
 деления Императорского русского археологического общества, т. VII, էջ 322—325  
 և Գ. Զահուկյան, Հայերենը և փոյուզերենը, ՊԲՀ, 1968, № 5, էջ 133, ծանոթագր. 49:

104. (ԱԳ).... եւ զանկարգս անդէն դարձի իմաստորեամբ բժշկելի (Ա, էջ 88, Գ, էջ 355):

Բ խմբագրությունն ունի՝ զանհրահանգս: Զեռագրերն ունեցել է զանհարկս, բայց Վ.  
 Բաստամյանցը իրավացիորեն նշել է «որ դա անհարժար է և իմաստը պարզ չէ» այդ պատ-  
 ճառով սրբագրել է համաձայն № 489 (= մեր 2) ձևագրի՝ զանհրահանգս: Վ. Բաստամ-  
 յանցը նշում է նաև, որ Սարգիս եպ. օրինակի զանկարգս նույնպես հարժար է (ծանոթագր.  
 № 273):

Ա խմբագրության ձևագրերն ունեն. ԱսԲԳ՝ զանհարկս, Գ՝ զանկարգս, ԶԷ՝ զան-  
 հրահանգս: Գ խմբագրության բոլոր ձևագրերը ունեն զանհարկս, բացի Ճ-ից և № 9513:  
 ձևագրից (թ. 364 բ), որ ունեն զանհաաան և որը բնավ հարժար չէ հոգվածի իմաս-  
 տին, «Անհրահանգ» նշանակում է անկիրթ, անվարժ, անփորձ (ըստ ՆՃԷ), Ակնհայտ է, որ  
 Կանոնում խոսքը այսպիսի մեկի մասին չէ, այլ այնպիսի անձի, որը խաբուս է, խախ-  
 տում կարգը, գործում ընդդեմ կարգի: Այսպիսի անձը, անշուշտ, նաև անհարժ մեկն է  
 (զանկարգս), բայց կանոնի և հոգվածի իմաստին շատ ալիլի հարազատ է «զանկարգս»,  
 ուստի ԱԳ խմբագրությունները սրբագրեցինք համաձայն Գ ձևագրի ընթերցման:

105. (ԱԲԳ).... զի քէ որ գնեացն ամաւ գնոյն շափ կերեալ իցէ՛ զգինն ոչ դարձուցեանել....  
 (Ա, էջ 91, Բ, էջ 153, Գ, էջ 358):

Այս հոգվածի առաջին մասը Անկյուրիայի ժողովի ԺԶ կանոնն է: Բայց ինչպես նշում է  
 նաև Վ. Բաստամյանցը (տե՛ս ծանոթագր. № 288) վերը բերված ստոր չկա Հայոց Կանոնա-  
 գրքում, մինչդեռ այն կա հունարեն, լատիներեն և ռուս-սլաւոնական կանոնագրքում և  
 հանդիսանում է կանոնի անմիջական շարունակությունը:

Հունական

διὰ τὸ πᾶλλαις τὴν πρόσδοον τῶν πετρα-  
 μένων αποδεσχεῖναι αὐτοῖς τούτοις πλείονα  
 τὴν τιμὴν (տե՛ս Կանոնագիրք հայոց, Բ.  
 Ա, էջ 572):

Ռուս-սլաւոնական

Понеже часто бывает, что доходы  
 от проданного с избытком уже возвра-  
 тили купившим цену онаго (Книга пра-  
 вил...стр. рмв):

Հայերենը, սակայն, ոչ թե բնագրի ճշտագույն թարգմանություն է, այլ ազատ և տրամա-  
 բանական շարադրանք: Ուշագրավ է, որ քննելի տողը Մխիթարը բերել է ոչ թե կանոնում,  
 այլ՝ իր բացատրության մեջ, ուստի զժվար է վստահարար ալիլ, թե Մխիթարի ձևագրի տակ

եղած Կանոսագրքում այդ տողը եղել է: Ննարավոր է և այդ, որովհետև, ինչպես ցույց է տալիս մանրակրկիտ համեմատութունը, Մխիթարի օգտագործած Կանոսագրքը եղել է ավելի անաղարտ և սկզբնականին ավելի հարազատ, քան մեզ հասածը. հնարավոր է և այն, որ քննելի տողը Մխիթարի տրամաբանական սահմանումն է:

106. (ԱԳ) Ի դէպ է եւ գայս զիտել, զի այլազգ ոչ վաճառի եկեղեցոյնքն, բայց եթէ վաճառեսցէ գանպառոշաճն եւ այլ անկաւոր գնեսցէ նովին գնովն (Ա, էջ 91, Գ, էջ 358):

Բ խմբագրութիւնն ունի. «... զի յայլազգ ոչ վաճառին...» (էջ 153):

Այստեղ «այլազգ», մանավանդ Բ խմբագրութիւնն ձևով՝ «այլազգ» կարող է հասկացվել «այլազգի»-ի, «ոչ-քրիստոնյա»-ի իմաստով և Դատաստանագրքի թարգմանողը ռուսերեն այդպես էլ հասկացել է. «Необходимо знать и то, что церковное имущество не подлежит продаже неверным... (Армянский Судебник Мхитара Гоша, Ереван, 1954, էջ 74): Բայց այստեղ «այլազգ» չի նշանակում «այլազգի», «ոչ-քրիստոնյա», այլ՝ «այլազան», «այլ», «այլաբար», «այլ կերպ» և այլն: Ըստ այդմ հատվածի իմաստն այս է. եկեղեցու ինչքը չի կարելի վաճառել, բայց եթե վաճառվում է, ապա միայն ոչ-պիտանին, ոչ-հարկավորը, ըստ որում վաճառվածի գնով պետք է գնել հարակավորը՝ պիտանին, արժանավորը և այլն:

ԱԲ

Գ

107. Բայց մի ամ ապաշխարեսցէ, ի ձեռն . . . Բայց մի ապաշխարեսցէ, այլ ի ձեռն ողորմութեան սրբեսցի եւ հաղորդեսցի աւ- ողորմութեան սրբեսցի և հաղորդեսցի օրինացն (Ա, էջ 92, Բ, էջ 156):

108. (ԱԲԳ)... Գունայ ըստ կանոնի սրբոցն առացնն հայրապետացն Գրիգորիս եւ ներսիսի վերջնոց... (Ա, էջ 94, Բ, էջ 161, Գ, էջ 360):

Ներսեսը ներսես Ենոքայիսն է (1166—1173):

Մխիթարի ժամանակ կաթողիկոսական գահը զբաղեցրել են չորս Գրիգոր. Գրիգոր Պահլավունի (Գ)—1113—1166, Գրիգոր Տղա (Դ)—1173—1193, Գրիգոր Քարավէժ (Ե)—1193—1194 և Գրիգոր Ապիրատ (Ջ)—1194—1203: Վ. Բաստամյանցը Մխիթարի ակնարկած Գրիգորին համարում է Պահլավունուն (ժանոթագր. № 303): Բայց քանի որ Մխիթարը իր ակնարկած Գրիգորին համարում է վերջինը Գրիգորների մեջ, ուստի պետք է նկատի ունենալ Տղայիս, որովհետև Դատաստանագրքը՝ գրվելու ժամանակ՝ 1184 թ. վերջին Գրիգորը Տղան էր: Այս դատողությունները ավելորդ են դառնում, եթե հատվածում եղել է ոչ թե «վերջնոց» այլ «վերջնոյ»:

109. (ԱԳ) Ապա բէ նոքա շատին իցեն (Գ ինչ իցեն) եւ կոչիցի (Գ կոչիցեն)՝ յագապի տացէ... Ա, էջ 94—95, Գ, էջ 361):

Բ խմբագրութիւնը՝ «Ապա թէ նոքա երամայիցեն...» (էջ 162), Ձեռագիրը ունեցել է ԱԳ խմբագրութիւնների ընթերցումը, բայց Վ. Բաստամյանցը սրբագրել է ըստ Կանոսագրքի (տե՛ս ծանոթագր. № 312):

Ձեռագրերն ունեն. Ա՝ սկզբում շատ, ապա ուղղված շատին, ԴձնՈ՛ շատ, ըստ որում ձ՛ սկզբում դրվել է շատին, ապա վերջին «ին» քերվել, թեև պարզ կարդացվում է, Գ՛ շիցեն մեծ ժողանակ շատին իցեն: № 9513 ձեռ. (թ. 369 ա) ունի. «ապա թէ նոքայ շատ քիշ (շ՛) են», ըստ որում սկզբնապես գրված է եղել այլ բան, ապա շնջվել է:

«Շատին» «շատի» բայն է, որ նշանակում է՝ շատանալ, բավականանալ- «Պալարակերք լինին, եւ դուզնաքեօքն շատին» (ՆԲՀ): Դա հաստատվում է նաև նույն հոդվածի կանոնական և մխիթարական մասերի համապատասխան հատվածների համադրությամբ.

Կանոն

Մխիթար

Ապա թէ նոքա շատին իցեն եւ կոչիցի՝ յագապի տացէ:

Այլ թէ նոքա այլ ուրեք բաւականեալք իցեն եւ կամ անդ են եւ անպարապք եւ կոչին, հրամանաւ նոքա արասցեն:

Այստեղ շատին իցեն = բաւականեալք իցեն: Հոդվածի իմաստն է. եթե քաղաքի եպիսկոպոսը կամ երեսը զբաղված են ուրիշ տեղ կամ թե եկեղեցում են, բայց դարձյալ զբաղված, քաղաք եկած գավառի երեսը նրանց հրամանով, թույլատվությամբ կարող է ազապի տալ և այլն:

110. (ԱԳ).... վասն փրկութեան, որ յաղհասու կատարելոյն է (Ա, էջ 95, Գ, էջ 861):

Բ խմբագրութիւնն ունի վասն փութութեան (էջ 162—163):

Վ. Բատումայանցը ծանոթագրում է (№ 314), որ իր տրամադրութիւնն տակ եղած բոլոր ձեռագրերն ունին փրկութեան, բայց զա համարելով կանոնի իմաստին անհարմար կամ գրչի, գուցե և Մխիթարի, պատահական սխալ, սրբագրել է համաձայն Կանոնագրքի Վերջինի տպագիր բնագիրն, իրոք, ունի փութութեան (տե՛ս Տ. Ա, էջ 187), բայց Կանոնագրքի QTVX ձեռագրերը ունին փրկութեան, ուստի պետք է ենթադրել, որ Մխիթարի ձեռքի տակ եղած Կանոնագիրքը ևս ունեցել է վերջին ընթերցումը Անշուշտ, ճիշտը տվյալ դեպքում փութութեան ընթերցումն է, բայց քանի որ տպագրի հիմքը, ԱԳ խմբագրութիւնների բոլոր ձեռագրերը և Մխիթարի օգտագործած Կանոնագրքերը ունեցել են փրկութեան, մենք նրապատահական չգտանք սրբագրել բնագիրը:

111. (ԱԲԳ) ՃԾԴ—ն զայս սանման կանոնի թէպէտեւ յաղագս աղանդոյն կարծեմք սաստախ լինել (Ա, էջ 96, Բ, էջ 400, Գ, էջ 362):

ՃԾԵ—.... թէպէտեւ յաղագս սասցեալ աղանդոյն առաւել զգուշացուցանէ (Ա, էջ 96, Բ, էջ 401, Գ, էջ 362):

IV դարի կեսերին Եգիպտոսում սկսվեց մի շարժում, որը կոչվում է անապատականների շարժում (հիմնադիրը՝ Անտոն, մհ. 357.) և որը տարածվեց նաև այլ երկրներում, այդ թվում և Հայաստանում:

Սերաստիայի հայ եպիսկոպոս Եմիստաթիոսի գլխավորութիւնամբ Փոքր Հայքում այդ շարժումը ժամանակավորապես այլ ուղղութիւն ստացավ՝ վերածվելով սոցիալական շարժման: Եկեղեցու հայրերը, մանավանդ Բարսեղ Կեսարացին, Եմիստաթիոսի դեմ անհաջող պայքարից հետո Գանգրայում հատուկ ժողով գումարեցին և դատապարտեցին նրա գլխավորած աղանդը: Ժողովի գումարման տարեթիվ մասին տարբեր կարծիքներ կան, հավանականը 380-ական թվականների սկիզբն է (այս շարժման, ժողովի ու նրա կանոնների մասին մանրամասն տե՛ս Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Երևան, 1951): Այս աղանդին հարողները արտաքուստ հենվելով նաև Քրիստոսի հետևյալ խոսքերի վրա. «Ով սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. եւ որ սիրէ զուստր կամ զղուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի» (Մատթ. Ժ, 37), թողնում էին՝ ծնողները իրենց զավակներին, զավակները՝ իրենց ծնողներին և քաջվում անապատները: Ծանոթագրվող հողվածներում բերված Գանգրայի ժողովի կանոնները ուղղված են այդ երևույթի դեմ, իսկ հողվածներում ակնարկվող աղանդը ժողովի կողմից դատապարտված աղանդն է: Ուշագրավ է, որ Գ խմբագրութիւնն ձեռագրերի մեծ մասը Գանգրայի ժողովի ԺԵ կանոնի մասին ասված «Եւ զայս սահման կանոնի թէպէտ և յաղագս աղանդոյն կարծեմք սաստախ լինել» բառերի փոխարեն ունեն. «Եւ զայս սահման կանոնի թէպէտ և յաղագս աղանդոյն կարծեմք սատանայի լինել»:

112. (ԱԳ) Պատասխանի. Կի՛նն իշխէ մեկնել, եւ այրն այլ կի՛ն առնուլ (Ա, էջ 101, Գ, էջ 367):

Բ խմբագրութիւնն ունի. «Եւ այրն այլ կի՛ն ոչ առնել» (էջ 178):

Այս հողվածը Աթանաս Ալեքսանդրացու ԻԶ կանոնն է: Տպագիր Կանոնագրքը իր բոլոր ձեռագրերով (բացի մեկից) այնպես է, ինչպես Բ խմբագրութիւնը՝ արգելում է տրդամարդուն ամուսնանալ: ԱԳ խմբագրութիւնն ձեռագրերից այսպես են միայն երկրորդը: Գ՝ այրն այլ կի՛ն մի առնել», ՆՄ՝ այրն այլ կի՛ն ոչ առնել»:

Այս ապարագային հնարավոր է ենթադրել, որ ԱԳ խմբագրութիւնն ձեռագրերի մեծ մասի ընթերցումը աղճատումն է, վրիպակ: Բայց մենք, այնուամենայնիվ, շտրագրեցինք բնագիրը, հետևյալ պատճառներով:

ԱԳ խմբագրութիւնների ձեռագրերի մեծագույն մասը և հնագույնները (վիեննայից, դմաուպան օրինակները) շունեն «ոչ»-ը, որիմն հնարավոր է նաև ենթադրութիւնը, որ այդ ձեռագրերը (ԳՆՈ) սրբագրվել են կամ ըստ Բ խմբագրութիւնն կամ ըստ Կանոնագրքի:

Արդեն առիթ է եղել համոզվելու, որ Մխիթարի ձեռքի տակ եղած Կանոնագիրքը տարբերվել է մեզ հասածից, ուստի հնարավոր է ենթադրել, որ այդ «ոչ»-ը չի եղել նաև հենց Մխիթարի օգտագործած Կանոնագրքում: Այդ ենթադրութեան օգտին է խոսում նաև Կանոնագրքի ձեռագրերից մեկը, որը բուրբուլիսն այլ պատասխան է տալիս հարցին. «Կի՛նն իշխէ մեկնել այրէն, ոչ է պարտ այլ կի՛ն կամ այր առնել երկօրին» (տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 609):

113. (ԱՔԳ) Եթէ ոք ուտիցէ ի տեղոյ, տացէ ընդ միոյն շոքս... (Ա՛ էջ 104, Բ՛ էջ 184, Գ՛ էջ 370):

«Տեղի»—նոր Հայկազյան բառարանը տալիս է այս բառի հայտնի ու սովորական իմաստները: Որքան մեզ հայտնի է, առաջինը Ն. Մանն էր, որ բացատրեց այս բառի մի նոր իմաստ, Տեկորի տաճարի կառուցողական արձանագրութիւնը նկատի ունենալով, որտեղ առաջին տողի «վկայարան»-ին համապատասխանում է երկրորդ տողի «տեղը-ն (К датировке ктиторовской надписи Текорского храма, Христианский Восток, т. III, вып. I, Петроград, 1914, էջ 71): Այս, ինչպէս և Բագավանի արձանագրութեան (И. Орбели, Багаванская надпись 639 г., Христианский Восток, т. II, вып. I, СПб, 1913, էջ 106—143, արձանագր. էջ 122. այստեղ է. Օրբելիին «տեղի» քարգծումն է «местный». Մանն այս հոգովածից էետո ուղղել է՝ «обитель». տե՛ս Христианский Восток, т. III, вып. I, էջ 87) և այլ փաստերէ հրման վրա Ն. Մանը «տեղի» համարում է «Освященным термином для обозначения определенного религиозного или церковного учреждения, средоточия культа св. мученика, епископской кафедры, монастырского установления». (նշված աշխ. էջ 63, ծանոթագր. 1):

Ս. Տիրանյանը նշում է, որ Թարսեղ Կեսարացու 84-րդ կանոնը, որ դառնի է ծանոթագրութեղ հոգովածը, Կանոնագրքի որոշ ձեռագրերում ունի «ի տեղույ», մյուսներում՝ «եկեղեցույ» («Судебная Книга» Мхитаря и «Книга канонов», Известия кавказского историко-археологического института, т. III, Тифлис, 1925, էջ 67), որ հաստատուում է Կանոնագրքի բնագրով—Տ. Բ, 121, որտեղ «ի տեղույ»-ի փոխարեն ունի «եկեղեցույ»: Ըստ այսմ՝ «եթէ որ ուտիցէ ի տեղույ» նշանկում է. եթե որ ուտի, յուրացնի, հաստատակի, վատիկ եկեղեցու, որն է որբաղան հաստատութեան, վայրի, ինչ-որ բան (զուրք, արծեք ընդհանրապես) և այլն, փոխհատուցելու է յորեքստիկ Դատաստանագրքի ռուսերեն հրատարակութեան մեջ (էջ 90) «ի տեղույ» ձեռք չի փարգանված. «Если кто расточит (чужое добро)»: Կանոնագիրքը չուշի. «Եւ կամ յազաքտո տալ, թէ այն պատահի»:

114. (ԱՔԳ) Ըստ այդմ, եթէ հաւասար բաժանիցի ծառանդութիւնն ուստեաց, առանկ լիցի յաղագս պատույ (Ա, էջ 105, Բ, էջ 405, Գ, էջ 371):

Վ. Բաստամյանը իբրավայտի են ստորակետը դրել է «ուստերաց» բառից հետո, նշելով, որ այս դիպքում «առանկ լիցի» կվերաբերի «անդրանկանն», հսկ եթե ստորակետը դրվի «ծառանդութիւնն» բառից հետո, ինչպես հարամար է երևում առաջին հայացքից, ապա «առանկ լիցի» կվերաբերի «ուստերաց» (տե՛ս ծանոթագր. № 393):

Ստորակետը պետք է դրվի «ուստերաց» բառից հետո և շարունակութիւնը պետք է կարգացվի «անդրանկանն առանկ լիցի յաղագս պատույն», որովհետև դրանից մի տող առաջ Մխիթարն ասում է. «Իսկ անդրանկանն պատիւ լիցի, որպէս ծանուցեալ է»: Սրանով հղում է ՃԺԱ (= Բ, II, 69) հոգովածին, որտեղ ասված է. «Ըստ որում եւ Տէր պատուեաց՝ տալ զառաջին ծնունդն, առանկ տալ ի ծառանդութեանց»: Այս վերջին տողում էլ Մխիթարը հղում է Աստվածաշնչին, որտեղ (Բ օրիս., ԻԱ, 15—17) ասված է. «Տալ նմա (անդրաւերկին—Ն. Ք.) կրկին յամենայն է որ ինչ գտանիցի նորա. զի նա է սկիզբն որդոց նորա»:

Ա Բ Գ

115. Եւ մարմին ծնեալ ի մարմնոյ ծառանգ եղիցի (էջ 106): Եւ մարմնոյ ծնեալն մարմնոյ ծառանգ եղիցի (Բ, էջ 405—406, Գ, էջ 371):

Ա Բ Գ

116. ...զորդիսն, եւ զկեանսն, եւ զտունն, եւ զհողն, եւ զջուրն եւ զամենայն ինչ բաժանեացեն հասարակաց եւ զկէան աղջկանն տացեն (Ա, էջ 113, Բ, էջ 194): ...զորդիսն և դամենայն ինչ որ ունի բաժանեացեն հասարակաց (էջ 377):

117. (ԱՔԳ) ...թէ ազատ է՝ երեքհարիւր դրամ, եւ թէ շինկան՝ ...հարիւր դրամ յեկեղեցի տուցանեցի... (Ա, էջ 113, Բ, էջ 194, Գ, էջ 377):

Այս հոգովածի առաջին մասը Շահապիվանի ժողովի Դ կանոնն է, Կանոնագրքի բոլոր ձեռագրերը, ըստ այդմ և Դատաստանագիրքը, ունեն երեք հարիւր (3) դրամ: Ակադ. է. Մանանդյանը առաջին անգամ տե՛ս (Դիտողություններ հին Հայաստանի շինա-

կանների դուրսյան մասին մարզպետության շրջանում, Երևան, 1925, նաև Ֆետիպովը հին Հայաստանում, Երևան, 1934, մասնավորապես՝ էջ 183, ծանոթագր. 1), իսկ այնուհետև Ք. Ավդալբեգյանը, ցույց է տվել, որ ըստ Շահառիվանի կանոնների աղատների և շինականների վճարապարտության և վճարագանձման հարաբերությունը երկու առ մեկ է: Միակ դեպքը հրք այդ հարբերությունը հրքք առ մեկ է, վերոհիշյալ Գ կանոնն է: Այդ պատճառով Ք. Ավդալբեգյանը այս միակ ու անհավանական բացառությունը՝ համարում է յ ու մ տառերի շփոթման հետևանք (տե՛ս Թաղ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 285):

118. (ԱԹԳ) Կանոնական այս հոդվածը Դատատանագրքում տարբեր է Կանոնագրքից.

**Դատատանագիրք**

Գլխաւոր քահանայիցն՝ երկու մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն մէն՝ երկու մասունս, սարկաւազունք՝ մի մի մասն, դպիրքն՝ կէս կէս մասն, եւ այրի կանայքն, թէ իցեն պարկեշտք՝ մի մասն.... (Ա, էջ 116, Բ, էջ 202—203, Գ, էջ 380):

**Կանոնագիրք**

....Գլխաւոր քահանայիցն՝ Բ մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն՝ մէն Բ մասունս, եւ սարկաւազունքն՝ մի մասն եւ կէս մասին. եւ դպիրքն եւ այրի կանայքն թէ իցեն պարկեշտք՝ մի մասն.... (Հ. Ա, էջ 483):

119. (ԱԳ) Կամ թէ պատահի յաղագս աճծեռնհասութեան... (Ա, էջ 117, Գ, էջ 381):

Բ խմբագր. ունի յաղագս ձեռնհասութեան (էջ 206):

Վ. Բաստամյանցը ծանոթագրում է, որ ձեռնհասութեան ընթերցումը ունի միայն № 490 (= 486) ձեռագիրը, մյուսները՝ աճծեռնհասութեան և որ ինքը սրբագրել է բնագիրը համաձայն № 490 ձեռագրի, դա համարելով «ավելի համար կանոնի իմաստին» (ծանոթագր. № 403):

ԱԳ խմբագրությունների բոլոր ձեռագրերը, բացի Գ ձեռագրից, ունեն աճծեռնհասութեան: Մենք անփոփոխ թողինք բնագիրը ոչ միայն այն պատճառով, որ բոլոր ձեռագրերը (բացի մեկից) ունեն այդ ընթերցումը, այլև հետևյալ պատճառով: Կանոնի վերջում արդեն ասված է, որ իր եկեղեցուն «ճարկատրն» տալուց հետո հանգուցյալի ազգականները կարող են ուրիշ եկեղեցու կամ այլոց ևս տալ: Կանոնին հաջորդող Մխիթարի խոսքի հենց առաջին տողում նույնպես հաստատված է այդ իրավունքը: Ակնհայտ է, որ այդ հրահարավորությունը տալիս է «ձեռնհասութեան» վիճակը, որի դեպքում, իրոք, չի կարող արգելք լինել իր ծխի եկեղեցուն, քահանային և այլն բավարարելուց հետո, մաս հանել նաև այլոց: Կարգավորման առավել անհրաժեշտություն ունի «անձեռնհասութեան» վիճակը, որովհետև այս դեպքում է, որ «ուրիշ» եկեղեցու որևէ բան տալու մեծ ցանկությունը ինչ-որ շահով բավարարվելու է «իր» եկեղեցուն տրվելիքներից: Այս դեպքն է, որ Մխիթարը թույլատրելի է համարում: Համենայն դեպս քննելի հատվածի «աճծեռնհասութեան» բառը իմաստավորված է, ուստի թողինք անփոփոխ:

120. (ԱԿ) Եւ թէ դէպ լիցի Երեխայ հասանել այնպիսոյն կամ մեռել ո՛ր... (Ա, էջ 117, Գ, էջ 382):

Բ խմբագր. ունի. կամ մեռեալ (էջ 207):

Վ. Բաստամյանցի տրամադրության տակ եղած ձեռագրերը ունեցել են՝ մեռելոյ, մեռանելոյ, զմեռալու: «Մենք դրինք մեռեալ իմաստի պարզության համար»,— գրում է Վ. Բաստամյանցը (ծանոթագր. № 404): ԱԿ խմբագրությունների ձեռագրերը ունեն մեռելոյ, մեռանել, մեռանելոյ և միայն մի ձեռագիր՝ Ե, ունի մեռել ո՛ր: Վ. Բաստամյանցի ուղղումը ճիշտ է, բայց որովհետև ձեռագրերը այդպիսի ընթերցում չունեն, մենք սրբագրեցինք համաձայն Ե ձեռագրի, որը նույնպես ճիշտ է:

Կանոնագրքում հատվածի շարադրանքը ավելի ազավաղ է. «... Ապա թէ դէպ լիցի երախայի հասանել այնպիսոյն մեռանելոյ, քահանայն միլրտեսցէ զերախայն եւ թաղեսցէ զմեռալն...» (Հ. Բ, էջ 15):

121. (ԱԳ) Աի թէ յառաջ քան զեւթն ամն ո՛ր յանդգնեցաւ (Ա, էջ 118, Գ, էջ 382):

Բ խմբագր. ունի. «Ձի թէ յառաջ քան զեօթն ամ է եւ որ յանդգնեցաւ» (էջ 209): Բ խմբագրերը ընթերցումն ունեն Գ խմբագրության բոլոր ձեռագրերը, բացի մեկից՝ Ծ, և Ա խմբագրության ձեռագրերի մի մասը: Բ խմբագր. ընթերցման մասին Վ. Բաստամյանցը իրավացիորեն գրում է. «Եսթի է ո՛ր. լավ է ասել՝ զի թէ յառաջ քան զեօթն ամ որ յանդգր»

նեցաւ (ժանոթագր. № 411): Ճիշտ այս բնթերցումն ունեն ԳԶէ և ԵՃ ձեռագրերը (Ձէ՛ ամ, ԵՃ՛ և ոք տարբերությամբ), որը և տարանք բնագիրս

Ա

Բ

Գ

122. ....զկէս շնորհին կալ-  
ցի յաղագս ձեռնադրութեանն  
յիւր կենդանութեանն՝ ան-  
հարկ եւ անբեկար.... (էջ  
119):

....զկէս շնորհին կալցի յա-  
ղագրս ձեռնադրութեանն ան-  
հարկ և անպեկար.... (էջ  
212):

....զկէս շնորհին կալ-  
ցի յաղագս ձեռնադրու-  
թեանն անհարկի.... (էջ  
383):

Ա

ԲԳ

123. ....զի թէ պատահի ի  
նոցանէ քահանայանալ՝ կալ-  
ցին, ապա թէ ոչ՝ յատարս  
տալ իշխան լիցի առաջնոր-  
դրն.... (էջ 119):

....զի թէ պատահի ի նոցանէ քահանայանալ-կալցին,  
ապա թէ ոչ՝ նոցին կամօք յօտարս տալ իշխան լիցի  
առաջնորդն.... (Բ՛ էջ 214, Գ, էջ 384):

124. (ԱԲԳ) ....ե ըստ իւրաբանչիւր կամաց, և ըստ իւրաբանչիւր վրմի (Բ՛ վրմի, Գ՛ ֆրմի) բաժանեն զչնորես սրբայ եկեղեցոյն ե որպէս կամի՞ն մատակարարեն (Ա, էջ 120, Բ, 216—217, Գ, էջ 384):

Վ. Բաստամյանցը ընտրել է վրմի ձևը և իր բացատրության մեջ ենթադրում է, որ դա վերցված է լատինական forma կամ ֆրանսիական forme բառից, որ նշանկում է ձև, եղանակ, կաղապար և այլն, և ըստ այսմ՝ քննելի արտահայտությունը նշանակում է ըստ յուրաբանչուր ձևի, եղանակի, կերպի և այլն (ժանոթագր. № 422): Շատ անհավանական է թվում, որ մեր Դատաստանագրքում տեղ գտած լիներ լատ. կամ ֆր. forma կամ forme բառը, մանավանդ որ ունենք նաև վրմի ձևը:

Նշելի է, որ որոշ ձեռագրերում (օրինակ՝ ա) վրմի գրված է պատվով՝ վրմի, որ նշանակում է, թե ձայնավոր կամ ձայնավորները սղված են: Ակնհայտ է նաև, որ բառը սղված է թեք ձևով, ուստի առաջին ենթադրելի ուղիղ ձևը հավանաբար վարմ է: ՆՃԲ գրտի այս բառը և նշանակում է ցանց, թակարդ, որոգայթ: Բայց այս իմաստը անընդունելի է քննվող բառակապակցության համար: Գուցե բառն ունի մի այլ իմաստ ևս՝ մեհենայություն, որ հարամար է նախադասության բովանդակությանը, կամ վարմունք բառն է: Մի բան ակնհայտ է, ըստ իւրաբանչիւր վրմի պետք է արտահայտի նույն կամ մտաւորապես նույն իմաստը, ինչ և ըստ իւրաբանչիւր կամաց: Հանգուցեալ ՚. Ե. Փելիչկյանը ժանոթագրքում է. «Ա ձեռագիրն այս բառին տեղը պարապ ձգած պիտի ըլլայ և ապա՝ ճոյն մելանով, բայց տարբեր գիրով պարապութիւն լիցուցած է և գրած՝ վրմի»:

Կանոնագիրքը ունի. «Այլ և ոմանք յազատաց ըստ իւրաբանչիւր կամաց բաժանեն զչնորես եկեղեցոյ և գառաշնորդաց գիշխանութիւն եւ գործ յափշտակեն...» (Ն. Բ, էջ 210):

125. Այս հոդվածը Դվինի Ե ժողովի ԺԱ կանոնն է: Սակայն կանոնի բովանդակությունը ըստ Դատաստանագրքի շատ էական մի կետում տարբեր է նույն կանոնի բովանդակությունից ըստ Կանոնագրքի: Համադրենք.

Դատաստանագիրք

Կանոնագիրք

ԱԲԳ

Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առ-  
նեն և հարկս, և նշմս, և կերակուրս,  
և բմպելիս պահանջեն բռնութեամբ, և  
զիրեանց գործակալս ի վրայ գումարեն,  
և կոռով և պահակութեամբ նեղեն... (Ա,  
էջ 121, Բ, էջ 412, Գ, էջ 385):

...կոռով և պատուհասի նեղեն... (Ն.  
Բ, էջ 211):

Վ. Բաստամյանցը գրում է. «Միայն մեր օրինակի մէջ եւ № 489 (= մեր 209—Խ. Թ.) Կարապ. (= մեր № 2593—Խ. Թ.) մէջ կոռով, իսկ միւս օրինակների մէջ և կանոնի մէջ՝ կոռով» (ժանոթագր. № 321): Սակայն պետք է նշել, որ ԱԳ խմբագրությունների բոլոր ձեռագրերը, բացի երկուսից, ունեն կոռով, և միայն Ա խմբագրության ա՛ր՝ ձեռագրերը, որոնք Վ. Բաստամյանցի տրամադրության տակ շին եղել, ունեն կոռով: Իսկ Ե և № 9513 ձեռագրերը (Թ. 388 Բ) ունեն. «և կոռովութեամբ պահակութեամբ նեղեն»:

2. Մանանդյանը, համադրելով այս հոդվածները, ենթադրում է, որ «Դվինի կանոնում բնագիրը աղճատված է և սկսում է և պատուհասիս խոսքերը... ծագել են սկսում է պահակութեամբ ուղիղ ընթերցվածի աղավաղումից: Մխիթար Գոշը, անկասկած, ունեցել է ձեռքի տակ Դվինի կանոնի բնագիրն առանց այդ աղճատման» (Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 209): Վ. Հակարյանը գտնում է, որ ճիշտը Կանոնագրքի ընթերցումն է, Դատաստանագրքի ընթերցումը Մխիթար Գոշի խմբագրությունն է (Կանոնագիր Հայոց, Բ. Ք, էջ LXXVII):

Ա

Բ

Գ

126. Ձի որպէս առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղև պրել ի նոյն ութուտասնեհորդի ամի տէրութեանն Խոսրովայ... (էջ 122):

Ձի որպէս առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղև գրել ի նոյն ութուտասն ամի տէրութեանն Խոսրովայ... (էջ 219):

Ձի որպես առ ամենայն մեր աթոռակիցս հարկ եղև գրել ի նոյն նիւթի տասնեորդ ամի տերութեանն Խոսրովայ... (էջ 386):

Հնարավոր է, որ Գ խմբագրության «ի նոյն նիւթի տասնեորդ ամի» դր:ի թյուրբնկությունն է «ի նոյն ութուտասնեորդ ամի» ԱԲ խմբագրության բառակապակցության, պայմանով, որ այս վերջինում եղել է ութուտասն» և ոչ «ԺԸ»: № 9513 ձև. (թ. 389 ա) ունի. «ի նոյն ութ և Ժ ամի»:

127. (ԱԳ) ...զի համմարեայ Բոյր Բո է... քէ համմարեայ Բոյր Լ (Ա, էջ 122, Գ, էջ 386):

Բ խմբագրություն՝ համհօրեայ ...համհօրեայ (էջ 220):

Վ. Բաստամյանցը նշում է, որ իր տրամադրության տակ հղած ձեռագրերը, բացի մեկից, որ երկրորդ դեպքի համար ունի համմօրեայ, մնացած բոլորը՝ համմօրեայ:

Ա և Գ խմբագրությունների բոլոր ձեռագրերը, բացի ԳՃՆ-ից, երկու դեպքում էլ ունեն համմարեայ: Գ ձեռագիրը մի դեպքում ունի համայմայր, մյուս դեպքում՝ համմար: Ա-ն երկու դեպքում էլ, իսկ Ն-ն միայն երկրորդ դեպքում ունեն համմարեայ:

Քանի որ ձեռագրերից ոչ մեկը չունի համհօրեայ և, ընդհակառակը, ունենք համմարեայ ընթերցումը, ուստի բնագիրը սրբագրեցինք ըստ այդմ:

ԱԲ

Գ

128. ...ապա ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչև ցորդիսն, որ առանց խորթուցն, որ լինին հինգերորդ ազգ, ապա ամուսնացին (Ա, էջ 123, Բ, էջ 224):

...ապա ծնեալ ի ծնողաց խորթուցն մինչև ցորդիսն թոռանց սրդոցն, որ լինի հինգերորդ ազգ, ապա ամուսնացին (էջ 387):

Տպագրի (=Բ խմբագրություն) հիմքը հանդիսացող ձեռագրում (№ 438, թ. 38 բ) ամբողջ հատվածը այսպես է. «Իսկ կանոնք ըստ այսմ. մի տալ գխորթս միմեանց. և մի գառ ի նոցանէ ծնունդս. մինչև ի գարմն խորթուցն. մինչև ցորդիսն. որ առանց խորթուցն, որ լինին հինգերորդ ազգ. ապա ամուսնացին... (տե՛ս նաև Վ. Բաստամյանց, ծանոթագր. № 459, որտեղ «գարմն» վրիպակով տպագրված է «վարմն»):

Ա

Բ

Գ

129. Եւ գայս ասլ, որ թէ պատահի մին ի խորթուցն, և մին՝ ի ծննդոց ծնողաց խորթուցն, եւ կամ ի խորթուցն ծնողաց՝ շորրորդ, և խորթն՝ հինգերորդ, ապա ամուսնացին (էջ 123):

Եւ գայս ասէր՝ թէ պատահի մին ի խորթուցն և մին ի ծնողացն խորթուցն, եւ կամ ի խորթուցն ծնողաց շորրորդ եւ խորթն հինգերորդ, ապա ամուսնացին (էջ 224):

Եւ գայս ասէր, թէ պատահի մինն ի խորթուցըն, և մինն՝ ի ծընողաց խորթուցն, և կամ ի խորթուցն ծընողաց շորրորդ, և ծընողքըն՝ հինգերորդ, ապա ամուսնացին (էջ 387):

ԱԲ

Գ

130. ...զի շորրորդ ի միոյ կողմանէ ասէ լինել, եւ թէ ի միւս կողմանէ մի պա-

...զի շորրորդ ի միոյ կողմանէ ասէ լինել, և թէ ի միւս կողմանէ մին պակաս

պահի՝ անխտրելի է (Ա, էջ 124, Բ, էջ լինի՝ անխտրելի է (էջ 388), 225):

131. (ԱԳ, էջ 126, 389) Բ խմբագրութեան մի քանի ձեռագրերում ալս հոդվածի (= I, 109) համար կա հետևյալ լուսանցագրութունը. «Եւ որ ընթեռնուող աստ գգոյշ կաց, մի որպէս սա ասէ, թէ երեք ի մէկն եւ երեք ի միւսն լինելի է, եւ ոչ գայն, թէ երեք ի մէկն եւ երկու ի միւսն լինելի, զի չէ այս բոստ առաքելական կանոնաց, որ մինչև ի շորսն անլինելի ասէ եւ զհինգն ապա լինելի, եւ այն ոչ ի ծնողաց առեալ, այլ յեղբարց: Տես եւ զՆերսիսի կաթողիկոսի Հռոմ-կայանցոյ յաղագս այսորիկ գրեալն, զի յերկման շորս պահանջէ եւ ապա ի հինգն առնուն» (ձեռագիր № 488 Թ. 39 ա, ստորին լուսանցք. ալժմ որոշ բառեր շին կարգացվում կամ դժվարութեամբ են կարգացվում: Շուրջ հարյուր տարի առաջ այդ բառերը կարգացվել են, ինչպես երևում է Վ. Բաստամյանցի № 443 ծնոթագրութունից, որտեղ բերված են այդ լուսանցագրութունները: Սրանք ընթերցելիս նկատի ենք ունեցել նաև մյուս ձեռագրերը): Դարձյալ նույն էջում, կողքի լուսանցքում, էջի երկայնքով իրար տակ երեք անգամ գրված է. «չէ, չէ, չէ»: Այնուհետև հաջորդ էջում (39 բ) տակի լուսանցքում. «Եղբայր գգոյշ լիբ, կանոնքն զորս կու ասէ. դու շորս պահանջէ զինչ ցեղ. ներդէս կաթող. (այս բառի դէպին գծիկներ են դրված) յերկու դեհեն շորս կու պահանջէ եւ ապա ի հինգն հրաման տայ մատուցութեան»: Այս լուսանցագրութեան մասին Վ. Բաստամյանցը ասում է, թէ գրված է «օտարի ձեռքով»: Մինչդեռ և այս լուսանցագրութունը և մյուսները գրված են ձեռագրի գրչի ձեռքով:

132. (Ա) եւ թէ ձի ոչ կամիւն փրկել, որքան հնար է՝ վարձս տագնն (էջ 126):  
Ա խմբագրութեան ոչ մի ձեռագիր և Բ խմբագր. շունեն վարձս տագնն: Վ. Բաստամյանցը իրավացիորեն գրում է, որ այդ բառերի անհրաժեշտութիւնը «գորութեամբ իմացվում է» (ծանոթագր. № 326): Դա ակնհայտ է նաև Գ խմբագրութունից, որի բոլոր ձեռագրերը, բացի մեկից, ունեն այդ ընթերցումը. բոստ այդմ էլ սրբագրեցինք Ա խմբագրութունը:

133. (ԱԳ, էջ 128, 391) Ալս հոդվածի վերաբեյալ իր ծանոթագրութեան մեջ (№ 445) Վ. Բաստամյանցը գրում է, որ «կանոնս հորինել է Մխիթարը ուրիշի հարցմունքով»: Հոդվածը, սակայն, Ալավիկի որդի Դավթի Ղ.Չ կանոնն է (բոստ Ա. Արաբամյանի հրատարակւորքան. տե՛ս Դավիթ Ալավկա որդու կանոնները, առանձնատիպ «էջմիածին» ամսագրից, Երևան, 1953, էջ 43): Ըստ այս հրատարակութեան՝ կանոնի սկիզբը այսպես է. «Եթէ դէպ լինիցի՝ ծառոյ անկանել վարդոյ եւ մեռանել, կամ խեղդով կախել զձառէ...»: Կանոնում չկա. «Ձայս հաւատաւ պէտս... եկեղեցի ընդունի» և վերջին պարբերութիւնը Կանոնից որոշ չափով տարբերվում նաև նախավերջին պարբերութիւնը: Կանոնը և Գ խմբագրութիւնը շունեն «եւ մի խոտեսցես», որ կա ԱԲ խմբագրութիւններում:

134. (ԱԳ, էջ 128, 392) Ալս հոդվածի վերաբերյալ իր № 322 ծանոթագրութեան մեջ Վ. Բաստամյանցը գրում է, որ այն հորինել է Մխիթարը: Հոդվածը, սակայն, Ալավիկի որդի Դավթի եւ կանոնն է, որի սկիզբը Դատաստանագրքում այլ է.

Կանոն Հոդված

Վասն գողոց, որ ըմբռնին եւ ի փայտաքաշին այս է

Յաղագս դատաստանաց գողոց ի փայտ հանողաց՝

Այլ վասն գողոց ի փայտ հանելոյ, եթէ բուրդ իցէ եթէ հայ, եւ մարդոյ հըրամայիցն ի փայտ հանել....

Այլ վասն գողոց ի փայտ հանելոյ էիք հարցեալ: Եթէ այլագգի իցէ եւ իթէ քրիստոնեայ եւ քրիստոնէի հրամայեցն ի փայտ քարշել....

Որոշ չափով տարբեր է նաև վերջը.

...քանզի Աստուած ի սիրտն հայի եւ մարդ՝ յերեսս, որպէս հրամայեաց Տէր Սամուէլի:

...Քանզի Աստուած ի սիրտն հայի, որպէս ասէ Տէր:

1. Ի տարբերութիւն ԲԳ խմբագրութիւնների, Ա խմբագրութեան վերնագիրը հիրտ է արտահայտում հոդվածի բովանդակութիւնը՝ հանողաց և ոչ հանելոյ: Խոսքը մահվան դատաւիճիկի կատարողների մասին է, գողերին ի փայտ հանողներին և ոչ նրանց ի փայտ հանելու մասին:

- 135. (ԱԳ, էջ 129, 393) Վ. Բաստամյանցը նշելով, որ ըստ Մխիթարի հողվածը բաղված է կանոններից, ավելացնում է. «Սակայն ոչ մեր և ոչ արտաքին կանոնագրքերի մեջ չգտանք մի այսպիսի կանոն» (ծանոթագր. № 938): Հողվածը Դավթի ԽԳ կանոնն է, բայց գգալի մանրամասներով ընդարձակված, ինչպես և նշում է Մխիթարը. «այլ հաստատել եւ կանոնաբ կամենցար՝ մասամբ առաւելելայ»:
- 136. (ԱԳ, էջ 129, 393) Վ. Բաստամյանցը (տե՛ս էջ 419—420) այս հողվածը սկզբից և վերջից վերցրել է շակիրտների մեջ, որով ասել է տալիս, թե հողվածը ամբողջովին Մխիթարի հորինածն է: Բայց այս հողվածը ամբողջովին Դավթի ԽԳ կանոնի մասն է:
- 137. (ԱԳ, էջ 130, 393) Այս հողվածի առաջին պարբերության (առաջին տողի) վերաբերյալ Վ. Բաստամյանցը գրում է (ծանոթագր. № 449), որ Մխիթարը ակնարկում է Սահակ Պարթևի Ժ, ԺԳ և ԺԷ և Դվինի V ժողովի ' կանոնները: Չբանցում թեև խոսք կա մանուկների ուսուցման մասին, բայց ոչ ձրի ուսուցանելու մասին: Բացի դրանից, ամբողջ հողվածը Վ. Բաստամյանցը վերցրել է շակիրտների մեջ և 450-րդ ծանոթագրության մեջ էլ նշել, որ այն «Տորինել է ինքը Գոշր»: Հողվածը, սակայն, Ալավիկի որդի Դավթի ԼՆ կանոնն է, որը ինչ-որ շափով փոփոխել է Մխիթարը և ավելի պարզ ու հստակ ձևակերպում ավել:
- 138. (ԱԳ, էջ 130, 393) Բ խմբագր. հիմքը հանդիսաբող ձեռագրում ՄԻԿ հողվածը չկա: Վ. Բաստամյանցը ինչպես նշում է և ինքը (տե՛ս ծանոթագր. № 642), հողվածը վերցրել է ԱԿ խմբագրություններից և տեղադրել առաջի մասի վերջում, որպես 124-րդ կանոն:
- 139. ՄԻՆ հողվածի Գ խմբագրությունը մի շարք դեպքերում բառացի համապատասխանում է Բ խմբագրությանը, որով դարձյալ հաստատվում է, որ վերջինս եղել է առաջինի հեղինակի կամ հեղինակների ձեռքի տակ: Այդ համապատասխանությունները ավելորդ համարեցինք բերել, որովհետև նախ՝ շատ տեղ կգրադեցնեն, երկրորդ՝ վերաբերում են երկրորդական նշանակություն ունեցող հարցերի:
- 140. (ԱԳ, էջ 132, 395) «Եւթանասնից Թարգմանութիւն», կամ Septuaginta, կամ Ալեքսանդրյան է կոչվում Ս. Գրքի Թարգմանութուններից մեկը: Ինչպես բացատրում են, Ալեքսանդրիայում ապրող հրեաների մի ավանդության համաձայն այդ անվանման պատմությունը հետևյալն է: Եգիպտոսի թագավոր Պտղոմեոս Փիլադելփոսը (287—247 թթ. մ. թ. ա.) խնդրում է հրեաների հոգևոր պետից իրեն ուղարկել հրեական սուրբ գրքերից մի օրինակ և գիտնականներ, որ Թարգմանեն դրանք հունարենի: Հոգևոր պետը Երուսաղեմից ուղարկում է անհրաժեշտ գրքերը և 72 գիտնական վարդապետներ, մեկնիչներ, որոնք և Թարգմանում են Հին կրտակարանը (կամ Հնգամատյանը միայն) հունարենի: Թարգմանիչների քանակը ցույց տվող այս 72 թվից էլ առաջացել է «Եւթանասնից Թարգմանութիւն», կամ յոթնասուս մեկնիչների Թարգմանություն» անունը: Թարգմանությունը կոչվում է նաև Ալեքսանդրյան այն պատճառով, որ Թարգմանական աշխատանքը կատարվել է Եգիպտոսի մայրաքաղաք Ալեքսանդրիայի մոտ գտնվող Փարոս կղզում: Սա համարվում է Ս. Գրքի լավագույն Թարգմանություններից մեկը:
- 141. (ԱԲԳ) Իսկ սուրբ Դիոնիսիոս՝ պարձանեն Արենացոց, Արիսպագցի, առաւելոյն աշակերտ եւ հետեւող (Ա, էջ 132, Բ, էջ 240, Գ, էջ 396):  
Առաջին դարի երևելի աթենացիներից էր, Արենպագի անդամ: Պոզոս առաքյալի քարոզելից մեկի ժախնակ «ոմանք արք անկեալք ի նա՝ հաւատացին, ընդ որս էր եւ Դիոնեսիոս Արիսպագացի» (Գործք Առաւելոց, ԺԷ, 34): Դարձավ Աթենքի առաջին եպիսկոպոսը, հետո նահատակվեց: Քրիստոնեական աշխարհում, մինչև ուշ միջնադար, լայնորեն հայտնի էր գործերի մի խումբ, այդ թվում «Յաղագս երկնային քահանայապետութեան» և «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան», որոնց հեղինակ էր համարվում այս Դիոնեսիոսը: Այդպես գիտի և Մխիթարը, որ վկայակոչում է նրա աշխատություններից առաջինը: Միջնադարում սրան շփոթել են Գալիլայում քրիստոնեություն քարոզող Դիոնեսիոսի հետ: Լորենցո Վալլան և էրազմ Ռոտերդամցին առաջինն էին, որ պարզեցին երկու Դիոնեսիոսների շփոթման հանգամանքը և կասկածեցին, թե այդ գործերի հեղինակ կարող է լինել առաջին դարի Դիոնեսիոսը: Դրանից հետո մինչև մեր օրերը այդ հարցի շուրջ գգալի գրականություն է ստեղծվել և այժմ արդեն հաստատված են համարում հետևյալը. գործերի նշված խումբը ստեղծվել է հինգերորդ դարի երկրորդ կեսից ոչ վաղ, բյուզանդացի մի անհայտ հեղինակի կողմից, որը դավանաբանական վեճերում իր խոսքին ավելի ծանրա-

կըշիտ արժեք տալու համար դրանք վերագրել կամ հրապարակել է եկեղեցական աշխարհում մեծ հեղինակություն ունեցող առաջին դարի Գիոնեսիոսի անվամբ՝ (տե՛ս Сковрцов К., Исследование вопроса об авторе сочинений, извдстных с именем Св. Дионисия Ареопажита, Киев, 1871, Koch, H., Pseudo-Dionysius Areopagita in seinen Beziehungen zum Neuplatonismus und Mysticismus, Mainz, 1900, Даниелиа С., К вопросу о личности Псевдо-Дионисия Ареопажита, Византийский современник, т. VIII; 1956, և այլն)։

142. (ԱԲԳ) Աւելի քան զայս մի ինչ իմաստոյ, որպէս եղկելին Որոգիւնս... (Ա, էջ 133, Բ, էջ 242, Գ, էջ 397)։

Վաղ քրիստոնեութիան մեծագոյն դեմքերից մեկն է .ծնվել է 185 կամ 186 թ. Ալեքսանդրիայում, մահացել է 255 թ.։ Ապրել է նոր հավատին նվիրված, բայց և դառն ու փոթորկալի կյանքով։ Արդեն 18 տարեկան հասակում տնօրինում էր Ալեքսանդրիայի հայտնի դպրոցներից մեկը։ Միշտ ունեցել է բազմաթիվ ունկնդիրներ։ Եկեղեցու հռչակված հայրերից ոմանք նրա աշակերտներն են հղել։ Բեղուն է եղել նրա գրիչը, նրան է պատկանում շուրջ 6000 գրվածք։ Նրա վարքի առանձին կողմերի և առանձին հարցերի շուրջ նրա արտահայտած մտքերի կապակցութիւմը եկեղեցու հայրերից ոմանք, նաև ինքը՝ եկեղեցին մի քանի անգամ դատադատել են նրան և՛ կենդանութիան ժամանակ, և՛ հետմահու։ Թերևս այդ է պատճառը, որ Մխիթարը անվանում է նրան եղկելի։

Նույն ժամանակներում ապրում էր մի Որոգիւնես ևս, նույնպես եգիպտացի։ Գտնում էր, որ ամուսնութիւնը եկեղեցու խորհուրդը չէ, բարոզում էր ազատութիւն ամուսնութիան հարցերում և այլն։ Սա, որ բազմաթիվ կողմնակիցներ ուներ և էլ ավելի հետևորդներ, շուրջ հակադրութիան մեջ էր եկեղեցու հետ տե՛ս Վ. Բաստամյանց, ծանոթագր. № 484, Շ. Մատրևոս Վ. Մաղաբ-Քիլիփիիանց, Կենսագրութիւն Երեմյի արևց, Բ. Ք, Վենետիկ, 1839, էջ 117—119, Փ. В. Фаррар, Жизнь и труды святых отцов и учителей церкви, пер. с английского, СПб, 1891, էջ 218—246, Дж. С. Робертсон, История христианской церкви, от апостольского века до наших дней, т. I, СПб, 1890, էջ 89—103 և այլն)։

143. (ԱԲԳ) Հինգերորդ գունդն Ոգիլիի (Ա, էջ 134, Բ, էջ 245, Գ, էջ 397)։

Դատաստանագրքի բոլոր ձեռագրերում՝ Եզեկիէլի փխ Ոգիլիի։ Եզեկիէլը հայտնի մարդարեն է (IV դ. մ. թ. ա.), որը թեև բահանյալական ցեղից էր, բայց ցեղի, «զոյդի» հիմնադիր չէր։ Գ խմբագրութիան ճ ձեռագրում ևս Եզեկիէլի, բայց գրիչը լուսանցքում ցույց է տվել, որ պետք է լինի Ոգիլի։ Այս ճիշտ ընթերցումը տալիս են նաև մեր Մատենադարանի № 2020 (թ. 41 ր) և 2678 (թ 336 ր) ձեռագրերը (սրանց մասին տե՛ս ծանոթագր. № 149), որոնք համաձայն են Աստվածաշնչին։ № 9513 ձեռ. (թ. 400 ա). ողիլի և եզեկիէլի։ Այս ձեռագրերի համաձայն էլ սրբագրել ենք բնագիրը։

144. (ԱԲԳ) Երևներորդ գունդն Սեմիի (Ա, էջ 134, Բ, 245, Գ, էջ 397)։

Դատաստանագրքի բոլոր ձեռագրերում (բացի մեկից) այս անվան տարբերակներն են՝ Տսեուէի, Տըսեուի, Տեսուէի, Տսէուէի, Տսէուեի, Ասեսուի։ Վ. Բաստամյանցը գրում է (ծանոթագր. № 494), որ «որչափ և շատ է որոնել», այնուամենայնիվ այդպիսի մի անուն չի գտել ոչ Աստվածաշնչում և ոչ այլուր։ Հենց դա էլ լավագույն ապացույցներից մեկն է, որ տվյալ անունը Դատաստանագրքի ձեռագրերում ազավաղված է։ Ուղիղ ընթերցումը տալիս են Մատենադարանի № 2020 և 2678 (սրանց մասին տե՛ս ծանոթագր. № 149), ինչպես և Գ խմբագրութիան ծ և № 9513 ձեռագրերը. Ճ և №9513 (թ. 400 ա)՝ Սեմէի, № 2020, թ. 41 ր՝ «Եւթներորդ գունդն Սեմէի» № 2678, թ. 336 ր՝ «Եւթներորդ դաս գունդն Սիմէի»։ Այս անունը լայնորեն վկայված է Աստվածաշնչում. տե՛ս օրինակ՝ Ելք, 2, 17. Թիւք, Գ, 18, 21. Բթագ., Ժ2, 5, 7, 13. ԺԹ՝ 16, 18. Գ, Թագ., Բ, 39 և այլուր։ Դատելով նշված ձեռագրերից «Սեմէի», «Սեմէի» կամ Սիմէի» թեք ձևն է (սեւ. հոլով), մինչդեռ «Սեմէի» ուղիղ ձևն է. օրինակ՝ «Եւ այս են որդիք Գերսոնի՝ Լորենի և Սեմէի» (Ելք, 2, 17 և այլուր)։ Սեուականն է՝ «Սեմեայ». ինչպես օրինակ՝ «Գունդն Ղոբենեայ և գունդն Սեմեայ» (Թիւք, Գ, 21) կամ «Փարեան ծառայք երկու Սեմեայ» (Գ թագ. Բ, 39), «Եւ ազդ եղև Սեմեայ» (անդ.)։ Բայց մենք թողնք անփոփոխ № 2020 ձեռագրի ընթերցումը։

145. (ԱԲԳ, էջ 135, 248, 399) Պատրիարքական աթոռների ավագութիան կամ պատվի առումով Կեթաղատութիան հարցը եկեղեցու քննարկման առարկա է դարձել մի քանի անգամ։ 325 թ. Նիկիայում գումարված առաջին տիեզերական ժողովն արդեն իր 2 և է կանոններով սահմանել էր, որ

ճգիպտոսում «Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենացուն իշխեսցէ, վասն զի եւ Հռոմայեաց եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս եւ Անտիոքացաց» և «Յրոսաղէմի եպիսկոպոսն պատուեսցի»։ Ընդհանուր պատճառաբանութիւնն այն է, զգի մայրաքաղաքացն ըստ արժանին պահեսցի պատինն իւր»։ Պատրիարքական Խորհուրդն սկզբում ընդհանրապես իրավահասար են եղել, տարբերվել են միայն «պատուի աղաքաւ»։ Անտիոքի աթոր Միխիթար ավագ է անվանում, հավանաբար, նկատի ունենալով 381 թ. Կոստանդինպոլսում գումարված երկրորդ տիեզերական ժողովի երկրորդ կանոնը։ Բայց յայտեղ, ինչպես և Նիկիական կանոններում, խոսքը ոչ թէ պատրիարքական աթորների ավագութեան մասին է միմյանց նկատմամբ, այլ յուրաքանչյուրի մասին իր աշխարհում մյուս եպիսկոպոսութեանների համեմատութեամբ։ Իսկ Անտիոքի աթոր ընդհանրապես ավագ չի եղել, նրա համեմատութեամբ ավագ էր Ալեքսանդրիայի աթոր (տե՛ս Երիսակ՝ Дж. С. Робертсон, История христианской церкви, т. 1, СПб, 1890, էջ 284)։ Միխիթար Գոշր կարծում է, որ Յուստինանո կայսրն է Կ. Պոլսում հաստատել պատրիարքական աթոր, իսկ Հովհաննէս Դրասխանակերտցին, օրինակ, հայտնում է, որ դա կատարել է «Կոստանդոս որդի մեծին Կոստանդինոսի» (Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1853, էջ 28)։ Համենայն դեպս արդեն երկրորդ տիեզերական ժողովը (381 թ.) սահմանեց, որ «Կոստանդնուպոլսացոյ եպիսկոպոսին ոմնել զպատիւ աւագութեան չետ Հռոմայ եպիսկոպոսին, վասն զի է եւ սա նոր Հռոմ (Վանեմագիրք հայոց, Կ. Ա, էջ 276, կանոն Գ, ըստ հունա-սլավոնական կանոնագրքի կանոն Բ տե՛ս Книга правил...»։

Այս կարգը հաստատեց նաև Քաղկեդոնի ժողովը (կանոն 28) և 692 թ. գումարված Տրուլի կամ Հինգ-վեցյան ժողովը (կանոն 36)։ Այս նույն կանոնով հաստատվել է պատրիարքական աթորների ավագութեան հետևյալ կարգը. Հռոմ, Կ. Պոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երոսաղէմ (տե՛ս Книга правил... էջ 7a)։

146. (ԱԲԳ) ...որք ունին գառաբնական զգեստ եւ զեմիփոսոն հինգերկին (Ա, էջ 136, Բ, էջ 251, Գ, էջ 399)։

Գրվում է նաև եմփոռ, եմփորոն, եմփորոտ, եմփոռ, էմփոռ, էմփորոտ և այլն, Բառ՝ հունարենն՝ ἑμφορέον կամ ἑμφορία որ նշանակում է ուսանոց, սի վերայ ուսոց կրելի» (ՆՁԲ)։ Իրավունք ունեին հագնելու միայն եպիսկոպոսները և ավելի բարձր աստիճանի հոգևորականները։ «Եմիփորոն հինգերկին»—ն. Համբրոնացին բացատրում է. «Սուքա ունին զգեստ զառաքելականն, որ եմիփորոնն է հինգերկին՝ հինգերկին խաչիւր զարդարեալ» (Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին, Վենետիկ, 1847, էջ 82, տե՛ս նաև Վ. Բաստամյանց, ծանոթագր. № 520)։

147. (ԱԳ) Սքեմ է նոցա աբականու պնդնատր (Ա, էջ 136, Գ՝ 399)։

Աբականու—Վ. Բաստամյանցը բացատրում է. «Թերևս հունական բառ է, բայց աղճատված և պետք է նշանակէ մատաշապիկ (ծանոթագր. № 522)։ Ըստ Հ. Աճառյանի. «Հատվածը ճիշտ տպված չէր, պետք է սրբագրել այսպես. «...աքական ու պնդնատր և շուրջատու...» (Հայերեն բն. բառեր հին մատենագրութեան մեջ, Վենետիկ, 1913, էջ 57)։ Հ. Աճառյանը բառավերջի ու-ն անջատել և դարձրել է շաղկապ, անտեսելով, որ բոլոր ձևագրերը ունեն աբականու, իսկ մի ձևագիր՝ Ձ, աբականու։ Այս և մի քանի այլ պատճառներով Գրիգոր Վ. Սարգսյանը իրավացիորեն մերժել է այս բացատրությունը, իր հերթին բացատրելով. «Ա՛հ, մեկի ծանոթ հայերեն ոտք բառն է. Աբականն ալ, ընականաբար, ոտքի հետ կապ մ՝ ունեցող (ոտնական)։ Բայց հոս խոսքն է եկեղեցական զգեստի մը վրա. ուրեմն աբական կը նշանակէ մինչև ոտքը հասնող զգեստ մը։ Արդ այն զգեստին որ մինչև ոտքը կը հասնի, լատիները կ'ըսեն ոտնական=Talaris (tallo, onis), այսինքն զգեստ մը որ մինչև tallo=կրունկը կը հասնի. կը հետևի ուրեմն որ անոնց vestis Talaris բաժը՝ մեր աբականն է. և բնագրի իմաստն յայտնի է որ բառին իմաստն է ներքապոյն օրրազան զգեստ, այսինքն շապիկ...»։ Գրիգոր Վ. Սարգսյանը աբականու համարում է գործիական հոլով և բառակապակցությունը թարգմանում է «պնդնավոր արականով» (Գիտություններն «Հայերեն բն. բառեր»-ուն, Բազմավեպ, 1927, էջ 15—16)։

Այս բացատրությունը հաստատվում է նաև ԲԳ խմբագրություններով. Բ՝ «կարգ է նոցա արականու պնդնատր (սպիտակ հանգերձ մինչև ծածակ գոտս.)» (էջ 253), Գ՝ «կարգ է նոցա սպիտակ հանգերձ մինչև ծածակ գոտս՝ արականու պնդնատր» (էջ 399). Հին հայ զգեստների մասին տե՛ս Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ մեկնութիւն խորհրդոց պատարագին, Վենետիկ, 1847, մասնավորապես՝ էջ 145—153, և Վարդան Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1923)։

148. (Ա) Են եւ ի կանանց սարկաւազով ձեռնադրեալ, որք կռիւն սարկաւազունիք (Ա, էջ 136, Բ, էջ 257, Գ, էջ 400):

Ա խմբագրութեան բոլոր ձեռագրերը ունեն եւ ի կանանց սարկաւազունք) ձեռնադրելու...

Քանի որ այս տողից առաջ բնագրում խոսքն այն մասին է. թե ինչ է սարկաւազների «գործը» իրավունք-պարտականութիւնները, այսպէս ստացվում է, որ սարկաւազները սարկաւազուհի ձեռնադրելու իրավունք ունեն, մի բան որ սկիզբատրեան ճիշտ չէ: Այդ պատճառով բնագիրը սրբագրեցինք համաձայն ԲԳ խմբագրութեան, նկատի ունենալով նաև Ա ձեռագրերը:

149. (ԱԲԳ, էջք 137, 253—259, 400) Դատաստանագրքի բոլոր ձեռագրերում, բացի մեկ գրչագրից եկեղեցու դասերի հերթականութիւնը, սկսած յոթերորդ դասից, խախտված է: Եկեղեցու դասերը ստեղծվել են աստիճանաբար և հասել կանոնիկ թվին III—IV դարերում: Եկեղեցական կանոնական գաղափարի մեջ եկեղեցու դասերի դասական շարակարգը իր վերջնական՝ ձեռնկերպումն է ստացել ամենուրեք IV դարում: Մեր մատենագրութեան մեջ էս, սկսած Մովսէս Կաղանկատվացուց մինչև Գրիգոր Տաթևացին, արտահայտվել է այդ դասական շարակարգը. միակ շեղումը Մխիթար Գոշի Դատաստանագրքին էր: Այսպես.

Կաղանկատվացի <sup>1</sup>	Դատաստանագրքի <sup>2</sup>	Անանիա Մոկացի <sup>3</sup>	Համբարձումի <sup>4</sup>	Օրբելյան <sup>5</sup>	Մխիթար Գոշ	Գոշ ձեռ. Ե	ձեռ. № 2678 <sup>6</sup> № 2717 <sup>7</sup>	ձեռ. № 2020 <sup>8</sup> № 2118 <sup>9</sup>	Գրչագրի տեսակ
Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Գործարար Արքեպսկի	Հրատարակչական		Գրչագրի տեսակ
Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Մտրպալտ Եպս Բհն	Գրչագրի տեսակ
Սրկվզ Կեսարկվզ Ընթրցող Փաղաք	Սրկվզ Կեսարկվզ Վրժնդ սղմս երգու.	Սրկվզ Կեսարկվզ Կեսարկվզ Կեսարկվզ	Սրկվզ Կեսարկվզ Ընթրցող փալտ	Սրկվզ Կեսարկվզ Ընթրցող փալտ	Գրչագրի տեսակ				

Նույն շարակարգն է տալիս նաև Հովհան Արճիշեցին (ԺԴ դար, տե՛ս Մեկնութիւն աճաւոր խորհրդոյ սբոյ պատարագին, էջմիածին, 1860, էջ 20—21 և այլուր): Ինչպես տեսնում ենք, եկեղեցական դասերի շարակարգը, բոլոր դեպքերում, ընթանում է բարձրագույն դասից հետի ցածրագույն, աստիճանական նվազմամբ: Շարակարգը կարող է ընթանալ նաև աշխատակ ուղղութեամբ՝ ցածրից բարձր, բայց դարձյալ աստիճանական հերթականութեամբ: Ամեն պարագայի, շարակարգը, լինի վայրենիաց թե վերջնից, միշտ կազմում է ուղիղ գիծ: Միակ բացառութիւնը Մխիթար Գոշի Դատաստանագրքին է, որտեղ շարակարգը ոչ թե ուղղագիծ է, այլ՝ կորագիծ: Դատաստանագրքում շարակարգը սկսվում բարձրագույն դասից և ընդունված ու ընդհանուր ձևով իջնում է մինչև վջերորդ դասը՝ սարկաւազը, բայց սկսած յոթերորդ դասից հաջորդականութեամբ խախտվում է և հաջորդ երեք ցածր դասերի տեղ նշվում են. կես սարկաւազի փոխարեն եպիսկոպոսը, գրակարգացի՝ կաթողիկոսը և սաղմոսերգուհի՝ պարս, ըստ որում վերջինը համարվում է եվրոպացի քան գամենասան, նմանալ քերթվէիցք:

Հայագիտութեան մեջ այս հարցի շուրջ եղած տեսակետները բաժանվում են երկու խմբի: Մի խմբի համար բնագրի եղծման հարց չկա, եկեղեցական դասերի շարակարգը համարվում է հեղինակային՝ մխիթարյան, և նշվում է, որ թե հայ եկեղեցին և թե Մխիթար Գոշը

1 Գատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 309:  
 2 Գատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 47—48:  
 3 Թուրք ընդդէմ Խոսրովու Անձևացուց, ձեռ. № 3062, թ. 212 ա:  
 4 Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցույ... Վենետիկ, 1847, էջ 82—85:  
 5 Գատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 108—111:  
 6 Թ. 335ա—335բ  
 7 Թ. 40բ—41բ  
 8 Թ. 40ա—44բ  
 9 Թ. 310բ—313ա

ընդունում են պապի գերիշխանությունը և նրան համարում են ընդհանուր քրիստոնեական եկեղեցու գլուխ (տե՛ս օրինակ՝ Ս. Գր. Սարգսյան, Գրիգոր կաթողիկոս Անավարզացի, Բագմավէպ, 1949, էջ 116, 119, Ռ. Ս. Կոզյան, Հայոց եկեղեցին, Քեյրոսք, 1961, մասնավորապես՝ էջ 427—432, այս գրքի մասին տե՛ս Գր. Ծառ, Անդրադարձություններ (Տ. Ս. Կոզյանի «Հայոց եկեղեցին» գործին առիթով), Նրուազեմ, 1963 թ., Ն. եպ. Մովսէսյան, «Սիռն» 1963, հունվար, էջ 14—18): Գիտնականների մյուս խումբը գտնում է, որ բնագործ եղծված է, շարակարգը Դատաստանագրքում առկա ձևով հեղինակյին չէ. եղծումը կատարվել է պապի գերիշխանությունը շեշտելու նպատակով (տե՛ս Երիմակ՝ Վ. Բաստամյանց, ծանոթագր. № 540, Յ Կարստ, Kommentar, էջ 65—75): Այս եզրակացությունը հանում են շարակարգի ըստ էության քննությունից: Սկզբից եթե սահնք, որ մենք եղծումը չենք տեսնում նրանում, որ ընդգծված է պապականության գաղափարը: Եղծումը կայանում է հենց նրանում, որ դա արված է անգիտակ ձևով, ոչ-գիտականորեն. մի բան, որ բնավ չի կարելի վերագրել Մխիթար Գոշին:

Հարցն ունի երկու կողմ՝ եկեղեցական-քաղաքական և բնագրագիտական՝ նախ՝ առաջին կողմի մասին: Առաջին տեսակետի ներկայացուցիչները շեշտը դնում են հարցի եկեղեցական-քաղաքական կողմի վրա և այն հիմամբ, որ Դատաստանագրքում մի անգամ խոսք կա պապի գերադասության մասին, Մխիթար Գոշը հայտարարվում է պապականության գաղափարի կրողը Ըստ որում անտեսվում է այն շատ կարևոր փաստը, որ այդպիսի եզրակացություն չի բխում ոչ Դատաստանագրքից իր ամբողջությամբ մեջ, ոչ Մխիթարի մյուս գործերից (մասնավոր «Քուղժ»-ից) և ոչ էլ նրա հոգևոր-եկեղեցական գործունեությունից, որոնք հակառակն են հաստատում: Բայց, ենթադրենք, հակառակ իրականության, որ Մխիթար Գոշը ընդունում է պապի գերիշխանությունը քրիստոնեական եկեղեցու մեջ, և նրա եկեղեցա-քաղաքական կողմնորոշումը պապական է: Դա հաստատելու համար բնավ հարկ չկար եկեղեցու դասերի շարակարգը ներկայացնել այդպես անհմուտ ձևով՝ օտարկազդից հետո նշել մի անգամ արդեն իր տեղում՝ հիշված եպիսկոպոսին և գրակարգային ու սաղմոսերգուհի փոխարեն դնել կաթողիկոսին ու պապին: Ինչպես իրավացիորեն նկատում է Յ. Կարստը (Kommentar, էջ 67), Մխիթարի նման մեծ եկեղեցականն ու խորիմաց կանոնագետը չէր կարող չիմանալ, որ պապն ու կաթողիկոսը առանձին դասեր չեն կազմում: Պապը պարկառու է պատրիարքական դասին, կաթողիկոսը՝ կամ պատրիարքականին, եթե ընդունենք, որ հայ եկեղեցին ևս պատրիարքություն է կազմել, կամ արքեպիսկոպոսականին. ինչպես նշում են Կաղանկատվացին, Լամբրոնացին, Օրբելյանը: Բացի դրանից, եկեղեցու դասերի՝ Դատաստանագրքում տեղ գտած շարակարգի վերջին երեք կետերում արտահայտվել է հայ եկեղեցու ձևեր, մասնավորապես պատարագի արարողությունը որոշ կողմերի չիմացություն, որին չենք անդրադառնում, որովհետև այդ մասին խոսել են Վ. Բաստամյանցն ու Յ. Կարստը և որը անկարելի է վերագրել հայ եկեղեցու մեծագույն վարպետներից մեկին՝ Մխիթար Գոշին: Կա շատ կարևոր մի փաստ ևս: Գիտենք, որ Ներսես Լամբրոնացին եկեղեցա-քաղաքական իր կողմնորոշմամբ հակված էր դեպի յատին արևմուտքը և պապականությունը: Այդ պատճառով սպասելի էր, որ հենց Ներսես Լամբրոնացին կդնի պապին առաջին տեղում եկեղեցական դասերի իր շարակարգում կամ հենց այդտեղ նրան կհայտարարի «վերագոյն քան զամենեսնան»: Մինչդեռ, Լամբրոնացին այդտեղ պապի անունն իսկ չի տալիս և թվարկում է եկեղեցու դասերը այն հերթականությամբ, որ շատ վաղուց ընդունված ու հաստատված էր քրիստոնեական եկեղեցում՝ թե Արևմուտքում և թե Արևելքում: Եթե դասաշարքում պապին առաջին տեղը չի տվել ինքը Լամբրոնացին, ապա առավել ևս նման բան անել չէր կարող Մխիթար Գոշը, որը ինչպես հայտնի է, դեմ էր միաբարբական նկրտումներին և հայկական եկեղեցու անկախության ու ինքնուրույնության մեծ մարտիկներից էր: Ամեն պարագայի դիտելի է, որ եկեղեցա-քաղաքական կողմնորոշումը, պապի գերիշխանության ընդունումը և եկեղեցու դասերի շարակարգը բոլորովին տարբեր հարցեր են, ու մեկով չի կարելի արտահայտել մյուսը: Այդպիսի ամեն փորձ ակրնհաստարեն բնագրի խաթարում է հատկանշում, մանավանդ այնպիսի դեպքում, երբ բրտագրի հեղինակը մեծ հոգևորական ու քաջամուտ կանոնագետ է: Բնագրի եղծվածությունը նկատել են, նույնիսկ, գրիչները, որովհետև նրանցից ոմանք, Դատաստանագիրքը ընդօրինակելիս, չեն արտագրել 7, 8, 9-րդ կետերը և տեղը բաց են թողել: Եղծումը հաստատվում է նաև հետևյալ փաստով: Հայտնի է, որ եկեղեցու դասերի շարակարգը մեր մատենագրությունում մեջ մանրամասն նկարագրել են Լամբրոնացին, Մխիթարը և Օրբելյանը, որոնց զուգադրությունը շահեկան կլինի հարցի համար, ուստի համեմատենք.

ՅԱՂԱԳՍ ԱՄՏԻՃԱՆԱՅ ԵՆԵՂԵՑՐՈՑ

Մխիթար Գոշ Ա խմբագրություն	Ներսես Լամբրոնացի	Ստեփանոս Օրբելյան
<p>Իսկ եկեղեցի որպէս Հարսն մի գեղեցիկ, որ պահի ի համար մեծի փեսային՝ որդւոյ թագաւորին եւ գիւր սենեակին յապիճէ գեղեցիկ կարգաւորութեամբ, որպէս զի նմանագոյն ինչ արքունական կարգաց յարգարկե՛ք՝ զպատիւ օրդւոյ թագաւորին։ Սոյնպէս եւ եկեղեցի երկ-նային գասուցն ընտանութիւն վերն կարգեաց զնմանութիւնն եւ զգրասն ինն թուով, քանզի ի խորանին ինն դաս տեսանեմք զընտացւոցն եւ զպաշտանէիցն, քանզի ոչ մտնեցեան միում արժանաւորեցան կալանիւ, այլ ըստ չափոյ արժանաւորութեանն առին զպատաստութիւն....</p>	<p>Եկեղեցի քրիստոնէից առաքելական խօսիւք Հարսնացեալ երկնաւոր փեսային իւրոյ Քրիստոսի՝ յօրինեաց զԵնեակ իւր պէտէս սպասաւորաց պատմունճաթ ի պատիւ եւ ի փաստ արքային իւրում Քրիստոսի, ինչ որ օրինակ խօսեալ որ ի հարսնութիւն որդւոյ թագաւորի՝ հարկաւորապէս նման թագաւորական ապարանիցն պահունճէ գտագաստ իւր, այսպէս եւ սա խօսեալ երկնաւոր արքային որդւոյ, և սպասեալ մտանել յառաջատու նորա, այժմ ի դասակարգութիւն համեմատութեան երկնաւոր բաճանայագիտութեանցն ուղղեաց գիտան և գաստիճան պաշտօնէից իւրոց. քանզի նոքա՝ որպէս այնորիկ խորհրդագացքն պատմեցին մեզ, ոմանք անընդմեջարար են շուրջ ըզնստունով....</p>	<p>Արդ՝ ի զալ բանին Աստուծոյ և անճառ մարգեղութեամբ յազատելն զԵնութիւնս մարգկային ի գորութեանէ նախաշարին, ըստաւորեալ երկնահարանէր անտարանան, եւ վերստին ժնւնդեանմբ աւազանին որդիացուց Տօրն երկնաւորի. և զանճառելին հրեղինաց և հորեղինաց շնորհս ետ եւ պարգեանաց առատապէս մարգկան զմարմին իւր եւ գարին ի կիբարուր, որով միացեալք ինին ընդ Աստուած և աստուածացեալք։ Եւ կողմ զազգս մարդկան յերկնաւոր քաճանայութիւնն տալով իշխանութիւն աստուածազար կապել և արձակել....</p>
<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>	<p>Ան արդ՝ այսպէս լինելը երկին ի վերայ երկրի կատարեցեալ.... ապա պատշաճ էր երկնաւորացն դասու և սահմանաւ կարգաւորել ի մէջ եկեղեցու ըստ երկց քաճանայագիտութեանցն եւ ինն դասուցն.... և որ ոմնի օրինակ զայս.</p>	<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>
<p>Իսկ դէմք եզին՝ նշանակէ զՈւկասու....</p>	<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>	<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>
<p>Իսկ դէմք արժուոյն՝ նշանակէ ըզՅովհաննես....</p>	<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>	<p>Անուշին գասք եկեղեցու՝ Պատրիարք, որք թարգմանին հայրապետք, որք ունին զաթո շորից անտարանշացն, Եւ ունին զաթախանակ շորեքերպէս կենդանեացն երկնացն, որ նշանակէ, որ նշանակէ. դէմք մարդոյն զՄատթէսու....</p>

Մտեփանոս Օրբելյան

Ներսես Համբարձումի

Մխիթար Գ. 2  
Ա. Խմբագրություն

Արք, ա՛հա, ցուցաբ փոխանակ երկնից՝  
 զէկեփեղեցի, փոխանակ շորեփեղեպեան կեն-  
 ղանեացըն՝ զանտարանիշոն, և նոցա փո-  
 խանակ՝ զաճարապետացն դասն և զնոցին  
 աթոռն: Ահա և մեծ աթոռ Անտիոքայն՝ ըզ-  
 Մասիէնոսին, Ազէկանոսիցուն՝ զՄարիոսին, Հը-  
 ոտմայն՝ զՂուկասուն, Եփեսոսին՝ զՅովհաննուն:

Այս կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի  
 մինչև յաւուրս թագաւորութեան Յուստինոսի,  
 ըստ շորեփեղեպեան կենդանեացն, շորեփեղեպ  
 նոցնական բխմանն, ըստ շորեփեղեպեան տի-  
 եղեփաց, ըստ շորեց անտարանչացն բաժա-  
 նեցաւ աշխարհս յըշխանութիւն շորեց անտա-  
 բանչացըն: Իսկ Յուստինոս իբրև թագա-  
 ւորեաց, կամ եղև փոխել զաթոռ սրբուն Յով-  
 հաննու յմիջնոսէ ի կոստանդնուպոլիս, և  
 Հանանցոցեակ ժողովն՝ և զսրբուն Մատթէ-  
 ոսին՝ յնտիոքայն՝ յերուսաղէմ, զի մինչ ի  
 նորա ժամանակս ինքնազուրկ էին եպիսկո-  
 պոսքըն, ոչ ինքեանց՝ ընդ այլաբ և ոչ ալլը՝  
 ընդ նոքաբ. Կոստանդնուպոլիս՝ վասն թագա-  
 ւորելոյ քաղաքին, և Երուսաղէմ՝ վասն զի քա-  
 յաբ երկնատր թագաւորին էր Բայց ի ժողովս  
 հրամայեցին ստոր չարքն՝ Երուսաղէմի եպիս-  
 կոպոսին գեր ի վերո, նստել:

Ահա, առացաբ զեկեղեցու առաջին դասն՝  
 զճարապետան, որք ոմնին զառաքելական ըզ-  
 գեստ և զեմիփորուն հինգ կրկին:

Կատուով, թէպէտ և զօրութեամբ առաջին, ալլ  
 Յովհաննէս հուսկ յետոյ յեփեսոս գրեաց. որ  
 նորայն եղև պատրիարք, վերջին էր աթոռով  
 քան զերիսն:

Այս կարգաւորութեամբ վարեցաւ եկեղեցի  
 տիեզերաց մինչև ի ժամանակս Յուստինոսի  
 թագաւորի, ըստ շորս անտարանչացն ընդ շորս  
 բաժանեցաւ աշխարհ՝ յըշխանութիւն շորեց  
 հարապետացն. բայց Յուստինոս իբրև թա-  
 գաւորեաց, կամ եղև նմա փոխել զաթոռ սրբ-  
 րուն Յովհաննու յմիջնոսէ ի կոստանդնու-  
 պոլիս, և Հանանցոցեակ զժողով կպիսկոպո-  
 սացն կատարեաց զնոյնն, և Երուստինոս դար-  
 ձեալ փորեաց զաթոռն Մարիոսի յԱղեքսանդէ  
 յերուսաղէմ. քանզի մինչև ի սորա ժամանակն՝  
 Կոստանդնուպոլսի և Երուսաղէմի եպիսկո-  
 պոսք ինքնազուրկ միայն էին, այսինքն ոչ  
 ինքեանց ընդ այլովք և ոչ ալլը ընդ նոքաբ.  
 Կոստանդնուպոլսին վասն թագաւորեալ քա-  
 յաքին, և Երուսաղէմին՝ վասն զի քաղաք է  
 երկնատր թագաւորին. ըստ այլմ և ի նիկիայ  
 ժողովոյն սահմանս գտցես:

Արդ ա՛հա առացաբ զառաջին դաս եկեղե-  
 ցու՝ որ են հարապետք, և կրկին յունարէն  
 պատրիարք. սոքա ոմնն գրեսա զառաքելա-

Միկիթար Գոշ  
և խմբագրություն

Եւ գործ է հայրապետին ձեռնադրել զարհիսպիսկոպոստ, որք են ընդ վիճակաւ ի շորս բաժնի տիեզերաց. նա տայ հրաման վասն ժողով անձնելոյ:

Երկրորդ դասք եկեղեցւոյ՝ արքեպիսկոպոսք:  
Մքեմ է նոցա աքալանու պնդեալք ևւ փլղոն ևւ ի վերայ՝ եմիփորոն չորեքերկին: Եւ գործ է նոցա ձեռնադրել մետրապոլիտս եւ արհնել ձէթ կնքոյ: Եւ ունին իշխանութիւն ձեռնադրել պատրիարքս:

Ենկրորդ դասք եկեղեցւոյ՝ մետրապոլիտք, որ քարդանին մայրաքաղաքացիք, որք ունին զնոյն սքեմ, բայց եմիփորոն երեքերկին: Գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոստնս եւ արհնել

Ներսես Լամբրոնացի

կանն, որ եմիփորոնն է հինգ կրկին՝ հինգ կըրկին խաշիւք զարդարեալ: Իսկ նափորտ քգգնու բազմախաշ, ի վերոյ որոյ արկանէ քգգպատուական եմիփորոնն: Եւ գործ և իշխանութիւն է պատրիարքին ձեռնադրել զարքեպիսկոպոստ, որք են ընդ իւր վիճակաւ. և ի շորս բաժնն տիեզերաց նորա տան հրաման վասն ժողով լինելոյ:

Երկրորդ դաս աստիճանի եկեղեցւոյ ևն արքեպիսկոպոսք, որ քարդանին եպիսկոպոսպակետ կամ առաջին եպիսկոպոսք. և գրեալ է նոցա նոյն նափորտն բազմախաշ, և ի վերայ եմիփորոն չորեքերկին. և գործ է նորա ձեռնադրել զմետրապոլիտս, և օրհնել զմեռոնն սուրբ: Եւ երեք արքեպիսկոպոսքն ունին իշխանութիւն ձեռնադրել զպատրիարքն իւրեանց:

Ի սոյն աստիճան ևն կաթողիկոսք, որ քարդանին ընդհանրականք. բայց ունին առանելութիւն պատուոյ քան զարքեպիսկոպոստ, զայս՝ զի ոչ նթէ իւր վիճակին սիւսն, այլ ընդ ամենայն տեղիս՝ որ արգքն իւր և համացեղքն են, ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոստ ևստալ զմիտանն, վասն այնորիկ անուանի և կաթողիկոս:

Երկր դաս աստիճանի եկեղեցւոյ մետրապոլիտք, որ քարդանին մայրաքաղաքացիք, և զգնեոս նափորտ միայն՝ առանց խաշի, և լինելն տեսուչք: Եւ սքեմ է նոցա նափորտ. և ի վերայ եմիփորոն երեք կրկին. և գործ է նորա և կաթողիկոս:

Ստեփանոս Օրբելյան

Երկրորդ դաս եկեղեցւոյ՝ արքեպիսկոպոսք, այսինքն եպիսկոպոստայեանք որ կրկին կաթողիկոսք ևւ սքեմ է նոցա պնդեալք փլղոն որ է բազմախաշ. և ի վերայ եմիփորոն չորեքերկին. և գործ է նոցա ձեռնադրել մետրապոլիտս և օրհնել զաստուածագործ մեռոնն: Իսկ ի վաշխանել պատրիարքին երեք արքեպիսկոպոսք այլովք եկեղեցական դասուք ձեռնադրեն պատրիարք:

Երկրորդ դաս եկեղեցւոյ՝ մետրապոլիտք, որ մայրաքաղաքաց և ասալագոյն արհուոցն լինելն տեսուչք: Եւ սքեմ է նոցա նափորտ. և որքան եպիսկոպոստ ընդ ձեռնալք ունի, նոյն

Միեկթար Գոշ և Խմբագրութիւն	Ներսէս Լամբրոնացի	Ստեփանոս Օրբելլան
<p>ձէք կնքով վասն յանձնուածին արկանելոյ յառաջեկական ձիթոյն, զոր պահէ կկեղեցի յանձնուածով: Եւ երեք մետրապալիտք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց արքեպիսկոպոս:</p>	<p>Գրորորդ դաս եկեղեցւոյ եպիսկոպոսն, որք ունին զնոյն զքնս, բայց եմիփորոն կրկին: Գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս: Եւ երեք եպիսկոպոսունք ունին իշխանութիւն ձեռնադրել իւրեանց մետրապալիտս: Եւ գործ է նոցա սեղան արհեստէ կան, եւ եւղ աւծութեան:</p>	<p>Քուսնն ի վերայ խաշ թուի կտտանայ, և եմիփորոն երեքեկին. եւ գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և օրհնել զձէքն որ յանձնուածով, ունի կկեղեցիք ի պէտս երաժարայց և Տիւնիօցոց, և թէ խառնել կամին յառաքելական ձէքն որ է սուրբ մտտոն: Եւ թէ հարկ ինչ լինի կամ վասն ոչ գրուի պատրիարքի կամ վասն ալլ մեծագոյն պատճառի, հրամանաւ և կամօք մեծ աթոռոյն ձեռնադրեն երեք մետրապալիտք ալլովք եկեղեցական զատուք զարքեպիսկոպոսն իւրեանց:</p>
<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս եկեղեցւոյ՝ եպիսկոպոսք, որք կոչին այցելութ, եւ իշխեն ի վերայ զաւագան. եւ սքեմ է նոցա նախորտ անխաշ սոսկ եւ եմիփորոն կրկին միայն. եւ գործ է նոցա ձեռնադրել երկրորտն և սարկաւագան և օրհնել կկեղեցի և օծանել սեղան և աւագան. բայց ի վերջն ի մեծագոյն աթոռոյն անտու յիւրմէ մետրապալիտն. և մետրապալիտն՝ յիւրմէ արքեպիսկոպոսն. զի իբր աստիճանք ի վերտաս իրանի աստուածային շնորհն սկսեալ ի պատրիարքէն և գայ, հասանէ մինչ ի բնական վերջնքն, որք են ժողովրդականք:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>
<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>
<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>
<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>	<p>Գրորորդ դաս աստիճանի կկեղեցւոյ եպիսկոպոսք որ թարգմանին այցելութ կամ տեսուչք, և զզնտն զնախորտն, և ի վերայ եմիփորոն կրկին միայն, և գործ է նոցա ձեռնադրել զամենայն վիճակաւորս, և զսեղան օրհնել և զխաշ և զաւագան և զիւրն օծութեան. մինչ և յայտ եպիսկոպոսի իշխանութիւն:</p>

<p>Մխիթար Գոշ Ա խմբագրություն</p>	<p>Ներսես Լամբրոնացի</p>	<p>Ստեփանոս Օրբելյան</p>
<p>սոցա փակվելն միայն արկանեն ի վերայ նր- կողունց ուսոցն, նոքա եւ բաճկոնուս իշխեն կալ ի վերայ բնոյն: Եւ գործ է նոցա պատա- րագ մատուցանել, եւ բաշխել զկենդանաճաօր մարմինն, եւ մկրտել, եւ ազանքս մատուցանել: Եւ խաղաղութիւն տալ: Եւ ուր եպիսկոպոսն չը- լինի՝ աբղնիս զեաշն եւ զպատարագն սրբ- բուրնաւ: Եւ թէ հրաման առեալ իցէ յեպիսկո- պոսն, եւ զիսկն աւժութեան իշխանութիւն ունի աբղնիս, եւ ձեռնագրել զանազանուս, եւ ըզ- փոշտան եւ զկրանապոսն:</p>	<p>այն առանց եմիփորոնի, զի սոքա ուրար մի- այն արկանեն զնրկութիւն ուսովքն, և և գործ է նոցա պատարագ մատուցանել, և բաշխել զնոյն ժողովրդեանն, մկրտութիւն առ- նել, և ազօքս մատուցանել, և խաղաղութիւն տալ ժողովրդեանն, առաջնորդել և զմեզս թո- ղու, և ոչ յալ ինչ համարձակել, այսինքն ոչ օրհնել սեղան և ոչ վիճակել զոք աստիճանի: Գի այս եպիսկոպոսին պատու է և իշխանու- թիւն:</p>	<p>առաւելոյց. կարէ եւ առնել զմանկունս անագա- հաս և փոսաղտոս, և տալ կարգ արարչարողաց եւ սարկուսագունհաց:</p> <p>Վեցերորդ դաս եկեղեցոյ՝ դիակոնք, որ թարգմանիկն սպասատրք, այսինքն սարկուսա- գունք. և զգետ է նոցա պատմունճան հոլանի առանց գուտոյ, և ուրար արկանեն զաճնակ ուսովքն միայն. և գործ է նոցա հրամանաւ քաճանային ակետարան կարգալ, և քարոզել և վարդապետել՝ և զՎաց պատարագին պատ- րաստել. և զմաղզմայն և զվիթն և զժշոցան բերնն ի սենեկէն ի սեղանն, և ի սեղանայն ածնն արաքաց ի բաշխումն. նոցին իշխանու- թիւն է և խոսն ածել, և որ ինչ միանգամ սպասատրութիւն է՝ սպասատրեն, մինչ և ի կա- տարել կարգաց ժամուցն ամենայնի:</p> <p>Եւ հրամայէ քաճանայն ձեռնագրեալ սար- կուսագին և կէս սարկուսագին զիրս ընթե- նուլ ժողովրդոցն և քարոզել զհ եւ խաղաղու- թեանն, և ընթեռնուլ զանետարանն, նոցին եւ</p>
<p>38 - 494</p>		



Միջնալ Գոշ  
Ա խմբագրութիւն

Ներսես Լամբրոնացի

Ստեփանոս Օրբելյան

և թէ հրաման առնու ի կաթողիկոսէն՝ եւ գիւղն աւտութեան:

կին, և գործ է նոցա առթեալ կարգալ, և գիւաշագործի գաւազանն կրել և զմտմեղէնան, և գեկեղեցին նոքա զարդարեն և զգրունան պահեն:

կեղեցին, և սպասաւորել տաճարին, կրել մի- մեղէնս և գիւաշագործի վարոցն, և պահել ըզ- դրունս եկեղեցւոյն:

Ութնորդ դասը՝ զխաւորք եպիսկոպոսաց՝ կաթողիկոսք, որք ունին գալատուականագոյն աթոս՝ նմանեալ սերովջէից: Սքեմ է նոցա նոյնպէս հոլանի եւ անգլատի և հրակեղն գեր- կոսին ուսաքն: Յայց գործ է նոցա ձեռնագրել զեպիսկոպոսանս եւ ինքնակամ աւրհնել գիւղն աւտութեան:

Ութնորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք, որ թարգմանին ընթերցողք. և ունին զնոյն ըզ- դեանս պատմութեանի հոլանի, բայց յուրարեն, և սոքա ոչ առանց գօտլոյ, այլ գօտի կապեն ի վերայ պատմութեանին, որք արտաքոյ եկե- ղեցւոյն կ'եալ, թէ կաթին՝ մեկնակս զգնուլ մարթ է. և գործ է սոցա ընթեանուլ ըզմար- դարէս և գրնագիրս և զվարդապետականս:

Ութնորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք որ կողին զրակարգացք. ունին գրեանտ զնոյն եւ աղաբարեն, բայց ուրար ոչ և արտաքոյ եկե- ղեցւոյն գրեանու մեկնակ կտապիս. և կան հո- լանի. և գործ է նոցա ընթեանուլ մարգարէական եւ վարդապետական գրեանս:

Ինննորդ դաս՝ վերագոյն քան զամենե- սեան՝ պապիւսո, նմանեալ քերովբէից: Սքեմ է նորա նոյն՝ հոլանի եւ անգլատի: Եւ գործ է ճորա կարգել գրաստ թագաւորաց:

Ինննորդ դաս եկեղեցւոյ՝ փաւլոսք, որ թարգմանին երգեցողք. և գրեանու որպէս գրն- թեւորցողքն. իսկ գործ է նոցա կանգնել և մի- այն երգել զալէլուն և զմեսեդին:

Ինննորդ դաս եկեղեցւոյ՝ փաւլոսոսք որք են սաղմոսներգողք. և զգրեանտ սքեմ է նոցա նոյն. և գործ է սաղմոսել և եղանակօք պաշ- տել յեկեղեցին զձայնաւորս և զարուեստիս այլ- լուփա և մեսեդի և որ ինչ այլ ինչ են:

Այս համադրութիւնը կատարել է ղեկ Ծ. Կարստը (տե՛ս Kommentar, էջ 65—75, 132-րդ ծանոթագրութիւնն ամբողջապէս) և իրավագիտոսն եկել այն եզրակացութեան, որ համադրված հեղինակները, այլալ ղեպքում, իրարից չէ որ քաղում են: Երեք ղեպքում էլ բընագրերը իրենց մեծագուն մասով նույնն են ըստ էութեան, իսկ հաճախ նույնութիւնը բառացի է: Բայց, որոշ հատվածներ ունեն Մխիթարն ու Օրբելյանը, և շունի ամբողջացին, կամ ունեն ամբողջացին ու Օրբելյանը, և շունի Մխիթարը, կամ ունեն ամբողջացին ու Մխիթարը, և շունի Օրբելյանը: Կան այլ կարգի նույնութիւն-տարբերութիւններ ևս (օրինակ՝ բառերի, տերմինների և այլն): Այս փաստերից հետևում է, որ համադրված բնագրերը ծագում են ոչ թէ մեկը մյուսից, այլ յուրաքանչյուրն առանձին ծագում է երեքի համար էլ ընդհանուր նույն աղբյուրից, որով, իհարկե, չիք բացառում, որ Մխիթարը կարող էր իր ձեռքի տակ ունենալ ամբողջացու գործը, իսկ Օրբելյանը՝ երկուսին էլ: Դասերի հերթականութիւնը երեք բնագրում էլ մինչև վիցերորդ դարս ներառույլ ընթանում է նույնութեամբ. սկսած յոթերորդ դասից ամբողջացին ու Օրբելյանը դարձյալ շարունակում են նույնութեամբ՝ համապատասխան դասական շարքին, և միայն Դատաստանագիրքն է, որ շեղվում է թէ այլ շարքից, թէ ամբողջացուց ու Օրբելյանից և թէ ընդհանուր աղբյուրից: Ակնհայտ է, որ այդ շեղումը հեղինակային չէ, հենց թեկուզ այն պատճառով, որ Մխիթարը իր աղբյուրների մեջ միջամտութիւն անելու սովորութիւն չուներ. նա բերում է աղբյուրը այնպէս, ինչպէս կա, և հետո միայն արտահայտում իր վերաբերմունքը:

Որ Դատաստանագրքի ցայլ հայտնի ձեռագրերում եկեղեցական դասերի շարակարգը, այնպէս, ինչպէս հասել է մեզ, հեղինակային չէ և ազավաղվել է հետագայում, հաստատվում է նաև ձեռագրական ծանրակշիռ փաստով՝ Դատաստանագրքի Ե (=Մաշտոցի անվան Մատենադարանի № 6398) գրչագրով: Այս ձեռագիրը ընդօրինակված է 1425 թ. առաջ, վատահարթ կարելի է ասել՝ ԺԳ դարում, իսկ որոշ սովյալներ կարող են հիմք դառնալ նույնիսկ ենթադրելու, որ ԺԳ դարի ընդօրինակութիւն է. գրչագիրը պատկանում է Ա խմբագրութեան: Դատաստանագրքի ցարդ հայտնի ձեռագրերից սա միակն է, որտեղ եկեղեցու գասերը թվարկված են ընդունված դասական հերթականութեան (նման ամբողջութեան, Օրբելյանին և այլոց) և № 6398 ձեռագիրը մուտք է գործել Մատենադարան 1920—30 թթ. ժամանակահատվածում (տե՛ս Օ. Եզանյան, Մատենադարանի ձեռագրական հավաքածունները, Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Ե. Ա. Սեւան, 1965, էջ 123—124, 128), ուստի Վ. Բաստամյանցը չէր կարող օգտագործել այն Դատաստանագրքի բնագիրը, մասնավորապէս եկեղեցու դասերին վերաբերող քննիչ հատվածը, կագմելու Ուսումնասիրողները, ի մասնավորի Մխիթարյան հայրիքը ևս, չէին կարող եկատի ունենալ այս ձեռագիրը վերը բերված իրենց տեսակետների համար, որովհետև № 6398 գրչագիրը նոր միայն լրվում է շրջանառութեան մեջ: Քանի որ շարակարգը № 6398 ձեռագրում եղծված չէ, այդ պատճառով սույն հրատարակութեան համապատասխան հատվածում եկեղեցու դասերի 7, 8, 9-րդ աստիճանները սովել ենք ըստ է ձեռագրի և Իններորդ դարս ըստ ձեռագրի այսպէս է. «Իններորդ դաս փսաղաք որ են սաղմու երգողք սեմ է ճոցս ոչ այլ ինչ զգեստու երևիլ քայց ի կղերիկոսացն բոլոր պատմութեանց և սպիտակ ունել պարէգատկունս կգործ է ճոցս երգել գաղմոսս և ձայնիլ ըստ ուղղոցիս և յես կատարման պատարագիս առնել սկիս եղբ գեացն արբութեան մատուցանել քանանայիս առ ի յարճեմուս և երգել ասելով արհնեցից գուէր յամենայն ժամ արհնեցէք և դուք մանկունք գուէր եղիցի անուն տեան արհնել յայսմ հետ է մինչև յափտեն և բնկալալ արհնուրիս արձակին յեկեղեցին: Արդ է յես այսմ և այլ գործ հայրագրի գոր և փառեզք պապ անուանեն...»: Այստեղ հատվածը՝ «արհնեցից գուէր... զի բաղր է տը» և դրան նախորդող (և յես կատարման») ու հաջորդող («արձակին յեկեղեցին») սողերը Պատարագամատուցից են (տե՛ս Զ. Յ. Գաբրիելյան, Մեքագան պատարագամատուցից Հայոց, Վիեննա, 1897, էջ 568 և այլուր, Խորհրդատետր արքայան պատարագի ըստ արարողութեան Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու, 1927, Նրուսաղեմ. նաև Սաղմու ԼԳ, ԺՃԲ. Ա. Պետր. Բ, 3 ժամագիրք, 1886. էջ 151—2, 202—203, 260 և այլուր), որ ակնհայտորեն գրչի ներմուծութիւնն է, ուստի դուրս թողինք բնագրից: Այս առիթով ուշագրութեան արժանի է երկու շատ կարեւոր հանգամանք:

Առաջին. ընթերցողը հավանաբար կնկատի, որ Ե (= № 6398) ձեռագրում 7 և մասնավանդ 8, 9-րդ կետերի շարադրանքը (չեզուն, նկարագրութիւնը և այլն) տարբերվում է մյուս կետերի (ն առհասարակ Դատաստանագրքի) շարադրանքից, որով այն, թվում է,

հեղինակային չէ: Այս պարագային կարող է առհասարակ անիրավացի համարվել բնագրի համապատասխան կետերը ծ ձեռագրի համաձայն սրբագրելու փորձը: Առ այդ պետք է դիտել հետևյալը. եթե ծ ձեռագրում շարադրանքը տարբերվեր բնագրից միայն նշված կետերում, կասկածանքը, թերևս, իրավացի կլիներ: Սակայն այս ձեռագրի դրվելը, այդ առումով, ինչ-որ շահով ազատ է վարվել ամբողջ բնագրի հետ, տեղ-տեղ իրար է միացրել մի քանի հոդված, տեղ-տեղ հոդվածներ է բաց թողել, լեզվական առումով՝ բնագիրը ընդօրինակել է ոչ թե տառացի հարազատությամբ, այլ յուրովի և այլն, բայց բոտ էություն, բովանդակության առումով միշտ հարազատ է մնացել բնագրին: Այս հիմամբ, եթե ընդունելու էլ լինենք, որ քննելի կետերի շարադրանքը (չեզուն, ինչ-ինչ հավելումներ, որի օրինակը տեսանք Պատարագամատուցից ներմուծված հատվածով, և այլն) հեղինակային չէ, ապա դրանց բովանդակությունը բոտ էության և, մանավանդ, դասերի հերթականությունը պետք է հեղինակային լինի:

Յրկրորդ. խոսքը Գատաստանագրի Ա խմբագրության ձեռագրերի ճյուղագրության մասին է ընդհանրապես և հնագույն գրչագրերի մասին՝ մասնավորապես Դեռևս 1848 թ. Դ. Ալիշանը (Յաղագս իսկագիր և նախագաղափար օրինակի գրոցն Գատաստանի Մխիթարայ Գոշի, Բազմավէպ, 1848, էջ 117—122. Ջեռագիր Մխիթարայ Գոշի, Բազմավէպ, 1848, էջ 154—155) այն հաստատ համոզումն էր հայտնել, որ Գատաստանագրի վենետիկյան հնագույն գրչագիրը՝ № 1237 (= մեր տարընթերցվածքերում Ա) Մխիթար Գոշի ինքրենագիրն է: Այս պարագային, բնական է, եկեղեցական դասերի շարակարգը ևս պետք է հեղինակային համարվի: Բայց հետագայում նախ՝ Լ. Ոսկյանը (Մխիթար Գոշ, Հանգչես ամսագրից, 1926, էջ 25—35), ապա՝ Վ. Հացունին (Գատաստանագիր Մխիթար Գոշի և հրճագրյն օրինակներ, Բազմավէպ, 1942, էջ 4—9) հիմնավորապես փաստարկեցին, որ վենետիկյան հնագույն ձեռագիրը (№ 1237) հեղինակի ինքնագիր օրինակը չէ: Նույնաման մի վաճակ էր ստեղծվել նաև Զմմառի հնագույն գրչագրի առնչությամբ: Թեև 1926 թ. Լ. Ոսկյանը ցույց էր տվել, հիմնվելով ձեռագրի հիշատակարանի վրա, որ այն 1240թ. ընդօրինակություն է (նշված աշխ. էջ 32), բայց Վ. Հացունին (նշվ. աշխ.) համոզում հայտնեց, որ Զմմառի ձեռագիրը Գատաստանագրի երկրորդ օրինակն է հեղինակի ինքնագրից հետո, ընդօրինակված անմիջականորեն այս վերջինից: Լ. Մարյանը Զմմառի ձեռագրի մեջ երկու տարբեր գրչություն է տեսնում՝ առաջին մասը հնագույն քան 1240 թվականը, և միայն երկրորդ մասը գրված 1240 թ. (Լ. Մարյանի աշխատությունից օգտված ենք Վ. Հովհաննիսյանի ստորև հիշատակվող հոդվածի միջոցով): Սակայն Լ. Կեռիկյանը ևս աչն կարծիքին է, որ Զմմառի ձեռագիրը մի գրչի գործ է, ընդօրինակված 1240 թ. (Զմմառու ձեռագիր Գատաստանագրի քվականը, Բազմավէպ, 1952, էջ 152—154): Նշենք նաև, որ խնդրո առարկա հարցին հատուկ հոդվածով անդրադարձել է Վ. Հովհաննիսյանը (Մխիթար Գոշի Ս. Ղազարու թիվ 1237 ձեռագիրը և 225-րդ կանոնը, Բազմավէպ, 1960, էջ 266—273): Բայց հոդվածը մնացել է շարունակելի իր այն մասով, ուր խոսք պետք է լիներ քննարկվող հարցի մասին: Այսպիսով, թվում է, թե հարցը լուծվում է և եկեղեցական դասերի շարակարգը իր քննելի մասով չի առնչվում անմիջականորեն հեղինակի՝ Մխիթար Գոշի հետ, ինչպես իրավացորեն նշել է նաև Ա. Մնաջականյանը (Գրական թերթ, 8 փետրվար, 1963 թ.): Այս հարցի շուրջ նոր նյութեր գտնելու մեր որոնումները որոշ արդյունք տվեցին: Մատենագրանի ձեռագրաց ցուցակների Ա և Բ հատորների միջոցով մենք ծանոթացանք մեր №№ 1—6000 ձեռագրերի բովանդակությունների նկարագրությանը և, որքան թույլ էր տալիս այս վերջինը, առանձնացրինք շուրջ 100 ձեռագրեր, որոնց մեջ ենթադրվում էր ակրկալվող նյութի առկայություն: Ստեղծություններ այս 100 ձեռագրերի հետ ցույց տվեց, որ զրանցից միայն շորսն են պարունակում քննվող հարցին վերաբերող նյութ. այդ ձեռագրերն են՝ №№ 717, 2020, 2118, 2678, ըստ որում անտեսում ենք այն ձեռագրերը, որոնցում եկեղեցու դասերի շարակարգը քաղված է ներսես Լամբրոնացուց: № 717 ձեռագրում (ԺԸ դար ըստ ցուցակի, թ. 40բ—41բ) հետաքրքրող նյութի վերնագիրն է «Վասն ինն դասուց եկեղեցու», № 2678 ձեռագրում (1426—1476 թթ. բացուցակի, թ. 335ա—335բ)՝ «Տոմար եկեղեցոյ աստուծոյ»: Այս ձեռագրերում շարակարգը դասականն է: Սրանք ծագում են կամ մեկը մյուսից, կամ ընդհանուր երրորդ աղբյուրից, որովհետև բառացիորեն նույնական են: Այս աղբյուրը կամ համառոտություն է նույն այն աղբյուրի, որից քաղել են Լամբրոնացին, Մխիթարն ու Ստեփանոսը և կամ, որ շատ աղելի հավանական է, № 2678 (նաև 717) ձեռագրի բնագիրը համառոտություն է Լամբրոնացուց կամ Մխիթարից, աղելի շուտ վերջինից:

Ծնթագրութիւնը, որ № 2678 ձեռագրում եղած այս բնագիրը համառոտութիւն է ոչ թե լամբրոնացու դործից, այլ Մխիթար Գոշի Դասատանագրբից, շահում է նաև հետևյալ փաստից: № 2678 ձեռագրում եկեղեցական դասերի շարահարգից անմիջապես հետո, «վասն երկնաւոր քահանայապետութեանցն. Գարբիէլէ իմաստնոյ» վերնագրով կա հետևյալ բնագիրը, որի սկզբնատողն է. «Առաքելական տրւոյնքինն պարզ և յայտնի մեզ ցուցանէ է դաս և զանուանն իւրաքանչիւրոցն սսէ. Հրեշտակ և Հրեշտակապետ...»: Այս բնագիրը բառացիորեն նույնական է Մխիթար Գոշի Դասատանագրբին սկսած էջ 132 տող 27-ից մինչև էջ 134 տող 11: Տարբերութիւնը Դասատանագրբի և այս ձեռագրի միջև այն է, որ Դասատանագրբում նախ՝ երկնային քահանայապետութիւնն է, հետո՝ եկեղեցականը, իսկ № 2678 ձեռագրում հակառակն է: Արդ, եթե երկնային քահանայապետութիւն մասին բնագրի հեղինակը Գարբիէլ իմաստունն է, ինչպես նշված է վերնագրում, ապա մեր ձեռքի տակ է Մխիթար Գոշի աղբյուրը, իսկ եթե Գարբիէլը հեղինակ չէ, ապա Դասատանագրբից քաղվածք կատարողն է: Երկու դեպքում էլ № 2678 ձեռագիրը տալիս է և իրավունք և հնարավորութիւն զուգարելու Դասատանագրբի համապատասխան հատվածը այս բնագրի հետ և անհրաժեշտութիւն դեպքում ճշտել-սրբագրել առաջինը: Այս հանգամանքը եթե նույնանման հնարավորութիւն չի տալիս եկեղեցու դասերին վերաբերող հատվածի նկատմամբ, որովհետև № 2678 ձեռագրում տվյալ բնագիրը համառոտված է, ապա գոնե թույլ է տալիս մտածելու, որ № 2678 ձեռագրում հերթականութիւնը արտահայտում է եկեղեցու դասերի հաշորդականութիւնը այն ձևով, որ սկզբնապես եղել է Դասատանագրբում որպես հեղինակային շարահարգ: Քանի որ № 2678 ձեռագրում շարահարգը դասական է, դասերի վերից-վար ընթացող ուղղված հաշորդականութիւնը, ապա ակնհայտ է, որ դասերի հաշորդականութիւնը այդպիսին պետք է լիներ և այն բնագրում, որի համառոտութիւնն է № 2678 ձեռագրի հատվածը, և որի հաստատումը տալիս է մեզ նաև № 6398 ձեռագիրը:

№ 2118 ձեռագրում (ԺՂ դար բստ ցուցակի, ք. 310բ—313ա) եղած բնագրական միավորը արտահայտում է Դասատանագրբի հետյալ հատվածը. սկսած էջ 135, տող 8 (տպագրով 246)—«Առաջին դասը եկեղեցոյ՝ Պատրիարք...» մինչև ՄԻԵ հողվածի վերջը, որ է այսպես. «զի թէ տուն թագաւորի բստ այսմ աւրիանակի վարի, որչափ տաւել տուն երկնաւոր թագաւորին Քրիստոսի=աստուծո աւառեցաւ գիրս յիշեցաւ զանուն»: № 2118 ձեռագրի բնագրական միավորը քաղված է Դասատանագրբի Ա խմբագրութիւնից, թվում է՝ այս վերջինի ձեռագրերի այն ենթախմբից, որին պատկանում են 2 և է կրչագրերը: Եկեղեցական դասերի շարահարգը եղծված ձևով է, և առահասարակ այս ձեռագիրը էական բան չի տալիս:

Ավելի ուշագրավ է № 2020 ձեռագիրը (ԺՂ դար բստ ցուցակի, ք. 40ա—44բ): Մեզ հետաքրքրող բնագիրը վերնագիր չունի և սկսվում է այսպես. «Եւ երիցս երեք են երկնային զարութիւնքն. առաջինն՝ աթոռ, և քրտրէք, և սերուրէք՝ առաջին քահանայապետութիւն գումլ. Եւ երկրորդ՝ տերութիւնք, զարութիւնք, և իշխանութիւնք. Եւ երրորդն՝ պետքն, հրեշտակապետքն և հրեշտակքն: Եւ երեք շարժումն են հրեշտակաց՝ զնդածն, և շրջազայաբար, և ուղղակի: Իսկ սուրբն Դիոնեսիոս պարծանքն աթենացոց արիսպազացի...» սկսած Դասատանագրբի էջ 132 տող 31-ից (տպագիրը 240 էջից) մինչև էջ 137 տող 36: Ձեռագրում վերջին տողն է. «և զտեղիս իւրաքանչիւր կայանիցն որոշեաց և զգործն յայտնեաց ինն դասս ևս ի պաղատան իւր, որ կա մինչև ցայաւոր, զոր ոչ է պատշաճ աստղընելու: Բնագիրը այսձեռագրում, ի տարբերութիւն № 2118 ձեռագրից, ընդօրինակված է Բ խմբագրութիւնից (նույնութիւնը Գ խմբագրութիւնի հետ այնքան է, որքան այս վերջինը համապատասխանում է Բ խմբագրութիւնը): № 2020 ձեռագրում ևս եկեղեցական դասերի շարահարգը եղծված է, և եթե այս տեսակետից նշված ձեռագիրը ոչինչ չի տալիս, ապա ընդհանրապես հաստատում է, որ Դասատանագրբի հեղինակային օրինակից ծագել են այլ ձեռագրեր ևս, բացի գրութիւնն ունեցող հնագույն ձեռագրերից: Տեսանք, որ № 2020 ձեռագրում մեզ հետաքրքրող բնագրի սկիզբը տարբերվում է Դասատանագրբի բոլոր ձեռագրերից: Մի օրինակ ևս. Դասատանագրբի բոլոր ձեռագրերում հետևյալ տողը այսպես է. «Եւ Բնեւորող՝ զունդն Տեստէի» կամ՝ Աստէի. Տրեստի, Տեստէի: Ասացինք որ Աստվածաշնչում այսպիսի անուն չկա, հետևապես բնագիրը զարձայլ աղավաղված է: Ճիշտ ընթերցումը տալիս են № 2020 և 2678 ձեռագրերը. «Եւ Բնեւորող՝ զունդն Սեմէի» (Միմէի): Քանի որ այս ձեռագրերի օգտագործվող բնագրական միավորները ընդօրինակված են Դասատանագրբից (№ 2678 ձեռագրի համար վերը նշված վերապահութիւնը), որի ցարգ հայտնի

ձեռագրերը, այդ թվում և հեղինակային գրչագրից ընդօրինակված համարվողները, շունեն «Սեմէի», նշանակում է № 2020 և 2678-ի բնագրերը գաղափարված են հեղինակային օրինակից ծագող մի այնպիսի ձեռագրից, որը կազմում է այլ չլուր, քան այն ճյուղը, որից բնձնուղվել են Դատաստանագրքի հնագույն ձեռագրերը: Ամփոփելով վերը բարադրվածը՝ պետք է ասենք, որ Դատաստանագրքի հեղինակային օրինակից ձեռագրերը բազմացել են մի քանի ճյուղով: Վենետիկ-Ջամատյան ճյուղ՝ ազավաղված շարակարգով, № 2020 ձեռագրի ճյուղ—թեև աղավաղված շարակարգով, բայց այլ դեպքերում ուրիշ և ճիշտ բնթերցումներով, քան ունի նախորդ ճյուղը, № 2678 ձեռագրի ճյուղ—դասական շարակարգով և այլ ճիշտ բնթերցումներով, որ դարձյալ լուսի առաջին ճյուղը, և վերջապես № 6398 ձեռագրի ճյուղը (եթե սա պետք է առանձին ճյուղ համարվի № 2678-ի համեմատությամբ) դարձյալ դասական շարակարգով: Հենց այս երկու ձեռագրեր, փոխադարձաբար իրար հաստատելով, միաժամանակ հաստատում են նաև, որ եկեղեցական դասերի շարակարգը Դատաստանագրքի հնագույն ձեռագրերում հեղինակային չէ, եղծված է, և իբրավունք ու հնարավորություն են տալիս սրբագրել բնագրեր՝ վերականգնելով հեղինակայինը: Կա մի հանգամանք ևս: Մխիթարը գրում է. «Արդ, յայտ է յաւերածոյ եկեղեցեաց խանգարիչ եւ այս կարգի, եւ զկնի՝ ի հեզգութենէ ուղղչաց»: Այդ պատճառով «զայս ոչ վայրապար ինչ եղաք ի գիրս դատաստանի», որովհետև այդ բարեկարգութեան խախտվածութեան պատճառով «պարտին Հայր Յ Յունաց, որպէս Աղուանիցն ուսուցանէ Պատմութիւն ևւ այլք»: Ուստի Մխիթարը պետք է անպայման ճիշտ շարակարգը դնել և բոս այդմ ներկայացնել նվիրապետությունը, որպեսզի հայերը այլևս չպարտվեին «Ի Յունաց և ի Փոանդաց»:

Ի մեքագրութեան մեջ եկեղեցու դասերի շարակարգում 7, 8, 9-րդ կետերը թողեցինք այնպես, ինչպես են այս խմբագրութեան ձեռագրերում:

150. (ԱԳ) Առաջին դաս պաղատանն (ԳԿ որ է դարպաս) եղենդիարհ... (Ա, էջ 138, Գ, 401); Վ. Բատամյանցը հրատարակել է. «Առաջին դաս պաղատան, որ է դարպասն, եղեն՝ դիարհ...» (էջ 261) և բացատրել այնպես. «դիար, յատիներեն Tizra, որ նշանակում է խոյր, գլխարկ, գլխի ծածկոց, փոխաբերաբար՝ հովանոց, ամպնովանի (բալզաքին), որ հանդեսների ժամանակ բռնում են թագավորի, կաթողիկոսի գլխին, և այլն: Այստեղից՝ դիարհ իբրև դիար, թագ, վաղար... պահողներ կամ բռնողներ» (ծանոթագր. № 544): Յ. Կարստը համարում է հունարեն σελεντιάριος կամ սելենտիարիոս բառը (տե՛ս Armenisches Rechtsbuch, I, էջ 88, II, էջ 75—76):

Բյուզանդական կայսրության մեջ բարձր պաշտոնեությունը բաժանված էր երկու մասի, յուրաքանչյուրը իր դասերով բոս աստիճանակարգ-պատվակարգի. մեկը բնհասնուր պետական վարչության պաշտոնեությունն էր, մյուսը՝ արքունիքի պաշտոնեությունը: Դատաստանագրքում խոսքը արքունիք-պալատի պաշտոնեության դասերի մասին է: Ու թեև Դատաստանագրքում թվարկված են պալատի ոչ բոլոր դասերը, սպասավորները, թրվարկվածները ներկայացված են երբևէ ոչ այն հերթականությամբ, որ մեզ հայտնի է սկզբ-նաղբյուրից և այլն, այնուհանդերձ Մխիթարը քաջատեղյակ է բյուզանդական արքունիքի պաշտոնեության-ծառայության կառուցվածքին: Այս վերջինին գիտական աշխարհը ծանոթ է, հաճախ մեծ մանրամասնություններով, հիմնականում Կոստանդին Սիրանածինի մեծարժեք գործից, նվիրված բյուզանդական արքունիքի հանդիսակարգին (Constantini Porphyrogeniti imperatoris De cerimoniis aulae Byzantinae, libri duo, հրատարակություն Նիբուրի, Բունն, 1829): Դատաստանագրքում նշված՝ պալատի դասերի կարգը տեղ-տեղ համընկնում է Սիրանածինի գործով մեզ հասած De cerimon., էջ 702 և հետև.) և J. B. Bury-ի կողմից հատուկ ուսումնասիրությամբ առանձին հրատարակված՝ Փիլոթեոսի «Կլետորոլոգիոնին» (զահնամակ): Ըստ այսմ՝ սյուլանում շկար դիարք-դիարաց դասն Եվ այն, ինչ Մխիթարն ասում է դիարհ դասի մասին, համընկնում է սիրենտիարիոսների պարտականություններին, այդ պատճառով մենք, նախ, «...եղեն՝ Դիարք» սրբագրեցինք «Սղենդիարք» և բնդունեցինք Յ. Կարստի բացատրությունը, բոս որի եղենդիարհ կամ եղենտիարհ = սիլենտիարիոս կամ սելենտիարիոս: Ըստ Փիլոթեոսի Կլետորոլոգիոնի՝ սիրենտիարիոսները պալատի ոչ թե առաջին դասն էին, ինչպես նշում է Մխիթարը, այլ՝ երկրորդ տես De cerimon., էջ 708, The Imperial Administrative System in the Ninth Century with a Revised Text of The Kletorologion of Philotheos by J. B. Bury, London, 1911, էջ 134. Տարբեր ժամանակներում տարբեր է եղել սիրենտիարիոսների դերն ու կշիռը պալատում. մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ու դրանից էլ առաջ

այն շատ մեծ էր: Սրանք հսկում էին կայսեր ու պալատի անդորրին. «Ակախուսի որդի ծագումով հայ Աղոլիսին, որ մշտապես ծառայում էր կայսեր արքունիքում որպես նրա անդորրին նկար (այս պաշտոնն ունեցող մարդկանց հռոմայնացիները անվանում էին սիլենտիարիոս), հրամայեց...» (Օտար արքայուհեքը Հայաստանի և հայերի մասին, բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, քարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Սեւան, 1967, II, 21, էջ 131), պրեպոզիտոսի գլխավորությամբ վարում էին հանդիսակարգը պալատում, կայսեր ունկնդրությունը հայցողներին նրան ներկայացնելու ծրարակարգը և այլն (նշված աշխատություններից բացի տե՛ս Սիրանաձնի De caerimoniis-ի վերաբերյալ Յակովբոս Ռայսկիի գրած ծանոթագրությունների խիստ մեծարժեք ու ստվար հատորը, J. Joc, Betski Commentarii ad Constantinum Porphyrogenitum De caerimoniis aulae Byzantinae, Bonnae, 1830, էջ 77, Les institutions de l'empire Byzantin par Louis Bréhier, Paris, 1949. էջ 132, ընդհանրապես V և VI գլուխները, Д. Беляев, Byzantina. Очерки, материалы и заметки по византийским древностям, книга первая, Обзор главных частей Большого дворца византийских царей, приложение: материалы и заметки по истории византийских чинов, СПб, 1891, книга вторая, Ежедневные и воскресные приемы византийских царей и праздничные выходы их в храм св. Софии в IX—X вв., СПб, 1893, J. Karst, Armenisches Rechtsbuch, zweiter Band, Kommentar, Strassburg, 1905. հետագայում ևս օգտվում ենք նշված աշխատություններից):

151. (ԱԲԳ) Եւ գարձ է նոցա տանել յառաջ զագաւորոզան... (Ա, էջ 138, Բ, էջ 262, Գ, էջ 401):

Նույն այս հատվածը ըստ Մմբատ Սպարապետի Գատաստանազրքի յայսպես է. «Եւ տանին յառաջ զթագաւորական հաքնելիքն՝ գոր խնդրէ արքայն» (Տ. ԿԳ, ըստ Կարտի հրատ՝ Կ): Երկու գատաստանազրքերի համադրությունից՝ ագաւորոզ = թագավորական հաքնելիքը տանող: Սրանից ինչնելով և վերապահություն անելով, թե ուղիղ է Մմբատի թարգմանությունը, Վ. Բաստամյանցը ագաւորոզ բառը համարում է ծագած ագանի բառից, «որ նշանակում է շորեր հագնել. ուրեմն ագաւորոզ պիտի նշանակէ շորեր հագցնող կամ պահող, հանդերձապետ» (Ժանոթագր. № 546): Ը. Աճառյանը տալիս է այլ և, ինչպես կրտսենները, միանգամայն ճիշտ բացատրություն. «Ագաւորոզ կը ծագի ագաւորել բայէ մը, որ է ագւորել կամ այգորել «թագաւորին քով ունկնդրութեան երթալ», ագաւորոզ «թագաւորին ներկայացող անձր՝ խնդիրք մը մատուցանելու համար» «Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, Վեհեմիկ, 1913, էջ 55): Ը. Աճառյանի բացատրությունը հաստատվում է ոչ միայն բնագրի ուշադիր ընթերցմամբ, այլև սիլենտիարիոսների պաշտոնական պարտականություններով, որոնց մեջ, ինչպես տեսանք, մտնում էր նաև կայսեր ունկնդրությունը հայցողներին նրան ներկայացնելը:

152. (ԱԲԳ) Նրկորդ դաս վեստիտորայն է, որի պսակակալէ արքային (Ա, էջ 138, Բ, էջ 262, Գ, էջ 401):

Վ. Բաստամյանցը հրատարակել է՝ «վեստի տորայն է» և բացատրել լատիներեն vestitor բառով, որ նշանակում է դերձակ, հանդերձապետ, հանդերձ հագցնող կամ դնող, փոխաբերաբար՝ պսակակալ կամ պսակակալ... այսինքն՝ թագ բռնող, թագը գլխին հագցնող. և հասկանում է թագադիր խորհնացու գործածած իմաստով, ինչպես Բազատանոնի նախարարները հայոց թագավորների թագադիրն էին (ծանոթագրություն № 547): Ըստ Փիլիթոսի «Վլենտորդիոնի» պալատի երրորդ դասն էր. «ρῆτορ ἢ τῶν βασιλευστων ὄψιτα...» (Bury էջ 134): Սրանք արքունիք-պալատի այն ծառայողներն էին, որոնց հիմնական պարտականությունը կայսրին հանդիսավոր հանդերձանք հագցնելն էր գանազան հանդիսություններից առաջ: Բայց պետք է նշել, որ վեստիտորները չէին, որ թագը դնում էին կայսեր գլխին: Կայսրին հագցնելուց հետո վեստիտորները դուրս էին հրավրվում և պրեպոզիտոս (praepositus sacri cubiculi) ինքն էր թագը դնում կայսեր գլխին: Վեստիտորների ներկայությամբ երբեք թագը չէր դրվում կայսեր գլխին, որովհետև նրանք ներքինիներ չէին, այլ մորտաբալորներ, իսկ մորտաբալորների ներկայությամբ թագը ոչ դրվում էր և ոչ էլ հանվում կայսեր գլխից (տե՛ս Д. Беляев, Byzantina, I, էջ 167, որտեղ և համապատասխան մեջբերումներն են Սիրանաձնից): № 488 ձեռագրում, ինչպես նշում է նաև Վ. Բաստամյանցը, «վեստիտոր» բառին ի բացատրություն լուսանցում գրված է «խազիկոպր ջամալա», իսկ-

զինգար պարսկերեն է և նշանակում է զանձապահ, իսկ շամալա բառը ոչ բառարաններում գտանք եւոչ պարսիկ միբրաները կարողացան բացատրել մեզ նշանակությունը,— գրում է Վ. Բաստամյանցը (ծանոթագր. № 547): Շիոթեցնողը հավանաբար պարսկերեն ջամն բառն է, որ նշանակում է հագուստ և շամեղար—հանդերձապահ: Բայց այստեղ, հավանաբար, ֆրանսերեն chambre—սենյակ բառն է, որ արևելահայերենում դառնի է ջամբո: Բառի ձևին նայելով ջամալա հիշեցնում է ֆր. chambellan—սենեկապետ (արքունի) և chambrier—զանձապահ-զանձապետ (արքունի): Պաշտոն էր կրիկյան հայոց արքունիքում:

153. (ԱԲԳ) Երբոզ դաս՝ կանտոնացյն է... (Ա, էջ 138, Բ, էջ 263, Գ, էջ 401):

Ըստ Փիլոթեոսի՝ պալատի հինգերորդ դասն էր: Ինչպես նշում է Լուի Բրեյն, պալատարքունիքի հանդիսակարգ-ծիսակարգը իրականացնողների, այսպես կոչված՝ Բագավորի կամ Թագավորական մարզկանց—δασυλοι ανδρωποι—մի մասը, ի տարբերություն կայսեր անմիջական-անձնական սպասարկության իրականացնող ծառայողների (οικειαστοι, serviteurs intimes), ունենր զինվորական, բայց միայն զեղազարդային բնույթ (décoratif): Պաշտոնյաների այս մասը ըստնշվում էր հինդ դասի, որոնցից մեկը կանդիդատների (κандιδάτοι—լատ. candidatus բառից) դասն էր, որ ստեղծվել էր Գորդիանոս III-ի ժամանակ (238—244 թթ. տե՛ս Les Institutions., էջ 132—133, նաև Վ. Բաստամյանց, ծանոթագր. № 551, J. Karst, Armenisches Rechtsbuch, I, էջ 87):

154. (Ա) Եւ ի նոցանէ լինին սպախաւր շոքս աւր, որք զզէսն կրնն (էջ 138):

Սպախաւր— հավանաբար սպարաւն է, հունարեն σπαθή—սուր բառից, որ նշանակում է սուսերավոր: Սպաքարների դասը նախորդ ծանոթագրության մեջ նշված հինգ դասերից մեկն էր, ըստ Փիլոթեոսի «Կլետորլոգիոնի»՝ ութերորդ դասը դասային ընդհանուր աստիճանակարգության մեջ:

155. (ԱԲԳ) Չորրորդ դաս պաղատանն պոստետարայն է (Ա, էջ 138, Բ, էջ 263, Գ, էջ 401):

Վ. Բաստամյանցը բացատրում է լատիներեն portitor բառով, որ նշանակում է նաև տանող, կրող և այլն, ու այդ պատճառով հայերեն մի շարք տարրնիքվածքներից ավելի ուղիղ է համարում պոստետար (տե՛ս ծանոթագր. №552): Գ. Կարստը բերում է լատ. prosecutores, proexitores, proquisitores և ղծվարանում է ճշտությամբ որոշել թե՛ դրանցից որն է բնագրայինը, թե՛ և դրանցիցի մեկը՝ τροσεκουτορες հանդիպում է Բասիլիկայում (Armenisches Rechtsbuch, I, էջ 76): Ը. Աճառյանը բացատրում է լատիներեն prosequi բառով, «որ ի մէջ այլոց կը նշանակէ ամենի մի յուզարկաւոր ըլլալ, որմէ prosquator «մեռելի յուզարկաւոր» (Հայերէն նոր բառեր հին մատենագրության մէջ, Վնենտիկ, 1913, էջ 69), և առաջարկում է բնագիրը ուղղել պոստետար: Ը. Աճառյանի բացատրության դեմ շտաբկելով հանդերձ, շեք կարող ընդունելի համարել բնագիրը սրբագրելու նրա առաջարկը, որովհետև ձեռագրերից և ոչ մեկը չունի պոստետար:

156. (ԱԲԳ) Չինգերոզ դաս պաղատանն՝ եսկպաուիրայն է (Ա, էջ 138, Բ, էջ 263, Գ, էջ 401):

Վ. Բաստամյանցը ղծվարացել է ստուգարանել այս բառը (տե՛ս ծանոթագր. № 552): Ը. Աճառյան. «Թերևս կարելի ըլլայ ուղղել եսկպաուիրոս, իբր յն. εὐστοκώτερος «լուս նշանաւոր» (Հայերէն նոր բառեր... էջ 59):

Թ. Կարստը վկայակոչելով Const. Porph. II, 52 (հրատ. Երբուր, I, էջ 737—738 որք= Փիլոթեոս, Կլետորլոգիոն, հրատ. Bury, էջ 154) համարում է բյուզանդական οί εὐστοκώβιτορες: Այս վերջինը ծագում է լատ. excubare բառից, որ նշանակում է, ի միջիայլոց, առթուս լինել, նսկել, պահակություն անել. այստեղից՝ excubitor—նսկիչ, պահակ: Բյուզանդական արքունիքում, իրոք, կար մի խումբ ծառայող-պաշտոնյաների, որոնք կոչվում էին եքսկուբիտորներ և որոնց պարտականությունն էր հսկել պալատ-արքունիքի ներքին անդրրին, կարգովանտներն: Այս պատճառով կարծում ենք, որ բնագրի եսկպաուիրայն լատինա-հունական excubitor—εὐστοκώβιτορες-ն է և ոչ εὐστοκώτερος-ը:

157. (ԱԲԳ) Եւ ունին վաճանս կմբաուրս (Բ, կմբաուրս, Ա՝ էջ 138, Բ՝ էջ 264, Գ՝ էջ 401):

Վ. Բաստամյանցը համարում է կմբեայ բառը, որ նշանակում է գմբեթաձև վահան (ծանոթագր. № 554): ՆՃԹ գրիտի միայն կմբեայ բառը նույն նշանակությամբ և առաջարկում է կմբաուր ուղղել կմբաուր:

158. (Գ)... և ջաղջեր յոսուն (էջ 401), Բ-ն գաղղեր (էջ 264), որ համապատասխանում է յուս ձեռագրերի կարթապատ-իւն, որից Վ. Բաստամյանցը իրավացիորեն ենթադրել է, որ ջաղջեր = կարթապատ = պաճույճ (տե՛ս ծանոթագր. № 556):

159. (ԱԲԳ) Եւ ի սոցանէ լինին որք սկիւրով (Ա՛ էջ 138, Բ՛ էջ 264, Գ՛ էջ 401):  
Ինչպես և բացատրում է Վ. Բաստամյանցը, սկիւրով հավանաբար աղավաղված ձևն է լատ. scriptor բառի, որ նշանակում է գրագիր, քարտուղար, արձանագրող (տե՛ս ծանոթագր. № 557): Եվ իրոք, բյուզանդական արքունիքում կար գրագիր-քարտուղարների մի խումբ:

160. (ԱԲԳ) Եւ ի սոցանէ լինին... մանդատորք (Ա՛ 138, Բ՛ էջ 264, Գ՛ էջ 401):  
Բ խմբագր. սանտատորք, այդպես են նաև Գ խմբագրութիւնն երեք ձեռագիր (ԽՄՅ), մյուսները՝ մանկրատորք մանդատորք, սանդատորք. Ա խմբագր. ձեռագրերն ունեն՝ մանգտտորք, մանդանտորք, մատատորք, բացի ԳԵ, որոնք ունեն մանդատորք. համաձայն այս ընթերցման էլ սրբագրեցինք Ա՛ խմբագրութիւնները: Բյուզանդական պալատում կար մանդատորների դասը, ինչպես վկայում է Const. Porph. II, 52a (նաև Bury, էջ 139 և այլուք). τεράρτη ἡ τῶν βασιλικῶν μανδατόρων ἀξία: Ծագում է լատիներեն mandare բառից, որից mandator, որ նշանակում է հետճճարարույ, հանճճարարուբյոււն տվող:

161. (ԱԲԳ) Վեցերորդ դաս պաղատանն՝ ստրատորք, որք զծին քամբն Եւ նեծուցանն զարւայն (Ա, էջ 138, Բ՛ էջ 265, Գ՛ էջ 401):  
Ըստ «կերտառդիոնի» նույնպես վեցերորդ դասը պալատի. «ἕκτα ἡ τῶν στρατόρων ἀξία» (Bury, էջ 134, տե՛ս նաև Const. Porph. De cerimon. էջ 459): Հունարեն տրածար—ἰπποκράτος բառն է, որ նշանակում է ձիապան, տիրոտապան:

162. (Ա) Եւ սեմն է նոցա սպու կալամին գրատք կագմա Եւ կապակ (էջ 138):  
ԲԳ՛ Եւ գեստ է նոցա ուտետ կապայ (Բ՛ էջ 265, Գ՛ էջ 401):  
Ինչպես բացատրում է Յ. Կարստր (Kommentar, էջ 77) ապու կալամին արբար-պարս. բառ է abn qalmūn և նշանակում է նախշազարդ արժեքավոր կտոր հագուստի: Գրատ կամ գրատ նշանակում է ընդհանրապես հագուստ, մասնավորապես՝ զինվորական վերարկու: Կապակ նշանակում է կապայի մի տեսակ, կարճ պարեզոտ:

163. (ԱԲԳ) Երեւերորդ դաս պաղատանն՝ սողարւն (Ա, էջ 138, Բ՛ էջ 266, Գ՛ էջ 401):  
Վ. Բաստամյանցը և հունագետ-լատինագետները, որոնց դիմել նա, դժվարացել են բացատրել այս բառը (տե՛ս ծանոթագր. № 561): 2. Աճապանք առաջարկում է սողար «սողղել սողար, իր լատ. scularius «վահանակիր. ազնվական՝ որ կ'ընկերանար ասպետին և անոր վահանը կր կրէր. écuyer» (Հայերեն նոր բառեր... Վեներիկ, 1913, էջ 70): Ժիշտ բացատրությունը տվել է Յ. Կարստր (Kommentar, էջ 78) հենվելով Ռայսկիի ծանոթագրությունների վրա (Comment. ad Const. Porph. de Cerimon. հրատ. Nibuhr, հ. I, էջ 60): Հունարեն σολάριος բառն է: Այսպես էին կոչվում պալատական պահակախմբի զինվորները: Պրոկոպիոսը վկայում է. «Սկզբում պալատի պահպանութիւնն համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս ստրատիոտներ, որոնց սրիտլարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ուճիկ, քան մնացած բոլոր (ստրատիոտներին): Անցյալում կալուրերը սրանց ընտրութիւնն ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվութիւնը», հետո, մանավանդ, Հուստինիանոսի ժամանակ դրամով, նույնիսկ, ստրուկները կարող էին դառնալ սխոլարիոս (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի. բարգմաւորյունք բեազրիք, առաջաբանը և ծանոթագրոյթյունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 296): VII դարում Բյուզանդիայի ապրած ճգնաժամից հետո կալուրութիւնն մեջ մեծ վերափոխումներ կատարվեցին: Այս նոր կարգը իր բարձրակետին հասավ IX—X դդ.: Այս ժամանակ կար շորս տաճա, որոնցից մեկը սքոլարների տաղման էր: Սրանք՝ և՛ հետակ, և՛ ձիավոր, մըշտապես ապրում էին պալատին կից զորանոցներում (տե՛ս Louis Bréhier՝ Les institutions... էջ 353, նաև էջ 78, 94, 120 և այլն):

164. (ԱԲԳ) Եւ ի սոցանէ լինին, որք գգրալան Եւ զվիշապալուխան կրեն Եւ կոշին սիգնայ (Ա՛ էջ 138, Բ՛ էջ 266, Գ՛ էջ 401):

Սիգնայի վ. Բաստամյանցը համարում է «լատինական բառ signarius, որ նշանակում է նշանակիր, գրողակիր» (ծանոթագր. № 563): Բայց, որքան մենք փնտրեցինք լատիներեն բառարաններում, որ կարելի էր ձեռք բերել, (օրինակ՝ Латинско-русский словарь Անանևի և այլոց, Մոսկվա, 1883) signarius բառ չգտանք, լատիներեն բոլոր բառարաններում գրողակահիրը signifer է. ձագում է signum նշան, զոռը բառից: Այս signum բառը մտել է հայերենի մեջ (տե՛ս նՆԲ, II, էջ 213)—սիգնոն ձևով, հոգն. սիգնայթ նույն՝ նշան, նշանք, դրոշ իմաստով. «նաչ աստեղեայ, զոր արարեալ սիգնոն և յատաշաբերիալ՝ յաղթեաց պատերազմացն: Ի բոլոյ նշան զեղերփնեալ զուղչ սիգնոնի բում շառաւիղի: Գու. նագեդ գնդօք տպագրոնօք, սիգնայթ խոտսեփայլօք» (նՆԲ): Բնագրում, ուրևմն, սիգնայի վերաբերում է ոչ թե «զղրուշան և զվիշապագլուխան» կրողներին, այլ գրողին և նշանին: Աստի բնադիրը պետք է ըմբռնվի կամ Թարգմանի ոչ թե. «եվ սրանցից են լինում նրանք, որոնք գրողներն ու վիշապագլուխներն են կրում և կոչվում են սիգնայթ», ինչպես հասկացել է վ. Բաստամյանցը և ինչպես Թարգմանել է Ա. Պապովյանը (Армянский Судебник Мхитаря Гоша, Ереван, 1954, էջ 127), այլ այսպես. «եվ սրանցից են լինում կրողները գրողների ու վիշապագլուխների, որոնք կոչվում են սիգնայթ»:

165. (ԱԲԳ) Ուքեռոդ դաս պաղատանն՝ դեկանոնն (Ա՝ էջ 138, Բ՝ էջ 266, Գ՝ էջ 401):

վ. Բաստամյանց. «լատինական բառ է Decanus, որ նշանակում է տասնապետ իբրև գինձորական ստիճան» (ծանոթագր. № 564): Այս բացատրությունը ինքնին ճիշտ լինելով հանդերձ, ներկա դեպքի համար թերի է: Բնագրի դեկանոնն բյուզանդական արքունիքի δεκανος, δεκανοι կոչված ստորին ծառայողներն էին: Սրանք հիշվում են V դարից: Կրում էին զավգան, որ կոչվում էր դեկանիկոն—δεκανικιον և ծառայում էին որպես զոնապան, սուրհանդակ (զրադրություն տանող-բերող), ոստիկան և այլն, կրում էին նիզակ, գուռով Ըստ Միրանածիների (Const. Porph. de Cerimon., էջ 81 և այլուր) կայսեր հանդիսանքների ժամանակ, պալատի այլ զասերի հետ, սրանք քայլում էին կայսեր առջևից: Իսկ «ամբոխին վարելու» պարտականությունը դրված էր հատկապես սրողարների վրա:

166. (Ա) եւ զնոսա կոչեն նբրայեցիքն քեքթին (էջ 138):

Ըստ նՆԲ բառ եբրայական-աղեղնատրք:

167. (ԱԲԳ) Իններոդ դաս պաղատանն՝ կիոսուր, որ էն ուսեմանգակ և նետակ (Ա՝ էջ 138, Բ՝ էջ 267, Գ՝ էջ 401):

Ինչպես նշում է վ. Բաստամյանցը (տե՛ս ծանոթագր. № 568) կիոսուր լատ. cursor բառն է, որ նշանակում է ի միջիայլոց նաև սուրհանդակ: Const. Porh. de Cerimon., էջ 81. «οὐ δὲ κούρορες».

168. (ԱԲԳ) Եւ զոսա կոչեն նբրայեցիքն ովելեքին (Ա՝ էջ 138, Բ՝ էջ 267, Գ՝ էջ 402):

Ըստ նՆԲ բառ եբր.-պարսուտրք ի զօրու:

169. (ԱԲԳ) Առաջին՝ դեմետրիոսով, որ էն պատգամասաց (ԲԳ՝ պատգամատրք, Ա՝ էջ 138, Բ՝ էջ 267, Գ՝ էջ 402):

վ. Բաստամյանցը (ծանոթագր. № 571) և Յ. Կարստը (Kommentar՝ էջ 80) համարում են լատ. dimitto, dimissus բառը (dimittere բառից), որ նշանակում է ի միջիայլոց ուզուելի, առաքել:

170. (ԱԲԳ) Երկրորդ՝ ուկիմարն, որ է պայտակարարն կարգան առաջի արեային (Ա՝ էջ 139, Բ՝ էջ 267, Գ՝ էջ 402):

վ. Բաստամյանցը համարում է լատ. require բառը, որ նշանակում է լ քննել և այլն (ծանոթագր. № 572):  
Ճիշտ պետք է համարել Յ. Կարստի (Kommentar, էջ 80) և Ն. Աճառյանի (Նոր բառեր... էջ 69—70) բացատրությունը, բայց որի ուղեքին=լատ. recitator բառին, որ նշանակում է անձ, որը ուրիշների ներկայությամբ (սրանց համար) բարձրաձայն կարդում է, հատկապես անձը, որ դատարանում կամ որևէ ատյանում կարդում էր փաստաթղթերը, ապացուցները և այլն:

171. (ԱԲԳ) Երրորդ, ասին կրիտն, որ էն թղթագիր արեային (Ա՝ էջ 139, Բ՝ էջ 268, Գ՝ էջ 402):

վ. Բաստամյանցը ենթադրում է «հունական կամ լատինական criticus բառից, որը նշանակում են դատավոր, քննող գրավոր շարադրությունների և այլն.գուցե և համարող»:

տուժյան է scriptor բառի, որ հատկապես նշանակում է քարտուղար, նոտար, գրագիր և այլն» (Ժանոթագր. № 573):

Յ. Կարսուե գրում է միայն **Krit Akrar** }—*κριτής, bzw. actarius* (Kommentar, էջ 80.) *κριτής* կոչվում էր դատավորը հատկապես դատական ժամանակաշրջանում: Բյուզանդական շրջանում *κριτής* էին կոչվում դատական և ոստիկանական բարձրագույն պաշտոնյաները: Արքունի և քաղաքացիական բարձր պաշտոնյաներից հայանի էին թեզաբի կրիտես (*κριτάι τοῦ βήλου*), գերատեսչությունների կրիտես (*κριτάι τοῦ σεκρέτου*), հասարակաց կրիտես (*κριτάι τοῦ δημοσίου*) և այլն (տե՛ս *Μεγαλή ελληνική εγκυκλοπαίδεω*): Բայց կարելի է ենթադրել (ենթագրությունը Հ. Բարթեկյանին է), որ ընագրի ախից կրիտք երկու բառը աղավաղումն է հունարեն մեկ *ἀσχηρής* բառի: Քանի որ միջնադարում հունարեն *γ* կարդացվում էր *ւ*, ապա բառը հնչելու էր որպես ասիկրիտիս, վերջավորությունը հոնած՝ ասիկրիտ, որը հեշտությամբ կարող էր զանազան հայերեն ասիկրիտ և ապա ասից կրիտ(ք): *ἀσχηρής*—*ἀσχηρής*—*ἀσχηρής*—*լատ. a secretis*.

Բարո (պաշտոնը) վկայված է թե Սիրանածնի դործում (*De cerimon. էջ 155*), թե Փիլոթեոսի «Կլետորուգոնունում» (*Bury' էջ 142, 150, 151 և այլուր*), և, իրոք, նրանակում էր սփյթագիր արքային: Ասիկրիտեսները գրում էին կայսեր գրությունները, հաճախ կազմում ու գրում էին նրա ճառերը և կարդում հավաքվածներին և այլն (տե՛ս *Reiske, Comment. ad Cerimon., էջ 231, Д. Беляев, Byzantina' II, 252 և այլուր*):

Գ խմբագրության ձևագրերի մեծագույն մասը ունեն՝ երեռոդ դաս ինկրիտ: Կարծում ենք, որ դա աղավաղումն է երեռոդ ասից կրիտ բառակապակցություն:

172. (ԱԲԳ) Չորրորդ՝ վենետուր՝ ախից, որի զբաղանիս կազմեն և լուսնան գաււայն (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 268, Գ՛ էջ 402). ԲԳ՛՛ վենետուր):

Վ. Բաստայանցը ճիշտ է բացատրում վենետուր որպես լատ. *balneator*՝ որ նշանակում է բաղնիսպան, լողացնող (տե՛ս ժանոթագր. № 574):

173. (ԱԲԳ) Հինգերորդ՝ տոբիլիուր, որի են տանարուտ, որի զկոչեալսն ի հաց մատուցանեն աաջի արւային (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 268, Գ՛ էջ 402):

Վ. Բաստամյանցը համարում է լատ. *tricliniarius* բարո, որ նշանակում է սպասավոր սեղանի ճաշի ժամանակ (ժանոթագր. № 575): *Մագում է հուն. τριχλινος*—*եռեմ բախտով բառից, որից τὸ τριχλινος*—*ճաշասեղան երեք թախտով վեց մարդու համար և այն սենյակը, որտեղ դրված էր դա, ճաշասենյակ: Այս բառերը իրենց իրական բովանդակությամբ անցան նաև հռոմայացիներին, որոնց մոտ սակայն triclinium-ը ինք մարդու համար էր: Triclinarius-ները շարքային սպասարկողներն էին, նրանց գլխավորը տաճարապետը կոչվում էր tricliniarcha, ուստի կարծում ենք, որ ընագրի տոբիլիուր ոչ թե *triclinarius*-ն է, այլ *tricliniarcha*-ն:*

Բ խմբագր. և ԱԳ խմբագրության բոլոր ձևագրերը, բացի երկուսից, ունեն տոբիլիուր, միայն ԱՄ ձևագրերը ունեն տոբիլիուր: Ճիշտը համարում ենք վերջին ընթերցումը, ոչ այն կամ ոչ միայն այն պատճառով, որ դա հնագույն ձևագրերից մեկի (Ա) ընթերցումն է, այլ և այնու, որ լատ. *c* (*կ*) = *հայերեն կ* կամ *զ* և ոչ *դ*:

174. (ԱԲԳ) Իսկ ի կուտուրցն (Գ՛ կուտուրցն) լինին սկուտր, որի են եշանգիր (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 268, Գ՛ էջ 402):

Կուտուրց—կուտուրց. *դժվարանում ենք բացատրել* Վ. Բաստամյանցը ենթադրում է, որ կարող է լինել լատ. *cautor* բարո, որ նշանակում է նաև պահպան ն, թիկնապահ (ժանոթագր. № 576):

Ակուտրք-ակնահայտորեն լատ. *actarius*-ն է, որ նշանակում է քարտուղար, ղեկավանգետ և այլն (տե՛ս նաև Վ. Բաստամյանց, ժանոթագր. № 577):

175. (ԱԲԳ) Եւ ոպիտուր ասից, որի արկանեն ձեուր արւային (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 268, Գ՛ էջ 402):

Ձեուրգրերն ունեն նուս ոսպիտուր, ոսպիկար, սպիտուր: Վ. Բաստամյանցը ենթադրում է, թե լատիններն *obsecundator* բառն է, որ նշանակում է ի միջի այլոց ծառա, սպասավոր թագավորական պալատի մեջ (ժանոթագր. № 578):  
Յ. Կարսուր համարում է լատիններեն *hospitarius* բարո (Kommentar, էջ 80): Բայց

hospitarius-ը hospita բառից է, որ նշանակում է օտար, օտարական, հյուրընկալ, հյուր ընդունողը և այլն, որը կապ չունի լվացվել-լվացացնելու հետ: Համահնչյունությունը նկատի ունենալով կարելի էր ենթադրել, թե ֆունելի բառը բյուզանդական արքունիքի հանդիսակարգ-ծիսակարգում (Const. Porph. De cerimon., էջ 10, Bury, էջ 143, 149 և այլուք) վկայված ὀστιαρίος—լատ. ostiarius բառն է, բայց սա նշանակում է դռնապան և դարձյալ կապ չունի այն պաշտոնի հետ, որ Դատաստանագրքում վերագրված է ոստի-տար-ին:

Այս վերջին պարագան նկատի ունենալով կարծում ենք, որ ոստիտար-ը Փիլոթոսի «Կլետորությունում» վկայված (Bury էջ 143) νῆφισταριος-ն է, νῆφισ բառից. որ նշանակում է լվացվել կամ νῆφιστον—լվացարան, թաս լվացվելու համար:

Ոսկե Ձեռքում բարձրագույն աստիճանավորներին առաջին հանդիսավոր ընդունելությունից առջև կայսերը լվանում էր ձեռքերը, ինչպես որ հոգևորականներն են անում ժամասացությունից առաջ: Մինչև Ոսկե Ձեռք մտնելը կայսրը կտեղնում էր դռան առաջ և լվանում ձեռքերը թանկարժեք քարերով զարդարված ոսկե թափ մեջ, որ տալիս էին նիսիստիարիտները (տե՛ս Լ. Bejaev, Byzantina' II, էջ 59—60):

176. (ԱՔԳ) Ապոկրիփաբաբ ասիեն՝ սպառաուրբ եկեղեցույն (ԲԳ Գ արթայի, Ա՛ էջ 139, Բ՛ էջ 268, Գ՛ էջ 402):

Հունարեն ἄποκρῖσις: որ նշանակում է պատասխան, լուր տանող-բերող, ἀπόκρισις — պատասխան բառից: Պատմական սկզբնաղբյուրներից ու իրավական հուշարձաններից հայտնի այն պարտականությունները, որ կատարում էին ապոկրիփստիարիտները, հաստատում են, որ նրանք եկեղեցու սպասավոր լինելով, «արթայի եկեղեցու սպասավոր» չէին, այսինքն դրան երեց չէին, ինչպես ներկայացնում են ԲԳ խմբագրությունները և ինչպես թարգմանել է Սմբատ Սպարապետը:

Ապոկրիփստիարիտները կոչվում էին նաև քեֆերեյծիս: Սա սկզբում միայն արքունիպալատական պաշտոն էր, որի օրինակով այդ պաշտոնը ստեղծվից նաև եկեղեցու մեջ, Հե-տագայում այդ պաշտոնը արքունիքում վերացվեց և մնաց միայն եկեղեցու: Միրանածների ծիսակարգում (De cerimon.) արքունի ռեֆերենդարիտները այլևս չեն հիշատակվում: Մրանք, սովորաբար, սարկավազներ էին: Կ. Պոլսի պատրիարքը արքունիքում միշտ ուներ իր ներկայացուցիչը՝ ռեֆերենդարիտը, որի պարտականությունն էր պատրիարքից արքունիքին կամ վերջինից առաջինին հայտնել սրանց գրավոր կամ բանավոր կարգադրությունները, հրավերները և այլն:

Այսպիսի պաշտոնյա՝ ապոկրիփստիարիտ արքունիքում ուներ նաև Հոռոմի պապը: Ապոկրիստիարիտներ ունենում էին նաև թեմերի եպիսկոպոսները մետրոպոլիտների մոտ, վերջիններս պատրիարքի մոտ և այլն (տե՛ս Re.ske. Comment., էջ 60—61, Павел, О должностях и учреждениях по церковному управлению в древней Восточной Церкви СПб, 1857, էջ 94 և հաք., Լ. Беjaев, Byzantina, II, էջ 58 և այլուք, Μεγαλή ἐκκλησιαστική ἐγκύκλιος և այլն): Ասածից հետևում է, որ հիշող Ա խմբագրություն ընթերցումն է, որը չուշի «արթայի» բառը:

177. (ԱՔԳ) Իսկ փղակոնք՝ նոխ և ն կցդասացք և արձակապշտանք (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 269, Գ՛ էջ 402):

Վ. Բաստամյանցը ենթադրում է, որ «թերևս ազճատունք է հունական փսաղառս բառի, և նշանակում է սազմոսասաց, սազմոսերգու» (ժանոթագր. № 580):

Յ. Կարստր ուղղակի դնում է հուն. ψάλτης (Kommentar, էջ 80):

Սակայն նՁԲ «արձակապշտուն» բառի սակ բերելով Դատաստանագրքի սույն հատվածը, փղակոնք (հավանաբար վրիպակով տպագրված փղակաք) համարում է հունարեն ֆիլադելս (հավանաբար φιλολαγία) բառը, գիշերապահ կամ հսկող իմաստով, որը և ճիշտ է:

178. (ԱՔԳ) Սպաղէֆ՝ կրեւաուրբ Բաղաֆիւն, ու ոց գործ է ևոցա զարթօզայն, եւ զպաշտանսն, եւ զկանոնսն երգել (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 269, Գ՛ էջ 402):

Հունարեն σπουδή, σπουδαίος բառից, որ նշանակում է ջրություն, ջանադրություն, ժիւր, ջանադիր, արթուն, ինչպես նշում են նաև Վ. Բաստամյանցը (ժանոթագր. № 581), Յ. Կարստր (Kommentar, էջ 80), նՁԲ:

179. (ԱՔԳ) Իսկ արտօք (Գ՛ արեղայք) եւ մանգոնք, արք խարագնազգետք ևն... (Ա՛ էջ 139, Բ՛ էջ 269, Գ՛ էջ 402):

Աբաս, արբաս, արբայ—բառ սեմական (եբր. ասոր. և այլն), որ նշանակում է հայր, մասնավորապես՝ վանական, միանձն, կրոնավոր, վանահայր (ՆՃԲ):  
Մոնողոն—բառ հունարեն μόνος. μόνος. որ նշանակում է մենակյաց, կրոնավոր, արհազան (նՃԲ):

180. (ԱԲԳ) Մոնախոս (Ա՝ էջ 139, Բ՝ էջ 270, Գ՝ էջ 402):  
Հունարեն μοναχός—կրոնավոր, վանական և այլն:

181. (ԱԲԳ) Դոմեոկոսոս, որք են հաւատադիրք (Ա՝ էջ 139, Բ՝ էջ 270, Գ՝ էջ 402):  
Հունարեն δογματισμός. δογματιστής, որ շատ լավ փոխադրված է հաւատադիր բառով:

182. (ԱԲԳ, էջք 140, 420, 403) Վ. Բաստամյանցը ծանոթագրում է (ծանոթագր. № 939), որ այս հոդվածի ազդուորը իրեն չի հաշտղվել գտնել: Այս, ինչպես և մի քանի այլ դեպքերում, օրինակ՝ հաջորդ ՄԻԷ հաղվածում ևս, Մխիթարը օգտվում է Ալլադիկի որդի Գավթի և՛ Կահաննից, որը վերածվել է մի քանի հոդվածի: ՄԻԷ հոդվածը ևս քաղված է Դավթի ԿԱ կանոնից:

183. (Ա) Եւ երէ Բար ոբ ձիցել՝ կարծեցեալ կիսար զոլ (էջ 144), Գ՝ ...կարծեցեալ քիսար զոլ (էջ 407), Բ՝ ...կարծեցեալ բէ չէ Բար (էջ 247):

Ի խմբագրութունից ակնհայտ է, որ կիսար կամ քիսար մի այնպիսի բան է, որ թեև քար չէ, բայց նման է դրան, այնպես որ քարն ու կիսար-քիսարը կարելի է շփոթել: Ըստ բերված նորմի՝ ակամա սպանության շարքն է դասվում այն դեպքը, երբ մեկը մյուսին հարվածելիս համոզված է, որ հարվածում է կիսար-քիսարով, բայց պարզվում է, որ այն քար է: Ըստ այսմ կիսար-քիսարը քարի նման լինելով հանդերձ թեև մի բան է և նրանով հասցված հարվածը մահացու չպետք է լինի:  
Պարսկերենում կա քիսար—փշուր, մաս, մանրուք, բեկոր. խսար—ճզվող, փշրվող որևէ բան (հուդ). քիսար—բեկոր: Ասորենում կա քիսար—սուսկ (քար), քեսար (հուն. χιτιστός) —պեմզա: Մեզ թվում է, որ Դատաստանագրքի կիսար-քիսարը ասորական այս բանն է:

184. (ԱԲԳ, էջք 140, 430, 408) Բժիշկ Պ. Միսաքյանը այս հոդվածի վերջին մասը աղավաղված է համարում (տե՛ս Բաղմվէպ, 1950, № 9—10, էջ 201—206): Համեմատաբար կատարված է Սմբատի Դատաստանագրքի հոդվածի հետ (ՃՃԹ՝ բառ Ա. Գալստյանի հրատ., ՃՄԱ՝ բառ 3. Կարասի), որը սրբագրման որոշ հիմք է տվել, ուստի համադրենք.

Մխիթար Գոչ

Սմբատ Սպարապետ

Արդ, կամաւորացն արեան լիցի դատաստանն, եթէ յայտ վնասն գայցել, ապա թէ խոստովանութեամբ ծանիցի՝ կամաւորի ապաշխարութիւնն լիցի. իսկ ակամային՝ անպարտ յերկաքանչիւրսն (Գ՝ յիւրաքանչիւրսն) լիցի: Իսկ ի կամաւորէ (Բ՝ հոր. II, ճԺԹ, ի ակամաւորէ) և յակամայն եղեալ վնասն՝ մի լիցի անպարտ յերկաքանչիւրսն (Գ՝ յիւրաքանչիւր յիրսն):

Եւ յայս ամէնիս վերայ փնդոել պիտի եւ հշմարտել, որ թէ կամաք լինի սղալն եւ կամ վանս պզման՝ նա զէր մահապարտ զինքն սպանեն: Ապա թէ ի յոչ կամաց լինի, որ ինք խոստովանի՝ նա այն ապաշխարութիւն քաշէ: Եւ թէ ի դարպաս ընկնի, եւ կեցցնվի, որ ոչ ի կամացն է և ոչ յակամայն՝ և միշակ լինի սղալանքն՝ նա տուգանաւք եւ զնդանով դատեն զինքն ըստ արժանեացն, որ եւ այլքն խրատվին ի զգաստութիւն:

Հոդվածագիրը, նախ, առեղծվածային է համարում հետևյալ նախադասությունը (բերում ենք այնպես, ինչպես հոդվածում է). «Ապա թէ խոստովանութեամբ ծանիցի կամաւոր ապաշխարութիւն լիցի: Իսկ ակամային անպարտ յերկաքանչիւրսն լիցի»: Այնուհետև շարունակում է. «Իսկ քչերկաքանչիւրսն» բառը, պատահական կերպով եկած հոն դիրքը զբռ-

1 Պ. Միսաքյանի հոդվածում (էջ 202)՝ «Եւ կեցցնվի որ ի կամայէ [է] և յոչ կամայն միշակ լինի սղալն, նա տուգանօք և զրնդանով դատեն զինք՝ ըստ արժանեացն, որ այլքն խրատուին»: Պ. Միսաքյանը հայտնում է, որ քննվող հոդվածները քաղել է Ղ. Հովհաննիսի «Հետազոտութիւնք Եփեսոսաց Խաչատուրի վրա» (մ. Ա, Վիեննա, 1897, էջ 215) աշխատությունից, որտեղ հոդվածի վերջը յիշոք, այդպես է:

լած րլլալուն, պէտք է առանց որ և է խղճահարութեան այդ տեղէն դուր նետել» (էջ 203): Այս և նման որոշ դատողութիւններէրց հետո հեղինակը առաջարկում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի քննելի հողվածի վերջին հատվածի հետևյալ ընթերցումը:

«Ապա թէ խոստովանութեամբ ծանիցի, կամաւորն՝ ապաշխարութիւն լիցի, իսկ ակամային՝ անպարտ լիցի:

Քէ մեղանշականէ շխոստովանեցի և դատաստանօք հաստատեցի մեղապարտութիւն մտա, ի կամաւորէ և յակամայէ եղող վնասն մի լիցի անպարտ յերկախանչիւրան» (էջ 202):

Մխիթար Գոշի կամայական խմբագրում է սա: Ըստ հողվածագրի այսպես է . հրք բըծիշկր սպանել-մեղքրել է հիվանդին—եթե արել է դիտավորութեամբ և խոստովանել է՝ ապաշխարութիւն, իսկ եթե արել է ակամա և խոստովանել է՝ անպարտ է բոլորովին:

Ըստ Մխիթարի այսպես է, երբ բժիշկը սպանել-մեղքրել է հիվանդին—եթե արել է դիտավորութեամբ ու խոստովանել է՝ ապաշխարութիւն, որը սահմանվում է կամաւոր սպանութեան համար, իսկ եթե «արել է» ակամա՝ անպարտ է, անկախ նրանից՝ խոստովանել է թե ոչ:

Հողվածագրի ընթերցմամբ հատվածի միայն առաջին պարբերութիւնը ենթարկվել է երկու խոշոր աղավաղման: Առաջին . «առանց որևէ խղճահարութեան դուրս է նետվել» պատժաշափն ու կոնկրետ պատժատեսակը (որ գիտենք այլուստ, որովհետև սա հողող հողված է), որը կա բնագրում (կամաւորի ապաշխարութիւն լիցի): Երկրորդ. «լերկաթանչիւրսն» բառը դուրս նետելով ստացվել է այսպես, որ այն դեպքում, երբ հիվանդը մասցել է անկախ բժշկից և հակառակ նրա շանքերի, ապա վերջինս անպարտ է միայն այն ժամանակ, երբ խոստովանել է (իւր մեղքը՝), որով ենթադրվում է, որ եթե չի խոստովանել «պարտավոր» է: Մինչդեռ, ըստ բնագրի, այս դեպքում բժիշկը անպարտ է անկախ նրանից, թե հիվանդի մահվան փաստը ինչ ճանապարհով է հայտնի դարձաւ համապատասխան մարմիններին:

Սմբատ Ապարպետի Դատաստանագիրքը, անշուշտ, երբեմն օգնում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի այս կամ այն հողվածը, նախադասութիւնը հասկանալուն, բայց այդ հանգամանքը դեռ բավարար հիմք չէ վերջինի մէջ առաջինի հիման վրա բնագրային ներմուծումներ կատարելու համար, որովհետև Սմբատը Մխիթարից վերցրել է ոչ թե բրնագրային բառացիութեամբ, այլ միայն «զսիրտ բանիցն», այն էլ հաճախ ազատ շարադրակցով, երբեմն փոփոխութիւններով, նորամուծութիւններով և այդ բոլորը կիրկյայն խոսակցական հայերենով: Այդ պատճառով մերժելի է նաև հողվածագրի այն փոքր, որով նա կամենում է Մխիթարի բնագիրը ներմուծել հետևյալ բառակապակցութիւնը. «թէ մեղանշականն շխոստովանեցի և դատաստանօք հաստատեցի մեղապարտութիւն նորա», որովհետև սա չկա Դատաստանագրքի և ոչ մի ձեռագրում:

185. (ԱԹԳ) Եւ ջրաղացպանք փորձք լիցին արունստի ամենայն կազմածոյ, զի մի զբազմատանջն ապականեցեն զկերակուր աներկեղութեամբ (Ա՛ էջ 150, Բ, էջ 439, Գ՛ էջ 412):

Տպագիրը (Բ՛)՝ ....զի մի զբազմատանջն ապականեցել զերկերակուրն Գ՛՝ ....զի մի բազմատանջն ապակտնէ զերկերակուրն....

Այս ընթերցումը ունեն նաև Ա խմբագր. Զէ ձեռագրերը:

ՆՁԲ մեջ բերելով իրենց հնագույն ձեռագրից (= Ա) քննվող նախադասութիւնը, բացարձակ է. «իմա զցորեանն ծեծեալ, կամ ստացեալ բազում աշխատութեամբ»: Ըստ այսմ՝ բազմատանջ = ցորեն:

Բ խմբագրութիւնից դժվար է որոշակի ելքակացութիւն դալ, սակայն Գ խմբագրութիւնից ակնահայտ է, որ բազմատանջը ջրաղացաքարն է: Դա առավել ևս հաստատվում է ԺՁԳ ձեռագրերով, որոնք ունեն «զի մի բազմատանջ զջրաղացի քարերոյն վնասել բազմատանջն ապականէ զկերակուրն....» ընթերցումը և, մանավանդ, Ճ և Ռ 5913 ձեռագրով, որ ունեն՝ «բազմատանջն որ քարերն»:

186. (ԱԳ) Այսիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ զվնասն եւս տաւծիլ (Ա՛ էջ 150, Գ՛ էջ 412):

Այստեղ «ոչ վարձել» = վարձ շտալ, ինչպես ակնահայտ է նախադասութեան իմաստից, որը հաստատվում է նաև Բ խմբագր. ընթերցումով՝ «ոչ տալ վարձ»:

187. (ԱԲԳ) Ապա թէ բժշկիցին եւ երեւ ամս ալլ ոչ լիցին, ապա թէ զենեալ կերիցեն եւ թէ ի քիստոնեայս վանառիցեն՝ անվնասք են ի կամս Տեառն (Ա՛ էջ 152, Բ՛ էջ 284, Գ՛ էջ 415):

Վ. Բաստամյանցի բացատրում է (ժանոթագր. № 616). «Այս խոսքերը՝ անվնասք են ի կամս Տեառն կարելի է երկու կերպով հասկանալ—կամ թե անասունի տերը հանցավոր չէ, և կամ թե աստուծո ատաշ մեղք չի համարվի: Նայելով կանոնիս ընդհանուր ոգուն մենք ավելի հակվեցանք դեպի երկրորդ իմաստը, վասն որո Տեառն զրինք զլիազորով»: Վ. Բաստամյանցի բացատրությունը համարելով ճիշտ, մենք ևս այդպես վարվիցինք:

Յ Ա Ն Կ Ե Ր

Մ Խ Ի Թ Ա Ր Գ Ո Շ Ի Դ Ա Տ Ա Ս Ա Ն Ա Գ Ր Ի Ի  
 Ա Գ Ե Կ Բ Խ Մ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Հ Ո Դ Կ Ա Մ Ն Ե Ր Ի  
 Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Կ Ա Ն Տ Ա Խ Տ Ա Կ

Ա Գ Խ Դ Ր Կ Ր	Բ Խ Դ Ր Ա Գ Ր		Ա Գ Խ Դ Ր Կ Ր	Բ Խ Դ Ր Ա Գ Ր		Ա Գ Խ Դ Ր Կ Ր	Բ Խ Դ Ր Ա Գ Ր	
	Ա ժ ա ս	Բ ժ ա ս		Ա ժ ա ս	Բ ժ ա ս		Ա ժ ա ս	Բ ժ ա ս
1	1		60		26	119		77
2		1	61		27	120		78
3	2		62		28	121		79
4	3		63		29	122	43	
5	4		64		30	123		80
6	5		65		31	124		81
7	6		66		32	125		82
8	7		67		33	126		83
9	8		68		34	127		84
10	9		69		35	128		85
11	10		70		36	129		86
12	11		71		37	130		87
13	12		72		38	131		88
14	13		73		39	132		89
15	14		74		40	133	44	
16	15		75	35		134	45	
17	16		76		41	135	46	
18	17		77		42	136	47	
19	18		78		43	137	48	
20		2	79		44	138	49	
21		3	80		45	139	50	
22		4	81	36		140	51	
23		5	82		46	141	52	
24		6	83		47	142	53	
25		7	84		48	143	54	
26		8	85		49	144	55	
27		9	86		50	145	56	
28	19		87	37		146	57	
29	20		88	38		147	58	
30	21		89		51	148	59	
31		10	90		52	149	60	
32		11	91		53	150	61	
33		12	92	39		151	62	
34		13	93		54	152	63	
35		14	94		55	153	64	
36	22		95		56	154		90
37		15	96		57	155		91
38		16	97		58	156	65	
39	23		98		59	157	66	
40	24		99		60	158	67	
41	25		100		61	159	68	
42	26		101		62	160	69	
43	27		102		63	161	70	
44	28		103		64	162	71	
45	29		104		65	163	72	
46	30		105	40		164	73	
47	31		106	41		165	74	
48	32		107		66	166	75	
49		17	108		67	167	76	
50		18	109		68	168	77	
51	33		110	42		169	78	
52		19	111		69	170	79	
53	34		112		70	171	80	
54		20	113		71	172	81	
55		21	114		72	173	82	
56		22	115		73	174		92
57		23	116		74	175		93
58		24	117		75	176	83	
59		25	118		76	177	84	

ԱԳ Խմբեր.	Բ խմբեր.		ԱԳ Խմբեր.	Բ խմբեր.	
	Ա մաս	Բ մաս		Ա մաս	Բ մաս
178		94	215	110	
179		95	216		106
180		96	217		107
181		97	218		108
182		98	219	111	
183		99	220		109
184	85		221		110
185		100	222		111
186		101	223	112	
187	86		224	124	
188	87		225	113	
189	88		226		112
